ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

هايكازيان

مجلّة الدّراسات الأرمنيّة

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

Volume 40

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ. ՆՈՐՈԳՈՒՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ի. դարու վերջին տասնամեակին համաշխարհայնացումը թեւակոխեց որակական բնոյթի աննախընթաց փուլ մը: Արհեստագիտութեան հրաշազօր նորարարութիւնները ունեցան կոհակային ազդեցութիւններ եւ յեղափոխեցին մարդկութեան եւ անոր մեծ միջավայրի գրեթէ բոլոր ոլորտներուն խորքային ու որակական ընկալումները, վերահսկողութիւնը...:

Արհեստագիտական նուաճումներու ուշագրաւ օրինակներէն մէկը հանդիսացաւ հաղորդակցութեան բնագաւառին մէջ արձանագրուած յառաջընթացը, որ անհամեմատօրէն յեշաղրջեց փոխյարաբերութեանց բնոյթը, տարողութիւնը, տեւողութիւնը եւ ազդեցութեան ծիրը:

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ը տակաւ ջանաց առաւելագոյնս օգտուիլ ընձեռուած հնարաւորութիւններէն: Արդարեւ, *Հանդէս*ի աշխատակիցներուն հետ կապը եղաւ առաւել յաճախակի, անմիջական, գործնական. երկասիրութեանց մշակում-խմբագրումները՝ աւելի բազմերես ու բանակցային. հատորի հրատարակման բոլոր աշխատանքները՝ առաւել ճկուն. յաղթահարուեցաւ տպագիր նիւթի մատչելիութեան սահմանափակումը: Այս եւ նմանատիպ այլ տուեալներ ծառայեցին նոր եւ յաւելեալ ներդրումներու՝ յանուն *Հանդէս*ի առաւել բարելաւման:

Բովանդակային, խորքային եւ թեքնիք այս իրագործումներուն կողքին, տակաւին կան այլեւայլ մարտահրաւէրներ եւ հարցադրումներ, որոնք կը հանդիսանան *Հանդէս*ին եւ ընդհանրապէս հայագիտական մամուլին առաջնահերթութիւններէն եւ յանձնառութիւններէն:

Արհեստագիտութեան ներկայ հնարաւորութիւնները յաւելեալ պատճառ են որ.- ա) գոյանայ հայագիտական մամուլի ցանց, զարգանայ փոխգործակցութիւն եւ կայանան պարբերական ժողովներ՝ հայագիտական մամուլին խնդիրներուն շուրջ ու որդեգրուին լուծումներ, բ) մշակուի եւ կիրարկուի տպագիր ու թուային հայագիտական մամուլի ռազմավարութիւն՝ անոր տեւականացման եւ տարածման համար, գ) յառաջանայ հայագիտական նորագոյն (նաեւ անցեալի) նիւթերու

համապարփակ շտեմարան, դ) հայագիտական մամուլը կարելի առաւելագոյն միատարրութիւն յառաջացնէ կանոնակարգելով հրատարակման թեքնիք խնդիրներուն լուծումները եւ գոյացնէ համապատասխան 'պարտադիր' հայեցակարգ, ե) թեքնիք այս խնդիրներու հայեցակարգը տակաւ պատշաճեցուի հասարակագիտութեան համաշխարհային հայեցակարգերուն:

Անտարակոյս, այս մարտահրաւէրներուն յաղթահարումը պիտի մեծապէս նպաստէ եւ առողջ հող յառաջացնէ քննարկումներ կատարելու հայագիտութեան բովանդակային յառաջադրանքներուն եւ յանձնառութիւններուն համար:

***

Այլ դիտարկումով դեռեւս հրատապ կը մնայ հայագիտութեան լայն սահմանումի լիարժէք կիրարկումը (որուն ջատագով յառաջամարտիկներէն է *Հանդէսը*):

Այս առումով բարացուցական է որ հայ իրականութեան վերջին յինսամեակի մեծագոյն նորութեան՝ Հայաստանի եւ Արցախի պետական համակարգին եւ անկէ բխած նիւթերու ուսումնասիրութիւնը պէտք է դառնայ հայագիտութեան հիմնական առանցքներէն մին:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի խմբագրութիւնը համոզուած է որ գիտական լուսարձակի տակ առնելով այս բնագաւառը հայագիտութիւնը նորոգած կ'ըլլայ իր դերը, ընդարձակած՝ իր սահմանումը, առաւել այժմէականացուցած՝ ինքզինք, եւ արդարօրէն ընդառաջած՝ իր նորագոյն եւ կարեւորագոյն մարտահրաւէրներէն մէկուն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Անդրանիկ Տագէսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ), Նանօր Գարակէօզեան, Արշալոյս Թոփալեան, Արմէն Իւրնէշլեան, Սիլվա Փափազեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան, Ժիրայր Դանիէլեան, Երուանդ Երկանեան, Հրանուշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Չիլինկիրեան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝
Արծուի Բախչինեան

ARMENIAN STUDIES
RENEWED QUESTIONS AND FRESH MEANS

In the late 20th century globalization entered a new, qualitatively unprecedented phase. Astounding technological innovations had a ripple effect and revolutionized mankind's core perceptions and control of almost all that happens in this large universe ....

Massive growth in the communications sphere was one of the outstanding technological developments. It greatly revolutionized the nature, extent, impact and depth of interaction.

The *Haigazian Armenological Review* strove diligently to make the best use of these available means. Indeed, communication with scholars/contributors became more frequent, immediate and practical; refinement of articles became more multifaceted and negotiable; and the work ofpublication became more flexible, while accessibility of published material increased and many limitations were overcome. These and other innovations facilitated further developments and investments for the further improvement of the *Review*.

Nonetheless, alongside these core, content-oriented and technical achievements various challenges remain and tackling them is among the priorities and undertakings of the *Review* and generally of Armenian Studies journals.

The current facilities provided by technology are a further reason to: a) generate a network among Armenian Studies journals, develop cooperation and convene periodical meetings to address problems and adopt resolutions b) devise a strategy for the sustainability and the dissemination of printed and online journals, c) produce an all-encompassing digitized site of old and new Armenian Studies scholarship, d) develop workable uniformity among these journals by resolving technical problems within a relevant mandatory framework, e) integrate (as much as possible) this technical framework into the technical frameworks of world social sciences publications'.

There is no doubt that overcoming these challenges will contribute in a practical way to the production of a healthy milieu to organize discussions on the content of Armenian Studies, its undertakings and objectives.

On a different note, a broader definition of Armenian Studies, of which the *Review* is a strong champion, is still not fully applied.

In this regard, it is obvious that the greatest development of the last fifty years in the Armenian space should be properly researched. Indeed, the statehood of Armenia and Artsakh and all that springs from them are sources of contemporary raw material available for examination and research and should become a basic axis of Armenian Studies.

The Editorial Board of the *Haigazian Armenological Review* strongly believes that by focusing on this area, Armenian Studies would revitalize its role, broaden its definition, make itself more contemporary, and rightfully answer to one of its most important callings.

EDITOR-IN-CHIEF
Antranik Dakessian

EDITORIAL BOARD
Arda Ekmekji (ex-officio), Nanor Karageozian, Silva Papazian, Arshalouyse Topalian, Armen Urneshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian, Jirair Tanielian, Yervand Yerkanian, Hranush Kharatian, Murad Hasratian, Hratch Tchilingirian, Megerditch H. Bouldoukian, Seta Dadoyan, Susan Pattie

***HAR* REPRESENTATIVE IN ARMENIA**
Artsvi Bakhchinyan

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ ԵՒ ՀԱՅ-ՆԱՑԻԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

Արեւմուտքի հին ժողովուրդները հետեւողականօրէն չեն մտածած ցեղային իմաստով, թէեւ նախապաշարումն ու օտարականներու եւ գաղթականներու հանդէպ անոնց բացասական վարմունքը մնայուն ներկայութիւն էին: Սակայն, դասական գրականութեան համապարփակ քննութիւն մը աւարտելէ ետք, Պենճըմին Այզէք եզրակացուցած է, որ «*մաքուր արեան իրէալականացումը, խառն ամուսնութիւններու դատապարտումը եւ Blut und Bodenի [արիւն եւ հող] առասպելը իրենց արմատը ունին յունահռոմէական հնութեան մէջ*»[1]: Յունարէն *ethnos* սովորաբար կը թարգմանուի «ազգ», «ժողովուրդ» կամ «ցեղախումբ» իմաստներով, իսկ *genos*՝ «տոհմ», հետեւաբար այս բառերէն որեւէ մէկը արդի կենսաբանական իմաստով «ցեղ» նշանակութիւնը չունէր: Race բառը եւրոպական լեզուներուն մէջ սկսաւ «ազգ» իմաստը առնել ԺԷ.-ԺԸ. դարերուն[2], թէեւ տակաւին «տոհմ» իմաստով կը գործածուէր ԺԹ. դարուն[3]: *Հայկազեան* բառարանը կամ Հրաչեայ Աճառեանի արմատական բառարանը կու տան «ցեղ» բառին բուն իմաստը հայ մատենագրութեան մէջ[4], որմէ կը հասկնանք, որ ան մինչեւ ԺԹ. դար մարդկային ցեղի կամ ժողովուրդի իմաստը չունէր: «Հայ ցեղ», «ցեղային արժէքներ» եւ այլ արտայայտութիւններ Ի. դարասկիզբի լեզուական հնարանքներ են:

Մինչեւ Կովկասի ռուսական գրաւումը ԺԹ. դարու առաջին քառորդին, առեւտուրն ու պատերազմը Մերձաւոր Արեւելքի ստրուկներու շուկաներուն կը հայթայթէին չերքէզական, վրացական եւ ընդհանրապէս կովկասեան ծագումով երիտասարդ կիներ, որոնք այնուհետեւ կը ծախուէին բարձր դասակարգի պալատներու եւ կանանոցներու: Ֆրանսացի նշանաւոր փիլիսոփայ Վոլթէր գրած է 1734ին. «*Չերքէզները աղքատ են, իսկ դուստրերը՝ գեղեցիկ, հետեւաբար անոնց առեւտուրին մեծամասնութիւնը իրենց կը վերաբերի. գեղեցկուհիներ կը մատուցեն սուլթանի, Պարսկաստանի թագաւորին եւ ուրիշներու, քանի որ բաւարար հարուստ են այս արժէքաւոր ապրանքը գնելու եւ պահելու համար*»[5]: Տիրող դասակարգին կողմէ այս կիներուն ընտրութիւնը իբրեւ սեռային իր՝ անձնական կարիքներ գոհացնելու եւ առանձնատուներ զարդարելու համար, գեղագիտական պատճառներ ունէր, այլոց շարքին: Հետեւաբար, տրամաբանական է, որ անոնց գե-

ղեցկութիւնը արտակարգ համարուէր եւ կարծրատիպային ընդհանրացում մը ստեղծէր՝ աշխարհի ամենագեղեցիկ մարդիկ ըլլալու, ինչ որ բազմաթիւ արեւմտեան ճանապարհորդներու, գիտնականներու եւ դասակարգերու հասարակ տեղիքը դարձած է:

Ֆրանսացի ճանապարհորդ Ֆրանսուա Պերնիէ (1625-1688) առաջին անգամ բանաձեւած է «գեղեցկութիւն» եւ «Կովկաս» գաղափարներու կապակցութիւնը, երբ 1684ին պնդած է, որ աշխարհի գեղեցկագոյն կիները կը գտնուէին Մինկրելիայէն, Վրաստանէն եւ Չերքէզիայէն եկող Պարսկաստանի ու Թուրքիոյ ստրկուհիներուն մէջ, «ըստ բոլոր լեւանթէններուն եւ բոլոր ճանապարհորդներուն»[6]: Իր *Natural System* (Բնական համակարգ) հիմնարար գիրքի վերջնական հրատարակութեան մէջ (1758), շուէտացի համբաւաւոր բնագէտ Քարլ Լիննէյ (1707-1778) *Homo sapiens*ը բաժնած էր չորս խումբերու՝ ըստ ցամաքամասերու, հաստատելով որ անոր «եւրոպական տարբերակը գեղեցիկ, կենսուրախ ու խիզախ» էր «դեղին, սրճագոյն, երկար մազեր ու կապոյտ աչքեր ունէր եւ օրէնքով կը ղեկավարուէր»[7]: Նշանաւոր ֆրանսացի բնագէտ, կոմս Պիւֆոն (1707-1788), երկու գաղափարները համադրած է, պնդելով, որ «*մոնկոլական եւ պարսկական կայսրութիւններու հիւսիսային կողմերու բնիկները՝ հայերը, թուրքերը, վրացիները, մինկրէլները, չերքէզները, յոյները եւ Եւրոպայի ժողովուրդը ընդհանրապէս, ամենէն գեղեցիկ ու վայելուչ մարդիկն են աշխարհի մէջ*»[8]:

ՑԵՂԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ԺԸ. դարու վերջաւորութեան, երկու գերմանացի գիտնականներ կը բիւրեղացնէին «ցեղ»ի գաղափարը, վեր հանելով անոր յարաբերութիւնը ֆիզիքական գեղեցկութեան հետ: 1785ին, պատմաբան Քրիսթոֆ Մայներզ մարդկութիւնը երկու հակադիր ցեղերու կը բաժնէր՝ գեղեցիկ եւ բաց գոյն մաշկով թաթար-կովկասեանները (իմա՛ եւրոպացիներ) եւ տգեղ ու մութ գոյն մաշկով մոնկոլները (իմա՛ ասիացիներ): Վերջիններուն շարքին կը պատկանէին հայերը, հրեաները, արաբները եւ պարսիկները[9]: Միւս կողմէ, բնապատմագէտ Եոհան Ֆրիտրիխ Պլումենպախ (1752-1840), հետեւելով կենդանաբանական աշխարհի դասակարգումին, հինգ ցեղերու (իմա՛ տեսակներու) բաժանում մը կ'ընէր.- սպիտակ (կովկասեան), սեւ (սեւամորթ), դեղին (մոնկոլատիպ), սրճագոյն (մալայեան) եւ կարմիր (ամերիկեան)[10]: Ըստ իրեն, ֆիզիքական (մաշկի գոյն, գանկի չափ) եւ մտայինհոգեկան յատկանիշերը յարաբերակից էին:

Սպիտակ կամ «կովկասեան» ցեղը ամենաբարձր տեղը կը գրաւէր մարդկային ընկերութեան բուրգին մէջ, իսկ միւսները անոր տարատեսակ ու, ի հարկէ, ստորակայ այլասերումները կը կազմէին: «Կովկասեան» անուանումը, կը բացատրէր Պլումենպախ, «*առած եմ Կովկաս լեռնէն, որովհետեւ նախ՝ իր մերձակայքը, ու մասնաւորապէս իր հարաւային զառիվայրը, կ'արտադրէ մարդոց գեղեցկագոյն ցեղը՝ վրացիք ըսել*

կ'ուզեմ, եւ երկրորդ՝ բոլոր բնախօսական պատճառները կը յանգին ասոր, թէ այնպէս կը թուի որ այլ որեւէ տեղէ աւելի այդ հողամասին մէջ պարտինք մեծագոյն հաւանականութեամբ դնել մարդկութեան նախաբնիկները»[11]: Բնականաբար, սպիտակամորթ ու գեղեցկատես եւրոպական ժողովուրդներն ալ իրենց ծագումը պիտի փնտռէին հոն, ուր աշխարհի ամենագեղեցիկները կ'ապրէին:

Յարակարծօրէն, յետագային խնդրոյ առարկայ պիտի դառնար հայոց «կովկասեան» (իմա՛՝ «սպիտակ») ըլլալը:

ԺԸ. դարու վերջաւորութեան ալ գիտական ձեւաւորում ստացած էր ինչ որ 1810ականներուն արդէն հնդեւրոպական լեզուներու ընտանիք կը կոչուէր: Գերմանացի բանասէր Ֆրիտրիխ Շլեկէլ, որ 1808ին հայերէնը աւելցուցած էր անոր[12], 1819ին կ'առաջարկէր հնդեւրոպական լեզու խօսողները «արիացի» կոչել[13]: Կ'ենթադրուէր, որ լեզուի միութեան պէտք է համապատասխանէր ցեղի միութիւն մը, այսինքն՝ եթէ «արիացի» կը նշանակէր «ազնուական» (իրականութեան մէջ՝ միայն հնդկերէնն ու պարսկերէնը գործածած են այդ բառը իբրեւ ինքնանուանում), ուրեմն ազնուականներու լեզուն կապուած էր ազնուական ցեղի մը հետ, որ անշուշտ սպիտակ ցեղն էր:

1850ականներուն, ֆրանսացի կոմս Արթիւր տը Կոպինօ կը պնդէր, թէ Նոյի զաւակներէն ծնած երեք սպիտակ ենթացեղերէն միայն հիւսիսը մնացած յաբէթականները կամ արիացիները պահած էին իրենց ցեղային մաքրութիւնը: Անոր կը պատկանի «արիացի» բառին առաջին գործածութիւնը՝ սպիտակ ցեղին լեզուն անուանելու համար[14]:

Այս իմացական խմորումներէն պիտի բխէր մարդաբանութեան ու հնագիտութեան ցեղայնական (racialist) մօտեցում մը՝ «արիական առասպելը», որ ԺԹ. դարու վերջերէն բացայայտ ցեղապաշտութեան տիրապետութիւնը պիտի հաստատէր մինչեւ Բ. Աշխարհամարտին աւարտը: Այսպէս է, որ «կապուտաչեայ եւ խարտեաշ արիացիներու» հայրենիքը հիւսիսային Եւրոպա տեղադրուած է, իսկ անոնց նուաճողական քաղաքականութեան հիմքը ֆիզիքական գերակայութիւնը համարուած է: Սպիտակ ցեղի, կամ նոյնիսկ որոշ սպիտակ ենթատեսակներու գերակայութիւնը ուրիշներու վրայ, կ'ենթադրէր մտային եւ հոգեկան ժառանգական գիծերու բնածին շարք մը, հիմնուած՝ նուիրապետական կարգի մը վրայ:

Երկար ժամանակ, նոյնիսկ՝ հայերէնի տեղը հնդեւրոպական լեզուներու շարքին որոշուելէ ետք, բազմաթիւ գիտնականներ ու ոչ-գիտնականներ կարծած են, որ.- ա) հայերէնը հնդեւրոպական չէ, այլ սեմական, բ) հայերէնը հնդեւրոպական է, բայց զայն խօսող ժողովուրդը նախ սեմական լեզու մը խօսած է: Երկու պարագաներուն, «փաստարկը» հայերու եւ հրեաներու ֆիզիքական նմանութիւնն էր: Ցեղային մարդաբանութիւնը գերմանացի յայտնի գիտնական Ֆելիքս ֆոն Լուշանին (1854-1924) կը պարտի առաջին տեսութիւնը՝ «հայատիպ» (armenoid) տեսակի գոյութեան մասին՝ Առաջաւոր Ասիոյ մէջ, որուն ամենէն բնորոշ ներկայացուցիչները հայերը

կը սեպէր[15]: Հայոց պատմութեան դասագիրքերու ու հետազօտական հատորներու մէջ յաճախ արձանագրուող (երբեմն՝ հպարտութեամբ) այն տեսակէտը, թէ հայերը կը պատկանին «հայատիպ» տեսակին, իրականութեան մէջ պատրուակ մըն էր հրեաները armenoid կամ հայերը՝ հրեաներու ազգակից դարձնելու: Այս հիմքով, ԺԹ. դարուն, Եւրոպայի հասարակական ու քաղաքական մտքի կարեւոր մէկ մասը հայերը արդէն տեղաւորած էր գրեթէ հոն (եթէ ոչ՝ ճիշտ հոն), ուր բարոյական տեսանկիւնէն հրեաները կը գտնուէին: Ասիկա յայտնի կը դառնայ, երբ կը կարդանք այդ շրջանի անգլիական, ֆրանսական, ամերիկեան ու գերմանական հրապարակագրական գործերը եւ ուղեգրութիւնները, որոնցմէ քանի մը նմուշներ պիտի ներկայացնենք ստորեւ՝ որպէս ճաշակ այս տարածուած երեւոյթին:

ՀԱՅՈՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ

Պատճառը պարզ է, թերեւս նաեւ՝ կռահելի: Եգիպտոսի առժամեայ գրաւումով Նափոլէոնի կողմէ (1798) սկսած է Օսմանեան Կայսրութեան եւրոպական շրջափակման վճռական գործողութիւն մը: Անգլեւթրքական զինակցութեան յաղթանակը ֆրանսական զօրքերուն վրայ (1800) նշանաւորած է այն հակամարտութիւնը, որ այնուհետեւ Մերձաւոր Արեւելքի մնայուն բաժինը պիտի ըլլար: Անգլիական, ֆրանսական եւ ռուսական կայսերապաշտութիւնը կը ձգտէր Օսմանեան Կայսրութեան վերահսկողութիւնը ձեռք անցընել:

Օսմանեան Կայսրութեան երեք ոչ-իսլամ փոքրամասնութիւններ՝ յոյներ, հայեր եւ հրեաներ, գլխաւոր դերակատար էին ֆինանսական եւ տնտեսական կեանքին մէջ: Հայերը, որպէս երկրորդ բնիկ ուժ՝ յոյներուն կողքին, ընդդիմադիր կամ մրցակից կը նկատուէին եւրոպական տնտեսական ներթափանցումին եւ հնարաւոր հինգերորդ զօրասիւն մը ի նպաստ Ռուսաստանի: Իր կայսրութիւնը բեկոր առ բեկոր կորսնցնող եւ իր երբեմնի դիրքը զիջող օսմանեան ընտրանիին համար, հայերը Արեւմուտքի թափանցումի գործիք ու գործակից էին:

Ահա այդպէս է, որ արեւմուտքցի ճանապարհորդներն ու գրողները, շփուելով թրքական երկու գլխաւոր քաղաքներու՝ Պոլսոյ եւ Իզմիրի յոյն, հայ եւ հրեայ համայնքներու առեւտրական դասակարգին հետ, իրենց մտքի կաղապարները կազմած են ու ամբողջացուցած՝ թրքական աղբիւրներէ քաղուած տուեալներով: Թէեւ մինչեւ ԺԹ. դարու վերջին քառորդը Գերմանիան միաւորուած չէր ու քաղաքական ախորժակներ չունէր Թուրքիոյ հանդէպ, գերմանական արեւելագիտութիւնը զարգացած էր անգլիականին ու ֆրանսականին յար եւ նման գաղափարական բովանդակութեամբ: Այսպէս, Թուրքիա այցելելէ ետք, գրող ու ճանապարհորդ, կոմսուհի Իտա Հահն-Հահն գրած է 1844ին. «*Հայերու մասին լաւ չեն խօսիր: Կ'ըսեն, թէ շատ խորամանկ են եւ նոյնիսկ աւելի խորամանկ ու հնարամիտ,*

քան յոյները»[16]: Մակաբոյծ ու վաշխառու հայերը կը շահագործէին ազնիւ թուրքերը, ինչպէս 1867ին, օրինակ, կը գրէր հունգարացի արեւելագէտ Արմինիուս Վամպերի, որ աւելի ուշ անգլիացի գաղտնի գործակալ դարձած է. «*Իդէպ, այս բարեսրտութիւնը յաճախ կը գտնուի ասիական Թուրքիոյ բնակիչներուն մէջ: Ասիոյ մէկ ծայրէն միւսը՝ թրքական լման ցեղը բնորոշող յատկանիշ մըն է: Այս մարդիկը ճենթըլմէն ծնած են: Իբրեւ փղամարդ իրենց նախասիրած զբաղումը՝ պատերազմը, կրնար զիրենք հարստացնել, բայց այսօր, երբ նիւթապաշտութիւնը արեւմուտքէն արեւելք անցած է, խորամանկ ու ընչաքաղց հայերը եւ յոյները զանոնք կը փիրեն*»: Եզրակացութիւնը այն էր, թէ հայերն ու յոյները «*միջնադարեան ընկերութեան շուքն են եւ, որպէս այդպիսիք, պէտք է անհետանան*»[17]: 1884ին, գրող եւ լրագրող Ֆրիտրիխ Մայէր ֆոն Վալտէք Ռուսաստանին նուիրուած ուսումնասիրութեան մը մէջ կը գրէ.

> Հայոց աչքերուն արտայայտութիւնն ու դիմագիծը կը ցոլացնեն այն խոր թափանցումը որ, իրենց առեւտուրի ճաշակին ու տաղանդին հետ միասին, պատճառ դարձած է "Արեւելքի հրեաներ" մականունին: Ռուսական ասացուածք մը կ'ըսէ. "Երկու հրեայ կ'արժեն հայ մը, երկու հայեր կ'արժեն յոյն մը, երկու յոյներ կ'արժեն սատանայ մը": Մինչ տունը մնացող երկրագործ հայը կը ներկայացուի որպէս ուղիղ ու բաց խառնուածք ունեցող, խաղաղասէր, գթասիրտ ու խնայասէր, արտասահման հաստատուածը, որ հոն առեւտուրով կը զբաղի, իր ցեղին պարզութիւնը կորսնցուցած է. խոհեմ է, խելացի ու ամէն ինչ սորվելու ընդունակ, բայց նաեւ խորամանկ, խաբեբայ ու ագահ[18]:

Եւրոպան ազգային ու մշակութային միատարր ազգ-պետութիւններու վերածուելու հոլովոյթին մէջ կը գտնուէր: Կասկածով պիտի դիտէր իր մէջ ապրող ու այդ միաւորներու միասնականութիւնը իբր թէ վտանգող «ցրիւ» տարրերը, զանոնք իրարու նոյնացնելով: Այդպէս է, որ ԺԸ. դարու վերջաւորութեան, «թափառական հրեայ»ին առասպելը, զոր առաջին անգամ պատմած էր Անգլիա այցելող հայ արքեպիսկոպոս մը ԺԳ. դարուն[19], պատմիչն ու պատմութեան հերոսը գրական մէկ անձ դարձուցած էր: Գերման զուիցերիացի նշանաւոր բանաստեղծ Ֆրիտրիխ ֆոն Շիլլերի *Der Geisterseher* (Ուրուական տեսնողը) անաւարտ վէպին (1789) գլխաւոր կերպարը բազմաթիւ երեւոյթներով շրջող խորհրդաւոր հայ մըն է, որ ներշնչուած էր *Թափառական Հրեայի* կերպարէն: Այդ թեման շարունակողներ եղած են[20]:

Հայերու «թափառական» ըլլալը զուտ գրական հարց մը ըլլալէ հեռու էր: 1879ին, աւստրիացի լեզուաբան Ֆրիտրիխ Միւլլըր, հրեաներէն ետք ու գնչուներէն առաջ, հետեւեալը կը գրէր հայերու մասին. «*Հնդեւրոպացիներուն մէջ, հայերը կրնան սեմական հրեաներուն հետ բաղդատուիլ: Հրեաներու նման հայրենիք չունեցող եւ մեծաւ մասամբ վաճառականութեամբ ապրող հայերու գաղթերը հրէականներուն բնաւ չեն զիջիր. ասկէ զատ, երկու ժողովուրդներուն պատմութիւնը մեծ նմանութիւն ունի, քանի որ*

մեծաւ մասամբ իրենց տեղաշարժերը կրօնական հալածանքի հետեւանք եղած են»[21]: Ուրեմն, հայերը, նման՝ շրջիկ գնչուներուն եւ պետութենէ զուրկ հրեաներուն, նկատուած են վաչկատուն եւ օտար մարմին մը՝ նոյնիսկ իրենց պապենական հայրենիքին մէջ, եւ իրենց «հիւրընկալներուն» ապահովութեան վտանգ՝ Թուրքիայէն մինչեւ Գերմանիա: Արեւմուտքի հեղինակները «կը մոռնային», որ հայերը իրենց հայրենիքը կ'ապրէին եւ փոքրամասնութիւն չէին:

Այս մտածելակերպը զարգացուցած է գերմանացի աշխարհագրագէտ Ֆրիտրիխ Ռաթցէլ, որուն համար օրգանական մարմին մըն էր պետութիւնը, որ աւելի տկար պետութիւններու հաշուոյն կը ծաւալէր: Անոր կը պատկանի Lebensraumի (կենսական տարածք) գաղափարը, որ կէս դար ետք Ատոլֆ Հիթլէրի ծաւալապաշտ մտայնութեան անկիւնաքարը պիտի կազմէր: Ռաթցէլ անուղղակիօրէն ակնարկած է, որ հայերը վարձակալ էին իրենց պատմական հայրենիքին մէջ. «*Թուրք ցեղի հպարտութեան նշան է, որ Փորք Ասիոյ երկայնքին թուրքերը նուազ աներես ժողովուրդն են, մինչ այս թերութեամբ ամենէն վարակուածները աշխուժ, առեւտրական ու գործունեայ հայերն են*»[22]: Աւելի՛ն. ան դիտել տուած է, որ «*հայերը երեւոյթով մեզի շատ կը յիշեցնեն հրեաները*»[23], իսկ սեմականները «*ա՛լ աւելի կը յիշեցնեն լեզուականօրէն անջատ բնակիչները Հայկական Լեռնաշխարհին՝ քիւրտերը, հայերը եւ վրացիները*»[24]:

ԱՊԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՈՒՄ՝ ՋԱՐԴԻ ԵՒ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ

Նման նախապաշարումներու գումարը կը բաւէր հայերը ապամարդկայնացնելու եւ անոնց կոտորածը արդարացնելու: Կոպինոյի հետեւորդ եւ Ի. դարու ցեղապաշտ տեսութիւններու նախահայրերէն՝ անգլիացի Հ. Սթիւըրթ Չեմպըրլէն (1859-1927), 1895ին անդրադառնալով համիտեան ջարդերուն, կը խօսի 1894ի Սասնոյ ապստամբութեան մասին. «*Հայկական ապստամբութիւնը, ջարդերու եւ հալածանքի անխուսափելի փոխվրէժով (անշուշտ մեծապէս չափազանցուած արարչութեան այդ մեծագոյն սրախօսներուն կողմէ, որոնց կոնակը կան իրենց արժանաւոր բարեկամները՝ անգլիացի լրագրողները), ամբողջութեամբ տեղի ունեցած է ճիշտ այն վայրկեանին, երբ անգլիական քաղաքականութիւնը 'խոտորում' (diversion) մը կը պահանջէր*»[25]: Չեմպըրլէն իր տեսութիւնը աւելի եւս զարգացուցած է իր *The Foundations of the Nineteenth Century* (1899) հատորին մէջ, որ Հիթլէրի վրայ կարեւոր ազդեցութիւն պիտի ունենար[26]: 1897ին գրելով, որ եւրոպական պետութիւնները պարտադրուած էին միջամտել հայերը եւ կրետացիները պաշտպանելու օսմանեան բռնութենէն. Թուրքիա այցելած Չեմպըրլէն կը գծէր հովուերգական պատկերը Թուրքիոյ մը, որ «*Եւրոպայի վերջին փոքրիկ անկիւնն է, ուր ամբողջ ժողովուրդ մը կ'ապրի չխանգարուած բարգաւաճումով ու երջանկութեամբ (...) ուր բոլո-*

րը կը կազմեն մէկ ներդաշնակ ընտանիք եւ ո՛չ ոք կը ջանայ հարստութիւն դիզել իր դրացիի հաշուոյն», վերագրելով ասիկա իսլամական հանդուրժողութեան, զոր քրիստոնեաները խանգարած էին, եւ «*բնութեան ուժի մը անխղճօրէն հակազդող դաժանութեամբ, այլապէս մարդկային մուսուլմանը ոտքի կ'ելլէ եւ կը կործանէ իր խաղաղութիւնը խանգարողը*»[27]: Չեմպըրլէն կը մերժէր Սուրիոյ բնակչութեան սեմական ըլլալու դասագրքային հաստատումը, զայն համարելով ցեղի ու լեզուի շփոթի հետեւանք, որուն օրինակով հայերը այնքան «արիացի» էին, որքան ԱՄՆի սեւամորթները՝ անգլեւսաքսոն: Ըստ անոր, Սուրիոյ բնակչութեան ցեղային կազմութիւնը ո՛չ սեմական էր, ո՛չ ալ արիական, ու այս ընդհանրացումը կը տարածուէր նաեւ Փոքր Ասիոյ եւ Հայաստանի բնակչութեան վրայ[28]: Գալով հայերուն, «*որոնց երակներուն մէջ շատ աւելի "ալարոդեան", այսինքն՝ սուրիական արիւն կայ*» (մնացեալը ըլլալով հնդեւրոպական՝ փռիւգիական, եւ ո՛չ թէ սեմական), անոնք հրեաներուն նոյն ագահութիւնը, գործարարական խորամանկութիւնը եւ վաշխառութեան սէրը ցոյց կու տային, բայց աւելի բարձր աստիճանով, որով Չեմպըրլէն կը յիշէր Արեւելքի այն առածը, թէ «մէկ հայը կը հաւասարի երեք հրեաներու»[29]:

Ստորեւ պիտի ներկայացնենք այս մտայնութեան քանի մը բարացուցական օրինակներ՝ մեր հաւաքած բազմատասնեակ գրաւոր վկայութիւններէն: 1896ին, Թուրքիա այցելած գերմանացի հնագէտ Ալֆրէտ Քէօրթէ (1866-1946) կը գրէր, թէ «*կարելի է պնդել, թէ հոն ուր մէկը կը խաբուի Անատոլիոյ մէջ, գործ ունեցած է հայերու հետ*»[30]: Երկու տարի ետք, լրագրող Հանս Պարթ հայերը կը մեղադրէր իբրեւ վաշխառուներ, որոնք իրենց իսլամ դրացիները կը կողոպտէին[31], ինչ որ Փոլ Կայսթէր կը կրկնէր Օսմանեան Կայսրութեան նուիրուած իր դոկտորական աւարտաճառին մէջ (1907)[32]: Անոր մէկ տարբերակը՝ «տիրական ցեղերու կողերը ծծողներ», շարադրած է աշխարհագրագէտ Էւալտ Պանսէ (1883-1953) 1915ին[33]: 1908ին, Համագերմանական Լիկայի կարեւոր դէմքերէն Միւնիխի Համալսարանի դասախօս Ալպրեխտ Վիրթ (1866-1936), հայոց մասին ժխտական կարծիքներ շարադրելէ ետք, կ'ընդունէր, որ բոլոր հայերը վատ չէին: Հարցը այն էր, որ անոնց «արիական արիւնը» «բարակցած» էր (այսինքն՝ խառնուած էին): Ան կը նախընտրէր քիւրտերու «շքեղ ցեղը» իբրեւ Գերմանիոյ իսկական «արիացի» դաշնակիցը Միջին Արեւելքի մէջ[34]:

Օսմանեան Կայսրութեան մէջ գործող գերմանացի զինուորականները, որոնցմէ ոմանք յետագային նացի Գերմանիոյ ծառայած են, բարձր կարծիք չունէին հայոց մասին: Անոնցմէ մէկը՝ սպայ եւ պատմաբան Ֆրանց-Քարլ Էնտրէս (1878-1954), որ Թուրքիոյ մասին քանի մը գիրք հրատարակած է, գրած է թէ թուրքերու արժանապատուութիւնն ու խոհեմութիւնը զանոնք «*հայերու, հրեաներու եւ յոյներու հետ գործարարական մրցակցութեան մէջ միշտ սպորակայ*» կը դարձնէր: Թուրք հազուագիւտ կարեւոր վաճառականները, «*նորէն շատ աւելի լաւ են, քան Արեւելքի բոլոր ոչ-*

թուրք վաճառականները», աւելցնելով, որ լեզուն չգիտցող եւ թուրքերն ու թրքախօս հայերն ու յոյները իրարմէ չտարբերող ուղեւորները իրաւացիօրէն գանգատած էին «*գողութեան ու խարդախութեան միջոցով այն անամօթ խաբեբայութեան ու շահագործումին, որոնց մնայուն զոհն*» էին[35]: Չունենալով առեւտրական ուղղուածութիւն, թուրքերը հմուտ չէին դրամական գործերուն մէջ, դառնալով «*շատ յաճախ զոհը Փոքր Ասիոյ խորամանկ, ագահ յոյներու եւ վերոյիշեալ հայերու սուրին ու հնարամտութեան*»[36]:

1916ին, օսմանեան սպայակոյտի աշխատակազմի ղեկավար զօրավար Պրոնսարթ ֆոն Շելենտորֆ, գրած է իր օրագրին մէջ, թէ հայերը «մակաբոյծ» եւ «խռովարար» էին, եւ աւելցուցած. «*ամբողջ Թուրքիոյ մէջ անոնք ամենավատ հրեաներէն աւելի կ'ատուին*»[37]: Փետրուար 1918ին, ան փորձած է արդարացնել ցեղասպանութիւնը՝ գերմանական արտաքին գործոց նախարարութեան մէկ խորհրդատուին գրելով. «*Այսինքն, հայը ճիշտ հրեային պէս է, իր հայրենիքին սահմաններէն դուրս մակաբոյծ մը, որ հիւրընկալ երկրի ժողովուրդին ողն ու ծուծը կը հանէ: Տարուէ տարի իրենց բնիկ հողը կը լքեն - ինչպէս կ'ընեն Գերմանիա գաղթող լեհ հրեաները – վաշխառուական գործերով զբաղելու համար*»[38]:

Նոյնպէս Փետրուար 1918ին գրուած նամակի մը մէջ, Ամերիկա ապրող գերմանացի կենսաբան Ժաք Լէօպ կ'ամփոփէր գերմանական կեցուածքին տրամաբանութիւնը.

> Դուք թերեւս գիտէք, որ աշխարհի նուաճման գերմանական համակարգին մէկ մասն էր տեւտոնական "ցեղային գերակայութեան" առասպելով տպաւորել գերմանական միտքը: Բոլոր ազգերն ու խումբերը որոնք վտանգաւոր էին Հեռաւոր [sic] Արեւելքի շահագործումին մէջ, յատկապէս հայերն ու հրեաները, դատապարտուեցան որպէս չարագործ եւ ստորակայ ցեղեր: Այսպէս, Տիւրինկ հայերուն մասին կը խօսի իբրեւ "հայկական որդ": Գերմանացի մարդաբաններու, Հիւսթըն Չեմպըրլէնի պէս գրիչներու եւ սողուն մամուլին ամբողջ ցեղախումբին քարոզչութեան արդիւնքը տեսած ենք: Հայոց ջարդերը կատարուեցան գերմանացի սպաներու գործօն մասնակցութեամբ[39]:

ՀԻԹԼԷՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հիթլէրի տեսութիւնները յիշեալ ցեղայնական մօտեցումներուն հրէշային շահագործումն ու կիրարկումը պիտի դառնային[40]: Դեկտեմբեր 1922ին տրուած գաղտնի հարցազրոյցի մը ընթացքին, Հիթլէր կը յայտնէր, որ անհրաժեշտ էր հրէական հարցը լուծել. «*Եթէ ասիկա չյաջողի, ուրեմն միայն ուրիշ երկու կարելիութիւն կայ. կա'մ գերման ժողովուրդը հայերուն կամ լեւանթէններուն պէս ազգ մը պիտի դառնայ, եւ կա'մ արիւնալի բախում մը պիտի ունենայ*»[41]: Հայերու եւ լեւանթէններու քով-քովի նշումը պատահական չէր: Լեւանթէնները (լատինական ծագումով քրիստոնեաներ, որոնք Օսմանեան Կայսրութեան մէջ կ'ապրէին, եւ անոնց շառաւիղները՝ այժմու Թուրքիոյ եւ Միջին Արեւելքի մէջ այսօր) սովորաբար կը համարուէին միջին արեւելեան ժողովուրդներու խառնիճաղանջ մը, որ ազգային (=

ցեղային, ethnic) ինքնութենէ զուրկ էր, հետեւաբար՝ անվստահելի: Անգլիոյ թուրք դեսպանի որդւոյն կատարած ընդհանրացումը, նոյն թուականին լոյս տեսած գիրքի մը մէջ, բնորոշ է. «*Լեւանթէնը Մերձաւոր Արեւելքի մակաբոյծն է: Ան ո՛չ երկիր, ո՛չ խիղճ, ո՛չ բարոյականութիւն, ո՛չ պարկեշտութիւն ունի՝ առեւտրական թէ անձնական կեանքի մէջ: Ամէն պարագայի, ան ինքզինք երբեք լեւանթէն պիտի չկոչէ, քանի որ այդ անուանումը այնքան խարանուած է Մերձաւոր Արեւելքը ճանչցող բոլորի աչքին*»[42]: Հիթլէր կ'արձագանգէր նաեւ իր պատանեկութեան նախասիրած հեղինակներէն մէկուն՝ ժողովրդային վիպասան Քարլ Մէյի (1842-1912) արկածախնդրական վէպի մը մէջ (1898) ակնարկուած բարոյական անկումին. «*Երբ եւ ուր կը գործուի որեւէ չարիք Արեւելքի մէջ, հաւանաբար անոր ետին կայ լեւանթէնի մը, յոյնի մը կամ, աւելի հաւանաբար, արծուաքիթ հայու մը ձեռքը*»[43]: Կ'ըսուի, թէ Հիթլէր իր զօրավարներուն յանձնարարած էր Մէյի վէպերուն ընթերցումը, որոնք աւելի քան 70 հատոր կը հաշուէին իր անձնական գրադարանին մէջ: Անոնց շարքին էին Ամերիկայի Հեռաւոր Արեւմուտքին նուիրուած վէպերը, որոնք կը նկարագրէին եւրոպացիներու նուաճումն ու բնիկներուն անխուսափելի բնաջնջումը: Ասոնք թերեւս գերմանացի առաջնորդին ցեղասպան գաղափարներուն աղբիւրներէն մին եղած ըլլան[44]:

1920ականներուն ցեղապաշտութեան ուրուականը հետզհետէ աւելի կ'ահագնանար եւրոպական հորիզոնին վրայ: Յայտնապէս, հայերը վտանգաւոր դրացնութեան մէջ կը գտնուէին, ինչպէս կը փաստէր Հիթլէրի 1924-25ին լոյս տեսած ու խոր ցեղապաշտութեան ու հակասեմականութեան մէջ թրծուած *Mein Kampf* (Իմ պայքարս) ինքնակենսագրական հատորը: Չեմպըրլէնի հետեւորդներէն մին՝ յետագային նացի գլխաւոր ցեղաբան Հանց Ֆ.Ք. Կիւնթէր (1891-1968), արդէն 1925ին կը պնդէր, որ հայկական տարածաշրջանի ոչ-ինդեւրոոպալեզու բնակչութիւնը այդ լեզուն ստացած էր տիրակալ «հիւսիսական» փռիւգիացիներէն, իսկ այնուհետեւ «*հայերուն մէջ առաջաւորասիական սպորին կարգերը ամբողջովին փոխած են այս հնդեւրոպական լեզուն՝ զայն համապատասխանեցնելու համար իրենց լեզուական հոգեբանութեան՝ կովկասեան (ալարոդեան) լեզուներու ուղղութեամբ (...)*»: Ան կ'եզրակացնէր, որ հիւսիսական բարձր դասակարգը շուտով անհետացած էր հայերուն մէջ, իսկ «հայերը այսօր խիստ ջախջախիչ կերպով առաջաւորասիացի են»[45], այսինքն՝ ոչ-հիւսիսական եւ ոչ-արիացի:

Իր կարգին, Կիւնթէրի հետեւորդ Ալֆրէտ Ռոզենպերկ (1893-1946)՝ Հիթլէրի ցեղային հարցերու խորհրդատուն ու նացի կուսակցութեան գլխաւոր գաղափարախօսը, որ նաեւ Չեմպըրլէնի ընթերցումներով ներշնչուած էր, հայերը ստորին ցեղ մը կը նկատէր՝ հրեաներուն նման: Իր ազդեցիկ *Der Mythus des zwanzigsten Jahrhunderts* գիրքին մէջ (Քսաներորդ դարու առասպելը, 1930), Ռոզենպերկ արձանագրած էր, որ բոլշեւիկեան յեղափոխութիւնը պարտութեան մատնած էր Ռուսաստանի հոգիին հա-

մար պայքարող հիւսիսականները եւ երկիրը կրկին մոնկոլներու ձեռքը ինկած էր. «*Հիւսիսական ռուսական արիւնը լքեց պայքարը, արեւելքցի մոնկոլները ուժեղօրէն շարժեցան, օգնութեան կանչեցին չինացիներն ու տափաստանի ժողովուրդներ, հրեաներն ու հայերը յառաջացան դէպի ղեկավարութիւնը եւ կալմուկ թաթար Լենինը փէր դարձաւ*»[46]:

Հիթլէր Գերմանիոյ վարչապետ նշանակուած է Յունուար 1933ին: Հազիւ ամիս մը ետք (5 Մարտ 1933), նացիները կը յաղթանակէին խորհրդարանի ընտրութիւններուն, իսկ նախօրօք արդէն ընդունուած էր պետական օրէնք մը, ըստ որուն Հիթլէր յաջորդ չորս տարիներուն պիտի կառավարէր առանց խորհրդարանական վաւերացումի անհրաժեշտութեան:

Հակահրեայ շարժումը պաշտօնապէս սկսած է Մարտ 23ին, երբ ներքին գործոց նախարար Վիլհելմ Ֆրիք օրէնքի նախագիծ մը կը ներկայացնէ կառավարութեան, ըստ որուն միայն «արիական ցեղ»ին անդամները կրնային հանրային ծառայութեան ընդգրկուիլ: Իբրեւ ոչ-արիացի կը սահմանուէին անոնք (յատկապէս հրեաները), որոնք ոչ-արիացի ծնողներու կամ պապերու ժառանգորդ էին (մէկ հոգիի ոչ-արիացի ըլլալը բաւարար էր): Այսպէսով, ոչ-արիացիները կը վտարուէին հանրային բոլոր պաշտօններէն: Մասնագիտական հանրային պաշտօններու վերականգնումի օրէնքը («արիական օրէնք») հրապարակուած է Ապրիլ 7ին եւ անմիջապէս գործի դրուած:

ՀԱՅԵՐՈՒ «ԱՐԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ՃԱՆԱՉՈՒՄԸ

Նկատի ունենալով տասնամեակներ շարունակ մշակուած տրամադրութիւնները, վտանգը յայտնապէս կը սպառնար նաեւ հայութեան: Դաշնակցական գործիչ եւ Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի երբեմնի անդամ, Պերլինի Համալսարանի հայերէնի դասախօս Արտաշէս Աբեղեան (1878-1955) *Հայրենիքի* խմբագիր Ռուբէն Դարբինեանին կը գրէր 25 Մարտ 1933ին՝ օրէնքի նախագիծի ներկայացումէն երկու օր ետք.

> Շատ թերթեր (գերման) մեզ՝ հայերիս խառնում են հրեաների հետ եւ մի ամանի մէջ լուանում: Մենք աշխատում ենք ցոյց տալ, որ այդ ճիշդ չէ եւ որ մենք մշակոյթային եւ այլ կարեւոր կապեր ունենք Գերմանիոյ հետ եւ Գերմանիա շահ ունի պահպանելու այդ կապերը:
>
> Ես տեսնում եմ արդէն մի շարք անձերի (մասնաւոր եւ պաշտօնական) հետ եւ խօսում վերոյիշեալ իմաստով: Պարզում եմ ամենից առաջ իրենց իսկ՝ Գերմանների շահն է պահանջում, որ մեր վրայ չյարձակեն, չխառնեն մեզ հրեաների հետ[,] այլ ընդհակառակն՝ ամրապնդեն արդէն եղած կապերը:
>
> (...) Ուրիշ քայլեր եւս անում ենք այդ ուղղութեամբ՝ "ապացուցելու" համար մեր արիական լինելը եւ հրեաների հետ կապ չունենալը[47]:

Ի հակազդեցութիւն հայամերժ տեսակէտերուն եւ անոնց ենթադրած վտանգին, Գերմանա-Հայկական Ընկերութեան (ԳՀԸ) նախագահ ու հիմնադիր անդամ Փաուլ Ռորպախ (1864-1956) պիտի յաջողէր համոզել ներքին գործոց նախարարութիւնը, որ պաշտօնապէս յայտարարէր, թէ հայե-

րը արիացի էին: Անշուշտ, Աբեղեան եւս գործակցեցաւ Ռորպախի հետ՝ Պերլինի Համալսարանի դասախօսի (1926էն) եւ ԳՀԸի փոխ-նախագահի իր զոյգ հանգամանքներով (վարչութեան անդամ ընտրուած էր Յուլիս 1933ին): Վերի նամակին «մենք աշխատում ենք ցոյց տալ» արտայայտութիւնը հաւանաբար կ'ակնարկէր նաեւ իր կուսակցութեան տեղական կազմի գործունէութեան:

ԳՀԸի դիմումներուն յաջողութիւնը պէտք է վերագրել, առաջին հերթին, պաշտօնական մակարդակի վրայ Ռորպախի ունեցած կապերուն: Ան կը նկատուի 1900-30ականներու գերմանական կայսերապաշտ գրականութեան կարեւոր մասնիկներէն՝ Ա. Աշխարհամարտէն առաջ իր հրապարակագրութեամբ ու հատորներով, երկրի արտաքին քաղաքականութիւնը ձեւաւորողներէն ըլլալով իբրեւ Միջին Արեւելքի մէջ ծաւալապաշտութեան ջատագով, թէեւ, ըստ իրեն, այդ ծաւալումը պէտք է զուգընթաց ըլլար գերմանական մշակոյթի ու բարոյականութեան՝ ուժի մը վերածումին: Ան յատկապէս քննադատած էր հայոց թրքական բնաջնջումի ծրագիրը, հաւատալով, որ անոնք մշակութային ժողովուրդ մըն էին, ի զօրու՝ գերմանական գաղափարներն ու հաստատութիւնները ընկալելու[48]:

«Արիական օրէնք»ը կը սահմանէր, մէջբերած է Ռորպախ իր յուշերուն մէջ, որ «*եթէ արիական ժառանգութիւնը կասկածելի է, ներքին գործոց նախարարութեան կից ցեղային հետազօտութեան մասնագէտէն կարծիք մը պէտք է առնուի*»[49]: Ի պատասխան Ռորպախի եւ ԳՀԸի վարչականներէն Է. Շտիրի՝ 3 Յուլիս 1933ին ներքին գործոց նախարարութիւնը կը հրապարակէր «մասնագիտական ցեղային նամակ» մը, ըստ որուն հայերը արիացի կը նկատուէին[50]: Օգոստոս 31ին նախարարութեան ցեղային հարցերու փորձագէտ Ալպերթ Կորթէր զանոնք կը դասէր արեւելեան (ասիական) արիացիներուն շարքին, որպէս իրանցիներու (պարսիկ, աֆղան, հայ, վրացի եւ քիւրտ) մէկ ճիւղը[51]: Իսկ Սեպտեմբեր 29ի նախարարի յանձնակատարին ստորագրած որոշումը կը յայտնէր, «թէ հայերը, ըստ մասնագիտական պաշտօններու վերականգնումի օրէնքին, արիացիներ պէտք է նկատուին»[52]: 1933ի աւարտին, *Հայրենիք* ամսագրի լուրերու ամփոփումի պատասխանատուն՝ Արշամ Խոնդկարեան, գոհունակութեամբ կ'արձանագրէր, թէ «*հիթլերեան ցեղակրօնութիւնը իր յախուռն դատավճիռներով սպառնում էր նաեւ հայերին դասել ոչ-արիական ժողովուրդների կարգը եւ ենթարկել նրանց նոյն այն հալածանքներին, ինչ որ հրեաներին: Եղած միջնորդութիւնների ու դիմումների հետեւանքով նացիները համաձայնում են պաշտօնապէս ընդունել, որ հայերը արիական են եւ ազատ, ուրեմն, հալածանքներից*»[53]:

Հալածանքները շուտով մերձ-իրաւական նոր հանգրուանի մը պիտի բարձրանային Սեպտեմբեր 1935ին, Նիւրեմպերկի տխրահռչակ զոյգ օրէնքներուն վաւերացումով, որոնք մէկ կողմէ կ'արգիլէին գերմանացիներու (արիացիներ) եւ հրեաներու (ոչ-արիացիներ, ներառեալ նաեւ խառնա-

ծինները՝ mischling) խառնամուսնութիւնը, իսկ միւս կողմէ գերմանական հպատակութենէ կը զրկէին ոչ-արիական արիւն ունեցող անձերը: Այսպիսով, Գերմանիան դարձաւ աշխարհի երկրորդ երկիրը (Մ. Նահանգներէն ետք), որ ցեղային սահմանափակում կը դնէր հպատակութեան: Խտրականութեան այս նոր փուլը 1942ին պիտի յանգէր «վերջնական լուծում»ին՝ հրեաներու, գնչուներու եւ այլոց բնաջնջումին:

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ

1934ին Աբեղեան գրած էր, առանց մանրամասնելու, թէ հակահայ արշաւը «պղտոր աղբիւրներից» կու գար, որոնք «արդէն իսկ սկսել էին ժանտ պտուղներ տալ»[54]: Այդ աղբիւրներէն մէկը թրքական քարոզչութիւնն էր, ըստ 1932-36ին Գերմանիա ապրած ամերիկահայ գիտնական Մանասէ Կ. Սեւակի (1895-1967)[55]: Հիթլէրական երիտասարդութիւնը Փրակա ծնած ու Աւստրիա ապրող հրեայ ծագումով գրագէտ Ֆրանց Վերֆէլի (1890-1945) գործերը ընդգրկած էր 10 Մայիս 1933ին գիրքերու հրապարակային հրկիզումին: Նոյեմբեր 1933ին, Վիեննայի մէջ լոյս տեսաւ Վերֆէլի հռչակաւոր *Մուսա Տաղի Քառասուն Օրերը* վէպը: Հրատարակութիւնը անմիջապէս թրքական զայրոյթի թիրախը դարձաւ: Նախկին իթթիհատական ու այնուհետեւ Աթաթիւրքի սերտ գործակից Ֆալիհ Ռըֆքը Աթայ (1894-1971) Դեկտեմբեր 25ին քննադատական յօդուած մը գրած է *Հաքիմիյէթ-ի-Միլլիյէ* պաշտօնաթերթին մէջ, որուն հետեւած է, երկու օր ետք, գրագէտ եւ քաղաքական գործիչ Պուրհան Ասաֆ Պելկէի (1899-1967) յօդուածը[56]: Փետրուար 1934ին, *Մուսա Տաղի Քառասուն Օրերը*ի վաճառքը կ'արգիլուէր Գերմանիոյ մէջ՝ գիրքերու բոնագրաւումի պաշտօնական հրահանգով, մամուլին մէջ բազմաթիւ քննադատութիւններու արժանանալէ ետք: Արգելքէն քանի մը օր առաջ, գերմանացի գրավաճառ Ռոլֆ Հոյքեսհովէն կը յայտնէր Վերֆէլի հրատարակիչին. «*Ինծի ծանօթ թուրք լրագրող ու գրող մը, որ Գերմանիա կ'ապրի, մտահոգուած է այս գիրքին մասին եւ շուտով պիտի դիմէ պատկան իշխանութիւններուն՝ զայն արգիլելու համար: (...) Չափազանց ցաւալի պիտի ըլլար գիրքի առեւտրուին համար եթէ արգելքը յաջողէր, որովհետեւ գիրքը ինքնին միտումէ զուրկ է եւ արգելքը միայն պիտի գոհացնէր այս մէկ անձին ցանկութիւնը, որ չենք գիտեր նոյնիսկ եթէ թուրք ժողովուրդին անունով կը գործէ*»[57]: Ամերիկահայ *Տի Արմինիըն Միրըր* շաբաթաթերթը Նիւ Եորքի մէջ հաղորդած է, թէ Ֆալիհ Ռըֆքը, «*մեծապէս զայրացած՝ թրքական բարբարոսութիւնը նկարագրած այս պատմութեան հանդէպ, գրած է գերմանական կառավարութեան, յոյս յայտնելով, որ գիրքը կ'արգիլուի՝ իբրեւ Գերմանիոյ եւ Թուրքիոյ միջեւ գոյութիւն ունեցող բարեկամական դաշինքի արտայայտութիւն*»[58]:

Սակայն, Մարտ 1934ի նամակի մը մէջ, գերմանացի նշանաւոր թատերագիր ու Վերֆէլի բարեկամ Կերհարտ Հաուպտման (1862-1946) կը յայտնէր, թէ «Թուրքիա բողոք բարձրացուցած էր նաեւ քաղաքական մակար-

դակի վրայ»[59]: Արդարեւ, այս բողոքին բուն աղբիւրը եւ արգելքին պատասխանատուն Թուրքիոյ կառավարութիւնն էր, յանձին Գերմանիոյ մօտ դեսպան Ֆերիտուն Ճեմալ Էրքինի (1899-1980), որ պատմած է իր յուշերուն մէջ.

> Թուրքիոյ արտաքին նախարարութենէն ստացած հեռագիրը մեզի կը յանձնարարէր գիրքի արգիլումին ու բռնագրաւումին աշխատանքով զբաղիլ: Այս նպատակով այցելեցի Արտաքին Գործոց նախարարութեան աշխատակազմի տնօրէն Հանս Տիքոֆին: Խոստանալով գործել ըստ մեր ցանկութեան, ան թելադրեց որ այս նիւթին շուրջ խօսէի քարոզչութեան նախարար Եոզէֆ Կէօպելսի հետ՝ լաւագոյն եւ արագ արդիւնքի մը համար: Ժամադրութիւն առի եւ գացի քարոզչութեան նախարարը տեսնելու: Այս անձը փայլուն, վարպետ քաղաքագէտ մըն էր: Ան մտիկ ըրաւ ինծի եւ ըսաւ. "Կը խոստանամ, որ ամեն ինչ պիտի կարգադրուի": Երեք օր ետք գիրքը արգիլուեցաւ ու բռնագրաւուեցաւ Գերմանիոյ մէջ: Կրկին գացի քարոզչութեան նախարարը տեսնելու՝ շնորհակալութիւն յայտնելու նպատակով: Նախարարը ըսաւ. "Այնքան կը զգուշանանք սխալ գործելէ՝ Թուրքիոյ հետ մեր յարաբերութիւնը չմթագնելու համար, որ պատրաստ ենք այս նիւթին գծով ամէն ինչ ընելու"[60]:

Արձագանգելով 1935ի վերջերուն ամերիկահայութեան խանդավառ ընդունելութեան՝ Վերֆէլի Մ. Նահանգներ այցելութեան ժամանակ, Յունուար 1936ին գերմանական Էս-Էսի թերթը՝ *Die Schwarze Korps*, պախարակած է թէ՛ Վերֆէլի «արիւնածարաւ» գիրքը՝ «լեցուն թուրքերու կողմէ գործադրուած ենթադրեալ գազանութիւններով», եւ թէ՛ «հայ հրեաներուն լուռ քարոզչութիւնը ԱՄՆի մէջ» անգլերէն թարգմանութեան ի նպաստ[61]:

Հաւանական է, որ ինչպէս ԳՀԸը յաջողած էր հայանպաստ որոշում մը ձեռք ձգել քուլիսներու ետին, թրքական իշխանութիւնները հակահայ քարոզարշաւի ձեռնարկած ըլլային միեւնոյն ձեւով: Ամէն պարագայի, հայերու ցեղային պատկանելիութեան մերժումին վերաբերեալ այդ քարոզարշաւին փաստական ապացոյցներուն տակաւին չենք հանդիպած:

ARMENIERTUM-ARIERTUM

Յարաբերական աշխատանքներուն զուգահեռ, ԳՀԸը ծրագրեց եւ 1934ին հրատարակեց *Armeniertum-Ariertum* գիտական ժողովրդականացման հատորիկը՝ 3000 տպաքանակով[62], որուն նպատակն էր «*գերման ընթերցողների լայն շրջանակներում հայերի մասին գիտականօրէն հիմնաւորուած եւ սփոյգ տեղեկութիւններ*»[63] տարածել: Եթէ ընդունինք Մանասէ Սեւակի վկայութիւնը, թէ Գերմանիոյ տարրալուծարանի իր պաշտօնակիցները այդ տարիներուն կասկածած են իր ծագումին մասին եւ նոյնիսկ արեան քննութիւնը կատարած՝ ճշտելու համար սեմական ծագում ունենալու կասկածները[64], կրնանք պատկերացնել, թէ որքա՛ն հրատապ էր հարցը՝ հրեաներու դէմ սկսած հալածանքէն հայերը զերծ պահելու:

Մերօրեայ ակնոցով՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գիրքին նպատակը՝ հայոց «արիական» պատկանելիութեան փաստարկումը, կը հե-

տեւէր օրուան միտումին՝ «ցեղ» հասկացութեան չափազանցուած օգտագործումին, անտեսելով հնդեւրոպականութեան գաղափարին զուտ լեզուաբանական բնոյթը: Քարլ Ռոթի եւ Հայր Կերհարտ Քլինկէի յօդուածներուն վերնագիրերը կը պարունակէին այդ բառը, թէեւ առանց իյնալու ցեղապաշտութեան մէջ[65]:

Հաւաքական այս հատորի յօդուածագիրներէն մէկն էր նացի քաղաքական գործիչ Եոհաննէս ֆոն Լէէրսը (1902-1965), որ արդէն 1933ին իր կուսակցութեան պաշտօնաթերթին մէջ առաջարկած էր հրէական հարցին լուծումը՝ հրեաները Եւրոպայէն դուրս փոխադրելու ճամփով: Այս յօդուածէն առաջ, ան մաս կազմած էր յօդուածագիրներու այն խմբակին, որ կը պնդէր հայերու եւ հրեաներու ցեղակցութեան մասին եւ թէ հայերը «ունին վերջիններիս բարոյական նկարագիրը»[66]:

Մարտ 1933ի նամակին մէջ, Աբեղեան գրած էր Դարբինեանին.

> Գիտես, որ մի քանի գերմանական թերթեր հրատարակեցին *հակահայ* յօդուածներ, որոնց թւում նաեւ յայտնի *նացիոնալ սոցիալիստ* հրապարակախօս եւ գործիչ Ֆոն Լէէրս: Անցեալ օրը տեսակցութիւն ունէի նրան հետ՝ յանուն Հայ ու Գերման ընկերակցութեան: Երեւակայիր, որ մի ամբողջ ժամ լսեց ինձ սիրալիր կերպով եւ կատարելապէս դարձի եկաւ: Խոստովանեց անկեղծօրէն իր սխալը եւ խոստացաւ շուտով երկու յօդուած գրել, ի նպաստ հայերի: Ի հարկ է, ահագին նիւթեր տուի իրեն[67]:

Այս տեսակցութեան արձագանգը պէտք է նկատել նոյնինքն Աբեղեանի գրածը՝ թէ՛ գերմանացի հրապարակագրին աշխատակցութիւնը եւ «թէ՛ աւելի առաջ՝ գերման մամուլի մէջ հրատարակած ու "Հայերին հրէաների շա՞րքը դասելու է" յօդուածով սրբագրում է գերման մի քանի ցեղաբանների եւ հրապարակագիրների այն մոլար կարծիքը՝ թէ հայերը ցեղակից են հրէաներին (...): Բարեբախտաբար, խնդրին ի մօտոյ ծանօթանալուց եւ լուսաբանուելուց յետոյ՝ նա փոխեց իր հայեացքը[68]»: Ֆոն Լէէրս գիրքին իր յօդուածը՝ «Հայերը եւ արիացիները», կ'եզրափակէր յայտնելով, թէ «մեր ոչ սպառիչ ուսումնասիրութիւնների պատճառով ժխտում ենք նրա արիացի լինելը» եւ կ'աւելցնէր.

> Ոչ մի տեղ չափազանցուած հետեւութիւններն այնքան անիմաստ չեն դարձել, որքան ռասսայական այդքան քիչ լուսաբանուած հարցում: Այն, որ հայ ժողովուրդը իր մէջ չի ներառել հրէութեան բաղադրատարրեր եւ ոչ էլ սեւամորթի արիւն ունի ("դեղին ռասսա" ասելիս պէտք է շատ զգուշ լինել) եւ որ հիւսիսային ռասսային յատուկ նկատելի ազգակցական կապ ունի, բաւական է, որ նա բնութագրուի որպէս արիական ժողովուրդ: Սակայն, դա չի վերաբերում միայն հայ ժողովրդին, որ այդպիսի լեզուով է արտայայտւում նաեւ այսօր եւ ունի հիւսիսային ռասսայի պարզորոշ ընկալելի բնութագրական բաղադրատարրերը. սա ապացուցելի է նաեւ հնդգերմանացի [հնդեւրոպացի] ժողովուրդների ընտանիքի եւրոպական ճիւղի մի մասի համար եւս:
>
> Հայերը, այսպիսով, արիական ժողովուրդ են[69]:

Ռորպախ գիրքին վերջաբանը հանդիսացող իր կարճ յօդուածը վերնագրած էր «Աւելորդ հարց», ընթերցողին մատնանշելով խնդրին անհեթեթութիւնը: Մերօրեայ գիտական չափանիշերով, սկզբնական հաստատումը ըստ էութեան ճիշտ էր, բացառելով հնդգերմանացի (հնդեւրոպացի)-արիացի ընթացիկ հաւասարութեան ընդունումը. «*Հայերը արիացիներ են: Աւելի ճիշտ, հայերը հնդգերմանացիներ են: "Արիացի" հասկացութիւնը պէտք է թերեւս կիրառել միայն այն ժողովուրդների վերաբերեալ, որոնք իրենք են իրենց այդպէս անուանում, այն է՝ Հիւսիսային Հնդկաստանի եւ Իրանի հիւսիսային նուաճողների: Բայց քանի որ "արիացի" շփոթեցնող արտայայտութիւնը վերջերս օգտագործելի է դարձել "հնդգերմաններ"ի փոխարէն, ապա այդ անուանումը կարելի է ճիշտ համարել (...)*»[70]:

Ֆոն Լէէրս արդէն ակնարկած էր, որ «*"արիականը" նոյնը չէ ինչ հիւսիսայինը, ինչպէս Գիւնթէրի ռասսայական ուսմունքի մէջ է: (...) Հիւսիսայինը միայն բաղադրամաս է, եթէ չասենք որ արիականի ամենանշանակալից բաղադրատարրը*»[71]: Աբեղեանի յօդուածը՝ «Հիւսիսային տիպերը Հայաստանի մէջ», ուղղուած էր Կիւնթէրի տեսակէտերը ջրելու: Ան կը յիշատակէր ժամանակակից (Ֆրիտիոֆ Նանսէն, Եոհաննէս Լեփսիուս, Ռուբէն Տէր Մինասեան) ու հին գրական վկայութիւններ (ժողովրդային բանահիւսութիւն, Մովսէս Խորենացի), ինչպէս եւ հնագիտութեան փաստեր (Երուանդ Լալայեան)՝ հայերու մէջ բաց գոյն մաշկ ունեցող եւ շիկահեր («հիւսիսական») տարրի առկայութեան մասին: Որպէս եզրակացութիւն, Աբեղեան կը յիշէր ականաւոր ցեղագէտ Ֆրից Լենցի (1887-1976) խօսքը, թէ «ըստ իր ծագման ու լեզուի, ըստ իր պատմութեան ու մշակոյթի, ըստ ընդհանուր աշխարհայեացքի, ըստ իր էութեան, նա անպայմանօրէն դասւում է հնագոյն արիացիների շարքին», ու կ'եզրափակէր Հիթլէրի 17 Մայիս 1933ի ելոյթէն քանի մը տողով՝ սեփական ժողովուրդը սիրելու եւ այլ ժողովուրդներու ազգային իրաւունքները յարգելու մասին[72]: Նացի տեսութիւններու առաջնակարգ քարոզիչներէն մէկուն՝ Լենցի կարծիքին յիշատակումը, եւ Հիթլէրէն մէջբերումը նոյն դերը կը կատարէին այս համագիրին մէջ, ինչ Մարքսէն, Լենինէն կամ Ստալինէն մէջբերումները՝ խորհրդային գրականութեան մէջ, յաւելուածական մէկ նպատակով. հայոց իրաւունքները յարգելու անհրաժեշտութիւնը յիշեցնել՝ նացի առաջնորդին ձեւական մէկ յայտարարութեան ընդմէջէն:

Ի հարկէ, համահեղինակ հրապարակագիրներէն եւ գիտնականներէն ոմանք օրուան գիտութեան կամ քաղաքականութեան միտումներուն հետեւորդ էին: Օրինակ, Եոզէֆ Ստրժիկովսկի (1862-1941), որուն ճարտարապետական տեսութիւններուն ցեղայնական մօտեցումը այլեւայլ առիթներով նշուած է[73], իր «Հայերը որպէս հնդգերմանական ճարտարապետական մտածողութեան կրողներ» բնորոշ վերնագրով յօդուածին մէջ կը պնդէր, որ «հայկական ճարտարապետութեան ճանաչումը որպէս հնդգեր-

մանական (եւ ոչ թէ միջերկրածովեան) կարեւոր դիրքորոշում է՝ միակ ճիշտ եւ մեր հայրենիքին արժանավայել ըմբռնման նուաճման համար»[74]:

Ուրիշ աշխատակից մըն էր իրանագէտ Հանս Հայնրիխ Շետէրը (1896-1957), 1931-44՝ Պերլինի Համալսարանի արեւելեան բանասիրութեան ու կրօնական պատմութեան դասախօս, գնահատուած իբրեւ նացիական արեւելագիտութեան առաջնակարգ խօսնակ մը, ցեղապաշտական այլազան հակումներով[75]: Այսուհանդերձ, հայ լեզուի ու գրականութեան հնագոյն պատմութեան անոր ամփոփ ու գիտականօրէն ճշգրիտ ուսումնասիրութիւնը, ինչպէս նաեւ Էալտ Շթիրի (հայ-գերմանական մշակութային առնչութիւններ) եւ Սաքսոնիոյ դուքս Մաքսի (1870-1951) յօդուածները (հայոց քրիստոնէութեան կերպը) զերծ են գաղափարախօսական ու քաղաքական բովանդակութենէ, ու կը պահեն իրենց այժմէականութիւնը կամ գիտական հետաքրքրութիւնը[76]:

Այս գիրքին պարագային կիրարկելի է ամերիկացի պատմաբան Մոտ Մանտըլի դիպուկ նկատողութիւնը. «Կեդրոնական եւ արեւելեան Եւրոպայի հրեայ ցեղաբաններուն նման, հայերը ժամանակակից խօսոյթը իւրացուցին՝ իրենց ժամանակակից դիրքը *պաշտպանելու* համար իրենց որդեգրած ընկերութեան մէջ (...)»[77]: Արդարեւ, 1900-20ականներուն յիշեալ հրեայ ցեղաբանները, որոնք մեծաւ մասամբ նորածիլ սիոնականութեան գաղափարական ծիրին մէջ էին, առաջադրած են - ինչպէս կը մեկնաբանէ Ճոն Էֆրոն - որ «հրէական ցեղային բնազդ մը գոյութուն ունէր, որուն ազդուութիւնը (effectiveness) ապահոված էր ցեղային բացառիկութիւն, ուստի եւ՝ հրէական ցեղային մաքրութիւն» (հմմտ.՝ Էլիաս Աւերպախի տեսութիւնները) կամ, ինչպէս կը գրէր այդ հեղինակներէն մէկը՝ Իկնաց Զոլշան (1877-1948), «*մերօրեայ հրեաները (...) կը կազմեն տեսակ մը որ բարձր աստիճանով միօրինակ է, անկախաբար աշխարհագրական գօտիէն եւ բնիկներուն ցեղային յատկանիշերէն*»[78]: Տիրական ցեղայնական մօտեցումներուն զուգահեռին վրայ աշխատող այս հետազօտողները, որքան գիտենք, չեն դատապարտուած իբրեւ հակասեմականութեան տեսութիւններու յարմարողներ կամ համակերպողներ, ինչ որ անարդարացի պիտի ըլլար: Սակայն, երկու չափ, երկու կշիռի այս մօտեցումն է, որ կիրարկուած է Աբեղեանի պարագային:

ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ՝ *ARMENI-ARIANI*

Այսուհանդերձ, պէտք չէ գերագնահատել *Armeniertum-Ariertum* գիրքին ունեցած քարոզչական անմիջական դերը, ի հեճուկս Մ. Սեւակի վկայութեան, թէ «*անոր ազդեցութիւնը անմիջապէս զգալի եղաւ: Դադրեցան հակահայ յօդուածները թերթերու մէջ, եւ "Armenien" անունը անուանացանկին մէջ առաջին տեղը գրաւեց այբուբենական կարգով: Ես տեսայ զայն ոսկիկանապան մը պատէն կախուած*»[79]: Արդարեւ, այդ ազդեցութիւնը վճռական չէր: Քարոզչական պատերազմին ելքը մէկ ճակատամարտով

կարելի չէր որոշել: Եթէ մամուլի հրապարակումները իսկապէս կանգ առած են, նոյնը չպատահեցաւ գիրքերու պարագային:

Յուլիս 1933ին իր գիրքին նախաբանը ստորագրած ծանօթ ցեղագէտ Մարթին Շտըմըլըր (1890-1974) հայերը կը զուգադրէր հրեաներուն՝ «նպաստավաճառի հոգի»ի եւ հիւրընկալ ազգերը շահագործելու մեղքերով, աւելցնելով, որ աշքենազի հրեաները առաջաւոր ասիացիներ էին՝ «հայերու մեծամասնութեան նման»[80]: 1935ին, մինչ մարդաբան Վիլհելմ Զիկլին (1858-1935) կ'իւրացնէր Աբեղեանի դրոյթները՝ հայերու հիւսիսական տարրերուն մասին[81], Հելմութ Քրիստոֆ հայերը «մակաբոյծ» կը նկատէր՝ հայերուն ու քիւրտերուն նուիրուած իր դոկտորական աւարտաճառին մէջ[82]: 1934ին Պրեսլաուի Համալսարանի մարդաբանութեան դասախօս Էկոն Ֆրայհէր ֆոն Այքսթէտ (1892-1965) կը գրէր, թէ հայերն ու հրեաները «զարմիկ» էին, 1938ին Տիթըր Կերհարտ հայերու եւ հրեաներու «ցեղային ազգականութիւնը» կը մատնանշէր[83]: Աւելի'ն. Հանս Կիւնթէրի 1934ի հատորը՝ *Die Nordische Rasse bei den Indogermanen Asien* (Հիւսիսական ցեղը ասիական հնդգերմանացիներուն մէջ), հայերուն «ցեղային ստորակայութիւնը» կը յիշէր[84], որուն նոյն բառերով 1938ի իր «Ցեղեր, ժողովուրդներ եւ ցեղախումբեր» գիրքով կ'արձագանգէր ոչ այլ ոք, քան 1933-34ին հայերը արիացի նկատող Եոհաննէս ֆոն Լէէրսը[85], որ այսպէսով կրկին շրջադարձ կը կատարէր:

Գիրքին անբաւար ազդեցութեան ուրիշ փաստ մը՝ զանգուածային քարոզչութեան տեսանկիւնէն, կարելի է տեսնել այն վկայութիւններուն մէջ, որ Նոյեմբեր 1938ի հակահրէական ջարդին՝ «ապակիներու գիշեր»ուան (Kristallnacht) ընթացքին, նոյնպէս հակահրէական որմազդեր զետեղուած էին հայերու տուներու վրայ, իսկ հայ մանուկներ պիտակուած էին որպէս հրեայ ու ենթարկուած՝ ինչ-ինչ սեղմումներու[86]:

Արիական ծագումը փաստագրելու պահանջը, բնականաբար, արդէն կը կրկնուէր Աւստրիոյ մէջ՝ Գերմանիոյ կցումէն ետք (Մարտ 1938): Հոկտեմբեր 1938ին, մամուլը կը տեղեկագրէր, թէ հոն բնակող փոքրաթիւ հայերէն ու իրենց ծնողներէն վկայագիրեր կը պահանջուէին, թէ հայ հօրմէ ու մօրմէ ծնած էին: Շատեր դիմած էին Պոլիս, զիրենք մկրտած եկեղեցիէն վկայական ստանալու եւ կառավարութեան ներկայացնելու համար: Նոյն պահանջը դրուած էր նաեւ Մխիթարեան Միաբանութեան անդամներուն[87]:

Շուտով, *Armeniertum-Ariertum*ը պիտի կոչուէր նոր դեր մը ունենալու, այս անգամ՝ թարգմանաբար: Փետրուար 1938ին, իտալացի մենատէր Պենիթօ Մուսոլինի կը յայտարարէր, թէ Իտալիոյ մէջ «հրէական հարց» գոյութիւն չունէր, քանի հրեայ տարրը ընդամէնը 50.000-60.000 հոգի կը հաշուէր՝ երկրի 44 միլիոն բնակչութեան մէջ, բայց կ'ազդարարէր, որ պիտի հետեւէր գաղթական ու բնիկ հրեաներուն շարժումներուն, երկրին մէջ անոնց կշիռն ու թիւը համեմատական պահելու համար: Ասիկա կը նախանշէր արդէն գոյութիւն ունեցող ցեղայնական տեսութիւններու ապագայ

որդեգրումը: Չորս ամիս ետք՝ Յուլիս 1938ին, խումբ մը իտալացի գիտնականներ իրենց ստորագրութիւնը կը դնէին Մուսոլինիի կողմէ շարադրուած ու գերմանական որոշակի ազդեցութեամբ «Ցեղապաշտ գիտնականներու մանիֆեստ»ին տակ, որուն յաջորդեցին բազմաթիւ այլ ձեռնարկումներ[88] մինչեւ Հոկտեմբեր 1938ի «ցեղային օրէնքներ»ուն վաւերացումը, որոնք բացայայտօրէն նման էին գերմանական բնորդին, թէեւ կարգ մը բացառութիւններ կ'ընէին անցեալին ֆաշական կուսակցութեան անդամակցած եւ պատերազմի վերերան հրեաներուն պարագային[89]:

Այսպէսով, Մուսոլինի ցեղապաշտութիւնը կ'որդեգրէր իբրեւ ֆաշականութեան բաղադրիչներէն մէկը: Այս քայլին նպատակն էր փոխակերպել իտալական նկարագիրն ու զօրացնել ազգային ինքնութեան գիտակցութիւնը: Հռոմէականութեան կեդրոնական գաղափարը կը համադրուէր գերմանական ծագում ունեցող արիական-հիւսիսական տարրին հետ՝ ռազմական գիծերը աւելի շեշտելու համար: Հակահրէական հալածանքներն ու խտրականութիւնը այս գաղափարական յեղաշրջումին միայն մէկ բաղադրիչը պիտի ըլլային:

Գերմանական զուգահեռը չէ սահմանափակուած օրէնքներու որդեգրումով, այլ անցած է նոյնիսկ անոնց կիրարկումէն բխած հարցերուն: Պատմաբան Միքելէ Սարֆաթթի յիշած է Սեպտեմբեր 1938ին ներքին գործոց նախարարութեան պատրաստած վաւերաթուղթ մը՝ «Իտալիոյ մէջ ներկայ ոչ-արիացիներուն իրավիճակը», որ 2416 ոչ-արիացիներուն շարքին կը նշէր «ափրիկեցիները» (սեւամորթներ եւ արաբ-պերպէրներ) եւ «ասիացիները» (մոնկոլներ, հայեր, թուրքեր, եմէնցիներ, պաղեստինցիներ, հնդիկներ եւն.): Ըստ այս փաստաթուղթին, երկրի հայերու թիւը 355 էր[90]: Հայերու հանդէպ հնարաւոր հաւանական խտրականութեամբ յղի այս վիճակը փոխուած է 1939ին, երբ «իտալական ցեղ»ին խառն ամուսնութիւնը արգիլող պետական շրջաբերական մը կը ճշտէր, թէ այդ արգելքին տակ կ'իյնային արաբները, չինացիները եւ թուրքերը, որոնց կ'ընկերանային լիբանանցիներն ու խառնածինները, եւ կը հաստատէր, թէ հնդիկները, պարսիկները, հայերը եւ ալպանացիները (քրիստոնեայ կամ մահմետական) «արիացեղ կը համարուէին», մինչ եգիպտացիներուն պարագան պէտք է քննարկուէր մէկ առ մէկ[91]:

Տեղեկութիւններու անբաւարարութիւնը չի թոյլատրեր հանգամանալից անդրադարձ մը, ոչ ալ հայերու դասակարգումին մէջ արձանագրուած շրջադարձին մեկնաբանութիւնը: Բայց պատահական չէ, որ 1939ին հայանպաստ քարոզչութեան կարեւոր հանգրուան մը կը սկսէր, երբ հրապարակագիր Լաուրօ Մայնարտի, Իտալիոյ Հայկական Միութեան նախաձեռնութեամբ եւ համաձայնութեամբ, իր "HIM" (Historia Imperi Mediterranei) հրատարակչատունով կը նախաձեռնէր թէ՛ «Արմենիա» մատենաշարի լոյս ընծայումին եւ թէ՛ հայանպաստ գիրքերու հրատարակութեան (մեզի յայտնի է ինը հատոր) 1939-40ին: Անոնց շարքին էր *Հայկա-*

կանութիւն-արիականութիւնի իտալերէն թարգմանութիւնը 1939ին, որուն լոյս ընծայումը կ'ամրապնդէր իտալական պետութեան շրջադարձը[92]:

Մայնարտի, որ նախօրօք լայնօրէն հետաքրքրուած էր Ուքրանիայով, ֆաշական կուսակցութեան անդամ էր ու «Ազգութիւն եւ կենսական տարածք» (1941) գիրքին մէջ կը պատկերացնէր, թէ գերմանա-իտալական Առանցքին կողմէ Ափրիկէն, Միջերկրականը եւ Մերձաւոր Արեւելքը Իտալիոյ պիտի յատկացուէին եւրօ-ափրիկեան տարածքի բաժանումին մէջ[93]: Իր հակահամայնավար ու հակա-դաշնակից շեշտակի կեցուածքին կը զուգադրուէր հայանպաստ դիրքորոշումը, որ բացայայտ է 1939-40ի իր հատորներու վերնագիրերէն՝ *Un altra vittima dei franco-inglesi: l'Armenia* (Ֆրանքեւանգլիացիներու ուրիշ զոհ մը՝ Հայաստանը, 1939) եւ *Erivan contra Mosca* (Երեւան՝ Մոսկուայի դէմ, 1940): 1941ի *Խորհրդային Միութիւնը՝ ժողովուրդներու բանտ* գիրքին մէջ Մայնարտի մօտ 40 էջնոց բաժին մը նուիրած էր Հայաստանին, շեշտելով, թէ հայ ժողովուրդը «գերազանցօրէն արիական» էր եւ թէ «*արիականութիւնը, ուրեմն, հայ ժողովուրդին պարտական է՝ իր պետական ազատութեան կորուստին համար, եւ պէտք է ափիկա յիշեցնել, եթէ չի յիշուիր, երբ պահը հասնի զայն նորէն կերտելու*» [94]:

1959ին, երբ ֆաշականութեան մենատիրութիւնը այլեւս չարաղէտ յիշատակ մը դարձած էր ու Պաղ Պատերազմը ընթացքի մէջ էր, Մայնարտի կը հրատարակէր հայ ժողովուրդի պատմութեան ու մշակոյթին նուիրուած *Հայաստան՝ երեք աշխարհներու եւ երկու ցամաքամասերու քառուղի* հատորը, ուր հայոց ցեղային ծագումին կ'անդրադառնար՝ *Armeni-Arian*ի վրայ հիմնուելով (Ռորպախէն մէջբերում մը եւ Աբեղեանէն ընդարձակ քաղուածքներ)[95]:

Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՒ ՀԱԿԱՀԱՅ ԱՐՇԱԻԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Պատերազմին սկզբնաւորումը, նացի ծաւալապաշտութեան զուգընթաց, աւելի եւս սրեց անոր մաքրագործական ախորժակները: Օգոստոս 1939ին, երբ Հիթլէր կը յիշէր Ճինկիզ Խանի ջարդարարութիւնը, ապա հռետորական հարցում ուղղելու համար՝ «Այսօր ո՞վ կը յիշէ հայերուն բնաջնջումը», Լեհաստանի ներխուժումն ու Բ. Աշխարհամարտը սկսելէ օրեր առաջ, «ցեղային մեծ պատերազմ»ին ծայր տալու ազդանշանը կու տար՝ Կէօրինկի համոզումով[96]: Սակայն, բնաջնջումը յիշողներ կային: Արդարեւ, նոյն տարին լոյս տեսած գիրքի մը մէջ, աւստրիացի տարագիր գրող Ֆրանց Պորքենաու (1900-1957) նոյնիսկ կը մարգարէանար. «*Կասկած չկայ, որ քանի մը տարիէն հրեաներու ճակատագիրը Արեւելեան Եւրոպայի մէջ պիտի յիշեցնէ հայոց ճակատագիրը Թուրքիոյ մէջ*» [97]:

Աւելորդ չէ նշել, որ Հիմլէրի տեղակալը՝ Ռայնհարտ Հայտրիխ (1904-1942), 2 Յուլիս 1941ին Էս-Էսի գլխաւոր կազմին հրաման տուած է սպանելու Կոմինտերնի բոլոր պաշտօնատարները, խորհրդային կուսակցական

դիրքերու մէջ գտնուող հրեաները, ուրիշ արմատական տարրեր (խափանարարներ, քարոզիչներ, արձակագէններ, մարդասպաններ, խռովարարներ, *պարտիզան*ներ)։ Գերմանացի պատմաբան Հերլմութ Լանկերպայն վերջերս դիտել տուած է, որ «պարտիզան» բառը կը ծածկէր հրեաներու եւ ուրիշ ստորին տարրերու, հաշմանդամներու, եւ արեւելեան ու ասիացի ժողովուրդներու ջարդը, ինչպէս՝ գնչուներ, մոնկոլներ, հայեր եւ իսլամներ[98]։ Ըստ երեւոյթին, Հայտրիխ լրացուցիչ հրահանգներ հրապարակած է Յուլիս 17ին, ուր կ'ըսէր, թէ անհրաժեշտ էր նման միջոցառումներ որդեգրել ո՛չ միայն ռուս ժողովուրդին, բայց նաեւ ուքրանացիներուն, պելառուսներուն, ազերիներուն եւ հայերուն նկատմամբ[99]։

Յայտնի չէ, թէ քանի՛ խորհրդահայ ռազմագերիներ մահացած են ճամբարներու մէջ։ Անոնց յուսահատական կացութենէն փրկելու միակ միջոցը դարձած է անոնց ընդգրկումը մինչեւ օրս պատմաքաղաքական շահարկումի աղբիւր Հայկական Լեգէոնի եւ գերմանական ուրիշ միաւորներու մէջ, որոնք սակայն նուազագոյն ներկայութիւն ունեցած են պատերազմական գործողութիւններու մէջ[100]։ Նոյնքան չարչրկուած է որոշ դաշնակցական գործիչներու գործակցութիւնը նացի վարչակարգին հետ, յատկապէս՝ Դեկտեմբեր 1942-Դեկտեմբեր 1943ին գործած Հայ Ազգային Խորհուրդի միջոցաւ, որուն գլխաւոր աշխատանքը եղած է ռազմագերիներուն ֆիզիքական գոյութիւնը ապահովել եւ անոնց մէջ հայկական քարոզչութիւն կատարել, ներառեալ՝ Հայաստանի ազատագրութեան ուղղութեամբ, ինչպէս եւ հայերու ցեղային ծագման մասին անկախաբար քարոզչութիւն ընել[101]։ Նոյնը պէտք է ըսել Դրոյի եւ իր խմբակի գործունէութեան մասին, որ ըստ երեւոյթին ուղղուած էր ռազմագերիներու եւ արեւելեան շրջանի հայ բնակչութեան ապահովումին, գործելով (ինչպէս ցոյց կու տան կարգ մը պատմաբաններ) գերմանական ռազմական հետախուզութեան (Abwehr) ծիրին, ո՛չ թէ բանակին կամ Կեսթափոյին մէջ[102]։ Նացի պատմութեան մասնագէտներ կը վկայեն, թէ SSի ղեկավար Հայնրիխ Հիմլէրը ծրագրած էր Խրիմի բոլոր անցանկալի տարրերը (ռուսերէն մինչեւ հրեաները եւ հայերէն մինչեւ թաթարները) տեղահանել եւ փոխարինել գերմանացի գաղութարարներով[103]։ Միւս կողմէ, մինչ կ'ըսուի, թէ Դրօ Խրիմի հայերը փրկած է թաթարներու սադրանքներէն, կ'անտեսուի այն իրողութիւնը, որ 1944ին, գերմանական զօրքերու նահանջէն ետք, Ստալին անմիջապէս ձեռնարկած է Խրիմի թաթարներուն, յոյներուն, պուլկարացիներուն եւ 9620 հայերու տեղահանումին դէպի Կեդրոնական Ասիա[104]։

Հասկնալու համար, թէ նացի վարչակարգին հետ գործակցութիւնը՝ մարդկային կեանքերու փրկութիւնը ապահովելու համար, պատեհապաշտ բնոյթ ունեցած է կամ ոչ, պէտք է խօսեցնել փաստաթուղթերը եւ ո՛չ թէ բեմբասացները։ Չորս տասնամեակ ետք, սակայն, անգլիացի հանգուցեալ պատմաբան Քրիսթոֆըր Ուոքըրի (1942-2017) կարծիքը իր կշիռը չէ կորսնցուցած.

Գերմանացիներու հետ կարգ մը հայերու գործակցութեան փաստը ինքնագոհ բարոյախօսութեան պատճառ պէտք չէ ըլլայ: Նացիներուն հակադրուիլը անձնասպանութիւն եղած կ'ըլլար:

Գրաւեալ շրջանները ապրող դաշնակցական շարքայիններ, ներառեալ՝ հանրապետութեան շրջանի կարգ մը նշանաւոր անուններ, նացիամէտ դիրքորոշում մը որդեգրեցին:

(...) Ի՞նչ էր գրաւեալ շրջաններուն մէջ գործակցութեան պատճառը: Կարելի է տեսնել իբրեւ զուտ վրէժի ցանկութիւն՝ Հայաստանը պոլշեւիկներէն վերագրաւելու: Բայց չեմ կարծեր, որ զինակցութիւնը նման պարզունակ փառասիրութեամբ պատճառաբանուած էր ... Դրոյի նման դաշնակցականներ կը յիշէին – իսկ յիշողութիւնը իրենց քաղաքականութեան ճնշիչ բաղադրիչը եղած էր նախորդ երկու տասնամեակներուն – 1917-1918ի դէպքերը, երբ իրենց կուսակցական կարգուսարքի ուժն ու կազմակերպութիւնը միակ երաշխիքն էր Հայկի որդիներուն Հայկական Լեռնաշխարհէն վերջնական բնաջնջումին դէմ: Ռուսաստանի կրկին բաժնուելու սպառնալիքին առջեւ, տրամաբանական էր պատրաստուիլ Երեւան մտնել պոլշեւիզմը փոխարինելու կոչուած ուժերուն հետ՝ հանրային անվտանգութիւնը ապահովելու համար, կանխելով թուրքերու ներխուժումը արեւմուտքէն:

Այսուհանդերձ, դժուար է շատ համակրանք ունենալ փրօ-Առանցք խումբին, քանի որ նացիները կը գերազանցէին Երիտասարդ Թուրքերը՝ տիեզերական չարիքի իմաստով: Բայց թերեւս այդ կարծիքը միայն կարելի է ունենալ երբ յետադարձ հայեացքի առաւելութիւնը ունինք, իսկ գրաւեալ շրջանները ապրողներուն համար, անմիջական ու ճնշող մտահոգութիւնը այլ հայերու անվտանգութիւնը ապահովելն էր[105]:

Ինչպէս ըսինք արդէն, *Armeniertum-Ariertum*ի հրատարակութիւնը բաւարար չէր եղած հակահայ նկրտումները կասեցնելու: Ասոր փաստը պիտի բացայայտուէր պատերազմին օրերուն:

Արդէն 1941ին Քիլի Համալսարանի մարդաբանութեան դասախօս Հանց Վայներթ (1887-1967) իր *Stammesgeschichte der Menschheit* (Մարդկութեան ժառանգութեան պատմութիւն) գիրքին մէջ կը կրկնէր հայերու եւ հրեաներու ցեղային ազգականութեան դրոյթը[106]: 1942ին Կրակովի (Լեհաստան) Գերմանական Արեւելեան Գործերու Հիմնարկի աշխատակցուհի մը՝ տոքթ. Էլֆրիտ Ֆլիթման, զեկոյց մը կը հրատարակէր 565 լեհ հրեաներու իր մարդաբանական ուսումնասիրութեան մասին: Զանոնք տիպար հրեաներ չնկատելով, Ֆլիթման կը պնդէր, որ յաճախ թաքուն մերձաւոր արեւելեան բաղադրիչը տակաւին «օտար տեսակի տպաւորութիւն մը» մը կը թողուր, գլխաւորաբար բնակչութեան «գործարարական ուժեղ զգացումին եւ անպարկեշտութեան» պատճառով, որ համեմատելի էր «հայերուն»[107]: Միւս կողմէ, Փետրուար 1942ին տոքթ. Կերհարտ Թայիխ հակահայ պարսաւագիր մը կը հրատարակէր, վերստին հերքելով հայ-գերմանական կապերը եւ հայերն ու հրեաները իրարու հետ կապելով[108]:

Ազգաբանական ինչ-ինչ շինծու կապերու կողքին, ինչպէս տեսանք, երկու ճակատագրակից ժողովուրդները նկարագրային նոյնքան շինծու

վերագրումներու կ'ենթարկուէին, որոնց մաս կը կազմէր Ֆելիքս ֆոն Լուշանի դարասկիզբին արտայայտած «հայ մը եօթը հրեայ կը խաբէ» պարագայական կարծիքին (ծանօթ ասացուածքին հերթական վերաշարադրանք) ձեւազեղծումն ու կրկնութիւնը՝ տարբեր ձեւերով: Այդ կարծիքը, ինչպէս գրած էր Շթիր 1934ին, նախապաշարմունքի աստիճանին հասած էր, *«կարծես թէ խօսքը վերաբերում է էթնոսին բնորոշ՝ արատաւոր հիմնասկզբունք ունեցող խարեբայ մի ժողովրդի, մինչդեռ այդ բնութագիրը կը վերաբերէր միայն Մերձաւոր Արեւելքի հայերին, որոնք նաւահանգստային քաղաքներում վաճառականներ են»*[109]:

Թէեւ Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ հազիւ հազարեակ մը հայ կար, Արեւելեան Եւրոպայի եւ Ռուսաստանի գրաւեալ տարածքներուն հայ մեծաթիւ բնակչութեան ֆիզիքական գոյութիւնը վտանգի տակ էր, մանաւանդ երբ 1942-43ին կրկին հակահայ արշաւ մը ծայր տուաւ նացի կուսակցութեան ցեղային քաղաքականութեան բաժանմունքին մէջ[110]: Հաւանաբար, թրքական դրդումն ու քարոզչութիւնը դեր մը ունէին: Արդարեւ, 18 Յուլիս 1941ին գերմանա-թրքական բարեկամութեան դաշինքը կնքուած էր, իսկ Օգոստոսին, Թուրքիոյ դեսպան Հիւսրէւ Ճերեթէ (1884-1962) գերման արտաքին գործոց նախարարութեան մնայուն քարտուղարին իր «անձնական կարծիքը» կը յայտնէր՝ Սեւ եւ Կասպից ծովերուն միջեւ թուրանական պետութեան մը կազմութեան մասին, թէեւ շաբաթներ ետք յետս կը կոչէր[111]: Օգոստոս 1941ին, Թուրքիոյ մօտ դեսպան Ֆրանց ֆոն Փափէն (1879-1969) կը տեղեկագրէր համաթրքական վերազարթնած շարժումին մասին, իսկ Սեպտեմբերին Պերլինի մէջ կը հանդիպէին Հիթլէրը, ֆոն Փափէնը եւ անոր պարագլուխներէն մէկը՝ Նուրի փաշան (Էնվէրի եղբայրը): Շարժումը գոյատեւած է մինչեւ 1944, երբ թրքական կառավարութեան կողմէ գլխատուած է՝ Խորհրդային Միութեան հակայարձակումի օրերուն[112]:

Այս արշաւին կը ձայնակցէին *«հայավնաս քարոզութիւններ[ը], որ տեղի ունէին Բեռլինում կովկասեան ցեղերից մէկի կողմից»*[113]: Ակնարկութիւնը, ըստ երեւոյթին, վրացի ազգայնամոլ վտարանդիներու էր[114]: Արդարեւ, էստոնացիներն ու վրացիները սլաւներէն ու հայերէն համեմատաբար աւելի բարձր դիրք կը գրաւէին ազգութիւններու հանդէպ նացիական վերաբերումի աստիճանակարգին մէջ[115]: Վրացիները արիացի հռչակուած էին 1934ին, սակայն Ռոզենպերկի մտերիմ բարեկամ եւ նացի կուսակցութեան անդամ Ալեքսանդր Նիկուրաձէի (1900-1981) փրկարար միջնորդութիւնը, ըստ երեւոյթին, կանխած է վրացի ռազմագերիներուն բնաջնջման ճամբարներ ղրկուիլը[116]: Վրացիները, որոնց «հիւսիսական կերպարանք»ը անոնց պարգեւած է գոթերու շառաւիղ ըլլալու շուքը, վերահաստատուած են իբրեւ արիացի եւ խոստում ստացած՝ Կովկասի ապագայ Ռայխի կոմիսարիատին մէջ, որուն վարչական կեդրոնը Թիֆլիսը պիտի ըլլար: Ռոզենպերկի այս նախագիծին ետին կը թուի եղած ըլլալ Նիկուրաձէն, որ Վրաստանի համար Կովկասի մէջ կը պատկերացնէր դեր մը յար եւ նման Գեր-

մանիոյ դերին՝ Եւրոպայի մէջ[117]: Գերմանական բանակի բարձր հրամանատարութեան քարոզչութեան բաժանմունքը ուսումնասիրութիւն մը պատրաստած էր Յուլիս 1942ին, ըստ որուն վրացիները գնահատուած էին *«ազատասէր, անհոգ, խիզախ ու հպարտ»* մակդիրներով, որոնք գերմանական զինուորականութեան համար բարձրակշիռ էին[118]: Իդէպ, 1942ին, Նիկուրաձէ լոյս ընծայած էր գիրք մը կովկասեան ժողովուրդներու պատմութեան մասին, ուր առաջադրած է արիական ցեղերու կովկասեան ենթախումբի մը գոյութեան տեսակէտը եւ վրացիները նկատած նախահնդեւրոպացի, առանց նոյնիսկ յիշելու կամ քննարկելու հայերու արիացի ըլլալը[119]:

Անշուշտ, քարոզչական արշաւը կրնայ նաեւ ատրպէյճանցիներ եւ, երկրորդական կարգի վրայ, Թուրքիայէն ազգայնամոլ ղեկավարներ[120] ներգրաւած ըլլալ: Թէեւ լայնօրէն տարածայնուած է, որ այս իրադարձութիւններուն ետին թրքական ձեռքը կար[121], ցարդ շօշափելի փաստերու հանդիպած չենք:

Բ. Աշխարհամարտին գերմանական բանակի հրամանատարութեան մէջ կը տիրէր հակահայ դիրքորոշում մը՝ «հայերը հրեաներէն աւելի վատ են» ձեւին տակ, որ ունէր նաեւ երկու ժողովուրդներուն ազգականական կարծեցեալ կապին հիմքը եւ դուռը կը բանար խիստ վտանգաւոր հնարաւորութիւններու: Պէտք չէ մոռնալ նաեւ Մեծ Եղեռնի օրերուն Թուրքիա եւ ապա նացի վարչակարգին ծառայող զինուորականներուն հնարաւոր ազդեցութիւնը այս կեցուածքին մէջ: Այդ դիրքորոշումին վճռական հակահարուած տուողը եղաւ, գոնէ հակահայ միջոցառումներ կանխելու իմաստով, Արեւելեան Գրաւեալ Տարածքներու նախարար Ալֆրէտ Ռոզենպերկի աշխատակիցներէն մէկը՝ դիւանագէտ Օթթօ Պրէութիկամը (1895-1992), որ Խորհրդային Միութեան մէջ հիւպատոսական պաշտօններ վարած էր եւ գիտակ էր ազգագրական հարցերու[122]: Միւս կողմէ, կը թուի, թէ Ռոզենպերկ, որ զբաղած էր արեւելեան լեգէոններու կազմակերպութեամբ, իր դիրքը փոխած էր հայերու հանդէպ: Մայիս 1942, ան Հիթլէրին յայտնած է, թէ *«Հայաստանը լաւագոյն սողնակն էր Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ, ինչ որ կրնար կասեցնել համաթուրանական շարժում մը դէպի արեւելք: Առհասարակ, հայերը նստակեաց են՝ երկրագործական ժողովուրդ մը, արհեստի բաւարար ձիրքերով»*[123]: Ըստ նացի եռամաս դասակարգումին, գերմանացիներն ու ճափոնցիները մշակուած եւ արժանաւոր գիւղացիներ էին, ռուսերը՝ վաչկատուններ, իսկ անգլիացիները, ամերիկացիները ու հրեաները՝ *«առեւտրամէտ մակաբոյծներ»*: Հայերը վաճառականներու սկզբնական կորիզին մաս կը կազմէին՝ յոյներու, հրեաներու եւ փիւնիկեցիներու հետ: Աւելի'ն. վաճառականներն ու վաչկատունները ջանքեր միացուցած էին՝ գիւղացիութիւնը կործանելու համար[124]: Յունիս 1942ին, բարձր հրամանատարութեան վերոյիշեալ ուսումնասիրութիւնը հայերը նկատած էր *«աշխատասէր, նախաձեռնող եւ խաղաղասէր»*, թէեւ զանոնք որակած

էր իբր «ագարակապաններ եւ առեւտրականներ», որոնք *«յաճախ հակառակութեան մէջ են իրենց վրացական եւ թրքական միջավայրին հետ»*[125]:

Հայկական ցեղային ծագումին շուրջ գոյութիւն ունեցող տարակոյսներն ու նախապաշարումները սոսկ գիտնականներու եւ հրապարակագիրներու ակադեմական կամ լրագրական մարզանքներու գործը չէր: Շատ աւելի վտանգաւոր էր այն իրողութիւնը, որ անոնք ղեկավարութեան բարձրագոյն մակարդակին վրայ առկայ էին: 5 Յուլիս 1942ին, Հիթլէրի հետեւեալ հաստատումը՝ «Գայլի որջ» իր պաստպարանին մէջ տեղի ունեցած զրոյցներէն (table talk) մէկուն, բարացուցական է.

> Քանի որ միայն յստակ ցեղային գիտակցութիւնը կրնայ ապահովել մեր ցեղին պահպանումը, մեր ցեղային օրէնքները յստակօրէն դէմ եղած են որեւէ ցեղային վարակումի, ո՛չ միայն հրեաներէն: Գերման ժողովուրդը լուսաբանելով իր ցեղային օրէնքներուն մասին, պէտք է միշտ շեշտել, որ ցեղային օրէնքները նաեւ նպատակ ունին կանխելու գերման արեան պղտորումը հայկական կամ որեւէ այլ ոչ-արիական արիւնէն (*armenisches oder sonstiges nichtarisches Blut*)[126]:

Հիթլէրի կարծիքը հայերուն մասին բացասական մնացած է մինչեւ վերջ: Դեկտեմբեր 1942ին, ան իր վերապահութիւնները յայտնած է վրացիներու եւ հայերու մասին, արիական գերակշռութեան գաղափարէն նահանջ մը արձանագրելով. *«Այս վրացիներուն մասին չեմ գիտեր: Անոնք թրքական ժողովուրդներուն չեն պատկանիր... Միայն մահմետականները վստահելի կը նկատեմ... Միւս բոլորը անվստահելի կը նկատեմ: Առայժմ շատ վտանգաւոր կը նկատեմ զուտ կովկասեան մարդոց այս գունդերուն կազմութիւնը, բայց որեւէ վտանգ չեմ տեսներ զուտ մահմետական միաւորներու հաստատումին մէջ: (...) Ռոզենպերկի եւ գինուորականութեան բոլոր յայտարարութիւններուն հակառակ, հայերուն ալ չեմ վստահիր»*[127]: Թերեւս այս անվստահութիւնը նոյնպէս ժառանգուած էր Քարլ Մէյի ընթերցումներէն. *«Կ'ըսուի, թէ հրեայ մը կը խաբէ տասը քրիստոնեայ, եանքի մը կը խաբէ յիսուն հրեայ եւ հայ մը կը խաբէ մօտ հարիւր եանքի: Այս չափազանցութիւնը տպուած գտած եմ, բայց հիմնուած՝ ճշմարտութեան վրայ: Անոնք բաց աչքերով կը շրջին շրջանին մէջ, պիտի համաձայնիք: Հոն ուր որեւէ դաւ կամ դաւաճանութիւն կը ծրագրուի, խաղին մէջ հայու մը արծուային քիթը կայ: Եթէ նոյնիսկ անսկզբունք յոյնը կը մերժէ չարիք մը գործել, անկասկած կը գտնենք չարիքի պատրաստ հայ մը»*[128]: Հիթլէր, այս անգամ հետեւելով Ռոզենպերկի տեսութիւններուն՝ պարսիկներու արիական նկարագրի անկումին մասին[129], Ապրիլ 1943ի Քլեշայմի Խորհրդաժողովին յայտնած է, ըստ Նիւրեմպերկի դատավարութեան ներկայացուած բնագրի մը քաղուածքին, երբ կը փորձէր հունգարացիները համոզել, որ հրեաները տեղահանէին, թէ՝ *«հրեաներէն իրենք զիրենք չազատող ազգերը կը մեռնին: Ամենէն նշանաւոր օրինակներէն մէկը երբեմնի այնքան հպարտ այդ ժողովուրդին՝ պարսիկներու անկումն է, որոնք ներկայիս ողբալի գոյութիւն մը կը քաշքշեն իբրեւ հայեր»*[130]: Այս նախադասութիւնը

կ'ակնարկէր աստուածաշնչական Եսթէրի Գիրքին պատմութեան, թէ ինչպէս հրեաներու ապստամբութիւնը պարսիկներուն դէմ աւարտած էր պարսից ղեկավարներուն սպանութեամբ եւ, իբրեւ թէ, հրեաները անոնց ցեղային հպարտութիւնը խլած էին խառն ամուսնութիւններով: Ու հաւանաբար կը կրկնէր քսան տարուան համոզումը, թէ հայերը «մաքրարիւն» ժողովուրդ մը չէին:

Ըստ վրիժառու Միսաք Թորլաքեանի (1889-1968) վկայութեան, որ պատերազմի ընթացքին Դրոյի գործակիցներէն մէկն էր, Աբեղեան էական դեր կատարած է հայերու արիականութիւնը կրկին փաստելու գործին մէջ, այսպէսով բազմաթիւ անձերու կեանքը փրկելով[131]: Ուրիշ մասնակից մը՝ Կարօ Գէորգեան (1898-1974), այդ աշխատանքներուն մէջ որպէս Աբեղեանի գործակից յիշած է Վահան Փափազեանը (Կոմս, 1876-1973), Արմիկ Ջամալեանը, Տիրայր Ֆրունճեանը եւ ուրիշներ, նշելով, թէ «*այլ[եւ] մասնաւորաբար գործօն աջակցութեամբ Հայոց մեծանուն բարեկամ Տոքթ. Ռորպախի եւ այլ Գերմանացիներու, ամէն ճիգ ի գործ դրուեցաւ եւ գիտական-պատմական փաստերով յաջողեցաւ հաստատել, թէ Հայերը կը պատկանին արիական ցեղին եւ հետեւաբար, պէտք է վստահելի փարր մը նկատուին Գերմանիոյ համար*»[132]: Հակահայ քարոզչութեան դէմ դնելու նպատակով, Աբեղեան ըստ երեւոյթին վերահրատարակած է *Հայկականութիւն-Արիականութիւն* գիրքը 1942ին[133], թէեւ ցարդ այս փաստը հաստատող որեւէ մատենագիտական տեղեկութեան չենք հանդիպած[134]: Միւս կողմէ, 1942ին Սոֆիայի մէջ հրատարակելով իր *Հայաստան - Արիական Նախադիրք Առաջաւոր Ասիայում* հայերէն աշխատութեան Ա. հատորը, տարօրինակ շարժման տեսաբան Հայկ Ասատրեան (1900-1956) շտապ կերպով մեկնած է Պերլին՝ զայն գերմաներէնի թարգմանել տալու եւ անմիջապէս լոյս ընծայելու նպատակով: Թէեւ այս թարգմանութեան հետքն ալ չենք կրցած գտնել գերմանախօս երկիրներու ազգային գրադարաններու ցուցակներուն մէջ, անոր մասին ունինք Ասատրեանի մօտիկ գործակիցներէն Օննիկ Փանիկեանի (1905-1975) նորատիպ վկայութիւնը.

> (...) Պատերազմի շրջանին, երբ հայերը, կարգ մը խառնակիչ տարրեր, կ'ուզէին սեմական ծագումով ցեղախմբին շարքը դնել, գրեց հոյակապ գիրք մը, որը փաստերով կը հաստատէր, թէ արիական ծագում ունէին: Այդ գիրքը պատճառ դարձաւ, որ ամբողջ գերմանական ազդեցութեան տակ ինկած հայերը հանգիստ մնան իրենց տեղերը եւ հալածանքի չենթարկուեն: Այդ գիրքը մեծ տպաւորութիւն ձգեց գերման մեծ վարիչներու վրայ[135]:

1942ին նացի կուսակցութեան պաշտօնական հրատարակութիւն մը՝ *Կովկաս* վերնագրով, Հայաստանին նուիրուած բաժնին մէջ կը յիշէր հիւսիսական տարրերու ներկայութիւնը հայոց ցեղային կազմին մէջ, յղելով Ֆոն Լէէրսի եւ Աբեղեանի 1934ի յօդուածներուն[136]:

ՀԱԿԱՀԱՅ ԱՐՇԱԻԸ ՖՐԱՆԱԱՅԻ ՄԷՋ

Գերմանական կասկածները հայերու նկատմամբ պիտի թափանցէին նաեւ Ֆրանսա, ուր եւրոպական ամենամեծ համայնքը կ'ապրէր եւ ուր արդէն ցեղապաշտ ու հակասեմական զօրաւոր նկրտումներ կային: Գերման գրաւումէն ետք հրեաներու դէմ հալածանքներուն սկզբնաւորումը նաեւ խախտեց հայերուն «զուտ արիական» դիրքը: Կ'արժէ յիշատակել, որ Ալեքսանդր Խատիսեան (1875-1945) եւ Արշակ Չօպանեան (1872-1954) կը ղեկավարէին Հայաստանի Հանրապետութեան եւ Ազգային Պատուիրակութեան ստեղծած հայ գաղթականներու զոյգ գրասենեակները Փարիզի մէջ: Անոնք գերմանական գրաւումէն ետք լուծուեցան ու անոնց տեղը ստանձնեց պետական միաւոր մը՝ Վիշիի կառավարութեան արտաքին գործոց նախարարութեան կցուած, որուն հայկական բաժնին մէջ ընդգրկուած էին լուծարուած երկու գրասենեակներուն պաշտօնեաներ: Այդ բաժինը ֆրանսահայ համայնքին ծագման վկայականներ կը յանձնէր, որոնց մէջ նշուած էր, որ ենթական «իր ծնողներուն նման՝ հայ ցեղէն է[ր]»:

1941ին մարդաբան Ռուբէն Խերումեանի (1900-1969) փոքրիկ հատորը հայերը կը դասէր հիւսիսականներու (մաշկի բաց գոյն) եւ միջերկրականեաններու (մաշկի գոց գոյն) միջեւ գտնուող ալպեան-կովկասեան (տինարեան) ճիւղին մէջ, զանոնք նկատելով հիւսիսականներու եւ տինարեաններու ձուլման արդիւնքը: Այս բոլորը, անշուշտ, արդէն դարասկիզբի ցեղաբանութեան հիմնական տեսակէտերուն մաս կը կազմէին: Գիրքը միաժամանակ կը հերքէր ֆոն Լուշանի տեսութիւնը՝ ասիական հայատիպ տեսակի գոյութեան մասին[137]: Հարկ է նշել, որ նոյն տարուան Սեպտեմբերին, ֆրանսական Գերագոյն Ատեանի պահանջով, գաղթականութեան մասնագէտներէն Ժորժ Մոքօ (1899-1988) գրաւոր վկայութիւն կու տար, պնդելով, որ 1920ականներէն Ֆրանսա ապաստան գտած օտարականները «քաղաքական (համայնավարներ, ընկերվարականներ, արքայականներ ...) կամ էթնիկ (հայեր, հրեաներ) անցանկալիներ» էին առանց բացառութեան[138]:

Միւս կողմէ, Փարիզի Մարդաբանութեան Դպրոցի ազգագրական ամպիոնի վարիչը՝ Ժորժ Մոնթանտոն (1879-1944), որ 1930ականներու վերջերէն բացայայտօրէն ցեղապաշտ ու հակասեմական դիրքեր որդեգրած էր, օրաթերթային յօդուածի մը մէջ կը յայտնէր, թէ դիմած էր Գերմանիա՝ հայերու մասին լուսաբանութեան համար. «Նոր որոշումի համաձայն հայերը դասաւորելու է արիական ծագում ունեցող ցեղերի մէջ, սակայն, ոչ զանգուածօրէն, ինչպէս ընդունուած էր նախապէս, այլ ամէն մէկ անհատը առանձին առնելով»[139]: Միւս կողմէ, Մոքօ իր նախորդ տարուան դատաստանական վկայութիւնը կ'ընդլայնէր, Մոնթանտոնի խմբագրած *L'Ethnie Française* հանդէսին մէջ հրատարակելով ուսումնասիրութիւն մը՝ օտար գաղթականութեան եւ ապաստանեալներու խնդրին մասին, ուր հրեաները, ռուսերը եւ հայերը ձուլման ենթակայ չեղող կը նկատէր, ի մասնաւորի վերջիններուն մասին յայտնելով, թէ «աւելի շեշտուած էթնիկ

տարբերութիւնը», «դարերու հալածանքներու եւ ջարդերու կնիքը կրող յատուկ հոգեբանութիւնը», «հակառակորդ կամքը կոտրելու եւ շահելու ցանկութիւնը» ժառանգական գիծեր կը մատնէին[140]: Մոնթանտոնի նման, ուրիշ ֆրանսացի հեղինակ մը՝ Ռընէ Մարսիալ (1852-1955), նոյնպէս խնդրոյ առարկայ դարձուցած է հայերու «արիականութիւնը», ինչպէս կ'իմանանք Շաւարշ Միսաքեանի կողմէ ընդյատակեայ հրատարակուած *Հայկաշէն* պարբերագիրքին յօդուածէ մը[141]: Յունուար 1944ին, Հրէական Հարցերու Ընդհանուր Կոմիսարիատը կը յայտնէր նացի սպայի մը, թէ ձերբակալուած հայերը պէտք է Մոնթանտոնի «ցեղային քննութեան» ենթարկուէին՝ թլփատուած չըլլալը հաստատելու համար[142]:

Արեւելեան գրաւուած մարզերու նախարարութեան ցեղային հարցերու փորձագէտ Դոկտ. Էրհարտ Վեթցէլին (1903-1975) վստահուած էր հայկական ցեղային դիմագծի գնահատման գործը: Ան՝ թէեւ երկրորդ կարգի պաշտօնատար մը, այդուհանդերձ խօսք ունեցած է ցեղային մաքրազտման եւ բնաջնջման գործընթացին մէջ, Հոկտեմբեր 1941ին, հրեաներու ոչնչացման նպատակով կազի սենեակներ կառուցելու եւ գործածելու հնարաւորութիւնները արժեւորած է նամակի մը մէջ[143]: 27 Ապրիլ 1942ին ստորագրած է գաղտնի յուշագիր մը աշխարհագրագէտ Քոնրատ Մէյէրի զարգացուցած ընդհանուր ծրագրին՝ Generalplan Ostի մասին, առաջարկելով Լեհաստանէն ու Խորհրդային Միութեան եւրոպական տարածքներէն 41էն մինչեւ 51 միլիոն հոգիի տարհանումը Սիպերիա եւ անոնց վերաբնակեցումը գերմանացիներով[144]:

Յուշագրին մէջ, Վեթցէլ յիշած էր հայերը՝ «Օտարականներու եւ գերման քաղաքացիներու խառնածին օտարականներու ապագայ վերաբերումի հարցին մասին» ենթախորագրին տակ: Խօսելով տնտեսական գաղթականներու մասին, որոնք մասնակիօրէն բնակիչ կը դառնան, «օրինակ՝ էականօրէն հայերը», թելադրած է անոնց տեղահանումը. «Գերմանացիներու մաքրութիւնը պահելու ի խնդիր, օտարականները եւ օտարական խառնածինները (*artfremde Mischlingen*) ի մասնաւորի, եթէ այստեղ չեն մնար ժամանակաւորապէս, ուրեմն պէտք է ջանալ զանոնք Ռայխէն տեղահանել երբ կարելի ըլլայ»: Միւս կողմէ, պատերազմէն ետք նախատեսուած աշխատուժի հսկայական պակասը խնդրական կը դարձնէր այդ «խառնածիններ»ուն բռնագաղթը եւ, հետեւաբար, ան թելադրած է օգտագործել «գերմանահայ եւ այլ գերման-կովկասեան խառնածիններ Կովկասի մէջ»[145]:

Վեթցէլ, ըստ երեւոյթին, դիմած է Պերլինի հայերուն, որ հայ մասնագէտ մը գտնուի՝ հայոց ցեղային դասաւորումը վերստին հաստատելու համար: Այս դիմումը կը ներկայացնէ յաւելեալ փաստ մը, թէ հայկական ու հայանպաստ շրջանակներուն կատարած քարոզչութիւնն ու ճիգերը բաւարար չէին եղած: Պերլինահայերը դիմած են Ֆրանսա, ուր Խերումեան, որ մինչ այդ անծանօթ էր հայ շրջանակներուն, թէեւ իր գիրքը սպառած էր

գլխաւորաբար անոնց մէջ, մեկնելու պատրաստակամութիւն յայտնած է[146]: Խերումեանի մահախօսականին մէջ գրուած է, թէ Փարիզի հայ գաղթականաց զոյգ գրասենեակները ղրկած են զինք, քանի որ գրաւման իշխանութիւնները կը ծրագրէին յայտարարել, թէ հայերը սեմական ծագում ունէին[147]: Օգոստոս 1942ին, ան երկու հանդիպում ունեցած է Վեթցէլի հետ, որ յայտարարած է, թէ իր հետազօտութիւնները ցոյց տուած էին, որ հայերը հիմնական մերձաւորարեւելեան ցեղ մըն էին, թէեւ վստահեցուցած է Խերումեանին, թէ «Արեւմտեան Ասիոյ ժողովուրդներու եւ հրէութեան ցեղային հաւասարեցման հարց չկայ» եւ թէ «ծրագրուած չէ հայերը թիրախաւորել ցեղային քաղաքական տեսանկիւնէ մը»[148]:

Ան իր խօսակիցին ներկայացուցած է 12 կէտերէ բաղկացած արձանագրութիւն մը, զոր Խերումեան ստորագրած է՝ ռուսերէն թարգմանութեամբ կարդալէ ետք[149]: Գլխաւոր կէտերը հետեւեալներն էին. ա) հայերն ու Մերձաւոր Արեւելքի այլ ժողովուրդներ հրեաներու հետ պիտի չհաւասարուէին, բ) եւրոպացեղ նկատուելով հանդերձ, հայերը գերմաններուն «համատեսակ» չէին նկատուեր, ուստի ցեղերու խառնուրդը ցանկալի չէր, գ) հայերը պէտք է դադրէին գերարժեւորելէ իրենց կրած հիւսիսական որոշ ազդեցութիւնը, թէեւ իրաւունք պիտի ունենային իրական «հիւսիսական ծուէններ» ցուցահանելու: Վեթցէլ նման բովանդակութեամբ խօսակցութիւններ ունեցած է այլ արեւելեան ժողովուրդներու, նոյնիսկ՝ վրացիներու հետ, հակառակ կառավարութեան վերի խաւերուն մէջ վրացիներուն ունեցած բաւականաչափ ազդեցութեան[150]:

Այնուհետեւ նացի ղեկավարութիւնը մամուլով յայտարարեց, թէ հայերը համաձայն էին գերմանական ցեղաբանութեան վերջին տեսակէտին հետ, ընդունելով, որ զտարիւն արիացիներ չէին՝ Մերձաւոր Արեւելքի այլ ժողովուրդներու նման (յոյներ, վրացիներ եւ պալքանեան ազգեր), եւ քննութեան ենթակայ էին զտարիւն արիացիներու հետ ամուսնանալէ առաջ[151]: Ասիկա հայերու եւ նացի ցեղային տեսութիւններուն ընդդիմացող գերմանացիներու հակազդեցութիւնը յառաջացուցած է, որոնց շարքին՝ Ռորպախի.

> Երբ կարդացել է վերոյիշեալ համաձայնութեան մասին, կասկածներ է յայտնել եւ ցեղային հարցերով զբաղուող պետերից փաստ է պահանջել, որ հայերը իրապէս համակարծիք են նացիների առաջադրած տեսութեան հետ: Զարմանքով համոզուել է որ, հայերը ստորագրել են այդպիսի մի համաձայնագիր, ոչ մէկի կարծիքը չշօշափելով, նոյնիսկ անտեղեակ ձգելով Բեռլինի հայ գաղութի վարչութիւնը: Այս եղելութիւնը հաստատելուց յետոյ Փոլ Ռորպախ նամակով տեղեակ է պահում Ալ. Խատիսեանին եւ խնդրում է յայտարարել որ, եթէ Փարիզը նման թելադրութիւնը չի արել իր ուղարկած մարդուն (որը թոյլ է տուել իրեն գործելու կամայաբար), ինքը ժխտում է նրա իրաւասութիւնը: Ալ. Խատիսեանը պատասխանում է, թէ Փարիզից Բեռլին գնացած անձը ոչ մէկ լիազօրութիւն չունէր այդպիսի որոշումի տակ ստորագրել հայերի անունից, մանաւանդ որ Բեռլինի հայ ղեկավարներն անգամ տեղեկութիւն չունէին այդ մասին[152]:

Պէտք է ենթադրել, ուրեմն, որ համաձայնագիրը պաշտօնապէս անվաւեր նկատուած է, թէեւ այս մասին որեւէ լուսաբանական տեղեկութիւն չունինք:

1943ին լոյս տեսած երկրորդ հատորով, Խերումեան մարդաբանական համապարփակ ուսումնասիրութեամբ աւելի զարգացուցած է իր տեսակէտերը, ի մասնաւորի փաստարկելով, որ հայատիպ ցեղը տիւնարեանին մաս կը կազմէր որպէս շրջանային տեսակ՝ առանց որեւէ սահմանագիծի: Ըստ անոր, կարճագլուխները (հայատիպերը) աւելի հին էին Եւրոպայի մէջ քան արեւելեան հին ժողովուրդները եւ Եւրոպայէն գաղթերը դէպի Առաջաւոր Ասիա[153]: Այսպէս, կը հերքէր հայերու համար վտանգաւոր տեսութիւններ, միշտ մնալով օրուան գիտութեան շրջանակին մէջ:

Այսուհանդերձ, հրէական սեփականութիւններու «արիականացման» (իմա՛ բռնագրաւման) ծիրին մէջ, 1943ին Վիշիի վարչակարգը հայկական որոշ կալուածներ սկսած էր սեփականազրկել: Սակայն, այդ տարուան սկիզբը Հրէական Հարցերու Ընդհանուր Կոմիսարիատը իր շրջանային տնօրէններուն կը յանձնարարէր հայերը հանգիստ ձգել, որովհետեւ *«հայ հրեաներ գոյութիւն չունին»*: Սակայն, Թուլուզի տնօրէնին պատասխանը հարցականի տակ կը դնէր այս հաստատումը՝ շշմեցուցիչ նախանձախնդրութեամբ.- «*Պիտի ուզէի հաւատալ ատոր, բայց արդեօք ազգութիւն եւ կրօնք չե՞նք շփոթեր: Դժուարաւ կրնամ հաւատալ, որ հրեայի մը հետ ամուսնացած հրեայ կին մը Հայաստանի մէջ հրեայի ծնունդ պիտի չտար: Որքան գիտեմ, ասիկա գործնապէս անկարելի պարագայ մը չէ: Եթէ "հողի իրաւունքը" այս մաքրագործող որակը ունենար ինքն իր մէջ եւ ինքնիրեն, մարդիկ պիտի գիտնային այդ մասին, կը կարծեմ*»: Իր կարգին, կեդրոնական գրասենեակը կը պատասխանէր, որ հայրենազուրկ հայերու ոչ-հրէութեան վերջնական վճիռը կրնար տալ փորձագէտ ոմն տոքթ. Պերպէրեան: Միջոցին, հայերը վկայագիր մը պէտք է ստանային Հայրենազուրկ Անձերու Գրասենեակէն[154]:

Պատերազմի աւարտին, վերջ կը գտնէր նացի-ֆաշական ցեղապաշտ քաղաքականութեան մղձաւանջը, իսկ ցեղային մարդաբանութեան արդէն խարխլած հիմքերով շէնքը կը մնար նացի Գերմանիոյ աւերակներուն տակ: Աբեղեանի եւ իր գործակիցներուն ջանքերով իրագործուած *Armeniertum-Ariertum* գիրքը նացի դաւանանքի յայտարարութիւն մը չէր՝ հայերու արիական պատկանելիութիւնը ապացուցելու քօղին տակ, սակայն 1948ին արգիլուած գրականութեան շարքին անցած է՝ իբրեւ թիւ 184ը Գերմանիոյ խորհրդային գրաւման տարածքին մէջ հրատարակուած ցուցակի մը երկրորդ յաւելուածին: Ցուցակը կիրարկուած էր նաեւ դաշնակիցներու գրաւման գօտիին մէջ[155]:

Ատոլֆ Հիթլէրի եւ իր հետեւորդներուն անկումով, «արիական առասպել»ը եւ անոր «գիտական» բովանդակութիւնը ամենուրեք կորսնցուցին իրենց վարկը ակադեմական ու մտաւորական աշխարհին, հետեւաբար՝

քաղաքական աշխարհին մէջ, եւ այսօր միայն կը յարատեւեն լուսանցքային, առհասարակ ծայրայեղական հայեացքներ արծարծող փոքրամասնութիւններու ծոցին մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ-ԱՐԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԵՐԷՆ

1998ին *Գրական Թերթ*ին մէջ մաս առ մաս հրատարակուելէ ետք, *Armeniertum-Ariertum*ի հայերէն թարգմանութիւնը լոյս տեսած է առանձին գիրքով 2001ին, այն պատճառաբանութեամբ, որ «*այս գրքում մենք ենք, մեր էութիւնն ու կերպարանքը՝ արտացոլուած գերմանական լեզուի – գերմանական հայելու մէջ*»[156]: Դժուար է հասկնալ, թէ 85ամեայ այս գիրքը, իր պատմական արժէքէն զատ, ինչպէ՞ս կը ցոլացնէ «մեր էութիւնն ու կերպարանքը»: Բացառելով մերօրեայ հետազօտողին համար որոշ գիտական հետաքրքրութիւն ներկայացնող երկու-երեք յօդուածներ, նոյնքան դժուար է համաձայնիլ գիրքի «*ազգաբանական, հայագիտական անգնահատելի արժէք*»ին հետ եւ այն գաղափարին, որ անոր հայերէն հրատարակութիւնը «*կը նպաստի հայագիտութիւնը յառաջիկայում մարդաբանութեան (անտրոպոլոգիա), էթնոհոգեբանութեան, իմացաբանութեան մշակութաբանութեան հիմքի վրայ խորացնելուն եւ զարգացնելուն*», ինչ որ «*կ'օգնի հայագիտութեան առաւել ամբողջական եւ գիտական մեթոդաբանութեան ձեւաւորմանը*»[157]: Ինչպէս հանգուցեալ բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեան իրաւացիօրէն նշած էր իր գրախօսականին մէջ, «*գիրքը հնարաւորութիւն ունի դառնալու հայ ժողովրդի այն հատուածի սեղանի զարդը, ում համար հարազատ ժողովրդի առանձնաշնորհութեան եւ երեւելիութեան ապացուցումը կեանքի գերագոյն նպատակներից մէկն է, եթէ ոչ՝ ամենակարեւորը*»: Ան նաեւ ազդարարած էր համագիրէ դուրս ընթերցման վտանգներուն մասին. «*Վերադառնալով սնապարծութեանը հաւաստենք, որ եթէ դա իշխող թեմա է քէֆի սեղանի շուրջ խմբուած քաղքենիների համար, դեռ ոչինչ, սակայն կարող է վտանգաւոր բնոյթ ստանալ վառ երեւակայութեան շնորհիւ ծայրայեղութեան մեջ ընկնելու հակուած ստեղծագործ մտաւորականութեան շրջանում, եւ չափազանց վտանգաւոր՝ եթէ այն տանող ուժ է դառնում կուսակցական գործիչների եւ քաղաքական ուժերի ծրագրերն ու նպատակներն իրականացնելիս, ինչը տեղի ունեցաւ 20-րդ դարի 30-ական թթ. նացիստական Գերմանիայում*»[158]:

Այս հրատարակութիւնը, ընդհակառակը, գլխաւորաբար նպաստած է վերջին երկու տասնամեակներուն հայ իրականութեան մէջ շրջող «արիական» ուրուականի մը ուռճացումին:

Արդարեւ, Հայաստան, մերթ Սփիւռք կատարուող հրատարակութիւններ, մամուլի յօդուածներ, համացանցի կայքէջեր հաստատական շեշտով կը խօսին հայերու «արիական ցեղ»ի պատկանելութեան եւ յարակից հարցերու մասին: Գիտական հիմքէ զուրկ նմանօրինակ հաստատումները,

կարելի է ըսել, կամայ թէ ակամայ ցեղապաշտութիւն կը բուրեն: Գիտութիւնը ապացուցած է, որ արիական ցեղ գոյութիւն չունի եւ չէ ունեցած, եւ շօշափելի փաստ չկայ, որ 4-5000 տարի առաջ, հնդեւրոպական մայր լեզուի բաժանումին ենթադրեալ ժամանակէն առաջ, անոր խօսողները տուեալ կերպարանք մը ունէին, օրինակ՝ կապոյտ աչքեր եւ խարտեաշ մազեր: 1933ին, երբ Հիթլէր կը խօսէր «ցեղ»ը մաքրագործելու մասին, միայն քանի մը միլիոն «արիական» գերմանացիներ կապտաչեայ եւ խարտեաշ էին, որոնց շարքին չէին պատկաներ, յարակարծօրէն, Աւստրիա ծնած Հիթլէրը եւ իր անմիջական գործակիցները:

Ինչպէս գրած է ամերիկացի իրաւագէտ Եան Հէյնի Լոփէս, «*գիտութիւնը այսօր փաստօրէն լքած է ցեղերու գոյութեան գաղափարը բնութեան մէջ: Ցեղային ինքնութիւններ հաստատելու փորձնական ճիգը կոչուած էր ծախողելու, եւ որպէս կենսաբանական հասկացութիւն, ցեղը ներկայիս ոչ այլ բան է, քան մեռած՝ գիտութեան մէջ, նոյնիսկ մարդաբաններուն միջեւ, որոնց գիտակարգը մեծ մասով ծնունդ առաւ մարդկութեան ցեղային տարբերութիւնները ճշգրտելու ջանքէն: Ցեղի կենսաբանական գաղափարներուն մահազդները հիմա պարբերաբար լոյս կը տեսնեն ընթացիկ հանդէսներու ամենէն ընթացիկներուն մէջ (...)*»[159]: Վերջին հաշուով, երկու դար առաջ Պլումենպախ «կովկասեան ցեղ»ի գաղափարը մակաբերած էր ընդամէնը մէկ գանկի ուսումնասիրութենէն: «Ցեղ»ը զուտ ընկերային-հասարակական կերտուածք մըն է(ր) եւ ո՛չ թէ նախաստեղծ գոյութիւն մը, նոյնիսկ եթէ նման գաղափար կարգ մը շրջանակներու խորթ կամ տարօրինակ թուի, իսկ ուրիշներ շարունակեն զայն յարատեւօրէն շահագործելու վաղեմի սովորութիւնը: Տարբեր գոյներու դասաւորումը եւ, մանաւանդ, բարոյական ու մտաւոր կարողութեան դատումը մաշկի գոյնի հետեւողութեամբ՝ զուտ տեսական գաղափարներ են, որոնք առնչութիւն չունին գիտութեան հետ: Մաշկի գոյները հնարուած են մեկնելով կենսաբանական իբրեւ թէ անփոփոխ ընդհանրութիւններէ, որոնք, ըստ մարդոց հաւատալիքին, բարոյական յատկանիշեր ալ կը բնորոշեն:

1930ականներու ժամանակավրէպ գաղափարներու փոխարէն, թերեւս կ'արժէ ծանօթանալ «ցեղ»ի գաղափարին մէկ հիմնակէտին բացատրութեան, այսինքն, ինչո՞ւ մաշկի տարբեր գոյն ունեցող մարդկային խմբաւորումներ կան: Պատասխանը տուած է ամերիկացի հնէամարդաբան Նինա Եապլոնսկի քսան տարի առաջ: Ըստ իր տեսութեան, մաշկի գոյնը փոխուած է ո՛չ միայն արեւի ճառագայթարձակումի ազդեցութենէն պատսպարուելու, այլեւ արեւի ներկայութենէն մաշկի տակ յառաջացող կենսանիւթ (vitamin) D3ի քանակը կանոնաւորելու համար: Այս կենսանիւթը կենսական է մարմնի կանոնաւոր աճը, կրածինի (calcium) իւրացումը եւ կմախքի զարգացումը ապահովելու համար: Հասարակացին աւելի մօտ ապրող մարդկային խմբաւորումները մաշկի աւելի մութ գոյն պահած են, որ հետզհետէ աւելի ճերմկած է՝ բեւեռներուն աւելի մօտ ապրողներուն պարագա-

յին: Իսկ այդ կենսանիւթով հարուստ սնունդ ունեցող եւ արեւ չտեսնող էակիմօներուն մաշկը մնացած է մուգ, իսկ արեւ չտեսնող սկանտինաւեաններուն մաշկը դարձած է աւելի բաց[160]: Թերեւս նաեւ կ'արժէ յիշել իտալացի ծինագէտ Լուիճի Լուքա Քաւալլի-Սֆորցայի (1922-2018) դրոյթը, թէ երկու մարդկային խումբերու կենսաբանական տարբերութիւնը կը հաստատուի եթէ այս այլազանութիւնը վիճակագրական առումով նշանակալից է: Այլազանութիւնը չափելու գործօնը ծիներն են:

Արդ, ըստ այս հոչակաւոր մասնագէտին.-

Փաստօրէն կարելի է ընդհանրացնել ըսելով, թէ շատ փոքրիկ տարբերութիւններ կան, նոյնիսկ երկու դրացի գիւղերու միջեւ, բայց աննշան են, եւ թէ մինչ աշխարհագրական հեռաւորութիւնը կ'աւելնայ, նոյնպէս ծինական հեռաւորութիւնը կը բարձրանայ, բայց կը շարունակէ աննշան մնալ՝ նոյն բնակչութեան անձերու հեռաւորութեան բաղդատմամբ: Եթէ ըստ բախտի Եւրոպայի մէջ ընտրուած երկու անձերու հեռաւորութիւնը գտնենք, ապա գործողութիւնը կրկնենք շատ զոյգերու հետ եւ միջինը հանենք, եւ ապա բաղդատենք եւրոպացիի մը եւ ափրիկեցիի մը միջին տարբերութեան հետ, երկրորդ պարագային շատ չափաւոր յաւելում մը կը նկատուի: Կ'արժէ՞ որ նացիները այնքան իրարանցում ստեղծեն ասոր համար[161]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Benjamin Isaac, *The Invention of Racism in Classical Antiquity*, Princeton, N.J., and London, Princeton University Press, 2002, էջ 109-148:

[2] George M. Fredrickson, *Racism: A Short History*, Princeton, N.J., Princeton University Press, 2002, էջ 53.

[3] Տե՛ս, օրինակ՝ Baron [August] von Haxthausen, *Transcaucasia: Sketches of the Nations and Races Between the Black Sea and the Caspian*, London, Chapman and Hall, 1854, էջ VI, 121, 137, 354:

[4] Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. Բ.*, Վենետիկ – Ս. Ղազար, 1837, էջ 912. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան, Հտր. 4*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ, 1979, էջ 453:

[5] Voltaire, *Philosophical Letters (Letters Concerning the English Nation)*, translated by Edward Dilworth, Mineola, N.Y., Dover Publications, 2003, էջ 42:

[6] Sara Eigen Figal, *Heredity, Race, and the Birth of the Modern*, New York, Routledge, 2008, էջ 85:

[7] Sir Charles Linné, *A General System of Nature*, translated by William Turton, London, Lackington, Allen and Co., 1800, էջ 9:

[8] Count de Buffon, *Natural History, General and Particular, vol. III*, London, W. Strahan and T. Cadell, 1785, էջ 117-18:

[9] Bruce Baum, *The Rise and Fall of the Caucasian Race: A Political History of Racial Identity*, New York, New York University Press, 2006, էջ 85-87. նաեւ՝ Fredrickson, էջ 59 (հոս Մայնըրզի գիրքը սխալմամբ 1798 թուագրուած է):

[10] *The Anthropological Treatises of Johann Friedrich Blumenbach*, translated by Thomas Bendyshe, London, Anthropological Society, 1865, էջ 264-269: Այս հինգ ցեղերուն համառօտ նկարագրութեան համար, տե՛ս՝ *Նոր Կենդանաբանութիւն եւ Մարդաբանութիւն Պատմական եւ Նկարագրական*, աշխատասիրեաց Հ. Սիմէոն Երեմեան, Վենետիկ – Ս. Ղազար, 1896, էջ 430-431:

[11] *The Anthropological Treatises*, էջ 265:

[12] *The Aesthetic and Miscellaneous Works of Friedrich von Schlegel*, translated by E. J. Millington, London, Henry G. Bohn, 1849, էջ 461:

[13] Tuska Benes, "From Indo-Germans to Aryans: Philology and the Racialization of Salvationalist National Rhetoric, 1806-30," տե՛ս՝ Sara Eigen and Mark Larrimore (eds.), *The German Invention of Race*, Albany, State University of New York Press, 2006, էջ 175-176:

[14] Arthur de Gobineau, *The Inequality of Human Races*, New York, G. P. Putnam's Sons, 1915, էջ 211-212:

[15] Felix von Luschan, "Jews and Hittites," *Science*, January 12, 1894, էջ 21: Տե՛ս նաեւ՝ A. H. Keane, *Man: Past and Present*, Cambridge, Cambridge University Press, 1900, էջ 500-501. անդ, *The World's Peoples: A Popular Account of Their Bodily and Mental Characters, Beliefs, Traditions, Political and Social Institutions*, New York, G. P. Putnam's Sons, 1908, էջ 394. նաեւ՝ Giuseppe Sergi, *The Mediterranean Race: A Study of the Origin of European Peoples*, London, Walter Scott, New York, Charles Scribner's Sons, 1909, էջ 148-152: Հմմտ.՝ Լ. Ա. Բարսեղեան, *Հայ Ժողովրդի Ծագման եւ Կազմաւորման Հարցերը Պատմագիտութեան Մէջ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ – Գիտական Տեղեկատուութեան Կենտրոն, 1996, էջ 35-36:

[16] Ida, Countess Hahn-Hahn, *Letters from the Orient: Or, Travels in Turkey, Holy Land, and Egypt*, translated by Samuel Phillips, second edition, London, John C. Moore, 1845, էջ 38:

[17] Hermann Vambéry, *Meine Wanderungen und Erlebnisse in Persien*, Pest, Gustav Heckenast, 1867, էջ 12-13:

[18] Friedrich Meyer von Waldeck, *Russland: Einrichtungen Sitten und Gebraüchen, Vol. I*, Prague-Leipzig, Mainz – Schott, 1884, էջ 193: Այս ասացուածքին աղբիւրին ու կերպարանափոխութեան մասին, տե՛ս՝ Ingrid Leyer Semaan, "A Turkish Proverb and Its Tradition", *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հպր. ԻՀ.*, 2008, էջ 391-405: Հնարաւոր է, որ ասացուածքը բխած ըլլայ շարան մը նախատական խօսքերէ, որոնք ցոլացուցած են թուրքերու հարիւրամեակներու նախապաշարումի ու խտրականութեան կաղապարը՝ ոչ-իսլամական փոքրամասնութիւններու հանդէպ (Stephan H. Astourian, "Modern Turkish Identity and the Armenian Genocide: From Prejudice to Racist Nationalism", տե՛ս՝ Richard G. Hovannisian (ed.), *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*, Detroit, Wayne State University Press, 1999, էջ 18-21): Հետաքրքրական է, որ 1891ին պելճիքացի իրաւաբան Կիւսթաւ Ռոլէն-Ժեքեմին տրամաբանօրէն եզրակացուցած է, որ արեւմուտքի ճանապարհորդներու տարածած տեսակէտերը կը կազմէին «կարծիք մը, որ կրնայ յղացուած ըլլալ (...) պազարին կամ թրքական վարչութեան մէջ կարգ մը տարրերու հետ հանդիպումէն» (G. Rolin-Jaequemyns, *Armenia, the Armenians, and the Treaties*, London, John Heywood, 1891, էջ 3):

[19] George K. Anderson, *The Legend of the Wandering Jew,* Providence, Brown University Press, 1965, էջ 18-21:

[20] Leo Hamalian, *As Others See Us: The Armenian Image in Literature,* New York, Ararat Press, 1980, էջ 91. նաեւ՝ Syndy M. Conger, *Matthew G. Lewis, Charles Robert Maturin, and the Germans,* New York, Arno Press, 1980, էջ 60-61:

[21] Անգլերէն թարգմանութիւնը՝ Friedrich Muller, "On the Migrations of Races," *The Popular Science Monthly,* January 1880, էջ 330:

[22] Friedrich Ratzel, *The History of Mankind, Vol. III,* translated by A. J. Butler, London and New York, Macmillan, 1898, էջ 536:

[23] Անդ, էջ 546:

[24] Անդ, էջ 552:

[25] Մէջբերումը տե՛ս՝ Geoffrey G. Field, *Evangelist of Race: The Germanic Vision of Houston Stewart Chamberlain,* New York, Columbia University Press, 1981, էջ 353:

[26] Համպըրլէն նացի նորաստեղծ կուսակցութեան անդամ դարձած է եւ 1921-27՝ սերտ յարաբերութեան մէջ եղած է Հիթլէրի հետ, որուն ջատագովը եղած է: Հիթլէր ներկայ եղած է անոր յուղարկաւորութեան (Field, էջ 428-49):

[27] Houston Stewart Chamberlain, *The Foundations of the Nineteenth Century, Vol. 1,* London and New York, John Lane Company, 1911, էջ 6-7:

[28] Անդ, էջ 371-72:

[29] Անդ, էջ 471:

[30] Hilmar Kaiser, *Imperialism, Racism, and Development Theories: The Construction of a Dominant Paradigm on Ottoman Armenians,* Ann Arbor, Gomidas Institute, 1997, էջ 10-11. նաեւ՝ Astourian, էջ 30. նաեւ՝ Malte Fuhrmann, *Der Traum vom deutschen Orient: Zwei Deutsche Kolonien im Osmanische Reich 1851-1918,* Frankfurt, Campus Verlag, 2006, էջ 184:

[31] Margaret Lavinia Anderson, '"Down in Turkey, Far Away': Human Rights, the Armenian Massacres, and Orientalism in Wilhelmine Germany," *The Journal of Modern History,* 79:2007, էջ 99-100:

[32] Kaiser, էջ 16-17:

[33] Անդ, էջ 19:

[34] Անդ, էջ 17-18:

[35] Franz-Carl Endres, *Die Türkei: Bilder und Skizzen von Land und Volk,* Munich, C. H. Beck, 1918, էջ 23:

[36] Անդ, էջ 29:

[37] Vahakn N. Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity,* Watertown, Ma., Blue Crane Press, 1996, էջ 121:

[38] Մէջբերումը տե՛ս՝ Christoph Dinkel, "German Officers and the Armenian Genocide," *Armenian Review,* Spring 1991, էջ 82:

[39] *Science in America: A Documentary History 1900-1939,* Nathan Reingold and Ida H. Reingold (eds.), Chicago and London, Chicago University Press, 1981, էջ 264: Խօսքը գերմանացի ընկերվարական տնտեսագէտ եւ հակասեմական գրող Քարլ Եուկէն Տիւրինկի (1833-1921) մասին էր, այսօր ծանօթ՝ Ֆրիտրիխ Էնկելսի "*Anti-Dühring*" բանավիճային աշխատութեան խորագրին շնորհիւ:

[40] Նացիական գաղափարական ակունքներուն եւ տեսութիւններուն ամփոփ ներկայացումի մը համար, տե՛ս՝ Տիգրան Մաթոսեան, «Պանթուրքիզմի եւ Նացիոնալ-Սոցիալիզմի Գաղափարական Ընդհանրութիւնները», *Հայոց Ցեղասպանութեան Պատմութեան եւ Պատմագրութեան Հարցեր*, 2003:7, էջ 49-56:

[41] *Hitler: Sämtliche Aufzeichnungen 1905-1924*, Eberhard Jäckel und Axel Kuhn (eds.), Stuttgart, Deutsche Verlags-Anstalt, 1980, էջ 775:

[42] Mufty-Zade K. Zia Bey, *Speaking of the Turks*, New York, Duffield and Company, 1922, էջ 146-147:

[43] Karl May, *Im Reiche des Silbernen Löwen, Vol. 2*, Freiburg, Friedrich Ernst Fehsenfeld, 1898, էջ 476:

[45] Hans F. K. Günther, *The Racial Elements of European History*, London, Methuen and Co., 1927, էջ 133:

[46] Alfred Rosenberg, *The Myth of the Twentieth Century: An Evaluation of the Spiritual-Intellectual Confrontations of Our Age*, translated by Vivian Bird, Newport Beach (Ca.), The Noontide Press, 1993, էջ 132:

[47] «Մեր Աշխատակիցներու Նամակները», *Հայրենիք* ամսագիր, Մարտ 1964, էջ 16-17: Տպուած է 1938, որ բացայայտ վրիպակ մըն է՝ ըստ նամակի բովանդակութեան:

[48] Paul Rohrbach, *German World Policies (Der Deutsche Gedanke in Der Welt)*, New York, The Macmillan Company, 1915, էջ 4-6. նաեւ՝ անդ, *Germany's Isolation: An Exposition of the Economic Causes of the War*, Chicago, A.C. McClurg & Co, 1915, էջ 15, 84: Հայերու մասին Ռորպախի համակրական տեսակէտերուն համար, տե՛ս՝ Bertha S. Papazian, *The Tragedy of Armenia: A Brief Study and Interpretation*, Boston-Chicago, The Pilgrim Press, 1918, էջ 97-98: Ա. Աշխարհամարտի ընթացքին, ֆրանսական մամուլին մէջ երեւցած յօդուածներ Ռորպախը առանձնացուցած են որպէս հայոց տեղահանութեան ու Միջագետք՝ Պաղտատ-Պերլին երկաթուղիի մերձակայքը վերահաստատման գաղափարախօսը (A. P. Hacobian, *Armenia and the War: An Armenian's Point of View With an Appeal to Britain and the Coming Peace Conference*, London, New York, and Toronto, Hodder and Stoughton, 1917, էջ 90): Թէեւ ճիշտ է, որ Ռորպախ դէմ էր Արեւմտեան Հայաստանի ռուսական գրաւման՝ աշխարհաքաղաքական պատճառներով (Rohrbach, *Germany's Isolation*, էջ 84-85), ան հետեւողականօրէն քննադատած է Գերմանիոյ անշարժութիւնը՝ հայերու ոչնչացման առնչութեամբ եւ «1916ին նոյնիսկ խօսած է կռնակ դարձնելու մասին այն "հայրենիք"ին, որ իր թրքական դաշնակիցին նման ոճիրները հանդուրժած էր» (Ulrich Trumpener, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, Princeton University Press, 1968, էջ 242):

[49] Paul Rohrbach, *Um des Teufels Handschrift: Zwei Menschenalter Erlebter Weltgeschichte*, Hamburg, Hans Dulk, 1953, էջ 470:

[50] Robert Melson, *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago, University of Chicago Press, 1992, էջ 204. նաեւ՝ Richard Albrecht, *Armenien Ohne Armenier: "Nous Voulons une Armenie sans Armeniens"*, Norderstedt, Grin Verlag, 2008, էջ 20:

[51] Eric Ehrenreich, *The Nazi Ancestral Proof: Genealogy, Racial Science, and the Final Solution*, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 2007, էջ 9. նաեւ՝

Sheldon Pollock, "Deep Orientalism? Notes on Sanskrit and Power beyond the Raj," in Carol A. Breckenridge and Peter van der Veer (eds.), *Orientalism and the Postcolonial Predicament: Perspectives on South Asia*, Philadelphia, University of Pennsylvania Press, 1993, էջ 120:

[52] Enno Meyer und Ara J. Berkian, *Zwischen Rhein und Arax: 900 Jahre Deutsch-Armenische Beziehungen*, Oldenburg, Heinz Holzberg Verlag, 1988, էջ 102: Փաստական հիմքէ զուրկ են այն պնդումները, որ հայերն ու այլ ժողովուրդներ ընդունուած էին իբրեւ արիացիներ Օգոստոս 30-Սեպտեմբեր 3, 1933ի Նիւրեմպերկի հանրահաւաքին (Արամ Տապաղեան, «Իմ Հանդիպումները Դրոյի Հետ», *Հայրենիք* ամսագիր, Մայիս 1967, էջ 6-8), եւ որ ճանաչման որոշումը հրապարակուած էր հանրային քարոզչութեան նախարար Կէօպելսի կողմէ (Անդրանիկ Չէլէպեան, *Դրօ (Դրաստամատ Կանայեան)*, Միշիկըն, ա. հ., 2003, էջ 303):

[53] Ա. Աթան [Արշամ Խոնդկարեան], «Հայ Կեանք (Ամսական Տեսութիւն), *Հայրենիք* ամսագիր, Նոյեմբեր 1933, էջ 170:

[54] Ա. Ա. [Արտաշէս Աբեղեան], «Հայութիւն-Արիականութիւն», *Հայրենիք ամսագիր*, Յունիս 1934, էջ 154: Իբրեւ գրախօսական ներկայացուած այս գրութիւնը ըստ էութեան բովանդակութեան նկարագրութիւն մըն է, հրատարակութեան նախապատմութեան վերաբերեալ արժէքաւոր նշումներով:

[55] Մանասէ Կ. Սեւակ, «Փրոֆ. Արտաշէս Աբեղեանի Պայքարը Նացիներու Հակահայ Քաղաքականութեան Դէմ Եւ Այդ Պայքարի Ճակատագրական Հետեւանքները», *Հայրենիք*, 9 Յունիս, 1955, էջ 1:

[56] «"Մուսա Տաղ". Թուրքեր Կ'անհանգստանան», *Հայրենիք*, 17 Յունուար 1934, էջ 1:

[57] Peter Stephan Jungk, *Franz Werfel: A Life in Prague, Vienna, and Hollywood*, translated by Anselm Hollo, New York, Grove Press, 1990, էջ 279-280, որ Ռըֆքը Աթայի անունը կու տայ առանց աղբիւրի յիշատակութեան:

[58] "Nazis Suppressed Jew's Story of Armenians", *The Armenian Mirror*, March 9, 1934, էջ 3:

[59] Norbert Abels, *Franz Werfel: Mit Selbstzeugnissen und Bilddokumenten*, Reinbek-Hamburg, Rowohlt, 1990, էջ 100:

[60] Feridun Cemal Erkin, *Dişişlerinde 34 Yil: Anilar, Yorumlar, vol. 1*, Ankara, Türk Tarih Kurumu Basimevi, 1980, էջ 38: Տե'ս նաեւ՝ Cemil Koçak, *Türk-Alman Iliskileri, 1923-1939: Iki Dünya Savasi Arasindaki Dönemde Siyasal, Kültürel, Askeri ve Ekonomik Iliskiler*, Ankara, Türk Tarih Kurumu Basimevi, 1991, էջ 184:

[61] Annette Schaefgen, *Schwieriges Erinnern: Der Völkermord an den Armeniern*, Berlin, Metropol Verlag, 2006, էջ 159: Յօդուածը սխալմամբ Նոյեմբեր 1936 թուագրուած է (Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence and Oxford, Berghahn Books, 1995, էջ 410):

[62] *Armeniertum-Ariertum*, Potsdam, Deutsche-Armenische Gesselschaft, 1934:

[63] Ա. Ա., «Հայութիւն-Արիականութիւն», էջ 154:

[64] Սեւակ, էջ 1:

[65] Կարլ Ռոթ, «Ռասսայագիտութեան Եւ Հայ Ժողովրդի Բնութագրման Հարցի Շուրջ», *Հայկականութիւն-Արիականութիւն*, թարգմ. Ալինա Դոնոյեան, Երեւան,

Փրինթինֆօ, 2001, էջ 39-46. նաեւ՝ Քահանայ Գերհարդ Քլինգէ, «Հայ Ժողովրդի Ռասսան եւ Պատմութիւնը Որպէս Խնդիր», անդ, էջ 47-53:

[66] Ա. Ա., «Հայութիւն-Արիականութիւն», էջ 155:

[67] «Մեր Աշխատակիցներու Նամակները», էջ 16-17: Ֆոն Լէէրսի 1920-30ականներու հակահայ հրատարակութիւններուն մասին, տե՛ս՝ Stefan Ihrig, *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler*, Cambridge, Ma., and London, Harvard University Press, 2016, էջ 315-16:

[68] Ա. Ա., «Հայութիւն-Արիականութիւն», էջ 155:

[69] Յոհաննէս ֆոն Լէէրս, «Հայութիւն եւ Արիականութիւն», *Հայկականութիւն-Արիականութիւն*, էջ 29:

[70] Պաուլ Ռոհրբախ, «Աւելորդ Հարց», *Հայկականութիւն-Արիականութիւն*, էջ 90:

[71] Ֆոն Լէէրս, «Հայութիւն», էջ 25-26:

[72] Արտաշէս Աբեղեան, «Հիւսիսային Տիպերը Հայաստանում», *Հայկականութիւն-Արիականութիւն*, էջ 30-38:

[73] Christina Maranci, "Armenian Architecture as Aryan Architecture: The Role of Indo-European Studies in the Theories of Josef Strzygowski", *Visual Resources, Vol. XIII*, 1998, էջ 369-378. անդ՝ *Medieval Armenian Architecture: Constructions of Race and Nation*, Sterling, Va., Peeters, 2001, էջ 116-118:

[74] Եոզէֆ Ստրժիգովսկի, «Հայերը Որպէս Հնդգերմանական Ճարտարապետական Մտածողութեան Կրողներ», *Հայկականութիւն-Արիականութիւն*, էջ 69: Այս յօդուածի քննարկման համար, տե՛ս՝ Վարդան Ազատեան, *Արուեստաբանութիւն եւ Ազգայնականութիւն. Միջնադարեան Հայաստանի եւ Վրաստանի Արուեստները 19-20-րդ դդ. Գերմանիայում*, Երեւան, Ակտուալ Արուեստ, 2012, էջ 227-232:

[75] Robert Irwin, *Dangerous Knowledge: Orientalism and Its Discontents*, New York, Overlook Press, 2006, էջ 235-236:

[76] Հանս Հայնրիխ Շեդէր, «Հայերէնի Տեղը Հնդեւրոպական Լեզուների Շարքում», (*Հայկականութիւն-Արիականութիւն*, էջ 18-23. նաեւ՝ Էւալդ Շթիհր, «Գերմանա-Հայկական Մշակութային Առնչութիւնները», *անդ*, էջ 54-64. նաեւ՝ Ֆոն Մաքս, Սաքսոնիայի դուքս, «Հայոց Աստուածապաշտութեան Կերպը», *անդ*, էջ 74-83): Հարկ է մատնանշել, որ օրին գիրքին բովանդակութիւնը մասամբ մատչելի եղած է հայ ընթերցողին: Հրատարակութենէն անմիջապէս ետք, Մարտ 1934ին, Լիպարիտ Նազարեանց նախ թարգմանած է Լենցի «Ցեղ եւ Ժառանգականութիւն» յօդուածը (Մարտ 3), ապա յաջորդաբար՝ Ռորպախի, Քլինկէի եւ Ռոթի յօդուածները (Մարտ 20-26), *Յուսաբերի* մէջ: Աւելի ուշ, նաեւ թարգմանած է Ստրժիկովսկիի յօդուածը (*Արուեստաբան, Գրող, Հրապարակագիր Լիպարիտ Նազարեանց, 1877-1947*, կազմ.՝ Եդուարդ Յակոբեան, Գահիրէ, «Յուսաբեր», 1991, էջ 38):

[77] Maud S. Mandel, *In the Aftermath of Genocide: Armenians and Jews in Twentieth Century France*, Durham and London, Duke University Press, 2003, էջ 288 (ընդգծումը բնագրային է):

[78] John M. Efron, *Defender of the Race: Jewish Doctors and Race Science in Fin-de-Siècle Europe*, New Haven and London, Yale University Press, 1994, էջ 136, 158:

[79] Սեւակ, էջ 1:

[80] Martin Staemmler, *Rassenpflege im Völkischen Staat*, Munich, J. F. Lehmann, 1933, էջ 48-50: Տե՛ս նաեւ՝ Uwe Feigel, *Das Evengelische Deutschland und Armenien: Die Armenierhilfe Deutscher und Evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der Deutsch-Türkischen Beziehungen*, Göttingen, Vandenhoeck und Ruprecht, 1989, էջ 292:

[81] Meyer und Berkian, էջ 99:

[82] Kaiser, էջ 34:

[83] Dominik J. Schaller, "Die Rezeption des Völkermordes and den Armeniern in Deutschland, 1915-1945," տե՛ս՝ Hans-Lukas Kieser and Dominik J. Schaller (eds.), *Die Volkermord an den Armeniern und die Shoah*, Zurich, Chronos, 2002, էջ 555:

[84] Անդ:

[85] Անդ: Հեգնականօրէն, Կիւնթէր եւ ֆոն Լէէրս ընդգրկուած են ափյափոյ, առանց ժամանակագրական կարգի յիշուած գիտնականներու շարքին (Հայնրիխ Հիպշման, Ֆրիտրիխ Լեման-Հաուփթ, Փաուլ Ռորպախ, Ֆրանց Պուի եւ Ժոզէֆ Մարքուարթ), որոնք «ոչ մէկ պարագայի տակ խնդրոյ առարկայ դարձուցած են մեր արիականութիւնը կամ հնդեւրոպական ընտանիքէն դուրս նետած են Հայոց լեզուն» (Կարօ Գէորգեան, «Նացի Ցեղաբանները եւ Հայ Ժողովուրդի Նացիական Ծագումը», *Նայիրի*, 28 Նոյեմբեր, 1952, էջ 3):

[86] Tessa Hofmann, "Armenier in der Bundesrepublik"՝ Tessa Hofmann and Gerayer Koutcharian (eds.), *Armenien: Völkermord, Vertreinbung, Exil*, Göttingen and Vienna, Gesselschaft für Bedrohte Völker, 1987, էջ 125: Գերմանացի պատմաբան Թեսա Հոֆման՝ ընդառաջելով մեր խնդրանքին, յաւելուածաբար յայտնած է, որ յենած էր հայ ականատեսներու բանաւոր վկայութիւններուն վրայ, որոնց շարքին էր հանգուցեալ Արթին Գլըճեանը (Քէօլն) (ելեկտրոնային նամակ, Նոյեմբեր 2, 2010, որ մեզի հասած է բանասէր Իշխան Չիթճեանի միջնորդութեամբ, որուն շնորհակալութիւն կը յայտնենք):

[87] «Աւստրիա. Հայոց Մասին Քննութիւն Կը Կատարուի Թէ Արիակա՞ն են Թէ Ոչ», *Ճարտօնք*, 2 Հոկտեմբեր, 1938: Շնորհակալութիւն կը յայտնենք պատմաբան Արա Սանճեանին այս աղբիւրին համար:

[88] Տե՛ս՝ «Հրեաներու Հալածանքը Իտալիոյ Մէջ», *Ժամանակ*, 2 Սեպտեմբեր 1938:

[89] Aaron Gillette, *Racial Theories in Fascist Italy*, London, Routledge, 2002, էջ 53-75:

[90] Michele Sarfatti, "Il Razzismo Fascista Nnella sua Concretezza: La Definizione di 'Ebreo' e la Collocazione di Questi Nella Costruenda Gerarchia Razziale"՝ Alberto Burgio (ed.), *Nel Nome della Razza: Il Razzismo Nella Storia d'Italia, 1870-1945*, Bologna, Il mulino, 1999, էջ 327. նաեւ՝ Davide Rodogno, *Fascism's European Empire: Italian Occupation During the Second World War*, New York, Cambridge University Press, 2006, էջ 64:

[91] Sarfatti, էջ 328. նաեւ՝ Rodogno, էջ 64:

[92] *Armeni Ariani*, studi tradotti dal tedesco da Maria Molteni, Roma, HIM, 1939: HIMի հրատարակութիւններուն եւ Մայնարտիի գործունէութեան մասին, տե՛ս՝ Stefano Riccioni, "Armenian Art and Culture from the Pages of the *Historia Imperii Mediterranei*", *Venezia Arti*, 27, 2018, էջ 119-130:

[93] Lauro Mainardi, *Nazionalità e Spazi Vitali*, Roma, Cremonese, 1941, էջ 5, 175-82:

[94] Lauro Mainardi, *U.R.S.S. Prigione dei Popoli*, Roma, Cremonese, 1941, էջ 59, 268:

[95] Lauro Mainardi, *L'Armenia: Incrocio di Tre Mondi e due Continenti*, Milano, Unione Editoriale Italiana, 1959, էջ 29-34:

[96] Sarah Gordon, *Hitler, Germans, and the "Jewish Question,"* Princeton (NJ), Princeton University Press, 1984, էջ 100:

[97] Franz Borkenau, *The New German Empire*, New York, Viking Press, 1939, էջ 98:

[98] Helmut Langerbein, *Hitler's Death Squads: The Logic of Mass Murder*, Austin, Texas A&M University Press, 2003, էջ 33: Փետրուար 1942ին ձերբակալուած Կոմսոմոլի աշխատող, ծագումով հրեայ Մ. Կ. Քոկան ինքզինք հայ ձեւացուցած է եւ երեք ամիս եւրք ազատ արձակուած: SDի (*Sicherheitsdienst*) հայ թարգմանիչը հաստատած էր, որ ան լեզուն գիտէր եւ արտաքին նշաններով հայ էր (Benjamin Pinkus, *The Soviet Government and the Jews, 1948-1967: A Documented Study*, Cambridge, Cambridge University Press, 1984, էջ 130):

[99] *Soviet Government Statements on Nazi Atrocities*, London and New York, Hutchinson and Co, 1946, էջ 147:

[100] Levon Thomassian, *Summer of '42: A Study of German-Armenian Relations During the Second World War*, Atglen, Pa., Schiffer, 2012:

[101] Ռաֆայէլ Համբարձումեան, *Գարեգին Նժդեհ. Ամբողջական Կենսագրութիւն*, Երեւան, Նախիջեւան Հրատ., 2007, էջ 211: Գործակցութեան հարցին մասին, տե՛ս՝ Զաւէն Մսըրլեան, «Համօ Օհանջանեանի Նամակները Զօր. Քէյսիի եւ Դրոյի (Բ. Համաշխարհային Պատերազմի Շրջան)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԼԷ. Հատոր*, 2017, էջ 277-300:

[102] Տե՛ս Robert W. Stephan, *Stalin's Secret War: Soviet Counterintelligence against the Nazis, 1941-1945*, Lawrence (Ks.), University Press of Kansas, 2004, էջ 135. նաեւ՝ Franz Kurowski, *The Brandenburger Commandos: Germany's Elite Warrior Spies in World War II*, translated by David Johnston, Mechanicsburg (Pa.), Stackpole Books, 2005, էջ 94. նաեւ՝ Eduard Abramian, *Forgotten Legion:* Sonderverbände Bergmann *in World War II, 1941-1945*, Bayside (NY), Europa Books, 2007, էջ 15-27:

[103] Heather Anne Pringle, *The Master Plan: Himmler's Scholars and the Holocaust*, New York, Hyperion, 2006, էջ 213:

[104] Daniel Rothbart and Karina V. Korostelina, "The Enemy and the Innocent in Violent Conflicts"՝ Dennis J. Sandole et al., *Handbook of Conflict Resolution*, New York, Routledge, 2009, էջ 94:

[105] Christopher Walker, *Armenia: The Survival of a Nation*, New York, St. Martin's Press, 1980, էջ 357-58:

[106] Schaller, էջ 555:

[107] Ehrenreich, *The Nazi Ancestral Proof*, էջ 8. նաեւ՝ Alan E. Steinweis, *Studying the Jew: Scholarly Antisemitism in Nazi Germany*, Cambridge (Ma.), Harvard University Press, 2006, էջ 59-60:

[108] Patrik von Zur Muhlen, *Zwischen Hakenkreuz und Sowjetstern. Der Nationalismus der Sowjetischen Orientvolker im Zweiten Weltkrieg*, Dusseldorf, Droste Verlag, 1971, էջ 105:

[109] Շթիիր, էջ 55:

[110] Alexander Dallin, *German Rule in Russia, 1941-1945: A Study of Occupation Policies*, Boulder, Co., Westview Press, 1981, էջ 229. . նաեւ՝ Alex Alexiev, *Soviet*

Nationalities in German Wartime Strategy, 1941-1945, Santa Monica (Ca.), The Rand Corporation, 1982, էջ 21:

[111] Charles Warren Hostler, *Turkism and the Soviets: The Turks of the World and Their Political Objectives*, London, G. Allen & Unwin, New York, F. A. Praeger, 1957, էջ 171-77. նաեւ՝ Jacob M. Landau, *Pan Turkism: From Irredentism to Cooperation*, Bloomington, Indiana University Press, 1995, էջ 112-18:

[112] Hostler, էջ 180-185; Dallin, էջ 232-235. նաեւ՝ Selim Deringil, *Turkish Foreign Policy During the Second World War: An "Active" Neutrality*, Cambridge, New York and Melbourne, Cambridge University Press, 1989, էջ 174. նաեւ՝ Christian Leitz, *Nazi Germany and Neutral Europe during the Second World War*, Manchester, Manchester University Press, 2000, էջ 97-98:

[113] Ռուբէն Թադէոսեան, «Ֆրանսահայ Գաղութը Պատերազմի Ընթացքում», *Հայրենիք* ամսագիր, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1946, էջ 55:

[114] Dallin, էջ 229.

[115] Peter Kenez, *A History of the Soviet Union from the Beginning to the End*, second edition, New York, Cambridge University Press, 2006, էջ 145:

[116] David Marshall Lang, *A Modern History of Georgia*, London, Weidenfeld and Nicolson, 1962, էջ 259:

[117] Alexiev, էջ 5. նաեւ՝ Stephen Dorril, *MI6: Inside the Covert World of His Majesty's Secret Intelligence Service*, New York, Touchstone, 2002, էջ 819. նաեւ՝ Georges Mamoulia, *Les Combats Indépendantistes des Caucasiens entre URSS et Puissances Occidentales: Le Cas de la Georgie (1921-1945)*, Paris, L'Harmattan, 2009, էջ 280-82. նաեւ՝ Rolf-Dieter Müller, *The Unknown Eastern Front: The Wehrmacht and Hitler's Foreign Soldiers*, London and New York, I. B. Tauris, 2012, էջ 240:

[118] Ortwin Buchbender, *Das Tönende Erz: Deutsche Propaganda Gegen die Rote Armee im Zweiten Weltkrieg*, Stuttgart, Seewald Verlag, 1978, էջ 197:

[119] A. Sanders [A. Nikuradze], *Kaukasien: Nordkaukasien, Aserbeidschan, Armenien, Georgien. Geschichtliher Umriss*, Munich, Hoheneichen-Verlag, 1942, էջ 16-27: Այս հատորը վերատպուած է 1944ին:

[120] Զաւէն Մսըրլեան, «Նացի Ցեղապաշտները եւ Հայերը», *Ծիրակ*, Մայիս 1987, էջ 40:

[121] Միսաք Թորլաքեան, *Օրերուս Հետ*, Լոս Անճելըս, տպ. «Հորիզոն», 1953, էջ 545. նաեւ՝ Տապաղեան, էջ 6-7:

[122] Robert Cecil, *The Myth of the Master Race: Alfred Rosenberg and Nazi Ideology*, New York, Dodd Mead, 1972, էջ 200:

[123] *Nazi Conspiracy and Aggression*, էջ 70-71:

[124] *The Bormann Letters: The Private Correspondence between Martin Bormann and His Wife from January 1943 to April 1945*, edited by H. S. Trevor Roper, London, Weidenfeld and Nicolson, 1954, էջ XIX, 193-94:

[125] Buchbender, էջ 197. նաեւ՝ Meyer und Berkian, էջ 131:

[126] Henry Picker, *Hitlers Tischgespräche im Führerhauptquartier*, Stuttgart, Seewald Verlag, 1976, էջ 422: Փիքէր գրոյցները գրառողն էր Մարտ-Յուլիս 1942ին եւ գաղտագողի կրկնօրինակ մը ըրած էր անձնական գործածութեան համար: Հմմտ.՝ Kevork B. Bardakjian, *Hitler and the Armenian Genocide*, Cambridge (Ma.),

Zoryan Institute, 1985, էջ 30, որ վերջին բառերը կը թարգմանէ «ո՛չ միայն հրէական, այլ նաեւ հայկական արիւնէն»: Հետաքրքրական է, որ այս զրոյցներուն անգլերէն թարգմանութիւնը (ֆրանսերէնէ) չի յիշեր հայերը. «Մեր ցեղային մաքրութեան պահպանումը միայն կրնայ ապահովուիլ համապատասխան ցեղային խնդիրներու գիտակցութեամբ. մեր օրէնքները, հետեւաբար, պէտք է ձեւաւորուին մեր ժողովուրդը ո՛չ միայն հրէական, այլ նաեւ որեւէ ցեղային վարակումի դէմ պաշտպանելու միակ նպատակով» (*Hitler's Table Talk, 1941-1944: His Private Conversations,* translated by Norman Cameron and R. H. Stevens, New York, Enigma Books, 2008, էջ 424):

[127] Մէջբերումը տե՛ս՝ Alexander Werth, *Russia at War 1941-1945,* London, Barrie and Rockliff, 1964, էջ 579, որ նաեւ վկայած է Միացեալ Նահանգներու մէջ խորհրդային դեսպան Կոստանդին Ումանսկիի անվստահութեան մասին՝ Իրիմի թաթարներու եւ կովկասեան լեռնականներու հանդէպ, որուն գումարած է վրացիներու անտեսումը եւ դրուատիքը հայերուն իբրեւ «միակ լիուլի խորհրդայնամէտ եւ ռուսամէտ ազգը Կովկասի մէջ» (անդ, էջ 573):

[128] Karl May, *Auf Fremden Pfaden,* Freiburg, Friedrich Ernst Fehlenfeld, 1897, էջ 394-95:

[129] Rosenberg, էջ 11-12:

[130] *Nazi Conspiracy and Aggression,* vol. 7/8, Washington D.C., U.S. Government Printing Office, 1946, էջ 191:

[131] Թորլաքեան, էջ 545: Հմմտ.՝ Տիգրան Դեւոյեան, «Դրաստամատ Կանայեան (Դրօ)», *Հայրենիք* ամսագիր, Յուլիս 1957, էջ 17, որ այդ դերը վերագրած է Աբեղեանին ու Դրոյին:

[132] Կարօ Գէորգեան, «Հայ Տարագիրները Գերմանիոյ Մէջ Երկրորդ Աշխարհամարտի Ընթացքին եւ Անկէ Ետք», *Ամէնուն Տարեգիրքը,* Պէյրութ, տպ. Ատլաս, 1954, էջ 138:

[133] Գէորգեան, «Նացի Ցեղաբանները», էջ 3: Հեղինակը թուականը կը գրէ առանց ակնարկելու 1934ի հրատարակութեան, ինչ որ ենթադրել կու տայ, որ վերահրատարակութիւն մը եղած է: Տպագրութեան վայրը, սակայն, նշուած չէ:

[134] Հմմտ.՝ Աշոտ Ալեքսանեան, «Յառաջաբան», *Հայկականութիւն-Արիականութիւն,* էջ 13, ուր տրուած է 1942-1943 թուագրումը, իսկ վայրը՝ Շթութկարտ:

[135] Օնիկ Փանիկեան, *Լուսաբանութիւն (Ինքնակենսագրական Նոթեր),* Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Հրատ., 2006, էջ 120:

[136] *Kaukasus,* Berlin, Nationalsozialistische Deutsche-Arbeiter Partei Schutzstaffel, 1942, էջ 33:

[137] R. Kherumian, *Les Arméniens. Race - Origines Ethno-Raciales,* Paris, Vigot Frères, 1941, էջ 13-14, 30, 45-49, 79-83: Հիւսիսական ներկայութեան առնչութեամբ, Խերումեան յենած է Աբեղեանի «Հայկականութիւն-Արիականութիւն»ի յօդուածին վրայ:

[138] Karen H. Adler, *Jews and Gender in Liberation France,* Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 129:

[139] Mandel, էջ 48: Յօդուածը լոյս տեսած է Պրիւքսէլի *Le Soir* օրաթերթին մէջ, 26 Յունիս 1942ին:

[140] Georges Mauco, "L'immigration Étrangère en France et le Problème des Réfugiés", *L'ethnie Française*, March 1942, էջ 11-12.

[141] «Երէկ եւ Այսօր», *Հայկաշէն, Գիրք Բ.*, [1943], էջ 72-76: Տե՛ս նաեւ՝ Գրիգոր Պըլտեան, *Ֆրանսահայ Գրականութիւն, 1922-1972. Նոյնէն Այլը*, Երեւան, Սարգիս Խաչենց-Փրինթինֆօ-Անտարէս, 2017, էջ 598, որ կը նշէ, թէ յօդուածը Շաւարշ Նարդունիի ոճը կը յիշեցնէ:

[142] Richard H. Weisberg, *Vichy Law and the Holocaust in France*, New York, New York University Press, 1996, էջ 227:

[143] Gerald Reitlinger, *The Final Solution: The Attempt to Exterminate the Jews of Europe 1939-1945*, South Brunswick and New York, Thomas Yoseloff, 1968, էջ 137-38:

[144] *Vom Generalplan Ost zum Generalsiedlungsplan*, edited by Czeslaw Madajczyk, Munich, K. G. Saur, 1994, էջ 39, 61: Տե՛ս նաեւ՝ Mark Mazower, *Hitler's Empire: How the Nazis Ruled Europe*, New York, Penguin Press, 2008, էջ 208-211:

[145] *Vom Generalplan*, էջ 80: Այս փաստաթուղթին մէջ հայերը այլուր յիշուած չեն, ինչ որ կասկածելի կը դարձնէ այն պնդումը, թէ այս յուշագիրը նաեւ կոչ կ'ուղղէր խորհրդահայ բնակչութեան ֆիզիքական կործանման՝ Կովկասի նուաճումէն ետք, եւ վերապրողներու ստրկացման (Հ. Ռ. Սիմոնեան, *Սփիւռքահայութիւնը Սոցիալ-Քաղաքական Պայքարի Ուղիներում*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1968, էջ 79-80):

[146] Թադէոսեան, էջ 55:

[147] «Ռուբէն Խերումեան», *Յառաջ*, 16 Մարտ 1969, էջ 1:

[148] Meyer and Berkian, էջ 132:

[149] Թադէոսեան, էջ 55:

[150] Muhlen, էջ 53. նաեւ՝ Meyer and Berkian, էջ 132-133: Այս արձանագրութեան պատճառով, թերեւս, նացիականութեան պատմաբան մը «պատուոյ արիական ցեղ»ի պիտակով բնորոշած է հայերը՝ կալմուկներու եւ թաթարներու կողքին (Gerald Reitlinger, *The SS: Alibi of a Nation*, 1922-1945, New York, Da Capo Press, 1989, էջ 392):

[151] Թադէոսեան, էջ 56: Խառն ամուսնութիւնները արգիլուած չէին. Գրիգոր Զohրապի եղբօրորդին ամուսնացած է գերմանուհիի մը հետ (Meyer and Berkian, էջ 133): Սակայն, Դեկտեմբեր 1943ին, նացի կուսակցութեան ցեղային-քաղաքական գրասենեակի տեղեկատուական սպասարկութիւնը դատապարած է խառն ամուսնութիւնները որպէս ընդհանրապէս վտանգաւոր՝ ցեղային եւ մշակութային նախընթացներու տարբերութեան պատճառով (Gordon, էջ 103):

[152] Թադէոսեան, էջ 56: Ֆրանսական դիմադրութեան հայ վեթերան մը իր յուշերուն նախաբանին մէջ գրած է, թէ գերմանացիներու կողմէ հայերու ոչ-արիացի ըլլալուն «իբրեւ հիմք առնուած էր Փարիզի մէջ լոյս տեսած Sopթ. Խերումեանի գիրքը, որուն մէջ օրինակներով եւ ցեղաբանական ապացոյցներով ցոյց կը տրուէր՝ թէ Հայեր ոչ մէկ կապ ունին արիական ցեղին հետ, թէ անոնք կը պատկանին "արամէական" ցեղին, որ սեմականին հետ ազգակցութիւն ունի: Ու այս եւ նման կարգի անհեթեթութիւններ՝ Հայերը ֆիզիքապէս բնաջնջման թեկնածու կը դարձնէին» (Տիրան Ոսկերիչեան, *Հայ Արձակագէնի Մը Յուշերը*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1974, էջ 11): Ոսկերիչեան իր յուշը հիմնած է խեղաթիւրուած տա-

րածայնութեան վրայ, ըստ երեւոյթին, քանի որ «արամէական» բառը գոյութիւն չունի Խերումեանի՝ պատերազմի շրջանին հրատարակած երկու գիրքերուն մէջ:

[153] Rouben Kherumian, *Introduction à l'anthropologie du Caucase - Les Armeniens*, Paris, P. Geuthner, 1943, էջ 143-222:

[154] Weisberg, էջ 223. նաեւ՝ Jean Estèbe, *Les Juifs à Toulouse et en Midi Toulousain au Temps de Vichy*, Toulouse, Presses Universitaires du Mirail, 1996, էջ 59:

[155] *Liste der Auszusondernden Literatur*, Zweiter Nachtrag, Berlin, Deutsche Zentralverlag, 1948 (www.polunbi.de/bibliothek/1948-nslit.html, կարդացուած՝ 25 Մայիս 2020ին):

[156] Եուրի Խաչատրեան, «Խմբագրի Խօսքը», *Հայկականութիւն-Արիականութիւն*, էջ 8:

[157] Ալեքսանեան, «Յառաջաբան», էջ 14-16:

[158] Յովհաննէս Գրիգորեան, «Գիրք՝ Յաւերժական Թշնամու եւ Մոռացուած Բարեկամների Մասին», *Ազգ*, 25 Դեկտեմբեր 2001:

[159] Ian F. Haney López, *White by Law: The Legal Construction of Race*, New York, New York University Press, 1996, էջ 100:

[160] Nina G. Jablonski and George Chaplin, "The Evolution of Human Skin Coloration", *Journal of Human Evolution*, 2000:39, էջ 70-80. նաեւ՝ Jack Hitt, "Mighty White of You: Racial Preferences Color America's Oldest Skulls and Bones", *Harper's Magazine*, July 2005, էջ 47:

[161] Luigi Luca Cavalli-Sforza, *Genes, Pueblos y Lenguas*, Barcelona, Crìtica, 2000, էջ 34-35: Այս պարբերութիւնը կը պակսի անգլերէն հրատարակութենէն (idem, *Genes, Peoples, and Languages*, New York, North Point Press, 2000, էջ 26): Տե՛ս նաեւ՝ Michael J. Bamshad and Steve E. Olson, "Does Race Exist?", *Scientific American*, December 2003, էջ 80-82:

GERMAN PERCEPTIONS OF THE ARMENIANS AND ARMENIAN-NAZI RELATIONS
(Summary)

VARTAN MATIOSSIAN
varny1@yahoo.com

The issue of Armenian relations with Nazi Germany has been the subject of few studies and much speculation in Armenian scholarly and non-scholarly circles. From the eighteenth century on, coinciding with European colonial expansion and the struggle for the control of the decaying Ottoman Empire, Armenians were racialized and otherized in Western European sources, including those of German scholars, travelers, and publicists, and frequently associated with another much maligned group, the Jews.

This trend continued unabated during the period of the internationalization of the Armenian Question, and it offered a rationalization for the Hamidian massacres of 1895-1896 and the subsequent genocide of 1915. It is not surprising to find its echo in the sparse references to Armenians by Adolf Hitler from 1922 to 1943. After his coming to power in 1933, an anti-Armenian campaign started in the German press and various Nazi circles with frequent accusations leveled at the supposed non-Aryan character of Armenians and their ethnic and racial association with the Jewish people.

This campaign was also fueled by Turkish intervention, which would also be behind the prohibition raised against the newly published novel by Franz Werfel, *The Forty Days of Musa Dagh*, in early 1934.

The Deutsche-Armenische Gesselschaft (German-Armenian Society) reacted first by obtaining official declarations from the Nazi government that Armenians were Aryan (July, August, and September 1933). Then, its vice president, Artashes Abeghian (1878-1955), an Armenian Studies scholar and professor of Armenian language at Berlin University, spearheaded and edited a volume of articles by German-speaking scholars and journalists, all non-Armenian, with the eloquent title *Armeniertum-Ariertum* (Armenianness-Aryanness), published in 1934. The volume made a strong case about the "Aryan" identity of the Armenian people, playing within the discourse established by the dominant ideology to distance the minuscule Armenian community of Germany from the heightened discrimination and racism that was already befalling the "non-Aryan" realm in Nazi Germany.

Benito Mussolini's Fascist regime in Italy made a turnaround against the Jewish community in 1938 under German influence and pressure, and some government documents initially listed Armenians as "Asiatic," outside the "Aryan" category. There was another turnaround in 1939, and Armenians were then considered Aryans. In order to make Armenians better known and establish a safety net around the small Italian-Armenian community, the Armenian Union of Italy made an agreement with journalist Lauro Mainardi, a member of the Fascist party, to publish a collection of books about Armenia and the Armenians, which included the Italian translation of *Armeniertum-Ariertum*, entitled *Armeni-Aryani,* in 1939.

The German edition of the book had not managed to stop completely the anti-Armenian tropes being repeated in scholarly and journalistic publications, and World War II saw a renewed return of the anti-Armenian offensive in Nazi Germany. The ideological attacks no longer threatened Armenians only in Germany, but also in all territories occupied and influenced by the Nazi regime in Europe. The Nazi-Soviet conflict and the thorny fate of the thousands of Soviet Armenian war prisoners in Germany became two of the pressing issues around the much-debated cooperation of a small group of Armenian Revolutionary Federation members with the Nazi regime in 1941-1943. According to certain testimonies, Artashes Abeghian, who was involved in this cooperation, appears to have reprinted (although no extant copy has surfaced so far) *Armeniertum-Ariertum* in 1942 or 1943 to counteract the anti-Armenian smears. This campaign was also extended to France, where anti-Armenian feelings had surfaced in some right-wing publications since the 1930s and found fertile ground during the German occupation.

In his conclusion, the author discusses briefly the translation into Armenian of *Armeniertum-Ariertum,* serially published in 1998 and as a book in 2001, in the context of the collapse of racialist ideas and the "Aryan myth" after World War II.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ Ռ.Թ. ԷՐԴՈՂԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (2014-9)

ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ
melanumyan@gmail.com

Թուրքիայի իշխանութիւնները հանրապետութեան հիմնադրման տարեթուից իվեր որդեգրել են Հայոց Ցեղասպանութեան փաստը յամառօրէն ժխտելու քաղաքականութիւն: Թէեւ հանրապետական Թուրքիայի գոյութեան տասնամեակների ընթացքում այդ կոշտ դիրքորոշումը ենթարկուել է որոշ փոխակերպումների եւ հանդէս եկել բազմապիսի ձեւերով, այնուամենայնիւ այս հարցի ուղղութեամբ թուրքական իշխանութիւնների վարած քաղաքականութեան բնոյթը գրեթէ միշտ նոյնն է մնացել:

Վերջին տասնամեակներին Ցեղասպանութեան փաստի կոշտ ժխտման քաղաքականութիւնը թուրքական իշխանութիւնների կողմից ենթարկուեց որոշ փոփոխութեան: Այսպէս՝ եթէ, օրինակ, Թուրքիայի Հանրապետութեան առաջին նախագահ Մուստաֆա Քեմալը 1927 Հոկտեմբերին ներկայացրած իր յայտնի ճառում պնդում էր, թէ «*Կասկած անգամ չպէտք է լինի, որ հայերի կոտորածների վերաբերեալ խօսակցութիւնները չէին համապատասխանում իրականութեանը (...) Այս վայրագութիւնը, որի նմանը պատմութիւնը չէր տեսել, հայերն են իրականացրել: Մուսուլմանները հայերի դէմ դուրս եկան եւ ինքնապաշտպանութեան դիմեցին միայն իրենց պատիւն ու կեանքը պաշտպանելու համար*»[1], ապա 2014 Ապրիլին Ռեջէփ Թայիփ Էրդողանը, դեռեւս լինելով Թուրքիայի վարչապետը, հանդէս եկաւ հայերին ուղղուած ցաւակցական ուղերձով: Այդպիսով՝ Էրդողանը Թուրքիայի պատմութեան մէջ մտաւ որպէս երկրի առաջին թիւ մէկ պաշտօնեան, ով նման ցաւակցական ուղերձ է յղել:

Բայց եւ այնպէս Էրդողանը թէ՛ վարչապետութեան եւ թէ՛ նախագահութեան տարիներին շարունակեց Հայոց Ցեղասպանութեան ուրացմանն ուղղուած քաղաքականութիւնը՝ այդ քայլերը սքօղելով կեղծ ցաւակցութեան դիմակի ներքոյ: Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցից մի քանի տարի առաջ պաշտօնական Թուրքիան փորձում էր որոշ խմբագրումներ անել այս հարցի ուղղութեամբ իր դիրքորոշման եւ գործունէութեան մէջ՝ այդ կերպ փորձելով սիրաշահել հայ հանրութեանը եւ, յատկապէս, սփիւռքահայերին, որպէսզի վերջիններիս թիւրիմացութեան մէջ գցելով՝ նրանց զերծ պահի Մեծ եղեռնի 100ամեայ տարելիցին ըստ արժանւոյն նախապատրաստուելուց:

2011ին թուրքական իշխանութիւնների եւ մասնաւորապէս տուեալ ժամանակաշրջանի արտգործնախարար Ահմէդ Դաւութօղլուի քաղաքականութեան առանցքում, այսպէս կոչուած, «Արդար յիշողութեան» (*Adil Hafıza*) մասին դրոյթն էր, որն իրականում նպատակ ունէր Հայոց Ցեղասպանութեան մեծ ողբերգութիւնը հաւասարեցնել Առաջին Աշխարհամարտի տա-

րիներին զոհուածների ազգականների ցաւի հետ: 2012ին Դաւութօղլուն հրապարակեց Թուրքիայի այդ նոր ռազմավարութեան մանրամասները: Այն հիմնուած էր 3 սկզբունքի վրայ, որի վերաբերեալ, ըստ *Միլլիէթի*, Դաւութօղլուն մասնաւորապէս նշել էր. «*Ես, որպէս արտգործնախարար, չեմ ասում, թէ 1915ին ոչ մի բան չի եղել: Ես տեղի ունեցածը չեմ բնորոշում 'ցեղասպանութիւն' հասկացութեամբ, սակայն եթէ որեւէ մէկն այն այդպէս է սահմանում, իր նախընտրութիւնն է: Մենք այս հարցում պէտք է նոր լեզու զարգացնենք եւ ասենք՝ ձեր ցաւը չենք մերժում, ըմբռնում ենք դա: Միասին անենք այն, ինչ պէտք է անել: Սակայն դա չպէտք է լինի միակողմանի ոճրագործութեան մասին յայտարարութեան տեսքով: Մենք գերմանացիների պէս չենք. մեր պատմութեան մէջ էթնիկ կոտորած չի եղել: ...Որքան էլ ուշ լինի, այնուամենայնիւ կարեւոր է ասել՝ «Ես զգում եմ ձեր ցաւը»: 2015ին ընդառաջ ձգտում ենք այդ ուղղութեամբ համատեղ յայտարարութիւն մշակել*»[2]:

Յօդուածում, հիմնականում յենուելով թուրքական մամուլում հրապարակուած տեղեկատուութեան վրայ, կը ներկայացնենք վերջին տարիներին պաշտօնական Թուրքիայի եւ յատկապէս վարչապետ, ապա նախագահ Ռեջէփ Թայիբ Էրդողանի վարած քաղաքականութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան հարցի ուղղութեամբ:

2014. Թուրքիայի Վարչապետ Էրդողանի Ուղերձը՝ Թուրքական Իշխանութիւնների Առաջին Պաշտօնական Ցաւակցութիւն

Հայոց Ցեղասպանութեան հարցում Թուրքիայի մշակած այս նոր ռազմավարութեան առաջին էական դրսեւորումը եղաւ 2014ի սկզբին Թուրքիայի վարչապետի պաշտօնում գտնուող Էրդողանի «ցաւակցական» ուղերձը, որը հրապարակուեց 2014 Ապրիլի 23ին:

Նշենք, որ նախքան ուղերձը՝ դեռ տարեսկզբից Էրդողանը եւ թուրքական իշխանութիւններն սկսել էին միջոցներ ձեռնարկել՝ Հայոց Ցեղասպանութեան 100ամեայ տարելիցին հայերի նախապատրաստութիւնները կանխելու ուղղութեամբ: Այսպէս, 2014 Յունուարի 15ին Էրդողանը, սոյն հարցի առնչութեամբ թուրք դեսպանների առաջ ելոյթ ունենալով, յայտարարել էր. «*Առաջիկայ տարում պէտք է նշուի հայկական դէպքերի 100ամեայ տարելիցը: Հայկական սփիւռքը սեւ քարոզչութիւն է սկսելու այդ ուղղութեամբ: Դրա համար պէտք է լաւ նախապատրաստուենք 2015ին*»[3]:

Էրդողանի այս ելոյթից յետոյ թուրքական մամուլում հրապարակուեցին այն քայլերը, որ այդ նպատակով պատրաստւում էր իրականացնել պետութիւնը: Այսպէս՝ թուրք իշխանութիւնները մտադիր էին կազմակերպել բազմաթիւ գիտաժողովներ ու համաժողովներ, ինչպէս նաեւ՝ հրատարակել գրքեր եւ վաւերագրական նիւթեր: Թուրքիան Հայոց Ցեղասպանութեան ուրացմանն ուղղուած քայլերն աշխուժացրեց 2014ի սկզբներին՝ ամբողջ տարուայ ընթացքում հակաքայլեր մշակելով Մեծ Եղեռնի միջազգային ճանաչմանն ուղղուած աշխատանքների դէմ:

2014ին թուրքական կողմի՝ այս ուղղութեամբ ծաւալած գործունէութեան բարձրակէտը դարձաւ Էրդողանի «ցաւակցական» ուղերձը, որը հրապարակուեց Մեծ Եղեռնի տարելիցի նախօրէին՝ Ապրիլի 23ին: Թուրքիայի վարչապետարանի պաշտօնական կայքէջում 9 լեզուներով, այդ թւում՝ նաեւ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն հրապարակուած ուղերձում Էրդողանը մասնաւորապէս նշում էր. «*Մեր հայ քաղաքացիների եւ աշխարհի համայն հայութեան համար առանձնայատուկ իմաստ կրող Ապրիլի 24ը կարեւոր առիթ է ընձեռում՝ այս պատմական խնդրի շուրջ տեսակէտներն ազատ կերպով արտայայտելու առումով*»:

Տուրք տալով Դաւութօղլուի մշակած «ընդհանուր ցաւի» եւ «արդար յիշողութեան» մասին կեղծ գաղափարներին՝ Էրդողանը նաեւ յայտարարում էր.

> Անուրանալի է, որ Օսմանեան Կայսրութեան վերջին տարիները տառապանքներով լեցուն մի ժամանակաշրջան են եղել թուրք, քուրդ, արաբ, հայ եւ այլ միլիոնաւոր օսմանցի հպատակների համար՝ անկախ նրանց կրօնից եւ էթնիկ պատկանելիութիւնից: ...Մարդկութեան պարտքն է հասկանալ Օսմանեան Կայսրութեան ինչպէս միւս հպատակների, այնպէս էլ հայերի՝ այդ ժամանակաշրջանում կրած տառապանքները յիշելու եւ ընկալելու անհրաժեշտութիւնը: 1915ի դէպքերի վերաբերեալ տարբեր հայեացքների եւ գաղափարների ազատ արտայայտումը բազմակարծութեան, ժողովրդավարութեան մշակոյթի եւ արդիականացման պահանջն է: ...Սակայն 1915ի իրադարձութիւնները Թուրքիայի դէմ որպէս պատրուակ օգտագործելը եւ դրանք քաղաքական առճակատման հարցի վերածելն անընդունելի են: Առաջին Աշխարհամարտում տեղի ունեցած դէպքերը մեր բոլորի ընդհանուր վիշտն են: Այդ ցաւալի տարեթուին արդար յիշողութեան դիտանկիւնից մօտենալը մարդկային եւ գիտական պատասխանատուութիւն է: Այն, որ ամէն կրօնի եւ ազգութեան պատկանող միլիոնաւոր մարդիկ են զոհուել Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում, եւ որ այնպիսի անմարդկային հետեւանքների յանգեցնող դէպքեր են կատարուել, ինչպիսին տեղահանութիւնն է, արգելք է դառնում թուրքերի եւ հայերի միջեւ փոխադարձ մարդկային վերաբերմունք դրսեւորելուն[4]:

Էրդողանի «ցաւակցութիւնը» հիմնականում բացասական արձագանգ գտաւ համայն հայութեան մէջ, քանի որ հայկական շրջանակների կողմից գիտակցւում էր, որ այդ յայտարարութիւնը Հայոց Ցեղասպանութիւնը մերժելուն ուղղուած թուրքական քաղաքականութեան շարունակութիւնն էր, որն այս անգամ մատուցւում էր կեղծ գաղափարներով քօղարկուած: Հայկական շրջանակներից, հասկանալի պատճառներով, դրական արձագանգեց միայն Կ.Պոլսոյ հայոց պատրիարքարանը՝ այն բնորոշելով որպէս «*մի հիմնաքար Հայաստանի եւ Թուրքիայի ժողովուրդների միջեւ կառուցուելիք կամրջի համար*»[5]:

Էրդողանի եւ իր վարչակազմի որդեգրած այս քաղաքականութեան եւ իրական նպատակները գիտակցուեցին ոչ միայն հայկական շրջանակների, այլեւ միջազգային եւ մինչեւ իսկ որոշ թուրքական կազմակերպութիւն-

ների կողմից: Այսպէս՝ Թուրքիայի Մարդու Իրաւունքների Ստամբուլի մասնաճիւղը 2014 Մայիսի սկզբներին հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ Էրդողանի ցաւակցական ուղերձը որակելով որպէս «*ժխտման տեքստ*»[6]:

Իսկ որ Էրդողանի ուղերձի հիմնական նպատակը ոչ թէ ճանաչումն էր, այլ ցաւակցութեան դիմակի տակ քօղարկուած ուրացումը՝ խոստովանեց անգամ այդ ժամանակաշրջանում Թուրքիայի արտգործնախարար Դաւութօղլուն, ով, ի պատասխան Ստամբուլից ընտրուած անկախ պատգամաւոր Իհսան Բարութչուի գրաւոր հարցման, ասաց, որ Էրդողանի ուղերձը համապատասխանում էր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարի ամբողջական ռազմավարութեանը[7]:

Ի տարբերութիւն հայկական շրջանակների՝ որոշ թուրքական շրջանակներ, յատկապէս ազգայնամոլներն այդ ուղերձը համարեցին Ցեղասպանութեան ճանաչմանն ուղղուած մի քայլ, եւ նրանց մէջ եղան նաեւ այնպիսիք, ովքեր մտավախութիւն յայտնեցին, թէ թուրք ժողովրդի համաձայնութիւնն ստանալու դէպքում Էրդողանը պատրաստ է անմիջապէս ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը: Մասնաւորապէս, Թուրքական Պատմագիտական Ընկերութեան (Türk Tarih Kurumu/TKK) նախկին նախագահ Եուսուֆ Հալաչօղլուն 2014ի վերջերին յայտարարեց, որ եթէ թուրք հասարակայնութիւնը դոյզն-ինչ Էրդողանի նման մտածէր, ապա վերջինս իսկոյն կը ճանաչէր Ցեղասպանութիւնը[8]:

2014ի վերջերին՝ արդէն նախագահ Էրդողանի օրօք, Թուրքիայի պատմութեան մէջ Հայոց Ցեղասպանութեան հարցի առումով գրանցուեց մի յիշարժան դէպք եւս. Նոյեմբերի 26ին ժողովուրդների Դեմոկրատական Կուսակցութեան (Halklarin Demokratik Partisi/HDP) պատգամաւոր Սեբահաթ Թունջէլը Թուրքիայի խորհրդարան ներկայացրեց մի օրինագիծ, որով առաջարկւում էր, որ Էրդողանը Թուրքիայի ազգային մեծ ժողովում պաշտօնապէս ներողութիւն խնդրի Հայոց Ցեղասպանութեան, 1937-38ի Դերսիմի կոտորածների եւ Թուրքիայի Հանրապետութեան տարիներին պետութեան կատարած այլ յանցագործութիւնների համար[9]: Օրինագծով նաեւ առաջարկւում էր Ապրիլի 24ը պաշտօնապէս սգոյ օր յայտարարել եւ այն ամրագրել օրացոյցում, ինչպէս նաեւ նիւթական ու բարոյական փոխհատուցում կատարել[10]:

Օրինագիծը բնականաբար չընդունուեց: Փոխարէնը՝ պաշտօնական Անկարան շարունակեց աշխուժ կերպով հակաքայլեր մշակել Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի միջոցառումների դէմ: Մամուլում յայտնուեցին հրապարակումներ, ըստ որոնց՝ Թուրքիայի ԱԳ, ազգային պաշտպանութեան, զբօսաշրջութեան եւ մշակոյթի նախարարութիւնները, նաեւ գերատեսչութիւններ հրահանգներ են ստացել Դարդանէլի Ճակատամարտի 100ամեայ տարելիցին ինչպէս հարկն է նախապատրաստուելու մասին: Այսպիսով՝ պաշտօնական Անկարայի որդեգրած հիմնական ուղե-

գիծն էր Դարդանէլի 100ամեակը նշելը՝ այդպիսով փորձելով «ստուերել» Հայոց Ցեղասպանութեան 100ամեայ տարելիցի միջոցառումները:

2015. Էրդողանը Հայոց Ցեղասպանութեան 100ամեայ Տարելիցին

2015ին եւս Թուրքիան շարունակեց Մեծ Եղեռնի փաստը խեղաթիւրելու եւ Դարդանէլի Ճակատամարտի 100ամեակը նշելու միջոցով Հայոց Ցեղասպանութեան տարելիցի միջոցառումների վրայ «ստուեր գցելու» քաղաքականութիւնը: Ուշագրաւ է, որ չնայած պաշտօնական Անկարայի այս դիրքորոշմանը, 2015ին Թուրքիայի գերատեսչութիւններում երբեմն արձանագրւում էին Մեծ Եղեռնին առնչուող հետաքրքիր դէպքեր, որոնք ներկայացւում էին որպէս «պատահաբար թոյլ տրուած սխալմունքներ»: Այսպէս՝ 2015 Յունուարի վերջերին թուրքական մամուլում տպագրուած հրապարակումների համաձայն՝ Դարդանէլի գործողութեան 100ամեակի առթիւ Թուրքիայի արտգործնախարարութեան կողմից թողարկուած օրացոյցում, իբրեւ թէ սխալմամբ, յայտնուել էր Ծիծեռնակաբերդում գտնուող Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիրի նկարը[11]: Սոյն հարցը բերուեց Թուրքիայի խորհրդարանի օրակարգ, քանի որ թուրք պաշտօնատարները եւս գիտակցում էին, որ նման շփոթմունք չէր կարող լինել: Մասնաւորապէս Ժողովրդահանրապետական (Cumhuriyet Halk Partisi/CHP) Կուսակցութեան պատգամաւոր Օսման Քորոթիւրքն այս առիթով հանդէս եկաւ Թուրքիայի արտգործնախարար Մեւլութ Չաւուշօղլուին ուղղուած հարցապնդմամբ [12]:

2015ի Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի դէմ թուրքական իշխանութիւնների եւ յատկապէս Էրդողանի ձեռնարկած միջոցառումների առանցքում էր Դարդանէլի Ճակատամարտի 100ամեակը հանդիսաւորապէս նշելու ձգտումը: Ուշագրաւ է, որ թէեւ Դարդանէլի գործողութեան օրը մինչ այդ աւանդաբար նշւում էր Մարտի 18ին, սակայն 2015ին Թուրքիան, հասկանալի պատճառներով, որոշել էր այն տօնել Ապրիլի 23ին: Միեւնոյն ժամանակ պաշտօնական Անկարան մտադիր էր շարունակել կեղծ ցաւակցական յայտարարութեան քաղաքականութիւնը: Դեռ 2015 Ապրիլի սկզբներին Էրդողանը մի հարցազրոյցում յայտնում էր, որ ինքն այս տարի եւս հանդէս կը գայ հայերին ուղղուած ցաւակցական ուղերձով[13]:

Յիրաւի, 2015 Ապրիլի 24ին, այս անգամ Թուրքիայի Հանրապետութեան նախագահի պաշտօնը վարող Էրդողանը հանդէս եկաւ «օսմանահպատակ հայերի ժառանգներին» ուղղուած ցաւակցական ուղերձով: Մասնաւորապէս Կ.Պոլսոյ հայոց պատրիարքարանին ուղղուած այդ խօսքում Էրդողանը շարունակում էր աղաւաղել Հայոց Ցեղասպանութեան բազմաթիւ փաստեր: Ինչպէս այդ մասին արձանագրւում էր նաեւ համեմատաբար ազատ արտայայտուող որոշ թուրքական լրատուամիջոցներում, եթէ 2014ի ուղերձում Էրդողանը Ցեղասպանութեան փաստը խեղաթիւրել էր՝ այն որակելով «տեղահանութիւն», ապա 2015ի ուղերձում Թուրքիայի նախագա-

հը շեշտը դնում էր Առաջին Համաշխարհային Պատերազմի ծանր պայմանների վրայ, իսկ «տեղահանութիւն» բառն այլեւս չէր յիշատակում[14]:

Այսպիսով՝ 2015ին պաշտօնական Անկարան համոզուելով, որ «արդար յիշողութեան» եւ «ընդհանուր ցաւի» մասին իր կեղծ դրոյթները չընդունուեցին հայութեան կողմից, աւելի կոշտացրեց Հայոց Ցեղասպանութեան փաստի ուրացմանն ուղղուած իր քաղաքականութիւնը՝ ցաւակցական ուղերձում ընդգծելով միայն Առաջին Աշխարհամարտի գործօնը եւ շրջանցելով անգամ թուրք կեղծարարների կողմից ընդունելի համարուող «տեղահանութիւն» բառը:

2016. Հայոց Ցեղասպանութեան Հարցը Թուրքիայի Օրակարգում՝ Գերմանիայի Կողմից Մեծ Եղեռնի Ճանաչման Ենթախորքում

2016ին եւս, նախագահ Էրդողանը դարձեալ հանդէս եկաւ ապրիլքսանչորսեան ուղերձով, որի շեշտադրումներն էին երկու ժողովուրդների միջեւ եղած թշնամութիւնը յաղթահարելու կոչը եւ դարեր շարունակ «համատեղ հաշտ ու խաղաղ գոյատեւելու» մասին կեղծ դրոյթը[15]:

Այդ տարի շրջադարձային էր 2016 Յունիսի 2ին Գերմանիայի Դաշնային Հանրապետութեան՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման մասին Բունդեսթագի ընդունած բանաձեւը, որը մեծ աղմուկ բարձրացրեց Թուրքիայում, թուրքական շրջանակներում տեղիք տուեց զանազան քննարկումների, որոնք արտացոլուեցին թուրք զանգուածային լրատուամիջոցներում:

Յիշատակման է արժանի յատկապէս Հայոց Ցեղասպանութեան կազմակերպիչներից Ջեմալ փաշայի թոռ Հասան Ջեմալի անդրադարձը՝ ի պատասխան Էրդողանի այն յայտարարութեան, թէ՝ Թուրքիայի պատմութեան ընթացքում ոչ մի ցեղասպանութիւն չի եղել: T24 լրատուական կայքէջի իր սիւնակում Հասանն ազնուութեան կոչ էր անում Էրդողանին եւ յիշեցնում, որ վերջինս ժամանակին մասնաւոր զրոյցներում խոստովանել է, որ Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ դաժան վերաբերմունք է դրսեւորուել[16]:

Բունդեսթագի՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումից յետոյ Էրդողանը հրապարակաւ յոյս էր յայտնում որ Գերմանիան կ'ուղղի իր «սխալը»[17]:

2016 Յուլիսի 15ին Թուրքիայում կատարուած յեղաշրջման փորձից յետոյ թուրքական իշխանութիւններն է՛լ աւելի սահմանափակեցին խօսքի ազատութիւնը եւ մարդու հիմնարար իրաւունքներն: Յայտարարուած արտակարգ դրութեան հետեւանքներից մէկը եղաւ այն, որ եթէ մինչ այդ հնարաւոր էր դարձել հայկական թեմատիկայի վրայ դրուած արգելքը, *փաբուն* վերացնել, ապա 2016 Յուլիսից ազգային եւ կրօնական փոքրամասնութիւնները, մասնաւորապէս պոլսահայ համայնքը եւ իսլամացուած ու ծպտեալ հայութիւնը վերստին թաքնուեցին իրենց պատեաններում:

2017. Կեղծ Ցաւակցական Ուղերձները Շարունակւում Են

2017 Ապրիլին Էրդողանը դարձեալ հանդէս եկաւ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանին եւ Թուրքիայի հայ համայնքին հասցէագրուած ուղերձով, որի հիմնական շեշտադրումը հայ ժողովրդի մեծ ներդրումն էր Օսմանեան Կայսրութեան մշակութային եւ տնտեսական կեանքում: 2017ի ուղերձում Թուրքիայի նախագահը նաեւ վստահեցնում էր, թէ թուրքական իշխանութիւնները կը շարունակեն «հայկական մշակութային ժառանգութեանը տէր կանգնելու» քաղաքականութիւնը[18]:

2018. Ցեղասպանութեան Յիշատակի Միջոցառումները Արգելւում Են

Ռեջէփ Թայիփ Էրդողանը 2018ի սկզբին Հայոց Ցեղասպանութեան հարցի նկատմամբ հանդէս եկաւ աւելի կոշտ դիրքորոշմամբ: Այդ տարուայ Յունուարի վերջերին ելոյթ ունենալով Թուրքիայի Բուրսա քաղաքում՝ նա խեղաթիւրեց պատմական փաստերը՝ նշելով, թէ իրականում «*հայերի տեղահանութեան համար պատճառ դարձած կուտորածների ժամանակ սպանուած թուրքերի թիւը շատ աւելի մեծ է եղել, քանի հայերինը*»: Ըստ Էրդողանի յայտարարութեան՝ Թուրքիայի ԶՈՒ գլխաւոր սպայակոյտի արխիւում միայն այդ թեմայի վերաբերեալ շուրջ 1,700,000 փաստաթուղթ կայ, եւ իրենք պատրաստ են հրապարակել դրանք, սակայն հայկական կողմն «*անպատասխան է թողնում երկկողմանի կերպով արխիւները բացելու առաջարկները*»[19]:

Թէեւ Էրդողանը 2018 Ապրիլին նոյնպէս չմոռացաւ «ցաւակցել» հայերին, սակայն այդ տարի թուրքական իշխանութիւնների որդեգրած աւելի կոշտ դիրքորոշումը դրսեւորուեց նաեւ այն սահմանափակումների եւ արգելքների միջոցով, որ դրուեցին Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած միջոցառումների վրայ: Այդ արարողութիւնները կազմակերպւում էին ամէն տարի՝ 2010 Ապրիլից սկսած: Եթէ առաջին տարիներին այդ միջոցառումները կատարւում էին միայն Ստամբուլում, ապա յետագայում դրանց աշխարհագրութիւնն ընդլայնուեց՝ մինչեւ իսկ ներառելով Արեւմտեան Հայաստանի որոշ շրջաններ, օրինակ՝ Դերսիմը:

Այսպիսով՝ 2018 Ապրիլի 24ին թուրքական ոստիկանութիւնն արգելեց Ստամբուլի Սուլթանահմէթ հրապարակում Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած արարողութիւնը: Ոստիկանութիւնը, հաւաքուածների մօտ նկատելով «ցեղասպանութիւն» գրութեամբ պաստառներ, ձերբակալեց 3 հոգու, որոնք որոշ ժամանակ անց ազատ արձակուեցին[20]:

2019. Ներկայացուցիչների Տան եւ Ծերակոյտի Հայոց Ցեղասպանութեան Բանաձեւերին Էրդողանի եւ Անկարայի Արձագանգները

2019ը կարելի է շրջադարձային համարել Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման առումով: Տարուայ վերջերին

ԱՄՆի նախ՝ Ներկայացուցիչների Տունը, ապա՝ Ծերակոյտն ընդունեցին Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչող եւ դատապարտող բանաձեւեր:

Նշենք նախ, որ 2019ին թուրքական իշխանութիւնները եւ նախագահ Էրդողանը Հայոց Ցեղասպանութեան ուղղութեամբ շարունակեցին ժխտողական քաղաքականութիւն դրսեւորել: Աւելին՝ այդ տարի Էրդողանը հանդէս եկաւ ոչ թէ ուղերձով, այլ ընդամէնը նամակով, որն ուղղուած էր Կ.Պոլսոյ հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ Արամ Եպս. Աթէշեանին: Նամակում Մեծ Եղեռնի տարիներին կոտորուած մէկուկէս միլիոն հայերին որակում էր «Առաջին Համաշխարհային Պատերազմի զոհեր»՝ ընդգծելով, թէ յարգանքի տուրք է մատուցում «*Առաջին Աշխարհամարտի տարիներին դժուարին պայմաններում զոհուած հայերի յիշատակին*»[21]: Նոյն օրերին Էրդողանը մասնակցեց օսմանեան արխիւներին նուիրուած մի գիտաժողովի, որտեղ վերստին հանդէս եկաւ Հայոց Ցեղասպանութեան փաստն ուրացող յայտարարութեամբ[22] եւ մինչեւ իսկ նշեց, թէ տեղահանութիւնը, իմա՝ Մեծ Եղեռնը «ամենաողջամիտ» որոշումն էր եղել:

Թեմային Էրդողանն անդրադարձաւ նաեւ Ապրիլի վերջերին՝ ելոյթ ունենալով իր կուսակիցների առջեւ: Արդարութիւն եւ Զարգացում Կուսակցութեան ժողովի ընթացքում Թուրքիայի նախագահը, ի պատասխան Մակրոնի ընդունած որոշման, որով Ապրիլի 24ը Հայոց Ցեղասպանութեան յիշատակի ազգային օր էր համարուելու, յայտարարեց, թէ «*հայերի տեղահանութիւնը ոչ ցեղասպանութիւն է եղել, ոչ էլ՝ մեծ ողբերգութիւն*»[23]:

2019ին ԱՄՆի Ներկայացուցիչների Տան եւ Ծերակոյտի կողմից Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչող ու դատապարտող բանաձեւերը, անշուշտ, յարուցեցին Թուրքիայի քաղաքական շրջանակների եւ անշուշտ նախագահի վրդովմունքը: Դեռ նախքան Ծերակոյտի կողմից բանաձեւի ընդունումը՝ 2019 Նոյեմբերի կէսերին ԱՄՆի նախագահ Դոնալդ Թրամփի հետ հանդիպման՝ Էրդողանը յայտարարեց, թէ բանաձեւը ստուեր է գցում թուրք-ամերիկեան յարաբերութիւնների վրայ եւ վիրաւորում թուրք ժողովրդին[24]:

Էրդողանի վրդովմունքը սաստկացաւ յատկապէս Ծերակոյտի ընդունած բանաձեւից յետոյ: Նա մասնաւորապէս սպառնաց ԱՄՆին, թէ Թուրքիայի խորհրդարանն էլ կարող է Ամերիկայի գաղութացման ընթացքում հնդկացիների ցեղասպանութեան բանաձեւ ընդունել: Էրդողանը չբաւարարուեց դրանով այլեւ սպառնաց փակել Ինջիրլիքի ռազմախարիսխը[25]:

2019ի վերջերին Էրդողանը ուրացման քաղաքականութիւնը շարունակեց նաեւ թուրքական արխիւների բաց եւ բոլորին, այդ թւում՝ հայերին հասանելի լինելու մասին կեղծ յայտարարութիւններով[26]:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այսպիսով՝ Թուրքիայի նախագահ Ռեջէփ Թայիփ Էրդողանը, յատկապէս իր վարչապետութեան վերջին տարին եւ նախագահութեան շրջանում Հայոց Ցեղասպանութեան հարցի ուղղութեամբ շարունակել է թուրքական

իշխանութիւնների ուրացման աւանդական քաղաքականութիւնը՝ երբեմն որոշ խմբագրումներ անելով: Թէեւ կոշտ ժխտումը Էրդողանի իշխանութեան մի շրջանում փոխակերպուեց աւելի մեղմ ու քօղարկուած հերքման, այնուամենայնիւ բովանդակային առումով շարունակեց նոյնը մնալ:

Այնուամենայնիւ, հարկ է նշել, որ Էրդողանը պատմութեան մէջ կը յիշատակուի որպէս Թուրքիայի առաջին վարչապետ եւ նախագահ, ով համաձարկուել է այս թեմայով «ցաւակցական ուղերձ» յղել հայերին: Բացի այդ՝ ընդգծենք, որ հենց Էրդողանի իշխանութեան տարիներին են կոտրուել Հայոց Ցեղասպանութեան եւ Հայկական Հարցին առնչուող որոշ տաբուներ: Վերջին տասնամեակներին Թուրքիայում այդ թեմայով մինչեւ իսկ տպագրուել են պատմական փաստերը չխեղաթիւրող գրքեր: Այսինքն՝ Էրդողանի իշխանութեան օրօք թուրք հասարակութիւնն աննախադէպ շատ է քննարկել Մեծ Եղեռնի թեման: Ու թէեւ 2016 Յուլիսի ռազմական յեղաշրջման փորձից յետոյ այդ աշխուժութիւնը նուազել է, իսկ ազատ խօսքի հանդէպ հետապնդումներն՝ աւելացել, սակայն Հայոց Ցեղասպանութեան թեման ոչ միայն այլեւս տաբու չէ Թուրքիայում, այլեւ, չնայած թուրքական իշխանութիւնների վարած քաղաքականութեանը՝ այդ երկրում արդէն շատ աւելի մեծ թուով մարդիկ են հնարաւորութիւն ստանում տեղեկանալ պատմութեան իրական փաստերի մասին:

Ելնելով պաշտօնական Թուրքիայի ուրացման աւանդական քաղաքականութեան տրամաբանութիւնից եւ վերջին տարիներին տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրութիւնից, ինչպէս նաեւ՝ թուրք հասարակութեան տրամադրութիւններից եւ թուրքական քաղաքական ուժերի մեծամասնութեան դիրքորոշումից՝ կարելի է եզրակացնել, որ Անկարան առաջիկայ տարիներին եւս կը պահպանի Հայոց Ցեղասպանութեան հարցի ուղղութեամբ իր ժխտողական վերաբերմունքը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Serdar Korucu, "11 Cumhurbaşkaninin 'Ermeni Soykirimi'yla Sinavi," http://www.agos.com.tr/tr/yazi/7746/11-cumhurbaskaninin-ermeni-soykirimi-yla-sinavi (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[2] Asli Aydintaşbaş, "Sizin Acinizi Reddetmiyorum Gelin Konuşalim," https://www.milliyet.com.tr/yazarlar/asli-aydintasbas/sizin-acinizi-reddetmiyorum-gelin-konusalim-1563905 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[3] https://www.haberler.com/erdogan-dan-buyukelcilere-uyari-5547930-haberi/ (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

4 https://www.dw.com/tr/erdo%C4%9Fandan-24-nisan-mesaj%C4%B1/a-17587530 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[5] http://akunq.net/am/?p=38800 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[6] https://www.tert.am/am/news/2014/05/06/ihd-genocide/1078479 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[7] https://www.sondakika.com/haber/haber-disisleri-bakani-davutoglu-aciklamasi-2-6074904/ (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[8] https://www.internethaber.com/mhpli-halacoglu-dersimin-neden-bombalandigini-anlatti-739247h.htm?interstitial=true (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[9] https://www.borsagundem.com/haber/hdpden-sok-ermeni-teklifi/203379 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[10] Նոյն:

[11] https://www.cnnturk.com/haber/turkiye/canakkale-ajandasinda-ermeni-soykirimi-aniti (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[12] https://www.haberler.com/soykirim-aniti-fotografi-tbmm-gundeminde-6926406-haberi/ (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[13] http://www.haber7.com/siyaset/haber/1341074-erdogan-artik-bana-sormayacaksiniz (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[14] http://bianet.org/bianet/toplum/164065-erdogan-in-taziye-mesaji-2014-te-tehcir-2015-te-savas-sartlari (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[15] http://www.bursadabugun.com/haber/erdogan-dan-atesyan-a-1915-mesaji-683761.html (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[16] Hasan Cemal, Asil sen delikanli ol delikanli, biraz dürüst ol dürüst! https://t24.com.tr/yazarlar/hasan-cemal/asil-sen-delikanli-ol-delikanli-birazcik-durust-ol-durust,14738 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[17] https://yenisoluk.com/erdogandan-bir-almanya-aciklamasi-daha-bu-yanlis-adimdan-donmeyecek-olursa (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[18] https://www.gunes.com/gundem/erdogandan-ermenilere-mesaj-tahammulumuz-yoktur-782753 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[19] https://www.aa.com.tr/tr/gunun-basliklari/cumhurbaskani-erdogan-milli-mucadelede-karsimiza-cikani-ezer-geceriz/1037669 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[20] https://www.evrensel.net/haber/350822/ermeni-soykiriminda-yasamini-yitirenler-istanbulda-anildi (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[21] https://www.trthaber.com/haber/gundem/cumhurbaskani-erdogandan-ermeni-patrik-vekili-atesyana-mektup-413018.html (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[22] https://www.independentturkish.com/node/24846/haber/erdo%C4%9Fan-biz-ar%C5%9Fivleri-sonuna-kadar-a%C3%A7t%C4%B1k-ey-ermeniler-varsa-siz-de-a%C3%A7%C4%B1n (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[23] https://www.yeniakit.com.tr/haber/ak-parti-28-istisare-ve-degerlendirme-toplantisi-727639.html (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[24] https://www.yeniasya.com.tr/gundem/ortak-basin-aciklamasi-cumhurbaskani-erdogan-in-konusmasindan-satir-baslari_506831 (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[25] https://tr.sputniknews.com/karikatur/201912161040850508-erdogandan-abddeki-ermeni-soykirimi-kararina-tepki/ (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

[26] https://www.memleket.com.tr/cumhurbaskani-erdogan-malezyada-gazetecilerin-sorularini-yanitladi-1-1961873h.htm (վերջին դիտում՝ 10 Փետրուար 2020):

MR. RECEP TAYIP ERDOGAN'S POLICIES REGARDING THE ARMENIAN GENOCIDE (2014-2019)

(Summary)

MELANY ANUMYAN
melanumyan@gmail.com

On the basis of Turkish media publications, the author reconstructs the Turkish state policy regarding the Armenian Genocide as reflected through the declarations of PM and then President Recep Tayip Erdogan, between 2014 and 2019.

The study argues that in his last year of office as PM and during his presidential term, Mr. Erdogan continued the traditional denialist policy of the Turkish state. Indeed, through minor shifts in the wording, harsh rejection was replaced by subtle, discrete rejection. However, the denialist content was maintained.

Nevertheless, Erdogan, in his position as PM and president, is the first in the history of Turkey who has dared to send a condolence message to the Armenians. Moreover, during his term of office the Armenian Genocide taboo has been broken.

Having said that, and considering the traditional Turkish denialist policy, Turkish attitudes, the positions of the majority of Turkish political forces, and the backdrop of the current regional developments, the author infers that Ankara will maintain its rejectionist policy in the coming years.

1918-20Ի ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀՀ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ (1991-2019)

ԼԻԼԻԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
lilithovannisian@yahoo.com

ՄՈՒՏՔ

1991ին Հայաստանի անկախութեան վերականգնումը նոր լիցք է հաղորդել հայոց պատմութեան նոր եւ նորագոյն ժամանակների հիմնահարցերի ուսումնասիրմանը՝ հայկական անկախ պետականութեան ու ազգային միասնութեան գաղափարների հետ դրանց պատճառահետեւանքային կապերի վերհանման ու վերագնահատման տեսանկիւնից:

Այս յօդուածում քննութեան են առնուած Հայաստանի Գ. Հանրապետութեան (ՀՀ) ժամանակաշրջանում (1991-2019) Հայկական Հարցի 1918-20՝ դիւանագիտական բանակցութիւնների եւ դրանց արդիւնքների վերլուծութեանը նուիրուած պատմագիտական հիմնարար ուսումնասիրութիւնները, որոնց յետնախորքում հայկական անկախ պետականութեան վերականգնման, պահպանման եւ ամրապնդման, հայոց պահանջատիրութեան բարարման արդիական հիմնախնդիրների լուծման գործնական ուղիների յստակեցումն է՝ ժամանակաշրջանի առանձնայատկութիւններին համապատասխան եւ պայմանաւորուած նրա մարտահրաւէրներին դիմակայելու անհրաժեշտութեամբ: Շեշտը դրուած է Ա. Աշխարհամարտի աւարտական փուլում հայկական ազգային անկախ պետականութեան վերականգնման երազանքը գաղափարից իրականութեան վերածելու, ապա պատերազմի աւարտից յետոյ՝ Փարիզի Հաշտութեան Միջազգային վեհաժողովի ընթացքում Հայաստանի Ա. Հանրապետութեան (ՀԱՀ) կողմից այն ամրապնդելու ուղղութեամբ իրականացուած քաղաքական քայլերի պատմագիտական արժեւորման եւ վերարժեւորման հարցերի վրայ[1]:

1918-20 ժամանակահատուածի ընտրութիւնը պատահական չէ. այն ուղղակիօրէն առնչւում է հայոց անկախ պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցերին, բացի այդ, ՀԱՀի 1918-20՝ Հայկական Հարցի դիւանագիտական քննարկումների պատմութեան, դրանց արդիւնքների, մասնաւորապէս՝ Սեւրի պայմանագրի եւ ԱՄՆ Նախագահ Ուուդրօ Ուիլսընի իրաւարար վճռի լուսաբանումը գիտական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում՝ հայոց պահանջատիրութեան արդիականութեամբ առումով:

Այստեղշխատութեան մէջ լուսաբանուած գիտական տեսակէտների հեղինակները ՀՀ պատմաբանների աւագ, միջին եւ երիտասարդ սերունդների ներկայացուցիչներ են, որոնց մօտեցումներն ու կարծիքները այս նիւթով, թէեւ կրում են հեղինակների ապրած ժամանակների գաղափարա-

քաղաքական ազդեցութիւնը, այնուամենայնիւ, բացայայտում են դրանց խորքային ընդհանրութիւնները:

1991-2019՝ ՀՀ պատմաբանների աշխատութիւններում ներկայացուել եւ վերարժեւորուել են 1917ի վերջին ու 1918ի սկզբին հայ ազգային նպատակների իրագործման հանգամանքները: Վերագնահատուել է հայ ազգային կուսակցութիւնների գործունէութիւնն հայ ժողովրդի արեւելեան հատուածի, զանգուածային կոտորածների, տեղահանութեան ու բռնագաղթի հետեւանքով հայրենազրկուած, աշխարհով մէկ սփռուած արեւմտահայերի շահերը պաշտպանելու, Հայաստանի երկու մասերի իրաւական կարգավիճակը հայ ժողովրդի յետագայ անվտանգ զարգացման հրամայականին համապատասխան ապահովելու ուղղութեամբ: Վերարժեւորուել են հայոց անկախ պետականութեան վերականգնման ներքին եւ արտաքին հանգամանքները, Քառեակ Միութեան եւ Դաշնակից Տէրութիւնների դիրքորոշումը հայոց պետականութեան վերականգնման եւ նրա սահմանների հարցերում, վեր են հանուել հայոց անկախ պետութեան արտաքին քաղաքական կողմնորոշման իւրայատկութիւնները եւ հեռանկարները:

Ընդհուպ 1990ականների աւարտը 1918-20ի հայ անկախ պետականութեան ու ազգային միասնութեան հիմնահարցերը գլխաւորապէս ուսումնասիրւում էին Սփիւռքում: Այս տեսանկիւնից յիշատակելի են Ռիչըրդ Յովհաննիսեանի, Լեւոն Մարաշլեանի, Ագապի Նասիպեանի, Զաւէն Մսըրլեանի աշխատութիւնները: Յիրաւի, սփիւռքահայ պատմաբանների հիմնարար ուսումնասիրութիւնները եւս ծանրակշիռ ներդրում են հայ պատմագիտութեան մէջ:

ՊՐԵՍԹ-ԼԻԹՈՎՍՔԻՑ ՄԻՆՉԵՒ ՊԱԹՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՒԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

1918ին հայոց անկախ պետականութեան վերականգնման ընթացքն անմիջականօրէն կապուած էր Ա. Աշխարհամարտի աւարտական փուլում Հայաստանի շուրջ տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձութիւնների հետ: Այսպէս, **Վահան Մելիքեան**ի դիտարկմամբ, թէեւ Քառեակ Միութեան պետութիւնների՝ Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի, Օսմանեան Կայսրութեան եւ Բուլղարիայի հետ անջատ հաշտութիւն կնքելու բոլշեւիկեան քաղաքականութիւնը ՀՅԴի համար լիովին հասկանալի չէր, այնուամենայնիւ, հայ բնակչութեան եւ տարածքների անվտանգութեան ապահովման նկատառումներով կուսակցութեան ջանքերով հետեւողականօրէն իրականացւում էր հայկական զօրքի զօրակոչը: Աւելին, գիտակցւում էր, որ ռուսական պետականամէտ ռազմաքաղաքական ուժերի հետ կայուն դաշինքի ստեղծումն առաւելապէս բխում էր հայ ժողովրդի շահերից, քանի որ, նախ բացայայտ չէր բարձրացւում ազգային ինքնիշխանութեան մերժման խնդիրը, ապա Արեւմտեան Հայաստանում կանգնած Կովկասեան բանակի զօրամասերի ներկայութիւնը երաշխաւորում էր ռուսաստանեան կենտրո-

նամէտ ուժերի միջոցով Հայկական Հարցի բարենպաստ լուծումը[2]: Սակայն, Ռուսաստանից առանձին գործելու եւ Օսմանեան Կայսրութեան հետ անջատ հաշտութիւն կնքելու՝ Անդրկովկասեան Կոմիսարիատի դիրքորոշման պայմաններում «*հայ իրականութեան ազդեցիկ քաղաքական կուսակցութիւնը՝ Դաշնակցութիւնը, իհարկէ երկիւղելով ու փագնապելով, բայց եւ հակաբոլշեւիկեան ալիքի վրայ վճռականօրէն ընդդեց Թուրքիայի հետ մերձեցման ճանապարհով եւ հարեւանների աճող ոչ-բարեհաճ վերաբերմունքի միջավայրում՝ ազգային գլխաւոր խնդիրները լուծելու ճանապարհը, նաեւ անկախութեան հիմնահարցը: Շարունակուող պատերազմի պայմաններում անորոշ մի պարագայի վրայ պետութիւն վերագրնելու գաղափարը, փաստօրէն, գերակայեց բազմաթիւ ոչ-պակաս համազգային կենսական նշանակութիւն ունեցող հիմնահարցերի վրայ, մանաւանդ, որ այդ մեծ գործընթացի նախաձեռնութիւնն ամէնեւին հայ ազգային-դեմոկրատական կուսակցութեանը չէր պատկանում: Մէկ դար անց, ՀՅԴն դէմ է իր ընդրած ուղենիշին, որն իդէպ, սկիզբ էր առել 1907 թուականին, ի դէմս ՀՅԴ-Երիտթուրքեր համագործակցութեանը*»[3]՝ շեշտում է Մելիքեանը[4]:

Անուանի պատմաբան **Հրանտ Աւետիսեան**ի համոզմամբ, Անդրկովկասեան Սէյմում ՀՅԴ ներկայացուցիչների (Արշակ Զուրաբեան, Ալեքսանդր Խատիսեան, Յովհաննէս Քաջազնունի, Սիրական Տիգրանեան) առաջ քաշած Արեւմտեան Հայաստանի ինքնորոշման եւ ինքնավարութեան հարցադրումը ձախողելու գործում վճռական դեր է կատարել մուսաւաթականների ընդգծուած հակահայ դիրքորոշումը: Ի հակադրութիւն հայկական կողմի հարցադրման, նրանք բարձրացնում էին ոչ միայն հայերի, այլեւ Ռուսաստանի սահմաններում բոլոր ազգութիւնների ինքնորոշման հարցը՝ նկատի ունենալով նախեւառաջ մուսուլմաններին եւ *իրրեդենտիզմի*՝ թուրքալեզու ժողովուրդներին միասնական թուրքական պետութեան սահմաններում միաւորելու քաղաքականութիւնը, որը յանգում էր նախ եւ առաջ Կովկասի «միաւորմանը»՝ Օսմանեան Կայսրութեանը: Կովկասի մուսաւաթականների ճնշման եւ վրացի մենշեւիկների խուսափողական կեցուածքի պայմաններում Անդրկովկասի Սէյմի հաստատած հաշտութեան հիմնադրոյթներում ամրագրուեցին կնքուելիք հաշտութեան պայմանների հիմքում «*Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ 1914 թ. պատերազմ յայտարարելու պահին եղած պետական սահմանների վերականգնումը*» եւ «*Արեւելեան Անատոլիայի ինքնորոշման իրաւունքին, մասնաւորապէս Թուրքահայաստանի ինքնորոշմանը՝ թուրքական պետականութեան շրջանակներում*» ձգտելը: Աւետիսեանը հիմնաւորում է, որ գերմանա-աւստրօ-թուրքական պատուիրակութիւնները Պրեսթ-Լիթովսքի հաշտութեան բանակցութիւններում «երկակի ստանդարտների» դիւանագիտութեան միջոցով կարողացան հմտօրէն օգտագործել ազգերի ինքնորոշման միջազգային-իրաւական սկզբունքը Խորհրդային Ռուսաստանի դէմ՝ յօգուտ Քառեակ Միութեան երկրների՝ մասնաւորապէս, Թուրքիայի ծաւալապաշտական նպատակների՝

դրանով իսկ ոչ միայն ձախողելով Հայկական Հարցի արդարացի լուծումն այդ սկզբունքի հիման վրայ, այլեւ Պրեսթ-Լիթովսքի հաշտութեան պայմանագրով հասնելով թուրքական պետութեան ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով հայաթափուած Արեւմտեան Հայաստանում թուրքական տիրապետութեան վերականգնմանը[5]: Այդպիսով ի չիք դարձաւ 1917 Դեկտեմբերի 29ին Խորհրդային Ռուսաստանի գործադիր իշխանութեան՝ Ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի Մասին» հրովարտակի իրականացումը: Նաեւ ժխտուեց խորհրդային կառավարութեան «Հաշտութեան Մասին» հրովարտակով հռչակուած «հաշտութիւն առանց հողագրաւումների եւ ռազմատուգանքների» սկզբունքը[6]: Աւետիսեանը թուրքական գործելակերպի մէջ կարեւորում է համաթուրքական նուաճողական նպատակների իրագործմանն ուղղուած բարոյահոգեբանական ճնշումների դիւանագիտական հնարքի եւ տարածքային զաւթումների տրամաբանուած ու հետեւողական զուգակցումը: Դրանով էլ նա բացատրում եւ հիմնաւորում է օսմանեան իշխանութիւնների կողմից հայերի ցեղասպանութիւնն ու հայրենազրկումը շարունակելը եւ քրտական էթնիկ տարրն ամրապնդելը բռնազաւթուած հայկական տարածքում, թուրքական դիւանագիտութեան կողմից Արեւմտեան Հայաստանի ինքնավարութիւնը նոյնիսկ թուրքական պետութեան սահմաններում անզիջում կերպով մերժելը, անթոյլատրելի ու «իրենց ներքին գործը» համարելը, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, անկախ հռչակելու եւ այն Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ *բուֆերային* պետութեան վերածելու քաղաքականութիւնը[7]:

Եթէ Աւետիսեանը «Թուրքահայաստանի Մասին» հրովարտակի չիրագործումը եւ Արեւմտեան Հայաստանի, Կարսի ու Արտահանի մարզերի յանձնումը բացատրում է Պրեսթ-Լիթովսքի բանակցութիւնների ընթացքում Թուրքիայի զաւթողական կեցուածքով, խորհրդային կառավարութեան՝ բանակցութիւնները ձգձգելու եւ զիջումների քաղաքականութեամբ, ապա **Ստեփան** եւ **Կարէն (Կարօ) Պօղոսեան**ները կարեւորում են «հայ ժողովրդի անկարողութիւնը», միջազգային յարաբերութիւններում նրա «գործօն չլինելը»՝ նկատի ունենալով Արեւմտեան Հայաստանի հայաթափուած լինելը, հայերի՝ ռազմական ու դիւանագիտական ուժի բացակայութիւնը, ազգային կենսական հարցերում, մասնաւորապէս՝ հայկական տարածքներում ինքնապաշտպանութեան կազմակերպման հարցում անմիաբան լինելը, Հայկական Հարցում մեծ տէրութիւնների, Խորհրդային Ռուսաստանի եւ Օսմանեան Կայսրութեան շահադիտական քաղաքականութը[8]:

Անդրադառնալով Կարսի, Արտահանի եւ Պաթումի մարզերում հանրաքուէի հարցին՝ Պօղոսեանները շեշտում են, որ նշուած տարածքների բնակչութեան՝ իր պետական-իրաւական եւ միջազգային-իրաւական նոր կարգը հանրաքուէի ու դրա արդիւնքները Օսմանեան Կայսրութեան ու հարեւան պետութիւնների հետ համաձայնեցնելու միջոցով որոշելու իրաւունքը յարգելու փոխարէն, «.. *մտնելով այդ վարչական տարածքները, թուրքերը հան-*

դէս եկան հանրաքուէն նախապատրաստողի եւ անցկացնողի դերում ու այդ արեցին թուրքավարի՝ Կարսի անկումից չորս ամիս անց»: Նրանք նկատի ունեն մինչեւ հանրաքուէի անցկացումը տեղաբնակ ոչ-մահմետական բնակչութեան հանդէպ ահաբեկչութեան քաղաքականութիւնը եւ դրա հետեւանքով այդ բնակչութեան կողմից հանրաքուէի պոյքոթ-մերժումը, նաեւ միայն մահմետական բնակչութեան քուէարկութեան հիման վրայ Կարսը, Արտահանը եւ Պաթումը «ետգրաւուած հոչակելը» սուլթանի հրովարտակով: Այս իմաստով պատմաբանները կարեւորում են 1918 Օգոստոսի 12ին Կարսի Հայ Ազգային Խորհրդի կողմից Բեռլինի կառավարութեանը ներկայացուած յուշագիրը վերոնշեալ հանրաքուէի մասին: Փաստաթղթում ասւում էր, որ հայ բնակչութեանը փոքրամասնութիւն դարձնելու համար մեծ թուով հայերի հարկադրել էին արտագաղթել եւ այլ վայրերից մահմետականներ էին վերաբնակեցրել հայաթափուած բնակավայրերում[9]:

Հայ ժողովրդի օրինական իրաւունքների ու ազգային շահերի ոտնահարումը շարունակուեց 1918 Մայիս–Յունիսին Պաթումի՝ հայ-թուրքական դիւանագիտական բանակցութիւններում: Աւետիսեանը հիմնաւորում է, որ այդ բանակցութիւններում ՀՀ անկախութեան ճանաչման, նրա հետ «բարեկամութեան, յաւերժ խաղաղութեան» վերաբերեալ թուրքական պատուիրակութեան ներկայացրած ծրագիրը հայաջինջ քաղաքականութեան նոր դրսեւորում էր, որով երիտթուրքական կառավարութիւնը, ռազմաքաղաքական իրադրութեանը համապատասխան, լուծում էր իր համար կենսական միքանի խնդիր. վերահաստատում էր Պրեսթ-Լիթովսքի հաշտութեան պայմանագրով Արեւմտեան Հայաստանում թուրքական կառավարութեան գաղութատիրական իրաւունքների վերականգնումը, միջազգային-իրաւական ձեւակերպում էր տալիս Արեւելեան Հայաստանի տարածքի զգալի մասի՝ Շարուր-Դարալագեազի, Նախիջեւանի, Սուրմալուի, Կարսի, Կաղզուանի, Սարիղամիշի, Ախալքալաքի, Լոռու զաւթմանը, ինչի հետեւանքով Հայաստանն ու հայ ժողովուրդը դրւում էին աւելի ծանր պայմանների մէջ, քան պարտադրուած էր եղել Պրեսթ-Լիթովսքի պայմանագրով[10]:

Աւետիսեանի եւ **Գեղամ Պետրոսեան**ի համոզմամբ, 1918 Յունիսի 4ի Պաթումի Պայմանագրի ստորագրումով թուրքական կառավարութիւնը ժամանակ շահեց դէպի Բաքու շարժուելու ծրագրին նախապատրաստուելու համար: Ծրագրի իրագործումը լիովին հնարաւոր էր Հայաստանի անկախ հանրապետութեան ճանաչման պայմաններում, քանի որ տնտեսապէս աղքատ, փոքր տարածք ունեցող ՀԱՀն չէր կարող երկիւղ ներշնչել Օսմանեան Կայսրութեանը: Աւելին, հեռանկարում թուրքերը տեսնում էին այդ Հայաստանի վերացումը: Եւ վերջապէս, Անդրկովկասում Հայաստանի անկախ հանրապետութեան հոչակմամբ վերացուեց Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան՝ թուրքական կառավարութեանն անհանգստացնող հարցը, որը կարող էր բարձրացուել Օսմանեան Կայսրութեանը հակառակորդ պետութիւնների կողմից՝ համաշխարհային պատերազմում նրա

պարտութեան դէպքում: Թուրքերը հնարաւորութիւն ստացան յայտարարելու, որ Հայկական Հարցն արդէն լուծուած է[11]: Թէեւ Պաթումի Պայմանագիրը ՀՀ արտաքին քաղաքական գործունէութիւնը սահմանափակում էր Քառեակ Միութեան պետութիւնների հետ յարաբերութիւններով, այդուհանդերձ, 1918 Մայիսի 30ին հրապարակուած կոչի համաձայն, Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը ստանձնեց հայկական բոլոր գաւառների միակ եւ գերագոյն իշխանութեան գործառոյթներ՝ չմատնանշելով, թէ որոշակի ո՛ր տարածքների մասին է խօսքը: Դա նշանակում է, որ Հայկական Հարցն արդէն իր հաստատուն տեղն էր գրաւելու ՀՀ արտաքին քաղաքականութեան ուղեգծում: Պատահական չէ, որ ՀՀ խորհրդի (յետագայում՝ խորհրդարան) անդրանիկ նիստում նախագահ Աւետիք Սահակեանը, չխուսափելով նիստին Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի եւ Օսմանեան Կայսրութեան ներկայացուցիչների մասնակցութիւնից, յայտարարեց հետեւեալը.

> Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով, նա զրկուել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը եւ, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ. միշտ ես հաւատում եմ, որ մեր սահմանները կ՚ընդարձակուեն կեանքի երկաթէ օրէնքի ուժով, մեր արդար եւ անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ գրաւած հողամասերի վերաբերմամբ եւ նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի ու նրա դաշնակից պետութիւնների հետ ...: Մենք ընտրել ենք համաձայնութեան եւ խաղաղութեան ուղին ... [12]:

«*Դա նշանակում է, որ Արեւմտեան Հայաստանի հիմնահարցն այնքան վճռորոշ էր հայութեան համար, որ Պաթումի Պայմանագրով ծանրագոյն վիճակի մէջ դրուած Արարատեան Հանրապետութիւնն իսկ... ենթափեքստով արտայայտում էր իր մտադրութիւնները Հայկական Հարցում*»[13]՝ շեշտում է **Աշոտ Մելքոնեանը**: ՀԱՀի տարածքային յաւակնութիւնների հիմքում ընկած էին ոչ միայն պատմական գործօնը եւ թուրքական մահաբեր վտանգից պաշտպանուելու անհրաժեշտութիւնը, այլեւ այն փաստը, որ Հայաստանի անկախութեան հռչակումը նիւթականացրել էր հայոց անկախ պետականութեան գաղափարը: **Արարատ Յակոբեանը** իրաւացիօրէն յաւելում է.

> Այս իրողութիւնն արձանագրելով հանդերձ՝ բնաւ չի կարելի կիսել այն հեղինակների տեսակէտը, որոնք ՀՀ անկախութիւնը դիտում են իբրեւ զուտ արտաքին ուժերի, տուեալ դէպքում՝ Թուրքիայի թելադրանքը եւ նոյնիսկ «նուէրը»: Հայ-թուրքական յարաբերութիւնների նախընթաց պատմութիւնը, պատմական դէպքերի ու իրադարձութիւնների տրամաբանութիւնը յուշում են, որ եթէ չլինէին մայիսեան հերոսամարտերը, Բաքուի ինքնապաշտպանութիւնը, եւ խնդիրը թողնուէր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլեւ պանթուրքական ծրագրերի ենթախորքում Անդրկովկասում եւս հայ չէր թողնի ու արեւելահայոց հարցը «կը լուծէր» արեւմտահայոց հարցի նման[14]:

Այսպիսով, պատմագիտական ուսումնասիրութիւններում շեշտւում է, որ 1918ին Արեւելեան Հայաստանի տարածքում հայկական անկախ պետականութեան վերականգնումն է եղել Հայաստանի երկու մասերից իւրաքանչիւրի իրաւական կարգավիճակի վերաբերեալ հայ ազգային, հասարակական-քաղաքական ու մեծ տէրութիւնների կառավարող շրջանակներում քննարկուող առանձին ծրագրերը վերանայելու եւ դրանք Անկախ ու Միացեալ Հայաստանի ստեղծման՝ հրատապ դարձած գաղափարին համահունչ վերաձեւակերպելու ազդակը:

ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՎԵՐԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

Ա. Աշխարհամարտում Օսմանեան Կայսրութեան պարտութիւնից եւ 1918 Հոկտեմբերի 30ին Մուտրոսի Զինադադարի կնքումից յետոյ՝ նոր ռազմաքաղաքական իրադրութեան պայմաններում՝ Հոկտեմբերի 31ին, Բեռլինում գործող հայկական պատուիրակութեան անդամների եւ հայ պետական ու հասարակական-քաղաքական գործիչների մասնակցութեամբ Գերմանիայի մայրաքաղաքում կայացած խորհրդակցութեան արդիւնքում որոշուեց, որ Հայկական Հարցի լուծման բոլոր տարբերակներում «*Հայաստանը վերջնական եւ անվերադարձ պէտք է դուրս գայ թուրքական ոլորտից եւ նրա ազդեցութիւնից*»[15]:

1919 Փետրուարի 6-13՝ Երեւանում կայացած Արեւմտահայերի Երկրորդ Համագումարում ընդունուած ծրագրային որոշման համաձայն, Հայաստանը հռչակուեց անկախ եւ միացեալ: Դա նշանակում էր «Մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք» սկզբունքի ընդունում, հայութեան ինքնակազմակերպման նոր մակարդակի սկիզբ, բայց ոչ բնաւ Հայկական Հարցի դուրսմղում միջազգային դիւանագիտութեան օրակարգից, քանի որ համագումարն արտայայտում էր արեւմտահայերի՝ ՀՀում ապաստանած հատուածի շահերը՝ առանց հայկական գաղթօճախների, Արեւմտեան Հայաստանի ու Կովկասի հայերի: «*Նախորդ համագումարից այն նախ եւ առաջ առանձնանում է նրանով, որ արտայայտում էր անկախութիւն հռչակած ժողովրդի կամքը*»: Աւելին, «*նոր համագումարը կազմկոմիտէի արեւմտահայ գործիչների կողմից դիտւում էր որպէս Հայաստանի Հանրապետութիւնում արեւմտահայերի ներկայացուցչական, քաղաքական մարմին*»՝ նշում է Մելիքեանը: Այնուհետեւ, անդրադառնալով արեւմտահայերին Պօղոս Նուպարի շուրջ համախմբելու, ապա՝ Պօղոս Նուպարի ու Քաջազնունու փոխհամաձայնութեամբ համազգային սահմանադրութիւն ընդունելու եւ միացեալ կառավարութիւն կազմաւորելու միջոցով «մէկ հայրենիք»ի, այսինքն՝ «Միացեալ եւ Ազատ Հայաստանի» գաղափարն իրագործելու՝ համագումարի դիրքորոշմանը՝ պատմաբանը շեշտում է, որ դրանով «*վճռական քայլ արուեց հայ ժողովրդի երկու հատուածների մերձեցման, քաղաքական գործիչների հաշտեցման ուղղութեամբ: ...Նախաձեռնութիւնը պատկանում էր արեւմտահայերին, ինչը բխում էր ժողովրդի այդ հատուածի օրհասական, ողբեր-*

գական վիճակից»[16]: Նաեւ նշենք, որ համահայկական խնդիրների նկատմամբ արեւելահայութեան, արեւմտահայութեան եւ հայկական գաղթօճախների դիրքորոշումներն ի մի բերելու, ազգային պահանջների միասնական ծրագիր մշակելու նպատակով Պօղոս Նուպարն առաջ էր քաշել հայկական ազգային համագումար հրաւիրելու գաղափարը, ի կենսագործումն որի 1919 Փետրուարի 24ից Ապրիլի 22ը Փարիզում տեղի ունեցաւ Համահայկական Համագումարը[17]: Մելիքեանը կարեւորում է այս համագումարն արեւմտահայերի ինքնակազմակերպման, արեւմտահայ-արեւելահայ առճակատումը մեղմելու, համազգային կենսական հիմնահարցերի վերաբերեալ միասնական դիրքորոշում մշակելու եւ այն միջազգային ասպարէզում միասնաբար պաշտպանելու տեսանկիւնից՝ նշելով, որ «*1878 թ. Բեռլինի վեհաժողովից յետոյ, Հայկական Հարցն առաջին անգամ յառնեց համահայկական քաղաքական ծրագրի տեսքով ու նաեւ որպէս հետեւանք՝ համատեղ գործունէութեան եւ փոխադարձ զիջումների*»[18]:

Մելիքեանը միանգամայն օրինաչափ է համարում ՀՅԴի բարձր հեղինակութիւնն ու ազդեցութիւնը հայ հասարակական-քաղաքական կեանքում: Միաժամանակ, նա շեշտում է, որ վերջինիս հզօրութիւնն առարկայօրէն մեկուսացնում էր միւս առաջատար ազգային ուժերին՝ Ս.Դ. Հնչակեան եւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութիւններին, աւելի յաճախ նրանց վերածում անհաշտ հակառակորդների, իսկ բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ այդ երեւոյթի խորացումն արդէն յանգեցրեց ճակատագրական սխալների[19]:

Մելիքեանը նկատում է, որ ՀԱՀի գոյութեան ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում համազգային նախածեռնողական արտաքին քաղաքականութեան օրակարգ մշակելու փոխարէն շարունակում էին քննարկել Հայկական Հարցի բովանդակութեան եւ բնոյթի, Հայաստանի երկու մասերի իրաւական կարգավիճակի հարցերը միասնութեան մէ՞ջ, թէ՞ առանձին-առանձին դիտարկելու տեսակէտները: Պատմաբանն այդ իրողութիւնը բացատրում է նրանով, որ տասնամեակներ շարունակ հայ հասարակական-քաղաքական միտքը հայոց պատմական հայրենիքում հայկական պետականութեան վերականգնման գաղափարը կապել էր բացառապէս Արեւմտեան Հայաստանի հետ: Ընդ որում, Հայկական Հարցը հետապնդել էր Արեւմտեան Հայաստանի բարենորոգումների կամ էլ հեռաւոր ապագայում հնարաւոր ինքնորոշման հարցերը: Ինչ վերաբերում է Արեւելեան Հայաստանին, ապա մինչեւ 1917ի վերջերը՝ ռուսական բազմազգ պետութեան փլուզումը, նրա որեւէ հատուածում հայկական պետականութեան վերականգնման որեւէ ծրագիր կամ նպատակ գոյութիւն չէր ունեցել: Հետեւաբար, հայկական անկախ պետականութեան վերականգնումն ի դէմ ՀԱՀի, երբ պատմական հայրենիքի մեծ մասի խնդիրը տակաւին լուծուած չէր, արեւմտահայերի մի մասի համար «խորթ, անընդունելի» երեւոյթ էր: Մելիքեանը նշում է, որ արեւելահայ ու արեւմտահայ

առճակատումից, նաեւ արեւմտահայութեան մի զգալի մասի մէջ ՀԱՀի նկատմամբ խորացող «անհանդուրժողական» վերաբերմունքից բացի, տարանջատ ու հատուածական էր նախ եւ առաջ ՀԱՀում, Արեւմտեան Հայաստանում, Կովկասում, հեռաւոր երկրների հայկական գաղթօճախներում ապաստանած արեւմտահայկական խմբերի գործունէութիւնը[20]:

ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1918-20ի հայկական պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցի հետ անմիջականօրէն կապուած են նաեւ Սեւրի Պայմանագրում Հայաստանի սահմաններին, իրաւական կարգավիճակին ու հայ ժողովրդի իրաւունքներին վերաբերող յօդուածների վերագնահատման խնդիրները:

Ա. Համաշխարհային Պատերազմում յաղթանակած Դաշնակից Տէրութիւնների եւ պարտուած Օսմանեան Կայսրութեան միջեւ 1920 Օգոստոսի 10ին Սեւրի Հաշտութեան Պայմանագրի ստորագրմամբ Փարիզի Հաշտութեան Միջազգային վեհաժողովն աւարտեց պատերազմի արդիւնքների ամփոփումը: Դաշնակից պետութիւնների շարքում երիտթուրքական կառավարութեան հետ պայմանագիրը ստորագրեց նաեւ Հայաստանը՝ ի դէմս ՀԱՀ պաշտօնական պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանի: ՀԱՀի մասնակցութիւնը պայմանագրի ստորագրմանը՝ միջազգային իրաւունքի տեսանկիւնից նշանակում էր՝ Հայաստանի *դէ եուրէ* (de jure), ճանաչում պայմանագիրը ստորագրող պետութիւնների կողմից: 1915-16ին իր հայրենիքում բռնի տեղահանութեան ու զանգուածային կոտորածների ենթարկուած, հայրենազրկուած, սփռուած եւ միայն 1918 մայիսեան հերոսամարտերի արդիւնքում հայրենի մի փոքր հողակտորի վրայ անկախ պետականութիւնը նոր-նոր վերագտած հայ ժողովուրդը Սեւրի Պայմանագրի հետ կապում էր Հայկական Հարցի արդարացի լուծման յոյսը:

Թէեւ Սեւրի Պայմանագրի ստորագրումից անցել է մէկ դար, այդ միջազգային դիւանագիտական փաստաթղթի նկատմամբ ՀՀի ու Սփիւռքի թէ՛ գիտական եւ թէ՛ հասարակական-քաղաքական շրջանակներում հետաքրքրութիւնը ոչ միայն չի նուազել, այլեւ ձեռք է բերել նոր իմաստ ու բովանդակութիւն: Դա բացատրւում է նրանով, որ հայ պատմագիտութիւնն ընդհուպ վերջին միքանի տարիները, Սեւրի Պայմանագիրը հիմնականում դիտարկել է հայ ժողովրդի տարածքային պահանջների վերաբերեալ 88-93րդ յօդուածների շրջանակներում: Եւ միայն վերջին տարիներին են ուսումնասիրութեան առարկայ դարձել պայմանագրում ՀՀին ու հայութեան անուղղակիօրէն վերաբերող, բայց չափազանց կարեւոր յօդուածները: Սեւրի Պայմանագիրը գիտական հետաքրքրութիւն ներկայացնելուց բացի, հայերի համար ունի քաղաքական նշանակութիւն, քանի որ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի անվիճելի եւ արդարացի իրա-

ւնքները հաստատող կարեւոր դիւանագիտական փաստաթուղթ է, իրաւական անժամանցելի հիմք՝ հայոց պահանջատիրութեան համար:

Պատմագիտական աշխատութիւններում շեշտւում է, որ, եթէ իրադարձութիւնները բարեյաջող ընթացք ունենային եւ Սեւրի Պայմանագրում հայ ժողովրդին ու Հայաստանին վերաբերող յօդուածներն ամբողջութեամբ իրագործուէին, ապա կարելի կը լինէր յայտարարել, որ լուծուել է Հայկական Հարցը: Նաեւ ընդգծւում է, որ, թէեւ Սեւրի Պայմանագիրը չվաւերացուեց ու չիրագործուեց, այնուամենայնիւ, այդ պայմանագրով Արեւմուտքը պաշտօնապէս ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրաւունքն Արեւմտեան Հայաստանի նկատմամբ եւ այդ տարածքում հայկական անկախ պետութեան ստեղծման անհրաժեշտութիւնը[21]: Այս տեսանկիւնից Սեւրի Պայմանագիրը գնահատւում է որպէս Հայկական Հարցի լուծման մինչ այդ եղած տարբերակներից ամենայաջողն ու արմատականը, քանի որ նրա հիմքում դրուած էր հայկական տարածքների միաւորմամբ անկախ Հայաստանի ստեղծման նպատակը: Այդուհանդերձ, Հայկական Հարցի լուծումը Դաշնակիցների համար ունէր առաւելապէս բարոյական-քարոզչական նշանակութիւն այն իմաստով, որ նրանք համաշխարհային պատերազմը յայտարարել էին պատերազմ՝ «յանուն փոքր ժողովուրդների ազատագրութեան»: «... *Սեւրը ծնուեց ոչ այնքան որպէս աշխատելուն նպատակադրուած պայմանագիր, որքան միջոց թոյլ չտալու, որ օսմանահպատակ ժողովուրդները, մասնաւորապէս հայերը կողմնորոշուէին դէպի Խորհրդային Ռուսաստան, յանձին սփեղծուելիք Հայաստանի ելք ունենալ դէպի Բաքու եւ Իրան, մեկուսացնել Թուրքիան Ռուսաստանից*»՝ շեշտում են Պօղոսեաններն ու յաւելում, որ Դաշնակից Տէրութիւնները մտադրութիւն չունէին մարդկային, նիւթական ու ֆինանսական միջոցներ տրամադրելու Սեւրի Պայմանագրով նախատեսուած Հայկական Հարցի լուծմանը[22]: Իսկ Աւետիսեանի կարծիքով, ամերիկեան զօրավար Ճէյմս Հարպորտի գլխաւորած ռազմական առաքելութեան կազմած Կոստանդնուպոլսից մինչեւ Անատոլիա, Արեւմտեան Հայաստան եւ Անդրկովկաս միասնական հոգատարութեան նախագծի իրագործման դէպքում չէր բացառւում նոր հնարաւորութիւնների ստեղծումը թուրքական կառավարութեան համաթուրքական նուաճողական ծրագրերի իրագործման համար: Հարցն այն է, որ ըստ 1919 Հոկտեմբերի 16ին Հարպորտի առաքելութեան կողմից ծերակոյտին ներկայացուած զեկուցագրի, Կոստանդնուպոլիսը, Անատոլիան, Արեւմտեան Հայաստանը եւ Անդրկովկասը ենթարկուելու էին ամերիկեան միասնական հովանաւորութեանը: Ընդ որում, Անդրկովկասը, որն անջատուել էր Ռուսաստանից, պէտք է միացուէր Թուրքիային: Միասնական հոգատարութեամբ ազգային պետութիւններ պէտք է կազմաւորէին թուրքերը, թաթարները, հայերը, վրացիները: Հարպորտի առաքելութեան անդամների կարծիքով, «*միասնական մանդատի իրացման ժամանակ հայերը եւ թուրքերը կը լինէին հաւասարներ, երկու կամ երեք մանդատի դէպքում՝ հակառակորդներ*»[23]: Աւե-

տիսեանն այս նախագիծը գնահատում է որպէս թուրքանպաստ, քանի որ «Հայաստանի «վերացումով» կապ կը հաստատուէր Կովկասի եւ Անդրկասպեան երկրների թուրք-թաթարների միջեւ, կը ստեղծուէր ուժեղ եւ միասնական թաթարական պետութիւն: Դառնալով երկրի գլխաւոր տէրը՝ թուրքերը, միասնական հոգատարութեան ժամկէտի աւարտով վերսկսելու էին քրիստոնեաների՝ առաջին հերթին հայերի կոտորածներն ու թալանը: Աւետիսեանն իր տեսակէտը փաստարկում է 1919 Հոկտեմբերի 15ին Մուստաֆա Քեմալի հետեւեալ յայտարարութեամբ. «*Ելնելով մեր ամբողջ փորձից, մենք համոզուած ենք, որ Ամերիկան միակ երկիրն է, որն ի վիճակի է օգնել մեզ*»[24]: Համաթուրանիզմից ազատուելու միակ ճանապարհն, ըստ պատմաբանի, կարող էր լինել Անատոլիայի թուրքերի բաժանումը Կովկասից եւ Կասպիականից այն կողմ բնակուող թուրանականներից: Բաժանարարի դերում Հայաստանն էր[25]: Համաթրքութեան վտանգաւորութեան խնդիրը դիտարկելով ժամանակի հոլովոյթում՝ Աւետիսեանը միանգամայն իրատեսական եւ հիմնաւորուած է համարում ՀԱՀ կառավարութեան կողմից 1919 Յունիսի 16ին կնքուած վրաց-ադրբեջանական «պաշտպանական» համաձայնագրին միանալու գաղափարի մերժումը, քանի որ դրա նպատակը զօրավար Անտոն Տենիքինի բանակի առաջխաղացման դէպքում համատեղ հանդէս գալն էր: Կարեւորելով պատմական փորձի դերը՝ ազգի եւ պետութեան առջեւ ծառացած բարդ ու ճակատագրական իրավիճակներում ճիշտ կողմնորոշուելու գործում, պատմաբանը շեշտում է, որ Ռուսաստանի հարցում Հայաստանը չի կարող եւ չպէտք է կովկասեան ժողովուրդների կողմնորոշումն ունենայ. հակառուսական կողմնորոշումը չի բխում հայ ժողովրդի շահերից[26]:

Հայկական անկախ պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցերն ամերիկեան միասնական հոգատարութեան շրջանակներում լուծելու հեռանկարների առնչութեամբ ուշագրաւ են Մելիքեանի եւ **Գայիանէ Մախմուրեանի** դիտարկումները: Մելիքեանը նշում է, որ Կոստանդնուպոլսից մինչեւ Կովկաս ամերիկեան միասնական հոգատարութեան գաղափարի հիմքում դրուած տարածաշրջանում ապրող տարբեր ազգերի ու ժողովուրդների նկատմամբ մէկ ուժային կենտրոնի հովանաւորութեան հաստատման սկզբունքի «*ենթարկեցուցում անպայման նկատի էր առնում բոլշեւիկների կողմից Անդրկովկասը խորհրդայնացնելու քաղաքականութեան գործօնը*»: Այս իմաստով պատմաբանը արդիական է համարում Հարպորտի մօտեցումն այն մասին, որ միասնական հոգատարութեան դէպքում հայերը եւ թուրքերը կը լինէին հարեւաններ, երկու կամ երեք հոգատարութեան դէպքում՝ հակառակորդներ[27]: Իսկ Մախմուրեանը նշում է, որ «*ժողովրդի եւ պետութեան ճակատագիրը միջազգային դիւանագիտական կոնգրէսին անմիջականօրէն յանձնելու մասին մեծ տէրութիւնների որոշումը գալիս էր կասեցնելու ճնշուած ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի իրագործումը: Ահա հենց այդ պատճառով էլ Հայաստանի ան-*

կախութեան գաղափարը յանգեցուում էր վերջինիս ինքնավարութեանը մէկ կամ բոլոր մեծ տէրութիւնների հովանու ներքոյ»: Բացի այդ, ՀԱՀի սահմանները ձեւաւորւում էին ոչ թէ ներսից՝ պետութեան շահերին ու հնարաւորութիւններին համապատասխան, այլ այդ հարցի լուծումն ակնկալւում էր դրսից՝ Դաշնակից Տէրութիւններից, ինչն էլ հայ ժողովրդի ու նրա անկախ հանրապետութեան համար ծնում էր անորոշ ու սպասողական իրավիճակ՝ կաշկանդելով եւ կասեցնելով հայկական պետականութեան համար կենսական նշանակութիւն ունեցող բազմաթիւ հարցերի լուծումը[28]: Եւ քանի որ ՀԱՀը չափազանց թոյլ էր Թուրքիայի դէմ պատերազմից խուսափելու ու դիւանագիտական բանակցութիւնների միջոցով իր խաղաղ գոյակցութիւնն ապահովելու համար, ուստի նրան մնում էր մէկ այլընտրանք՝ հաւաքել առկայ բոլոր ուժերն ու փորձել համաձայնութեան գալ Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչը տեղի չունեցաւ[29]: **Գալուստ Գալոյեան**ի համոզմամբ եւս, ՀԱՀի շահը պահանջում էր մերձենալ Ռուսաստանի հետ[30]:

Մախմուրեանը նաեւ կարեւորում է հայկական գործօնի դերը Հայկական Հարցի արդարացի լուծման գործում: Նրա կարծիքով, Փարիզի Հաշտութեան Վեհաժողովի ընթացքում հայկական կողմի դիրքորոշումը կարող էր վճռորոշ նշանակութիւն ունենալ Հայաստանի քաղաքական կարգավիճակի, նրա սահմանների, Հայաստանի հոգատար պետութեան թեկնածութեան վերաբերեալ սկզբունքային հարցերում, եթէ հայկական պատուիրակութիւնները պաշտպանէին միեւնոյն ծրագրային դրոյթները եւ կարողանային դիւանագիտօրէն օգտագործել մեծ տէրութիւնների միջեւ հակասութիւնները: Դրա փոխարէն հայկական կողմն ունէր «*երկու տարբեր մօտեցում հայկական պետութեան ապագայի վերաբերեալ. սա վկայում էր, որ հայերը չունեն միասնական պատուիրակութիւն, որը վարէր երկակի խաղ, այլ ունեն երկու պատուիրակութիւն, որոնք մրցակցում են յանուն լիդէրութեան: Նոյնիսկ այս պարագայում պատուիրակութիւններից եւ ոչ մէկը չէր կարողանում մեծ տէրութիւններին ցոյց տալ Հայաստանի մանդատից նրանց համար հնարաւոր տնտեսական օգուտները կամ արտօնութիւնները: Այսպիսով, հայկական երկու պատուիրակութիւնների գործունէութիւնը ոչ թէ ներսից ուղղորդուող երկակի խաղ էր, այլ՝ երկու տարբեր դիրքորոշում ազգային խմբի ներսում*»[31]՝ նշում է Մախմուրեանը: Պատմաբանը քննադատում է նաեւ ՀՀ կառավարութեան արտաքին քաղաքականութեան արեւմտեան ուղղութիւնը եւ Սեւրի Պայմանագիրն արտաքին ուժերի կողմից իրագործուած տեսնելու՝ ՀՀ ղեկավարութեան յոյսերը, ընդգծելով, որ այդ դիրքորոշման հետեւանքով վտանգի տակ էր դրւում ամէն ինչ, այդ թւում՝ ազգի կեանքը[32]: Նրա կարծիքով, սխալ էր նաեւ յուսալ, թէ հայկական անկախ պետութեան սահմանները կարող էին որոշուել ԱՄՆ նախագահ Ուուդրօ Ուիլսընի իրաւարար վճռով, քանի որ դրանք, իրականում, պայմանաւորուած էին հայ-թուրքական յարաբերութիւնների ընթացքով, իսկ Դաշ-

նակից Տէրութիւնների միջամտութիւնը կարող էր միայն նպաստող, ոչ թէ վճռորոշ նշանակութիւն ունենալ[33]:

1920ի ամռանն ու յատկապէս Սեւրի Պայմանագրի կնքումից անմիջապէս յետոյ՝ թուրք-հայկական պատերազմի նախօրեակին, հայ քաղաքական գործիչներից շատերը գտնում էին, որ հնարաւոր էր համաձայնութեան գալ ու հաշտութեան պայմանագիր կնքել թուրքերի հետ՝ նրանցից ետ ստանալով Ալաշկերտն ու Բայազէտը սեւրեան պահանջներից հրաժարուելու դիմաց: «*Իհարկէ, կարելի է վիճարկել այդ վարկածի ռէալութեան շուրջը, բայց, այնուամենայնիւ, կարծում ենք՝ կային համաձայնութեան գալու հաւանականութեան որոշ պաշար ու կռուաններ: Սակայն հանրապետութեան ղեկավարութիւնը եւ գրեթէ ամբողջ ժողովուրդը չգնաց նման զիջման*»[34]՝ նշում է Յակոբեանը: Պատմաբանն այդ կապակցութեամբ յիշատակում է Քաջազնունու միտքը, որ այդ շրջանում Սեւրի Պայմանագիրը այնքան էր շլացրել մեր աչքերը, ոգեւորել եւ ինքնավստահ դարձրել մեզ, որ աւելորդ համարեցինք բանակցել թուրքերի հետ[35]: «*Աւելին, այդ ժամանակ նոյնիսկ գտնուեցին հայ «գործիչներ», որոնք անարդար համարեցին Սեւրի Պայմանագիրը՝ դժգոհելով, թէ նրանում ընդգրկուած չեն հայկական մնացած վիլայէթները: Դատողութիւններ անելով այդ մասին, այնուամենայնիւ, գտնում ենք, որ դժուար էր վստահել ու հաւատալ փոխզիջումնային բանակցութիւններ վարելու քեմալականների անկեղծութեանը*»[36]՝ յաւելում է Յակոբեանը: Նրա համոզմամբ, խորհրդա-քեմալական հակահայ գործակցութիւնը, քեմալական կառավարութեանը սիրաշահելու անգլօ-ֆրանսիական քաղաքականութիւնը Սեւրի Պայմանագրի հիման վրայ Հայկական Հարցի լուծման ձախողման հիմնական պատճառներն էին: Պատմաբանը նշում է, որ ՀԱՀ Արեւմտեան արտաքին քաղաքական կողմնորոշումը մեզ տուեց ընդամէնը Սեւրի Պայմանագրով ստորագրուած միացեալ, անկախ, ազատ Հայաստան, որն այդպէս էլ մնաց թղթի վրայ, չվաւերացուեց ոչ մի պետութեան կողմից եւ չիրականացաւ կեանքում: Միաժամանակ, նա ՀԱՀ Արեւմտեան արտաքին քաղաքական կողմնորոշման անխուսափելիութիւնը բացատրում է Ռուսաստանում իշխանութեան գլուխ կանգնած բոլշեւիկների հասարակական-քաղաքական վարչակարգի անընդունելիութեամբ, Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմով, որն անհնարին էր դարձնում Հայկական Հարցի արդարացի լուծման հարցում նրա օժանդակութիւնն ակնկալելը[37]:

Անդրադառնալով Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի շրջանակներում Հայկական Հարցի դիւանագիտական քննարկումներին զուգահեռ ընթացող հայ-ռուսական բանակցութիւններին՝ Պօղոսեաններն, ընդհակառակը, նկատում են, որ Մոսկուայի դիրքորոշումը միայն առաջին հայեացքից էր հակահայկական.

> Ռուսաստանը, լինելով հանդերձ քեմալական Թուրքիայի դաշնակիցը, դէմ էր Անդրկովկասում նրա դիրքերի ուժեղացմանը, քաջ գիտենալով, որ Քեմալը

ձգտում էր ոչ միայն տիրանալ Բաքուի նաւթին, այլեւ իրականացնել համաթուրանականութեան նախնական ծրագիրը՝ ընդհանուր սահման ունենալ թուրք-թաթարական աշխարհի հետ, իսկ համաթուրանականութիւնն առաջին հերթին ուղղուած էր Ռուսաստանի դէմ այն պարզ պատճառով, որ թուրք-թաթարական ցեղերի մեծ մասի հայրենիքները Ռուսաստանի տարածքում էին:
Մոսկուան նաեւ գտնում էր, որ, ոչ թէ Երեւանը, այլ եթէ ինքը հանդէս գար թուրքերի հետ բանակցող կողմ, հնարաւոր կը լինէր չափաւորել թուրքերի ախորժակը: Մանաւանդ, բացարձակապէս ակնյայտ էր, որ Հայաստանը պարտուած էր, եւ, եթէ չլինէր Ռուսաստանի հակազդեցութիւնը, թուրքերը չէին յապաղի տիրանալու ամբողջ Արեւելեան Հայաստանին եւ աւարտին հասցնելու հայ բնակչութեան ամբողջական բնաջնջումը[38]:

Պօղոսեանների կարծիքով, անգամ 1920ի թուրք-հայկական պատերազմի ընթացքում ՀԱՀ կառավարութիւնը «*շարունակում էր «ռուսական վտանգից», եթէ ոչ աւելի շատ, ապա նոյնքան վախենալ, որքան թուրքականից*»: Նա «*մինչեւ վերջ էլ Ռուսաստան-Եւրոպա-Թուրքիա կապակցութիւններում անգամ երկրի կործանման պահին, նախ յոյսը դնում էր Եւրոպայի, ապա Թուրքիայի հետ «լեզու գտնելու»* վրայ»[39]: Ըստ Պօղոսեանների, թուրք-ադրբեջանական զաւթողական նկրտումների նկատմամբ ՀԱՀ անվտանգութիւնն էապէս կ'ամրապնդուէր, եթէ 1920ի գարնանը Մոսկուայում ստորագրուէր հայ-ռուսական պայմանագիրը: Սակայն պայմանագիրը չկնքուեց, որովհետեւ հայկական կողմն ակնկալիքներ ունէր Արեւմուտքից ու այդ պատճառով ձգձգում էր բանակցութիւնները, մերժում փոխզիջումների հնարաւորութիւնը, իսկ ռուսական կողմը ձգտում էր խճճել հայ-ռուսական բանակցութիւնները՝ դրանք ստորադասելով Անկարայի ու Բաքուի հետ Պետրոգրադի բոլշեւիկեան կառավարութեան ռազմաքաղաքական յարաբերութիւնների ամրապնդմանը[40]:

Համբարձում Կարապետեանի կարծիքով, բնական եւ անխուսափելի էր ՀԱՀի շրջադարձը դէպի Խորհրդային Ռուսաստան: Ուղղակի, ՀԱՀ դիւանագէտները նկատի չէին առել, որ Ռուսաստանը կը բարձրացնէր Հայկական Հարցը Փարիզի Խորհրդաժողովի օրակարգից դուրս բերելու, ապա նաեւ Սեւրի Պայմանագրից հրաժարուելու հարցը՝ ՀԱՀի ու Թուրքիայի միջեւ բանակցութիւններում միջնորդի դեր ստանձնելու դիմաց: Պատմաբանի համոզմամբ, ՀԱՀը պէտք է արագ կողմնորոշուէր, քանի որ Թուրքիան եւ Ռուսաստանը գործում էին թէ՛ դիւանագիտութեամբ, թէ՛ զէնքով: Աւելին, որքան ամրապնդում էր նրանց գործակցութիւնը, այնքան շեշտւում էր դրա հակահայկական ուղղուածութիւնը: Միաժամանակ, խորհրդա-քեմալական վտանգին գումարուելու էին գալիս խորհրդայնացած Ադրբեջանի յաւակնութիւնները Արցախի, Զանգեզուրի, Շարուրի ու Նախիջեւանի նկատմամբ[41]: Իսկ Մելիքեանի կարծիքով, Հայկական Հարցի լուծման ձախողումը ու ՀԱՀի անկումը պայմանաւորուած էին ոչ միայն քեմալա-բոլշեւիկեան մերձեցմամբ «համաշխարհային իմպերիալիզմ»ի ու Կովկասում այդ «իմպերիալիզմի օճախ Հայաստանի Հանրապետութեան» դէմ,

այլեւ՝ քեմալականութիւնը բոլշեւիզմի դէմ ուղղելու անգլօ-ֆրանսիական քաղաքականութեամբ: Դա «*յանցաւոր համագործակցութիւն էր, որի պատմա-քաղաքական գնահատականը չի տրուած մերօրեայ Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան կողմից*»[42] նշում է Մելիքեանը, դրանով իսկ առաջադրելով ռուսական պետութեան նկատմամբ ՀԳՀի պաշտօնական դիրքորոշումը ձեւակերպելիս անցեալի պատմական դասերը հիմնաւորապէս հաշուի առնելու, բայց եւ ծայրայեղութիւնների մէջ չընկնելու անհրաժեշտութիւնը:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԻ ՎԵՐԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

Ուշագրաւ են Յակոբեանի 1992ի դիտարկումները ՀԱՀի արտաքին քաղաքականութեան ընթացքից հայութեան առնելիք դասերի վերաբերեալ՝ յանուն հայոց ազգային անկախ պետականութեան ներկայի եւ ապագայի: Պատմաբանի գլխաւոր եզրայանգումն այն է, որ միմիայն սեփական ուժերին ապաւինելն է ազգի գոյատեւման ու զարգացման միակ ճշմարիտ երաշխիքը: Սրանից հետեւում է, որ պէտք է լինել իրատես եւ բաւարարուել իրական հասանելիքով.

> ... Ի վերջոյ, պէտք է մէկընդմիշտ ըմբռնել այն յաւիտենական ճշմարտութիւնը, որ իւրաքանչիւր պետութիւն կամ ազգ նախ եւ առաջ հետամուտ պէտք է լինի իր սեփական, ազգային-պետական շահերի պաշտպանութեանը: Առանց այդ շահերի հաշուառման, անմտութիւն կը լինի կարծել, թէ որեւէ պետութիւն կը պաշտպանի մէկ այլ պետութեան կամ ժողովրդի շահերը[43]:

2008ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնած հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած բանակցային գործընթացն առիթ էր, որպէսզի Աշոտ Մելքոնեանն իր հրապարակային ելոյթներում ու զանգուածային լրատուամիջոցներին տուած հարցազրոյցներում հանգամանօրէն անդրադառնար այն վտանգաւոր հետեւանքներին, որ կարող էր թողնել հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացումը Հայկական Հարցի արդարացի լուծման վրայ[44]: Պատմաբանի համոզմամբ, ՀՀ եւ Թուրքիայի միջեւ գործող սահմանի *դէ եուրէ* ճանաչման վերաբերեալ արձանագրութիւններում ձեւակերպուած դրոյթի ընդունումը կը նշանակէր հրաժարում Սեւրի Պայմանագրից, Հայոց Ցեղասպանութեան դիմաց Արեւմտեան Հայաստանով հատուցման խնդրից եւ ՄԱԿի անդամ Թուրքիայի ու ՀՀի միջեւ Ախուրեան-Արաքսով փաստացիօրէն գործող սահմանագծի ճանաչում: ՀՀն, ըստ պատմաբանի, պէտք է կարեւորի Սեւրի Պայմանագիրը, որը ՀՀ տարածքը սահմանում է 160,000 կմ^2, եւ որի համաձայն, ՀՀին մաս պէտք է կազմի Տրապիզոնի, Էրզրումի, Վանի ու Պիթլիսի վիլայէթների տարածքի զգալի մասը:

Հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորելու նպատակով 2008-09ի Երեւանի ու Անկարայի միջեւ տեղի ունեցած հրապարակային բանակցութիւններում արձանագրուած վտանգաւոր զարգացումները թէ՛ հայ

պատմաբաններին ու իրաւաբաններին, թէ՛ ՀՀ պաշտօնական շրջանակներին բերեցին այն համոզման, որ Հայոց Ցեղասպանութիւնը մէկ դար անպատիժ է դրա հետեւանքների յաղթահարման իրաւական աշխատակարգերի անորոշութեան պատճառով, ինչն էլ անդրադառնում է հայոց անկախ պետականութեան անվտանգութեան, զարգացման հեռանկարների, հայ ազգային միասնութեան ապահովման վրայ: Այս պայմաններում ՀՀ կառավարող եւ գիտական շրջանակներում անցում կատարուեց Հայոց Ցեղասպանութեան հիմնախնդրի տեսական-իրաւական ուսումնասիրութիւնից դէպի դրա գիտագործնական վերլուծութիւն, դէպի Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների վերացման, հայոց պահանջատիրութեան հիմնահարցերի մշակում պատմաիրաւական ու միջազգային-իրաւական տեսանկիւնից: Նաեւ կարեւորուեց հիմնախնդրի համազգային հայեցակարգի ձեւաւորումը: Հայաստանեան պատմաբանների գնահատմամբ, Արեւմտեան Հայաստանում հայկական անկախ պետականութեան վերականգնումը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովրդի կորուստների հատուցման խնդիրը վերջնականօրէն կարգաւորելու հիմքերից մէկն է եւ թերեւս՝ գլխաւորը[45]: Նրանց համոզմամբ, թուրքական պետութեան կառավարման ձեւի կամ տարածքի փոփոխութիւնը չի կարող որեւէ կերպ ազդել յանցագործ պետութեանը քաղաքական պատասխանատուութեան ենթարկելու եւ ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման գործընթացների վրայ:

Արմէն Մարուքեանի կարծիքով, Հայոց Ցեղասպանութեան հետ կապուած խնդիրների լուծումը պէտք է ստանձնի հայ ժողովրդի այն հատուածը, որն անմիջականօրէն տուժել է երիտթուրքերի իրականացրած ցեղասպանութեան քաղաքականութիւնից: Սակայն, քանի որ հայկական սփիւռքն օժտուած չէ գերիշխանութեամբ, գործող միջազգային-իրաւական համակարգում եւ, ըստ գոյութիւն ունեցող իրաւական նորմերի, նա չի կարող դիտուել իբրեւ միջազգային իրաւունքի անդամ, հետեւաբար, որպէս պահանջատէր չի կարող հանդէս գալ որեւէ միջազգային ատեանում: «*Եթէ անգամ Սփիւռքը ունենար իրաւական հնարաւորութիւն՝ ներկայացնելու ցեղասպանութեան հետեւանքով տուժած հայ ժողովրդի շահերն ու իրաւունքները, տրամաբանական չէր լինի այդ գործընթացից դուրս թողնել Հայաստանում բնակուող ցեղասպանութեան զոհերի ու վերապրածների ժառանգներին*»[46] մատնանշում է պատմաբանը, յաւելելով, որ ՀՀն անմիջական առնչութիւն ունի հայ ժողովրդի՝ ցեղասպանութիւնից տուժած հատուածի շահերի ու իրաւունքների հետ, քանի որ փուլային տարբերակով հանդիսանում է ՀԱՀի իրաւայաջորդը[47]: Մարուքեանն ընդգծում է, որ ներկայումս, ըստ միջազգային իրաւունքի, ՀՀն կարող է ներկայացնել եւ պաշտպանել Հայոց Ցեղասպանութեան միայն այն զոհերի ու վերապրածների ժառանգների շահերը եւ իրաւունքները, որոնք հանդիսանում են իր քաղաքացիները: Իսկ ինչ վերաբերում է արեւմտահայերի շահերի ներկայացմանն ու

պաշտպանութեանն, ապա այս առիթով պատմաբանը յիշատակում է Արեւմտահայերի Երկրորդ Համագումարը, որը դեռեւս 1919ին օժտել է ՀԱՀը նման իրաւունքով: 1919 Փետրուարի 12ին համագումարի ընդունած «Քաղաքական Բանաձեւի» 5րդ կէտի համաձայն, Արեւմտահայերի Գործադիր Մարմինը ՀԱՀ կառավարութեան եւ խորհրդարանի հետ միասին պէտք է ձեռնարկէր իրական քայլեր Միացեալ, Ազատ Հայաստանի հռչակման ուղղութեամբ[48]: Օժտելով հանդերձ Հայաստանին նման իրաւունքով՝ Արեւմտահայերի Համագումարն ընդգծում էր միասին ու համատեղ աշխատելու կարեւորագոյն հանգամանքը: Մարուքեանը շեշտում է այս դրոյթի արդիականութիւնը, քանի որ Հայոց Ցեղասպանութեան բոլոր հետեւանքների վերացման գործում պատասխանատուութիւն ունեն թէ՛ ՀՀն եւ թէ՛ Սփիւռքը[49]:

Մելքոնեանը խնդիրն առաւել արդիական է համարում հայ-թուրքական արձանագրութիւնների սառեցման պայմաններում՝ այդ փաստաթուղթը կեանքի կոչելու հնարաւորութեան առնչութեամբ նշելով, որ «*դա ոչ ոք չի պատկերացնում ո՛չ պատերազմի, ո՛չ էլ ուժի գործադրման տարբերակով: Աշխարհը մէկ անգամ դէ եուրէ հասպարեթ է իր կամքը՝ Օսմանեան Կայսրութեան՝ որպէս համաշխարհային քաղաքակրթութեան դէմ թշնամի երկրի փլուզման հանգամանքը, եւ արդարացիօրէն օսմանահպատակ ժողովուրդների համար արձանագրել է հեռանկար*»[50]: Մելքոնեանը նկատում է, որ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու իր քաղաքականութեամբ հանդերձ Թուրքիան ինքն է սպառնում միջազգային դատարան դիմել՝ հիմնաւորմամբ, թէ իրեն յանիրաւի մեղադրում են ցեղասպանութիւն իրագործելու մէջ: Այնպէս, որ խնդիրը վաղ թէ ուշ շօշափուելու է միջազգային դատարանում, ինչին պէտք է պատրաստ լինել: «*Մենք Սեւրի դաշնագրի լոյսի ներքոյ պիտի պատրաստ լինենք նման մարտահրաւէրի*»[51]՝ կարեւում է նա:

ԱՄՓՈՓՈՒՄ

1991-2019ին ՀՀ պատմագիտական միտքը գնահատելի աշխատանք է կատարել 1918-20ի հայկական անկախ պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցերը նորովի ուսումնասիրելու, կարեւորութիւնը վերահիմաստաւորելու եւ վերագնահատելու ուղղութեամբ: Աշխատութիւններում խնդրոյ առարկայ հիմնահարցերի վերաբերեալ արտայայտուած տեսակէտները տրամաբանօրէն փոխլրացնում են միմեանց: Դրանք պատմագիտական մտքի արժէքաւոր ու սթափ ընդհանրացումներ են, որոնք ուսանելի են համահայկական խնդիրների օրակարգը մշակող եւ լուծմանը յետամուտ ազգային, պետական ու քաղաքական շրջանակների համար:

ՀՀ պատմագրութիւնը դեռեւս ասելիք ունի այս ուղղութեամբ, քանի որ հայկական անկախ եւ միացեալ պետութեան ստեղծման գաղափարի մասին արխիւային ու գիտավերլուծական նիւթը սպառուած չէ, դեռեւս կան լուսաբանման-մեկնաբանման կարիք ունեցող փաստեր ու երեւոյթներ: Բացի այդ, դեռեւս լրամշակման կարիք ունի այն համընդգրկուն հայեցակարգը,

որով հնարաւոր դառնայ աւելի համապատկերային գնահատել վերոնշեալ խնդիրների քննութիւնը: Եւ վերջապես, հայոց պահանջատիրութիւնը դեռեւս սպասում է իր արդար բաւարարմանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Պատմաբանասիրական Հանդէս*ում [2020:1 (213), էջ 60-80] լոյս է տեսել յօդուածս՝ «Հայկական Հարցի 1991–1920 թթ. Պատմութեան Լուսաբանումը Հայաստանի Պատմագրութեան Մէջ (1991-2019 թթ.)»: Զոյգ աշխատանքներս փոխլրացնում են միմեանց՝ ընթերցողին հնարաւորութիւն տալով ամբողջական պատկերացում կազմել Ա. Աշխարհամարտի աւարտական փուլում, Փարիզի Վեհաժողովում եւ ՀԱՀի տարիներին հայկական անկախ պետութեան գաղափարի նկատմամբ թէ՛ ազգային-պետական կառոյցների եւ ուժերի, թէ՛ մեծ տէրութիւնների դիրքորոշումների ու քաղաքականութեան շուրջ 1991-2019ի ՀՀ պատմագրութեան մէջ արտայայտուած կարծիքների եւ տեսակէտների մասին: Միաժամանակ դրանք փորձ են՝ անջատաբար վերլուծելու Հայկական Հարցի 1918-20ի պատմութեան ազգային բովանդակութիւնից եւ միջազգային-դիւանագիտական բնոյթից բխող հիմնահարցերը, որոնք պատմագիտական աշխատութիւններում ներկայացուած են միահիւսուած: Այդ է պատճառը, որ զոյգ յօդուածներում որոշ փաստեր ու պատմագիտական գնահատականներ անխուսափելիօրէն կրկնւում են:

[2] Վ. Մելիքեան, *Իշխանութեան Հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասեան Կոմիսարիատի Գործունէութիւնը եւ Հայ Իրականությունը (1917 թ. Նոյեմբեր-1918 թ. Փետրուար)*, խմբ.՝ Յ. Յարութիւնեան, Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշար 64, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2010, էջ 153-4, 161:

[3] Նոյն, էջ 166:

[4] Պատմաբանը նկատի ունի 1908ի երիտթուրքերի յեղաշրջման նախօրեակին Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան 1907ի փարիզեան համագումարին ՀՅԴ ներկայացուցիչների մասնակցութիւնը, որով, ըստ էութեան, գործնական հիմքի վրայ էր դրուել քաղաքական այդ ուժերի գործակցութիւնն ընդդէմ ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարութեան: ՀՅԴն այդ քայլին գնացել էր՝ չստանալով որեւէ խոստում կամ երաշխիք առ այն, որ իշխանութեան հասնելուց յետոյ երիտթուրքերը պատրաստ էին ճանաչելու Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը կամ՝ բարենորոգումներ անցկացնելու Հայկական Վիլայէթներում:

[5] Նոյն, էջ 89:

[6] Համբարձում Կարապետեան, *Սեւրի Պայմանագիրը Հայոց Ճակատագրում*, խմբ.՝ Աւագ Յարութիւնեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ Հրատ., 2004, էջ 13. նաեւ՝ Հրանդ Աւետիսեան, *Հայկական Հարցը 1918 Թուականին*, խմբ.՝ Ալբերտ Խառատեան, Երեւան, Բարձրագոյն Դպրոց Հրատ., 1997, էջ 41, 102:

[7] Նոյն, էջ 126, 128-9, 135:

[8] Նոյն, էջ 106. նաեւ՝ Ստ. Պօղոսեան, Կ. Պօղոսեան, *Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան Պատմութիւն, III Հտր., Գիրք I, Մաս Ա (Հայկական Հարցը 1917 թ. Երկրորդ Կէսից Մինչեւ ՀՀ Ստեղծումը)*, Երեւան, Հայաստան Հրատ., 2004, էջ 78-9, 95, 114, 148, 151-2, 157:

[9] Նոյն, էջ 232-33:

[10] Աւետիսեան, *Հայկական*, էջ 253:

[11] Նոյն, էջ 237-38. նաեւ՝ Գ. Պետրոսեան, *Անդրկովկասը Դիւանագիտական Յորձանուրում. Հայոց Անկախ Պետականութեան Կերտումը (1917 թ. Փետրուար–1918 թ. Յունիս)*, խմբ.՝ Լ. Աւետիսեան, ԵՊՀ Հրատ., 2018, էջ 239-43:

[12] *Հայաստանի Առաջին Հանրապետութեան Խորհրդարանը*, կազմ. եւ հրատ.՝ Ա. Զաքարեան, խմբ.՝ Թ. Սողոմոնեան, Գ. Թանանեան, Երեւան, *ՀՀ Ազգային Ժողովի* Հրատ., 2018, էջ 50-1: Հմմտ.՝ Ս. Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, Երեւան, Հայաստան Հրատ., 1993, էջ 194:

[13] Ա. Մելքոնեան, *Յեղասպանութիւն եւ Հայրենազրկում. Ճանաչումից՝ Հատուցում (Յօդուածներ եւ Հարցազրոյցներ)*, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, Զանգակ Հրատ., 2015, էջ 129:

[14] Ա. Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւնը 1918–1920 թթ., (Անկախութեան 100-Ամեակի Առթիւ)*, խմբ.՝ Գ. Խուդինեան, Երեւան, Լուսակն Հրատ., 2018, էջ 38:

[15] Աւետիսեան, *Հայկական*, էջ 328-9:

[16] Վ. Հ. Մելիքեան, *Արեւմտահայերի Համագումարները եւ Հայկական Հարցի Փուլերը 1917–1923 թթ.*, Երեւան, Զանգակ-97, 2007, էջ 7, 9, 11-12:

[17] *Համահայկական Խորհրդակցութիւններ (1912–1920 թթ.) (Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու)* պատ. խմբ.՝ Ա. Վիրաբեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2004, էջ 333-504. նաեւ՝ Ս. Պօղոսեան, *Պօղոս Նուբար Փաշա: Ազգային Գործիչը*, Խ. Աբովեանի ՀՊՄՀ Հայոց Պատմութեան Ամբիոն, գիտ. խմբ.՝ Մ. Կարապետեան, Ս. Դանիէլեան, Երեւան, Զանգակ-97, 2004, էջ 162-70:

[18] Այս մասին տե՛ս՝ Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 12:

[19] Նոյն, էջ 5-6:

[20] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 8. նաեւ՝ Ա. Յարութիւնեան, *Սեւրի Պայմանագիրը եւ Հայ Հասարակական Քաղաքական Միտքը*, Երեւան, ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2004, 139 էջ:

[21] Լ. Խուրշուդեան, *Հայկական Հարցը. Բովանդակութիւնը, Ծագումը, Պատմութեան Հիմնական Փուլերը*, խմբ.՝ Բ. Ուլուբաբեան, Երեւան, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, 1995, էջ 49-50:

[22] Պօղոսեան եւ Պօղոսեան, *Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան Պատմութիւն, III Հրր. (Հայկական Հարցը 1920–1922 Թուերին), Գիրք II*, Երեւան, Հայաստան Հրատ., 2003, էջ 176, 198-9, 201, 206:

[23] Աւետիսեան, *Հայկական*, էջ 335:

[24] Նոյն, էջ 336:

[25] Г. А. Аветисян, "Генерал Акоп Багратуни (1879-1943)," [Հ. Ա. Աւետիսեան, «Զօրավար Յակոբ Բագրատունի (1879--1943)»], *Պատմաբանասիրական Հանդէս*, 1997:1, էջ 54-5:

[26] Աւետիսեան, *Հայկական*, էջ 337-38:

[27] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 24-25:

[28] Նոյն, էջ 43:

[29] Նոյն, էջ 45-46:

[30] Գ. Գալոյեան, *Հայաստանը եւ Մեծ Տէրութիւնները 1917–1923 թթ.*, խմբ.՝ Վ. Միքայէլեան, Երեւան, Գիտութիւն Հրատ., 1999, էջ 60-1:

[31] Նոյն, էջ 64-5, 67.

[32] Նոյն, էջ 123:

[33] Նոյն, էջ 132:

[34] Ա. Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւն (1918–1920 թթ.)*, Երեւան, Հայաստան Հրատ., 1992, էջ 24:
[35] Նոյն:
[36] Նոյն:
[37] Նոյն, էջ 26:
[38] Պօղոսեան եւ Պօղոսեան, *Հայկական Հարցի..., Գիրք I, Մաս Բ*, էջ 173:
[39] Նոյն, էջ 170-1:
[40] Նոյն, էջ 146-7, 150-1:
[41] Կարապետեան, էջ 64, 81, 87:
[42] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 29, 34, 43:
[43] Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 27:
[44] Ա. Ա. Մելքոնեան, *Հայոց Պատմութեան Դասերն Ու Պատգամները*, Երեւան, Գիտութիւն Հրատ., 2013, էջ 388-9, 407-9, 410, 421-3, 482-3, 506:
[45] Ա. Տ. Մարուքեան, «Թուրքիայի Միջազգային-Իրաւական Պատասխանատուութեան Հիմնախնդիրը. Ամփոփում եւ Առաջարկներ», *Վէմ Համահայկական Հանդէս*, 2010:Բ(Ը),1(29), Յունուար-Մարտ, էջ 15-17. նաեւ՝ Ա. Պապեան, «Օսմանեան Կայսրութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան Իրաւայաջորդութեան-Շարունակականութեան Հարցի Շուրջ», *Հայրենադարձութիւն. Հայոց Պահանջատիրութեան Իրաւական Հիմունքները եւ Յարակից Հարցեր (Յօդուածների Ժողովածու)*, Երեւան, Ասողիկ Հրատ., 2012, էջ 446-50. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, «Հայերի Ցեղասպանութեան Համար Թուրքիայի Պատասխանատուութեան Հիմնախնդիրը», *Հայաստան. Ցեղասպանութիւնից Վերածնունդ, 1915–2015*, Երեւան, Նոյեան Տապան Հրատ., 2015, էջ 310-32. նաեւ՝ Ա. Մելքոնեան, Գ. Պօղոսեան, Ա. Աղասեան, Ա. Մարուքեան, Դ. Քերթմենջեան, Հ. Մելիք-Ադամեան, Վ. Վարդանեան, Գ. Բադալեան, Ա. Յովհաննիսեան, *Ցեղասպանութեան Հետեւանքով Հայ Ժողովրդի Կորուստները եւ Հատուցման Կառուցակարգերի Մեթոդաբանական Հիմքերը*, խմբ.՝ Ա. Մարուքեան, Երեւան, Տիր Հրատ., 2019, 608 էջ:
[46] Մարուքեան, «Թուրքիայի Միջազգային», էջ 18:
[47] Նոյն, էջ 18-19:
[48] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 10:
[49] Մարուքեան, «Թուրքիայի Միջազգային», էջ 19:
[50] Մելքոնեան, *Ցեղասպանութիւն*, էջ 285:
[51] Նոյն:

ASSESSMENT OF THE MAIN ISSUES OF ARMENIA'S 1918–1920 STATEHOOD AND NATIONAL UNITY BY THE HISTORIANS OF THE REPUBLIC OF ARMENIA BETWEEN 1991 AND 2019

(Summary)

LILIT HOVHANNISYAN
lilithovannisian@yahoo.com

This study reviews and assesses post-Soviet Armenian historiography output from a current perspective. It includes the factors that led to the proclamation of independence in 1918, the nationwide steps taken for the realization of the idea of an independent and united Armenia, the political orientation adopted by the state leaders preserving the tiny, weak state, and the domestic and foreign factors that impacted its growth and preservation and influenced Armenian unity.

ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՊԵՏԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ (ԺԴ.-Ի. Դ.Դ.)

ՀԵՂԻՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ
heghmk@yahoo.com

ՄՈՒՏՔ

Սուրբ Վայրերում Հայ Եկեղեցու կուսանոցների բացակայութեան[1] պարագայում ուշագրաւ է մայրապետերի առկայութիւնը Երուսաղէմի Ս. Հրեշտակապետաց վանքում: Նրանց ծառայութեանն առնչուող հարցերի մասին մեզ յայտնի աղբիւրները թուագրւում են ԺԴ. դարով եւ հասնում մինչեւ նորագոյն ժամանակներ:

Հայ միանձնուհիների ներկայութիւնը Սուրբ Վայրերում ձգւում է դարերի խորքը: Կան բազմաթիւ վկայութիւններ՝ ձեռագիր մատեանների յիշատակարաններում: Առաւել վաղ շրջանի աղբիւրներում նրանք յիշատակւում են «հաւատաւոր» եւ «հոգեւոր մայր» մակդիրներով: Առաջինը հաստատապէս ենթադրում է միանձնական վիճակ, իսկ երկրորդը ենթադրել է տալիս վանականների հանդէպ այս կանանց մայրական խնամքի մասին: Այստեղից էլ, թերեւս, յետագայում նրանց տրուած «մայրապետ»[2] անուանումը, որով եւ նրանց ներկայութիւնը ամրագրուած է 1880ին ընդունուած Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան կանոնադրութեան մէջ՝ իբրեւ միաբանութեան անդամներ[3]: Կանոնադրութեան յետագայ մշակումներում սոյն տողը շարունակուել է պահպանուել եւ առ այսօր ջնջուած չէ կանոնադրութիւնից, թէեւ Երուսաղէմի Ս. Աթոռում անցեալ դարից յետոյ այլեւս մայրապետեր չկան:

Ովքե՞ր էին այս մայրապետերը եւ ի՞նչ յանձնառութիւն ունէին Երուսաղէմի հայկական վանքերում: Այս յօդուածում մենք կը փորձենք պատասխան տալ այս հարցերին:

Հայ պատմագրութեան մէջ դեռեւս վաղ քրիստոնէութեան ժամանակներից յայտնի են իրենց բարեպաշտական գործերով աչքի ընկած մի շարք իշխանազուն կանայք, որոնք ճգնակեցութեամբ իրենց կեանքն աւարտել են Երուսաղէմում:

Մովսէս Խորենացին, իր *Պատմութիւն Հայոց*ում իբրեւ հայ ներկայացնելով դեռեւս առաքելական ժամանակներում թագաւորած Եդեսիայի Աբգար[4] արքային, նրա կնոջ՝ Հեղինէ թագուհու մասին գրում է.

> Այս Հեղինէ զարդարեալ հաւատովք, որպէս եւ զայր իւր զԱբգար, ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտից. այլ չոգաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղաւդեայ, ի տովին՝ զոր մարգարէացաւն Ագաբոս. եւ տուեալ զամենայն գանձս իւր յեգիպտոս՝ գնեաց ցորեան բազում յոյժ եւ բաշխեաց ամենայն

կարօտելոց. որում եւ վկայէ Յովսեպոս. որոյ եւ շիրիմ[5] նշանաւոր կայ առաջի դրանն յԵրուսաղէմ մինչեւ ցայսօր ժամանակի[6]:

Բարեպաշտ թագուհու այս կերպարը միջնադարեան հայ մատենագրութեան մէջ դարձել է Երուսաղէմում սրբակեաց ապրած տիկնոջ իւրօրինակ տիպար: Այսպէս, ԺԳ. դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին հաւատաւոր այս թագուհու հետ է համեմատում Երուսաղէմում ճգնութեամբ իր կեանքն աւարտած Խաչէնի իշխան Հասան Ջալալի մօրը, որն ամուսնու մահից յետոյ «*չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ, զարմացուցանէր զամենայն տեսողսն եւ լսողսն. քանզի ծախեալ զամենայն գոյս իւր՝ զոր ունէր՝ յաղքատսն եւ ի կարօտեալսն՝ նման Հեղինեայ կնոջն Աբգարու, եւ ինքն ձեռագործիւ իւրով կերակրէր. եւ անդէն մեռաւ, զոր Աստուած փառաւորեաց զփառաւորիչն իւր, լոյս կամարածեւ կացեալ ի վերայ գերեզմանին*[7] *առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւն*»[8]:

Տիգրան Սաւալանեանցը նոյն Հեղինէ թագուհուն է նմանեցնում Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն Է.ի կնոջ՝ Մարիամ[9] թագուհուն ու դստերը: Գեղարուեստական ճոխութիւն հաղորդելով իր գրուածքին, Սաւալանեանցը նշում է որ եգիպտական գերութիւնից յետոյ հաստատուելով Երուսաղէմում, նրանք Հեղինէ թագուհու նման ծառայում են սուրբ վայրերում, բարի օրինակ դառնում հաւատաւոր կանանց համար եւ այստեղ էլ կնքում իրենց մահկանացուն՝ թաղուելով Ս. Յակոբեանց տաճարի մէջ[10]:

Իսկ Լեւոնի Երուսաղէմէն մեկնելէն ետք՝ Մարիամ թագուհին ու աղջիկը Բեննա ցմահ կը մնան Ս. Յակոբեանց վանքին մէջ, եւ Եդեսիոյ Հեղինէ դշխոյին նման Ս. Տեղերուն կը ծառայեն[11]:

Պատմական առումով երբեմն վիճելի վերոյիշեալ վկայութիւնների կողքին Սուրբ Վայրերում Հայ Եկեղեցու միանձնուհիների կամ հաւատաւոր կանանց մասին առաւել վաւերական տեղեկութիւններ են փոխանցում ձեռագրերի յիշատակարանները[12]: Ուշագրաւ աղբիւր են նաեւ Երուսաղէմի հայկական գերեզմանոցների տապանագիր արձանագրութիւնները:

Հաւատաւոր կանանց մասին ամենավաղ վկայութիւնները հանդիպում են ԺԴ. դարի ձեռագրերի յիշատակարաններում: 1316ին ընդօրինակուած «Ճաշոց»ի գրիչ Ստեփանոս Երկայնը խնդրում է յիշել «*զբնակիչս մեծահռչակ Սբ. Ուխտին Սբ. Յակոբայ, զպատուելի քահանայսն, զպարկեշտ եւ զողորմած հաւատաւորքն, զճգնազգեաց եւ զխոնարհ ոգի կրաւանաւորքն...*»[13]:

Նրանց հիմնական ծառայութիւնը, ըստ յիշատակագիրների, վանականներին սպասաւորելն է: Բերենք միքանի օրինակ.-

1331ին Երուսաղէմի Ս. Յակոբ վանքում ընդօրինակուած Աւետարանի գրիչը՝ նոյն Ստեփան Երկայնը, խնդրում է յիշել ձեռագրի

պատուիրատուին՝ «*պատուական քահանայն Վարդ իշխան*», ինչպէս նաեւ «*հոգեւոր դստերն իւրոյ Շաքար հաւատաւորի*», որ «*աշխատեցաւ յոյժ ի կոկել թխթոյն եւ որք սպասաւորեցին մեզ ի պէտս մարմնաւորս*»[14]:

Ներսէս Կրակցին, 1334ին Երուսաղէմի Ս. Ստեփանոս վանքում ընդօրինակած «Ճաշոց»ում խնդրում է յիշել «*հոգեւոր մաւրս Քրիստոնէի, եւ իր ընկերոջն Թագուհէի, որ խիստ աշխատեցան ի հետ հացի*»[15]:

Երուսաղէմի Ս. Յակոբ եկեղեցում Մանուէլ աբեղայի 1417-19ին ընդօրինակած «Ճառընտիր»ների յիշատակարաններում գրիչը երախտագիտութեամբ յիշատակում է «*հոգեւոր մօրն իմ Թանկսուղ*»[16], «*Ոսկիկանթեղ հաւատաւորին*»[17], «*Տափիկ մայր ապաշխարողին, եւ միւս ապաշխարողին, եւ ծնողաց նոցա, որ մեզ շատ սպասաւորութիւն արարին*»[18]:

1424ին Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքում ընդօրինակուած ձեռագրի գրիչ Յովհաննէս աբեղան ի թիւս այլոց խնդրում է յիշել «*ըստ հոգւոյ մայրերս մեր, որ սպասաւորին մեզ ըստ պիտոյից մարմնոյ...*»[19]:

Ուշագրաւ է նաեւ 1422ին Երուսաղէմում ընդօրինակուած «Յայսմաւուրք»ի յիշատակարաններից մէկը, որը վկայում է Ս. Աստուածածնի գերեզմանին կին լուսարարների առկայութիւնը: Գրիչ Թորոս աբեղան խնդրում է յիշել «*Աստուածածնին սուրբ գերեզմանին լուսարարացն՝ Կաֆացի Մարիանեացն, զի ինձ Թորոս գծողիս հետ բազում աշխատանս կրեցին*»[20]:

Այսպիսով, սուրբ վայրերում, առնուազն ԺԴ. դարից սկսած, տեսնում ենք հաւատաւոր կանանց ներկայութիւնը: Նրանց բնակութեան վայրը, ինչպէս յուշում են ԺԴ.-ԺԷ. դարերի յիշատակարանները Ս. Հրեշտակապետաց վանքն է[21]. «*Բնակին աստ պառաւունք յաշխարհէ հրաժարեալք, եւ կամ կոյսք մայրապետք, որ եւ ի մեծէ աթոռոյս ընդունին զհոգեպահիկ կերակուրն*»[22]՝ նրանց մասին գրում է ԺԸ. դարի վարդապետերից Հաննա (Յովհաննէս) Երուսաղէմցին:

Ս. Հրեշտակապետացի հաւատաւորները, ըստ նոյն աղբիւրների, հիմնականում հոգում են վանականների կենցաղային հոգսերը: Նրանց ծառայութիւնը, սակայն, չի սահմանափակւում միայն այսքանով: Հանդիպում են նաեւ լուսարարութեան պաշտօնի կոչուած կանայք, ինչպիսիք են Ս. Աստուածածնի լուսարարները:

Կանանց նմանատիպ ծառայութիւնները վանքերում՝ սակայն, նորութիւն էին Հայ Եկեղեցում. դրանք հակասում էին նախկինում ընդունուած եկեղեցական կանոններին:

Մասնաւորապէս, յայտնի է կին լուսարարների հանդէպ Հայ Եկեղեցու մերժողական կեցուածքը պատմական առաւել վաղ ժամանակներում:

Այսպէս, ԺԱ.-ԺԲ. դարերի մատենագիր Մատթէոս Ուռհայեցու վկայութեամբ՝ Երուսաղէմում

ի թուականութեանն Հայոց յամի ՇԾ (1101-1102) եղեւ աիաւոր եւ հրաշալի նշան ի սուրբ քաղաքն Երուսաղէմ վասն զի սովորական էր վառման լուսոյ սուրբ գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, արգելեալ եղեւ, ոչ վառեցաւ յաւուր շաբաթու, այլ մնացին կանթեղք առանց վառման եւ կացեալ մինչեւ ի միաշաբաթին կիւրակէին[23]:

Պատճառը, ինչպէս նշում է ժամանակագիրը, ֆրանկների մեղաւոր վարքն էր, քանի որ կանանց էին տուել Ս. Գերեզմանի սպասաւորութիւնը.

Եւ ի վերայ այսր ամենայնի զկանայս կացուցանէին սպասաւոր սրբոյ Գերեզմանին Աստուծոյ եւ ամենայն ուխտիցն, որ էին յԵրուսաղէմ եւ էին այն ամենայն մեղք մեծամեծք առաջի Աստուծոյ. եւ զՀայ եւ զՀոռոմ, զԱսորի եւ զՎրացի մերժեցին յամենայն ուխտիցն: Եւ յորժամ տեսին զայս աիաւոր նշանս յանդիմանութեան ազգին Փռանգաց, ի բաց մերժեցին զկանայսն ի սպասաւորութենէ սուրբ ուխտիցն, որ յԵրուսաղէմ, եւ զամենայն ազգ կացուցանէին յիւր ուխտն[24]:

Նոյնը նշում է նաեւ ԺԳ. դարի մատենագիր Մխիթար Այրիվանեցին իր *Ժամանակագրութիւն*ում. «*Յաւուր ծրագալուցին ոչ վառեցաւ լոյսն յերուսաղէմ, զի փռանկն զսպասաւորութիւնն կանանց էր տուեալ*»[25]:

ԺԷ. դարում, սակայն, կին լուսարարների հանդէպ Հայ Եկեղեցու վերաբերմունքն այլ է: Այս մասին է վկայում նաեւ Հացունին.

Անկիւրիոյ վանաց յիշատակագրին մէջ հայ բարերար մը 1475ին կը սահմանէ՝ որ իւր նուիրած դրամագլխին եկամուտը տեղւոյն եկեղեցւոյ լուսարարին հատուցուի, «թէ կարգաւորներէն, թէ աշխարհականներէն, թէ հաւատաւոր կիներէն՝ ով որ լինէին լուսարար», որոնց անխտիր կը տրուէր պաշտօնդ: Հոն կը յիշուի նաեւ «Էլէին մաման»՝ որ սպասաւոր էր Սբ. Աստուածածնին[26]:

Ինչ վերաբերում է վանականներին կանանց սպասաւորութեանը, ապա այն հակասում էր Ներսէս Մեծի սահմանած կանոնին:

Դեռեւս Դ. դարում սահմանուած այդ կանոնը («Կանոնք Ներսէսի Կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից Եպիսկոպոսի», կանոն ԼԳ.) արգելում էր արական վանքերում կանանց սպասաւորութիւնը՝ իբրեւ հացթուխս, կովկիթ կամ խնոցահար.

Եւ մի՛ ամենեւին. որպէս լուաք, հացարար, եւ կովկիթ կամ խնեցահար ի վանսն տանել կին մարդ, զի թէ ուր չէր նմա հնար մտանել՝ կործանեաց զմարդն, ապա զիւրսն զինչ իսկ առնէ[27]:

Մինչդեռ, ինչպէս վկայում են ԺԴ.-ԺԷ. դարերի ձեռագրերի բազմաթիւ յիշատակարաններ, այս շրջանում ոչ միայն Երուսաղէմում, այլեւ բազմաթիւ այլ արական վանքերում կանանց սպասաւորութիւնն արդէն տարածուած երեւոյթ էր:

ԺԴ. դարում նման երեւոյթի ի յայտ գալը Հացունին կապում է Հայ Եկեղեցում կուսանոցների կամ հաւատաւորների վերահաստատման հետ:

Սակայն վանքերում սպասաւորող կանանց մասին նա նշում է, որ «*կանոնաւոր կուսաններ չէին ադոնք, այլ ազատ կամ կէս հաւատաւորք՝ մայրապետ կոչմամբ*»[28]:

Նման եզրակացութեան պատճառը վանքերում ծնունդ առած գայթակղութիւններն էին, որոնց մասին Հացունին գրում է.

> Կուսաստանաց կամ հաւատաւորաց վերահաստատութեան հետ ծայր կու տան զեղծումներ ալ, որոնք զգալի են մանաւանդ ԺԴ. դարուն: Կան այդ կուսաններէն, որոնք ձեւով եւ հիմայ անուամբ մայրապետք, կը յաճախէին եւ ծառայութիւն կամ տեսակ մը տանտիկնութիւն կ'ընէին արանց վանքերու մէջ, պատճառ տալով բնականապէս գայթակղութեանց[29]:

Արական վանքերում տարածում գտած խոտելի այդ երեւոյթի մասին է վկայում 1444ին Այրիվանքում ընդօրինակուած «Յայսմաւուրք»ի յիշատակագիրը՝ նշելով, թէ ինչպէս ձեռագրի պատուիրատու Սիմէոն Բաբունապետը (Սիմէոն Տաթեւացին) «*մեծաւ յուսով եւ եռափափագ սիրով սկսաւ նորոգել եւ զարդարել զվանորայս Արարատեան նահանգիս, որ խախտեալ կային ի սահմանաց եւ ի կրօնից յառաջին հարցն... կանոնս եւ օրէնս հաստատեաց: ...Այլ եւ զվանքն պարսպեաց եւ ամրացոյց եւ որոշեաց ի յաշխարհականացն, զի աբեղայ ի շուրջ պատի կողմն բնակեսցէ, եւ սանամայր մի արասցէ եւ քոյրաքոյր եւ մայրաքոյր*»[30]:

Թերեւս նման գայթակղութիւններից զերծ չէին նաեւ Երուսաղէմի հայկական վանքերը: Հացունին մատնանշում է Կրակեցու գրութիւնը՝ վերցուած 1335ին Երուսաղէմի Ս. Հրեշտակապետաց վանքում ընդօրնակած ձեռագրից, որով «*ծածուկ հեգնութիւնը կ'ուղղէր իւր հայ վիճակակցաց. «Ո՛վ եղբարք, վկայ է Աստուած՝ որ ի ճառիցս գրելն ոչ մայրապետ ունիմ եւ ոչ քոյրապետ. ու շատն ցամաք հացով»: Կը հետեւի՝ որ մայրապետացդ գործն էր հոգալ ու կերակրել վանականները. եւ այն ոչ հասարակութիւնը, այլ զանոնք միայն՝ որոց հետ կապուած էին*»[31]՝ եզրակացնում է Հացունին:

Այսուհանդերձ, Հացունու գնահատականը կարելի է համարել չափազանց խիստ՝ սեւեռուած բացառապէս բացասական երեւոյթների վրայ: Արական վանքերում սպասաւորող կանանց ներկայութեան պայմաններում, անշուշտ, կարող էին տեղ գտնել նաեւ մատնանշուած զեղծումները: Դրանք, սակայն, ամբողջութեամբ չէին կարող ստուերել Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հովանու ներքոյ իրենց ծառայութիւնն իրականացնող հաւատաւոր այդ կանանց երախտիքը, որի մասին վկայում են շատ յիշատակագիրներ:

Միաժամանակ կարող ենք նշել, որ առկայ մի շարք աղբիւրներ թոյլ են տալիս ենթադրելու նաեւ, որ հաւատաւոր կանանց կամ մայրապետերի համար սահմանուած են եղել որոշակի կանոններ ու չափորոշիչներ:

Նախ վերադառնանք Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան կանոնադրութեանը: Կանոնադրութեան առաջին յօդուածը ներկայացնում է միաբանութեան կազմը, որը եզրափակւում է «մայրապետ քորք» տողով՝ յաջորդելով քրծազգեաց եղբայրներին[32]:

Հարկ է նշել, սակայն, որ այս կանոնադրութիւնը չի յստակեցնում մայրապետերի հետ կապուած շատ հարցեր[33]: Այն սահմանում է միայն նրանց քանակը միաբանութեան կազմում՝ առաւելագոյնը 30 եւ միաբանութեանն անդամագրուելու տարիքային շէմը՝ 30-40 տարեկան, ինչը նախկինում կարող էր եւ շատ աւելի ցածր լինել: Կանոնադրութեան մէջ մայրապետերին վերաբերող այլ մասնաւոր դրոյթներ սահմանուած չեն: Իսկ կանոնադրական այնպիսի հարցեր, ինչպիսիք են միաբանութեանն անդամագրուելու կամ հեռանալու (հակականոնական վարքի դէպքում՝ հեռացուելու) ընթացքը, պարտականութիւններ եւ իրաւունքներ ստանձնելը, ընդհանուր դրոյթներով սահմանուած են միաբանութեան բոլոր անդամների համար՝ առանձին բացառութիւններով:

Միանշանակ է, սակայն, որ սուրբ վայրերում հաւատաւորների կամ մայրապետերի հաւաքականութիւնը ենթարկուել է չգրուած այլ պահանջների եւս, որոնք արտացոլուած չեն կանոնադրութիւնում:

Մասնաւորապէս, իբրեւ միանձնական կեանքին նուիրուած կանայք, հաւատաւորները կամ մայրապետերը կարող էին լինել կոյս կամ այրի: Այս մասին վկայում է ինչպէս ԺԸ. դարի Հաննա վարդապետը, նրանց մասին նշելով՝ «*պառաւունք յաշխարհէ հրաժարեալք, եւ կամ կոյսք մայրապետք*», այնպէս էլ յետագայ բազմաթիւ այլ ժամանակագիրներ: Գալով նոր ժամանակներ՝ արժէ յիշատակել 1944ին Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեանի Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկած զեկուցագիրը, որտեղ մայրապետերին վերաբերուող տեղեկութիւններում կրկին նշւում է նրանց կոյս կամ այրի լինելը.

> Ասոնք բարեպաշտ եւ եկեղեցասէր կիներ են տարիքով միջինէն վեր, վիճակաւ որբեւայրի կամ կոյս. կ'ընդունուին ցկեանս վանքին ծառայելու յանձնառութեամբ: Կը բնակին Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ տեսչի հսկողութեան տակ: Վանքէն դուրս աշխատելու արտօնեալ չեն: Կը կատարեն միաբանութեան եւ Ժառ. վարժարանի զգեստուց լուացքի եւ կարի աշխատանքներ[34]:

Ենթադրելի է նաեւ, որ դեռեւս ԺԴ. դարից հաւատաւորները միանձնական կեանքի են նուիրուել Եկեղեցու կողմից սահմանուած որոշակի կարգով: Մասնաւորապէս, նման կարգի գոյութեան մասին է վկայում Երուսաղէմի Ս. Յակոբ վանքում 1358ին ընդօրինակուած *Հին Կտակարանի* յիշատակարանը, որտեղ խօսւում աշխարհից հրաժարուած եւ հաւատաւորութեան կարգ ստացած միանձնուհու մասին.

...եւ զհոգեւոր քո[յ]ր սոցա զՄեծխաթուն, որ բազում ժամանակս հրաժարեալ էր յաշխարհէ, եւ ստացեալ զկարգ հաւատաւորութեան, եւ էր սրբասնեալ եւ առաքինի, ողորմած ի տուրս, եւ սիրող աղքատաց եւ տնանգաց, եւ բարի խոստովանութեամբ փոխեցաւ առ Քրիստոս, եւ բարի յիշատակ եթող յաշխարհի. ըստ Աւետարանին, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանիք նորա յԵրուսաղէմ[35]:

Ինչպիսի եկեղեցական արարողութիւն է կատարուել ԺԴ. դարում հաւատաւորութեան կարգ ստացող կանանց համար՝ դժուար է ասել: Մեզ հասած տեղեկութիւնները խիստ սակաւ են ու ոչ-բաւարար այդ մասին որոշակի պատկերացում կազմելու համար:

Իր եզակիութեամբ առաւել ուշագրաւ է Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան ձեռագրատանը պահուող ԺԷ. դարի ՀՍ 2291/70 *Մաշտոց*ում ներառուած «Օրինութիւն Կուսանաց» կարգը[36]: Այն որոշակիօրէն վկայում է, որ առնուազն ԺԷ. դարում Երուսաղէմում հաւատաւորները կուսութեան ուխտ են ընդունել *Մաշտոց*ում նկարագրուած կարգով:

Ինչ վերաբերում նորագոյն ժամանակներին, ապա Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեանն իր զեկուցագրում նշում է միայն քօղի տուչութեան մասին՝ յաւելելով, որ մայրապետերը «*չունին որեւէ կարգ կամ ձեռնադրութիւն*»[37]:

Այս առումով արժէ արձանագրել ուշագրաւ եւս մէկ փաստ: Երուսաղէմը միակ վայրն է, որտեղ բոլոր ժամանակներում ապրել ու հայկական վանքերին իրենց ծառայութիւնն են մատուցել միանձնական կեանքին նուիրուած ուխտեալ կանայք: Հակառակ այս իրողութեան Ս. Յակոբեանց միաբանութիւնում ձեռնպահ են մնացել սարկաւագուհու ձեռնադրութիւնից, անգամ՝ ԺԹ. դարում, երբ Հայ Եկեղեցուն ոչ-խորթ այս ծիսակարգը կրկին տարածում էր գտել Հայ Եկեղեցու կուսանոցներում, առանձին դէպքերում նաեւ Կ. Պոլսում:

Այս մասին յայտնի է, հետեւեալ պատմութիւնը.-

Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց վանքի միանձնուհի Կատարինէ Ղորղանեանը 1850ականներին սուրբ վայրեր կատարած ուխտագնացութեան ընթացքում ցանկացել է իր սարկաւագական ձեռնադրութիւնը ստանալ Երուսաղէմում: Սակայն, «*Յովաննէս պատրիարք չէր համարձակած ձեռնադրել Կատարինէ օրիորդը՝ հակառակ նկատելով այդ բանը մեր եկեղեցական կանոններուն*»[38]:

Ուշադրութեան արժանի են նաեւ մայրապետերի ծառայութեանը վերաբերող վարչական բնոյթի կարգաւորումները, որոնք եւս արտացոլուած չեն միաբանութեան կանոնադրութեան մէջ:

Այսպէս, Ս. Հրեշտակապետացի մայրապետերը ղեկավարում էին տեսուչ վարդապետի կողմից: Միաժամանակ, ինչպէս կուսանոցներում ապրող կոյսերն ունեն իրենց միջից ընտրուած ղեկավարը՝ մայրապետը, այն-

պէս էլ Հրեշտակապետաց վանքի միանձնուհիներն իբրեւ գլուխ ունէին իրենցից ընտրուած տնտեսը: «*Ս. Հրեշտակապետի վանուց մէջ կը բնակին Մայրապետք եւ յաշխարհէ մեկուսացեալ հաւատաւոր կանայք, որոնք սուրբ Յակովբեայ միաբանից պիտոյիցը կը ծառայեն եւ խնամք կը տանին նոցա մայրաբար. ունին իւրեանց առանձին գլխաւոր մի իրենց մէջէն ընտրուած, որ Տնտես կ'անուանի: Դարձեալ եկեղեցին Տեսուչ վարդապետի մի ձեռօք կը կառավարուի*»[39] կարդում ենք Երուսաղէմի ուղեցոյցներից մեկում:

Մայրապետերի նման աստիճանակարգի մասին են վկայում նաեւ Երուսաղէմի հայկական գերեզմանոցներում ամփոփուած մայրապետերի տապանագիր արձանագրութիւններ: Դրանցից առանձնացնենք միայն մէկը՝ 16 տարեկանում մայրապետերի կարգն անցած, ապա տնտեսի պաշտօն ստանձնած Թուրֆանտա անուամբ մայրապետի տապանագիրը.

Թուրֆանտայ Կոյս Առաքելեան
Գասապացի գայ ի Սաղիմ,
Ցանկայ վարուց սուրբ կուսութեան,
Ի տասն եւ վեց տիս հասակին:
Մտեալ ի կարգ մայրապետաց,
Ապա կարգի տնտես եւ պետ,
Վարիչ խմբին իւր ընկերաց,
Փայլեալ վարուք ժիր եւ համեստ:
Եկեաց յաւուրս եօթն վեհից
Պատրիարքաց Սրբոյ Գահից,
Եւ ցվախճան իւր ձիգ կենաց
Վարեաց զպաշտօնն գործովք բարեաց[40]...:

Մայրապետերն, իբրեւ վանքի ծառայողներ, առանձնացել են նաեւ իրենց յատուկ հանդերձանքով: Առկայ աղբիւրների համաձայն՝ ժամանակի ընթացքում այն արտաքին փոփոխութիւնների է ենթարկուել՝ պահպանելով, սակայն, իր միատիպութիւնը:

Այսպէս, ԺԷ. դարի Հ^{մր} 2291/70 *Մաշտոց*ի լուսանցազարդում[41] պատկերուած են եպիսկոպոսից օրհնութիւն ստացող ծնրադիր կոյսեր՝ միանման սեւ հանդերձանքով. ճակատը պարուրող գլխաշոր եւ սքեմի նմանութեամբ վերարկու: Երուսաղէմի միանձնուհիների հանդերձանքը այլ կերպ է նկարագրում ԺԸ. դարի աղբիւրը՝ համեմատելով այն այլ վայրերի հայ կոյսերի հանդերձանքի հետ.

> Պարսկաստանի եւ քանի մը ա՛յլ վայրերու հայ կոյսերը կամ միանձնուհիները, ճիշտ նոյն ձեւով կը հագուին ինչ որ կնգուղաւոր վանականները. միայն մօրուքով կը զանազանուին իրարմէ: Մինչդեռ Երուսաղէմի եւ քանի մը ուրիշ վայրերու կոյսերը՝ փոխանակ կնգուղի, իրենց գլուխին շուրջ ունին կապտաւուն (իտլ. turchina) քօղ մը, որուն ծայրամասերը հաւասար կերպով կ'իջնեն կուրծքին եւ ուսերուն վրայ, ծնօտի տակ գնդասեղով մը հաստատուած: Կը կրեն նոյն գոյնով՝ կապտորակ տաբատներ, որոնք կ'իջնեն մինչեւ կրունկը[42]:

Առաւել պարզ նկարագրութիւն ունի Երուսաղէմի մայրապետերի հանդերձանքը նորագոյն ժամանակներում. «*Կը կրեն վերարկու եւ սեւ քօղ, որը կը փրուի պահպանիչի օրհնութեամբ*»[43]:

Վերջում յաւելենք, որ Ս. Հրեշտակապետաց վանքի մայրապետանոցն այսօր արդէն դատարկ է:

1944ին, ինչպէս նշում էր Կիւրեղ Ծ. վարդապետը, Երուսաղէմի Ս. Աթոռում մայրապետերի թիւը 15 էր: Իսկ վերջին մայրապետի մահազդը զետեղուած է 1989ի *Սիոն*ի վերջին համարում.

> 23 Դեկտ., Շաբաթ օր, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Ովստիս վերջին Մայրապետը՝ Տիրուհի Կարապետեան, Քուպէյպէի (Էմմաուս) ծերանոցին մէջ, ուր փոխադրուած էր քանի մը ամիսներ առաջ իր յառաջացեալ տարիքին եւ խարխլած առողջութեան համար:
>
> Ծնած է Պոլիս 1910ին եւ 1960ին մտած է ի շարս մայրապետաց Ս. Աթոռոյս[44]:

*Սիոն*ի նոյն համարում վերջին մայրապետի անունը կրկին հանդիպում է բարեպաշտ նուիրատուների ցանկում. «*Տիրուհի Մայրապետ Կարապետեանէ՝ Ս. Գերեզմանի համար ասեղնագործ ծածկոց մը եւ դրան ասեղնագործ վարագոյր մը*»[45]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հեղինէ Մկրտչեան, «Սուրբ Վայրերում Հայ Եկեղեցու Կուսանոցների Գոյութեան Հարցը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԹ.*, Պէյրութ, 2019, էջ 693-702:

[2] ԺԵ. դարում «մայրապետ» անուանումն արդէն իսկ գործածուել է, որի մասին վկայում է 1419ին Երուսաղէմի Ս. Յակոբ եկեղեցում ընդօրինակուած *Ճառընտիր*ի յիշատակագիրը. «*Այլ եւ ... մայրպետ ... շատ աշխատել է ի սպասաւորութիւն...*» (*Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. 1,* կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1966, էջ 40):

[3] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, *Ազգապատում, Հտր. 3*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5077:

[4] Ըստ եկեղեցական աւանդութեան՝ առաջին քրիստոնեայ թագաւորն է Հայ Եկեղեցու տօնելի սրբերից: Պատմագիտութեան մէջ Աբգարի հայ լինելու փաստը, որ հանդիպում է միայն Խորենացու մօտ, համարւում է վիճելի: Խորենացու պատմութիւնը հաւաստի է համարում Միքայէլ Վրդ. Չամչեանը (*Պատմութիւն Հայոց, Հտր. Ա.*, Վենետիկ, 1784, էջ 569-78): Ըստ Օրմանեանի՝ «*Աբգարին Հայոց թագաւոր լինելը արտաքին եւ ժամանակակից պատմութեան չի համապատասխաներ*» (*Ազգապատում, Հտր. Ա.*, Ս. Էջմիածին, 2001, էջ 4-6): Պատմաբան Բաբկէն Յարութիւնեանը եւս մերժում է Աբգարի հայ լինելը՝ նշելով, որ «*Լաբուբնայի Աբգարը եւ հայոց պատմահօր յիշատակած Աբգարը տարբեր անձինք են, իսկ նրանց նոյնացումը՝ լոկ Մովսէս Խորենացու սխալ եզրակացութեան արդիւնքը*» (*Քրիստոնեայ Հայաստան*, 2002: 22(138)-24(140), Նոյեմբեր Բ.-Դեկտեմբեր Բ., 2003:1(141)-3(143), Յունուար Ա.-Փետրուար Ա.:

[5] 1924ի *Արեւ*ում հրապարակուած հայ կաթոլիկ Սերովբէ Եպս. Դալաթեանի նամակում յայտնւում է, թէ ֆրանսիացի հնագէտ դը Սոլսին (de Saulcy) 1863-4ին Երուսաղէմում պեղումներ կատարելիս յայտնաբերել է Հեղինէ թագուհու գերեզմանը, որի եբրայերէն արձանագրութիւնը հաւաստում է Հեղինէի՝

Եդեսիայի հայոց Աբգար թագաւորի ամուսինը լինելու պատմութիւնը: Մեր կողմից յաւելենք, որ ֆրանսիացի հնագէտն իր հրապարակումներում չի նշում Աբգարի կամ Հեղինէի հայ լինելը: Նրա մի աշխատութիւնում միայն անդրադարձ կայ Խորենացու *Պատմութեանը*՝ կապուած Հեղինէ թագուհու շիրմի տեղագրութեան հետ (*Արեւ*, 1924, Մայիս 16, հմմտ.՝ *Պատմութիւն Կամ Ուղեցոյց Սրբազան Տեղեաց*, Երուսաղէմ, 1872, էջ 209-11. նաեւ՝ F. de Saulcy, *Voyage en Terre Sainte, Հտր. I*, 1865, էջ 138-42, 387-96. նաեւ՝ F. de Saulcy, *Recherches sur l'Emplacement Véritable du Tombeau d'Hélène, Reine d'Adiabène*, Paris, 1869):

[6] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիր եւ ներած.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 160: Հեղինէ թագուհու մասին տե՛ս նաեւ՝ Չամչեան, էջ 296, 589-91. նաեւ՝ Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի*, Երուսաղէմ, 2000, էջ 143-5, 1189-90:

[7] Իշխանուհու կրօնական կեանքին նուիրուելու եւ Երուսաղէմում թաղուած լինելու մասին է վկայում նաեւ Գանձասարի վանքի արձանագրութիւնը. «*...եւ խափել լուսամփին արեւելից՝ մայրն իմ կրօնաւորեալ չոգաւ յԵրուսաղէմ, երրորդ անգամ. եւ անդէն ի դրան Յարութեան խարազնազգեաց ճգնութեամբ, բազմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ եւ անդէն պահեցաւ*»: Այս արձանագրութիւնը հիմք ընդունելով՝ Աղուանից մետրոպոլիտ Բաղդասար Արք. Հասան Ջալալեանցը 1849ին նամակով դիմել է Երուսաղէմի հայոց Կիրակոս պատրիարքին՝ խնդրելով իրեն փոխանցել Երուսաղէմում պահպանուած որեւէ յիշատակագրութիւն (տապանագիր կամ այլ արձանագրութիւն): Սակայն սրբազանի հետաքրքրութեանը որեւէ գոհացում չի տրուել (Մկրտիչ Եպս. Աղաւնունի, *Միաբանք եւ Այցելուք Հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, 1829, էջ 181. հմմտ.՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Հտր. 5*, կազմ.՝ Ս. Բարխուդարեան, ԳԱ Հրատ., Երեւան, 1982, էջ 38. նաեւ՝ *Սիոն*, «Արձանագրութիւն Գանձասարայ Վանքի Եկեղեցւոյն», Երուսաղէմ, 1867 Փետրուար, էջ 27-28):

[8] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, Տպ. Օր. Ն. Աղանեանցի, 1909, էջ 254-5:

[9] Մարիամ թագուհու անուան շուրջ կան մի շարք տարակարծութիւններ: Չամչեանը Լեւոն Է.ի ամուսնութեան մասին գրում է. «*Եւ առեալ էր իւր կին՝ Մարիամ անուն յազգականութէ Լուդովիկոսի թագաւորին Հունգարիոյ*» (Միքայէլ Վ. Չամչեան, *Պատմութիւն Հայոց, Հտր. Գ.*, Վենետիկ, 1786, էջ 356): Ըստ Յովհաննէս Դարդէլի՝ Լեւոն Է.ն ամուսնացել է Կիպրոսի իշխանի դուստր Մարգարիտի հետ. «*Եւ եղեւ իբրեւ եւրես իշխանն Լեւոն զի էանց ժամանակն սահմանեալ ամուսնութեանն իւրոյ որ ի Մորէա, զի չէր նմա այլ եւս հնար գնալ ամուսնանալ ընդ փիկնոջն այնմիկ, էառ իւր ի կնութիւն զայրի ոմն փիկին ի Կիպրոսէ, որ անուանեալ կոչէր փիկին Մարգարիտ Սուասոն, դուստր Տեառն Յոհաննու Սուասոն, որ էր պարոն Կիպրոսի, յամի Տեառն 1369, յամսեանն Մայիսի*» (*Յովհաննու Դարդէլի Ժամանակագրութիւն Հայոց*, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 63): Կ. Բասմաճեանը առաւել հաւաստի է նկատում Դարդէլի պատմութիւնը. «*Լեւոնի կինը զուտ ֆրանսիացի էր, այսինքն՝ Սուասոնի (Ֆրանսա) ազնուական ցեղէն Ֆամագոստայի Յովհաննէս պայլին աղջիկը՝ Մարգարիտ, որուն առաջին ամուսինն եղած էր Humfroy de Scandelion*»: Բասմաճեանը նշում է թէ «*Մարիամ*՝

Կոստանդին Գ.ի կինն էր, որ շփոթուած է Մարգարտի հետ» (Կ. Յ. Բասմաճեան, *Լեւոն Ե Լուսինեան, Վերջին Թագաւոր Հայոց*, Պարիս, 1908, էջ 40, 53):

[10] Երուսաղէմի միաբան Սերովբէ Վրդ. Սամուէլեանը Բասմաճեանին ուղղած նամակում յայտնում է, որ «*1896-ին ս. Գլխադրի մատրան մէջ նորոգութիւններ կատարուած միջոցին երկու գերեզմաններ գտնուեցան, երկուքն ալ առանց յիշատակարանի, որոնք կը կարծուին Մարիամի եւ Ֆիմիի գերեզմաններն ըլլալ*»: Բասմաճեանը հաւանական համարելով այդ ենթադրութիւնը, վկայակոչում է Մարտիրոս Ղրիմեցուն՝ «*Թաղի ընդ սեամբ սուրբ տաճարին, Հայոց ազգի սուրբ աթոռին*» (Բասմաճեան, էջ 57-58):

[11] Սաւալանեանց, էջ 526-27. հմմտ.՝ Չամչեան, *Պատմութիւն, Հտր. Գ.*, էջ 364:

[12] Հեղինէ Մկրտչեան, «Հայկական Ձեռագրերի Յիշատակարանները Կանանց Մենաստանների եւ Կուսակրօն Կանանց Վերաբերեալ», *Էջմիածին*, 2012:ԺԲ., 2013:Բ.:

[13] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. 2*, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 79:

[14] *ԺԴ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, կազմ.՝ Լ. Խաչիկեան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1950, էջ 168-69:

[15] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. 6*, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 261:

[16] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. 1*, կազմ.՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1966, էջ10:

[17] Նոյն, էջ 33:

[18] Նոյն, էջ 39:

[19] *ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Հտր. 1*, կազմ.՝ Լ. Խաչիկեան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1955, էջ 325:

[20] Նոյն, էջ 300. նաեւ՝ Մկրտչեան, «Հայկական Ձեռագրերի», էջ 105:

[21] Մկրտչեան, «Սուրբ Վայրերում», էջ 696-7:

[22] *Գիրք Պատմութեան Սբ եւ Մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս, եւ Սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի*, Կ.Պոլիս, Տպ. Մայր Դպրատան, 1807, էջ 239:

[23] Մատթէոս Ուռհայեցի, *Պատմութիւն*, Երուսաղէմ, 1869, էջ 337-8:

[24] Նոյն, էջ 338:

[25] *Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն*, ի լոյս ընծայեաց Ք.Պ, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 76:

[26] Վ. Հացունի, *Հայուհին Պատմութեան Առջեւ*, Հեղինակային Հրատ., Երեւան, 2007, էջ 128-29:

[27] *Կանոնագիրք Հայոց, Հտր. Ա.*, աշխատ.՝ Վազգէն Յակոբեան, ԳԱ Հրատ., Երեւան, 1964, էջ 489:

[28] Վարդան Հացունի, «Կուսաստանք Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 75:

[29] Նոյն, էջ 74-5:

[30] *ԺԵ. Հայերէն*, էջ 561-2:

[31] Հացունի, «Կուսաստանք», էջ 74-5:

[32] *Կանոն Միաբանական Ուխտին Առաքելական Աթոռոյ Սրբոց Յակովբեանց Ի Սուրբ Երուսաղէմ*, Երուսաղէմ, 1939, էջ 2: Մեր ձեռքի տակ է նաեւ կանոնադրութեան 1887ի հրատարակութիւնը:

[33] 1908ին Մաղաքիա Արք. Օրմանեանը ներկայացրել է կանոնադրութեան վերաբերեալ նոր առաջարկութիւններ՝ նպատակայարմար տեսնելով «*աշխատաւորներու եւ մայրապետերու վիճակը առանձին կանոնագիրով կարգադրել*» (Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում, Հտր. 3*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5712):

[34] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք Բ., Գէորգ Բ Չորէքչէան*, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 1999, էջ 230:

[35] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. 4*, կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 241:

[36] Երուսաղէմի մատենադարան, ձեռ. Հ՝ր 2291/70 «Մաշտոց», էջ 128բ-130ա: Տե՛ս նաեւ՝ Հեղինէ Մկրտչեան, «Կանանց Կուսութեան Ուխտի Նորայայտ Կարգ Երուսաղէմի Ժէ. Դարի Մաշտոցում», *Էջմիածին*, 2015:Ա., էջ 34-43:

[37] *Վաւերագրեր*, էջ 230:

[38] Սաւալանեանց, էջ 1131-2:

[39] *Պատմութիւն Կամ*, էջ 113. հմմտ.՝ *Համառօտ Պատմութիւն Կամ Ուղեցոյց Սրբազան Տեղեաց*, Երուսաղէմ, 1888, էջ 155:

[40] Սաւալանեանց, էջ 1287:

[41] Հ՝ր 2291/70 Մաշտոց, էջ 129բ., հմմտ., *Էջմիածին*, 2015:Ա., գունաւոր ներդիր:

[42] Հայր Տաճատ Եարտըմեան, *Նիւթեր Հայ Վանականութեան Պատմութեան (ԺԴ.-ԺԷ. Դար)*, Վենետիկ-Ս. Ղազար, 1989, էջ 26:

[43] *Վաւերագրեր*, էջ 230:

[44] Մահազդ «Տխրունի» բաժնում, *Սիոն*, Հոկտ.-Նոյեմ.-Դեկտ., 1989, էջ 242:

[45] Նոյն:

NUNS OF THE ARMENIAN CONGREGATION OF ST. JAMES AND THEIR SERVICE
(Summary)

HEGHINE MKRTCHYAN
heghmk@yahoo.com

There is a great deal of evidence about the existence of Armenian nuns in the holy lands. Their presence goes back several centuries and continues till the end of the 20th century. The earliest evidence known concerning the Armenian nuns of Jerusalem is found in manuscripts dating back to the 14th century. In the charter of the St. James Congregation of Jerusalem, adopted in the late-19th century, nuns are considered as Congregation members. Nonetheless, living in the monastery of the Holy Archangels, their by-laws were not typical to the rules of convents.

Indeed, for the last six centuries nuns have served the Armenian monks of Jerusalem, taking care of their daily needs. The nuns' service, however, went beyond that as they also undertook the post of sacristan of the Tomb of the Virgin Mary.

ARMENIAN GENOCIDE SURVIVORS IN DAMASCUS AT THE END OF WORLD WAR I

VAHRAM L. SHEMMASSIAN
vahram.shemmassian@csun.edu

For Armenian deportees in the Ottoman Empire during World War I, Damascus became both a transition point for further banishment to the south (Jabal Druze, Hauran, Transjordan, Palestine) as well as a final destination.[1] Those who somehow managed to stay in Damascus, the headquarters of Jemal Pasha, commander of the Ottoman IV Army and governor of Greater Syria, led lives that reflected Jemal Pasha's ambiguous role in the Genocide.[2] On the one hand, many widows were employed in military factories, where in some cases they constituted the only ethnicity.[3] As many as 1500 Armenian children and widows manufactured woolen articles, textiles, embroideries, carpets, and rugs in an orphanage established by the government.[4] Armenian tailors in all ateliers made military uniforms.[5] On the other hand, about 500 parentless boys living outside the orphanage and apprenticed in military workshops were circumcised and raised as Muslims. In addition, some 200 boys and girls were gathered and dispatched to an orphanage in Aintoura, Lebanon, to undergo a process of forced Turkification.[6] Other females were sold in Damascene open slave markets. For example, a British agent, on April 15, 1916, witnessed Turkish soldiers "pushing in front of them 300 or 400 naked Armenian girls and women. These were put up for auction and the whole lot disposed of, some for 2, 3 or 4 francs. Only Mohammedans were allowed to buy. The salesmen kept on exclaiming: 'Rejoice, oh ye faithful, in the shame of the Christians'."[7]

Be that as it may, the adult male deportees, when not rounded up and sent to the battlefronts or exiled further, engaged in various businesses, even gaining prominence in some sectors and/or carving out a disproportionate share of the market. In the central souks of Hamidiyé and Marji, Armenians from Gesaria/Kayseri sold sausage and cured meat like *sujuk* and *basterma*, and those from Macedonia produced their particular cheese. Merchants in the Saman Bazar traded wheat and flour wholesale. Shoemakers, employing as many as twenty workers, satisfied most needs of the local population. Antique dealers competed shrewdly in the business and gained the numerical upper hand, for which reasons their sector became known as Bazar al-Arman. Mihran Hadikozian, a photographer from Rodosto/Tekirdagh, Edirne province, took pictures with an aesthetic touch of high ranking Ottoman officers and ordinary folks, thereby becoming the most successful among his peers. Contractor Apkar Balekjian, also from Rodosto, oversaw the

construction of military installations. A native of Adana was in charge of procuring wood for the running of trains. An Armenian ran a pharmacy. Two doctors excelled in their profession.[8]

There were also among the deportees in Damascus clergymen of all ranks and denominations uprooted from various parts of the Ottoman Empire. Catholicos Saghag II Khabayan of Cilicia, who had been banished to Jerusalem in fall 1915, was once again exiled, to Damascus, as the British army advanced in Palestine to capture the Holy City in late 1917. Archbishop Maghakia Ormanian, a former Patriarch of Constantinople (1896-1908), who in 1914 was tasked with effecting changes within the Patriarchate of Jerusalem, was similarly transferred to Damascus.[9] Here, he continued to pursue his intellectual-scholarly endeavors by writing a book.[10] In the same vein, one of the Apostolic clerics, using the pseudonym of Armyov Bedlevma Fatimi, from 1916-17 published an underground paper titled *Portzank* (misfortune, tribulation). It was characterized as a "Moral, Literary, Scientific, and Satirical Bimonthly Journal." Significantly, nine issues covered the new Regulation imposed by the Ottoman government on the majority Armenian Apostolic community during the Genocide, curtailing by about two-thirds the rights enshrined in the Armenian National Constitution that had governed the community internally since the early 1860s.[11]

Clandestine political activity also took place. Encouraged by the Arab resistance to Ottoman rule, and supported by Arab notables, some Armenian youths formed a chapter of the Armenian Revolutionary Federation (ARF/*Hay Heghapokhagan Tashnagtsutiun*) in Damascus with affiliates in the southern, mainly Druze, territories. The secretive group tried to establish contact with affiliates abroad, but failed. However, it succeeded in setting up an underground communications network as well as smuggling arms into Damascus undetected. Such were matters, when the government on March 1, 1918, began to round up Armenian men.[12] In any case, seven months later the Arab and British armies would occupy Damascus and bring an end to Ottoman rule.

SURVIVORS

The capture of Damascus by Arab and British forces on September 30, 1918, heralded the beginning of a new era of freedom and hope for the Armenian deportees who had survived the Genocide in the general vicinity.[13] Their exact number is impossible to determine given their ebb and flow in Damascus, dispersion, and captivity among Muslims. A census taken sometime in late 1918 or 1919 revealed 17,775 persons, who hailed from across Ottoman Asia Minor and the European periphery, especially the provinces of Adana and Aleppo (see Table 1). Other estimates provide larger

numbers. For example, according to Lieut. Col. E. St. John Ward, Acting-Commissioner of American Red Cross (ARC) operations in Egypt and Palestine, there were 25,000-plus Armenian refugees living in Damascus at the end of November 1918. Most "have become independent and have settled temporarily in the city." However, "a very large number, estimated at 5,000, are in straightened circumstances. Many of these are widows and orphans; others are those who are unemployed" due to the closure of factories previously run by the Turkish military and the inability of the nascent Arab government to restart industries.[14] Another obstacle to finding jobs was the lack of knowledge of Arabic among most refugees.[15] Therefore, "A little cash to tide them over" could certainly be of help until the arrival of anticipated remittances from relatives in America and elsewhere.[16] But difficulty of communication with kin and friends living abroad caused stoppage of the money flow.[17]

Referring to more than 2,000 Armenians who had arrived from Hauran and other outlying districts to the southeast of Damascus, Ward on November 30 intimated the following:

> They were well nourished except in cases of those who had suffered from illness, but they are clad in rags, have no homes to which they could go and no funds to secure food. They have been supporting themselves in the Hauran and Jebel Druze by working for factories for the farmers there, but fearing to remain longer and desiring to get back to their homes, they have flocked into Damascus. Many of them regret that they have left their work. Amongst them are many widows and several hundred children. It was a most appealing sight as we saw them huddled together in rough sheds or gathered together in sun, trying to keep warm.[18]

Another concern was travel safety. As survivors eager to go to Damascus began to surface in the countryside, Arabs in certain districts mistreated them so they had to run away from one place to another. Winter storms would add to their misery.[19]

ARMENIANS INVOLVED IN RELIEF

The daunting task of sheltering, feeding and providing other relief to the Genocide survivors in Damascus fell on the shoulders of several institutions, organizations, and authorities. The Armenians were among the first to get involved in this humanitarian campaign. On October 3, 1918, that is, just three days after the liberation of the Syrian capital, twenty concerned Armenians met to draw up a blueprint for action. By a secret ballot, they elected a nine-member Temporary National Committee, whose immediate goal was to establish contact with Armenians abroad in a bid to seek emergency relief, concurrently helping the poor and the sick and boosting the morale of refugees in general. But the committee from the outset faced three

main difficulties: limited means of communication with the outside world, a weak local economy, and the time-consuming nature of surveying scattered refugees.[20] In order to check growing unrest among the latter, on October 20 the committee convened a general assembly in the St. Sarkis Armenian church attended by representatives of some eighty localities in the Ottoman Empire from which they and their constituencies had been deported. Again by a secret ballot, the conclave elected a new nine-member committee, whose tenure, like its predecessor's, was short-lived.[21] Finally, on the evening of December 1, a special meeting held at the Prelacy in the presence of its Administrative Council, the Youth Association, and the Cilicia Association empowered Rupen Herian, a member of the Egyptian Armenian Delegation to Syria then in town on a fact-finding and relief disbursement mission, to designate a chapter of the Egypt-based Armenian National Union (ANU) for Damascus and environs. Composed of seven members and chaired by Antranig Genjian, this body would henceforth oversee refugee affairs in tandem with other involved agencies.[22]

The Egyptian Armenian Delegation to Syria (EADS) was created solely for the purpose of aiding survivors in Syria. It came into existence when the ANU of Egypt decided to delegate its relief work among Armenian remnants in Syria to two charitable associations—the Egyptian Armenian Relief and the United Orphan Care—that functioned under the aegis of the AGBU. On November 15, 1918, a Mixed Council representing the latter three associations formed the EADS composed of three members, namely, Garabed Seferian, Mgrdich Yepremian, and Rupen Herian.[23]

Although managing the allocated funds and refugees was left to the EADS's discretion, it had to act according to a fifteen-point guideline. Points 1, 2, and 4 instructed the EADS to visit all those places in Syria where Armenians were to be found, gather dispersed individuals into the larger, preferably coastal cities, and take their census. Points 3 and 7-9 underscored the importance of reclaiming Armenians forcibly Islamized. Armenian children raised in Muslim families and orphanages, in particular, should be given special attention and placed in Armenian orphanages with the assistance of the ARC. Points 5 and 6 asked for the placement of jobless refugees in factories and/or the creation of workshops and other employment opportunities, all along seeking the cooperation and help of the Syrian government. Point 10 recommended the formation of local bodies for the implementation of the EADS's decisions and directives. Point 11 allowed for the three members to travel and work separately if necessary, provided they kept each other posted. Point 15 clarified that no single member could represent any one of the above-mentioned three associations, but that all three members represented those associations equally. Point 12 suggested

that a central city—such as Beirut as the most suitable one—be selected as headquarters, but the delegation was free to choose any site it deemed fit. Point 13 referred to an initial allocation of 5000 Egyptian pounds, with 3000 pounds given as startup money. Point 14 asked the delegation to submit its report to the Mixed Council, whose president, Prelate Torkom Kushakian of Egypt, would call for meetings and direct the relief effort.[24]

The EADS members embarked on their mission separately, with Herian arriving in Beirut on November 17, 1918, and Yepremian and Seferian following suit on December 10.[25] In the interim, on November 26, Boghos Nubar, head of the Armenian National Delegation in Paris since 1912, asked British Foreign Secretary Arthur James Balfour to facilitate the EADS' task through the good offices of the British civilian and military authorities in Egypt and Syria.[26] The Armenian team traveled to Damascus on December 17. On the 20th, Herian left for Homs, Hama, and Aleppo together with Lieut. Lord Fielding, a British officer in charge of the Damascus Armenian refugee camp, to organize similar shelters.[27] In turn, on January 11, 1919, Seferian went to the Lebanese town of Zahle en route to Homs, Hama, and Aleppo. Yepremian stayed put in Damascus. The EADS wrapped up its mission on March 4. In all, it submitted six reports and a financial statement to the Mixed Council. The second report covered activities in Damascus and surroundings.[28]

For its part, the AGBU played a major role in conducting refugee affairs in Damascus and elsewhere in the region. An AGBU chapter existed in Damascus before WWI, but it had ceased to function during the deportations.[29] As soon as the conflagration ended, the Union's headquarters in Cairo hastened to reconstitute its erstwhile branches, including that of Damascus. Accordingly, former leading members received instructions, dated November 4, 1918, to "immediately" revive the chapter in order for relief sent from Egypt to be dispersed among the refugees by trustworthy hands. The "only and absolute condition" was to treat everyone equitably without discrimination whatsoever against individuals, factions and or denominations.[30] Unrelated directly to this order, a group of twenty-one acquaintances from Gesaria/Kayseri, some of whom were former AGBU members, met for some business on December 16, but found the occasion appropriate to also explore the possibility of having an AGBU chapter. This "foundational" gathering, however, did not establish a chapter right away; rather, it decided to recruit prospective adherents from among Damascene Armenians and refugees and only then organize a chapter. In order to advertise their plan, on the following day, November 17, the group posted an invitation in the St. Sarkis courtyard. That day coincided with the arrival of the EADS in Damascus. In the evening, during an assembly called to explain their mission, all three EADS members stated in unison that a new AGBU

chapter in Damascus would cause a rift and huge discord between the ANU and AGBU in Egypt. Besides, repatriation being imminent, a local AGBU chapter would be meaningless. These assertions put a halt to the formation of a chapter, and the announcement posted at the church "disappeared" after a few days.[31] In response, Cairo singled out Herian to express its frustration against his "empty and unfounded" claims, rescinded its confidence in him, and invalidated his EADS membership.[32]

The above setback proved temporary. The AGBU headquarters in Cairo took several measures to accelerate the realization of a chapter. On December 23, 1918, it sent organizational materials (such as seal, letterheads, receipt books) to Damascus for official use;[33] on January 10, 1919, delivered 1000 Egyptian pounds earmarked for miscellaneous refugee needs;[34] and by February delegated Hovhannes Terzibashian to coordinate and oversee efforts in consultation with former members.[35] At long last, sympathizers on Tuesday, February 11, assembled at the Prelacy for a consultative meeting and elected a ten-member AGBU executive committee, including the Apostolic Bishop Bedros Sarajian and the Catholic Bishop Krikor Bahabanian, who served as honorary co-presidents. Had the Protestant Armenians had a pastor or a prominent member in town, he would definitely have been part of the leadership.[36] Although certain members objected to the fact that the committee preceded the chapter itself, Terzibashian found no impropriety in the order under the circumstances. Similarly, a member from the ANU was added to the roster (making it eleven) during a special meeting held on the following day, February 12, for the sake of maintaining harmony among the parties involved.[37] Considering the new addition to be a "provocateur," in a confidential letter to Cairo, Terzibashian asked that this second arrangement be annulled,[38] but Cairo declined to reverse the decision of the assemblage.[39] In the absence of an actual AGBU chapter during the period under study, the executive committee elected on February 11-12 carried out the humanitarian work entrusted to it. To be sure, a chapter did materialize in Damascus, but two years later, on April 3, 1921.[40]

The AGBU, both in Cairo and in Damascus, wanted to carry out its mission separate from and independent of the ANU. The fact that the same people from the two organizations controlled both the political and humanitarian aspects of refugee life was a source of confusion and consternation among many Armenians.[41] Hence, it would be proper to divide responsibilities between the AGBU and the ANU by focusing on philanthropy and politics, respectively. "Our aim was not to harm the Armenian National Union in any way," the AGBU headquarters explained, because its "existence today is a national imperative according to an indisputable slogan."[42] But, the headquarters continued, people in Damascus no longer trusted the ANU

because it mishandled relief.[43] The AGBU accordingly wanted to take charge of the women's rescue shelter and the pharmacy.[44]

The AGBU did not consider the ANU as the only problem; it tried to deal with and even eliminate any other association perceived as competition or an adversary. For instance, when a few individuals, dissatisfied with the way relief and repatriation were handled, allegedly tried to form a parallel AGBU to use the real one as "a tool to topple the ANU," Cairo was warned of their motives,[45] but no such entity ever materialized anyway. The Damascus AGBU also tried to weaken, if not neutralize, two other organizations. One was the Armenian Women's Red Cross, which the AGBU regarded as a "nominal" women's association and "nothing else," trying "to do something" as far as the clinic and pharmacy were concerned.[46] But in order to satisfy the ladies' "ambition," the AGBU proposed to designate the two enterprises separately, one as Red Cross Clinic and one as AGBU Pharmacy.[47] The other group was the Araradian Union. In the eyes of the AGBU, it organized lectures and operated a library that were "sterile and futile" and not useful even one iota. Their only purpose, it was further asserted, was to have a say in the ANU and form a "benevolent union to benefit from its finances."[48] In fact, they purportedly carried out activity akin to a "political party" under the guise of beneficence, determined to "sidetrack the efforts of the AGBU headquarters" in Egypt with catchwords such as constitution, law, and principle.[49] The Damascus AGBU "succeeded to almost silence" the Araradian Union.[50]

Whatever the internal rivalries and or conflicts, the AGBU center in Cairo allocated 153,483 Egyptian piasters (1534.83 pounds) for Damascus for the period March 1-August 13, 1919, of which 54,444.50 piasters was still expendable at the closing date. Some 15,225 piasters was spent on sundries and the bulk of 83,813.5 piasters on the following: Women's Shelter, 39,980.75; hospital, 22,980.50; clothing, 12,561; pharmacy, 6072; aid to the needy, 1425; clinic, 794.25.[51] Therefore, the rescue and shelter of captive women received priority, followed by the sick, clothing, and so on. Needless to say, these figures did not reflect earlier remittances.

The Armenian Apostolic Church, in turn, contributed to the welfare of its uprooted flock in various capacities. One such input involved the determination of ethnicity among Ottoman troops retreating through Damascus at the end of the war. During the process of rounding up Turkish soldiers, the Arab government asked the Armenian Prelacy to identify coreligionists to secure their freedom. Accordingly, the Prelacy within a month and a half following the liberation of Damascus issued some 5000 identification papers to such cases, including many Greeks.[52] Once freed, more than 900 Armenian soldiers enlisted in the French *Légion d'Orient* (later called *Légion Arménienne*). Most left town on October 28 after having

received the blessing of Sahag II in St. Sarkis the previous day amidst throngs of well-wishing refugees.[53] Others joined the Arab forces charged with the security of the Bab Sharqi barracks and Damascus in general,[54] thereby augmenting the number of Armenians wearing Syrian uniform in yet another military unit—Amir Faisal's volunteer army that had occupied the capital.[55]

Assuming a leadership role in conjunction with other organizations and prominent laymen, the Church also got involved in political activity in pursuit of Armenian national aspirations. Sometime in November 1918, on orders from Sahag II, Bishop Sarajian formed and chaired an ad hoc committee consisting of the Apostolic Bishop Khachadurian, the Catholic Bishop Bahabanian, and seven other members, whose sole agenda was to organize a public rally.[56] The rally would demand from the victorious Allies the realization of an integral Armenia including Cilicia, their immediate occupation by Armenian forces with Allied military backing, and compensation for the deportees.[57] With permission from the district's Arab governor, and under the watchful eyes of the police and Armenian soldiers in the Arab army deployed to maintain order, the demonstration took place following mass on Sunday, November 24, at a rented public park with the participation of more than 3000 refugees.[58] Four designated speakers took the podium one after the other, a resolution signed by Sahag II in the name of Armenians in Damascus was read, Armenian children sang patriotic songs intermittently, and Captain Mercier, the French liaison officer, concluded the event with a speech of his own. He subsequently wired the resolution-petition to the President of the United States, Woodrow Wilson, Prime Minister of Great Britain, David Lloyd George, Prime Minister of France, Georges Clemenceau, and Foreign Minister of Italy, Sidney Sonnino, as well as Boghos Nubar and the ANU in Egypt.[59]

Other Armenians engaged in cultural and educational activities to enlighten the refugees and boost their morale. A certain Youth Association, for example, formed a Miss' Choir and operated a school for boys kept afloat thanks to financial support from the ANU.[60] Similarly, the Youth Association on Sunday, November 10, 1918, co-organized together with the Armenian Women's Red Cross and an ad hoc AGBU group a commemorative event for the victims of the Genocide in the Damascus cemetery. The "stage of death" (*mahapem*) was decorated with symbolic black boxes, and Armenian and Syrian flags, a wreath, and embroidered articles were placed on a pile of earth akin to a tomb. Present were representatives of the Syrian (Sharifian) government, British and French Armenophiles, and the Greek and Catholic religious leaders. Prelate Yeghishe Chilingirian celebrated mass, Sahag II delivered a speech, and Capt. Mercier read a message. Lieut. Lord Fielding was too consumed with emotion to be able to speak. Mournful Armenian

refugees assembled on the occasion were uplifted and encouraged. Later, in the Armenian Prelacy, a representative of the Greek Patriarch commended the Armenians for having crossed "the sea of blood" without complaint, that is, with dignity.[61]

Another voluntary group, the Araradian Union (mentioned above), "awakened the taste of Armenian life" having among its ranks musician brothers surnamed Mesrobian with their band and theatre.[62] It also organized lectures and picnics, as well as raised 40 Egyptian pounds in support of the famed musicologist Gomidas Vartabed, a deeply traumatized Genocide survivor.[63] Last but not least, permission was obtained from the local government to publish an Armenian newspaper, titled *Hay Giank* (Armenian Life), provided it appeared in Armenian accompanied by an exact Arabic rendition, a condition that could not be met because of the double expense that the project would thus incur and because there was not anyone bilingual enough to assume editorship.[64]

NON-ARMENIANS INVOLVED IN RELIEF

Armenian organizations were not the only agencies concerned with the plight of survivors. Amir Faysal, the new ruler of Syria, held the Armenians in high regard and treated them kindly. In fact, as the Arab army marched to capture Damascus, he extended relief, protection, and free train transport to many Armenian survivors heading to the Syrian capital.[65] During celebratory events marking liberation from Ottoman hegemony, he also invited Christian religious leaders including the Armenians, on other occasions visited the Armenian Prelacy, and hosted Sahag II several times, all the while exchanging pleasantries and underscoring their common fate under the cruel Ottoman yoke.[66] Amir Faysal also provided space to house refugees and issued orders for the release of Armenian women and children held among Arabs as wartime spoils (see below).

The British, with their military presence in the region, confronted the Armenian refugee issue from day one. The Army Council, it was reported, "consider the General Officers Commanding-in-Chief in Egypt and Mesopotamia can be relied on to do all that is possible from local resources for the relief of Armenians." Generals Edmund Allenby and William Marshall were accordingly notified "on the subject and that the matter will continue to be borne in mind and receive all possible attention by those most competent to deal with the question on the spot [in Syria, Mesopotamia and Asiatic Turkey]."[67] In turn, Sir Mark Sykes, Foreign Office expert on the Middle East, offered his "appreciation of [the] Armenian situation seen by commander-in-chief" as follows: first, "to feed and employ Armenians already concentrated"; second, to collect those "who are scattered about the

country," place them in "concentration camps" under a capable organizer and "strict discipline," provide them with employment, and open primary schools; third, "the camp commandant should arrange that all neighboring vagrant or isolated Armenians should be brought into camps."[68] But a Foreign Office insider thought that these recommendations ought to be handled by the Eastern Committee for being too "far reaching" and involving multiple "issues over which we have no control." Besides, to what extent would the British military authorities support such an enormous undertaking?[69]

Regardless of the prevalent uncertainty, the British representation in Damascus received 500 Egyptian (?) pounds from their headquarters in Jerusalem for refugee needs. When the ARC opened its Damascus office in January 1919, the British transferred 192.500 unexpended pounds from that account to the ARC.[70] Also by early January 1919, the British government was "grappling with the situation more energetically but they have no special fund reserved for Civilian relief. At present they have secured permission from the War Office to supply rations to the Armenian refugees but this is an extraordinary arrangement and can not be continued indefinitely."[71] By March 1, however, the British had been able to allocate £25,000 per month for the distribution of relief.[72] Besides the military, Dr. William A. Kennedy, on behalf of the Lord Mayor of London's Armenian Refugee Relief Committee, donated 500 Egyptian pounds earmarked for Armenian women rescued—and still to be rescued—from Muslim homes.[73]

The United States became involved in mitigating the pain of Armenian survivors in Syria, initially mainly through the ARC, which received urgent calls for help. A certain Armenian surnamed Kashisian, for example, on November 5, 1918, cabled to the ARC the following: "About 25 to 30 thousand armenian [sic] refugees in Damascus including 5 to 7 thousand destitute/very many sick/industrial relief work weaving etc. in which refugees are experts greatly needed/also blankets clothing drugs/Armenian Societies Cairo also informed."[74] Amir Faysal, himself, in "a long interview" with Ward was "very desirous" that the ARC assist greatly in the relief work.[75] Ward, for his part, wrote to James Barton on December 4, 1918:

> The situation in Palestine, appealing as it is, does not draw upon our compassion as does that of the Syrians in the Beirut and Lebanon regions and the Armenian refugees in Damascus, Hamath, Homs and Aleppo.
>
> ... It is going to be difficult to care for them in Damascus this winter unless generous America responds to the appeal....
>
> If they can be tided over this winter I feel confident that many thousands of refugees will be saved and the remnant of the Armenian race will take root again and grow up making a new nation of which they may well be proud.... Lack of assurances from Washington will not allow us to proceed with the work.... Major

[Stephen] Trowbridge is eager to organize and develop the work in Northern Syria and we have another most capable officer in Captain Cleland who is eager for the work in Damascus.[76]

[13] Ծնուել է Ստեփանաւանում (նախկին Ջալալ Օղլի) 1899ին: 1914ին աւարտել է Թիֆլիսի 3րդ արական գիմնազիան: Նոյն թուականին ընդունուել է Թիֆլիսի եռնկերական զինուորական դպրոցը: 1917ին փոխադրուել է 5րդ հայկական հրաձգային գունդ: Որպէս 5րդ հայկական մահապարտների գնդի առաջին գումարտակի հրամանատար մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին եւ յաղթանակից երկու օր առաջ հերոսի մահով զոհուել 25 տարեկան հասակում:

[14] Ծնուել է 1894ին Ելիզաւէտպոլի նահանգի Գանձակ քաղաքում (այժմ՝ Ադրբեջանի Հանրապետութիւն, Գեանջա): 1914-15՝ սովորել է Մոսկուայի Համալսարանում, ապա՝ Խարկովի նահանգի Չուգուն քաղաքի ռազմական դպրոցում՝ ստանալով հետեւակի կրտսեր սպայի զինուորական աստիճան: 1915ին անցել է զինուորական ծառայութեան: Սարդարապատի ճակատամարտից յետոյ աշխատել է *Ժողովուրդ* թերթի տպարանում: Յեղափոխական գործունէութեան համար բանտարկուել է: Ազատ արձակուելուց յետոյ մեկնել է Բաթում: 1919ին միքանի ընկերների հետ մեկնել է Փարիզ, աշխատանքի: Մահացել է 1982ին, Երեւանում:

[15] Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների թւում աչքի է ընկել ախալքալաքցի երիտասարդ գնդապետ Կարօ Նազարէթի Հասան-Փաշայեանը՝ ծնուած 1896ին: Դեռեւս 1915-17ի կովկասեան ճակատի կռիւների ընթացքում նա արդէն հռչակուել է որպէս խիզախ եւ անվեհեր հրամանատար՝ յաղթանակով պսակել բոլոր մարտերը...: Նա շատ արագ կարգի է բերում իր գունդը եւ մասնակցում Սարդարապատի ճակատամարտին: Ընդհանուր յարձակման ժամանակ նրա զօրքերը նոյնպէս հարուածում են թշնամու աջ թեւին: Մայիսի 26ի պատմական յարձակումն աւարտւում է թուրքերի կատարեալ պարտութեամբ: Նոյն օրուայ երեկոյեան Հասան-Փաշայեանի զօրքերը մինչեւ Մաստարա հետապնդում են խուճապահար թուրքերին եւ հսկայական կորուստներ պատճառում: Նա մեծ համբաւ է ունեցել նաեւ Սովետական Հայաստանի նորակազմ բանակում:

[16] Արսէն Սարգսեանի եղբայրը՝ Սարդարապատի ճակատամարտի 5րդ գնդի առաջին գումարտակի կապի վաշտի հրամանատար Գէորգ Սարգսեանը իր յուշերում նշում է, որ ստանալով Գէորգ Ե. կաթողիկոսի թոյլտուութիւնը, Ա. Սարգսեանի աճիւնը յուղարկաւորել է Ս. Գայիանէ վանքի հիւսիսային մուտքի դիմաց: Տարիներ անց, ստանալով Վազգէն Ա. կաթողիկոսի թոյլտուութիւնը, Արսէնի գերեզմանի վրայ դրել է տապանաքար: Ս. Գայիանէ եկեղեցու բակում են թաղուած Դանիէլ-բէկ Փիրումեանը, Չաւէն Մահտեսի Բաբայեանը, Սմբատ Բորոյեանը (Մախլուտո), Սամսոն Տէր-Պօղոսեանը (Խենթ): 2013ից, ՀԱԱՊՊԱՄի նախաձեռնութեամբ, Ս. Գայիանէ եկեղեցում Մայիսին տեղի է ունենում հերոսներին նուիրուած պատարագ եւ խնկարկման, ծաղկեպսակների զետեղման արարողութիւն նրանց շիրիմներին:

[17] Ծնուել է Երեւանի նահանգի Սուրմալու գաւառի Իգդիր քաղաքում: Նախնական կրթութիւնը ստացել է Իգդիրի ռուսական վարժարանում, այնուհետեւ՝ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: 1913-14՝ աւարտել է Թիֆլիսի առեւտրական դպրոցը, այնուհետեւ զօրակոչուել բանակ: Մասնակցել է Ա. Համաշխարհային պատերազմին: Մահացել է 1920ին:

[18] Նամակը թանգարանին է նուիրել ԵՊՀ Ընդհանուր Լեզուաբանութեան Ամբիոնի վարիչ Վարդան Պետրոսեանը՝ 2015 Փետրուարի 2ին:

[19] «Ղարաքիլիսայի անկման օրից սկսած՝ անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Ղարաքիլիսայի պատերազմի ժամանակ նա՝ խոշոր ուժերով՝ մնաց էնքան մօտիկ՝ Դսեղ նստած, մինչդեռ եթէ օգնութեան հասնէր Դուալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կ'ունենար: Այո՛, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթէ Անդրանիկը Լօռու կողմից, Դուալից օգնութեան հասնէր՝ պատերազմը անկասկած ուրիշ ելք կ'ունենար, սակայն բոլոր խօսողները մի բան չգիտեն, որ հենց էդպէս էլ ծրագրած էր եւ կատարուելու վրայ էր, երբ զինուորական բարձր հրամանատարութիւնից հրահանգ եկաւ Անդրանիկին՝ մնալ Դսեղ եւ պաշտպանել երկաթուղու գիծը: Դսեղից տրուած տեղեկութեան հետեւանքով մինչեւ էս հրամանը փոխուեց՝ արդէն երրորդ օրն էր եւ գրեթէ միաժամանակ եկաւ Ղարաքիլիսայի անկման բօթը: Յովհ. Թումանեան»: Նամակի բնօրինակը պահպանւում է Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում:

[20] Ծնուել է 1883 Օգոստոսի 24ին (Սեպտեմբերի 5) Մալիշկա գիւղում: Նախնական կրթութիւնը ստացել է Զնաբերդ գիւղում (այժմ՝ Նախիջեւանի վարչական տարածքում): Սովորել է Գէորգեան ճեմարանում: Մասնակցել է Ա.

Համաշխարհային Պատերազմին, պարգեւատրուել բազմաթիւ մեդալներով: Մասնակցել Արեւմտեան Հայաստանի համար մղուած մի շարք մարտերի, այնուհետեւ՝ Սարդարապատի ճակատամարտին, եղել Կարսի բերդի սպայակոյտի հրամանատար: 1921ին Կարսի բերդի անկման ժամանակ բազմաթիւ հայ սպաների հետ գերի է ընկել: Նրա զինուորական գործունէութիւնն աւարտուել է 1921ին: Ապրել է Թիֆլիսում: Մահացել է 1941 Մայիսի 2ին՝ Ուխտա քաղաքում:

[21] Ծնուել է 1874ին Վանի նահանգի Չիբուխլու գիւղում: Եղել է Արեւմտեան Հայաստանի եզդիների առաջնորդներից մէկը: 1900ականների սկզբից գլխաւորել է հեծեալ ջոկատ, մասնակցել է Ա. Աշխարհամարտին: Սերտ կապ է հաստատել Վանի հայերի հետ: Յետագայ տարիներին, թուրքական իշխանութիւնների հայահալած քաղաքականութեան պայմաններում, աջակցել է հայ ֆիդայիներին, ցոյց տուել ռազմական եւ նիւթական օգնութիւն: Ջահանգիր աղայի աշխարհազօրային ջոկատը մասնակցել է 1918ի Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերին: Անհիմն բռնադատուել է, մահացել բանտում՝ 1943ին: Յետմահու արդարացուել է:

[22] Արամ Մանուկեանի առարկաները թանգարանին է նուիրել դուստրը՝ Սեդա Մանուկեանը՝ 1998ին: Արծաթէ բաժակակալի վրայ գրուած է «Քաւտր աղին»: Կլորաւուն, զարդանախշ, սեւադապատ մակերեսով թեզանիքակալների վրայ ամրացուած շղթան աւարտւում է զոյգ թռչուններով ձեւաւորուած «Ա» տառի պատկերով:

[23] Ծնուել է 1886ին Սեբաստիայի նահանգում: Եղել է կամաւոր Բուլղարիայից: 1910ին մասնակցել է Սալմաստի եւ Ուրմիայի Սարդարուտ գիւղի, իսկ 1918ին՝ Ղարաքիլիսայի կռիւներին: Մահացել է Ուրմիա քաղաքում 1954ին:

[24] Ծնուել է Վաչագան գիւղում: Մասնակցել Ա. Աշխարհամարտին, Սարդարապատի ճակատամարտին, Զանգեզուրի համար մղուող մարտերին: 1930ին ձերբակալուել է՝ որպէս դաշնակցական: 1937ին գնդակահարուել է Երեւանի բանտում:

[25] Ծնուել է Արարատի շրջանի Արարատ (Դաւալու) գիւղում: Սովորել է Դաւալուի երկդասեան դպրոցում: 1906-10՝ ծառայել է բանակում: Մասնակցել է Ա. Համաշխարհայինին, 1918 Մայիսին՝ Բաշ-Ապարանի ճակատամարտին: 1937 Հոկտեմբերի 19ին ձերբակալուել եւ աքսորուել է: 1947 Նոյեմբերին վերադարձել է աքսորավայրից եւ բնակութիւն հաստատել Էլար (ներկայիս՝ ք. Աբովեան) գիւղում: 1956ին անցել է կենսաթոշակի: Մահացել է Երեւանում 1958ին:

[26] Ծնուել է 1896ին Թիֆլիսում: 1916ին սովորել է սպայական դպրոցում, այնուհետեւ՝ Մոսկուայի Ֆինանսների Ինստիտուտում: Աշխատել է հաշուապահ: 1914ին մտել է զինուորական ծառայութեան: Մասնակցել է Ա. Համաշխարհայինին, որի ընթացքում աւարտել է սպայական դպրոցը եւ ստացել սպայի կոչում: 1918ին մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին՝ որպէս Մարգարայի կամրջապահ գումարտակի հրամանատար: Մասնակցել է նաեւ Բ. Համաշխարհայինին: Սովետական կարգերի հաստատումից յետոյ ապրել է Լենինգրադում (Սանկտ-Պետերբուրգ), ապա՝ Մոսկուայում, կեանքի վերջին տարիներին՝ Երեւանում: Մահացել է 1961ին Երեւանում, թաղուել է Թիֆլիսում:

[27] Արծանախմբի կենտրոնում Գարեգին Եպս. Յովսէփեանն է՝ Եղիշէի գիրքը ձեռքին: Նրա աջ եւ ձախ կողմերում ֆիդայիներ են: Արծանախումբն ամբողջացնում են աշխարհազօրայինները՝ աշխատանքային գործիքներով զինուած:

[28] Ծնուել է 1869ին, Սուրմալու գաւառի Ասլանլու գիւղում: 1880ին ընդունուել է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը: Եղել է ՀԱՀ խորհրդարանի պատգամաւոր:

Մայիսեան բախտորոշ օրերին Զահանգիր աղա Խատիֆովի հետ միասին ղեկավարել է եզդիների հեծեալ գումարտակը:

[29] Հեղինակ՝ քանդակագործ Սերժ Մեհրաբեան: Կիսանդրին թանգարանին է նուիրել Մաջիթ բէկ Ուսուբեանը, 2012ին: Այն ցուցադրուած է «1918թ. Մայիսեան Հերոսամարտերն եւ ՀԱՀ Հռչակումը» ցուցադրութիւնում:

[30] Հեղինակ՝ սփիւռքահայ հասարակական գործիչ, մտաւորական Յակոբ Ճանպազեան, որ այն թանգարանին նուիրեց 2018ին:

[31] «Դէպի Վերջին Հանգրուան» կտաւում պատկերուած է հայ ընտանիքի գաղթի տեսարան: Աղջիկներից մէկի ուսին աստուածաշունչն է, իսկ միւսը՝ ձեռքերը երկինք պարզած, աղօթում է Աստծուն: Եռապատկերի յաջորդ կտաւը կոչւում է «Սարդարապատի Ճակատամարտը»: Ներկայացուած է մի դրուագ ճակատամարտից: Կենտրոնում սպիտակ նժոյգ հեծած հերոսն է՝ յարձակման պահին: Նրա հուժկու հարուածից թուրքերը ձիերից ցած են ընկել, իսկ մի մասն էլ դիմել է փախուստի: Եռապատկերի երրորդ մասը «Ծեր Մասիսի Հայեացքի Տակ» խորագրով կտաւն է: Կենտրոնում վերածնուած Հայաստանը խորհրդանշող հայ ընտանիքն է՝ շրջապատուած նոր ժամանակների արհեստներն ու արուեստները ներկայացնող կերպարներով: Եռապատկերը թանգարանը ձեռք է բերել 1983ին (ՀԱՊԹ 4278/ա, բ, գ/ «Կ» 5/ ա, բ, գ):

[32] «Ասք Հայաստանի» եռապատկերի առաջին մասը կոչւում է «Յարատեւութիւն-1915թ.»: Կտաւի առանցքը կազմում են երիտասարդ կնոջ եւ տղամարդու կերպարները, որոնք հրաշքով փրկուել են Մեծ Եղեռնից: Երիտասարդ կինն իր հետ կորստից փրկել է Սուրբ Գիրքը: Տղամարդը պահել է յաւերժութեան ջահը: Զոյգի գլխավերեւում՝ զէնքը ձեռքին հսկայ արծուաթեւ ֆիդային է, որը փրկել է նրանց կորստից եւ տանում է դէպի յարատեւութիւն: Երկրորդ՝ «Մաքառում-1918թ.» խորագրով կտաւը նուիրուած է Սարդարապատի ճակատամարտին: Նկարի ստորին մասում մարտնչող չորս ֆիդայիներից մէկը վիրաւորուել է եւ վերջին շնչում ափի մէջ ճզմում է վիշապի գլուխը: Վերեւում ճերմակ ձին հեծած Վարդան Մամիկոնեանն է՝ նիզակով մարտի նետուելիս: Հեղինակը զուգահեռներ է անցկացնում Աւարայրի եւ Սարդարապատի գոյամարտերի միջեւ: Վերին ձախ անկիւնում ղօղանջում են Սարդարապատի ճակատամարտը խորհրդանշող զանգերը: Կտաւի ներքին ձախ անկիւնում գրուած են Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնից: Եռապատկերն ամբողջանում է «Վերածնունդ-1920թ.» կտաւով: Կենտրոնում վերածնուած Մայր Հայաստանն է՝ արեւի ճառագայթների մէջ: Մնացականեանի այս աշխատանքը թանգարանը ձեռք է բերել 1980ին (ՀԱՊԹ 7326/1,2,3/ «Կ» 17):

[33] «Սարդարապատի Ճակատամարտը» գեղանկարը բազմակերպար թեմատիկ աշխատանք է: Կենտրոնում Մայր Հայաստանն է, որի կրծքին՝ կախազարդի վրայ, պատկերուած է Ա. Հանրապետութեան զինանշանը, իսկ ձեռքում ծածանւում է դրօշը: Մայր Հայաստանի մօտ պատկերուած են հայրենիքի համար զոհուած հերոսներն, իսկ գլխավերեւում՝ կանոնաւոր բանակը: Ներքեւում Հայաստանը խորհրդանշող Մասիս սարը եւ հայոց հոգեւոր կենտրոն Ս. Էջմիածինն են (ՀԱՊԹ 8416/ «Կ» 25):

[34] «Մարշալ Բաղրամեան» դիմանկարում Սարդարապատի ճակատամարտի մասնակիցը պատկերուած է մեծ տարիքում՝ մարշալական համազգեստով: Վերջին երկու կտաւները թանգարանին է յանձնել պաշտպանութեան նախարարութիւնը՝ 2009ին (ՀԱՊԹ 8427/ «Կ» 29):

[35] Սարդարապատի հերոսամարտի 90ամեակին նուիրուած նախագծի շրջանակներում Կենտրոնի սաները այցելեցին թանգարան, ծանօթացան 1918ի մայիսեան հերոսամարտերի պատմութեանը եւ ստեղծեցին կտաւներ: Ամիսներ անց թանգարանում բացուեց «Սարդարապատի Ղօղանջները» խորագրով ցուցահանդէս, որի բնաբանը Պարոյր Սեւակի «Սարդարապատ» բանաստեղծութեան «Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից» տողերն էին: 2009ին այդ աշխատանքները դարձան ՀԱԹի «Կերպարուեստ» ֆոնդի հաւաքածուի մաս (ՀԱՊԹ 8359/1-16 «Կ» 24/1-16):

THE ITEMS OF THE MAY 1918 HEROIC BATTLES IN THE PRESERVES OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY

(Summary)

AREVIK MELIQYAN
arevikmeliqyan@gmail.com

The heroic battles the Armenians fought against the Turkish army invading Eastern Armenia in May 1918 are someof the brightest pages in the history of the Armenian nation. Numerous materials dedicated to these battles are preserved in the National Museum of Armenian Ethnography and History of the Liberation Struggle.

The paper gives a panoramic picture of the collection, summarizing the items preserved in the various sections gathered under the titles «Photos», «Documents», «Precious metals», «History of the heroic battle», «Ethnography and mode of life 1, 2, 3», «Textiles», «Glass», and «Fine arts». Lastly, the author assesses their historical value and notes some of the missing items which could shed further light to these battles, which were detrimental for the Armenian nation.

The author notes that the museum staff have been instrumental in collecting data and items from these battles and that a lot of personal belongings have been recovered from the sons, brothers and grandchildren of those who participated in these battles.

ՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ԳԱՂԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ
vatcheg@gmail.com

Ստորեւ ներկայացուող տեղեկագիրը քանի մը տարի առաջ լուսանկարած էինք Երուսաղէմ այցի մը ընթացքին: Զայն մեքենագրելու եւ ծանօթագրելու աշխատանքի ընթացքին, պարզուած էր խորագրային էջին յաջորդող էջին (Ը539 համարակալեալ) բացակայութիւնը լուսանկարներու շարքէն, որով հարկադրաբար յետաձգուած էր անոր հրապարակումը՝ ծրագրելով ստուգել բացակայող էջի պարագան Երուսաղէմ նոր այցի մը ընթացքին:

Այդ այցը իրականացնելէ առաջ, սակայն, դիպուածաբար կը պարզուէր թէ մեր կողմէ նորայայտ նկատուած տեղեկագիրն այլեւս դադրած էր *նորայայտ* ըլլալէ, որովհետեւ Դոկտ. Ռուբէն Օ. Սահակեան բնագիրն ամբողջութեամբ լոյսին բերած էր արդէն *Բանբեր Հայաստանի Արխիւների* գիտական ժողովածուին 126րդ համարին մէջ[1]:

Պարզուող այս պատկերին ի տես, անհրաժեշտ կը դառնար Սահակեանի հրատարակած օրինակը աւելցնելով ստորեւ յիշատակուած աղբիւրներու շարքին, բաղդատել մեր պատրաստածին հետ եւ այս նոր իրականութեան լոյսին տակ որոշել թէ արդեօ՞ք կրնար արդարացուիլ անոր հրատարակութիւնը մեր վերծանած տարբերակով եւ ծանօթագրութիւններով:

ԱՌԿԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաջին Աշխարհամարտի շրջանին թրքական ճակատի վրայ ցարական Ռուսաստանի արձանագրած յաջողութիւններէն ետք վանեցիներու տուն դարձին եւ յատկապէս 1917ի ռուսական Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք արեւմտահայ հողերու վրայ գտնուող ռուսական բանակի հեռացման յաջորդած զարգացումներուն, այդ զարգացումներուն հետեւանքով Վասպուրականի մէջ անհրաժեշտաբար ստեղծուած հայկական ժամանակաւոր կառավարութեան, ապա նաեւ իրենց ռազմական յաջողութիւններով գինովցած թրքական ուժերէ գերեվարուելէ կամ կոտորուելէ խուսափելու նպատակով Վանի եւ շրջակայքի հայութեան դէպի Արեւելեան Հայաստան եւ Պարսկաստան հարկադրական վերջին նահանջին վերաբերող արձանագրութիւնները - յուշագրութիւն թէ ուսումնասիրութիւն – անտեսելի չեն եւ բոլորը միատեղ բաւական մանրամասն պատկերացում կու տան իրողութիւններու եւ դէպքերու զարգացումներուն մասին:

Մեր տրամադրութեան տակ գտնուած եւ մեր ուշադրութեան յատուկ առարկայ դարձած այդպիսի գլխաւոր արձանագրութիւններ են եղած ստորեւ

թուարկուածները, զանց առնելով համապատասխան շրջաններու օրաթերթերով եւ շաբաթաթերթերով հաղորդուած տեղեկութիւնները[2].-

1. Եղիշէ Վարդանեան, *Վասպուրականի Նահանջ Բիւրոցը*, տպագրութիւն «Ազգ»ի, Պոսթոն, 1920[3]:

2. [Թէոդիկ], «Վանայ Անկախ Կառավարութիւնը», *Ամէնուն Տարեցոյցը, ԺԵ. Տարի, 1921*, հրատարակութիւն եւ տպագրութիւն Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1921, էջ 109-13:

3. Արմենակ Մաքսապետեան, «Վասպուրականի Իշխանութիւնը» բաժին, էջ 105–12[4], (*Վասպուրական՝ Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի Տասնեւհինգամեակին Առթիւ 1915-1930*, հրատարակութիւն՝ Վասպուրականի Հայրենակցական Միութեան (Թաւրիզ), Մխիթարեան Տպարան, Վենետիկ – Ս. Ղազար, 1930)[5]:

4. Հմայեակ Մանուկեան, «Դէպքերը Վասպուրականում (1914–1918)», *Վէմ Հանդէս Մշակոյթի եւ Պատմութեան*, համարներ ԺԸ. (էջ 51–63), ԺԹ. (էջ 73–77) եւ Ի. (էջ 90–95), ինչպէս նաեւ համարներ ԻԱ. (էջ 88–95) եւ ԻԲ. (էջ 72–77), Փարիզ, 1937 եւ 1938:[6]

5. Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, որոշ ընդմիջումներով՝ Ը. տարի, 1930:10(94)էն մինչեւ Ժ. տարի, 1932:4 (112):

6. Արսէն Հացագործեան, «Ազատագրուած Վասպուրականի Կարճատեւ Ինքնավարութիւնները Առաջին Համաշխարհային Պատերազմին (Ականատեսի Յուշեր», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 1969: 1[7]:

7. Սիրաք Սարհադեան, *Կեանքիս Յուշերից, Գիրք Ժ.*, Հրատ.՝ Հայկական Ճարտարապետութիւնն Ուսումնասիրող Կազմակերպութեան, Երեւան, 2007[8]:

8. Շատախցիներ Անդրէաս Եսայի Գիւլանեանի եւ Հայրիկ Մանուկի Մուրատեանի, ինչպէս նաեւ վանեցի Ղազար Ղազարի Գէորգեանի յուշերը համացանցային հետեւեալ կայքին մէջ՝ http://www.armeniapedia.org/wiki/The_Armenian_Genocide:_Testimonies_of_the_Eye-Witness_Survivors_-_Testimonies_1-49 (19 Նոյեմբեր 1919ի դրութեամբ):

9. Ռ[ուբէն] Օ. Սահակեան, «Վանի Հայութեան 1918 թ. Մարտեան Նահանջը Պարսկաստան», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, թիւ 2011:1-2, էջ 336–62:

10. Աւետիս Յարութիւնեան, «Վասպուրականի Նահանգային Ինքնավար Կոմիսարութեան (Երկրորդ Կառավարութեան) Գործունէութիւնը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2013:3, էջ 37-52[9]:

Մեր ներկայիս հրատարակել փափաքած վաւերագրին եկաւ աւելնալ Սահակեանի պատրաստութեամբ հրատարակուած վերոնշեալ օրինակը:

Հիմնուելով վերոյիշեալներէն Եղիշէ Վարդանեանի յուշագրութեան վրայ, կարելի է ըսել թէ Ռուսաստանի Փետրուարեան Յեղափոխութեան ազդեցութեամբ 1917ի Ապրիլին վանեցիներ արդէն Կովկասի Հայոց

Բարեգործական Ընկերութեան գրասենեակին մէջ խորհրդակցելով կազմած էին Շրջանային Վարչութիւն մը, որ պիտի ըլլար «վաղանցուկ կառավարութեան սաղմը»՝ անդամ ունենալով Կոստի Համբարձումեանը (լիազօր ներկայացուցիչ Համառուսական Քաղաքներու Միութեան), Գրիգոր Օհանջանեանը (լիազօր ներկայացուցիչ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան), բժիշկ Ներսէս Տէր Թովմասեանը, Սամուէլ Մեսրոպեանը, Արմենակ Մաքսապետեանը, Սեդրակ Հիւս Փանոսեանը եւ Բարունակ Կապուտիկեանը, եւ որոնց պիտի հրաւիրուէին միանալ դաշնակցականներէն Հմայեակ Մանուկեանն ու Տիգրան Պաղտասարեանը, ռամկավարներէն Մկրտիչ Աճէմեանն ու նոյնինքն Եղիշէ Վարդանեանը, իսկ հնչակեաններէն՝ Սիրաք Սարհատեանը[10]:

ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԸ

Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Երուսաղէմ պահպանուող դիւանաթուղթերուն մէջ կը գտնուի Ը538-Ը558 համարակալումով եւ էջերը դերձանով իրարու միացուած տետրակ մը, որ կը կրէ «Տեղեկագիր Վանի Հայ. Ժամանակաւոր Կառավարութեան» խորագիրը:

Սկիզբէն մինչեւ աւարտ մէկ անձի ձեռագրով գրառուած տեղեկագիրը կ'աւարտի հետեւեալ նշումով. «... *այսքան իբր կատարուած իրողութիւն պաշտօնական համարել անհրաժեշտ կը համարենք եւ այդ առթիւ կը սկրորագրենք*»: Սակայն ի բացակայութեան ստորագրութեան մը կամ ստորագրութիւններու, բնականաբար անկարելի կ'ըլլայ ճշտել թէ փաստաթուղթը կրած է մէ՞կ ստորագրութիւն՝ ենթական յոգնակիով ներկայացնելով իր անձը, թէ՞ նաեւ ստորագրութիւնները տուեալ պահուն հեղինակին մօտ գտնուած իրազեկ այլ անձերու: Նոյնպէս՝ բնականօրէն կ'առաջանայ ենթադրութիւն մը, թէ այս փաստաթուղթը կրնայ պարզապէս ընդօրինակեալ պատճէնն ըլլալ ստորագրութիւն կրող բնօրինակի մը:

Ամեն պարագայի, վաւերագրին հեղինակին անունը կը մնայ անծանօթ:

Բնագիրն ընթերցողը կը տարուի մտածելու թէ անոր հեղինակը կրնայ եղած ըլլալ ժամանակաւոր կառավարութեան անդամներէն մին, կամ, առնուազն, մասնակից մը զինական գործողութիւնները մշակող խորհրդակցական նիստերուն:

Ուղղագրութիւն, բառապաշար եւ քերականութիւն ցոյց կու տան տեղեկագրողին (կամ բնագիրը արտագրողին) անձին մէջ մէկտեղումը Վանի բարբառին եւ արեւմտահայ ու արեւելահայ տարրերու, եւ լեզուական այսպիսի տարրերու միախառնումը եւ մանաւանդ *ը* եւ *ն* որոշիչ յօդերու յաճախադէպ բացակայութիւնը կը յուշէ թէ հեղինակը կրնար ըլլալ Վան ծնած, բայց ուսումը Թիֆլիս կամ Վաղարշապատ ստացած անձ մը: Սակայն բնագրին մէջ սողոսկած կարգ մը ուղղագրական թերութիւններ կը մղեն մտածելու թէ հեղինակը հաւանաբար առիթ չէ ունեցած հիմնաւոր

ուսում ստանալու, եթէ իրողութեան համապատասխան է Ներսիսեան կամ Գէորգեան ճեմարանի մէջ ուսած ըլլալու ենթադրութիւնը:

Օրինակ, բնագրին մէջ բացառական հոլովի պարագային կը հանդիպինք թէ՛ *է* եւ թէ՛ *ից* հոլովածեւերուն: Նոյնպէս ակներեւ է *ներ* յոգնակերտի փոխարէն աւելի յաճախ *եր* յոգնակերտի գործածութիւնը (օրինակ՝ *անձնաւորութիւներ* եւն.):

Ձայնափոխեալ «ու»ն հետեւողականօրէն արձանագրուած է «ւ»ով (օրինակ՝ *զինւորական*, փոխանակ *զինուորականի*):

Տեղեկագրողը կարգ մը պարագաներու *մը* անորոշ մասնիկին **ը**ը կրճատելով *մ* տառն ուղղակի կցած է նախորդ բառին վերջաւորութեան (օրինակ՝ *օրմ*, փոխանակ *օր մըի*, *օրմալ* փոխանակ *օր մ'ալ* կամ *օր մըն ալի*, *ծրագրիմ* փոխանակ *ծրագրի մըի*), իսկ էական բայերու պարագային զանոնք քիչ անգամ անջատած է նախորդ բաղադրամասերէն (օրինակ՝ *պէտքէ*, փոխանակ *պէտք էի*, *պակնէր* փոխանակ *պակն էր*ի, *գործածեն*, փոխանակ *գործած են*ի եւն.):

Բնագրի վերծանման ընթացքին մեր դիմագրաւած գլխաւոր մարտահրաւէրներէն մէկն է եղած ձեռագրային նմանութիւնը բառամիջեան *ե* եւ *ի* տառերուն, ինչպէս նաեւ բառամիջեան կամ բառավերջի *պ*ին եւ *դ*ին, յատկապէս երբ հարցը կը վերաբերի օտար յատուկ անուններու, մանաւանդ որ հեղինակն ի՛նք հետեւողական չէ եղած այդպիսի պարագաներու:

Բնագրին վերարտադրութիւնը չխճողելու նկատառումով, առանց անկիւնաւոր փակագիծերու օգտագործման կատարած ենք խմբագրական հպումներ, ինչպէս՝ բայի եւ գոյականի թիւերու հաշտեցումներ եւ այլ կարգի ուղղագրական եւ քերականական միջամտութիւններ, երբ բացարձակապէս անհրաժեշտ նկատած ենք զանոնք:

Հետեւողական ըլլալու համար, վաւերագրին մէջ մէկէ աւելի տարբերակով հանդիպող յատուկ անունները - սակաւաթիւ բացառութիւններով (ինչպէս՝ Թաւրիզ/Դաւրիզ/Դաւրէզ անուան պարագային) - ներկայացուցած ենք մէ՛կ ձեւով (օրինակ՝ անգլիական բանակի սպայ Ճորճ Կրէյսիի պարագային որդեգրած ենք Գրէյսի ձեւը, փոխելով տեղեկագրողին գործածած միւս՝ Գրէյսին, Կրէյսի եւ Կրէյսին տարբերակները):

Էջատակի ծանօթագրութիւններու շարքին տուած ենք հայերէն համազօրները բնագրին մէջ գործածուած օտար բառերու:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ՝ ՎԱՒԵՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԵՒ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ԱՅՍ «ԵՐԿՐՈՐԴ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Մեզի կը թուի թէ հիմնականին մէջ այս տեղեկագրէն քաղելով եւ քանի մը տեղեկութիւններ յաւելադրելով շարադրուած է Թէոդիկի հանրածանօթ տարեցոյցին մէջ Վանի ժամանակաւոր կառավարութեան վերաբերեալ հատուածը, որ ներկայ բնագրին ամփոփումը կարելի է նկատել[11]:

Քանի մը տուեալներ մեզ կը մղեն այսպիսի ենթադրութեան: Նա՛խ՝ նմանութիւնը երկու շարադրանքներու ընթացքին եւ ենթահատուածներու յաջորդականութեան: Ապա՝ նոյնութիւնը կառավարութեան անդամներու անուանացանկին, որ այլ աղբիւրներու մէջ յիշատակուած է տարբեր դասաւորումով: Ուշագրաւ է մանաւանդ թղթատարական-հեռագրական տեսուչին անուան նոյնութիւնը, գրուած՝ Սարգիս Զաւարեան, թէ՛ տարեցոյցին եւ թէ՛ բնագրին մէջ, երբ այլ աղբիւրներ մականունը ներկայացուցած են Զաւրեան կամ Զավրիէվ ձեւերով: Ուշագրաւ է նաեւ *խնամակալութիւն* բառին գործածութիւնը երկու աղբիւրներուն մօտ իբրեւ կառավարութեան բաժիններէն մին, երբ այդ բաժինը այլ աղբիւրներու մէջ յիշատակուած է *խնամատարութիւն* բառով:

Տակաւին կարելի է նշել նաեւ Վանայ Ծովու երկու ճակատներուն վրայ հաստատուած բանակայիններու եւ գնդացիրներու թուաքանակին, ինչպէս նաեւ Զօրավար Նազարբէկեանի մինչեւ Փետրուար 1918 Ախլաթ ներկայութեան մանրամասնութիւնները:

Նոյնպէս, մինչ այլ աղբիւրներ կառավարութեան անդամները նկատած են վարիչ կամ կոմիսար, անոնք տարեցոյցին մէջ, ինչպէս՝ այս բնագրին, ներկայացուած են որպէս տեսուչ:

Բնականաբար, մարմիններուն կամ պաշտօններուն տրուած տարբեր անուանումներով կամ սահմանումներով՝ մարմինը կոչուի ժամանակաւոր *իշխանութիւն*, թէ *կառավարութիւն*, կամ գործերու *տեսուչ* նկատուին ենթակաները, թէ *վարիչ, նախարար*[12], *գործավար* կամ *կոմիսար*, ոչի՛նչ կը փոխուի անոնց էութենէն կամ բնոյթէն:

Կրնայ հարց տրուիլ թէ արդեօ՞ք տեղեկագրողը յատուկ նպատակով իր տեղեկագիրը ներկայացուցած է Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան եւ այդ պատճառով ան յայտնուած է պատրիարքութեան դիւանաթուղթերու Երուսաղէմ գտնուող բաժնին մէջ, ուր կը գտնուին Թէոդիկի պատկանող կամ անոր ձեռքէն անցած զանազան այլ նիւթեր: Արդեօ՞ք տեղեկագրէն կը բացակայի էջ մը, որ կրած պիտի ըլլար հեղինակային ստորագրութիւն(ներ): Արդեօ՞ք տուեալ բնագրի հեղինակին վերաբերեալ որեւէ ակնարկութիւն կրնայ գտնուած ըլլալ դիւանաթուղթերու զանազան տրցակներէն մէկուն մէջ:

Հետաքրքրականօրէն, պատասխանը կը գտնենք ո՛չ թէ դիւանաթուղթերու տրցակներուն մէջ, այլ՝ նոյնինքն հեղինակին մօտ:

Արմենակ Մաքսապետեան իր վերը յիշատակուած աղբիւրին իբրեւ ծանօթագրութիւն կը նշէ. «*1918 թ. Սեպտեմբերին] Համափանի մէջ,*[13] *ընկերներու առաջարկով գրեցի Վասպուրականի Իշխանութեան Պատմութիւնը, երբ դեռ շատոր էինք, բոլորիս յիշողութիւնը թարմ էր, ունէինք քանի մը թուղթեր: Բաքուէն եկած Արշակ Սաֆրաստեան օրինակ մը խնդրեց այս գրուածքէն: Բաղդատի մէջ այդ օրինակէն հատ մը վերցուցած է Տ. Զաւէն Պատրիարք, իսկ ասորմէ յետոյ օգտուած է Պ. Արշակ Ալպոյաճեանը եւ Ազգ. Հիւանդանոցի մէկ տարեցոյցին մէջ տպագրել տուած*

է, իբրեւ սեփական հեղինակութիւն: Դժբախտաբար այս տարեցոյցն անգամ ձեռքիս տակ չունիմ: Տասներկու տարիներ յետոյ, երբ կը փորձեմ գրի առնել մեր իշխանութեան կեանքն ու գործը, յիշողութիւնս կը դաւաճանէ, խիստ կը ցաւիմ որ ժամանակին աւելի լայնօրէն չկատարեցինք մեր պարտականութիւնը: Այն պիտի նկատել ուրուագիծ մը»[14]:

Ուրեմն համարեա հաստատապէս կարելի կ'ըլլայ ըսել թէ այս «ուրուագիծ» վաւերագրին հեղինակն է Արմենակ Մաքսապետեան, թէ տեղեկագիրը պէտք է աւարտած ըլլայ Իրաք հասնելէ ետք՝ նոյնիսկ եթէ անոր պատրաստութեան ձեռնարկած էր Համատանի մէջ, եւ տեղեկագրին ամբողջացումը որոշապէս կատարուած պէտք է ըլլայ 22 Նոյեմբեր 1918էն ետք, որ տեղեկագրին մէջ բացայայտօրէն նշուած վերջին թուականն է: Պաղտատի մէջ տեղեկագիրը յանձնուած է Զաւէն Պատրիարքի[15], որ Զինադադարի հոչակումէն քիչ ետք պիտի վերադառնար Պոլիս եւ զայն յանձնէր, այլ փաստաթուղթերու շարքին, Ալպոյաճեանի, որ ներքին պետն էր Քաղաքական Ժողովի 17 Օգոստոս 1919ի նիստի որոշման համաձայն ստեղծուած Տեղեկատու Դիւանին[16]: Ալպոյաճեան, իր հերթին, տեղեկագրէն օգտուելով պիտի պատրաստէր անստորագիր «Անկախ Հայաստան» ընդարձակ շարադրանքը[17], Թէոդիկի՛ տարեցոյցին եւ ո՛չ թէ «Ազգ. Հիւանդանոցի մէկ տարեցոյցին» մէջ կատարելու համար «Վանայ Անկախ Կառավարութիւնը» ենթախորագրեալ տեղեկատուութիւնը:

Կրճատեալ վիճակով Թէոդիկի *Ամէնուն Տարեցոյցը*ին մէջ, իսկ համարեա ամբողջական վիճակով *Բանբեր Հայաստանի Արխիւների* ժողովածուին մէջ հրատարակուած ըլլալով հանդերձ, վաւերագրին ա՛յս հրատարակութիւնը կը նկատենք անհրաժեշտութիւն, որովհետեւ այս օրինակը արդարութիւն կը կատարէ ժամանակաւոր կառավարութեան անդամ Մաքսապետեանի՝ անստորագիր վաւերագիրն ուղղակի առնչելով իր անունին, ապա նաեւ ուսումնասիրողներու կը ներկայացնէ աւելի հարազատ պատճէնը Սահակեանի հմտալից ներածականով լոյսին տրուած օրինակին, ուր մեր բաղդատութիւնը երեւան բերած է կարգ մը ուղղման կարօտ պարագաներ:

Տակաւին, այս վաւերագրին առնչումը Մաքսապետեանի անուան կարեւոր կը դառնայ անով, որ հեղինակին աւելի ուշ, ոչ նոյնքան թարմ յիշողութեամբ հրատարակած յօդուածին մէջ գտնուող շեղումներ վերագտնեն իրենց ճիշտ հունը եւ պատմաբաններուն ներկայանայ իրողութիւններու ճշգրտման եւ յստակացման հնարաւորութիւն:

Վերջապէս, ան կարեւոր է նաեւ անոր համար որ իր պարունակած տեղեկութիւնները նիւթ կը հայթայթեն ազգամիջեան յարաբերութիւններու պատմութեամբ զբաղողներու, քանի որ հոն կը տողանցեն, հայերու կողքին, ասորի, ռուս, անգլիացի, ամերիկացի, քիւրտ, թուրք եւ պարսիկ դերակատարներ:

ԲՆԱԳԻՐԸ

Տեղեկագիր Վանի Հայ[կական] Ժամանակաւոր Կառավարութեան
1917 Դեկ. 1 – 1918 Դեկ. 1
Վանից-Բաղդադ

1917 թ. Մարտ ամսի ռուս յեղափոխութիւնը, ինչպէս Ռուսաստանի բոլոր ազգութիւններու, այնպէս եւ [իր] գրաւած Տաճկահայաստանի[18] մէջ ապրող հայ ազգաբնակչութեան առանձին ոգեւորութիւն պատճառեց: Այդ առթիւ կը մտածուէր որ կարելի պիտի լինէր ընդհանուր ժողովրդական ուժերի միացումով յաղթական լինել պատերազմի ճակատի վրայ, բարելաւելու գրաւած Տաճկահայաստանի դրութիւնը:

Մասնաւոր ջանքերու շնորհիւ յաջողուեց Պետրոգրադի կեդրոնական իշխանութեան հսկողութեան ներքեւ կազմել գրաւուած Հայաստանի առանձին իշխանութիւն, որու կենտրոնը եղաւ Թիֆլիս, իսկ մինչեւ նոյն տարուայ Օգոստոսին ան ճիւղեր ունեցաւ Վանի, Էրզրումի, Երզնկայի, Բայազիտի եւ Տրապիզոնի մէջ:

Վան իր բացառիկ հանգամանքների շնորհիւ, հոն կազմուած իշխանութիւն մանաւանդ իր վրայ աւելի ուշադրութիւն գրաւեց, երբ մասնաւորապէս ռուս յեղափոխութիւնը հակառակ մեր յոյսերուն Ռուսաստան քանդեց, որով ռուս մեծաթաւալ բանակն ալ քայքայուեց, իսկ անկէ վերջ Վան պարտաւորուեց մէկ կողմէ թափուր մնացած ճակատներ պահել, եւ միւս կողմէ երկիրը կառավարել, անհամեմատ փոքր ուժերով: Հոս հարկ կը համարենք ընդլայնել քիչ մը մեր ըսածները զայն բաժանելով երկու մասի, եւ խօսիլ իւրաքանչիւրի մասին առանձին առանձին:

Այդ բաժանումները են մէկը քաղաքացիական բաժին իսկ միւսը զինուորական:

I. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Վան բաժանուած էր հետեւեալ շրջաններու.-

ա. Քաղաք եւ իր արուարձաններ	9305 ասորի	2326
բ. Հայոց-Ձոր	1127 եզտի	160
գ. Բաշգալէ	1500 թուրք	225
դ. Արճակ	3500 հայ	23,597
ե. Սարայ	850 [ընդհանուր]	26,30
զ. Թիմար	6715	
է. Բերկրի – Կալա	450	
ը. Արճէշ – Ալջավազ	150	23,597[19]

[1]917 Դեկտ. ամսուայ մէջ կատարուած վիճակագրութեան մը համաձայն այդ շրջանների մէջ կ'ապրէր 26,308 բնակչութիւն, որոնցմէ 2326 ասորիներ, 160 եզտի եւ 225 թիւրքեր էին[20]:

Սոյն թուի մէջ չեն հաշուուած քրդեր որոնց թիւ ամբողջ Վանի նահանգի մէջ 20,000-է աւելի էր:

Երկրի եւ քաղաքական ընդհանուր պահանջներ նկատի ունենալով պէտք տեսնուեցաւ Վանի մէջ հայ իշխանութիւն մը կազմելու, երբ արդէն ռուսական 10,000-նոց բանակ եւ մօտ 300 քաղաքացիական գործերու ռուս պաշտօնեաներ երկրէն մեկներ էին դէպի Կովկաս եւ Ռուսաստան:

Հայ իշխանութիւն կազմուեցաւ հետեւեալ պատասխանատու անձնաւորութիւններէն.

1.- Կոստիա Համբարձումեան[21] նահանգ[ապետ] եւ արտաքին գործերու տեսուչ[22]
2.- Յովհաննէս Հայրապետեան[23] նահանգ[ապետի] օգնակ[ա]ն եւ խնամակալութեան տեսուչ
3.- Գրիգոր Գէորգեան[24] զին[ուորական] գործերու տեսուչ
4.- Համայեակ Մանուկեան[25] ներքին գործերու տեսուչ
5.- Արմենակ Մաքսապետեան[26] երկրագործ[ական] գործերու տեսուչ
6.- Սամուէլ Մեսրոպեան[27] ելեւմտական գործերու տեսուչ
7.- Զաւէն Կորկոտեան[28] պարենաւորման գործերու տեսուչ
8.- Բժ[իշկ] Ներսէս Տ[էր] Թովմասեան բժշկական գործերու տեսուչ
9.- Սարգիս Զաւարեան փոստ-հեռագր[ա]կ[ան] գործերու տեսուչ

Վերոյիշեալ ինն անձնաւորութիւնները ունէին իրենց պաշտօնին համեմատ առանձին պաշտօնեաներ, որոնց ընդհանուր թիւը 130-ի կը հասնէր:

Զինուորական բաժանմունք իբր առանձին ճիւղ, առայժմ անոր մասին խօսիլ կը թողունք, իսկ միւս ճիւղերի մասին առանձին առանձին կը խօսինք:

Ա.- ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ.- Վերյիշուած գաւառները ունէին առանձին իշխանութիւն ներքին գործերու տեսչի հսկողութեան տակ. իսկ ամէն մի գաւառի ժողովուրդ ունէր ներկայացու[ց]չական խորհուրդ իր գաւառապետի կողքին: Երկրի կարգ կանոնի վրայ հսկելու համար կազմուած էր ոստիկանութիւն, որի թիւ 200-ի կը հասնէր: Գաւառի գաւառապետ կը նշանակուէր ներքին գործերու տեսչի կողմէ գաւառի ներկայաց[ուց]չական խորհուրդի հաւանութեամբ. ներքին գործոց տեսչութեան տակն էին նաեւ հետեւեալ մասերը:

Ա.- *Կրթական գործ.*- Վանի հայ իշխանութեան տրամադրած գումարէն զատ մեր դպրոցներու համար մեզ օժանդակեցին երկրի ժողովուրդը եւ Թիֆլիսի առժամեայ խորհուրդը: Անցեալ տարուայ Դեկտեմբերին ունէինք 25 դպրոց, 47 ուսուցիչ, 1220 երկսեռ աշակերտ. դպրոցներու ամսական ծախսն էր 6765 րուբլի:

Ընդհանուր զինուորագրութեան պատճառաւ ստիպուեցինք մեր դպրոցները փակել Դեկտեմբերի վերջ, երբ ուսուցիչները անցան նորաբաց Զինուորական Դպրոցին մէջ, սպաներ եւ մարզիչներ պատրաստելու համար:

Բ.- *Առուտուր.*- Վերջին տարիներու յաճախակի պատահարներու հետեւանքով երկրի շուկան բոլորովին կողոպտուած եւ արտաքին յարաբերութիւններէ խզուած էր: Մասնաւորապէս ջանք թափուեցաւ բարեկամական յարաբերութիւն պահել քրդերի հետ ներքին առուտուրի համար, իսկ միւս կողմէ ապահովել Վան-Խոյ եւ Վան-Բայազիտ ճանապարհները, որպէսզի առեւտրականները ազատ երթեւեկութիւն ունենան: Բաւական է ըսել որ հազուագիւտ նիւթերը շատացան եւ անոնց արժէքը զգալիօրէն պակասեց: Նաեւ արտահանութիւնը սկսեց կանոնաւորուել յօգուտ տեղական ապրանքների. այս առթիւ արգիլեցինք մի կարգ նիւթերի արտահանութիւնը.- ցորեն, պղինձ, ապակի, կաշի, եւայլն:

Գ.- *Հաղորդակցութիւն.*- Նկատի ունենալով Վանէն դէպի Կովկաս եւ Պարսկաստան տանող ճանապարհներու մեծ կարեւորութիւնը, Վանի հայ իշխանութիւնը յանձն առաւ այդ ճանապարհների շինութիւնը: Միջոցներու չգոյութեան պատճառաւ նախ ստանձնեցինք Շահթախթ-Սավալի-Վան երկաթուղագծի շինութիւնը, որը երեսի վրայ ձգուած էր ռուսների հեռացումով: Արտաքին անմիջական օժանդակութիւնը նկատի ունենալով, ձմեռուայ ամիսներուն բանուորներ աշխատեցրինք պարտադրելով հայ ժողովրդին. բայց խոստացուած օգնութիւն չստանալով մի ժամանակ երեսի վրայ թողնուեց, երբ անգլիական Թիֆլիսի շտապի[29] անդամներէն Գաբիթան Գրէյսին[30] պայմանաւորուեց շինել այդ գիծը:

Նոյնքան կարեւոր էր մեզ համար Վանի Լճի նաւարկութիւնը, որի կանոնաւորման համար մեծ ջանք թափուեցաւ գործածութեան դնելով ռուսերի թողուցած նաւերը, որոնք սակայն ամբողջութեամբ գործածութեան դնել [հնարաւոր չեղաւ] քարիւղ չունենալու եւ Կովկասից կտրուելուն պատճառաւ:

2.- *Պարենաւորում.*- Յաճախադէպ կատարուած միտումնաւոր նահանջները քայքայած էին ժողովրդի տնտեսութիւնը, այնպէս որ ազգաբնակչութիւնը կը դժուարանար հաց հայթայթել: Այս առթիւ ժողովրդին օգնելու համար դեռ [1]917 թ. Վանի մէջ մի ճիւղ հաստատուած էր Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան[31], իր հետ ունենալով պետական օժանդակութիւն: Սակայն Ռուսաստանի քայքայումով յիշեալ Ընկերութիւն եւս հեռացաւ մեր երկրէն, որի ընթացքին Վանի հայ իշխանութիւն իր վրայ վերցրեց երկրի պարենաւորման գործը:

Պարենաւորման համար երկու միջոցներ ունէինք՝ արտաքին եւ ներքին. Արտաքինի համար կը բաւականանանք ըսել, որ անցեալ աշնան սկզբին հազիւ կարելի եղաւ Կովկասէն ստանալ 3000 փութ[32] ալիւր, ինչպէս նաեւ քիչ քանակութեամբ շաքար, լուցկի, սապոն[33] եւ այլն, որոնք բոլորովին կը պակսէին երկրին մէջ:

Մեր ամբողջ յոյսը՝ մանաւանդ կովկասից կտրուելէ վերջ, ներքին միջոցներն էին, եւ իրօք կարճ ժամանակէ վերջ կարելի եղաւ ունենալ քաղաքի մէջ մէկ եւ գաւառի մէջ հինգ պահեստներ, որոնք հաց կը հայթայթէին ժողովրդին:

Պարենաւորման գործը դիւրացնելու նպատակով Վանի մէջ կազմուեցաւ Կօօպերատիւ[34] Ընկերութիւնը, որ իր մէկ ճիւղ ունէր Թիմարի մէջ: Կօօպերատիւ Ընկերութիւն բացաւ փուռ եւ ճաշարան:

3.- *Երկրագործական.*- Անմիջապէս նկատել տանք, որ այս ճիւղը դրական օգուտ չբերաւ Վանին, քանի որ իշխանութիւնը կը կազմուէր այնպիսի ատեն մը, երբ երկրագործական շրջան չէր եւ յետոյ երկրի գաղթը տեղի ունեցաւ գարնան սկզբին:

Ռուսների իշխանութեան օրով արդէն Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը[35] իր մեծ օժանդակութիւնը բերած էր մեր երկրին: Հայ իշխանութիւն իր ձեռքն առաւ այդ բաժինը եւ անմիջապէս ձեռնարկեց կանոնաւորել ջուրերի ընթացքը, մաքրել քանդուած առուները ու լիճերը, գարնան համար պատրաստել բաւականաչափ սերմ[ն]ացու եւ երկրագործական գործիքներ, ուսումնասիրել երկրի մշակութեան ձեւերն ու կարիքները եւ պատրաստի ունենալ երկու միլիոն րուբլի պիւտճէ մը գարնան աշխատանքներու համար:

Վանի հայ իշխանութիւնը կը յուսար որ մօտալուտ գարունը ամէն կերպով օգտակար պիտի լինի, հետեւաբար պատրաստած էր ունենալ այնքան հաց յառաջիկայ հունձքին, որով կարելի լինէր կերակրել Վասպուրականի փախստական ժողովուրդը իր հողին վերադառնալու պարագային:

4.- *Խնամատարութիւն.*- Խնամատարութիւն ըսելով պէտք է հասկնալ դրամական օժանդակութիւն աղքատների եւ զինուորների ընտանիքներին: Ռուս տիրապետութեան օրով պետութիւն կը նպաստէր երկրի մէջ եղած եւ երկրէ դուրս գտնուած ժողովրդին որոշ գումարով: Այս նպատակով Վանի մէջ գործած են [Կովկասի Հայոց] Բարեգործական Ընկերութիւն եւ Համառուսական Քաղաքների Միութիւն[36], որոնց հեռացումէն վերջ հայ իշխանութիւն անոնց ձգած գործը իր վրայ վերցնելով շարունակել սկսաւ: Դժբախտաբար մինչեւ Հոկտեմբերին հազիւ կարողացուեց այդ ուղղութեամբ եղած պարտականութիւնը կատարել բաժանելով 39,945 րուբլի: Այս գործի մէջ մեզ օգնեցին Ամերիկահայ Հայանպաստ Ընկերութիւնը[37], որի ներկայացուցիչ Պ. Վիլեամս[38] Վանի մէջ բացաւ բրդեղէնի աշխատանոց մը, ուր կ'աշխատէին մօտ 400 կիներ:

5.- *Բժշկական.*- Ռուսների իշխանութեան օրով Վանի բժշկական գործը ծանրացած էր Համառուսական Քաղաքների Միութեան եւ Կարմիր Խաչի Ընկերութեան[39] վրայ, որոնք բազմաթիւ ճիւղեր ունէին նահանգի մէջ: Ռուսների հեռացումով մասնագէտների սով յառաջ եկաւ, որով եւ իշխանութեան տրամադրութեան տակ եղած բժշկական գործի վերաբերեալ միջոցները շատ աննպաստ էին: Այնուամենայնիւ կարելի եղաւ հաստատել քաղաքի մէջ մի հիւանդանոց 50 մահճակալով, նաեւ գաւառներու մէջ ունենալ բժշկական կայաններ: Քաղաքի մէջ կար ամբուլաթօրիա[40] մը որը օր օրին կը քննէր դիմող հիւանդները, որոնց թիւը 50-է կ'անցնէր եւ բոլորն ալ ձրիաբար կը դարմանուէին: Բժշկական մասն ունէր բաւական ճոխ դեղարան մը:

6.- *Փոշտ-հաղորդակցութիւն.*- Ներքնապէս նահանգի մէջ եղած հաղորդակցութիւնը բաւարար չափով կը կատարուէր, իսկ արտաքին հաղորդակցութիւնը չյաջողուեց կանոնաւորել մասնագէտներու [անբաւարարութեան], գծերի քանդման եւ ճանապարհների անապահովութեան պատճառաւ:

Ներքնապէս երկրի մէկ ծայրէ միւս թելեֆօնի[41] ցանցով մը պատուած էր. եւ այդ հանգամանք հաղորդակցութեան մեծ դիւրութիւն կ'ընծայէր. ունէին[ք] թելեֆօնի 19 կայաններ՝ չհաշուած քաղաքի մէջ գտնուած բազմաթիւ կայաններ, որոնք այս կամ այն պաշտօնատան մէջ էին հաստատուած: Բաշգալէի գիծը խանգարուած լինելով այդ գծի յարաբերութիւնը կը կատարուէր սուրհանդակներով: Վերոյիշեալ հաշուով հիւսիսէն հարաւ 185 վերստ[42] եւ արեւելքէն արեւմուտք 120 վերստ տարածութեան վրայ կարելի էր երկվա[յ]րկեանի մը մէջ իրազեկ լինել նահանգի դրութեան:

7.- *Ելեւմտական.*- Դրամ չկար բացարձակապէս, այնպէս որ առանց կանխիկ դրամագլխի կազմուեց Վանի հայ իշխանութիւնը: Երբ գրաւուած Հայաստանի իշխանութիւն կազմուեց, մեր պ. նահանգապետ Թիֆլիսէն վերադարձաւ տարեկան չորս միլիոն [րուբլի] պիւտճէի խոստումով, սակայն բաւական է ըսել, որ ութ ամիսների ընթացքին Թիֆլիսէն ստացուեց միայն կէս միլիոն րուբլի:

Վանի հայ իշխանութեան բարձրագոյն խորհուրդը ելեւմտական տեսուչին յանձնեց երկրի հարկերու տասանորդ, հաց, տաւար, ջուր, կալուածք, ինչպէս նաեւ երկրի հարստութիւնը շահագործելու իրաւունքը. այդ է՝ ձուկ[43], աղ, բարակ[44], քարիւղ, քարածուխ, եւայլն:

Արտաքին օժանդակութիւնէ զուրկ ելեւմտական տեսչութիւնը մասնաւորապէս զբաղուեցաւ իշխանութեան պիւտճէի դասաւորութեամբ, որուն հաշիւ կրցաւ ներկայացնել անցեալ Յունուարին: Այդ նախահաշիւ[ի] համաձայն երկրի քաղաքացիական եւ զինուորական բաժանմունքների տարեկան գումար կը հասնէր 10,500,000 րուբլի[ի], որմէ 3,000,000 կարելի կը լինէր հայթայթել երկրի վերյիշուած աղբիւրներէն:

Բայց երբ դրամապէս աւելի նեղուեցինք, այն ժամանակ ստիպուած Փետրուար ամսին հրապարակ հանուեցաւ 164,000 րուբլի գումար մը՝ 5, 10, 25, 50 եւ 100 րուբլիանոց թղթադրամ ներքին շրջանառութեան համար միայն: Այդ գումար ապահովուած էր մեր երկրի բարձրագոյն իշխանութեան կողմէ, ժողովուրդը սիրով ընդունեց եւ գործածել սկսեց, որովհետեւ միւս կողմէ այդ թղթադրամը ապահովուած էր անգլիական] պետութեան Թիֆլիսի շտապի ներկայացուցիչներէն Գափիթան պ. Գրէյսիի կողմէ. այս մասին յետոյ կը խօսինք մանրամասնօրէն:

Ռուսաստանի քայքայման պատճառաւ, կովկաս անիշխանութեան մատնուելով մենք կտրուեցինք անկէ եւ արդիւնք այն եղաւ որ մենք ի վերջոյ թողու[ցի]նք Վանի

նահանգ եւ գաղթի ճամբան բռնեցինք, որի ընթացքին վերջացաւ նաեւ Վանի հայ իշխանութիւնը:

II. ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Երբ Ռուսաստանի մէջ բոլշեւիկները յաղթանակեցին, Վան ըլլալով ռուսների կողմէ գրաւուած մի հողամաս, կրիտիքական[45] րոպէներ սկսաւ ապրիլ, քանի որ ան շրջապատուած էր քրդերով ու տաճիկներով, մինչդեռ առանց անեկսիայի[46] եւ քօնթիզուցիայի[47] կը հրահանգուէր ռուս զինուորներին հապճեպ թողուլ ճակատ եւ դառնալ իւրաքանչիւր իր հայրենիք[48]: Բնականաբար ինչպէս Տաճկահայաստանի ամէն մի մասի, նոյնպէս եւ Վանի մէջ ազգաբնակչութեան ապահովութիւնը կանոնաւորելու համար կանխակալ միջոցներ խորհելու [անհրաժեշտութիւն] պիտի զգացուէր եւ դա կը լինէր անմիջապէս թափուր մնացած ճակատները տեղացի զինուորներ ուղարկել, թշնամու յանկարծական արշաւանքներին դէմ դնելու համար:

Անցեալ Նոյեմբեր ամսին Վանի մէջ ոչ մէկ ռուս զինուոր կարելի էր գտնել, միւս կողմէ՝ գրաւուած Հայաստանի կեդրոնական իշխանութիւնը յայտնած էր որ երկրի վարչական գործեր միայն կարելի էր կազմակերպել, նաեւ՝ ոստիկանութիւն, որն [1]917 Մայիս 1-ին կազմուեցաւ մօտ 200 հոգիէ բաղկացեալ, որոնք կը հսկէին երկրի կարգ ու կանոնին: Սակայն երբ Սեպտ. եւ Հոկտ. ամիսներին ռուս զինուորը թողեց Վան, այն ատեն Գեներալ Սիլիկով[49] խնդրեց տեղացիների անմիջապէս օժանդակութիւն: Այդ օժանդակութիւնը կը կազմակերպուէր բանակ մը ունենալու ատեն միայն, որն կազմելու սակայն հնարաւորութիւն[ներ] կը պակասէին:

Այդ ատեններ Թիֆլիսի անգլ. շտապի անդամներէն պ. Գրէյսին Վան կը գտնուէր – Դեկտ. 26: Ասիկա իր կարգին եկաւ օժանդակելու Սիլիկովի առաջարկին եւ անգլ. շտապի անունով յանձն առաւ Վանի հայ իշխանութեան մասնաւորապէս Զին. Բաժնի ամբողջ ծախքն ու նիւթականը հայթայթել: Այս առթիւ պ. Գրէյսիին մանրամասն ցոյց տրուեցաւ բանակ մը կազմելու համար հայ իշխանութեան ունեցած բոլոր հնարաւորութիւնները եւ գտնուեց որ եթէ յանձին պ. Գրէյսիի անգլ. կառավարութիւն չօժանդակէ Վանի հայ իշխանութեան, վերջինս անկարող է իր ունեցած միջոցներով պահել Վանի նահանգի սահմանները:

Պ. Գրէյսիի խորհրդի համաձայն անմիջապէս պարտադիր զինուորակոչութեան թիւը բարձրացաւ 18[-էն] 25-35, որոնց հոգալու պարտականութիւն իր վրայ վերցուց պ. Գրէյսին:

Վանի բանակի ամսական ծախքը, անոնց ոռճիկները, զինուորների ընտանեաց պահպանութիւնը, ճակատի պահպանման կարեւորութիւնը եւ այլն պայմաններ նկատի ունենալով, պ. Գրէյսին կը խոստանար Յունուար ամսէն սկսեալ պարբերաբար ամսական վճարել 500,000 րուբլի, ինչպէս նաեւ տալ 20 գնդացիր եւ 12 թնդանօթ իրանց մարզիչներով: Այս բոլորի հետ պ. Գրէյսին կը խոստանար զանազան թեքնիք օժանդակութիւններ, այլեւ անգ. միջոցներով ու մասնագէտներով վերջացնել Շահթախթ-Բայազիտ-Վան երկաթուղագծի շինութիւնը, որն արդէն յանձն առած էր հայ իշխանութիւնը, բայց ինքն ալ երեսի վրայ թողած էր միջոցներ ու դիւրութիւններ չունենալու պատճառաւ:

Քափթըն Գրէյսին յանձնառու եղաւ նաեւ երկիրը ապահովել քրտական յարձակումներէ, որպէսզի մենք մեր ուժը գործածէինք միայն թուրք բանակի դէմ, առանց զբաղուելու ուրիշ թշնամիներով: Այս նպատակով պ. Գրէյսին Դեկտ.[ին] մեկնեց Խոյ, տեսնուեցաւ աւազակապետ Սմկոյի[50] հետ, պայմանաւորուեց բարեկամութիւն մը եւ Սմկոյի մէկ նամակն ալ գրուած հայ իշխանութեան ստացուեց, ուր Սմկօն կը

յայտնէր իր տեսակցութիւնը պ. Գրէյսիի հետ, յետոյ կը հրահանգէր որ ինք մեծապէս կը փափաքի բարեկամ մնալ Վանի հայ իշխանութեան, եւ ամէն ատեն պատրաստ է անոր հրամաններ կատարել եւ ընդ առաջ գնալ[51]:

Պ. Գրէյսին անցաւ Կովկաս Ջուլֆայի վրայով, որպէսզի կարողանար իր խոստումը կատարել, բայց այլեւս չկրցաւ ան վերադառնալ Վան Կովկասի ներքին խռովութիւններու եւ մասնաւորապէս Գերմաններու դէպի Կովկաս յառաջանալու պատճառով:

Պ. Գրէյսիի խորհուրդի համեմատ, մինչեւ անոր խոստացած օժանդակութեան հասնելը, անհրաժեշտ էր սկզբնական աշխատանքների ձեռնարկում եւ եղածներով բաւականանալ: Եւ բանակ կազմելու խնդիրը մասնաւորաբար կապուած լինելով նիւթական մեծ գումարների հետ, դարձեալ Գրէյսիի եւ երկրի բարձրագոյն խորհրդի փոխադարձ համաձայնութեամբ ներքին շրջանառութեան համար հրապարակ հանուեցան փոխգիրներ, որոնց մասին մեր տեղեկագրի ընթացքին արդէն մատնանշեցինք:

Հոս կարեւոր կը համարենք յիշել որ երբ ռուսներ հեռացան, Վան մնաց Կերենսկիի[52] իշխանութեան օրով կազմուած հայկական 5-րդ գունդը: Ան սկզբից ի վեր օժանդակեց մեր բանակի կազմակերպման եւ գործնական օժանդակութիւն բերաւ, տալով մարզիչներ, մասնագէտներ մէթրալիոզի[53] համար եւ պահելով յաճախ ճակատը տեղացի զինուորի հետ կողք կողքի:

Տակաւին ռուսների օրով հայ երկրապահ զօրաց խումբ ընդամէնը 200 հոգի – որոնց մասին ակնարկեցինք – մասնակցած է քանիցս ռուս իշխանութեան կատարած հետախուզութիւններին եւ մեծապէս օժանդակած ռուս զինուորականներուն: Հոկտեմբ. Նոյեմբերին կատարուած հետախուզութիւններ դէպի Խօշաբ եւ Շատախ փայլուն արդիւնքներ տուին, թշնամին մատնելով ահ ու սարսափի մէջ:

Սակայն գիտակ թշնամիի մտադրութիւններին, երբ Վանի հայ իշխանութիւն նահանգի վարչական եւ զինուորական պատասխանատուութիւն ամբողջապէս իր վրայ զգաց, ամենից առաջ ամենից աւելի ջանք թափեց բանակը օր մ'առաջ կազմ ու պատրաստ ունենալ, որովհետեւ ինչպէս յայտնի է, թշնամին քաջալերուած ռուսների հեռացումէն, կը պատրաստուէր յարձակուելու եւ իր նախկին սահմաններին տիրանալու կրկին:

Նորակոչ զինուորները կրթելու անմիջական անհրաժեշտութիւնը աչքի առաջ ունենալով կազմուեցան Սպայական Դպրոց մը, ինչպէս նաեւ մէթրալիոզի խմբեր, որոնք կարճ ատենէն իրենց ընթացք աւարտելէ վերջ բանակի մէջ գործնական աշխատանքների լծուեցան:

Ռուսները քաշուելով մեզ թողուցած էին երկու թնդանօթ. սրանք գործածող չունէինք: Թէեւ ամէն միջոց ի գործ դրինք մասնագէտներ բերել[ու] Կովկասէն, բայց չյաջողեցանք. իսկ մեր ուժերով ալ անհնարին եղաւ թնդանօթ գործածելու մասնագիտութիւն սորվեցնել այդ առթիւ կազմուած խմբին:

Կովկասի հետ յարաբերութիւն ունենալու խնդիրը օր օրին անհրաժեշտ կը դառնար. այդ [բանի] եւ բանակի կարիքների համար կարեւոր համարուեցաւ նահանգապետի Կովկաս գնալ[ը] օգնութիւն եւ տեղեկութիւն բերելու համար: Այս նպատակով ալ պ. նահանգապետ ճամբայ ելաւ Փետրուարի վերջեր Կովկաս գնալու, բայց Ջանիկ չհասած լուր կը ստանայ որ Կամուրջ գիւղը թիւրքերը գրաւել են: Այս լուրը ստուգելու համար պ. նահանգապետ ծովով եւ Արճէշի կողմէ ցամաքով հետախուզութիւն մը կը կատարէ եւ իրապէս կը ստուգէ տրուած լուրին ճիշդ լինելը,

որով ճամբան առանց [դէպի] Կովկաս շարունակելու քաղաք կը վերադառնայ մօտալուտ կացութեան մասին մտածելու համար:

Կը մնար օր մը շուտ բանակ կազմ ու պատրաստ ունենալէ վերջ ճակատներ ուղարկել: Այս աշխատանքների ընթացքին յաջողուեց Կովկասից տեղեկութիւններ եւ հրահանգներ ստանալ, որոնք կը թելադրէին սպասել եւ շարունակել սկսուած աշխատանքները, յայտնելով որ օգնական ուժերը արդէն Երեւանից Իգդիր հասեր են, շուտով Վան կը յառաջանան:

Միւս կողմէ սակայն կը հասնէին հետեւեալ լուրեր. Մարտ 12-ին Էրզրում ընկած, Կարս, Արտահան, Ալեքսանդրապօլ թշնամու ձեռքն ընկած, Ղարաքիլիսէ, Ալաշկերտ դատարկուած, Բայազիտ վտանգի տակ. կը մնար Վան, կտրուած արտաքին աշխարհէն, անկիւն մը ընկած, թշնամուն դէմ դնելու աշխատանքով զբաղուած, երբ Մարտ 17-ին անակնկալ կերպով տաճկահայ բանակի հրամանատարութենէն ստացուած հեռագիրը կը հրահանգէր թողնել Վան եւ Կովկաս անցնել:

Վանի հայ իշխանութեան բարձրագոյն խորհուրդը Մարտ 19-ին բացառիկ ժողովի մէջ նկատի ունենալով երկրի պայմանները եւ Կովկասէն տրուած հակասական լուրերը, որոնցմէ ոմանք նահանջելու հակառակ հրահանգներ կու տային, ժողովրդական ներկայացուցիչների հետ որոշեց առայժմ չնահանջել մինչեւ վերջնական հրահանգ, որի ընթացքին թերեւս հնարաւորութիւն լինէր Կովկասի հետ յարաբերութիւն ստեղծել եւ անգլիացիներէն օգնութիւն ստանալ:

Այս շրջանին Վանի բանակի թիւ կը հասնէր 2376 հոգի[ի], որոնցմէ 80 գնդացիր [կրակող], որոնք տեղաւորուեցան Վանայ ծովու հարաւ արեւմտեան եւ հիւսիս արեւմտեան ճակատներուն վրայ:

Զինուորագրութիւն ինչքան որ պարտաւորիչ էր, այնուամենայնիւ հետեւեալ բացառութիւններ Վանի հայ իշխանութիւն իր ուշադրութենէ չէ վրիպ[եցուց]ած, ան այդ առթիւ նկատի է ունեցած բազմանդամ ընտանիքների խումբը, դաշտային աշխատանքները, քաղաքացիական բաժնի պաշտօնէութիւնը, ժողովրդական գործերու ղեկավարները:

Ամբողջ բանակ բաղկացած էր ին[ն] վաշտերէ, իւրաքանչիւր վաշտ ունէր 200-250 զինուոր, մէկ վաշտապետ, երկու հարիւրապետ:

Զինուորական օրէնքով մենք ունէինք հետեւեալ ստորաբաժանումներ.

1.- զինուոր. 2. տասնապետ. 3. յիսնապետ. 4. հարիւրապետ. 5. վաշտապետ: Այս բոլորի գլխին կը կենար զին. Գործերու տեսուչ իր երկու օգնականներով, որոնց հետ մէկտեղ կը կազմէր Զին. Խորհուրդ:

Բանակը զինուած էր մեծ մասամբ ֆրանսական լըբէլ եւ փոքր մասով ռուսական մօսին հրացաններով, իսկ քաղաքապահ զօրքի ձեռք շուէտական սիստեմի[54] զէնքեր էին: Այս զէնքերի մի մաս ստացուած էր Թիֆլիսի կեդրոնական շտապէն, մի մասն ալ ռուսների թողուցածներն էին:

Բանակի պարենաւորում հետեւեալ կերպով էր.

Զինուորը կ'ապրէր կառավարութեան միջոցով: Ռուսների թողած ուտեստեղէնների պահեստները ամբողջութեամբ յատկացուած էին բանակին: Իւրաքանչիւր զինուորին օրական կը տրուէր.

հաց	1.75 ֆունտ[55]	շաքար	1/8 ֆունտ
բրինձ	.28 ֆունտ	իւղ	1/8 ֆունտ
միս	.50 ֆունտ	սապոն	½ ֆունտ ամսական

Կարեւոր կը համարենք [նշել], որ չյաջողուեց զինուորներին հագուստ տալ. անբաւար[ար] չափով տրուած է կօշիկ, գլխարկ, շինել[56]:

Զինուորի ռոճիկը դասաւորուած էր հետեւեալ կերպով:

1-	Զինուորի ամսական	90 րուբլի
2-	Տասնապետին ամսական	110 րուբլի
3-	Յիսնապետ ամսական	200 րուբլի
4-	Հարիւրապետ ամսական	350 րուբլի
5-	Վաշտապետ ամսական	375 րուբլի
6-	Հրամ[անատարի] օգնական ամսական	600 րուբլի
7-	Հրամանատար ամսական	800 րուբլի

Եթէ այս բաժնի մէջ նկատի ունենանք բանակի հետ կապուած փոխադրական միջոցներու, հեռախօսի, գրասենեակներու, պահեստներու, զինուորական դպրոցի, բժշկական գործի համար ծառայողներին տրուած ռոճիկը, այն ժամանակ ամբողջ բանակի պիւտճէ[ի]ն Վանի հայ իշխանութեան յատկացրած ամսական ծախքը կը լինէր 380,155 րուբլի:

Զօրքի փոխադրութիւնը մէկ տեղէ մի ուրիշ տեղ կատարուած միջոցին, փոխանակ անոր ուտեստը իր հետ փոխադրելու, նպատակայարմար համարուած էր որոշ հեռաւորութիւնների վրայ ունենալ պունկտեր[57] – սննդատուն կայան – ուր զինուոր պիտի կրնար կերակրուել, հանգստանալ, եւ գիշերել. ամբողջ նահանգի մէջ կա[յին] 18 պունկտեր:

Զինուորական զանազան պիտոյքների փոխադրութիւնը առանձին հսկողութեան առարկայ դարձած էր Զին. Խորհրդի կողմէ, որպէսզի կարելի լինէր արագացնել գործողութիւնները: Փոխադրական միջոցներ կը հաշուէին կառքեր, սայլեր, ձիեր, ուղտեր, որոնք դրուած էին առանձին պաշտօնեաներու հսկողութեան ներքեւ:

Զինուորական զանազան պէտքեր հոգալու համար կար արհեստանոց մը, ուր կ'աշխատէին հիւսներ, զինագործներ, թիթեղագործներ, երկաթագործներ եւայլն: Գարնան զինուորներին պէտք եղած բանջարեղէններն ալ պատրաստելու հոգ տարուած էր, նախապէս մշակելով բաւական տարածութ[եա]մբ հողեր:

Վանի իշխանութեան ձեռք գտնուած բժշկական միջոցները մեծաւ մասամբ տրամադրուած էին զօրքին: Բժշկական տեսչի կարգադրութեամբ իր պաշտօնեաներէն մէկ մասը կը ծառայէր բանակի մէջ:

Նկատի ունենալու է նաեւ որ Վանայ Լճի հաղորդակցութիւն ալ Վանի իշխանութեան ձեռքն էր. թիւրքեր բնաւ նաւ չունէին, բայց մենք մի քանի նաւ եւ թնդանօթային նաւեր ունէինք:

Մինչեւ անցեալ Փետրուար, քանի որ Գեներալ Նազարբէկովի[58] բանակ կը գտնուէր Ախլաթ, լուրջ երկիւղ մը չկար հիւսիսէն - Առնիսի ճակատ. իսկ Արճէշ արդէն մեր ձեռքն էր. իսկ Ալջավազ գաւառը անբնակ էր: Բայց երբ ռուս բանակի քայքայման պատճառաւ Ախլաթը թողնուեցաւ, թուրք բանակ Կամուրջն եւս գրաւեց փորձելով Ալջավազն էլ գրաւել. այդ ատեն էր որ սկսուեց բաւական կարեւորութիւն տրուել այդ ճակատին:

Հարաւային ճակատը աւելի վտանգաւոր էր: Թուրք բանակի կեդրոն Գաւաշ գաւառը այդ ճակատի թուրք բանակի շուրջն էին հաւաքուած հարաւային գաւառներու հետեւակ քրդերը, որոնք վաղուց ի վեր թշնամի ու պատուհաս էին եղած հայուն:

Հարաւային ճակատի մէկ մասը կը կազմէր Բաշգալէի ճակատը, որը ապահոված էինք փոքրաթիւ զինուորներով, նկատի ունենալով միշտ Մուսուլի ճակատը, ուրտեղից կը սպասէինք անգլ. յառաջխաղացումը, եւ մէկ ալ [կար] այն պարագան,

որ այդ շրջան Սալմաստի հետ կապուած լինելով այնքան վտանգ չունէր, քանի որ Սալմաստի մէջ պատրաստուած հայ նոր բաթալիօն անոր թիկունք կը գտնուէր:

Վերոյիշեալ աշխատանքներից զատ ամէն կերպով Վանի իշխանութիւն ջանաց բարեկամութիւն պահել Չիլանի եւ Նօշարի քիւրտերի հետ, քանի որ վերջիններս Վանի նահանգի թիկունքն ըլլալով, հակառակ պարագային կրնային մեծ վտանգ սպառնալ երկրին: Ճիշդ այս նկատումներով նահանգապետ ինք եւ զինուորական պետերէ մէկը անձամբ քանիցս այցելութեան գացին եւ քիւրտերի հետ փոխադարձ բարեկամութիւն կնքեցին:

Այս պայմանների մէջ Վանի իշխանութիւնը իր աշխատանքները յառաջ կը տանէր երբ անցեալ տարուայ 1918 Մարտ 21-ին թուրքեր հարաւէն յարձակում գործել սկսեցին. բայց շնորհիւ մեր ուժեղ դիմադրութեան, անոնց յարձակումը ձախողուեց եւ թշնամին կրկին յետ շպրտուեց իր նախկին դիրքեր:

Միւս կողմէ կասկածուելով հիւսիսային ճակատից, կարգադրուեցաւ այդ կողմին հետախուզութիւն մը կատարել, որի ընթացքին մերոնք ցամաքէն եւ ծովէն նահանգապետի առաջնորդութեամբ գրաւեցին Ալջավազ, ուր մտեր էին թուրք յառաջապահներ, եւ ծովէն ալ ռմբակոծեցին Կամուրջ եւ Ախլաթ՝ մեծամեծ կորուստներ պատճառելով թշնամիի պահեստներին: Հետախուզութեան առթիւ բռնուեցաւ Չիլանի քիւրտերից 8 հոգի, որոնք յայտնեցին ի մեծ զարմանս Վանի հայ իշխանութեան, այն սերտ յարաբերութիւնների մասին, որ կար թուրք հրամանատարութեան եւ Չիլան-Նօշար քրդերու միջեւ. յայտնեցին միանգամայն որ թուրք հրամանատար Չիլանի աղաների հետ ունեցած յարաբերութեան ընթացքին երկուստեք համաձայն[ել] են յարձակիլ որոշեալ օրին – Ապրիլ 2 – ամբողջ ճակատների վրայ: Այդ յարձակման ընթացքին քիւրտեր խոստացեր էին Առնիս պաշարել, Բերկրի[ի] կիրճ բռնել, նաեւ Սմկոյին եւս դրդել որ Կօթուրի կիրճը փակէ:

Սոյն ծրագրի համաձայն արդէն Վան պաշարուած էր, եւ իրապէս որոշեալ օրին, Ապրիլ 2-ին, թուրքեր նախ սկսան յարձակիլ Ոստան[ի վրայ] հարաւային ճակատէն: Հոն բաւական ուժեղ դիմադրութեան հանդիպելով մեր կողմէ, միանգամայն երկրորդ օր յարձակում գործեցին Առնիսի ճակատէն ալ:

Թշնամիի ուժերի հետ համեմատած՝ մեր ուժերը շատ սակաւաթիւ էին եւ անպատրաստ. մենք Ոստանի ճակատ ունէինք 1000 զինուոր, մէկ պուլիմօթ[59]. իսկ Առնիսի ճա[կա]տ 800 զինուոր, 4 պուլիմօթ եւ նաւային երկու թնդանօթներ, որոնք սակայն օդի մառախլապատ լինելու պատճառաւ յաջող, կամ սպասածին պէս չգործածուեց[ին], որով եւ վերջէն բնաւ արդիւնք չտու[եցին]:

Թուրք բանակի հետ, ինչպէս նախապէս պայմանաւորուած էին, քիւրտերն ալ միացան, որով Արճէշէն մեր յառաջապահներ քշելով իրապէս Բերկրի[ի] կիրճ փակեցին եւ Առնիսը պաշարման մէջ դրին: Թշնամին այս յաջողութենէն ոգեւորուած ուժեղ յարձակումով մը Ոստանի ճակատ պատռեց, որով մենք պարտաւորուեցինք ետ քաշուել եւ յայտարարել որ ժողովուրդ սկսի շարժիլ դէպի Կովկաս:

Ապրիլ[60] ժողովուրդ Ջանիկ չհասած Առնիսի մեր զօրամաս պաշարուելէ խուսափելու համար թողեց հիւսիսային ճակատ. իսկ Բերկրի[ի] կիրճ քիւրտերով գոցուած լինելով, այդ գծով Կովկաս անցաւ մեր ժողովրդի 4-5000 հոգի միայն. իսկ Բերկրի[ի] կիրճ գոցուելէ [բացի], Աղբուլաղի եւ Նօշարի քիւրտերու դաւադրութիւններ պատճառ եղան որ Վանի Լճի կղզիներ մնացին մի քանի հազար ժողովուրդ, իսկ մնացեալների հետ Վանի իշխանութեան անդամներէ մէկ մաս Ապրիլ 6[-ին] ճամբան շեղեց դէպի Պարսկաստան, 12,000 գաղթականութեան հետ մէկտեղ:

Ապրիլ 8-ին Կօթուր հասաւ մեր ժողովուրդ: Հոն Վանի նահանգապետի անունով նամակ մը գրուեցաւ Խոյի քօնսուլի[61] միջոցաւ պարսից Շահին[62], յայտնելով ժողովրդի գալուստ եւ իրենց խնամատարութիւն [խնդրելով] Պարսկաստան գաղթող ժողովրդի վրայ:

Երկու օր նամակի պատասխան սպասելէ վերջ, ճանապարհ շարունակեցինք դէպի Պարսկաստան: Ապրիլ 10-ին Սմկոյի քուրտերը Կօթուր կիրճի բերան փակեցին. հոն մօտ 100 զոհ, ահագին անասուններ եւ ժողովրդական ապրանքներ թողնելէ յետոյ, յաջողեցանք Եզտիքանդի վրայով Ապրիլ 11-ին հասնել Սալմաստ: Դէպի Խոյ փախչող ժողովրդի մի փոքրիկ մաս – ինչպէս վերադարձող կիներէն իմացանք – Խոյ[ի] մէջ բոլորն էլ կը կոտորուին: Իսկ յետագայ փաստեր եկան ապացուցանելու որ Կօթուրի կռիւներուն Խոյի պարսիկ կառավարութիւն քիւրտերուն միանալով միատեղ մեր ճամբան փակել աշխատեր էին:

Սալմաստ հասնելով առաջին գործ եղաւ ժողովուրդ պարենաւորել, եւ այս առթիւ գնահատանքէ վեր է Սալմաստի հայ ազգաբնակչութեան օժանդակութիւնը Վանի հայ գաղթականի վերաբերմամբ:

Այս ատեններն էր Սմկօն դաւադրութեամբ սպաններ էր ասորիների Մարշմոն[63] Մարտ 16[ին] Քօհնաշա[հ]րի մէջ, որի վրէժ լուծելու համար ասորիներ յարձակեր էին քիւրտ գիւղերի վրայ: Այսպիսով տեսակ մը մենամարտ էր սկսած քիւրտ-պարսիկներու եւ ասորիներու միջեւ: Այս պարտիզանական[64] կռիւներէն վերջ [կացութիւնը] այլեւս լուրջ բնոյթ էր ստացած եւ կը սպառնար ամբողջ Սալմաստի ազգաբնակչութեան ապահովութեան:

Պարսիկներ մասնաւորապէս մեր ժողովրդի եւ բանակի Սալմաստ հասնելէ վերջ սկսեր էին փաղաքշական քաղաքականութեամբ մը վարուել հայերի հետ: Սօցիալ-Դեմօկրատ պարսիկ կուսակցութեան[65] պարագլուխներէն Նոպարին[66] յատկապէս Շարաբխան[է]ից մեզ դիմեց եւ խնդրեց որ երկուստեք ջանք չխնայուի ստեղծելու այնպիսի կացութիւն մը, որը կրնար վերականգնել Սալմաստի ընդհանուր խաղաղութիւն եւ պատճառ չդառնալ եղբայրասպան կռիւներին: Նոպարին Թիֆլիսէն նոր վերադարձած լինելով, տուաւ կարգ մը տեղեկութիւններ Կովկասի իրադարձութեանց մասին եւ յայտնեց նաեւ որ ինք անձամբ տեսակցած է Թիֆլիսի Հայ Ազգ. Խորհրդի հետ եւ համաձայնած որ թշնամութեան ոեւէ պատճառ չպէտք է ստեղծուի հայ եւ պարսիկ ազգաբնակչութեան հետ:

Մենք իբրեւ առժամեայ հիւրեր Պարսկաստանի մէջ, բնականաբար ամէն կերպով ընդառաջ պէտք է գնայինք պարսիկ դեմօկրատիայի ցանկութիւններին, միեւնոյն անգամ սակայն անտարբեր չէինք կարող մնալ ասորիների եւ պարսից ու քրտերի միջեւ ստեղծուած հակամարտութեան վերաբերմամբ: Մեր պարտականութիւն կը համարէինք անպայման այդ տարրերու միջեւ եղած թշնամանք[ին] կերպով մը վերջ տալ. այդ կը պահանջէր ընդհանուր ազգաբնակչութեան շահը, այդ կը պահանջէր Սալմաստի մէջ ստեղծուած դրութիւնը:

Վանի ժողովուրդ հասնելով Սալմաստ, Վանի իշխանութեան մնացեալ անդամներ Սալմաստի հայերի հետ հայկ. կոմիտէ մը կազմեցին, որու ձեռք պէտք էր կենտրոնանար ժողովրդի զինուորական եւ պարենաւորման գործը: Այդ մարմին իբրեւ արտայայտիչ Սալմաստի ամբողջ հայ ազգաբնակչութեան իրաւունք ունէր վարել ազգամիջեան յարաբերութիւն ասորիների, պարսիկների եւ քրտերի հետ:

Սակայն որպէսզի Սալմաստի բաղկացուցիչ տարրերու ամբողջի մտայնութիւններ եւ ցանկութիւններ ըստ կամս չընթանան, անհրաժեշտ էր ունենալ կեն[տրոնական] մարմին մը, որը տուն տար ամէն գործերուն: Իրապէս կազմուեց հայ, ասորի

եւ ռուս Կեդ[րոնական] Մարմին մը, որու պարտականութիւն էր երկրի ընդհանուր ապահովութեան եւ ժողովրդի ինքնապաշտպանութեան մասին հոգ տանել, նաեւ պատասխանատու կերպով վարել պարսիկների հետ պաշտօնական քաղաքականութիւն, որ կը վերաբերէր ազգամիջեան թշնամութիւններ հարթելու եւ վերացնելու:

Պարսիկ դեմոգրատիայի հանդէպ հայերին ունեցած ցանկութիւնները սակայն դրական արդիւնք չէին տար, որովհետեւ նոյն պարսիկներ եւ քրտերն էին որ Վանից գաղթող հայերի վրայ յարձակուեցին, ոմանց սպաննեցին եւ կողոպտեցին՝ տանելով անասուններ եւ այլ կարգի գոյքեր:

Պարսիկներ ինչքան մէկ կողմէ ազգամիջեան համերաշխութիւն կը քարոզէին, այնքան միւս կողմէ պատրաստութիւններ կը տեսնէին Սալմաստի վրայ քալելու եւ ասորիներից վրէժ լուծելու: Բայց հայեր չէին կարող անտարբեր մնալ այս ափաշքարա[67] կատարուած իրողութիւնների հանդէպ, քանի որ ասորիներ կը նկատուէին մեզ իբրեւ դաշնակից եւ լինելով քրիստոնեայ տարր, չէր կարող երբեք մեր կողմէ անոնց վիճակը անկարեւորութեան մատնել: Հայերի գլխաւոր մտահոգութիւնն էր համերաշխութեան եզր մը գտնել պարսիկների եւ ասորիների միջեւ: Երբ չյաջողուեց այդ բան, բնականաբար հայեր միշտ ասորիների հետ բարեկամ պիտի մնային, ինչպէս որ յետագային եղաւ:

Վանի ժողովուրդ սահմանակից մասերու վրայ տեղաւորուած լինելով յաճախ ենթարկուած էր յարձակումներու եւ կողոպուտների: Ապրիլ 13-ին պարսիկ զինուած խմբեր յարձակեցան մեր ժողովրդի վրայ, որի ապահովութեան հսկող մեր խմբերի հետ կռուի բռնուեցին: Մերոնք տեղի տալով ժողովրդի հետ քաշուեցան դէպի Սալմաստի կենտ[րոնական] գիւղեր, սակայն կը թուէր թէ պարսիկներ լուրջ պատրաստութիւններ ունէին, քանի որ առանց կենալու անոնք կը շարժուէին դէպի Սալմաստ եւ իրապէս ալ առաջին պատեհութեամբ գրաւեցին Մուղանջուղ գիւղը, իսկ շրջակայ բլուրների վրայ խրամներ փորելով սպասողական դրութեան մէջ դրին մեզ եւ ասորիներին:

Այս վիճակի մէջ Ապրիլ 17-ին հայերի հասցէին նամակ մը ղրկելով կը յայտնէին որ հայերը պէտք է չէզոք մնան եւ չխառնուեն ասորիներին, որոնց պատժելու համար իրենք միջոցներ ձեռք առեր են, աւելցնելով միեւնոյն ատեն որ պարսիկ կառավարութիւն միշտ բարեացակամ է եղած հանդէպ հայերի, հետեւաբար պատճառ մը չկայ որ հայեր այսպիսի խառն րոպէին թշնամանան պարսիկների հետ:

Հայ կոմիտէն նորէն Սալմաստի Կեդ[րոնական] Խորհրդի հետ խոհեմութիւն համարեց պատասխանել պարսիկներին, յայտնելով որ ոչ մէկ կողմն էլ ցանկութիւն չունի համաշխարհային այս անհրաւութեանց օրերին ազգամիջեան կռիւներ ստեղծելու, անհրաժեշտ է պատգամաւորների միջոցաւ եզրակացութեան մը գալ եւ վերջ դնել ոեւէ խառնակութեան: Այս նպատակով ալ Տիլիմանի հէքիմ[68] եւ երկու ուրիշ պարսիկներ պարսիկ բանակատեղին ուղարկուեցին:

Այս բանակցութեան մէջն էինք երբ Ապրիլ 21-ին պարսիկ բանակի մի մաս Տիլիման մտաւ, ցրեց եւ քշեց հոն քաղաքի համար դրուած ասորի պահակախումբը, միւս կողմէ սկսեցին Սալմաստի գիւղեր ռմբակոծել:

Վտանգը մօտիկցած համարելով մենք այլեւս յարաբերութիւն խզուած համարեցինք, որով եւ մեր զօրքն էլ շարժման մէջ դրինք:

Ապրիլ 23-ին մեր զօրքը յարձակման դիմելով գրաւեց պարսիկների թնդանօթ եւ բաւական ռազմամթերք, տալով մի քանի սպաննուածներ եւ վիրաւորներ. միւս կողմէ կը պաշարուի Տիլիման: Այս կռիւների ընթացքին հայերի մտահոգութիւնն էր փրկել Տիլիմանի պարսիկ ազգաբնակչութիւնը:

Ապրիլ 24-ին գրաւուեց Տիլիման քաղաքը, հայ կոմիտէի ձեռք առած միջոցներու շնորհիւ անմիջապէս հաւաքուեց պարսիկ անպաշտպան ազգաբնակչութիւն ասորիներու վրէժխնդրութենէն պահելու համար, եւ խումբ խումբ դէպի Խոյ ղրկուեց ի նշան այն մարդասպան արարքին, որ Խոյի կառավարութիւն ցոյց տուաւ Վանի ժողովրդի նկատմամբ Կօթուրի կիրճէն վերջինիս անցած պարագային՝ յարձակելով եւ սրի մատնելով անպաշտպան ժողովուրդը:

Պարսիկներ այս անյաջողութենէն վերջ ուրիշ միջոցներով դիմեցին Սարայ հասած թուրք բանակի հրամանատարութեան եւ հրաւիրած էին զանոնք գալու եւ Սալմաստ գրաւելու: Իրապէս մեր ստացած տեղեկութիւնների համաձայն Ապրիլ 28-ին իմացուեց որ թրք. բանակը Կօթուր է հասած:

Հարկ անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել թիւրքերու ճիրաններէն ազատելու Խոյի մէջ գտնուած հայ եւ ասորի ազգաբնակչութեանց կեանքը: Այդ իսկ պատճառաւ Սալմաստի Կեդ[րոնական] Կոմիտէն վճռեց յարձակում մը գործել եւ ազատել Խոյի քրիստոնեաները: Այս որոշման գործադրուելուն նպաստեցին այդ ատեն Ուրմիէն Սալմաստ եկող 200-ի չափ ռուս սպաներ, որոնք յօժարակամ Վանի բանակի եւ ասորական բաթալիօնի մէջ անցան. եւ պատրաստութիւններ տեսնուեցան որոշուած օրին յարձակուելու Խոյի վրայ քանի դեռ տաճիկներ Խոյ չէին մտած:

Այս աշխատանքներու մէջն էինք երբ Մայիս 11-ին Ուրմիէն հայ եւ Ասորի ժողովրդի ցանկութեան համաձայն նամակ մը ստացուեց, ուր կը յայտնուէր յետաձգել որոշումը, որովհետեւ իրենք սերտ յարաբերութիւններ սկսած էին Թաւրիզի Դեմօկրատ Կուսակցութեան հետ: Այդ նամակով կը յայտնէին նաեւ որ հայ-ասորի-պարսիկ պատգամաւորութիւն մը շուտով Ուրմի պիտի գայ ընդհանուր համերաշխութիւն կնքելու համար:

Իրապէս այդ պատգամաւորութիւն եկաւ Ուրմի եւ վստահացուց ասորի եւ հայ ազգաբնակչութեան, որ պարսիկ դեմօկրատիան միջոցներ ձեռք առած է ազգամիջեան թշնամութիւնը վերացնելու օր մ'առաջ:

Պատգամաւորութիւնը բաղկացած էր հետեւեալներէ. Ատրպատականի առաջնորդ Ներսէս Եպիսկ. Մելիք-Թանգեանէ[69], Դաշնակցութեան ներկայացուցիչ պ. Յ. Ճերմակէ[70], Խոյի նահանգապետ Իջլալի Միւլք[է] եւ երկու պարսիկներէ: Պատգամաւորութիւնը կը յայտարարէր ու կը խնդրէր որ հայ-ասորական բանակը միանայ պարսիկ կառավարութեան՝ միատեղ օսմանցիներուն իրենց երկրէն վռնտելու համար, իսկ եթէ թիւրքը հակառակ պարագային յաջողեց Խոյ մտնել, այն ատեն պարսիկ կառավարութիւն Շարաբխանէից ռազմամթերք պիտի փոխադրէր Ուրմի եւ Սալմաստ, թրքական բանակի դէմ կռուելու: Իսկ եթէ այս միջոցն էլ չօգնեց, այն ատեն պարսիկ դեմօկրատիան միջոցներ ձեռք պէտք է առնէ նաւերով հայեր եւ ասորիներ ապահով վայր մը փոխադրե[լու] այլ տեղ ուր յարմար նկատուի:

Ուրմի հասած պատգամաւորութեան նպատակներին եւ ծրագիրներին մօտիկէն ծանօթանալու համար Վանի նահանգապետ պ. Կ. Համբարձումեան Մայիս 11-ին Ուրմի [գ]նաց[71], ուր պատգամաւորութեան հետ տեսնուելէ վերջ կը տեսնուի նաեւ տօքթօր Շէդի[72] հետ որն ամերիկեան փոխ հիւպատոսի պաշտօն կը կատարէր: Տօքթ. Շէդ պ. Համբարձումեանին կը յայտնէ որ թիւրքեր Կովկասի մէջ հասեր են մինչեւ Ալեքսանդրապօլ, Երեւանեան Նահանգի մէջ մեծ ընդհարումներ են ունեցեր հայերի հետ, որոնք վերջէն հաշտութիւն են կնքած թիւրքերի հետ, որի համար եւ հայերին տրուած է հասարակապետութիւն: Այդ առթիւ պ. Համբարձումեան ի պաշտօնէ կը յայտարարէ Տօքթ. Շէդին որ իրենք չեն ենթարկուելու Երեւանի

հայկ[ական] հասարակապետութեան եւ ինչպէս մինչեւ այժմ թշնամի ենք եղեր տաճիկների, այնպէս եւ յետ այսու կը կռուենք մինչեւ վերջ: Այս պաշտօնական յայտարարութեան վրայ ալ Սալմաստի եւ Ուրմիոյ հայ ժողովուրդ թշնամի ընդունեց թուրքերուն եւ մինչեւ վերջն ալ կռուեց, առանց րոպէ մը խաբուելու թուրքական խաբեպատիր քաղաքականութեան [դիմաց]:

Այս շրջանին արդէն թուրքեր Խոյ մտեր էին եւ սկսեր էին յառաջանալ նաեւ դէպի Սալմաստ: Վերջի օրեր թուրք բանակի հրամանատար Մուստաֆա Հաֆ[ը]զէն[73] Մարիամ անունով հայ կնոջ մը հետ նամակ մը ստացուեց հայերին եւ ասորիներին ուղղուած, ուր տաճիկ հրամանատար կը յայտնէր թէ իրենք տեղեկացուցած են որ Դաւրէզէն հայեր եւ ասորիներ անձնատուութիւն են առաջարկեր, ինքն ալ կ'առաջարկէ Սալմաստի հայ եւ ասորիներին անձնատուր լինել, ի զուր տեղ անգլիացիների վրայ յոյս չդնել, որովհետեւ վերջիններս Մուսուլի եւ Դաւրիզի շրջան չարաչար պարտութեան են մատնուեր: Հետեւաբար ժողովրդի անմեղ արեան թափուելուն պատճառ չլինելու համար անհրաժեշտ է աճապարել եւ թուրքերուն յանձնուել:

Առանց որեւէ կարեւորութիւն տալու այս նամակին, հայեր եւ ասորիներ համերաշխ ընդհանուր գործը յառաջ կը տանէին, երբ Մայիս 17-ին թուրք բանակ սկսեց յարձակուել Սալմաստի վրայ: Թուրքերու միացած էին պարսիկ սարպազներ[74] եւ ասով բաւական մեծ բանակ մը կազմեր էին: Մենք ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տուինք եւ պարտաւորցուցինք թշնամուն Մայիս 19-ին թողնել եւ քաշուել դէպի Խոյ:

Այս կռիւներուն ընթացքին թուրքեր Ռեւանտուզէն եւս շարժուեր են դէպի Ուրմի միշտ սարսափի մատնելու մտադրութեամբ, բայց հոն եւս չարաչար պարտութեան մատնուելով թողեր ու հեռացեր էին:

Ինչ էլ որ լինէր մեր ուժերը անսպառ չէին. մենք շատ լաւ գիտէինք որ օսմանցիներ օրը օրին իրենց բանակը կը կանոնաւորէին եւ բնական էր որ օր մ'ալ մեզ վրայ պիտի յարձակէին մեր յաջողութեանց վրէժը լուծելու համար:

Ասորիներուն հետ հայերն եւս չէին դադրեր բանակը ուժեղացնելու եւ կազմ ու պատրաստ պահելու համար, միայն մի բան պարզ էր եւ որոշ՝ որ առանց Ուրմիի անմիջական օժանդակութեան չէր կարելի վերջնականապէս ապահովուած համարել Սալմաստի ազգաբնակչութեան ֆիզիքական գոյութիւն: Իսկ Ուրմին գիտակ մեր վիճակին, միշտ կը յուսադրէր, տեղեկացնելով որ Ուրմիի վրայ յարձակուող թրքական բանակը վերջնականապէս ջախջախուած է, թէ անգլիացիք թրքական բանակի թիկունքն են անցած Ռեւանտուզի շրջանի մէջ, թէ Մուսուլ կը ռմբակոծուի անգլ. բանակի կողմէ, թէ Ուրմի վերջնականապէս ապահովուած է, այնպէս որ օգնական ուժեր դրկուին Սալմաստ, աւելցնելով որ Դաւրիզի պարսիկ կառավարութեան հետ բանակցութիւններ վերջացած են, մեր բոլոր պայմաններ ընդունուած են եւայլն խոստումներ ու յոյսեր:

Մարտ 27-ին Ուրմիէն պարսիկ, հայ եւ ասորի խառն պատգամաւորութիւն Վանի նահանգապետի հետ Սալմաստ եկաւ. Իջլալի Մուլք, որ Խոյի նահանգապետն էր, յայտնեց որ Խոյ-Ջուլֆա-Շարաբխանէ-Սալմաստ գծի վրայ թուրքեր 10,000-նոց բանակ մը կենտրոնացուցեր են. պարսիկ կառավարութիւն միջոցներ է ձեռք առած զանոնք իր սահմաններէն դուրս հանելու:

Միւս կողմէ Յունիսի 3-ին տեղեկացուեց որ թուրքեր Շարաբխանէից անցեր են դէպի Թաւրիզ, այլեւս կարելի էր կռահել այն մտադրութիւններ զորս տաճկական բանակ ծրագրած էր, եւ այն խարդախութիւններ զորս ի գործ դրած էին պարսիկ դեմօկրատիայի ղեկավարներ մէկ կողմէ թուրքեր հրաւիրելով իրենց երկիր

պաշտպանելու եւ միւս կողմէ մեզ խաբելու եւ համերաշխութիւն անուան տակ մեզ քայքայելու օր մ'ալ յանկարծակի[ի] բերելու:

Յունիս 3-ին Ղարաթափայէն, ուր կը գտնուէր թուրք բանակի հրամանատրութիւն, հայ եւ ասորիներուն գրուած նամակ մը ստացուեց ուր կը գրուէր. «Մենք պարսիկ կառավարութեան կողմէ նշանակուած ներկայացուցիչներս եկած են[ք] Խոյ մի շարք խնդիրներու մասին տաճկաց զօրքի Սալմաստի ճակատի մեծ հրամանատարի հետ խօսելու: Մենք խօսեցինք Ուրմիոյ եւ Սալմաստի մէջ եղած հայ եւ ասորի ժողովուրդների հանգստութեան մասին եւ հետեւեալը որոշեցինք. հայերու եւ ասորիներու ղեկավարներու հետ տեսակցութիւն մը ունենալ, որի համար ուղարկելու էք մի յանձնախումբ կազմուած հայերի եւ ասորիների եւ Ձեզ համար վստահելի անձնաւորութիւններէ: Տեսակցութեան վայրը որոշուելու է Խոյի եւ Սալմաստի միջեւ պէտք եղած բանակցութիւն իրականացնելու համար: Յանուն մարդկութեան թերեւս կարելի լինի երկուստեք ցոյց տրուած բարեացակամ վերաբերմունքին [շնորհիւ] վերացնել մեծ դժբախտութիւնը եւ այսպիսով մնացածների կեանքի ապահովութիւնը ապահովել»:

«Կ'իմանանք որ աղա Իջլալ Մուլքն եւս Սալմաստ եկած է. եթէ կարիք կայ, նա էլ պատգամաւորների հետ միասին թող գայ:

«Այս նամակի պատասխանին կը սպասենք վաղը կէսօրին. եթէ որոշուած ժամին պատասխան չհասնի, մենք ստիպուած կը լինենք ետ գնալ: Ստորագրուած կրօնական յանձնախումբի նախագահ Մուքալլեմ իւլ Միւլքէն եւ Միրզա Մահմատ Ալի Խան[75] տոքուզ վզարայէն[76]»:

Իջլալի Միւլք պատասխանեց հետեւեալ կերպով.

«Նամակը ուշ հասաւ, հայերի եւ ասորիների կողմէ ղրկուելիք ներկայացուցիչները կարող են գալ միայն վաղը, եւ կ'որոշուի վայրը:

«Այստեղ ես իմ գործերը վերջացրած եմ եւ կը սպասեմ նաւակի մեկնելու համար»: 1918 Յունիս 4 Ղալասար ժամ 11½:

Յունիս 6-ին Սալմաստի ճակատի կօմենդանդ[77] Մուստաֆա Հաֆըզէն կրկին Ղարաթափայից գրուած, ստացուեց հետեւեալ նամակ ի պատասխան Իջլալի Միւլքէն գրուած նամակին:

«Մեծարգոյ Իջլալի Մուլք [1]334 Յունիս 5

Ձեր ընկերներուն ուղղուած նամակը ստացուեց. նամակի պատասխանը ուշանալու պատճառաւ անոնք մեկնեցին Թաւրիզ: Անոնք հոս եկած էին կարգ մը խնդիրներ հասկնալու եւ թէ հայ եւ ասորիների վերաբերմամբ յանուն մարդկութեան ծառայութիւն մը մատուցանելու: Իմ նպատակները Մարիամ անունով հայ կնոջ մը միջոցով հայ եւ ասորիներին ուղղուած նամակով իմացուցած եմ արդէն. նորէն կրկնեմ որ Ձեր ճիժ պիժի[78], կնոջ ու ծերերու թափուելիք արեան համար ի սրտէ կը ցաւիմ եւ ի տես այդ անմեղ զոհերի թափած արեան նորէն այդ ժողովրդի անհատներու արեան թափուելու պատճառ եղողները տեսնելով կը խղճահարուիմ. իսկ եթէ յանձնուելու եւ զղջալու առաջարկը ընդունելու լինի, մի կերպ մեր մարդասիրութիւն կը ցուցնենք: Այս մասին եթէ կը ցանկաք անձամբ տեսնուել, դուք մինակ եւ եթէ յարմար կը նկատէք անոնցմէ մէկ մէկ հոգի բանակատեղ գալ յարմար կը տեսնուի: Այս բոլոր ի գիտութիւն Ձեզ կը յայտնեմ:

Օսմանցի Գօմանդանդ Մուստաֆա Հաֆըզ»

Մասնաւորապէս հայեր տաճկաց բանակին յանձնուելու միտք բնաւ չէին կարող ունենալ: Հետեւաբար կը մնար պատրաստուել եւ օրհասական կռիւ մղել: Արդէն

Իջլալ Միւլք եւ Յ. Ճերմակ Դաւրիզէն յոյսերնին կտրած, Յունիս 8-ին Ուրմի վերադարձան, իսկ պարսկական նաւեր շատոնց մոռցուա՛ծ էին:

Նոյն օր ռուսներ յուսահատած իրերու այս կերպ վերջաւորութեան համար, պարտաւորուեցան Խոյ գնալու եւ հակառակ պարագային թուրքերին յանձնուելու: Այս վտանգաւոր քայլի առաջն առնելու համար Վանի նահանգապետ պ. Կ. Համբարձումեան անմիջապէս ուղարկուեցաւ հայ կոմիտէի կողմէ ռուսների քով խնդրելու, որ իրենց այդ վտանգաւոր քայլէ ետ կենան, քանի որ այդպիսով թէ՛ իրենք պիտի վնասուէին եւ թէ՛ անոնց միջոցով թշնամին մեր գաղտնիքներ իմանալով աւելի յաջող կերպով կը կատարէր իր յարձակումը: Ռուսներ մեզ անձանօթ պատճառաւ կը յայտնէին որ իրենք ասորիների խոստումներին չեն կարող հաւատք ընծայել, աւելցնելով որ եթէ հայեր իրենց պիտի օժանդակեն, իրենք պատրաստ են Վանի բանակի մէջ մտնելու եւ ամէն աշխատանք կատարելու: Հայեր համաձայնելով ռուսների հետ, յաջողեցան ետ կեցնել անոնք իրենց մտադրութենէն եւ ասորիների հետ միացեալ ոյժ մը կազմելով դէպի Խոյ գնալու արշաւանքը կազմակերպելու միջոցներ ձեռք առին:

Ուրմին այս անգամ վերջապէս իր խոստումներ գործադրութեան դրաւ: Աղա Պետրոս[79] լուր տուաւ որ ինք 3000-նոց բանակով մը արդէն Խանթախթ էր հասած Յունիս 11-ին:

Յարձակումը պիտի կատարուէր Յունիս 13-ին: Այդ առթիւ աղա Պետրոս աջ թեւով պէտք էր անցնէր տաճկական բանակի թիկունք դէպի Շարապ-խանէն: Վանի բանակ 1200 հոգի ճակատէն պիտի յառաջանար թուրքերի կենտրոնատեղիի վրայ, իսկ Սալմաստի ասորական բանակ քօլօնէլ[80] Կանտրատեւի[81] եւ ասորի Աղա Դաւուդի[82] առաջնորդութեամբ՝ թուով 1000 հոգի, պիտի անցնէր ձախ թեւով Կօթուրի կիրճը փակելու: Այս յարձակումներ պիտի ղեկավարէին մեր կողմէ հայ Զին. Մարմին նախագահութեամբ քօլօնէլ Սինելնիկօվի եւ ասորիների կողմէ Աղա Պետրոսի եւ քօլօնէլ Թափուռեւի կողմէ, որ նշանակուած է Ուրմի ընդհ. հրամանատարութեան կողմէ:

Յարձակում սկսելէ առաջ Յունիս 11-ին մեր հետախուզող խմբեր հանդիպեցան թրքաց հետախոյզ խմբերին. երկուստեք կռիւ տեղի ունեցաւ, որի ընթացքին թուրքեր թողին ու հեռացան: Յաջորդ օր խաղաղ անցաւ:

Յունիս 13-ի արշալոյսին մեր կողմէ յարձակում սկսուեց, թշնամին յանկարծակիի եկած պաշտպանողական կռիւ մղել սկսեց, մենք անպատճառ յաջող կերպով պիտի կրնայինք թշնամին փախցնել, եթէ Աղա Պետրոս իրապէս միշտ յայտարարած ուժը իր հետ ունեցած ըլլար, որովհետեւ կռիւների ընթացքին միայն յայտնի եղաւ որ Աղա Պետրոսի ուժը փոխանակ 3000-ի միայն 500 հոգի էր, որոնք չկարենալով ծրագրի համաձայն աջ թեւից յառաջանալ, թշնամիի հակայարձակման ենթարկուեցան եւ ցրուեցան: Մինչդեռ կեդրոն եւ ձախ թեւ իրենց յարձակումները յաջող յառաջ կը տանէին, թուրքեր խորտակելով աջ թեւ պարտաւորցրին մեզ կանգնեցնել մեր յառաջխաղացումը: Թուրքերի այս յաջողութիւն եւ Աղա Պետրոսի մինչեւ Խանթախթ քաշուել տխուր կերպով անդրադարձան ձախ թեւի վրայ եւս, որտեղի ասորական բանակ եւս վհատած ետ քա[շ]ուել սկսեց:

Վանի բանակ երեք կողմէ պաշարուած էր գրեթէ. կը մնար անմիջապէս հրահանգել եւ ետք քաշել: Յունիս 18-ին ժողովուրդ արդէն գաղթած էր դէպի Ուրմի:

Թշնամին ոգեւորուած մեր նահանջէն սկսեց մեզ հապճեպ կերպով հետեւել: Ուրմիի դռների առջեւ մենք պարտաւորուեցինք կրկին դիմադրել թշնամիին, որն

ընդհանուր ծրագրի մը համեմատ, որն իմացանք ձեռքերնիս ընկած թրքական գրութիւններէն, Սուլտուզի կողմէն եւս սկսեր էր յառաջանալ դէպի Ուրմի: Մենք պաշարուած էինք Ուրմիի մէջ, բայց առանց յուսահատելու կռիւ շարունակեցինք մինչեւ Յունիս 22 երբ թշնամին հիւսիսէն սկսաւ նահանջել:

Մեր բանակ անգիտակ թշնամու յանկարծական նահանջէն, սկսեց հետապնդել զայն: Յունիս 28-ին գրաւեց Քերիմապատ եւ հասաւ մինչեւ Կուշչի, ուր տեղ երկու հայ զինուորներ բռնուելով յայտնեցին որ մեր Սալմաստ քաշուելէն մէկ օր վերջ Անդրանիկ[83] 5000-նոց բանակով մը Խոյի վրայ է արշաւեր եւ տաճկաց բանակը սարսափի մատներ: Այդ պատճառաւ թշնամին մեզ թողնելով աճապարեր է Անդրանիկի յառաջխաղացումը կասեցնելու: Անդրանիկ դժգոհ Երեւանեան հասարակապետութենէն թողեր էր ու մեզ միանալու նպատակով Խոյի վրայ էր յարձակեր, բայց փամփուշտի չգոյութեան պատճառաւ եւ մեր նահանջի ձայն առնելով կրկին դէպի Ջուլֆա է քաշուած:

Հարաւի կողմից յառաջացող բանակն եւս թողեց եւ հեռացաւ մեր սահմաններէն: Այս դրութեան մէջ անհրաժեշտ էր ուժեղ ռազվետկա[84] մը կատարել դէպի Սալմաստ եւ աշխատել Անդրանիկի բանակի հետ յարաբերութիւն ունենալ: Այդ առթիւ աշխատանքներ կատարուեցան, բայց ասորիներ չկարենալով որոշուած ուժը հասցնել եւ ճակատ ուղարկել, այդ պատճառաւ էլ յետաձգուեց դէպի Սալմաստ կատարուելիք հետախուզութիւն: Միայն Յուլիսի 4-ին կրկին Անդրանիկի զինուորներէն Միսակ անունով մէկը եկաւ մեր բանակ եւ պատմեց որ Թիֆլիսը, Կարսը, Արտահան եւ Ալեքսանդրապոլ թիւրքեր գրաւած են, Երեւան էլ բանակցութեան մէջ էր հաշտութիւն կնքելու: Անդրանիկ դժգոհ այս քայլէն թողեր ու հեռացեր, բայց մեզի չկրնալ միանալու համար կրկին ետ քաշուեր ու Նախիջեւան գացեր է:

Այսպիսի անորոշ կացութեան մէջ էինք, երբ թշնամին կրկին հարաւէն իր լքած դիրքերը վերադարձաւ: Բնական էր Անդրանիկի յառաջխաղացումը կասեցնելէն վերջ թշնամին աճապարած էր գալ եւ իր կիսատ թողուցած գործը վերջացնելու: Մենք մեր կողմէ ուժեր ուղարկեր էինք Քերիմապատ պաշտպանելու, ինչպէս նաեւ Բարանտուզ-Չայ Հայտարապատէն յառաջացող թուրքերու առաջքն առնելու համար:

Այս կացութեան մէջ Յուլիս 8-ին անսպասելի կերպով Ուրմի եկաւ անգլիական օդանաւ մը, որի յանկարծական երեւում ամէն բան մոռցնել տուաւ: Ան ժողովուրդ ոգեւորութեան առաջնորդեց: Օդանաւ եկած էր Միանայի անգլ. բանակէն: Օդանաւորդ[85] շատ սեղմ ժողովի մէջ յայտնեց որ Պարսկաստանի մէջ անգլիացիներ միայն 6000 զօրք ունին. Միանա փոքրիկ յառաջապահ խումբ մը միայն կայ. անգլիացւոց գիծն է Բիջար եւ Զէնջան[86]: Յետոյ յայտնեց որ անգլիացիք իբրեւ օգնութիւն Ուրմի պիտի հասցնեն ռազմամթերք, 20 մարզիչներ Մայորի[87] մը հետ: Իբր այդ առաջարկեց յատուկ օր մը նշանակել, որպէսզի անոնք իրենց օգնութիւն Սային-Կալա հասցնէին, իսկ մենք ալ մեր կողմից ասորիների հետ գնայինք եւ ստանայինք: Այդ օր որոշուեց Յուլիս 28-ին:

Այս յայտնութիւններ, որոնք շատ գաղտնի պէտք է պահուէին, ի մեծ զարմանս բոլորին, հասարակութեան սեփականութիւն դարձան: Թէ ովքեր էին այդ լուրը դուրս տարածողները մեզ յայտնի չէ, որովհետեւ այդ առթիւ երբեմն ասորիներ երբեմն ռուսներ մեղադրուեցան: Միայն յայտնելով այս իրողութիւնը, կարեւոր կը համարենք ըսել, որ այդ լուրեր ժողովրդին մէջ անցնելով, վատ տպաւորութիւն

թողեց[ին] ժողովրդի վրայ եւ ամէնք իմանալով անգլ. ուժերի սակաւաթիւ լինելու հանգամանքը յուսահատ[ու]եցին:

Մինչ այդ Յուլիս 17-ին Քերիմապատի շրջանից մեր հետախուզող խմբեր բռնեցին թուրք սուրհանդակ մը հետեւեալ գրութեամբ, որի պատճէնը կարեւոր կը համարենք զետեղել հոս:

«Առ նախկին նախագահ Վանայ ի Ուրմիա

«Օսմանեան կայսրութեան եւ նոր կազմուած Հայ հասարակապետութեան մէջտեղ 11 Յունիս 1334 թուով հաշտութիւն կնքուած է: Կէօմրու քաղաքը եւ իր շրջաններու մէկ մասը ու Ուրմիա քաղաքը եւ Էջմիածին գիւղաքաղաքը եւ իր շրջանակներու մէկ մասը եւ Երեւան Թուրքիոյ տրուած է, Վրաստան եւ Ատրպատական հասարակապետութիւններու եւ Հայաստանի սահմաններն որոշուած չեն: Ի մէջ Հաշտութեան Գրին գրուած խնդիրներով զբաղուող յանձնաժողովը Վանայ նախկին նախագահ[ի]ն եւ վանեցի գաղթականներու մինչեւ Երեւան գալու հրաման տրուած է: Ճամբան հասկնալու համար ալ դիմելու է պատերազմական ճակատին գտնուող թուրք հրամանատարներուն:

ի Գէօմրի գտնուող նախագահ հայ յանձնաժողովի

Դրագոփով»

Այս գրութեան ճակատը գրուած էր Ալի-Իհսան[98] փաշայի մի քանի տողանոց խմորատիպ գրութիւն, որով տաճկաց հրամանատար կը յայտարարէր հայերուն գալ սահման, զէնքեր յանձնել եւ 50 հոգիին մէկ զէնք ստանալով Երեւան կամ Վան անցնել:

Բնականաբար ինչպէս միշտ այս անգամ եւս զգուանքով պիտի ընդունուէր թուրքերու այս կերպ շինծու եւ կեղծ քաղաքականութիւնը: Այս սկիզբէն ի վեր հայեր կորզելու նպատակով ի գործ դրեր են թուրք վարիչները:

Մենք սակայն առանց կարեւորութիւն տալու, ասորիների հետ կը մտածէինք ճիշդ օրին հասնել Սային-Կալա՝ մեզ գալիք օգնութիւնը ընդունելու:

Այս նպատակը իրագործելու համար նախ պէտք էր հարաւի ճակատ գտնուող թրքական բանակը ջարդել. երկրորդ, հիւսիսային ճակատի վրայ ուժեր կեդրոնացնել, որպէսզի հարաւի ճակատի գործողութիւններ կատարելու ատեն թշնամին յանկարծ հիւսիսէն մեր թիկունքը չվտանգէր դէպի Ուրմի առաջանալով:

Ասորի եւ հայ միացեալ Զինուորական Մարմին որոշեց [թէ] հայեր ճակատ եւ ձախ թեւ պիտի բռնէին 1200 զինուորներով. Աղա Պետրոս 1500 զինուորներով թիկունքէն Ուշնիի[89] վրայ պիտի քալէր աջ թեւով. իսկ Աղա Դաւուդ 1000 հոգիով Մարգաւառի եւ Թարգաւառի ճակատ պիտի պահէր. իսկ Ուրմի-Սալմաստ բատալիօն[ի][90] 200 հոգի[ները] պիտի պահէին Քարիմապատի ճակատը:

Այս օրերին Աղա Պետրոսի ուղարկուած Ալի Իհսան փաշայից մէկ երկար նամակ ստացուեց, որի բովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն է: Նամակի մէջ տաճկաց փաշան կը գրէ Աղա Պետրոսին. «Ձեր Խալիլ փաշային[91] գրուած հաշտութեան նամակը ստացուած է: Խալիլ փաշան այդ առթիւ շնորհ կ'ընէ Ձեզի Ձեր զօրքերով անցնել Ձեր երկրներ, միայն յանձնելով ռուսների թողուցած ռազմամթերք եւ թնդանօթներ[»]:

Խօսելով տաճկաց եւ գերմանացւոց յաջողութիւնների մասին Ռուսաստանի եւ Կովկասի մէջ, կը յայտնէ որ հայեր Կովկասի մէջ ապստամբեցին, բայց ջարդուեցին եւ վերջէն հաշտութիւն կնքուելով՝ Կաթուղիկոսին դիմումին վրայ անոնց հասարակապետութիւն շնորհուեց 12000 ք[առակուսի] քիլոմեթրի վրայ: Կովկասի մէջ կազմուած է Վրաստանի, Հայաստանի եւ անոնց ամէն (sic!- Վ.Ղ.) մեծ

Ատրպէջանի հասարակապետութիւնը: Յայտնեցէք հայերին որ եթէ կը փափաքին իմ միջոցաւ կարող են գալ եւ անցնել Երեւան: Թէեւ կովկասահայեր տաճկահայերին այս բոլոր դժբախտութեանց պատճառ կը համարեն, բայց եթէ կամեցուի ես զանոնք իրենց երկիրներ ղրկելու շնորհ յանձն կ'առնեմ: Անգլիացիների մասին կ'աւելցնէ որ անոնք մի խումբ – բիր աւուշ[92] – զօրքով եկած էին Միանա, բայց մեր յառաջապահներ զանոնք քշեցին մինչեւ Ղազուին, ուր ենթարկուելով Քիւչիւկ Խանի յարձակման, փախան մինչեւ Համատան:

Խօսելով Անդրանիկի մասին, կը գրէ որ թէեւ նա սկզբին ճերմակ դրօշակ բարձրացնելով Ջուլֆայէն անցաւ եւ մեր թիկունք ուզեց վտանգել, բայց շնորհիւ մեր զինուորների դիմադրութեան պարտուեց եւ երեք տեղէ ալ վիրաւոր Նախիջեւան անցաւ, ուր սկսած է մահմետականների կոտորել: Գալով Սալմաստի կռիւներուն, ես թէեւ իմ զօրք շարժման մէջ չէի դրեր, բայց երրորդ օր երբ իմ բանակ գործողութիւններին մասնակցեց, հայերի Անդրանիկի միանալու խնդիրը ջուր ինկաւ եւ մենք յաղթեցինք: Այն Ռուսական սպաներ որոնք եկան եւ Կովկաս կ'ուզէին անցնիլ, իմ ձեռք անցան, որոնց քննելէ վերջ կրկին ետ ղրկեցի, իսկ նաւով Շարաբխանէ հետախուզութեան եկող խումբը մեր ձեռք գերի իյնալով՝ զանոնք ղրկեցի Վանի եւ Դիարբէքրի մէջտեղ ճամբաների վրայ աշխատցնելու: Կ'աւելցնէ այս բոլորէ վերջ յանուն ձեր երախաներուն եւ ծերերու թափուելիք արեան, եթէ անձնատուր լինէք՝ մեր բարեխնամ կառավարութիւն ձեզ պիտի շնորհէ ազատութիւն եւ հանգիստ. հակառակ պարագային պատասխանատուութիւնը ձեզ վրայ կը մնայ:

Նոյն ատեններ Մուսուլի Ասորի պատրիարք ասորիներին ուղղուած նամակով մը կը յայտնէր որ ինք Խալիլ փաշայի հետ խօսած է եւ կը խնդրէ որ անձնատուր լինեն, քանի որ օսմ. կայսրութիւն դարերէ ի վեր մեզի բարեկամ է եւ աս բոլորի համար շնորհ կ'ընէ եթէ անձնատուր լինէք:

Սոյն նամակներին եւս ոչ մի հաւատք չընծայելով, Յուլիսի 23-ին մեր յարձակումը սկսեց: Միայն Աղա Պետրոսը իր խոստացած ուժը կրկին չկրցաւ ճակատ բերել, 1500-ի փոխարէն 3-400 հոգի միայն մասնակցեցան գործողութեան: Բայց որովհետեւ հարաւի թշնամին այնքան ուժեղ չէր, չորս օրուայ յամառ կռիւներէ վերջ յաջողուեց թշնամուն փախցնել, որով եւ ճամբան բանալ դէպի Սային-Կալա: Յուլիս 28-ին հարաւի ճակատի մեր երեք թեւեր Նակատինի մէջ միացան եւ աճապարեցին Սային-Կալա, այդ շրջան թողնելով Վանի բանակից հետեւակ մասը: Հայերէ եւ ասորիներէ բաղկացեալ այս խումբը Սային-Կալա կը հասնի, բայց քանի որ անգլիացիք ճիշդ օրին եկեր եւ մեզ հոն չգտած վերադարձեր էին, մի օրուայ ճամբայ եւս կը յառաջանան եւ կը հանդիպին անգլ. զօրքին: Հոն կը պատրաստուին կրկին վերադառնալ, եւ երբ Օգոստ. 4-ին անգլիացիների հետ խումբը Սային-Կալա կը հասնի, հոն այլեւս կը գտնէ Ուրմից նահանջող ազգաբնակչութիւնը, որով եւ այլեւս չեն շարունակի յառաջանալ:

Երբ հարաւի ճակատի մեր գործողութիւնները կը յառաջանային, թշնամին հիւսիսի ճակատէն սկսաւ յարձակիլ, եւ որովհետեւ Աղա Դաւուդ խոստացած իր 1000 զինուոր չէր կրցած ժամանակին ճակատ հասցնել, թշնամին Մարգաւառէն եւ Թառգաւառէն[93] ճակատ բաց գտնելով ուղղակի Ուրմիոյ վրայ յարձակեց, միեւնոյն ատեն պաշարելով Քարիմապատ գտնուող հայկական բատալիօնին, որմէ միայն 60-65 հոգի ազատեցան, մնացածները սպաննուեցին կամ գերի տարուեցին:

Իսկ ժողովուրդ յանկարծակիի գալով թշնամիի յառաջխաղացման ատեն առանց պաշտօնապէս հրահանգի սպասելու սկսաւ նահանջել եւ ինչպէս վերը շեշտեցի, Օգ. 4-ին Սային-Կալա հասաւ:

Խուճապով կատարուած այս նահանջը հայերէ եւ ասորիներէ բնական մահեր խլեց: Թշնամին թիկունքէն մեզ հարուածելով Սօլտուզի մէջ ուզեց մեր ճամբան փակել: Այդ առթիւ Մարաղայէն հեծելազօրաց խումբ մը եկած էր, որին յաջողուեց Սօլտուզի տեղական ժողովրդի հետ միացած յարձակել մեր ժողովրդի վրայ եւ բաւական գերի տանել, եւ վերջ իմացանք բոլորն էլ կոտորուել էին:

Հայ զինուորների խումբ մը միշտ յետսապահ մնալով ամէն օր կռուի հանդիպած էր եւ յաճախ լուրջ ընդհարումներ ունեցած աւազակային խմբերի հետ ինչպէս եւ տաճկաց զօրքին:

Սային-Կալա հասնելով, մենք այլեւս փրկուած կը համարէինք մեզ. սակայն Օգոստ. 6-ին թշնամին թիկունքէն կրկին երեւաց եւ Սային-Կալայէն կէս ժամ հեռու գիւղաքաղաքի մը մօտ մենք կրկին գործ ունեցանք տաճկաց հեծելազօրաց հետ: Հոն եւս թշնամիի ձեռք ժողովրդի մի մասը անցաւ: Մի օր կռիւներէն վերջ մասնաւորապէս Վանի ժողովուրդի եւ բանակի համար ծանր զոհեր ունեցանք կորցնելով նաեւ նահանգապետ պ. Կ. Համբարձումեանը: Մեզ կը մնար այլեւս ճամբան բռնել դէպի Համատան, քանի որ Բիջար հասնելէ յետոյ Օգոստ. 11-ին անգլ. զինուորական իշխանութիւն եւս հրահանգեց ուղղակի յառաջանալ դէպի Համատան, ուր դիւրութիւններ պիտի տրուէին յոգնած, ուժասպառ եւ անօթի ժողովրդին:

Օգոստ. 15-ին Պըհար[94] հասանք ուրտեղից յառաջ անցնել արգելուած էր: Հոն անգլ. իշխանութիւն սկսեց զէնքեր հաւաքել եւ ժողովուրդին կենտրոնացնել Բաղդադի ճամբի վրայ եղող Թազագանդ անբնակ գիւղը: Անկէ առաջ Համատան հասած 2000 հայ գաղթականներ ուղարկուած է[ին] դէպի Սուլթանապատ, ուր մի քանի հայ գիւղեր կային, բայց վերջէն այդ կարգադրութիւն փոխուեց երբ այլեւս որոշուեց ժողովուրդ ուղարկել Բաղդադի շրջան:

Մեր զօրք բացի հրամանատար պ. Լեւոնի[95] հետ եղողներէն մնացածներ բոլորն ալ կազմալուծուած էին գաղթի ընթացքին: Պըհար անցնելով երբ զէնքեր հաւաքուեցան, այլեւս դիւրին չէր հաւաքել զանոնք:

Օգոստ. 17-ին անգլ. զին[ուորական] իշխանութիւն յայտնեց հրամանատար պ. Լեւոնին որ Ազգ. Մարմնի հետ համաձայնութեան են եկած որ 18-48 տարեկաններ պէտք է զինուորագրուեն եւ կազմեն հայկական զօրք: Թէեւ ոչ մէկ դիւրութիւն չտրուեցաւ Ազգ. Մարմնի հետ յարաբերելու, բայց տրուած հրամանը գործադրելու համար անմիջապէս ձեռնարկուեցաւ բանակի վերակազմութեան: Յայտարարութեամբ մը զինուորներ Աբշինա[96] կանչուեցան, ուր լինելու էր հայ եւ ասորի զօրքերի կենտրոնատեղին: Կարճ ատենի մէջ յաջողուեց Վանի բանակի թիւը հասցնել 900-ի: Ասորական եւ հայկական ուժերի հրամանատար նշանակուած էր քօլօնէլ Մըքարդըն, որն իրեն օգնականներ նշանակեց հայերից պ. Լեւոն եւ ասորիների կողմէ Աղա Պետրոս: Մեր զօրք կենտրոնանալով սկսաւ անգլ. մարզիչներու ձեռքի տակ զինուորական կրթութիւն ստանալ:

Բանակի վերակազմութեամբ միայն բաւականանալ չէր լինի: Ժողովրդական գործեր վարելու համար Վանի, Սալմաստի, Ուրմիոյ եւ Համատանի կոմիտէներ ի մի եկան եւ կազմելով միացեալ կոմիտէ մը գործի սկսան: Անհրաժեշտ էր այս առթիւ Թեհրանի կոմիտէի հետ յարաբերութեան մտնել: Մինչ այդ ատեն գաղթականութեան Համատան հասնելու լուրը Թեհրան ստացած էր եւ

կարգադրած էր որ Ազգ. Մարմնի անդամներէն պ. տօք. Ստեփանեանը Համատան գայ եւ մօտիկէն ծանօթանայ գաղթականութեան կարիքներուն:

Գաղթականութիւն արդէն դէպի Բաղդադ էր ուղարկուած պարբերաբար. միւս կողմէ սակայն հիւանդներուն եւ որբերին պէտք էր հոգ տանիլ:

Տօք. Ստեփանեան Համատան եկաւ: Անոր միջոցով այլեւս Թեհրանի հետ յարաբերիլ դիւրին լինելով, անմիջապէս ձեռնարկուեցաւ որբերու հաւաքման եւ կարճ ատենի մէջ հաւաքուեցան 400-ի մօտ որբեր, որոնք փոխադրուեցին Շուառին[97] գիւղ, ուրտեղ հնարաւոր միջոցներով զանոնք խնամելու եւ հիւանդներ բժշկելու:

Սեպ. 22-ին մեր բանակ ուղարկուեց Սինէ հոն ճակատը պահպանելու: Միւս կողմէ Ուրմի-Սալմաստ բաթալիոնը, որը կրկին Համատանի մէջ կազմակերպուած էր, թուով 300 հոգի, ուղարկուեց Բիջար:

Բանակ ճակատ ուղարկելէն վերջ, մնացած հիւանդ զինուորներ Համատան հաւաքուեցան եւ առանձին հիւանդանոցի մը մէջ խնամքը սկսաւ:

Նոյ. 12-ին երբ կարգադրուեց որ ճակատի մեր զինուորներ փոխադրուեն դէպի Բաղդադի շրջան, բանակի շտապ, որ կը գտնուէր Համատան, ճամբայ ելաւ եւ Նոյ. 22-ին հասանք Բաքուբա, ուր տեղաւորուած էր նաեւ ժողովուրդը:

Ներկայիս Բաքուբայի մէջ մեր զօրքի թիւը կը հասնի 820-ի:

Ուրմի եւ Սալմաստ բաթալիօն լուծուած է ասորիների մէջ: Մեր բանակն ալ ասորական անունով հայկական մաս կը համարուի: Ժողովրդի թիւ 15,000-ի կը հասնի հաշուելով Ուրմիայի բնակիչները] եւ Սալմաստցիներն էլ: Կայ գաղթականութեան ներքին գործերի համար նշանակուած կոմիտէ մը, նաեւ առաջնորդարան մը առաջնորդութեամբ Վահրամ ծայր. վարդպտ. Կանաչեանի:

*

Վերջացնելէ առաջ սոյն տեղեկագիր, կարեւոր կը համարենք յիշատակել հետեւեալը.- նկատի ունենալով որ Վանի նահանգապետը սպանուած է, նաեւ Վանի իշխանութեան անդամներուն մեծ մասը՝ ոմանք Կովկաս, ոմանք Պարսկաստանի այլ մասերու մէջ կը գտնուին, հետեւաբար այս տեղեկագիր լրիւ, ամբողջական չի կարելի համարել. այդ առթիւ կրնայ թերութիւններ ունենալ: Բայց այսքան իբր կատարուած իրողութիւն պաշտօնական համարել անհրաժեշտ կը համարենք եւ այդ առթիւ կը ստորագրենք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Դիպուածական յայտնաբերումը կը կատարուէր Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի տնօրէն եւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տագէսեանի հետ փոխանակեալ է-նամակի մը կցեալ նիւթ մը, որ կը վերաբերէր Դոկտ. Ռուբէն Օ. Սահակեանի *Հանդէս*ին ԼԹ. հատորով (էջ 207-24) հրապարակուած մէկ ուսումնասիրութեան: Սահակեան հոն յիշատակած էր խնդրոյ առարկայ փաստաթուղթերը, նշելով թէ պատճէնը տրամադրած է պատմաբան Միհրան Մինասեան: Հետեւաբար, դիմելով ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Հիմնարկի յուշագրութիւններու եւ վաւերագրերու բաժնի վարիչ պատմաբանասէր Մինասեանի, կը տեղեկանայինք թէ բնագիրն ամբողջութեամբ հրատարակուած էր արդէն *Բանբեր Հայաստանի Արխիւների*

գիտական ժողովածուին 126րդ համարին մէջ (Երեւան, 2018, էջ 52-90), եւ շնորհակալութեամբ կը ստանայինք պատճէնը մեր լուսանկարներէն բացակայող էջին, որով եւ հնարաւոր կ'ըլլար ամբողջացնել մեր պատրաստած նիւթը:

[2] Օրինակ, յարաբերաբար ծաւալուն յուշագրութիւն մըն է Սահակ Տէր Թովմասեանի «Մեծ Աղէտը (Յիշատակարանէս՝ Վան-Պարսկաստան-Կովկաս)» խորագրեալ նիւթը, որ որոշ ընդմիջումներով լոյս տեսած է Հ. Յ. Դաշնակցութեան Երկրի Կեդրոնական Կոմիտէի շաբաթը երեք անգամ լոյս տեսնող *Աշխատանք* պաշտօնաթերթին մէջ, 10 Ապրիլ 1919ի համարէն սկսեալ:

[3] Գրուած 1919ին, Պաղտատ, ուր հեղինակը հանգրուանած էր նահանջող վանեցիներու հետ:

[4] Այս բաժինը, Յակոբ Փափազեանի եւ Հայկազ Պօղոսեանի խմբագրումով (որոշ ուղղումներով ու ծանօթագրութեան մը յաւելումով), հրատարակուած է *Վան-Վասպուրականի Հերոսամարտը – 75* ժողովածուին մէջ, Երեւան, 1990, էջ 115–26:

[5] Այս ժողովածուն կը պարունակէ նաեւ «Տարագիր Վասպուրական 1915–1918» խորագիրն ու «Վասպուրականը Կովկասի Մէջ» ենթախորագիրը կրող բաժին մը, որ 86–111 էջերը գրաւելով անմիջապէս կը նախորդէ «Վանայ Անկախ Կառավարութիւնը» հատուածին, բայց բովանդակութեան ցանկին մէջ կը յիշատակուի առանց հեղինակի անուան: Այդ անանուն հատուածն ալ որոշապէս կը պատկանի ժամանակաւոր կառավարութեան երկրագործական գործերու տեսուչ Արմենակ Մաքսապետեանի գրչին եւ անոր անբաժան մաս կը կազմէ «Վասպուրականի Իշխանութիւնը» հատուածը:

[6] Տեղեկագիր՝ պատրաստուած 1919ին Երեւան, ՀՅԴ իններորդ Ընդհանուր Ժողովին (27 Սեպտեմբեր-30 Հոկտեմբեր, 1919) ներկայացուելու համար, ինչպէս նշուած է *Վէմի* խմբագրական ծանօթութեան մէջ: Հմայեակ Մանուկեան կը զբաղեցնէր ներքին գործերու տեսուչի պաշտօնը ժամանակաւոր կառավարութեան կազմին մէջ:

[7] Արսէն Հացագործեան (1882–1983) իր յուշերուն մէջ կը նշէ թէ ինք Երեւանի Գայանեան եւ Խրիմեան դպրոցներու արեւմտահայ բաժիններու աւագ ուսուցչի պաշտօնը կը վարէր, երբ Երեւանի Արեւմտահայ Խորհուրդը 1917ի Դեկտեմբերին կ'որոշէ զինք ուղարկել Վան՝ Վասպուրականի մէջ նոր ուժեր պատրաստելու կարիքը նկատի ունենալով: Տեղին կը գտնենք այստեղ նշել հետեւեալը: Վահան Թէքէեանի խմբագրապետութեամբ Աղեքսանդրիա շաբաթը երեք անգամ լոյս տեսնող *Արեւ* լրագրի 25 Նոյեմբեր 1918ի 85րդ (550) համարին մէջ կը գտնուի «Վանի Վերջին Նահանջը» խորագրով գրութիւն մը, որ շարունակուած է յաջորդ քանի մը համարներուն մէջ: Խմբագրական նշումով կը տեղեկացուի թէ Պաղտատի առաջնորդ Մուշեղ Արք. Սերոբեան «Հայ Ազգ. Միութեան քարտուղարութեան միջոցաւ» թերթին ղրկած է հրատարակուող տեղեկագիրը: Իսկ Մուշեղ սրբազան, իր հերթին, կը նշէ թէ 17 Սեպտեմբերին Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի եւ Եգիպտոսի Հայ Ազգային Միութեան արդէն ներկայացուցած էր «*Վանի վերջին նահանջին եղերական ու հերոսական դրուագները, քաղելով բերանացի կցկտուր տեղեկութիւններէ*»: Ապա կ'աւելցնէ. «*Այս անգամ այդ դրուագները կը ներկայացնեմ հանրային ուշադրութեան ... աւելի մանրամասնուած, ու թուականներով ճշգրտուած, քաղելով զանոնք վանեցի Պ. Եղիշէ Վարդանեանի օրագրութենէն, եւ Պ. Արսէն Հացագործեանի դիտողագրերէն*»: Պոլսոյ հրատարակուող *Հայրենիք* ամսագրի

Դ. տարուան 10րդ (46) համարով (Օգոստոս 1926), կը գտնենք «Վրաններու Տակ (Էջեր Տարագրութեան Օրերէն» խորագրեալ յուշագրութիւն մը, որուն որպէս հեղինակ ներկայացած է Թռչնիկ գրչանունով անձ մը: Այդ օրերուն Պաքուպայի վրանաքաղաքը գտնուող հեղինակը հոն կը պատմէ իր մէկ զրոյցը Մուշեղ սրբազանի հետ, անկէ խնդրելով գաղթականները իսկոյն Պաղտատ փոխադրել, եւ կ'ըսէ. «*Սրբազանը կը խոստանայ միջնորդութիւն յարուցել միայն ուսուցիչներուս եւ քանի մը արհեստաւորներու համար...*» (էջ 61): Իսկ *Հայրենիքի* յաջորդ՝ Սեպտեմբեր 1926ի համարով (Դ. տարի, թիւ 11 (47)) շարունակուող յուշագրութեան մէջ ընդգծելէ ետք թէ Սերոբեան կը փափաքէր «նահանջի տեղեկագրին փութացումը», ծանօթագրութեամբ մը կը նշէ. «*Պաղտատ հասնելէն յետոյ, ընկերս տեղեկագիրը կազմեց, գոնաւ Եպիսկոպոսին, որը փութաց* իր սեփական ստորագրութեամբ *ղրկել Եգիպտոսի «Արեւ»ին՝ ուր եւ հրատարակուեցաւ*» (էջ 125): Թէեւ «ընկերս տեղեկագիրը կազմեց» արտայայտութիւնը կրնայ ենթադրել տալ թէ Արսէն Հացագործեանը կրնայ ըլլալ այդ ընկերը եւ, հետեւաբար, հեղինակէն տարբեր անձ, բայց իրողութիւնն այն է թէ Թռչնիկը նոյնինքն Հացագործեանն է, որ այդ գրչանունով մինչ այդ աշխատակցած էր զանազան թերթերու (Բ[ախտիար Մ. Յովակիմեան, *Հայոց Ծածկանունների Բառարան*, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., Երեւան, 2005, էջ 175]: Այս հաստատումին կը զօրակցի նաեւ Պաքուպայի գաղթականներուն նկատմամբ ազգային մարմիններու եւ Սերոբեան սրբազանի վերաբերումին արժեւորման ընդհանուր ոգին, որ կը դրսեւորուի Հացագործեանի «Պաքուպայի Հայ Փախստականները» յօդուածին մէջ (*Կիլիկիա* օրաթերթ, Ատանա, 8 Յունիս 1919, թիւ 51 եւ 14 Յունիս 1919, թիւ 56): Հացագործեանի անուան կը հանդիպինք իբրեւ վաստակաւոր դաստիարակ եւ Հայաստանի «Վասպուրական» Հայրենակցական Միութեան հիմնադիրներէն մին Ցեղասպանութեան յիսնամեակի նախօրեակին՝ 1964ին, Անտոն Քոչինեանի ուղղուած նամակին մէջ, ուր կը խնդրուի Նոր-Վան կամ Նոր-Վասպուրական կոչել Սեւանայ Լիճի արեւելեան ափին կառուցուելիք արդիւնաբերական քաղաքը (Վարազդատ Յարութիւնեան, «Հայրենիքն Անմոռաց Է», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2007:1, էջ 274–76): Չենք տեսած իր *Իմ Կեանքի Պատմութիւնը* ինքնակենսագրական յուշերը (Երեւան, 1957) եւ *Գոյատեւում* գործը (Երեւան, 1978):

[8] Սարիադեան ժամանակաւոր կառավարութեան զինուորական գործերու տեսուչ Պուլկարացի Գրիգորի քաջալերանքով պահ մը կը վարէ զինուորական պահեստապետի պաշտօնը, յաջորդելով Յովհաննէս Թումանեանի որդիին՝ Արտաւազդի, որ 1918ի Նոյեմբերին որպէս վերջնապահ իր կեանքը վրայ պիտի տար նահանջող վասպուրականցիներու կեանքը ապահովելու համար:

[9] Աւետիս Յարութիւնեան այլապէս լաւ պրպտուած եւ խնամուած իր յօդուածին մէջ հաւանաբար մեքենագրական անուշադրութեան հետեւանքով Թէոդիկի վերոնշեալ գրութեան համար իբրեւ աղբիւր յիշատակած է *Ամէնուն Տարեցոյցը*ի Ժ.-ԺԴ. տարիներու միացեալ համարի (1920) 109րդ եւ յաջորդող էջերը, մինչդեռ այդ տեղեկութիւնները ամփոփուած են տարեցոյցին ԺԵ. տարուան (1921) համարի համապատասխան էջերուն մէջ:

[10] Վարդանեան, էջ 4–6: Իդէպ, գիրքին մէջ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի հօր մականունը տպագրական սխալի հետեւանքով դարձած է Կապոցիկեան: Հոն Սարիատեանի անուան կը հանդիպինք Սէրիատեան տարբերակով:

[11] Թէոդիկ, 109–113:

[12] Մաքսապետեան իր վերոյիշեալ գրութեան մէջ կ'ըսէ. «... *երկար վիճաբանութեան նիւթ եղան մեր իրաւասութեանց եւ անուանումի հարցերը: Ի վերջոյ յարմարագոյն եղաւ կոչել «Վարիչ» փոխանակ «Տեսուչ» կամ «Նախարար» անուններ կրելու...*» (*Վասպուրական*, էջ 106):

[13] «Տեղեկագիր Վանի Հայ[կական] Ժամանակատր Կառավարութեան 1917 Դեկ. 1 – 1918 Դեկ. 1 Վանից-Բաղդադ» խորագրեալ տեղեկագիր մը չէր կրնար գրուած ըլլալ Համատան 1918ի Սեպտեմբերին..., բայց գրուած կրնայ ըլլալ Պաղտատ 1918ի Դեկտեմբերին:

[14] *Վասպուրական*, էջ 106: Իդէպ, Մաքսապետեանի գրութեան թուական ներկայացուած է 1919ի Նոյեմբերը *Վասպուրական* ժողովածուին մէջ (էջ 112): Կը խորհինք թէ գրաշարական սխալ մը թոյլ տրուած է: Թուականը պէտք է ըլլայ 1929, մանաւանդ երբ նկատի ունենանք թէ վերը մէջբերեալ ծանօթագրութեան մէջ կը վկայակոչուի տասներկու տարիներու անցքը՝ Վասպուրականի իշխանութեան անցքերը գրառելու առաջին ճիգէն ետք:

[15] Զաւէն պատրիարք Տէր-Եղիայեան, որ օսմանեան իշխանութիւններու կողմէ աքսորուած էր Իրաքի Մուսուլ քաղաքը, 30 Դեկտեմբեր 1918ին հոնկէ մեկնելով Պաղտատ հասած էր 1 Յունուար 1919ին՝ հոնկէ Պոլիս իր պատրիարքական աթոռը վերադառնալու համար: Պաղտատ գտնուած շրջանին, Պաքուպա հանգրուանած հայ զինուորներու հարցով զբաղելու նպատակով Զաւէն պատրիարք Պաքուպա գացած էր 5 Յունուարին եւ Պաղտատէն հեռացած 9 Յունուարին (Զաւէն Արքեպս., *Պատրիարքական Յուշերս – Վաւերագիրներ եւ Վկայութիւններ*, Հրատ. թիւ 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, Գահիրէ, 1947, էջ 259–67): Կը հետեւի թէ Մաքսապետեանի տեղեկագիրը պատրաստուած եւ Զաւէն պատրիարքի յանձնուած էր 9 Յունուար 1919էն առաջ:

[16] Զաւէն Արքեպս., էջ 302:

[17] Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, ԺԵ. Տարի, 1921*, էջ 107–30:

[18] «Գրաւած Տաճկահայաստան»ը հարկ է հասկնալ որպէս ռուսերու կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստան:

[19] 1913–14ի դրութեամբ, առաւելաբար Վանի եւ Աղթամարի թեմական դիւանաթուղթերէն քաղուած վիճակագրական տուեալներու համաձայն, Վան քաղաքն իր արուարձաններով կը բովանդակէր 30,084 հայ, Արճակ-Թիմար՝ 15,411, Բերկրի՝ 5152, Արճէշ-Ալջաւազ՝ 16,202, Հայոց-Ձոր՝ 6913, Սարայ՝ 826, Բաշգալէ (Աղբակ)՝ 3505 (Ա-Դօ, *Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914–1915 Թուականներին*, Լոյս տպարան, Երեւան, 1917, էջ 30): Կը նշանակէ թէ Վանի վերջին նահանջի նախօրեակին կատարուած մարդահամարին համաձայն, նկատի ունենալով միայն վերը թուարկուած գաւառները կամ շրջանները, անոնց հայ բնակչութիւնը նուազած էր երկու երրորդով:

[20] Այս պէտք է ըլլայ արդիւնքը այն վիճակագրութեան, որուն յղում կատարած է Հմայեակ Մանուկեան իր յուշերուն մէջ, ըսելով թէ 1917ի Դեկտեմբեր 1ին Շրջանային Վարչութիւնը կազմած է վիճակագրական Բիւրօ մը բաղկացած Զաւէն Կորկոտեանէ, իրմէ, Աւետիս Թերզիպաշեանէ, Սամուէլ Մեսրոպեանէ եւ Միքայէլ Տէր Միքայէլեանէ (Մանուկեան, *Վէմ*, ԺԲ. համար, Փարիզ, 1937, էջ 73):

[21] ՀՅԴ անդամ Կոստի, Կոստիա կամ Կոստանդին Համբարձումեան (1882–1918) մասնակցած է Առաջին Աշխարհամարտի շրջանի կամաւորական շարժման եւ մասնակից դարձած Արամ Մանուկեանի գլխաւորած Վանի առաջին ժամանակաւոր իշխանութեան՝ 1915ի[17]ժամանակակիցներու վկայութեամբ՝ ան

վայելած է լայն ժողովրդականութիւն եւ, իր գաղափարակիցներու կողքին, յարգանքը նաեւ ոչ-դաշնակցական շրջանակներու:

[22] Այլուր՝ Ընդհանուր Կոմիսար եւ Նախագահ Կոմիսարներու Խորհուրդի (Վարդանեան, էջ 17):

[23] Մաքսապետեան,- որ կազմէն դուրս ձգելով նահանգապետի օգնականն ու Զաւարեանը կը թուարկէ սկզբնական եօթ անուն իբրեւ անդամ կառավարութեան, որուն «բաժինները յետոյ փոփոխութեան ենթարկուեցան», կ'աւելցնէ թէ ժամանակաւոր կառավարութեան կամ իշխանութեան «կը մասնակցէին երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներն ալ, առանց պաշտօնի», ու կ'ըսէ. «*Կը յիշեմ ... Կովկասէն եկած Հայրապետ Յովհաննիսեան եւ Զաւրի[ի]եւ մը, որո[ն]ցմէ առաջինը նախագահի օգնական նշանակուեցաւ, իսկ երկրորդը փոստ-հաղորդակցութեան վարիչ*» (*Վասպուրական*, էջ 106): Սարհադեան, որ նահանգապետի օգնականի անուն չի տար, կը գրէ. «*Սկզբում այդ մարմինը 7 հոգուց էր կազմուած, բայց մի երկու-երեք ամիս յետոյ, ինչքան յիշում եմ, բարձրացաւ 10-ի,*- ապա կ'աւելցնէ.- ...Վարչական մարմնի գործունէութիւնը այդ ժամանակներում ենթակայ էր Վանում գոյութիւն ունեցող կուսակցութիւնների (Դաշնակցական եւ Ռամկավար) լիազօր երկու ներկայացուցիչների վերահսկողութեան, որոնք մասնակցում էին վարչական մարմնի ժողովներին եւ խորհուրդներ ու թելադրանքներ տալիս» (Սարհադեան, էջ 156–57): Վարդանեան կը գրէ. «*Շրջանային վարչութիւն[ը] ... կ'որոշէ ... նախարարական խորհուրդի նման մի խորհուրդ ստեղծել՝ կոմիսարներ անունով*», որուն կազմը ժողովուրդին կը յայտնուի 24 Յունուար 1918ին պատերու փակցուած յայտարարութեամբ, եւ այդ կազմին մէջ խնամատարական կոմիսար կը նկատէ Հայրապետ Յովհաննէսեանը (Վարդանեան, էջ 16–17): Մեզի կը թուի թէ կառավարութեան կազմը սկիզբէն իսկ ընդգրկած է ներկայացուող ցանկին մէջ յիշատակուած տեսուչ-վարիչ-կոմիսարները, որոնց թիւն էր ինն եւ ոչ թէ տաս: Ուրիշ առիթի կը մնայ լուծել հանելուկը նահանգապետի օգնականի անուան, որ Մաքսապետեան երկու տարբեր գրութիւններու մէջ կը ներկայացնէ երկու հակասական ձեւերով, նա՛խ՝ *Յովհաննէս Հայրապետեան*, ապա՝ տասներկու տարի անց՝ *Հայրապետ Յովհաննէսեան*: Յիշողութեան վրէ՞պ արդեօք: Կը թուի թէ *Հայրապետ Յովհաննէսեան* անունը Մաքսապետեանի կամ Վարդանեանի արձանագրութիւններուն միջոցով սողոսկած է յետագայ շարադրանքներու մէջ (ինչպէս, օրինակ՝ Աւ. Յարութիւնեան, էջ 42. նաեւ՝ Ռ. Սահակեան, էջ 338):

[24] Պէտք է կարդալ Գրիգոր Կէօզէեան կամ Կէզեան (Պուլկարացի Գրիգոր), Վանի 1915 Ապրիլի հերոսամարտի ղեկավարներէն, որ մահացած է Պոլիս 1922ին եւ արժանացած փառաւոր յուղարկաւորութեան մը Սկիւտարի մէջ (Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, 1923, Ժէ. Տարի*, էջ 415): Թէոդիկ կը գրէ թէ այս անուս, արհեստով ատաղձագործ եւ կանուխէն յեղափոխական գործունէութեան լծուած հերոսը 1908ին իր գաղափարի ընկերներէն Դաւոյի մատնութեամբ ձերբակալուած է Վանի մէջ «*մէկ միլիոն փամփուշտի գրաւման ափեն, ծայրայեղ խոշտանգումներու ենթարկուելով բանտին մէջ*», իսկ վանեցիներու «*Պատմական նահանջին, իրե՛ն եւս վիճակուեցաւ ահաւոր խաչակրութիւն մը որ հին ժամանակներու «Նահանջ Բիւրու»ն գլեց անցաւ*» (Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ. Տարի, 1922*, էջ 362–63): Մեր ներածականին մէջ նշուած Մաքսապետեանի ծանօթագրութիւնը ակնարկութիւն կ'ընէ «օրինակ»ներու: Կը տարուինք մտածելու թէ Կէօզէեան-Գէորգեան շփոթը կրնայ հետեւանք ըլլալ սխալ արտագրումի:

[25] ՀՅԴի անդամ Հմայեակ Մանուկեան (1888–1920), որ ինչպէս մեր ներածականին մէջ յիշատակուած էր իբրեւ յուշագիրներէն մին Վանի երկրորդ ժամանակաւոր կառավարութեան եւ վերջին նահանջին, նախապէս մասնակցութիւն բերած էր Վանի 1915ի ինքնապաշտպանական կռիւներուն, միաժամանակ շարունակելով *Աշխատանք* շաբաթաթերթի հրատարակիչ-խմբագիրի դերը, զոր սկսած էր կատարել 1913ի Նոյեմբերէն: Իդէպ, շաբաթաթերթին 1913ի համարներուն մէջ ներկայացած է Հմայեակ Մ. Խորոզեան անունով՝ որպէս տնօրէն խմբագիր յաջորդելով Իշխանի (Նիկոլ Պօղոսեան, Միքայէլեան [1883-1915]), նախքան Հմայեակ Մանուկեան անունով ներկայանալը: Վանի նահանջի շրջանին Երեւան անցնելով, ընտրուեր է խորհրդարանի անդամ եւ վերամիացեր *Աշխատանք* թերթին՝ զայն վարելու իբրեւ պատասխանատու խմբագիր:

[26] ՀՅԴ անդամ Արմենակ Մաքսապետեան (1887–1957) 1911ին խմբագրելէ ետք *Աշխատանք* շաբաթաթերթը, 1912-1915 տարիներուն հետեւեր է Նանսի, Ֆրանսա, գիւղատնտեսական համալսարանի դասընթացքին, նախքան Վան վերադառնալը՝ կրկին մասնակցութիւն բերելու նոյն թերթին խմբագրական աշխատանքներուն: 1919ին վարած է Հայաստանի խորհրդարանի առաջին քարտուղարի, ապա նաեւ ներքին գործերու օգնականի պաշտօնները: Իր «Վանի Նահանգային Կոմիսարիատի Գործունէութեան Պատմութիւնից (1917–1918թթ.) յօդուածին մէջ (*Բանբեր Հայաստանի Արխիւների*, համար 126, Երեւան, 2018, էջ 85) Սահակեան կը նշէ թէ 1921ին Պարսկաստան ապաստանած Մաքսապետեան 1922ին վերադարձած է Հայաստան, ծառայած է Ամերկոմի մէջ եւ գնդակահարուած է 1937ին: 31 Օգոստոս 2013ին Թեհրանի *Ալիք* օրաթերթին հրատարակած «Յիշատակ – Արմենակ Մաքսապետեան (1887–1957)» յօդուածով կը նշուի թէ Մաքսապետեան Պարսկաստանի Արաք քաղաքը հաստատուելով լծուած է կրթական գործունէութեան եւ թէ 1957ին հոն իր մահկանացուն կնքած մշակութային գործիչը ետին ձգած է ձեռագիր աշխատութիւններ, որոնց մէջ մին «Վասպուրականը՝ Փետրուարի Յեղափոխութեան Մէջ» խորագրով (https://alikonline.ir/news/social/item/508- յիշատակ-արմենակ-մաքսապետեան-1887-1957 (28 Նոյեմբեր 2019-ի դրութեամբ)):

[27] ՀՅԴ անդամ Սամուէլ Մեսրոպեան (ծնած Շատախ 1887 կամ 1888ին՝ [Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Հայ Մամուլի Մատենագիտական Գործեր*, խմբագիր՝ Կ. Յովհաննէսեան, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 2014, էջ 607]) 1915ին Վանի հերոսամարտի նախօրեակին խումբ մը գործակիցներով ստեղծեր էր Շատախի Ինքնապաշտպանութեան Զինուորական Մարմինը եւ Արամ Մանուկեանի նահանգապետութեան օրով նշանակուեր էր Շատախի գաւառապետ: Վանի երկրորդ ժամանակաւոր կառավարութեան ելեւմտական տեսուչի հանգամանքով ստորագրեր է ներկայ բնագրին ելեւմտական բաժնին մէջ նշուած փոխգիրերը:

[28] ՀՅԴի անդամ Զաւէն Կորկոտեանի անուան կը հանդիպինք իբրեւ Երեւան հաստատուած արեւմտահայ փախստականները ներկայացնող ութ պատգամաւորներէն մին՝ 4 Փետրուար 1919ին բացուած Արեւմտահայ Երկրորդ Համագումարի ընթացքին (Ամատունի Վիրաբեան [պատասխանատու խմբագիր], *Համահայկական Խորհրդակցութիւններ (1912–1920ԹԹ.)*, Հրատ.՝ Հայաստանի Ազգային Արխիւի, Երեւան, 2004, էջ 301): 1919ին վարած է քարտուղարութիւնը Սիմոն Վրացեանի եւ Դաւիթ Անանունի խմբագրութեամբ հրատարակուող Հայաստանի Կօօպ[179]ատիւների Միութեան պաշտօնաթերթ

Հայաստանի Կօօպերացիա երկշաբաթաթերթին: Յետագային հեղինակած է կարեւոր նշանակութիւն ներկայացնող *Խորհրդային Հայաստանի Բնակչութիւնը Վերջին Հարիւրամեակում (1831-1931)* հատորը (Հրատ.՝ Մելքոնեան Ֆոնտի, Երեւան, 1932), ինչպէս նաեւ *Ճերմակ Ջարդից Դէպի Կարմիր Շինարարութիւն* հատորիկը (Պետական Հրատ., Երեւան, 1929), նուիրուած Հոկտեմբերեան Յեղափոխութեան տասնամեակին եւ առ ի պատասխան Դաշնակցութեան պաշտօնաթերթ *Դրօշակի* մէջ Վրացեանի ստորագրած «Ճերմակ Ջարդ» խորագրեալ յօդուածին եւ անոր հետեւած այլ հրապարակումներու:

[29] Սպայակոյտի:

[30] 1956ին Լոնտոն աչքերը փակած Ճորճ Ֆրետերիք Հենտըլ Կրէյսի ծնած էր Պելֆասթ եւ 1904-14՝ վարած էր վերակացութիւնը Ուրֆայի Ամերիկեան Միսիոնարական Ճարտարարուեստական Հիմնարկին, որով եւ առիթ ունեցած էր ոչ միայն լաւապէս ծանօթանալու արեւմտահայ նահանգներուն, այլեւ սորվելու հայերէն լեզուն: Անգլիական բանակի Թիֆլիս տեղակայուած առաքելութիւնը զինք հաւաքագրած էր իր աշխարհագրալեզուական գիտելիքներուն համար որպէս Յատուկ Հետախուզութեան սպայ եւ առ այդ 1918ին քրտական ցեղախումբերու մօտ թրքական քարոզչական աշխատանքները չեզոքացնելու նպատակով լծուած էր աշխատանքի՝ նախքան արտաքին գործոց նախարարութեան կողմէ Երեւան ուղարկուիլը: Պաքուի անգլիացի փոխ հիւպատոս Ռանըլտ ՄաքՏաննըլ անոր վերագրած է Վանէն Իգտիր քսանհինգ հազար հայերու ապահով անցքին իրագործումը (John Fisher, "Man on the Spot: Captain George Gracey and British policy towards the Assyrians, 1917-1945", *Middle Eastern Studies*, 44րդ տարի, թիւ 2 (Մարտ 2008) էջ 4-5): Օգտագործած ենք յօդուածին առցանց տարբերակը հետեւեալ կայքէջէն http://eprints.uwe.ac.uk/11912/2/REF_output_MES_article.pdf , 18 Նոյեմբեր 2019ի դրութեամբ:

[31] Պաշտօնական անուանումով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հիմնուած էր 1881ին, Թիֆլիս, բժիշկ Բագրատ Նաւասարդեանի նախաձեռնութեամբ: Հայ իրականութեան մէջ բարեգործական միութիւն մը ստեղծելու առաջին փորձը չէր ան, բայց մինչեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութիւնը որոշապէս ամենատարածուն բարեսիրական մարմինն էր, որ անխտիր օժանդակած է արեւելահայերու թէ արեւմտահայերու:

[32] Ցարական Ռուսաստանի մէջ գործածուած ծանրութեան չափ, հաւասար՝ 40 ֆունտի կամ 16.380 քիլոկրամի:

[33] Օճառ:

[34] Համագործակցական:

[35] Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական-Տնայնագործական Ընկերութիւնը հիմնուած է 1909ի Ապրիլին, միաձուլումովը Ալեքսանդր Քալանթարի նախագահութեամբ գործող Տնայնագործական Ընկերութեան եւ Աշ. Աթանասեանի խմբագրութեամբ հրատարակուող *Գիւղատնտես* պարբերականին շուրջ հաւաքուած գիւղատնտեսներու եւ մասնագէտներու: Հարկ է դիտել տալ թէ հայկական համայնագիտարանին մէջ առանձին յօդուածի չարժանացած գիւղատնտեսական ընկերութեան եւ *Գիւղատնտես* պարբերականին հետ անոր առնչութեան շուրջ շփոթ մը կայ կարգ մը աղբիւրներու մէջ: *Գիւղատնտես* շաբաթաթերթը որպէս Աթանասեանի եւ ութ հիմնադիր գիւղատնտեսներու նախաձեռնութիւն սկսած է լոյս տեսնել 25 Յունուար 1909ին, Թիֆլիս, երբ տակաւին կազմուած չէր

գիւղատնտեսական ընկերութիւնը: Պարբերաթերթը իր երկրորդ համարով կը զգացնէ անհրաժեշտութիւնը գիւղատնտեսներու համախմբումին: *Գիւղարտնտես* իր 13րդ համարով (19 Ապրիլ 1909) «Թիֆլիզի Հայոց Գիւղատնտեսական-Տնայնագործական Ընկերութիւնը» խորագրեալ խմբագրական ծանուցումով կը հաղորդէ հիմնադրութիւնը «ռուսահայոց մէջ *առաջին* գիւղատնտեսական ընկերութեան» եւ անոր կանոնադրութեան հաստատման: Յետագային՝ 15 Յունիս 1914ին երկշաբաթաթերթի վերածուած պարբերականը կը սկսի պաշտօնապէս լոյս տեսնել որպէս «Օրգան Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան»: Այդ առիթով Աթանասեան, որ տակաւին կը մնար պատասխանատու խմբագիրն անոր, խմբագրական նշումով մը կը յայտնէ. «Ներկայ 1914 թիւին «Գիւղատնտես»ը դառնում է Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական եւ Տնայնագործական Ը[նկերութ]եան հրատարակութիւն եւ նրա օրգան»:

[36] Համառուսական Քաղաքներու Միութիւնը իշխան Կէորկի Լվովի գլխաւորութեամբ 30 Յուլիս 1914ին Մոսկուայի մէջ կազմուած եւ նոյն տարուան 14 Օգոստոսին ցարին կողմէ վաւերացուած հասարակական կազմակերպութիւն մըն էր, որ Կարմիր Խաչի կազմակերպութեան նման բժշկական եւ խնամատարական աշխատանք կը ծաւալէր նաեւ Կովկասի մէջ եւ հասած է հայ գաղթականներու կարիքներուն:

[37] Պէտք է կարդալ Ամերիկայի Հայանպաստ Ընկերութիւն, որ իսկութեան մէջ յղում մըն է Ամերիկեան Նպաստամատոյցին: Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը (Near East Relief) հիմնուեր էր 1915ին որպէս հետեւանք Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու դէմ գործադրուած ցեղասպանութեան կապակցութեամբ անմիջական օգնութիւն ցուցաբերելու խնդրանքին, զոր ներկայացուցեր էր Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթաու: Կազմակերպութեան սկզբնական անունը եղեր էր American Committee for Armenian and Syrian Relief: Այնուհետեւ, կարճ պահ մը, ան գործեր է American Committee for Relief in the Near East անուան տակ մինչեւ 1919ի Օգոստոս ամիսը, երբ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը պաշտօնապէս վաւերացնելով այս մարդասիրական կազմակերպութեան կանոնագիրը, անոր պաշտօնական անունը դարձեր է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց: 1930ին, վերջին անուանափոխումով մը, ան իր գործունէութիւնը շարունակեր է Near East Foundation անուան ներքեւ:

[38] Մեզի կը թուի թէ ակնարկութիւնը կը վերաբերի George Williamsի, որ յետագային պիտի դառնար Նպաստամատոյցի ներկայացուցիչը Մարզուանի մէջ եւ իր պաշտօնավարութեան շրջանին պիտի զուգադիպէր հայաբնակ գաւառներէն որբերու փոխադրութիւնը դէպի Մարզուան: Մահացած է Մարզուան 1922ի Դեկտեմբերին՝ հիւանդութեան մը զոհ երթալով:

[39] Խօսքը շատ հաւանաբար կը վերաբերի ռուսական Կարմիր Խաչի Ընկերութեան, որ Աղեքսանդր Բ. ցարին հրամանով հաստատուած էր Մեծ Իշխանուհի Ելիզաւեթա Ֆէոտորովնայի ընդհանուր պատասխանատուութեան ներքեւ եւ որ զանազան առիթներով օգնութիւն ընծայած էր աղիտեալ հայերու՝ Կովկասի, ապա նաեւ Արեւմտեան Հայաստանի ռուսական ազդեցութեան գօտիին ենթակայ շրջաններու մէջ:

[40] Թէ՛ այցելու եւ թէ՛ տունը գտնուող հիւանդներու խնամք ցուցաբերող առողջապահական հաստատութիւն:

[41] Հեռաձայնի:

[42] Ցարական Ռուսաստանի մէջ գործածուած չափ, ուր 1.067 քիլոմեթրը համազօր էր մէկ վերստի:

[43] Բնագրին մէջ՝ *ծիւկ*:

[44] Բառը գործածուած է աւելի ընդհանրացած *բորակի* փոխարէն (Ստ. Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Ա. Հատոր*, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երեւան, 1944, էջ 334):

[45] Վճռորոշ:

[46] Բռնակցման:

[47] Աղաւաղուած բառ՝ ռազմատուգանք նշանակութեամբ, շատ հաւանաբար:

[48] Այս նախադասութիւնը աւելի հասկնալի դարձնելու նպատակով կ'առաջարկենք զայն ընթերցել այսպէս.- Երբ Ռուսաստանի մէջ բոլշեւիկները յաղթանակեցին, հրահանգուեց Ռուս զինուորներին հապճեպ թողուլ ճակատ եւ դառնալ իւրաքանչիւր իր հայրենիք: Վան ըլլալով Ռուսիոյ կողմէ գրաւուած մի հողամաս, թէեւ առանց անեկսիայի եւ քօնթրիբուցիայի, կրիտիքական րոպէներ սկսաւ ապրիլ, քանի որ ան շրջապատուած էր քրդերով ու տաճիկներով:

[49] Զօրավար Մովսէս Սիլիկեան (1862–1937), որ թրքական ճակատին վրայ իր ռազմական յաջողութիւններով ուշադրութիւնը գրաւած էր ռուսական զօրքերու հրամանատարութեան, 1917ի ռուսական Փետրուարեան Յեղափոխութենէն ետք նշանակուած էր Վանի ջոկատի հրամանատար, ապա նաեւ զօրավար քաղաքապետ:

[50] Իսմայիլ աղա Շիքաք կամ Սիմկո Շիքաք (1887–1930) ցեղապետն էր Ուրմիոյ շրջանի Բարանտուզ գետին մօտ տարածուած քիփտերու, որոնք իրենց տիրապետութիւնը տարածած ըլլալով Ուրմիոյ լիճին մերձակայ տարածքին վրայ, անմիջականօրէն մասնակից դարձած էին հայերու, ասորիներու եւ այլ քրիստոնեաներու կոտորածներուն:

[51] Յուշագրող մը, որ Վանի ժամանակաւոր կառավարութեան մասին կ'ըսէ թէ ան «*կը բռնէր Վանէն Ուրան, Առնիս, Բերկրի, Օրդօֆ, Կօթուր եւ մինչեւ Աղբակի գաւառակը, այնքան ալ արհամարհելի ոյժ մը չէր ներկայացներ, որով թէ' Զիլանի ծորի եւ թէ' պարսկա-թրքական սահմաններու վրայ վխտացող քրտական խումբերը առանձին հետաքրքրութիւն մը կը ցուցնէին դէպի Վանի կառավարութիւնը եւ դէպի հայաշատ գաւառներու հայութիւնը*», կ'աւելցնէ. «*Անգլիացի Գրէյս անունով քաղաքական գործիչ մը մեզ անյայտ խնդիրներով կ'այցելէր Սմկօյին, Ճարայի իր բերդին մէջ, ուղեկցութեամբ պուլղարացի Յարութիւնի եւ իր քանի մը զինուորներու: Հայերու բարեկամական ձեռք մեկնող Սմկօն, սակայն, արդէն դաշնակցած էր Ատրպատականի մէջ ի նպաստ թիւրքերու գործող զանազան բախտախնդիր խաներու հետ...*» (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, 1930:12, էջ 162-63):

[52] Ալեքսանտր Կերենսկի կամ Քերենսքի (1881–1970) եղած է Ռուսաստանի Փետրուարեան Յեղափոխութենէն ետք ստեղծուած ժամանակաւոր կառավարութեան երկրորդ փոխ-վարչապետը եւ գերագոյն գլխաւոր հրամանատարը՝ մինչեւ Լենինի կողմէ իր իշխանութեան տապալումը 1917ի Նոյեմբերին:

[53] Գնդացիր:

[54] Համակարգի:

[55] Մինչ միջազգայնօրէն ճանչցուած փաունտը հաւասար է 453.59237 կրամի, ռուսական փաունտը կամ ֆունտը համազօր կը նկատուէր 409.51718 կրամի:

[56] Զինուորական վերարկու:

[57] Կայաններ:

[58] Զօրավար Թովմաս Նազարբէկեան (1855–1931) Ա. Աշխարհամարտի ընթացքին ջախջախելէ ետք Խալիլ պէյի թրքական զօրաբանակը, 1917ին նշանակուած էր հայկական առանձին բանակի զօրամասի հրամանատար: Յետագային, իր ընդհանուր հրամանատարութեան ներքեւ Սարդարապատի ճակատամարտը պիտի դառնար դափնեպսակը իր բազմարդիւն զինուորական գործունէութեան:

[59] Գնդացիր:

[60] Դատարկ տեղ ձգուած՝ որոշապէս ամսաթիւ նշելու համար, որ, սակայն, այդպէս ալ չէ նշուած:

[61] Հիւպատոսի:

[62] Ահմատ Ղաճար (1898–1930) ղաճարական գերդաստանի վերջին շահն էր, որ գահակալած է 1909–25 տարիներուն՝ ժողովրդավար ուժերու կողմէ գահ բարձրացուելով տասնմէկ տարեկանին: Իր իշխանութեան շրջանին կատարուած բարեփոխումներու շնորհիւ հայերուն երկու, իսկ ասորիներուն, զրադաշտականներուն ու հրեաներուն մէկական աթոռի իրաւունք շնորհուած էր խորհրդարանին մէջ:

[63] Մար Պենիամին Շիմուն կամ Շմոն (1887–1918) ժառանգաբար 19րդ կաթողիկոս-պատրիարքը դարձած էր ասորիներու, երբ ընդամէնը 18 տարեկան էր: Աղբիւրի մը համաձայն, Քոնի Շեհր կամ Քոհնաշահր հայկական գիւղին մէջ քիւրտեւասորի հանդիպումը կայանալէ առաջ, հայ գիւղացի մը իր բարեկամ քիւրտէն տեղեկանալով դաւադրութեան մասին, անմիջապէս իր զաւակն ուղարկած է ժամանողներն զգուշացնելու համար, բայց Մար Շիմուն անտեսած է զգուշացումը (Rev. W[illiam] A[inger] Wigram and Sir Edgar T. A. Wigram, *The Cradle of Mankind: Life in Eastern Kurdistan*, Լոնտոն, 1922, էջ 380): Մար Շիմունի «կտրուած, այլանդակուած դիակը» կը թաղուի Խոսրովայի հայոց եկեղեցին (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, 1930:2, էջ 160):

[64] Հրոսակային:

[65] Պարսիկ Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան հիմնադիր կը նկատուի Պաքուէն Պարսկաստան յատուկ առաքելութեամբ ուղարկուած Հայտար Խան Ամ(ու)օղլին, 1906ին: Սկզբնապէս, անդրկովկասեան նկարագիր ունէր ան՝ Պաքուն ըլլալով ղեկավարման կեդրոնատեղին, մինչեւ 1909, երբ անուանափոխումով կազմակերպութիւնը կը կոչուի Դեմոկրատ Կուսակցութիւն՝ իր գոյութիւնը շարունակելու մինչեւ 1919, Հայտար Խան Ամ(ու)օղլիի գործադիր քարտուղարութեամբ:

[66] Բնագրին մէջ՝ *Նուպարին*: Նոպարի որպէս ծայրայեղական գործիչ ամբաստանուելով արտաքսուած է Ատրպէյճան:

[67] Բացայայտօրէն:

[68] «Դատաւոր եւ միաժամանակ քաղաքապետ» (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, 1930:2, էջ 158):

[69] Մելիք-Թանգեան (1866–1948), որ Ատրպատականի թեմի առաջնորդ կարգուած էր 1912ին, 1917ին նշանակուած էր նաեւ Վասպուրականի հայոց առաջնորդ եւ նոյն տարին իրեն շնորհուած էր արքութեան աստիճան: Իր հեղինակած գործերէն իր կարեւորութեամբ կ'առանձնանայ *Հայոց Եկեղեցական Իրաւունքը* երկհատոր աշխատութիւնը (1903 եւ 1905):

[70] Յ. Ճերմակ (Յովհաննէս Բազիեան), Ատրպատականի ՀՅԴ «Վրէժ» Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչն էր (*Սարդարապատի Հերոսամարտը*, հրատարակութիւն Հ.Յ.Դ. Քալիֆ[որնիոյ] Կեդր[ոնական] Կոմիտէի, Ֆրեզնօ, 1967, էջ 13–14), ինչպէս նաեւ Թաւրիզի կամ Դաւրէժի թեմական դպրոցի տնօրէնը տուեալ

շրջանին, ըստ Վարդանեանի (Վարդանեան, էջ 143), որ կը քննադատէ Ճերմակի «յիմար ճառով» ժողովուրդը «աններելի անտարբերութեան» մատնելը: Ուրիշ յուշագրող մը կը հաստատէ թէ «Ճերմակ շատերուն համոզելով գաղթելու գործին բաւականաչափ վնասած էր» (Վազգէն, «Ատրպատականի Գոյամարտը», *Հայրենիք Ամսագիր*, Ժ. տարի, 1931:1(109), էջ 150): Ճերմակի դէմ մեղադրանքներ ներկայացուած են ՀՅԴի 9րդ Ընդհանուր Ժողովին որոշումով կազմուած դատական մարմնին մօտ: Մեղադրողներէն մին էր Մաքսապետեան՝ Սալմաստի ինքնապաշտպանութեան գծով: Ուրիշ մեղադրող մը՝ Արամ Աղաբէկեան, պարզապէս Ճերմակի վրայ կը բարդէր պատասխանատուութիւնը նա՛խ համոզելու որ Սալմաստ գտնուող հայութիւնը չգաղթէ Կովկաս, երբ ճամփաները տակաւին չէին օղակուած յառաջացող թրքական ուժերուն կողմէ, ապա «երբ Կովկասի դռները արդէն փակուած էին», ժողովուրդին ուշադրութիւնը «դարձուցած է դէպի Կովկաս» (Աւագ Ա. Յարութիւնեան, «ՀՅ Դաշնակցութեան 1918–1920ԹԹ. Պատմութեան Վաւերագրերը», *Վէմ Համահայկական Հանդէս*, ԺԱ. տարի, 2013:3(43), էջ 203–8):

[71] Բնագրին մէջ՝ *ջանաց*:

[72] Վերապատուելի Ուիլիըմ Շէտ (William Ambrose Shedd), ծնած Ուրմիա 1865ին եւ մահացած Պարսկաստան 1918ին, զաւակն էր ամերիկեան միսիոնարներու եւ որպէս շրջանի երէց միսիոնար նախապատերազմեան տարիներուն անպաշտօն կերպով նաեւ որպէս ամերիկեան հիւպատոս գործելէ ետք, Առաջին Աշխարհամարտի տարիներուն պաշտօնապէս դարձած էր ամերիկեան հիւպատոս՝ ընթացք տալով Դաւրէժի ամերիկեան հիւպատոսին պնդումներուն: Օսմանեան բանակին Ուրմիոյ վրայ յարձակման հետեւանքով Շէտ միացած էր բազմահազար հայ եւ ասորի գաղթականներու եւ գաղթի ճամփուն վրայ Յուլիս ամսուն մահանալով հնդկախտէ, թաղուած է Սային Քալայի մէջ: Շէտի հոգեհանգստեան արարողութիւնը կատարուած է Մարաղայի հնամենի հայկական եկեղեցւոյ մէջ (Mary Lewis Shedd, *The Measure of a Man: The Life of William Ambrose Shedd, Missionary to Persia*, Նիւ Եորք, 1922 եւ Michael Zirinsky, "American Presbyterian Missionaries at Urmia During the Great War," in Proceedings of the International Roundtable on Persia and the Great War (Tehran: Iran Chamber Society, 1997), http://www.iranchamber.com/religions/articles/american_presbyterian_missionaries_zirinsky.pdf, 18 Նոյեմբեր 2019ի դրութեամբ):

[73] Կարելի չեղաւ ստուգել ինքնութիւնը յիշեալին:

[74] Զինուորներ:

[75] Կը թուի թէ ակնարկեալը Խոյ ծնած Մոհամմէտ Ալի Ալա՛ ալ-Սալթանէն է (1829–1918), Յունիս 28ին մահացած նախկին վարչապետը Իրանի:

[76] Կը թուի թէ տեղեկագրողը ըսել կ'ուզէ «9րդ վարչապետէն»: 1906ին վարչապետութիւնը պաշտօնապէս հաստատուելէ ետք, մինչեւ Միրզա Մոհամմէտի առաջին վարչապետութիւնը, պաշտօնավարած էին տաս վարչապետեր: Կրնայ համարակալման սխալի մը հետեւանք ըլլալ 9ը:

[77] Հրամանատարէ:

[78] Երախաներուն:

[79] Պետրոս Էլիա (1880–1932) ծնած էր Հաքքարի եւ Ուրմիոյ մէջ եւրոպացի միսիոնարներու մօտ կրթութիւն ստանալէ ետք վերադարձած էր իր ծննդավայրը՝ զբաղելու ուսուցչութեամբ: Իր լեզուաճիճան հմտութիւնները նկատի ունենալով,

օսմանեան կառավարութիւնը զինք 1909ին կարճատեւ պահ մը հիւպատոս նշանակած էր Ուրմիոյ մէջ: Ռուսեր Ուրմիան գրաւելով զինք նշանակած էին զօրավար՝ ասորական զօրախումբի: Աւելի ուշ գործակցած էր Համաձայնական Պետութիւններու հետ եւ յաղթական մարտեր մղած օսմանեան ուժերու դէմ: 1919–23՝ իբրեւ ասորիներու գլխաւոր բանագնաց մասնակցելով Ազգերու Լիկայի Խաղաղութեան Վեհաժողովի աշխատանքներուն, առանց յաջողութեան հասնելու փորձած է Հանրապետական Թուրքիոյ հաւատարմութիւն խոստանալով ապահովել իր ազգակիցներուն Հաքքարի եւ շրջակայքը վերադարձը:

[80] Գնդապետ:

[81] Ռուսական բանակին մէջ ծառայած ծագումով կազակ սպայ, որ Մար Շմոնի ուղեկիցն էր եղած Սմկոյի դաւադրական հրաւէրի ընթացքին, բայց կրցած էր փախուստ տալ վիրաւոր վիճակով:

[82] Աղա Դաւուդ (Տաիտ Շիմունայեա) քիւրտ ցեղապետ Սմկոյի կողմէ դաւադրաբար սպանուած Մար Շմոն կաթողիկոս-պատրիարքի եղբայրն էր: Դաւուդ, Տաուտ, կամ Տաիտ Առաջին Աշխարհամարտի ընթացքին կը գլխաւորէր ասորի կամաւորներու խումբերէն մին եւ օտար աղբիւրներու մէջ կը յիշատակուի որպէս զօրավար: Ան Սմկոյի դաւադրութեան ընթացքին չէր մահացած եւ իր խորհրդաւոր փրկութեան շուրջ կան զանազան տարբեր տեղեկութիւններ, որոնք, սակայն, կը համընկնին մէկ կէտի շուրջ, թէ՝ Դաւուդ կրցած էր զինք հետապնդող քիւրտերու ձեռքը չիյնալ շնորհիւ հայերու: Աղբիւր մը կը նշէ թէ բարեկամ հայեր վիրաւոր Տաիտը յափշտակելով տարին եւ պահեցին մերձակայ տան մը մէջ մինչեւ քրտական որոնումներու աւարտը (Wigram and Wigram, էջ 380): Ըստ երկրորդ աղբիւրի մը, Դաւուդ, որուն ճակատագիրը անյայտ կը մնար, հայ սուրհանդակի մը միջոցով լուր կը ղրկէ իր զինակիցներուն թէ հինգ զինուորներու հետ կը գտնուի Սալմաստի հայկական եկեղեցին: Լուրն ստանալով, պատուիրակութեան ընկերացած ռուս սպայ Կանտրատեւը (աղբիւրին մէջ՝ Kondratov) եւ ասորի սպաներ իրենց հետեւորդներով յաջորդ օրն իսկ, Կիրակի կէսօրին, յարձակում մը գործելով կ'ազատագրեն Դաւուդը (Gabriele Yonan, *Lest We Perish: A Forgotten Holocaust – The Extermination of the Christian Assyrians in Turkey and Persia*, 1996, էջ 98–99 [ներբեռնուած 19 Նոյեմբեր 2019ին հետեւեալ կայքէջէն՝ https://www.peacepalacelibrary.nl/ebooks/files/380604434.pdf]): Երրորդ աղբիւրի մը համաձայն, հայ կին մը ապաստան տուած է Դաւուդի, մինչ քիւրտեր զինք կը փնտռէին գիշերով, եւ յաջորդ առտու զինք ապահով դուրս հանած է աւանէն (W[illiam] A[inger] Wigram, *Our Smallest Ally: A Brief Account of the Assyrian Nation in the Great War*, հրատարակութիւն Քրիստոնէական Գիտելիք Տարածող Ընկերութեան, Նիւ Եորք, 1920, էջ 40):

[83] Զօրավար Անդրանիկ Օզանեան (1868–1927), Ազգային Հերոս:

[84] Հետախուզում:

[85] Բրիտանական օդուժի սպայ հարիւրապետ Ք. Մ. Փեննինկթըն Համատան հաստատուած զօրավար Տանսթըրվիլի հրահանգով ներկայացած էր Ուրմիա: Թուականը՝ Յուլիս 8, կը հաստատէ վերապատուելի Ուիկրըմ (Wigram, էջ 47), մինչ աւելի նոր հրատարակութիւն մը սխալմամբ կը նշէ Յուլիս 18 ամսաթիւը (Yonan, էջ 93): Այս վերջին աղբիւրը, իդէպ, կը նշէ թէ օդանաւորդը վայրէջք կատարած է ի հեճուկս ասորի զինեալներու, որոնք սկսած էին կրակել օդանաւին ուղղութեամբ: Պարագան կը հաստատեն նաեւ այլ աղբիւրներ (օրինակ՝ Wigram and Wigram, էջ 384):

[86] Պարսկական կառավարութիւնը բրիտանական ընկերութեան մը շնորհած էր Թաւրիզէն Միանա կամ Միանէ երկարող ճանապարհաշինութեան պայմանագիրը: Պայմանագրին մէջ ընդգրկուած էր նաեւ Զանճանէն կամ Զէնճանէն Պիճար ձգուող ճանապարհը, 8էն 9 մեթր լայնութեամբ եւ 143 քիլոմեթր երկարութեամբ:

[87] Գնդապետի:

[88] Բնագիրը սխալագրութեամբ ունի՝ *Ալի Իսհան*: Յիշեալը (1882–1957) Առաջին Աշխարհամարտի շրջանին գործած էր որպէս Կովկասի եւ Միջագետքի ճակատներու հրամանատար: Քութի մէջ, Իրաք, անգլիացիներուն դէմ յաջող մարտեր մղելէ ետք, իր բանակով մուտք գործած էր Պարսկաստան: Ան մէկն էր Մալթա աքսորուած, բայց 1921ին ազատ արձակուած դէմքերէն, որոնք պիտի միանային Աթաթիւրքի ազգայնական շարժման:

[89] Թ. Խ. Յակոբեանի, Ստ. Տ. Մելիք-Բախշեանի եւ Յ. Խ. Բարսեղեանի աշխատասիրութեամբ եւ Երեւանի Պետական Համալսարանի հրատարակչութեամբ լոյս տեսած *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարանի* 5րդ հատորին մէջ (Երեւան, 2001, էջ 194) կը հանդիպինք Ուրմիա լիճէն հարաւ, Պարսկահայքի մաս կազմող Ուշնէ տեղանուան, որ նաեւ կը հնչուի Ուշունէ, Եուշնէ, Ուշնոհ, Ուշնոհէ, Ուշնուհ, Ուշնունէ եւ կը ներկայացուի որպէս կեդրոնը Նոր Շիրական բդէշխութեան Արասխ գաւառին: Իր Ուշնի տարբերակով, սակայն, բնակավայրը յիշատակուած է Րաֆֆիի ճամփորդական նոթերուն մէջ, ուր կ'ըսուի թէ հոն տաճիկ զինուորներ հինգ, տաս հոգիներով բաժնուած կ'ըլլան հայերու տուները եւ խղճալի հայ ընտանիքները իրենց բարոյական եւ նիւթական գոյութեամբ կը զոհուին տաճիկ ասկերի զինուորներու լրբութիւններուն: Իսկ Ե. Ֆրանգեան վայրը յիշատակած է զանազան էջերու մէջ, ինչպէս – օրինակ - որպէս նախ ընդամէնը երկու հայ ընտանիք ունեցող վայր եւ ապա երբեմնի ասորաբնակ գաւառ (*Աւրպայտական (Պատկերազարդ Ժողովածու)*, Թիֆլիս, 1905, էջ 84 եւ 249 համապատասխանաբար):

[90] Վաշտ:

[91] Կովկասեան ճակատի թրքական զօրքերու ընդհանուր հրամանատար Խալիլ Քութ (1882–1957), որ Քութի պաշարումով հարկադրած էր անգլիական ուժերու անձնատուութիւնը Իրաքի մէջ 1916ին, կը պարծենար թէ անձամբ կոտորած է բազմահազար հայեր եւ փորձած է հայ ազգը բնաջնջել մինչեւ վերջին անհատ: Խալիլ արենակից էր Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր ճարտարապետերէն Էնվէրի:

[92] Մէկ բուռ:

[93] Մարգաւառ եւ Թարգաւառ (նաեւ՝ Թերգաւառ) ասորական բնակավայրեր էին Ուրմիա Լիճի արեւմտակողմը: Ներկայիս առաւելաբար բնակեցուած են քիւրտերով:

[94] Պըհար կամ Պահար (بهر), Համատանի վարչաշրջանային գլխաւոր քաղաքներէն մին:

[95] Լեւոն Շաղոյեան (1887–1933) նախապէս ակնառու մասնակցութիւն ունեցած էր 1915ի Շատախ գաւառի ինքնապաշտպանական մարտերուն եւ Վանի առաջին ժամանակաւոր կառավարութեան շրջանին վարած էր Գաւաշի գաւառապետութիւնը:

[96] Աբշինա կամ Աբշինէ (ابشينا), Համատան նահանգի գիւղերէն մին:

[97] Իր ընտիր այգիներով յայտնի Համատանի հայկական գիւղերէն ՃՃՃի անունը կը հնչուի նաեւ Շեւերին, Շաւվարին, Շաուարին, Շեւարին, Շուարին եւ Շուրին:

A CONTEMPORARY REPORT PRESENTING THE ACTIVITIES OF VAN'S SECOND TEMPORARY GOVERNMENT AND THE LAST EXODUS

(Summary)

VATCHE GHAZARIAN
vatcheg@gmail.com

The Russian Revolution of October 1917 was followed by a call to the Russian troops to return home from the Turkish front, where they were viewed as liberators of historical Armenian lands. The recall of Russian soldiers signaled an opportunity for the Turkish army to move upon and repossess the vacated historical Armenian territories, and it was a signal to the Armenians to think of their own survival. Thus, the Armenians of Van formed a government, which became known as the Second Temporary Armenian Government of Van. The government's purpose was to organize life in Van, normalize relations with nearby Kurds, if possible, and strengthen ties with neighboring Assyrians. This was all done with the backing of the British military headquartered in Tbilisi, Georgia. However, the eastward advance of the Turkish army and the intensification of armed hostilities by Kurds in and around Van forced the temporary government to shift attention towards a safe relocation of the Armenian population to Armenia through Iran. This migration of Armenians of Van became known as the Last Retreat or Exodus of Van. While many eyewitness accounts and memoirs relating to this temporary government and the events that took place during the exodus exist, this report may serve as the most reliable source, not only as to its correctness but also as to its completeness with regard towhat is known to date about the temporary government and the migration. It also sheds light on the roles played by the British, Russian, Turkish, Kurdish, Iranian, and Assyrian players in the region. The report covers the period from December 1917 through November 1918 and was written no later than in January 1919 by the minister of agriculture of the temporary government, upon the request of close surviving associates.

ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐԽԻՒԸ ՈՐՊԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐ[1]

ՎԵՐԱ ՍԱՀԱԿԵԱՆ
verasahakyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Վերջին տարիների ընթացքում մեր ուսումնասիրութիւնը կենտրոնացած է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանում (ՄՄ) պահուող այն վաւերագրերի յայտնաբերման, քննութեան եւ ուսումնասիրման վրայ, որոնք առնչւում են սուլթան Աբդուլ Համիտ Բ.ի կազմակերպած կոտորածների եւ 1915-16՝ իրագործուած Հայոց Ցեղասպանութեան հետ: Մեր հետազօտական աշխատանքի ընթացքում գտանք ինչպէս բնօրինակներ, որոնք մինչ այդ համարւում էին կորած[2], այնպէս էլ գիտական հանրութեանն անյայտ, չհրապարակուած, սակայն յուժ կարեւոր վաւերագրեր:

Սոյն յօդուածի շրջանակներում մենք հակիրճ կս ներկայացնենք ՄՄի 45Ա եւ 45Բ գոյքամատեաններում հաշուառուած եւ արխիւային բաժնի թիւ 101-117 թղթապանակներում մէկտեղուած վաւերագրերը եւ կ'անդրադառնանք դրանց կարեւորութեանը:

Այս արխիւում ամփոփուած, ի մի են բերուած հայ գաղթականների նամակները, որոնք ուղղուած են Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին՝ հացի, հագուստի, կեցութեան խնդրով: Վաւերագրերը, լինելով համիտեան կոտորածների ուղղակի վկայութիւններ, միեւնոյն ժամանակ հայկական տեղանունների ճշգրտումների, նոր եւ ամբողջական ցանկերի պատրաստման առումով անփոխարինելի սկզբնաղբիւրներ են:

***

1820 Ապրիլի 4ին Վանի Կըրըմցոնց կամ Խըրըմցոնց տարազագործ վաճառականի ընտանիքում է ծնուել Հայ Առաքելական Եկեղեցու 125րդ կաթողիկոս Մկրտիչ Ա.Խրիմեանը: Երջանկայիշատակ կաթողիկոսը դեռեւս կենդանութեան հայ ժողովուրդը նրան կոչեց Հայոց Հայրիկ[3]: Այս տարի լրանում է Հայոց Հայրիկի ծննդեան 200ամեակը:

Խրիմեան կաթողիկոսի անձի, գրական ժառանգութեան, հասարակական գործունէութեանը նուիրուած ուսումնասիրութիւններ արուել են ե՛ւ Խորհրդային տարիներին, ե՛ւ յետխորհրդային շրջանում, երբ անհրաժեշտութիւն էր զգացւում նորովի գնահատելու ժամանակաշրջանի ուշագրաւ գործչի կեանքն ու գործունեութիւնը[4]:

Ամենայն հայոց հայրապետի հասարակական եւ քաղաքական կեանքի լուսաբանմանը նուիրուած մենագրութեան մէջ պատմաբան Էմմա Կոստանդեանը համակողմանիօրէն վերլուծում է կաթողիկոսի գործունէութիւնը Վարագում, Տարօնում, նրա պատրիարքութեան եւ կաթողիկոսութեան շրջանները՝ Հայաստանում եւ արտերկրում պահուող վաւերագրական հարուստ նիւթի հիման վրայ:

Խրիմեան կաթողիկոսը աթոռակալեց հայ ժողովրդի դժնդակ մի ժամանակահատուածում: Նրա կաթողիկոսութեան շրջանը համընկաւ Ապտուլ Համիտ Բ.ի գահակալութեան (1876-1909) հետ, որը 1894-96ին կազմակերպեց արեւմտահայութեան զանգուածային ջարդեր՝ նպատակ ունենալով նահանգները հայաթափելու եւ իր բնօրրանից հայրենազրկելու հայ ժողովրդին: Հայոց Հայրիկը ականատես եղաւ 1903ի Հայ Եկեղեցու գոյքի բռնագրաւմանը, հայկական դպրոցների փակմանը, 1905ի Բաքուի հայութեան կոտորածներին: Այդ ծանր ու օրհասական շրջանում ծերունազարդ կաթողիկոսը կանգնած էր հայ ժողովրդի կողքին, իր ողջ ուժն ու կարողութիւնը ծառայեցնելով հայութեանն ու հայրենիքին:

ՄՄում այսօր պահւում է Խրիմեան կաթողիկոսի արխիւից մի մաս, շուրջ 8000 միաւոր վաւերագիր, որը բերուել է Էջմիածնից: Այս վաւերագրերը ամփոփուած են 101ից 117 համարները կրող թղթապանակներում: Բոլոր վաւերագրերը ներկարուած են եւ կնքուած: Արխիւում չկան պաշտօնական գրութիւններ եւ կոնդակներ: Այստեղ ընդգրկուած են բացառապէս գաղթականութեան նամակները, որոնք ուղղուած լինելով Հայոց Հայրիկին, գրուել են 1893-1907ի ընթացքում:

Նամակները բնօրինակ ձեռագրեր են, որոնց մի մասը կնքուած է տեղի ծխատէր քահանայի կնիքով: Գրուած են սեւ կամ կապոյտ թանաքով: Բովանդակութեան առումով բոլորն էլ խնդրագրեր են՝ հացի, սնունդի, հագուստի, կացարանի, բժշկուելու առնչութեամբ, որոնք առաջացել էին քուրդ շէյխերի, թուրք պաշտօնեաների, օսմանեան կառավարութեան որդեգրած հարստահարութեան, հայաջինջ քաղաքականութեանն իբրեւ հետեւանք:

Այս նամակները ուղղուած լինելով Հայոց Հայրիկին չեն առաքուել Ս. Էջմիածին յատուկ նամակատան ծառայութեան միջոցով: Դրանք բաժանւում են երեք մեծ խմբի.-

Ա) Նամակներ՝ գրուած համիտեան կոտորածների պատճառով փախուստի դիմած մարդկանցից, որոնք, նամակը շարադրելու պահին գտնուել են Արեւելեան Հայաստանում, իսկ աւելի յստակ, ինչպէս նամակներում է նշուած, վանքի *գոմում* կամ վանքի *պլանում*[5]:

Բ) Նամակներ՝ գրուած այն կարօտեալ գաղթականներից, որոնք միքանի ամսից մինչեւ առաւելագոյնս երկու տարի կաթողիկոսի յատուկ յանձնարարականով հաստատուել էին որեւէ գիւղում: Գաղթականութեան տեղաւորման գործընթացը ունէր շարունակական բնոյթ, իսկ նրանց կերակրելու, կեցութիւն եւ կացարան տրամադրելու խնդիրը, ինչպէս կարդում ենք նամակներում, դրւում էր մասամբ տեղական համայնքների հոգածութեան վրայ: Այս կամ այն գիւղում գաղթականների կեցութեան ժամանակի լրանալու, կամ, երբ նշուած գիւղն այլեւս անկարող էր կերակրելու այդ ընտանիքին, գաղթականները ստիպուած էին լինում նորից դիմելու կաթողիկոսին:

Գ) Նամակներ, որոնց հեղինակները յատուկ հասել էին Վաղարշապատ եւ սպասում էին այն յանձնելու յարմար առիթի:

Նամակներն ունեն ձեռագրային որոշ նմանութիւն: Կարելի է ենթադրել, որ եղել են յատուկ նամակագիրներ, որոնք գրի են առել գաղթականների ասելիքը խիստ բառացի, այնպէս՝ ինչպէս ցանկացել է իր խօսքն ուղղել տուեալ անձը: Սակայն կան նաեւ բացառիկ ինքնուրոյն, գեղեցիկ, լեզուական ճոխ արտայայտչամիջոցներով ու պատկերաւոր մտքով շարադրուած գրութիւններ:

Անցնող տարիների ընթացքում մենք ձեռնարկեցինք վաւերագրերն ըստ գաւառների դասդասելու եւ խմբաւորելու աշխատանքը: Մէկ խումբ կազմեց Արեւելեան կամ Ռուսահայաստանի շրջաններից գրուածները: Միւս խումբը, որ վաւերագրերի մեծամասնութիւնն էր, մաս կազմեց Արճէշ, Բալու, Բաղէշ, Բուլանըխ, Խարբերդ, Սուրմալու եւ միւս բոլոր հայաշատ բնակավայրերից գրուած նամակների խմբին:

Որպէսզի ուսումնասիրութիւնը լինէր առաւել ամբողջական եւ մանրակրկիտ, առանձնացրինք Բուլանըխ գաւառը, իսկ ժամանակաշրջան ընտրեցինք 1893-96ը: Նման ընտրութիւնը պայմանաւորուած էր նախ վաւերագրերի քանակով, ապա իրադարձութիւններով, որոնք փոխում էին նամակների բնոյթն ու բովանդակութիւնը:

Բուլանըխ գաւառին նուիրուած են միքանի ուսումնասիրութիւններ, որոնք ունեն գրեթէ սկզբնաղբիւրի նշանակութիւն: Դրանք են Մանուէլ Միրախորեանի եռահատոր ուղեգրութիւնը, Ա-Դօի (Յովհաննէս Տէր Մարտիրոսեան) գրքերը, հրապարակումները, Պատրիարքարանի կազմած ցուցակները, որոնք հրապարակել է ֆրանսահայ պատմաբան Յովհաննէս Գէորգեանը, տարբեր տարիներին լոյս տեսած Թէոդիկի *Ամէնուն Տարեցոյց*ները, որոնց մէջ կարելի է գտնել ամփոփ տեղեկութիւններ, այլեւայլ յօդուածներ, որոնք լոյս են տեսել *Մշակ, Համբաւարեր, Աշխատանք, Ազատամարտ* եւ այլ թերթերում եւն.:

Վերջին տարիներին լոյս տեսան միքանի այլ հրապարակումներ եւս, որոնցից են Գեղամ Բադալեանի յօդուածաշարքը[6], եւ «Houshamadyan.org» կայքի Բուլանըխ գաւառին նուիրուած էջը[7]:

Նկատենք, որ գրաւոր այս աղբիւրները բաժանւում են 3 խմբի.-

Ա.) Միրախորեանի Ուղեգրութիւնը՝ հրապարակուած 1885ին, Բենսէի՝ *Բուլանըխ կամ Հարք* գիրքը (1901, 1972), Ա-Դօի ուսումնասիրութիւնները: Նշուածները Բուլանըխ գաւառին նուիրուած գրեթէ գլխաւոր ուսումնասիրութիւններն են՝ գրուած նախքան Հայոց Ցեղասպանութիւնը:

Բ.) 1915-16ին արուած հրապարակումները, որոնք ցեղասպանուած հայրենիքի մասին տեղեկութիւնների հաւաքման փորձեր էին՝ քաջ գիտակցելով եղած գիտելիքի պահպանման անհրաժեշտութիւնը: Այս նպատակով է հաւաքուել նաեւ վաւերագրերի այն քանակը, որը լոյս տեսաւ 2012ին[8]:

Գ.) Միւս խումբը նոր շրջանի ուսումնասիրութիւններն են, որտեղ 100 տարուայ ընթացքում ձեռք բերուած նորանոր տեղեկութիւնների լոյսի տակ փորձ է արւում ամբողջացնելու Բուլանըխ գաւառի բնակչութեան, եկեղեցիների, գիւղերի ցուցակները:

Ուսումնասիրելով Խրիմեանին ուղղուած նամակները եւ առանձնացնելով դրանցում եղած գիտական նիութն ու յատկապէս ուշադրութիւն դարձնելով տեղանունների վրայ, նկատեցինք, որ մինչ օրս հրապարակուած նիութերը բաւական հակասական են. եթէ դրանք բառացիօրէն իրար չեն կրկնում ապա միմեանց չեն էլ լրացնում եւ հակասութիւնն աւելի է մեծանում:

Այս առումով ունէինք երկու մեծ խնդիր: Պատմագրական փաստը, որը հիմնուած է արդէն իսկ հրապարակուած, տպագիր սկզբնաղբիւրների կամ գրականութեան վրայ, եւ տեղեկութիւններ կամ գիտելիք, որ մեզ են փոխանցում վաւերագրերը, այս դէպքում գաղթականութեան անտիպ նամակները, որոնք գիտական շրջանառութեան մէջ են դրւում առաջին անգամ: Այստեղ առկայ է գիտական նորոյթ, այն է՝ բնակավայրեր, որոնց մասին մատնանշում են տեղի բնակիչները, սակայն այդ մասին տպագիր այլ նիութ առայժմ մեզ յայտնի չէ: Մինչդեռ եղած վաւերագրերը անհերքելի գրաւոր վկայութիւններ եւ սկզբնաղբիւրներ են: Մարդիկ գրել կամ նամակ են թելադրել մատնանշելով իրենց հասցէն: Արդեօք կարո՞ղ էին սխալուել սեփական հասցէն գրելու ընթացքում:

Ինչու՞ ենք ուղղում այս հարցը:

Մեր կազմած տեղանունների մէջ կան գիւղանուններ, որոնք տեղ չեն գտել Բուլանըխ գաւառին նուիրուած մասնագիտական գրականութեան մէջ: Կան տեղանուններ, որոնք երբեմն ընդգրկուած են Բուլանըխի, երբեմն Մանազկերտի կազմի մէջ: Այդ դէպքում ո՞րն է աւելի հաւաստի: Այն, որ գրուած է անմիջապէս տեղաբնիկի նամակո՞ւմ, այն որ գրուած է հայոց Մեծ Եղեռնից 30 տարի առաջ ճանապարհորդի՞, թէ՞ Ցեղասպանութեանը յաջորդող տարիների ընթացքում յիշողութիւնների հիման վրայ:

Աւելի հակուած ենք ընդունելու այն մօտեցումը, ըստ որի տեղաբնիկները աւելի ճշգրիտ պէտք է որ նշած լինէին իրենց բնակավայրը: Մեզանից հարիւր երեսուն տարի առաջ մարդիկ բանահիւսութեան հարիւրաւոր էջեր գիտէին անգիր, գիտէին նաեւ, թէ իրենց գիւղը քանի՞ ոչխար ու կով ունէր, գիւղում քանի՞ մարդ էր ապրում, քանի հարսնացու կար եւն. եւն.: Ուրեմն ինչո՞ւ կասկածի տակ դնենք տեղանուան այս կամ այն գաւառին վերագրելը կամ մաս կազմելը, կամ տուեալ տեղանուան գոյութիւնը նշուած գաւառում: Բացի այդ միայն մէկ նամակի մէջ չէ, որ օրինակ նշւում է Բուլանըխայ Խրիստամ-Քադուկ գիւղը: Եթէ լինէր միայն մէկ յիշատակում, կարող էինք վերագրել վրիպակի: Սակայն օրինակները քիչ չեն եւ հաւանականութիւնը՝ որ բնակիչները աւելի ճշգրիտ գիտելիքներ ունէին, բաւական մեծ է:

Այստեղ տեղին է մէջբերել Գարեգին Եպս. Սրուանձտեանցի՝ Մանազկերտ եւ Բուլանըխ գաւառների սահմանների մասին նկարագրութիւնը. «*Վանայ ծովուն Արեւմտեան գաւառաց ուղղութեամբ, այսինքն Ախլաթու, Արծկէու եւ Արճէշու եւրեւը յարեւմուտս կոյս կը տարածին վերին եւ ներքին Պուլանըխները ու Մանազկերտը: Այս երեք անունով գաւառները իրենց դիրքին նայելով պէտք է միացեալ համարել, ինչպէս որ այժըմս է, գաւառագլուխ ունենալով Մանազկերտ բերդաւանը: Եւ կը սահմանուի այսպէս. Հարաւէն՝ Մշոյ դաշտ եւ*

Չարբօհար, յԱրեւմտից՝ Խնուս, Հիւսիսէն՝ Ալաշկերտ, ուր կայ եւ Այնթապ դաշտ, յԱրեւելից՝ Ախլաթ, Արծկէ եւ Արճէշ գաւառները»[9]:

Կ. Պոլսոյ *Ազգտամարտ* օրաթերթի 1910ի հրապարակումների մէջ գրեթէ նոյն միտքն է արտացոլուած. «*Պուլանըգ. այս շրջանի կրթական պատկերը հետեւեալն էր 908ին.- Վերի եւ Վարի Պուլանըգ, ինչպէս նաեւ Մանազկերտի գաւառը, որոնք միասնաբար 50-55 հայ գիւղերէ կը բաղկանան...»*[10]: Նկատենք, որ յաճախ Բուլանըխ-Մանազկերտը ընկալւում էր որպէս մէկ վարչական միաւոր:

Բուլանըխ գաւառը Բլեջանի լեռներով բաժանւում է երկու մասի՝ Վերին Բուլանըխ գաւառակ կամ գիւղախումբ (Նահիյէ), որի վարչական կենտրոնն էր հայաշատ Կուփ գիւղաքաղաքը կամ մայր գիւղը, եւ Ներքին Բուլանըխ գաւառակը կամ գիւղախումբը՝ Լիզ կենտրոնով: Այս վարչական կենտրոնները նկատի առնելով Վերին Բուլանըխը կոչուել է նաեւ Կուփայ Բուլանըխ, իսկ Ներքին Բուլանըխը, ինչպէս այդ մասին տեղեկանում ենք Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներից՝ Լզա Բուլանըխ: Յատկապէս սահմանային գիւղերի առնչութեամբ այս կամ այն գաւառին պատկանելու հարցը սկզբնաղբիւրների մէջ հակասական է, որից եւ ծագում է հետազօտական գրականութեան մէջ հանդիպող հակասականութիւնը:

Սոյն ուսումնասիրութեան մէջ մենք խօսում ենք բացառապէս 1893-1907ի ընթացքում Բուլանըխ գաւառի մէջ մտնող գիւղերի մասին: Եթէ վերցնենք այլ թուականներ ապա խառնաշփոթն աւելի ու աւելի կը մեծանայ, քանի որ, մշտապէս եղել են վարչական վերաբաժանումներ, տեղանունների անուանափոխութիւններ, իսկ եթէ յետընթաց կատարենք առնուազն 2 դար, ապա բախուելու ենք նաեւ Բուլանըխի մի շարք գիւղերի բնակչութեան բռնագաղթի, աւելի ուշ նրանց վերադարձի, ապա քուրդ շէյխերի կողմից գիւղանունների թուրքացման եւ գիւղերին պատկանող հողերի վերաբաժանման խնդրին, որով պայմանաւորուած էլ փոփոխուել են գիւղերի սահմանները:

Մեզ հասանելի աղբիւրները, որոնք նոր շրջանի են եւ թուագրուած են 1885ից մինչեւ 1917, Բուլանըխում հաշւում է 25-26[11], 29[12], 30[13], 43[14] հայաբնակ գիւղ: Ինչ վերաբերում է առհասարակ Բուլանըխի մէջ մտնող գիւղերին, որոնց բնակիչներն էին հայեր, քրդեր, թուրքեր եւ այլք հաշւում է 49[15]-52[16] գիւղ:

Եթէ ի մի բերենք 1885-1917ին լոյս տեսած աղբիւրներում Բուլանըխ գաւառին պատկանող այն գիւղանունները, որտեղ ապրել է հայութիւն, ապա կ'ունենանք հետեւեալ պատկերը.-

Ագրակ	Թրքաշէն[17]	Կոպակ[18]	Շէխ-Վալի[19]
Ալիբոջան[20]	Լաթար	Կոփ	Շէյխ Եակուբ
Ապրի	Լիզ	Կոպօ[21]	Շէրվանշէյխ
Առնճիկ[22]	Խաղօղլի[23]	Համզաշէյխ	Պրտոպ[24]
Ատկոն	Խան օղլի[25]	Մալազկերտ[26]	Ռոստամգիրուկ[27]
Բլուր	Խաչլու[28]	Մալախդրան[29]	Սրտանուտ[30]
Բոստանքանդ[31]	Խասմիկ[32]	Մալամստաֆա[33]	Ս.Դանիէլի Վանք[34]
Գարաբաղար[35]	Խարաբա Ղասըմիկ[36]	Մերպար	Տոլախ Բաշ[37]
Գեղանք[38]	Խարաբաշեհիր	Մեջիթլու	Փիոնք (Փիոնկա)
Գէաբոլան	Խարախայա[39]	Մոլա-Բաղ[40]	Փիրան (Բիրան[41])

Դերրը[42]	Խոթանլու[43]	Մոլահքանդ	Փրկաշէն
Դուգնուկ[44]	Խոշգեալդի	Մոլլաքար[45]	Քարաղըլ
Եոնճալու	Խոշկերտ[46]	Նորադին[47]	Քաքառլու
Թաղաւան[48]	Կողակ	Նորաշէն[49]	Քեաֆարլու[50]

Ինչ վերաբերում է Խրիմեան կաթողիկոսի ֆոնդի թիւ 101-105 համարների թղթապանակների ուսումնասիրութեանը, դրանց աւարտին մենք կազմեցինք Մշոյ Բուլանըխ (Բուլանուխ, Բուլանլու, Բլանուխ, Բըլանըխ, Պուլանլու, Պուլանիք, Պուլանըխ) գաւառի 28 հայաբնակ գիւղերից գրուած ցանկ, որոնց հեղինակները, 1893-96ի ընթացքում Աբդուլ Համիդ Բ.ի հայահալած քաղաքականութեան եւ կազմակերպած կոտորածների պատճառով դիմել էին փախուստի, հասել Արեւելեան կամ Ռուսահայաստան, սակայն սեփական միջոցներով չկարողանալով լուծել կեցութեան, հացի կամ այլ առաջնահերթ խնդիրներ՝ դիմել էին Հայոց Հայրիկի օգնութեանը: Այդ գիւղերն են՝ Աբրի (Ապրի, Արբէ, Հապրի, Յաբրի, Էպրի), Ատկոն (Յատկոն, Յադկուն, Յադկոն), Ալգոզ, Բլուր (Պլուր), Բոստաքանդ (Բոստանքանդ, Բոստաքենթ, Բոստաքինտ), Եոնջալու (Եոնճալու, Յոնջալու, Օնճալու, Եոնճէլը[51], Յոննալու, Յունգալի, Յունչալու), Եօթնջուր (Եօթնաջուր, Յոթնաջուր, Յոտնչոր, Ոտնչոր, Եոտնչոր, Օտընչոր, Օտունջար, Օտունճար), Թեղուտ (Թղութ, Թղուտ), Լաթար (Լաթառ), Լիզ (Լիս), Խարաբաշահըր (Խրաբաշհար, Խարաբշհար, Խարապա Շեհիր, Խարապաշհար, Հայկաշէն), Խարախլոյ (Կարակլոյ, Ղարաղլոյ, Քարա-աղըր, Քարաղըլ, Խարագլը[52], Գարաղէշ[53], Գարաղըլ[54]), Խրիստամ-Քատուկ (Խրիստամ գետուկ, Ռոստամ գիրուկ), Խոշգալդի (Հոշգյալդի, Խոշկալտը, Խօշկելտի, Խոշկելտի), Կաղանջ, Կողակ (Կողագ), Կոփ (Կոբ, Կոպ, Բուլանըխ), Համզաշէյխ (Համզաշէխ, Համզա-Շեխ), Մեջիթլու (Մաճըտլու, Մաճիտլու, Մեջեթլի, Մէճիտլու), Մերպար (Միրբար, Միրիբար), Մոլահքանդ (Մոլահքենթ, Մուլահքանտ), Նորադին (Նորատին), Շէխաղուբ (Շէյխ Եակուբ, Շէյխաղուպ), Շիրվանշէյխ (Շեր-Վան-Շէյխ, Շէր-Վան-Շեխ), Պագրան՛, Փիոնկ (Բիօնք, Բիոնգ, Բիօնք, Պիոնգ, Փիոնկայ), Փրկաշէն (Բրգաշէն, Բրգայ շէն) եւ Քաքառլու (Գաքառլու, Գագառլու, Թագարլու, Թագառլու, Թաքեարլու, Թաքիառլու, Թաքեառլու, Թաքեառլի, Կաքարլու, Կաքառլու, Կեկելի, Կեկերլու Քաքառլու, Քեքերլի, Քեաքառլու, Քակարլու, Քյաֆյարլու, Քէքէռլու, Քեքելի):

Նշենք սակայն, որ այս 28 գիւղերից Կաղանջ եւ Ալգոզ գիւղերի մասին, բացի Խրիմեանին ուղղուած նամակներից մէկ այլ աղբիւրում չենք հանդիպել: Մինչ այժմ գտնուել է մէկ վաւերագիր, որտեղ նշուած է Կաղանջ տեղանունը եւ երկու վաւերագիր, որոնք գրուած են Ալգոզ գիւղի գաղթականներից:

Ամենայն հաւանականութեամբ Ալգոզ տեղանունը պէտք է նոյնացնել ռուսական հետախուզութեան սպայ Վլադիմիր Մայեւսկու յիշատակած Ալագեազ (Алагез) տեղանուան հետ: Մայեւսկին յայտնում է, թէ Ալագեազը 25 տուն, զուտ քրդաբնակ գիւղ էր[55]: Մինչդեռ, եթէ համարենք, որ Ալգոզ տեղավայրը Մայեւսկու յիշատակած «Алагез» բնակավայրն է, Խրիմեան կաթողիկոսի ֆոնդի երկու նամակների հիման վրայ կարող ենք հաշուել նաեւ հայոց տների եւ բնակչութեան քանակը եւս: Ըստ որի ունենք 4 տուն հայ բնակիչ, ընդհանուր թուով 27 անձ[56]:

Ինչ վերաբերում է Բոստաքանդ տեղանուանը, ըստ Միրախորեանի, այն՝ «*Շինուած ընդարձակ բլրոց կողերուն վերայ եւ կը կազմէ մէջ տեղի սահմանն Մշոյ եւ Ներքին Պուլանըխի*»[57]: Որպէս Բուլանըխ գաւառի գիւղանուն ունենք երկու հաստատում. վաւերագրեր Խրիմեանի ֆոնդից, իսկ տպագիր աղբիւրներից վկայուած է *Պատմութիւն Տարօնի Աշխարհի* գրքում[58]:

Յաջորդը վերաբերում է Պագրան, Խրիստամ-Քատուկ կամ Խրիստամ Գետուկ (Ռոստամգիրուկ) եւ Նորատին կամ Նորադին գիւղերին:

Նազարէթ Պ. Մարտիրոսեանի թիֆլիսեան *Վան-Տոսպ* թերթում հրապարակուած վիճակագրական թարմացուած աղիւսակում Մանազկերտի գիւղանուններ բաժնում ունենք Բագրան անունով բնակավայր[59]: Արդեօ՞ք սա նոյն Պագրանն է, որը սահմանային շրջանում գտնուելու պատճառով երբեմն համարուել է Մանազկերտի, երբեմն էլ՝ Բուլանըխի գիւղ: Ներկայացրած ցանկի մէջ այս տեղանունը նշել ենք հարցականով: Մեր նպատակը հնարաւորին շատ վկայութիւններ եւ վաւերագրեր գտնելն է, որոնց հիման վրայ կարելի է յենուել եւ հիմնաւորել այս կամ այն գաւառին մաս կազմելու փաստը: Այս փուլում մենք սահմանափակւում ենք եղած եզակի վկայութիւնը գիտական լայն հանրութեանը ներկայացնելով:

Գալով Նորատին կամ Նորադին տեղանուանը, ամենայն հաւանականութեամբ այն *Ընդարձակ Օրացոյցի* էջերում յիշատակուող Բուլանըխ գաւառի Նորաշէն բնակավայրն է[60]:

Միով բանիւ, այս նամակները Օսմանեան Կայսրութեան հայ բնակչութեան տեղագրութեան, վիճակագրութեան, տեղանունների ստուգաբանութեան, լեզուական շերտի քննութեան առնչութեամբ հետազօտական բացառիկ սկզբնաղբիւրներ են:

Խրիմեան կաթողիկոսի արխիւի ուսումնասիրութիւնը շարունակում ենք: Վստահ ենք, որ Հայոց Հայրիկին ուղղուած այս նամակների շարունակական, մանրակրկիտ ուսումնասիրութիւնն ու հրատարակումը հայկական տեղանունների ամբողջացման եւ շտկման հարցում իր կարեւոր ներդրումը կ'ունենայ:

Ստորեւ տալիս ենք երկու վաւերագրի օրինակ, որոնք արտագրել ենք բնագրային ճշգրտութեամբ՝ միջամտելով միայն կէտադրական նշանների հարցում: Եղած տառասխալները թողել ենք նոյնութեամբ: Այս վաւերագրերը երկուսն էլ գրուած են Բուլանըխ գաւառին պատկանող գիւղերի բնակիչներից: Արեւմտահայ գիւղացիութիւնից մեզ հասած գրաւոր այս յուշարձանները կորսուած մեր հայրենիքի զաւակներից մեզ հասած եզակի մասունքներ են:

***

Նորին Վեհափառութեան
Սրբազնագոյն Կաթուղիկոսին Ամենայն Հայոց Տ.Տ. Մկրտչի եւ պաշտելի Հայրիկին.
Ի բնակչէ Կողակ գեղջ. Լզա-Բուլան[ը]խ գաւառի
Սերոպ Սարգիսեանէ
Ամենախոնարհ աղերս

Չէ ծածուկ ի խորագիտագոյն հայեցուածոց սրաւտես աչաց Արծւոյդ Վեհի, զի անփետուր ձագունքդ՝ որ ի բունս կեդրոնական Տաճկահայաստանի՝ ի կուր սողոսկող թունաւոր օձից լինին:

Գիւղն Կողակ աւատական[61] է (Շէխլ[ը]ղ) անօրէն բռնակալին Սեյիդանցի Մահսոյի, որ ունի բնակութիւն իւր յԱլոյ-զարիգ գեղջ յԱբլբուհար լերինս Մշոյ, որ բարդելով յիմ վերայ զանըմբերելի ծանր-ծանր հասս[62] զոր ի դրամ փոխարինեալ, պահանջէր յինէն[63] տասնապատիկ յաւելուածով, ոյր սակս[64] հանդերձ աղխիւք[65] ստրուկ լեալ կամաց մարդախոշոշ գազանին՝ հեծէ ի հանապազ ի տաժան վաստակս եւ ի զազիր կամս նողկալի անգտութեանց արիւնռուշտ տիրանին, զորոյ զկամացն կախեալ կայր ամենայն ինչ իմ. ոչ միայն կեղեքեալ լինէի ի ձեռաց նորա, այլ նաեւ ի յարփանեկացն[66] նորին՝ ի հարազատ որդւոցն Մուհամմէտի, որք նոյնպէս զամենայն չարիս խորհէին ի գլուխ մեր:

Եւ յաւուր միում հրձիգ արկեալ այրեցին զամբարս ցորենոյ եւ զմարագս, եւ ինքեանք պար ասեալ զլափող հրով՝ դիւական կաքաւս յօրինէին: Տեսեալ տիրանին Մահսոյի, թէ այլեւս չիք յերակս իմ յարիւն ի սնունդ պժկալի[67] անձին, յափշտակեց զերկուս դստերս իմ՝ զերկոտասան ամսոյ Ֆիտանն եւ զինն ամսոյ Ալմաստն: Զահի հարեալ զայսպիսի բարբարոսութիւնէ՝ հազիւ ճողոպրեալ ի ձեռոց նորա՝ եկի այսր, թող[ե]լով անտանօր զմնացուած ընչիցս:

Արդ՝ Արուսեա՛կդ Հայաստանեայց, դիմելով յոտս Սրբութեանդ՝ դողդողագին պաղատանօք հայցեմ զելս հնարիցն յարդարել, զի աղջէունքս իմ դարձցին առ իս եւ իցէ ինձ աստանօր տեղի, ուր տեղից զնժդեհ գլուխն իմ վշտաբեկ առ ի հայթայթել զոգեպահից միւսոց զաւակացս, զի կեցցուք եւ օրհնեսցուք զանուն պաշտելի Հայրիկի՝ խնդրելով յէէն էիցս հողէէ յերկարել զարեւ կենաց պետիդ Արամեանս զարմի:

Սերոպ Սարգիսեան վասն անգրագիտութեան խնդրանօքն նորայ գրեցի Հայկ Արամեան:

Ի «26» դեկտեմբերի 1893 ամի
Ի Վաղարշապատ[68]

***

Նորին վեհափառութեան

Մկրտիչ Ազգասէր Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքի համազգային նախամեծար Աթոռոյս Արարատեան Առաքելական մայր Աթոռոյս եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի

Բաղտա[սա]րէ Մարկոսեան Մուղնի Շահնազարց
Ի գաւառէ Մշու ի գիւղէ Քեաքառլու
Ամենախոնարհ[ի]աբար խնդիր
Ո՛վ Աստուածարեալ Հայրապետ,

Որդիք հանապազ հային ի ձեռս ծնողաց իւրեանց եւ վիրաւորք բժշկաց, քանզի նօքօք լցին զպէտս նոցա: Նոյն համարեալ զիս, Վեհափա՛ռ Տէր, արտասուաբեր աչօք եւ բազմադիմի թախանձանօք կաթոգին համբոյր սրբազնասուրբ աջոյդ ի գահանկեալ առ ոտս Վեհիդ հայցեմ ի քէն օգնութիւն:

Արդէն յայտնի է ձերինդ Վեհափառութեանը տաճկական գազանացեալ իշխանութեան բռնարարութիւնը եւ անիրաւութիւնը, Վեհափա՛ռ Հայրիկ: Ահա յայտնում է իմ անարժան գրիչս մեր վէրքերը՝ ձերինդ գթառատ հայրութեանդ: Անօրէն զաթիէքը[69] հանդերձ հուքմաթիօք[70] վրայ հասնելով մեզի բռնարարութեամբ բանտարկէցին, յաղագս այնմ, թէ դուք ունիք մասնակցութիւն «Հայկական ընկերութեանը»:

Ուստի բազմաթիւ չարչարանք եւ տանջանք տալով հազիւ հազ **ազէտիցանք**[71] մահից, մեզանից պահանջելով **ութանասուն** ոսկի, անօրէն բանտապահը եւ արձակեց մեզ:

Չկնի այնմ աւուր կողոպտեցին ամենայն շարժական եւ անշարժ ապարուրքն[72] իմ եւ բանտարկեցին բռնաբարութ[եամ]ք որդին իմ:

Վ[ա]ս[ն որո]յ, ամենախոնարհաբար խնդրեմք եւ համբուրեմք Ս[ուր]ք գարշապարդ հոգեւոր **Հոապետիդ**[73], զի ներկայացնել ձերինդ սրբութեան աջը ըստ բարեհաճութ[եան] Վեհափառ հօրդ, ի տես եւ ի տնօրէնութ[իւն]:

Մնամ ձեր նուաստ ծառայ եւ Ս[ուր]ք աջդ համբուրող՝ Բաղտասար Մարկոսեան, Տաճկահայաստանցի

1894 ամի 15ն մարտոյ[74]

***

Ամփոփելով նշուած արխիւում արձանագրուած վաւերագրական նիւթը, պէտք է նշել հետեւեալը.- նախ եւ առաջ դրանք մէկ անգամ եւս վկայում են Օսմանեան Կայսրութիւնում կամ ինչպէս վաւերագրերում է նշուած Տաճկահայաստանում 1893-1907ին հայ բնակչութեան վիճակի, նրա նկատմամբ որդեգրուած ոչնչացման քաղաքականութեան, գրկանքների մասին: Վաւերագրերի ուսումնասիրութիւնն ու դրանց առանձին հրապարակումները կարեւորում ենք համիտեան կոտորածների հետեւանքով տուժած հայկական բնակավայրերի, հայ բնակչութեան թուաքանակի, բնակչութեան տեղաշարժի եւ յատկապէս հայաբնակ վայրերի, տեղանունների վերաբերեալ նոր, հարուստ տեղեկութիւնների պարունակման առումով, որոնք շտկումների, սրբագրումների տեղանունների ցանկերի ամբողջացման հարցում ունեն մեծ կարեւորութիւն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] This work was made possible by a research grant from the Armenian National Science and Education Fund (ANSEF) based in New York, USA:

[2] Վ. Սահակեան, «Մատենադարանի՝ Հայոց Ցեղասպանութեան Մասին Արխիւային Վաւերագրերը (Օսմաներէն Վաւերագրեր)», *Բանբեր Մատենադարանի, Հտր. 25*, 2018, էջ 191-210:

[3] Է.Ա.Կոստանդեան, «Մկրտիչ Խրիմեան, (Մահուան 90-Ամեայ Տարելիցի Առթիւ)», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1997:3, էջ 33 (https://archive.org/stream/LraberTsankk1966-2015indicesForLraberHasarakakanGitutyunneri/Lraber_Tsankk_1966-2015#page/n619/mode/2up):

[4] Է. Ա. Կոստանդեան, *Մկրտիչ Խրիմեան. Հասարակական-Քաղաքական Գործունէութիւնը*, Երեւան, «Զանգակ-97», 2000, էջ 37:

[5] Հաւանաբար վանքի շրջակայքը նկատի ունի, ուր սովորաբար հաւաքւում էին գաղթականները, եւ, քանի որ տեղն էլ սահմանափակ էր՝ կենդանիների համար նախատեսուած գոմը տրամադրւում էր գիշերակացի համար (ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 295 «Վ[ա]սն զի մերկ եւ բոլորովին անծածկոյթ եմք եւ այս երկու օր է, որ եկած եմք վանքիս պլանը: Բայց այն տեղ կը տեսնեմք, որ մեզ բոլորովին անհարմար է, զի

այն անասուններուն մէջ մեր ընտանիք չէ կարող շարժիլ»: Միւս կողմից էլ գոմ նշանակում էր գիւղ, օրինակ Իշխանիգոմ, Մղրագոմ:

[6] Գ. Բադալեան, «*Արեւմտեան Հայաստանի Պաւրմաժողովրդագրական Նկարագրութիւնը Մեծ Եղեռնի Նախօրէին*, Մաս Վեցերորդ, Բիթլիսի Նահանգ», *Վէմ*, Յուլիս-Սեպտեմբեր, 2016:Ը(ԺԴ), թիւ 3(55):

[7] S. Մարտիրոսեան, «Պուլանըխի Քազա-Ժողովրդագրութիւն», https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofbulanik/locale/kazaofbulanikdemography.html :

[8] *Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, Վերապրածների Վկայութիւններ. Փաստաթղթերի Ժողովածու, Հտր. II*, կազմ.՝ Ա. Վիրաբեան, Ք. Աւագեան, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2012:

[9] Գ. Սրուանձտեանց, *Համով-Հոտով*, Կ. Պոլիս, 1884, էջ 99-100:

[10] Յ. Ե., «Պուլանըգ», *Ազատամարտ Օրաթերթ*, 1910, հմր. 201:

[11] Մ. Միրախորեան, *Նկարագրական Ուղեւորութիւն Ի Հայաբնակ Գաւառս, Հտր. Գ.*, Պոլիս, 1885, էջ 69, 86:

[12] Ա-Դօ (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի Վիլայէթները*, Երեւան, Տպ. «Կուլտուրա», 1912, էջ 146:

13 Raymond Kévorkian, *The Armenian Genocide, A Complete History*, I.B.Tauris & Co Ltd., Նիւ Եորք, 2011, էջ 350:

[14] «Մշոյ Աշխարհ», *Լումայ, Գիրք Ա.*, 1897, էջ 167:

[15] Սրուանձտեանց, *Համով*, էջ 101:

[16] В.Т. Маевский, *Военно-статистическое Описание Ванского и Битлисского Вилаетов*, Штаб Кавк. Воен. Окр. (Վ. Տ. Մայեւսկի, Վանի եւ Բիթլիսի նահանգների ռազմական եւ վիճակագրական նկարագրութիւն, հրատ.՝ Կովկասի Ռազմական Սպայակոյտի, Կովկասի շրջանի գլխամասային գրասենեակի տպարան), Թիֆլիս, 1904, էջ 119-20:

[17] Ա-Դօ, էջ 147: Ամենայն հաւանականութեամբ Բրգաշէն կամ Փրկաշէն տեղանուններն են վրիպակով:

[18] Ա-Դօ, էջ 147: Ամենայն հաւանականութեամբ Կողակ տեղանունն է վրիպակով:

[19] Միրախորեան, *Հտր. Գ.*, էջ 93:

[20] Կարօ Սասունի, *Պատմութիւն Տարօնի Աշխարհի*, Պէյրութ, Հրատ.՝ Տարօն-Տուրուբերանի Հայրենակց. Միութ. Կեդր. Վարչ., Տպ. Սեւան, 1956, էջ 355:

[21] Ա-Դօ, *Վանի*, էջ 147:

[22] Ս. Մովսէսեան, «Բուլանըղի Կոտորածը», *Համբաւաբեր*, թիւ 43, էջ 1358:

[23] Ատրպետ, *«Բուլանըղ»*, *Մշակ*, Թիֆլիս, 1915, հմր. 213:

[24] Սասունի, էջ 355. նաեւ՝ Ա-Դօ, էջ 146:

[25] Ատրպետ:

[26] *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկիչ Հիւանդանոցի Հայոց*, Կոստանդնուպոլիս, 1903, էջ 338:

[27] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338. նաեւ՝ ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 121, թղթ. 103, վաւ. 386. նաեւ՝ http://nisanyan1.blogspot.com/2018/10/anadoluda-gezintiler-mus-bulanik-ilcesi.html :

[28] Սասունի, էջ 355:

[29] Նազարէթ Պ. Մարտիրոսեան, «Համաեւրոպական Պատերազմի Ընթացքում Ամայացած Արեւելեան Հայաստանի Գաւառների Վիճակագրութիւնը», *Վան-Տոսպ*, Հմր. 14, էջ 7:
[30] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338-39:
[31] Սասունի, էջ 271. նաեւ՝ ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 590:
[32] Ատրպետ:
[33] Յ. Ե.:
[34] Մարտիրոսեան, «Համաեւրոպական», էջ 7:
[35] Յ. Ե.:
[36] Ատրպետ:
[37] *Մշակ*, Հմր. 213:
[38] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338-39:
[39] Ատրպետ:
[40] Ատրպետ:
[41] Միրախորեան, *Հյր.* Գ., էջ 74:
[42] Ատրպետ:
[43] Յ. Ե., նաեւ՝ Маевский, էջ 120:
[44] Ատրպետ:
[45] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338:
[46] Նոյն, էջ 338:
[47] *Մշակ*, Թիֆլիս, 1915, Հմր. 213. նաեւ՝ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 361:
[48] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338-339:
[49] Նոյն, էջ 338:
[50] *Մշակ*, Հմր. 213:
[51] Յ. Ե.:
[52] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338:
[53] Մարտիրոսեան, «Համաեւրոպական»:
[54] Յ. Ե.:
[55] Маевский, էջ 120:
[56] ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 363, 365:
[57] Միրախորեան, *Հյր.* Գ., էջ 93:
[58] Սասունի, էջ 271:
[59] Մարտիրոսեան, «Համաեւրոպական»:
[60] *Ընդարձակ Օրացոյց*, էջ 338:
[61] Հարկատու է շէյխ Մահսոյին:
[62] Հարկ, տուրք:
[63] Իմա՝ հին:
[64] Հարկ:
[65] Ընտանիք, գերդաստան:
[66] Իմա՝ յարբանեկացն: Նկատի ունի Մուհամմէդ մարգարէի հետեւորդներին՝ իսլամական աշխարհը՝ մատնանշելով կրօնական խտրականութիւնն ու ճնշումները:
[67] Պժգալի, գարշելի, զզուելի:
[68] Նոյն, թղթ.101, վաւ. 18:

[69] Զաւթիա, թուրքական ոստիկան, զափթիէ (*Հայոց Լեզուի Բարբառային Բառարան, Հտր. 1*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2001, էջ 401):

[70] Հուքմ՝ ուժ, իշխանութիւն (*Հայոց Լեզուի Բարբառային Բառարան, Հտր. 3*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2004, էջ 316):

[71] Իմա՝ ազատուեցանք:

[72] Թերեւս ստացուածք, ունեցուածք իմաստով:

[73] Իմա՝ հովուապետ:

[74] ՄՄ, Խսկֆ, թղթ. 101, վաւ. 558:

THE ARCHIVE OF THE CATHOLICOS OF ALL ARMENIANS MKRTICH KHRIMIAN AS A PRIMARY SOURCE FOR RESEARCH ON ARMENIAN TOPONYMS

(Summary)

VERA SAHAKYAN
verasahakyan@gmail.com

The article draws attention to documents in the archive of Catholicos Megerditch Khrimian, which are preserved in the Mesrop Mashtots Matenadaran Armenian Institute of Old Manuscripts. The paper highlights particularly a number of documents which attest the harsh conditions of Armenians in the Ottoman Empire in the late 19th and early 20th century and the incessant oppressive policies. The documents provide information on massacres committed against Armenians in different parts of Ottoman Armenia as well as descriptions of the unbearable conditions of the refugees.

The author notes that the study of these documents is significant for both uncovering details of Ottoman persecution against Armenians and discovering new locations and toponyms which have not been registered in Armenian geographic dictionaries.

KING PETER I OF CYPRUS AND THE ARMENIANS (1358-1369)

NICHOLAS COUREAS
ncoureas@hotmail.com

King Peter I (1358-69) is one of the most controversial rulers of Lusignan Cyprus, especially as regards his promotion and execution of the crusade against Alexandria in 1365. Yet his crusading policies and more generally his warfare against the Muslims encompassed Anatolia and Syria as well as Egypt. Because of this, the Armenians of the kingdom of Cilician Armenia were involved in this warfare, while on Cyprus itself Armenian mercenaries formed part of the royal army. King Peter's strategy towards the Armenians had mixed results. His forces successfully captured the Armenian port city of Gorhigos, which remained part of the Lusignan kingdom of Cyprus down to 1448, but failed to re-capture Laiazzo (Ayas), the chief port of the Cilician kingdom of Armenia, prior to its seizure and retention in 1337 by the Mamluks. Nor did King Peter I organize a crusade in collaboration with the Armenians against the northern areas of Syria, after the manner attempted by the Cypriots, Mongols and Armenians in the early fourteenth century, during the reign of King Henry II of Cyprus (1285-1324). The possible migration of Armenians from Cilician Armenia to Cyprus and other parts of the eastern Mediterranean during King Peter's reign is another subject that needs to be further researched. The above issues form the subject of this paper.

The main Cypriot sources recording the annexation of Gorhigos by King Peter's forces in January 1360 are two. One is the anonymous early sixteenth century Italian chronicle called 'Amadi' after its last owner, the Venetian noble Francesco Amadi, and the second is the chronicle of Leontios Makhairas, written in Cypriot Greek in the mid-fifteenth century, which records this event in far greater detail, while 'Amadi' simply summarises the fifteenth century Cypriot chronicler Leontios Makhairas on this subject. Makhairas states that the inhabitants of Gorhigos themselves took the initiative by summoning King Peter to take the port in view of the inability of their own king, Constantine III (1344-63), to defend it. He also states that his account of King Peter's annexation of Gorhigos is 'as I have found it recorded in the king's court'. Given Makhairas' own familial connections with the royal court, this assertion is perfectly credible, although he does not, unfortunately, specify what kind of record he had consulted. Makhairas also inserts an erroneous anachronism, stating that the incumbent king of Armenia was King Leo V (1374-75), who had fled to France following the Mamluk conquest of the kingdom of Cilician Armenia. In fact, Cilician Armenia was conquered later, in 1375, by the Mamluks of Egypt and Syria, who captured King Leo V but, following his ransom, allowed him to

go to France, where he died in 1393. Makhairas also imparts the information that the inhabitants of Gorhigos had asked King Hugh IV of Cyprus (1324-59) to annex the city, but that the latter had refused since Cilician Armenia at the time was under the rule of King Guy (1342-44), a nephew of King Henry II of Cyprus (1285-1324) and so a relation of King Hugh.[1]

Although Gorhigos's population was predominantly Armenian, it is interesting that according to Makhairas the two envoys sent to King Peter from the town were both Greeks, Michael Psararis and Costas Philitsis, who recommended the townspeople to the king and his council and also gave the king letters declaring their intent to submit to his rule. The chronicler also records that King Peter desired to have a place in Turkey and so sent Smyrna galleys with a force of four companies of archers under the command of the English knight Robert de Louza, named in 'Amadi' as Robert Tulassan. It is then pointed out that King Peter solicited papal permission for the use of these galleys, which normally formed part of the Cypriot naval squadron entrusted with the protection of Smyrna, the Aegean port city seized in 1344 from the Turks by a naval league of Roman Catholic powers and held until 1402. Makhairas's account ends with the observation that the kings and regents of Cyprus, following the annexation of Gorhigos, regularly dispatched two galleys to the city with wages for the garrison, supplies and weaponry, while fighting the Turks there daily.[2]

Several features of the above narration merit further discussion. The reference to the dispatch of Greek envoys from a city populated mainly by Armenians perhaps reflects how Greek served as a common language in negotiations between the kingdom of Cyprus and states in southern Anatolia, a phenomenon attested to by extant documentation from the early thirteenth to the mid-fifteenth centuries. That King Peter desired a base on the southern Anatolian littoral in order to break the power of the local Turkish emirs is perfectly credible, and confirmed by his capture of Adalia in 1361, a resounding success given that its citadel was deemed virtually impregnable. The fact that the force sent to annex and retain Gorhigos was headed by an English mercenary captain points to how King Peter was employing foreign mercenaries from the outset of his reign, a practice that caused resentment among his nobles and constituted one of the factors leading to the king's assassination in 1369. Finally, the fact that King Peter I wrote to Pope Innocent VI asking for his permission for the seizure and retention of Gorhigos is also credible since, along with the subsequent capture of Adalia, it diverted precious resources from the Aegean theatre. As early as November 1353 this pope had written to King Hugh IV warning him that the garrison in Smyrna was in danger of being overrun due to a shortage of supplies, and the Master of the Hospitallers was informed that it lacked essential supplies in June 1355. When

appointing the Carmelite friar Peter Thomas as legate to the East on 11 May 1359, one of the reasons cited by the pope was the danger above all to the city of Smyrna.[3]

Given King Peter I's commitment to the crusading ideal, one must discuss why no crusade was organized during his reign to help the embattled kingdom of Cilician Armenia, which had suffered losses of territory and devastating raids from the Turks and the Mamluks and was in even greater peril than Smyrna. Dynastic conflicts between the Lusignans and the Armenian Hethoumid dynasty going back to the time of King Hugh IV are the likeliest reason. King Guy of Armenia (1342-1344), a nephew of King Henry II of Cyprus and a son of Amaury by his Armenian wife Isabel, was murdered by anti-Latin Armenian nobles in 1344 along with his younger brother Bohemond on account of their pro-Latin policies. In his stead, the son of Baldwin the marshal of Armenia was crowned King Constantine III, and he gave orders for Soldane, the mistress of Guy's brother John, and their two illegitimate sons Bohemond and Leo, to be murdered. Although they managed to escape to Cyprus, this episode created an animosity that the passage of time did not extinguish. Two years after King Constantine III's death in 1363 his cousin and namesake usurped the throne. Constantine IV, the penultimate king of Cilician Armenia, ruled a shrinking kingdom until 1373, when he was assassinated by a pro-Latin faction of Armenian nobles, the very group that pinned their hopes on the Armenian branch of the Lusignans.[4] King Peter I was likewise promoting the claims of this branch, represented by his kinsmen Bohemond and Leo, the illegitimate sons of the late John of Lusignan, to the throne of Armenia. This was his real objective, not organising a crusade in aid of Armenia that would shore up the reigning Hethoumids, who had expelled the Armenian branch of the Lusignans in the first place. Sometime after 1363 the possibility of having Bohemond crowned king of Armenia arose, but his death impelled King Peter to support Leo's candidature. This is also reflected in the letter Pope Urban V sent on 3 April 1365 to the archbishops, bishops and other prelates of the kingdom of Cilician Armenia, in which he recommended Leo to them as their king.[5]

It was, moreover, the hostility between King Peter I and the Armenian Hethoumids that explains why no embassies were sent from the Armenian royal court to the papacy in Avignon during his reign. Another important factor was the papal recognition of the Uniate Armenian friars that took place under Pope Innocent VI. These friars were active in Greater Armenia, living according to the Rule of St Augustine and the Constitutions of the Dominican Order. The pope granted them recognition on 31 January 1356 and decreed that they would be subject to the visitations of the Dominican master or his deputy, something that must have displeased King Constantine III and the anti-Latin party in control of the kingdom of Cilician Armenia. This displeasure possibly explains

why Narses Baliantz, the Armenian Uniate who in 1338 had been re-consecrated archbishop of Mantzikert by Latin bishops, was apparently unable to visit Armenia to obtain replies to questions regarding the Armenian faith, despite having been instructed to go there in 1353 and once again in 1355 by Pope Innocent VI. Baliantz may have been resident in Cyprus during his final years, for he died there in 1361, leaving a small ring and a silver seal as *spolia* to the papal collectors, as recorded in their accounts for the same year.[6]

Another prelate who found refuge on Cyprus was Ponce the archbishop of Tarsus. Possibly a Franciscan, he had been appointed to this see in May 1358 but had been forced to vacate it when the Mamluks conquered Tarsus in 1360. On his death, he was succeeded on 26 October 1366 by the Franciscan Jean Ponhyer, who was resident in Cyprus and in 1373 was sent to Venice as an ambassador of King Peter II. Clearly, under King Peter I native Armenian prelates supporting the Roman Church and Latins appointed to Armenian sees came to be resident in Cyprus, which served as a refuge for them given the hostility of the Hethoumid kings of Cilician Armenia, as well as the Mamluk threat. The indigenous Armenian Church, like the reigning monarchs Constantine III and Constantine IV, was likewise hostile to the papacy and the Armenian Uniates. In 1361, during the reign of King Peter of Cyprus, this church convoked a council at Sis, the capital of Cilician Armenia, in the course of which Latin liturgical usages such as the addition of water to the wine of consecration were expressly condemned. The hostile attitudes of the indigenous Armenian Church towards the papacy and its representatives in Cilician and Greater Armenia combined with that of the Armenian kings towards King Peter I of Cyprus precluded the organization of any crusade to help the shrinking Armenian kingdom.[7]

King Peter I's understandable hostility towards the Hethoumids did not extend towards Armenians in general. His sack of Alexandria in October 1365 resounded throughout Christendom. Among its commemorators were the Armenian monks Vadan de Gherim and Grigor d'Akner, both living in Jerusalem, who noted this event in their colophons.[8] In the war with the Mamluk sultanate that followed, however, the Mamluk sultan al-Ashraf Sha 'ban (1363-77) appears to have incited the emir of Karaman to attack Gorhigos early in 1367 at the head of a powerful army, despite the protestations of the sultan's envoy to Cyprus, who was brought into King Peter's presence over the matter. The king reacted by organizing a fleet of galleys under the command of his brother John, the titular prince of Antioch, to sail to the city's rescue. Several sources record the military operations leading up to the repulse of the Turkish attack, notwithstanding the fact that the Turks had managed to seize one of the towers outside the castle. Guillaume de Machaut, perhaps the major French poet and musician of the fourteenth century whose account of this and other

campaigns of King Peter is based on the recollections of French mercenaries who formed part of the king's forces, devotes over 1200 lines to this event in his rhymed history titled 'The Capture of Alexandria', out of a total of nearly 9000 lines. According to his account, knights from England, Venetians, Cypriots and Genoese as well as the French took part in this expedition, and he observes that King Peter spent considerable sums on this military expedition. Machaut recounts that six galleys with 600 men-at-arms and 300 archers sailed to relieve Gorhigos, while Makhairas gives ten as the number of galleys, without giving a number for the forces sailing there. Both Machaut and Makhairas agree in their respective narratives that the besieging Turks were repulsed with heavy losses, with King Peter's forces capturing many tents, artillery pieces and other equipment. The royal fleet returned to Cyprus in mid-March.[9]

In the following May, according to the record of an anonymous Armenian colophon, the emir of Tarsus launched a devastating attack against Cilician Armenia. Employing over 12,000 horsemen and even more infantry, he laid siege to the capital Sis, which King Constantine IV and his lords defended valiantly. As this attack was centred on the kingdom's interior, neither King Peter nor the Hospitallers, whose naval forces were unable to operate far from the coast, could help the Armenians. Perhaps mindful of the fact that the Turks were a far greater threat than the enfeebled king of Armenia, in the autumn of 1367 King Peter I sent an expedition to Laiazzo, formerly the main port of Cilician Armenia, with the aim of capturing it in concert with the forces of King Constantine IV. According to Machaut's chronicle, it was King Constantine IV who initiated the venture, stating that the Mamluk sultan sought to either behead or enslave him. King's Peter's fleet sailed from Cyprus in September 1367 and after raiding Tripoli and Tortosa on the Syrian littoral, his forces arrived at Laiazzo, with King Peter commanding the forces in person. The main sources for this expedition, Machaut and Makhairas, agree that after a hard-fought battle the king's forces managed to capture the town and the castle by the sea, but not the strongly defended land castle, and so eventually they withdrew. Machaut imparts the information that following this withdrawal King Peter stayed with his forces in a nearby port waiting for the arrival of King Constantine of Armenia, to whom he sent messengers requesting his arrival. The port in question was perhaps Mallos, although the more distant Gorhigos cannot be excluded, given that it was already under King Peter's control. King Constantine, however, perhaps fearing Mamluk reprisals against his kingdom, never turned up.[10]

It is shortly after this episode that Machaut's chronicle records the claim that the Armenians offered King Peter I the crown of Armenia in mid or late 1367, with the Armenian lords handing over the keys of their castles to his brother Prince John, who assumed the lordship of Armenia on his behalf. No

other source corroborates this claim, which is probably a garbled version of Pope Urban V's letter mentioned above, in which King Peter's cousin Leo was recommended as king. King Peter's attempt to seize Laiazzo was also commemorated by Philippe de Mézières, his chancellor and fervent admirer who, following King Peter's death, went back to his native France, where he composed his major work titled *Le songe du vieil pelerin* towards the end of his own long life. In Book 3 Chapter 281 of this work he recounts the wealth of the kingdom of Cyprus under King Peter I, the king's courage and his conquests in battles against the infidel; 'Alexandria in Egypt, Satalia in Turkey, Laiazzo in Armenia, Tripoli and Tortosa in Syria'.[11]

One now turns to examine the activities of the Armenians within the kingdom of Cyprus under King Peter I. A corps of Armenian soldiers is recorded by Makhairas as serving in the Lusignan army under King Peter I and his heirs, and it is noteworthy that the earliest record of this corps dates from the time of Peter I himself. Papal correspondence and the colophons of Armenian manuscripts record the establishment of Armenians in Famagusta, the kingdom's chief port from the late thirteenth century onwards, at the start of the fourteenth century.[12] There are also records of Armenians resident there during the reign of King Peter I in the 1360s, in the deeds of the Venetian notary Simeone, the priest of San Giacomo dell' Orio, resident in Famagusta in the years 1362-1371. In his will dated 3 April 1363 the citizen of Venice Fetus Simitecolo made several bequests including one leaving the sum of twenty white bezants to an Armenian called Vanes. Neither the reason for this bequest nor Vanes's profession or social status are given, unfortunately. In another deed of 30 November 1363, the Armenian Hayton, the son of Leo Cases of Famagusta, granted a quittance to his fellow national Salon, son of a certain Barach of Laiazzo, a burgess of Famagusta, for all that they had managed together from the outset until then, namely on behalf of Hayton's mother. This deed despite its overall vagueness at least imparts the valuable information that Salon was a burgess of Famagusta descended from an Armenian of Laiazzo. Perhaps his father, Barach, had migrated to Cyprus after the Mamluks conquered Laiazzo for good in 1337. This mention of an Armenian among the burgesses of Cyprus is unique, indicating that Salon belonged to those Armenians in Cyprus acknowledging Roman primacy, for only Christians obedient to Rome could be members of this class, at least prior to the fifteenth century.[13]

The loyalty towards Rome of the Armenians resident in Famagusta also attracted the attention of the above-mentioned Philippe de Mézières. While still chancellor of Cyprus he composed a biography of Carmelite friar and papal legate Peter Thomas. Peter Thomas had been a bosom friend of his, for Philippe, Peter Thomas and King Peter had enthusiastically promoted the crusade of October 1365 against Alexandria. Following Peter Thomas's death

in 1366, Philippe de Mézières composed this biography as part of an unsuccessful attempt to secure the legate's canonization. A passage in it on the Armenians of Famagusta arouses particular interest. In it he referred to the Armenians of Famagusta as having witnessed a miracle concerning Peter Thomas that occurred while he was resident there, soon after he had returned from visiting the Holy Places:

> Remaining in Famagusta for some time, he used to serve his Creator and the glorious Virgin Mary so humbly [...] that in the middle of every night or at around that time, he was prostate on the ground in his room [...] and he burst forth into prayers so intently [...] that he sensed nothing worldly [...] and during those hours when he was thus prostate in prayer a flame from the sky was seen by Armenians and others nearby and all around to be coming down over his room.[14]

By having the Armenians witness a miracle concerning a papal legate, even if he mentioned others witnessing it as well, Philip de Mézières, chancellor of Cyprus and a close friend and adviser of both King Peter I and the papal legate Peter Thomas, was indicating clearly that among the various non-Latin communities living in Cyprus the Armenians were seen as closest to the Latins. Armenians are mentioned on several other occasions in the biography, listening to Peter Thomas's preaching and attending his funeral, along with Latins, Greeks, Syrians and Nestorians.[15]

As seen above, some of the Armenians residing in Famagusta were the descendants of Armenians who had arrived there from Laiazzo. This raises the question of whether under King Peter I Armenians from Cilician Armenia migrated to Cyprus. To date there is no firm evidence for this, but Armenian migration was taking place elsewhere in the Mediterranean during the reign of King Peter. In February 1366, the Hospitallers allowed Armenians from Byzantine Lesbos to settle on Kos to the north of Rhodes. At least fifty Armenian families were settled in Kephalos, a town located to the south of the city of Kos and called Narangia in the middle ages. Their envoy was named *Vanes de Cafa Armenus*, an indication that he and perhaps the remainder originated from Caffa in the Crimea. Three years earlier, in 1363, Armenians from the Black Sea region had received permission to settle in Venetian Crete. This migration of Armenians to Crete and the eastern Aegean islands suggests that Armenians were perhaps migrating to Cyprus as well under King Peter I.[16]

Nevertheless, it is noteworthy that of the twenty-two Armenian manuscript colophons originating from Cyprus between the years 1280 and 1468 that have been collected and published by Professor Dickran Kouymjian, not one dates to the time of King Peter I. Perhaps this indicates the lack of any cataclysmic events during his reign, such as the Mamluk sack of Laiazzo in 1337 or the Mamluk capture of Sis in 1375, which signalled the end of the Armenian

kingdom of Cilicia. Such happenings brought streams of Armenian refugees to Cyprus and so may have induced some composition in the colophons several years afterwards. Two colophons of the years 1379 and 1426, although referring simply to Cyprus as opposed to Famagusta or any other location, possibly indicate the migration of Armenians to Genoese Famagusta in the period 1374 to 1464, a phenomenon encouraged by the local Genoese authorities wishing to re-populate the town, which entered into a period of economic stagnation following the Genoese seizure and annexation of the port city during their invasion of Cyprus in 1373-74. A number of Armenians served as mercenaries in the Genoese garrison of Famagusta.[17]

CONCLUSION

Looking back over the relations King Peter I maintained with the Armenians, both those of the Cilician kingdom of Armenia and those within his own kingdom, there can be little doubt that, despite tensions between the Lusignans and the Hethoumids going back to the time of his predecessor, King Hugh IV, his attitude towards them was favourable. He annexed the port of Gorhigos at the request of the city's Armenian inhabitants, maintained a corps of Armenian soldiers in his army, defended Gorhigos determinedly and successfully against the attack launched in 1367 by the emir of Karaman and tried hard if unsuccessfully later in that year to recover the former Armenian port of Laiazzo from the Turks. King Peter I's assassination in January 1369, the Genoese invasion of Cyprus that followed in 1373, and the permanent enfeeblement of the Lusignan kingdom in the wake of these events made the kingdom powerless to offer further help to the embattled Armenians of Cilicia, whose own kingdom was destroyed by the Mamluks in 1375.

ENDNOTES

[1] Leontios Makhairas, *Recital Concerning the Sweet Land of Cyprus, Entitled 'Chronicle'*, ed. Richard M. Dawkins, 2 vols., Oxford, Oxford University Press, 1932, I, §§112-113; "Chronique d'Amadi," in *Chroniques d' Amadi et de Strambaldi*, ed. René de Mas Latrie, 2 vols., Paris, Imprimerie Nationale, 1891-1893, vol. 1, 410-11; *The Chronicle of Amadi Translated from the Italian*, trans. Nicholas Coureas and Peter Edbury, Nicosia, Cyprus Research Centre, 2015, §817; Thomas S. R. Boase, "The History of the Kingdom", in *The Cilician Kingdom of Armenia*, ed. by *idem*, Edinburgh, Scottish Academic Press, 1978, pp. 32-3.

[2] Makhairas, I, §114; Norman Housley, *The Avignon Papacy and the Crusades 1305-1378*, Oxford, Oxford University Press, 1986, pp. 32-4.

[3] *Griechische Briefe und Urkunden aus dem Zypern der Kreuzfahrzeit: Die Formularsammlung eines Königlichen Sekretärs im Vaticanus Palatinus Graecus 367*, ed. Alexander Beihammer, Nicosia, Cyprus Research Centre, 2007, pp. 79-95;

Anekdota Engrapha gia te Rhodo kai tis Noties Sporades apo to Arkheio ton Ioanniton Hippoton 1421-1453, ed. Zacharias Tsirpanlis, Rhodes, Office of the Medieval Town of Rhodes, Rhodes Municipality, 1995, no. 222; Makhairas, I, §§116-124; *Amadi*, pp. 818-19; Peter Edbury, *The Kingdom of Cyprus and the Crusades 1191-1374*, Cambridge, Cambridge University Press, 1991, pp. 163 and 176-7; Housley, *Avignon Papacy*, pp. 40 and 306; *Bullarium Cyprium: Papal Letters Concerning Cyprus 1196-1378*, ed. Charles Perat, Jean Richard (III) and Christopher Schabel (I and II), Nicosia, Cyprus Research Centre, 2010-2012, III, u-213.

[4] Boase, pp. 30-2; Gerard Dédéyan, "Le Rayonnement de l'État Arménien de Cilicie," in *Histoire du Peuple Arménien*, ed. Gerard Dédéyan, Toulouse, Éditions Privat, 2008, p. 341.

[5] Peter Edbury, "The Crusading Policy of King Peter I of Cyprus," in *The Eastern Mediterranean Lands in the Period of the Crusades*, ed. Peter M. Holt, Warminster, Aris & Phillips Ltd., 1977, pp. 93-4; Marie-Anna Chevalier, *Les Ordres Religieux-Militaires en Arménie Cilicienne: Templiers, Hospitaliers, Teutoniques & Arméniens à l'Époque des Croisades*, Paris, Geuthner, 2009, pp. 651-2; *Bullarium Cyprium*, III, v-115.

[6] *Acta Innocentii VI*, ed. Aloysius L. Tautu, PCRCICO, X, Rome, 1961, nos. 20, 59 and 73; Claude Mutafian, *L'Armenie du Levant*, 2 vols., Paris, Société d'Édition Les Belles Lettres, 2012, I, 586; Nicholas Coureas, *The Latin Church in Cyprus 1313-1378*, Nicosia, Cyprus Research Centre, 2010, p. 485.

[7] Mutafian, *L'Armenie*, I, pp. 591-2; Jean Richard, *La Papauté et les Missions d'Orient (XIIIe-XVe Siècles)*, Rome, École Française de Rome, 1998, pp. 215-6.

[8] Chevalier, p. 655n.558.

[9] Makhairas, I, §§194-5; 'Chronique d'Amadi', p. 416; *Amadi*, §834; Guillaume de Machaut, *The Capture of Alexandria*, trans. Janet Shirley and Peter Edbury, Aldershot, Ashgate Publishing Ltd., 2001, pp. 105-25.

[10] Makhairas, I, §212-213; *Amadi*, §839 and 'Chronique d'Amadi', pp. 417-8 where Latakia (Lizza) could be a scribal error for (La Jazza) Laiazzo; Machaut, pp. 150-4; Chevalier, pp. 656-8; George Hill, *A History of Cyprus, 4 vols.*, Cambridge, Cambridge University Press, 1940-52, III, 353-4 and 353n4.

[11] Machaut, pp. 157-8 and note 6; Philippe de Mézières, *Le Songe du Vieil Pélérin*, ed. George W. Coopland, 2 vols., Cambridge, Cambridge University Press, 1969, II, Ch. 281, p. 419.

[12] Makhairas, I, §§257, 377, 433, 437, 654, 681 and 685; Coureas, *Latin Church* pp. 475-8.

[13] Catherine Otten-Froux, "Un Notaire Vénitien à Famagouste au XIVe Siècle," *Thesaurismata* 2003:33, nos. 6, p. 46 and 83, p. 77.

[14] *The Life of St. Peter Thomas by Philippe de Mézières*, ed. Joachim Smet, Rome, Institutum Carmelitanum, 1954, p. 82.

[15] Smet, pp. 155-6.

[16] Anthony T. Luttrell, "The Hospitallers' Interventions in Cilician Armenia: 1291-1375," in *The Cilician Kingdom of Armenia*, ed. by Thomas S. R. Boase, Edinburgh, Scottish Academic Press, 1978, p. 131 and note 71; Chevalier, pp. 671-2.

[17] "Armenian Manuscript Colophons from Famagusta and Cyprus", comp. by Dickran Kouymjian in *Medieval and Renaissance Famagusta: Studies in Architecture, Art and History*, ed. by Michael J. K. Walsh, Peter W. Edbury and Nicholas S.H. Coureas, Farnham, Ashgate Publishing, 2012, pp. 301-5; Michel Balard, "The Mercenaries of Genoese Famagusta in the Fifteenth Century," in *The Harbour of All This Sea and Realm: Crusader to Venetian Famagusta*, (Michael J.K. Walsh, Tamas Kiss and Nicholas S.H. Coureas, eds.), Budapest, Central European University Press, 2014, pp. 82, 84.

ԿԻՊՐՈՍԻ ՓԻԹԸՐ Ա. ԱՐՔԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ
(Ամփոփում)

ՆԻՔՈԼԱՍ ՔՈՒՐԷԱՍ
ncoureas@hotmail.com

Լուսինեան Կիպրոսի ամենեն հակասական թագաւորներէն Փիթըր Ա.ը (1358-69) նշանաւորուեցաւ 1365ի խաչակրաց արշաւանքը Աղեքսանդրիա ուղղորդելով եւ հետապնդելով իսլամներու դէմ պատերազմական աւելի մեծ տարածք (հարա-ւային Անատոլու, Սուրիա եւ Եգիպտոս): Այս պատճառաւ ալ Կիլիկեան Հայկական Թագաւորութեան հայերը անխուսափելիօրէն առնչուեցան այս պատերազմին, մինչ Կիպրոսի հողին վրայ հայ վարձկաններ արքայական բանակին մաս կազմե-ցին: Այդուհանդերձ, հակառակ հայերուն օգնելու աներկմիտ յանձնառութեան՝ Փիթըր Ա.ի քաղաքականութիւնը խառն արդիւնքներ տուաւ: Իր զօրքերը յաջողա-պէս գրաւեցին կիլիկիահայ նաւահանգիստ-քաղաք Կոռիկոսը եւ զայն Կիպրոսի Լուսինեան թագաւորութեան մաս դարձուցին մինչեւ 1448, բայց չյաջողեցան գրա-ւել Այասը, Կիլիկեան գլխաւոր նաւահանգիստը՝ 1337ին մեմլուքներու կողմէ անոր գրաւումէն առաջ: Փիթըր Ա. չջանաց կազմակերպել տեղական խաչակրութիւն մը՝ հայ եւ կիպրացի ուժերով՝ հիւսիսային Սուրիոյ տարածքներուն դէմ, բան մը զոր Հենրի Բ. փորձեց՝ ԺԴ. դարասկիզբին, կիպրացիներու, մոնկոլներու եւ հայերու միացեալ ուժերով: Նման քայլի չդիմելը կարելի է վերագրել Կիլիկեան Հայաստանի մէջ արքայական ներգերդաստանական պայքարին, որ հետեւանքներ ունեցաւ կիլիկեան եւ կիպրական թագաւորութիւններուն վրայ:

Յօդուածը լուսարձակի տակ կ'առնէ այս խնդիրները, ինչպէս նաեւ կիլիկիահայերու գաղթը Կիպրոս եւ արեւելամիջերկրականեան այլ վայրեր՝ Փիթըր Ա.ի շրջանին: Այս գաղթը որ սկիզբ առած էր ԺԴ. դարասկիզբին, թերեւս ալ ԺԳ. դարավերջին, այլ երեսակ մըն է որուն կ'անդրադառնայ այս ուսումնասիրութիւնը:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ՝ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՌՈՅԹ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ
tigranhayazn@mail.ru

ՄՈՒՏՔ

Ամուսնութեան փաստը հազարամեակներ շարունակ եղել է պետականաշինութեան յրջագոյն գործիք: Ամուսնական կապերի հաստատման ճանապարհով լուծուել են շատ խնդիրներ, կարգաւորուել պետութիւնների, իշխող ընտանիքների յարաբերութիւններ: Այն իր նպատակների իրագործման համար լաւագոյնս օգտագործել է ԺԲ. դարի հայ խոշորագոյն ռազմական, քաղաքական գործիչ, Հայաստանի 1185-87ի թագաւոր Զաքարէ Ա.ի որդի Սարգիս Բ. Մեծը: Նրա կազմակերպած ամուսնութիւնների արդիւնքում ստեղծուել է ապագայ պետականութեան հիմնատարածք: Շուրջ 150 տարի Սարգիս Բ. Մեծի ամուսնութիւններ կազմակերպելու միտումը կիրառուել է թէ՛ Հայք-Հայաստանի 1187-1236ի բացարձակ անկախութեան, թէ՛ 1236-1350ականների մոնղոլական տիրապետութեան կիսանկախ գործունէութեան շրջանում: Սարգիս Բ. Մեծի մօտեցումները 5-6 սերունդ կենսունակ արդիւնաւէտութեամբ ծառայել են Հայք-Հայաստանի իշխանական տների գոյատեւման գործին:

Այստեղ մենք լուսարձակի տակ կ'առնենք վերոյիշեալ ամուսնութիւնների պարագան եւ դրանց հետեւանքով հայ իշխանական տների մերձեցման եւ պետականութեանը սատարելու փաստը:

ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՃԻԿ

1160ականներին դառնալով հօր՝ Վիրքի զօրաբանակի կազմում ձեւաւորուած հայկական բանակի հրամանատար, Զաքարեան տոհմի հիմնադիր Զաքարէ Ա.ի օգնականը, ապա հրամանատարի պաշտօնում փոխարինելով նրան, Սարգիս Բ. Զաքարեանը, հայկական կիսանկախ իշխանաւորների շրջանում իր քաղաքական դերն ու ազդեցութիւնը ամրապնդելու նպատակով, օգտուել է ամուսնութեան ընձեռած հնարաւորութիւններից՝ իրեն եւ իրար կապելով Հիւսիսային Հայաստանում իրենց անկախ կամ կիսանկախ գոյութիւնը պահպանած հայկական իշխանական տների ներկայացուցիչներին:

Առաջին քայլով Սարգիս Ա.ն բարեկամական-խնամիական կապ հաստատեց Արծրունի իշխանական տոհմի հետ: Թէ՛ հայրը՝ Զաքարէ Ա.ն, թէ՛ որդին՝ Սարգիս Բ.ն զինուորականներ էին: Քաղաքական ասպարէզ մտնելու, ազդեցութիւն ձեռք բերելու համար նրանք պէտք է ազդեցիկ շրջապատ ստեղծէին: Այդ ժամանակներում իրենք Վիրքի բանակի հրամանատար Իւանէ Օրբէլեանի օգնական-վասալներն էին: Մէկ քայլով

նրանցից առաջ էին անցել Մահկանաբերդի, Կայէնի, Հաղբատի տէր Արծրունիները, որոնք վասալի կարգավիճակից բարձրացել եւ ուղիղ Վիրքի թագաւորի վասալներ էին դարձել եւ զբաղեցնում էին Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնը[1]:

Այդ ընտանիքի հետ բարեկամութիւնը կարող էր օգտակար լինել Զաքարեանների առաջխաղացման համար:

Սարգիս Բ.ն խնդրել է Թիֆլիսի նախկին քաղաքապետ Վահրամ Արծրունու դստեր, Թիֆլիսի քաղաքապետ Ամիր Վասակ Արծրունու քրոջ՝ Սահակդուխտ իշխանուհու ձեռքը: Սահակդուխտ իշխանուհու/թագուհու անունը առաջին անգամ փորագրուել է Հոռոմայրում Սարգիս Բ. Մեծի մահուան տարում՝ 1187ին, նրա յիշատակին, որդիների՝ Զաքարէ Բ.ի եւ Իւանէ Ա.ի կառուցած Ս. Նշան կամ Սպասալարների եկեղեցու հարաւային մատուռ տանող մուտքի բարաւորին. «*Ի թուին ՈԼՋ /1187/: ... Ես՝ ամիրսպասալար Զաքարէ, եւ Իւանէ, շինեցաք զեկեղեցիս, զուսք զԾենուկ սուրբ Նշանիս, վասն մեր յերկար կենդանութեան եւ մեր ծնողացն հոգոյն առնեն ժամ :Բ:/2/ աւր Զաւրկին ամիրսպասալար Սարգսի, :Բ:/2/ աւր Յայտնութեան Սանդխտոյ*»[2]: Արձանագրութեան հրատարակողները ծանօթագրութեան մէջ նշել են որ այդ թուականին մահացած ամուսիններ հոգու համար է կառուցուել եկեղեցին: Այդ թում նաեւ մօր հոգու համար: Նման բան չէր կարող լինել, քանի որ 1187ին մահացել է միայն Սարգիս Բ.ն: Անիի միջնաբերդում որդու՝ Զաքարէ Բ.ի կառուցած եկեղեցում թագուհու անունից փորագրուել է. «*Սուրբ եւ մեղսաքաւիչ պատարագն, որ սմա կատարի, Սահակդխտո է, ծնաւղի Զաքարէա եւ Իւանէի՝ թագաւորաց Հա/յ/ոց*»[3]: Իսկ յայտնի է, որ Անին ազատագրուել է 1199ին միայն, եկեղեցին կառուցելու համար եւս միքանի տարի էր անհրաժեշտ: Այսինքն առնուազն մինչեւ 1204/05 Սահակդուխտ թագուհին դեռեւս ապրել է:

Սարգիս Բ. Մեծ եւ Սահակդուխտ իշխանուհու ամուսնութիւնը եղել է արգասաբեր: Սահակդուխտը ծնել է երկու որդի, չորս կամ հինգ դուստր:

Հեռատես Սարգիս Բ.ն իւրովի է որոշել դուստրերի ճակատագիրը:

1170ականներին Արցախ աշխարհի Ծար գաւառում, Վերին Խաչէնում, Ներքին Խաչէնում որոշակի անկախութիւն էին պահպանել հինաւուրց Առանշահիկ թագաւորների շառաւիղները, որոնցից Հաթերքի եւ Խոխանաբերդի տէրերը՝ Վախթանգ Սակռեանը եւ Վախթանգ Տանգիկը իրենց թագաւորներ էին կոչում, Ծարի տէրը՝ գահերէց իշխան: Նրանց հետ բարեկամութիւնը կարող էր շահեկան լինել:

Սարգիս Բ.ն դուստրերից Դոփին կնութեան է տուել Ծարի գահերէց իշխան Հասան Ա.ին: Այս ամուսնութիւնից ծնուել են Գրիգորիսը (ԺԳ. դարասկզբին Հաղբատի եպիսկոպոս եւ առաջնորդ)[4], Յովհաննէսը (Հաղբատի, ապա՝ Սանահինի եպիսկոպոս եւ առաջնորդ, կառուցել է Հաղբատի եւ Սանահինի սահմանում գտնուող Կայան բերդը)[5], Գրիգոր Մեծ իշխանը[6]: Հասան Ա.ն վաղ է մահացել եւ մինչեւ Գրիգոր որդու չափահաս

դառնալը, երկրամասի գահերէց իշխանի գահը, Զաքարէ Բ. շահնշահի հրամանով տնօրինել է Դոփ իշխանուհին: 1214ին մահացել է Վերին Խաչէնի տիրակալ Վախթանգ Հաթերքցին: Նրա արու ժառանգներն աւելի վաղ մահացել էին: Թէեւ Վախթանգ Հաթերքցու եղբայրների որդիներն ապրում էին, բայց իշխանութեան գահը մնացել է թափուր: Փոխադարձ համաձայնութեամբ, խաղաղ ճանապարհով, Զաքարէ Բ. շահնշահին 1213ին հայոց գահի վրայ փոխարինած Իւանէ Ա.ն, Հաթերքի իշխանութեան մի մասը կցել է քրոջ՝ Դոփի Ծարի իշխանութեանը[7]: Հայոց պատմութեան մէջ եզակի է այս ամուսնութեան արգասիքը՝ Դոփի անունով տոհմն անուանակոչուել է Դոփեանք[8]: Գահի վրայ մօրը փոխարինել է չափահաս դարձած որդին՝ Գրիգոր Մեծ իշխանը: Դոփ իշխանուհու շինարարական աչքի ընկնող ձեռնարկը Խադա վանքի մատուռն է: Խադա վանքի հիմնական եկեղեցին կառուցել է նրա տեգրը՝ Յովհաննէս եպիսկոպոսը: 1226ին Դոփ իշխանուհին Յովհաննէսի կառուցած եկեղեցու հիւսիսային պատին, արեւելեան հատուածում կիսով եկեղեցու մէջ մտած մատուռ է կառուցել, որն իր արձանագրութեան մէջ անուանել է գաւիթ: Դոփ իշխանուհին իր արձանագրութեամբ յայտնում է. «*Թուին ՈՀԴ /1226/: Ես՝ Դոփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի եւ Իվանէի, շինեցի զգաւիթս եկեղեցոյս եւ զմատրուռս*»[9]: Կեանքի վերջին տարիներին Դոփ իշխանուհին փոխադրուել է Հաղբատ, մահացել եւ թաղուել է տեգրոջ կառուցած մեծ գաւթում: Աւելի ուշ նրա կողքին յուղարկաւորուել է որդին՝ Յովհաննէս եպիսկոպոսը: Իշխանուհու տապանաքարին փորագրուած է. «*Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւիթն*»[10]:

Սարգիս Բ.ն յաջորդ դստերը՝ Խորիշահին, ամուսնացրել է Ներքին Խաչէնի տիրակալ Վախթանգ Տանգիկի հետ: Այս ամուսնութիւնից ծնուել են Հասան-Ջալալ, Զաքարէ, Իւանէ, Նասր Դոլա որդիները եւ երեք դուստրեր: 1212ին բացառապէս Խորիշահի նպաստաւորմամբ կառուցուել է Մեծառանք գաւառի եպիսկոպանիստ Սուրբ Յակոբայ եկեղեցին: Եկեղեցու մուտքի բարաւորին Խորիշահ իշխանուհու հրամանով փորագրուել է. «*ՈԿԱ /1212/ թիւ: Ես՝ Խորիշահ, ամուսին Վախտանգա, տ/է/ր Խաչէնոյ, դուստր Մեծին Սարգսի, քոյր Զաքարի եւ Իւանոյ, վերստին շինեցի զեկեղեցին Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղաւթս յիշեցէք*»[11]: Եկեղեցու կառուցման առթիւ ամուսինները պատուիրել եւ ստացել են շքեղ, 311 մագաղաթեայ թերթի վրայ շարադրուած Աւետարան, որի յիշատակարանում գրուել է. «*... հրամանաւ եւ ծախիւք բարեսէր եւ աստուածահաճոյ առն Վախտանգա՝ որդւոյ Հասանա՝ որդւոյ Վախտանգա եւ քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դստեր մեծ սպարապետին Սարգսի*»[12]: 1214ին Տանգիկը մահացել է: Գահը կտակի համաձայն անցել է նրա կնոջն ու պատանի որդուն՝ Հասան-Ջալալ Դոլոյին: 1216ին, մօր օգնութեամբ, Հասան-Ջալալն սկսել է Գանձասարի կաթողիկէ եկեղեցու կառուցումը: Այդ տարի-

ներին Խորիշահ իշխանուհին ամուսնացրել է երեք որդիներին: Երբ շինարարութիւնն հասել է արեւելեան պատուհաններին, մօտաւորապէս 1220ականների սկզբներին, իշխանուհին երրորդ անգամ ճգնելու է գնացել Երուսաղէմ: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է. «... *չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ եւ զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ զարմացուցանէր զամենայն տեսողսն եւ զլսողսն քանզի ծախեալ զամենայն գոյս իւր՝ զոր ունէր, յաղքատս եւ ի կարօտեալս՝ նման Հեղինէի, կնոջն Աբգարու, եւ ինքն ձեռագործաւ իւրով կերակրէր: Եւ անդէն մեռաւ...*»[13]:

Սարգիս Բ. Մեծը կենդանութեան օրօք ամուսնացրել է նաեւ Նրջիս անունով դստերը: Նրան տուել է Դսեղի տէրերից Համազասպեան-Մամիկոնեան իշխանական տան պայազատներից մէկին: Թէեւ աղբիւրներում որեւէ ակնարկ չկայ Նրջիսի ամուսնու անձի մասին, սակայն Համազասպեան-Մամիկոնեան իշխանատան տոհմածառը կազմելիս մենք կարծիք ենք յայտնել, որ նա եղել Սադուն իշխանի կինը[14]: Ամուսնու անուան բացակայութիւնը կարող է երկու պատճառ ունենալ: Կա՛մ Նրջիսի ամուսինը վաղ է մահացել եւ մոռացութեան մատնուել, կա՛մ էլ Նրջիսի ամլութիւնը, որի հետեւանքով նա հեռացել է ամուսնուց:

Նրջիսի մասին տեղեկացնող արձանագրութիւնները երկու տարեթիւ ունեն, երկուսը փորագրուել են 1223ին, երեքը՝ տասներկու տարի անց՝ 1235ին: 1223 թուակիր արձանագրութիւններից մէկը փորագրուել է Լօռու մարզի Թումանեանի տարածաշրջանի Իգահատ բնակատեղի մօտ գտնուող Գողգոթավանքի եկեղեցում, միւսը՝ Գողգոթավանքի եւ Քոբայրավանքի միջեւ գտնուող բարձունքին տեղադրուած խաչքարի ճակատամասում եւ պատուանդանի երեսին: Գողգոթավանքի եկեղեցու արձանագրութիւնն այսպիսին է. «*Ի թուին ՈՀԲ /1223/: Ես՝ Նրջիս, որդիացեալս Մամքանա, դուստր մեծին Սարքսի զսուրբ առաշդէն զուգեցի եւ եկեղեցիս սալեցի, եւ աւրհնեցի, որք երկրպագէք՝ յիշեցէք ի տէր զիս եւ զիմոնց: Եւ զինչ ի սիկելին գրած է՝ էթողած գեղիս հարկ իմանոց աղիս...*»[15]: Քոբայրավանքի ճանապարհի խաչքարի պատուանդանին փորագրուած է. «*Ի թուիս ՈՀԲ /1223/: Ես՝ Գրիգոր, սնուցած եւ մեղուցեաց աւագ դստէր Մեծին Սարգսի պատրոն Նրջսին, սնունդ թագուհոյն Մամքանա, կանգնեցի զՍուրբ Երրորդութիւնս ողորմութեամբն պատրոնին յիշատակ հոգոյ իմոյ, եղբարց եւ քուեր իմոյ Բանուշահի կրաւնաւորի*»[16]: 1235ի արձանագրութիւններից երկուսը փորագրուել են Հառիճի վանքի գաւթի ներսում, հիւսիսային պատի վրայ մէկը՝ Գօշավանքի Աստուածածին եկեղեցու ներսում, հիւսիսային պատի վրայ: Հառիճում փորագրուել է. «*Ես՝ Գրիգոր, սնուցած Մեծին Սարգսի դստէրն Նրջիսին, փուի Աւետարան զուգաւք ի ս/ուր/բ եկեղէցիս ողորմութեամբ պարոնին իմո... Ի թվիս ՈՁԴ (1235)*»[17]: Նոյն արձանագրութեան տակ փորագրուած է. «*Ես՝ Արսէն, սնուցած պարոն Նրջիսին ընծաեաց արդիւնք ի ս/ուր/բ ուխտս*»[18]: Գօշավանքում փո-

րագրուած է. «*Ես՝ մեղուցեալ աղախին Քրիստոսի Ազիզ՝ պաշտաւնեա Նրջսին, միաբանեցա ի ս/ուր/բ Ս/ստուածա/ծինս*»[19]: Գողգոթավանքի եկեղեցու արձանագրութիւնը յուշում է, որ Նրջիսը սիկիլով[20] նշանակուել է տուեալ տարածքի կառավարիչ, ունեցել է հարկեր զիջելու իրաւասութիւն, ինչն էլ արել է: Նման պաշտօնի հրամանագիր Նրջիսին ամենայն հաւանականութեամբ տուել է Զաքարէ Բ.ին գահի վրայ յաջորդած որդին՝ Շահնշահ Ա.ն: Փաստօրէն Նրջիսը որպէս սեփականատէր-կառավարիչ կեանքը շարունակել է որպէս պատրոն/պարօն, ունեցել է սնուցեալ անձինք եւ պաշտօնեաներ: Հառիճի եւ Գօշավանքի արձանագրութիւնները փորագրուել են 1235ին: Հետեւում է, որ նուազագոյնը մինչեւ այդ նա ապրել է: Կեանքի վերջին տարիներին ճգնաւորել է Սանահինի վանական համալիրում: Մահացել եւ թաղուել է Սանահինի գրատան նախագաւթում: Տապանաքարին փորագրուած է. «*Ճգնաւորն պատրոն Նրջիսն է, զոյր պարոնացն Զաքարէի եւ Իւանէի*»[21]:

Սարգիս Բ. Մեծը մահացել է 1187ին եւ այլեւս չէր կարող ամուսնացնել չորրորդ դստերը՝ Վանենի-Նանային: Վերջինիս ամուսնացրել են եղբայրները՝ հօրը՝ Սարգիս Բ.ին հայոց բանակի ամիրսպասալարի պաշտօնում փոխարինած Զաքարէ Բ.ն եւ եղբայրը՝ Իւանէ Ա.ն: Նրանք 15ամեայ Վանենուն, հօր մահից մէկուկէս-երկու տարի յետոյ ամուսնացրել են Մածնաբերդում ծուարած Կիւրիկեան թագաւորական տան գահակալ, Կիւրիկէ Գ.ի որդի, 17ամեայ Աբաս Բ. թագաւորի հետ: Գանձակեցին գրել է. «*Սա (Աբասը – Տ.Պ.) առնու իւր կին զդուստր Սարգսի բարեպաշտ իշխանի... զոյր մեծամեծ իշխանացն Զաքարէի եւ Իւանէի, Նանայ անուն*»[22]: Երկու տարի անց, 1192ին, Աբաս Բ. թագաւորը, 19 տարեկան հասակում, հոգին աւանդել է: Նրան յուղարկաւորել են Հաղբատի վանքի մեծ գաւթի տոհմական տապանատանը՝ հօր կողքին[23]: Վանենին, ամենայն հաւանականութեամբ, վերադարձել է հայրական տուն՝ Լօռէ Բերդ եւ, ինքնուրոյն կամ եղբայրների հետ գործակցելով, զբաղուել է շինարարական աշխատանքով, բարեգործութեամբ:

1192ին Վանենին, վաղամեռ ամուսնու յիշատակին, սեփական միջոցներով կառուցել է Սանահինի միաթոռիչք մեծ կամուրջը: Կամուրջը տեղադրուած է Դեբէդ գետի նեղ եւ նպաստաւոր, ժայռեղէն ափեր ունեցող հատուածում: Այն ունի կիսաշրջանաձեւ կամար՝ 18,6 մետր բացուածքով եւ ամենամեծ թռիչք ունեցող պահպանուած կամուրջներից մէկն է: Կամուրջը գործում է առ այսօր: Թագուհու հրամանով կամուրջի կողքին կանգնեցուել է խաչքար, որի թիկունքին արձանագուել է. «*[Աստծոյ զօրութեամբ: Ի տէրութեան][24] ազգին Բագրատունեաց, ես՝ Վանենի, դուստր իշխանաց իշխանն Սարգսի, որդո Զաքարէի, կին Աբաս թագաւորի, որ կիսաւրե վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ միսիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց...*»[25]: 1197ին Վանենին գործակցել է եղբօր՝ Իւանէ

Ա.ի հետ Մորոյ Ձորոյ վանքի կառուցման ժամանակ: Արձանագրութիւնը կազմուել է Վանենու անունից. «*Ի թուին ՈՒՀԶ /1197/: Ի ժամանակ/ի/ երկուց եղբարց՝ Զաքարէ եւ Իւանէ, շինեաց Իւանէ զվանքս Մորո Ձորո: Եւ ես՝ Նանա, կամակից եւ աւգնական եղէ Ա/ստուա/ծածնիս եւ միաբանեցա ս/ուր/բ ուխտիս*»[26]: Վանենի-Նանայի անունը կապւում է նաեւ Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան հոգեւոր կենտրոն Յովհաննավանքի հետ: Վանենի-Նանան որդեգրել է Յովհաննավանքի երիտասարդ վարդապետերից մէկին՝ Մարգարէին: Վերջինիս միջնորդութեամբ նա հովանաւորել է վանքի շրջապարսպի կառուցումը, որը ղեկավարել է ինքը՝ Մարգարէն: Սակայն Վանենի-Նանային վիճակուած չէր վայելել նաեւ որդեգիր հոգեզաւակի քաղցրութիւնը: Պարսպի կառուցման ընթացքում մահացել է Մարգարէն: Վանենի-Նանան Մարգարէի գերեզմանին գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել: Թէեւ խաչքարը կոտորակուել, հիմնականում ոչնչացել է, արձանագրութիւնը ժէ. դարում արտագրել ու փրկել է պատմիչ Զաքարիա Սարկաւագը. «... *ես՝ Նանայս, դուստր մեծ ռապետին*[27] *Սարգսի, որդոյ Զաքարէի, որդոյ աւագ Սարգսի, կանգնեցի ի վերա նորակերտ վարդապետիս Մարգարէի, որ սկիզբն յաշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ եւ առաւել եղեւ քան զծնունդ որովայնի... տեսեալ զյոժարութիւն սրտի նորա, անկայ ի շինութիւն պարսպին՝ նորա առաջնութեամբ: Եւ մինչ նա յայս բարւոյ գործոյս վերակացութեան էր, մերձեցաւ կատարած կենաց նորա, եւ ի հող էջ մանկահասակ...*»[28]: Այս որդեգրումն ու պարսպի շինարարութիւնը կարող էին տեղի ունենալ 1217ի մերձակայ տարիներին, քանի որ այդ թուականին է աւարտուել Յովհաննավանքի Կաթողիկէի կառուցումը: Որքանով են Վանենին եւ Նանան նոյն անձը՝ դժուար է ասել, որեւէ դէպքում դրանցից մէկը գրելիս չի նշուել, որ միւսի հետ նոյնն է, ինչպէս օրինակ բազմիցս իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանի որդու՝ Հասանի մասին նշուել է. «...*Հասան՝ երկանուն Պռաւշ*»[29]:

Պատմաբան Արտաշէս Շահնազարեանը կարծիք է յայտնել, որ «*Ըստ երեւոյթին մեծ Սարգիսն ունէր նաեւ Թամթա անունով մի այլ դուստր, որին պատկանում էր Ալիաբադ բերդը*»[30]: Այն գտնուել է Լօռէ բերդի մօտակայքում: Այսպէս, 1225ին Տփղիս արշաւող խորեզմշահ Մուհամմադի որդի Ջալալ ադ-Դինը կտրել է Փամբակի լեռնաշղթան, շրջանցել Լօռէ եւ Ալիաբադ բերդերը (վերջինս փրկագնուել է) եւ անցել Տփղիս: 1229ին Ջալալ ադ-Դինը, Խլաթի արշաւանքից վերադառնալով, արշաւել է Շաքքան բերդ, աւերել, այրել է այն եւ այդտեղից անցել Թամթա թագուհու Ալիաբադ բերդը: Այն արագ գրաւել է, կոտորել բնակիչներին, ապա գնացել Գագ եւ Քաւազին բերդերը: Թամթան[31] իր թագուհի կոչումով իրօք կարող է լինել Սարգիս Բ. Մեծի դուստրը: Սակայն փաստական նիւթի բացակայութիւնը հնարաւորութիւն չի տալիս ճշտելու թէ ով է եղել Ալիաբադ բերդի իշխանաւոր տէրը, որ նրա կինը՝ Թամթան թագուհի է

անուանուած: Թամթա անունը հաւանաբար եղել է Սարգիս Բ. Մեծի ընտանիքում, քանի որ այդ անունով է ներկայացուել Ներքին Խաչէնի Վախթանգ ինքնակալի կին Խորիշահը[32]: Թամթա անունով քոյր ունենալու հաւանականութեան օգտին է խօսում նաեւ այն, որ Իւանէ Ա.ն, հաւանական քրոջ պատուին, այդ անունով է կոչել իր դստերը[33]:

Եթէ Սարգիս Բ. Մեծի դուստրերի հարցում կայ որոշակի տեղեկատուութիւն, որը հնարաւորութիւն է տալիս գծել նրանց պատմութեան յետագիծը, ապա նոյնը հնարաւոր չէ ասել երկու որդիների՝ ապագայ հայոց շահնշահ, Հայաստանի եւ Վիրքի միասնական պետութեան ամիրսպասալար եւ մանդատուրթախուցէս Զաքարէ Բ. Մեծի եւ եղբօր, Հայաստանի եւ Վիրքի միասնական պետութեան ապագայ աթաբէկ Իւանէ Ա.ի մասին:

Զաքարէ Բ.ն 1187ին, 23 տարեկան հասակում, հօր մահից յետոյ, փոխարինել է նրան հայոց «թագաւորի» ձեւական պաշտօնում, որ Թամար թագուհու կողմից Լոռու տարածքում շնորհուել էր Սարգիս Բ.ին: Զաքարէ Բ.ն ձեւական անկախութիւնը դարձրեց բացարձակ պաշտօնական անկախութիւն: Նա Լոռու եւ յարակից տարածքները հիմք դարձնելով՝ Մերձաւոր Արեւելքում ձեւաւորեց հզօր պետական միաւորում Հայք-Հայաստան անունով: Նա Հայք-Հայաստանի բանակի գլուխ անցած, մինչեւ իր մահը՝ 1213ը, հարեւան՝ Մերձաւոր Արեւելքի բոլոր աւելի հզօր պետութիւնների դէմ պատերազմել եւ յաղթել է: Ամբողջ 26 տարի Զաքարէ Բ.ի կողքին եղել ու նրան օգնել է կրտսեր եղբայրը Իւանէ Ա.ն: Այդպիսի եղբայրութեան օրինակ մեր պատմութեան մէջ հազուադէպ է:

Եղբայրների ամուսնութիւնը եղել է հօր՝ Սարգիս Մեծի մահից յետոյ, ամենայն հաւանականութեամբ Անբերդի ազատագրման տարում՝ 1196ին[34]:

Որեւէ տեղեկութիւն չկայ Զաքարէ Բ. Մեծի կողակցի մասին: Միայն յայտնի է, որ նա Սասնոյ իշխանի դուստրն է: 1197ին այս ամուսնութիւնից ծնուել է հայոց Զաքարէ Բ. շահնշահի միակ որդին՝ Սարգիսը:

Իւանէ Բ.ի կնոջ մասին մի փոքր աւելի տեղեկութիւն կայ: Նրա կնոջ անունը յայտնի է՝ Խոշաք: Սակայն Խոշաքի տոհմական ծագման մասին նոյնպէս ոչինչ յայտնի չէ: Հաւանաբար նոյն տարում, ինչ Զաքարէ Բ. Մեծի կինը, Խոշաքը զոյգ զաւակ է ունեցել՝ տղայ եւ աղջիկ: Տղան ստացել է Սարգիս, աղջիկը՝ Թամթա անունը:

Ամենայն հաւանականութեամբ ամիսներով աւելի վաղ ծնուել է Իւանէ Բ.ի որդի Սարգիսը: Ու որպէսզի երկու եղբայրների Սարգիս որդիներին ապագայում իրարից զանազանեն, Իւանէ Բ.ի որդին, որ ամիսներով վաղ է ծնուել անուանակոչուել է Աւագ, Զաքարէ Բ.ի որդին, որ ամիսներով ուշ է ծնուել, հօր «շահնշահ» կոչման համապատասխան ստացել է Շահնշահ փաղաքշական անունը: Յետագայում երկու եղբօրորդիների Սարգիս անունները մոռացուել են. նրանք Աւագ եւ Շահնշահ անուններով են գործել պատմական ժամանակահատուածում:

Որքան էլ Խոշաքի տոհմական ծագումն անյայտ է, այնուամենայնիւ գործունէութեան մանրամասներն են յայտնի: 1214ին Վասակ Խաղբակեանը կառուցել է Կեչառիսի Կաթողիկէ եկեղեցին, որի արեւմտեան դռան բարաւորին փորագրուել է. «*Ես՝ Վասակ, որդի Խաղբակա շինեցի զսուրբ Կաթուղիկէս յաւգնութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբակի եւ արեան հարազատի իւրոյ Շահանշահի եւ Աւագին եւ իւր մարն պատրոն*[35] *Խոշաքին*»[36]: 1228ին եւ 1231ին Հայք-Հայաստանի գահակալ-թագաւոր Իւանէ Ա.ն իր եւ կնոջ անունից հարկային առանձնաշնորհներ է կատարել Շիրակաւան (Երազգաւոր) գիւղի քահանաներին, ձեռնաւորներին (արհեստաւորներին): Առաջին արձանագրութեան մէջ նշուել է. «*Ի թ. ՈՀԷ /1228/: ... Ես՝ Աթաբէկ Իւանէ եւ Խոշակս՝ Վրաց եւ Հայոց թագո/ւ/հի*[37]*, վասն յերկար կենդանութեան հարազատաց մերոց մանդատորթախուցէս Շահնշահի եւ ամիրսպասալար Աւագին թողաք զգեղիս Շիրակա... բաժն*»[38]: Երկրորդ արձանագրութեան մէջ ասւում է. «*Ի թ. ՈՁ /1231/: ... ես՝ Աթաբակ Իւանէ եւ Խոշակս, վերայիշխող տանս Վրաց եւ Հա/յ/ոց եւ նովին թագո/ւ/հի վասն խնդրելոյ ի Քրիստոսէ Աստուծոյ մերո զբազում կենդանութիւն հարազատաց մերոց մանդատորթախուցէս Շահնշահի եւ ամիրսպասալար Աւագ ... ազատեցաք*»[39]: Նրջիս իշխանուհու դէպքում նշեցինք, որ նա կառավարչական իրաւունքներ է ունեցել եւ դրանով է պատճառաբանուել նրան պատրոն կոչելը: Հաւանաբար սեփականատիրական իրաւունքներ է ունեցել նաեւ Իւանէ Ա.ի կինը, որ պատրոն է կոչուել: Իւանէ Ա.ն մահացել է 1234ին: Խոշաք թագուհին երկար է ապրել: Նա կարեւոր դեր է ունեցել 1249ին վրաց իշխանների ապստամբութեան փորձի խնդրով մոնղոլների զայրոյթը մեղմելու գործում: Նա գնացել է մոնղոլների ղեկավար Չաղաթայի մօտ, երաշխաւորել որդու՝ Աւագի հաւատարմութիւնը մոնղոլներին[40]: Խոշաքը, ինչպէս որ ամուսինը՝ Իւանէ Ա.ն, քաղկեդոնական էր: Նա 1213ին, ստանձնելով Զաքարէ Բ.ի որդու՝ տասնվեցամեայ Շահնշահի խնամակալութիւնը, նրան եւս «... *դարձոյց յաղանդն Քաղկեդոնի*»[41]: Խոշաքի անունը վերջին անգամ յիշուել է Զաքարէ Բ.ի որդի Շահնշահ Ա.ի Յովհաննավանքի գաւթի արեւմտեան մուտքի ճակատին փորագրուած արձանագրութեան մէջ. «*Ի թվիս ՉԷ /1258/: ... այս իմ հրաման եւ արձան սահմանի Շահնշահ մանդատորթայխուցեսի, որդոյ Զաքարիայի ամիրսպասալարի Հայոց մեծաց եւ Վրաց... յիշատակ հոգոյ իմ եւ Խոշաքին*»[42]: Ամենայն հաւանականութեամբ Շահնշահ Ա.ն Խոշաքի անունը յիշատակել է, քանի որ նա հօրեղբօր կինն էր եւ կրում էր «*թագուհի*» տիտղոս: Երբեմն այս արձանագրութեան մէջ յիշուած Խոշաքին համարել են Շահնշահ Ա.ի կինը: Սակայն յայտնի է, որ Շահնշահ Ա.ի կինը Սադուն իշխանաց իշխանի դուստր Նազուտ[43] իշխանուհին էր:

***

Սարգիս Ա. Մեծն իր աղջիկներին՝ Դոփին եւ Խորիշահին կնութեան տալով Արցախ աշխարհի Ծար եւ Ներքին Խաչէնի թագաւորական ծագում ունեցող տէրերին, հաւատարիմ՝ իր հեռահար նպատակներին, իր խնամակալութեան տակ գտնուող աւագ եղբօր՝ Վահրամի որդուն՝ Զաքարէ Փոքրին ամուսնացրել է Ներքին Խաչէնի իշխանական երկրորդական ճիւղի ներկայացուցիչ Հասան Դեսոմեանի դուստր Խաթունի հետ: Այս ամուսնութիւնը տեղի պիտի ունեցած լինի ԺԲ. դարի 80ականների վերջերին: 1191ին, Թամար թագուհու դէմ ապստամբած Գէորգի ռուսի եւ վրաց դիդեբուլների դէմ Թմբկաբերդի եւ Ագարակի ճակատամարտերում տարած յաղթանակից յետոյ, Թամար թագուհին Զաքարէ Փոքրին ժառանգական իրաւունքով շնորհել է Գագն իր շրջակայքով: Յետագայ տարիներին, Զաքարէ Փոքրը հօրեղբօրորդի՝ Զաքարէ Բ.ի ռազմական օգնութեամբ ազատագրել է Գագից արեւելք եւ հարաւ գտնուող բազում բերդեր: Այդ ժամանակ, 1180ականների վերջերին, ծնուել է Զաքարէ Փոքրի եւ Խաթունի որդին՝ Վահրամը: Նա ապագայում յայտնի կը դառնայ Վահրամ Գագեցի անունով: 1204ին Բասէնի դաշտից Խլաթի ուղղութեամբ արշաւող Զաքարէ Փոքրի գլխաւորած հայոց առաջապահ գունդը Մանազկերտի կիրճի մուտքի մօտ յայտնուել է ծուղակում եւ գլխովին ջարդուել: Զոհուել է նաեւ Զաքարէ Փոքրը: Հօրը փոխարինել է պատանի որդին՝ Վահրամ Գագեցին:

Ներքին Խաչէնում իշխանական տարածքների համար ծաւալուած պայքարում նաեւ տոհմակիցներն էին իրար դուրս մղելու քաղաքականութիւն վարում: Տոհմի աւագ ճիւղի ներկայացուցիչը, այս դէպքում Վախթանգ Տանգիկը, ճնշումներ է գործադրել արդէն խիստ թուլացած տոհմակից Դեսոմեան տան ներկայացուցիչների դէմ: Արդիւնքում՝ Խաթուն իշխանուհու հետ Վահրամ Գագեցու պալատ են եկել նաեւ Դեսոմեան տոհմի պայազատներ Սեւադան եւ Սենեքերիմը: Նրանք Գագում մահացել ու թաղուել են Հաղբատի Կաթողիկէ եկեղեցու բակում: Խաթուն իշխանուհին Հաղբատի Մարիամաշէն գաւթի հիւսիս-արեւմտեան կողմում, իր հոգու փրկութեան եւ եղբայրների յիշատակին, արտաքուստ ուղղանկիւն, ներքուստ խաչաձեւ յատակագծով փոքր եկեղեցի է կառուցել, արձանագրելով՝ «... *շինեցաւ սուրբ եկեղեցիս արդեամբ Խաթունին, դստէր Հասանայ, յազգէ Դեսոմեանց, որ բերաւ ի Խաչէնոյ յամուսնութիւն Զաքարիա, որ տէր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլ գաւառաց...*»[44]: Խաթուն իշխանուհին ամենայն հաւանականութեամբ եկեղեցին կառուցել է Զաքարէ Փոքրի զոհուելուց յետոյ, 1204ից յետոյ:

Խաթուն իշխանուհու մասին որեւէ այլ տեղեկութիւն չի պահպանուել:

Վաչուտեանները Զաքարեան թագաւորական տան ամենահաւատարիմ սիւներից մէկն են եղել: Այրարատի կողմնակալութեան իշխանաց իշխան Վաչէ Ա.ի տոհմը, որ Վաչուտ պապի անունով կոչուել է Վաչուտեան: Հակառակ միւս հայ տոհմիկ իշխանատների, որոնք ունէին հին պատմութիւն, տոհմական-ժառանգական կալուածքներ, որեւէ պատմական յիշատակութիւն կամ սեփականութիւն չի ունեցել նա: Վաչէ Ա.ի քրոջ՝ Վանենիի Հաղբատի արձանագրութիւնից յայտնի է, որ հօր անունը եղել է Սարգիս, պապինը՝ Վաչուտ[45]: Վաչէ Ա.ն Հաղբատի նուիրատուական արձանագրութեամբ լրացուցիչ յայտնում է նաեւ մօր անունը. *«Ի թուիս հայ/ոց/ ՈԿԹ /1220/: Այս մեր գիր է Հաղբատա եպիսկոպոսիս Յոհանիսի, որ տրուաք Վաչէի՝ թոռին Վաչուրին եւ իւր կենակցին՝ Մամախաթունին... Որչափ կենդանի են՝ Վաչէի ծնողացն առնեն՝ Սարգսի եւ Կատային, եւ յետ նոցա՝ :Ա:/ւ/ աւրն Վաչէի եւ :զԱ:/ւ/ Մամախաթունին»*[46]: Յայտնի չէ Վաչուտը, նրա որդի Սարգիսը, վերջինիս կին Կատան հայկական ո՛ր տոհմից են սերել: Միայն կարող ենք փաստել, որ Զաքարեան Հայաստանում նրանք նոր՝ Վաչուտեան անունով տոհմի հիմնադիր են դարձել:

1205ին Այրարատի կողմնակալ-փոխարքայ նշանակուած Վաչէ Ա.ի կողմից 915-21ին կառուցուած Աղթամարի տաճարի պատին առկայ Արծրունեաց ճիւղերից մէկին պատկանած էգ արծուի մէջքին կանգնած արու արծուի պատկեր-զինանշանի որդեգրումը, Հիւսիսային Հայաստանի տարածքում Մակարավանքի Կաթողիկէ եկեղեցու բեմառաջքի աստղի մէջ 1205ին Վաչէ Ա.ի որդեգրած զինանշանի զետեղումը, ապա 1220ականներին նրա կողմից այդ նոյն եկեղեցու գաւթի կառուցումը, Նոր Վարագավանքի Կաթողիկէ եկեղեցու շքամուտքի զարդագօտու մէջ Վաչէ Ա.ի զինանշանի զետեղումը, հակառակ ընդունուած կարգի, Վաչէ Ա.ի կողմից իր աւագ որդուն պապ Վաչուտի անուան փոխարէն Քուրդ անուն տալու փաստը, որ Մահկանաբերդի տիրոջ, Թիֆլիսի քաղաքապետ Ամիր Քուրդ Արծրունու անունն էր, գալիս են հաստատելու, որ Վաչէ Ա.ն ծանրակշիռ բարեկամական-տոհմական կապ է ունեցել Ամիր Քուրդ Արծրունու հետ: Ամենայն հաւանականութեամբ Վաչէ Ա.ի պապ Վաչուտ Ա.ն սերել է Վասպուրականի Արծրունիների երկրորդական ճիւղերից մէկից, Վասպուրականից հեռացած Արծրունիների հետ գաղթել եւ հաստատուել է Տաշիր-Ձորագետում Կիւրիկեան (Բագրատունի) թագաւորների կողմից Արծրունիներին տրուած Մահկանաբերդում: Վաչուտ Ա.ի որդի Սարգիսը ծառայել է Մահկանաբերդի Վահրամ Արծրունու հեծելազօրում, ապա՝ Արծրունիներին փեսայացած Զաքարէ Ա.ի որդի Սարգիս Բ. Մեծի հայկական բանակում: Բարձրացել է զինուորական աստիճանակարգով: Այդ ուղիով տարել է նաեւ որդուն՝ Վաչէ Ա.ին, ով Սարգիս Բ.ի որդիների՝ Զաքարէ Բ. շահնշահի, Իւանէ Ա. զօրավարի օրօք, նրանց նուիրուած զօրական է դարձել եւ, հաւատարիմ ծառայութեան համար, 1205ին նշանակուել է

Այրարատի կողմնակալ-փոխարքայ: Կարծում ենք, որ մինչ այդ նշանակումը Վաչէ Ա.ն նշանակալի դիրք է ունեցել բանակում, ռազմավարի իր դերը հնարաւորութիւն է տուել նրան մեծ հարստութիւն կուտակել: Շուտով նա իր կուտակած հարստութիւնը վերածել է բերդ-ամրոցների, հոյաշէն եկեղեցիների, անգամ՝ յաւակնել Զաքարէ Բ. ի ստեղծած Հայք-Հայաստանում ամենայայտնի եկեղեցաշինարար-բարերարի տիտղոսին:

Վաչէ Ա.ի պետական, մշակութային գործունէութիւնը թերի կը լինի առանց կնոջ՝ Մամախաթուն իշխանուհու կերպարի: Զաքարեան շրջանի ոչ մի ամուսնական զոյգ այնպիսի միասնութեամբ հանդէս չի եկել, ինչպէս Վաչէ Ա.ն եւ Մամախաթունը: Առանց Մամախաթուն իշխանուհու գործակցութեան Վաչէ Ա.ն որեւէ գործ չի իրականացրել:

Ինչպէս Վաչէ Ա.ի, այնպէս էլ Մամախաթուն իշխանուհու տոհմական պատմութիւնից միայն հօր ու մօր անուններն են յայտնի: Հոռոմոսի գրատան արձանագրութեան մէջ Մամախաթուն իշխանուհու հօր անուան մասին յայտնւում է. «*ՈՀԸ /1229/: Շնորհիւն Ք/րիստոս/ի: Ես՝ Վաչէ որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն՝ դուստր Ապուսէրհին, շինեցաք զՆշխարապունս ի վանս Հոռոմոսի...*»[47]: Տեղերի եկեղեցու մի կիսաեղծ արձանագրութեան մէջ յիշւում է մեծ իշխան Ապուսեհրի անունը, որը պատահական անուն չէ եւ պատահաբար չի յայտնուել այնտեղ: Ամենայն հաւանականութեամբ Հոռոմոսից յայտնի նոյն Ապուսեհրն է[48]: Թեղենեաց վանքի գաւթի բարաւորին Մամախաթունի անունից փորագրուել է. «*Թվ/ին/ ՈԿ /1211/: Ես՝ Մամախաթունս, ամուսին Վաչէի, դուստր .....նի արարի քշոցանի արծաթի եւ այլ արդիւնս եւ եղու ս/ուր/բ ուխտս Թեղենե/ա/ց...*»[49]: Մամախաթունի նուիրատուական արձանագրութիւնում հնագէտ-վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը Մամախաթունի հօր անունը թէականով կարդացել է «Հասան»[50]: Հնարաւոր է Մամախաթունի հայրն ունեցել է Ապուսեհր-Հասան երկանուն: Մամախաթունի մօր անունը փորագրուած է Տեղերի եկեղեցում. «*Ի Նաւակատե/ա/ց ս/ուր/բ Տիրամարն մատուցանի պատարագ ամենայն խորանս Վախախին, մատր Մամախաթունին՝ շինողի եկեղեցւոյս*»[51]:

Վաչէ Ա.ն եւս, ինչպէս դարաշրջանի միւս իշխանաւորները, ամուսնական պատահական ընտրութիւն չէր կարող կատարել: Այդ ընտրութիւնը եւս պիտի նրա անմիջական սիւզերէնների՝ Զաքարէ Բ. շահնշահի եւ Իւանէ Ա. զօրավարի հետ համաձայնեցուած լինէր: Ամուսնութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել Անբերդի ազատագրումից յետոյ 1196-97ին: Պէտք է ենթադրել, որ այդ ամուսնութիւնից նրանց աւագ որդի Քուրդը (ապագայ իշխանաց իշխան, Այրարատի կողմնակալ Քուրդ Ա. Վաչուտեան) ծնուել է ամենաուշը դարավերջին, քանի որ նա 1221ին, Աստուածատուր վարդապետի Յովհաննավանքի արձանագրութեան մէջ, յիշուել է կողմնակալութեան ամիրայի պաշտօնում[52]. «*ի կողմնակալութեան մերո նահանգի ամիր Քրդին, որդո Վաչէի, ՈՀ /1221/ թին*»[53]: Վաչէ

Ա.ն եւ Մամախաթունը Կեչառիսի 1213ի նուիրատուական արձանագրութեան համաձայն ունեցել են երկու որդի՝ Քուրդ եւ Վաչուտ անուններով: Վաչուտ Բ.ի մասին ոչինչ յայտնի չէ, բացի նրանից, որ նրա որդի Վաչէն (հերթականութեամբ կը լինի Վաչէ Գ.) 1240ականների կէսերին արձանագրութիւն է թողել պապի՝ Վաչէ Ա.ի Սանահինի համալիրում կառուցած մեծ գաւթում: Նա Շէնգաւիթում ունեցած Բադալի այգին[54] նուիրել է վանական համալիրի Սուրբ Աստուածածին եկեղեցուն եւ պատարագ ստացել եղբօր՝ Դաւթի համար: Հաւանաբար եղբայրն այդ ժամանակ մահացել է[55]: Վաչէ Ա.ի միւս որդին՝ Քուրդ Ա.ն դարձել է ԺԳ. դարի հայ իրականութեան ամենայայտնի գործիչներից մէկը: Պատմիչ Վարդան Արեւելցին *Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցւոյ* երկում գրել է. «*Աղաչեմ... ողորմութիւն եւ թողութիւն մեղաց եւ ամենայն երախտաւոր պարոնացն Սադունին, Սմբատա, Քրդին, Պռաւշայ, եւ ամենայն բնակչաց երկրիս*»[56]: Խօսքը Սադուն Բ. Արծրունու, Սմբատ Օրբէլեանի, Քուրդ Ա. Վաչուտեանի, Պռոշ Ա. Խաղբակեանի մասին է:

ԺԳ. դարի ոչ մի այլ տիրուհի Մամախաթուն Վաչուտեանի ակներեւութիւնը չունի: Կողմնակալ-փոխարքայ, իշխանաց իշխան Վաչէ Ա.ն եւ Մամախաթունը միասին հովանաւորել են Սանահինի մեծ գաւթի[57], Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցու[58], Տեղերի Կաթողիկէ եկեղեցու[59], Սաղմոսավանքի Կաթողիկէ եկեղեցու[60], Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցու[61], Հոռոմոսի գրատան[62] կառուցումը, նուիրատուութիւններ են կատարել Հաղբատի[63], Հառիճի[64] միաբանութիւններին:

Մամախաթուն իշխանուհին տիրապետել է անձնական միջոցների կամ այդ միջոցները նրան յատկացրել է իշխանաց իշխան Վաչէ Ա. Վաչուտեանը եւ նա իր անունից կառուցել է Թեղենեաց վանքի գաւիթը: Գունագեղ գմբէթով գաւթի կառուցումն աւարտուել է 1211ին[65]: Այդ շինութիւնը Վաչուտեանների իրականացրած առաջին կառոյցն էր Այրարատի կողմնակալութեան տարածքում, որ Վաչուտեան տան ներկայացուցիչը հինգ կամ վեց տարի առաջ ժառանգական իրաւունքով ստացել էր Զաքարէ Բ. շահնշահից: Թէեւ 1213ի եւ 1218ի երկու արձանագրութիւններով Վաչէ Ա. իշխանաց իշխանը յայտնել է, որ Մամախաթունի հետ կառուցել են Տեղերի Կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը, բայց Տեղերի 1232ի աւարտական արձանագրութեան մէջ Մամախաթունը միայն իրեն է վերագրել Տեղերի համալիրի կառուցումը. «*ՈՁԱ /1232/: ... Ես՝ Մամախաթունս, շինեցի զեկեղեցիքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի...*»[66]: 1229ին Մամախաթունը Անիում ունեցած ձիթհանը նուիրել է Սանահինի միաբանութեանը. «*Ի թուիս ՈՀԸ /1229/: Ես՝ Մամախաթուն, ամուսին Վաչէի, եւրու զիմ գանձագին ձիթհանքն եանի զԻշխանի ակն յԱ/սպուա/ծածինս*»[67]: Հաւանաբար նոյն ժամանակ նա մէկ այլ ձիթհանի մէկ ակը նուիրել է Հաղբատի միաբանութեանը. «*Ես՝ Մամախաթուն, փուի*

զձիթահանքն, որ ի Վարհամա որդեացն գնեցի, զմին ակն, որ երբ ժամն մեր լինի, զեղանն մեր անուն դնեն»[68]:

Ըստ աւանդութեան ԺԳ. դարի մեծագոյն բարեգործ Մամախաթուն իշխանուհին մահից յետոյ թաղուել է ոչ թէ ամուսնու մօտ՝ Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցում, այլ իր կառուցած Տեղերի Կաթողիկէ եկեղեցում:

Քուրդ Ա. Վաչուտեանը մի երկար հետք է թողել հայոց 1200-70ականների պատմութեան մէջ: Մինչեւ հօր մահը (գուցէ 1233/4) համագահակալել է հօրը, եղել է Այրարատի կողմնակալութեան ամիրը[69]: Հօր մահից յետոյ Զաքարէ Բ.ի որդի եւ յաջորդ Շահնշահ Ա.ի կողմից հաստատուել է Այրարատի կողմնակալ-փոխարքայ: Մինչեւ կողմնակալ-փոխարքայ դառնալը, մօտաւորապէս 1215-17ի միջեւ ամուսնացել է Դսեղի Համազասպեան-Մամիկոնեան տոհմաւագ Մարզպան Մամիկոնեանի դստեր՝ Խորիշահ Մամիկոնեանի հետ: Խորիշահ իշխանուհու անունը առաջին անգամ յիշուել է Կարբիի բերդում տեղադրուած խաչքարի պատուանդանին, որը թերեւս Քուրդ իշխանաց իշխանը պատուիրել է կողմնակալ-փոխարքայ դառնալու առթիւ. «*Ի թուիս ՈՀԴ /1235/: Յիշխանութեան Շահնշահի, որդո Զաքարիայի: Ես՝ Քուրդ, որդի Վաչէի եւ ամուսին իմ Խորիշահ*»[70]:

Քուրդ Ա.ն իր բոլոր ձեռնարկումներին, հօր ու մօր օրինակով, մասնակից է դարձրել կնոջը՝ Խորիշահին: Նրանք միասին, ծնողների օրինակով, նուէրներ են տուել Սանահինի վանքին, որտեղ խաչքար է կերտուել ի բարեխօսութիւն իրենց եւ տեղադրուել հօր՝ Վաչէ Ա.ի կառուցած մեծ գաւթի դրսի սիւնաշարի դիմաց. «*Նշանդ Աստուծոյ, աւգնեա Քրդի, Խորիշահի եւ զաւակաց*»[71]: Նրանք նուէրներ են տուել Մամախաթունի կառուցած Թեղենեաց վանքի գաւթին[72]: Ամուսիններով, մինչեւ 1240, Նիգ (Ապարան) գաւառի Վարդենիս գիւղում մոնղոլների կողմից աւերուած Անբերդի փոխարէն կառուցել են մայրաքաղաքային Վարդենիս դղեակը[73], 1241ին նորոգել Սաղմոսավանքի Կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը[74], 1244ին կառուցել Աստուածընկալի Կաթողիկէ եկեղեցին, մինչեւ 1250ը՝ նաեւ գաւիթը[75], նոյն ժամանակներում կառուցել Եղիպատրուշի եկեղեցու գաւիթը[76], 1250ին՝ Յովհաննավանքի գաւիթը[77], 1255ին՝ Սաղմոսավանքի գրատունը[78]:

Քուրդ Ա.ն պայքարել ու հասել է նրան, որ հայոց Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը, 1243ին, ի բաւարարումն Վաչուտեանների պահանջի, հրամանով հիմնել է Անբերդի եպիսկոպոսական անկախ թեմը՝ Յովհաննավանք կենտրոնով[79]:

Քուրդ Ա.ն եւ Խորիշահն հիւրընկալել են Արցախի ինքնակալ արքայ Հասան Ջալալ Խաչէնցին (1240ին): Նա գումար է նուիրել Յովհաննավանքի եկեղեցուն, որի համար «սպասաւորք սորա» մէկ պատարագ են խոստացել նրան[80]: Վաչուտեաններին այցելել է Վայոց Ձորի կողմնակալ, իշխանաց իշխան Պռոշը (1247ին): Նա մօր արեւշատութեան համար

Յովհաննավանքին նուիրել է մեծ գումար, որի համար ստացել է 10 պատարագ[81]: Վարդան Արեւելցին 1268ին իր բարձր տիպի դպրոցը Խոր Վիրապից տեղափոխել է Սաղմոսավանք, ապա՝ նոյն կողմնակալութիւնում գտնուող Թեղենեաց վանք[82]: Նոյն թուականին Այրարատի տէրերն հիւրընկալել են Գէորգ Սկեւռացին[83]:

ԺԳ. դարի այս նշանաւոր զոյգին հիւր է եղել Կիլիկիայի հայոց Հեթում Ա. թագաւորը (նա Կարակորում գնալիս 1254ին եւ վերադարձին՝ 1255ին, ամիսներով մնացել է Վարդենիսի դղեակում)[84]: Գանձակեցին գրել է, որ Հեթում Ա.ի վերադարձից յետոյ Վարդենիսի դղեակ են եկել բարձրաստիճան իշխանաւորներ, հոգեւորականներ, ընդ որում ոչ միայն հայեր, այլեւ ուրիշ քրիստոնեայ ազգերի ներկայացուցիչներ. «*Ապա եկին առ նա (Հեթում Ա. թագաւորի մօտ - Տ.Պ.) եպիսկոպոսք եւ վարդապետք եւ քահանայք եւ իշխանք քրիստոնէից... Ընդունէր զամենայն ազգաց քրիստոնեայս եւ աղաչէր սիրով կալ ընդ միմեանս*»[85]: Գանձակեցու հաղորդումից երեւում է, որ ինքն եւս եղել է դղեակում. «*Բազում իրս... պատմէր նա մեզ*»[86]:

Քուրդ Ա.ն եւ Խորիշահը մինչեւ 1240ը ունեցել են Վաչէ, Դաւիթ (վաղամեռիկ), Հասան, Դաւիթ, Տայիր անուններով տղաներ եւ Մամախաթուն (վաղամեռիկ), Մամքան անուններով աղջիկներ: Տարբեր կերպ են դասաւորուել նրանց ճակատագրերը: Մինչեւ 1261 թոռ Վաչէն (Վաչէ Բ.) համագահակալել է Քուրդ Ա.ին: Այդ թուականին նա մահացել է: Նա աւելի վաղ մահացած Դաւիթ եղբօր յիշատակին մի փոքրիկ թաղակապ եկեղեցի է կառուցել Սաղմոսավանքի համալիրում: Ամուսնացել է ոմն Մամախաթուն իշխանուհու հետ: Վաչէ Բ.ի մահից յետոյ իշխանական գահ են բարձրացել նախ Հասան, ապա Դաւիթ որդիները: Հասան իշխանը ամուսնացել է Ուքանանց տոհմից Արուս Խաթունի հետ: Մամքան դուստրը ամուսնացել է Արցախի Ծարա ճիւղից Հասան Բ. իշխանաց իշխանի հետ եւ ծնել այդ տոհմի հզօր իշխաններից մէկին Գրիգոր Բ. իշխանաց իշխանին եւ Դադի ու Խադայի վանքերի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսին:

Խորիշահ իշխանուհու հետ Դսեղից Այրարատի կողմնակալութեան մայրաքաղաք էին եկել նաեւ նրա ծառայականները՝ Մալիքան եւ Անիփան[87], ինչպէս նաեւ Համազասպ անունով մի փոքրիկ տղայ, որ Յովհաննավանքի հոգեւոր դպրանոցում կրթուել ու աստիճանակարգով բարձրացել եւ 1260ականներին նշանակուել է Անբերդի թեմի առաջնորդ: Այս Համազասպ արքեպիսկոպոս Մամիկոնեանը[88] եղել է յուժ ուսումնասէր ու բազում ձեռագրեր է պատուիրել, որոնցից եօթը պահպանուել ու գտնւում են Մատենադարանում: Եպիսկոպոսական գահի վրայ նրան փոխարինել է Ներսէս եպիսկոպոս Մամիկոնեանը[89]:

Խոխանաբերդի կամ Ներքին Խաչէնի թագաւոր Վախթանգ Տանգիկը 1214ին մահացել է: Նա կտակով գահը թողել է որդուն՝ ԺԳ.

դարի ապագայ խոշորագոյն ռազմաքաղաքական գործիչ, դիւանագէտ, ինքնակալ[90], արքայ[91], թագաւոր[92], կողմնակալ[93] Հասան-Ջալալ Դոլոյին եւ նրան խնամակալ է նշանակել կնոջը՝ Խորիշահ իշխանուհուն[94]: Փաստօրէն մինչեւ Հասան Ջալալը լիիրաւ տիրակալ կը դառնար, երկրամասը կառավարել է մայրը՝ Սարգիս Բ. Մեծի դուստր Խորիշահ իշխանուհին: Հաւանաբար մինչեւ 1220ականների կէսերը իշխանուհին ամուսնացրել է որդիներին՝ Հասան Ջալալին, Զաքարէին, Իւանէին, աղջկան՝ Մարինէին:

Խորիշահն Հասան Ջալալին ամուսնացրել է Բաղաց թագաւորի թոռ Մամքանի հետ: Սա փաստւում է Հասան Ջալալի Գանձասարի 1240ի, 1251ի Մամքան իշխանուհու Վաճառ գիւղում կառուցած մատուռի, Հասան Ջալալի Գանձասարի գաւթի 1261ի շինարարական արձանագրութիւնների մէջ «*թոռն Բաղաց թագաւորին*»[95] ձեւով: Սա հին բարեկամութեան թարմացում էր: Հասան Ջալալի պապի՝ Հասան Մեծի հայր Վախթանգը եւս նոյն Բաղաց թագաւորի դուստր Մամա իշխանուհու հետ էր ամուսնացել:

Մամքանը բազում առաքինութիւններ ունէր, բարեսէր եւ հայրենապաշտ իշխանուհի էր: Սկեսուրը՝ Խորիշահը, համոզուելով, որ արժանաւոր հարս ունի՝ ճգնելու է գնացել Երուսաղէմ: Մամքանը ամուսնու հետ շարունակել է Գանձասարի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու կառուցումը, որի օծումը տեղի է ունեցել 1240ի Վարդավառի օրը՝ եօթհարիւրից աւելի նշանաւոր այրերի մասնակցութեամբ:

Մոնղոլական ներխուժումն ու հայոց անկախ պետութեան վերացումը, Հասան Ջալալին էլ են դարձրել նրանց ենթակայ: Իր երկրամասն աւերումից փրկելու համար Հասան Ջալալն իր աւագ դուստր Ռուզուքանին կնութեան է տուել մոնղոլ զօրավար Չարմաղանի որդի Բորա Նուինին[96]: Ամուսնութիւնը տեղի է ունեցել 1236ին:

Այդ թուականից սկսած Հասան Ջալալը մոնղոլական բանակի կազմում, իր զօրաբանակով, մասնակցել է արշաւանքների Փոքր Ասիայում:

Ամուսնու բացակայութեան Մամքան թագուհին Կաթողիկէ եկեղեցու արեւմտեան կողմում կառուցել է եկեղեցու գաւիթը: Գանձակեցին գրել է, որ գաւիթը բացառապէս կառուցել է. «*... կին նորա Մամքան*»[97]:

1248ին թագազարմ ամուսինները նորոգել են մոնղոլների կողմից աւերուած Կեչառիսի եկեղեցական շէնքերը: Այստեղ փորագրուած նուիրատուական արձանագրութեան մէջ Հասան Ջալալը Մամքանին պատուել է «*դուստր Բաղաց թագաւորին*» տիտղոսով[98]:

Հասան Ջալալը անսահմանօրէն սիրել եւ պատուել է կնոջը: Գանձասարի կաթողիկէ եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ հոգեւոր դասից պահանջել է «*Յիսնակամբրեն մինչ ի յայրնութիւն Մամքանա՝ իմ կենակցին*» պատարագ մատուցել:

Հասան Ջալալը պատուիրակութեամբ այցելել է Ոսկէ Հորդա եւ բանակցել Բաթու խանի որդու՝ Սարթախի հետ: Պատուիրակութեան կազ-

մում են եղել նաեւ Հեջուպ Գրիգոր Տղան, պատանի Դեսում իշխանը, Մարկոս վարդապետը, Գրիգոր եպիսկոպոսը[99]:

1255ին Հասան Ջալալն իր տարածքների խնդիրները լուծելու նպատակով գնացել է Կարակորում՝ Մանգու խանի մօտ: Նրան ուղեկցել են կինը, որդին՝ Աթաբէկը: Կարակորումում բոլոր հարցերը բանակցութիւնների արդիւնքում լուծուել են յօգուտ Հասան Ջալալի եւ 1260ին ընտանեօք վերադարձել են: Հասան Ջալալը գործի բերումով մնացել է Թաւրիզում: Կինն ու որդին վերադարձել են Խոխանաբերդ: Երբ ամիսներ յետոյ Հասան Ջալալը հասել է Խոխանաբերդ՝ Մամքանին մահացած է գտել: Նրա մահից մէկ տարի անց՝ 1261ին մոնղոլ հարկահան Արղունը Ղազուինում դաժանութեամբ յօդակոտոր է արել ու յօշոտել Հասան Ջալալին: Որդին՝ Աթաբէկը հօր մասունքները տեղափոխել եւ հողին է յանձնել Գանձասարի գաւթի տապանատանը:

Մամքան իշխանուհու մահը ցնցել է Հասան Ջալալին: Նա հօր ու մօր 1212ին պատուիրած Աւետարանի 8բ եւ 9ա էջերին ինքնագիր յիշատակարանով սգացել է կնոջ մահը.

Ես՝ Հասան Ջալալ Դալա, գնացի յարեւելս առ արքայն նեւրողաց... ես եւ ամուսին իմ Մամքան եւ տեառնապուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեւելս հիւսիսոյ եւ ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն, որ Մանգու խանն: Ես յամեալ զամս հինգ, դարձա ի փուն, նոյնպէս Մամքան եւ Աթաբակն դարձան: Եւ նոքա ժամանեալ ի տեղի իւրեանց, եւ ես ի Թաւրէժ յամեալ, յորամ եւ աւրհասական մահ ի վերա հասեալ փոխի Մամքան ի Քրիստոս: Եւ ես գտի զպայծառ տուն իմ լի սգով արտասուաք անմխիթարելի, զի նա էր ամենայն զաւրաց եւ հեծելոց, նաեւ եկեղեցոյ եւ քահանայից սփոփիչ եւ մխիթարութիւն: Արդ ի թվին Հայոց ՉԺ /1261/ ետու զՍուրբ Աւետարանս ծաղկազարդ յիշատակ աստուածասէր տիկնոջն Մամքանայ ի մեր Լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգեւոր տէրն Ներսէս, որ այժմ բարեհամբաւ ունի զաթոռն սուրբն եւ առաւել քան զսուրբս: Արդ աղաչեմ զձեզ սուրբ հայրք եւ ընթերցողք, որ զյիշատակս կարդայք, լի բերանբվ ասասջիք զտիեզերս, նորոգէ եւ միաւորէ զաստուածասէրն Մամքան, ու դասէ ի դասս ընտրելոց քոց, բարեխաւսութեամբ արարչագործ կամաց քոց, եւ աղաչանաւք սրբոց աստուածածնիդ եւ ամենայն սրբոց քոց դասէ եւ պայծառացոյ ընդ սուրբս քո ընդ նմին...[100]:

Հասան Ջալալը եւ Մամքանը ունեցել են Աթաբակ անունով տղայ, Ռուզուքան, Մամախաթուն, Մինախաթուն անունով աղջիկներ: Ռուզուքանը Բորա Նուինի կինն էր, Մամախաթունը՝ միջնադարի անուանի վաճառական Ումեկ Մանազկերտցու երկրորդ[101], Մինախաթունը՝ Սիւնիքի կողմնակալ-փոխարքայ Տարսայիճ Օրբէլեանի երկրորդ կինը[102]:

Մահկանաբերդի Արծրունիները

Մահկանաբերդի Արծրունիները Վասպուրականի Արծրունեաց հզօր թագաւորական ընտանիքի ճիւղերից էին: Նրանք թագաւորութեան ան-

կումից յետոյ, երկրամաս ներխուժած քրդական հրոսակների ճնշումներին չդիմանալով՝ հեռացել էին հիւսիս-արեւելք ու Լօռու Կիւրիկեան թագաւորներից բնակատեղ էին ստացել Մահկանաբերդն ու Կայէն գաւառը շրջակայ հողերով: Նրանք պահպանել էին իրենց հեծելազօրը եւ երբ վրաց թագաւորները, սելջուկեան ամիրայութիւնների դէմ պայքարի քօղի տակ, գրաւել էին Լօռու թագաւորութեան հողերն ու վերացրել հայոց այդ վերջին թագաւորութիւնը, Մահկանաբերդի տէր Վահրամ Արծրունին իր հեծելազօրով ծառայութեան էր անցել վրաց թագաւորի մօտ, նշանակուել Տփղիսի շահաբ (քաղաքապետ): Յատկապէս առաջադիմել է նրա որդի Վասակ իշխանաց իշխանը: Նա տոհմի ժառանգական արտօնութիւն էր դարձրել Տփղիսի եւ Քարթլիի էրիսթաւաց էրիսթաւի՝ ամիրայից ամիրայի եւ արքունի գանձապետի տեղակալի՝ «նուցվալի մեճուրճլէթ-ուխուցէս»ի պաշտօնները, եղել է Վիրքի Դաւիթ Ե. թագաւորի (1154-55) սիրելին: Դաւիթ Ե. թագաւորը նրան դեսպանել է Մածնաբերդի Կիւրիկէ Գ. (1145-70) թագաւորի մօտ բանակցելու եւ անգամ պատրաստ է եղել Լօռու թագաւորութեան նախկին հողերն ու մայրաքաղաքներ Շամշուլդէն եւ Լօռէ Բերդը վերադարձնել տիրոջը՝ Կիւրիկէ Գ.ին: Այս լուը զայրացրել է վրաց դիդեբուլներին[103], յատկապէս հայ Մամիկոնեաններից սերած, վրացացած Օրբէլեան իշխաններին[104], որոնք այդ ժամանակ Լօռու Թագաւորութեան հողերի ու մայրաքաղաքի տէրերն էին: Եւ նաեւ նրանց գործակցութեամբ կազմակերպուել է Դաւիթ Ե. թագաւորի թունաւորումը: Վիրքի գահին մէկ տարի ձեւականօրէն նստել է Դաւիթ Ե.ի անչափահաս որդի Դեմետրին: Մէկ տարի անց գահը գրաւել է եղբայրը՝ Գէորգի Գ. թագաւորը (1156-84): Նա հակակրանք է ունեցել Վասակ Արծրունու հանդէպ, իբրեւ թէ Դաւիթ Ե. թագաւորի օրօք նա բաւարար յարգալից չի եղել իր հանդէպ: Վասակ իշխանաց իշխանը, վախենալով թագաւորի դաւից, եղբայրների՝ Ամիր Քրդի եւ Ամիր Սարգսի հետ հեռացել է Կարնոյ երկիր: Նրանց սիրով է ընդունել Կարնոյ երկրի ամիրա Սալտուխը՝ ծառայութեան է նշանակել, տուել է գիւղեր ու հողեր: Այստեղ Վասակ իշխանաց իշխանը մահացել եւ թաղուել է քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցում՝ «*զդրօշ նորա եւ զփող եւ զիշխանութիւն՝ տուեալ եղբօր նորա՝ որ կոչեցեալ էր Քուրդ, եւ կայր նա անդ մեծաւ պատուով*»[105]: Այս ժամանակներում է Կիլիկիայից վերադարձող Մխիթար վարդապետը՝ ապագայ Մխիթար Գօշը, հիւրընկալել նրա տանը: Գէորգի Գ.ն մահացել է 1184ին: Գահ բարձրացած Թամար թագուհին 1185ին, հայոց եւ վրաց զօրքի ամիրսպասալար, պետական խորհրդի՝ դարբազիի անդամ է նշանակել հայոց բանակի ամիրսպասալար Սարգիս Բ. Զաքարեանին: Վերջինս միջնորդել է Թամար թագուհուն՝ ներում շնորհել աներորդուն, Ամիր Քուրդ Արծրունուն: Թամար թագուհին կատարել է նրա խնդրանքը: Թամար թագուհին Ամիր Քուրդին է վերադարձրել Արծրունեաց տոհմից իր հօր խլած Մահկանաբերդն ու Կայէն գաւառը, բարձրացրել նրա պաշտօնը, նշանակել Վիրքի պետական

խորհրդի՝ «դարբազիի» անդամ, արքունի գանձարանապետ՝ «մեճուրճլէթուխուցէս», ինչպէս նաեւ Տփղիսից հարաւ-արեւելք ընկած հողերը Ռուսթաւի քաղաքով եւ Արագվի գետի ձախափնեայ շրջանը՝ Ժինվանի քաղաքով նրան է տուել: 1191ին Ամիր Քուրդը հարել է Թամար թագուհու առաջին ամուսնու՝ Գէորգի ռուսի կազմակերպած խռովութեանը, որի պատճառով պաշտօնազրկուել եւ հեռացել է Մահկանաբերդ: Ամիր Քուրդի Կարնոյ աքսորը տեւել է մօտաւորապէս 1156-84՝ շուրջ 28 տարի: Այդ ժամանակ է հայոց բանակի ամիրսպասալար Սարգիս Բ.ը ամուսնացել նրա քրոջ՝ Սահակդուխտի հետ: Ամենայն հաւանականութեամբ հենց այդ տարիներին են ծնուել Ամիր Քուրդի դուստրը՝ Արզու խաթունը, որդիները՝ Սադունը եւ Դաւիթը:

***

ԺԲ. դարի 80ականների վերջերին, աքսորից վերադառնալուց յետոյ, պաշտօնում վերականգնուած Տփղիսի ու Քարթլիի ամիրապետ, Վիրքի պետական խորհրդի անդամ, արքունի գանձարանապետ Ամիր Քուրդ Արծրունու[106] հետ բարեկամութիւնը նշանակալի էր ցանկացած տոհմի համար: Եւ նրա դստեր՝ Արզու Խաթունի ձեռքը խնդրեց Վերին Խաչէնի տէր Վախթանգ Հաթերքցի թագաւորը:

Վախթանգ Հաթերքցին Հասան Մեծի որդին էր, սերում էր Առանշահիկների թագաւորական զարմից, իրեն համարում էր թագաւոր եւ Խաչէնի միւս երկու ճիւղերի աւագ[107]:

Վախթանգ Հաթերքցու եւ Արզու Խաթունի ամուսնութիւնը հաւանաբար կայացել է 1180ականների երկրորդ կէսին: Այդ ժամանակ հայ-վրացական միացեալ բանակի կազմում գործող հայոց հեծեալ բանակի ամիրսպասալար Սարգիս Բ.ն՝ Զաքարէի որդին, թէեւ պաշտօնով զիջում էր Ամիր Քուրդին, բայց արդէն յաւակնում էր Հայաստանի եւ Վիրքի յարաբերութիւններում գերակայ դիրքի: Նա վաղուց փեսայացել էր Արծրունեաց տոհմի հետ՝ դառնալով Ամիր Քուրդի քրոջ ամուսինը:

Քաղաքական յաւակնութիւններ ունեցող Սարգիս Բ.ն յենարանի խիստ կարիք ունէր: Արծրունեաց տոհմաւագը՝ Ամիր Քուրդը, Սարգիս Բ.ին օգնելու նպատակով, հաշուառելով միասնական շահերը համադրելու, կիսանկախ, սեփական ռազմական ուժերը պահպանած Արցախի տէրերին համահայկական ռազմաքաղաքական դաշտ բերելու անհրաժեշտութիւնը, դստերը՝ Արզու Խաթունին տուել է Վախթանգ Հաթերքցուն:

Արզու Խաթունը կարեւորագոյն դերակատարութիւն է ունեցել ոչ միայն Հաթերքի, այլեւ Արցախ աշխարհի կեանքում: Նա, ամուսնու, տեգրերի՝ Սմբատի, Վասակի, Գրիգորի, Խոյդանի, Գրիգորէսի օժանդակութեամբ իր յարկի տակ տեղ է տուել, հովանաւորել հօր միջնորդութեամբ Գանձակից հեռացած եւ Խաչէնում հանգրուանած միջնադարի մեծ մտածող, կրօնագէտ, իրաւագէտ, առակագիր, հայ եկեղեցու դաւանանքի անխոնջ պաշտպան, Հայոց Արեւելից կողմի հոգեւոր առաջնորդ Մխիթար Գօշ[108]

վարդապետին: Վերջինս իր ժամանակիցներից մտքի թռիչքով առաջ է անցել, զգացել է, որ Զաքարեանները ձգտում են պետութիւն կերտել, իսկ դրա հիմնաւորումը դատական համակարգի ձեւաւորումը պիտի լինէր եւ 1184ին ձեռնարկել է դատաստանագրքի ստեղծման գործին: 1185ին Թամար թագուհին Սարգիս Բ. Մեծին է յանձնել հայ-վրացական բանակի ամիրսպասալար-ընդհանուր հրամանատարին տրուող կալուածքը՝ Լոռի-Տաշիրը: Նա երկրամասին շնորհել է «**սամթաւրօ**» (ինքնուրոյնացած), իսկ Սարգիս Բ. Մեծին՝ «**մթաւար**» (թագաւոր) կարգավիճակ՝ ընդունելով երկրամասի անկախութիւնը միջազգային-իրաւական ձեւաչափով[109]:

Հենց Հաթերքում, Մխիթար Գօշը գրել-աւարտել է իր *Դատաստանագիրք Հայոց* օրէնքների ժողովածուն[110]: Գօշի *Դատաստանագրքում* կանոնակարգուել են պետութեան հասարակական-տնտեսական յարաբերութիւնների իրաւական հիմքերը, բազմակողմանի ուրուագծուել դատական-վերահսկողական գործառոյթները:

Գօշը երախտագիտութեամբ է ընդունել Վախթանգ Հաթերքցու եւ Արզու Խաթունի աւանդը: Նա *Դատաստանագրքի* մէկ օրինակ է նուիրել ամուսիններին, հետեւեալ ընծայագրով. «*Յիսուս Քրիստոս, յորժամ գաս ի նորոգեալ զերկիրս, նորոգեա հոգով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու խաթուն ի կեանս անմահս*»[111]: Մէկ այլ օրինակի վրայ Գօշը գրել է. «*Տէր Աստուած, վայելել տացէ աստուածայսէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ ի կամս իւր զգիրքս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին*»[112]: Մխիթար Գօշն այս գրութեամբ փաստել է, որ ժամանակի իրաւական պահանջները լիովին բաւարարող օրէնքների ժողովածուն անմիջապէս կիրառութեան է ընդունուել Հաթերքի իշխանութիւնում: Փորձարկուած օրէնսգիրքն ընդունուել է նաեւ Զաքարէ Բ.ի Հայք-Հայաստան պետութիւնում:

Վախթանգ Հաթերքցու եւ Արզու Խաթունի բարեկամութիւնը Գօշի հետ շարունակուել է նաեւ, երբ վերջինս Ամիր Քուրդի հովանաւորութեամբ Հաթերքից տեղափոխուել եւ հաստատուել է Կայէն բերդի մօտ գտնուող Գետիկի վանքում: 1188ի հզօր երկրաշարժից Գետիկի վանքը եւ շրջակայ գիւղերը հիմնովին աւերուել են: Ամիր Քուրդի միջնորդութեամբ Զաքարէ Բ.ն, երկրաշարժից կործանուած Գետիկի վանքի փոխարէն Գօշին նոր տարածք է յատկացրել Տանձուտի ձորաբերանի ընդարձակ հովտում, որտեղ՝ Զաքարէ Բ.ի, Իւանէ Ա.ի, Ամիր Քուրդի, նրա որդիներ Սադուն եւ Դաւիթ իշխանների, բայց հիմնականում Վախթանգ Հաթերքցու, Արզու Խաթունի, Վախթանգի եղբայրներ Գրիգորի, Գրիգորիսի, Խոյդանի, Վասակի հովանաւորութեամբ նա կառուցել է Նոր Գետիկի վանական համալիրի Կաթողիկէ եկեղեցին[113]:

1214ին Վախթանգ Հաթերքցին կնքել է մահկանացուն: Նրանից առաջ կեանքին հրաժեշտ էին տուել երկու որդիները՝ Հասանը եւ Գրիգորը:

Հասանը զոհուել էր թուրքերի դէմ կռւում, Գրիգորը՝ նրա զոհուելուց երեք ամիս անց, մահացել էր հիւանդութիւնից: Իր կեանքի տղամարդկանց յիշատակին Արզու Խաթունը Դադի վանական համալիրում կառուցել է կենտրոնագմբէթ եկեղեցի, այդ համալիրի ամենահոյակապ կառոյցը[114]: Այն արտաքուստ ուղղանկիւն, ներքուստ՝ խաչածեւ յատակագծով, չորս անկիւններում կրկնայարկ աւանդատներով կառոյց է: Այն Արցախ աշխարհի ճարտարապետութեան համար նորոյթ էր՝ գմբէթաւոր սրահ, պսակուած լայն ու բազմանիստ բարձր թմբուկով եւ սրածայր վեղարով: Ներսի կիսասիւները եւ դրանք կապող կամարները սպիտակ եւ գորշ քարից են՝ զարդարուած նուրբ քանդակներով: Եկեղեցին ներսից որմնանկարուած է:

Կաթողիկէ եկեղեցու արեւելեան պատին ողջ հասակով քանդակուած են Արզու Խաթունի որդիներ Հասան եւ Գրիգոր իշխանները եկեղեցու մանրակերտով, իսկ հարաւային ճակատին՝ Սուրբ Դադիի եւ Վախթանգ Հաթերքցու պատկերաքանդակները: Եկեղեցու արեւելեան պատին, որտեղ Հասան եւ Գրիգոր իշխանների պատկերաքանդակն է, փորագրուել է Արզու Խաթունի 19 տողանոց շինարարական արձանագրութիւնը. «*... ես՝ Արզու Խաթունս, նուաստ աղախին Քրիստոսի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վաղթանկա... իսով մեծաւ շինեցի զսուրբ կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմո եւ զաւակաց իմոց Հասանա՝ անդրանիկիս իմո եւ Գրիգորի, որ եւ ի Տէրն կիսաւրեա վախճանելոց, զի վասն իմ մեղաց խրատեաց զիս Աստուած...*»[115]:

Արզու Խաթունը բազմակողմանի շնորհով օժտուած, տաղանդաշատ կին էր, գիտէր ներկերի գունային երանգներ, քանդակածեւ զարդամոտիւներ, ինչպէս նաեւ հագուստի հիւսածոյ նախշեր ստեղծելու գաղտնիքը: Նկարել է, ձեռագործել: Նա դուստրերի հետ մեծածաւալ վարագոյրներ է գործել, որոնք զարդարել են Հաղբատի, Մակարավանքի, Դադի վանքի մեծ խորանները: Նրա գործած վարագոյրը զարդարել է նաեւ Նոր Գետիկի Կաթողիկէ եկեղեցու խորանը: Այն եկեղեցուն է նուիրաբերուել 1197ին՝ եկեղեցու օծման առիթով. «*Սա բազում ինչ օժանդակ եղեւ արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստէրօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք տնօրինականօք Փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն*»[116]:

Կաթողիկէ եկեղեցու ներսի հարաւային պատին Քրիստոսն Աւետարան է մեկնում Դաւիթ Սքանչելագործին, իսկ Աստուածածինը՝ խաչազարդ ուրար: Գանձակեցին անուղղակի հաստատել է, որ Արզու Խաթունն է նկարել Կաթողիկէ եկեղեցու պատերին եղած որմնանկարները. «*Եւ որք տէսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ եւր կանանց իմաստութիւն զոսպայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան*»[117]:

Վախթանգ Հաթերքցու եւ իր որդիների մահով Վերին Խաչէնի թագաւորական գահը դատարկ է մնացել: Թէեւ Վախթանգ Հաթերքցու եղբայրներից Սմբատը եւ Վասակը որդիներ ունէին, որոնք կարող էին ժառանգել հօրեղբօր գահը, բայց խաղաղ բանակցութիւնների արդիւնքում, Վերին Խաչէնի տարածքը փոքր մասով միացուել է Ծարի իշխանական տանը, իսկ մեծ մասով՝ Ներքին Խաչէնի թագաւորութեան:

Որքան է ամուսնու եւ որդիների մահուանից յետոյ ապրել Արզու Խաթունը՝ պատմական տեղեկութիւն չենք գտել: Որեւէ տեղեկութիւն չենք գտել նաեւ նրա դուստրերի յետագայ ճակատագրի մասին:

Խաղբակեանները

Խաղբակեան[118] տոհմի հիմնադիր, Ներքին Խաչէնի Հաւապտուկ բերդի տէր Խաղբակ Բ.ի որդի Վասակ իշխանը[119] 1201ին, հայոց բանակի կողմից Գեղարքունեաց տարածաշրջանի ազատագրումից յետոյ, երբ բացուել է Խաչէնի ճանապարհը, ազատագրական պայքարի մաս դառնալու նպատակով, թողել է հայրենի Հաւապտուկը, իր հեծեալ գնդով եկել է Լօռէ բերդ եւ ծառայութեան մտել հայոց բանակում:

Այս Վասակի եղբայր Ջաջուռ իշխանի դուստր Վանենին, որ ամուսնացել է Մահկանաբերդի Սեւորդեան տոհմից Կուկի որդի Աբասի հետ, 1232ին Նոր Գետիկի վանքում Ստեփանոս գրչին ձեռագիր, նկարազարդ Աւետարան է պատուիրել, որի յիշատակարանում գրել է, որ Վասակ իշխանի, իր հօր՝ Ջաջուռ իշխանի տոհմի նախնին Բակ իշխանն է, որ եղել է Վարդան Մամիկոնեանի զօրավարներից[120]:

Վասակ իշխանն աչքի է ընկել Բջնիի ազատագրման գործողութեան ժամանակ: Իւանէ Ա. Զաքարեանը ստանձնել է նրա հովանաւորութիւնը, նշանակել իր տան զօրաբանակի սպարապետ: Արցախից նոր զօրագնդերով եկել ու Վասակ սպարապետին են միացել որդիները Մկդէմը, Պապաքը, Հասան-Պռոշը, եղբայրները՝ Հասանը, Ջաջուռը, Գրիգորը, Աբուսէթը: Զաքարէ Բ. շահնշահի յանձնարարութեամբ Իւանէ Ա. զօրավարը բնակութեան համար Վասակի իշխանին ժառանգական իրաւունքով տուել է Բջնիի մօտ գտնուող Կեչառիս բնակավայրն իր վանական համալիրով:

Յաջորդ տարիներին Վասակ Խաղբակեանը հայոց զօրաբանակի գլուխ անցած Գեղարքունիքի կողմից, Վարդանեաց լեռնանցքով անցել է Սիւնիք: Կարճ ժամանակում ազատագրել Քարագլուխ գիւղը, Եղեգիս գիւղի մօտ գտնուող Սմբատաբերդը, Հերհերի ձորը, Ոստինք, Հերմոն, Ցաղաց Քար, Արատես գիւղերը, Բոլորաբերդ ամրոցը, Ջերմուկի ձորը, Քաշաթաղ-Ծարի լեռնանցքը, Գնդեվանքի ամրոցը, Սիսիանի լեռնանցքը, Վայք աւանը, Գոմք, Ուղեձոր, Մարտիրոս, Սերս, Ազնաբերդ, Արփի, Արենի, Ռինդ, Չիւա, Ելփին, Ամաղու, Խաչիկ գիւղերը, Ամաղուի մօտ գտնուող հզօրագոյն Հրաշքաբերդը:

Զաքարէ Բ. շահնշահը 1205ին ազատագրուած Հայք-Հայաստանում վարչական բարեփոխումներ կատարելով կողմնակալութիւն-կուսակալութիւն-փոխարքայութիւններ է ստեղծել: Ազատագրուած Վայոց Ձորի արեւելեան տարածքի վրայ ստեղծուած կողմնակալութեան կողմնակալ է նշանակել Վասակ իշխանին, նրան շնորհել իշխանաց իշխան բարձրագոյն կոչում, տոհմին տուել Խաղբակեան անուն:

Մինչեւ 1210, գործակցելով Լիպարիտ Օրբէլեանի հետ, որին Զաքարէ Բ.ն նշանակել էր Հրաշկաբերդի եւ շրջակայ բնակավայրերի վրայ ստեղծուած կողմնակալութեան կողմնակալ, ազատագրել են ամբողջ Նախիջեւանը, որ հիմնականում անցել է Վասակին եւ արեւելեան Սիւնիքը՝ Սիսական-Գորայք[121] հատուածը, որն անցել է Լիպարիտին: Բարկուշատ-Արաքս գետ-Խուդափերինի կամուրջ հատուածը տրուել է Վասակ Խաղբակեանին:

Ռազմական եռանդուն գործողութիւններին յաջորդած կարճատեւ խաղաղ տարիներից մէկում՝ 1204ին, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը կնոջ՝ Մամայի գործակցութեամբ կատարել է Կեչառիսի Կաթողիկէ եկեղեցու հիմնարկէքը: Պատերազմական գործողութիւններին մասնակցող ամուսնու փոխարէն շինարարութեան ընթացքը ղեկավարել է Մամա իշխանուհին: Եկեղեցու շինարարութիւնն աւարտուել է 1214ին: Կաթողիկէ եկեղեցին Կեչառիսի համալիրի մարգարիտն է, գտնուում է Սուրբ Նշան եկեղեցու հարաւային կողմում: Այն արտաքուստ քառակուսի յատակագծով կենտրոնագմբէթ շէնք է: Ներքուստ, չորս անկիւններում տեղադրուած երկյարկ աւանդատների շնորհիւ խաչաձեւ տեսք ունի: Արեւելեան կողմում բարձր բեմով խորանն է: Չորս կենտրոնական սիւների եւ կիսասիւների առաջացրած լուսանցքի վրայ բարձրանում է կլոր գմբէթը սրածայր վեղարով: Կաթողիկէի արեւմտեան շքամուտքի ճակատաքարի եւ կամարի քարի վրայ փորագրուած է. «*Ես՝ Վասակ, որդի Խաղբակա, շինեցի զսուրբ Կաթողիկէս յաւգնականութիւն եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն՝ Իւանէ աթաբակի, եւ արեան հարազատի իւրոյ Շահնշահի, եւ Աւագին, եւ մատն պատրոն Խոշաքին, եւ եղբայրացն, եւ որդեացն, յարեւշատութիւն ինձ, եւ ամուսնոյ իմո Մամային՝ մեղաց թողութիւն*»[122]:

Կաթողիկէի հարաւային արտաքին պատին Վասակ Խաղբակեանի մեծ արձանագրութեան տակ իր վիմագիրն է թողել նաեւ Մամա իշխանուհին. «*Ես՝ Մամայս, աղախին Քրիստոսի, դուստր ... Վասակա, զայգին իմ, որ յԵրեւան գնեցի ի հալալ ընչից իմոյ եւ յեպու /ի սուրբ եկ/եղեցիս, որ շաբաթ աւրն :Բ:/2/ խորանն լինի իւթիցն պատարագ կամակցութեամբ տեառն իմոյ Վասակա*»[123]:

Այս արձանագրութիւնը միակն է, որտեղ յայտնուել է Մամա իշխանուհու հօր անունը՝ Վասակ, բայց քանի որ այդ անուանը նախորդող տողի

վերջին քարն իր տեղից ընկել եւ ոչնչացել է, այլեւս անհնար է ճշտել, թէ այդ Վասակը որ տոհմից է եղել:

Վասակ Խաղբակեանի եւ Մամա իշխանուհու ամուսնութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել 1180ականների առաջին կէսին, քանի որ 1201ին Խաչէնից Լօռէ բերդ եկած Վասակի երեք որդիները՝ Պապաքը, Մկդէմը, Հասան-Պռոշը այնպիսի տարիքում էին, որ արդէն ռազմական փորձ ունէին եւ Վայոց Ձորում ու Սիւնիքում մասնակցել հօր մղած պատերազմներին: Այդ հաստատում է նաեւ իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը 1214ին Կեչառիսի շինարարական արձանագրութեան մէջ: Մասնաւորապէս նա կարդացողներին խնդրել է. «... *յիշեսցիք եւ աստուածապուրք եղբարքն իմ եւ զինակիցք Ջաջուռն, եւ Գրիգոր, եւ սիրելի որդիք իմ հարազատք Պապաքն, Մկդէմ եւ Հասան երկանուն Պռաւշ*»[124]: Այստեղ «զինակիցք» բառը հաւասարապէս վերաբերում է Վասակ Խաղբակեանի եւ եղբայրներին, եւ հասուն որդիներին: Կայ եւս մէկ փաստ, որ Վասակի եւ Մամայի ամուսնութիւնը եղել է 1180ականների առաջին կէսին: 1222ին Գանձակի մօտ Իւանէ Բ. աթաբէկի ընդհանուր հրամանատարութեամբ ղփչաղների դէմ եղած պատերազմին տոհմական զօրամասը ղեկավարել է ոչ թէ տարիքն առած իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանը, այլ նրա աւագ որդի Պապաքը[125]: Նրա հետ նոյն կռուին մասնակցել է հօրեղբայրը՝ Քեղուա ձորի, բերդի, Աղջոց Սուրբ Ստեփանոս, Վանստան վանքերի տէր Գրիգոր Խաղբակեանը: Հայոց բանակն այդ պատերազմում պարտուել է: Խաղբակեան Պապաքն սպանուել, Գրիգոր իշխանը գերուել է: Նրան առաջարկուել է հաւատափոխ լինել, որից իշխանը հրաժարուել, անգամ հայհոյել է Մուհամէդի կրօնը: Դրանից յետոյ «*քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, եւ փշով քանցեցին զամենայն մարմինս նորա, եւ այնքան տրանջեցին զնա մինչեւ ի գանելն աւանդեաց զոգին*»[126]:

Վասակ Խաղբակեան հօր, եղբօր համար սա մեծագոյն ողբերգութիւն էր, առաւել եւս, որ այդ նոյն տարում մահացել էր նաեւ Մկդէմ որդին: Որդիների անժամանակ մահուան եւ եղբօր այդօրինակ սպանութեան կսկիծը հզօր, քաջ հերոսի, թուրքերի, այլազան թշնամիների երբեմնի ահասարսուռ հակառակորդ, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանին տարաւ գերեզման: Զօրականի մահը եղել է ամենայն հաւանականութեամբ 1223ին. «*փոխեցաւ ի Քրիստոս Վասակ իշխանաց իշխանն եւ էառ զդրոշայն որդի նորա քաջն Պռոշ...*»[127]:

Նրան գահի վրայ փոխարինել է երրորդ որդին՝ Պռոշ իշխանաց իշխանը: Մամա իշխանուհու մասին պատմական աղբիւրները լռում են: Որդին՝ իշխանաց իշխան Պռոշը, մօր համար, 1244ին, նուիրատուութիւն է կատարել Ներքին Խաչէնի Կօշիկ անապատին[128], 1247ին՝ Յովհաննավանքի Սուրբ Կարապետ եկեղեցուն[129]: Սրանից կարելի է ենթադրել, որ առնուազն մինչեւ 1247ը Մամա իշխանուհին ապրել է:

Օրբէլեանները

Էլիկումի որդի Լիպարիտը ԺԳ. դարի առաջին տասնամեակում հիմնել է Օրբէլեան տոհմի հայկական ճիւղը: Նրա նախնիները Տայքից Հիւսիսային Հայաստան գաղթած Մամիկոնեան հին տոհմի ճիւղերից էին, որի մի մասը հաստատուել էր Կիւրիկեանների թագաւորութեան ենթակայ Գուգարքի Տաշիր գաւառի Դսեղ գիւղում Մամիկոնեան-Համազասպեան տոհմանունով, մի մասը՝ նոյն Կիւրիկեաններին ենթակայ Օրբէթ բերդում եւ այդ բերդի անունով Վիրքի ազնուականութեան շարքն անցել Օրբէլեան տոհմանունով:

Էլիկումի հայր Իւանէ Օրբէլեանը, որ Վիրքի բանակի ամիրսպասալար-սպարապետն էր եւ որպէս սպարապետական կալուածք ստացել էր Կիւրիկեաններից Վիրքի թագաւորների գրաւած Լօռու նախկին թագաւորութեան տարածքը Լօռէ բերդով, 1176-77ին ապստամբել է Վիրքի Գէորգի Գ. թագաւորի դէմ՝ թագաժառանգ Դեմնային գահին նստեցնելու պատրուակով, պարտուել ու Վիրքի տարածքում ապրող տոհմանդամներով ոչնչացուել է: Միայն ամիրսպասալար Իւանէ Օրբէլեանի Լիպարիտ եղբայրն իր Էլիկում եւ Իւանէ որդիների հետ փրկուել է, քանի որ օգնութեան խնդրանքով գնացել էր սելջուկեան Ելտկուզ աթաբէկի մօտ, այդ դէպքերից առաջ ու դէպքերից յետոյ այլեւս չի վերադարձել Վիրք: Յետագայում, Թամար թագուհու օրօք, Լիպարիտի որդիներից Իւանէն է վերադարձել Վիրք եւ միայն Օրբէթ բերդն է ետ ստացել: Լիպարիտն ու Էլիկումը մնացել են Գանձակում: Առանի, Ատրպատականի, Նախճվանի կառավարիչ Մուհամէդ Փահլաւանի կողմից Էլիկումը նշանակուել է Երնջակ բերդի, Ճահուկ աւանի, Քալասրահի զօրավար: Այստեղ Էլիկումն ամուսնացել է Աբաս Ճահկեցու դստեր, Սիւնեաց Ստեփաննոս Գ. եպիսկոպոսի (1170-1216) քրոջ դստեր՝ Խաթունի հետ: Այդ ամուսնութիւնից ամենայն հաւանականութեամբ 1180-82ի միջեւ ծնուել է տղայ, որին պապի անունով կոչել են Լիպարիտ: Պապ Լիպարիտը եւ նրա Էլիկում որդին 1184ին Գանձակի մօտ տեղի ունեցած հայ-վրացական եւ ելտկուզեան պատերազմում զոհուել են: Էլիկումի կինն ու որդին մնացել են բախտի քմահաճոյքին: Ինչ-որ մի սելջուկ բռնի տիրել է Էլիկումի կնոջը՝ Խաթունին, երեխայի հետ տարել Նախճվան:

1201ին, Զաքարէ Բ.ի հրամանով կազմակերպուել է Խաթունի եւ նրա որդի Լիպարիտի ազատագրումը: Զաքարէ Բ. շահնշահը նրան է վերադարձրել տոհմական իշխանաց իշխան կոչումը եւ տուել Վայոց Ձորում Վասակ Խաղբակեանի ազատագրած Հրաշքաբերդը շրջակայ գիւղերով, իսկ 1205ին նշանակել Հրաշքաբերդի եւ շրջակայ հողերի վրայ ստեղծուած Սիւնիքի կողմնակալ-փոխարքայ՝ տալով իրաւունք կռուով մեծացնելու իր կողմնակալութեան սահմանները: Մինչեւ 1210ականները Լիպարիտ իշխանաց իշխանը, գործակցելով Վայոց

Ձորի կողմնակալ-փոխարքայ Վասակ Խաղբակեանի հետ, ազատագրական կռիւներով իր կողմնակալութեան սահմանները մեծացրել է ի հաշիւ արեւելեան Սիւնիքի:

Իւանէ Բ. Զաքարեանը, երիտասարդ Լիպարիտին մեծ ապագայ կանխատեսելով, նրան առաջարկել է բարեկամանալ, ամուսնանալ իր դստեր՝ Թամթայի հետ: Բայց կատարուել է անսպասելին: Լիպարիտ իշխանաց իշխանը տեսել է Բուպակ իշխանաց իշխանի գեղեցկուհի դստերը՝ Ասփային եւ որոշել, որ նա է լինելու իր կինը:

Բուպակ իշխանաց իշխանը Զաքարեան եղբայրների մարտական զինակիցն էր: Մասնակցել էր պետականութեան կերտման բոլոր մարտերին: 1187ին նստելով հայոց թագաւորական գահին, Զաքարէ Բ.ն հիմնել է հայոց պետութեան կառավարական խորհուրդ: Նա Բուպակին շնորհել է իշխանաց իշխանի կոչում, նշանակել պետական նախարար՝ թագաւորական իշխանութեան հրամանատար, հեջուբների[130] մեծ: 1190ականների սկզբին Զաքարէ Բ.ն ազատագրուած Գեղարքունիքի տարածքից Հայրավանքն իր շրջակայ հողերով պարգեւել է Բուպակ իշխանաց իշխանին: Պատմիչ Ստեփանոս Օրբէլեանն իր պապի մասին գրել է. «*Եւ զի էր նորա գործակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց եւ աւագ հեջպաց մեծ եւ բարեպաշտ իշխանն Բուպա կոչեցեալ, որ էր աներ Լիպարիտի՝ որդւոյ Ելիկումին...*»[131]:

Լիպարիտ Օրբէլեանը 1216ին, իր իշխանութեանն արժանի հոգեւոր կենտրոն ունենալու նպատակով, Ամաղու գիւղի մօտ գտնուող Նորավանքի տարածքում նոր՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայ անունով Կաթողիկէ եկեղեցի է հիմնադրել, որի կառուցումն աւարտուել է 1221ին:

Եկեղեցու հիւսիսային պատին, ներքուստ, փորագրուած է.

Ի թվին ՈՀ /1221/... ես՝ Լիպարիտ, որդի Ալակումին, թոռն մեծի Աւրպելանց, զի հայրն իմ Ալումին քինացաւ թագաւորին Աբխ/ա/զաց, գնաց ի տունն Էլտկուզանց եւ նա մեծ աւգատով մեծարեց զնա, ետ նմա զմեծ քաղաքն Համիան[132]: Ես՝ Լիպարիտս, որդի նորա, մանուկ գոլով դարձա վերըստին ի լուսաւոր հաւատն սրբոյն Գրիգոր/ի/, եկի առ մեծ աթապակ Իւանէ եւ հայրենեացն փոխան եր/ե/տ զՀարաշկաբերդ իւր կերովս, եւ ես շինեցի զվանքս, որ կոչի Նորավանք: Յառ/աջն/որդութե/ան/ տէր Սարգսի Սիւնեաց վերադիտողի, շինեցի զեկեղեցիս եւ աւագ սուրբ Նշան առ աթաբակ Իւանէի էր... Տէր Սարգիս եւ միաբանքս հաստատեցին ինձ զԱւագ խորանն :Գ:/3/ աւր ժամ կիրակէն, ի շաբաթն եւ զինգշաբաթն ի յամէն շաբաթում, եւ կենակցին իմո Ազիսին սահմանեցին ի տարումն տ/եառ/նընդառաջ աւրն զամէն եկեղեցիքս...[133]:

Եկեղեցու օծումը տեղի է ունեցել 1223ին: Հարիւրաւոր բարձրաստիճան պաշտօնեաների, հոգեւորականների թւում հանդէսին մասնակցել է նաեւ Լիպարիտ իշխանաց իշխանի աները՝ Բուպակ իշխանաց իշխանը: Այդ մասնակցութեան մասին թողը՝ Ստեփանոս պատմիչը գրել է.

Ի... յամիրսպասալարութեան Հայոց եւ Վրաց Շահնշահի, եւ յաթաբէկութեան Իվանէի՝ հաւրեղբաւր նորին, ես՝ մեծուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորաւանից առ երջանիկ հայրապետս տէր Սարգիս եւ ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց եւ իմ արեամբն թափել, եւ իմ պարոնայքն մեծ սիգելով այն ինձ էին որոշեալ՝ զԱղբերիս գիւղ իւր ամէն սահմանաւն, ի սուրբ եկեղեցին Նորաւանիցս ի սուրբ Կարապետ եւ ի սուրբ Նախավկայս տուի՝ ազատ յամենայն հարկաց: Եւ չունի հրաման յայսմհետէ մինչեւ յաւիտեան հակառակիլ այսմ, ոչ յաւագաց, ոչ յիմոց, ոչ յօտարաց: Եւ տէր Սարգիս եւ այլ միաբանքս հաստատեցին ի տարումն տասն պատարագ ի Վարդաւառին տաւնին իմ մաւրն հոգւոյն: ... ի թուիս Հայոց ՈՀԲ /1223/[134]:

Բուպակ իշխանաց իշխանի դուստր, Լիպարիտ Օրբէլեանի կին, գեղեցկուհի Ասփա իշխանուհին աշխարհ է բերել Էլիկում, Սմբատ, Իւանէ, Փոխրադալա, Տարսայիճ անուններով որդիներին, որոնք բոլորն էլ ծնուել էին մինչեւ 1221ը[135]: Նրանցից երեքը՝ Էլիկումը, Սմբատը, Տարսայիճը իրար յաջորդելով 1226-90ին եղել են Սիւնեաց իշանապետութեան գահակալներ:

Ասփա իշանուհուն 1261ին Նորավանքում կառուցած գաւթի շինարարական արձանագրութեան մէջ յիշել է որդին, Սմբատ արքան, պատուիրելով պատարագներ. «*Շաբաթ աւր ու կիրակի Լիպարիտի, հինգշաբաթն Ասփային*»[136]: Նա մօրը յիշել է նաեւ Քարկոփի վանքի Սուրբ Աստուածածին եկեղեցու նորոգման արձանագրութեան մէջ[137]:

Լիպարիտ իշխանաց իշխանը մահացել է 1226ին որդիներին թողներով շէն ու հարուստ իշխանութիւն:

Իշխանուհի Ասփան մահացել է 1263ին ու թաղուել որդու՝ իշխանաց իշխան Սմբատ արքայի[138], կողմնակալի[139] Նորավանքում կառուցուած դամբարանում: Նրա գերեզմանը առաջին շարքում է: Յաջորդում է Էլիկում, Իւանէ, Փախրադալա որդիների գերեզմաններին, որոնք իրենից առաջ են մահացել: Տիրուհու տապանաքարին փորագրուած է. «*Հբարեպաշտ մայր իշխանացս զԱսփայն յիշեցէք*»[140]:

1226ին հօր՝ Լիպարիտ Օրբէլեանի Սիւնիքի կողմնակալ-փոխարքայի գահին նստել է աւագ որդին՝ Էլիկում Օրբէլեանը: Նա ամենայն հաւանականութեամբ այդ պահին 21 կամ 22 տարեկան է եղել: Դեռեւս հօր կենդանութեան օրօք ամուսնացել էր Դսեղի Մամիկոնեան-Համազասպեան գերդաստանից Մարծպան Ա. իշխանի Գրիգոր որդու դուստր Թամկայի հետ: Օրբէլեանը գրել է, որ Էլիկումը. «*փեսայացել էր Գրիգորոյ Մարծանեանցին, որ յազգէ Մամիկոնէից համբաւի եւ վարէր զտէրութիւն հօրն*»[141]: Այս Թամկայի հօրաքոյր Խորիշահը նոյն ժամանակ ամուսնացել էր Այրարատի կողմնակալ-փոխարքայ Վաչէ Ա. իշխանաց իշխան Քուրդ Ա. Վաչուտեանի հետ[142]:

Նորավանքի Կաթողիկէ եկեղեցու գաւթում Էլիկում իշխանաց իշխանի որդի Բուրթէլ իշխանը 1261ին խաչքար է պատրաստել տուել մօր՝ Թամկա իշխանուհու յիշատակին: Խաչքարը գեղաքանդակ է, խոր փորուածքով: Կոթունի մասում պատրաստող վարպետը փորագրել է. «*Ի թվ/ին/ ՉԺ /1261/: Ի կամս ողորմութե/ամբ/ արարչին Յիսուսի: Ես՝ Բուրթել, որդի Էլիկումի, որդո Լիպարիտի, կանկնեցի Զա/սփռւա/ծընկալ նշանս մաւր իմ Թամկա, յիշատակ յաւիտէնից*»[143]:

Արձանագրութեան յաւիտենական յիշատակ բառերը յուշում են, որ 1261ին Թամկան մահացել է եւ որդին նրա յիշատակը յարգել է այդ անզուգական խաչքարով, որ տեղադրուած է ընդհանուր պատուանդանի վրայ՝ գաւթի ներսում, արեւմտեան պատի տակ, հիւսիսային մասում:

Էլիկում իշխանաց իշխանը զոհուել է Նփրկերտում, մոնղոլական արշաւանքի ժամանակ՝ 1253ին:

1261ին մօր յիշատակի խաչքարը պատրաստելուց մի փոքր անց, մոնղոլ զօրավար Հուլաղու խանի զօրքերի կազմում, ղփչաղների դէմ պատերազմելիս, Թերէք գետի ափին Բուրթէլ իշխանը սպանուել է: Հօրեղբօր որդու մասին պատմիչ Օրբէլեանը գրել է. «... *փղայ հասակաւ սպանաւ ի պատէրազմի յաշխարհին Խալանդրաց, ի դաշտին Խազրաց, զոր այժմ Խփչախ կոչեն*»[144]:

Էլիկում իշխանաց իշխանի եւ Թամկայի դուստր Ռուզուքանը Վախթանգ Հաթերքցու որդի Հասանի կինն էր: ԺԳ. դարի կէսերին ամուսիններով նուիրատուութիւն են կատարել Գեղարդավանքին. «... *Ես՝ Հասան, որդի Վաղթանկայ, թոռն մեծի Սմբատայ թագաւորազնին, միաբանեցաք սուրբ ուխտիս... Եւ սպասաւորք սորա խոստացան ի տարվոջն Չ/6/ աւր պատարագ Զատկին, Ա/1/ ինձ, Գ/3/ իմ մաւրն Նանային, Բ/2/ Ռուզուքանայ՝ կենակցի իմոյ*»[145]: Ռուզուքան իշխանուհին նուէրներ է տուել Մեծառանից Սուրբ Յակոբ վանքին եւ գաւթի պատին արձանագրել. «*Թվին ՉԺԳ /1264/: ... Ես՝ Ռուզուքան, ամուսին Հասանայ, դուստր մեծ իշխանին Էլիգումին*»[146]:

***

Ներկայացուող ուսումնասիրութիւնից դուրս մնացած իշխանական միւս տների՝ առաջին-երկրորդ սերունդների զաւակների, ուրիշ աւելի փոքր տոհմերի, ինչպէս նաեւ ուսումնասիրութեան առաջին մասում ներկայացուած տոհմերի միւս սերունդների ամուսնական կապերին կ'անդրադառնանք յաջորդիւ:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատ՝ Կ.Ա.Մելիք-Օհանջանեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1961, էջ 209:

[2] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 9*, կազմ.՝ Ս.Գ. Բարխուդարեան, Կ.Գ. Ղաֆադարեան, Ս.Տ. Սաղումեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2012, էջ 298, արձանագրութիւն 630:

[3] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 1, Անի Քաղաք*, կազմ.՝ Յ.Ա.Օրբելի, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1966, էջ 57:

[4] Կարօ Ղաֆադարեան, *Հաղբատ. Ճարտարապետական Կառուցուածքները եւ Վիմական Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 184:

[5] Նոյն:

[6] Բագրատ Ուլուբաբեան, *Խաչէնի Իշխանութիւնը X-XVI Դարերում*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 190:

[7] *Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Լուսաբանեալ*, Վենետիկ, 1862, էջ 140. նաեւ՝ Ուլուբաբեան, էջ 148:

[8] Կարապետ Եպիսկոպոս, *Նիւթեր Հայ Մելիքութեան Մասին. Բ Պրակ, Դուխեանք եւ Մելիք Շահնազարեանք*, Ս.Էջմիածին, Ելեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ, 1914, էջ 44 եւ յետոյ:

[9] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 5, Արցախ*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան Երեւան, ԳԱ Հրատ., 1982, էջ 127:

[10] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 184. նաեւ՝ *Դիւան, Պրակ 9*, էջ 172, արձանագրութիւն 305:

[11] *Դիւան, Պրակ 5*, էջ 12:

[12] Ուլուբաբեան, էջ 142:

[13] Գանձակեցի, էջ 268:

[14] Տ. Պետրոսեանց, «Դսեղի Մամիկոնեանների Տոհմածառը»՝ *Վաչուրեաններ*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2001, էջ 272:

[15] *Դիւան, Պրակ 9*, էջ 340, արձանագրութիւն 761:

[16] Նոյն, էջ 343, արձանագրութիւն 768:

[17] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 10, Շիրակի Մարզ*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2017, էջ 53:

[18] Նոյն, էջ 54:

[19] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 6, Իջեւանի Շրջան*, կազմ.՝ Ս.Ա.Աւագեան, Հռ.Մ.Ջանփոլադեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 65, արձանագրութիւն 127:

[20] Սիկիլ՝ հրամանագիր:

[21] Կարօ Ղաֆադարեան, *Սանահնի Վանքը եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1957, էջ 171. նաեւ՝ *Դիւան, Պրակ 9*, էջ 100, արձ. 172:

[22] Գանձակեցի, էջ 152:

[23] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 182:

[24] Արձանագրութեան այդ մասը բացակայում է, վերականգնումը մերն է:

[25] Ղաֆադարեան, *Սանահնի*, էջ 185:

[26] *Դիւան, Պրակ 6*, էջ 135, արձանագրութիւն 258:

[27] Հազարապետ:

[28] Զաքարիա Քանաքեռցի, *Պատմութիւն Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհաննու Վանից*, աշխ.՝ Արմէն Վիրաբեան, Երեւան, Հեղինակային Հրատ., 2015, էջ 189:

[29] Յովսէփ Եղիազարեան, «Կեչառիսի Վանքը Եւ Նրա Վիմագիր Արձանագրութիւնները», *Էջմիածին Ամսագիր*, 1955:12, էջ 46, ար՛. 38. նաեւ՝ Գանձակեցի, էջ 205. նաեւ՝ Գարեգին Յովսէփեան, *Խաղբակեանք Կամ Պռոշեանք Հայոց Պատմութեան Մէջ, Մասն Ա.*, Վաղարշապատ, 1928, էջ 78:

[30] Ա.Ի. Շահնազարեան, *Վահրամեանների Իշխանութիւնը*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1990, էջ 69, ծնթ.1:

[31] Նոյն, էջ 104-105:

[32] Հ.Ղեւոնդ Վ.Մ. Ալիշան, *Շիրակ, Տեղագրութիւն Պատրկերացոյց*, Վենետիկ, 1881, էջ 175: Ալիշանի կազմած Զաքարեանների տոհմածառի Սարգիս Բ. Մեծի դուստրերից առաջինի անունը գրուել է Թամթա: Այդ նոյն տոհմածառում սխալ է ներկայացուել նաեւ Դուփի ամուսնու անունը. Հասանի փոխարէն ամուսին է ներկայացուել Գրիգոր Խաչէնցին, որ Դուփի որդին էր:

[33] Գանձակեցի, էջ 166, 228, 292:

[34] *Հաւաքումն*, էջ 138:

[35] Պատրոն բառը տուեալ դէպքում կառավարչական գործունէութեամբ պայմանաւորուած լինելու արտայայտութիւն է:

[36] Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց, *Սրտրագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի Եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, աշխ.՝ Արմէն Տէր-Ստեփանեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2014, էջ 339:

[37] Խոշաքի «թագուհի» տիտղոսը հաստատում է մեր տեսակէտը, որ Զաքարէ Բ. Մեծի հիմնած պետութիւնը բացարձակ անկախ, սեփական թագաւորով պետութիւն էր եւ նրա տիրակալի կինը միաժամանակ ոչ միայն Հայք-Հայաստանի, այլեւ Վիրքի թագուհի էր իրեն անուանում:

[38] Ալիշան, *Շիրակ*, էջ 10:

[39] Նոյն. նաեւ՝ Ներսէս Սարգիսեան, *Տեղագրութիւն Ի Փոքր Եւ Ի Մեծ Հայս*, Վենետիկ, 1864, էջ 170:

[40] Գանձակեցի, էջ 320:

[41] *Հաւաքումն*, էջ 140:

[42] Կարօ Ղաֆադարեան, *Յովհաննավանքը Եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ Հրատ., 1948, էջ 98:

[43] Ալիշան, «Զաքարեանների Տոհմածառ», *Շիրակ*, էջ 175:

[44] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 202. նաեւ՝ Տիգրան Հայազն, *Տիկնայք Փափկասունք Հայոց Աշխարհի, Կենսագրական Հանրագիտարան, Գիրք Առաջին*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2005, էջ 48-49:

[45] *Դիւան, Պրակ 9*, էջ 29, ար՛. 5: Նոյնը վերաւորագրուել է էջ 60, ար՛. 67:

[46] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 173-174:

[47] Ալիշան, *Շիրակ*, էջ 24:

[48] Սամուէլ Կարապետեան, «Տեղեր», *Վարձք*, 2013:10, էջ 18-19:

[49] Մեր հաւաքածոյից:

[50] Մեզ Գագիկ Սարգսեանն է յայտնել:

[51] Մեր հաւաքածոյից:

[52] Իշխանական պաշտօնահամակարգում կողմնակալ-փոխարքայից յետոյ բարձրագոյն երկրորդ պաշտօնը կողմնակալութիւն-փոխարքայութիւններում:

[53] Ղաֆադարեան, *Յովհաննավանք*, էջ 94:

[54] *Դիւան, Պրակ 9*, էջ 63, արձանագրութիւն 73:
[55] Ղաֆադարեան, *Սանահին*, էջ 136:
[56] *Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, ԺԳ. Դար*, կազմ.՝ Ա.Ս.Մաթեւոսեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1984, էջ 211բ:
[57] Ղաֆադարեան, *Սանահին*, էջ 136:
[58] Գարեգին Յովսէփեան, *Խաղբակեանք Կամ Պողոսեանք Հայոց Պատմութեան Մէջ*, Բ. տիպ, Լիբանան, Անթիլիաս, 1969, էջ 314:
[59] Կարապետեան, էջ 18-19:
[60] Մեր հաւաքածոյից:
[61] Ղաֆադարեան, *Յովհաննավանք*, էջ 82-83:
[62] *Վիմական Տարեգիր*, կազմ.՝ Կարապետ Կոստանեանց, Պետերբուրգ, 1913, էջ 72:
[63] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 172-174:
[64] Ալիշան, *Շիրակ*, էջ 161:
[65] Մեր հաւաքածոյից:
[66] Մեր հաւաքածոյից:
[67] Ղաֆադարեան, *Սանահին*, էջ 134:
[68] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 174:
[69] Ղաֆադարեան, *Յովհաննավանքը*, էջ 94:
[70] Պետրոսեանց, *Վաչուրեաններ*, էջ 258:
[71] *Դիւան, Պրակ 9*, էջ 106, արձանագրութիւն 192:
[72] Պետրոսեանց, *Վաչուրեաններ*, էջ 258:
[73] Պետրոսեանց, *Գիւղն Որ Կոչի Վարդենիս Ի Նիգ Գաւառի*, Երեւան, 2018, 178 էջ:
[74] Նոյն, էջ 259:
[75] Նոյն, էջ 259-60:
[76] Նոյն, էջ 189 եւ յետոյ:
[77] Նոյն, էջ 260:
[78] Նոյն, էջ 261:
[79] Ղաֆադարեան, *Յովհաննավանքը*, էջ 95:
[80] Նոյն, էջ 81:
[81] Նոյն, էջ 91:
[82] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 282:
[83] Նոյն, էջ 366:
[84] Գանձակեցի, էջ 365 եւ յետոյ. նաեւ՝ Պետրոսեանց, *Գիւղն Որ Կոչի*, էջ 98:
[85] Գանձակեցի, էջ 370-371:
[86] Նոյն, էջ 371:
[87] Գ. Սարգսեան, «Բարձրաքաշ Վանքը եւ Նրա Արձանագրութիւնները», *Էջմիածին*, 1951:9-10, էջ 44. նաեւ՝ Ղաֆադարեան, *Յովհաննավանքը* էջ 84, 109:
[88] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 611. նաեւ՝ Տ.Մ. Պետրոսեանց (Տիգրան Հայազն), «Համազասպ Մամիկոնեան՝ Առաջնորդ Յովհաննավանքի», *Հոգեւոր Հայրենիք (Հայաստանի Ազգային Գրադարանի Ամսաթերթ)*, 2006:1/22/, էջ 4-5:
[89] Հ.Ղեւոնդ Ալիշան, *Այրարատ Բնաշխարհ Հայոսպանեայց*, Վենետիկ, 1890, էջ 172:

[90] *Դիւան, Պրակ 5*, էջ 38, արձ. 82, էջ 41, արձ. 85:

[91] Նոյն, էջ 88, արձ. 268, էջ 116, արձ. 387, էջ 120, արձ. 400. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 3, Եղեգնաձորի եւ Ազիզբէկովի Շրջաններ*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1967, էջ 238, արձ. 779:

[92] *Դիւան, Պրակ 5*, էջ 15, արձ. 12:

[93] Նոյն, էջ 41, արձ. 84:

[94] Նոյն, էջ 40, արձ. 82:

[95] Նոյն, էջ 40, արձ. 82, էջ 80, արձ. 239, էջ 41, էջ 84:

[96] Գանձակեցի, էջ 391:

[97] Նոյն, էջ 270:

[98] Եղիազարեան, *Կեչառիսը*, էջ 48, արձանագրութիւն 57:

[99] Գանձակեցի, էջ 359:

[100] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 311-12:

[101] *Դիւան, Պրակ 5*, էջ 41, արձանագրութիւն 85:

[102] *Դիւան, Պրակ 3*, էջ 238, արձանագրութիւն 779:

[103] Դիդեբուլ էին կոչւում վրաց մեծ իշխանները:

[104] Մհեր Յակոբեան, *Հայ ժողովրդի Ռազմական Տարեգիրք, Գիրք Երեսունութերորդ, 1168-1198*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2008, էջ 39, ծանթ. 7:

[105] Հ.Ղեւոնդ Վ.Ալիշան, *Հայապատում, Հտր. Բ*, Վենետիկ, 1901, էջ 351:

[106] Գանձակեցի, էջ 207, նաեւ՝ Ալիշան, *Հայապատում*, էջ 350-51:

[107] Ուլուբաբեան, էջ 145 եւ յետոյ:

[108] Լեւոն Մելիքսէթ Բէկ, *«Վարդապետք Հայոց Հիւսիսային Կողմանց» եւ Նրանց Ինքնութիւնը. Հայ-Վրացական Յարաբերութիւններ (Պատմագրական Հետազօտութեան Փորձ)*, վրացերէնից թարգմ.՝ Հրաչ Բայրամեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2016, էջ 215-22:

[109] Խ. Թորոսեան, *«Թագաւորների Պատմութիւն Ու Գովաբանութիւնը» Որպէս Զաքարեան Հայաստանի Պատմութեան Սկզբնաղբիւր*, Երեւան, ՀՀ ԳԱ Հրատ., 1992, էջ 371-72:

[110] Մխիթար Գօշ, *Գիրք Դատաստանի*, աշխ.՝ Խ.Թորոսեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975:

[111] *Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Ե.-ԺԲ. Դարեր*, կազմ.՝ Ա.Ս.Մաթեւոսեան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1988, էջ 242:

[112] Հ.Ղ.Մ., «Յաղագս Իսկագիր եւ Նախագաղափար Օրինակի Գրոցն Դաստատստանի Մխիթարայ Գօշի», *Բազմավէպ*, 1848:Զ.(7), էջ 117:

[113] Գանձակեցի, էջ 215-216:

[114] *Դիւան, Պրակ 5*, էջ 198, արձանագրութիւն 708:

[115] Նոյն, էջ 198, արձանագրութիւն 708:

[116] Գանձակեցի, էջ 215:

[117] Նոյն:

[118] Տոհմի նախնական անունը Խաղբակեան է եղել: Կողմնակալ-փոխարքայ, իշխանաց իշխան Վասակ Խաղբակեանի որդի, իշխանաց իշխան Հասան-Պռոշի գործունէութեան արդիւնքում տոհմը նոր՝ Պռոշեան անուն է ստացել:

[119] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 67 եւ յետոյ:

[120] *ԺԳ. Դարի Յիշատակարաններ*, էջ 182:
[121] Գորայքը Գորիսն է:
[122] Եղիազարեան, էջ 46, արձանագրութիւն 38:
[123] Նոյն, էջ 46:
[124] Նոյն, էջ 46:
[125] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ 4, Գեղարքունիք*, կազմ.՝ Ս.Գ.Բարխուդարեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1973, էջ 213, արձանագրութիւն 897:
[126] Գանձակեցի, էջ 205-206:
[127] Ստեփան Վարդապետ Մխիթարեան, *Սպորագրութիւն Այրիվանաց Ս. Գեղարդայ*, Վաղարշապատ, 1873, էջ 65:
[128] *Դիւան, Պրակ 5*, էջ 28, արձանագրութիւն 56:
[129] *Ղաֆադարեան, Յովհաննավանքը*, էջ 91:
[130] Արեւելքի պետութիւններում բարձրագոյն պաշտօն, որ Զաքարեան Հայաստանում եղել է թագաւորութեան եւ կողմնակալութիւն-փոխարքայութիւնների պալատներում: Պատմաբան Լ.Հ. Բաբայեանը գրել է, որ հեջուբը համազօր էր իշխանական արքունիքի վերակացուի՝ սենեկապետի պաշտօնին (*Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հրր. 3*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 553): Բուպակը պետական նախարար-հեջուբ-սենեկապետ էր (*Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական*, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 258): Զաքարէ Բ. շահնշահի հեջուբը Վահրամ Պահլաւունին էր (*Դիւան, Պրակ 10*, էջ 48, արձանագրութիւն 60), Իւանէ Ա. զօրավարի կողմնակալութեան հեջուբը Խաչէնի իշխանական տնից Գրիգոր Տղան էր (*Դիւան, Պրակ 6*, էջ 70, արձ. 140. նաեւ՝ Գանձակեցի, էջ 222-3, 254, 359), Այրարատի կողմնակալութեան կողմնակալ-փոխարքայ Վաչէ Ա.ի հեջուբը Ալվեցոյն էր (Ղաֆադարեան, *Յովհաննավանքը*, էջ 83):
[131] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 258:
[132] Համադան քաղաքը Պարսկաստանում:
[133] *Դիւան, Պրակ 3*, էջ 211, արձ. 677:
[134] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 261-262:
[135] Այս նոյն հերթականութեամբ Նորավանքի Կաթողիկէ եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ իր որդիներին նշել է Լիպարիտ իշխանաց իշխանը (*Դիւան, Պրակ 3*, էջ 211, արձանագրութիւն 677):
[136] Նոյն, էջ 218, արձանագրութիւն 692:
[137] Նոյն, էջ 206, արձանագրութիւն 667:
[138] Նոյն, էջ 234, արձանագրութիւն 763, էջ 236, արձանագրութիւն 772:
[139] Նոյն, էջ 206, արձանագրութիւն 667:
[140] Նոյն, էջ 230, արձանագրութիւններ 736, 737, 738, 739:
[141] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 292
[142] Տ. Պետրոսեանց, *Վաչուտեաններ*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2001, էջ 56: Նոյնի՝ *Տիկնայք Փափկասուն*, էջ 42-43:
[143] *Դիւան, Պրակ 3*, էջ 227, արձանագրութիւն 727:
[144] *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի*, էջ 266:
[145] Ալիշան, *Այրարատ*, էջ 340:
[146] *Դիւան, Պրակ 5*, էջ 16, արձանագրութիւն 14:

MATRIMONY AS A MEANS AND TOOL FOR STATE BUILDING FOR THE ZAKARIANS (Summary)

TIGRAN PETROSYANTS
tigranhayazn@mail.ru

Matrimony has been an important tool for state building for thousands of years. Many interstate issues have been resolved and relations between ruling families have been regulated through wedlock.

The paper highlights how Sarkis Zakarian II (Sarkis the Great, son of King Zakare I, 1185-1187), one of the most renowned Armenian military and political figures of the 12th century, made good use of this institution in order to stitch together the territories of various Armenian feudal 'kings' and princes in a loose federation that was to become the foundation of Zakarid Armenia.

The author analyses the arranged marriages of Sarkis' two daughters to the main figures of the two branches of Khachen principality, and how later he arranged the marriage of his third daughter to the heir of the clan of Dsekh rulers, Hamazaspyans-Mamikonyans. Furthermore Sarkis had a role to play in the marriage of his nephew to the son of the Khachen princely house.

His two sons, Zakare II and Ivan II, followed in his footsteps and married their sister Vaneni-Nana to King Abbas II Kyurikyan, while they married representatives of other Armenian princely houses, and encouraged in every possible way the marriages of their subordinate princes to representatives of other princely houses.

The paper argues that this marital kinship united the territories of the Zakaryans and the Kyurikyans and combined the adjacent lands of the Artsrunis and those belonging to the rulers of Dsekh and laid the territorial foundation of the future Zakarid state. The success of this policy led the rulers of Armenia to adopt it for over one and a half centuries, during both Zakarid Armenia (1187-1236) and the semi-independent existence of Armenia under Mongol rule (1236-1350). Furthermore, it gave to a number of Armenian princely families the capacity to survive during those challenging decades for some five to six generations.

ԻՐՕ՞Ք ԱՌԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՐԱԲԱ-ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՆՇԱԾ ĀḎARBAYǦĀN AL-‘ULYĀ/ՎԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՆ Է

ԱՐՍԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ
a.shaginyan@spbu.ru

ՄՈՒՏՔ

Ինչպէս յայտնի է, Խորհրդային Ադրբեջանի պաշտօնական պատմագրութիւնում 1960ականներին ժխտողական հայեցակարգ ձեւաւորուեց, ըստ որի, իբր թէ Առաջաւոր Ասիայում Սասանեան Իրանի, ապա Արաբական Խալիֆայութեան գերիշխանութեան ժամանակաշրջանում (այսինքն ուշ Անտիկ եւ վաղ Միջնադարում) արդէն գոյութիւն է ունեցել այդպէս կոչուած *Հիւսիսային Ադրբեջանը*՝ Ստորին Երասխ/Արաքսի գետահովտից հիւսիս ընկած տարածաշրջանում, նոյնինքն՝ Խորհրդային Ադրբեջանի զբաղեցրած հիմնական տարածքը: Յիշենք, որ տուեալ հայեցակարգի հեղինակ հանդիսացաւ 1967ից Ադրբեջանական ԽՍՀի Գիտութիւնների Ակադեմիայի ակադեմիկոս, 1981ից՝ նաեւ Արեւելագիտութեան Ինստիտուտի տնօրէն, իսկ 1990ից՝ արդէն ԳԱ փոխնախագահ Զիա Բունիաթովը (Ziya Bünyadov, 1921-1997)[1]: Վերջինիս *Азербайджан в VII-IX вв.* (Ադրբեջանը Է.-Թ. դարերում) խորագրով ռուսերէն մենագրութեան ներածականում[2] գրուած է.-

> Называя Азербайджаном обе части страны, в которой ныне живут говорящие на одном языке азербайджанцы, мы в каждом случае поясняем, какая именно территория Азербайджана имеется в виду: северные ли районы — Арана (Албании)... или южные... (Ադրբեջան կոչելով երկրի երկու հատուածներն, որտեղ այժմ բնակւում են մէկ լեզուով խօսող ադրբեջանցիները՝ մենք ամէն դէպքում պարզաբանում ենք, թէ Ադրբեջանի ո՛ր տարածքը նկատի ունենք՝ հիւսիսային շրջանները՝ Առանի (Աղուանքի)... թէ՞ հարաւայինները...)[3]:

Կեղծարարական այդ հայցեկարգը յետխորհրդային ադրբեջանական արաբագիտական դպրոցի առաջին դէմքերը փորձում են դուրս բերել 1991ից ինքնիշխան իրենց հանրապետութեան սահմաններից: Ահա Ադրբեջանի Հանրապետութեան ԳԱԱ ներկայիս փոխնախագահն, Ադրբեջանի Պատմութեան Թանգարանի տնօրէն՝ ակադեմիկոս Նայիլա Մամեդալի Ղիզի Վելիխանլին (Naila Mamedali gizi Velixanli, ծն. 1940) ռուսերէն հրապարակել է գիտական մի յօդուած՝ "Еще раз о Пределах Азербайджана в IX–X вв." (Դարձեալ Ադրբեջանի սահմանների մասին Թ.-Ժ. դարերում) վերնագրով: Այն լոյս է տեսել Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի *Вопросы Истории* (Պատմութեան հարցեր, 2017:9) հնագոյն պատմական եւ բարձր վարկանիշով ամսագրում, որն ինդեքսաւորւում է հրապարակումների տուեալների միջազգային խոշորագոյն Web of Science Core Collection

շտեմարանում[4]: Ահա թէ ինչպէս է յօդուածագրի կողմից համառօտ բնութագրւում դրա բովանդակութիւնը ռուսերէնով եւ անգլերէնով.

В исследовании... подтверждается факт принадлежности земель севернее Аракса (современной Азербайджанской Республики)... Аррану, называемому в (арабских. — *А. Ш.*) источниках также Азербайджаном Верхним (Северным) или просто Азербайджаном.

The author... confirms the fact that territory located to the north of river Araxes (the territory of present-day Republic of Azerbaijan)... belongs to Arran province, which is also named in the [Arabic] sources as the Upper Azerbaijan (Northern) or just Azerbaijan.

(Ուսումնասիրութիւնում... հաստատւում է Արաքսից հիւսիս ընկած (ներկայիս Ադրբեջանի Հանրապետութեան) հողերի պատկանելիութեան փաստը... Առանին, որն [արաբական] աղբիւրներում կոչւում էր նաեւ Վերին (Հիւսիսային) Ադրբեջան կամ ուղղակի Ադրբեջան)[5]:

Վելիխանլիի եզրակացութիւնը առ այն, թէ արաբական Առանը (أرّان ['Arrān] կամ էլ الرّان [ar-Rān], որտեղ արմատի առաջին երկու տառերը հանդէս են գալիս որպէս որոշիչ յօդ) նմանատիպ տեղանուամբ է յայտնի եղել Թ.-Ժ. դարերի մահմետական գրականութեան հիմնադիրներին, հիմնուած է ծնունդով իրանական Խորասան նահանգից հեղինակաւոր պատմիչ ու աշխարհագիր ալ-Եա'կուբիի (մահ. 897) մօտ յայտնաբերուած եւ մէկ անգամ յիշատակուող *Āḏarbayǧān al-'ulyā* (آذربيجان العليا) բառակապակցութեան վրայ:

Ահա թէ ինչ է պնդում մեր օրերի ադրբեջանցի ականաւոր գիտնականը, յղում կատարելով հիջրայի 278ին (891/2) աւարտուած كتاب البلدان-ի (Գիրք երկրների մասին [Kitāb al-buldān]) Ատրպատական (آذربيجان [Āḏarbayǧān]) ենթագլխին՝ ընդգրկուած Առաջին քառորդը, որն Մաշրիքի քառորդն է (الرّبع الاوّل وهو ربع المشرق [ar-Rub' al-awwal wa-huwa rub' al-Mašriq]) խորագրով գլխում.

ал-Йа'куби... упоминая о дороге, ведущей в Азербайджан, сообщал, что выехавший из Занджана мог по дороге Ардабил – Барзанд – Бейлаган доехать до Бардыы – главного «го'рода Верхнего Азербайджана (Азербайджан ал-улйа)» (ալ-Եա'կուբին՝ Ադրբեջան տանող ճանապարհը յիշատակելիս, յայտնում էր թէ Զանջանից դուրս եկողը կարող էր Արդաբիլ – Բարզանդ – Բէյլագան ճանապարհով հասնել Բարդա՝ «Վերին Ադրբեջանի (Ադրբեջան ալ-ուլիա)» գլխաւոր քաղաք)[6]:

Մինչ Վելիխանլիի եզրակացութեան մանրամասն մեկնաբանումը հարկ ենք համարում մէջբերել ալ-Եա'կուբիի յիշատակուող հատուածը *Ապրպատական* ենթագլխից ամբողջովին (արաբերէն բնագիրն ու լատինատառ գրադարձութիւնը) եւ մեր կողմից առաջարկուող հայերէն թարգմանութիւնը.

فمن اراد إلى آذربيجان خرج من زنجان فسار اربع مراحل إلى مدينة اردبيل وهى اوّل ما يلقاه من مدن آذربيجان، ومن اردبيل إلى برزند من كور آذربيجان مسيرة ثلثة ايّام ومن برزند إلى مدينة ورثان من كور آذربيجان ومن ورثان إلى البيلقان ومن البيلقان إلى مدينة المراغة وهى مدينة آذربيجان العليا[7]

[Fa-man arāda 'ilā Āḏarbayǧān ẖaraǧa min Zanǧān fa-sāra arba' marāḥil 'ilā madina-t Ardabīl wa-hiyā awwal mā yūlqāh min mudun Āḏarbayǧān, wa-min Ardabīl 'ilā Barzand min kūr Āḏarbayǧān masīra-t ṯilṯa-t ayyām wa-min Barzand 'ilā madīna-t Warṯān min

kūr Āḏarbayğān wa-min Warṯān ilā al-Baylaqān wa-min al-Baylaqān 'ilā madīna-t al-Marāğah wa-hiyā madīna-t Āḏarbayğān al-'ulyā].

Ով կամենում է [մեկնել] Ատրպատական (Ադարբայջան), դուրս է գալիս Զանջանից եւ, չորս օրուայ ճանապարհ անցնելով, հասնում Արդաբիլ քաղաքը: Եւ դա Ատրպատականի առաջին քաղաքն է, որին նա կը հանդիպի: [Հեռաւորութիւնը] Արդաբիլից մինչեւ Բարզանդ, որը Ատրպատականի նահանգում է, երեք օրուայ ճանապարհ է կազմում: Ապա [նա շարժուելու է] Բարզանդից դէպի Վարդանակերտ (Վարթսան) քաղաքը, որը նոյնպէս Ատրպատականի նահանգում է, յետոյ՝ Վարդանակերտից դէպի Փայտակարան (ալ-Բայլակղան), ի վերջոյ՝ Փայտակարանից դէպի (ալ-)Մարաղա, որն էլ Ատրպատականի գլխաւոր քաղաքն է[8]:

Սակայն հարկաւոր է խոստովանել, որ եզրափակիչ արտայայտութիւնում «وهى مدينة آذربيجان العليا... [...wa-hiyā madīna-t Āḏarbayğān al-'ulyā]», որտեղ մենք գործ ունենք արաբական քերականութիւնում այսպէս կոչուած եռանդամ իդաֆայի (الإضافة [al-iḍāfah]) հետ (status constructus), համաձայնեցուած որոշիչը (العليا [al-'ulyā])՝ արտայայտուած ածականի գերադրական աստիճանով եւ իգական սեռով, քերականութեան կանոների համաձայն, լիովին կարող է վերաբերել նաեւ իդաֆայի երկրորդ անդամին՝ آذربيجان [Āḏarbayğān]ին: Բանն այն է, որ նա համաձայնեցւում է վերջինիս հետ ինչպէս սեռով եւ թուով, այնպէս էլ՝ յօդով: Հետեւաբար, կարելի՛ է ստանալ Վելիխանլիի կողմից առաջարկուող թարգմանութեան տարբերակը՝ «город в Азербайджане Верхнем (քաղաք Վերին Ադրբեջանում)», բայց արդէն առանց նրա մօտ տեղ գտած լրացուցիչ համաձայնեցուած որոշիչի՝ «главный» (գլխաւոր):

Միեւնոյն ժամանակ արաբագէտը չպէտք է մոռանայ, որ նոյն սկզբունքով տուեալ համաձայնեցուած որոշիչը (العليا [al-'ulyā]), ըստ նոյն քերականութեան կանոնների, լիովին կարող է վերաբերել նաեւ իդաֆայի առաջին անդամին, այսինքն՝ مدينة [madīnah]ին: Եթէ ենթադրենք, որ իդաֆայի երրորդ անդամը (العليا [al-'ulyā])՝ արտայայտուած գերադրական աստիճանով եւ որոշիչ յօդով, այնուամենայնիւ վերաբերում է مدينة [madīnah]ին, որպէս համաձայնեցուած վերջինիս հետ որոշիչ, ապա կը ստանանք արդէն թարգմանութեան մեր տարբերակը՝ «Ատրպատականի գլխաւոր քաղաքը»[9]:

Մի խօսքով՝ բանասիրական վերլուծութիւնը թոյլ չի տալիս արաբագէտին ճշգրիտ ձեւով դասական արաբերէնից ռուսերէն կամ հայերէն թարգմանել տուեալ եռանդամ իդաֆան: Այդ իսկ պատճառով ալ-Եա'կուբիի ենթահողի վերականգնումը այսօր հնարաւոր է թւում՝ բացառապէս հիմք ընդունելով եւ քննելով համաժամանակեայ մահմետական մնացած հեղինակների աշխարհագրական տուեալները:

Եւ այսպէս, մենք գործ ունենք Մարաղայի՝ արաբական Ադրբեջանի (Ատրպատականի) մայրաղաքաքի հետ, ինչպէս որ պնդում են մահմետական աշխարհագրութեան դպրոցի բոլոր հիմնադիրներն: Հենց այսպէս է

առաջինը վարում իսլամական աշխարհի «Աշխարհագրութեան Հայր», ծագումով իրանցի Իբն Խուրդաձբիհը (մահ. 912/3):

Վերջինս արաբական այդ վիլայէթի (նահանգի) բոլոր քաղաքները հիջրայի 272ին (885/6) كتاب المسالك والممالك-ում (Գիրք ճանապարհների ու թագաւորութիւնների մասին [Kitāb al-masālik wa-al-mamālik]) թուարկելիս՝ ցանկը բացում է (ալ-)Մարաղայով[10]: Իսկ հիջրայի 318ին (930/1ին), մի շարք քարտէզներ հեղինակած ճանապարհորդի, պարսիկ ալ-Իստախրիի (մահ. 951/2) كتاب مسالك الممالك-ում (Գիրք թագաւորութիւնների ճանապարհների մասին [Kitāb masālik al-mamālik]) տեղ են գտել հետեւեալ տողերը. «[Ներկայիս] Ատրպատականի (Ադարբայջան) խոշորագոյն քաղաքը Արդաբիլն է <...> Արդաբիլից յետոյ մեծութեամբ երկրորդը (ալ)Մարաղան է, որը հնում եղել է... [արաբ] կառավարչի նստավայր»[11]: Ծնունդով Պաղտատից Իբն Հաուկալը (մահ. 978ից յետոյ), ով երեսուն տարի շարունակ ճանապարհորդել է, այդ թւում Կովկասի եւ մերձկասպեան տարածաշրջանով, եւ նոյնպէս հեղինակել է դրանց քարտէզները, հիջրայի 367ին (977/8) صورة الأرض (Երկրի պատկերը [ṣūra-t al-'arḍ]) երկում, կրկնելով նախորդի խօսքերը, (ալ)Մարաղան ուղղակիօրէն կոչում է Ադրբեջան վիլայէթի նախկին (այսինքն՝ արաբական ժամանակաշրջանի Ատրպատականի) քաղաքամայր[12]:

Իսլամի վաղ շրջանի (ալ)Մարաղան տեղադրւում է Ուրմիա լճի ջրաւազանից հարաւ-արեւելք, նախահիսլամական Ատրպատականի մայրաքաղաք Գանզակից (*պահլ.* Ganzag) մի փոքր հիւսիս: Նոյն այդ տեղում, Իրանի Իսլամական Հանրապետութեան Արեւելեան Ադրբեջան (*պարս.* آذربایجان شرقی [Āzarbāyǰān-e Šarqī]) օսթանում (ոստան) այսօր էլ է բարգաւաճում համանուն քաղաք (պարս. مراغه [Marāğe], թիւրք. Marāğa]): Մի խօսքով՝ վաղ միջնադարի (ալ)Մարաղան տեղադրւում է մերօրեայ Իրանական Ադրբեջանի (պարս. آذربایجان ایرانی [Āzarbāyǰān-e Irānī]) տարածքում, կամ ինչպէս որ պաշտօնական Բաքւում են գերադասում կոչել՝ Հարաւային Ադրբեջանում (Cənubi/Güney Azərbaycan):

Հետեւաբար, մենք լիովին բացառում ենք վիճայարոյց եռանդամ իդաֆայի թարգմանութեան փորձը, որը մեզ է առաջարկում Վելիխանլին: Մանաւանդ որ Թ.-Ժ. դարերի արաբալեզու գրական որեւէ յուշարձանում հնարաւոր չէ գտնել ադրբեջանցի ակադեմիկոսի հնչեցրած «Азербайджан ал-улйа (Верхний или же Северный Азербайджан) (Ադրբեջան ալ-ուլյա [Վերին կամ էլ՝ Հիւսիսային Ադրբեջան])» տեղանունը: Դրա համար էլ նոյն այդ գրականութիւնում չես գտնի *n'չ* آذربیجان السّفلیٰ [Āḏarbayğān as-suflīyā] (բառացիօրէն՝ «Ներքին Ադարբայջան»), *n'չ* էլ՝ آذربیجان الجنوبیّة [Āḏarbayğān al-ğanūbīyāh] (բառացիօրէն՝ «Հարաւային Ադարբայջան») հասկացութիւն կամ տեղանուն, եւ դա մեզ համար աւելի քան տրամաբանական է:

Անկասկած, նմանատիպ աշխարհագրական իրողութիւնից ելնելով էր, որ դեռ Ի. դարասկզբին ռուս ականաւոր կովկասագէտ-արեւալագէտ եւ

ազգագրագէտ Նիկոլայ Կարաուլովը (1876–1937), վաղ շրջանի մահմետական աշխարհագիրների աշխատութիւններից Կովկասին, Հայկական Բարձրաւանդակին եւ Ադրբեջանին (Ատրպատականին) վերաբերող բոլոր նիւթերը ռուսերէն թարգմանելիս, նշուած եռանդամ իդաֆան աւելի քան ճշգրիտ է փոխանցել. «...а это самый главный город Адербейджана (... իսկ դա Ադրբեջանի ամենագլխաւոր քաղաքն է)»[13]: Տասնամեակներ անց հայ հեղինակաւոր արաբագէտ-հայագէտ Արամ Տէր Ղեւոնդեանը (1928-1988), իր հերթին հայերէն թարգմանելիս նոյն այս հեղինակների հաղորդագրութիւնները Հայաստանի ու յարակից երկրների մասին, տուեալ իդաֆան տալիս է հետեւեալ կերպ. «...որն Ատրպատականի գլխաւոր քաղաքն է»[14]:

Ստացւում է, որ Վելիխանլին լիովին անտեսել է վերոյիշեալ աշխարհագրական իրողութիւնը, չնայած որ նրան քաջ յայտնի էր այն: Նա դեռ խորհրդային տարիներին էր ստանձնել Իբն Խուրդաձբիհի Գիրք ճանապարհների ամբողջ երկի ռուսերէն թարգմանութեան եւ մեկնաբանութեան երկարամեայ աշխատանքը[15]:

Բայց սա դեռ վերջը չէ. ալ-Եա'կուբիի նշուած հատուածում, Ադրբեջան վիլայէթի մայրաքաղաք Մարաղան Ադրբեջանի ԳԱԱ փոխնախագահը դիտատրեալ փոխարինում է, ինչպէս որ ցոյց տուեցինք վերեւում, արաբական հարֆերի ուրուագրով մի փոքր իրեն նման Բարդայով (*արաբ.* برذعة [Barḏa'a-t])[16], նոյնինքն Մեծ Հայքի Ուտիք աշխարհում Սասանեանների օրօք հիմնադրուած Առանի մարզպանութեան (*պահլ.* Ārān) քաղաքամայր Պարտաւն է:

Յօդուածագիրը պնդում է թէ ալ-Եա'կուբիի բնագրում Ադրբեջանում (Ատրպատականում) ճամփորդողի համար որպէս վերջին կանգառ նշուած է եղել հենց Առանի մայրաքաղաքը: Չի բացառւում, որ դա է պատճառը, որպէսզի Վելիխանլին խուսափէր սկզբնաղբիւրի տուեալ հատուածը մէջբերել ամբողջովին՝ առնելով չակերտների մէջ: Մինչդեռ՝ սոյն հատուածում էր, իր պնդմամբ, բացառիկ ու եզակի աշխարհագրական այդ սահմանումը, որը կոչում էր արաբական Առանը այդքան սպասելի «Азербайджан Верхний (Северный) (Վերին (Հիւսիսային) Ադրբեջան)» տեղանունամբ:

Ինչպէս տեսանք, ակադեմիկոսը բաւարարւում է՝ նիւթը վերարտադրել սեփական խօսքերով, չակերտների մէջ դնելով միայն իրեն ձեռնտու «го́рода Верхнего Азербайджана (Азербайджан ал-улйа) (Վերին Ադրբեջանի (Ադրբեջան ալ-ուլյա) գլխաւոր քաղաք)» վերջնամասը:

Վերջաբանի փոխարէն էլ յաւելենք, որ նոյն այս հետազօտութիւնում Վելիխանլին պնդում է նաեւ թէ Իբն Հաուկալի յայտնի քարտէզում, որտեղ պատկերուած է Խազարաց (Վրկանից կամ Կասպից) ծովը, «...ողջ ծովափնեայ տարածքը հարաւում Գիլանից (Ջիլանից) հիւսիսում մինչեւ Դերբենդը (Բաբ ալ-Աբուաբը) ներառեալ կոչւում է Ադրբեջան»[17]: Մինչդեռ տուեալ քարտէզին آذربيجان [Āḏarbayǧān] տեղանունամբ գրառումը ձգւում է Ստորին

Երասխի (نهر الرّسّ [nahr ar-Rass]) աջակողմեան գետահովտին զուգահեռ (Երասխից հարաւ) մինչեւ Կասպից ծով (بحر الخزر [baḥr al-Ḫazar]) թափուելը, իսկ ձախակողմեան հովտին զուգահեռ մէկ այլ գրառում է կատարուած՝ الرّان [Arrān][18]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով մենք գործ ունենք Ադրբեջանի ԳԱԱ կողմից աւելի քան կէս դար շարունակուող պատմական կեղծարարութեան հերթական վառ օրինակի հետ:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Арам Ганаланян, Левон Хачикян, Арам Тер-Гевондян, "Об Очередных «размышлениях З. М. Буниятова" (Զ. Մ. Բունիաթովի հերթական «մտորումների» մասին), *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1978:5, էջ 95-104:

[2] Իդէպ՝ մենագրութիւնը հիմնուած էր նրա Բաքւում պաշտպանած դոկտորական ատենախօսութեան վրայ, որը, Կարէն Իւզբաշեանի (1927-2009) յիշողութիւնների համաձայն, լուրջ քննադատութեան էր արժանացել եւ ժխտուել նախօրէին՝ Լենինգրադի (ներկայիս՝ Սանկտ Պետերբուրգ) Պետական Համալսարանի Արեւելագիտութեան Ֆակուլտէտի ատենախօսական խորհրդի կողմից:

[3] Зия Буниятов, *Азербайджан в VII–IX вв.* (Ադրբեջանը Է.-Թ. դարերում), Բաքու, Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1965, էջ 4:

[4] Наилия Велиханлы, "Еще Раз О Пределах Азербайджана в IX–X вв." (Դարձեալ Ադրբեջանի սահմանների մասին Թ.-Ժ. դարերում), *Вопросы Истории*, 2017:9, էջ 110–9:

[5] Նոյն, էջ 110:

[6] Նոյն, էջ 112: «Верхний Азербайджан» (Վերին Ադրբեջան) հասկացութիւնը դիտարկում է յոդուածգրի կողմից նաեւ որպէս «Северный Азербайджан» (Հիւսիսային Ադրբեջան):

[7] *Kitab al-Boldan Auctore Ahmed ibn abi Jakub ibn Wadhih al-Kitab al-Jaqubi*, Biblioteca Geographorum Arabicorum, pars VII, ed. Michael J. de Goeje, Lugduni Batavorum, 1892, էջ 271:

[8] Ընդգծումը մերն է:

[9] Խարլամպիյ Բարանովը العليا ['ulyā] ածականը (ար. սեռ. أعلى ['a'lā]) թարգմանել է՝ «самый высокий» (ամենաբարձր), «высший» (բարձրագոյն) կամ «верховный» (գերագոյն) տարբերակներով (Харлампий Баранов, *Большой Арабско-Русский Словарь в Двух Томах*, (Արաբերէն-ռուսերէն մեծ բառարան երկու հատորով), *Հտր. 2*, 12րդ հրատ., ստերէօտիպ, Մոսկուա, 2008, էջ 536:

[10] *Liber Viarum et Regnorum, Auctore Ibn Khordadhbeh*, Biblioteca Geographorum Arabicorum, pars VI, ed. Michael J. de Goeje, Lugduni Batavorum, 1889, էջ 119–20:

[11] *Viae Regnorum, Auctore al-Istakhri*, Biblioteca Geographorum Arabicorum, pars I, ed. Michael J. de Goeje, Lugduni Batavorum, 1870, էջ 181:

[12] *Viae et Regna, Auctore Ibn Hauqal*, Biblioteca Geographorum Arabicorum, pars II, ed. Michael J. de Goeje, Lugduni Batavorum, 1870, էջ 238:

[13] "Сведения Арабских Писателей О Кавказе, Армении и Адербейджане" (Արաբ գրողների տեղեկութիւնները Կովկասի, Հայաստանի եւ Ադրբեջանի մասին), *Сборник Материалов для Описания Местностей И Племен Кавказа*, թողարկում 32, մաս VI, Ալ-Եակուբի, թարգ.՝ Ն.Ա. Կարաուլով, Թիֆլիս, 1903, էջ 57:

[14] *Արաբ Մատենագիրներ Թ.–Ժ. Դարեր, Օտար Աղբիւրները Հայաստանի եւ Հայերի Մասին, Հտր. 16 (Արաբական Աղբիւրներ. Գ.)*, ներած., բնագր. թարգմ.՝ Ա. Տէր Ղեւոնդեան, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն 2005, էջ 473:

[15] Ибн Хордадбех, *Книга Путей И Стран* (Գիրք ճանապարհների ու թագաւորութիւնների մասին), թարգ. արաբերէնից, մեկնաբանութիւնները, հետազօտութիւններն ու քարտէզները Ն.Մ. Վելիխանովայի, Բաքու, Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1986, 433 էջ:

[16] Կրկնօրինակւում են երկու հարֆերը՝ ر [rā'] եւ վերջնական դիրքով ة [tā' marbūṭah]: Նմանութիւն են ցուցաբերում եւս երկուսը՝ միջանկեալ դիրքով مـ [mīm]ն ու սկզբնական դիրքով غـ [ġayn]ը, միայն եթէ ընդունենք, որ դրանց տարբերիչ կէտերը յետագայ գրագիրների կողմից սխալ են տեղադրուել: Միեւնոյն է, մի տեղանունը միւսով փոխարինելու որեւէ հիմք չկայ: Մանաւանդ որ այստեղ պակասում է ذ [dāl] հարֆը, փոխարէնը աւելանում է ا ['alif]ը: Ի վերջոյ, Մարաղան (المراغة [al-Marāġa-t]) արաբագիր գրականութիւնում միշտ որոշեալ յօդով է հանդէս գալիս մինչդեռ Պարտաւի (برذعة [Barḍa'a-t]) դէպքում երբեք չես հանդիպի այդ ال [al-] մասնիկը:

[17] «...вся прибрежная территория от Гилана (Джилана) на юге до Дербента (Баб ал-Абваба) на севере включительно называется Азербайджан» (Վելիխանովի, էջ 113-4):

[18] Rouben Galichian, *Countries South of the Caucasus in the Medieval Maps. Armenia, Georgia and Azerbaijan*, Yerevan–London, 2007, էջ 88: Միաժամանակ մենք համակարծիք ենք Ռուբէն Գալչեանի հետեւեալ խօսքերին. "Most Islamic regional maps can be considered as artistic drawings, some resembling stylized itineraries showing roads, cities and towns, with no due attention to their relative geographical distances (...) Others are aesthetic and elegant works of art" (նոյն, էջ 84):

IS IT TRUE THAT ARRĀN WAS DESIGNATED AS THE TOPONYM OF "ĀḌARBAYǦĀN AL-'ULYĀ" (UPPER AZERBAIJAN) BY EARLY MIDDLE AGES ARABIC-ISLAMIC AUTHORS?

(Summary)

ARSEN K. SHAHINYAN
a.shaginyan@spbu.ru

The article refutes the revisionist approach proposed by Azerbaijani official historiography and in particular by the current Vice-President of the Azerbaijan National Academy of Sciences, **Naila** Mamedali Gizi **Velikhanli (born 1940). Dr. Velikhanli claims** that the lands located North of the river valleys of the Lower Araxes and Lower Kur (the territory of the present-day Republic of Azerbaijan), while under domination of the Arab Caliphate (mid-7th – early 10th C.) were also named by Early Medieval Islamic authors "as the Upper Azerbaijan (Northern) or just Azerbaijan". The author speculates that the Arabic texts could be interpreted differently, based on linguistic connotations and peculiarities, and argues that the Early Medieval Islamic texts could mean a geographic location different from what Velikhanli specifies.



ԱԿՆԱՐԿՆԵՐ ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԱՀԱՄԱԼԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՐԱԴԵԱՆ
syuzmuradyan@gmail.com

Ուրարտական եւ հայկական մշակոյթների փոխկապակցութեան հիմնախնդիրը, նրա տարաբնոյթ դրսեւորումները՝ վաղուց գտնւում են արեւելագիտական, հայագիտական հետազօտութիւնների կիզակէտում: Այս հարցերի լուսաբանմանն առաւել հանգամանալից անդրադարձել է Գէորգ Տիրացեանը: Գիտնականը ուսումնասիրելով ուրարտական եւ նրան յաջորդող մշակոյթին բնորոշ մի շարք համեմատելի սկզբունքներ (բնակավայրերի ու քաղաքների տեղանքի ընտրութիւն, ամրաշինութիւն, ճարտարապետական ձեւեր, շինարուեստ եւն.) այն կարծիքն է յայտնել, որ վերոյիշեալ ոլորտներում ակնյայտ են աւանդոյթների շարունակականութիւնը, ժառանգականութիւնը[1]: Մասնաւորապէս, ուշադրութիւն է դարձուել պալատական շինութիւններում եւ կրօնական կառոյցներում տեսանելի զուգահեռականութեանը, ինչը, հեղինակի համոզմամբ՝ պէտք է դրսեւորուէր յատկապէս անտիկ Հայաստանի որոշ պաշտամունքային յուշարձաններում:

Այս տեսակէտի արդարացիութիւնը դրսեւորուեց Երուանդաշատի հնագիտական համալիրի[2] պեղումների ընթացքում, որտեղ ուրարտական մշակոյթի առկայութիւնն այսօր արդէն կարող է գնահատուել որպէս փաստ: Երուանդաշատի «Որսորդական Պալատ»ի տարածքում տարուած հնագիտական պեղումների շնորհիւ վերհանուեցին մի շարք արժէքաւոր տուեալներ, այդ թւում՝ Անտիկ Հայաստանի վաղագոյն՝ Երուանդունեաց հարստութեան վերջին արքայի՝ Երուանդ Վերջինի (Ք.ա. 222-201) յայտնի շինարարական գործունէութեան վերաբերեալ[3]: Համալիրի պեղուող հատուածը գտնւում է Արարատեան դաշտավայրի արեւմտեան





հատուածում, Արաքս եւ Ախուրեան գետերի խառնարանից քիչ հարաւ-արեւելք, Արաքսի ձախ ափին գտնուող դարաւանդի վրայ (ՀՀ Արմաւիրի մարզ, գ. Երուանդաշատ)[4]:

2005-14՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Երուանդաշատի հնագիտական արշաւախումբը (ղեկավար՝ պ.գ.թ. Ֆելիքս Տէր-Մարտիրոսով) սիստեմատիկ պեղումներ նախաձեռնեց համալիրի այսպէս կոչուած «Որսորդական Պալատ»ում: Այս մեծածաւալ, բազմատարր կառոյցի վաղագոյն՝ կենտրոնական մասը յատակագծում քառակուսի է (24,40x24,80մ), շարուած կիսամշակ խոշոր գետաքարերից եւ արտաքուստ օժտուած է կանոնաւոր գծային եւ անկիւնային որմնահեցերով: Պալատի կենտրոնական սրահում ի յայտ եկան երեք բազալտէ խարիսխներ, որոնք բացարձակապէս in situ չլինելով հանդերձ, լուսաբանում են կառոյցի ծածկի հետ կապուած խնդիրները:

Պալատին կցուած են տարաբնոյթ ճարտարապետական յաւելումներ, որոնց մի մասի պատերը եւս ամրացուած են նման ելուստներով:

Համալիրի արեւելեան թեւում բացայայտուեց 19x8մ չափսի մի այլ սրահ, որի կաւածեփ յատակի մէջ տեղակայուած էին շուրջ 36 կարաս[5]: Ինչպէս կենտրոնական համալիրին կից կառոյցներում, այնպէս էլ կարասների թւում նկատելի են ժամանակագրական որոշակի տարբերութիւններ, որոնք վկայում են ողջ պեղուած համալիրի երկարատեւ գործարկման մասին:

Դատելով յայտնաբերուած հնագիտական գտածոների (ճարտարապետական մանրամասներ, խեցեղէն եւն.) բնոյթից, ինչպէս նաեւ առկայ գրաւոր աղբիւրների տուեալներից[6], այդ գործարկման լայնոյթն ընդգրկել է Վանի Թագաւորութեան ժամանակաշրջանից՝ առնուազն մինչեւ Ք.ե. Դ. դարը[7]:

Պեղուող տարածքը վերջին տարիների ուսումնասիրութիւններում (Տէր-Մարտիրոսով) ներկայացուած է որպէս *պալատական համալիր, կառուցուած Անտառ Ծննդոց արքայական արգելոցում*: Հենց այս պալատի հետազօտութեան որոշ արդիւնքներն ու Երուանդաշատի հնագիտական համալիրի *տարրերից* երկուսի՝ Երուանդակերտի եւ *Անտառ Ծննդոց*ի թուագրութեան եւ տեղակայման խնդիրն են ընդգրկուած սոյն աշխատանքում հիմք ընդունելով պատմագիտական սկզբնաղբիւրները եւ հնագիտական հետազօտութիւնների արդիւնքները:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆ *ԱՆՏԱՌ ԾՆՆԴՈՑՈՒՄ*[8]

Երուանդաշատ հնագիտական համալիրի պալատական կառոյցի պեղումները հնարաւորութիւն ընձեռեցին բացայայտելու ուրարտա-հայկական մշակութային զուգակցման որոշակի դրսեւորումներ: Ուղղակի ուրարտական ներկայութիւնն այստեղ առկայ է որոշակի ճարտարապետական լուծումներում. մասնաւորապէս, պալատի կենտրոնական համալիրի յօրինուածքն ու շինարարական մանրամասները (յատակագիծ, գծային եւ անկիւնային որմնահեցեր, հիմնապատերի շարուածք, ճարտարապետական համամասնութիւն եւն.) ցուցադրում են դրա ակնյայտ օրինակները: Նոյն ուրարտական ծագումն ունեն պալատի կենտրոնական դահլիճի սեան երեք խարիսխները, որոնք կրկնում են Էրեբունիի եւ Արգիշ-

տիխինիլիի յայտնի ձեւերը, ինչպէս նաեւ Ալթին Թեփէի Խալդիի տաճարը երիզող սիւնախարիսները: Սեղանի խեցեղէն սպասքի ուրարտական նմուշների (Ք.ա. Է.-Զ. դդ.), տիպական բրոնզէ ճարմանդի առկայութիւնն այստեղ նոյնպէս խօսում է նման թուագրութեան արդարացիութեան մասին: Բացի այդ, նոյնպիսի ուղղակի դրսեւորումներ տեսանելի են նաեւ տնտեսական խեցեղէնում, յատկապէս՝ կարասային սրահի խոշոր գօտեզարդ կարասների մի շարք նմուշներում: Ընդ որում, այս մառանում առկայ են ոչ միայն ուրարտական, այլեւ աւելի ուշ՝ անտիկ կարասներ[9]:

Հաշուի առնելով Երուանդաշատում ուրարտական մշակութային ներկայութեան որակն ու ծաւալները, կարելի է ենթադրել որ պալատը հիմնադրուել է Վանի թագաւորութեան շրջանում: Ուրարտական բնակելի եւ ամրոցային այլ կառոյցների հետ ընդհանրութիւնից բացի, երուանդաշատեան պալատի նման ծագման մասին է վկայում նրա ուղղակի զուգահեռականութիւնը մասնաւորապէս՝ Արգիշտիխինիլիի արեւմտեան ամրոցի դահլիճի եւ այսպէս կոչուած «Կնիքակրի Տան», Օշականի ամրոցի, Բաստամի հիւսիսային շինութեան, ինչպէս նաեւ Սոլակի համաժամանակեայ բնակավայրի կենտրոնական կառոյցի ճարտարապետութեան հետ[10]:



Առկայ նիւթական տուեալները դեռեւս թոյլ չեն տալիս ճշգրտելու այս յուշարձանի ժամանակագրական բոլոր մանրամասները (կառուցման որոշակի ժամանակը, նրա «հեղինակումը» եւն.), սակայն ակներեւ է որ ուրարտական համալիրը հիմք է ծառայել յետագայի՝ Երուանդեան եւ աւելի ուշ շրջանի շինարարական գործունէութեան համար[11]:

ԵՐՈՒԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՕՆԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ուրարտա-հայկական մշակութային աղերսները տուեալ յուշարձանում ունեցան եւս մի ուշագրաւ բացայայտում. դա 2014ին, պալատի կենտրոնական համալիրի հարաւային պատին գրեթէ կից՝ ճակատային պատից 85սմ հեռաւորութեամբ տեղադրուած, 6.35x6.40մ ընդհանուր չափերով քառանկիւնի կառոյցն էր[12]: Նրա չորս անկիւններն էլ ունեն մօտ 0,5 մետրանոց ելուստներ, հարաւից՝ 0,95սմ բացուածքով դուռը տանում է դէպի միակ, 2.15x2.15մ չափերով սենեակը:

Կառոյցի շէմն ու ներքին տարածքի յատակը պատուած էին մեծ քարէ սալերով, որոնց վրայ, հիւսիսային պատին կից (մուտքից 0,85մ հեռաւորութեան վրայ)՝ պահպանուել էին նաեւ աւելի փոքր սալերից շարուած, 30սմ բարձրութեամբ քառանկիւնի մի հարթակ (զոհասեղան՞), ծածկուած կաւի եւ կրի վերադիր ծեփով:

Յատակագծային իր ողջ յօրինուածքով այս շինութիւնը ձայնակցում է ուրարտական «susi» տիպի յայտնի սրբարանների հետ (Էրեբունի, Արմաւիր, Ալթին Թեփէ, Այանիս եւն.[13]), տարբերուելով դրանցից միայն իր համեստ չափերով եւ, ինչը կարեւոր է՝ տեղադրութեան մանրամասներով, նրա արհեստականութեամբ: Այսպէս, այն կառուցուած է պալատի վաղագոյն համալիրի պատից աննշան հեռաւորութեան վրայ, փակելով նրա ճակատի գրեթէ ողջ հարաւ-արեւելեան հատուածը: Ճարտարապետական այս յաւելումը տեղադրելու նպատակով՝ փակուել է նաեւ համալիրի արեւելեան թեւը տանող դռներից մէկը: Որոշակի տարբերութիւն է նկատւում պալատի եւ կից կառոյցի շինարարական եղանակաձեւերի խնդրում եւս: Ասուածը վկայում է այն մասին որ «susi»ատիպ աշտարակը կառուցուել է պալատի տեւական շահագործման աւելի ուշ փուլում: Նման իրողութիւն բացայայտուել է նաեւ Վիրքում (Սամադլօ), որտեղ նոյնպէս Ք.ա. Ը.-Է. դարերի ամրոցում, աւելի ուշ՝ Ե.-Դ. դարերում, կառուցւում է աշտարակաձեւ սրբարան[14]:



Դատելով քննուող շինութեան տարածքում յայտնաբերուած հնագիտական նիւթի, մասնաւորապէս՝ խեցեղէնի, ժամանակագրական միատարրութիւնից (Ք.ա. Բ. դարի սահմաններ), կարելի է ենթադրել, որ այն պատկանում է Երուանդ Վերջինի օրօք ուրարտական պալատում կատարուած յաւելումների թուին: Ըստ երեւոյթին, արքան պալատը վերագործարկելով, նրան է կցել իր նախորդ մայրաքաղաք-նստավայր Արմաւիրի տաճարական համալիրի կրկնօրինակ-«մանրակերտը», ապահովելով հին ու նոր նստավայրերի սրբարանների յօրինուածքային կապը[15]: Տրամաբանական է ենթադրել, որ Երուանդն այստեղ ձեռնարկած կառոյցներում օգտագործել է իր նախկին նստավայրում շարունակաբար գործարկուող (ուրարտական շրջանից՝ մինչեւ անտիկը ներառեալ) հին սրբարանի ճարտարապետական յօրինուածքը:

Ուրարտական այս աւանդոյթների փոխադրումը դաստակերտ՝ ուղղակիօրէն կապուած է «արմաւիրեան ժառանգութեան» հետ, քանի որ Վանի թագաւորութեան անկումից յետոյ Արմաւիրը, որոշ քաղաքաշինական եւ այլ վերափոխութիւններով հանդերձ, մնաց այն նշանաւոր կենտրոնը, որտեղ շարունակուեց նոր՝ Երուանդունեաց պետութեան հոգեւոր եւ վարչական կեանքի զարգացումը:

Վերադառնալով ուրարտական Երուանդաշատի խնդրին, անհրաժեշտ է նկատել որ Բիայինիլիի տիրակալների կողմից Արարատեան Դաշտավայրի քննուող հատուածի ընդգրկումը թագաւորութեան սահմաններում՝ գնահատելի է որպէս օրինաչափ: Արաքսի եւ Ախուրեանի հովիտների հաղորդակցային ներուժը, դրանից բխող ռազմական եւ տնտեսական հնարաւորութիւնները չէին կարող անտեսուել ուրարտացիների կողմից, թէ՛ Արարատեան Դաշտավայրի՝ «Ուազա երկրի», թէ՛ յետագայում Շիրակի՝ «Էրիախիի» հպատակեցման սկզբնական փուլում: Կարելի է ենթադրել, որ Երուանդաշատի շրջակայքի, Արաքս-Ախուրեան գետախառնուրդի իւրացմամբ ամփոփուել է ողջ Արարատեան Դաշտավայրում ուրարտական գերակայութեան վերջնական հաստատման գործընթացը:

ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՒ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԻ ՇՈՒՐՋ

Այժմ՝ որոշ նկատառումներ *Անտրա Ծննդոցի* եւ Երուանդակերտի տեղակայման վերաբերեալ: Երուանդաշատի յուշարձանային համալիրի առանձին միաւորների աշխարհագրութեան շուրջ առարկայական անդրանիկ ուսումնասիրութիւնը կատարել է դեռեւս Բաբկէն Առաքելեանը: Ըստ նրա՝ Երուանդաշատ քաղաքն իր հիմնադրման սկզբնական փուլում գրաւել է ներկայիս Բագարան գիւղի մօտակայքում գտնուող բլրակը, ապա ատիճանաբար ընդարձակուել է հիւսիսային եւ հարաւային դարաւանդների, ինչպէս նաեւ Արաքս-Ախուրեան

գետախառնուրդից դէպի արեւմուտք ընկած բլրախմբի ուղղութեամբ: Իսկ Երուանդակերտը հեղինակը տեղակայում էր Ախուրեան գետի ձախ ափին՝ ներկայիս սահմանային «երկաթէ կամրջի» հարեւանութեամբ, որտեղ տարուած շրջայցերի ընթացքում՝ նա արձանագրել էր անտիկ շրջանին վերաբերող կառոյցների աւերակներ[16]:

Տէր Մարտիրոսովի կարծիքն այլ է. Երուանդաշատը նա տեղադրում է Արաքս գետի աջ ափին խոյացող ժայռին, իսկ Երուանդակերտը տեսնում է Արաքս-Ախուրեան գետախառնուրդից արեւմուտք, քաղաքի տարածքի սահմաններում, գնահատելով այն որպէս նրա թաղամասը: Ինչ վերաբերում է յուշարձանային համալիրի պեղուող տարածքին, ապա այն որակում է որպէս Երուանդ արքայի որսորդական արգելոցի՝ *Անտառ Ծննդոց*ի տարածքում կառուցուած պալատ[17]:

Այստեղ մանրամասնօրէն չանդրադառնալով Երուանդաշատ քաղաքի տեղակայման հարցին, նշենք միայն որ մենք կիսում ենք այդ հարցի՝ Տէր Մարտիրոսովի տեսակէտը, որը հիմնաւորուած է հեղինակի կողմից անցկացուած տեղազննումների արդիւնքներով, ինչպէս նաեւ լիովին համահունչ է Մովսէս Խորենացու համապատասխան հաղորդմանը[18]:

Ինչ վերաբերում է *Անտառ Ծննդոց*ին ու Երուանդակերտին, ապա վերջիններիս տեղադրութեան քննութիւնից առաջ՝ տեղին է վերյիշել դրանց շուրջ Խորենացու տեղեկութիւնները. մասնաւորապէս, *Անտառ Ծննդոց*ի մասին խօսելիս, Խորենացին նկատում է.

> Տնկում է նաեւ մեծ անտառ գետի հիւսիսային կողմում, պարիսպներով ամրացնում է եւ ներսն արգելում է արագ այծեամներ, եղնիկների եւ եղջերուների ցեղեր, ցիռեր, վարազներ, որոնք աճելով ու բազմանալով անտառը լցրին, եւ նրանցով թագաւորն ուրախանում էր որսի օրերին: Անտառը նա կոչում է Ծննդոց Անտառ[19]:

Ապա, անդրադառնում է Երուանդակերտ ձեռակերտին.

> Ինձ քաղցր է պատմել նաեւ գեղեցիկ Երուանդակերտ դաստակերտի մասին, որ նոյն Երուանդը շինեց գեղեցիկ եւ չքնաղ յօրինուածքով: Որովհետեւ մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչութեամբ եւ պայծառ շինութիւններով, ինչպէս աչքի բիբը, իսկ բնակչութեան շուրջը կազմում է ծաղկոցներ եւ բուրաստաններ, ինչպէս բիբի շուրջը աչքի միւս բոլորակը: Իսկ այգիների բազմութիւնը նմանում էր խիտ արտեւանունքի գեղեցիկ գծին, որի հիւսիսային կողմի կամարաձեւ դիրքը իսկապէս համեմատւում էր գեղեցիկ կոյսերի

յօնքերին: Իսկ հարաւային կողմից հարթ դաշտերը [յիշեցնում էին] ծնօտների գեղեցիկ ողորկութիւնը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրութիւններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եւ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայեացքն ուղղել է թագաւորանիստ բարձրաւանդակի վրայ[20]:

Խորենացու նկարագրութեան եւ տեղագրական քննութեան տուեալների համադրութիւնը յստակեցնում է *Անփառ Ծննդոց*ի տեղակայման հարցը: Ակներեւաբար, արգելոցը գտնւում էր Արաքսի ձախ՝ հիւսիսային ափին եւ արեւելք-արեւմուտք առանցքով տարածւում երկու գետերի խառնարանից՝ մինչեւ Արաքսի մօտակայ արեւելեան գետակապը («Շախվառուտի հանդերի» սահմանը): Հիւսիսից՝ այն պէտք է սահմանափակուէր ներկայիս Բագարան եւ Երուանդաշատ գիւղերի տարածքները շրջապատող ժայռոտ բարձուքներով: Եւ գրաւոր ու տեղագրական տեղեկատուութեան լոյսի ներքոյ՝ միանգամայն արդարացի է դառնում Տէր Մարտիրոսոուի կարծիքն անտառի տեղակայման վերաբերեալ: Միաժամանակ, սակայն, որոշակի տարակուսանք է առաջացնում անտիկ Երուանդաշատի պեղուող հատուածի՝ լոկ որպէս «որսորդական պալատի» նրա բնորոշումը:

Նախեւառաջ, Պատմահօր նկարագրութեան բերուած հատուածներից բխում է որ թէ՛ *Անփառ Ծննդոց*ը եւ թէ՛ Երուանդակերտ դաստակերտի կառուցապատուած հատուածն ընկնում են «**գետի**» (իմա՝ Արաքսի) նոյն հիւսիսային ափին: Բացի այդ, դատելով Առաքելեանի եւ նրան ուղեկցած հնագէտների շրջագայութիւնների տուեալներից, ուսումնասիրուած պալատի շրջակայքում դեռեւս 1970ականներին առկայ էին կոթողային այլ շինութիւններ, որոնց թւում՝ նաեւ մի կառոյց, որն իր չափերով եւ ճարտարապետական յօրինուածքով լիովին կրկնում էր 2005-14ին պեղուածը[21]: Վերջինս, ըստ ականատես մասնագէտների հաղորդումների՝ գտնւում էր «Որսորդական Պալատ»ից մօտ 100մ դէպի հիւսիս: Նոյն տարածքում առկայ էին նաեւ զանգուածեղ այլ շինութիւնների հետքեր, կառուցուած «պալատ»ի հետ լիովին նոյնացող շինարարական լուծումներով: Ցաւօք, այս կառոյցների ճնշող մեծամասնութիւնը աւերուել է 1980ականների վերջի հողային հարթեցումների ընթացքում: Առկայ սահմանափակ հնագիտական տեղեկատուութեամբ՝ դժուար է պեղուած «պալատ»ն ու յիշեալ աւերուած կառոյցները վստահաբար միաւորել նոյն ժամանակագրական սահմաններում[22]: Սակայն, յիշեալ հարթեցումների տարածքում գրանցուած վերգետնեայ անտիկ գտածոները թոյլ են տալիս ընդունել նման նոյնականութեան հնարաւորութիւնը:

Ասուածից ելնելով, պեղուած ընդարձակ տարածքի եւ անցեալում գրանցուած բազմաքանակ ճարտարապետական մնացորդների ընկա-

լումը մէկ «որսորդական պալատ»ի տարր՝ հազիւ թէ արդարացուած լինէր: Փորձենք հիմնաւորել մեր այս ընկալումը.

- Անկախ Երուանդի շինարարական գործունէութեան նշանակալի ծաւալներից, վերը նշուած կառոյցների զբաղեցրած ընդհանուր տարածքը զգալիօրէն գերազանցում է որսորդական պալատի համար տրամաբանօրէն ընդունելի չափերը.
- Ինչպէս ձեռակերտը, այնպէս էլ որսորդական արգելոցն, անշուշտ, դասելի են արքայապատկան հողատարածքների շարքում եւ դրանց սերտ հարեւանութիւնը միանգամայն տրամաբանական կը լինէր[23].
- Պեղուած համալիրում բացայայտուած գինու մառանի (մառանների՞) նշանակալի ծաւալներն ընկալելի են առաւելապէս այգեգործական-արտադրական գործառոյթի (ագարակ, ձեռակերտ) այլ ոչ թէ միայն սպառողական բնոյթի համալիրի (պալատ) պահանջների բաւարարման ենթահողով[24].
- Ուսումնասիրուող յուշարձանի տեղակայութիւնը իրապէս համապատասխանում է Երուանդակերտ ձեռակերտի եւ Երուանդաշատ մայրաքաղաքի աշխարհագրական յարաբերակցութեան վերաբերեալ Խորենացու ակնարկին (...*«Եւ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայեացքն ուղղել է թագաւորանիստ բարձրաւանդակի վրայ»*):
- Խորենացու հաղորդման մէջ ակնարկուող արքայական ձեռակերտի եւ *Անտառ Ծննդոց*ի հարեւանութիւնը (ԽՍ-ԽԲ) թոյլ է տալիս 2005-14ին պեղուած համալիրը եւ նրա հարեւանութեամբ նախկինում բացայայտուած կառոյցները համադրելու Երուանդակերտ ձեռակերտի բնակելի (պալատական) համալիրի հետ:

Ուշագրաւ է, որ Խորենացու նկարագրութիւնից բխում է Երուանդակերտի երկմաս կառուցուածքը՝ վերջինիս տեղակայումը գետի երկու ափերին: Կարելի է ենթադրել, որ այդ բաժանումը կատարուել է ելնելով ձեռակերտի տարրերի գործառութային առանձնայատկութիւններից: Արաքսի ձախ, հիւսիսային ափին, ընդհուպ *Անտառ Ծննդոց*ին կից, պէտք է գտնուէր արքայական նստավայրը՝ ձեռակերտի կառուցային *կորիզը* (Խորենացու յիշատակած *«աչքի բիբը»*), իսկ աջ ափին՝ վերջինիս գիւղատնտեսական-արտադրական յենքը: Երուանդաշատի յուշարձանային համալիրի տեղանքի քննութիւնը գետի հարաւային ափին ի յայտ է բերում նշանակալի մի հողատարածք, որը միանգամայն բարենպաստ պէտք է լինէր տարաբնոյթ գիւղատնտեսական գործունէութեան համար (Պատմահօր *«հարաւային կողմից հարթ դաշտերը»*):

Ամփոփելով վերը նշուածը, կարելի է եզրակացնել որ յուշարձանահամալիրի պեղուած հատուածը Երուանդակերտի պալատական համալիրն է, կառուցուած արքայական որսատեղիի՝ *Անտառ Ծննդոց*ի հարեւանու-

թեամբ[25]: Իսկ ձեռակերտի ագարակային մասը գտնուել է պալատի դիմաց, Արաքսի աջ ափին:

Երուանդ Վերջինի քաղաքաշինական գործունէութեան վերլուծութիւնից կարելի է ենթադրել, որ արքայի նախաձեռնութիւններն ունեցել են յաջորդական բնոյթ: Ելնելով ծրագրուած աշխատանքների ծաւալի եւ նրանց բարդութեան տրամաբանութիւնից, կարելի է ենթադրել որ նոր արքայանիստի՝ Երուանդաշատի հիմնադրմանը նախորդել է Երուանդակերտ դաստակետի կառուցումը երբեմնի ուրարտական պալատական համալիրի վերագործարկմամբ: Նման մեկնակէտի առկայութեան պարագայում կարելի էր վերահսկել նոր քաղաքի կառուցման աւելի տեւական գործընթացը: Սակայն, այդ կապակցութեամբ Խորենացու հաղորդումից, ասես՝ բխում է այլ յաջորդականութիւն. արքան նախ արքունի նստավայրը Արմաւիրից տեղափոխում է Երուանդաշատ, ապա տնկում *Անտառ Ծննդոց*ը եւ յետոյ միայն կառուցում Երուանդակերտ ձեռակերտը[26]: Տուեալ անհամապատասխանութիւնը գուցէ եւ բխում է այն հասկանալի հանգամանքից որ Պատմահայրը Երուանդի նախաձեռնութիւնների շարադրութիւնը ներկայացրել է ըստ վերջիններիս կարեւորութեան եւ ոչ ըստ ժամանակագրական յաջորդականութեան:

Դաստակերտի եւ մասնաւորապէս՝ արքայական հանգստավայր - *պարադիզի* ընդհանուր գաղափարը, ունենալու աքեմենեան[27] (աւելի ստոյգ՝ հինարեւելեան) ակունքներ, չպէտք է խորթ լինէր նաեւ բուն ուրարտական մշակութային դաշտին, որն, ինչպէս յայտնի է, հանդիսացել է աքեմենեան շինարարական-քաղաքաշինական աւանդոյթի ձեւաւորման հիմնատարրերից մէկը: Ինչ վերաբերում է յետուրարտական Հայաստանին, ապա, հնագիտական-ճարտարապետական տուեալների վկայութեամբ՝ նախորդող մշակոյթի ազդեցութիւնն այստեղ անմիջական բնոյթ էր կրում: Վերջինիս ուղղակի դրսեւորումները երեւան եկան նաեւ Երուանդաշատի համալիրի տուեալ միաւորի պեղումների ընթացքում:

Այսպիսով, Երուանդակերտ ձեռակերտի քննութիւնն ի յայտ է բերում նրա ուրարտական հիմքերը եւ յաւելեալ լոյս է սփռում ուրարտա-հայկական մշակութային ժառանգականութեան խնդիրներին: Յուշարձանի յետագայ ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն կ'ընձեռեն խորացնելու մեր գիտելիքներն ինչպէս նշուած մշակութային առնչութիւնների, այնպէս էլ Երուանդեան Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի հիմնահարցերի վերաբերեալ[28]:

[1] Գէորգ Տիրացեան, «Ուրարտու եւ Հայաստան», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1978:1, էջ 43-60. նաեւ՝ G. Tirac'yan, "Armawir", *Revue des Études Arméniennes, T. 27*, 1998-2000, էջ 176-80:

[2] Խօսելով համալիրի մասին, մենք նկատի ունենք հայկական գրաւոր աղբիւրներում արձարձուած, հնագիտօրէն յայտնի եւ դեռեւս չուսումնասիրուած չորս յուշարձան.- բուն Երուանդաշատ քաղաքը, Բագարան տաճարական կենտրոնը, Երուանդակերտ արքայական ձեռակերտն ու «Ծննդոց Անտառ» *պարադիզ*-որսատեղին:

[3] *Հայ ժողովրդի Պատմութիւն, Հատ. 1*, Երեւան, ՍՍՀ ԳԱ Հրատ., 1971, էջ 514-16. նաեւ՝ *From Urartu to Armenia. Florilegium G. Tirats'yan, V. 3*, (ed. by R. Vardanyan), 2003, էջ 68-9: Երուանդ Վերջինի մասին ակնարկում է նաեւ Ստրաբոնը, յայտնելով, որ Երուանդը (Օրոնտէս)՝ հռչակաւոր եօթ պարսիկներից մէկի՝ Հիւդարնէսի շառաւիղը, իշխող գերդաստանի վերջին ներկայացուցիչն էր (Strabo, *Geogr.*, XI, 14, 15): Երուանդի գահընկեցութիւնից յետոյ, նրան յաջորդում է Արտաշէսը (Արտաշէս Ա, Ք.ա. 189-160), որը, դաւելով վերջինիս արձանագրութիւններից՝ ծագումով նոյնպէս Երուանդունի էր:

[4] Յուշարձանի պեղումների հանգամանալից նկարագրութիւնը տե՛ս՝ Փ. Տեր-Մարտիրոսով, "Երուանդաշատ", *Պատմաբանասիրական Հանդէս*, 2008:1, էջ 4-19. նաեւ՝ Փ. Տեր-Մարտիրոսով, "Երուանդաշատ", *«Անտառ Ծննդոց». Յօդուածների ժողովածու*, խմբ.՝ Է. Մինասեան, Հ. Պետրոսեան, Հ. Մելքոնեան, Երեւան, «ՎԵԼԼԱՍ Պրինտ», ԵՊՀ Հրատ., 2015, էջ 33-54:

[5] Կարասային սրահի եւ կարասների մանրամասն նկարագրութիւնը տե՛ս՝ Ա. Գաբրիէլեան, «Երուանդաշատի Պալատական Համալիրի Կարասային Սրահը», *«Անտառ Ծննդոց». Յօդուածների ժողովածու*, էջ 117-31:

[6] Փ. Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, Հայաստան Հրատ., 1968, էջ 219:

[7] Ֆ. Տէր Մարտիրոսովի վերոյիշեալ աշխատանքներում պեղուող յուշարձանի գործարկումն անտիկ շրջանի սահմաններում՝ հասցւում է մինչեւ Ք.յ. Ա. դարի սկիզբը: ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտութեան բաժնի վարիչ Մ. Զարդարեանի կողմից հնագիտական նիւթի որոշ թուագրական վերանայումները տեղիք են տալիս ենթադրելու, որ ոչ միայն պեղուող համալիրի հատուածի, այլեւ Երուանդաշատ քաղաքի տուեալ տարածքի աշխուժ կենսագործունէութիւնը զգալիօրէն աւելի տեւական են եղել:

[8] Այստեղ *անտառ ծննդոց*ի յիշատակումը բխում է նախորդ հրատարակութիւններում արմատաւորուած յուշարձանի ընկալման եւ տեղակայման «աւանդոյթից»: Երուանդաշատի յուշարձանահամալիրի հետազօտուած տարածքի մեր գնահատականը տե՛ս՝ ստորեւ:

[9] Կարասային սրահի եւ կարասների մանրամասները տե՛ս՝ Գաբրիէլեան:

[10] А. Мартиросян, *Арташатский*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, նկ. 41. նաեւ՝ Կ. Ղաֆադարեան, *Արգիշտիխինիլի Քաղաքի Ճարտարապետութիւնը*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, գծ. 9, 21. նաեւ՝ С. А. Есаян, А. Калантарян, *Ошакан*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1988, աղ. III. նաեւ՝ W. Kleiss. *Bastam I, Band IV, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1972-*

1975, Berlin, Abb. 17, 73. նաեւ՝ Հ. Աւետիսեան, Ա. Բոբոխեան, *Ուրարտուի Հնագիտութիւն*, Երեւան, 2010, գծ. 21, 24, 28. նաեւ՝ Ա. Պետրոսեան, Ռ. Դան, եւ այլոք, «Կոտայքի Հետախուզման Ծրագրի 2016 թ. Հիմնական Արդիւնքները», *Մեծամօրեան Ընթերցումներ, Գիւրական Յօդուածների Ժողովածու*, Երեւան, Պատմամշակութային Արգելոց-Թանգարանների եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութեան, ՊՈԱԿ Հրատ., 2017, նկ. 1. նաեւ՝ K. Jakubiak, "Argishti I in the Arax Valley: Consequences of the Conquest," *Polish Archaeology in the Mediterranean*, 2017:XXVI/1, էջ 578-79:

[11] Իդէպ, յետուրարտական գործարկման հետքեր առկայ են նաեւ Սոլակի յուշարձանում (Պետրոսեան եւ այլոք):

[12] Չափագրող ճարտարապետ Հ. Կիւրեղեան:

[13] I. Karapetyan, "The Susi – Temple of Argishtihinili-Armavir," *Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies*, 2010:2(V), էջ 36-40. նաեւ՝ W. Kleiss, *Zur Rekonstruktion des Urartäischen Tempels*, Istanbuler Mitteilungen, Band 39, 1989, էջ 265-68. նաեւ՝ Tugba Tanyeri-Erdemir, "The Temple and the King: Urartian Ritual Spaces and their Role in Royal Ideology," *Culture and History of the Ancient Near East, V. 26*, Leiden, 2007, T. 1, 2:

[14] F. Knauss, "Ancient Persia and the Caucasus," *Iranica Antiqua*, 2006:XLI, էջ 89, fig. 9:

[15] Արգիշտիխինիլի-Արմաւիրի «susi»ի պեղումները հաստատապէս վկայում են անտիկ շրջանում վերջինիս աշխուժ գործարկման մասին (Karapetyan): Նոյնը կարելի է պնդել նաեւ Էրեբունիի համապատասխան տաճարի մասին: Այսպիսով, Երուանդի նման նախաձեռնութիւնը չպէտք է արտասովոր ընկալուէր:

[16] Բարկէն Առաքելեան, «Որտեղ Են Գտնուել Երուանդաշատ Եւ Երուանդակերտ Քաղաքները», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1965:3, էջ 10-12:

[17] Тер-Мартиросов, էջ 41-45:

[18] Մ. Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1981, Գլուխ ԽԱ:

[19] Խորենացի, Գլուխ ԽԱ:

[20] Խորենացի, Գլուխ ԽԲ:

[21] A. Kanetsian, *Tipi di Constrazione e Materiali Edilizi. Ai Piedi dell' Ararat. Cietta' e Insediamenti nell'Armenia di eta' Classica*, Թորինo, 1998, էջ 41:

[22] Հաշուի առնելով յուշարձանի պեղուած տարածքում նշանակալի ուրարտական մշակութային ներկայութեան փաստը, միանգամայն հնարաւոր է որ վերոյիշեալ աւերուած կառոյցները եւս հիմնադրուած լինէին նախաերուանդեան շրջանում ու գործարկուէին յետագայում եւս:

[23] Այս առումով, խնդրայարոյց է Տէր Մարտիրոսովի տեսակէտը, թէ Երուանդակերտը փաստօրէն եղել է Երուանդաշատի թաղամասերից մէկը (Тер-Мартиросов, էջ 43-4): Քաղաքային համայնքի (Յակոբ Մանանդեան, *Արմաւիրի Յունարէն Արձանագրութիւնները Նոր Լուսաբանութեամբ*, Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1946, էջ 18, նկ. 4, էջ 23, նկ. 5), համապատասխանաբար՝ նաեւ քաղաքային համայնական սեփականութեան առկայութեան պա-

րագայում՝ տարբեր պատկանելիութեան հողատարածքների նման «սերտաճումը» հազիւ թէ ընդունելի լինէր:

[24] Համալիրի պեղուած հատուածի մառանում գտնուել է 36 մեծ կարաս, որոնցից իւրաքանչիւրի տարողութիւնը առնուազն 250-300 լիտր է: Անգամ կարասների ծաւալի համեստ հաշուարկի պարագայում՝ այս մէկ մառանում պէտք է ամբարուած լինէր շուրջ 9-10 տոննա գինի: Ենթադրութիւնն առ այն որ կարասների մի մասը կարող էր օգտագործուել նաեւ այլ մթերքի ամբարման համար (հացահատիկ, ալիւր եւն.) իրատեսական չէ՝ ելնելով տարբեր մթերատեսակների պահպանութեան պահանջներից (M. Zardaryan and R. Hovsepyan, "The Agriculture of Western Syunik, Armenia in the Light of Archaeological and Archaeological Data (Preliminary Study on the Economy of Early Yervandid Settelments)", *Bridging Times and Spaces. Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies. Honouring G. Areshyan* (P. Avetisyan, Y. Grekyan editors), Archaeopress Archaeology, Oxford, 2017, էջ 407-20:

[25] Նման հարեւանութիւնը, թերեւս, կ'ունենար նաեւ զուտ կիրառական նկատառումներ, զուգակցելով արքայի կենցաղի եւ ժամանցի ոլորտները:

[26] Խորենացի, Գլուխ ԽԱ, ԽԲ:

[27] Тер-Мартиросов, *Ервандашат*, էջ 12-13:

[28] Յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում Երուանդաշատի արշաւախմբի հնագէտ եւ ճարտարապետ իմ գործընկերներին՝ Ա. Պարսամեանին, Ա. Գաբրիէլեանին, Լ. Միքայէլեանին, Ա. Խեչոյեանին, Հ. Կիւրեղեանին, պեղումների իրագործման եւ հնավայրի հանրահռչակման խնդրում ունեցած մեծ ներդրման համար:

SOME THOUGHTS ON THE TOPOGRAPHY, CHRONOLOGY AND CULTURAL ASPECT OF YERVANTASHAD

(Summary)

SUSANNA MOURADYAN
syuzmuradyan@gmail.com

The study of the palatial construct at the archeological site of Yervantashad, located in the trans-Araxes region, has uncovered new qualitative facts regarding the cultural links between Urartu and Armenia in the second century BC. The latest explorations at the site have uncovered evidence that during the Orontid dynasty steps were taken to restore and reuse the Urartian palace. One of the steps was the addition of a Susi-type, tower-shaped sacred place next to the palace.

The idea of renovating and reusing the palace is linked to the plans of Yervant the Last, who wanted to relocate his capital as well as certain Urartian religious/architectural features from Armavir to this location.

The article outlines these facts and argues that, based on an examination of the historico-topographic features of the excavations conducted next to the "Andar Dzenentots" kingly paradise, the latter was a part of Yervantagerd's palatial compound, and not a palace for hunting; the compound's backyard was probably on the other side of the river Araxes.

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐՏԱԳՆԱՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՃԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՒ ՋՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ (ԱՆԵԿԴՈՏՆԵՐՈՒՄ)[1]

ԱՐՄԷՆ Շ. ՍԱՐԳՍԵԱՆ
armensargg@gmail.com

Գեղարուեստական գրականութեան մէջ ծաղր ու ծիծաղով կեանքի դռները բացելը եւ ընթերցողին անկաշկանդ ներս տանելը հեշտ գործ չէ: Իսկ փոքր կառուցուածքում ծիծաղի վարակիչ լեզուով մարդկութեանը յուզող խնդիրներին հաղորդակից դարձնելը միշտ էլ ամենադժուարն է եղել. աւելին՝ շատ ու շատ գրողների համար՝ անհասանելի: Դա հաստատւում է թէ՛ հայ, թէ՛ համաշխարհային գրականութեան մէջ երգիծաբանների սակաւաթիւ լինելու փաստով:

Ժողովուրդը հազարամեակների ընթացքում բիւրեղացրած իր պատկերաւոր խօսքով, փոքրածաւալ բանարուեստի ստեղծագործութիւններում տարատեսակ միջոցների եւ հնարանքների օգտագործմամբ ինքնաբուխ ծիծաղ առաջացնելու կենսափորձով խօսքարուեստի նուիրեալներին ուսուցանում է դրանցից օգտուելու գաղտնիքներն ու կիրառութեան բանալին:

Ժողովրդական բանաւոր երգիծանքը վաղնջական ժամանակներից է գալիս (առաջին պատառիկներին հանդիպում ենք նոյնիսկ Փաւստոս Բուզանդի *Հայոց Պատմութիւն* գրքում, որի վեցերորդ դպրութեան Ը. գլխում Յոհան եպիսկոպոսին վերաբերող դրուագներից մէկում պատմիչը ներկայացնում է փառահեղ ձիուն տիրանալու նպատակով եպիսկոպոսի պարտադրմամբ երիտասարդ աւազակ ձիաւորին ձիուց իջեցնելու եւ քահանայ ձեռնադրելու զուարճալի պատմութիւնը[2]:

Արձակի այլ տեսակների շաղախում երգիծապատումային ակնառու դրսեւորումները տեղ են գտել յատկապէս հայ միջնադարեան[3] զրոյցներում եւ Մխիթար Գօշի[4] ու առաւելապէս Վարդան Այգեկցու[5] առակների ժողովածուներում:

Կեանքի հետ համընթաց քայլող, իրականութեան մէջ կատարուող փոփոխութիւններին անմիջապէս արձագանգող, թեմատիկ ընդգրկման լայն հնարաւորութիւններով օժտուած եւ ամենքի կողմից սիրուած ու ժողովրդականութիւն վայելող բանահիւսութեան մէկ այլ տեսակ չկայ, ինչպիսին անեկդոտն է՝ ժողովրդական երգիծական մանրապատումն ու զուարճախօսութիւնը:

Ժողովրդի կեանքում անեկդոտի խաղացած դերի մասին Վահան Թոթովենցը գրում է. «*Պէտք է գրի առնել ու ապագայ սերունդների համար*

պահել անեկդոտները: Ո՛չ մի վէպ, ո՛չ մի պատմուածք չեն պահի ժամանակի ինչ-ինչ կողմերն այնպիսի սրութեամբ, ինչպէս անեկդոտները»[6]:

Անպետականութեան պայմաններում հայոց մշակութային արժէքների առաջին ուղղորդող գրառողներն ու հրատարակողները գրական, հասարակական, մանկավարժական եւ գիտական գործունէութեամբ զբաղուող հայ մտաւորականներն էին եւ հոգեւորականները: Պատմական հայրենիքում եւ նրանից դուրս գտնուող հայաշատ վայրերում այդ գործին լծուեցին եւ իրենց անմնացորդ նուիրուածութեամբ հայկական մշակութային կեանքի վերածնունդն ազդարարեցին թէ՛ Հայաստանում ու արտերկրում հիմնաւոր կրթութիւն ստացած հայ ազգային զարթօնքի անխոնջ մշակները (Խաչատուր Աբովեան, Մեսրոպ Թաղիադեան, Միքայէլ Նալբանդեան, Ստեփանոս Նազարեանց, Երուանդ Լալայեան եւ այլք), թէ՛ Մխիթարեան միաբանութեան եւ Հայ Առաքելական Եկեղեցու նուիրեալները (Մխիթար Սեբաստացի, Ղեւոնդ Ալիշան, Խրիմեան Հայրիկ, Գարեգին Սրուանձտեանց, Գաբրիէլ Այվազեան, Գաբրիէլ Պատկանեան, Մակար Բարխուդարեան, Կոմիտաս, Գարեգին կաթողիկոս Յովսէփեան եւ այլք):

Ազգագրական եւ բանահիւսական նորանոր նիւթերի (այդ թւում նաեւ հայկական երգիծական մանրապատումների ու զուարճախօսութիւնների) յայտնաբերման, գրառման եւ զանազան հրատարակութիւններով դրանք կրկին ժողովրդին վերադարձնելու գործընթացները հայ ժողովրդի ազգային գիտակցութեան զարթօնքն ու ինքնութեան վերահաստատումն էին նախանշում:

Չափազանց ընդգրկուն են հայկական զուարճապատում-զուարճախօսութիւնների թեմատիկ դրսեւորման շրջանակները: Չկայ մարդու կեանքին, կենցաղին ու նրան շրջապատող աշխարհին, մարդկային փոխյարաբերութիւններին, ընկերային-տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային գործունէութեանը, պատմական իրադարձութիւններին, քրիստոնէութեանն ու եկեղեցուն վերաբերող որեւէ կողմ, դրուագ, երեւոյթ, որին անդրադարձած չլինի ժողովրդական բանարուեստի այս տեսակը: Դրանցից մէկն էլ *պանդխտութիւնը՝ արտագնայ աշխատանքն* է:

Դարեր շարունակ անպետականութեան, վերջին տասնամեակներին նաեւ պետականութեան պայմաններում ահագնացող ազգային չարիքին՝ արտագնայ աշխատանքին, պանդխտութեանն ու արտագաղթին, անդրադարձել են ոչ միայն հայ պատմիչներն ու գրողները (Արիստակէս Լաստիվերցի, Կիրակոս Գանձակեցի, Առաքել Դաւրիժեցի, Աւետիք Իսահակեան, Դանիէլ Վարուժան, Մուշեղ Իշխան եւ այլք), այլեւ հենց ինքը՝ ժողովուրդն իր ստեղծագործութիւններով: Անտունիները, հանրայայտ «Կռունկը» օտարութիւնում դեգերող հայի ցաւերի եւ ապրումների խտացուած արտայայտութիւնն են: Ժողովուրդն այդ ցաւն արտայայտել է բանահիւսական մի շարք տեսակներով, ինչպէս տարատեսակ երգերում

(«Աղբարս Ըստամբուլ Քաղաք», «Օդաներ Եմ Շիներ»[7], «Բերդիցը Դուս Ելայ»[8]) ու սգերգ-ողբերգերում («Աղասարու Ճամփան», «Էլի Հաջի Հայրիկ»[9]), այդպէս էլ առածներում («Ղարիբի Գերեզմանը Առանց Քար Կը Մնայ», «Ղարիբի Հացը Լեղի Ա, Ջուրը՝ Աղու»[10]), պանդուխտին ուղղուած օրհնանք-բարեմաղթանքներում (Էրթաս՝ սաղ-սալամաթ գեաս քու ճժերու վերէն, լա՛օ: «Աստուած զքու կանանչ-կարմիր արեւ պահէ»: «Մշու սուլթան սըփ Կարապետ քեզի քոմագ եղի»[11]), հեքիաթներում («Իրեք Խրատ»[12]) եւն., սակայն նրա ոգու կորովն ու կենսունակութիւնը դրսեւորուել է յատկապէս երգիծական մանրապատումների եւ զուարճախօսութիւնների միջոցով:

Արեւմտահայոց եւ արեւելահայոց ժողովրդական բանաւուեստում իրենց արտացոլած հարցերով, առաջադրած խնդիրներով ու նպատակներով առանձնանում են արտագնայ աշխատանքին վերաբերող մանրապատում-զուարճախօսութիւնները:

Արեւմտահայերի պանդխտութեան թեմայով ժողովրդական երգիծապատումներն առնչւում են թէ՛ հեռաւոր վայրեր արտագնայ աշխատանքի մեկնողներին (ընկերային ծանր վիճակի պատճառով հազարաւոր մարդիկ հայկական գաւառներից գաղթելով հիմնականում Պոլսում մի կտոր հաց վաստակելու յենարան էին գտնում), թէ՛ քիչ թէ շատ մօտ տարածքները աշխատանքի գնացողներին (երբ Թուրքիայի հայահալած քաղաքականութեան հետեւանքով հայերը երբեմն քրտական շրջանների գիւղերում էին բնակուելու եւ աշխատելու ելք գտնում)[13]:

Շուրջ 140 տարիների ընթացքում հրատարակուած անեկդոտներ պարունակող տարատեսակ գրքերից ու ժողովածուներից դուրս գրուած համապատասխան նմուշների հիման վրայ ստորեւ մենք կ'անդրադառնանք պանդխտութեանն առնչուող այնպիսի բանաւուեստի նմուշների, որոնցում առաւել տեսանելի են հայ մարդուն, հայ ժողովրդին արտագնայ աշխատանքի հասցրած բացասական հետեւանքները:

«Միամիտի Մխիթարանք» մանրավէպում Պոլսի ձուլարաններից մէկի հաստոցին զոհ դարձած հայ պանդուխտի վիճակից մոլորուած գաւառացի բանուորներին իր մխիթարանքի խօսքով սթափեցնում է նրանց մէջի "խելօք"ը.-

> Այժմ Սարգիսին ընկերները բոլորուեր են իրենց խեղճ ընկերոջ ճզմուած մարմինին շուրջ, ահ ու կսկիծով արցունք կը թափեն, եղերերգեր մրմնջելով:
>
> Ճիշտ այդ պահուն, իրենց մէջ ամենէն «խելօքը», մէյ մը կը նայի ճզմուած մարմինին, մէյ մըն ալ թրվռացող հսկայ մեքենաներուն եւ խօսքը ուղղելով լացող ընկերներուն՝ կ'ըսէ.
>
> - Մի՛ լաք, տղա՛ք, մի՛ լաք: Փառք տուէք Աստուծոյ, որ Սարգիսը այս փոքրիկ մեքենային տակը մնաց: Անգամ մը խորհեցե՛ք թէ ի՞նչ պիտի ըլլար մեր Սարգիսին հալը՝ եթէ անիկա այս փոքրիկ մեքենային տեղ՝ մնար՝ սա հսկա՛յ մեքենաներէն մէկուն տակը...[14]

Վատ լուրեր հաղորդելուց հաճոյք ստացողներին հայ ժողովուրդը «չար-

խօսիկ», «չարախօս» անունն է տուել: Պանդխտութեանն առնչուող երգիծապատումներում հայրենի օջախի, ընտանիքի անդամների որպիսութեան վերաբերեալ օտարութեան մէջ յայտնուածի հարցումներն իր հայրենակից *չարխօսիկին*՝ շատ զգուշաւորութեամբ է դրսեւորում:

Զուարճապատումներից մէկում («Չարխօսիկ Սագօն») հայրենի տան ու ընտանիքի անդամներից որեւէ լուր ակնկալող *Մըկո աղբարը*, որ 15 տարի Պոլսում պանդխտութեան մէջ էր, հանդիպում է անընդհատ վատ լուրեր հաղորդելով յայտնի *չարխօսիկ* հայրենակցին եւ հարցուփորձ անում: Այդ կցկտուր երկխօսութեամբ էլ բացայայտւում է պանդուխտի ընտանիքին պատուհասած ողբերգութիւնների շարանը: Հենց դրանց ներկայացնելու կերպն էլ (ամեն մի ողբերգութեան ներկայացնելուց բխեցնել հերթական դժբախտութիւնը) դառնում է պատումի զաւեշտի դրսեւորման միջոցը.

«Բարեւ, Ասծու բարին»էն յետոյ, Մըկո հարցուց. // – Սագօ՛ աղբար, ի՛նչ լուր մեր շունէն: // – Ա՛, գլուխդ ողջ մնայ, Մըկո աղբար: Ձեր գոմէշի միսը կրծելու աւեն ոսկոր մը խրեցաւ կոկորդը ու սատկեցաւ: // – Ուրեմն գոմէշնի՞ս ալ սատկեցաւ: // – Երբոր լուսահոգի հօրդ տապանաքարը կը բերէր, սայլին տակը մնաց ու սատկեցաւ: // – Չըսե՞ս հայրս ալ մեռաւ: // – Խեղճը մօրդ ցաւին չկրցաւ դիմանալ: // – Վա՛խ, վա՛խ, ուրեմն մա՛յրս ալ մեռաւ: // – Երբ երկու քոյրերդ մէկ օրուան մէջ յանկարծամահ եղան, խեղճը անոնց ցաւին չկրցաւ դիմանալ: // – Ա՛հ, քոյրե՛րս ալ մեռան: Ուրեմն երթամ, շուտ երթամ, որ գոնէ օջախս վառեմ: // – Ի՞նչ տուն, ի՛նչ օջախ: Պարտատէրեր եկան, արօր դրին, տուն ու տեղդ հերկեցին: Ո՛չ տուն մնաց, ո՛չ օջախ[15]:

Այս մանրադէպի տարբերակները հիմնականում շրջանառուել են արեւմտահայոց միջավայրում:

Կարապետ քահանայ Գալֆայեանի հրատարակած պատումից շուրջ եօթ տասնամեակ առաջ՝ 1877ին, Յովհաննէս Նազարեանի անեկդոտների ժողովածուում ընդգրկուած նմուշը գրեթէ նոյն կառուցուածքն ունի: Այս զուարճապատումի սկզբում զգուշաւորութիւն դրսեւորող պանդուխտը կրկին հարցումներն սկսում է հեռուից.

– *Մեր դռնէն օր անցար, Կոլլօ շունը տեսա՞ր: // – Սարկեցաւ, դո՛ւ ողջ ըլլիս*,- պատասխանում է «լրաբերը», եւ սկսւում է հարց ու պատասխաններով բացայայտուել ընտանիքին պատուհասած դժբախտութիւնների ամբողջ շարանը, որն աւարտւում է դժբախտ պանդուխտի՝ «տունս քարուքանդ էղաւ» խօսքով եւ *չարխօսիկի*՝ իբր թէ դրան հակադարձող «յուսալի» խօսքով. «*Շիտակն ըսեմ, քարուքանդ ըլլիլը չտեսայ, հըմը ես օր անցայ, տան տեղը պօստան ցանէին կը*»[16]:

Պանդխտութեան թեմային վերաբերող այս պատումների սասունեան տարբերակներից մէկն էլ՝ «Չար Սադօն» վերնագրով (այն փոքր կառուցուածքով է եւ չունի վերը ներկայացրած նմուշների կուռ կառուցուածքն ու իրար յաջորդող ողբերգութիւնների հաղորդման լարուածութիւնը), Վերին Բազմաբերդում գրառել է բանագէտ Ռաիսա Խաչատրեանը[17]:

Հազար ու մի ցաւ ու դարդով տառապող հայ գիւղացին արտագնայ աշխատանքի էր մեկնում՝ ընտանիքի կարիքները քիչ թէ շատ հոգալու յոյսով ու երազանքներով: 1883ին Նազարեանցի հրատարակած անեկդոտների ժողովածուի Գ. հատորում պանդխտութեան թեմայով ինքնատիպ եւ խօսուն մի զուարճապատում կայ[18], որտեղ պատկերուած է Պոլսում յայտնուած միամիտ գիւղացու յանկարծակի հարստանալն ու քիչ անց ծրագրած երազանքների վայրկենապէս յօդս ցնդելը:

Այս պատումի զաւեշտի յենքը գտած ոսկու պարկը հենց տեղում՝ փողոցի պատի տակ, շուռ տալն ու մինչ այդ անկատար մնացած ցանկութիւններն ու երազանքներն ըստ առանձնացուած ոսկիների չափաբաժինների (նախ՝ Թորոսի աղջկայ հետ նշանդրէքի ու հարսանիքի, հարսնացուի եւ իր համար կատարելիք ծախսերի, ապա՝ քաւոր Պետրոսի այգու, Միրզոյի ձիթահանքի, Թոմասի ջրաղացն առնելու եւ իր համար լաւ տուն կառուցելու համար...) ներկայացնելը:

Այս ամենին հետեւում են ապագայի վերաբերեալ հաճելի խորհրդածութիւնները. «*Հանգիստ կ'ապրիմ, որդոց որդի էլ խեղճութեան ու օտարութեան երես չենք տեսնի...*»[19]:

Երգիծական մանրապատումի յանկարծակի աւարտն ու անսպասելի ծիծաղի պոռթկումը դրսեւորւում է զայրոյթից յուսախաբ եղած պանդուխտի թափած անէծքների հեղեղով՝ ուղղուած ոչ թէ այդ հարստութիւնն իրենից ետ վերցնող եւ մէջքին մտրակի հարուածներ հասցնող տիրոջը, այլ երազանքների հասցէատէրերին. «*Մե՛ռնի Թորոսի աղջիկ Կապարիէն, քա՛նդուի քաւոր Պետրոսի բաղ ու բաղչան, կործա՛նուի Թոմասի ջաղացը, փակն ու վրայ ըլնի Միրզոյի ձիթահանքը, հը՛...*»[20]:

Պանդխտութիւնը պատճառ է դառնում աւանդական ընտանիքների բարոյական չափանիշների խախտման: Հայկական անեկդոտներում երբեմն այդ երեւոյթը այնպիսի «քնքշութեամբ» է ներկայացւում, որ ակամայ մոռացւում է կողակցի դաւաճանութիւնը:

Գալֆայեանի գրառած զուարճապատումում ներկայացուած է մեղրամիսը նոր բոլորած եւ օտարութիւն մեկնած, ապա 15 տարուայ պանդխտութիւնից հայրենի օջախ վերադարձած ամուսնու զարմանքը, երբ տանը տեսնում է ճաշ ուտող երեք երեխաների...: Եւ սկսւում են զայրոյթից պայթող ամուսնու հարցումներն ու մէկուկէս տասնամեակ առանց կողակցի տանը մնացած կնոջ ներկայացրած «հիմնաւոր» պատասխանները. «*Ամենէն մեծը սիրոյ պտուղն է մեր մեղրալուսնի օրերուն... Երկրորդն ալ ունեցայ այն օրը, որ ինծի սիրալիր նամակ մը ղրկած էիր Պոլսէն, կը յիշե՞ս...*»:

Բայց ամենազաւեշտալին երրորդ երեխայի հիմնաւորումն է. «*Թո՛ղ... թո՛ղ, այդ երրորդն ալ իր ռուպը[21] ուտէ, ան ալ քեզի բաբա ըսած չունի եա՛...*»[22]: Երգիծական մանրապատումի վերջաբանային այդ «հիմնաւորումներն» էլ դառնում են անզուսպ ծիծաղի առաջացման պատճառ:

Ի դէպ, կապադովկեան այս պատումի տարբերակին հանդիպում ենք

նաեւ պարսկահայոց ժողովրդական բանարուեստում[23]:

Արեւմտահայոց մի շարք անեկդոտներում ծիծաղի յենքը պանդխտութիւնից գիւղ վերադարձած հայրենակցի լեզուական իմացութեանն առնչուող հարցումներին տրուած պատասխաններն են: Այսպէս, վաստակաշատ հայագէտ, մանկավարժ, բանագէտ եւ ազգագրագէտ Յակոբ Չոլաքեանի անեկդոտների ժողովածուի նմուշներից մէկում պանդուխտ Բալուեցին Հալէպից վերադառնում է գիւղ, եւ սկսւում են համագիւղացիների հարցումները.

- Արաբերէն սորվեցա՞ր, խօսի՛ր նայինք:
- Խայթօ-մայթօ* (հօրաքոյր-մօրաքոյր),– կ'ըսէ կը վերջացնէ իր գիտցած արաբերէնը:
- Ասեղին ի՞նչ կըսեն,– կը հարցնեն:
- Օ՛, այդ պզտիկ բաները սորվելու պէտք չկայ,– կը պատասխանէ:
- Լաւ, ուղտին ի՞նչ կ'ըսեն,– կը հարցնեն:
- Ուղտին անունը կը կնքէին Պապ ուլ Ֆարաճի ճիշտ մէջտեղը, երբ ես եկայ,– մէջէն կ'ելլէ Բալուրցին[24]:

Օտարութիւն մեկնած պանդուխտը կարօտում է ոչ միայն հայրենի տունն ու հարազատներին, այլեւ տան կենդանիներին: Պոլսում յայտնուած սասունցի պանդուխտը Բերայի փողոցով յոգնած ու տխուր թափառելիս *«Յանկարծ աչքերը կը փայլին, յոգնութիւնը մոռցած կը վազէ: Էշ տեսած է. կը փաթթուի վզին, կ'ըսէ.*

- Աման աղբար, քեզի ինկր'ր կարօտցած եմ...»[25]:

Թուրքիայի հայահալած քաղաքականութեան հետեւանքով հայկական բնակավայրերի մի շարք ընտանիքներ ճարահատ քրտաբնակ գիւղերում էին փորձում գտնել իրենց աշխատանքի եւ երեխաների փրկութեան ելքը: Բայց հայը չէր կարող քոչուոր ցեղերի մտածելակերպն ունենալ, ուստի երեխաների ուսման խնդիրը ընտանիքներին կրկին վերադարձնում է գիւղ, իսկ կերակրող ձեռքը նորից մեկնում է արտագնայ աշխատանքի: *Չնքուշապատումի* հեղինակը գրում է.-

ԺԹ. դարուն, թրքական ծայրայեղօրէն հայահալած քաղաքականութեան օրերուն, Չնքուշէն հարիւրաւոր ընտանիքներ տեղափոխուեցան Շիրոյի, Կարկարի եւ այլ քրտական շրջաններու գիւղերը, ուր անոնց տղամարդիկ տարին եօթ-ութ ամիս կը գործէին նախապէս եւ աշնան կը վերադառնային Չնքուշ, իրենց ընտանիքին ծոցը[26]:

«Աբա՛ր, Ա՛լբ Ըսէ (Հայրի՛կ, Ա՛յբ Ըսէ)» երգիծապատումում ներկայացուած է քրտաբնակ գիւղում ճարահատ հանգրուանած եւ ընտանիքին տեսութեան եկած հայ ծնողի եւ մաշտոցեան այբուբէնի առաջին քայլերը նոր-նոր անող եւ արտասանական դժուարութիւնները դեռեւս չյաղթահարած երեխայի երկխօսութիւնը, որտեղ զաւեշտի յենք է դառնում թլոշ լեզուով հայերէնի գրանուան արտաբերումը.

...Անդրանիկ որդին արդէն դպրոցական տարեշրջան մը բոլորած էր, երբ իր

հայրը աշնան տուն վերադարձաւ ու, հիանալով տղուն մաքուր հայերէն խօսակցութեան վրայ, զայն կուշտ մը համբուրելէ յետոյ, ուզեց հասկնալ, թէ տղան ինչքա՛ն բան սորված էր: Տղան, առնելով այբբէնարանը, նստաւ հօրը ծունկերուն վրայ, եւ այբբէնարանի առաջին գրին վրայ դնելով մատը,

Տղան.– Աբա՛ր, ա՛լբ ըսէ: // Հայրը.– Ալբ: // Տ.– Ատի չեղաւ, աբար, ա՛լբ ըսէ: // Հ.– Տղա՛ս, իշտէ կ՛ըսեմ, ալբ, ալբ: // Տ.– Չէ, աբա՛ր, ինծի պէս մի՛ ըսեր, վարժապետին պէս ըսէ: // Հ.– Տղա՛ս, վարժապետը ինչի՞ս կ՛ըսէ: // Տ.– Վարժապետը ալբ կ՛ըսէ, ալբ: // Հ.– Տղա՛ս, իշտէ ես ալ վարժապետիդ քիմի[27] կ՛ըսեմ ալբ, ալբ... // Հայր ու տղայ քրտինքներու մէջ մտան, ժամերով ալբ, ալբ ըսելէն[28]:

ԺԹ. դարի երկրորդ կէսից արեւելահայերի մի մասը Թիֆլիսում, միւս մասն էլ Բաքւում էր փորձում ընտանիքի տնտեսական հոգսերը հոգալու համար փրկութեան յենարան գտնել: Հետեւաբար նախախորհրդային շրջանի արտագնայ աշխատանքին նուիրուած երգիծապատում-զուարճախօսութիւնները հիմնականում կապուած էին կա՛մ Թիֆլիսում, կա՛մ Բաքւում յայտնուած հայ պանդուխտների կեանքի զաւեշտալի իրավիճակների հետ: Այսպէս, «Ղարաբաղցին Ան[29] Թիփլիզեցի Խանըմը» մանրավէպում[30] ընտանիքով ծանրաբեռնուած ղարաբաղցի արհեստաւորը, աշխատանքային որոշ գործիքներ վերցնելով, ճարահատեալ պանդխտութեան է մեկնում Բաքու, սակայն գնացքի ուղղութիւնը շփոթելով՝ յայտնւում է Թիֆլիսում: Կառամատոյցում վարպետ փնտռող մի խանում, սրան վերցնում տանում է իր տուն, ճոխ պատրաստութիւն տեսնում, ուտեցնում, խմեցնում ու ուզում է կենակցել հետը: Աւանդապահ գաւառացին չնայած դիմադրում է, ասելով՝ «*Խանըմն ապրած կենա, չի կարելի: Խազայինը*[31] *կ՛իմանա, կլոխս կը կպրի*», բայց խանումի՝ «*Խազայինը քյնացալ ա արտասահման՝ ապրանքի, չորս ամսից հետո ա կյալու*» հանգստացնող խօսքը թէ՛ աւանդապահութիւն, թէ՛ ընտանիք հասկացութիւնները յետին պլան են մղում...:

Երգիծապատումի զաւեշտի մեխը ամենաթունդ պահին խանումի՝ ետեւից ձայն դուրս գալն ու «*Տա իմ քթին*» խօսքն է լինում եւ դրա մեկնաբանութիւնը, թէ «*Տասնհենգ տարի ինձ հետ ապրում ա, մի անգամ ըրենց չտ...(չտռացրեց) ինձ*»:

Երկրորդ անգամ կենակցելիս երբ նոյնն է կրկնւում, ղարաբաղցի պանդուխտն է այս անգամ ասում. «*Տա էլ, խանը՛մ, ի՛մ քթին*»:

- Ա՛յ տղա,– հարցնում է խանումը,– *խէ՞ ըս էդպէս ասըմ: Հի՞նչ ա յալ*[32]*: //Թա՛//–Հի՞նչ անիմ, Ղարաբաղու նման տեղը թողալ ըմ, խոխեքյս*[33] *սոված-ծարաւ, եկալ ըմ Թիփլիզ, խանըմ ըմ տ...(տռացնըմ):*

Մինչեւ 1950ականների կէսերը Խորհրդային Միութիւնում եթէ քաղաքացին իրաւունք ունէր քիչ թէ շատ երկրում ազատ տեղաշարժուելու, ապա գիւղացուն արգելուած էր գիւղից դուրս գալը, մասնաւորապէս քաղաք տեղափոխուել-հաստատուելը. նրան անձնագիր անգամ չէր տրւում, ինչը խորհրդային համակարգի ու ստալինիզմի հերթական բիրտ ու անհեթեթ դրսե-

տրումներից էր: Այդ արգելքի հանելը պայմանաւորուած էր խրուշչովեան ժամանակների՝ *խոպան հողերը* իւրացնելու[34], Տայգայում եւ Հեռաւոր Արեւելքում նոր բնակավայրեր ստեղծելու, նրանց կապող աւտօճանապարհներ ու երկաթուղային հաղորդակցութիւն ապահովելու գործընթացներով:

1950ականների վերջին արտագնայ աշխատանքի մեկնողների քանակը շատանում է, իսկ 1970ականներին Հայաստանից եւ յարակից հայաշատ վայրերից խոպան մեկնողների թիւն արդէն միքանի տասնեակ հազարի էր հասնում: Հայաստանի եւ վիրահայոց որոշ տարածքներում (Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Ջաւախք), *խոպանչի*ների քանակը աչք էր ծակում, ինչը ժողովուրդը արտայայտել է անդիպաշար կառոյցի՝ զուարճախօսութեան միջոցով. «*Ախալքալաքցին մեռնում ա, հոգին գնում ա խոպան*»[35]:

1960ականների սկզբներին *խոպանչի*ներից շատերը ճանապարհները ասֆալտապատողներ էին: Անեկդոտներից մէկն առնչւում է Ղազախստանում գտնուող «Բայկանուր» տիեզերական կենտրոնին ու նրա մերձակայ տարածքներում *ասֆալտ անող* հայկական ջոկատին: Տիեզերանաւի թռիչքի պահին անսպասելի հիւանդացած տիեզերագնացին որոշւում է փոխարինել ասֆալտապատող հայերից մէկով, որպէսզի խորհրդային պետութիւնը աշխարհով մէկ խայտառակ չլինէր: Գնում են աշխատող բանուորների ղեկավարի՝ ջոկատավարի մօտ, որ տիեզերք թռչելու համար հիւանդ տիեզերագնացի փոխարէն աշխատողներից որեւէ մէկին տար:

Մանրավէպում զաւեշտալի վերջաբանը հայ ջոկատավարրի առաջարկած նախապայմանն է՝ աշխատողներից մէկին տրամադրել միայն այն պարագայում, եթէ վարձատրութիւնը կատարուէր ասֆալտապատելու համար տրուող վճարման սկզբունքով, այսինքն՝ ըստ իւրաքանչիւր մետրի համար կատարած աշխատանքի.

– Հարց չկայ, համաձայն եմ,- ասում է բրիգադիրը,– բայց էկէք պայմանաւորուենք՝ մէկ մետրի համար քանի՞ս էք տալի.../// – Դուք ինչքա՞ն կ'ուզէք,– հարցնում են: // – Դէ... մենք ասֆալտը մետրը 10 ռուբլով ենք անում, եթէ համաձայն էք, ձեռնարկենք...[36]

Արտագնայ աշխատանքի մեկնելուն նպաստում էին ջոկատավարները. նրանք աշխատանքային խմբեր կազմելու համար մարդկանց, մասնաւորապէ՛ս արհեստաւորներին, փորձում էին համոզել, բացատրում էին *խոպանի* աշխատանքի առաւելութիւններն ու արդիւնաւէտութիւնը, ներկայացնում կատարելիք աշխատանքը:

*Խոպանչի*ների թեմային նուիրուած անեկդոտներից մէկը առաջադրանք-հանելուկատիպ կառուցուածքով է ներկայանում: Ասացողն այստեղ համադրողականութեան՝ ոտքի շարժումների օգնութեամբ պէտք է կարողանար ճիշտ պատասխանը ունկնդրին փոխանցել: Հարցնում են.

– Գիւմրու եօթ վէրքի մօտ խոպանչիները հաւաքուած են եւ շրջան կազմած՝ խօսում են: Կօշիկներին նայելով՝ կրնա՞ք ասէք՝ դրանցից որն է բրիգադիրը:

Պատասխան չկայ. բոլորը լռում են:

– Ում աջ կօշիկի ծայրը մաշած է, ուրեմն նա էլ բրիգադիրն է,– պարզաբանում է հարց առաջադրողը: (Հենց հարց-հանելուկ առաջադրողն էլ սկսում է ոտքի շարժումներով նկարագրել, ցոյց տալ ապագայ անելիքները: Հաւաքուածներից ով ոտքի ծայրով գետնին գծեր է անում, ցոյց տալիս կառուցուելիք շինութեան յատակագիծը, խոպան մեկնել պատրաստուող ջոկատի անդամներին բացատրում՝ քանի քառակուսի մետր տարածք է զբաղեցնում կառուցուելիք շէնքը, ճակատային մասն ինչ պիտի արուի եւն., ինչի հետեւանքով կօշիկի ծայրը մաշւում է, ուրեմն հենց նա էլ ջոկատավարն է)[37]:

Խորհրդային տարիներին արտագնայ աշխատանքը յաճախ շատ ու շատ ընտանիքների քայքայման պատճառ է դառնում: Ամուսնու կամ կնոջ արտամուսնական կապերը եւս յաճախակի են արտացոլւում հայկական անեկդոտներում.

Դէ խոպան գնացողները վաղ գարնանը գնում են, ուշ աշնանը գալիս: Սրանք ուզում են իրենց ընկերներից մէկին համոզեն, հետները տանեն, ասում են.

– Ինչի՞ չես ուզում գաս, արի համաձայնուի, էս տարի գնանք, համ փող կ'աշխատես, համ էլ փողի հետ ոըսի աղջիկների հետ կը ֆոֆռաս: Գիտե՞ս՝ ինչ ոըսի աղջիկներ կան, ում հետ ուզենաս, քեզ համար քէֆ կ'անես, հը՛, համաձայն ե՞ս... // Ասմա. // – Չէ, տղե՛ք ջան, գոհ եմ, ստեղ էլ վատ չի, դուք որ գնում էք, ձեր կնանոնցից ում հետ ուզում եմ, նրա հետ էլ քէֆ եմ անում...[38]

Անեկդոտներում արտագնայ աշխատանքի մեկնողների ու նրանց կողակիցների բարոյազրկումը ներկայացւում է տարբեր ձեւերով: Երգիծապատումներից մէկում զաւեշտի միջոց են դառնում ռուսերէն հեռագիր-ծածկագրերը.

Մէկը խոպան գնալիս ընկերներին ասում ա.

– Տղե՛րք, էտա ես խոպան եմ գնըմ, կնգանս վրայ կասկածում եմ: Աչկներդ վրէն ըլի, հենց որ մի բան կը տեննաք, վռազ հեռագիր կը տաք: Բայց որ բրիգադի տղերքը չիմանան, հեռագիրը էսպէս կը տաք. «Բաբուշկա ումերլա»[39], ու ես գլխի կ'ընգնեմ, վեր կը կենամ կը գամ...

Գնում ա խոպան, դեռ գործը չսկսած՝ հեռագիր ա ստանում. «Բաբուշկա ումերլա»: // Բրիգադի անդամներն ասում են՝ // – Տատդ մեռել ա, բա չես գնո՞մ: //Ասըմ ա. // – Էլ դժուար թէ հասցնեմ, ուշ ա, եօթին կամ քառսունքին կը գնամ: // Յաջորդ օրը մի հեռագիր էլ ա ստանում. «Սմերտ պրոդոլժաետսյա»[40]...

Այս պատումի փոփոխակներից մէկում տատի փոխարէն կնոջ մահն է ներկայացւում, որի վերաբերեալ հեռագրերի քանակն էլ հասցուած է 11ի...[41] Մէկ ուրիշ նմուշում՝ ընտանիքի գիրկը վերադառնալը աւետող *խոպանչու* հեռագիր տալը եւ տուն մտնելուց յետոյ կնոջ գրկում սիրեկանին տեսնելով՝ յանկարծակիի գալը, մոլորուած դռան շէմին կանգնելն ու կարօտից արտաբերած «արդարացնող»՝ *«Կայ-չկայ կնիկըս հեռագիրն ըսպացել չի»* խօսքն է դառնում զաւեշտի յենք[42]: Այս պատումի տարբերակներից մէկում էլ այսպէս է հնչում խոպանից վերադարձած լօռեցու՝ կնոջն արդարացնող խօսքը. «– Վա՛յ քու փոստի ինչն եմ ասե՛լ... Հեռագիրս վախտին բերել չեն...»[43]:

Փոփոխակներից մէկում էլ կնոջ հաւատարմութեանը կասկածող ամուսինը արտագնայ աշխատանքի մեկնելուց առաջ տղային է յանձնարարում մօրը հետեւել եւ օտար տղամարդ տանը տեսնելիս ամեն անգամ տոպրակի մէջ բրնձի մի հատիկ գցել:

Վերադառնալուց յետոյ տոպրակը դատարկ տեսնելով՝ երեխան ուրախացած հօրը հիասթափեցնում է՝ յայտնելով, որ մայրը մի օր առաջ «տոպրակի բրնձից փլաւ է սարքել»...[44]

Խորհրդային Միութիւնում խառնամուսնութիւններին նպաստում էին ոչ միայն արտագնայ աշխատանքը, այլեւ՝ բանակը: Հայ երիտասարդները յաճախ տուն վերադառնալիս հետները օտարազգի աղջիկներ էին բերում՝ խարխլելով ազգային ժողովրդագրական պատկերը: Այդ երեւոյթի հանդէպ ժողովրդի անհանգստութիւնն ու դժգոհութիւնը արտագնայ աշխատանքին առնչուող հայկական անեկդոտներում արտայայտւում էր *ազգապահպանութեան հարցերի* շաղախում, ինչպէս անդիպաշար հետեւեալ նմուշում.

ա. Ուրիշների ըրեխէքը գնըմ են խոպան «Վոլգա» (իմա՝ աւտօմեքենայի մակնիշ) են բերըմ, իմ տղէն գնաց խոպան՝ Օլգա բերեց,– դժգոհում էր լոռեցի մայրը[45]:

բ. Չուարճախօսութիւններից մէկում էլ այդ դժգոհութիւնն արտայայտուած է երկիմաստ ծածկախօսութեամբ, հեգնանքով ու բառախաղով.

Խոպանից (տրբր.՝ բանակից) վերադարձող համագիւղացի երիտասարդին գիւղամիջում արեւկող անող մեծահասակներից մէկը հարցնում է. //– Բալա՛ ջան, էդ հետինըդ ռուս ա՞: //– Չէ, պա՛պի, բելառուս ա: //– Հա՜ա՞, բա քըմակի լա՞ֆետն[46] ուր ա (իմա՝ հետը բերած երեխան)[47]:

Արտագնայ աշխատանքի պատճառով ընտանիքներին բարոյական հարուած հասցնելու հետեւանքներն արտացոլուած են նաեւ 1988ի Սպիտակի երկրաշարժի ժամանակ տրուող օգնութիւնների ենթահողում: Չուարճապատումներից մէկում հնարաւորինս շատ օգնութիւն ստանալու մարմաջը ամուսինների բարոյական դիմագիծը բացայայտելու պատճառ է դառնում.

Երկրաշարժից տուժածներին օգնութիւն են տալիս: Աղէտի գօտուց մի խոպանչի ասըմ ա՝ // – Էսքան տարի խոպան եմ գնացել, էկել, գնամ էրեխանցս հաւաքեմ բերեմ. կարգին փող կը ստանամ: // Գնում ա մի հինգ էրեխա յա հաւաքում, գալի տուն, տեղըմ՝ տանը մէնակ կնիկն ա, հարցնըմ ա. // – Ա՛յ կնիկ, էս էրեխէքըս ու՞ր են: // Ասըմ ա. // – Ո՞ւր պիտի ըլեն, իրանց հերերն էկան տարան, որ օգնութիւն ստանան...[48]

Արտագնայ աշխատանքի մեկնողներից ոմանք ուզում են միանգամից հարստանալ, մեքենայի, շքեղ տան տէր դառնալ: Անեկդոտը սպանիչ ծաղրով է ներկայացնում նման մտածողութեամբ տառապողներին.

Էրկու ախպէր էն ինում, մինը Մինվոդում ա ապրում, մինն էլ Ստեփանակերտ: Խոխէքը[49] արդէն մեծանում են, Ղարաբաղա ախպէրը զանգում ա Մինվոդ, ասըմ ա՝// – Խրեգ[50]ըս ղարգում, օզում եմ ես ինքս գամ, ես ինքս փող ըշխատեմ: // – Շատ լաւ ա, եկ: // – Պա տեղ ի՞նչ գործ եմ անիլու: // – Ասըմ ա՝ // – Հաաա՜,

դոլլարները տափեն (իմա՝ գետնին) վերածած ա, ե՛կ, կը հաւաքես: Ճամփու ծախսը ես կ'ուղարկեմ: // Էս Ստեփանակերտա ախպէրը թռնըմ ա Մինվոդ: Ուրուգիւ[51] ա ինում...: Լա քըշանըմ[52] ա, տենում՝ 50 դոլարնը ա ընգած: Ուզում ա վեր ունի, մըն էլ ինքնիրեն ասըմ ա՝ // – Ա՛ դէ ըսօր չե՞ս էկալ, ըսօր դինջացի[53], էքուցվանի կը սկսես գործը: // – Ասըմ ա, ետ քաշըմ ձեռը, թողում գնըում...[54]

Շատ պանդուխտներ էլ կանգնում են փաստի առաջ. ոչ ուտելու գումար են ունենում, եւ ոչ էլ ետ վերադառնալու, եւ ստիպուած ընկերային ծանր վիճակում գտնուող ծնողներն են կրկին օգնութեան միակ յոյսը դառնում.

– Թեւան քեռի, լոյսիդ վարձը խի՞ չես մուծում: // – Կը մուծեմ, էլի՛: // – Ե՞րբ: // – Երբ որ տղաս արտագնայ աշխատանքից գայ: // – Իսկ տղադ ե՞րբ է գալու: // – Երբ որ կովը ծախեմ, ճանապարհածախսը ուղարկեմ[55]:

Նորանկախ Հայաստանի Հանրապետութեան տարիներին է՛լ աւելի ահագնացաւ արտագնայ աշխատանքի մեկնողների քանակը ոչ միայն քաղաքներից, այլեւ գիւղերից՝ գործազրկութեան, գործարանները չաշխատելու, կաշառքի եւ ամենաթողութեան հետեւանքով: Գիւղաշխարհից պանդխտութեան մեկնելու դրսեւորումը՝ իբրեւ իրողութիւն, այսպէս է ներկայացնում բերդաւանցիների «Կէսը՝ Էստեղ, Կէսը՝ Էնտեղ» մանրավէպը.

Մարզկենտրոնից մի բարձր պաշտօնեայ էր եկել Բերդաւան: Իմացաւ, որ գիւղխորհրդի նախագահն արդէն վեց ամիս է՝ Ռուսաստանում է: // – Ինչպէ՞ս թէ, – զարմացաւ պաշտօնեան: //Քարըմանց Սամուէլը, փորձելով պաշտպանել իրենց նախագահին, ասաց. // –Դէ, գիւղի բնակչութեան կէսը Ռուսաստաններում է, նա էլ տարուայ կէսը էնտեղ է նախագահութիւն անում, կէսը՝ էստեղ...[56]

Անկախացած ՀՀից արտագնայ աշխատանքի մեկնողների ռուսերէնի իմացութիւնն այլեւս խոչընդոտ չէ, աշխատատեղերի աշխարհագրութիւնն էլ է աստիճանաբար ընդլայնւում, մեկնելու նպատակն էլ. արտագնայ աշխատանքն աստիճանաբար հիմքեր է ստեղծում վերածուելու արտագաղթի. «*Կը գնանք Ամերիկա, թէ գործ էլաւ, լաւ, թէ չելաւ, եկր գալը կայ ու կայ*»[57]:

Ծնողի արտագնայ աշխատանքը խոր հետք է թողնում նրա երեխաների մտածողութեան եւ հոգեբանութեան վրայ: Այսպէս, մանկական զուարճախօսութիւններից մէկում առաջնեկ տղայի լոյս աշխարհ գալուց մի քանի ամիս անց, գումար վաստակելու յոյսով տան տղամարդը մեկնում է խոպան: Երեք տարի անց նա Ռուսաստանից վերադառնում է տուն, ու ողջագուրուելուց, ընթրելուց յետոյ երբ մութն ընկնում է, ծնուելուց յետոյ հօր երես չտեսած երեքամեայ որդին, որ մօր միակ «թեւ ու թիկունքն» էր մնացել, չի ուզում քնել, սրտնեղած ձգում է մօր փէշից, պարտադրում մօրը, որ «անծանօթ» տղամարդը կէսգիշերին հեռանայ տնից. «– Մա՛մ, էդ մարդն ինչի՞ չի գնում մեր տնից, ասա՛ թող շուտ գնայ, մինչեւ չգնայ, չեմ քնի...»[58]:

Մանկական մէկ այլ նմուշում փոքրիկ աղջիկն ուզում է իր խաղալիքները վերցնել ու տուն գնալ, սակայն խաղընկերը՝ հարեւան Գայիանէն չի տալիս, խնդրում է մնալ, մի քիչ էլ խաղալ:

– *Տուր թէ չէ կը գնամ պապայիս կ'ասեմ,– սպառնում է* փոքրիկ աղջիկը:

Գայիանէի հայրը միքանի տարի էր՝ արտագնայ աշխատանքի էր մեկնել, եւ երեխան հօր պաշտպանութեան կարիքը շատ-շատ էր զգում.

– *Մամա՛, ես պապա ունե՞մ, որ ես էլ իմ պապային ասեմ,–* հարցնում է քառամեայ Գայիանէն[59]:

Երբեմն էլ երեխաներն ուզում են միքանի տարի արտագնայ աշխատանքի մեկնած ծնողին, հարազատին, որ մէկ կամ երկու աղջիկ ունի, մի մե՛ծ անակնկալ անել, ուստի առաջարկում են մօրը կամ հօրեղբօր կնոջը. «*– Մա՛մ ջան, քանի պապան էկել չի, արի մի փղայ րեխա բի, որ գայ, ուրխանայ, հա՛...*»[60]: Տարբերակ՝ «*– Նապա՛ փուրա, մի հատ էլ ապերի՛կ բեր, է՛լի, հօպարս կը գա, շա՛տ կ'ուրախանայ...*[61]»:

Եթէ բերուած երկու նմուշներում էլ անսպասելի ծիծաղը երեխաների անմեղ արտաբերումների պատճառով է առաջանում, ապա ամենազաւեշտալին այն է, որ լօռեցիներին վերագրուող այս զուարճախօսութիւնում սկեսուրն է հարսին առաջարկում «*սիւրպրիզ*[62]» անել՝ երեխայ ունենալ, որ ամուսինը ուրախանայ.

Սկեսուրը հարսին ասում է.// – Յաւտ տանեմ, բալէս, մի հատ էլ էրեխայ ունեցի: // – Ա՛յ մէր, ո՞նց ունենամ, տղէդ խոպանում ա: // Ոչինչ, մատաղ քեզ, արի դու իրան սիւրպրիզ արա, թող ուրխանայ[63]:

Արտագնայ աշխատանքին նուիրուած պատումներից մէկում էլ պանդխտութեան մեկնածի կինը յղիանում է ոչ թէ «շատ հին պատմութիւնների նման նկարի հետ քնելով», այլ *սեքսուալ* հայեացքից.

– Ախչի Վարդիշաղ, աչքիս՝ րեխով ես, մարդդ էլ էս էրկու տարի ա՝ խոպանում ա: Չասես՝ նկարի հետ ես քնել, էդ շատ հին պատմութին ա...

– Հերիքնազ ջան, մի էրկու ամիս առաջ մեր գոմումը փէշերս բշտած կով էի կթըմ, մին էլ մեր հրեւան Խաչիկը մտաւ:

– Եդնո՞ւց[64]:

– Եդնուց՝ ոչ մի բան, բայց ընենց մտիկ արաւ, ընենց մտիկ արաւ, որ... Էնա հենց էդ մտիկ անելուց էլ յղիացել եմ...[65]

Արտագնայ աշխատանքի թեման երբեմն էլ ներկայացւում է անիրական՝ հեքիաթային տարրերով շաղախուած: Այսպէս, Լօռուն վերագրուող *ոսկեձկնիկեան պատումում* մեր օրերի արտագնայ աշխատանքի մեկնողների թեման արտացոլուած է լօռեցու անեկդոտային կերպարին յատուկ պարզամտութեամբ:

Օտարութիւն մեկնած ու գործազուրկ մնացած երկու եղբայրների՝ Ոսկէ ձկնիկին ներկայացրած երեք ցանկութիւններից երկուսը երկու շէնքերի հիմքերը գցած տեսնելն է լինում. իւրաքանչիւր եղբօրը՝ մի-մի շէնքի հիմք, որ կարողանան միանգամից պատերը շարել, իսկ երրորդ ցանկութիւնն էլ աւելի զաւեշտալի է. դրանց սուաղի՝ ծեփագործութեան աշխատանքները եւս երկու եղբայրներին ընձեռելու հնարաւորութիւն տալ[66]:

Հնարամիտ հայերը գործազրկութեան դէպքում անգամ ելք են գտնում,

գործ ճարում նոյնիսկ Ափրիկէում.

Ինքնաթիռը Աֆրիկայում վթարային վայրէջք ա կատարում: Ուղեւորները ընկնում են վայրենիների ձեռքը: Սրանք բռնում, բոլորին տանում են իրանց վոժդի[67] մօտ: // – Տղե՛րք, քաշուեցինք,– հայերէն ասում ա գերիներից մէկն ընկերոջը: //– Վա՛յ ձեր ցաւը տանեմ, հայ է՞ք,– հարցնում ա վայրենիների առաջնորդը: //– Ի-յա՛, ա՛յ ախպէր, դու էլ ես հա՞յ, բա էս վայրենիների մէջ ի՞նչ ես անում,– հարցնում են հայերը: //– Տղե՛րք, դուզն ասած, տեհա խոպանի համը դուրս էկաւ, էս կողմերն եմ էկել, հիմի էլ էս գործն եմ կպցրել...[68]

Տափակ անեկդոտաշարերից մէկում էլ զաւեշտի յենքը ժողովրդախօսակցական լեզուում օգտագործուող ամօթաթիքա[69] արտայայտութիւնն է.

Մէկն ասըմ ա. //– Բրիգադով խոպան էինք գնացել Աֆրիկա, մարդակերների ձեռն ընգանք: //– Բա յետո՞յ: //Յետոյ էլ մարդակերները բրիգադի բոլոր անդամներին կերան, մնացի մէնակ ես, ես էլ թողի հետ էկա տուն: //– Ո՞նց, բա քե՞զ ինչի չկերան: //– Ես ամոթաթիքէն էի...[70]

Օտարազգիների հետ ամուսնութիւնների թեմայով նմուշներից մէկում էլ ասելիքը տեղ է հասցւում կենդանի երկխօսութեամբ՝ հեռախօսային խօսակցութեան միջոցով: Ռուսաստանում գտնուող տղան զանգահարում է մօրը.

– Ա՛յ մէր, գալիս եմ: //– Քէ՛ մատաղ, 10 տարի է աչքս ջուր կտրեց: //– Ա՛յ մէր, մի ռուս կնիկ էլ եմ բերում: //– Ես քեզ էլ մեռնեմ, քու ռուս կնգանն էլ, ա՛րի: //– Ա՛յ մէր, իրեք ըրեխա էլ եմ բերում: //– Ես քեզ էլ մեռնեմ, քու իրեք ըրեխին էլ: //– Ա՛յ մեր, Էդ ըրեխանցից երկուսը շէգ ա, մինը՝ սեւ: //– Արի՛, բալա՛, ա՛րի: //– Բա էրկու սենեակում ո՞նց տենք քնի: //– Տղա՛յ ջան, դու քու կնգա հետ մի սենեակում կը քնես, ըրեխէքը՝ մի, հերդ էլ՝ կուխնումը[71] եոլա կը գնա, մէնակ թէ արի: //– Ա՛յ մէր, բա դու՞: //– Տղա՛ ջան, ես էլ էսա տրուպկէն[72] վեր եմ դնում ու ինֆարկտ ստանամ[73]:

Նոյն թեմայով ֆէյսբուքեան նմուշներից մէկում էլ մօր ու որդու հեռախօսազրոյցի միջոցով աւելի է ընդգծւում ու սրւում կրտսեր եւ աւագ սերունդների մտածողութիւնների տարբերութիւնը. չորս սեւամորթ երեխայ ունեցողի հետ է ամուսնացել ընտանիքի միակ արու զաւակը, ճիշտ է, շատ քաղաքավարի հրաւիրում է հայրենիք ու բոլորին «տեղաւորում» իրենց մէկ սենեականոց բնակարանում, այնուամենայնիւ աւագ սերունդը չի կարող հաշտուել այդ իրողութեանը, ուստի լսափողը դնելուց յետոյ նա գնալու էր կախուելու...[74]

Նման անեկդոտներում զաւեշտի յենք են դառնում նաեւ *լեզուական խնդիրները*՝ տուեալ երկրի լեզուին չտիրապետելը.

Գեղեցիկ երիտասարդին աղջիկների հարցմանը, թէ՝ ի՞նչ է նրա անունը (Как тебя зовут?), պատասխանում է՝ ներկայացնելով աշխատատեղը՝ Ասֆալտի գործարան (Асфальтный завод) (զաւութ՝ անուն, զաւոտ՝ գործարան բառախաղ)[75]:

Մէկ այլ պատումում Ռուսաստանի Դաշնութիւնում յայտնուած հայ

երեխան, կիսատ-պռատ իմանալով տուեալ երկրի լեզուն, ոգեւորուած տանը յայտնում է, թէ իրենց մարզանքի ուսուցիչը հայ է՝ փաստելով դպրոցի ուսուցիչներից իր լսած խօսակցութիւնը, որտեղ *եան* վերջաւորութեամբ բառ էր եղել՝ *Ուչիտէլ ֆիզկուլտուռի Սուրռապիան*[76]:

Արտագնայ աշխատանքի վայրում լեզուական խնդիրներին անդրադառնալիս անդրադարձ է լինում նաեւ հայոց լեզուում օտար բառերի անչափ շատ օգտագործողներին, ինչը շատ դէպքերում օտար միջավայրում դրանք կիրառողներին զաւեշտալի իրավիճակների մէջ է գցում.

Մեր բրիգադում (Պիտէրում) Լոռուայ գիւղերից մի տղայ էր աշխատում: Սա ոսերէնից լրիւ բոբիկ էր: Մի օր, ոնց եղաւ, մեր ռուս շոֆէռին[77] օգնելու համար հետը գնաց շինանիւթ բերելու: Որ ետ եկան, սա իջաւ աւտոյից, դարպասները բացեց ու հենց ինձ տեսաւ, ուրախացած՝ թէ բա.

– Ա բռատ[78], շոֆեռին ասա՝ զադնիով չերէզ վառոտ[79] գայ ու էս այլումինի բոչկի[80] մօտ սամասվալ անի[81]: Ես ու շոֆեռը իրար նայեցինք ծիծաղելով, ու սա զադնով քշեց եկաւ էտ բոչկի մօտ սամասվալ արաւ: Մէկ էլ էս մեր տղէն շշացաւ ու սկսեց խեղճ շոֆեռի վրայ գոռգռալը.

– Ա՛յ անասուն, բա որ հայերէն լաւ հսկանըմ ես, էտ ո՛ր էիր սաղ ճամփին քեզ էշի տեղ դրել... [82]

Շարադրանքի սկզբում միքանի անգամ անդրադարձ է եղել անդիպաշար կառոյցներին եւ դրանցից համապատասխան նմուշներ են մէջբերուել: Դրանք հիմնականում առնչուել են ամփոփ նախադասութեամբ արտայայտուած ժողովրդական ասոյթաբանութեանը: Սակայն կան անդիպաշար կառոյցներ, որոնք անսպասելի ծիծաղն արտայայտում են զաւեշտալի երկխօսութեամբ՝ միքանի տողով ներկայացնելով թէ՛ պանդուխտի կնոջ անհաւատարմութիւնը, թէ՛ - որ ամենազաւեշտալին է - հայ տղամարդկանց մեծ մասի մտածողութեանը յատուկ ցանկութիւն-պատասխանը. ընտանիքում տղայ երեխայ ունենալու մարմաջը.

Մի մարդ 4 տարի խոպանում ա լինում: Կնիկը զանգում ա, թէ՝ //– Ա՛յ մարդ, չես գալի՞, աղջիկ ենք ունեցել: //– Մինչեւ տղայ չունենանք, չըտեմ գայ,– պատասխանում է ամուսինը[83]:

Այս անեկդոտների մէջ գերակշռում են դիպաշարով կառոյցները, որոնք զաւեշտն արտայայտում են տարատեսակ գործողութիւնների նկարագրութեամբ, երբեմն էլ՝ հեքիաթային պատումնաշարերի միջոցով, որոնք աւարտում են պարզամիտ հերոսի՝ անսպասելի ծիծաղ յարուցող մխիթարական խօսքով, կամ էլ՝ անհաւատարմութիւնն «արդարացնող» արտայայտութեամբ:

Այս անեկդոտները միտուած են ոչ միայն մարդկանց տրամադրութեան բարձրացմանը, այլեւ ծիծաղի լեզուով ճշմարտութիւնը բացայայտելուն. ուշադրութիւնը բեւեռելով առկայ թերութիւնների վրայ՝ ինչ-որ չափով նպաստելով նաեւ բացասական երեւոյթների դէմ պայքարին:

Այսպիսով, պանդխտութեանը՝ արտագնայ աշխատանքի նիւթին առնչուող հայկական անեկդոտներում ազգային կենսական նշանակութիւն ունեցող մի շարք խնդիրներ են վեր հանւում.-

Ա. Պանդխտութեան մէջ ճարահատեալ յայտնուած միամիտ ու խեղճ գիւղաշխարհի մարդու մտածողութեան բախումները խոշոր քաղաքների ներկայացուցիչների «եփուած ու թրծուած» մտածողութեանը.

բ. Պանդխտութիւնը ներկայացւում է աւանդական ընտանիքների քայքայման, բարոյական չափանիշների խախտման ենթահողում: Ընդ որում, այդ երեւոյթները երբեմն այնպիսի «քնքշութեամբ» են ներկայացւում, որ կողակցի դաւաճանութիւնը դառնում է զաւեշտի դրսեւորման ինքնատիպ միջոց:

Գ. Նոր ժամանակներում արտագնայ աշխատանքի թեման հայկական երգիծական մանրապատում-զուարճախօսութիւններում ներկայացւում է նաեւ անիրական՝ հեքիաթային տարրերով շաղախուած:

դ. Երբեմն էլ այդ թեման երկրորդական հարթակում է լինում, նշւում է իմիջիայլոց՝ նպաստելով լոկ կառուցուածքային խնդիրների լուծմանը:

ե. Արտագնայ աշխատանքի ու նրա հետեւանքների թեմայով անեկդոտներում զաւեշտն արտայայտւում է կա՛մ երկխօսութեան օգնութեամբ, կա՛մ որոշակի յանկարծակի գործողութիւնների, կա՛մ էլ անսպասելի խօսք-արտայայտութիւնների միջոցով:

զ. Պանդխտութեանը՝ արտագնայ աշխատանքին վերաբերող անեկդոտները միտուած են ոչ միայն նման պարագաներում ծիծաղի լեզուով ի յայտ եկած բացասական երեւոյթները վեր հանելուն, սթափութեան կոչ անելուն, այլ նաեւ քննադատելով՝ նման դրսեւորումները հնարաւորինս կանխելուն, ազգային-մշակութային հիմնական աւանդական արժէքներին՝ հայրենի հողին ու լեզուին ապաւինելուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Ժողովրդական երգիծական մանրապատումներն* ու *զուարճախօսութիւնները* տարանջատել ենք՝ երգիծական մանրապատումի համար հիմք ընդունելով նրա ծաւալուն կամ կարճառօտ դիպաշար ունենալու յատկանիշը, զուարճախօսութեան համար՝ դիպաշար չունենալու հանգամանքը: ԺԹ. դարի երկրորդ կէսից շրջանառութեան մէջ մտած «*անեկդոտ*» եզրոյթն օգտագործում է թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ խմբի նմուշների համար:

[2] Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, Գլուխ Ը., Երեւան, «Հայաստան» Հրատ., 1968, էջ 302-304:

[3] *Էջեր Հայ Միջնադարեան Գեղարուեստական Արձակից*, խմբ. եւ առաջաբան՝ Կ. Մելիք-Օհանջանեան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երեւան, 1957, էջ 8,-9, 17 եւն. նաեւ՝ Արմէնուհի Սրապեան, *Հայ Միջնադարեան Ժրոյցներ*, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1969, թիւ 33, 34, 47, 50, 51, 52, էջ 268, 280-82, 284 եւն.:

[4] *Հայոց Հին եւ Միջնադարեան Արձակի Քրեստոմատիա*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1981, էջ 442, 444 եւն.:
[5] Նոյն, էջ 459, 477-78, 481, 483-84:
[6] *Կապակում են Մովսէսցիները*, Երեւան, «Նոյեան Տապան» Հրատ., 2012, էջ 3:
[7] Միհրան Թումաճան, *Հայրենի Երգ Ու Բան, Հտր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 71:
[8] Միհրան Թումաճան, *Հայրենի Երգ Ու Բան, Հտր. 4*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., *Հտր. 4*, Երեւան, 2005, էջ 187:
[9] Թումաճան, *Հտր. 1*, էջ 86:
[10] Արամ Ղանալանեան, *Առածանի*, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1960, էջ 222:
[11] Սարգիս Յարութիւնեան, *Անէծքի եւ Օրհնանքի Ժանրը Հայ Բանահիւսութեան Մէջ*, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1975, էջ 239-40:
[12] *Համշէնահայ Բանահիւսութիւն*, հաւաք., կազմ. եւ ծանօթ.՝ Յակոբ Գուրունեան, Երեւան, «Լոյս» Հրատ., 1991, էջ 45-47:
[13] Գ. Գէորգեան, *Շնքուշապատում, Հտր. 1*, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970, էջ 309:
[14] *Գիրք Առակաց, (Առակներ, Առածներ, Իմաստուն Խօսքեր եւ այլն)*, պատր.՝ Կարապետ Քահանայ Գալֆայեան, Պէյրութ, Տպարան Տօնիկեան, 1957, էջ 151:
[14] *Հայկական Ճրոյցներ. Առակներ, Առածներ, Մանրավէպեր, Ճուարճալի Ասացուածքներ եւ Իմաստուն Խօսքեր*, պատր.՝ Կարապետ Քահանայ Գալֆայեան, Լոս Անճելըս, Պոզաճեան տպագրութիւն, 1944, էջ 44:
[15] Նոյն, էջ 44:
[16] *Անեկդոտներ, Հատոր Բ*, աշխատ.՝ Յովհաննէս Նազարեանց, Տփխիս, Տպ. Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 20-21:
[17] Ռաիսա Խաչատրեան, *Թալին, Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն, Հատոր 19*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999, էջ 106:
[18] *Անեկդօտներ, Հատոր Գ.*, աշխ. Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, 1883, էջ 20-22:
[19] *Անեկդօտներ, Հատոր Գ.*, էջ 21:
[20] *Անեկդօտներ, Հատոր Գ.*, էջ 21-22:
[21] Ռուպ – դոշաբ, թանձր եփած հիւթ:
[22] *Գիրք Առակաց*, էջ 140-41:
[23] ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Բանահիւսութեան արխիւ, FF1, Գ. Թարվերդեանի ֆոնդ, Սալմաստ, «Մարթը կնիկ», էջ 1603:
[24] *Միջ-Գաւառական Անեքթոտներ*, հաւաք. եւ ներկ.՝ Յակոբ Չոլաքեան, Բ. տիպ, Տպ. Արեւելք, Հալէպ, 2005, էջ 76-77:
[25] *Միջ-Գաւառական Անեքթոտներ*, հաւաք. եւ ներկ.՝ Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, Տպ. Արեւելք, Հալէպ, էջ 46:
[26] Գէորգեան, էջ 309:
[27] Քիմի – նման:
[28] Գէորգեան, էջ 309:
[29] Ան – եւ, ու:
[30] *Բաքուի Հայոց Բանահիւսութիւնը*, կազմ.՝ Ալվարդ Ղազիեան եւ Սվետլանա Վարդանեան, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2004, էջ 218-20:
[31] Խազային (ռուս.) – տանտէր:
[32] Հի՞նչ ա լյալ – ի՞նչ է եղել:

[33] Խոխեքյս – երեխաներս:

[34] Դրա համար էլ արտագնայ աշխատավայրը, անկախ տեղավայրից, ժողովուրդը սկսեց անուանել խոպան, իսկ աշխատողներին՝ *խոպանչիներ*. պարզ էր, արտագնայ աշխատանքի մեկնողները պանդուխտներ չէին կարող կոչուել, քանզի, ըստ խորհրդային գաղափարախօսութեան, պանդխտութիւնը դրամատիրական հասարակարգի արդիւնք էր, իսկ ԽՍՀՄը բոլորի հայրենիքն էր:

[35] Արմէն Շ. Սարգսեանի անձնական հաւաքածու (ԱՍՇՀ):

[36] ԱՍՇՀ:

[37] ԱՍՇՀ

[38] ԱՍՇՀ:

[39] Բաբուշկա ումերլա (ռուս.) – տատիկը մահացել է:

[40] Սմերտ պրոդոլժաետսյա (ռուս.) – մահը շարունակւում է (ԱՍՇՀ):

[41] «Լօռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[42] ԱՍՇՀ:

[43] *Եղինջ երգիծաթերթ*, Վանաձոր, Օգոստոս 1996, թիւ 4:

[44] «Լօռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[45] ԱՍՇՀ:

[46] Գիւղաշխարհի մարդկանց յայտնի «Բելոռուս» մակնիշի տրակտորը պէտք է անպայման *լաֆէտով* կցորդով լինէր:

[47] ԱՍՇՀ:

[48] ԱՍՇՀ:

[49] Խոխէք – երեխաներ:

[50] Խրեգ – քիչ:

[51] Ուրուգիւ – երեկոյ:

[52] Քըշանալ – առաջ գնալ:

[53] Դինջանալ – հանգստանալ:

[54] ԱՍՇՀ:

[55] Ս. Ղազարեան, *Եկէք Մի Քիչ Ուրախանանք, Մեր Հոգսերից Թեթեւանանք. Անեկդոտներ*, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., էջ 19:

[56] Ս. Աբազեան, *Նոյեմբերեան Կատակներ, Անեկդոտներ, Սրամտութիւններ*, Վանաձոր, «Արմինֆօ» Հրատ., 1999, էջ 21-22:

[57] ԱՍՇՀ:

[58] Ա.Շ. Սարգսեան, *Մանկական Զուարճախօսութիւններ*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2016, էջ 116:

[59] ԱՍՇՀ:

[60] «Լօռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[61] Սարգսեան, *Մանկական*, էջ 232:

[62] Սիւրպրիզ (ռուս.) – անակնկալ:

[63] «Լօռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[64] Եդնուց – յետոյ:

[65] «Լօռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[66] ԱՍՇՀ:

[67] Վոժդ (ռուս.) – առաջնորդ:

[68] ԱՍՇՀ:

[69] Ամօթաթիքա (ամօթի, ամաչելու թիքա՝ պատառ): Ընդհանուր ափսէում եղած ուտեստից օգտուելիս երբ տակը մնում է մի կտոր (շերտ, պատառ, հատիկ...),

սեղանակիցներից ոչ մեկը, ամօթ համարելով, ամաչում է, չի համարձակւում վերցնել: Ափսէում այդ մնացածը ժողովուրդն անուանել է *ամօթաթիքա*:

[70] ԱՍՇՀ:

[71] Կուխնյա (ռուս.) – խոհանոց:

[72] Տրուպկա (ռուս.) – լսափող:

[73] Ա. Բաբայեան, *Էջեր Լոռուայ Բանահիւսութիւնից*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 2007, էջ 61:

[74] «Լոռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ (Մարտ 2020):

[75] «Լոռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[76] Ս ուտռա պեան (ռուս.) – առաւօտուանից խմած: Ուչիտէլ ֆիզկուլտուռի Ս ուտռա պեան (ռուս.) – Ֆիզկուլտուրայի ուսուցիչը առաւօտուանից խմած է («Լոռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ):

[77] Շոֆեռ (ռուս.) – վարորդ:

[78] Բոատ (ռուս.) – եղբայր:

[79] Զադնիով չերէզ վառոտ (ռուս.) – հետեւի վրայ՝ դարպասով:

[80] Բոչկա (ռուս.) – տակառ:

[81] Սամասվալ անել (ռուս.) – բեռնաթափել:

[82] «Լոռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

[83] «Լոռուայ Հումոր» ֆէյսբուքեան էջ:

THE ISSUE OF ECONOMIC MIGRANTS IN ARMENIAN POPULAR HUMOURISTIC ANECDOTES AND JOKES

(Summary)

ARMEN SARGSYAN
armensargg@gmail.com

For centuries migrant working has been an inseparable part of the Armenian nation. Alongside historiography and literature various expressions of popular folklore have reflected this issue in their own manner.

For the first time ever the paper focuses on anecdotes that touch upon various facets of Armenian migrant workers' lives and the negative impact of migrant working on Armenian family life.

The paper notes that unlike other sorts of folkloric materials, which highlight various aspects of migrant working and negative implications, Armenian anecdotes raise the issue undeterred, with no limitations and in a sarcastic manner. Furthermore, they maintain the national spirit, vitality and liveliness, yet at the same time enhance awareness of its implications.

ԼԵՒՈՆ ԽԵՉՈՅԵԱՆ. ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
vachik_grigoryan@mail.ru

Լեւոն Խեչոյեանը (1955-2014) հայ գրականութեան յետանկախական շրջանի աչքի ընկնող արձակագիրներից էր, որն իր ստեղծագործութեամբ շարունակեց նախորդ շրջափուլի աւանդներն ու միաժամանակ ստեղծեց իրեն յատուկ գրական ճաշակ:

Եթէ ԺԹ. դարում Յովհաննէս Թումանեանը, Լեւ Տոլստոյը համոզուած էին, որ հասարակական կեանքի զարգացումն իվերջոյ գնում է վերընթացի ուղիով, բարին յաղթելու է, իսկ չարը պարզապէս դուրս կը մղուի այդ ընթացքից, իսկ Հրանտ Մաթեւոսեանի աշխարհը երկբեւեռ կառոյց է՝ չարը հիմնական երեւոյթ է աշխարհի մէջ, գրողն այլեւս չունի նախորդների վստահութիւնը վաղուայ օրուայ հանդէպ, ապա Լեւոն Խեչոյեանի աշխարհը բերում է ԻԱ. դարի քաոսում յայտնուած մարդու մէնութեան թեման՝ աշխարհը դարձել է յարձակողական ու չար, բոլոր նախկին իտէալներն անցեալ են, մարդուն մնում է գերեզմանակուր տառապանք-ճիգով պահպանել սեփական ինքնութեան սահմանները. նա օգնութեան որեւէ յոյս չունի, քանի որ ժամանակը նրան զրկել է այդ ամէնից: Հետեւաբար ժամանակը՝ որպէս ուղղագիծ երեւոյթ, որ մարդուն դուրս է բերելու որեւէ նպատակի՝ պարզապէս բացակայում է գրողի երկերում: Դա կարող է լինել միայն երեւոյթների արտաքին, հաշուարկելի ձեւերը ներկայացնող ժամանակը, որ կարեւոր չէ Խեչոյեանի համար: «*Իրականում կայ փիեզերական ժամանակ, որով Աստուած սպանում է մարդկանց*»[1]: Մարդու փրկութեան ուղիները միայն իր ձեռքում չեն, համատիեզերական ժամանակը ոչ թէ կայացնելու, այլ սպանելու ուղիով է ընթանում: Մարդկային դիմակայութիւնն արտայայտւում է տեւական մաքառումների պատմութիւններով: Յետարդիական փիլիսոփայութեան համար պատմութիւնը բաց է անվերջ մեկնաբանութիւնների համար, որոնք բնոյթով յարաբերական են. պատմութիւնը չունի տրամաբանութիւն:

> Դրամատիկականի ներքին լիցքը, որ առկայ է Խեչոյեանի ստեղծագործութեան մէջ, պայմանաւորուած է ոչ միայն անհատի՝ մահը վերջնականապէս յաղթահարելու անհնարինութեամբ, այլեւ հայ ժողովրդի ճակատագրի բարդ ընթացքով.
>
> Եթէ դարերի միջով հետեւենք հայրենիքը կորցնելու ենթագիտակցական վախի ելեւէջներին, կը տեսնենք՝ սարսափը ընդհանրապէս մեզ չի լքել: Ես չեմ յիշում որեւէ ժամանակ մեր մէջ եղած լինէր, անգամ, ամենաբարձր մտաւոր պայծառութեամբ օժտուած հանճարեղ մէկը, որ կարողանար խաղաղութեան մէջ ապրել, չվախենար թաշկինակի չափ մնացած երկիրը կորցնելու մտքից[2]:

Այս զգացողութեամբ են գրուած Խեչոյեանի բոլոր գործերը:

Նրա հերոսները յայտնւում են անդունդի եզրին եւ միշտ կարողանում են «փրկուած» դուրս գալ, որպէսզի յաջորդ պահին յայտնուեն ժամանա-

կային այն դաշտում, որտեղ բոլորն են հաւասար: Այստեղ խօսքը մարդուն է վերաբերում, որը չունի ազգային պատկանելութիւն.

...Մի տարածութիւն, մի ժամանակ էլ կայ ժամանակից դուրս, որտեղ մարդու որդիները՝ լինի ակադեմիկոս, աստղագէտ, նկարիչ, գրող, հովիւ թէ խառատ, այդ տարածութեան, այդ ժամանակի մէջ բոլորը հաւասարւում են, նոյնը՝ ազգերին, ժողովուրդներին, նրանց քաղաքներին է վերաբերւում, որ մի տարածութեան, մի ժամանակի մէջ, իրենց մշակոյթով բոլորը հաւասարւում են[3]:

Այս դէպքում խօսքը Մաթեւոսեանի դիտարկմամբ՝ «մեծ թռիչքներին» է վերաբերում: Երբ գրողը կարողանում է բացայայտել մարդկանց միջեւ եղած ընդհանուրը, նրանց վրայից «ընկնում է ազգային տարազը»: Իհարկէ, երեւոյթների հանդէպ նման վերաբերմունքը Խեչոյեանի ստեղծագործութեանը հաղորդում է մարդասիրական որակ: Ներքին մարդու բացայայտումը, նրա պեղումը ժամանակի, քաղաքակրթութեան բերած ժանգի տակ, դառնում է գրողի համար հիմնական նպատակ: Սրանով է պայմանաւորուած այն հանգամանքը, որ օտար ընթերցողը եւս անտարբեր չէ նրա գրի հանդէպ.

Լեւոն Խեչոյեանի արձակը այդ մշակոյթի բոյրը չզգացած ընթերցողի վրայ անգամ ազդելու հզօր լծակներ ունի: Որովհետեւ անհատի ողբերգութիւնը, որով ներծծուած է նրա ողջ ստեղծագործութիւնը, դուրս է ազգային սահմաններից եւ ունի մեծ ընդգրկում[4]:

Խեչոյեանը ենթագիտակցականի գրող է: Դա փաստում է նրա ողջ գրականութիւնը: Հարցազրոյցներում յաճախ է յիշում, որ ինքը նախապէս ոչ կարող է որոշել, թէ տուեալ գործն ինչ ծաւալ է ունենալու եւ ոչ էլ որոշակի պատկերացնել դէպքերի զարգացման ընթացքը: Գրողը նման է «զանգուլակներով կոյր անցորդին», որ չի գայթակղւում երկրորդական պատկերներով, չի տեսնում այն, ինչ անկարեւոր է եւ գնում է ճշմարտութեան քարը որոնելու: Նա կարող է տեսնել աւելին, քան սովորական մահկանացուները, քանի որ շատ բան տեսնում է հոգու աչքերով: Նպատակի ետեւից գնացողներից շատերն են մնում ձեռնունայն, քանի որ արուեստի կայացման հրաշքը նրանց չի այցելում.

...Եօթ սարի ետեւ, լոյս ու մութ աշխարհ գնացած մարդու որդիներից քչերի համար է այդ ծուխից հազարան բլբուլը ծնւում, շատերի համար նրանից սովորական թռչուն՝ հաւ է դուրս գալիս: Շատերն են կանչուած, քչերը՝ ընտրեալ...[5]:

Միայն ներքին տառապանքով, հոգու խորքերից ծնուած բառը կարող է ճշմարիտ գրականութիւն դառնալ, հակառակ դէպքում ոչինչ չի ստացուի. «*Մեղուն գնում է հեռու տեղից ծաղկեփոշի է բերում, եւ որպէսզի մի կաթիլ, մի կաթիլի կէսը մեղր սպանայ, մի քանի տարբեր ծաղիկների վրայ է կանգնում: Բառն էլ է էդպէս. տարբեր բառերի ընտրութիւնից, համադրութիւնից յետոյ մէկ էլ տեսնում ես՝ սա քո բառն է*»[6]:

Իրապէս, բառի յայտնաբերում-յայտնագործումը գրողի համար խիստ կարեւոր է: Բայց թող չստեղծուի այն տպաւորութիւնը, թէ բառը փրկում է Խեչոյեանի էջը: Ուժեղ է ինչպէս նրա ընտրած բառը, այնպէս էլ ողջ շարադրանքը: Դա տառապանքով, երկար աշխատանքով, ինքնամաքառման ճանապարհով ստեղծուած գրականութիւն է, որ ինքնայատուկ գիր, նկարագիր ունի, այն չես շփոթի մէկ այլ գրողի էջի հետ. մարդկային ճշմարիտ տառապանքն ու աշխարհընկալումն ինքնայատուկ է, որ չեն դրսեւորուի թոյլ ու կեղծ ձայնով, քանի որ այդ գրականութիւնը կոչուած է ամենահեռաւոր վայրերում իսկ հնչեցնելու գրողի տագնապն ու ցաւը, որ աշխարհի տագնապն ու ցաւն է:

Աշխարհի անարդարութիւնը մերժող հերոսը դառնում է Խեչոյեանի ստեղծագործութեան առանցքում գտնուող մարդը, որ փորձում է կարգի գցել շաւղից դուրս ընկած ժամանակը, բայց անզօր է, քանի որ հեղեղի բերանն ընկած արմատախիլ ծառի նման անկարող է որոշել, թէ մինչեւ ուր եւ ինչ ճանապարհ է անցնելու: Լաւագոյն դէպքում նա կարող է միայն նկատել միւս լողացող առարկաներն ու մարդկանց, ովքեր յենարան չունեն եւ անկանխատեսելի է նրանց բոլորի ապագան:

Այսուհանդերձ խեչոյեանական գրի հմայքն այն է, որ գրողը նախապէս իմանալով հասարակական կեանքի կանոնակարգերի բացակայութեան մասին, շատ լաւ հասկանալով իր արածի «անտեղիութիւնը», այդուհանդերձ պայքարում է յանուն մարդու, յանուն նրա արժանապատիւ ապրելու իրաւունքի, յանուն վաղուայ օրուայ:

Խեչոյեանը՝ որպէս գրող, արդէն պատրաստ էր մտնում գրականութիւն, նա քաջատեղեակ էր ինչպէս հայրենի գրականութեան ձեռքբերումներին՝ առաջին հերթին Մաթեւոսեանի արձակին, այնպէս էլ համաշխարհային գրականութեան նուաճումներին, որոնք կարող էին նրան օգնել ասելիքի մատուցման ձեւերի յայտնաբերման հարցում:

Խօսքը տուեալ դէպքում վերաբերւում է իռլանդացի Ջէյմս Ջոյսին, որի *Դուբլինցիներ* ժողովածուն անգլիական գրականութեան նուաճումներից է: Գրողներն իրենց հոգեկից արուեստագէտներին կարողանում են յայտնաբերել ներքին զգացողութեամբ՝ անկախ ժամանակային հեռաւորութիւնից: Ջոյսի ճակատագիրը շատ կողմերով նման էր Խեչոյեանի ճակատագրին: Կորցրել էր հօրը, շատերի նման լքել էր երկիրը՝ իհարկէ ներքին հաստատ համոզմունքով, որ գրելու էր իր լքուած հայրենիքի մասին:

Խեչոյեանի նախնիները Վրաստանի հայաբնակ Բարալէթ գիւղ էին եկել Էրզրումից, յետագայում նրանք ստիպուած էին անցնել Հայաստան: Հարցազրոյցում գրողն ասում էր, որ պապի հայրը թաղուած է Էրզրումում, պապը՝ Վրաստանում, իսկ հայրը՝ Հայաստանում[7]: Սա արեւի տակ սեփական տեղը, հայրենիքը մի կերպ պահող ածուի տան պատմութիւնն է, որտեղ դրամատիկականի չափաբաժինը բաւականաչափ մեծ է: Այստեղից էլ նրա՝ որպէս գրողի մարդկային կերպարի դրամատիկ-մելամաղձոտ

բնոյթը: Սկզբից եւեթ՝ Խեչոյեանի հայրենիքը Ջոյսի Դուբլինի նման դառնում է իր ժողովրդի պատմութեան, նրա գոյընթացի «կաթուածի կենտրոն»ը: Դուբլին քաղաքը մարդկային յարբերութիւններով ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք հնարաւորութիւն չեն տալիս կամ բարդացնում են մարդու կեանքը: Դա կեանքի կաթուածի կենտրոն է, որտեղ ապրելը, մարդ մնալն է դժուար: Այստեղից էլ սկսւում է Խեչոյեան-արուեստագէտի ճանապարհը, իրականում, նրա՝ յետագայում գրուած գործերը չեն փոխում իրենց բնոյթը: Կաթուածը շարունակւում է ե՛ւ ներկայի, ե՛ւ պատմութեան, ե՛ւ ապագայի վրայ: Բայց Խեչոյեանը ոչ թէ պատմութիւններ է պատմում, այլ աւելի շուտ խօսում է մարդկային հոգիներում կատարուող իրադարձութիւններից:

Խնկի Ծառեր (1991) ժողովածուի ցանկացած պատմուածքի մասին կարելի է խօսել երկար, «Որովհետեւ կարեւորը պատմութիւնը չէ, այլ խնդրի լրջութիւնը»[8]: Գրողը հենց սկզբից ընտրել էր ճիշտ ճանապարհը՝ երեւոյթների մեկնաբանութեան ներքին ընթացքը: Ծաւալուելու փոխարէն նա գնում է երեւոյթներն արագընթաց ուղիով բացայայտելուն: Եւ որպէսզի ընդգրկի հասարակական կեանքը հնարաւորինս լայն պատկերներով, գրողը երեւոյթները բացայայտում է տարբեր տեսանկիւններով կամ տարբեր տարիքային հոգեբանութեան տէր մարդկանց հայեացքով: Խեչոյեանն իրադարձութիւնները ներկայացնում է դեռահասի, երիտասարդի եւ հասուն մարդու դիտանկիւնով: Իդէպ՝ Ջոյսի *Դուբլինցիները*ը եւս կառուցուած է այս սկզբունքով. տարիքային տարբեր աշխարհները պիտի ամբողջացնէին կեանքը՝ առանձին դրսեւորումներով: Խեչոյեանն ընտրել է այս ճանապարհը եւ ստեղծել հայ գրականութեան մէջ բացառիկ պատմուածքներ՝ իրենց ներքին ուժականութեամբ, կեանքի կենսական ազդակներով: Խօսքը դառնում է վերին աստիճանի խիտ ու բովանդակալից, քանի որ գրողը ոչ թէ պատմում է դէպքը, այլ աւելի խօսում է հետեւանքների մասին: Դա է պատճառը, որ նրա պատմուածքները յուզական մեծ լիցք ունեն: Թէեւ *Խնկի Ծառեր*ի պատմուածքները ժողովածուի ամբողջութեան մէջ են իրենց իմաստը բացայայտում, դրանք ժամանակի մէջ գոյատորուող հայրենիքի մարդկանց մասին են, այսուհանդերձ ամէն պատմուածք կառուցիկ ամբողջութիւն է, որ որոշակիութեան հետ հարցադրումները յարաբերակցում է տեւական ժամանակին:

Առաջին իսկ երկով՝ «Սպասում», գրողը բաւականաչափ ծանր խնդիր է առաջադրում ինքն իրեն: Խօսքը դեռահասի եւ մեծերի աշխարհին է վերաբերում: Առաջին անգամ երեխան լրջօրէն հաղորդակցւում է մեծերի աշխարհին եւ, բնականաբար, տանուլ է տալիս: Դեռահասն օգնութեան կարիք ունի, եւ դա բնական է: Երեխան ամէնից ապահով իրեն զգում է իր տանը, եւ դա եւս հասկանալի է: Դժուար է պատկերացնել, որ դաւաճանութիւնը կարող էր այդքան մօտ լինել նրան: Դեռահասն առնչւում է մեծերի աշխարհին, ուր քիչ է ասել, թէ վտանգները շատ են: Այստեղ խաբէու-

թիւնն ու ստորութիւնը սահման չեն ճանաչում, որ ամրագրուած են ժամանակով ու երկրի քաղաքականութեամբ: Սա մի ժամանակ է, երբ երեխան մանկան անմիջականութեամբ մատնում է արիւնակցին՝ նրան ակամայ յանցանք վերագրելով: Դրան մեծերը հասել են դպրոցում իրականացուող դաստիարակութեամբ ու նաեւ ընտանիքով, որ երկրի քաղաքականութեան մի մասն է՝ նեղմիտ ու ընկերային խնդիրներով ծանրաբեռ:

«Դպրեւորն ինձ հարցրեց. «Վկայ, պիոնէ՞ր ես»: «Այո»,- ասի:- «Գիտե՛ս, որ սուտ ցուցմունք տալ չի կարելի»: Ասի. «Դասղեկը ասել է, դպրոցի դիրեկտորն ասաց, եթէ խաբեմ, ինձ դպրոցից դուրս կը հանեն»[9]: Երեխան իրականում ցուցմունք չի տալիս, նա կատարում է մեծերի դրդմամբ աւելի ծանր յանցանք. միջավայրի պարտադրանքով երեխան գողանում է պապի ներաշխարհի տառապանքն ու դրանից յանկարծակի դուրս պրծնելու յոյսը, ելքը, որպէսզի Բեռլին հասած, այնտեղ ոտքը թողած ու յաղթանակով վերադարձած հերոսի պարտութիւնը դառնայ կատարեալ:

Մանկութեան շրջանը ներկայացնող գործերից է «Կարմիր Կօշիկներ»ը: Յուզական առումով այն գուցէ եւ գերազանցում է նախորդին: Այստեղ էլ խօսքը երեխայի ու մեծերի աշխարհի բախումի մասին է: Նա, որ հայեացքը մեծերի վրայ էր պահելու, նրանցից էր սովորելու, նրանցից էր օգնութիւն հայցելու, յանկարծ յայտնւում է մի իրադրութեան մէջ, որտեղ մեծերն են զգում փոքրի օգնութեան կարիքը:

Խեչոյեանը տուեալ պարագայում օտարման աղբիւրը փնտռում է միջավայրի՝ ընտանիքի մէջ: Այս իմաստով այդ գործերն իրենց ներքին փիլիսոփայութեամբ աւելի մօտ են 1960ականների ամերիկեան արձակում երեխայի հոգեբանութիւնը բացայայտող երկերին (Վան Սկոյկ, Կուրտ Վոննեգուտ, Կարսոն Մակկալլերս): Նոյնը կարող ենք ասել Սելինջէրի դեռահաս հերոսի՝ Հոլդէն Քոլֆիլդի մասին, ով օտարման աղբիւրը տեսնում է միջավայրում:

Երեխայի համար «կաթուածի կենտրոն» է ոչ միայն սեփական ընտանիքը, այլեւ միջավայրը՝ անմարդկային վարքով («Ամբոխը», «Երկու Կրակոց»):

Խեչոյեանի պատմուածքները հիւանդ հասարակութիւնից դէպի սեփական ինքնութիւնը գնացող ճանապարհ են յիշեցնում («Հայրս», «Խոզը»...):

Համանուն ժողովածուի «Խնկի Ծառեր» վիպակը Խեչոյեան գրողի սրտի խոստովանանքն է սերունդներին, որտեղ կորուստների, կործանումների բովով անցած տոհմի պատմութիւնը ներկայացւում է կենդանի, գոյնեղ մարդկանց բնաւորութիւնների հետեւողական պատմութիւն-թուարկումներով: Նա չի փորձում վերաձեւել իրականութիւնը՝ իրեն ցանկալի ուղիով դէպքերը ծաւալելու համար: Երեւոյթների եւ գրողի արարած աշխարհի միջեւ եղած տարածութիւնը հնարաւորինս կրճատւում է. նրան մնում է գրական աշխարհում նորովի յայտնագործել մարդկանց, որոնք կենդանի բնաւորութիւններ են, ապրում են օրուայ, նաեւ պատմութեան բերած հոգսերով: Վիպակի հիմքում ակնյայտ է ժողովրդական լեզուա-

մտածողութեան եւ իրականութեան բանահիւսական-առասպելական ընկալումը:

Խեչոյեանի հերոսները կեանքի փորձով հարուստ, անցեալի տառապանքով ծանրաբեռ մարդիկ են, հետեւապէս ոչ-սովորական են ու ինքնատիպ: Նրանց անցեալը կենդանի է եւ որոշակիօրէն ուղղորդում է ներկան: Խեչոյենց տոհմը հարկադրուած լքել է Էրգիրը, որ Աստծու կամօք ի վերուստ տրուած էր իրենց, բայց պատմութեան քառուղիներում ի յայտ եկան նորերը, որ բորենու ախորժակով խժռեցին բնիկ ժողովրդին, իսկ մնացորդները քշեցին երկրից դուրս: Մարդիկ շարունակեցին ապրել է՛լ աւելի ծանր կեանքով:

Պատմութեան պարտադրած կորուստները, որ անդառնալի են, վիրաւորանքն ու անարգանքը, որ ծանրանիստ խարանի նման նստում են մարդու գիտակցութեան, հոգու, ներաշխարհի բազմաշերտ ծալքերին, նրան դարձնում են մարտահրաւէրների առաջ խոցելի ու անպաշտպան, ներքին դիմադրութիւնից եթէ ոչ զուրկ, ապա՝ թոյլ ու ջղագրգիռ: Ահա թէ ինչու տոհմի տղամարդկանց սերնդի մէջ անպայման գտնւում է մէկը, ով լիալուսնի օրերին գլխացաւից տառապում է, յաճախ տապալւում՝ կործանման նշանն ուղեցոյց ունենալով: Երկնքում նորալուսինը յիշեցնում է թուրքական դրօշի պատկերը: Հայկուշ տատը կրծքով չի կարողանում կերակրել երեխաներին, քանի որ, երբ դեռ աղջնակ էր, թուրքերը սրով հատել էին նրա պտուկները եւ բռնաբարել մօրն ու քրոջը:

Վիպակում այս շերտը, որ պատմութեան եաթաղանից մնացած կենդանի սպին է, շատ բանով է պայմանաւորում հերոսների նկարագիրը, նրանց անցնելիք ուղին: Այս համընդհանուր ցաւից ազատագրուելու համար դարեր են պէտք. դպրոցի տուած գիտելիքների ողջ իմաստութեամբ Նիզարը բացատրում է ստեղծուած կացութիւնը. «*Նրանց տոհմի արեան ու սերմի մէջ շրջապտոյտ է գալիս լուսինը՝ եաթաղանի տեսքով: Նրանց դեռ չծնուած պտուղը իր մէջ ունի էրգրի պատմութիւնը եւ գիտի, որ երկնքում կայ մէկ օրական լուսին, ու նա փայլատ շեղբի տեսք ունի: Փրկութիւնը լուսինը ջարդելու մէջ է*» (134):

Սա, կարելի է ասել, գրողի հայեացքն է երեոյթներին: Ցեղասպանութեան մասին հայ գրականութիւնը բազմաթիւ գործեր ունի ստեղծած: Խեչոյեանը ոչ պատմում է դրա մասին, ոչ էլ քննում պատճառները: Նրան հետաքրքրում են երեւոյթի թողած հետեւանքները. խօսքը ոչ միայն մարդու բարոյական, հոգեբանական նկարագրի մասին է, այլեւ նրա ֆիզիկական վիճակի. մարդը կրում է իր մէջ եղած պատմութեան այսահարուած արիւնը:

Այս իմաստով Խեչոյեանի հերոսները մօտենում են Մուշեղ Գալշոյեանի Էրգիրը կորցրած մարդկանց, որոնք իրենց յոյսը դնում էին նոր սերնդի վրայ, ով իր երակներում այլեւս պատմութեան վառած արիւնը չի ունենալու: Եւ դա մեծ չափով կապուած է նոր սերնդի դաստիարակութեան, աւելի

ճիշտ՝ վերադաստիարակութեան հետ[10]: Խեչոյեանը հիւանդութեան բուժումը դարերի մէջ է տեսնում, քանի որ երեւոյթը ոչ այնքան գիտակցութեան հետ է կապուած, որքան մարդու ֆիզիկական, հոգեկան վիճակի: Պատմութեան՝ մեզ բերած արհաւիրքի չափաբաժինն այնքան մեծ է ու ծանր, որ այսահարուած արիւնը սերունդների էութեան մէջ դարձել է օրգանական երեւոյթ՝ պայմանաւորելով մեր հոգեբանական, աշխարհայեացքային իւրայատկութիւնները:

Մատուցման ձեւի առումով գրողի համար շատ կարեւոր էր Աստուածաշնչից եկող, նաեւ Ջոյսի գրական աշխարհին բնորոշ միջոցի՝ յայտնութեան յայտնաբերում-գործադրումը: Դա միայն նրա պատմուածքների ու վիպակի համար կառուցուածքային ընդհանուր ձեւի բացայայտում չէր: Սա որոշակիօրէն նաեւ աշխարհայեացքային նշանակութուն ունէր գրողի համար: Խորհրդաւորն ու մինչեւ վերջ անընկալելին մնում են Խեչոյեանի գրական զինանոցի հիմնական կռուանները: Յայտնութիւնը՝ որպէս կառուցուածքային իւրայատկութիւն, ընդլայնում է խօսքի սահմանները: Աւելին՝ այն գործադրւում է նաեւ որպէս ստեղծագործական մեթոդ:

Յանկացած երեւոյթ Խեչոյեանի համար խորքում պահում է անսովորն ու խորհրդաւորը: Այդ պատճառով էլ նրա երկերի նպատակը դառնում է կեանքի այս կամ այն գաղտնիքը յայտնութեան շնորհիւ բացայայտելը՝ աւելի յաճախ ընթերցողին թողնելով երեւոյթների կռահման գեղագիտական հաճոյքը: Սա է պատճառը, որ նրա մեծ ու փոքր գործերում մինչեւ վերջ պահպանւում է սադրանքը: Առանձին խորհրդանիշների, պատկերների շնորհիւ գրողը կառուցում է ասելիքը, բայց յայտնութիւնը նրա երկերին տալիս է լրացուցիչ բովանդակութիւն եւ կամ բովանդակութեան հնարաւորինս ամբողջականութիւն: Հետեւապէս՝ նրա ստեղծագործութիւնների մասին խօսելիս մշտապէս հարկ է նկատի ունենալ, որ գրողի ենթակայական աշխարհը գերակայ նշանակութիւն ունի առարկայական իրականութեան համեմատութեամբ: Գործուն ընթերցողի ներկայութիւնը պարտադիր է խեչոյեանական բնագիրն ուսումնասիրելիս:

Խնկի Ծառեր ժողովածուի պատմուածքները տարբեր տարիքային հոգեբանութեան տէր հերոսների հայեացքով բացուած աշխարհ են:

Հայրենի Ջաւախքում գրողը տեսնում է կաթուածի այն նախանշանները, որոնք յետագայում դառնալու էին աւելի տեսանելի ու մահացու: Դա արդէն երկրաշարժն է, պատերազմը. կործանումների ովկիանում գնալով աւելի ու աւելի դժուարին է դառնում մարդ մնալը: Յետագայում այս գաղափարն արտայայտւում է եւ նրա խոհագրութիւնում՝ «Եւրոպայի Երկաթէ Ճանապարհներին», որ կարելի է համարել այս հարցադրման ամբողջական դրսեւորումը: Բաց բնագրով գրողն ասում է այն, ինչը նրան անհագստացրել է դեռեւս գրական ճանապարհի սկզբին.

Ահա տիեզերքի յաւերժ խաղաղութեան մէջ փքուած, կլոր փորի նման երկրագունդը, նրա պորտը՝ բիբլիական Անդրկովկասը ցնցւում, թպրտում է, այդ պորտի բաց վէրքի վրայ է մշտապէս ցանւում աղը:
Չոր հողի երեսը առատօրէն թրջած, պղպջացող արիւնը Կովկասի բնակչի համար բնաջնջման սարսափ սփռող անասնական վախ է դարձել (338):

Եւրոպացու համար, տուեալ դէպքում՝ Ջոյսի, այս պատկերի կողքին Դուբլինը դրախտ կարող էր թուալ: Սա միայն կաթուածի կենտրոն չէ, այլ ուղղակի մսաղաց, որից քչերն են խուսափում: Այստեղ ապրելու համար մարդիկ մաքառելու են ամէն Աստծոյ օր, քանի որ Անդրկովկասը աշխարհագրական դիրքի պատճառով, հազարամեակներ շարունակ «*դէպի ծրագակրակը նեպտուող գիշերային թիթեռի նման թռչկոտում է Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ*» (339): Մարդիկ դարձել են առաւել նախայարձակ, մարդատեաց ու չար: Եթէ մի ժամանակ աստուածաշնչական աշխարհը կողմնակից էր մարդու ապրելուն, երկնքով անցնող հրեշտակը փրկութեան լոյս էր բերում վիրաւոր մարտիկին, ապա այսօր հրեշտակներն այլեւս չեն կարողանում իջնել այրուող հողին, եւ «*իրենք էլ զինուորի հետ մեռնում են անօգնական*» (339): Այլեւս աղարտուած է Աստծոյ աշխարհը, Աստուած փնտռում է իր երբեմնի արարչագործութիւնն ու չի գտնում «*երկրագնդի երեսից գիշերուայ մի ակնթարթում կորած իր լեռանը, իր լճին, իր քաղաքին, խնձորի այգուն, իր մարդուն, կորած իր հրեշտակին*» (339): Եթէ ժամանակներն այդքան խառն են ու վտանգաւոր, մնում է մի ելք, որ փրկելու է մարդկութեանը: Գրողի գործն այլեւս զինուոր դաստիարակելը չի լինելու, այլ «*մէկ ազգի, մէկ պետութեան ոչնչանալը երկրագնդի կործանում համարելը*» (նոյն):

Առաջին գիրքը՝ *Խնկի Ծառեր* վերնագրով, կեանքի իրողութիւնները բացայայտող գեղարուեստական տարածութիւն է: Այստեղ խորհրդանիշը դեռեւս չի խաղում այն գերակայ նշանակութիւնը, ինչը տեսնում ենք յետագայի երկերում: Թէեւ Խնկի Ծառն ինքնին կեանքի եւ մահուան միասնութիւնն արտայայտող խորհրդանիշ է եւ ներքին հակադրութիւնն արդէն կրում է իր մէջ, սակայն ժողովածուն՝ որպէս ամբողջութիւն դիտելուց յետոյ, դրանից, ընդհանուր բնագրից վերացարկուող գաղափարի արդիւնք է դառնում գլխաւոր խորհրդանիշը՝ «խնկի ծառեր»ը: Խեչօն տնկել է այդ ծառերը՝ դրանք անցած ճանապարհի, մաքառումների վկաներն են, բայց դրանք դառնում են եւ նոր ժամանակների կորուստների վկայութիւն: Խնկի ծառը դառնում է կենդանի համատեղումը, որ իր մէջ ներառում է կեանքի սկիզբն ու վերջը, կեանքն ու մահը: Պատահական չէ, որ այն չինական առասպելաբանութեան մէջ հանդէս է գալիս որպէս երկակի բնոյթով խորհրդանիշ, քանի որ դրա տերեւները մթին են վերեւից (արեւային) եւ լուսաւոր են ներքեւից (լուսնային): Նոյն կերպ են մեկնաբանում երեւոյթը հին յոյները՝ Հերակլէսի մասին պատմուող առասպելի մէջ: Մինչ անդ-

րաշխարհի իջնելը հերոսը գլխին դրեց խնկենու պսակ: Ծուխը տերեւները վերեւից սեւացրեց, իսկ ներքեւից կրակը լուսաւորեց այն[11]:

Ժողովածուն մարդկային բնական կեանքի պատմութիւնն է, որ ներկայացնում է այդ աշխարհի կայացման ընթացքն ու նաեւ աւարտը: Խորհրդանիշը վերնագրի մէջ է:

ԱՐՇԱԿ ԱՐՔԱՅ, ԴՐԱՍՏԱՄԱՏ ՆԵՐՔԻՆԻ, ՍԵՒ ԳԻՐՔ, ԾԱՆՐ ԲԶԷԶ

Յաջորդ գործերը (*Արշակ Արքայ, Դրաստամատ Ներքինի* վէպն [1995] ու *Սեւ Գիրք, Ծանր Բզէզը* [1999]), դառնում են Խեչոյեանի ստեղծագործութեան յաջորդ կամ երկրորդ փուլը: Այստեղ արդէն խօսքը ոչ թէ բնական կեցութեան մասին է, այլ հասարակական կեանքի կայացման, երբ հասարակական մարմինը ճիգեր է գործադրում իր գոյութեան սահմանները պահելու, քաոսի ազդեցութիւնը հասարակական մարմնի վրայ հնարաւորինս թուլացնելու, ինքնակայանալու համար:

Միայն առաջին հայեացքից կարող ենք ասել, թէ գրեթէ ամէն ինչ ասուած է չորրորդ դարի մասին: Ներկան գրողի համար անցեալի իւրօրինակ անդրադարձն է: Խօսքը նոյն կամ գրեթէ նոյն երեւոյթի մասին է: Չորրորդ դարում էլ Հայաստան երկիրը փորձում էր գոյատեւել, իր անկախութիւնը պահել Արեւմուտքի (Բիւզանդիա) եւ Արեւելքի (Պարսկաստան) միջեւ, հիմա էլ: Ահա՝ Խեչոյեանի խօսքը՝ գրուած *Դրուժբա Նարոդով* ամսագրի համար՝ 1998ի Յուլիսին:

> ...Նոյն խնդրի առաջ այսօր էլ է կանգնած՝ անկախութիւն, աշխարհագրական դիրք, կառուցելու ազատութիւն եւ փոքրի՝ աշխարհի երեսից չվերանալու գերզարգացած ինքնապահպանման բնազդ՝ այդտեղից բազմապատկուելու՝ մէկը երկուս դառնալու միստիկական գերզգայուն խորհուրդը:
>
> Այս առեղծուածից էլ վէպը գրելու շարժառիթը. տասնհինգ դար է անցել (Աստծոյ ժամանակով մէկ վայրկեան կամ մէկ րոպէ), նոյն ժողովուրդը՝ կանգնած նոյն չլուծուած պրոբլէմի առաջ:
>
> Շատ եւ բազում եկեղեցիներ է ունեցել՝ եկեղեցիներում Աստուածներ՝ տասնհինգ դար իր հոգու մաքուր աղօթքը յղել է նրանց, իսկ չլուծուած խնդիրը կայ ու կայ:
>
> Իր ճանապարհի վրայ երբեմն կասկածուել է Աստուած, երբեմն եկեղեցին, երբեմն թագաւորը, իսկ գենետիկօրէն իրար փոխանցուած ազատութեան ոգին՝ երբեք: Որը թեւածում էր Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, պահպանելով իր տեսակի առանձնայատկութիւնը, սակայն դա չի նշանակում, թէ այդ տեսակը միւս ազգերից լաւն էր կամ վատը: Ինքը այս արեւի տակ ապրելու իրաւունք էր ձեռք բերում:
>
> Այս յաւերժական արեւի տակ...

Այս դիտարկումները շատ կարեւոր են մեզ համար: Խօսքը ոչ թէ ակնյայտ երեւոյթին է վերաբերում, այլ ներքին՝ երեւոյթների տիեզերական ընկալմանը: Խօսքը մարդուն այդ համընդհանուր՝ տիեզերական շարժման ընթացքի մէջ որպէս հետեւանք նկատելու եւ ոչ թէ պատճառ դիտելու

կռահումի մասին է: Փիլիսոփայական այս մեկնակէտն առկայ է մաթեւոսեանական համընդհանուր տիեզերածնութեան մէջ: Սա ստեղծագործական աշխարհի անկիւնաքար է նաեւ Խեչոյեանի համար: Բայց այստեղից էլ ակնյայտ է նրա՝ որպէս արուեստագէտի ինքնատիպ ընկալումը: Եթէ Մաթեւոսեանի համար մարդը կենդանուց դէպի Աստուած գնացող ընթացք է եւ նրա մէջ աւելի ուժեղ է կենդանին, քան Աստուած, եւ այս տեւական գործընթացն աւելի կենսաբանական նշանակութիւն ունի, մարդու կայացումը դարերի, ճիգերի արդիւնք է, եւ Մաթեւոսեանը իրապաշտ է բառի ուղղակի իմաստով, նրան վերերկրային կամ խորհրդաւոր, անմեկնելի երեւոյթներ չեն այցելում կամ գրեթէ չեն այցելում, ապա Խեչոյեանի համար մարդու կայացման կամ նրա գոյատեւման խնդիրը սեռական բնազդով այս աշխարհում իր ներկայութիւնն ապահովող մարդն է, որ սերտօրէն լծորդւում է գոյակցութեան խորհրդաւոր ձեւերին: Այդ պատճառով էլ Խեչոյեանի գեղարուեստական աշխարհը որքան էլ իր դրսեւորմամբ լինի իրական աշխարհ, միեւնոյն է՝ այն աւանդական իրապաշտութիւնը չէ, դա իւրայատուկ իրապաշտութիւն է, որին հասել է համաշխարհային գրականութիւնը, մասնաւորապէս՝ լատինամերիկեան, ինչը յայտնի է «մոգական ռէալիզմ» ձեւակերպմամբ[12]:

Խեչոյեանը *Արշակ Արքայ, Դրասւրամատ Ներքինի* վէպում նորովի է վերապատմում Բուզանդի՝ դարերի խորքում արձանագրած բնագիրը, որպէսզի նոր ժամանակների համար ակնյայտ դառնան պետականութիւնը կայացնող մարդկանց մաքառումները: Տեւական ջանքերի գործադրումը, նոյնիսկ անձնազոհութիւնը բաւարար պայմաններ չեն միանգամայն նոր օրէնքներով առաջնորդուող ցեղերի շրջապատում ապրող ժողովրդի պետականութեան կայացման համար: Երազանքը՝ արժանապատիւ երկիր ունենալը, կարող էր իրականութիւն դառնալ ոչ միայն մաքառումների ու ինքնազոհողութեան ճանապարհով, այլեւ ոսկով, որ կը դառնար զէնք եւ հնարաւոր դաշնակիցներին իրենց կողմը գրաւելու միջոց:

Ամբողջ վէպի ընթացքում գրողն ասելիքը ճաւալում է հեթանոսական մեհեանների կործանման արդիւնքում եկեղեցու կողմից բռնագրաւուած ոսկին գտնելու պատմութեան շուրջ: Դա մտահոգութեան առարկայ է բոլորի համար:

Արքան երկիրն անյուսալի վիճակից դուրս բերելու կարեւոր պայման է համարում ոսկին: Ներսէսի համար գանձերը թաքցնելը սեփական իշխանութիւնը զօրացնելու նպատակ ունի: Բայց սա նաեւ միջոց է պատմական հերոսներին ներկայացնելու, նրանց անցեալն ու ներկան, մղումներն ու քաղաքական հայեացքներն ի յայտ բերելու համար: Այնպէս որ դիպաշարի այդ հատուածները չեն դառնում պարզունակ փնտռտուքների արդիւնք, դրանք ներքաղաքական սադրանքների պատճառները բացայայտող պատմութիւններ են:

Իհարկէ, այս ամէնի կենտրոնում Արշակն է, որ բացայայտւում է նաեւ մնացեալ կերպարների օգնութեամբ: Պատմական հերոսները, որ առնչւում են արքային, ներկայացւում են Արշակի բնաւորութեան, նրա ինքնատիպութեան, դրամատիկականի բացայայտման տրամաբանութեամբ: Սկզբից եւեթ՝ Խեչոյեանի Արշակը դառնում է հոգեբանական իւրայատուկ որակով օժտուած անհատականութիւն՝ դա պատժի արժանի յանցաւորի՝ պատժապարտի կնիքը ճակատին ունեցող առաջնորդն է, որ պիտի դառնայ աւելի ու աւելի շօշափելի, աւելի իրական: Թէեւ Արշակը դա չի խոստովանի անգամ ինքն իրեն, բայց դա՝ որպէս ճակատագիր, որպէս էութեան կարեւոր որակ, կը յայտնուի լինելութեան ամենակարեւոր պահերին, երբ խօսքը կը դառնայ կեանքի ու մահուան շուրջ: Դա ճակատագիր է, որ խարանուած է հայոց արքայի ճակատին, դրանից ձերբազատուել հնարաւոր չէ, քանի որ այդ ամէնը գրուած է հայոց պատմութեան ընդերքում. «...*Նախաստեղծ ժամանակը նոր օրէնքներ առաջադրելիս՝ մեր նախնիներին ուխտի փոխադարձ նորոգումների դիմաց պատժապարտ էր դարձնում*» (252): Այս որակը նրանից դուրս էր միայն առանձին պահերին, երբ հաղորդակցւում էր անժամանակ երեւոյթներին, յաւերժութեանը, նրանից լոյսի նման ծորում էր անխուսափելին՝ պատմութեան քառուղիներում պատժապարտ մնալու նախաստեղծ ժամանակի բերած անբեկանելի օրէնքը:

Այս տիեզերական անարդարութիւնն անէծքի նման կախուած է հայոց պատմութեան վրայ, որն իր ամենատարբեր դրսեւորումներն է գտել հայ գրականութեան մէջ: Դրա ամբողջական արտայայտութիւնը տեսնում ենք Մաթեւոսեանի երկերում («Թափանցիկ Օր», «Մեծամօր»):

Երեւոյթի բացառիկ օրինակ է Խաչատուր Աբովեանը: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ Աբովեանի՝ մեր պատմական ճակատագրի կռահումը հակադիր է վերն ասուածին, բայց իրականում նրա խօսքը քննարկուող երեւոյթի՝ տիեզերական՝ մեզ համար ճակատագրական դարձած օրէնքների մասին դիտարկում է: Մանաւանդ որ շատ յաճախ թագաւորն ու երկիրը նոյնանում են գրականութեան մէջ: Աբովեանական բացայայտումը հայոց պատմութեան փիլիսոփայութեան բացայայտումն է: Սերգէյ Սարինեանը, խօսելով գրողի մասին, առանձնացնում է մեծ գրողի՝ երեւոյթների մեկնաբանման իմացաբանական կերպը.

> Ուրեմն, պէտք է միշտ ըմբռնել հայոց պատմութեան փիլիսոփայութիւնը, թէ նրան վիճակուած ճակատագրի պատճառը ոչ այնքան քաջութեան պակասն է, որքան երկրին տուած նրա զոհողութիւնը («երկիրն ինքն է պարտական»), այսինքն, որ մշտապէս, նոյնիսկ ի վնաս իր շահի, զօրավիգ կամ դիմադիր է եղել ասորիներին, պարսիկներին, մակեդոնացիներին, հռոմէացիներին, պարթեւներին, մոնղոլներին, օսմանցիներին[13]:

Ամէն պարագայում աբովեանական կռահումը եւս կապւում է «մեզանից անկախ պատճառներով» մեր պատմութեան վրայ կախուած ճակա-

տագրական երեւոյթների հետ: Ինքն իրեն վնասելու, երկիրը զոհասեղանին հանելու անկամ վարքագիծը յաճախ է երեւացել մեր պատմութեան ճանապարհներին:

Արշակի պարագայում, երբ գահը, թագաւորը, երկիրը դիտարկւում են որպէս միասնութիւն, պետութեան համար օրհասական պահերին «ընդհանուր անգիտակցականը» համոզուած է, որ Արշակն ինքն է պարտական դիմակայելու Շապուհին, թշնամիներին, եթէ շատ է ցանկանում, ապա ինքը կարող է շարունակել կռիւը, իրենք՝ նախարարները, զօրավարն ու զինուորը դրա կարիքն այլեւս չունեն: Զոհասեղանին հանւում է հայոց պետականութիւնը: Թագաւորութիւնն ընկալւում է որպէս մեղապարտ, որպէս հիմնական ուժ՝ մնացեալների բարեկեցութեան ճանապարհին կանգնած: Եւ այստեղ էլ, ինչպէս Աբովեանի ձեւակերպման մէջ, տեսնում ենք, որ երկիրն (թագաւորութիւնը, թագաւորը) ինքն է դառնում միակ մեղապարտը համընդհանուր քաոսի մէջ, այլ ոչ թէ նախարարը, գործավարը, զինուորն ու հողագործը: Նման տրամաբանութեամբ առաջնորդուողը բնականաբար չի հասկանում, որ ինքը՝ նախ այդ պետութեան մասնիկն է, ապա նոր միայն՝ առանձին գոյութիւն, եւ իր շահը հարկ է գտնել համընդհանուրի շահի մէջ եւ ոչ հակառակը, ինչպէս որ եղել է մի՛շտ՝ թէ՛ չորրորդ դարում, թէ՛ հիմա:

Խեչոյեանը չի դառնում ճակատագրապաշտ այն իմաստով, որ ամէն ինչ լինելու է այնպէս, ինչպէս որ նախասահմանուած է: Նա համոզուած է, որ եթէ մարդը ճիգեր չգործադրի՝ արեւի տակ իր տեղն ունենալու, ապա նա կը սուզուի տիեզերական քաոսի անտակ ծովում: Այսուհանդերձ, ամէն ինչ չէ, որ գտնւում է մարդու ձեռքում. նա հարկադրուած է սեփական մղումների սահմանը չափաւորել՝ համաձայն տիեզերական ներդաշնութեան պահանջների, այսքանով էլ մարդը դառնում է պատմութեան ունայնութեան կրողը:

Վէպում անխուսափելի կործանումների կրողն Արշակն է: Նրան յաճախ է այցելութեան գալիս այդ զգացումը: Դա ողբերգութիւն է ինչպէս երկրի, այնպէս էլ Արշակի համար՝ որպէս անհատի:

Խեչոյեանը դիցականացրեց պատմութիւը, դիցը նրա պատմութեան մէջ պատահում է մէկ անգամ, բայց բոլոր ժամանակների համար: Հետեւաբար՝ անխուսափելի են խորհրդանիշները՝ որպէս ապագայի կանխանշաններ: Պատմութիւնն այլեւս հերոսականութեան ու հպարտութեան առարկայ չէր գրողի համար, այլ անցեալ չդարձած փորձի իմաստաւորում, որի խորքում ազգային կեանքն է, որ ընդհանրական բնոյթ ունի: Այս իմաստով Խեչոյեանն իր ներդրումն ունի հայ պատմավէպի սեռի զարգացման գործում եւ առայժմ Զօրայր Խալափեանի հետ եզրափակում է այն գրողների շարքը (Վիգէն Խեչումեան, Պերճ Զէյթունցեան, Վարդան Գրիգորեան, Վահագն Գրիգորեան), ովքեր տրոհեցին դասական վէպի կառոյցը[14]:

Արցախեան հերոսամարտը Խեչոյանի ստեղծագործութեան մէջ կարեւոր բաղադրիչ է: Սերգէյ Զալիգինի վկայութեամբ «...*Առաջ մենք որոշում էինք երկու հաւասարում՝ ի՞նչն է լաւ եւ ի՞նչն է վատ: Եւ մենք ամբողջ ժամանակ, ամբողջ համաշխարհային գրականութիւնը եւ գեղագիտութիւնը զբաղուած էր այդ հարցով: Բայց հիմա ի յայտ է եկել երրորդ հաւասարումը՝ ի՞նչ է ոչինչը: Ահա թէ մենք ինչ իրականութեան առջեւ կանգ առանք*»[15]:

Խեչոյեանի՝ պատերազմին վերաբերող երկերն (*Սեւ Գիրք, Ծանր Բզէզ*, պատերազմի մասին պատմուածքները) առանձնանում են հենց այս տրամաբանութեամբ: Դրանք չեն դառնում ամբողջական պատմութիւններ, քանի որ գրողի նպատակը եղելութիւններ ներկայացնելը չէ, այլ կեանքի հոսքը տարբեր իրադրութիւններում արտայայտելը: Իսկ հիմնական ասելիքը դառնում է ոչ-ընդգծուած, սովորական, նաեւ անտեսանելի, խուսափուկ, մի տեսակ չբռնուող: Խեչոյեանը հնարաւորինս փորձում է տարբեր թեւերը հաւասարակշռել, չարն ու բարին երբեք էլ յստակօրէն չեն սահմանազատուած: Մարդկային հակադիր որակները բնորոշ են միմեանց դէմ ելած ուժերին: Այստեղ հակադրութիւնների նոյնութիւնը ելակէտ է գրողի համար:

Հարցի աւելի խորը եւ ամբողջական արտայայտութիւնը դարձաւ «Հողի Դողը» պատմուածքը: Սա ոչ միայն Խեչոյեանի, այլեւ հայ գրականութեան մէջ պատերազմի մասին երբեւէ գրուած լաւագոյն ստեղծագործութիւններից է, եթէ ոչ լաւագոյնը: Այն տպագրուել է նաեւ ռուսերէն, որտեղ առկայ առանձին արտայայտութիւններ յետագայում դուրս են թողնուած[16]: Այստեղ էլ գրողն առաջնութիւնը տուել է իր համար պատումը ծաւալելու նախընտրած կերպին. նա մինչեւ վերջ չի ասում ամէն ինչ: Արտաքուստ սովորական, միանուագ կամ միեւնոյն լարուածութեան ուժով պատմում է դէպքերի մասին՝ հոգեբանական, զգացմունքային երանգների բացայայտումը թողնելով ընթերցողին: Նա կեանքի ու մահուան մասին խօսում է հաւասարաչափ ուժով:

Այստեղ էլ նրա սեւեռուն գաղափարը ոչ այնքան որոշակի երեւոյթները, որքան ընդհանուրն զգացնել տալն է: Գրողն այս պատմուածքի մասին ասում է, թէ «*Գրուած է այնպէս, որ բոլորը վախենան, եւ այլեւս պատերազմ չլինի*»[17]:

Պատերազմը դառնում է համընդհանուր ներդաշնակութեան խաթարումը: Այն խառնում է դարերով ընդունուած աւանդակարգը՝ միասնական հոսքի մէջ առնելով բոլորին՝ մեղաւորին եւ անմեղին, մեծին ու փոքրին, հասարակութեանն ու կենդանական աշխարհը, ամէ՛ն ինչ: Պարզւում է՝ յաղթանակած զինուորի մէջ, փիլիսոփայ հրամանատարի ներսում քլքլթում է խիղճը. յամենայնդէպս սա չէր, ինչին որ սպասում էին, որովհետեւ կեանքի կործանումն իմաստազրկում է ամէն ինչ, չկայ աւելի բարձր բան, քան կեանքը՝ իր տարակերպ դրսեւորումներով: Ու եթէ

անգամ զինուորները մտան Արաքսի հովիտ ու տանկերը եռացնում էին ջուրը, այդուհանդերձ սա երազանքների ափը չէր, քանի որ նրանք կործանումներին մասնակից ուժեր էին:

Ներդաշնակութեան, հոգու խաղաղութեանը հասնելու համար ժամանակ է պէտք՝ մինչեւ վէրքը կը սպիանայ ու խաթարուած ընթացքը կ'ընկնի իր ճանապարհը: Կեանքը հոսում է դանդաղ ու աննահանջ: «*Գիւղում ինչ-որ տեղից կանչեց ու դեռ թաքնուած աքաղաղը՝ որ մթեղէն սփուերներն ու լոյսի հակակշիռ ուժերը վերադառնան իրենց տեղերը*»[18]:

Ոչ ոք հայ գրականութեան մէջ - մինչեւ Խեչոյեանը - պատերազմի մասին նման գիրք չի գրել, ինչպիսին *Սեւ Գիրք, Ծանր Բզէզն* է: Այստեղ միանգամայն այլ է ելակէտը, գրողի՝ երեւոյթներն ընկալելու կերպը: Խօսքը պատերազմի գոյաբանական որակների, գոյութենականութեան մասին է: Դա ոչ այնքան դէպքերի մասին պատմութիւն է, որքան պատերազմի դէմքը ներկայացնող նշան, իրողութիւն, որի սահմանները դժուար է ժամանակի մէջ տեղաւորել, ինչպէս որ հոգու ընթացքը դժուար է բնագծերի մէջ առնելը: Այս իմաստով վէպը կարելի է իրապաշտական ուրուապատկեր համարել, որտեղ մահուան թագաւորութեան մէջ գոյատեւող մարդկանց մասին պատմութիւններն են ամբողջացնում երկը: «Սեւ Գիրք, Ծանր Բզէզ» վերնագիրը կոյր աշխարհի սարսափեցնող տեսքն է ընդգրկում, որտեղ կշէռքի նժարներին մշտապէս հաւասարակշռում են արարումը եւ ոչնչացումը: «Ծանր բզէզ» խօսքը փարաւոնների բզէզի մասին է, որը նրանց համար «հարստութեան, երջանկութեան, հզօրութեան սիմվոլ էր...»[19]:

Վէպը բաղկացած է առանձին ակնարկներից, որոնք միմեանց լծորդւում են մահուան մասին պատմութիւն-դրուագներով, աստիճանաբար ամբողջացնելով ընդհանուր տրամադրութիւնը:

Այսպէս՝ եթէ ընդհանրացնելու լինենք, ապա կարող ենք ասել, որ Խեչոյեանի վէպերը շարունակում են առաջին ժողովածուում առաջ քաշուած խնդիրները՝ արդէն նոր պայմաններում: Այստեղ աշխարհագրական տարածքն ընդլայնուած է: Եթէ առաջին գիրքը ցուցադրում էր կենդանի մարդու համար գոյութիւն ունեցող վտանգաւոր իրականութիւնը, որ իր մէջ էր առել մարդուն՝ նրա թէ՛ ֆիզիկական, թէ՛ հոգեւոր ոլորտները, ապա միւս վէպերը դառնում են առաջադրուած գաղափարի ուղղորդուած երեւոյթներ՝ երբ միջավայրը դառնում է կաթուածի կենտրոն: Մի դէպքում խօսքը պետական կառոյցի կաթուածի մասին է (*Արշակ Արքայ, Դրասփամատ Ներքինի*), մէկ այլ դէպքում՝ հասարակական կարգի (*Սեւ Գիրք, Ծանր Բզէզ*), որտեղ կենդանի մնալը պարզապէս հրաշքի պէս է: Տարածաշրջանում՝ մահուան հրապարակում, հարկ է գերմարդկային ճիգեր գործադրել՝ կենդանի մնալու, իսկ առաւել մեծ ճիգեր՝ նաեւ մարդ մնալու համար: Այն փորձութիւնը, որին ենթարկւում է մարդը, դառնում է կործանումների մէջ յայտնուածի համար առաւելագոյնը՝ աւելի մեծ են

քաղաքակրթութեան ձեռքբերումների կործանման հետեւանքները, քան ձեռքբերումները: Իսկ սա Խեչոյեանի հերոսներից լրացուցիչ ուժեր է պահանջում՝ ապրելու տառապանքը, հասարակական կարգի բարդութիւնները յաղթահարելու համար: Ժամանակը նրա հերոսներին զրկել է ամէն ինչից՝ երկրային դժոխքի բոլոր արահետները չափել-ճանաչելու եւ դրանից դուրս գալու ուղիներ գտնելու համար: Այսուհանդերձ, նրանք յաղթում են, մի դէպքում կայացնում են պետականութիւնը, միւս դէպքում ապահովագրում սեփական տեսակը դարերի մէջ:

ՏԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Խեչոյեանը նաեւ հեքիաթներ (*Տան Պահապան Հրեշտակը*) ունի գրած: Դրանք մեծահասակներին են ուղղուած ու թէեւ ժողովրդական հեքիաթների մշակումներ են, սակայն առանձնանում են հեղինակային հայեացքի, գաղափարների ընդգծուածութեամբ: Գրողին հետաքրքրում են այնպիսի երեւոյթներ, որոնք խորհրդանշական բնոյթ ունեն եւ տրւում են միանգամից՝ որպէս բնագրի ամբողջականութեան հետեւանք: Այդ խորհրդանիշները դառնում են մարդկային կեանքի առեղծուածային գաղտնիքների դրսեւորումներ, հետեւաբար եւ խորացնում են ժողովրդական հեքիաթներում արծարծուած թեմաներն ու հարցադրումները: Հեղինակային հայեացքի, նրա ոճի ինքնատիպութեան հետեւանքով յաճախ առաջին հարթակ են գալիս այնպիսի հարցադրումներ, որոնք այնքան էլ բնորոշ չեն դասական հեքիաթներում արծարծուած խնդիրներին: Հեղինակային գաղափարները, որոնք արտաճում են հեքիաթի հիմքից, որպէս խորհրդանիշներ դառնում են ներկայի անտրոհելի բաղադրիչը: Դրանք տարածում են բոլոր ժամանակների վրայ: Այս է պատճառը, որ գրողն իր հեքիաթներն անուանել է *էզոտերիկական*, որպէսզի մէկ անգամ եւս ընդգծի իր մշակումների իւրայատկութիւնը՝ բացայայտել անտեսանելին, առեղծուածայինը՝ իր նախնական, անաղարտ տեսքով: Բնազանցական երեւոյթները ժամանակի ներգործութեանը ենթարկւում, ժամանակին չեն ենթարկւում նաեւ Խեչոյեանի հեքիաթներում չեն արծարծուած խորհրդանիշ-գաղափարները:

Բայց Խեչոյեանի հեքիաթները նաեւ ժամանակակից մարդու եւ իրականութեան վերափոխման հնարաւորութիւնների մասին պատմութիւններ են, որ իրենց մէջ հեքիաթայինից բացի ունեն այնպիսի շերտեր, որոնք հեքիաթային չեն: Ստացւում է, որ ցնորականի եւ իրականի միահիւսման ճանապարհով ձեւաւորւում է գրական հեքիաթ, որ միաւորում է տարբեր շերտերը: Այս հանգամանքը հնարաւորութիւն է տալիս գրողին հեքիաթին բնորոշ ցնորքը գործադրի այնտեղ, որտեղ թւում է՝ թէ դրա անհրաժեշտութիւնը չկայ: Բայց Խեչոյեանին գրաւում են հենց այն իրողութիւնները, որոնք իրենց մէջ ունեն վերափոխման հնարաւորութիւններ: Այս հանգամանքով է պայմանաւորուած եւ այն, որ հեքիաթի սեռն

իշխում է բոլոր ժամանակների վրայ՝ ե՛ւ անցեալի, ե՛ւ ներկայի, ե՛ւ ապագայի: Առաջին հայեացքից կարող է միայն թուալ, թէ դրանք աւելի անցեալ ժամանակի խորհրդանիշներ են եւ կամ անցեալ ժամանակի փորձի դրսեւորում, սակայն գրական այս հեքիաթները բոլոր հնարաւոր ժամանակների մէջ ապրող երեւոյթներ են: Բայց դրանք բարու եւ չարի միջեւ եղած յաւերժական պայքարի մասին չեն, որ երկրորդական է գրողի համար եւ հենց դրանով էլ տարբերւում են աւանդական հեքիաթներից, դրանք նաեւ գրական հեքիաթներ են, ուր կարեւորուած է գրողի հայեացքը: Դա է պատճառը, որ այդ հեքիաթները յաճախ են հակադրւում «ընդունուած կարծիքին», որ հերոսը կարող է եւ իր նպատակին չհասնել («Խոսրով Թագաւոր», «Աքաբ Թագաւոր»), որ կեանքը երբեք էլ ուրախ հարսանիքներով չի աւարտւում, դրանով միայն ամէն ինչ սկսւում է, իսկ վերջն այնքան էլ ոգեւորիչ չէ, քանի որ ամէն մէկն իվերջոյ յայտնւում է մէնութեան թակարդում («Աղուէսն Ու Դրախտի Թակարդը»), դրամները մուրացկանի պահեստարանում միայն ժանգոտում, դառնում են անպէտք, այն պիտի լինի նրա գրպանում, ով այն կ'օգտագործի («Մուրացկանը, Հարուստը»), մարդ իր սրտի մէջ ապրող խաղաղութիւնը լսելու զօրութիւն պիտի ունենայ («Թագաւորն Ու Ճգնաւորը»), եթէ երկրում չի յարգւում ծերը, գիտնականն ու իմաստունը, կաշառքի, խաբէութեան, աղքատութեան, վախի, բամբասանքի ու առեւանգումների տեսքով քաղաք է մտնում աներեւոյթ վիշապը («Աներեւոյթ Վիշապը»): Սրանք մէկ անգամ եւս վկայում են, որ Խեչոյեանի հեքիաթներն իրենց վրայ ընդգծուած կարգով կրում են հեղինակային **եսի** ազդեցութիւնը, գրողի աշխարհայեացքային առանձին կողմեր:

Այս դէպքում գրողի մտայղացումը հնարաւորութիւն է տալիս «*հայրենիքի սահմանները ոչ միայն հորիզոնական տեսնել... այլ ուղղահայեաց՝ աւելի հեռուին են հասցնում*»[20]:

ՄՀԵՐԻ ԴՌԱՆ ԳԻՐՔԸ

Գրողի վերջին վէպը *Միերի Դռան Գիրքն* է: Համաշխարհային գրականութեան մէջ առաջնակարգ տեղ են գրաւում դիւցազնավէպերը: Դրանք լաւագոյնս ներկայացնում են ինչպէս տուեալ ժողովրդին, այնպէս էլ մեծ ժամանակը, աւելի որոշակի՝ յաւերժութիւնը: Միայն այս հանգամանքը նկատի առնելով կարող ենք փաստել որ Խեչոյեանի *Միերի Դռան Գիրքը* փիլիսոփայական վէպ է, քանի որ ազգային դիւցազնավէպի արեան բաղադրութիւնը քննելու մղումը նրան հաղորդակցել է յաւիտենութեանը: Բոլոր նախորդ ձեռքբերումները գրողին հոգեբանօրէն կապում էին տարբեր ժամանակներին, իսկ դիւցազնավէպը նրան հաղորդակցում է մշտնջենականութեանը: Խօսքը տուեալ պարագայում վերաբերում է մտածողութեան ծաւալներին, քանի որ խորհրդածութեան առարկայ են դառնում տիեզերական չափումները: Այս վէպում գրողն իր հերոսի հետ

մնաց ժամանակի, յաւերժութեան դէմ միայնակ, ինչը դրամատիզմի որոշակի պաշար է աւելացնում ազգային վէպի ներքին տրամաբանութեան, նրա հերոսների մաքառումների պատմութեանը: Բայց, իհարկէ, գրողի տարիների ոգորումները միտուած էին ոչ թէ երեւոյթների հորիզոնական, այլ ուղղահայեաց շարժումների բացայայտմանը: Իրադարձութիւնների խորքերում առեղծուածը յայտնաբերելու մղումները նրան տարել են տառապանքի ուղիներով. նիւթը յաղթահարելու նպատակամէտ ջանքը Խեչոյեանի ասքային խօսքը դարձրել է ջղուտ եւ դրամատիկ, դիւցազնական պատումն ընդմիջարկուել է լարուած, ինքնաճանաչմանը միտուած վերլուծութիւններով, որոնք դարձել են ազդակ՝ խօսքը ծաւալելու, ասելիքն ամբողջացնելու ճանապարհին: «*Բայց գրողը սիւժէն սփորոգում է էպոսի հարիւր յիսուն տարբերակների ֆաբուլային անծայր ոլորտներում, որոնց ընդերքում եւ թաքնուած է առեղծուածը: Այստեղ է ստեղծագործական որոնումների ամբողջ բարդութիւնն ու նիւթի դիմադրութեան տառապանքը*»՝ գրում է Սարինեանը[21]:

Ակնյայտ է, որ իւրաքանչիւր ժողովրդի մշակոյթը շատ կողմերով նախապատրաստում է նրա գալիքը: ԺԹ. դարի գերմանական խոշորագոյն դէմքերի՝ Գէօթէի, Հեգէլի, Վագների ստեղծագործութեամբ հիմքեր ստեղծուեցին ֆաշիզմի համար: Այստեղ արդէն ուղիղ գծով նշուած էր ընթացքը դէպի ծայրայեղ ազգայնականութիւն դեռեւս ԺԹ. դարում, քանի որ ազգային միասնութեան խնդիրն ամենացաւալի, ամենակարեւոր հարցն էր նրանց համար: Այդ պատճառով էլ գործիչները՝ գրողներ, երաժիշտներ, փիլիսոփաներ՝ բոլորը միտուած էին Գերմանիայի միասնականացման խնդրին:

Ռուսաստանում առաջացաւ քիչ այլ կարգի խնդիր, քանի որ առաջ մղուեցին ընկերային հարցերը: Երկրում ճորտատիրական կարգեր էին սահմանուած, անհաւասարութիւնն ակնյայտ ու պարտադիր պայման էր մարդկանց համար: ԺԹ. դարի ռուսական գրականութիւնն արդէն աշխատում էր յանուն կոմունիզմի: ԺԹ. դարի ռուսական գրականութիւնը սոցիալիզմի համար դարձաւ հոգեւոր հիմք (մասնաւորապէս Նիկոլայ Նեկրասովի ստեղծագործութիւնը[22]): Նրանց ուշադրութիւնը հիմնականում կենտրոնացած էր ընկերային հարցերի վրայ: Սոցիալիստական գաղափարախօսութիւնն անմիջականօրէն արտածւում էր գրականութեան մէջ արծարծուող խնդիրներից:

Իսկ ի՞նչ պիտի անէին այն ժողովուրդները, մասնաւորապէս հայերը, ովքեր հազարամեակների պատմութիւն ունէին եւ իրենց դիւցազնավէպերը կերտել էին վաղուց: Նրանք առայժմ գոհանալու էին գաղափարական միջամտութիւններով, որ ուղղակի պարտադրանքի արդիւնք էր: Գալու էր դիւցազնավէպը ներկայացնելու բարենպաստ ժամանակը, որտեղ հարկադրանքն իր տեղը զիջելու էր երեւոյթների խորքերը գնալու մղումներին:

Հայկական դիւցազնավէպում ոչ ազգային միասնութեան խնդիրն էր դրուած, ոչ էլ ընկերային խնդիրների լուծման անհրաժեշտութիւնն էր առաջնային. կամ կարելի է ասել դրանք երկրորդական նշանակութիւն ունէին:

Ընդհանուր առմամբ՝ այն Սասնայ տան պատմութիւնն է, որ ունի սկիզբ եւ աւարտ, բայց ի տարբերութիւն շատ դիւցազնավէպերի, *Սասնայ Ծռերն* այդ պատմութեան աւարտը չէ, այն ենթադրում է մի նոր սկիզբ: Եւ սա առաջին հերթին կապուած է Փոքր Միերի գործունէութեան հետ: Զարմանալի է, բայց՝ փաստ, որ ժամանակի ընթացքում հայ գրականութեան մէջ կարեւորուեց Դաւիթը եւ ոչ թէ Փոքր Միերը՝ ասում է Հրանտ Մաթեւոսեանը: Անտեսուեց չորրորդ ճիւղը, կարեւորուեց Դաւիթինը, այդ պատճառով էլ գրականութիւնից դուրս մղուեց Միերի փիլիսոփայութիւնը: Այս բնաւորութիւնն արմատապէս տարբերւում էր մնացած հերոսներից: Դաւիթն ասում է, իսկ Միերը լինում է: Եւ իսկապէս՝ հայ դիւցազնավէպին փիլիսոփայական խորք տուողը վերջին՝ Փոքր Միերի ճիւղն է:

Դիւցազնավէպում մարդը մնում է մէն մէնակ յաւերժութեան հետ: Սակայն այս խնդիրը Խեչոյեանի պարագայում ստանում է իւրայատուկ բնոյթ, քանի որ այն դառնում է ընդգծուած ազգային որակ: Ինչպէս Մարկէսի վէպում մէնութիւնը դառնում է ժառանգական յատկանիշ, նշան, Բուենդիաների համար անէծք, եւ նրանցից իւրաքանչիւրն իր մէնութեան մէջ դրան հասնում է աստիճանաբար՝ վրիժառութեան, վախի, անմիտ պատերազմների, արգելուած սիրոյ եւայլնի արդիւնքում, այնպէս էլ Միերի մէնութիւնը՝ Ագռաւաքարում փակուած, հայի համար դառնում է ոչ թէ հարիւրամեայ, այլ երկհազարամեայ մէնութեան արտայայտութիւն, այն պահից սկսած, երբ Միերը գիտակցեց, ապա նաեւ պայքարեց սեփական անհատականութեան համար: Հայ ժողովրդի մէնութեան պատճառները տիեզերական են իրենց բնոյթով, քանի որ ընդունուած «տիեզերակարգն» այլեւս սպառել է իր հնարաւորութիւնները, մարդը նոր ուղիների յայտնաբերման կարիքն ունի:

Հետաքրքիր է, որ կառուցուածքային առումով եւս ընդհանրութիւններ կան Մարկէսի եւ Խեչոյեանի երկերում: Երկու վէպերում էլ հերոսների կեանքը ներկայացւում են բեկորների ձեւով: Գրողները պատկերում են հերոսների կեանքի կարեւոր դրուագները: Իսկ ասելիքի ներքին միտումն ի վերջոյ հասարակական կեանքի անկման պատմութիւնը ներկայացնելն է:

Էական է եւ այն հանգամանքը, որ Խեչոյեանի վէպում քիչ տեղ չի գրաւում նաեւ ժողովրդի գիտակցութեան մէջ եղած իրականութեան բանահիւսական իմաստաւորումը, ինչը նոյնպէս առկայ է Մարկէսի երկում: Խեչոյեանի պարագայում հարցերը յարաբերակցւում են հազարամեակների պատմութեանը, ժողովրդի ընկալումներին:

Հետեւապէս՝ գրողի եւ դիւցազնավէպում արձանագրուած փաստի կամ մարդկային տեսակի մասին խօսելիս փոխւում են նաեւ մտածողութեան չափանիշերը: Խօսքը նոյնիսկ ժամանակների մասին չէ, քանի որ «ժամանակ» հասկացութիւնը թէկուզ եւ յարաբերականօրէն նախանշում է որոշակի ինչ-որ հատուած, դարաշրջան եւն.: Դիւցազնավէպը կապւում է յաւերժութեանը, եւ այդ պատճառով էլ դարեր առաջ ծնուած, կայացած Մհերը նաեւ մեր ժամանակակիցն է, մենք ենք:

Ահա այս մտայնութեամբ էլ Խեչոյեանը վէպում ներհիւսած ներկայ ժամանակը դարձնում է ասելիքի կարեւոր մաս: Խօսքը ներկայի եւ յաւերժութեան մասին է, քանի որ պարզւում է՝ ժողովուրդները ժամանակի մէջ իրենց բնոյթը չեն փոխում: Ծառն ինչպիսին էլ լինի, ժամանակի մէջ չի փոխում իր կերպը, բայց աւելացնում է օղակները: Սա դարերից եկած եւ դարեր գնացող «մարդկային տեսակի» մասին է, հետեւապէս հեռաւորութեան վրայ աննշմարելի են պատումային մանրամասնութիւնները, գրողը գիտակցուած կերպով բացառում է մանրակրկիտ շարադրանքը, որն ասքին բնորոշ որակ է: Այս դէպքում գերակայ նշանակութիւն է ստանում գործողութիւնը, որ ոչ մի պահի կանգ չի առնում: Սա, իրապէս, դիւցազնավէպին բնորոշ մատուցման կերպ է: Խեչոյեանի համար ժողովրդական լեզուամտածողութեամբ պատմութիւններ վիպելու խնդիրը դառնում է կարեւոր: Այս իմաստով նա մօտենում է բանաւոր խօսքի աւանդոյթներին:

Անկասկած է Մհերի եւ Քրիստոսի միջեւ եղած ընդհանրութիւնը: Փոքր Մհերը, Արտաւազդը, հնդկական Շիւան, Քրիստոսը (երկրորդ գալուստով) տիեզերական շրջափուլի աւարտմամբ նիւթական աշխարհը կործանող աստուածութիւններ են[23]:

Յետագայում էլ դիւցազնավէպը գաղափարական ճնշումների ենթարկուեց: Համահաւաք տարբերակը խորհրդային գաղափարախօսութեանը յարմարեցուած գործ էր, որ հիւսուել էր մօտ 70 պատումների հիման վրայ: Դրա նպատակը բռնակալ տէրերից ազատագրուելու, արդարութիւն ու հաւասարութիւն բերելու հրամայականն էր: Եւ այս տրամաբանութեամբ էլ աւարտւում է դիւցազնավէպը: Մհերը դուրս է գալու, երբ ցորենը մասուրի, գարին էլ ընկոյզի չափ կը դառնայ: Խօսքն առատութեան մասին է: Այսինքն՝ է՛լի խօսքը ընկերային բնոյթ ունի եւ համապատասխանում էր յեղափոխութիւնից բխող պահանջներին:

Պատահական չէ, որ Աւետիք Իսահակեանը Մհերին դուրս բերեց Ագռաւաքարից՝ նկատի ունենալով յեղափոխութեան արդիւնքում ստեղծուած «արդար հասարակարգը»: Կարելի է ասել, որ սա դարձաւ դիւցազնավէպի խորհրդային ժամանակների մեկնաբանութեան բարձրակէտը, այն «գաղափարական իմաստով շրջանակեց» երկը: Չարենցի Փոքր Մհերը եւս դուրս եկաւ Ագռաւաքարից եւ Օհանի չար զարմին բերեց «*Անկում վերջնական եւ մահ անճառ*»: Բայց, իհարկէ, ոչ մէկն էլ չհաւատաց Մհերի՝ Ագռաւաքարից դուրս գալու բարի ու հարկադրական լուրե-

րին: Մինչեւ վերջ չասուած խօսք կար, որ ծաւալւում էր միայն կեցութեան ոլորտներում, մինչդեռ խօսքն աւելի հոգեւոր, ժողովրդի դարաւոր մտածողութեան, նրա բանականութեան ոլորտներում, դարերի ընթացքում ձեւաւորուած խնդիրների մասին էր:

Փոքր Միերի տիեզերադաւ կեցուածքը մարդկային գոյութեան, նիւթական աշխարհի, տիեզերակարգի հանդէպ, անհնարին էր խցկել միայն հացի, մարդկային բարեկեցութեան շրջագծի մէջ: Նա աշխարհն աւերում էր, կռւում էր Աստծոյ հրեշտակների դէմ, որպէսզի աշխարհում առատութիւն, արդարութիւն լինէր: Դրան ձգտել էին նաեւ նրա նախնիները: Միերը տարբերւում է նրանցից: Նա եօթը տարեկանում արդէն յաղթում է դիւցազուն հօրը՝ Դաւիթին: Նա գնում է Ագռաւաքար, որ է՝ տիեզերական չափումների սահմանը: Նրան միանգամայն նոր տիեզերակարգ է պէտք, եղածից միանգամայն տարբեր, նա արդէն մի կողմ է դրել Թուր Կէճակին, նրան այլեւս գրաւում են մարդկային կեցութեան, նրա գոյութեան միանգամայն նոր՝ հոգեւոր ուղիները, նիւթական տիեզերակարգին փոխարինելու է հոգեւոր կարգը, երբ մարդու մարմինը կը հագնի հոգին, եւ մարդը կը հայի հոգու աչքերով: Սա արդէն որակապէս նոր ժամանակ է, որ չէր կարող գրողի ուշադրութիւնից վրիպել: Եթէ կ'ուզէք՝ կերպարի բացայայտման այս շերտը Խեչոյեանի համար աւելի կարեւոր է, քան առաջինը, ինչը կապւում է մեր ներկային: Հոգեւոր որակները նաեւ ներկայի ու ապագայի համար են: Խեչոյեանը, բնականաբար, աւելի էր կարեւորելու Միերի՝ որպէս հոգեւոր աստուածութիւն լինելու հանգամանքը, ինչն ամբողջովին դուրս է մղուած մեր դիւցազնավէպի կենդանի մարմնից:

> Ժողովրդի դարերով կերտած մշակոյթը իր մէջ ներառած՝ գնացել, հազար ինը հարիւր տարի, երկու հազար տարի փակուել էր Ագռաւաքարի նախամայր արգանդում, նիւթական աշխարհից ամենայն ազգային վաստակած ունեցուածքը տեղափոխել էր հոգեւոր ոլորտ՝ փորձելով իր հետ պահպանութեան տարած ժառանգութիւնը քսան դար յետոյ ապագայ սերունդներին վերադարձնելով՝ փրկել մեր ինքնութիւնը[24]:

Սա կարեւոր եզրայանգում է, որ գեղարուեստական իրացման կարիքն ունի: Խեչոյեանը գտել է ձեւը, նա ոչ միայն պատմող է, այլեւ դասախօսութիւն կարդացող, նա այդ ճանապարհով հերոսի հետ կապուած գաղափարական, փիլիսոփայական մեկնութիւններ անելու հնարաւորութիւն է ստանում: Իսկ այն հատուածներում, ուր պատմելու «հնար կայ», պատմում է՝ դիւցազնավէպին արժանի պատկերներով ու զգացողութեամբ:

Արեւմտեան մտածողութեանը, կենսաձեւերի փիլիսոփայութեանը հակադրւում է արեւելեան իմաստասիրութիւնը: Այս իմաստով մեր դիւցազնավէպի վերջին ճիւղը ոչ թէ ունի զուտ հայկական, ազգային, այլ համընդհանուր բնոյթ, որ նախանշում է մարդկութեան գոյատեւման

հնարաւոր ելքերից մէկը, թերեւս ամենակարեւոր ելքը: *Սասնայ Ծռերն* իր ներքին ուղղուածութեամբ դառնում է արեւելեան փիլիսոփայութեան բարձրակէտերից մէկը: Այն դառնում է եւրոպական գործապաշտ փիլիսոփայութեանը հակադիր ճանապարհ, որտեղ արտաքին հաշուարկելի ձեւերը փոխարինւում են մարդկային ներաշխարհում կատարուող յեղաբեկումներով: Սա արդէն ոչ այնքան աշխարհագրական-ընկերային, որքան հոգեւոր ոլորտ է, որտեղ էլ իրացւում է անհատի կայացման, նրա գործունէութեան հիմնական ընթացքը: Այստեղ մարդը հրաժարւում է նիւթական գործունէութիւնից, հաւաստելով, որ ստեղծագործական աշխատանքը տեղի է ունենում հոգեւոր ոլորտում եւ ոչ թէ ընկերային: Մհերը մի կողմ է դնում նախնիների կողմից գործածուած Թուր Կէծակին:

Այս իմաստով մեր ազգային դիւցազնավէպի Փոքր Մհերը դառնում է արեւելքը ներկայացնող փիլիսոփայական խտացում՝ բարձրակէտ, նրա համար մարդկութեանն այլեւս անհրաժեշտ են գոյակցութեան նոր ձեւեր, որտեղ ֆիզիկական ուժը չի դառնալու հիմնական հերոսը: Սկսուելու է նոր ժամանակ, երբ մարմինները կը հագնեն հոգիները, ներկային հակառակ՝ հոգին դուրսը պիտի լինի, իսկ մարմինը՝ ներսը, հոգու աչքերը պէտք է սկսեն տեսնել: Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոգեւոր կայացման, ինքն իր մէջ ներսուզուելու, իր մէջ եղած մարդկային որակները զարգացնելու, դրանց ապաւինելու պահանջ: Սա տիպիկ արեւելեան մտածողութեան արտայայտութիւն է:

Այսուհանդերձ, ինչո՞ւ է արեւելեան մտածողութիւնն իր ընթացքը ուղղում մարդու ներաշխարհը՝ այն աւելի կարեւորելով հասարակական կեանքում գոյութիւն ունեցող խնդիրներից: Եւ դա չի՞ նշանակում արդեօք, որ արեւելքցին իր որակներով՝ որպէս անհատականութիւն, դեռեւս անհրաժեշտ մակարդակին չի հասել, որպէսզի իր վրայ վերցնի պատասխանատուութիւնը եւ կատարի փոփոխութիւններ՝ հասարակական կեանքը կատարելագործելու համար: Առաջին հայեացքից միայն այս դիտարկումը կարող է ճշմարիտ թուալ: Բայց իրողութիւնն այլ է: Անհատի առարկայական-նիւթական գործունէութիւնը լայն ասպարէզ կարող է ունենալ միայն անհրաժեշտ պայմանների առկայութեան դէպքում: Այդ պարագայում միայն հնարաւոր է նկատելի յաջողութիւնների հասնել: Մինչդեռ հասարակութիւնները շատ յաճախ ապրում են տեւական լճացման շրջանի մէջ, որից դուրս գալու ելքերը բաւականին սահմանափակ են, մի դէպքում հնարաւոր է համընդհանուր պայթիւն՝ ըմբոստութեան ձեւով, երբ այլեւս անհնարին է նման կերպ ապրելը, եւ ուժերն էլ բաւական են փոփոխութիւնների համար իսկ, միւս ուղին, որ աւելի յաճախ է տեղի ունենում՝ հեռացումն է հասարակական կեանքից, խնդիրներից: Երբ ելքերն այլեւս տեսանելի չեն, մարդը հեռանում է հասարակական կեանքը

վերափոխելու մտադրութիւնից, նա գնում է դէպի սեփական ներաշխարհը բացայայտելու, ինքն իրեն աւելի խորութեամբ ճանաչելու ուղիով:

Համաշխարհայնացուող աշխարհում գոյատեւման միակ ելքը մնում է ինքնութեանը, արմատներին վերադառնալու հրամայական պահանջը:

Եթէ առաջին ժողովածուն՝ *Խնկի Ծառերը*, մարդու համար կաթուածի կենտրոն էր, ապա *Սեւ Գիրքում*... խօսքը մարդու եւ քաղաքակրթութեան կործանման ու նաեւ նաեւ արարումի մասին է, ուր գծւում են հայրենիքի սահմանները՝ արժանապատիւ ապրելու նպատակով: Կեանքը հակադրամիասնութիւն է, մի կողմից կոյր աշխարհի սարսափեցնող դէմքը, միւս կողմից՝ դժուարին արարումը, հայրենիքի կայացումը: Թւում է՝ կորուստներն անչափելի են. մարդուց այլեւս բան չի մնացել, այլ միայն *Ձայներ Եւ Տեսիլքներ* (2006): Բայց սա էլ գրողին քիչ թուաց. դրան հետեւած ժողովածուն՝ *Փուշը, Հա՛յր, Փուշը* (2011), ուր ներակայացւում էին արդէն նախկինում գրուած պատմուածքները, պատերազմի թեմայով ստեղծուած գործերն արդէն տեղակայուած էին «Ստուերների Տեսիլքը» խորագրի տակ: Մարդիկ կորցրել են իրենց նկարագիրը, նրանք ստուերներ են: Բայց մեռեալների թագաւորութեան մէջ հնարաւոր է խօսել միայն տեսիլքների մասին եւ այն էլ՝ ստուերների տեսիլքների մասին:

Երրորդ շրջանը կապուած է *Մհերի Դռան Գիրքը* վէպի (2014) հետ: Այստեղ արդէն գաղափարական մղումները յաղթահարում են նախորդ շրջանների երկերի սահմանները: Մհերը, որքան էլ ազգային նկարագրի, փիլիսոփայութեան կրող լինի, որպէս Բնութեան դրսեւորման որոշակի՝ անհատական ձեւ, միեւնոյն է՝ հանդէս է գալիս որպէս համաշխարհային հասարակութեան անդամ, այն իմաստով, որ մարդկութեան համար նախանշում է գոյութեան նոր ուղի, որ զէնքը դրել է մի կողմ եւ ընտրել կայացման ներքին ճանապարհ, երբ գալու է նոր ժամանակ՝ մարդու մարմինը պիտի լինի ներսը, իսկ հոգին դուրսը, եւ մարդիկ իրենց ու շրջապատը տեսնելու են հոգու աչքերով:

Եթէ ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ Խեչոյեանի համար Բնութիւնը կենդանի է իր բոլոր ձեւերի մէջ, այն մշտապէս խօսում է մեզ հետ, բայց բաց չի անում գաղտնիքը, քանի որ «*հողագնդի վրայ կատարուող բոլոր իրադարձութիւններին, դէպքերին, երեւոյթներին, գոյներին, հնչիւններին, խօսքերին, շնչառութեանը, հեւքին մէկ մարդը, ինչքան էլ իմաստուն լինի, չի կարող հասնել*» («Ճանապարհորդը» հեքիաթը): Նա համընդգրկուն իմաստ ունի եւ նպատակայարմար կերպով է ստեղծուած, բայց «*Ասփծոյ արարման սկզբի եւ վերջի տրամաբանութիւնը հասկանալն անըմբռնելի է*»[25] եւ դա չի արտայայտուած բնութեան առանձին ձեւերում: Ամէն տեսակ թէեւ ինքն իր հետ է, այսուհանդերձ յարաբերակցւում է միւսներին: Արուեստի խնդիրը կենդանի կեանքի ամբողջութիւնն ակնյայտ դարձնելն է:

Միաժամանակ մարդու էութիւնն է անմահ, քանի որ նրա մէջ մեծ է յաւիտենականութեան ձգտումը. նա ցանկանում է հասկանալ արարման խորհուրդը: Բայց ստացւում է, որ բնութիւնն իր հերթին չի ցանկանում, որ կեանքը լինի ճանաչելի: Հենց այս հանգամանքն էլ դառնում է կեանքի հիմնական առեղծուածը, գաղտնիքը:

Ակնյայտ է, որ Խեչոյեանի ստեղծագործութիւնն աւելի շուտ կապւում է յետարդիական փիլիսոփայութեանը, որտեղ երեւոյթների մէջ գոյութիւն ունեցող տրամաբանութիւնը փոխարինուած է անտրամաբանական զարգացումներով, այն իրաւամբ անուանւում է «*պարալոգիստական*» (յուն. para-շեղում), ամէն ինչում տրամաբանութիւնից շեղման փիլիսոփայութիւն, ուր չկայ օրինաչափութիւն, իրերի ու գաղափարների տրամաբանութիւն եւն.: Խեչոյեանի երկերում էլ յաճախ «անտրամաբանական» զարգացումներ ենք տեսնում, որոնք անսովոր են եւ նման չեն դէպքերի սովորական, հասկանալի զարգացումներին ու աւարտին, ինչին բնորոշ է գծային ժամանակը եւ ոչ-ուղղահայեաց ժամանակը, ինչին որ ձգտում է Խեչոյեանի գիրը:

Բայց այդ խօսքը կը լինէր աղքատ ու ոչ-այնքան ներազդուն, եթէ այն չսնուէր ժողովրդաազգագրական, առասպելական պատկերացումներից եկող աւազանից: Եւ քանի որ վերաբերմունքն ասելիքի հանդէպ մշտապէս լուրջ է ու զգացմունքային, նրա խօսքն առանձին պահերին ձեռք է բերում նաեւ բանաստեղծական կշռոյթ, պատկերներ ու տրամադրութիւն:

Ինչ վերաբերում է գրողի բնափիլիսոփայութեանը, ապա այն շատ կողմերով սնւում է եւրոպական փորձից, աւելի որոշակի՝ Գէօթէի գաղափարներից: Խօսքը մասնաւորապէս առնչւում է մեծ գերմանացու բնափիլիսոփայութեանը, որտեղ առանցքային նշանակութիւն ունի հակադրութիւնների նոյնութիւնը, կեանքն անճանաչելի դարձնելու բնութեան մղումները, բնութեան յաւերժ ներկայութիւնը եւն.: Գէօթէն ենթադրում է, որ կեանքը միասնութեամբ ի յայտ է գալիս որպէս մի ուժ, որը չի պարունակւում նրա առանձին մասերի մէջ: Կեանքը եւ արուեստը հակադրամիասնութիւն են: Այս ամէնը արատայայտուած են մեծ գերմանացու ինչպէս գեղարուեստական, այնպէս էլ տեսական գրականութեան մէջ[26]: Հետաքրքիր է, որ Գէօթէն ստեղծելով գոյների մասին ամբողջական գիտութիւն, իր հիմնաւորումներում առանձնացնում է վեց գոյներ՝ դեղին, նարնջագոյն, կարմիր, մանուշակագոյն, կապոյտ, կանաչ: Դրանցից երեքը՝ դեղին, կարմիր, կապոյտ, համարում է «հիմնական գոյներ»[27]: Խեչոյեանը գոյները դարձնելով կենդանի կեանքի դրսեւորման կարեւոր միջոցներ՝ իր գեղարուեստական խօսքում եւս առանձնացնում է դրանք՝ կարմիրը, դեղինը, կապոյտը:

Այսուհանդերձ, ի՞նչ է բերում Խեչոյեանը հայ գրականութիւն՝ որպէս նրա անկրկնելի գրին բնորոշ որակ:

Գրողը նախորդ շրջանի գրականութեանը բնորոշ աշխարհի եռաչափ պատկերը թէեւ փոխարինեց միաչափ հարթութեամբ, պատումի *խրոնոտոպը* տեղը զիջեց գրական տարածական մարմինների համադրումներին, ինչի արդիւնքում կարեւորուեցին տարբեր գրական պատկերների, մարմինների միջեւ եղած տարածական, բայց ոչ ժամանակային կապերը, արդիւնքում ստանալով աւելի ընդհանուր իմաստ, քան կարող էին իրենց հետ բերել որոշակի առարկաներն ու հերոսները, այսուհանդերձ միաչափ պատկերները Խեչոյեանը խորացրեց *էպիֆանիայի* գործադրման հիմքով: Սա, կարելի է ասել, վերաիմաստաբանութիւնը՝ երեւոյթներին հաղորդելով բազմիմաստութիւն (բնութիւնը, կեանքը, պատմութիւնը համընդհանուր *տեքստ* է, որ մշտապէս ենթարկւում է մեկնաբանութիւնների): Կարող ենք ասել, որ այս սկզբունքի կիրառմամբ հայ արձակում սկսւում է զարգացման նոր շրջան: Այն իրողութիւնների բացայայտման այլ ուղիներ է մատնանշում:

Միւս կարեւոր առանձնայատկութիւնը կապուած է խօսքի դրսեւորման ձեւի, դրա ասքային որակի հետ: Ասքայնութիւնը նրա երկերին ինքնատիպութիւն տուեց՝ խորքում վերածուելով իւրօրինակ «ըմբոստութեան» ձեւի, ինչը հակադրւում էր հայ գրականութեան աւանդական պատումի սկզբունքներին: Նրա գրականութիւնը դառնում էր հայ պատմութեան մէջ արձանագրուած բնագրի նորովի վերապատմում-մեկնութիւն՝ մատուցման ասքային կերպով ու դրանից բխող բովանդակութեամբ. երեւոյթների այս կամ այն դրսեւորումը Խեչոյեանի համար մշտապէս ներհիւսուած մնաց տեւական ժամանակին: Դրանք դարձան խորհրդանիշներ եւ յաղթահարեցին պատումի սահմանները՝ ասքային մատուցման ձեւի մէջ պահելով իրադարձութիւնների կրկնութիւն-անվերջութիւնը:

Ինչ վերաբերում է արձակի փոքր ձեւերին, Խեչոյեանի պատումներն ստացան նորավէպային բնոյթ: Յաճախ *յարակարծական* վերջաբանի մէջ բանաստեղծականացնելով երեւոյթը՝ Խեչոյեանն ակնյայտ դարձնելով ասելիքը, միաժամանակ մնաց որպէս անկողմնակալ պատմող՝ մշտապէս հետամուտ կեանքի առեղծուածի բացայայտմանը:

Խեչոյեանը՝ որպէս ժողովրդի արժանաւոր զաւակ, իմաստաւորելով նախնեաց բազմադարեան փորձը, իր գրականութեամբ դարձաւ բոլորի իրաւատէրն ու պաշտպանը՝ մեր մէջ յարուցելով սեփական տան սէմից անդին գոյութիւն ունեցող աշխարհի անվերջութեան զգացողութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Լեւոն Խեչոյեան, *Ձայներ եւ Տեսիլքներ*, Երեւան, Նայիրի, 2006, էջ 176:

[2] «Ջրերի Վրայով Թռչող Մեղուն» (հարցազրոյցը Նուարդ Ալեքսանեանի), *Եղիցի Լոյս*, 8 Սեպտեմբեր 2011:

[3] «Զանգուլակներով Կոյր Անցորդը» (հարցազրոյցը Նուարդ Ալեքսանեանի), *Ազատ Արցախ*, 31 Յունիս 2004:

[4] Բոգդան Պաստուխ, «Տաք Լոյսը եւ «Խելացի Տառապանքը», «*Գրանիշ*», 6 Յուլիս 2013:

[5] Ալեքսանեան, «Զանգուլակներով»:

[6] Նոյն:

[7] «Սրբավայրերը Միշտ Էլ Ընդերքից Բխող Կաթնաղբիւրների Վրայ Են Լինում» (հարցազրոյցը Ժաննա Կույաւայի), 28 Սեպտեմբեր 2013 / http://litakcent.com :

[8] «Ցաւի Մասին, Որ Հատիկի Նման Ծլել Է Մաշկի Տակ» (հարցազրոյցը Ժաննա Կույաւայի), bukvoid.com.ua, 4 Մարտի 2013:

[9] Լեւոն Խեչոյեան, *Խնկի Ծառեր*, Երեւան, Նայիրի, 1991, էջ 4-5: Այս հրատարակութիւնից արուած մէջբերումների էջերը կը նշուեն տողում:

[10] Վաչագան Գրիգորեան, *Մուշեղ Գալշոյեան. Ստեղծագործութիւնը*, Երեւան, Վան-Արեան, 1998, էջ 132-8:

[11] Дж. Трессндер, *Словарь Символов* (Խորհրդանիշների բառարան), Մոսկուա, 2001:

[12] Դրա լաւագոյն ներկայացուցիչը կոլումբացի վիպագիր Գաբրիէլ Գարսիա Մարկէսն է (1927-2014), որի գործերը գտնուել են գրաքննադատների ուշադրութեան կենտրոնում եւ պահանջարկ են վայելել՝ առաւելապէս «մոգական ռէալիզմը» հանրայնացնելու համար: Այն օգտագործում է մոգական տարրեր եւ իրադարձութիւններ սովորական եւ իրապաշտական իրավիճակներում: Գրողի առանձին գործերի իրադարձութիւնները ծաւալւում են Մակոնդոյում (այս վայրը ստեղծելիս գրողը ներշնչուել է իր ծննդավայր Արակատակայից):

[13] Սերգէյ Սարինեան, *Հայոց Գրականութեան Երկու Դարը, Գիրք Երրորդ*, Երեւան, Զանգակ, 2002, էջ 111:

[14] Սէյրան Գրիգորեան, «Ո՞ւր Է Թագաւորը», *Նորք*, 1995:1. նաեւ՝ Արմէն Աւանէսեան, «20-րդ Դարի Հայ Պատմավէպի Առանձնայատկութիւնները», *Անդին*, 2013:10:

[15] *Вопросы философии*, (Փիլիսոփայութեան հարցեր), 1986:4, էջ 115:

[16] Время Жить (Ապրելու ժամանակը), Մայկոպ, 2003, էջ 15-23:

[17] *Արտասահմանեան Գրականութիւն* (Գրական Թարգմանական Հանդէս), *Հտր. 1*, Երեւան, 2018, էջ 66:

[18] *Սեւ Գիրք, Ծանր Բզէզ*, Երեւան, Նայիրի Հրատ., 1999, էջ 67:

[19] Ալեքսանեան, «Զանգուլակներով»:

[20] Նոյն:

[21] Ս. Սարինեան, «Միերի Առասպելը Ըստ Լեւոն Խեչոյեանի "Միերի Դռան Գիրքը" Վէպի», *Վէմ*, 2014:3, էջ 73-81 :

[22] Նիկոլայ Նեկրասով (1821-1878), ռուս բանաստեղծ, գրական-հասարակական գործիչ: Իր յօդուածներում ու գրախօսութիւններում վճռականօրէն պաշտպանել է գրականութեան մէջ իրապաշտութեան եւ ժողովրդայնութեան գեղագիտական սկզբունքները, մերժել «արուեստը արուեստի համար» տեսութիւնը: 1847ից Իւան Պանաեւի հետ հրատարակել է *Սովրեմեննիկ* ամսագիրը: 1850ականների

կէսերի հասարակական վերելքի շրջանում, երբ *Սովրեմեննիկում*, Նեկրասովի նախաձեռնութեամբ, ղեկավար դեր են ստանձնել Նիկոլայ Չեռնիշեւսկին եւ Նիկոլայ Դոբրոլիուբովը, ամսագիրը դարձել է ռուս ազատագրական շարժման հետ սերտօրէն կապուած յեղափոխական դեմոկրատիայի մարտական օրգանը:

[23] Արթուր Արմին, *Հնագոյն Հեթանոսական Աստուածաշունչ՝ Սասնայ Ծռեր Էպոսը*, Լոս Անճելըս, Արթուր Արմին, 2007, էջ 134:

[24] Լեւոն Խեչոյեան, *Միերի Դռան Գիրքը*, Երեւան, Անտարէս, 2014, էջ 16-17:

[25] *Տան Պահապան Հրեշտակը (Հեքիաթներ)*, Երեւան, Անահիտ, 2002, էջ 20:

[26] И. В. Гете, *Избранные Работы по Естествознанию* (Բնագիտական աշխատանքների ընտրանի), Մոսկուա, ՍՍՀՄ ԳԱ Հրատ., 1963:

[27] Նոյն, էջ 271-2:

LEVON KHECHOYAN'S LITERARY PROFILE

(Summary)

VACHAGAN GRIGORYAN
vachik_grigoryan@mail.ru

Levon Khechoyan is one of the unique literary figures of post-independent Armenia. Nourished by Armenian literary traditions, his work heralds new directions in the development of Armenian prose.

The article tries to depict Khachoyan's literary profile by focusing on the characters of his literary works. Against the backdrop of Leo Tolstoy's and Hovhannes Toumanian's literary works, which reflected their conviction that vice was to lose the contest against virtue, and those of Hrant Matevossian, which confirmed that vice is an unavoidable presence next to virtue, this study highlights the literary perceptions of Khechoyan.

The author argues that Khechoyan's literary world has no confidence in the future. The world is aggressive and vicious, and man has to preserve the borders of his own identity through suffering and effort. He has no hope of support, because time has deprived him of it.

Khechoyan's characters have a difficult life. The characters of his first book highlight the centrality of the life crisis, while his second book (a novel) reflects the challenges and efforts of living in public space, and his third book is about the destruction and creation of civilizations, where the limits of the fatherland are drawn.

His fourth book revolves around the legendary figure from the Sasuntsi David epic, Mher. He symbolizes the philosophical catalyst in the historical evolution of humanity. The author argues that by using the concept of epiphany Khechoyan further deepened his works and inaugurated a new era in Armenian literature. Furthermore, his narration style has put his works into a sort of rebellion against the traditional principles of Armenian literature.

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ *ԳԻՐՔ ՃԱՂԿԱՆՑ* ՊԱՏՄՈՒԱԾՔԸ ՈՐՊԷՍ *ԷՔՖՐԱՍՏԻԿ*[1] *ՏԵՔՍՏ*

ԿԱՐԻՆԷ ԱՍԱՏՐԵԱՆ
asatryan.karine.m@gmail.com

Ե՛ւ նկարիչը, ե՛ւ գրողը պարզկերներ ստեղծողներ են, սակայն կանօրէն նրանց ստեղծած պարզկերների միջեւ կապ կայ...
Հ. Նեմէրով

ՄՈՒՏՔ

Գեղագիտական միտքը բազմիցս է անդրադարձել գրականութեան ու արուեստի գոյակցութեանն ու փոխազդեցութեանը, որոնք առանձնակի ներառուել ու տարբեր տեսանկիւններից դիտարկուել են գրականութեանն ու գեղանկարչութեանը վերաբերող ուսումնասիրութիւններում՝ սկսած հնագոյն ժամանակներից մինչեւ մշակութաբանութեան ներկայ փուլը: Հնագոյն խօսքարուեստում *«նկարչութիւնը համր պոեզիա է, իսկ պոեզիան՝ խօսող նկար»*, *«պոեզիան իբրեւ նկարչութիւն»* բանաձեւումները իւրօրինակ ուղենիշ են դարձել գրականութեան ու գեղանկարչութեան տեսական քննարկումների ու տարաբնոյթ սահմանումների համար: Նկարիչ ու արուեստի տեսաբան Լէոնարդօ դա Վինչին նկարչութեանն ու բանաստեղծութեանը նուիրուած տեսական իր դիտարկումներում նշում է. *«Պոեզիան նկարագրում է մտքի գործողութիւնը, նկարչութիւնը՝ այն, ինչ միտքը կարող է ծնել (մարմնի) շարժումների միջոցով»*[2]: Գոթհոլդ Լեսինգը *Լաոկոոն*ում տարանջատում է բանաստեղծութեան եւ գեղանկարչութեան պատկերաւորման հնարաւորութիւնները. *«ժամանակային յաջորդականութիւնը բանաստեղծի, տարածութիւնը նկարչի բնագաւառն է»*[3]: Իրար ետեւից տարբեր մանրամասներ կամ իրեր թուարկելով ընթերցողի համար նկարագրուող առարկայի ամբողջական ու կենդանի պատկեր ստեղծելը Լեսինգը համարում է բանաստեղծի կողմից գեղանկարչի տարածք ներխուժում եւ երեւակայութեան անօգուտ վատնում[4]: Իսկ ահա համեմատելով երաժշտութիւնն ու նկարչութիւնը՝ Ժան Ժաք Ռուսօն բացատրում է, որ նկարիչը չի կարող պատկերել առարկաներ, որոնք հնարաւոր չէ տեսնել, մինչդեռ երաժշտական արուեստը կարող է ստեղծել նոյնիսկ հանգստի պատկերը. *«...երազը, գիշերային անդորրութիւնը, ամայութիւնը ... պարզկանում են երաժշտական նկարների թուին»*[5]: Երաժիշտը անկենդան առարկայի պատկերը փոխարինում է շարժումով, նա հոգում արթնացնում է զգացումներ, որոնք զգում ենք այդ առարկան տեսնելիս: Գերմանացի փիլիսոփայ-գեղագէտ Եոհան Հերդէրը, խօսելով արուեստների՝ նկարչութեան, երաժշտութեան, բանաստեղծութեան փոխյարաբերութեան, դրանց արտայայտչամիջոցների ու ներգործութեան մասին, նշում է.

գեղանկարչութիւնը ձգտում է պատրանք ստեղծել աչքերի համար, պոեզիան՝ երեւակայութեան, բայց ոչ բառացի, ոչ այնպէս, որ ես ճանաչեմ առարկան իր նկարագրութեամբ, այլ որպէսզի ես դա պատկերացնեմ այն նպատակի տեսանկիւնից, յանուն որի այն բանաստեղծն ինձ ցոյց է տալիս[6]:

Գեղարուեստական ստեղծագործութիւնները (արուեստի գործ կամ գրական երկ) ծածկագրւում են նշանային տարբեր համակարգերով. նկարչութիւնը գեղարուեստական տեղեկոյթը փոխանցում է «պատկերա-նշաններով», գրականութեան մէջ «գործածուող նշանների *բնոյթը աւելի շատ մօտ է նշան-ինդեքսներին եւ խորհրդանշաններին*»[7]: Ցանկացած ստեղծագործութիւն՝ որպէս *տեքստ* ընկալելու ու հասկանալու համար անհրաժեշտ է վերծանել գեղարուեստական տեղեկոյթը փոխանցող նշանային լեզուն: Գեղանկարչութեան ու գրականութեան «սահմանակից ոլորտների» փոխյարաբերութիւնն անառարկելիօրէն հաստատում է նաև Ռոման Եակոբսոնի՝ բառանշանի մեկնութեան երեք միջոցներից յատկապէս երրորդ՝ «միջնշանագիտական փոխադրման»[8] կարեւորութիւնը նշանային մի համակարգից միւսին անցնելու, տրամաբանօրէն նաեւ էքֆրաստիկ *տեքստ*երի[9] ուսումնասիրութեան համար: Այս պարագայում՝ որպէս արուեստագէտ-ընթերցող երկուստեք փոխյարաբերութիւններով պայմանաւորուած եւ միջնշանագիտական գործընթացները համակարգող հզօր գործօն, կարեւորւում է յատկապէս ստեղծագործական երեւակայութեան անմիջական մասնակցութիւնը: «Միջնշանագիտական թարգմանութիւն»ը ստեղծագործական բարդ գործընթաց է, երբ գրողի կամ արուեստագէտի խնդիրն է նշանային համապատասխան լեզուով ոչ միայն վերածածկագրել, այլ նաեւ վերծանել խօսքային եւ ոչ-խօսքային *տեքստ*երի իմաստային ենթաշերտերը: «*Բառի եւ պատկերի սահմանագծում տեղի ունեցող նշանագիտական գործընթացները իրականացւում են երեւակայութեան միջակայ ոլորտում*»[10]: Հետեւապէս մտային այդ գործընթացներում հիմնաւորապէս կարեւորւում է ոչ միայն հեղինակի, այլեւ մասնակից ընթերցողի՝ հասցէատիրոջ դերը:

Յօդուածի հիմնական նպատակը Դերենիկ Դեմիրճեանի *Գիրք Ծաղկանց* պատմուածքի քննութիւնն է իբրեւ *էքֆրաստիկ տեքստ* տարածական արուեստի ստեղծագործութեան բառային *տեքստ*ագրում: Մանրանկարը՝ փոխաբերականացուած խօսքի պատկերաւոր նկարագրութեամբ դառնում է գրական պատումի յօրինուածքի կառուցուածքային հիմնական առանցքը:

1. *ԷՔՖՐԱՍԻՍԸ*՝ ՈՐՊԷՍ ՆՇԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ

*Էքֆրասիս*ի գեղարուեստական գործառոյթն իրականանում է տեսողական-տարածական արուեստի ստեղծագործութեան բառային պատկերաւորմամբ: Պատմական զարգացման ընթացքում *էքֆրասիս*ը՝ նաեւ որպէս հեղինակի գեղարուեստական մտայղացումների իրականացման, ստեղ-

ծագործական մտածողութեան իւրօրինակ անդրադարձ ու հնարաւորութիւն, ընդլայնել է կիրառական հնարաւորութիւնները՝ ամրագրուելով արուեստի եւ գրականութեան կառուցուածքային հիմնախնդիրներին վերաբերող գիտական բազմաբնոյթ սահմանումներում: Որպէս նշանային երկու տարբեր լեզուների (ոչ-բառային եւ բառային) անցումները բնութագրող միջնշանագիտական երեւոյթ՝ այն նախապէս ընկալուել է որպէս արուեստի ստեղծագործութեան բառային նկարագրութիւն, իսկ հնագոյն հռետորական խօսքարուեստում ունեցել է առհասարակ տպաւորիչ նկարագրական պատկերներ ստեղծելու նշանակութիւն (նկարագրել ոչ միայն արուեստի գործեր, այլեւ բնութեան տեսարաններ, երեւոյթներ): *Էքֆրասիսը* գիտական համակողմանի ուսումնասիրութիւնների ոլորտում յայտնուեց յատկապէս Ի. դարում՝ միաւորելով տարբեր մօտեցումներում առկայ այն ընդհանուր մտայնութիւնը, թէ *էքֆրասիսը* տարածական արուեստի ստեղծագործութեան բառային պատկերումն է: Ամերիկացի գրաքննադատ Միրէյ Կրիգէրը *էքֆրասիսը* համարում է գրականութեան տեսողական ու տարածական ներուժի ամենածայրայեղ ու ցայտուն օրինակը: «*Էքֆրասիսի սկզբունքը կարող է գործել [...] երբ բառը մրցակցում է նկարի կամ քանդակի տարածական բնոյթի հետ՝ սպիպելով բառերին, չնայած իրենց՝ որպէս դատարկ նշանի բնականոն գործառոյթին, ձեռք բերել ինքնուրոյնութիւն՝ դառնալով խորհրդանիշ*»[11]: Ըստ նրա՝ «*Էքֆրաստիկական ձգտումը գրողի եւ ընթերցողի համար ամբողջանում է լեզուին առնչուող երկու հակադիր ազդակներով, [...] մէկին էքֆրասիսի գաղափարը ոգեւորում է, միւսին՝ նեղում: Էքֆրասիսը ծնւում է առաջինից, որը ձգտում է տարածութեան մէջ քարացման, մինչդեռ միւսը՝ ժամանակային ազատ հոսքի: Առաջինը ուզում է, որ լեզուն, չնայած իր կամայական բնոյթին ու ժամանակայնութեանը, տարածութեան մէջ սառչի*»[12]: Խօսելով արեւմտեան մշակոյթի կարեւոր հոսանքներից մէկի՝ ճարտասանութեան մէջ նկարագրութեան իրականացրած գեղագիտական գործառոյթի մասին՝ Ռոլան Բարտը նշում է, որ արդէն երկրորդ դարից *էքֆրասիսը* արմատաւորուել է որպէս ամբողջի շրջանակներում որեւէ գործառոյթից չկախուած հրաշալիօրէն առանձնացուած տեսակ՝ նուիրուած տեղի, ժամանակի, այս կամ այն մարդկանց կամ արուեստի ստեղծագործութեան նկարագրութեանը[13]: Ուիլիըմ Ջոն Թոմաս Միչըլի խօսքով՝ «*բառային պատկերումը իր առարկան չի կարող ներկայացնել (ապահովել դրա ներկայութիւնը) այնպէս, ինչպէս կարողանում է ներկայացնել տեսողական պատկերումը: Այն կարող է յղել առարկան, նկարագրել, անուանել այն, բայց ոչ երբեք ապահովել դրա տեսողական ներկայութիւնը [...]*»[14]: «*Էքֆրաստիկ պոեզիան «ժանր է, որում տեքստերը բախւում են իրենց սեփական նշանագիտական «տարբերակներին», պատկերման այն մրցակից օտար եղանակներին որոնք կոչւում են տեսողական, գծանկարչական, կերպընկալ կամ տարածական*

արուեստներ»[15]: Անհնարին համարելով առարկան բառի փոխադրելը՝ Լէոնիդ Գելլէրը նշում է. «*...էքֆրասիսը բառի է վերածում ո՛չ առարկան (դա իսկապէս անհնարին է), ո՛չ ծածկագիրը [...], այլ առարկայի ընկալումն ու ծածկագրի մեկնաբանութիւնը [....]: Այն ոչ թէ նկարի պատկերանշանն է, այլ տեսունակութեան, նկարի ըմբռնման*»[16]:

ՄԱՆՐԱՆԿԱՐԻ *ԷՔՖՐԱՍԻՍԸ* ԴԵՄԻՐՃԵԱՆԻ *ԳԻՐՔ ԾԱՂԿԱՆՑՈՒՄ*

Գրի ու պատկերի համադրումը նշանագիտական ու մշակութաբանական բարդ երեւոյթ է: Հայ միջնադարեան գրքարուեստում ձեռագիր մատեանների նկարազարդումները՝ միջնադարեան մտահայեցողութեան հոգեւոր ու աշխարհիկ ընկալումներին բնորոշ խորհրդանշական պատկերային իւրօրինակ անդրադարձումներով զուգահեռուել է բառային *տեքստին*՝ միաժամանակ լուծելով իմաստային-բովանդակային, ստեղծագործութեան յօրինուածքի կառուցուածքային, գեղագիտական մի շարք խնդիրներ: Միջնադարեան գրքարուեստում նշանային երկու՝ խօսքային եւ ոչ-խօսքային համակարգերի համադրութեան գեղարուեստական արձագանգը Դեմիրճեանի *Գիրք Ծաղկանց*ում հնչում է այսպէս. «*Վանահայրը բացեց գիրքը: Էջերի վրայ բնագրի հետ մէջընդմէջող վանքի ու այլ շէնքերի նկարներ կային խստագիծ նկարած, որոնց շուրջը ծաղկած էր*»[17]: *Գիրք Ծաղկանց*ի գեղարուեստական կառոյցը հիւսւում է հայ միջնադարեան արուեստի՝ մանրանկարչութեան, ու բանաստեղծութեան՝ մշակոյթի այս երկու *տեքստ*երի «երկխօսութեամբ»: Մանրանկարի *էքֆրաստիկ* մեկնաբանութիւնը պատմուածքում ամէնից առաջ առնչւում է պատմուածքի վերնագրին: «*Էքֆրասիսի՝ որպէս գեղարուեստական ստեղծագործութեան տեքստում որոշակի երեւոյթի եւ ըստ էութեան ստեղծագործութեան* ***գեղարուեստական աշխարհի*** *որոշակի երեւոյթի ուսումնասիրութեան ժամանակ կարեւորւում են այսպիսի իրավիճակում առաջացող իմաստաբանական-համատեքստային խորհրդանշական մտքերը, որոնք ձեւաւորում են* ***ստեղծագործութեան եւ դրա վերնագրի միջեւ*** *[ընդգծումները՝ բնագրային] յարաբերութիւնների համակարգը*»[18]: Ստեղծագործութեան վերնագիրն «*...հիմնական տեքստի համատեքստն է...*»[19]: Վերնագիրն իր մէջ խտացնում է ստեղծագործութեան դիպաշարային ու պատկերային հիւսուածքը: Մանրանկարը՝ որպէս տարածական պատկեր, վերածածկագրւում է իբրեւ բառային պատկեր: Մանրանկարի նշանային լեզուն առանց այդ էլ բարդացնում է վերջինիս ընթերցումը հոգեւոր խորհրդանշական երեւոյթների գաղափարական-իմաստային խորքայնութեան տեսանկիւնից. ոչ-բառային *տեքստը* (այս դէպքում՝ մանրանկարը) բառայինով մեկնելու ընթացքում «պատկերուող առարկան ներկայանում է որպէս տեքստ-օբեկտ (սկզբնական նշանագիտական համակարգ), իսկ դրա բառային մեկնութիւնը՝ որպէս *մետատեքստ*

(բառային նկարագրական նշանագիտական համակարգ)[20]: Գրական-գեղարուեստական ստեղծագործութիւնն իբրեւ այդպիսին՝ բացայայտում է պատմուածքի գաղափարական-բովանդակային ողջ ծաւալը՝ մանրանկարի *էքֆրաստիկ* մեկնութեամբ՝ ներառելով նաեւ հայ միջնադարեան տաղերգութեան անդրադարձները:

Հրանտ Թամրազեանը նշում է, որ Դեմիրճեանի ստեղծագործութեան հիմքում ընկած է մշակութային արժէքաւոր մի փաստ[21]՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանի հայերէն ձեռագրերի *Մայր Ցուցակում* նշուած N 88 Աւետարանը: Վկայակոչելով Հայր Բարսեղ Սարգիսեանի նկարագրութիւնը եւ տեղեկութիւնը ձեռագրի վերաբերեալ՝ գրականագէտը յայտնում է, որ տուեալները համապատասխանում են պատմուածքի վերաբերեալ Դեմիրճեանի յայտնած տեղեկութիւններին:

*Գիրք Ծաղկանց*ում մանրանկարի «մաքուր» *էքֆրաստիկ* նկարագրութիւնները քիչ են, սակայն գունագեղ բառապատկերներով վերարտադրուած են հայ մանրանկարչական արուեստի մանրամասներ, եւ Դեմիրճեանն ընթերցողի ուշադրութիւնն ուղղակի սեւեռում է դրանց վրայ: Նաղաշ Թադէն նայում է մագաղաթաթերթին ծաղկած սիրամարգին, «*որի սրճագոյն գլուխն ու վիզը յոխորտ կարկառել էր վերեւ եւ գետնի վրայ սփռել փետրուրների ասեղնագործ գորգը*», լուսանցքին՝ «*մանուածապատ ծաղիկներ յակինթների ու գոհարների ցոլքով...*», «*Ոսկեծոյլ նշողն ընդ նարնջին...ծաղիկ ընդ ծաղկանց...բոլորակն ոսկեճաճանչ, կամարն երկնահան գոյն...Պայծառ լաջվարդիւք, նոճին կանաչագեղ, թաւալգլուխ վարդն-այս է կանոնն...*» (էջ 32), «*Բոցագոյն վագրեր թռել են նարնջենի եղնիկների մէջքին եւ պապրաստւում են յօշելու նրանց*» (էջ 34), «*...Վանահայրը կախ էր գցել նրա մի էջը, եւ երեւում էր այդ էջի վրայ մի ոսկեշող կամար, կապոյտ սիւներ*[22] *եւ ծաղիկներ*» (էջ 12): Մէկտեղւում է միջնադարեան մանրանկարչութեան ողջ գունապնակը՝ դեղինի, ոսկեգոյնի, մուգ կապոյտի, վառ կարմիրի, կանաչի երանգները: *Գիրք Ծաղկանց*ում միջնադարեան զարդանկարների առանձին մանրամասներ վերաիմաստաւորւում, ընդհանրացւում են բառապատկերներում, որոնք ընթերցողի երեւակայութեան մէջ վերակենդանացնում են հայ մանրանկարչական արուեստի պատկերաշարային բազմազանութիւնը՝ այդ թւում եւ գեղագրութիւնը, արդէն գրական երկի կառուցուածքային ամբողջականութեան մէջ. «*Բոցավառ կենդանաթռչուններ, ծկնագազաններ եւ ծաղիկներ...*»[23] (էջ 35): Դեմիրճեանը մանրանկարի գոյները փոխադրում է շօշափելի կենդանութեամբ: Մանրանկարի *էքֆրաստիկ* մեկնութեան մէջ հայելային անդրադարձով ընդգծւում է տարածական գունապատկերի տեսողականութիւնը: Խորհրդանշական պատկերանշանները ընթերցողի երեւակայութեան մէջ վերակերպաւորւում են ոչ միայն մանրապատկերների դիւրաթեք ձեւերով

ու ճկուն շարժունութեամբ, այլեւ համապատասխան գունագեղութեամբ. ահա թէ ինչու է *Գիրք Ծաղկանց*ում այդքան շօշափելի նկարի ներզգայական ազդեցութիւնը: Մանրանկարի *էքֆրասիս*ը գեղարուեստական պատումի կառուցուածքում հիւսւում է շարունակաբար. «*Ղունկիանոսը ոգեց Ջուարթի երգը ծաղիկների մասին... : Ծաղկի՛ր Ջուարթի երգը, վարպետ...: Կրքոտուած տանջւում է Նաղաշը: Ծաղկում է Ջուարթի վէպը վանահօր գրքի մէջ... խառնում է գոյնը գոյնին... կրակներ են վառում մագաղաթի ճակատին ու լուսանցքներին*» (էջ 32-34): Ձարդանկարներն այս հատուածում ուղղակիօրէն նկարագրուած չեն, առանձնանում է մանրանկարչի կերպարը, ստեղծագործական ոգեշնչումը, հեղինակը վիպում է մանրանկարի ստեղծման պատմութիւնը. գործողութիւնը ծաւալւում է: Բառացիօրէն չմանրամասնուող մանրանկարներն ասես «յայտնւում են» գրական *տեքստի* ենթա*տեքստ*ում: Գրային լեզուի բառակազմական, շարահիւսական ու ոճական հնարքները գրողին հնարաւորութիւն են ընձեռում խտացնելու մանրանկարչի օգտագործած գոյնը. **ոսկին ճաճանչում է, յակինթն ու գոհարը ցոլք են արձակում, կամարը երկնահան գոյն ունի, եղնիկը նարնջենի է**: Մանրանկարի գուներանգները թանձրանում են փոխաբերական կառոյցներում՝ վառ բառապատկերներում. «*Նրա աչքերը գնում են կորչում ծաղկած մագաղաթների ոսկու, լաջվարդի, նարնջի, յակինթի մէջ....*» (էջ 31): «*Գոյնը չի գտնում: Նրա աչքերը մարեցին, կիսախուփ նայել սկսեցին կարծես մի անդունդ, որի յատակին վառում է մի հազուագիւտ ծաղիկ, աներեւակայելի նրբերանգներով: Ու հենց այն է, գրիչը թաթախեց պնակի մէջ եւ դրեց մագաղաթի վրայ, ներբերանգը փախաւ, ինչպէս չնաշխարհիկ թռչուն*» (էջ 34-35), բացւում իմաստաբովանդակային մանրամասներով, որոնք դարձեալ ընթերցողին միտում են մանրամասները կարդալու տողատակում: «Մեծամասամբ *էքֆրասիս*ը հակուած է արտայայտելու այն, ինչը գրականութեան մէջ մենք կ'անուանէինք ենթա*տեքստ*, իսկ գեղանկարչութեան մէջ, հաւանաբար, *տեքստ*ից այն կողմ՝ անդր*տեքստ*-սա նկարի ընթերցումն է, որը զուրկ չէ լրացուցիչ իմաստներից»[24]: Փոխաբերականացուած խորքային այս պատկերներում հեղինակը ընթերցողի համար տեսանելի է դարձնում մանրանկարչի մտապատկերներում ծնուող ու դեռեւս չառարկայացած նկարների ձեւերն ու գոյները, որոնք, սակայն, բառա*տեքստ*ով միջնորդաւորուած, գծագրւում են ընթերցողի երեւակայութեան մէջ: Դեմիրճեանն այսպիսով վերականգնում է ընթերցողի մշակութային յիշողութիւնը, յղում միջնադարեան զարդարուեստի այլ նմուշների եւս, եւ ընթերցողի երեւակայութիւնն արդէն բառա*տեքստ*ի ժամանակային տարածութեան մէջ ի մի է բերում հայկական մանրանկարչական արուեստի գոհարները՝ որպէս ազգային հոգեւոր ժառանգութիւնը:

*Գիրք Ծաղկանց*ում մանրանկարը սոսկ տարածական գունապատկերի վերապատկերում չէ բառանշանի միջոցով: Ճիշտ է, Դեմիրճեանը դրուագում է մանրանկարի առանձին մասեր, երբեմն մասնատում մանրանկարի յօրինուածքի ամբողջականութիւնը՝ տարածական որոշակի սահմաններ ընդգծելով, սակայն պատմուածքում նկարազարդուած մագաղաթաթերթերի պատկերները «անշարժ» չեն: Հեղինակը յաղթահարում է դրանց նկարագրական անշարժութիւնը: Ինչպէս նշեցինք, Դեմիրճեանը վիպում է մանրանկարը երկնելու ընթացքը: Նկարի տարածականութիւնը ընդլայնւում է խօսքարուեստի յարաշարժութեամբ, գեղարուեստական մանրամասների խորքային չափումներով. «*Իսկ վերեւը՝ աստեղալոյց երկնքում այնպիսի մի երկնակապոյտ է, որ կարծես մագաղաթը ճեղքել էր, եւ ինքը երկինքն էր նայում այնտեղից*» (էջ 32): *Գիրք Ծաղկանց*ում մանրանկարի *էքֆրասիսը* սոսկ գեղարուեստական ոճաւորման հնարք չէ. այն պատմուածքում դրսեւորւում է ոչ այնքան նկարագրական, որքան պատմողական սկզբունքով՝ դառնալով պատմուածքի յօրինուածքի կառուցուածքային առանցքը: Ըստ Ժերար Ժենէտի՝ «*Նկարագրութեան եւ պատմողականութեան միջեւ տարբերութիւնները բովանդակային են՝ զուրկ նշանագիտական էութիւնից, [...] որպէս գրական-գեղարուեստական պատկերման տեսակ՝ նկարագրութիւնը այնքան էլ յստակ չի տարբերւում պատմողականութիւնից [...], պատմողականութիւն հասկացութեան մէջ առանց որեւէ խնդրի կարելի է միաւորել գրական-գեղարուեստական պատկերման բոլոր ձեւերը՝ նկարագրութիւնը դիտարկելով ոչ թէ դրա տեսակներից, այլ որպէս կողմերից մէկը*»[25]: Մանրանկարի *էքֆրասիսը* «ներհիւսւում է» պատմողականութեանը՝ նկարագրուող դէպքերի յաջորդականութեամբ, եւ ինչպէս ճիշտ դիտարկուած է, նոյնիսկ հոմերոսեան Աքիլլէսի վահանի «*...նկարագրութեան համապատկերը ոչ թէ աւարտուն գործի անշարժ, կայուն ընկալում է, այլ առաւելապէս աստուածային արարման շարժուն գործընթաց*»[26]: *Գիրք Ծաղկանց*ում մանրանկարի *էքֆրասիսը* զարգանում եւ ծաւալւում է այլ թեմատիկ մանրամասներով: «*...էքֆրասիսը սերտաճում է վիպուող պատմութեանը՝ դիեգեսիսի*[27] *հետ կազմելով անբաժանելի ամբողջականութիւն*»[28]:

Խօսելով գրական ստեղծագործութեան մէջ նկարագրութեան՝ առաջին հերթին պատկերաւորման գործառոյթի իրականացման մասին, Եւգենի Գորոդնիցկին նոյնպէս նշում է, որ ոչ միայն *էքֆրաստիկ*, այլեւ ցանկացած նկարագրութիւն միաժամանակ որոշակի չափով նաեւ պատումային յատկութիւններով է օժտուած: Նա կողմ է արտայայտւում նաեւ այն տեսակէտին, թէ՝ «պատումում ներառւում է նաեւ նկարագրութիւն», եւ յատկապէս այն դէպքում, երբ պատումայնութիւնը չի նոյնացւում միայն իրադարձայնութեան հետ: *էքֆրասիսը* հենց այս իմաստով էլ «*համարւում*

է բառային արտայայտման այդպիսի ձեւ, որի նկարագրականութիւնն ու պատկերաւորութիւնը ստեղծագործութեան պատմողական բովանդակութեան համար որոշակի նշանակութիւն ունեն»[29]. «*Յետոյ բացեց գիրքը եւ նայեց էջերին: Գարուններ բացուեցին եւ մրգահաս աշուններ, երկինքներ սուրսկ, բուրաստաններ, հրեղէն վարդեր, վագրեր ոսկեձոյլ եւ ծաղիկներ մանուածապատ, ջերմ, յափշտակուած, հրճուալից*» (էջ 44): *Գիրք Ծաղկանց*ում Դեմիրճեանը մանրանկարչական արուեստի պատկերային համանմանութեամբ է նկարագրում նաեւ Զուարթի բանաստեղծական մտապատկերները, ստեղծագործ մտքի երեւակայական աշխարհը՝ փոխաբերական գունեղ պատկերներով ընդգծելու միջնադարեան մանրանկարչական արուեստի ձեւերը. «*Ծաղիկները կրակներ են, պտուղները՝ ազնիւ քարեր - նա այդպէս էր տեսնում - իսկ թռչուններն ու գազանները զգեստաւորուած խեղկատակներ...*» (էջ 5), «*...մէկ ուղտի վրայ կապիկ էր նստած ակնեղէն աքաղաղը ձեռքին...*» (էջ 7), «*..նրա ուշքը գրաւում է գետակը, որ հովի վրայ իր կոհակները շուլալելով, ասեղնագործում է փասնեակ ժապաւէններ...*» (էջ 9): Բառապատկերային այս նկարագրութիւնները, որոնցով Դեմիրճեանը սկսում եւ շարունակում է պատումը, զուգահեռաբար ընկալւում են իբրեւ մանրանկարներ. հայ միջնադարեան վարպետ ծաղկողի մանրանկարների ու տաղերգուի բանաստեղծական տեսիլների գեղանկարչական նկարագրութեամբ Դեմիրճեանը վիպում է հայ մշակոյթի յարատեւութեան պատմութիւնը, որի մասին պատմում է «*ոսկեհուր մի գիրք, լի լոյսերով եւ իմաստութեամբ*» (էջ 35):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Որպէս նշանային երկու տարբեր համակարգերի միջսահմանային երեւոյթ՝ *էքֆրասիսը* գրողին հնարաւորութիւն է ընձեռում լայնօրէն կիրառելու գրական-գեղարուեստական լեզուի պատկերաւորման ու բառակերտման միջոցները՝ համարժէք բառապատկերներով վերարտադրելու ոչ միայն մանրանկարների գունագծային տարածականութիւնը, այլեւ մեկնելու միջնադարեան արուեստի խորհրդանշական մանրամասները: Դեմիրճեանի *Գիրք Ծաղկանց*ում *էքֆրասիսի* շնորհիւ *տեքստ*-մանրանկարները յաղթահարում են նկարի անշարժութիւնը. *էքֆրաստիկ* նկարագրութիւնը պատմուածքում սոսկ նկարագրութիւն չէ. այն ներհիւսւում է պատումային յարաշարժութեանը եւ լրացուցիչ իմաստային ենթաշերտեր բացայայտելով՝ կառուցուածքային կատարեալ ձեւի մէջ ամբողջացնում գրական *տեքստի* թեմատիկ-բովանդակային էութիւնը ու հեղինակի մտայղացումը: Պատումի *էքֆրաստիկ* բնոյթը ընթերցողին օգնում է նաեւ զգացմունքային խորութեամբ ընկալելու եւ վերաիմաստաւորելու ազգային բազմադարեան

մշակոյթի դեմիրճեանական ընթերցումը հայ միջնադարեան մանրանկարչութեան ու տաղերգութեան ենթահողում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Եզրոյթի մեկնաբանութիւնը կ'անենք շարադրանքի ընթացքում:

[2] *Scritti Letterari di Leonardo da Vinci, In due Parti*, Parte I, Լոնդոն, Sampson Low, Marston, Searle & Rivington, 1883, էջ 654:

[3] Г. Э. Лессинг, *Лаокоон или о Границах Живописи и Поэзии* (Գ. Է. Լեսինգ, Լաոկոոն կամ գեղանկարչութեան եւ բանաստեղծութեան սահմանների մասին), Գրքերի եւ ամսագրերի պետական հրատարակչութիւնների միաւորում, Լենինկրատ, 1933, էջ 121:

[4] Նոյն, էջ 121:

[5] Ж.-Ж. Руссо, *Избранные Сочинения в 3-х Томах* (Ժան Ժակ Ռուսո, Ընտիր երկեր, 3 հատորով, Հտր. 1), Մոսկուա, Գեղարուեստական գրականութեան պետական հրատարակչութիւն, 1961, էջ 261:

[6] И.Г. Гердер, *Избранные Сочинения*, Государственное издательство художественной литературы (Ե. Գ. Հերդէր, Ընտիր երկեր), Մոսկուա-Լենինկրատ, «Գեղարուեստական գրականութեան պետական հրատարակչութիւն», 1959, էջ 176:

[7] Ս.-Ա. Յարութիւնեան, *Արուեստի Նշանագիտական Սահմանները*, ՎՄՎ-Պրինտ, Երեւան, 2017, էջ 223:

[8] Р. Якобсон, *Избранные Работы* (Ռ. Եակոբսոն, Ընտիր երկեր), Մոսկուա, Պրոգրէս, 1985, էջ 362:

[9] Ոչ-խօսքային նշանների մեկնութիւն բառանշանային համակարգի միջոցով:

[10] Н.Е Меднис, «Религиозный Экфрасис» в русской Литературе (Ն. Ե. Մեդնիս, «Կրօնական էքֆրասիսը ռուս գրականութեան մէջ»), http://www.philology.nsc.ru/journals/kis/pdf/CS_10/cs10mednis.pdf :

[11] M. Krieger, *Ekphrasis. The Illusion of the Natural Sign*, Johns Hopkins University Press, London, 1992, էջ 9:

[12] Նոյն, էջ 10:

[13] Р. Барт, "Семиотика. Поэтика," *Избранные Работы* (Ռ. Բարտ, «Նշանագիտութիւն- պոետիկա», ընտիր երկեր), Մոսկուա, Պրոգրէս, 1989, էջ 395:

[14] W. J. T. Mitchell, *Picture Theory, Essays on Verbal and Visual Representation*, University of Chicago Press, Chicago & London, 1994, էջ 152:

[15] Նոյն, էջ 156:

[16] Л. Геллер, "Воскрешение Понятия, или Слово об Экфрасисе," *Экфрасис в Русской Литературе, Труды Лозаннского Симпозиума* (Լ. Գելլէր, «Հասկացութեան վերակենդանացում կամ խօսք էքֆրասիսի մասին», «Էքֆրասիսը ռուս գրականութեան մէջ», Լոզանի գիտաժողովի նիւթերի ժողովածու), Մոսկուա, «ՄԻԳ», 2002, էջ 10:

[17] Դերենիկ Դեմիրճեան, *Գիրք Ծաղկանց*, Երեւան, Սովետական Գրող, 1985, էջ 16: «Գիրք Ծաղկանց» պատմուածքի միւս մէջբերումները կը կատարենք նշուած գրքից, նշելով էջը:

[18] Р. Мних, "Сакральная Символика в Ситуации Экфрасиса (Стихотворение Анны Ахматовой «Царскосельская Статуя»)", *Экфрасис в Русской Литературе, Труды Лозаннского Симпозиума* (Ռ. Մնիխ, «Սրբազան խորհրդանշապաշտութիւնը էքֆրասիսում (Աննա Ախմատովայի «Արձանը Ցարսկոյէ Սելոյում»)», «Էքֆրասիսը ռուս գրականութեան մէջ»), էջ 88:

[19] Н.С. Олизько, Семиотико-Синергетическая Трактовка Паратекста (На Материале Творчества Дж. Барта) [Ն. Ս. Օլիզկո, «Պարատեքստի նշանագիտական-սիներգետիկ մեկնաբանութիւնը (Ջ. Բարտի ստեղծագործութեան նիւթի հիման վրայ»] https://cyberleninka.ru/article/v/semiotiko-sinergeticheskaya-traktovka-parateksta-na-materiale-tvorchestva-dzh-barta :

[20] Е.А. Елина, "Вербальные Интерпретации Произведений Изобразительного Искусства (Номинативно-Коммуникативный Аспект)," (Ե. Ա. Ելինա, «Գեղանկարչական արուեստի ստեղծագործութիւնների խօսքային մեկնաբանութիւնները (անուանական-հաղորդակցական դիտակէտ), սեղմագիր, Վոլգոգրադ), 2003, էջ 18:

[21] «Գիրք Ծաղկանց»ի Պատմական Հիմքերը» յօդուածում խօսելով պատմուածքի կերպարների պատմական նախատիպերի մասին, գրականագէտը մանրամասնում է, որ կերպարներից մէկի՝ Զուարթի ծաղիկների մասին վէպի հատուածների հիմքում հայ միջնադարեան բանաստեղծ Կոստանդին Երզնկացու տաղերի բնագրերից վերցուած պատկերներն են, որոնք Դեմիրճեանը մշակել է «*...պահպանելով բանաստեղծութեան հիմնական գաղափարն ու գեղարուեստական հնարքները...*» (Հ. Թամրազեան, «Գիրք Ծաղկանց»-ի Պատմական Հիմքերը», http://lraber.asj-oa.am/5915/1/69.pdf , էջ 71):

[22] N 88 ձեռագիր Աւետարանի նկարագրութեան մէջ նշւում է «Ա. եւ Դ. զոյգի սիւներն կապտագոյն են» (Բարսեղ Սարգիսեան, *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Ի Վենետիկ, Հրր. Ա.*, Վենետիկ, 1914, էջ 397-98:

[23] «Հայ միջնադարեան գեղագրական արուեստը հարուստ է զարդագրերով՝ «ծաղիկներով՝ ծաղկագիր. թռչուններով՝ ծուկերով՝ կենդանիներով՝ թռչնագիր, կենդանագիր» (Գնել Արք. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան, *Հայոց Լեզուի Նոր Բառարան, Հատոր Առաջին, Ա-Հ*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1992, էջ 601) «Զանազան իրերի՝ կենդանիների եւն. պատկեր ներկայացնող գիր (թռչնագիր, ծաղկագիր, ձկնագիր եւն.)», Է. Բ. Աղայեան, *Արդի Հայերէնի Բացատրական Բառարան, Ա-Ջ*, Երեւան, Հայաստան Հրատ., 1976, էջ 364:

[24] Н.Е Меднис, "Религиозный Экфрасис» в Русской Литературе", http://www.philology.nsc.ru/journals/kis/pdf/CS_10/cs10mednis.pdf :// (Ն. Ե. Մեդնիս, ««Կրօնական էքֆրասիսը» ռուս գրականութեան մէջ»):

[25] Ж. Женетт, *Фигуры, В 2-х томах*, (Ժ. Ժենէտ, Կերպեր, 2 հատորով), Մոսկուա, 1998, էջ 292-93: Լեսինգը, խօսելով հոմերոսեան պատկերաւորման արուեստի մասին, նկատում է, որ հոմերոսեան նկարագրութիւններում «...որոշակի առարկայի մասերը, որոնք մենք սովոր ենք իրականում տեսնելու իրար հետ կապուած, կողք կողքի, նրա պատմութեան մէջ նոյնքան էլ բնականօրէն մեր երեւակայութեանը ներկայանում են յաջորդաբար մէկը միւսի ետեւից, եւ պատկերը ձեւաւորւում է պատմութեան ընթացքում (Г. Э. Лессинг, էջ 115):

[26] James A. Francis, Metal Maidens, Achilles' shield, and Pandora: The beginnings of "Ekphrasis", էջ 9 (https://blogs.baruch.cuny.edu/manmademonsters/files/2015/08/The-Beginnings-of-Ekphrasis.pdf): Խօսելով անտիկ մշակոյթում արուեստի ստեղծագործութիւնների նկարագրութիւնների՝ էքֆրասիսի մասին, հեղինակն ամփոփում է, որ «նկարիչներն ու բանաստեղծները ստեղծում են պատկերներ, եւ պատկերակերտման ձեւերից մէկը կարող է արտացոլել կամ թերեւս ըստ էութեան արտացոլում է միւսը» (էջ 17):

[27] Քննելով գրական ստեղծագործութիւնների կառուցման երկու եղանակների՝ պատումի ու նմանակման վերաբերեալ հին դասական մտքի երկու փիլիսոփաների՝ Պլատոնի եւ Արիստոտէլի տեսակէտերը՝ Ժենէտը նշում է, որ թէ՛ մէկի, թէ՛ միւսի համար «պատմողականութիւնը գրական պատկերաւորման՝ նուազեցուած, մեղմացուած տեսակ է...» (Женетт, էջ 287), եւ ընդհանրացնում, որ «պատումի եւ նկարագրականութեան փոխյարաբերութիւնների վերլուծութիւնը ընդհանուր առմամբ եւ ամբողջութեամբ յանգեցնում է նկարագրութեան պատմողական գործառոյթի քննութեանը...» (նոյն, էջ 291):

[28] Ю.В. Шатин, Ожившие Картины: Экфразис и Диегезис (Եու. Վ. Շատին, «Վերակենդանացած նկարներ: Էքֆրասիս եւ դիեգեսիս») http://philology.ru/literature1/shatin-04.htm :

[29] Е. А. Городницкий, Экфрасис в Структуре Литературного Произведения: Изобразительная и Нарративная Функции (Ե. Ա. Գորոդնիցկի, «Էքֆրասիսը գրական ստեղծագործութեան կառուցուածքում: Նկարագրական եւ պատմողական գործառոյթներ») http://phil.duan.edu.ua/images/stories/Files/2014/2014_222/3.pdf :

DERENIK DEMIRCHIAN'S *GIRK TSAGHKANTS* (THE BOOK OF FLOWERS) AS AN EKPHRASTIC TEXT
(Summary)

KARINE ASATRYAN
asatryan.karine.m@gmail.com

The article explores Derenik Demirchyan's "The Book of Flowers" as an *ekphrastic* text. *Ekphrasis* as a verbal illustration of spatial art is explored in this short story within the context of the medieval Armenian miniature. The transformation of miniatures, non-verbal artistic structures, through the figurative description of metaphoric language, becomes the main compositional and structural axis of this story's literary narrative.



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ *ՅՈՎՆԱՆ ՄԵԾԱՏՈՒՆ* ՆՈՐԱՅԱՅՏ ԵՒ ՆՈՐԱՏԻՊ ԴՐԱՄԱՆ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Ինչպէս նշել ենք նախորդ մեր հրապարակումներում[1], Դերենիկ Դեմիրճեանի ստեղծագործութիւնը դեռեւս խորհրդային տարիներին հանգամանօրէն ուսումնասիրուել, հրատարակուել եւ բազմիցս վերահրատարակուել է. ակադեմիական հրատարակութիւնը կազմում է 14 ստուար հատոր: Այդուհանդերձ, Դեմիրճեանի տուն-թանգարանը ղեկավարելու ընթացքում ոչ-քիչ առիթներ ենք ունեցել՝ համոզուելու, որ գրողի կեանքից ու մահուանից տասնամեակներ անց էլ կան անտիպ մնացած երկեր: Նախապէս Դեմիրճեանի արխիւից եւ մասնաւոր անձանց մօտ պահպանուած նիւթերից իմի ենք բերել ու ՀՀ եւ Սփիւռքի պարբերականներում հրատարակել դեմիրճեանական անտիպ մասունքներ՝ բանաստեղծութիւններ, նամակ, հեքիաթ, խոհագրութիւն: 2017ին բարեբախտութիւն ունեցանք Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում (ԳԱԹ) պահպանուող Դերենիկ Դեմիրճեանի ֆոնդից (ԴՖ) գտնել ցարդ անտիպ *Յովնան Մեծապուն* դրամայի բնագիրը՝ բաղկացած բնօրինակ, ձեռագիր, մեքենագիր պատառիկներից[2]: Թատերգութիւնը վերծանեցինք, խմբագրեցինք եւ համակարգեցինք հենց այդ տարբերակների հիման վրայ:

Մեր աշխատանքի տարիներին յաճախ Դեմիրճեանի տուն-թանգարան են եկել գրականագէտներ, թատերագէտներ, գիտական հայցորդներ, ուսանողներ, որոնք փնտռում էին գրողի *Յովնան Մեծապուն* դրաման՝ յօդուած, ատենախօսութիւն գրելու կամ պարզապէս ընթերցելու նպատակով: Մեծ է եղել նրանց հիասթափութիւնը, երբ տեղեկացել են, որ անգամ գրողի մասունքները պահպանող յարկի ներքոյ չկայ թատերգութեան որեւէ հրատարակութիւն: Մեր բազմաթիւ փնտռտուքները հայաստանեան գրապահոցներում եւ հարցումները՝ Սփիւռքից եկած մարդկանց, մնում էին անարդիւնք. այդ ստեղծագործութեան տպագիր եւ ոչ մի օրինակ հնարաւոր չեղաւ գտնել: 2017ին փոքրիկ ծանուցում զետեղեցինք ՀՀ գրադարանների էլեկտրոնային տեղեկագրում, առաջարկելով հրատարակել *Յովնան*

Մեծապուն դրաման, եթէ գտնուի հովանաւոր: Առաջարկութիւնն արուել էր դրամայի պատառիկները վերծանելու այն փուլում, երբ հասկացել էինք, որ թէեւ ֆոնդային նիւթը բաղկացած է առանձին կտորներից, բայց ընդհանուր առմամբ հնարաւոր է ամբողջացնել եւ ընթերցողին մատուցել աւարտուն երկ:

Բայց, ի զարմանս մեզ, դրամայի վերաբերեալ կային մի շարք հանգամանալից վերլուծութիւններ տարբեր գիտնականների աշխատութիւններում եւ յիշատակումներ՝ Դեմիրճեանի նամականիում: Նոյնիսկ որոշ մասնագէտներ մեզ փորձել են հակադրուել, երբ յայտարարել ենք, թէ *Յովնան Մեծապուն*ը անտիպ ստեղծագործութիւն է: Քանի որ վերլուծութիւններն այդ թատերգութեան մասին բաւական հանգամանալից են ու ստուարածաւալ, եւ քանի որ մարդիկ, դրանք կարդալով, ձեռք են բերել որոշակի պատկերացում երկի վերաբերեալ, ունեցել են այն պատրանքը, թէ կարդացել են հենց հեղինակային բնագիրը: Բացի այդ, Դեմիրճեանի նամակներում յիշատակւում է որ Վարդան Աճեմեանը[3] 1933ին փորձ է արել բեմադրել *Յովնան Մեծապուն*ը Առաջին Պետական (յետագայում՝ 1937ին, վերանուանուած Գ. Սունդուկեանի Անուան Պետական) թատրոնում. չի բացառւում, որ դրամայի բովանդակութիւնը եւ դրան առնչուող մանրամասները հանրայնացուել են հենց թատերական գործիչների միջոցով: Իսկ երբ թատերգութեան մասին որոշակի պատկերացում ունեցող անձանցից փորձում էինք պարզել, թէ յատկապէս որտե՛ղ, ո՛ր հատորում, ո՛ր թուականին են կարդացել այն, կարկամում էին ու ստիպուած լինում զարմանքով խոստովանել, որ իրենք, այո՛, ունեն որոշակի պատկերացում դրամայի մասին, գիտեն անգամ դիպաշարը, որը ցնցող է, սակայն չեն յիշում, թէ որտեղ եւ երբ են այն կարդացել: Մեզ մնում էր նրանց յուշել, որ իրենք կարող են կարդացած լինել դրա վերլուծութիւնը Հրայր Մուրադեանի *Դերենիկ Դեմիրճեան*[4], Արծուի Յունանեանի *Դերենիկ Դեմիրճեանի Դրամատուրգիան*[5], Հրանտ Թամրազեանի *Դերենիկ Դեմիրճեան*[6], ՀՍՍՀ ԳԱ *Դերենիկ Դեմիրճեանի Ստեղծագործութիւնը*[7] աշխատութիւններում եւ կամ որոշակի տեղեկութիւն ձեռք բերած լինել 1930ականներին Սունդուկեանի թատրոնին մօտ կանգնած անձանցից:

Փորձենք հասկանալ, թէ ի՛նչը կարող էր պատճառ դառնալ, որ Դեմիրճեանի տպագրուած երկերի ցանկից դուրս մնար այսպիսի ծաւալուն եւ մասնագիտական շրջանակում յայտնի երկը: Բանն այն է, որ առաջին անգամ այս երկում գրողը բացայայտ ու առանց պայմանականութիւնների անդրադառնում է 1915ին հայ ժողովրդին պատուհասած մեծագոյն աղէտին՝ Հայոց Ցեղասպանութեանը: 1918-19ին, Հայոց Ցեղասպանութեան վէրքի թարմ ազդեցութեամբ է գրուած *Յովնան Մեծապուն*ը: Այստեղ գրողը մեր ազգային ողբերգութեանն այնպիսի շեշտադրումներ է հաղորդել, որ դրանք չէին կարող գոհացնել ո՛չ

խորհրդային համայնասիրական քարոզն անող ղեկավարներին, ո՛չ հայ ազգայնականներին, ո՛չ էլ, բնականաբար, Ցեղասպանութիւնն առ այսօր ժխտող-բացառող թուրքերին[8]:

Աւելին, Դեմիրճեանի գրականութեան փայլուն գիտակ, խորհրդային գրականագէտ Հրայր Մուրադեանը պարտադրուած էր *Յովնան Մեծափուն* դրամայի իր վերլուծականում յայտնել այսպիսի տեսակէտ. *«Դեմիրճեանն անկարող է եղել բարձրացուած թեմայի մէջ գտնել վեհն ու հերոսականը: Պատկերուող դէպքերի ահաւորութիւնը ընկճել է հեղինակին, զրկել լուսաւորն ու մարդկայինը տեսնելու կարողութիւնից: Պատահական չէ, որ դրամայի հերոսները բոլորը՝ դրական թէ բացասական, կործանւում են: Չկայ մէկը, որի մէջ հեղինակը կամենար շեշտել վաղուայ հեռանկարը: Բացակայում է փրկաւէտ հաւատն այն բանի, որ կայծակնահար խորտակուած կաղնու արմատից վաղը ընձիւղներ են դուրս գալու՝ պարզուելով լոյսին եւ արեւին, իրենցով կենդանացնելու եւ շէնացնելու ժամանակաւորապէս ամայացած կեանքը»*[9]:

Հետաքրքրիր է՝ ի՞նչ արեւի ու լոյսի մասին պիտի գրէր Դեմիրճեանը Մեծ Եղեռնից մազապուրծ իր հայրենակիցների մասին, որոնց ֆիզիկական գոյութեան փաստն ինքնին աներեւակայելի հրաշքների շարքից էր նրանց վիճակուած ճակատագրի պայմաններում: Դեմիրճեանն իր ժողովրդի տոկալու, ծայրայեղ իրավիճակները յաղթահարելու եւ վերապրելու թեմային անդրադարձել է թէ՛ մինչեւ *Յովնան Մեծափունի* գրութիւնը, թէ՛ դրանից յետոյ. սկսած 1905ին գրուած «Լենկ-Թեմուր» պոէմից մինչեւ *Երկիր Հայրենի* դրաման, *Վարդանանք*, անաւարտ *Մեսրոպ Մաշտոց* պատմավէպերը, «Դատողութիւններ Ղարաբաղի Եւ Նախիջեւանի Հարցի Շուրջ» խոհագրութեան պատառիկները, «Հերոսական Հայ Ժողովուրդը» հրապարակագրութիւնն ու էլի բազմաթիւ երկեր:

Բարեբախտաբար, այսօր փոխուել են մտածողութիւնն ու իրավիճակը, եւ մեզ ոչինչ չի խանգարում գոնէ բարձրաձայնել հայ ազգի հետ 1915ին կատարուած ողբերգութեան իսկութիւնը: Այս տեսանկիւնից ելնելով՝ վստահեցնում ենք, որ Դեմիրճեանն իր տաղանդի ողջ ուժով, իր անաչառ գրչի բացառիկ վարպետութեամբ երեւակել է մեզ համար ցաւագին այդ թեման *Յովնան Մեծափուն* դրամայում:

Ի՞նչ եւ ինչպէ՞ս էր գրում Դեմիրճեանն իր ժողովրդի բնաջնջման փաստի մասին:

Թատերգութեան մեջ ներկայացւում է մեծահարուստ Յովնանի ընտանիքի եւ մերձաւորների նախաեղեռնեան կեանքը, ուրախ խնջոյքը՝ Յովնանի որդու ամուսնութեան առթիւ, ապա հասնում է տեղահանութեան բօթը, սկսւում են թուրքերի դաժան հալածանքները հայերի նկատմամբ, վերին ատեանների անտարբեր հայեացքի ներքոյ

գաղթում եւ անապատում մեռնում են անմեղ մարդիկ: Այս համընդհանուր ողբերգութեան մէջ իւրաքանչիւրն առանձնանում է իր նկարագրով. ոմանք՝ ազնուութեամբ, արժանապատուութեամբ, խիզախութեամբ, ոմանք՝ անպաշտպանութեամբ, զոհի ճակատագրով, ոմանք՝ դաժանութեամբ, սանձարձակութեամբ, մարդկային տեսակին անյարիր որակներով, ոմանք՝ մորթապաշտութեամբ, յանուն սեփական **եսի** ամէն ստոր քայլի դիմելու անհաւանական վարքով:

Արեւմտեան Հայաստանի քաղաքներից մէկում (հեղինակը չի յստակեցնում անունը) հայ մեծահարուստ Յովնանը ամուսնացնում է որդուն՝ Խորէնին: Հարսանիքը բազմամարդ է, ճոխ, ուրախ: Գինովցած Յովնանը որոշում է իրեն չլսուած, չտեսնուած մոլութիւն թոյլ տալ. ծառային ապսպրում է բերել իր պահած ոսկու պարկը, թափել այն յատակին, ապա իր գեղեցկուհի հարսին՝ Նունուֆարին, պարի է կանչում հենց ոսկիների վրայ: Մարդիկ ապշած են, շլացած, ոմանք էլ՝ նախանձով լի: Յովնանի կինը՝ Նազէն, վախով է արձագանգում այդ տեսարանին, յորդորում ամուսնուն զգօն լինել, սակայն վերջինս հեգնում է կնոջն ու շարունակում իր պարը: Առանձին մեծարման է արժանանում Յովնանի կոյր, զառամեալ մայրը՝ մարէն, եւ մեծարումի այդ ծէսը խորին պատկառանք է ծնում հիւրերի շրջանում:

Յովնանը մի առանձին խորհրդապաշտութիւն է հաղորդում մօր հանդէպ իր մեծարանքին. հիւրերի զարմանքն ու հիացումն աւելի է սաստկանում, երբ լսում են Յովնանի մեկնաբանութիւնն այս առնչութեամբ.

ՅՈՎՆԱՆ. (Յոյց տալով մարէին) *Նախնիներս սրա կոյր աչքերի միջից ինձ են մտիկ տալիս:*

ՀԻՒՐԵՐ. Նախնինե՞րդ...

ՅՈՎՆԱՆ. Սրա չորս բոլորը նրանց շուքերն են նստած, եւ գիշերները նրանց փսփսոցը լսում եմ: (Հիւրերը մի ակամայ ակնածանք են զգում): *Է՜հ, առաջ քան խնջոյք՝ յիշենք Աստուած:*

Աստծուն յիշելու կարգը նոյնպէս Յովնանի օճախում կատարւում է բոլոր օրէնքներով. մինչեւ իր առատ հիւրասիրութիւնից բաժին չունենան բոլոր կարիքաւորները, Յովնանը չի կարող թոյլ տալ, որ իր տանը բացուի խնջոյքի սեղանը: Մէջբերենք մի հատուած.

ԾԱՌԱՅ. Հացը գցե՞նք:

ՅՈՎՆԱՆ. Կեցի՛ր: Տուի՛ր աղքատների բաժինը:

ԾԱՌԱՅ. (Զուարթ ու ճարտար) *Էֆենդի՛, գէլը կերաւ, ծիւրը ժողվեց, մուկը կրեց, ուրները մաշեց:*

ՀԻՒՐԵՐ. (Ծիծաղում են) *Մեզ բան չեն թողե՞լ:*

ՅՈՎՆԱՆ. Լա՛ւ: Ճամփորդների՞ն, հիւանդների՞ն...

ԾԱՌԱՅ. Աշխարհք լիացաւ, էֆենդի՛:

ՅՈՎՆԱՆ. Աբրօն ինչո՞ւ չեկաւ:

ԾԱՌԱՅ. Աբրօն էլ՝ միւս աղքատների հետ, սպացաւ իր բաժինը:

ՅՈՎՆԱՆ. Չէ՛, ուրախութիւն է, միասին անենք. ով որ դռանը կանգնել է, կանչիր ներս գան:

Ծառան գնում է:

ԵՐԷՅ. Վարձքդ կատար, Յովնա՛ն:

ՀԻՒՐԵՐ. Հայր Աբրահամու փայն ուրես:

Ներս են մտնում Աբրօն եւ այլ աղքատներ: Հիւրերը ետ-ետ են քաշւում ձախակողմը եւ դռան մօտ տեղ են բաց անում նրանց համար:

ՅՈՎՆԱՆ. (Աղքատներին) *Անո՛ւշ արէք, նստեցէ՛ք:*

ԱԲՐՕ. Աստուած քեզ մէկին հազար տայ, Յովնա՛ն պատուելի, նեղութիւն մի քաշի, մենք...

Նստում է դռան մօտ, միւս աղքատները հետեւում են նրան: Ծառան ուրիշ ծառաների օգնութեամբ ներս է բերում կերակուրներ, միրգ, գինի, ծաղիկներ եւ դնում հիւրերի առջեւ՝ փոքրիկ խոնչաներով:

ՅՈՎՆԱՆ. (Ծառաներին ցոյց է տալիս աղքատների կողմը): *Այն կողմն էլ:*

Ծառաները սարքում են նաեւ աղքատների սեղանը:

Յովնանն ասես Աստուածաշունչ մատեանի գիրն է կեանքի կոչում իր վարք ու բարքով, որում յատուկ բաժին է նուիրուած հիւրընկալութեան կարգին: Նոր Կտակարանի Ղուկասի աւետարանի «Հրաւիրուածների ընտրութիւն» հատուածում կարդում ենք Յիսուսի հետեւալ պատգամը. «*Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին եւ ո՛չ էլ քո հարուստ հարեւաններին, որպէսզի նրանք էլ փոխարէնը քեզ չհրաւիրեն, եւ քեզ հատուցում լինի: Այլ երբ ընդունելութիւն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին եւ երանելի կը լինես, որովհետեւ փոխարէնը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եւ դրա փոխարէն քեզ կը հատուցուի արդարների յարութեան օրը*»[10]:

Թւում է, թէ Յովնանն ամէն բան ճիշտ է անում, թէ նրա ձեռնարկած այս համընդհանուր ուրախութեան ու առատութեան աղբիւրն անսպառ է, ոչինչ չի կարող խռովել իր ու մերձաւորների անդորրը: Բայց յանկարծ պայծառ երկնքում ճայթում է որոտը. ներս է մտնում թուրք բարձրաստիճան պաշտօնեայ Հասան պէյն ու գայթակղւում ոսկու վրայ պարող Նունուֆարի՝ Յովնանի հարսի գեղեցկութեամբ: Ապա մի կողմ է տանում Յովնանին, յայտնում, որ պատերազմական իրադրութիւնից դրդուած, հրաման է իջեցուել տեղահանելու քաղաքի ողջ բնակչութիւնը: Յովնանը, վստահ իր ուժերի եւ հեղինակութեան վրայ, փորձում է հակադրուել համընդհանուր հրամանին. ոչ միայն Հասան պէյի, այլեւ աւելի բարձր պաշտօնեայի՝ Վալի փաշայի հետ բանակցելու ճանապարհով նա փորձում է հասնել համաքաղաքացիների կամ գոնէ իր անձի համար հարցի խելամիտ լուծման: Նրա գլխաւորութեամբ քաղաքում որոշակի դիրք ունեցող հայերից կազմուած պատուիրակութիւնը հանդիպում է խնդրում Վալի փաշայից: Վերջինս մեծահոգաբար

համաձայնում է: Սակայն ի՞նչ կարող է տալ այդ հանդիպումը, երբ ի սկզբանէ այս մարդկանց բնաջնջման ծրագիրը գրուած-նախապատրաստուած էր: Ահա հանդիպման տեսարանից մէկ հատուած.

ՅՈՎՆԱՆ. (Աշխատելով յուզմունքը զսպել) Համարձակւում եմ հարցնել, Վալի՛ փաշա, ինչո՞ւ է կատարւում այս ամէնը: Մենք թշնամի չենք, մենք աւազակ չենք, մենք դաւաճան չենք. մենք այս երկրի մշակներն ենք: Ի՞նչ է մեր յանցանքը, ինչո՞ւ է կատարւում այս ամէնը:

ՎԱԼԻ. Անկեղծ ասեմ՝ չգիտեմ:

ՅՈՎՆԱՆ. Դո՛ւք չգիտէք:

ՎԱԼԻ. Ե՛ս չգիտեմ: Յովնան էֆենդի՛, չտանք այնպիսի հարցեր, որոնց չպէտք է պատասխանեն:

ՅՈՎՆԱՆ. Ինչպէ՞ս հարցեր չտանք: Ինչպէ՞ս չիմանանք, թէ ինչու ենք ոչնչանում: Ահա մենք ճամփայ կ'ընկնենք: Եւ ես հարցնում եմ՝ եթէ ճամփին մի ահաւոր աղէտի հանդիպե՞նք...

ՎԱԼԻ. Ճակատագիր է, Յովնա՛ն էֆենդի:

ՅՈՎՆԱՆ. Ի՞նչ է ուզում մեզնից ճակատագիրը:

ՎԱԼԻ. Ո՛վ իմանայ: Ճակատագրի լեզուն հասկանալուկ է: Ճակատագիրն էր՝ մեզ պատերազմ բերեց: Արի իմացիր՝ ինչո՞ւ:

ՅՈՎՆԱՆ. Պատերազմը մեծ աղէտ է: Բայց մի՞թէ մենք ենք յանցաւորը, որ ճակատագիրը մեզ է պատժում:

ՎԱԼԻ. Դուք յանցաւոր չէք, թերեւս դուք պատերազմի զոհերն էք: Աշխարհքի բան է: Այսպէս բերեց աշխարհքի խաղը: Մէկը պիտի զոհուէր, եւ ահա դուք էք զոհւում:

ՅՈՎՆԱՆ. Եւ դա արդարութի՞ւն է, վսեմափա՛յլ տէր:

ՎԱԼԻ. Արդարութի՛ւն է:

Յովնանը յամառօրէն չի յանձնւում. նրա համար անհասկանալի է այն ամէնը, ինչ կատարւում է իր հետ: Իսկ Վալի փաշան փորձում է այդ յամառումին հակադրուել իմաստուն մի առակով, որը, թերեւս, այսօրուայ իրականութեան համապատկերում կարելի է կոչել մարգարէութիւն հենց իրենց՝ թուրքերի համար: Ըստ այդ առակի՝ եթէ անգամ մարդկանցից թաքցնես յանցանքդ, Աստծուց չես կարող թաքցնել, եւ վաղ թէ ուշ ստիպուած կը լինես հատուցել արարքիդ համար: Մէջբերենք խօսուն այդ առակը՝ պատմուած թուրքի շուրթերով.

Անփոյթ դատաւորի մինը մի աղքատ կնոջ որդուն բանտ էր գցել եւ չէր հոգում՝ իսկապէս մեղաւո՞ր էր, թէ՞ ոչ: Օրէն մէկը այրի կինը բարձրանում է սրա կտուրը եւ, առաջին չոքելով, աղաչանք է անում, որ իր որդուն բանտից ազատի: Դատաւորը մերժում է: Աղքատ կինը արտասւում է եւ ետ դառնում: Հենց հեռանում է, կտուրը փլւում է եւ դատաւորին տակովն անում: Ոչ ոք չի իմանում, թէ ինչից փլուեց կտուրը: Բայց ասում են՝ արդարութեան գրքի մէջ գրուած է, որ այրի կինը հեռանալիս արցունքի մի կաթիլ էր գցել դատաւորի տան կտուրին: Եւ հողը այնքան ծանրացած էր եղել, որ ծանրութիւնը լցուելուն պակսելիս էր եղել արցունքի մի կաթիլի չափ քաշ: Ընկաւ կաթիլը կտրան հողին, եւ կտուրը փուլ եկաւ: Արդարութիւնը ծածուկ մնաց երկուսից էլ, բայց

կատարուեց: Աշխարհս կշէռք է, մեր գործերը՝ կշէռքի քարեր: Որ քարը ինչ քաշ որ ունի, իր վարձքն էլ այդ է: Աստծու գութը ամենատես աչքերն ունի: Մէկ մրջիւնի ոտ էլ որ ցաւում է իր բնի մէջ, Աստծու սիրտը ցաւում է երկնքում: Գնացէք խաղաղութեամբ եւ անհոգ եղէք: Ամէն բան Աստծոյ դատողութեան մէջ իր տեղը կը գտնի: Ամենաչնչին բանը որ կատարւում է, Աստծոյ կամքն է կատարւում: Թողնենք, որ կատարուի:

Յովնանը եւ նրա հետ եկածները հասկանում են, որ ապարդիւն է իրենց ջանքը, որ ոչ մէկից եւ ոչ մի տեղից չի կարելի սպասել փրկութիւն: «*Հա՛... Աշխարհքս հաստատուն չէ՛ր եղել: Մրջիւնի պէս ճամփի մէջտեղ բուն էինք շինել, կարծում էինք, թէ ապահով ենք... Հիմի ոտնե՛ր են եկել մեզ կոխկռտելու*»՝ դառնացած եզրակացնում է մեծահարուստ հայը եւ կայացնում իր անմարդկային վճիռը, այն է՝ կատարել Հասան պէյի պահանջը: Իսկ Հասան պէյի պահանջը մէկն է՝ իրեն տալ գեղեցկուհի հարսին, որի դիմաց, ըստ էութեան, ինքը լկտիօրէն ոչինչ էլ չի խոստանում Յովնանին: Յովնանը մորթապաշտօրէն ընդունում է պայմանը: Սակայն հակադրւում է որդին՝ Խորէնը:

Խորէնի կերպարին Դեմիրճեանը փոքր ծաւալ է յատկացրել թատերգութեան արարներում, բայց այդ փոքր ծաւալի մէջ էլ յստակօրէն տեսնում ենք չափազանց արժանապատիւ, խիզախ, համակրելի հայորդուն: Մէկ-երկու կարճ երկխօսութիւնների, հպանցիկ թատերական գործողութիւնների միջոցով գրողը բացայայտում է այն հոգեվիճակը, որը համընդհանուր է եղել աքսորի եւ բնաջնջման դատապարտուած հայ ընտանիքների արու զաւակների համար: Խորէնը, որ հարսանիքի տեսարանում սոսկ արարողակարգի բաղադրիչ է եւ կարծես իր կեանքի կարեւորագոյն իրադարձութիւնն ընդամէնը կողքից դիտող մէկը, բոլորովին այլ որակներով է հանդէս բերուած դեռատի կնոջ՝ Նունուֆարի հետ երկխօսութեան տեսարանում: Յստակ գիտակցելով իրենց գլխին կախուած վտանգը՝ նա յուսահատ դատողութիւնների մէջ է.

ԽՈՐԷՆ. (Նունուֆարին գրկել փորձելով)*: Կեանք տար Աստուած, թռցնէի քեզ:*
ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Ընկնում է Խորէնի թեւին)*: Է՛հ, ի՞նչ թռցնել. մէնակ ի՞նձ... էսքան ժողովուրդը կրակի մէջ է:*
ԽՈՐԷՆ. Ժողովրդին ազատում չկա՛յ էլ: Պիտի ջարդուի: Դու ասա՝ քեզ ազատէի: Կարո՞ղ ես հետս փախչել:
ՆՈՒՆՈՒՖԱՐ. Է՛հ, Խորէն, թէ պիտի մեռնենք, հարազատների հետ մեռնենք:
ԽՈՐԷՆ. (Ատամները կրճտելով) *Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ: Կռիւ չէ՝ կռիւ մրնեմ: Մէնակ ես չեմ՝ սարերն ընկնեմ: Ջա՛րդ է: Կռուող չկայ: Ես ձեռքերս կապած մէկ փղամարդ եմ: Քանի՛ կեանք պիտի ունենամ, որ կռուելով քեզ ազատեմ:*
ՆՈՒՆՈՒՖԱՐ. Ամա՛ն, Խորէն, քեզ համար շատ եմ վախենում: Չհակառակե՛ս:
ԽՈՐԷՆ. Է՞հ, թողնեմ, որ տանե՞ն քեզ:

Կնոջ հետ այսպէս մեղմ ու յուսալքումի շեշտադրութեամբ երկխօսող երիտասարդը անսպասելի կերպարանափոխւում է բարոյազուրկ հօր,

Հասան պէյի ու արնախում թուրք ոստիկանների հետ յարաբերուելու տեսարաններում: Նա անկոտրում է, հպարտ, ոչ մի գնով պատրաստ չէ ետքայլ անել իր արժանապատիւ, բայց վտանգաւոր կեցուածքից: Կողքից նրա արարքներին հետեւող մայրը, քոյրը, կինը սարսափած են, որովհետեւ հաստատ գիտեն, թէ ինչ է յաջորդելու Խորէնի խրոխտ, անզիջում գործողութիւններին, իսկ հայրը մորթապաշտօրէն պահ է մտնում կատարուող գործողութեան ստուերում՝ յստակ հաշուարկելով որդու մօտալուտ սպանութիւնը թուրքի ձեռամբ: Այդպէս էլ կատարւում է. Խորէնն սպանւում է հօր աչքի առաջ: Եւ այդ հայրը, փաստացի տալով իր արիւնակիցներից առաջին զոհը, առանց մի նշոյլ ափսոսանքի, առանց մարդկային որեւէ յոյզի դրսեւորման, շտապում է հասնել Հասան պէյի պատուիրած կառքին՝ իբրեւ թէ ապահով Միջագետք հասնելու յոյսով:

Ահա թէ ինչպիսի տարբերութիւն է վերագրել Դեմիրճեանն իր արիւնակից հերոսներին՝ հօրը եւ որդուն, ահա թէ ինչ բախման մէջ է դրել նա միեւնոյն ընտանիքի՝ տրամագծօրէն միմեանցից տարբեր անդամներին: Եւ ինչո՞ւ միայն հօրն ու որդուն: Շատ աւելի սուր է հակադրութիւնը Յովնանի ու մօր՝ մարէի, Յովնանի ու կնոջ՝ Նազէի, Յովնանի ու դստեր՝ Հերիքի միջեւ: Եւ եթէ առաջին երկուսի դէպքում բախումը զուտ մարդկային, ընտանեկան, նաեւ՝ բարոյական հարթութիւններում է ու լեզուակռուից այն կողմ չի անցնում, ապա Հերիքը հօր բարոյական ու ֆիզիկական կործանումը իր անսպասելի համարձակ գործողութեամբ լրումին հասցնող վճռորոշ գործօնն է դրամայում:

Դեմիրճեանը մշտապէս կարեւորել է մարդու խնդիրը: Նրա համար գոյութիւն չունի ազգային խտրականութիւն: Ուստի եւ իր դրամայում հանդէս է բերում մարդկային բարձր յատկանիշերով օժտուած թուրք սպային՝ Ֆայիկին: Որպէսզի հասկանանք այս կերպարի բարձր էութիւնը, եւ նրա ու Հասան պէյի տարբերութիւնը, բաւական է ծանօթանանք հետեւեալ երկխօսութեանը.

ՀԱՍԱՆ ՊԷՅ. Ես նշանակուած եմ աքսորուող քարաւանի պետ մինչեւ Միջագետք: Դու իմ օգնականներից մինը պիտի լինես:

ՖԱՅԻԿ. Շատ ուրախ եմ, պէ՛յ: Շա՜տ ուրախ:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. (Անհանգիստ ժպիտով) Ինչո՞ւ ես ուրախ:

ՖԱՅԻԿ. Յովնանի աղջկան կ'ազատեմ:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. (Հանգստացած) Հա՜, աղջի՜կը: Լաւն է: Որ հաւանում ես, քեզ լինի:

ՖԱՅԻԿ. Վախենում եմ՝ հեզոս չգայ:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. Ի՞նչ խենթ բան... չգա՞ս որն է: Խլի՛ր:

ՖԱՅԻԿ. Ուզում եմ՝ իր կամքով գայ:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. Շատ բարակներն ես մանում:

ՖԱՅԻԿ. Է՜հ, ուզում եմ, բայց սէրը զօրով չի լինի:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. Ասել է՝ սէր ես գցել այդ աղջկան: Ղոչա՜ղ...

ՖԱՅԻԿ. (Պարզօրէն) Վաղո՛ւց: Երբ դպրոց էի գնում, միշտ նրանց տան առջեւով էի անցնում:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. (Քահ-քահ ծիծաղելով) Օհօ՛, բանը խոշորցաւ: Է՛հ, էլ ի՞նչ ես ուզում, նպաւրակիդ հասար:

ՖԱՅԻԿ. (Տխուր ժպիտով) Չգիտեմ, խիղճս հանգիստ չէ... հա՛մ ասում եմ, հա՛մ զղջում...

ՀԱՍԱՆ ՊԷՅ. Վայելի՛ր, վայելի՛ր, վերջը կը զղջանք: Ես Նունուֆարին եմ աչքս դրել: Պիտի քաշեմ: Բայց վախենում եմ՝ զօրով քաշելուց աղմուկ դուրս գայ եւ Վալիի ականջն ընկնի: Կարծեմ՝ Վալին գիտի, որ Յովնանը գեղեցիկ հարս ունի: Ականջը որ գցեն, ինքը կը քաշի: Ռէուֆ պէյն էլ քարւանի հետ է. նա էլ գիտի Նունուֆարին: Սիրտս հանգիստ չէ: Ուզում եմ աղջիկը իր կամքով բերեմ քովս, յետոյ, երբ կը հեռանանք, Յովնանին ճամփու կը դնեմ: Ափսոս է, հարամ չլինի քէֆս. լա՛ւ աղջիկ է:

ՖԱՅԻԿ. Գոնէ Յովնանը հետներս առնէինք, ընտանիքն ազատէինք, մեղք են:

ՀԱՍԱՆ ՊԷՅ. Ջհանդամը Յովնանն ու իր ընտանիքը... Նունուֆարին ես կ'առնեմ, աղջկան էլ՝ դու: Էլ մնացածների պահապանը ես ու դու հօ չե՞նք: Բան չունե՞ս: (Լռութիւն) Ֆայի՛կ, ի՛նչ քէֆեր են սպասում մեզ... Ի՛նչ հուրի-փերիներ... Ա՛հ, ի՛նչ գանձեր բացուեցին մէկէնիմէկ... Ո՞վ կը սպասէր, հը՞... (Ֆայիկը լուռ է): *Դէ գնա, հրամանի թուղթը սրացիր, ապա արի այստեղ: Շուտ-շուտ պիտի գնանք Յովնանի տունը եւ լաւ հսկենք: Թէ չէ՝ լուրը կ'ընկնի քաղաքը, եւ գեղուհիները ձեռքներէս կը թռցնեն:*

Թատերգութեան յետագայ արարներում Ֆայիկը, իր անձը վտանգելու գնով, փորձում է փրկել Հերիքին եւ նորահարս Նունուֆարին: Ապարդիւն է, սակայն, այդ ջանքը: Ֆայիկին բանադրում է Հասան պէյը՝ որակելով իբրեւ դաւաճան եւ բանտ գցելով, Նունուֆարն ինքնասպան է լինում, Հերիքը փախչում եւ փորձում թաքնուել գաղթականների կարաւանում:

Դեմիրճեանը թատերախաղ, բեմական տեսարան կառուցելու եւ դրանում իր ասելիքը սահուն ներդնելու հրաշալի միջոցով է ընթերցողին հասցնում այս երեք կարեւոր հերոսներին բաժին հասած ճակատագրերին առնչուող մանրամասները: Մենք չենք տեսնում յետագայ արարներում այս գործող անձանցից երկուսին՝ Ֆայիկին եւ Նունուֆարին, բայց գաղթի ճանապարհին տառապեալ հայութեանն ուղեկցող թուրք պաշտօնեաների միջեւ դրամատուրգը զրոյցի մի տեսարան է ներկայացնում, որի ընթացքում էլ բացւում է նրանց դժբախտութիւնների կծիկը:

Վերջին՝ Դ. արարում, գրողը ցոյց է տալիս տեղահանուած հայութեանը Միջագետքի մի կորսուած վայրում: Վարպետօրէն կառուցուած երկխօսութիւնների եւ թատերական տեսարանների նկարագրութիւնների միջոցով Դեմիրճեանն ստեղծում է ժամանակի սահմռկեցուցիչ համապատկերը: Յովնանը՝ նախկին յարգուած մեծատունը, ցնցոտիների մէջ է, խոշտանգուած, խելագարի անհաւասարակշռութեամբ, մի փշուր հացի համար՝ պատրաստ մեծագոյն ստորութեան: Եթէ դրամայի սկզբում մենք դեռ տեսնում ենք կուշտ ու հարուստ, բայց կործանարար աղէտի

հոտն առած ու քայլ առ քայլ անդունդը գահավիժող մարդուն, ապա այս տեսարանում նա այլեւս ոչինչ է, կորցնելու բան չունեցող, սեփական մորթին ընդամէնը սովամահութիւնից փրկելու յուսահատ փորձեր ձեռնարկող, բոլորից արհամարհուած մի արարած: Եւ եթէ հաշուի առնենք այն ֆիզիկական եւ բարոյական աւերածութիւնները, որ Յովնանը գործել է մինչեւ այս վիճակին հասնելը, ապա բնաւ էլ չպիտի զարմանանք, որ նա հիմա էլ վերջին մանրագողի նման յափշտակում է թոռան՝ Հայկի համար պահուած հացի կտորը: Եւ ի՞նչ զարմանալի բան կայ սրանում, եթէ խօսքը Յովնան մեծատունի մասին է: Անգամ նրան երբեւէ նախանձով ու պատկառանքով վերաբերուող համաքաղաքացիները՝ Սահակը, Զարդարը, Եղօն, Ջնդօն ոչ միայն չեն զարմանում թոռան հացը խլած Յովնանի արարքից, այլեւ զարմանքով են արձագանգում այս առնչութեամբ Նազէի բարձրացրած սուգուշիւանին: Այո՛, Յովնանն այլեւս չի տեղաւորւում մարդ երեւոյթի տիրոյթում, նրանից ամէն բան սպասելի է եւ զարմանալի է նրա որեւէ արարքի վրայ զարմանալը: Բայց նախկին երանելի ժամանակներում ինքն իրեն օրէնսգէտ հռչակած Յովնանը չի կարող հենց այնպէս տրուել ճակատագրի տարուբերումներին ու չվերլուծել կատարուածը, նաեւ՝ կատարուելիքը: Նա մտածող անձնաւորութիւն է, գոնէ՝ այդպիսին էր մինչեւ պատերազմն ու տեղահանութիւնը: Եւ քանի որ ինքն իր աչքում պիտի ջանայ արդարանալ, բացատրութիւն գտնել կատարուածի համար, ապա ընտրում է իր կարծիքով ամենաճշգրիտ թիրախը: Նա իր զառանցանքներում անվերջ յիշատակում ու դատի է կանչում Աստծուն, որովհետեւ, ըստ իր փիլիսոփայութեան, ամէն բան հենց Բարձրեալի կամքով է կատարւում՝ թէ՛ հարսին ու աղջկան Հասան պէյի սանձարձակ կրքերի սպասարկուն դարձնելու իր քայլը, թէ՛ այնքան մեծարուած մարէին լքելը, թէ՛ որդու մահուան պատճառ դառնալը, թէ՛ իր գործած միւս այլանդակութիւնները: Այս ամէնի մէջ Յովնանը մէկ մեղաւոր է ճանաչում եւ փափաքում անել նրա դատը. այդ մեղաւորն Աստուած է: Ահա Յովնանի եւ նրա կնոջ երկխօսութիւնը դրամայի վերջին արարում.

ՅՈՎՆԱՆ. (Լացով) Աշխարհքի՛ աղքատներ, ողորմութիւն արէք մեծատուն Յովնանին: Սովա՛ծ չներ, ինչպէ՞ս չէք սպրկում... (Գլուխը ծեծելով) Վա՛խ, Յովնա՛ն, Յովնա՛ն, Յովնա՛ն, ի՞նչ եմ դառել ես, ի՞նչ եմ դառել ես: Խի՛ղճ ունեցիր մի քիչ, անխի՛ղճ. ես է՛լ մի ժամանակ մարդ էի, իմ երեսին է՛լ Աստծու պարկեր կար: Հիմի էլ, որ ոտնաթակի ցեխ եմ, էլի՛, էլի՛ մի բան եմ: Կատաղա՛ծ Աստուած, հանդարտուի՛ր մի քիչ: Մի՞թէ յերին մի գութ չպիտի պահած լինես ինձ համար: Լսելիքիդ մի կողմը չպէ՞տք է բաց լինի՝ լսելու իմ գանգատները... Ի՞նչ եմ դառել ես, ի՞նչ եմ դառել ես: Դա՛տ արա ինձ, Աստուա՛ծ: Ե՛կ՝ ես դատ անեմ քեզ: Չէ՞ որ իմ ձեռքը քո ձեռքն էր: Չէ՛ որ՝ եթէ ե՛ս կամեցայ, դո՛ւ կամեցար: Չէ՛ որ՝ վե՛րջը, վե՛րջը ես արդար եմ:

ՆԱԶԷ. Գոնէ մի՛ կատաղեցնի ինձ, թո՛ղ անօրէն խօսքերդ:

ՅՈՎՆԱՆ. Պիտի խօսեմ: (Գոռում է)*: Պիտի գոռամ: Ես արդար եմ:*

ՆԱՉԷ. Արդարը իր հարազատներին չէր սպանի:
ՅՈՎՆԱՆ. (Լալահառաչ) *Ե՛ս չարի, Աստուա՛ծ արեց: Եթէ չուզէր, կը բռնէր ձեռս: Կեանքի կամքն էլ նա է, կարողն էլ նա է, սէրն էլ նա է, երկիւղն էլ նա է: Ճշմարիտն եմ ասում, ես արդար եմ, քանի որ ես Աստուած չեմ:*

Յուսահատութեան գագաթնակէտին գտնուող հերոսներին Դեմիրճեանը դնում է գործողութիւնների անսպասելի ընթացքի մէջ: Եթէ Յովնանի որդու՝ Խորէնի պարագայում տեսանք ըմբոստութեան փորձի առաջին իսկ դրսեւորման մէջ իր վախճանը գտած, ոճրագործներին հակադրուելու որեւէ գործնական քայլ կատարելու անընդունակ մէկին, ապա Դ. արարում հեղինակը հայի վրէժխնդրութեան մղումը վերածում է որոշակի գործողութեան: Սանձարձակ Հասան պէյի վրանը քշուած Հերիքը՝ մանկամարդ, անփորձ այդ աղջիկը, ատրճանակի կրակոցով վերջ է դնում գազանի կեանքին: Այս դէպքին յաջորդում է ցնցող հանգուցալուծումը. բարոյականութիւն, մարդկայնութիւն կորցրած հասարակութեան վարկը փրկում է մինչեւ պատերազմն ու գաղթը բոլորից անտեսուած, չքաւոր, տնանկ Աբրօն: Նա իր վեհանձն քայլով (թուրք ջարդարարներին ներկայանում է որպէս Հասան պէյին սպանած Հերիքի հայր եւ ընդունում Յովնանի բաժին մահը) ստիպում է դարձի գալ անգամ բարոյազուրկ, անասնացած Յովնանին: Այս մասին Յունանեանի գրքում կարդում ենք. «*Աշխարհում, այնուամենայնիւ, կայ մարդկայնութիւն եւ այլասիրութիւն, ու չի կարելի բոլորովին չհաւատալ բանական արարածին ու նրա արդարութեանը, բարու եւ գեղեցիկի յաղթանակին: Իր որքան անսպասելի, նոյնքան էլ բացառիկ ու գերազնիւ քայլով ցեղասպանութեան գեհէնն ընկած Աբրօն կարողանում է բացասական հերոսի քստմնելի արարքներով եւ մռայլ բանդագուշանքով հողին հաւասարեցուած ու աղբ հռչակուած մարդուն նորից բարձրացնել, սրբացնել ու դնել իրեն արժանի բարձրութեան վրայ: Եւ այդ արդար նահատակի ազնիւ արիւնով հաստատուած ճշմարտութեան անհերքելիութեան առջեւ անզօր՝ Յովնանը չոքում է բանական էակին վեհացրած, աստուածացրած հրաշք անձնաւորութեան դիակի առջեւ ու արտաբերում պիէսը վերջաւորող խորախորհուրդ ու սարսուռ ազդող խօսքերը ("Ահա այս մարդը դու ես, Աստուած: Քո արդարութեան առջեւ ես հող եմ եւ մոխիր...")*, եւ կաթուածահար ընկնում իր մեծ համաքաղաքացու անշնչացած մարմնի վրայ[11]:

Թատերգութեան ողջ ընթացքում ոչնչով աչքի չընկնող հերոսը՝ Աբրօն, դառնում է մարդկային բարձր չափանիշերը շեփորող, դրանք համաժամանակեայ կտրուածքով արժեւորող գրական կերպարը, որի նմանների վրայ է միշտ յենուել գրող Դեմիրճեանը՝ նրանց վարքը դարձնելով իր գաղափարախօսութեան առանցք՝ բոլոր ստեղծագործութիւններում: Այսօրինակ կերպարների մասին իր

դիտարկումն ունի գրականագէտ Վահագն Մկրտչեանը. «*Իսկական բարեգործների բացայայտումը եւ նրանց զարգացման ու յաղթանակների բարդ գործընթացի նկարագրութիւնը՝ կապակցուած բազմաբնոյթ խառնուածքների եւ հայեացքների, հասարակական-կենցաղային բախումների հետ, գրականութեան մեծագոյն բարոյական խնդիրն է, որին Դեմիրճեանը յատկացնում էր կարեւոր տեղ արուեստում: Նրա հայեացքի կենսականութիւնն ու խորաթափանցութիւնն արտայայտւում են այն բանում, որ նրա գրական կերպարներում ի մի բերուած բարոյական չափանիշները կտրուած չեն այն հասարակական միջավայրի վերլուծութիւնից, որում ապրում, գործում են իրենք*»[12]:

Աբրոյի եւ Յովնանի կերպարների ու ճակատագրերի զուգորդման պարագայում դարձեալ հակուած ենք վկայաբերել-վերյիշել Աստուածաշունչը, ի մասնաւորի՝ «Աղքատ Ղազարոսի առակը»[13]:

Այս առակի վկայակոչմամբ կարող ենք մտովի շարունակել Դեմիրճեանի երկու հերոսների՝ Յովնանի եւ Աբրոյի կեանքի պատմութիւնը՝ դիտարկելով յետերկրային ընթացքի ծիրում: Այն բնութագիրը, որ տուել է Դեմիրճեանն իր հերոսներին, բացառում է նրանց համար երբեւէ ընդհանուր հարթութեան վրայ յայտնուելու հնարաւորութիւնը թէ՛ աշխարհիկ, թէ՛ անդրաշխարհիկ կեանքում: Գրողը ստեղծել է իրականութեան մէջ հանդիպող երկու հակադիր տեսակների գեղարուեստական կերպարները, որոնք յաւերժական պայքարի ու բախման անխուսափելի փաստի առջեւ են: Անկախ պարագաներից, ժամանակներից, կեանքի ծայրայեղ կամ բնականոն ընթացքից՝ այս տեսակներին վիճակուած չէ յայտնուել մէկը միւսի մաշկի տակ, զգալ մէկը միւսի ապրածը ո՛չ այս, ո՛չ հանդերձեալ կեանքում:

ՅՈՎՆԱՆ ՄԵԾԱՏՈՒՆԻՆ ԱՆԴՐԱԴԱՐԱՁՈՂ ԱՐԽԻՒԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

Ինչպէս նշուեց, *Յովնան Մեծատուն* դրամայի վերաբեալ բաւական հետաքրքիր տեղեկութիւններ կան գրողի նամականիում: Ահա 1933ին Արմէն Գուլակեանին[14] գրած Դեմիրճեանի նամակն ամբողջութեամբ.

> Սիրելի Արմէն, ես պիէսի բոլոր փոփոխութիւնները արի: Գլխաւորապէս փոխուել է վերջին գործողութիւնը: Իսկ 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ գործողութիւններում ինչ փոփոխութիւններ որ կան, կարելի է փորձի ժամանակ, ձեռաց գրել-տալ: Մնացածը թողել եմ այնպէս (այսինքն, այն պայմանական նշաններով եւ ուղղումներով, որ ինքը Աճէմեանն է արել, եւ ինքն ու դերասանները աւելի լաւ գիտեն): Դրանց ձեռ չեմ տուել: Յամենայն դէպս՝ թող ինքը ուշադրութեամբ տեքստը կարդայ: Բայց, որ գլխաւորն է, փորձերն սկսելուց առաջ մի անգամ ինձ հետ թող տեսնուի[15]:

Բայց եւ այնպէս, դրամայի հեղինակային բնագիրը մօտ հարիւր տարի մնացել է առեղծուածի քօղի տակ, չի տպագրուել որեւէ անգամ: Ինչո՞ւ: Այս հանգամանքն ունի զարմանալի մի բացատրութիւն. անհասկանալի

պատճառներով Դեմիրճեանը մտածել է, թէ ինչ-որ վտանգ է սպառնում *Յովնան Մեծապունի*ի բնագրին: Պահպանուել են այդ մասին վկայող երկու նամակ:

1923ին Վահան Թոթովենցին ուղղած նամակում, Դեմիրճեանն իմիջիայլոց գրում է. *«Ի դէպ ասեմ, յանկարծ միտս ընկաւ, ի սէր Աստծոյ, "Նորքին" ուղարկած երկու պատմուածքս՝ "Adagio"*[16] *եւ "Ֆըսքըիէ"*[17]*, անպայման պահանջիր եւ ուղարկիր ինձ: Կորցնել-մորցնել չկինի: Անշուշտ, մէկը թաքցրել է եւ պարզապէս օգտուել է ուզում: Իմիջիայլոց, պիտի պարզն ասեմ, որ իմ ձեռագիր նիւթերի ընթերցումներից եւ բերանացի պատմելուց բաւական օգտուել են զանազան անձեր: Ուզում եմ հրապարակաւ յայտնել, ի լուր գրագէտների, որ "Յովնանի" վերջին արարի 'Աստծուն թաղելը' եւ յատուկ տեսարանը իմն է, կարդացուած է չորս տարի առաջ... "Յովնանի" համայնացնողի անունը կը տամ, եթէ հարկ լինի եւ ժամանակը գայ, նոյնպէս եւ "Լօթիների*[18]*: Զգո՛ւշ կաց եւ ոչ ոքի մի՛ կարդայ ձեռագիր ոչ մի բան եւ մի պատմի իդէան, մինչեւ որ հրատարակես: Նիւթով աղքատ, ուրեմն եւ՝ հոգով աղքատ մեր սերունդը տարօրինակ ձեւերով է խտացնում ժամանակիս իրաւունքը: Այս ամէնը մեր մէջ»*[19]:

Իսկ 1933ին Գուլակեանին գրած նամակում՝. *«Սիրելի Արմէն, շատ խնդրում եմ ապահովես, որ "Յովնանի" բնագիրը չկորչի: Եթէ քեզ մօտ է, թո'ղ մնայ, իսկ եթէ մեքենագրուհու կամ Արաքսմանի*[20] *մօտ, մի կերպ իմաց արա նրանց, որ բերեն ինձ»*[21]:

Կարծում ենք՝ հենց այս մտավախութիւնն էլ մղել է Դեմիրճեանին այնքան խորը թաքցնել իր երկը, որ այն հնարաւոր եղաւ գտնել ու հանրայնացնել իր ստեղծումից շուրջ հարիւր տարի անց միայն:

Դեմիրճեանին դեռեւս «Աւելորդը» պատմուածքից հետապնդել է անօգնական, թոյլ մարդուն սատարելու, վտանգի մէջ չլքելու, նրան մարդկային բարձր որակներ վերագրելու թեման: *Յովնան Մեծապունը* այս թեմայի մէկ այլ արձարծում է ի յայտ բերում: Զօրեղ ու մեծատուն այրը չնչինանում է փորձութեան ժամին, ինչպէս Հաճի աղան՝ «Աւելորդը»ում: Թէեւ Յովնանը թատերգութեան սկզբում խոնարհումի ու մեծարումի ծէսով է պատւում կոյր, ծեր մարէին, այդուհանդերձ, Դեմիրճեանի վարպետ գրչով ստեղծուած նկարագրութեան մէջ խորաթափանց ընթերցողը կարող է նկատել մեծարումի այդ ծէսի ցցուն անանկեղծութիւնը:

«Մեծապունը, ըստ երեւոյթին, քաջ գիտէ, թէ առաջին հերթին ինչն է գնահատւում կեանքում, ինչն է տպաւորութիւն թողնում, եւ գործում է մտածուած ու ճիշտ: Ըստ այսմ, նա շատ է կարեւորում արտաքին ձեւը, սեփական վարքագծի ազդեցութիւնը՝ ջանալով ամէն ինչում լինել յաւուր պատշաճի: Հրաւիրուածներից աչքաբացները, իհարկէ, գիտեն, որ Յովնանի աւանդապահութեան տակ շրջահայեաց մարդու հաշիւ է

թաքնուած, եւ այդ բոլորը նա անում է շրջապատին դուր գալու, հասարակութեան աչքում իր վարկը բարձրացնելու համար»[22],- գրում է Յունանեանը:

Յովնանի իրական կերպարը քօղազերծում է ճողոպրելու-կաշին փրկելու խայտառակ տեսարանում. մորթապաշտութեան անբնական մոլուցքի մէջ նա չի էլ նկատում մօր ներկայութիւնը, եւ ինչո՞ւ նկատել, նրանից օգուտ չկայ: Իսկ հարսի ու դստեր պարագան այլ է. նրանք "ապրանք" են, որոնցից հնարաւոր է շահոյթ ակնկալել:

Յովնան Մեծապուն դրամայում իմաստուն հեղինակը իր դատապարտումի սլաքներն ուղղել է ոչ միայն արնախում թուրքին, այլեւ սեփական ազգ ու արժանապատուութիւն ուրացած հային. մի՞թէ առաւել վտանգաւոր չէ անհատի ներսի *թուրքը*, որի հաւաքական տիպը իր այլազան այլանդակութիւններով խտացել է մեծատուն Յովնանի կերպարում: Ըստ որում՝ պէտք է նշել, որ Դեմիրճեանի համար նիւթի աղբիւր կարող էին դառնալ ոչ միայն 1915ի, այլեւ դրան նախորդած համիտեան ջարդերի իրողութիւնները, որոնց առնչութեամբ նա գրել է «Ինքնակենսագրութիւն» յուշապատումում[23]:

Եթէ հաշուի առնենք այն որ Դեմիրճեանի գրականութեանը բնորոշ է ոչ միայն պատումի նիւթը քաղել իրականութիւնից, այլեւ գրական կերպարներն ստեղծել իրական մարդկանց՝ նախատիպերի յենքով, ապա չենք սխալուի՝ ասելով, որ *Յովնան Մեծապուն* դրամայի անցքերն ու դրանց մասնակիցները, ամենայն հաւանականութեամբ, տեղաւորւում են այդ համապատկերում: Գոնէ վերջին տարիներին Հայոց Ցեղասպանութեան թեմայով ստեղծուած գեղարուեստական երկերում (մասնաւորապէս՝ գրականութիւն, կինօ) շեշտադրւում են այն մօտեցումները, որոնք առկայ են Դեմիրճեանի այս դրամայում: Դաժանագոյն երեւոյթի՝ ցեղասպանութեան դատապարտումի նոր մօտեցումը, այն մարդկային-հոգեբանական եւ ոչ նեղազգային շահերի ծիրում դիտարկելն ու դրա հանգուցալուծման բանալիները դեռեւս հարիւր տարի առաջ արծարծելն ու ի ցոյց դնելը խօսում են հայ դասականի լայնախոհութեան ու հարիւրամեակների թռիչքը մտքով յաղթահարելու կարողութեան մասին:

Կարծում ենք՝ թէ՛ հանրութեանն ականատեսի վկայութեամբ Հայոց Ցեղասպանութեան մասին իրազեկելու, թէ՛ Դեմիրճեանի յիշատակի առջեւ պատշաճ տուրք տալու կարեւորագոյն ձեռնարկ կը լինի այս դրամայի բեմադրութիւնը թէ՛ ՀՀ, թէ՛ Սփիւռքի թատրոններում, քանի որ դրամայի նիւթը հաւասարաչափ զգայական է թէ՛ մէկի, թէ՛ միւսի հանդիսատեսի համար: Սա մի ստեղծագործութիւն է, որը բեմ բարձրացնելը ազգանպաստ առաքելութիւն կարող է դառնալ՝ հենց թէկուզ այսօրուայ մարդուն ինքն իրեն դաւաճանելուց ետ պահելու իմաստով:

Աւելորդ չենք համարում շեշտել նաեւ այն, որ Դեմիրճեանը անգամ թատրերկ գրելու պարագայում չի դադարում լինել գեղագէտ գրող, որը սեռի պահանջներին յատուկ մօտեցմամբ երկխօսութիւններ կառուցելու վարպետութեանը զուգորդում է տեսարանի, գործողութեան կատարման, ներյարդարանքի մանրակրկիտ նկարագրութիւնները: Զորօրինակ՝

> Վալի նահանգապետի ընդունարան դահլիճը: Աջ կողմում պարտէզի բակն է, որ մուտքի դուռ ունի դէպի աջ: Դիմացը՝ մէջտեղում, մի քարէ սանդուղք դէպի ետ է բարձրանում, ոլորտում դէպի ձախ, առաջ գալիս ու վերջանում մի դռնով, որից յետոյ աջից ձախ երկարում է մի լայն պատշգամբ՝ արաբական սիւներով: Դա ընդունարան դահլիճի պատշգամբն է: Պատշգամբի վրայ են բացուած դահլիճի պատուհանները, որոնցից երեւում են ներսում վառուող մի կանթեղ, բազմոցներ, սեղան եւ այլն: Պատշգամբի ձախակողմում դրուած է մի բազմոց: Առաւօտ է:

Նոյնպիսի բծախնդրութեամբ թատրերգուն կառուցում է բեմական տեսարանը՝ որոշակիացնելով ոչ միայն հերոսի գործողութիւնն ու հոգեվիճակի նկարագրութիւնը, այլեւ բեմից դուրս՝ ետնաբեմում կատարուելիքը: Ահա այդպիսի մի դրուագ, որում հանդէս են բերուած քաղաքը լքելու բօթն ստացած Յովնանն ու նրա հարսանքաւոր հիւրերը.

> Յովնանը մնացել է տեղնուտեղը քարացած: Հիւրերը շարժւում են դէպի դուռն ու պատուհանները: Ոմանք աւելի առաջանում են դէպի Յովնանը եւ կուչ գալիս: Ճնշուած, անհանգիստ լռութիւն: Մի չարագուժ ձայն է լսւում փողոցից՝ ժանգոտ եւ կերկերուն, որ դեռ հեռուից ձգւում է իբրեւ ձայն, բայց երբ մօտենում է, արդէն վերածւում է պարզ բառերի:

ՎԵՐԾԱՆՈՒՄ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Ինչպես նշեցինք սկզբում, Դեմիրճեանի այս երկի բնագիրը պահպանւում էր ԳԱԹի ԴՖ 500-507 համարներով թուագրուած թղթապանակներում: Դրանցից առաւել աւարտուն եւ համակարգուած վիճակում էր թիւ 507 ձեռագիրը, սակայն լինում էին դէպքեր, երբ իրար յաջորդող հատուածների միջեւ անսպասելի ընդհատւում էր տրամաբանական կապը, եւ մենք ստիպուած էինք լինում գտնել միւս թղթապանակներում համապատասխան հատուածն ու համեմատութիւն անել վերջին տարբերակի հետ: Կային նաեւ ընթեռնելիութեան դժուարութիւններ: Երբեմն վերջնական տարբերակում ձեռագիրն առաւել դժուարընթեռնելի էր լինում, այս դէպքում եւս մեզ օգնութեան էին հասնում նախնական տարբերակները: Հաւանաբար, Դեմիրճեանն ինքն էլ աւարտին չի հասցրել իր ողջ մտայղացումն այս երկում, սակայն կարծում ենք, յաջողել ենք որսալ գրողի հիմնական ասելիքը եւ հնարաւորինս ճշգրիտ վերծանել նրա թողած ձեռագիր ժառանգութիւնը:

ՅԳ. Դեմիրճեանի *Յովնան Մեծապուն* թատերգութեան բնագիրը վերծանելուց եւ հրապարակման պատրաստելուց յետոյ տեղեկացանք, որ

սփիւռքահայ մտաւորական Արբի Յովհաննիսեանը նոյնպէս իրականացրել է այս գործը: Նա, մինչեւ տպագրելը, Փարիզում բեմադրել է թատերգութիւնը, ապա եւ զետեղել իր հրատարակած ժողովածուում՝ *Թատերկաշար երեք հատորով, հտր. Ա*, «Հայ Թատրոնի Ընկերակցութիւն» Հրատարակչութիւն, Փարիզ, 2019:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Կարինէ Ռաֆայէլեան, «Դերենիկ Դեմիրճեանի Նորայայտ Ձեռագիրը. Ղարաբաղի եւ Նախիջեւանի Արձարծումներ», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԴ.*, Պէյրութ, 2014, էջ 309-38. նաեւ նոյն՝ «Հայի Խտատիպի Միքանի Դրսեւորումներ Դերենիկ Դեմիրճեանի "Հայը" Խոհագրութեան Խորապատկերին», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԵ.*, Պէյրութ, 2015, էջ 519-42:

[2] Այդ նիւթերը պահպանւում են ԳԱԹում, ԴՖ թիւ 500-7: Դրամայից բոլոր մէջբերումները կատարուած են վերծանուած անտիպ բնագրից:

[3] Վարդան Աճէմեան, հայ նշանաւոր բեմադրիչ (1905-1977):

[4] Հրայր Մուրադեան, *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1961:

[5] Արծուի Յունանեան, *Դերենիկ Դեմիրճեանի Դրամատուրգիան*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1988:

[6] Հրանտ Թամրազեան, *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1977:

[7] *Դերենիկ Դեմիրճեանի Սկեղծագործութիւնը*, գլխ. խմբ.՝ Էդուարդ Զրբաշեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1980:

[8] Յիրաւի, Խորհրդային գաղափարախօսութիւնը ժխտում էր ցեղասպանութեան փաստն ինքնին եւ քարոզում իր տարածքում ապրող բոլոր ազգերի, այդ թւում՝ հայերի եւ թուրքերի սիրոյ եւ համերաշխութեան պատրանքը: Միւս կողմից, հայ ազգայնամոլները չէին կարող հանդուրժել այն ճշմարտութիւնը, թէ հայ մարդն իրեն թոյլ կը տար դաւաճանել ազնիւ որակներին: Թուրք ցեղասպաններն առհասարակ ուրանում էին եւ մինչ օրս էլ ուրանում են ցեղասպանութեան, հայերի բռնի տեղահանութեան փաստերը:

[9] Մուրադեան, էջ 127:

[10] *Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր Կտակարանների*, Հրատարակութիւն Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994 – ՌՆԽԴ, էջ 101:

[11] Յունանեան, էջ 120-1:

[12] Վահագն Մկրտչեան, *Դերենիկ Դեմիրճեան*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1982, էջ 321-2: Գիրքը ռուսերէն է, քաղուածքի թարգմանութիւնը մերն է:

[13] Տե՛ս՝ ծանօթագրութիւն 10, էջ 104:

[14] Արմէն Գուլակեան, հայ նշանաւոր բեմադրիչ (1899-1960):

[15] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 14*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, էջ 363: Նամականիից յետագայ մէջբերումները կը լինեն այստեղից:

[16] Պատմուածքի սեւագիր ինքնագիրը թուագրուած է 1912, առաջին անգամ տպագրուել է 1940ին:

[17] Անտիպ գործ է, պահպանւում է ԳԱԹում, ԴՖ թիւ 370, 371:

[18] Այս ստեղծագործութեան առնչութեամբ գրողի երկերի ակադեմիական հրատարակութեան խմբագիր Պիոն Յակոբեանը գրում է, թէ սա *Քաջ Նազար* պիէսն է: 14րդ հատորում՝ 605 էջի ծանօթագրութեան մէջ, մասնաւորապէս կարդում ենք. «Դ. Դեմիրճեանի արխիւում "Լօթիներ" վերնագրով դրամատիկական գործի որեւէ ձեռագիր կամ պատառիկ չի պահպանուել: Այդ պիէսը յիշում է նաեւ Թոթովենցը: 1921թ. Պոլսի թերթերում կովկասահայ գրականութեան մասին տպած ակնարկում նա, իմիջիայլոց, նշում է. «Դ. Դեմիրճեան կը գրէ Լոդիներու մասին փիես մը, որ կրնայ նոր շրջան մը բանալ Կովկասի հայոց գրականութեան մէջ»:

[19] Նոյն, էջ 331:

[20] Ալեքսանդր Արաքսմանեան (1911-1982), հայ դրամատուրգ, արձակագիր, բեմադրիչ:

[21] Նոյն, էջ 362-3:

[22] Յունանեան, էջ 89:

[23] «Ներսիսեան դպրոցն աւարտելուց յետոյ (աւարտել է 1897ին – Կ.Ռ.) ես սկսեցի վարել կիսագործ եւ թափառիկ կեանք: Կովկասեան Բարեգործական Ընկերութեան մէջ տեխնիկական քարտուղարութիւնը ինձ առիթ տուեց լաւ շփուելու եւ ճանաչելու քաղաքի չքաւոր եւ մուրացիկ խաւերին: Ինչ խօսք, որ միաժամանակ դա առիթ էր նոյնպէս՝ աչքով տեսնելու 1896ի համիդեան կոտորածների զոհերին, որ Թիֆլիս էին լցուել Մուշից, Վանից, Ալաշկերտից, Բասէնից...» (Դեմիրճեան, *Հպր. 14*, էջ 9):

HOVNAN MEDZADUN
THE RESTORED SCRIPT OF DERENIK DEMIRCHIAN'S DRAMA,
(Summary)

KARINE RAFAELYAN
karine.rafaelyan@mail.ru

The renowned Soviet Armenian writer Derenik Demirchian has a significant place in the history of Soviet Armenian literature.

The play *Hovnan Medzadun* holds an important and valuable place in the literary heritage of the author and specifically in his theatrical output. Furthermore, it is an important literary and historical document, which highlights some overlooked and unheeded aspects of the Armenian Genocide. It focuses on the character of an Armenian figure, a self-centered individual who applies all his instinctive skills and disrespectful means to maintain his life and survive the genocide no matter what and at the expense of anything, even his kin.

Interestingly, however, this unorthodox and avant-garde play, which was staged and highly esteemed by various literary critics, was not published, and its full script was not found or did not exist. Through extensive research and hard work in the archive of Demirchian, the author of this article, with the use of memoires and

accounts of those who watched the play on stage, has been able to put together the various incomplete sections of the play and reconstruct a full script.

Using the restored script as a basis, the author is inclined to believe that Demirchian, who generally wrote on topics collected from eyewitness accounts, wrote this play inspired by a true story. Notwithstanding its controversial nature, the author speculates that Demirchian took into consideration that no matter how hard factual reality is, an author does not have the right to deny his reader and the nation the last chances for hope and consolation. Accordingly, parallel to highlighting the above-mentioned negative character, the author has condensed hope and optimism in three parallel happenings: a) Herik, the daughter of this selfish father, kills the Turk to whom she was offered by her father. Herik's act is a condensed, generalized symbol of the nation's vengeance, b) Apro, a decent character (the contrast to human material values), claims that he commited the killing and c) Hovnan, the selfish father, makes a belated confession (which reflects the minuteness of the human being on God's Judgment Day).

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
(Մասն Ա. – մերձաւորարեւելեան լեզուներ[1])

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
armen_michaelian@yahoo.com

Օտար յատուկ անունների տառադարձումը միշտ եւ բոլոր լեզուներում յատուկ խնամքի առարկայ է: Նրանց հոսքը դէպի մայրենի լեզու գալիս է դարերի խորքից՝ լեզուն գրաւոր դառնալուց դեռեւս շատ առաջ, եւ անվերջ շարունակւում ու շարունակուելու է քանի դեռ մայրենի լեզուն գոյութիւն ունի:

Խնդիրը մեզ՝ հայերիս համար առաւել քան ցաւոտ է: Եթէ հայերէնը հնում (Ե.-ԺԱ. դդ.) միասնական էր, եւ տառադարձութեան կանոնները ընդհանուր էին բոլոր հեղինակների համար, ապա միջին դարերից սկսած՝ հայերէնի արտասանական տարբերութիւնները յանգեցրին միասնութեան խաթարման: Նոր ժամանակներում Մխիթարեան հայագէտները մեծ աշխատանք տարան միասնական դասական հայերէնի տառադարձութիւնը վերահաստատելու ուղղութեամբ, եւ դա նրանց մեծապէս յաջողուեց: Սակայն Ի. դարում, մի կողմից՝ արեւմտահայ ու արեւելահայ ճիւղերի «խաչաձեւումների» մթնոլորտում, միւս կողմից՝ Խորհրդային Հայաստանում հայերէնի անազատ զարգացման, ինչպէս նաեւ՝ միաւորիչ օրէնքների բացակայութեան պայմաններում, տարբեր հեղինակներ ու տարբեր հոսանքներ տառադարձման տարբեր ուղղութիւններ բռնեցին, եւ այսօր հայոց լեզուն տառապում է ստեղծուած քաոսից, երբ միեւնոյն օտար անունը կարող է երբեմն երեք կամ չորս ձեւով տառադարձուել:

ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Տառադարձութիւնը ոչ այլ ինչ է քան «յարմարագրութիւն», այն է՝ որեւէ օտար բառ մայրենի լեզուի տառերով յարմար եւ միակերպ գրելու արուեստ: Ամէն լեզու ձգտում է իր բնիկ բառերը ընթերցողին մատուցել միակերպ, եւ օտար բառերը նոյն տրամաբանութեանն են հետեւում՝ ունենալ մէկ միասնական տեսք եւ դիւրացնել բառի հնչողութիւնն ու ըմբռնումը ընթերցողի համար: Յատուկ անունները, մանաւանդ առաւել ծանօթները, ինչպէս եւ ամէն մի բառ, ընթերցւում են «մի հայեացքով», եւ ոչ թէ «տառ առ տառ», հետեւաբար խիստ կարեւոր է յատուկ անունների միօրինակ ուղղագրութիւնը եւ անկանոնութիւնների ու տարընթերցումների առաւելագոյնս նուազեցումը:

Յատուկ անուն հասկացութիւնը շատ լայն է. սկզբունքօրէն ամէն բառ (հասարակ գոյական անուն, բայց եւ ածական, բայ, մակբայ ու նոյնիսկ ձայնարկութիւն) որոշակի պայմաններում կարող է դառնալ յատուկ անուն: Բաւական է, որ մի խանութպան իր հաստատութեան անունը դնի, ասենք՝

«Է՛ստի Համեցէք», որ մակբայն ու բայը դառնան տառադարձութեան առարկայ: Հետեւաբար՝ լեզուաբանը պէտք է պատրաստ լինի որեւէ օտար լեզուի իւրաքանչիւր բառ տառադարձելու իր մայրենի լեզուին:

Աշխարհի հանրայայտ լեզուները տառադարձութեան առումով լաւ օրինակ չեն: Լատինագիր լեզուները (ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, իտալերէն, հիսպաներէն...) լռելեայն համաձայնել են լատինատառ որեւէ անուն չփոփոխել, չտառադարձել: Օրինակ՝ **Shakespeare**, **Voltaire**, **Goethe**, **Dante** եւ հազարաւոր անուններ այս լեզուները այդպէս էլ գրում են իւրաքանչիւր լեզուով: Նոր լատինագիր լեզուները (օր.՝ թուրքերէնը) երբեմն երկչոտ փորձեր անում են տառադարձելու (օր.՝ **Şekspir**), սակայն պատկերի ուժը այնքան մեծ է, որ թուրքերը նոյնպէս հրաժարւում են յայտնի անունների տեսքը փոխելուց (օր.՝ **Einstein**, ինչպէս գերմաներէնում է):

Սլաւոնագիր լեզուները նոյն խնդիրն ունեն: Ռուսաստանի սլաւոնագիր բազմաթիւ լեզուներ վարանում են ռուսերէն անունների տեսքը «աղաւաղել»: Նրանք իրենց այբուբէնների մէջ պահել են ռուսերէնի տառեր, որոնց կարիքը իրենց բնիկ բառերը չունեն, բայց որոնց կարիքը նրանք ունեն ռուսերէն անունները ճշտութեամբ վերարտադրելու համար:

Հնում եւ այսօր՝ արաբագիր լեզուները (պարսկերէն, օսմաներէն...) նոյն խնդրի առաջ են կանգնած: Ոչ ոք չի յանդգնում փոխել արաբերէն անունների (եւ առհասարակ որեւէ բառի) տեսքը: Արաբերէն բառերը պարսկերէնում եւ օսմաներէնում գրւում են գրեթէ առանց փոփոխութիւնների, սակայն ամէն լեզու այն արտասանում է իւրովի:

Իւրատեսակ գիր ունեցող լեզուներից են յունարէնը, վրացերէնը, հնդկերէնը, չինարէնը, ճապոներէնը... Սակայն այդ լեզուներն էլ հայերէնի համար մեծ օգնութիւն չեն կարող լինել, որովհետեւ իւրաքանչիւրն ունի տառադարձման իր սկզբունքները, որոնք հայերէնի հնչիւնաբանութիւնից յաճախ շատ հեռու են:

Հետեւաբար, հայերս նշեալ խնդրի առջեւ միայնակ ենք եւ տառադարձման կանոնները միայնակ եւ ինքնուրոյն ենք մշակելու: Գուցէ եւ դա աւելի լաւ է, քանզի այդ հանգամանքը մեզ հնարաւորութիւն է տալիս լինել ինքնիշխան եւ կողմնորոշուել այնպէս, ինչպէս մեզ յարմար է ու ցանկալի:

Սոյն յօդուածով նպատակ ունենք սկսելու մի յօդուածաշարք, որտեղ յաջորդաբար անդրադառնալու ենք աշխարհի տարբեր տարածաշրջանների լեզուներից հայերէնի տառադարձման սկզբունքներին: Յօդուածաշարքի սոյն՝ առաջին մասը նուիրել ենք մերձաւորարեւելեան լեզուներին, եւ դա արել ենք երկու պատճառով: Նախ՝ այդ լեզուները հայերէնի անմիջական հարեւաններն են եւ արդէն դարեր շարունակ մեզ են մատակարարում բազմաթիւ ու բազմատեսակ անուններ ու հասարակ բառեր: Երկրորդ՝ այդ լեզուները, մասնաւորապէս խորհրդային տարիներին հայաստանեան հայերէնի նրանցից մեկուսանալու հետեւանքով, այսօր նուազ ծանօթ են հայաստանաբնակ լայն հասարակութեանը:

Յաջորդ յօդուածներում նպատակ ունենք անդրադառնալու եւրոպական մի շարք կենդանի լեզուների, ինչպէս նաեւ հին յունարէնի, լատիներէնի, այնուհետեւ նաեւ՝ հնդկերէնի, չինարէնի ու ճապոներէնի յատուկ անուններին: Սրանք այն հիմնական լեզուներն են, որոնց տառադարձման բացը վաղուց է զգացւում հայերէնում:

Նկատենք իվերջոյ, որ աշխարհի լեզուների թիւը հազարներ են, եւ մէկ կամ մի խումբ գիտնականների ուժերից բնականաբար վեր է դրանց թէկուզ մի զգալի մասին անդրադառնալը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ. ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ՞ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Սկզբից եւեթ նշենք որ մեր այսօրուայ նիւթը բնականաբար լեզուաբանական գիտական գրադարձութեան մասին չէ, այլ միայն «գործնական» տառադարձութեան, այն է՝ մի լեզուի յատուկ կամ հասարակ անունը մի այլ լեզուով (մեր դէպքում՝ հայերէնով) ճիշտ, յարմար եւ միօրինակ գրելու արուեստը, եւ ոչ՝ օտար անունները տառ առ տառ գիտական հայերէնի գրադարձելը:

Մաքրասէր, թերեւս՝ մաքրամոլ, հասարակութիւնը յաճախ պնդում է ամէն ինչ թարգմանել, եւ ոչինչ չթողնել տառադարձելու: Միանգամայն կողմ լինելով հայերէնը մաքուր պահելու գաղափարին (որը ամէն լեզուի կարեւորագոյն հարցերից է), յօդուածի մեր խնդիրն այլ է: Ամէն բառ, հասկանալի է, թարգմանելի չէ. կան անուններ որ ստիպուած ենք գրել (թէկուզ եւ ժամանակաւորապէս) հայերէն տառերով: Որքան էլ մաքուր պահենք լեզուն, միեւնոյն է տառադարձումն անխուսափելի է:

Ո՞րն է թարգմանութիւն-տառադարձութիւն երկընտրանքի ճիշտ մօտեցումը: Ո՞րն է գերադասելի իւրաքանչիւր պարագայում՝ թարգմանե՞լ, թէ՞ տառադարձել: Գրել, օրինակ՝ «*Նիւ Եո/օ՞րք*», թէ՞ առաջին մասնիկը թարգմանել՝ «*Նոր Եո/օրք*», ինչպէս հայաստանեան պաշտօնական հայերէնը թարգմանում է «*Նոր Օռլէան*», «*Նոր Ամստերդամ*» եւն.: Գրել «Ե/Յուրի Դոլգորուկի՞», թէ՞ «Ե/Յուրի Երկայնաբազուկ», ինչպէս գրում ենք «Ռիչարդ Առիւծասիրտ»: Ինչ էլ որ լինի հարցիս պատասխանը, մեր խնդիրն այսօր միայն տառադարձութիւնն է: Այն պահից երբ որոշում ենք որեւէ բառ տառադարձել, եւ ոչ թէ թարգմանել, խնդիրը մտնում է տառադարձութեան կանոնների ոլորտը, եւ թարգմանութեան հարցը այլեւս երկրորդական է դառնում:

Տառադարձումը կարող է ունենալ զանազան սկզբունքներ ու տարբերակներ՝ հնչիւնական, ստուգաբանական, նոյնիսկ իմաստային: Օրինակ՝ «Նոր Օռլէան»ի մէջ «նոր»ը իմաստով հայացրած է («**New Orleans**»): Ընդհանրապէս՝ թարգմանիչներն ու գրիչ հեղինակները հակուած են դիւրընկալելի մանր բառերը («նոր», «հին», «փողոց», «քաղաք», «գիւղ»...) թարգմանել, իսկ անուան մնացած՝ աւելի բարդ (ընդհանուրի կարծիքով՝ անթարգմանելի) մասերը հնչիւնադարձել: Այսպէս՝ «Մուսա Դաղ» անուան

մէջ «դաղ» բառը հասկացուել ու թարգմանուել է «լեռ», սակայն «Մուսա» անունը (արաբերէն եւ թուրքերէն՝ «Մովսէս») մնացել է անթարգման, միայն հնչիւնական տառադարձում անցած:

Այստեղ խօսելու ենք տառադարձութեան միայն մի կէտի՝ հնչիւնական տառադարձման մասին: Այն է՝ ինչպէս օտար անունը գրել հայերէն տառերով: Մնացած կէտերը բաւական ծաւալուն հարցեր են եւ պահանջում են մասնագիտական այլ մօտեցում: Չենք խօսելու քերականական հարցերի մասին, մասնաւորապէս՝ թէ անուան ո՛ր մասը պէտք է տառադարձել եւ ո՛րը՝ թարգմանել, թէ արդեօ՞ք (գոյական կամ ածական) անուան հոլոված կամ բայի խոնարհած տարրերը նոյնութեամբ պահպանել, թէ՞ հայացնել:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐ ԼԵԶՈՒՆ

Տառադարձութեան աղբիւր լեզուն յատուկ ուշադրութեան առարկայ է: Առաջին հայեացքից թւում է թէ իրեն յարգող իւրաքանչիւր լեզու կը գերադասէր տեղեկութիւնը քաղել անմիջապէս սկզբնաղբիւր լեզուից: Այսինքն՝ եթէ բառը, ասենք՝ բասկերէն է, տառադարձումը պէտք է անել բասկերէնից, եւ ոչ թէ միջնորդ հիսպաներէնից կամ ֆրանսերէնից:

Սակայն միւս կողմից՝ աշխարհի հազարաւոր լեզուների առկայութեան պայմաններում, հայ լեզուաբանութիւնը ո՛չ մասնագէտ ունի, ո՛չ էլ ժամանակ՝ աշխարհի ամէն մի լեզու ուսումնասիրելու:

«Աղբիւրախնդրութի՞ւն թէ՞ միջնորդախնդրութիւն» հարցականը ամէն պարագայի պէտք է լուծել իւրովի: Մինչեւ ո՞ւր հասցնել տառադարձութեան աղբիւրը, բաւականանալ այս կամ այն երկրի պետական լեզո՞ւվ, թէ՞ իջնել մի աստիճան աւելի ցած, այսինքն վերցնել այս կամ այն նահանգի կամ գաւառի պաշտօնական լեզուն (ենթադրենք՝ Ռուսաստանի Դաշնութեան կազմի մէջ մտնող Թաթարստանի Հանրապետութեան լեզուն), թէ՞ գնալ աւելի վար՝ հետազօտել Թաթարստանում մինչեւ թաթարները բնակութիւն հաստատած ժողովուրդների լեզուները: Այսպիսի քայլերով կարելի է հասնել մինչեւ լեզուաընտանիքների նախալեզուներին, կամ գուցէ եւ աւելի վար՝ հազարամեակների խորքերը, ինչը բնականաբար գործնական տեսակէտից անհեթեթութիւն կը լինի:

Հետեւաբար՝ տառադարձողի խնդիրն է գիտականօրէն հիմնաւորել եւ ճանաչել տալ աշխարհի բոլոր այն կարեւոր լեզուները, որոնք կարող են աղբիւր ծառայել հայերէնի տառադարձութեան համար: Ամերիկայի, Ափրիկէի, Ասիայի լեզուներից հարկաւոր է ընտրել ամենագլխաւորները, առաւել ուսումնասիրուած, առաւել տարածուած ու հայ մասնագէտներին առաւել յայտնիները:

Բոլոր դէպքերում՝ հարցը անհրաժեշտ է լեզուաբանների քննութեան առարկան դարձնել, եւ լեզուի հիմնարկներին ու պետական կառոյցներին հաստատել տալ աղբիւր լեզուների շարքը: Ժամանակի ընթացքում, ցուցակը կարելի է, եւ պէտք է, թարմացնել:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՉԻՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպիսին էլ լինեն տառադարձութեան սկզբունքներն ու եղանակները, վերջնական ինչիւններն ու ինչիւնակապակցութիւնները խորթ պիտի չլինեն հայի լսողութեանը եւ չհակասեն հայերէնի ինչիւնական սկզբունքներին: Տառադարձումը, բնականաբար, պէտք է կատարել միայն գրական հայերէն ինչիւններով, որքան էլ արդիւնքում ստացուող արտասանութիւնը հեռու լինի մայր լեզուի արտասանութիւնից:

Որպէս հակաօրինակ կարող ենք բերել օտար (ռուսերէն) ինչիւնները փափկացնելու համար մի ժամանակ (սովետա)հայերէնում ընդունուած ապաթարցը («փշիկը») (տե՛ս՝ բազմաթիւ օրինակներ Ստեփան Մալխասեանցի *Հայերէն Բացատրական Բառարան*ում. «կուլ՚տուրա», «ռեվոլ՚վէր», «պալ՚տօ» եւն.):

Տառադարձութեան արուեստում, հետեւաբար, ոչ այնքան մայր լեզուի ինչիւններին հարազատ մնալն է կարեւոր, որքան փոխառու լեզուին ծառայելը: Իսկապէս, ոչ մի հայ իրեն հարց չի տալիս թէ չինարէնից կամ ճապոներէնից վերցրած այսինչ կամ այնինչ անունը հարազա՞տ է հնչում մայր լեզուին: Հայի համար աւելի կարեւոր է, որ անունը բարեհունչ լինի հենց հայերէնում: Ուրեմն ոչ թէ պէտք է աշխատել տառադարձուող անունը առաւելագոյնս յարմարեցնել օտար լեզուի հնչողութեանը, այլ այդ բառի հայատառ հնչողութիւնը յարմարեցնել գրական հայերէնի արտասանութեանը:

Այս սկզբունքի առաջնակարգ հարցերից է, օրինակ՝ վերջավանկ շեշտադրութիւնը: Այսպէս՝ [Պիկասօ/ո՛], եւ ոչ [Պիկա՛սօ/ո]: Նմանապէս՝ [Բայրո՛ն], [Ամերիկա՛], [Կանադա՛]: Հայերէնի առանձնայատկութիւնն է նաեւ նախավերջավանկ շեշտը, երբ վերջին վանկը գաղտնավանկ [ը] հնչիւն է պարունակում: Այս հարցը մենք կը շօշափենք մեր յաջորդ յօդուածներում՝ եւրոպական լեզուների քննութեան ժամանակ: Մեր մերձաւորարեւելեան լեզուների դէպքում շեշտի տեղը էական չէ, քանզի հայերէն կենդանի արտասանութիւնը արաբերէն (եւ միւս լեզուների սակաւաթիւ) բոլոր այլավանկ շեշտերը բնազդաբար վերջին վանկի վրայ է դնում:

Հայերէն տառադարձման կարեւոր խնդիրներից է նաեւ ընդհանուր սկզբունքների պահպանումը՝ մեր լեզուական եւ ուղղագրական տարբեր դրսեւորումների տեսանկիւնից նայած: Քանի դեռ արդի հայերէնը միատեսակ չէ գրական եւ ուղղագրական առումով (երկու ուղղագրութիւն եւ երկու լեզուաճիւղ, ընդհանուր առմամբ՝ երեք «տարատեսակ»[2]), հնչիւնների տառադարձման սկզբունքները անհրաժեշտ է մշակել այնպէս, որ անցումը մի լեզուավիճակից միւսին լինի առաւելագոյնս դիւրին եւ անկորուստ: Որոշակիօրէն՝ դասական ուղղագրութիւնից անցումը պարզեցրած ուղղագրութեանը եւ ընդհակառակը, նմանապէս՝

արեւելահայերէնից անցումը արեւմտահայերէնին եւ ընդհակառակը. այս անցումները պիտի լինեն յստակ, միանշանակ եւ անկորուստ:

Ցանկալի կը լինէր նաեւ, արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի մերձեցման լոյսի ներքոյ, մեր երկու լեզուաճիւղերի համար մշակել տառադարձութեան միասնական կանոններ:

Մի այլ խնդիր. յայտնի է որ որեւէ լեզուի հնչիւնների (ձայնաւորների ու բաղաձայնների) քանակը սահմանափակ է: Եթէ տառադարձող լեզուն չունի ճշգրիտ այս կամ այն ձայնաւորը կամ բաղաձայնը, այն փոխարինում են նման մի այլ հնչիւնով: Նոյն սկզբունքը, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է կիրառել նաեւ տառադարձող լեզուի երկբարբառների ու եռաբարբառների նկատմամբ: Այն է՝ եթէ հայերէնը չունի օտարալեզու այս կամ այն երկբարբառը, ճիշտ չէ հայերէնին պարտադրել մի այդպիսի երկբարբառ՝ ամէն գնով ջանալով մօտ մնալ տառադարձելի աղբիւր լեզուի երկբարբառներին: Այդպիսի օրինակներ են անգլերէնի [əʊ] (**goat** այծ), [ʊə] (**poor** աղքատ), [eə] (**hair** մազ) երկբարբառները, որոնք խորթ են հայի որքան ականջին, նոյնքան էլ աչքին (ենթադրաբար՝ «ըու», «ուը», «էը» տեսքով):

Յիշեցման կարգով այստեղ դնում ենք հայերէնի աւանդական (դասական) երկբարբառներն ու եռաբարբառները:

Ձայնաւորներ՝	**ա**	**ե/է**	**ի**	**ո**	**ու**	**ը**
Երկբարբառ՝ —յ	այ	—	—	ոյ	—	—
Երկբարբառ՝ ե—	եա	—	—	—	—	—
Երկբարբառ՝ —վ/ւ	աւ	եւ	իւ	ով	—	—
Երկբարբառ՝ (ո)ւ—	ուա	ուե / ուէ	ուի	ուո / (ւո)	(ո)ւու	—
Եռաբարբառ՝ ե—յ	եայ	—	—	—	—	—
Եռաբարբառ՝ ե—ւ	(եաւ) / եօ	—	—	—	—	—
Եռաբարբառ՝ (ո)ւ—յ	(ուայ)	—	—	(ւոյ)	—	—

Փակագծերի միջինները հազուադէպ կիրառութիւններ են, մեծ մասամբ՝ յատուկ գրաբարին:

Ինչպէս տեսնում ենք, հայերէնի դասական հնչիւնաբանութիւնը չունի «եյ», «իյ», «ուվ» եւ այլ համակցութիւններ, «ը» տառը ոչ մի երկբարբառ չի կազմում եւն.: Այլ առանձնայատկութիւններից է, օրինակ՝ բառամիջի գաղտնավանկ [ը] հնչիւնի չգրելը: Հայերէնի ուղղագրութիւնը, հետեւաբար, ինչպէս եւ ամէն լեզուի ուղղագրութիւն, ունի իր սահմանափակումներն ու արգելքները:

Երկբարբառներն ու եռաբարբառները որեւէ լեզուի հնչիւնաբանութեան բաղկացուցիչ մասն են, եւ ինչպէս հնարաւոր չէ նոր ձայնաւորներ ու բաղաձայններ յօրինել օտար ձայները աւելի ճշտօրէն տառադարձել փորձելու համար, այնպէս էլ խորթ է նոր երկբարբառներ յօրինել՝ օտար երկբարբառներին աւելի հարազատ մնալու համար: «Եյ» երկբարբառի բացակայութիւնն է որ շատ (արեւելա)հայախօսների դրդում է սխալադարձ

«Շվէյցարիա»ն արտասանել [շվէցարիա] (առանց [յ]ի), եւ նոյնքան սխալադարձ «Էյնշտեյն» անունը հնչեցնել [էնշտէյն] կամ նոյնիսկ [էնշտէն]:

Որպէս եզրակացութիւն՝ ստորեւ մեր սկզբունքներում մենք միշտ առաջնորդուելու ենք ընդունող լեզուի (իմա՝ հայերէնի) հնարաւորութիւնները առաւելագոյնս յարգելու մտահոգութեամբ:

ՄԵՐՁԱԽՈՐԱՐԵԻԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀՆՉԻՒՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սոյն յօդուածում մերձաւորարեւելեան լեզուներ հասկացութեան տակ նկատի ենք առնում նախ եւ առաջ արաբերէնը, պարսկերէնը եւ թուրքերէնը (իր տաճկերէն[3] եւ ադրբեջաներէն տարբերակներով), որոնք թէեւ տարբեր լեզուաընտանիքների են պատկանում, ցուցաբերում են հնչիւնական եւ գրային ակնյայտ ընդհանրութիւններ:

Քրդերէնի մասին դեռեւս վաղ է խօսել, քանզի մի կողմից՝ քրդերէն գրականութիւնը առայժմ սահմանափակ է, միւս կողմից՝ քրդերէն անունները հայերէնում քիչ են արծարծուած: Սակայն այդ լեզուն ժամանակի ընթացքում բարձրանալու է պետական մակարդակի եւ դրա տառադարձման մասին պէտք է շուտով մտածել:

Արաբերէնը հսկայական ազդեցութիւն է ունեցել պարսկերէնի եւ թուրքերէնի (օսմաներէնի ու Ատրպատականի թուրքերէնի) վրայ: Ուստի՝ արաբերէն բառեր զանգուածաբար գտնում ենք ե՛ւ պարսկերէնում, ե՛ւ թուրքերէնում: Պարսկերէնը իր կարգին մեծ ազդեցութիւն է թողել թուրքերէնի վրայ, վերջինիս հաղորդելով ոչ միայն արաբերէն բառեր, այլեւ բուն պարսկերէն: Թուրքերէնն ունի ուրեմն ե՛ւ արաբական, ե՛ւ պարսկական շերտ: Քանի որ այս ամէնը իրար այնքան է խառնուած եւ քանի որ յաճախ դժուար է որոշել թէ այսինչ կամ այնինչ բառը հայերէն որ լեզուից է մտել, մենք նպատակայարմար ենք գտնում այդ երեք լեզուները քննել միասնաբար՝ միեւնոյն անունները միեւնոյն տեսքով հայերէն արտայայտելու համար:

Արաբերէնը, պարսկերէնը եւ թուրքերէնը (իր տաճկերէն եւ ադրբեջաներէն տարբերակներով) ունեն հնչիւնագրային մի շարք ընդհանրութիւններ, եւ այդ լեզուներին ծանօթ լեզուաբանը քաջ գիտակցում է նրանց համար տառադարձութեան ընդհանուր սկզբունքներ մշակելու անհրաժեշտութիւնը (եւ կարելիութիւնը): Այդ չորս լեզուատեսակների պաշտօնական ուղղագրութիւնը մինչեւ վերջին դարս հիմնուած էր արաբական գրի վրայ, եւ նրանցից երեքը (արաբերէնը, պարսկերէնը եւ Ատրպատականի թուրքերէնը) մինչեւ այժմ գործածում են նոյն այբուբէնը՝ նոյն աւանդական ուղղագրութեամբ: Միեւնոյն ժամանակ՝ լատինական այբուբէնի հիման վրայ ստեղծած թուրքերէն (տաճկերէն) եւ ադրբեջաներէն գրերը իրենց ուղղագրութեան տարբեր կէտերով մինչեւ հիմա պայմանաւորուած են նախկին արաբագիր ուղղագրութեամբ:

Սրանք են համառօտաբար այն պատճառները, որ մեզ յուշել են մի յօդուածի մէջ ընդգրկել նշեալ երեք լեզուների չորս լեզուատեսակները[4]:

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԷՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Հայ գիտական շրջանները վաղուց են անդրադարձել թուրքերէն (տաճկերէն) անունների գրութեանը: Օսմաներէնի արաբատառ գրութիւնը լինելով խրթին եւ դժուարընթեռնելի, հայերը ժամանակի ընթացքում ստեղծել են թուրքերէնի հայատառ մի այբուբէն, որը դարեր շարունակ ծառայել է ուսուցանելու եւ տպագրելու թուրքերէն լեզուով մի ընդարձակ գրականութիւն: Այդ գրութիւնը, հիմնուած լինելով արեւմտահայ հնչման վրայ, հետեւեալ տեսքն ունի. բերում ենք հայերէն տառերը (հայերէն այբուբէնի հերթականութեամբ) եւ այսօրուայ թուրքերէն այբուբէնի համապատասխանութիւնները.

ա	գ	ե	զ	է	էօ	ը	թ	ժ	ի	իւ
a	k	y	z	e	ö	ı	t	j	i	ü
լ	խ	կ	հ	ղ	ճ	մ	յ	ն	շ	ու
l	h	g	h	ğ, g	c	m	y, ğ	n	ş	u
չ	պ	ս	վ	տ	ր	փ	ք	օ	ֆ	՚
ç	b	s	v	d	r	p	k	o	f	’

Հայերէն այբուբէնի «բ», «դ», «ծ», «ձ», «ո», «ջ», «ռ», «ց» տառերը անգործածական են հայատառ թուրքերէնում:

Այս տառադարձութիւնը առ այսօր ծառայում է թուրքերէնից փոխառեալ անունները արեւմտահայերէն գրելու համար: Աւելին, սոյն այբուբէնը ծառայում է նաեւ պարսկերէն եւ երբեմն արաբերէն (նաեւ եւրոպական) անունները տառադարձելու. Պապը Ալի (**Bâb-ı Âli**), քիւրտ (**kürt/d**), Տիարպե/էքիր (**Diyarbekir**), Գարահիսար (**Kara hisar**), Պե/էշիքթաշ (**Beşik taş**), պէրպէր (**berber**), մե/էմլիւք (**memlük**), Հալէպ (**Halep/b**), Գումգափու (**Kum kapu**), չէօրէք (**çörek**), Գամըշլի (**Kamışlı**), Գարա-գաշեան (**Kara-kaş**), Գույումճ(ու)-եան (**Kuyum-cu**), եաթաղան (**yatağan**), Եէշիլ Ըրմագ (**Yeşil ırmak**), կէօլ (**göl**), չօճուգ (**çocuk**), Շապին Գարահիսար (**Şebin Karahisar**), Կիւմիւշխանէ (**Gümüş-hane**) եւն.:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բացառութեամբ միքանի հնչիւնների, դասական հայերէնը ընդհանուր առմամբ միատեսակ մօտեցում ունի նշուած երեք լեզուների հանդէպ: Մեր որդեգրած եւ սոյն յօդուածում հիմնաւորած, ինչպէս նաեւ դասական հայերէնի պատմականօրէն կանոնարկած (եւ Հայաստանի ու Սփիւռքի գիտական տարբեր շրջանակներում տարածուած) տառադարձումը հիմնուած է հետեւեալ սկզբունքների վրայ:

Բաղաձայնների տառադարձումը հետեւում է հայերէնի դասական՝ եռաստիճան հնչիւնական համակարգի կանոններին, ուր հայերէն «բ» տառին համապատասխանում է լատիներէն «b» տառը, «դ» տառին՝ «d»ն եւն.: Այդուհանդերձ, քանի որ մերձաւորարեւելեան նշուած երեք լեզուներում բացակայում են պարզ խուլերը («պ, կ, տ, ճ» շարքը), տառադարձումը կատարւում է, ինչպէս եւ աւանդաբար կատարուել է, շնչեղ խուլ՝ «փ, ք, թ, չ» շարքով[5]: Ապագայում ուշադրութեան յատուկ առարկայ պէտք է դառնայ քրդերէն տառադարձութեան սոյն կէտը, քանի որ կ(ու)րմանջի (հիւսիսային) քրդերէնը, ի տարբերութիւն սորանի (հարաւային) քրդերէնի, տարբերում է պարզ եւ շնչեղ խուլերը: Սակայն, քանի որ քրդերէնը այսօր մեր ուսումնասիրութեան ոլորտից դուրս է, մենք անտեսում ենք հարցի այդ տեսանկիւնը:

Արժէ յիշեցնել նաեւ, որ հայերէնի տառադարձումը (որեւէ լեզուից) պէտք է յարգի հայերէնի հնչիւնական ներքին կանոնները, օրինակ՝ «ր»ի եւ «ռ»ի ուղղագրութիւնը՝ այնպէս, ինչպէս այն ընդունուած է հայերէն բառերում: [Յ] հնչիւնի հայերէն գրութիւնը նոյնպէս պէտք է համապատասխանի հայերէնի ուղղագրական կանոններին (այ, ոյ, եա, իւ, եօ...):

Ձայնաւորների տառադարձումը նմանապէս մեծ դժուարութիւն չի ներկայացնում, պայմանով որ այն կատարուի միասնական սկզբունքների հիման վրայ: Հայերէնի հինգ լիարժէք ձայնաւորները՝ «ա, ե/է, ի, ո/օ, ու» («ը»ն համարելով «թերի» ձայնաւոր), բաւարար են արտայայտելու արաբերէնի վեց (երեք կարճ եւ երեք երկար՝ որակապէս նոյն) հնչոյթները, պարսկերէնի վեց, տաճկերէնի ութ եւ ադրբեջաներէնի ինը ձայնաւոր հնչիւնները: Հայերէնում բացակայող ձայնաւոր հնչիւններին երբեմն օգնութեան են գալիս հայերէն երկբարբառները: Մասնաւորապէս՝ արեւելահայերէնը չունի թուրքերէնի «ü» (արեւմտահայերէն տառադարձութեամբ՝ «իւ») եւ «ö» (արեւմտահայերէն տառադարձութեամբ՝ «էօ») հնչիւնները: Աւելի մանրամասն տե՛ս ստորեւ:

Երկբարբառների հարցում հարկաւոր է ուշադիր լինել: Եթէ արաբերէնի ու պարսկերէնի երկուական (եւ իրար զուգահեռ) երկբարբառները դիւրութեամբ հայացւում են («այ» եւ «աւ»), ապա պէտք չէ նոյն «աւ»ի տակ անցկացնել պարսկերէնից եկող մէկ այլ «ow» երկբարբառը, որի տառադարձումը, կարծում ենք, պէտք է զանազանել արաբերէնից եկող նմանագիր երկբարբառից: Դրա մասին աւելի մանրամասն կը խօսենք ստորեւ:

Թուրքերէնի երկբարբառները բազմազան են: Անհրաժեշտ է այդ երկբարբառների տառադարձութեան ժամանակ խուսափել աւելորդագրութիւններից (օր.՝ «յ» տառի գրութիւնը «ի» տառից յետոյ՝ «Դի(յ)արբեքիր» Diyarbekir) եւ ընդհանրապէս՝ հնարաւորինս բաւարարուել դասական հայերէնի երկբարբառներով: Այս վերջին կէտը այդուհանդերձ վիճելի է, քանզի անգիտակից տառադարձումը ձգտում է ամէն մի հնչիւն նոյնութեամբ վերարտադրել:

ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՈՐՈՇ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստորեւ անդրադառնում ենք տառադարձման յատկապէս մի քանի նրբութիւնների, որոնք առ այսօր որոշ խառնաշփոթի առարկայ են եւ գործնականօրէն երբեմն անտեսուած հայագէտներից, մասնաւորապէս՝ արեւելագէտներից:

ա) Բառավերջի ձայնեղների ([բ], [դ], [ջ]) խլացումը («բ», «տ», «ճ»)[6]: Այսպիսի գրութիւնը յատուկ է միայն թուրքերէն (տաճկերէն) լեզուին: Արաբերէնը, պարսկերէնը եւ ադրբեջաներէնը բառավերջին պահպանում են ձայնեղների գրութիւնը, թէեւ այդ լեզուներում էլ հնարաւոր է դիրքային խլացում, իսկ ադրբեջաներէնի համար դա կանոն է: Թուրքերէնը գրում է **kitap**, **Murat**, **ağaç**, իսկ ադրբեջաներէնը՝ **kitab**, **Murad**, **ağac**, թէեւ երկուսն էլ բառավերջում խլացնում են ձայնեղները եւ սրանք համապատասխանաբար արտասանում ինչպէս (արեւելա)հայերէնի [պ], [տ], [չ] հնչիւնները:

Ոչ միայն տառադարձման միօրինակութիւնը, այլեւ ստուգաբանութիւնը պահպանելու նպատակով, ճիշտ ենք համարում հայերէն տառադարձման մէջ պահել (ինչպէս եւ մեր աւանդոյթն է) ձայնեղ բաղաձայնները. գրել՝ «քիթաբ» (ոչ թէ «քիթափ» կամ «քիթապ»), «Մուրադ» (ոչ թէ «մուրաթ» կամ «մուրատ»), «աղաջ» (ոչ թէ «աղաչ»): Սա ոչ միայն միօրինակութիւն է մտցնում տառադարձութեան մէջ (մասնաւորապէս՝ տաճկերէն-ադրբեջաներէն զոյգերում), այլեւ մօտեցնում է թուրքերէն բառերը իրենց պարսկերէն ու արաբերէն արմատներին: Այսպէս եւ թուրքերէն գրած շատ անուններ. **arap/b** (ադրբեջաներէն՝ **ərəb / äräb**) արաբ, **Bağdat/d** Բաղդադ, **Haliç/c** (ադրբեջաներէն՝ **Xalic**) Խալիջ, եւն.:

Զուգահեռաբար, հարկաւոր է զգուշ լինել՝ ձայնեղ բաղաձայններով չտառադարձել այն անունները, որտեղ վերջին բաղաձայնը ստուգաբանօրէն իսկապէս խուլ է. **top** թոփ, **saat** սաաթ, **haç** (ադրբեջաներէն՝ **xaç**) խաչ, եւն.:

բ) Արդի արաբերէնի [ջ] հնչիւնը սերում է հին արաբերէն [գ] հնչիւնից: Այսօր արաբների մեծ մասն այն արտասանում է [ջ]. ամենայայտնի բացառութիւնը Եգիպտոսի արաբերէնն է, ուր այդ տառը մինչեւ այժմ արտասանւում է [գ]: Որոշ երկրներում այն արտասանւում է նաեւ [ժ]: Չնայած Եգիպտոսի արաբերէնի մեծ հեղինակութեանը եւ միաժամանակ՝ հնչիւնի ստուգաբանութեանը, մենք կարծում ենք, որ արաբերէն «ջիմ» տառը աւելի ճիշտ կը լինի տառադարձել «ջ»: Արաբերէնում այդ տառը դարեր իվեր վերածուել է [ջ] հնչիւնի, եւ պարսկերէնը, թուրքերէնն ու ադրբեջաներէնը այն վաղուց փոխառել են որպէս [ջ], երբեք [գ]: Նոյն բառերը հայերէն են անցել նոյնպէս [ջ] հնչումով. ջահնամ/ջհաննամ (հմմտ. եբրայերէն՝ «գեհեն»), ջեննէ/եթ, ջահել եւն.:

Արաբերէնն իր կարգին փոխառել է բառեր (օրինակ՝ պարսկերէնից), որոնք այսօր արտասանում է [ջ]ով. «ջունդ»՝ «գունդ»ից (զօրք), «ջավահիր»՝ «գոհար»ից, եւն.: Այնուամենայնիւ, կարծում ենք, որ այստեղ

էլ պէտք է պահպանել «ջ» գրութիւնը, քանի որ մի կողմից՝ այս բառերը դժուարութեամբ են ընկալւում որպէս փոխառութիւններ, միւս կողմից՝ պահպանելու համար միօրինակութիւնը:

գ) Թուրքերէն «g» եւ «ğ» տառերի տառադարձումը: Արաբապարսկական այբուբէնի «گ» (գաֆ) եւ «غ» (ղայն) տառերը լատինատառ թուրքերէնով գրառուել են «g» եւ «ğ»: Սակայն միշտ չէ որ պարսկական «گ»ին համապատասխանում է թուրքերէն «g»ն, իսկ արաբապարսկական «غ»ին՝ «ğ»ն: «G»ով գրուող թուրքերէն շատ բառեր ծագում են արաբական կամ պարսկական [ղ]ից: Կ. Պոլսի գրական թուրքերէնը [ղ] հնչիւնը գրեթէ կորցրել է եւ «ğ» տառով գրուող բառերը որոշ դիրքերում կարդում է շատ թոյլ [ղ]՝ երկարացնելով նախորդ ձայնաւորը (ետնալեզուային բաղաձայնների շրջապատում), իսկ որոշ դիրքերում՝ [յ] (առաջնալեզուային բաղաձայնների շրջապատում): Միւս կողմից էլ՝ «ğ» գրութիւնը կարող է սերած լինել պարսկերէն [գ] հնչիւնից:

Հետեւաբար, տառադարձելիս անհրաժեշտ է ստուգել թուրքերէն բառերի ծագումը, նրանք համեմատելով արաբերէն, պարսկերէն կամ ադրբեջաներէն համապատասխան բառերի հետ: Ադրբեջաներէնը սովորաբար աւելի հարազատ է մնացել իր պարսկերէն փոխառութիւններին:

Օրինակներ. «ղարբ» («արեւմուտք») - արաբերէն ու պարսկերէն՝ «غرب», պարսկերէն լատինատառ տառադարձութեամբ՝ «qärb», ադրբեջաներէն՝ «qərb», թուրքերէն՝ «garp»: «Դիգ(ե)ար» («այլ, ուրիշ») - պարսկերէն՝ արաբատառ՝ «دیگر», լատինատառ՝ «digär», ադրբեջաներէն՝ «digər», թուրքերէն՝ «diğer» [դիյէր]:

Ինչպէս տեսնում ենք, արաբապարսկական [ղ] եւ [գ] հնչիւնները կարող են թուրքերէնում տալ [թոյլ ղ], [գ] կամ [յ]:

Եզրակացութիւն. արաբական ղայն տառը տառադարձել «ղ», իսկ պարսկական գաֆ տառը՝ «գ», ինչ լեզուից էլ որ լինի տառադարձումը:

դ) Արաբական «կաֆ» կամ «ղաֆ» («ق») տառը: Արաբերէնում այն հնչում է կոկորդային [կղ՛] (ինչպէս վրացերէն «ყ» տառը), պարսկերէնում հնչում է առաւելապէս [ղ] (թէեւ երբեմն, եւ որոշ անձանց բերանում, այն կարող է հնչել ինչպէս արաբերէնում է), թուրքերէն (տաճկերէն) այն հնչում է [ք], իսկ ադրբեջաներէն՝ [գ]: Սա է պատճառը որ միեւնոյն բառը (օրինակ՝ «قلم» «գրիչ») արաբները հնչում են կոկորդային [կղ՛ալամ], պարսիկները՝ [ղալամ], թուրքերը՝ [քալեմ], ադրբեջանցիները՝ [գալամ]: Հարցը նուրբ է, քանզի հայերս նոյնպէս՝ երկար ժամանակ բազմաթիւ բառեր (մեծ մասամբ պարսկերէնի միջնորդութեամբ) փոխառել ենք «ղ» տառով (հմմտ. նոյն «ղալամ» բառը):

Այնուամենայնիւ մեզ թւում է, որ արդի հայերէնի տառադարձումը պահանջում է այդ տառը գրել «կ»ով: Նախ՝ հայերէն «ղ» տառը ստուգաբանօրէն մեզ բերում է թաւ [լ] հնչիւնին, ինչը բոլորովին մեզ հեռացնում է [ղ] հնչիւնից: Երկրորդ՝ սեմական [ق] հնչիւնը հայերէնում տալիս է «կ», ինչ-

պէս օր.՝ «قند»՝ «պանդոկ»: Երրորդ՝ արաբերէնն ինքը օտար [կ]ն տառադարձել է յաճախ հենց նոյն «ق»ով, ինչպէս՝ «قلم», որը փոխառութիւն է յունարէն «κάλαμος»ից, նաեւ՝ «صبر» Կիպրոս, «قط» կատու եւն.: Ի վերջոյ՝ հայերէնում [կ] հնչիւնը կիրառելի է ամէնուր, մինչդեռ [ղ]ն բառասկզբում խորթ է: Այս նկատառումներով՝ մենք համարում ենք, որ արաբական այբուբէնի «կաֆ» տառը բոլոր չորս լեզուներից էլ պէտք է տառադարձել միակերպ, այն է՝ «կ»:

Սա շօշափում է նաեւ Հայաստանի տարածքում գտնուող արաբա-պարսկաթուրքական տեղանունների տառադարձման հարցը: «Կարասու» անունով գետակը կարող է ունենալ «կ»ով եւ «ղ»ով տարբերակներ («Ղարա-սու»): «Ղ»ով տառադարձումը մի ժամանակ տարածուած էր այն աստիճան (պարսկերէնի ազդեցութիւնն էր), որ բնիկ հայերէն անունները նոյնիսկ երբեմն գրում էինք «ղ»ով՝ Ղարս, Ղափան եւն.:

Աւանդաբար եկող եւ լայն տարածում գտած անունները բնականաբար պահպանելու են իրենց աւանդական կերպարը. Ղարաբաղ, Ղարադաղ, Ղարաքիլիսա...

ե) «Կ»ի եւ «ք»ի տարբերութիւնը: Վերը նշածից հետեւեցնում ենք, որ արաբական կաֆ («ق») եւ քաֆ «ک» (տարբերակ՝ «ك») տառերը, ինչպէս էլ որ նրանք այսօր գրուելիս լինեն թուրքերէն («k, ğ»), տառադարձելու ենք համապատասխանաբար «կ» եւ «ք» (համաձայն ադրբեջաներէն «q/k» զոյգին): Օրինակ՝ կալը («قلب» «սիրտ»), բայց՝ քալը («كلب» «շուն»): Բացառութիւն պէտք է անել սակայն բուն պարսկերէն բառերում հազուադէպ հանդիպող կաֆ/ղաֆ («ق») տառի համար, որի համարժէքն է հայերէն «ղ» տառը. օր.՝ ղաշանգ («قشنگ» գեղեցիկ):

զ) Հին թուրքերէնը ունէր ռնգային [նգ] հնչիւնը, որը օսմաներէն գրութեամբ արտայայտւում էր «ڭ» տառով (երբեմն պարզապէս «ک»): Օրինակ՝ **Kara deñiz** («كيز دكره قره» Սեւ ծով): Այստեղից է որ թուրքերէն «**yeñi**» («նոր») բառը տառադարձուել «ենգի» (օր.՝ Ենգիբարեան ազգանուան մէջ): Սակայն մենք չենք կարծում որ այսօր արժէ վերարտադրել հին [նգ] հնչիւնը (այսինքն՝ գրել «դենգիզ»), ժամանակակից մաքուր [ն] հնչիւնը լիովին բաւարար է՝ «դենիզ»:

է) Արաբերէն դաղ/զաղ տառի հայերէն գրութիւնը պատմականօրէն երկակի է՝ «զ» եւ «դ», միաժամանակ հիմնաւորուած պարսկերէն եւ թուրքերէն երկակի գրութեամբ ու արտասանութեամբ: Եթէ այդ տառը մեծ մասամբ [զ] հնչումն ունի («ضرر» զարար՝ վնաս), ապա հազուադէպ հանդիպում է [դ] («ضرب» դարբ՝ հարուած): Պարսկերէն, թուրքերէն եւ ադրբեջաներէն երեք լեզուներն էլ այդ տառը հնչում են [զ]: Հետեւաբար, կարծում ենք որ ճիշտ կը լինի այսուհետեւ այն միշտ տառադարձել հայերէն «զ»ով:

ը) Արաբերէնի «սա» կոչուող տառի («ث») գրութիւնը: Արաբերէն այն հնչում է [θ] (անգլերէն «**th**eatre» բառի «th»ն): Պարսկերէնը, թուրքերէնը եւ ադրբեջաներէնը այն հնչում են ինչպէս հայերէն [ս] հնչիւնը: Թէեւ

պատմականօրէն հայերէն տառադարձութիւններում գտնում ենք նաեւ «թ» (օր.՝ ութմանիկ ցեղանունը, «عثمان» Օսման անունից, հմմտ. **Ottoman**), միօրինակութեան համար այսօր գերադասելի է «ս» տառադարձումը. «عثمان» սարվաթ՝ «հարստութիւն»:

թ) [Հ] եւ [խ] հնչիւնները: Սովորական (հայերէն) [հ] հնչիւնի կողքին, արաբերէնն ունի կոկորդային մի այլ [հ] հնչիւն («ح» գրութեամբ): Մերձաւորարեւելեան միւս լեզուները այն հնչում են ինչպէս սովորական [հ]: Այստեղ տառադարձման դժուարութիւն չկայ, քանզի հայերէնն էլ չունի այդ կոկորդային [հ]ն եւ արաբերէն երկու [հ]երն էլ նմանապէս վերածում է սովորական [հ]ի:

Մեր նկատողութիւնն այստեղ թուրքերէն գրական լեզուի [հ] հնչիւնի վերաբերեալ է: Կ. Պոլսի եւ Փոքր Ասիայի արեւմտեան բարբառների հիման վրայ ստեղծուած գրական թուրքերէնը [խ] հնչիւն այսօր չունի եւ արաբապարսկական բոլոր [խ]երը [հ]ի (կամ աւելի հազուադէպ՝ [ք]ի) է վերածել: Սակայն Փոքր Ասիայի թուրքերէն կենտրոնական ու արեւելեան բարբառները, եւ իհարկէ՝ ադրբեջաներէնը, յստակօրէն զանազանում են [հ] եւ [խ] հնչիւնները: Այսպէս՝ գրական թուրքերէն «**haber**», ադրբեջաներէն՝ «**xəbər**»: Արաբերէնն ու պարսկերէնը նոյնպէս զանազանում են այդ երկու հնչիւնները:

Հետեւաբար՝ գտնում ենք լիովին արդարացուած, որ գրական թուրքերէնի ստուգաբանական բոլոր [խ]երը հայերէն տառադարձենք «խ» (եւ ոչ թէ «հ»): Թուրքերէն «**harap/b**», «**halı**», «**hane**» բառերը (ադրբեջաներէն՝ **xarab**, **xalı**, **xana**) պէտք է գրել «խարաբ», «խալի», «խանա» («e»ի եւ «ı»ի գրութեան համար տե՛ս ստորեւ): **Haberler** լրատուական գործակալութեան անուանումը (ադրբեջաներէն՝ **Xəbərlər**) պէտք է տառադարձել «Խաբարլար»: «Հաբերլեր» ձեւը լրիւ խաթարում է բառի ստուգաբանական տեսքը:

ժ) Արաբերէն-պարսկերէն-թուրքերէն «վաւ» տառը հայերէն ուղղագրելու խնդիրը միայն դասական ուղղագրութեանն է վերաբերում. գրել «վ» եւ «ւ» (ըստ դիրքի՞), թէ՞ ամէնուր՝ «վ»: Արեւմտահայ աւանդոյթը այս տառը միշտ գրել եւ գրում է «վ», անկախ հայերէնի դասական ուղղագրական կանոններից: Աւանդոյթը գալիս է հայատառ թուրքերէնից, ուր բոլոր [վ] հնչիւնները «վ» տառով են արտայայտուած. վաթան, եավրու, գուվվէթ, չէվիք եւն.:

Հարցը նուրբ է քանզի դասական ուղղագրութեան կողմնակիցների մէջ այսօր միաձայնութիւն չկայ: Մենք հակուած ենք համարելու, որ օտար [վ] հնչիւնը կարելի է ժամանակաւորապէս թողնել ամէնուր «վ» տառով, մինչեւ մի հեղինակաւոր խորհուրդ լուծի դասական ուղղագրութեան հետ կապուած այս խնդիրը:

ժա) Առանձնայատուկ ուշադրութեան առարկայ է առաջնալեզուային բաց [ա] (**IPA**[7] [æ]) եւ [է] հնչիւնների զոյգը: Հայերէն գրական լեզուն, ի

տարբերութիւն իր բարբառների, չունի առաջնալեզուային բաց [ա], համապատասխան պարսկերէն [ä]ին եւ ադրբեջաներէն [ə]ին:

Ի հակառակէն, արաբերէնն ունի միայն այս հնչիւնը եւ չունի ետնալեզուային փակ [ա]: Արաբերէնի [ա] հնչիւնի տառադարձումը հետեւաբար դժուարութիւն չի ներկայացնում:

Դժուարութիւնը գալիս է պարսկերէն եւ ադրբեջաներէն երկու [ա]երի առկայութիւնից, ինչպէս նաեւ այն հանգամանքից, որ թուրքերէն գրական լեզուն առաջնալեզուային բաց [ա]ն վերածել է [է] հնչիւնի:

Այս զոյգ հնչիւնների տառադարձման հարցը դուրս է գալիս հայերէն լեզուի շրջանակներից: Արեւմտեան լեզուները, այդ թւում ռուսերէնը, արեւելեան լեզուներին ու նրանցով կազմուած անուանումներին պատմականօրէն հաղորդակից լինելով նախ եւ առաջ Կ. Պոլսի թուրքերէնի միջոցով, աւանդաբար տառադարձել են բաց [ա]ից սերած թուրքերէն [է] հնչիւնը լատինական ու սլաւոնական «e» տառով: Այսպէս՝ պարսկերէն «**käbab**»ը դարձել է «**kebab**», պարսից «Սաֆեան» հարստութեան անունը տառադարձուել է «**Sef-evid/Сеф-евид**»: Ռուսները առ այսօր շարունակում են արեւելեան բաց [ա]երը գրել սլաւոնական «е» տառով՝ **Дербенд** (փոխանակ՝ Դարբանդ), **Эрдебиль** (Արդաբիլ, տաճկերէն՝ **Erdebil**) եւն.: Վերջին ժամանակներս, թերեւս, արեւմտեան լեզուները, աւելի մերձենալով պարսկերէն լեզուին եւ շրջանցելով Պոլսի թուրքերէնի ազդեցութիւնը, փորձում են յարմարուել պարսկերէնի արտասանութեանը եւ բաց [ա]երը աւելի ու աւելի տառադարձում են լատինական «a» տառով՝ **Safavid, Ardabil, Ардебиль...**:

Արեւմտահայերէնը, նոյնպէս ազդուած Կ. Պոլսի թուրքերէն գրական արտասանութիւնից, ինչպէս նաեւ հայատառ թուրքերէնի գրութիւնից, մշտապէս տառադարձել եւ տառադարձում է այս բաց [ա]երը հայերէն «է» տառով. «թէմպէլ», «զէվզէք», «սէպէպ»:

Մի կողմից՝ արեւմտահայերէնի, միւս կողմից՝ ռուսերէնի ազդեցութիւնը իր հետքն է թողել նաեւ արեւելահայերէնի վրայ: Պատմական Հայաստանի նոյնիսկ հայկական անուանումները մեր քարտէզներն ու բառարանները տալիս են յաճախ «է»ով՝ Էրջիշ (Արճէշ), Էքրեկ (Ագարակ), Գեվաշ (Գաւաշ), առանց ըմբռնելու որ [է]ով արտասանութիւնը յատուկ է միայն Կ. Պոլսի գրական լեզուին, որ թուրք ժողովրդի բերանում այդ հնչիւնը բաց [ա]ով է արտասանւում եւ որ թուրքերէնի գրաւոր տեսքը չի արտայայտում տեղական հնչումը:

Այս ամէնի հետեւութիւնն է, որ թէեւ Կ. Պոլսի թուրքերէն գրական լեզուն առաջնալեզուային բաց [ա]ն վերածել է [է]ի, հաշուի առնելով, որ նախ՝ Փոքր Ասիայի թուրքերէն բարբառներից շատերը, ինչպէս նաեւ ադրբեջաներէնն ու պարսկերէնը յստակ տարբերակում են երկու հնչիւնները, այնուհետեւ՝ որ դասական հայերէնը աւանդաբար այն միշտ տառադարձել է «ա», հիմնաւորուած ենք գտնում, որ յստակ զանազանում մտցուի թուրքերէն գրական «e»ն հայերէն տառադարձելու գործում. եթէ

թուրքերէն «e»ն ստուգաբանօրէն «e» է, խնդիր չկայ, իսկ եթէ այն ստուգաբանօրէն բաց «ä» է, ապա այն պէտք է տառադարձուի հայերէն «ա»: Նշենք, որ թուրքերէնում շատ աւելի յաճախ հանդիպում է բաց «ä»ից սերած «e», քան ստուգաբանօրէն մաքուր «e»: Հետեւաբար՝ թամբալ (**tembel**), Արզրում (**Erzurum**), Էրմանի (**Ermeni**), մարդ (**mert/d**), նաֆաս (**nefes**) եւն.:

Թուրքերէնի «e» տառի ստուգաբանութեան գործում կարեւոր գործօն է ադրբեջաներէնը, որը յստակ տարանջատում է երկու հնչիւնները եւ ուղղագրում երկու տարբեր տառով («ə» եւ «e»):

Ուսուցողական օրինակ է Թուրքիայի ներկայ նախագահի անուն ազգանունը՝ **Recep Tayyip Erdoğan**, այսօր տառադարձած՝ Ռեջեփ Թայիփ Էրդողան: Նախ՝ այստեղ պէտք է նկատել բառավերջի «փ»երը, որոնք պէտք է լինեն «բ», քանի որ ստուգաբանօրէն նրանք «բ» են եւ հոլովուելիս էլ վերականգնում են [բ] հնչիւնը: Երկրորդ նկատողութիւնը իհարկէ «e»երի վերաբերեալ է: Այստեղ բոլոր երեք «e»երը ստուգաբանօրէն բաց [ա] են, դրա ապացոյցն է օրինակ ադրբեջաներէն գրութիւնը՝ «**Rəcəb Tayyib Ərdoğan**»: Հետեւաբար, դասական հայերէն ճիշտ տառադարձումը պէտք է լինէր «Ռաջաբ Թայիբ Արդողան»:

Հայերէնի այս տառադարձումը կարեւոր կէտ է, եւ արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի մերձեցման գործում ցանկալի է երկու ճիւղերում էլ վերականգնել հայկական պատմական աւանդական «ա» տառն ու [ա] արտասանութիւնը, որը աւելի հարազատ է հայերէն դասական լեզուին:

ժբ) Արաբերէն այբուբէնի քասրա եւ զամմա (դամմա) ձայնաւոր նշանները արաբերէնում համապատասխանաբար արտայայտում են կարճ [ի] եւ [ու] ձայնաւոր հնչիւնները: Բարդութիւնը գալիս է պարսկերէնից, ուր այդ նշանները արդի պարսկերէնում արտայայտում են [է] եւ [օ] հնչիւնները: Արաբերէնից փոխ առած՝ քասրա ու զամմա պարունակող բոլոր բառերը պարսիկները հետեւողականօրէն արտասանում են [է] եւ [օ] հնչիւններով. քիթաբ/քէթաբ, հիսաբ/հէսաբ, իմամ/էմամ, լուղաթ/լողաթ, մուդիր/մոդիր, մուսաֆիր/մոսաֆէր:

Ինչ վերաբերում է արաբական ծագման նման բառերին, մեր տեսակէտն այն է, որ համապատասխան պարսկերէն բառերը նոյնպէս գրուեն արաբերէնի նմանութեամբ. այլապէս կ'առաջանայ խառնաշփոթ: Հետեւաբար՝ վերը նշեալ ձեւերից ճիշտ են առաջինները:

Դրա հետ մէկտեղ, [է] եւ [օ] հնչիւններ պարունակող բուն պարսկերէն եւ օտար (սակայն ոչ արաբական ծագման) բառերը հարկաւոր է տառադարձել հայերէն «ե/է» եւ «ո/օ» տառերով (զոյգերի տարբերակումը՝ հայերէնի ուղղագրական կանոնների համաձայն). գերան, դանեշ, խոշ, դոխթար, շումար:

ժգ) Նշուած լեզուներից միայն թուրքերէնն ու ադրբեջաներէնը ունեն [ը] հնչիւն, որի համար նրանք ունեն յատուկ տառ՝ «ı» («i» առանց կէտի): Թուրքերէնում եւ ադրբեջաներէնում այս հնչիւնը կարող է հանդիպել բա-

ռի ամէն մի դիրքում՝ բառասկզբին, բառամիջում եւ բառավերջին (ուր նա շեշտակիր է): Թւում է թէ հայերէնը խնդիր պիտի չունենար այդ հնչիւնը տառադարձելու, քանզի նա էլ ունի նման հնչիւն եւ տառ: Իրօք, արեւմտահայերէնը, հիմնուելով հայատառ թուրքերէնի ուղղագրական կանոնների վրայ, միշտ եւ ամէնուր գրում է «ը» տառը. Գըզըլ Ըրմաք, զավալլը:

Հայերէն դասական ուղղագրութիւնը սակայն «ը» տառի լիիրաւ գրութիւնը հանդուրժում է միայն բառասկզբին՝ որոշակի հնչիւններից առաջ, իսկ բառավերջի «ը»ն երբեք շեշտակիր չէ: Հետեւաբար, թուրքերէն [ը]երը տառադարձելիս անհրաժեշտ է ամէն կերպ խուսափել նրանց գրութիւնից բառամիջում, եւ յատկապէս բառավերջում: Օրինակ, խորթ ու անախորժ է «**Ağrı**», «**Iğdır**», «**Kırklareli**» տեղանունները գրել «Աղրը», «Ըղդըր», «Կըրկլարելի» եւն.:

Ինչ վերաբերում է բառավերջի շեշտակիր «ը»ին, կարծում ենք որ լաւագոյնը կը լինէր այն փոխարինել մի այլ ձայնաւորով: Օրինակ՝ թուրքերէն տեղանուններին յատուկ «լը, լի, լու, լիւ» վերջաւորութիւնը կարելի է գրանցել «լու» կամ «լի»: Այսպէս, գերադասելի է «**Kazlı**»ն գրել «Կազլու» կամ «Կազլի» (եւ ոչ «Կազլը»), «**Bardakçı**»ն գրել «Բարդակչի» եւն.:

Գալով բառամիջի «ը»երին, անհրաժեշտ է հնարաւորինս խուսափել դրանց գրութիւնից, այսինքն՝ դրանց վերաբերուել ինչպէս հայերէնի գաղտնավանկ [ը]երին: Օրինակ՝ «**Pınar**» անունը գրել «Փնար» (եւ ոչ «Փընար»), «**Kızıltepe**»ն՝ «Կզլթափա», «**Çaldıran**»ը՝ «Չալդրան» եւն.:

ժդ) Թուրքերէնին եւ ադրբեջաներէնին յատուկ են երկու ձայնաւոր, որ դասական հայերէնը չունի՝ «**ü**» (**IPA [y]**) եւ «**ö**» (**IPA [ø]**): Հայատառ թուրքերէնը եւ արեւմտահայերէնը դրանց համար որդեգրել են «իւ» եւ «էօ» տառակապակցութիւնները: Արեւմտահայերէնին խորթ չէ [ü] հնչիւնը (օրինակ՝ «միւս», «արիւն», «սփիւռք» բառերի մէջ. սակայն բոլոր կրողները չեն որ դրանք [ü] են արտասանում): Դասական հայերէնին եւ արեւելահայերէնին խորթ են այդ հնչիւնները եւ կարծում ենք որ հարկ չկայ դրանք հարազատօրէն տառադարձել:

Թուրքերէն բնիկ բառերի [ü] հնչիւնի տեղ հայերէն պէտք է դնել կա՛մ «իւ», կա՛մ «ու»: Այսպէս՝ **süt/d** սիւդ (կաթ), **kül** քիւլ (մոխիր): Երբ բառը պարունակում է երկու կամ աւելի [ü] հնչիւն, գերադասելի է բաւարարուել սոսկ մի «իւ»ով, բաւական է միայն առաջին [ü]ն տառադարձել հայերէն երկբարբառով: Այսպէս՝ **küçük** քիւչուկ. իմաստ չունի երկու դիրքում էլ «իւ» գրել, դա աւելի դժուարացնելու է արտասանութիւնը:

Զուգահեռաբար՝ թուրքերէն բնիկ բառերի [ö] հնչիւնի տեղ հայերէն պէտք է դնել կա՛մ «եօ», կա՛մ պարզապէս, եւ նախընտրաբար, «ո/օ»: Դասական հայերէնի «եաւ» եռաբարբառի կրճատումով առաջացած «եօ»ն միակ հնարաւոր երկբարբառ ուղղագրութիւնն է: Յիրաւի՝ «եո» երկբարբառ գոյութիւն չունի դասական հայերէնում: Այսպէս՝ **göl** գեօլ, **göz** գեօզ, **görek** չեօրաք/չորաք, **çöl** չեօլ/չոլ, **söz** սեօզ/սոզ: Հայերէնում «եօ»

երկբարբառը յատկապէս աւանդական է «գ», «կ» եւ «ք» քմային բաղաձայններից յետոյ: Մնացած բաղաձայններից յետոյ այն դժուար է արտաբերւում եւ նախընտրելի է նրանից խուսափել:

Բառասկզբի «ü» եւ «ö» տառերը պարտադիր է գրել պարզ «ու» եւ «օ». **üç** ուչ, **üst** ուսթ, **Özalp** Օզալփ. «իւչ», «իւսթ», «Եօզալփ» գրութիւնները լրիւ աղաւաղում են ե՛ւ բառի հնչողութիւնը, ե՛ւ գրաւոր տեսքը:

«**Köprü**» պէտք է գրել «քեօփրու», առաջինը երկբարբառ, երկրորդը՝ պարզ ձայնաւոր: Այստեղ նոյնպէս, ինչպէս եւ «իւ»ի դէպքում, գերադասելի է միեւնոյն բառի մէջ գրել [j] հնչիւն պարունակող միայն մէկ երկբարբառ:

Եթէ թուրքերէն եւ ադրբեջաներէն բառերը բնիկ չեն, այլ գալիս են պարսկերէնից կամ արաբերէնից, պէտք է վերականգնել փոխատու լեզուի ձայնաւորը. **mükemmel** մուքամմալ (եւ ոչ թէ «միւ...»):

Եթէ գոյութիւն ունեն հայերէն, թէկուզ եւ բարբառային, նոյնարմատ բառեր (յաճախ՝ պարսկերէնից ուղղակի փոխառութիւններ), գերադասելի է դրանք հենց այդ տարբերակով էլ գրել. դոշակ (**döşek**), դուքեան (**dükkân**), դուշման (**düşman**), դուզ (**düz**), քուրք (**kürk**):

Պոլսահայ հեղինակներին թերեւս խորթ թուան նման առաջարկութիւնները, սակայն յիշեցնենք, որ խօսքը համահայկական տառադարձութեան մասին է (եւ ոչ՝ պոլսահայ կամ ռուսահայ), եւ հայագիր հեղինակներն այսօր բոլորովին էլ թուրքախօս (կամ ռուսախօս) չեն:

ժե) Վերացական գոյականներ կազմող «աթ» վերջաւորութիւնը գալիս է արաբերէնից եւ լայն տարածում է գտել մերձաւորարեւելեան միւս լեզուներում: Հայերէնում այդ բառերը աւանդուել են հենց «աթ» վերջաւորութեամբ. խասիաթ, ամանաթ, հարաքեաթ, մասլահաթ...

Կարծում ենք՝ անտեղի կը լինի ներմուծել նաեւ դրա զուգահեռ գրական թուրքերէն «էթ» տարատեսակը: Այս արտասանութիւնը յատուկ է միայն Պոլսի գրական թուրքերէնին (տե՛ս վերը): Հետեւաբար՝ **Hürriyet**, պէտք է տառադարձել Հուրիաթ (յարգելով վերոնշեալ բոլոր կանոնները): Նմանապէս եւ՝ **bereket** բարաք(ե)աթ, **cumhuriyet** ջումհուրիաթ (առանց «յ»-ի), **lezzet** լազաթ, **millet** միլլաթ (այսօր՝ միլլէթ[8]), **selâmet** սալամաթ... աւանդական է դարձել «վիլայէթ» ձեւը:

ժզ) Վերջին միքանի դարում պարսկերէնի հետեւեալ վերջաւորութեան արտասանութիւնը թեթեւակի փոփոխութիւն կրեց եւ այժմ ժամանակակից պարսկերէնը վերջայանգ «հա հաւազ» (կամ «հէ») ձայնաւոր տառը («ـه») արտասանում է [է], ի տարբերութիւն նախկին, եւ այժմ էլ Աֆղանստանում ու Տաջիկստանում դեռեւս հնչող, բաց [ա]ի. «خانه» [**xane**] / [**xanä**]: Հարց է ուրեմն՝ ինչպէ՞ս տառադարձել՝ «խանէ՞» թէ՞ «խանա»:

Հայերէն աւանդոյթը այդ վերջաւորութիւնը սովոր է տեսնել գլխաւորապէս «ա» տարբերակով. փանջարայ, սուփրայ, շիրայ, թաւայ, քուֆթայ (քիւֆթա), թազայ[9]: Նոյնիսկ թուրքերէնից եկող՝ «դօլմա»ն պարսկերէն հնչում է [**dolme**]: Զուգահեռաբար՝ ունենք պարսկերէն «զադէ», «նամէ» ձեւերը:

Մեր կարծիքն է՝ պահել եւ այսուհետեւ շարունակել տառադարձել աւանդական «ա» վերջաւորութեամբ, առանց վերջին «յ» տառի գրութեան, որը փոխառութիւններում աւելորդ է (սա իհարկէ ուղղագրական հարց է)։ Միաժամանակ՝ յարգել աւանդոյթի ուժ ստացած «է»ով ձեւերը. «Շահնամէ» (թէեւ, օրինակ՝ ադրբեջաներէն՝ «Şahnamə», եւ հայերէն կարող էր լինել «Շահնամա», նոյնիսկ՝ «Շահնամակ»)։

ժէ) Արաբերէնը ունի երկու երկբարբառ («و» եւ «ي»), որոնք տարբեր ձեւերով են արտայայտւում միւս լեզուներում (տե՛ս յաւելուած աղիւսակը)։ Հայերէն սրանք գերադասելի է գրել «աւ» եւ «այ»՝ դասական հայերէնի յայտնի երկու երկբարբառների տեսքով։ Իրօք՝ «այ» երկբարբառի կողքին հայերէն տառադարձութիւններում գտնում ենք նաեւ «էյ» տարբերակը, իսկ «աւ»ի փոխարէն՝ աւելի յաճախ «էվ», երբեմն՝ «ով»։ Երկուսն էլ խոտելի են դասական հայերէնի համար եւ, միօրինակութիւն մտցնելու նպատակով, գերադասելի են «աւ» եւ «այ» երկբարբառները։ Օրինակներ. արաբերէն «بيت», պարսկերէն «بیت/beyt», թուրքերէն ու ադրբեջաներէն «beyt», հայերէն՝ «բայթ», արաբերէն «حيوان», պարսկերէն «حیوان/heyvan», թուրքերէն «hayvan», ադրբեջաներէն «heyvan», հայերէն՝ «հայվան»։

Միաժամանակ՝ պարսկերէնն ունի (մեծ մասամբ՝ արաբական ծագման) «و» երկբարբառը՝ ժամանակակից [ow] արտասանութեամբ։ Հայերէնին խորթ է այս երկբարբառը եւ նա այն փոխարինում է կա՛մ «ով» երկբարբառով (գրութեան մէջ՝ «դօվլաթ»), կա՛մ պարզ «ու» ձայնաւորով՝ «Ֆիրդուսի»։

Պարսկաստանի քաղաքական գործիչ **Hassan Rouhani** (**Rohani**, **Rowhani**) ազգանունը տարբեր ձեւերով է այսօր գրւում. Ռուհանի/Ռոհանի/Ռոուհանի։ Վերջին ձեւը ամենախոտելին է։ Անցանկալի է նաեւ «ո»ով տարբերակը։ Միեւնոյն ժամանակ՝ արդի հայերէնի համար ժամանակավրէպ կը լինէր տառադարձել «Ռովհանի»։ Մեզ թւում է որ «ու»ով տարբերակը ամենաընդունելին է այս պարագայում։ Հետեւաբար՝ «Ռուհանի» գրութիւնը առաւել գերադասելի ձեւն է[10]։

Ինչ վերաբերում է բառավերջի «ow»ին, ապա դրա լաւագոյն տառադարձումը կը լինէր «ով» ձեւը. օր.՝ «نو/now» նով («նոր») (օր.՝ «Նովռուզ»ի մէջ, գրւում է նաեւ «Նոռուզ»)։ Կարծում ենք որ պարզ «ո» ձայնաւորը բաւարար չէ, իսկ բառավերջում «ու» գրելը տալիս է պարզ ձայնաւոր հնչիւն, որը նոյնպէս մերժելի պէտք է համարել։ Նմանապէս, օր.՝ «گرو/gerow» («գրաւ») բառը լաւագոյնն է տառադարձել «գերով», եւ ոչ՝ «գերո» կամ «գերու»։ Այստեղ չենք քննարկում բառի թարգմանութեան հարցը։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ եթէ բառավերջի «ով»ով տառադարձած մասնիկը (օր.՝ «նով») նոր բարդութիւն է կազմում, այն պահպանում է իր «ով» վերջաւորութիւնը եւ չի վերածւում «ու»ի։ Հետեւաբար՝ «Նովռուզ» եւ ոչ՝ «Նուռուզ»։

ժը) Պարսկերէն, ինչպէս նաեւ թուրքերէն ու ադրբեջաներէն արտասանութիւնները միտում ունեն փափկացնելու առաջնային բաց [ա]ին նախորդող քմային [գ] եւ [ք] հնչիւնները: Թուրքերէն ուղղագրութիւնը դրանք արտայայտում է «**gâ**», «**kâ**» տեսքով: Հայերէն՝ ստուգաբանօրէն ճիշտ կը լինէր չարտայայտել այդ փափկացումը եւ գրել «գա», «քա», ինչպէս գրական լեզուն սովոր է գրել՝ «Գաւառ», «Գառնի»: Սակայն ժողովրդական աւանդոյթը փափկացման կողմն է (գեադա, գեաւուր, քեալլա, քեար), եւ թւում է թէ յարմար է որոշ դէպքերում, փափկութիւնը ընդգծելու համար, տառադարձել «գեա», «քեա». օր.՝ «**käbab**»՝ «քեաբաբ», «**käläm**»՝ «քեալամ»:

ժթ) Թուրքերէն եւ ադրբեջաներէն որոշ բառերում բառավերջի [ք] հնչիւնը երբեմն փափկում է եւ դառնում [յ]. «**gök**» → «**göy**», «**bek**» → «**bey**»: Այսպիսի դէպքերում ցանկալի է հնարաւորինս վերականգնել բառի ստուգաբանութիւնը եւ այն գրառել լրիւ տեսքով՝ «գեօք», ինչպէս՝ Երեւանի Կապոյտ մզկիթի անուանման թուրքերէն (ադրբեջաներէն) տարբերակը՝ «Գեօք ջամի» (փոխանակ՝ «Գեօյ ջամի»):

ի) Թուրքերէն լեզուն (ե՛ւ տաճկերէնը, ե՛ւ ադրբեջաներէնը) բառավերջում չի ընդունում երկու բաղաձայնների կուտակում եւ փոխառեալ օտար բառերում, բարեհնչութեան համար, դրանց միջեւ ներդրում է մի ձայնաւոր: Այսպէս՝ արաբերէն «**fikr**» («միտք») բառը թուրքերէն դարձել է «**fikir**» (միաժամանակ՝ բառի շեշտը տեղափոխելով վերջին ձայնաւորի վրայ): Գիր առ գիր տառադարձելու դէպքում բառը հայերէն կը լինէր «ֆիքիր»: Նմանապէս՝ «**rasm**» («նկար») թուրքերէն տալիս է «**resim**»: Այնուամենայնիւ, մի կողմից՝ արաբերէն եւ պարսկերէն գրութիւններում այդ յաւելեալ ձայնաւորը բացակայում է (եւ ադրբեջաներէնն էլ յաճախ հետեւում է պարսկերէնին), միւս կողմից՝ հայերէնն էլ ունի գաղտնավանկ [ը] հնչիւն, որը յաճախ ի յայտ է գալիս բառավերջում երկու բաղաձայնների կուտակման դէպքում: Թուրքերէնում նմանապէս՝ այդ ձայնաւորը կայուն չէ, այն կորչում է բառին նոր վանկեր աւելացնելու ժամանակ. «**fikir**»/«**fikrim**» («միտքս», հմմտ. հայերէն «աստ[ը]ղ»/«աստղ[ը]ս»): Նշուած պատճառներով կարծում ենք, որ գերադասելի է թուրքերէն այդ բառերը գրել առանց այդ յաւելեալ կորչող ձայնաւորի՝ «ֆիքր», «ռասմ»:

իա) Արաբերէնի (ինչպէս նաեւ միւս լեզուների) կրկնակ բաղաձայնները (շադդա(թ)/թաշդիդ) հայերէն ճիշտ կը լինի գրել միայն մէկ բաղաձայնով, ինչպէս եւ է հայերէն աւանդոյթը: Օրինակ՝ Նասրադ(դ)ին, Թայ(յ)իբ, դուք(ք)եան, լազ(զ)աթ, համ(մ)ամ բառերում մէկ բաղաձայնը լրիւ բաւարար է անունը գոհացուցիչ կերպով տառադարձելու համար: Սակայն որոշ դէպքերում, բացառութեան կարգով, երբ կրկնակ բաղաձայնը իրօք լսելի է հայերէնում, կարելի է այն երկու տառով գրել, օր.՝ «միլլէթ», մանաւանդ, երբ երկու բաղաձայնները քերականական երկու տարբեր մասերի են վերաբերում, օր.՝ «զավալ-լի»:

իբ) Տառադարձման դժուարութիւններից է նաեւ արաբերէնի որոշեալ յօդի հարցը, օրինակ՝ Ալ-Ռիադ, Էլ-Ռիադ, Ար-Ռիադ, Էր-Ռիադ, Ռիադ, գրել մեծատա՞ռ, թէ՞ փոքրատառ, միասի՞ն, թէ՞ գծիկով: Մեր մօտեցումն է՝ առաւելագոյնս խուսափել յօդը գրելուց: Յիրաւի՝ յօդը դժուար է համարել անուան բաղկացուցիչ մաս, եւ անունը ընկալելի է նոյնիսկ առանց յօդի: Օրինակ՝ Հաագա[11] քաղաքի անունը հոլանդերէն յօդով է (**Den Haag**): Սակայն այդ յօդը արեւելահայերէն արտայայտուած չէ (թէեւ այլ լեզուներում կարող է լինել՝ **The Hague**, **La Haye**, **La Haya**, արեւմտահայերէն՝ Լա Հէյ): Ինչպէս տեսնում ենք, այստեղ խնդիրը դուրս է գալիս հնչիւնական տառադարձման ոլորտից եւ մտնում տառադարձութեան քերականական հարցերի շրջանակ:

Որպէս եզրակացութիւն՝ մեր մօտեցումը հետեւեալն է: Եթէ բառի ծագումը արաբերէն է, տառադարձումը կատարում ենք՝ յարգելով նախ եւ առաջ արաբերէնի հնչիւնական օրէնքները: Եթէ բառը պարսկերէն ստուգաբանութիւն ունի, տառադարձումը պարսկերէնի կանոնների համաձայն է: Եթէ բառը թուրքերէն է, տառադարձումը տաճկերէնի եւ ադրբեջաներէնի ընդհանուր օրէնքների համաձայն է:

Նոյն մօտեցումը նաեւ եւրոպական կամ սլաւոնական լեզուներից մերձաւորարեւելեան լեզուներ մտած բառերի վերաբերեալ է: Աւելի հաճելի է եւ գրագէտ՝ պահպանել մեզ՝ հայերիս ծանօթ եւրոպական եւ սլաւոնական ձեւերը (օր.՝ պանտալոն, փխնկ.՝ փանթալոն):

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք այստեղ շօշափեցինք մերձաւորարեւելեան լեզուների տառադարձութեան ոչ սակաւ նրբութիւններ, սակայն այդքանով չի վերջանում այդ լեզուների տառադարձութեան պատկերը: Ամէն լեզուի տառադարձութիւնը բարդ ու բազմակողմանի երեւոյթ է՝ կապուած ոչ միայն իր ներքին հնչիւնաբանութեանն ու քերականական կանոններին, այլեւ արտաքին՝ այլ լեզուներին առնչուող զանազան հանգամանքներին: Տառադարձութեան համակարգը երբեք իր կատարեալ աւարտին չի հասնում: Ժամանակի հետ փոխւում է փոխատու լեզուն, փոխւում է եւ փոխառու լեզուն, եւ կանոնները ստիպուած են լինում յարմարուելու նոր իրողութիւններին:

Ուրեմն անհրաժեշտ է, որ մեր՝ հայոց լեզուն մշտապէս պատրաստ լինի որեւէ օտար լեզուից որեւէ բառ գրագէտ տառադարձելու խնդրին: Այդ նպատակին հասնելու համար մենք հետեւեալ մօտեցումն ու անհրաժեշտ քայլերն ենք ակնկալում:

ա) Տառադարձութեան խնդիրը անհատական լուծում չի կարող ունենալ: Մենք այստեղ չենք տուել տառադարձութեան վերջնական համակարգը եւ մէկընդմիշտ աւանդել այն հասարակութեանը: Խնդրին պէտք է մօտենալ հանրովին, եւ լեզուաբանների, հայագէտների ու տարբեր գիտութիւնների մասնագէտների համատեղ ջանքերով մշակել

տառադարձութեան սկզբունքները: Միայն այս ճանապարհով նրանք ընդունելի կը լինեն լայն հասարակութեանը:

Միեւնոյն ժամանակ՝ գործը ճիշտ ճանապարհի վրայ դնելու համար անհրաժեշտ է գիտականօրէն հիմնաւորել եւ պաշտօնապէս ճանաչել որպէս այդպիսիք աշխարհի բոլոր այն կարեւոր լեզուները, որոնք կարող են աղբիւր ծառայել հայերէնի տառադարձութեան համար: Դա կը նպաստի հայերէնի տառադարձութեան կանոնաւորմանը եւ լեզուն հեռու կը պահի տարբեր ու զանազան լեզուներից անհատաբար տառադարձելու ցանկութեան խառնաշփոթից:

բ) Մշակուած, գիտականօրէն հիմնաւորուած եւ զանազան մասնագէտների համատեղ աշխատանքով ընդունած սկզբունքներն ու կանոնները անհրաժեշտ է այնուհետեւ հրապարակել եւ յանձնել լեզուի վերահսկողութեան պետական մարմիններին եւ լեզուի տեսչութիւններին, ինչպէս նաեւ բոլոր այն հիմնարկութիւններին (տեղեկատուական, լրագրական, ուսումնական, քարտէզագրական եւ այլ), որոնք իրենց առօրեայ գործունէութեան մէջ առնչւում են տառադարձման հարցերին: Յետագայ գիտական եւ ուսումնական (նախ եւ առաջ՝ դպրոցական) տպագիր գրականութիւնը պարտաւոր է լինելու յարգել մշակուած կանոնները:

գ) Կարեւոր խնդիր է լեզուաբան մասնագէտների շարունակական պատրաստումը: Լեզու դասաւանդող ուսումնավայրերը եւ լեզու ուսումնասիրող հիմնարկութիւնները մեծ պատասխանատուութիւն ունեն այստեղ: Անհրաժեշտ է որ հայաստանեան իւրաքանչիւր սերունդ ունենայ գոնէ նուազագոյն թուով մասնագէտներ՝ այս կամ այն առանցքային լեզուների բնագաւառում:

դ) Ինչպէս ամէն հարցում, այստեղ եւս պետական մարմինները պէտք է իրենց վրայ վերցնեն հայոց լեզուի հետ կապուած եւ օրէնսդրական որոշում պահանջող խնդիրները: Առանց պետական վերահսկողութեան՝ հասարակութիւնը ինքնակամ չի կարող ինքն իրեն պարտադրել այդպիսի կնճռոտ հարցեր: Մանաւանդ՝ աշխարհասփիւռ հայութիւնը, որը չունի համահայկական որեւէ օրէնսդիր մարմին:

Հայոց լեզուի, մասնաւորապէս տառադարձութեան, ներկայ իրավիճակը երբեք չենք կարող կոչել «բարձիթողի վիճակ»: Հայ եւ օտար լեզուաբաններ, հայագէտներ ու իմաստասէրներ դարեր շարունակ աշխատել են խնդրի վրայ եւ հայոց լեզուն բարձրացրել համաշխարհային մակարդակի: Շատ մեծ է մեր յունաբան ու լատինաբան դպրոցների, Մխիթարեան միաբանութեան, Հայաստանի Ակադեմիայի, Լեզուի հիմնարկի եւ շատ ու շատ այլ հաստատութիւնների ու կազմակերպութիւնների ներդրումը այս ոլորտում: Հայոց լեզուն այդ առումով շատ ու շատ առաջ է աշխարհի բազմաթիւ լեզուներից:

Միեւնոյն ժամանակ չենք կարող պնդել, որ արդի վիճակը գոհացուցիչ է, եւ որ այլեւս ոչինչ չկայ անելու: Ինչպէս վերը նշեցինք,

տառադարձութեան սկզբունքների մշակումը յարատեւ գործընթաց է եւ այն պէտք չէ անտեսել երկար ժամանակ: Մասնաւորապէս՝ խորհրդային տարիներին Հայաստանում հայոց լեզուի մեկուսացումը համաշխարհային մեծ լեզուներից մեզ բերեց որոշակի նահանջի այս ոլորտում: Բացասական ոչ նուազ դեր է խաղում նաեւ հայոց լեզուի երկփեղկութիւնը արեւմտահայերէն ու արեւելահայերէն ճիւղերի:

Այդուհանդերձ, վերջին տարիներին նկատում ենք գիտակցութեան որոշակի աճ եւ յստակ ցանկութիւն օտար բառերի հայերէն տառադարձումը դնելու վերահսկելի հունի մէջ: Սա մի երկարատեւ ու ջանապահանջ աշխատանք է, որը սակայն բերելու է միայն գոհունակութիւն եւ նպաստելու է մեր լեզուի ամրապնդման ու համախմբման գործին:

ԱՂԻՒՍԱԿ ՀՆՉԻՒՆՆԵՐԻ

արաբա-պարսկե րէն տառերը	տառի անուանումը լատինագիր	տառի անուանում ը հայագիր	արաբեր էն ինչումը IPA	պարսկե րէն (լատինա գիր)	տաճկերէն (արդի ուղղա-գրութիւն)	աղրբեջա-ներէն (արդի ուղղգրթն)	արեւմտ ա-հայերէն տառդր.	դասկն. հայերէն տառդձ.
ب	ba	բա	b	b	b (-p)	b	պ	բ
پ	pa	փա (փէ)	—	p	p	p	փ	փ
ف	fa	ֆա	f	f	f	f	ֆ	ֆ
د	dal	դալ	d	d	d (-t)	d	տ	դ
ت	ta	թա	t	t	t	t	թ	թ
ط	Ṭa	տա	t'	t	t	t	թ	թ
چ	ǧim	ջիմ (գիմ)	ʤ , ʒ , ʒ	j	c (-ç)	c	ճ	ջ
ڃ	čim	չիմ	—	č	ç	ç	չ	չ
ك	kaf	ք(ե)աֆ	k	k	k	k	ք	ք
گ	gaf	գ(ե)աֆ	—	g	g / ğ	g	կ / յ	գ
ڭ		ն(ե)աֆ	—	—	n(g)	n(g)	ն(կ)	ն(գ)
ق	qaf	կաֆ (ղաֆ)	q	q	k	q	գ (ղ)	կ (ղ)
غ	ġayn	ղայն	ɣ	q	g / ğ	ğ / q	կ / ղ	ղ
ز	zayn	զայն (զա)	z	z	z	z	զ	զ
ژ	že	ժա (ժէ)	—	ž	j	j	ժ	ժ
ذ	ḏal	զալ	ð	z	z	z	զ	զ
ض	Ḍad	դադ (զադ)	d' , ð'	z / (d)	z / (d)	z / (d)	զ / տ	զ / դ
ظ	Ẓa	զա	z' , ð'	z	z	z	զ	զ
س	sin	սին	s	s	s	s	ս	ս
ص	Ṣad	սադ	s'	s	s	s	ս	ս
ث	ṯa	սա	θ	s	s	s	ս	ս
ش	šin	շին	ʃ	š	ş	ş	շ	շ
ه	ha	հա հաւազ	h	h	h	h	հ	հ
ح	Ḥa	հա հուտուի	ħ	h	h	h	հ	հ
خ	ḫa	խա	x	x	h	x	խ	խ
ل	lam	լամ	l	l	l	l	լ	լ
ر	ra	ռա (րա)	r	r	r	r	ր	ր / ռ

արաբա-պարսկերէն տառերը	տառի անուանումը լատինագիր	տառի անուանումը հայագիր	արաբերէն հնչումը IPA	պարսկերէն (լատինագիր)	տաճկերէն (արդի ուղղագրութիւն)	ադրբեջաներէն (արդի ուղղագրութ)	արեւմտահայերէն տառդր.	դասն. հայերէն տառդծ.
م	mim	միմ	m	m	m	m	մ	մ
ن	nun	նուն	n	n	n	n	ն	ն
و	waw	վաւ	w	v	v	v	վ	վ / ւ
ي	ya	յա (իա)	j	y	y	y	ե / յ	յ / ի / ե
ع	'ayn	այն	ʔʕ	ʾ	ʾ	ʾ	—	—
ء	hamza	համզա(թ)	ʔ	ʾ	ʾ	ʾ	—	—
ا	alif	ալիֆ	—	—	—	—	—	—
ا / آ			a:	ā (å)	a	a	ա	ա
ó			a	ā	a	a	ա	ա
ŏ			a	ă	e	ə	է	ա
ŏ			—		e	e	է	ե / է
ي	ya	յա (իա)	i:	i	i	i	ի	ի
ọ			i	e	i	i	ի	ի
ọ / ي			—	—	ı	ı	ը	ը / ի / ու
و	waw	վաւ	u:	u	u	u	ու	ու
ó			u	o	u	u	ու	ու
ó / و			—		ū	ū	իւ	իւ / ու
ǒ / و			—		o	o	o	ո (o)
ǒ / و			—		ŏ	ŏ	էօ	ո / եօ
ة			a(t)	ät	et	ət	էթ	աթ
ه			—	e	e	ə / a	է	ա (է)
و			aw	ow	ev / av	əv	էվ / ավ	աւ
و				ow				ով / ու
ي			aj	ey	ey / ay	ey / ay	էյ / այ	այ
ـَـ / ـگ			ka	gä / kä	gâ / kâ	gə / kə	-կեա	-գ(ե)ա
ك					-y	-y	-ք / -յ	-ք / -կ
			fikr(u) / rasm(u)	fekr / räsm	fikir / resim	fikir / rəsm	ֆիքր / րէսիմ	ֆիքր / ռասմ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] ***Ծխ.***- Խմբագրութիւնս փոխած է **հեղինակին** «Մի քանի, ի վեր, այբուբեն, Թաթարաստան» բառերուն ուղղագրութիւնը. պահպանուած են – բացառաբար - **հեղինակին** ուղղագրական միւս մօտեցումները:

[2] Անկախութեան օրերից **իվեր**, կարծես թէ այլեւս **միաձայն** ընդունելութիւն է գտել այն տեսակէտը, որ արեւմտահայերէնը միայն դասական ուղղագրութեամբ է ընկալելի, եւ միայն արեւելահայերէնն է, որ դեռեւս երկու ուղղագրութիւն **ունի**:

[3] Ադրբեջաներէնից տարբերելու համար՝ Թուրքիայի գրական **լեզուն** երբեմն կը կոչենք «տաճկերէն»:

[4] Տաճկերէնն ու ադրբեջաներէնը երբեմն մէկ լեզուի երկու տարատեսակներ **են** համարւում: Ճիշտ է այդ մօտեցումը, թէ՝ ոչ, մեր քննութեան շրջանակից այսօր դուրս է մնում:

[5] «Կ»ի իւրայատուկ գրութեան համար տե՛ս՝ ստորեւ:

[6] Յօդուածում ամէնուրեք, ուր խօսքը գնալու է ինչիւնի (կամ ինչոյթի) մասին, համապատասխան նիշը դնելու ենք անկիւնաւոր փակագծերի մէջ, սակայն՝ առաւելապէս հայերէն տառերով: Ուր խօսքը գնում է տառի (գրաւոր նիշի) մասին, նիշը դնում ենք չակերտների մէջ:

[7] International Phonetic Association (IPA) կազմակերպութեան ինչիւնային միջազգային այբուբեն:

[8] Ստ. Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան*, այս բառի տակ:

[9] Ուղղագրութեան վերջին «յ» տառը Մալխասեանցի բառարանի որդեգրածն է:

[10] Յստակ է, որ ազգանունը սերում է արաբերէն արմատներից, սակայն վարանում ենք այդքան հեռու գնալ եւ անունը տառադարձել Ռաւհանի (գուցէ՝ Ռօհանի՞):

[11] Մենք այստեղ չենք քննարկում «Հասգա» անուան (որն ակնյայտօրէն ռուսերէնից է) տառադարձութեան ճշտութիւնը:

THE PRINCIPLES OF TRANSLITERATING FOREIGN PROPER NAMES INTO ARMENIAN: PART I – MIDDLE EASTERN LANGUAGES

(Summary)

ARMEN MICHAELIAN
armen_michaelian@yahoo.com

The problem of transliteration of foreign proper names is more than painful for Armenians. Unlike ancient times, when Armenian was united, today a foreign word is transliterated into Armenian in three or four ways, due to the lack of canonized laws. The study is the first section of a series of articles examining the principles of transliterating various languages into Armenian. The author defines transliteration and its purpose, stating that whatever the principles and methods of transliteration, the final sounds and phonetics should not be alien to the Armenian ear and contradict the phonetic principles of the Armenian language. He notes that while transliterating one need to pay more attention to the laws of the borrowing language than to staying close to the sounds of the source language.

This study is dedicated to four Middle Eastern languages, Arabic, Persian, Turkish and Azerbaijani. The principles adopted in this study give priority to the historically established traditional transliteration of classical Armenian, which is also adopted in different scientific circles of Armenia and the Armenian Diaspora. The transliteration of consonants follows the rules of the classical three-level phonetic system of the Armenian language. Using several subtleties, the author proposes a set of norms regarding a united transliteration for the above-mentioned four languages.

The author notes that the canonization of transliteration is a complex and multifaceted phenomenon that cannot be resolved individually. It is a long process which contributes to the strengthening and consolidation of the Armenian language. The author suggests that these issues should be approached publicly, with the joint efforts of specialists in various sciences, and that principles of transliteration should be developed, published and handed over to state language control bodies and language inspectorates. Eventually, the latter should take on the task of transforming the decisions into normative mandatory laws.

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ *ՕՐԵՐԻ ՊՍԱԿԸ* ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԼԵԶՈՒԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ
susannagrigoryan@ysu.am

Կոստան Զարեանի (1885–1969) գրական հարուստ ժառանգութիւնը հայ գրականութեան լաւագոյն էջերից է: Նրա ստեղծագործութիւններն աչքի են ընկնում հեղինակի հզօր երեւակայութեամբ, պատկերաւոր մտածողութեամբ, խոր ու խոհական մտքով, «*կեանքի շարունակական լիցքերի ներգօրութեամբ, մարդկային ճակատագրի ու հոգեղէն արժէքների անդրադարձումներով, բանաստեղծական պատկերների գաղափարական հագեցուածութեամբ եւ իրերի ու երեւոյթների ոգեղէն ընկալումների յայտնատեսութեամբ*»[1]: Իրեն առաջին հերթին բանաստեղծ համարող հեղինակն իր ստեղծագործութիւններում դրսեւորում է տաղանդաւոր արուեստագէտի, բեղմնաւոր գրողի, գեղարուեստական խօսքի մեծ վարպետի անառարկելի կարողութիւններ՝ իր տեղը հաստատելով հայ դասական գրողների ընտանիքում:

Զարեանը իր կեանքի ընթացքում հրատարակել է բանաստեղծութիւնների մէկ գիրք՝ *Օրերի Պսակը*: Գիրքը տպագրուել է 1922ին[2] Կ. Պոլսում եւ երկար ժամանակ ուշադրութեան չի արժանացել: Այն ներկայացնում է «*բանաստեղծական լինելութեան մի հոյակապ վիճակ եւ իմաստաւոր ընթացք, որ տանում է դէպի կատարեալ բանաստեղծութեան դրսեւորում: Այստեղ Մեծ Եղեռնի ահազարհուր ուրուականը իր սուրերը նետում է գրեթէ բոլոր էջերում: Ողբերգութիւնը ահռելիօրէն ներկայ է բանաստեղծութիւնների մեծ մասի մէջ, իսկ «Ասացուածներ» շարքը բազմաձայն ու հզօր հոգեհանգիստ է, ռեքվիէմ, որի խոր եւ համակողմանի ընթերցումը սպասում է իր վերլուծողին*»[3]:

Յետագայում Զարեանը նորովի է գրում այն՝ նոյնութեամբ պահպանելով գրքի կառուցուածքը, բանաստեղծական բաժինները, վերնագրերն ու բովանդակութիւնը: Շատ բանաստեղծութիւններ դարձել են խօսքաոատ, պատկերները, թեմատիկ հատուածներն ընդարձակւում են, խորհրդապաշտական կամ ապագայապաշտական լեզուամտածողութիւնը իր տեղը զիջում է տպաւորապաշտ զգայականութեանը եւ արտայայտչապաշտ պատկերավառ խօսքին: Հիմնականում անփոփոխելի է մնացել «Ասացուածներ» շարքը, որի բովանդակութիւնը՝ նուիրական թեմաներն ու դրանց բանաստեղծական իրականացումը սրբազան յիշատակների թելադրանքով, բանաստեղծին հեռու են պահել դրանք փոփոխութեան ենթարկելու մտքից[4]:

Զարեանի բանաստեղծական աշխարհը խիստ հարուստ է ու բազմաշերտ եւ ենթիմաստային խորը հագեցուածութիւն ունի: Ակնյայտ է, որ նա

մի ինքնատիպ բանաստեղծ է՝ բացառիկ օժտուածութեամբ, գեղագիտական ուրոյն զգացողութեամբ: Նրա բանաստեղծութիւններում երեւոյթներն ու առարկաներն ունեն իրենց անբացատրելի գոյնը, եւ երբեմն այնպիսի տպաւորութիւն է, ասես բանաստեղծը ներքուստ լցուած է անհաւանականն ու արտառոցը պատկերելու լուռ մղումով: Սակայն իրականում նա հենց այդպէս էլ զգում է աշխարհն ու մարդկանց եւ թղթին յանձնում իր զգացածը, որ անմիջապէս դառնում է նաեւ ընթերցողինը: Այս առանձնայատկութիւններն առաջին հերթին երեւում են լեզուական պատկերաւորման միջոցների կիրառութեամբ:

Չարեանի բանաստեղծութիւնները լի են նաեւ որեւէ բառարանում չարձանագրուած նորակազմութիւններով, որոնք դառնում են նրա բառապաշարը բարձրաշունչ բառերով հարստացնելու հիմնական միջոց երբեմն կանոնաւոր, երբեմն խախտուած չափերով, նոյնիսկ բանաստեղծական արձակի հնարքներով շաղախուած հետաքրքիր պատկերային համակարգի ստեղծման համար՝ իր բանաստեղծական շքեղ ու ինքնատիպ մտածողութեամբ յագեցած: Միայն քսանհինգ տարեկանում բանաստեղծը ծանօթացաւ հայերէնի ողջ պերճանքին ու հմայքին, արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի ներքին, չգործարկուած հնարաւորութիւններին: Ինչպէս դիպուկ բնորոշում է Աւետիս Ահարոնեանը, նա գրում էր «*աւելի բնազդով, քան սովորած օրէնքներով, երբ հրամայական պէտք ունի իր ներքին բուռն զգացողութիւնն ու մտածումը արտայայտելու: Նա շատ չի վարանի բառերի ընտրութեան առջեւ եւ կ'ասի իր խօսքը բրտօրէն կամ նորը կը կերտի, հոգ չէ, թէ նրա վրայ կոշտ կերպով աչքի զարնեն կռած ու կոփուած կէտերը եւ թարմ տպաւորութիւնները: Նա ժամանակ չունի լեզուի նրբութիւնների վրայ յամենալու. երբ ինքն անզօր է, բնութիւնը կը խօսի իր փոխարէն վայրագօրէն հմայիչ, եւ միշտ լեզուական օրէնքները տրորում է ու անցնում, ինչպէս աշնան տերեւները խառնող կատաղի հողմ*»[5]: Իր տաղանդի ուժով կապուած լինելով հարուստ հայ գրականութեան ճշմարտացի ու խոր ուսումնասիրութեանն ու ըմբռնմանը եւ բանաստեղծական աւանդներին՝ Չարեանի բանաստեղծութիւնն իր մէջ ունի նաեւ համաշխարհային բանաստեղծութեան դասական եւ ժամանակակից դէմքերի ազդեցութիւնը, ժամանակակից գրականութեան լաւագոյն ներկայացուցիչների ստեղծագործութեան կենսունակ երակները:

Սոյն յօդուածի նիւթը սերտօրէն կապուած է Չարեանի աշխարհայեացքի, յատկապէս նրա գեղագիտական ընկալումների հետ: Չարեանի բանաստեղծութիւնները նրբաճաշակ գողտրիկ պատառիկներ են՝ համեմուած արձակին բնորոշ յատկանիշերով: Նա իր դարի ներկայացուցիչների մէջ մի ինքնատիպ հեղինակ է՝ բանաստեղծութեան զգացողութեան եզակի դրեւորումներով, պատկերաստեղծման ուրոյն համակարգով ու դրա ճաշակաւոր կիրառմամբ: Չարեանի գրելաոճը որքան որ ընթերցողի գիտակցութեան, նոյնքան եւ աւելի՝ նրա զգացմունքների վրայ է ազդում՝

բանաստեղծական կառոյցը կերտելով անընդմէջ իրար յաջորդող շարժուն պատկերներով ու բազմապիսի տեսարաններով, մտքերի յախուռն, յաճախ անըմբռնելի ընթացքով: Հեղինակը բնաւ նախանձախնդիր չէ իր բանաստեղծութիւնների կէտադրութեանը, բանաստեղծական տողի սկզբում՝ մեծատառերին, քանի որ մշտապէս առկայ է արձակին բնորոշ եւ դասական ոչ-կաղապարուած տարրը, չափազանց լարուած են զգացումները, անկեղծ խոստովանութիւնները, որոնք թոյլ չեն տալիս յանուն կոկիկ յանգերի ու հարկադրուած բառափոխութիւնների կէտադրութեամբ կաղապարել անվերջ հոսող ասելիքը, անկաշկանդ շարժունութիւնն ու վերանորոգիչ շունչը: Սրանով է բացատրւում նաեւ ստորակէտի փոխարէն յաճախակի գործածուող միջակէտը, որի միջոցով բանաստեղծական ամէն տող դառնում է առանձին պատկեր՝ խորացնելով նախորդի իմաստը եւ աստիճանական անցում կատարելով դէպի յաջորդ անկախ միտք-միաւորը:

Օրերի Պսակը ժողովածուի գրեթէ բոլոր բանաստեղծութիւններում հանդիպում ենք համեմատութիւնների, փոխաբերութիւնների, աստիճանաւորումների, բառային ու շարահիւսական կրկնութիւնների տեսակների, բազմաշաղկապութեան, շրջադասութեան բազում օրինակների, որոնք, միասին գումարուելով, ներկայացնում են հեղինակի գեղագիտական աշխարհը, բանաստեղծական իւրայատուկ լեզուամտածողութիւնը: Չարեանի բառային արուեստը լի է յաճախ հիացնող ու զարմացնող իւրօրինակ տարրերով: Դա Չարեանի ոճն է, երբ բառերը չեն հասցնում արտայայտել նրա մտքի փայլատակումները, այդ պատճառով նա միշտ դիմում է փոխաբերութեան, որը Ահարոնեանի բնորոշմամբ այս «*անհման ոճաբանի հատու զէնքն է*» եւ «*պատկերների առատութիւնը, որ յաճախ հասնում է չափազանցութեան, հեւ ի հեւ է պահում ընթերցողին եւ նոյնիսկ չարչարում, իսկ պատկերները կոխկռտում, ծուատում են իրար որպէս շարժանկարի ճակատամարտ, ուր բախումներն, անկումներն ու թռիչքները յաջորդում են իրարու, անցնում սրընթաց, կիսատ, անկատար թողնելով, որ երեւակայութիւնն ինքը լրացնի ամբողջութիւնը*»[6]:

Չարեանը բանաստեղծութիւններ գրել է իր ամբողջ կեանքի ընթացքում եւ աւելի շատ ինքն իրեն բանաստեղծ է համարել, քան արձակագիր: Այս յատկանիշը երեւում է հեղինակի կողմից լեզուական պատկերաւորման միջոցների կիրառմամբ, որոնք իւրայատուկ ձեւով ներդաշնակուած են, իսկ ճաշակաւոր մակդիրները սկզբից մինչեւ վերջ նրա ստեղծագործութեան ուղեկիցն են՝ իրենց բազմատեսակ դրսեւորումներով, հմուտ ու նպատակային ընտրութեամբ ու գործածութեամբ:

Ընդհանրապէս, լեզուաոճական զանազան միջոցներին անդրադառնալիս անհրաժեշտ է արժեւորել նախ եւ առաջ բառի բառարանային, ուղիղ իմաստը, որով օժտուած բառն է, որ, օրինակ, դրսեւորելով իր բազմանշանակութիւնը, որեւէ ենթահողում դառնում է մակդիր: Ուղիղ իմաստ ունեցող, մենիմաստ բառերը, զուգորդուելով այլ բառերի հետ, ձեռք են

բերում այլաբանական իմաստներ: Բառի կամ բառակապակցութեան առանձնայատկութիւններից մէկն այն է, որ, ըստ ենթահողի, տուեալ միաւորը կարող է միաժամանակ հանդէս գալ ե՛ւ ուղղակի՝ անուանողական, ե՛ւ անուղղակի՝ փոխաբերական իմաստներով: Դա պայմանաւորուած է հիմնականում այդ բառերի բազմիմաստութեամբ, իմաստային տարողութեամբ, առածգականութեամբ: Այս յատկանիշները կիրառութեան համապատասխան պայմաններում նոր նրբերանգներ են երեւան հանում, խօսքային համապատասխան միջավայրում արդարացուած են ու պատճառաբանուած: Բառի բազմիմաստութիւնը գեղարուեստական չափածոյի բառարանում անփոխարինելի ոճական արժէք է[7]:

Չարեանի բանաստեղծութիւններում չափազանց մեծ թիւ են կազմում անուանողական իմաստ ունեցող բառերի մակդրային գործածութիւնները, որի համար անհրաժեշտ է, որ իրական յատկանիշն ակնարկուի՝ շաղախուած զգացմունքով, որով արձանագրային խօսքը վեր կ'ածուի պատկերաւոր արտայայտութեան[8]: Մակդիրը արտայայտչականօրէն, հիմնականում փոխաբերական նշանակութեամբ բնութագրում է առարկան, երեւոյթը՝ արտայայտելով հեղինակի յուզական վերաբերմունքը եւ կապուելով նկարագրուող միջավայրի, հերոսների տրամադրութեան, հոգեբանութեան ու արարքների հետ: Չարեանի բանաստեղծութիւններում սփռուած մակդիրներից համեմատաբար յաճախուած է ածականը՝ **աղուոր** աչքեր (11), **բամբռահար** թեւ (10), **դաշնայորդ** ձայն (96), **եղերական** հովիւներ (19), **զմրուխտալաց** թախիծ (99), **լուսաստեղծ** լինելութիւն (16), **կոյս** երգ (16), **կոյր** անդունդ (10), **հեշտաշունչ, հրաշազան** հմայքներ (77), **հրաշուրթ** ձի (20), **մեղմածալ** շեշտեր (96), **մունջ** նարգէս (11), **նրբափետուր** ցօղ (13), **սեւեռուն** գոյներ (10), **սրսփադող** երգ (12), **տխրագուշակ** վարդ (14), **տրտմօրօր** լռութիւն (19), **օձապսակ** բախտ (18): Ինչպէս տեսնում ենք, Չարեանի ոճը անհատապէս տարբերւում է նաեւ կազմութեամբ բարդ մակդիրների գործածութեամբ. որպէս այդպիսիք՝ հետաքրքիր են յատկապէս հարադրութիւններն ու կրկնաւորները, որոնք աւելի հարուստ երանգներով են բացում մակադրեալի բովանդակութիւնը՝ **ակլէզ-ակլէզ** թիթեռնիկներ (124), **բոյր բոյր** համբոյր (123), **գեղգեղ** դաշտ (94), **դարձիդարձ** լոյս (56), **դողդող** սէրեր (58), **զարդ ի զարդ** գօտի (33), **թափթափ, շիթ-շիթ, հեւ-հեւ** աղջիկներ (122), **թաքնաթաքուր** ոգիներ (105), **լափլէզ-բեհեզ** բոցեր (94), **զանգ-զանգ** քարեր (106), **ծափ ծափ** ալիքներ (48), **հոյլ-հոյլ** ծուէններ (31), **շողշող** ճաճանչ (46), **սա՛ռ-սա՛ռ, սա՛ռ** սիրտ (53), **սողսող** հրդեհ (59), **տաշտ-տաշտ** աստղեր (20), **փողփող** ձի (86) եւն.:

Բանաստեղծի բառապաշարում բառի ուղղակի իմաստի հիմքով առաջացած փոխաբերական իմաստն ասելիքին տալիս է բազմազանութիւն, խօսքը դարձնում աւելի տարողունակ, սեղմ ու գեղարուեստականօրէն խտացած, համարձակ որոնումներով ապացուցում բանաստեղծի մտքի

զարգացածութիւնն ու զգացական հարուստ աշխարհի գոյութիւնը, արտայայտում մարդկային կենդանի ապրումներն ու կեանքի բնական գոյները:

Մակդիրները յաճախ արտայայտւում են նաեւ բառակապակցութիւններով, ծաւալուն դերբայական դարձուածներով, որոնց իւրաքանչիւր անդամ ընդգծում է միտքը, նպաստում ամբողջական պատկերի աւարտունութեանը: Սրանք, լինելով շարահիւսական բազմանդամ կառոյցներ, աւելի լայն հնարաւորութիւն ունեն խորութեամբ ընդգրկելու պատկերուող երեւոյթը, եւ քանի որ կառոյցի գերադաս անդամը բայ է, դարձուածը ներկայացնում է երեւոյթի կամ իրողութեան շարժունակութիւնը, ապրումի յարափոփոխականութիւնը[9]՝ **անրջական մեռած** կոյսեր (99), **օդի մէջ հրդեհացած** կայմեր (108), **դարձիդարձ բոլորուող** աչքեր (10), **տրիտօնի ջութակով երգուած** աչքեր (11), **ծալք ծալք ծածան ծաւալուող, սիրահրաւէր ծանր** շող (77): Ինչպէս վերջին օրինակից է երեւում, երբեմն այս կազմութիւններն ուղեկցւում են հնչիւնական նմանաձայնութեամբ, որը դառնում է երեւոյթը տեսողութեամբ ու լսողութեամբ ընկալելու փայլուն միջոց:

Զգալի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ գոյականական մակդիրները, որոնք ինչ-ինչ կապակցութիւններում կորցնում են գոյականական բովանդակութիւնը եւ ստանում իրենց էութեանը բնորոշ յատկանշի այլեւայլ գաղափարներ[10], օրինակ՝ **ագաթ** խաղ (118), **ապօկալիպս** սանդուխ (47), **բառաչ** լաց (28), **բիւրեղ** արցունք (115), **զարդ** կուրծք (122), **թոյն** բուրումներ (28), **կանթեղ** խաղ (94), **զմրուխտ** երազ (96), **թաւալ** հառաչ (119), **լեռնաշղթայ** բարձունքներ (20), **լալագար** ջահ (46), **խանդ** հովեր (102), **խորհուրդ** ձայներ (123), **ծիածան** շուշան (13), **կախարդ** շրթունք (123), **կայծակ** ոստեր (54), **հեքիաթ** շղարշ (79), **հրաշապարտէզ** արեւ (94), **հրարան** ծիածան (20), **պղինձ** ձայն (27), **փրփուր** ծիծաղ (29) եւն.:

Զարեանի ստեղծած գոյականական մակդիրները յաճախ խիստ անակնկալ, անսպասելի եւ անսովոր են, երբեմն նոյնիսկ զարմանալի, քանի որ դրանց մեծ մասը կարծես կապուած չէ իր մակադրեալի իմաստին որեւէ առումով: Զարեանը կարողանում է առանձնացնել եւ ընդգծել առարկայի ոչ միայն մնայուն, այլեւ պատահական, դիպուածային յատկանիշերը՝ ընդգծելով մէկը կամ միւսը եւ գեղարուեստօրէն հիմնաւորելով դրանք: Սա հեղինակի իւրօրինակ մօտեցմամբ եւ հայեացքով է պայմանաւորուած, բանաստեղծական տողով ու հնչեղութեամբ, իր կողմից յայտնաբերուած զուգորդութիւններով ու իւրատեսակ մեկնաբանութիւններով: Զարեանի բանաստեղծութիւններում բազմաթիւ են չափածոյ խօսքով, տրամաբանական շեշտով ու բանաստեղծական կշռոյթով պայմանաւորուած յետադաս մակդիրները:

Զարեանի բանաստեղծութիւններում գործածուող արտայայտչական տարածուած եղանակներից է համեմատութիւնը, որի հիմքում ընկած է եր-

կու առարկաների կամ երեւոյթների միջեւ եղած նմանութիւնը: Նրա չափածոյի առանձնայատկութիւններից է այն, որ յաճախ են գեղարուեստական արժէք ստանում անհամատեղելի թուացող իրերի, երեւոյթների կամ յատկանիշերի համեմատութիւնները, եւ գրեթէ առանց բացառութեան հեղինակին յաջողւում է տրամաբանական համոզիչ կապ գտնել ինքնատիպ, երբեմն նոյնիսկ անսովոր եզրերի միջեւ՝ բանաստեղծի երեւակայութեան թռիչքով ստեղծելով տեսանելիութեան ու շօշափելիութեան չափ առարկայական համադրական պատկեր: Բանաստեղծի ինքնատիպ համեմատութիւնների համար առաջին միջոցը բնութիւնն է՝ իր հրաշագործ էութեան ամենախորքային նկարագրութիւններով ու նուրբ մանրամասներով՝ մարդուն ներհիւսուած:

Չարեանի բանաստեղծութիւններում համեմատութիւնները հանդիպում են ե՛ւ բառի, ե՛ւ բառակապակցութեան, ե՛ւ երկրորդական նախադասութեան միջոցով: Համեմատութիւնները հիմնականում նոյնական կամ դրական համեմատութիւններ են՝ ձեւաւորուած **նման, պէս, ինչպէս, ասես** բառերով: Մութերի խորքից մի խօլ աբեղայ... //սողուն **ինչպէս օձ,** //ասում է լալով մի սեւ մեռելոց (38): Եղեւիններ, այնտեղ հեռուում... //սիրերգերով ու ձայներով տարօրինակ այնքա՞ն մինակ-**նման սրտիս** այնքա՞ն մինակ (16): Վենետիկը հին գոհար... //**նման** հեքիաթ **շղարշումին** ոսկեզօծ, //**նման հրեղէն հայլիին** մշտաբոց (79): Դաշխուրանի եւ սափորի մէջ հրդեհի //լուսաբողբոջ **որպէս շուշան, հրավառ հիւսքով հնարած րեհան** //խորհուրդները վառեցինք (121): Երեք վարդեր՝ մունջ սըգաւոր, //ուրուագեսիլ արտասուաթոր՝ //**մոմերի պէս** մեռելային սուգի վրայ աշնանային... (47): Սենեակիս մէջ սողուն ստուերներ... //կոյր եւ տխուր **օձերի պէս՝** տե՛ս, տե՛ս - ման են գալիս կամաց, անլուր (44): Մի առագաստ շատ հեռուում, //լայն **թեւի պէս** թռչունի, //կարծես պիտի ընկղմի (65): Լուսակարկաչ ելեւէջներ, //**ասես աչքեր** լայն-լայն բացուած դէպի երազ կամ **հիր աւազ** (122): Դաշտերի մէջ արեւաթափ արծաթները պլպլուն, //**ասես ջրվէժ**... (61):

Չարեանի կերտած համեմատութիւնները մեծաւ մասամբ ծաւալուն, համակողմանի ու խորը համեմատութիւններ են, քանզի համեմատուող առարկան բնութագրւում է ընդարձակ նկարագրութեամբ. ուզում եմ լինի իմ երգս խոնարհ, //**ինչպէս կտոր հաց** սեղանի վերայ աշխատաւորի, //**ինչպէս համեստ հարս՝ ծաղկած նռնենի՝** //որ գարնան տենդով վառում է աշխարհ, //**ինչպէս լեռան գիծ** պարզ եւ հոյակապ, //**ինչպէս աշնան ծառ** մունչ եւ ոսկեթափ (9): Ու տանջւում է տրտընջօրօր լռութեան հետ աշունի, որ դառնում է **ինչպէս գունատ դեղձանամազ պարմանուհի** աներազ շուրջը վիհի (19): ...[Մ]ինչ նա կանգնած՝ սեղանի մօտ շատ լուսաւոր, //**ինչպէս վսեմ պետ հոգեւոր** //սըփռում է խօսք ու բոյր նարդոս... (104): Աստղը տժգոյն, հազիւ ծնած //**ինչպէս մարգրիտ** դեռ նոր բացուած՝ //հիանում է ձիթենիի արծաթ փայլով (66): Ու երգը մունջ, մեղմատրտունջ,

//**ինչպէս քաղցր ու գեղ մի լաց**, //**ինչպէս վճիտ ու լայն բիբեր**, //որ տեսնում են անդրերկրեայ լոյս հոգիներ (118): Բռնկեցին եթերային ջահեր - **ասես հսկայ շուշաններ** (10): Հովեր խօլ խանդ, //սուրումներով սրտաբաբախ, //**ասես** հազար հեքիաթներում **մեռած կոյսեր** անրջական (99):

Զարեանի բանաստեղծութիւններում լեզուական միաւորների ոճական կրկնութիւններն ամէնից յաճախ հանդիպող արտայայտչամիջոցներից են: Կրկնութիւնը սահմանւում է որպէս ոճական այնպիսի բանադարձում, որը ենթադրում է որոշակի սահմանափակ բնագրում բառերի, բառակապակցութիւնների, նոյնիսկ առանձին նախադասութիւնների կրկնութիւն՝ խօսքին յաւելեալ արտայայտչականութիւն հաղորդելու, կրկնուող միաւորն առանձնացնելու եւ աւելի շեշտուած դարձնելու նպատակով[11]: Պէտք է նշել, որ բառերի ոչ-բոլոր կրկնութիւններն են, որ ունեն ոճական արժէք: Դրանցից շատերը կարեւոր են բառակազմօրէն եւ հեղինակային խօսքին լրացուցիչ արտայայտչականութիւն չեն հաղորդում:

Զարեանի չափածոյում կրկնութիւնն առկայ է իր բազմաթիւ տարատեսակներով, նախադասութեան գրեթէ բոլոր հիմնական անդամների կրկնակի կիրառութիւններով: Յաճախ հանդիպում է հարակրկնութիւնը կամ նոյնասկիզբը, երբ իրար յաջորդող նախադասութիւնները սկսւում են միեւնոյն լեզուական միաւորներով՝ կրկնուած տողերի վրայ սեւեռելով ընթերցողի ուշադրութիւնը: Դրանց օգնութեամբ բնագրում միահիւսուած բառակրկնութիւնները ձեռք են բերում բառիմաստի խտութիւն՝ ստեղծելով իւրատեսակ կշռութաւոր դաշտ: Բառական կրկնութիւններին զուգահեռ հեղինակը, բնականաբար, գործածում է նաեւ այլ լեզուաարտայայտչական միջոցներ՝ փոխաբերութիւններ, մակդիրներ, եւ դրանք այնքան ճաշակով են միանում մէկ նախադասութեան մէջ, որ ոչ միայն չեն խանգարում միմեանց, այլեւ գումարուելով մէկը միւսին՝ խտացնում ու աւարտին են հասցնում ստեղծուող պատկերը:

Բանաստեղծութիւններում յաճախ կրկնւում են նախադասութեան հետեւեալ անդամները.-

1. Նախադասութեան ենթական. **Մէկը** վէրք է խօլափայլակ, //**մէկը** կանչ է սոսկանուագ, //**մէկը** վիշտ է բոցակիզուած, //**մէկը** մայր է սիրտը պատռած //եւ **մէկն** էլ աչք եւ արտասուք-հեծող մահ է տրտմասուգ (14): **Դու** ոսկի խօսք այրուող սրտի, //**դու** ճաճանչներ փունջ փունջ կտրող գերանդի: //**Դու** հաց լուսեղ-համեղ, համեղ, //**դու** շատ մաքուր փողփող աղբիւր (42): Եւ **ես** ահա՛ բամբիռ ճաթած: //Եւ **ես** ահա ինչպէս սպանուած մի քահանայ... //Եւ **ես** ահա հագած գիշեր... (22): **Ես**՝ զոհ ու զոհաբերող. //**ես**՝ սուր ու սուրը սըրող... //**Ես**-խաչելութիւն: //**Ես**՝ դիակ պաղ (29):

2. Նախադասութեան ստորոգեալը. **Ա՛ռ, լուսին տխրագին, սիրտս վառ՝ //ա՛ռ** (72): Կանանց շուրջը **պար բռնեցին**, ոսկէ թեւեր շարժելով, //**պար բռնեցին**՝ տեսնելով...բոցածաւալ ժամը ահեղ... (110): **Ուզում եմ լինի** իմ երգս խոնարհ... **Ուզում եմ լինի** իմ երգս թեւող...// լռիկ տատա-

նում, **ուզում եմ լինի**... (9): ...Բոյր բոյր համբոյր նորահրապոյր //**տա՛մ, տա՛մ** շրթունքներիդ քո վարդաբոյր- //**տա՛մ, տա՛մ**, //ու պարտէզում ծիրուն կուրծքիդ քաղեմ համբոյր (123):

3. Որոշիչը՝ Դու եւ բնութիւն //**նոյն** տեսիլքի թեւումներն էք գոյնզգոյն, //**նոյն** համերգի տաւղահարուն ձայնաթափ, //**նոյն** հեկեկուն, կոհակամեռ մի ծովափ (64):

4. Յատկացուցիչը. Ու տանջում է տրտմօրօր լռութեան հետ **աշունի**, //որ յոյս չունի-**աշունի,** //որ դառնում է ինչպէս գունատ դեղձանամազ պարմանուհի (19):

5. Ուղիղ խնդիրը՝ Անապատը հոգիիս հրկիզի՛ր - **հոգիս**՝ հոգին հոգիիս, //**հոգիս**՝ արիւն արիւնիս (51):

6. Տեղի պարագան՝ Ու ընդծովեայ **կանանչի մէջ** անայլայլ - հեղուկ դաշտում սառն եւ մթին - //Ու ընդծովեայ **կանանչի մէջ** անայլայլ՝ սիրէնների դողդոջ դայլայլ (107): Մեծ **անտառից** //ե՞րբ պիտի գայ //նա - մեծ **անտառից** (31): **Այնտեղ** անցաւ սպիտակ հարսը կախարդի. //**այնտեղ** անցաւ խորհուրդ ճրագը երազի. //**այնտեղ** պարեց հարբած յոյսը խօլութեան, //**այնտեղ** երգեց անուշ ձայնը զմայլութեան (74):

7. Ձեւի պարագան՝ Ու **դարիդուս** ու **դարիվար**... //խօլ պար դառնալ, //Ու **դարիդուս** ու **դարիվար** ճախրե՛լ, թեւե՛լ (113): Պատի տակից, ճիղչը յանկարծ - **ինչքա՛ն արագ, ինչքա՛ն արագ** - առաջացաւ... (106): **Ահա նորից** մարմինս հրկիզաշունչ մահազանգն է զարնում արիւնիս: //**Ահա նորից** երգերս ուրուատեսիլ խարոյկներն են վառում հոգիիս: //**Ահա նորից** գլխիկոր, սիրատոչոր ալիքները... խօլ իղձերիս տենդերն են փրփրում (49):

Կրկնւում են նաեւ նախադասութեան լիիրաւ անդամ չհանդիսացող լեզուական միաւորները.-

1. Կոչականը՝ **Աղջի՛կ ծով աչքերով,** ծովը քեզ ե՞րբ համբուրեց: //-**Սիրակա՛ն,** ուրկի՞ց եկար: //-**Աղջի՛կ ծով աչքերով,** արեւը քեզ ինչպէ՞ս գրկեց: //-**Սիրակա՛ն**, ի՞նչ ես ասում: //-**Աղջի՛կ ծով աչքերով,** լուսինը քեզ ինչո՞վ ծածկեց: //-**Սիրակա՛ն**, ճի՞շտ ես ասում (49): Օրերի հոյլ պսակը գլխիդ //**հա՛րս նազելի.** //արեւի վառ հեւքը դէմքիդ, //**հա՛րս նազելի,** //յոյսերի խօլ խօսքը բերնիդ, //**հա՛րս նազելի.** //լիճերի պարզ հայլին ձեռքիդ, //**հա՛րս նազելի.** //անհուն շոյող հմայքը ձայնիդ, //**հա՛րս նազելի.** //անդունդ բռնկող կրակը սէրիդ, //**հա՛րս նազելի.** //շրշիւնը թաւ ոտնաձայնիդ, //**հա՛րս նազելի.** //նռենաշող բոցը կուրծքիդ, //**հա՛րս նազելի.** //ու մարգարիտ փայլը վիզիդ, //**հա՛րս նազելի**... (62): Դէ՛, հիմա, հիմա, բարձրացի՛ր, **տղա՛ս**, //**դժբա՛խտ իմ տղաս, //դժբա՛խտ իմ տղաս** (11):

2. Շաղկապը՝ **Ու** ընդծովեայ կանանչի մէջ անայլայլ - հեղուկ դաշտում սառն եւ մթին- //**Ու** ընդծովեայ կանանչի մէջ անայլայլ՝ սիրէնների դողդոջ դայլայլ (107):

Կրկնւում է նաեւ հրամայական նախադասութիւնը. **Աղօթեցէ՛ք մեզի համար,** սրբուհինե՛ր, //ինչպէս տեսան ձեզ վարպետներ, //**Աղօթեցէ՛ք մեզի համար,** թագաւորնե՛ր, //արեւելքի երեք մոգեր, //**Աղօթեցէ՛ք մեզի համար,** սո՛րբ հրեշտակներ, քերովբէնե՛ր, //**Աղօթեցէ՛ք մեզի համար** եւ դուք, սուրբե՛ր, //ոսկեբերան պատկերներ: //Եւ դուք, կինե՛ր, խաչի տակը սարսռացող, //**աղօթեցէ՛ք մեզի համար** //եւ եօթնանկիւն դուք մեծ աստղեր, //**աղօթեցէ՛ք մեզի համար**... (34): **Ա՛ռ կանթեղը,** //**ա՛ռ կանթեղը** իմ հոգիիս (114): Օ՛, իմ օրիո՛րդ, **պահի՛ր լոյսդ անյեղլի,** //դու ճաճանչներ, փունջ փունջ կտրող գերանդի, //Օ՛, վառ երազ, **պահի՛ր լոյսդ անյեղլի** (110):

Կրկնւում է հարցական նախադասութիւնը. **Ո՞ւր երթամ** //եւ որո՞ւն սիրտս իմ ես բանամ, //Սի՛րտ իմ լուռ, //**ո՞ւր երթամ** (97):

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում երբեմն հոմանշային կրկնութիւնների կիրառութիւնները, երբ միեւնոյն բառը կամ միտքը չկրկնելու համար գործածւում են հոմանիշ բառեր ու կապակցութիւններ՝ նպատակ ունենալով աւելի գունեղ ներկայացնել նկարագրուող տեսարանը կամ գործողութիւնը, ինչպէս՝ Այս **խեղճ** ու **հէք** վանականին //ջահի՛ր ջահեր անհունածին (105): ...[Հ]ծըծում են մէկը միւսին, բուի ձայնով.- **խրպուն** ու **խուլ** աղաղակով (106): Եւ անծայրն եմ կարծես լսում, //եւ **իմանում** եւ **հասկանում** //մի հոգեմաշ մենաժամի ձայնը թրթռուն (12): Ու շղարշեց կսկիծներով այրուած, //**ողբագին, հեծուն** վիհը հոգիիս (46):

Զարեանի չափածոյում կրկնութեան ոճական գործառոյթ են իրականացնում հեղինակի ոճին յատուկ այնպիսի բայական յարադրութիւնները, որոնց բայական բաղադրիչի արմատը կրկնւում է իբրեւ յարադիր մաս: Լինելով հայերէնի բարդութեան ամենահինաւուրց տեսակը, կրկնաւոր այս յարադրութիւնները բայական գեղեցիկ կառոյցներ են, որոնց մէջ յարադիրն ու բայարմատը հանդիպադրուելով՝ սաստկացնում են խօսքի իմաստը, դարձնում առաւել պատկերաւոր: Այս կազմութիւնները պահում են ժողովրդական բան ու ոճի համ ու հոտը եւ իբրեւ հեղինակային անհատական վերաբերմունքի արտայայտութիւն՝ գրեթէ անփոխարինելի են[12]՝ ... եւ պաղ արծաթ հնչիւնով **զարկ են զարնում** վազելով... //դողդողում են մեղմաձայն //եւ **կանչ կանչում** ողբաձայն (55): Ու լարեր մեղմ, շիկակարմիր, //**ձայն ձայնեցին** թիթեռաթիռ (10): Սինանաիս **պար է պարում** կաղնի շուրջ, **ոստ է ոստում** ոտնաձայնով շառաչող (74): Պղնձաթոյր տերեւները //**լաց են լալիս** ոսկէարցունք...(75): Երբ արեւը **ձիւն է ձիւնում** աշխարհին՝ կտոր-կտոր ծուէններով ադամանդ.. (64): Ադամամութին թմբուկներ զարկին //ու **տօն տօնեցին** մեծ հրապարակում (112): Համ՛յք է թափում մեղրածորան, **հիւսք է հիւսում** ոսկեման (73): Ահա սրինգներ //**ձայն են ձայնում** կախարդ թորող շրթունքներով //123...հին սէրերի ջահն է մարում ու **ողբ ողբում** սեւ ամպերին (90):

Չարեանի բանաստեղծութիւններում գործածութեամբ սակաւաթիւ են հակադրութիւնները: Դրանք իրար հակադիր իմաստ արտայայտող բառեր են, որոնք խօսքի մէջ ունեն որոշ երանգաւորում[13], եւ որոնց միջոցով պատկերւում են իրականութեան հակասական կողմերն ու երեւոյթները: «*Խօսքային միեւնոյն շարոյթում հակադիր իմաստ ունեցող բառերի համատեղ գործածութիւնը հեղինակին հնարաւորութիւն է տալիս ոչ միայն աւելի բազմակողմանի ու ընդգրկուն վերարտադրելու իրականութեան հակասական յարաբերութիւններն ու գործընթացները, այլեւ ներկայացնելու սեփական վերաբերմունքը նկարագրուող իրադարձութիւնների նկատմամբ, գեղագիտօրէն ներգործելու ընթերցողի վրայ*»[14]: Հակադրութիւնները, որ շատ յաճախ առկայ են նորաստեղծ բառի մէջ եւ առաջին հայեացքից անսովոր են ու տարօրինակ, իրաւունք են տալիս կոչելու Չարեանին անսպասելի բառի վարպետ. նա կարողանում է ճիշտ եւ ոչ-ինքնանպատակ մատուցել այդ բառը, եւ այդտեղ է նրա մեծութիւնը: Հակադրութեան յարաբերութիւն արտայայտւում է ինչպէս շաղկապներով, այնպէս էլ շարայարութեամբ. Ձայներ **լացին:** Ու մրրիկը **ծիծաղեց** (19): Եւ պարտիզպան պարտէզիդ մէջ **աննիւթացած**, //ուր **նիւթացած** հեւք կայ, սպասում եւ յիշատակ (81): ...[Ե]ս պարտիզպան եղայ տենդոտ, //ու բահեցի քո **երեկոն**, քո **առաւօտ** (81): Սեւ ցեխի մէջ ճահիճի //դիակ են ուտում որբերի - լպրտուն **մեղր ու թոյն** (70):

Որքան էլ Չարեանի բանաստեղծութիւնը աւելի մօտ է արձակին ու չի հանդուրժում սահմանափակում, սակայն նրա համար կարեւոր է իր բանաստեղծութիւնների **ինչիւնական** ներդաշնակութիւնն **ու նոյնահունչ** կամ **համահունչ** բառերի ընտրութիւնը, լսելիքին ախորժելի երաժշտականութիւնն ու բազմաձայնութիւնը: Նրա բանաստեղծութիւններում յաճախ են հանդիպում իմաստային առնչութիւն չունեցող այնպիսի բառեր, որոնք, տարբերուելով մէկ-երկու **ինչիւնով**, ստեղծում են ներքին եւ արտաքին յանգերի միջեւ ինքնատիպ ձայնային եւ պատկերային շղթաներ. ..ու երգը **մունջ, մեղմատրտունջ,** ասուած **կամաց**, //ինչպէս քաղցր ու գեղ մի **լաց** (118): Հազիւ տրոփող իր սրտի **մէջ** //ընկղմում են ղօղանջները **անդընդաշէջ** ... //պայծառափայլ **եպիսկոպոս** //սըփռում է խօսք եւ բոյր **նարդոս** (104): ... [Ե]ւ եղիր **լոյս փայլակնայոյս** (103): ...[Թ]եւ **դիւթացած, աննիւթացած** (99): Տա՛մ զմրուխտ երազիս **բոցը օձ** //իմ մէջ **գոց** - //թող վառեն իմ **դիակ մեծակրակ** (96): Անդունդների թաւալ **հառաչ**, //կայծակնահար իջնող մի **կանչ**, //շեփորների ձա՛յն **հիասքանչ**...(119): ...[Փ]շրած խաչի **տակ** //աչքերդ **յստակ**, յամա՛ռ թող նայեն (112): Օրը այսօր մեղմաճաճանչ յոյս բերաւ **նոր**: //Երգեց երգը սրընգօրէն, **մեղեդնածոր** (94): Սինանաի՛ս, Սինանաի՛ս,- բոց **անուրջ**. //Սինանաիս պար է պարում կաղնի **շուրջ** (74):

Համահունչ այս բառերը մեծաւ մասամբ զոյգեր են կազմում բառավերջի **ինչիւններով** եւ դառնում բանաստեղծական խօսքի կամ տողի հիմնական իմաստի կրողը:

Չարեանի բանաստեղծութիւններում լեզուական պատկերաւորման զանազան միջոցների առատութեամբ ու գերյագեցուածութեամբ է ձեւաւորւում բանաստեղծի զգացմունքայնութիւնը: Պէտք է նշել, սակայն, որ իրենց առատութեան, լեզուաոճական եւ արտայայտչական նոր ու յանդուգն որոնումների մէջ անգամ պահպանւում է լեզուական միջոցների գեղագիտական չափը: Կրկնութիւն, փոխաբերութիւն, համեմատութիւն, հակադրութիւն, հոմանշութիւն եւ, սակայն, ոչ մի աւելորդ ծանրաբեռնուածութիւն:

Չարեանի չափածոն նորարարական է եւ միտում ունի հայ բանաստեղծութեան մէջ բերելու արտայայտչաձեւերի թարմութիւն, բանաստեղծական ուրոյն մտածողութիւն: Այն բարդ, հարուստ, գունագեղ եւ բազմաբղէտ մի աշխարհ է, մեծ գրողի հոգու եւ ներաշխարհի տասնամեակների չափածոյ պատմութիւնը... որն իր հարստութեամբ, իր բովանդակութեամբ եւ խորքով մաքրում է հայ նորագոյն բանաստեղծութեան պատկերը արհեստական ոգեշնչուածութիւնից, ուշացած վիպապաշտութիւնից, կեղծ ազգայինից, երգային զգացականութիւնից, խորհրդահայ չափածոյին բնորոշ նորդասականային գրքայնութիւնից եւ չափածոյի դիմապատկերը խաթարող այլ գծերից ու տարրերից[15]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Արծրուն Աւագեան, *Կոստան Չարեան. Կանքը եւ Գործը*, Երեւան, Երեւան Համալսարանի Հրատ., 1998, էջ 98:

[2] Սոյն յօդուածի համար հիմք է ծառայել 2009ին Երեւանում հրատարակուած *Բառերի Ոսկին* (աշխատասիրութեամբ Երուանդ Տէր-Խաչատրեանի) գրքում զետեղուած «Օրերի Պսակը» (Ա) գիրքը:

[3] Կոստան Չարեան, *Բառերի Ոսկին*, Երեւան, Երեւան, «Սարգիս Խաչենց» Փրինթինֆօ, 2009, էջ 646:

[4] Նոյն, էջ 663:

[5] Ա. Ահարոնեան. Կոստան Չարեան, *Հայրենիք*, Պոսթըն, 1930:9, էջ 60-61:

[6] Նոյն:

[7] Եուրի Աւետիսեան, *Արեւմտահայ Բանաստեղծութեան Լեզուն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2002, էջ 306:

[8] Արտաշէս Պապոյեան, *Պարոյր Սեւակի Չափածոյի Լեզուական Արուեստը*, Երեւան, «Լոյս» Հրատ., 1970, էջ 263:

[9] Նոյն, էջ 271:

[10] Նոյն, էջ 279:

[11] Թերեզա Շահվերդեան, *Դասական Գրաբարի Շարահիւսական Ոճաբանութիւն*, Երեւան, «Հայաստան» հրատ., 2007, էջ 127:

[12] Պապոյեան, էջ 70:

[13] Լեւոն Եզեկեան, *Հայոց Լեզուի Ոճագիտութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2003, էջ 233:

[14] Շահվերդեան, էջ 221:

[15] Չարեան, *Բառերի*, էջ 667:

THE LANGUAGE AND STYLISTIC FEATURES OF KOSTAN ZARYAN'S *ORERI BSAGE* (THE CROWN OF DAYS) POETRY BOOK

(Summary)

SUSANNA GRIGORYAN
susannagrigoryan@ysu.am

One of the renowned figures of Armenian literature, Kostanm Zaryan (1885-1969) wrote several books and a single book of poetry, *Oreri Bsage* (The Crown of Days). The book was published in 1922 and stood out for its unique language structures and portrayals of acts and descriptions through unorthodox combinations of incongruous or incompatible words. At a later stage Zaryan republished the volume after thoroughly rewriting most of the poems, which still maintain an aesthetic and perceptual value.

The article analyses the language and style of Zaryan's poetry, focusing on the epithets, comparisons, repetitions and contrapositions which he used abundantly. The author argues that the use of these stylistic techniques enriched the poems with extraordinary expressions, charged them with emotions, and displayed the deep sensitivity of the author.

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ (Ճ-Օ)[1]

ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ
armenag@gmail.com

* **Ճաթիլ-ճայթիլ-ճաքիլ.-** Պատմականօրէն **ճաթ** արմատ մը գոյութիւն չէ ունեցած, ունինք **ճայթ**(իլ) արմատը. ենթադրելի է, որ առաջինը յառաջացած է երկրորդին հնչիւնափոխութեամբ, եւ արդէն մեր բոլոր բառարանները **ճաթիլ**-ն ու **ճայթիլ**-ը կը ներկայացնեն իբրեւ նոյնանիշներ: Յաջորդ յատկանշական իրողութիւնը այն է, որ այս բայերէն իւրաքանչիւրը իր մէջ կը համատեղէ մէկ կողմէ զօրաւոր աղմուկի, միւս կողմէ փշրուելու գաղափարները. օրինակ՝ **շիշը ճայթեցաւ**, կը նշանակէ սուր աղմուկով փշրուեցաւ: Այս նոյն երկւութիւնը կը գտնենք **պայթիլ** բային մէջ եւս, որ նմանապէս կը համատեղէ աղմուկն ու փշրանքը. այսպէս՝ երբ արկ մը կը պայթի, ան միաժամանակ կը փշրուի, մէկը ըլլալով միւսին բնական հետեւանքը:

Յարաբերաբար տարբեր է **ճաքիլ**-ը, որ կը նշանակէ կարծր ու պինդ առարկայի մը երկար ու բարակ գիծով պատռիլը, ճեղքուիլը՝ առանց անպայման մասերու իրարմէ զատուելուն, օրինակ՝ ապակիին, ժայռին, յաճախ նաեւ մետաղեայ թերթիկներու եւ այլնի ճաքիլը: **Ճաքը** ընդհանրապէս փշրանքներու չ'առաջնորդեր, եւ ճաքած զանգուածը կը պահէ իր ամբողջութիւնը կամ յարաբերաբար սահմանափակ կտորներու կրնայ վերածուիլ՝ երկու-երեք եւ այլն: Ունինք **ճաքճքիլ** կրկնարմատը եւս: Միւս կողմէ՝ **ճաքին** յատուկ չէ աղմուկը, թէեւ բացառուած չէ, որ աղմուկ մըն ալ ընկերանայ ճաքող առարկային: Փակենք հետեւեալ նկատողութեամբ. արեւմտահայը **ճայթիլ**-ով կը ներկայացնէ թէ՛ բուն **ճայթիլ** բայը, թէ **ճաքիլ** բայը. այլ խօսքով՝ **ճաքիլ**-ը ժողովրդականութիւն չունի, որքան ալ ան մտած ըլլայ մեր բառարաններուն մէջ. օրինակ՝ ան կ'ըսէ. «Ապակին ճայթեր է»՝ ակնարկելով անոր ճաքին:

* **Մանրամաս-մանրամասն-մանրամասնութիւն.-** Ի վաղուց անտի մեր զոյգ աշխարհաբարները ունեցած են ասոնցմէ երկրորդն ու երրորդը. **մանրամասն**՝ իբրեւ ածական, իսկ **մանրամասնութիւն**՝ իբրեւ գոյական, երկուքն ալ հանրօրէն շատ ծանօթ բառեր, որոնք ուրեմն բացատրութեան չեն կարօտիր:

Հետագային արեւելահայերէնի մէջ յառաջացան ու նուիրականացան **մանրամաս** եւ **մանրամասներ** եզրերը: Առաջինը կը նշանակէ յատկապէս՝ մանր մաս, մեքենայի, սարքի մասերը, որ «փոխնորդ» կը կոչենք, այսինքն՝ փոփոխելի, փոխարինելի կտորներ: Սակայն տեղին համեմատ կը նշանակէ նաեւ «մանրամասնութիւն»: Երկրորդը, ընդհանրապէս յոգնակի կիրարկութեամբ, կը նշանակէ միայն «մանրամասնութիւն»-ներ. օրինակ՝ «Բոլորին ծանօթ էին անոր արկածին մանրամասները»:

Ասոնց իւրացումն ու կիրարկումը արեւմտահայերէնի մէջ հաւանաբար ժամանակի պիտի կարօտի, սակայն առնուազն բնագրային փոխադրութեանց առթիւ, որոնք հիմա շատ ընդհանրացած են, պէտք է ի մտի ունենալ իմաստային այս նրբութիւնները:

Թէեւ կարելի է ազատօրէն սկսիլ կիրարկումը **մանրամաս**-ին, յոգնակին՝ **մանրմասեր** (ոչ՝ մանրամասներ):

* **Մարտավարութիւն-ռազմավարութիւն.**- Մեր լեզուն այնքան ալ չի զանազաներ **մարտ**-ը եւ **ռազմ**-ը, ուստի ենթադրաբար այս երկուքը պէտք է նոյնանիշեր ըլլային, մանաւանդ որ ասոնց երկրորդ բաղադրիչը նոյնն է: Սակայն եւ այնպէս տնտեսավարական իրեն յատուկ հնարներով՝ լեզուն յաջողած է բաւական յստակ զանազանութիւն մը դնել այս երկուքին միջեւ. գոնէ արեւմտահայերէնի ծիրէն ներս:

Մարտավարութիւն-ը, ուրեմն, թշնամիի դիրքին, շարժումներուն ու գործողութիւններուն ուսումնասիրութիւնը, անոր բոլոր տկարութիւններուն, բայց նաեւ կարելիութիւններուն ճիշդ իմացումն ու օգտագործումը եւ սահմանափակ ճակատամարտ մը յաջողապէս աւարտելու հնարամտութիւնն է (tactique): Իսկ **ռազմավարութիւն**-ը,–որ կը կոչուի նաեւ **ռազմագիտութիւն**,– ամբողջ պատերազմ մը վարելու համար պահանջուած հմտութիւնն ու արուեստն է (stratégie): Անշուշտ ասոնք իրարու խորթ հասկացութիւններ չեն, քանի որ ամէն մարտավարութեան մէջ կայ ռազմավարութեան բաժին մը: «***Տակտիկա***-ն,- կը գրէ իրաւաբան Գասպար Տէրտէրեան,- *ռազմական ժամանակաւոր քաղաքականութիւն է, մինչ* ***սթրատեգիա***-ն՝ *երկարատեւ ու հետեւողական քաղաքականութիւն: Առաջինը՝ թշնամին քնացնելու, ապակողմնորոշելու ու խաբելու խաղ մըն է, իսկ երկրորդը՝ թշնամին վհատեցնելու եւ ջախջախելու վախճանական նպատակը կը հետապնդէ՝ աւելի համապարփակ ընդգրկումով եւ հաստատ քաղաքականութեամբ*» (*Կամար*, թիւ 20, էջ 116):

* **Մեկնիլ-մեկնել-մեկնարկել.**- **Մեկնիլ** կը նշանակէ պարզապէս ճամբայ ելլել, ուղեւորուիլ ու հեռանալ որոշ ուղղութեամբ եւ որեւէ միջոցով՝ քալելով, գնացքով, ինքնաշարժով. լայն իմաստով՝ ճամբորդել:

Մեկնել կը նշանակէ անծանօթ կամ դժուարիմանալի բան մը լուսաբանել, բացատրել, պարզաբանել. Յովսէփ Գեղեցիկ մեկնեց փարաւոնին երազը. ուսուցիչը կը մեկնէ գրական հատուած մը, գուշակը կը մեկնէ առեղծուած մը եւ այլն:

Մեկնել կը նշանակէ նաեւ օգնութեան հասնիլ, ձեռքը երկարել մէկուն. օրինակ՝ «Անտէր որբին ոչ ոք ձեռք մեկնեց». բայց նաեւ խնդրել. օրինակ՝ «Ան ողորմութեան համար ձեռք մեկնեց անցորդներուն»:

Մեկնարկ եւ **մեկնարկել** եզրերը շատ նոր են. ասոնք չկան տակաւին Ակադեմիայի քառահատոր բառարանին մէջ (1974), սակայն առաջինը կը գտնուի Աղայեանի երկհատորին մէջ, ուր կը կարդանք. «*Վազքի զանազան*

արշաւների սկսելու պահը: Թռչող մեքենայի թռիչքն սկսելու պահը: Այն սահմանակէտը, որտեղից սկսւում է վազքի՝ արշաւի մրցութիւնը: Սկիզբ, ելակէտ»: Ակադեմիայի քառահատորը փոխարէնը ունի **մեկնասկիզբ** եւ փակագիծի մէջ դրած է start: **Մեկնարկել** համապատասխան բայն ալ կը նշանակէ սկսիլ, շարժիլ, ճամբայ ելլել մեկնարկէն՝ որեւէ մրցութեան համար՝ վազք, լող, ինքնաշարժ, հեծանիւ եւ այլն:

* **Մէջ-միջեւ-ներս.- Մէջ** կը նշանակէ առարկայի մը ներսի մասը. օրինակ՝ շիշին մէջ, գրպանին մէջ, տան մէջ, հոգիին մէջ, սրտին մէջ, գլխուն մէջ: Ան կը նշանակէ նաեւ իբրեւ սահմանափակ մտածուած որեւէ տարածութեան կամ միջոցի մէկ որեւէ կէտը. օրինակ՝ պարտէզին մէջ, դաշտին մէջ, ծովուն մէջ: Ինչպէս նաեւ իրարանման՝ չտարբերակուած առարկաներու ամբողջութեան ծիրէն ներս. օրինակ՝ բանակին մէջ մեծ խանդավառութիւն կը տիրէ, այս աշակերտներուն մէջ ծոյլ չկայ, ծառերուն մէջ թռչուններ կը գիշերեն, ոչխարներուն մէջ հիւանդութիւն մը ինկաւ:

Միջեւ-ը ցոյց կու տայ երկու կամ երկուքէ աւելի տարբերակուած առարկաներ իրարմէ անջատող նիւթական կամ վերացական, տարածական կամ ժամանակային միջոցը. օրինակ՝ «Այս լեռներուն **միջեւ** կը գտնուի խոր կիրճ մը»: «Ջուրը ցամքած էր երկու ափերուն **միջեւ**»: «Երկու ծառերուն **միջեւ** ձգուած է օրօրոց մը»: «Կայծակին եւ որոտումին **միջեւ** հազիւ մէկ երկվայրկեան անցաւ»: «Դպրոցին եւ բնակարանիս **միջեւ** կը գտնուի գրատուն մը»: «Յօնքերուն **միջեւ** նշմարելի էր կնճիռ մը»: Բառս կրնայ նշանակել նաեւ նման առարկաներու փոխադարձաբար վերաբերող որեւէ երեւոյթ կամ գործողութիւն. Օրինակ՝ «Երկու մրցակիցներուն **միջեւ** կը զարգանար լուռ ատելութիւն մը» (որ կը նշանակէ՝ փոխադարձաբար կ'ատէին զիրար): «Ստացուած գումարը բաժնեցինք մեր **միջեւ**»: «Փոքրիկներուն **միջեւ** վէճերը դիւրին կը հարթուին»: «Թշնամիներուն **միջեւ** խաղաղութիւն կնքուեցաւ»: «Անցեալի ատելութեան փոխարէն՝ անոնց **միջեւ** հաստատուեցաւ անկեղծ վստահութիւն մը»:

Միջեւ կապը կիրարկելի չէ հաւաքական այն գոյականներու հետ, որոնք ձեւով եզակի, եւ միայն իմաստով յոգնակի են, այսինքն՝ կը նշեն մէկէ աւելի առարկաներ. այսպէս՝ բացառուած է իբրեւ կապի խնդիր կիրարկութիւնը՝ **զոյգ, ամոլ, խումբ, ամբոխ, բանակ, ժողովուրդ** գոյականներուն. չենք կրնար ըսել՝ **զոյգին միջեւ**,- այլ՝ ամուսիններուն,- կամ **ժողովուրդին միջեւ**,– այլ՝ բնակիչներուն, քաղաքացիներուն, ազգայիններուն,– եւ այլն: Ասոնց յոգնակիները կրնան ազատօրէն կիրարկուիլ իբրեւ կապի խնդիր. օրինակ՝ **զոյգերուն միջեւ, խումբերուն միջեւ** եւ այլն:

Պէտք է իմանալ, որ արեւելահայերէնը յաճախ կը շփոթէ **միջեւ** եւ **մէջ** յետադրութիւնները. օրինակ՝ «*Հրդեհի ու մարդկանց **մէջ** բացուած փարատութիւնը ծածկուել էր փիղմի զանգուածով*» (Աւ. Իսահակեան),– ուր պէտք

էր ունենայինք **միջեւ**: «*Երբ ամուսինների* ***մէջ*** *համերաշխութիւնը չքացել է...*» (Շիրվանզադէ),– ուր նմանապէս պէտք է ունենայինք **միջեւ**:

Գալով **ներս**-ին՝ սա մնայուն շփոթի առարկայ է **մէջ**-ին հետ: **Ներս**-ը իր իմաստին բերումով հակադրուած է **դուրս**-ին եւ կ'ենթադրէ պատսպարուած, փակ կամ ցանկապատուած միջավայր. այս տրամաբանութեամբ ալ կարելի չէ ըսել. «Այս հանդերէն ներս ծաղիկներ ծաղկած են»,– մինչդեռ **մէջ**-ը նման սահմանափակում չունի, չէ հակադրուած որեւէ տարածութեան. օրինակ՝

- Այս լեռներուն **մէջ** գայլեր կ'ապրին,
- Այս ծառերուն **մէջ** վայրի թռչուններ կը գիշերեն,
- Դաշտերուն **մէջ** այլազան ծաղիկներ աճած են,

Ասոնցմէ ոչ մէկը փոխարինելի է **ներս**-ով այն պարզ պատճառով, որ **լեռը, ծառը, դաշտը** փակ միջավայրի գաղափարը չեն արտայայտեր:

Միւս կողմէ՝ **ներս**-ը պատշաճ է կիրարկել այնպիսի բայերու հետ, որոնք որոշ շարժում, տեղափոխութիւն, մէկ միջավայրէ մէկ ուրիշը անցում կը թելադրեն. այսպիսիներէն թուենք՝ **բերել, խուժել, մտնել, ներս առնել, ներս քաշել, սողոսկիլ, սպրդիլ** եւ այլն. օրինակ՝

- Խոտի դէզերը մարագէն **ներս բերէք:**
- Բարկ օդը ռունգերէս **ներս խուժեց:**
- Գողերը կողմնակի դռնէն **ներս մտած են**:
- Ոչխարները փարախէն **ներս առինք:**
- Քաղցը գիւղերէն **ներս քաշեց** սոված գալերը:
- Անօրինակ վախ մը **սողոսկեցաւ** էութենէս **ներս**:
- Աննշմար **սպրդեցանք** անոնց շարքերէն **ներս:**

Անշուշտ բացառուած չէ, որ այս օրինակներէն ոմանք **ներս**-ը փոխարինեն **մէջ**-ով. որքան ալ **ներս**-ը աւելի բնորոշ ըլլայ բերուած բայերուն, օրինակ՝ վերջինը. բաղդատել՝

Աննշմար **սպրդեցանք** անոնց **շարքերէն ներս:**

Աննշմար **սպրդեցանք** անոնց **շարքերուն մէջ:**

Այսուհանդերձ **ներս**-ը կը պահէ իր նրբերանգային առաւելութիւնը. միւս կողմէ՝ նման փոխարինում միշտ կարելի չէ, ինչպէս է պարագան առաջին օրինակին: Իսկ երկրորդ օրինակին մէջ՝ **ռունգերէս ներս** եւ **ռունգերուս մէջ** նոյն յարաբերութիւնը ցոյց չեն տար. «Օդը ռունգերուս մէջ խուժեց» կը նշանակէ այնտեղ ալ կայք հաստատեց ու մնաց, մինչ «ներս խուժեց» կը նշանակէ ռունգերուս մէջ մտաւ, բայց թէ ո՞ւր յանգեցաւ՝ անորոշ է, ըստ ամենայնի ենթադրելի, թէ ան շարունակեց իր ճամբան:

Պէտք է խուսափիլ սապիսի բռնազբօսիկ կիրարկութիւններէ. «Դպրոցին **յարկէն ներս** ան ինքզինք ապահով կը զգայ». կարելի չէ՝ ո՛չ **յարկէն ներս** ըսել, ո՛չ **յարկին մէջ**, այլ պէտք է ըսել **յարկին տակ:** Կամ թէ՝ «Մեր թերթերէն ներս ոչ մէկ նորութիւն կը գտնես». պարզ է, որ պէտք է ըսուի «թերթերուն մէջ»: Այլեւ՝ «Անոր **մարմնէն ներս** այլազան հիւանդութիւններ

բոյն դրած են». այս պարագային եւս պէտք է ըսել «մարմնին մէջ»: «Անոր միօրինակ կեանքէն **ներս** մեծ փոփոխութիւն մըն էր այս նոր կապը». դա՛րձեալ **մէջ**՝ «կեանքին մէջ»:

Կարելի է անդրադառնալ, թէ լեզուական մեղանչումներուն մեծ մասը կը վերաբերի **ներս**-ի սխալ ու անտեղի կիրարկութեանց, մինչ **մէջ**-ը աւելի ճկուն է, աւելի դիւրամատչելի:

* **Մինչ-մինչդեռ-մինչեւ.- Մինչ**-ը եւ **մինչդեռ**-ը ստորադասական շաղկապներ են. ընդհանրապէս կը ծառայեն ստորադաս նախադասութեամբ ցոյց տալու գլխաւոր նախադասութեան հակադրուող միտք մը. օրինակ՝ «Դուք ձեր բոլոր զէնքերը ուղղեցիք մեր դէմ, **մինչ** (կամ՝ **մինչդեռ**) **մենք** կը պատրաստուէինք հաշտութեան ձեռք երկարել ձեզի»: «*Այնպէս անփոյթ, այնպէս հանգիստ անցնում ես իմ տան մօտով, **մինչ*** (կամ՝ **մինչդեռ**) *ես ուրիշ տներում իսկ քեզ եմ փնտռում կարօտով*» (Ս. Կապուտիկեան). ուրեմն մէկուն անփոյթ ու հանգիստ անցքը, միւսին կարօտագին փնտռտուքը...:

Մինչ-ը կարգ մը կայուն բառակապակցութեանց մէջ ունի նախադրութեան արժէք. ասոնք են՝ **մինչ այս, մինչ այդ, մինչ այն**: Կը պատահի, որ գեղարուեստական կամ գրողական ինչ-ինչ պատճառներով **մինչ** ըսուի **մինչեւ** նախադրութեան փոխարէն. օրինակ՝ «*Ես **մինչ** ի մահ, կախաղան... պիտի գոռամ ազատութիւն*» (Մ. Նալպանտեան): Օրինակ մըն ալ Թումանեանէն. «*Գիւղից հեռու մինչ էսօր կայ ուռենի մի սգաւոր*»: Ուրեմն **մինչեւ**-ը նախադրութիւն մըն է, որ իր առարկայանիշ խնդիրին հետ ցոյց կու տայ որեւէ ժամանակի կամ տարածութեան վախճանական սահմանը. օրինակ՝ մինչեւ առաւօտ զուարճացան, մինչեւ կամուրջ քալեցինք: Ան ունի շաղկապական կիրարկութիւն եւս՝ այս պարագային ցոյց կու տայ գործողութեան մը տեւողութեան սահմանը. օրինակ՝ «Ան քեզի պիտի օգնէ, մինչեւ կատարելապէս սորվիս դասդ»: Բացառուած չէ, որ այս վերջին գործածութեան առթիւ **մինչեւ**-ին կցուի **որ** թարմատարը, եւ ունենանք **մինչեւ որ**. «Կե՛ր, **մինչեւ որ** կշտանաս, ու խմէ՛, **մինչեւ որ** յագենաս»:

* **Մոլութիւն-մոլորութիւն.- Մոլութիւնը** որեւէ բանի հանդէպ զգացուած ծայրայեղ կամ չափազանցուած յարատեւ ձգտումն է, որ այլեւս ախտագին բնոյթ ունի եւ իբրեւ ֆիզիքական կամ բարոյական արատ՝ անբաժանելի է ենթակային բնութենէն գէթ անոր առօրեային մէջ. օրինակ՝ ծխախոտի մոլութիւն, ոգելից ըմպելիի մոլութիւն, բայց նաեւ՝ ընթերցումի, թղթախաղի, սեռային հակումներու եւ այլնի:

Մոլորութիւնը յարաբերաբար ժամանակաւոր շեղումն է ուղիղ ճամբէն, կենցաղային առօրեայ բնական բարքերէն՝ ամուսնական, կրօնական, ազգային, բարոյական ու գաղափարական հանրօրէն ընդունուած վարքագիծէն:

* **Յաջորդ-յառաջիկայ-միւս.**- «*Յաջորդ տարի յոբելենական է 109-ամեայ "Ասպարէզ"-ին համար*» (*Ազդակ*, 2-10-2017, էջ 5):

Յաջորդ բառին այս կիրարկութիւնը՝ իբրեւ որոշիչ **տարի** գոյականին, յօդուածի մը բոլորովին սկիզբը, սխալ է, որովհետեւ ան չի յաջողիր բնորոշել խօսողին ի մտի ունեցած տարին: Այսպէս է, քանի որ չէ նշուած նախապէս իբրեւ հիմք կամ մեկնակէտ ծառայող ծանօթ տարի մը, որուն իբրեւ յաջորդ կը ներկայանայ այս վերջինը: Եւ իրօք ալ, հասկնալի չէ, թէ ո՛ր տարուան կ'ակնարկէ «յաջորդ տարի»-ն, որ յոբելենական է: Ուրեմն իմաստաւորուելու համար, **յաջորդ**-ը իրմէ առաջ կը պահանջէ անունը այլ տարուան մը, որ իբրեւ մեկնակէտ պիտի ծառայէ իրեն:

Հիմա ըսենք. «Անոնք որոշում կայացուցին 1956-ին եւ յաջորդ տարի գործադրեցին զայն»: Այս պարագային «յաջորդ տարի» կապակցութիւնը իմաստ ունի, որովհետեւ ան կը յենի 1956-ին վրայ՝ իբրեւ մեկնակէտի, եւ ինք կը դառնայ 1957-րդ տարին:

Այս սխալ կիրարկութիւնը մեր բարբառին մէջ մուտք գործեց վերջին մէկերկու տասնամեակներուն՝ արեւելահայերէնի ճամբով, ուր ան ունի շատ ընթացիկ կիրարկութիւն մը. սա, ենթադրաբար, իր կարգին ռուսաբանութիւն է, քանի նման ոճ չենք գտներ արեւելահայ հին դասականներուն քով:

Բերուած սխալագրութեան պէտք եղած ածականը, այս պարագային, **յառաջիկայ** ածականն է. «**Յառաջիկայ տարի** յոբելենական է 109-ամեայ "Ասպարէզ"-ին համար»: **Յառաջիկայ** որոշիչը մեկնակէտի կարիք չունի. իր մեկնակէտը իր մէջն իսկ է, լռելեայն կ'իմացուի: Արդարեւ, **յառաջիկայ**-ն այն է, որ կը յաջորդէ խօսած պահդ պարփակող ժամանակը, նաեւ՝ տեղը. այս պարագային՝ 2017-ը:

Այս պայմաններուն մէջ եւ որեւէ հայերէն գիտցողի համար «յառաջիկայ տարի» բառակապակցութիւնը կը բնորոշէ 2018-ն, քանի որ այս խօսքը արտասանուած է կամ գրուած է հի՛մա՝ այսօ՛ր, թերթի ներկա՛յ թիւին մէջ, 2017-ի՛ն:

Ա) «**Յաջորդ օրը** պիտի վերադառնան»: Յաջորդ՝ յարաբերաբար ո՞ր օրուան,– չէ մատնանշուած: Ուրեմն ե՞րբ է այդ վերադարձը,– չենք գիտեր, քանի **յաջորդ**-ը մեկնակէտ չունի:

Բ) «**Ուրբաթ օրը** պիտի մրցին եւ **յաջորդ օրը** պիտի վերադառնան»: Ե՞րբ է այդ վերադարձը,– **շաբաթ** է, պարզ է, քանի այստեղ **յաջորդ**-ը մեկնակէտ մը ունի՝ **ուրբաթ**-ը:

Գ) «**Յառաջիկայ** երեքշաբթի պիտի վերադառնան»: Ե՞րբ է այդ վերադարձը,– այս՝ ներկայ օրուան,– ուր կը խօսինք կամ կը գրենք,– յաջորդող եւ մեր առջեւ գտնուող առաջի՛ն երեքշաբթին է:

Յաջորդ-ին զուգահեռ կիրարկութիւն ունին **միւս** եւ **ուրիշ** դերանունները, որոնք իմաստաւորուելու համար նմանապէս կը պահանջեն յենակէտ մը. օրինակ՝ «**Մեծ եղբայրը** ճամբորդած էր, իսկ **միւսը** կը մնար տունը»: Սա լիիմաստ հաղորդում է, քանի **միւս**-ը ունի իր յենակէտը, որուն կը յղուի

ինք: Նոյն լրագիրը, որուն ակնարկեցինք, **ունի** խորագիր մը, որ հետեւեալն է. «**Միւս** շաբաթ խնդիրին շուրջ քննարկում պիտի ունենանք Փութինի հետ» (3-10-17, էջ 1): Այս թիւր կիրարկումը բոլորովին կը նմանի **յաջորդ**-ի նշեալ կիրարկութեան, այսինքն՝ մնացած է առանց յենակէտի. չէ յիշուած որեւէ ժամանակային միաւոր, յատկապէս ծանօթ «շաբաթ» մը, յարաբերաբար որուն՝ այս մէկը ըլլար **միւսը**՝ քննարկումի շաբաթը:

Կրնայ պատահիլ, որ **յաջորդ, միւս** եւ **ուրիշ** բառերուն կիրարկութեան իբրեւ մեկնակէտ ծառայեն ոչ թէ նախապէս յիշուած առարկաներ, այլ այնպիսիները, որոնց գոյութիւնը լռելեայն կ'իմացուի՝ ըստ իրերու դրուածքին ու դասաւորումին. օրինակ՝

- Աշակերտներ շարուած են եւ բուժքոյրը կը պատուաստէ անոնց թեւերը. աւարտելով մէկունը՝ կ'ըսէ. «**Յաջորդը** թող գայ»,– իրերու դրուածքը այնպիսին է, որ «յաջորդը» ինքնաբերաբար պիտի բնորոշէ աշակերտ մը («նախորդը» աշակերտ մըն էր), եւ ճիշդ այն՝ որ կը գտնուէր պատուաստը ստացողին ետեւը:

- Նոյն պատուաստողը կրնար ըսել. «**Ուրիշ** մը թող գայ»,– նորէն եկողը պիտի ըլլար աշակերտ մը, սակայն առանց կարգի պահպանումի. Հաւանաբար աշակերտները այս պարագային շարք ալ չկազմէին, այլ խառն ի խուռն գտնուէին պատուաստողին շուրջ:

- Եւ կամ՝ յանցաւոր աշակերտը սաստելով՝ ուսուցիչը կ'ըսէ. «**Յաջորդին** (իմա՝ յաջորդ յանցանքը գործելուդ – ԱԵ) դպրոցէն պիտի վտարուիս»,– ուր յենակէտը այդ աշակերտին գործած յանցանքն է, որուն ծանօթ է աշակերտը:

- Փոքրիկները կը խաղան սենեակի մը մէջ, երբ մայրը կ'ըսէ. «**Միւս** սենեակը գացէք խաղացէք»,– ուր լռելեայն կ'իմացուի յենակէտ «այս սենեակը», ուր կը խաղան անոնք եւ ուրկէ պարտին դուրս գալ փոքրիկները: Նման յորդոր մը կը թելադրէ տակաւին ուրիշ բան եւս. որ այդ բնակարանը կը բաղկանայ միայն երկու տրամադրելի սենեակէ, եւ երրորդ մը չկայ: Եթէ գտնուէր երրորդ (կամ աւելի) սենեակ մըն ալ, ապա հրամանը պիտի ունենար տարբեր ձեւաւորում, որ ահաւասիկ. «**Ուրիշ** սենեակ մը խաղացէք»: Ուրեմն, եթէ ընտրելի առարկան միայն մէկ հատ է, ան կ'որոշադրուի «միւս» որոշիչով, մինչ «ուրիշ»-ով կրնայ որոշադրուիլ ընտրելի բազում առարկաներէն մէկը:

Ուրիշ-ին կը յարին նաեւ **այլ** եւ **տարբեր** բառերը:

Եթէ մայրը այդ հրամաններէն մէկը կամ միւսը տար «բակին մէջ» խաղացող փոքրիկներուն, ապա այդ հրամանը ոչ մէկ իմաստ պիտի ունենար, քանի **բակը**, ուր կը խաղան փոքրիկները, չի կրնար իբրեւ մեկնակէտ ծառայել «յաջորդ», «միւս» կամ «ուրիշ» **սենեակ** կապակցութիւններուն, եւ ակնկալելի ալ չէ արդէն, որ լեզուն գիտցող մայր մը նման թելադրանք ընէր:

- «Այս բոլորը յանձնեց եւ **միւս օրը** վերադարձաւ». մեկնակէտը այս պարագային երկուստեք լռելեայն իմացուող «յանձնումի օրն» է: Նկատենք, որ

նման կիրարկութեան մէջ **միւս** եւ **յաջորդ** հոմանիշ են. «Այս բոլորը յանձնեց եւ **յաջորդ օրը** վերադարձաւ»:

* **Յաւակնոտ-յաւակնորդ.- Յաւակնոտ**-ը այն անձն է, որ օժտուած է սնամէջ յանդգնութեամբ մը եւ համարձակութեամբ մը եւ շատ բարձր համարում ունի իր արժանիքներուն, կարողութեան ու գիտելիքներուն հանդէպ՝ ուրիշները նսեմացնելու հակամէտութեամբ: Յաւակնորդը նոր բառ է. սա՛ եւս չենք գտներ Մալխասեանի մէջ, եւ ի տարբերութիւն նախորդին՝ ոչ մէկ բացասականութիւն կը բովանդակէ. **յաւակնորդ** կը նշանակէ թեկնածու որեւէ բանի՝ պաշտօնի, տիտղոսի, մրցանակի, գահի, հարսնացուի եւ այլն: Անշուշտ բացառուած չէ, որ յաւակնորդը միաժամանակ յաւակնոտ ըլլայ, երբ **ան կ'ակնկալէ** տիրանալ բանի մը, որ իր արժանիքներէն կամ կարողութենէն շատ բարձր է:

* **Յաղթել-յաղթահարել.- Յաղթել** կը նշանակէ որեւէ կարգի ու բնոյթի ճակատումէ՝ պատերազմէ, մրցութենէ, խաղէ (նարտ, թուղթ, շախմատ...), բանավէճէ եւ այլնէ յաղթական դուրս գալ, գերազանցել միւսները, գերակշռել. օրինակ՝ «Սպիտակ մազերը հետզհետէ յաղթեցին սեւերուն»: **Յաղթահարել** շատ մօտիկ հոմանիշ է յաղթել-ին՝ սա տարբերութեամբ, որ յաղթահարումը աւելի երկար պայքար, լարում ու հետեւողականութիւն կ'ենթադրէ եւ յաղթանակի առարկան ընդհանրապէս վերացական է. օրինակ՝ յաղթահարել ամչկոտութիւնը, բարդոյթը, հիւանդութիւնը, մոլութիւնը, արգելքները, խոչընդոտը, բնութեան զանազան տարերքը՝ ցուրտը, երաշտը, սովը եւ այլն:

* **Յանգիլ-հանգիլ-հանգչիլ.- Յանգիլ** ստուգաբանօրէն կը նշանակէ եզրակացութեան մը կամ բանի մը վերջը, ծայրը հասնիլ. օրինակ՝ «Մեր ընտրած ճամբան յանգեցաւ անելի մը»: «Վէճը հետզհետէ յանգեցաւ անձնական վիրաւորանքի, եւ այս ալ իր կարգին՝ ծեծկռտուքի»: «Ամուլ սպասումները յանգեցան խոր յուսախաբութեան»: «Տարիներու յամառ հետազօտութիւնը ոչ մէկ արդիւնքի յանգեցաւ»:

Հանգիլ-ը աշխարհաբարի մէջ յառաջացած բայ մըն է, որուն սկզբնաձեւն է **հանգչիլ**. կը նշանակէ վերջ գտնել, սպառիլ, մարիլ. օրինակ՝ կը հանգի մոմը, աչքին լոյսը, կրակը եւ այլն. «Երկինքի վրայ հանգեցաւ վերջին աստղն ալ»: Փոխաբերաբար՝ մեռնիլ. օրինակ՝ «Երկար պայքարելէ ետք մահուան դէմ՝ վերջապէս հանգեցաւ»:

Հանգչիլ-ը հանգիստ առնելն է. օրինակ՝ «Երկար հնձելէ ետք մշակները հանգչեցան, անոնց հետ հանգչեցան գերանդիները եւս»: «Նստի՛ր, թող ոսկորներդ քիչ մը հանգչին»: «Գլուխս տարիք, ձգեցէ՛ք, որ քիչ մը հանգչիմ»: Փոխաբերաբար՝ կը նշանակէ նաեւ մահուան մէջ հանգիստ գտնել, մեռնիլ. կ'ըսուի անոնց համար, որոնց կեանքը այլեւս չարչարանք մըն է. «Այսքան տառապելէ ետք վերջապէս հանգչեցաւ»: Շիրմաքարերու վրայ

գրուած «հանգեաւ» բառը ճիշդ այս վերջին իմաստին գրաբարածեւ խոնարհումն է:

Ուրեմն գրաբարեան **հանգչիլ** ածանցաւոր բայը աշխարհաբարի մէջ երկփեղկուած է՝ տալով. ա) ածանցազուրկ՝ **հանգիլ** պարզ կանոնաւոր բայը եւ բ) ածանցաւոր, սակայն նմանապէս պարզ կանոնաւոր **հանգչիլ** բայը:

հանգեայ հանգեար հանգեաւ հանգի՛ր
հանգեցայ հանգեցար հանգեցաւ հանգի՛ր
հանգչեցայ հանգչեցար հանգչեցաւ հանգչի՛ր

* **Յանկարծակի գալ-յանկարծակիի գալ.-** Առաջինը կը նշանակէ անսպասելիօրէն կամ չսպասուած պահու մը գալ- հասնիլ. մինչ **յանկարծակիի գալ**-ը որեւէ անակնկալի պատճառած տպաւորութիւնը կամ զգացողութիւնն է. «Անոր յանկարծակի գալուստով մենք ալ յանկածակիի եկանք»: «Պանդուխտ որդին յանկարծակի եկաւ, եւ զինք դիմաւորողները յանկարծակիի եկան»:

Կը համապատասխանէ **անակնկալ գալ-անակնկալի գալ** զոյգին:

* **Յետ-հետ.-** Քանի մը տանամեակ առաջ այս զոյգը շփոթի տեղիք չէր տար արեւմտահայ իրականութեան մէջ, սակայն անկախութենէն ետք, երբ արեւելահայերէնէ փոխադրումները արեւմտահայերէնի բազմացան, հետզհետէ զգալի շփոթ մը սկսաւ յառաջանալ ասոնց կիրարկութեան կամ, աւելի ճիշդը, մեկնաբանութեան մէջ: Ընդհանրապէս գրաբարեան **յետ** նախադրութեան,– որ նաեւ մակբայ է,– արեւելահայերէնի մէջ ներկայիս ունեցած կիրարկութիւններն են շփոթի բուն առարկան:

Սկսինք **հետ** յետադրութենէն, որ գրաբարի թէ զոյգ աշխարհաբարներու մէջ կը պահէ իր բնիկ՝ միասնութեան, բան մը միատեղ կամ միաժամանակ ընելու իմաստը. օրինակ՝ «Անոնք իրարու հետ կը խաղան». «Կարոն Մարոյին հետ կը պարէ». «Գարնան հետ ծիծեռնակները վերադարձան» եւ այլն: Այս կիրարկութիւնը՝ իր ուղղագրութեամբ, որեւէ հարց չի յարուցեր:

Բարդութիւնը կը սկսի **յետ**-ով, որ արեւելահայ արդի ուղղագրութեամբ կը գրուի **հետ** եւ կը նշանակէ՝ ա) **ետ**, այսինքն՝ դարձեալ, վերստին. բ) **ետեւ**: Տրուած ըլլալով, որ **յետ** (այսինքն՝ **հետ** գրուող) բառը այս երկու իմաստներէն ոչ մէկը ունի արեւմտահայերէնի մէջ, ահա ոմանք չեն յաջողիր կողմնորոշուիլ ու վերականգնել ասոնց մեսրոպեան ուղղագրութիւնը եւ կը գրեն **հետ**: Այսպէս, հոն ուր արդի արեւելահայերէնը կը գրէ «**նա հետ եկաւ**»,– պէտք է հասկնալ «**նա յետ եկաւ**», եւ թարգմանել՝ ա) ան ետ եկաւ, այսինքն՝ վերադարձաւ, բ) ան ետեւ եկաւ,– ահա այս զատորոշումն է, որ շատ անգամ տեղի չ'ունենար, եւ արդի հայ լրագրողը անճրկած կը գրէ «**ան հետ եկաւ**», որ իմաստ չունի արեւմտահայերէնի մէջ:

Այս դժուարութեան վրայ կ'աւելնան՝ ա) բառասկիզբին **յետ** արմատը ունեցող բառերը, որոնց մէջ ան կը նշանակէ՝ **ետեւ, դէպի ետեւ** եւ **ետք, յե-**

տոյ, բ) **հետ** արմատը ունեցող բառերը, որոնց մէջ ան կը նշանակէ հետք, հետեւողութիւն, յաջորդականութիւն:

Ստորեւ փոքրիկ փունջ մը օրինակներու.

Ա) **Յետադաս, յետադէմ, յետահայեաց, յետամնաց**, այլեւ՝ **յետմահու, յետ խորհրդակցութեան, յետ երկար հիւանդութեան** եւ այլն:

Բ) **Հետազօտել, հետախոյզ, հետամուտ, հետապնդել, հետաքննել, հետաքրքիր** եւ այլն:

Ասոնց ցանկը երկար է, եւ յաճախ բաւական դժուար է ըստ իմաստի կողմնորոշուիլ, եւ այս պատճառով ալ յանձնարարելի է, որ ամեն գրող իր տրամադրութեան տակ ունենայ ըստ ամենայնի ամբողջական բառարան մը, անշուշտ ոչ միայն այս երկու նմանաձայն բաղադրիչներու ստուգումին, այլեւ ընդհանրապէս արեւմտահայերէն գրելու առթիւ: Ներկայ տուեալներով մեզի լաւագոյն օժանդակողը կրնայ ըլլալ Մալխասեանի քառահատոր բացատրական բառարանը՝ շնորհիւ իր համապարփակութեան եւ աւանդական ուղղագրութեան:

* **Յոյլ-հոյլ-բոյլ**.- **Յոյլ**-ը քիչ մը գրքունակ բառ է եւ կը նշանակէ թոյլ, ծոյլ, տկար, դանդաղկոտ ու ծանրամարմին, բայց նաեւ պարարտ, գէր, թանձր, ստուար, յատկութիւններ, որոնք կը յառաջանան նախորդներէն:

Հոյլ կը նշանակէ խումբ, երամ, ամբողջութիւն. սա իբրեւ հոմանիշ ունի **բոյլ** բառը. օրինակ՝ «Իսկ եթէ գոգդ ալ թափին **բոյլքն** աստեղաց երկնքին» (ՊԴ, Լճակ):

* **Նախ-ապա-յետոյ-վերջապէս-հուսկ.**- Ասոնց չորսն ալ ժամանակի մակբայ են: Ունին, սակայն, կիրառական որոշ նրբութիւններ, որոնք պէտք է յարգուին: Այս մակբայները կը բնորոշուին մերձաւոր գործողութիւններու յաջորդակա-նութիւն ցոյց տալու յատկութեամբ:

Իրարու յաջորդող այլազան գործողութեանց առաջինի յիշատակումը կը կատարուի **նախ**-ով. «**Նախ** շունչ մը առ»: «Պէտք է **նախ** տունին հիմերը դնել»:

Յաջորդը, ժամանակագրականօրէն, **ապա**-ն է, որ յարաբերաբար կարճ ժամանակով մը կամ անմիջականօրէն կը յաջորդէ առաջինին. օրինակ՝ «**Նախ** կօշիկներդ հանէ, **ապա** ներս մտիր»: Եթէ գործողութիւններու շարքը կ'աւարտի երկուքով, թոյլատրելի է նախէն ետք ըսել **յետոյ**. «**Նա՛խ** կօշիկներդ հանէ, **յետո՛յ** ներս մտիր»:

Իսկ եթէ այդ շարքը կ'ենթադրէ երկուքէ աւելի գործողութիւններ, այդ պարագային **նախ**-ին կը յաջորդէ **ապա**-ն, այս մէկին ալ կը յաջորդէ **յետոյ**-ն: Ինչ որ կը նշանակէ, թէ ժամանակագրականօրէն **ապա**-ն աւելի մօտ է **նախ**-ի, մեկնակէտին, սկիզբին. օրինակ՝ «**Նախ** ցանկապատ մը քաշենք այս կալուածին, **ապա** մաքրենք աղբերն ու քարերը, **յետոյ** սկսինք շինարարութեան»:

Երբ հարկ կ'ըլլայ թուել այլ գործողութիւն մըն ալ կամ գործողութիւններ, վերջինը կը բնորոշենք **վերջապէս** մակբայով, որ իր բառային իմաստով ալ կը յուշէ, կը թելադրէ վերջինը. օրինակ՝ «**Նախ** թեթեւօրէն ընթրեց, **ապա** սուրճ մը խմեց, **յետոյ** մեծ վարանումով անցաւ գրասեղանին շուրջ ու **վերջապէս** սկսաւ շարադրել այդ անբաղձալի հրաժարականը»:

Երբ թուարկելի գործողութիւններու թիւը կը մեծնայ, կարելի է տնտեսել զանոնք՝ ի մի խմբելով յարակից գործողութիւնները համադասական միաւորիչ շաղկապներու միջոցաւ. օրինակ՝ «**Նախ** կոնակին վրայ լայն բացին գոմին դուռն ու արձակեցին ամիսներէ ի վեր բանտարկուած եզները, **ապա** վար առին պատէն կախուած լուծը, **յետոյ** ի մի բերին եզներն ու լծեցին զանոնք, **վերջապէս** խաչ մը հանեցին ճակատնուն ու ճամբայ ինկան դէպի լուսաւոր արտերը»:

Վերջապէս-ին գրեթէ բոլորովին նոյնանիշ է **հուսկ** մակբայը, որ կրնայ ամէն գործածութեան մէջ փոխարինել զայն, սա՛ տարբերութեամբ, որ հազուագիւտ կը գործածուի ան՝ կորսնցուցած ըլլալով իր կենսունակութիւնը:

* **Նախորդ-նախկին-նախնի**.- Ասոնք որոշ ժամանակագրական հիմքով յառաջացած հոմանիշ ածականներ են, որոնք ունին գոյականական կիրարկութիւն եւս, քիչ մը ամէն ածականի պէս:

Նախորդ-ը կը նշանակէ ներկայի որեւէ առարկայէ (անձ, անասուն, իր, երեւոյթ եւ այլն) ոչ շատ առաջ եղած, գտնուած, եկած, ապրած եւ որուն յիշատակը յարաբերաբար թարմ է. օրինակ՝ «Նախորդ տնօրէնը 10 տարի պաշտօնավարեց», այսինքն՝ ան որ գործած է ներկայի տնօրէնէն առաջ, «Նախորդ տարի Հայաստան գացինք», այսինքն՝ ընթացիկ տարին կանխողը եւ այլն:

Նախկին-ը նախորդէն կը տարբերի իր վաղեմութեամբ. կը նշանակէ աւելի հին քան նախորդը կամ նախորդին նախորդները: Տեղին համեմատ, սակայն եւ յատկապէս իրերու պարագային, ան կը կիրարկուի առանց միջանկեալ նախորդի մը յիշատակումին. օրինակ՝ «Այս ինքնաշարժս նախկինէն աւելի առոյգ է», «Նախկին բնակարանս աւելի յարմարաւէտ էր» եւ այլն:

Նախնի-ն իր կարգին կ'ակնարկէ անհամեմատօրէն աւելի հին կամ պատմականօրէն հեռաւոր, սկզբնական հասկացութեանց. օրինակ՝ «Նախնի մարդիկ քարայրներու մէջ կ'ապրէին», «նախնի հայրեր», որ է նախահայրեր. այսպէս կը կոչենք թէ՛ ընտանեկան-արիւնակցական առումով մեր հեռաւոր անցեալի հարազատները, թէ՛ ազգային առումով՝ պատմական հեռաւոր դէմքերը: Այս վերջինը շատ աւելի գոյականական կիրարկութիւն ունի՝ **նախնիք** կամ **նախնիներ** ձեւով. պէտք չէ ըսել **նախնիքներ**:

Տեսնել նաեւ **առաջուան-վաղեմի-երբեմնի:** (*ՀՀՀ, Հտր. 39*)

* **Նմանակ-տարբերակ.**- Ասոնք իրարու հետ շատ շփոթուող բառեր են, որոնք, հակառակ իրենց շատ մակերեսային նմանութեան, կը բնորոշեն տարբեր հասկացութիւններ:

Նմանակ-ը ըստ էութեան տարբերելով իր բնորդէն՝ անոր հետ կը նոյնանայ արտաքին աւելի կամ պակաս յատկութիւններով: Նմանակը ըստ ինքեան կեղծ է՝ յարաբերաբար բնորդին: Բայը՝ կը կոչուի **նմանակել,** որ հոմանիշ է **կապկել**-ին:

Տարբերակ-ը, ըստ էութեան նոյնանալով իր բնորդին հետ, անկէ կը տարբերի արտաքին աւելի կամ պակաս յատկութիւններով. այսպէս, օրինակ, գեղարուեստական երկի մը սկզբնական կամ հիմնական նկատուած մշակումին՝ բնորդին, մէկ վերամշակուած տարբերակը կամ ինքնուրոյն արժէք ներկայացնող հասկացութեան մը դրսեւորումներէն իւրաքանչիւրը: Հոմանիշներ՝ **այլակ, փոփոխակ:** *Սասնայ ծռեր* դիւցազնավէպը, օրինակ, կը ներկայանայ քանի մը տասնեակ տարբերակներով, տարբերակներ ունին Թումանեանի *Անուշի* կարգ մը հատուածները, ինչպէս շատ ուրիշ գրողներու աշխատութիւնները:

* **Նշանակելի-նշանակալի(ց).-** Ասոնցմէ ոչ մէկը ունէր գրաբարը:

Նշանակելի կը նշանակէ պարզապէս նշան մը կրելու, նշուելու, նկատի առնուելու, յիշուելու յատկութիւն ունեցող. օրինակ՝ «Ուսուցիչը դասին **նշանակելի** հատուածները յանձնարարեց արտագրել» եւ այլն. ուրեմն՝ **նշանակելի** ըստ ինքեան կարեւոր կամ ուշագրաւ չի նշանակեր, սակայն տրուած ըլլալով, որ մենք կը նշանակենք ընդհանրապէս բաներ, որոնք իրենց նմաններէն աւելի կարեւոր կամ ուշագրաւ են, այս պատճառով ալ **նշանակելի** մեր բառարանագիրներուն կողմէ թարգմանուած է իբրեւ **կարեւոր, ուշագրաւ, նկատելի** եւ այլն (Գայայեան, Ճիզմեճեան, Տէր Խաչատուրեան):

Մինչդեռ **նշանակալի**-ն ուրիշ է. սա պարզապէս կը նշանակէ ըստ ինքեան յատուկ նշանակութիւն ներկայացնող, յատուկ կարեւորութիւն, իմաստ, խորհուրդ բովանդակող. օրինակ «**նշանակալի** միտքեր կ'արտայայտէ հեղինակը այս յօդուածին մէջ», «**նշանակալի** ժպիտ մը գծագրուեցաւ դէմքին» եւ այլն: **Նշանակալի** եւ **նշանակալից** նոյնանիշ տարբերակներէն հիմա աւելի այժմէական է առաջինը, որովհետեւ ծանր կը հնչէ **լից** վերջաբաղադրիչը. բաղդատել՝ **ամօթալի-ամօթալից, արկածալի-արկածալից, իմաստալի-իմաստալից** եւ այլն. թէեւ խօսողը կամ գրողը բոլորովին ազատ է ունենալու իր նախընտրութիւնը:

Նոյն յարաբերութիւնը ունին **բովանդակելի** ու **բովանդակալի** բառերը:

Բովանդակելի է ամէն ինչ որ կրնայ բովանդակուիլ, տեղ մը բանի մը մէջ սեղմուիլ. օրինակ՝ «Այս քու միտքերդ **բովանդակելի** չեն», այսինքն՝ չեն ընկալուիր, չեն իւրացուիր, չեն մարսուիր: Մինչ բովանդակալի կը նշանակէ հարուստ բովանդակութիւն կամ իմաստ ունեցող, հետաքրքրութիւն շարժող. «**Բովանդակալի** դասախօսութեան մը ներկայ եղանք անցեալ շա-

բաթ». սա իր կարգին նոյնանիշ է **բովանդակալից** բառին, որ հաւանաբար շատ աւելի տարածում ալ ունի:

* **Շնորհիւ-հետեւանքով-բերումով.**- Երեքն ալ կապեր են. առաջինը նախադրութիւն ու յետադրութիւն է միաժամանակ, երկրորդը եւ երրորդը յետադրութիւն են: Երեքն ալ կը ծառայեն բայական հետեւանքի պարագայի ձեւաւորումին, սա՛ տարբերութեամբ, որ առաջինը ցոյց կու տայ *դրական* ելք կամ վախճան, երկրորդը՝ *բացասական*, իսկ երրորդը՝ *չէզոք*. օրինակ՝

Ա) «Յամառ աշխատանքին **շնորհիւ** յաջողեցաւ քննութեան» կամ՝ «Շնորհիւ յամառ աշխատանքին[2] յաջողեցաւ քննութեան»:

Բ) «Անուշադրութեան **հետեւանքով** ինկած է անելի մէջ»:

Գ) «Յերեկուան երկարացումին բերումով՝ աշխատանքի ժամերը աւելցուց»:

Բաղդատել՝ 1) «տեղումներու **բերումով**՝ մերձակայ գետը յորդեցաւ»: Այս գրողը անտարբեր է գետի յորդումին հանդէպ. ան պարզապէս կը տեղեկագրէ իրողութիւնը: 2) «տեղումներու **շնորհիւ**՝ չքացաւ երաշտի մտավախութիւնը»: Երաշտի չքացումը դիտուած է, արդարօրէն, իբրեւ դրական իրողութիւն: 3) «տեղումներու **հետեւանքով**՝ քանդուեցաւ գիւղին ամբարտակը»: Տարբեր չէր կրնար ըլլալ. ամբարտակի քանդումը դիտուած է իբրեւ բացասական երեւոյթ:

Արդի սերունդը հակում ունի այս երեքը փոխարինելու **արդիւնքով, իբրեւ արդիւնք, իբրեւ հետեւանք** բառ ու բառակապակցութիւններով, որոնք գռեհիկ ռուսաբանութիւն են եւ կ'ապականեն արդի հայերէնը՝ ի Հայաստան եւ ի սփիւռս. օրինակ՝ «Աշխատանքի չգոյութեան **արդիւնքով** գաղթեցին արտասահման» եւ այլն:

* **Ուժգին-ուժեղ.**- **Ուժգին**-ը մակբայ է, հետեւաբար շատ աւելի կիրարկելի է բայերու կամ բայանուններու հետ՝ բնորոշելու համար վերացական հասկացութիւններ. օրինակ՝ ուժգին հարուածել եւ ուժգին հարուած, ուժգին բողոքել եւ ուժգին բողոք եւ այլն:

Ուժեղ-ը կը վերաբերի մարմնական, ֆիզիքական ուժին՝ ուժեղ մկաններ, ուժեղ բազուկ, ուժեղ կամք, ուժեղ բանակ, ալիք, փոթորիկ, քամի եւ այլն:

* **Ուղղել-ուղարկել-ուղեցոյց.**- **Ուղղել** բային արմատն է «ուղիղ». ան կը նշանակէ որոշ ուղղութեամբ մը առաջնորդել, օրինակ՝ «Քայլերը դպրոց **ուղղեց**». դարձնել, «Նայուածքը **ուղղեց** հեռաւոր լեռներուն», կամ պարզապէս ուղիղ ձեւը տալ, սրբագրել. օրինակ՝ «Աշակերտը **ուղղեց** իր սխալը»:

Ուղարկել բային արմատն է **ուղի**, իսկ **արկ**(ել) կը նշանակէ դնել, հանել, ուրեմն՝ ուղարկել կը նշանակէ ճամբայ դնել կամ պարզապէս՝ ղրկել. «Ընտանիքը գիւղ **ուղարկեց**»:

Վերջին տասնամեակներուն արեւելահայերէնը հնարեց **գործուղել** բայը, որ լայնօրէն որդեգրուեցաւ արեւմտահայերուս կողմէ, միայն թէ շատ յաճախ սխալ կիրարկութեամբ՝ **գործուղել** ձեւով: Բայիս արմատը **ուղի** է. **գործուղել** կը նշանակէ յատուկ գործով մը, առաքելութեամբ մը կամ պատգամով մը **ուղարկել** եւ ոչ թէ **ուղղել**. օրինակ «Նախագահը իր խորհրդականը **գործուղեց** Ֆրանսա, բանակցութիւններ վարելու համար»:

Նոյն հետայն ունինք **ուղեցոյց** բառը, որ շատեր կը գրեն **ուղղեցոյց**՝ այն տրամաբանութեամբ, թէ ան «ուղիղը ցոյց կու տայ», ինչ որ սխալ է. **ուղեցոյց**-ը մտածուած է իբրեւ ուղին, այսինքն՝ ճիշդ ճամբան ցոյց տուող. ուրեմն՝ **ուղեցոյց**:

Նմանապէս արեւելահայերէնի միջոցաւ որոշ կիրարկութիւն ստացած է **ուղղորդել**, յատկապէս արեւելահայերէնէ արեւմտահայերէն փոխադրումներու առթիւ. արմատն է **ուղիղ**, եւ կը նշանակէ **ուղղել**: Մեր իրականութեան մէջ հաւանաբար տակաւին բոլորովին իւրացուած եզր մը չէ, ժամանակի կը կարօտի, ուստի թելադրելի է առայժմ փոխադրումներէ դուրս չկիրարկել զայն:

* **Ուղղահայեաց-ուղղաձիգ.-** Արեւմտահայ բառարանագիրներու մէջ կայ հասարակաց հակում մը՝ նոյնացնելու այս երկու հասկացութիւնները, ուրեմն՝ եզրերը եւս: Զգալիօրէն աւելի լաւ տարորոշուած են ասոնք արեւելահայ կարգ մը բառարանագիրներու կողմէ՝ առանց, սակայն, բոլորովին յստականալու. երբ Աղայեան կը գրէ. «**Ուղղաձիգ**՝ նոյնն է **ուղղահայեաց**»,– ան իսպառ կը կորսնցնէ այս երկու հասկացութիւնները ճիշդ բացատրած ըլլալու հաւաստիքը: Ըստ այսմ մեր՝ արեւելահայ թէ արեւմտահայ բառարանները ամբողջութեամբ կարդացողն ալ պիտի չկարենայ ճիշդ ըմբռնել, թէ ի՛նչ կը նշանակեն այս երկուքը եւ, ուրեմն, ինչո՞վ կը տարբերին իրարմէ:

Ուղղահայեաց (perpendiculaire) կը կոչենք որեւէ գիծ (թող ըլլայ Ա), որ իննսուն աստիճան կը կազմէ որեւէ այլ գիծի հետ (թող ըլլայ Բ): Կարեւոր չէ, այս պարագային, թէ ի՛նչ դիրք կրնայ ունենալ Բ գիծը՝ ուղիղ, շեղ, հորիզոնական եւ այլն, կարեւորը Ա-ին եւ Բ-ին հանդիպման կէտին վրայ գոյացած իննսուն աստիճանն է: Ըստ այսմ՝ իրարու ուղղահայեաց դիրքով կը հանդիպին սեղանի մը, կամ գիրքի մը կամ տուփի մը կողմերով բնորոշուող գիծերը, ի՛նչ դիրքով ալ բռնենք կամ զետեղենք սեղանը, գիրքն ու տուփը միջոցին մէջ: Բ գիծը կրնայ ըմբռնուիլ իբրեւ միակի, բայց ան կրնայ մաս կազմել նաեւ հարթութեան մը, որ կ'ըմբռնուի իբրեւ անհաշուելի գիծերու ամբողջութիւն մը: Այս տուեալներով՝ Ա գիծը կրնայ ուղղահայեաց ըլլալ այլ գիծի մը կամ ամբողջ հարթութեան մը, որ է տափարակ մակերեսի մը:

Ուղղաձիգ (vertical) կը կոչենք որեւէ գիծ՝ իրական կամ վերացական, որ անշեղ կ'ուղղուի դէպի Երկրի ձգողութեան կեդրոնը (centre de gravité): Ուղղաձգութեան լաւագոյն ու ծանօթ օրինակը կը հանդիսանայ որմնադիրին կապարալարը՝ այն կծիկը, որուն ծայրը ամրացուած է հոլի նմանող մետաղ-

եայ զանգուած մը՝ սուր ծայրով: Որմնադիրը այս սարքը կը գործածէ պատը հիւսելու առթիւ, ազատ ձգելով լարը, որ ծայրի մետաղի ծանրութեան շնորհիւ կը գրաւէ բոլորովին ուղղաձիգ դիրք մը:

Ուղղահայեաց եւ ուղղաձիգ հասկացութիւնները կը նոյնանան հետեւեալ բոլորովին տեսական կացութեան մէջ, ուր աննշան խիճ մը թող տանք հորիզոնական հարթութեան մը վերեւէն: Իր անկումին մէջ այդ խիճին գծած վերացական գիծը յարաբերաբար տուեալ հարթութեան թէ՛ ուղղաձիգ է, թէ՛ ուղղահայեաց է:

* **Ուսում-ուսմունք.- Ուսում**-ը ամբողջութիւնն է այն գիտելիքներուն, որ որեւէ կրթական հաստատութիւն կամ յատուկ ուսուցիչ, ինչու չէ՝ նաեւ կեանքի փորձառութիւնը կու տան մարդուն. կրթութիւն, զարգացում:

Ուսմունք-ը իմաստասէրի, գիտնականի, կրօնաբարոյական վարդապետութեան մը հիմնադիրի կամ որեւէ մեծ մտածողի հիմնական դրոյթներու եւ հայեացքներու ամբողջութիւնը, համակարգն է. նաեւ՝ գիտութիւն, փիլիսոփայութիւն, կրօնական վարդապետութիւն:

Արեւելահայերէնի մէջ շատ յաճախ **ուսումն** ու **ուսմունքը** կը շփոթուին որպէս տարբերակներ, ինչպէս է պարագան **ում**-ով վերջացող շատ ուրիշ բայանուններու: Այսուհանդերձ պէտք է բծախնդրօրէն զանազանել այս երկուքը:

* **Չնչին-ջնջին.- Չնչին**-ը (աննշան, անկարեւոր) հեռաւոր անցեալին եղած է **ոչնչին**, որ իր կարգին **ոչինչ** դերանունին ածանցումն է «ին» մասնիկով: Սակայն ժամանակի ընթացքին կորսնցուցած է իր առաջին ձայնաւորը, ու մնացած է **չնչին**-ը: Ուրեմն այս վերջինի կառոյցին իմացումը մեծապէս պիտի օգնէ մեզի, որ զայն **ջնջին (ջինջ-ին)** չգրենք, ինչ որ կ'ընենք շատ յաճախ:

Ջնջին-ը բառ ալ չէ. ունինք **ջինջ** արմատ մը, որ կը նշանակէ յստակ, մաքուր, պայծառ, օրինակ՝ **ջինջ երկինք, ջինջ աչքեր, ջինջ խօսքեր** եւ այլն: Ասկէ կը յառաջանայ **ջնջել**՝ մաքրել, սրբել, յստակացնել բայը: Ինչպէս կը տեսնենք, սխալելու շատ տեղիք չկայ, եթէ քիչ մը ուշադիր գրենք:

* **Պաշտպանել-պահպանել-պահել.**- Ասոնք սերտ հոմանիշներ են, սակայն նոյնանիշ ըլլալէ հեռու են:

Պաշտպանել կը նշանակէ համապատասխան ու պատշաճ միջոցներով պայքարիլ որեւէ անմիջական վտանգի դէմ. առ այս՝ կը պաշտպանենք հայրենիքը թշնամիին դէմ, հօտը՝ գայլերուն դէմ, պտուղները՝ կարկուտին դէմ եւ այլն:

Պահպանել-ին, որ իր կարգին հոմանիշ է **պահել**-ին, խորթ չէ պաշտպանելու արարքը, սակայն ան շատ աւելի **երկարաժամկէտ** գործընթաց է, որ կը պահանջէ յարատեւ ուշադրութիւն, հոգածութիւն, նուիրում ու խնամք պահպանելի առարկային հանդէպ. օրինակ՝ պահպանել լեզուն, վարկը, ա-

ւանդութիւնները եւ այլն: Անշուշտ ան աւելի համեստ տարողութիւն եւս կրնայ ունենալ, ինչպէս՝ պահպանել մաքրութիւնը, կարգն ու կանոնը եւ այլն: Կարելի է ըսել, որ պահպանումը պաշտպանումներու երկար շարք մըն է, օրինակ՝ կը պաշտպանենք սիրուած գիրք մը փոշիի, խոնաւութեան ու արեւի դէմ, ցեցերու եւ այլ վնասակար ճճիներու դէմ՝ մերթ ընդ մերթ հականեխելով անոր գտնուած դարանը, կը պաշտպանենք անոր քայքայուող կազմը՝ կաշեպատելով զայն եւ այլն, եւ ահա այս այլազան ու յաճախակի պաշտպանութիւնները կ'երաշխաւորեն այդ գիրքին **պահպանումը**:

Կազմենք այսպիսի նախադասութիւն մըն ալ. «Պաշտպանենք մեր լեզուն անհարկի փոխառութեանց դէմ եւ պահպանենք անոր անաղարտութիւնը ուծացումի դէմ»:

Իսկ գոյութիւնը կը պաշտպանե՞նք, թէ՞ կը պահպանենք: Երկուքն ալ. հոն ուր մեր գոյութեան կը սպառնայ անմիջական վտանգ մը, առ այդ ձեռք առնուած միջոցները կը ծառայեն **պաշտպանելու** մեր գոյութիւնը: Իսկ այն յարատեւ խնամքները, առողջապահական կանոններու յարգումը, ժուժկալ սննդառութիւնը, փորձանքներէ զգուշացումը եւ այլն՝ ասոնք բոլորը կը ծառայեն **պահպանելու** մեր գոյութիւնը:

Պահել-ը աւելի որոշակի գործողութիւն մըն է. կը նշանակէ որեւէ առարկայ տեսողութենէ ու հասողութենէ հեռու՝ անտեսանելի ու անհասանելի դարձնել: Անշուշտ **պահել**-ն ու **պահպանել**-ը որոշ չափով հոմանիշ են, քանի պահուած բան մը ինքնաբերաբար նաեւ պահպանուած կ'ըլլայ, թէեւ ոչ միշտ. ան կրնայ ցեցի ու խոնաւութեան կամ այլ վթարներու առարկայ ալ դառնալ, եթէ ատենը մէյ մը չզբաղինք իրմով: Ուրեմն նոյնիսկ պահուած առարկան կը կարօտի պահպանութեան:

Շատ յատկանշական է այս տեսակէտէ մեր **պահել-պահպանել** զուգադիր բայը:

* **Պաշտօնական-պաշտօնէական**.- **Պաշտօնական**-ի հիմքը (որ նաեւ արմատն է անոր) պարսկերէն **պաշտաւն-պաշտօն** բառն է, որ իր հնագոյն իմաստով կը նշանակէ **ծառայութիւն**: Այս այն ծառայութիւնն է, որ պարսիկ մոգերը հանդիսաւորապէս կը մատուցէին իրենց կուռքերուն: Արդի իմաստով՝ պաշտօնական է այն, որ կը տարբերի առօրեականէն, սովորականէն, ճիշդ ինչպէս այն պարսիկ մոգը, որ իր պաշտօնին առթիւ՝ կը զգեստաւորուէր, կը պճնուէր, կ'այլափոխուէր ու այնպէս կը մօտենար ատրուշանին ու կուռքերուն, այսինքն՝ իր պաշտօնին: **Պաշտօն** բառը ունի տարբերակ մը, որ է **պաշտամն**, որ կու տայ, օրինակ, **պաշտամունք**:

Պաշտօնէական-ին հիմքն է **պաշտօնեայ**, որուն **եայ** եռաբարբառ բաղադրիչը հայերէնի ինչիւնափոխութեան օրէնքներով կը վերածուի **է**-ի (եայ >եյ>է): Ուրեմն **պաշտօնէական** կը նշանակէ նախ եւ առաջ պաշտօնեային յատուկ կամ վերաբերող. օրինակ՝ պաշտօնէական դիրք, պաշտօնէական իրաւունք, պաշտօնէական պարտականութիւն, այլ խօսքով՝ պաշտօնի բե-

րումով յառաջացած, պաշտօնէ բխող եւ այլն: Ան կը նշանակէ նաեւ՝ պաշտօնեաներու, կամ պաշտօնէութեան, կամ որեւէ հաստատութեան անձնակազմին վերաբերող կամ յատուկ. օրինակ՝ **պաշտօնէական համալրում, պաշտօնէական իրաւունքներու վերահաստատում** եւ այլն: Պէտք է հաւանաբար աւելցնել, որ արեւմտահայերէնը այս պարագային կը նախընտրէ **անձնակազմ** ըսել՝ **անձնակազմի վերանայում** եւ այլն:

* **Պատրաստակամութիւն-պատրաստականութիւն-պատրաստութիւն.**- **Պատրաստակամութիւն**-ը որեւէ աշխատանք ինքնակամ կատարելու կամ ծառայութիւն մը մատուցելու տրամադրութիւնը, յօժարութիւնը, ցանկութիւնն է. օրինակ՝ «Բանուորները պատրաստակամութիւն յայտնեցին անմիջապէս գործի սկսելու»: «Ներկաները պատրաստակամութիւն ցուցաբերեցին սիրայօժար մասնակցելու հանգանակութեան»:

Պատրաստականութիւն-ը պատրաստ կամ պատրաստուած ըլլալու վիճակն է, բայց նաեւ անհրաժեշտ պատրաստուածութիւնը, գիտելիքները, վարժութիւնը, հմտութիւնը ունենալն է: Ըստ այսմ՝ չի բաւեր պատրաստակամ ըլլալ՝ գործ մը գլուխ հանելու համար, պէտք է նաեւ անհրաժեշտ պատրաստականու-թիւն. միւս կողմէ՝ չի բաւեր պատրաստականութիւն ունենալ, պէտք է նաեւ անհրաժեշտ պատրաստակամութիւնը. այլ խօսքով՝ այս երկու յատկութիւն-ները պէտք է սերտօրէն զիրար լրացնեն՝ յաջողութեան հասնելու համար:

Պատրաստութիւն-ը պատրաստ վիճակի մէջ գտնուելու իրողութիւնն է: Որեւէ առիթ դիմագրաւելու համար նախատեսուած միջոցառումներու ամբողջութիւնը. օրինակ՝ ճամբորդելու, հարսանիքի, ձկնորսութեան եւ այլն: Կը նշանակէ նաեւ մտաւորական պաշար, գիտելիք, հմտութիւն. օրինակ՝ «Ան այս պաշտօնը ստանձնելու **պատրաստութիւնը** ունի»:

* **Պարունակել-բովանդակել.**- Երկուքն ալ իր մէջ բան մը կրելու, բան մը ունենալու, բանով մը լեցուած ըլլալու գաղափարը կ'արտայայտեն:

Պարունակել-ը աւելի կը կիրարկուի նիւթական ու շօշափելի իրողութեանց համար. օրինակ՝ «աւազանը ջուր կը պարունակէ», «գանկը կը պարունակէ ուղեղը» եւ այլն:

Բովանդակել-ը յատկացուած է աւելի վերացական հասկացութեանց, ինչպէս՝ գիրքի մը բովանդակած գլուխները, բառին բովանդակած իմաստը, խօսքերուն բովանդակած անկեղծութիւնը եւ այլն:

Կան կացութիւններ, ուր այս երկուքէն ոչ մէկը կը պատշաճի, պէտք է գիտնալ հրաժարիլ անոնցմէ եւ տարբեր կառոյցի դիմել. օրինակ՝ «Դպրոցը կը **բովանդակէ/կը պարունակէ** 300 աշակերտ». նախընտրել՝ «Դպրոցը **ունի** 300 աշակերտ»: Այնպէս ալ՝ «Որբանոցը **կը պատսպարէ** 120 որբ», «Հիւանդանոցը **կը դարմանէ** 60 հիւանդ» եւ այլն:

* **Պճնուիլ (պճնանք)-պչրուիլ (պչրանք).**- Երկուքն ալ կը միտին ուշադրութիւն գրաւելու, հաճոյ թուելու, հրապուրելու:

Պճնուողը այդ կ'ընէ՝ ինքզինք զարդարելով զանազան նիւթական միջոցներով՝ շպարով, սնգոյրով, գոհարեղէնով, յատուկ հագուստով եւ այլնով. կ'ըսուի բնութեան համար եւս, որ կը պճնուի դալարիքով ու ծաղիկներով, թռչուններու համար ալ, յատկապէս սիրամարգին, փասիանին, բադին, որոնք կը պճնուին իրենց գունագեղ փետուրներով եւ այլնով:

Պչրուողին անծանօթ չեն յիշեալ նիւթական միջոցները, սակայն պչրուիլ աւելի կը նշանակէ սիգալ, նազել, կոտրտուիլ, ծեքծեքիլ, սեթեւեթիլ, ուշագրաւ շարժումներ ընել ու տեղին համեմատ ձայնը փոխել եւ այլն:

* **Սեղմել-սեղմուիլ-սղմիլ.**- Ասոնք նոյնարմատ բառեր են, կը յառաջանան **սեղմ**-էն, որ կը նշանակէ հոծ, խիտ, կուռ, պինդ, ամուր:

Սեղմել կը նշանակէ՝ ա) որեւէ յարաբերաբար նօսր առարկայի վրայ ուժ բանեցնելով՝ անոր մասերը կամ մասնիկները իրարու մօտեցնել, խտացնել. օրինակ՝ նարինջը սեղմել ափին մէջ՝ հիւթը քամելու համար. բ) երկու առարկաներ իրարու կիպ բերել, կպցնել. օրինակ՝ ակռաները կամ շուրթերը սեղմել, գ) իր մէջ գտնուող առարկան նեղել, օրինակ՝ կօշիկս կը սեղմէ ոտքս. դ) որեւէ առարկայ պնդացնել ուրիշ առարկայի մը շուրջ. օրինակ՝ գօտիով սեղմել մէջքը եւ այլն:

Սեղմուիլ կրաւորականն է նախորդին: Լայն կիրարկութիւն ունի իբրեւ չէզոք բայ, որ կը նշանակէ ամփոփ կերպով նստիլ, նեղ տեղ մը տեղաւորուիլ. «Նստարանին վրայ նստողները **սեղմուեցան**, որպէսզի նորեկին տեղ բանան»: Նաեւ՝ փարիլ. «Պանդուխտը **սեղմուեցաւ** հօրը կուրծքին»: Հոմանիշ է **խցկուիլ** բային, որ շատ աւելի տարածուած է արեւելահայերէնի մէջ:

Սղմիլ. արեւելահայերէնը չունի այս տարբերակը, ան յառաջացած է արեւմտահայերէնի մէջ եւ մտած է մեր բառարանները: Կը նշանակէ «մտնել, ամփոփուիլ, տեղաւորուիլ» (Գայայեան), այլ խօսքով՝ շատ կը մօտենայ **սեղմուիլ** չէզոք բային, սակայն չի նոյնանար անոր հետ: Տէր Խաչատուրեան աւելի ճիշդ կը բացատրէ. «Նեղ տեղ մտնել եւ տեղաւորուիլ[3]», նոյնը ունի Կռանեան,– եւ իրօք **ալ սղմիլ**-ը իր սեփական ծաւալէն աւելի նեղ միջոցի մը մէջ տեղաւորուիլը, ամփոփուիլն է: Արեւմտահայ ռամիկը շատ չի ճանչնար այս բայը եւ փոխարէնը կը գործածէ **բաւել**. օրինակ՝ «Ոտքս այս կօշիկին մէջ **չի բաւեր**» կամ «Այսքան ապրանքը գրպանիս մէջ ինչպէ՞ս **բաւեցնեմ**»,– որոնց երկուքն ալ մերժելի կառոյցներ են, պէտք է ըսել «չի սղմիր» եւ «սղմեցնեմ»: «Այնքան գիրցած էր, որ դժուար **կը սղմէր** հագուստին մէջ»: «Չեմ հասկնար մուճակ մը, որուն մէջ ամենուն ոտքը **սղմելու** դատապարտուած ըլլայ» (ԳՀ, «Ուսուցչական ժողով»):

* **Սեր**(ական)-**սեռ**(ական).- Այս երկուքին արմատներն են **սեր**[4] եւ **սեռ**, որոնց իմաստները բոլորովին շփոթուած, աւելի ճիշդը՝ նոյնացուած են *Նոր հայկազեան*-ի եւ այնուհետեւ գրաբարի գրեթէ բոլոր բառարաններուն, ընդ-

հուպ մինչեւ *Արմատական*-ի մէջ եւս, ուր **սեր** եւ **սեռ** հաւասարապէս կը նշանակեն՝ **սերունդ, զարմ, տոհմ, ցեղ, ազգ**...: Արմատներու իմաստային այս նոյնացումը անխուսափելիօրէն պատճառ դարձած է, որ այդ նոյն բառարաններուն մէջ խոր շփոթներու ենթարկուին նաեւ **սերական-սերային** եւ **սեռական-սեռային** ածականները[5]:

Աշխարհաբարի մէջ արեւելահայ բառարանները մինչեւ Մալխասեանց ներառեալ,– որ է 20-րդ դարու առաջին կէսը,– ունէին **սերական** ածականը, որ յետոյ արտաքսուեցաւ հետագայ բառարաններէն. այս վերջինները **սեռային**-ին մէջ համատեղած են երկուքին վերագրուած երբեմնի իմաստները, որոնք,– ինչպէս պիտի տեսնենք,– այնքան ալ համատեղելի չեն: Շատ աւելի ճիշդ ուղիի վրայ կը գտնուին արեւմտահայ բառարանները, ուր յաջողապէս կը զանազանուին,– թերեւս արեւմտեան լեզուներու թելադրանքով,– **սեր-սերական**-ն ու **սեռ-սեռային**-ը:

Սեր (genre) արմատը այնքան ալ կիրարկուած չէ մեր մէջ, աւելի ճիշդը չէ յաջողած պարտադրել ինքզինք. օրինակ՝ պէտք է տրամաբանօրէն ըսէինք «մարդկային, կենդանական, բուսական սերերը»՝ իբրեւ տեսակ, սակայն չունինք այս բառակապակցութիւնները, **սեռ**-ը արտաքսած է զայն, եւ փաստօրէն Ակադեմիայի քառահատորը կը գրէ «մարդկային սեռ»՝ որով կը հասկնայ «ցեղի ստորաբաժանումը»: Մինչ անդին մեծ յաճախականութեամբ կը գործեն ասով ածանցուած ու բարդուած բառերը, ինչպէս՝ **սերիլ, սերում, սերունդ, բազմասեր**[6], **սերնդակից, սերնդագործել**[7] եւ այլն, որոնք աներկբայօրէն կը հաստատեն **սեր**[8] արմատի մը ինքնուրոյն՝ **սեռ**-էն տարբեր գոյութիւնը: Ասոնք բոլորը կ'ակնարկեն ծնունդի եւ ծննդաբանական իրողութիւններու. **սերումը**՝ ծնունդ առնելն է, **սերունդը**՝ ծնած զաւակներուն ամբողջութիւնն է, **սերականը**՝ այն գործարաններն են, որոնք կը ծառայեն ծնունդ տալու, ինչպէս՝ արգանդը, ձուարանները, ամորձիքները՝ յարակից մասերով, բոլորը դիտուած ծննդաբանական, սերնդագործական տեսանկիւնէ (ֆր. organes génitaux):

Գալով **սեռ**-ին, արդի ըմբռնումով՝ ան նախ եւ առաջ արուի եւ էգի զանազանումը բնորոշող եզր է. հոն ուր պաշտօնական որեւէ փաստաթուղթի վրայ գրուած կ'ըլլայ «սեռ» [արեւմտեան լեզուներու մէջ՝ sex(e)], ենթական ենթադրուած է նշել՝ **արու** կամ **էգ** բառը: Այս իմաստը յատուկ է ոչ միայն մարդուն ու անասուններուն, այլ մինչեւ իսկ, իմաստային ընդլայնումով, գոյականներուն ու բայերուն[9]:

Իսկ **սեռային** եզրով, որ կը համապատասխանէ արեւմտեան լեզուներու sexuel-ին, արեւմտահայերս կ'որոշադրենք միայն արուն եւ էգը զանազանող այն օրկանները, որոնք մերձեցումի՝ զգայական հեշտանքի գործարաններն են:

Աղայեան ունի. «**սեռականք**, նոյնն է՝ **ծնունդք**»: Մինչդեռ **սերակա՛նք**-ն է **ծնունդք**-ը: Մեր շարադրանքը, սակայն, կը միտի ցոյց տալու, որ ասոնք հոմանիշ չեն այն պատճառով, որ սերական կամ ծննդական (génitaux) գոր-

ծարանները եւ սեռային (sexuels) գործարանները չեն նոյնանար, նոյնիսկ եթէ ունին շփման եզրեր: Եթէ վերջինները ընդգրկուած են առաջիններուն մէջ, ապա առաջինները բնախօսական շատ աւելի լայն հասկացութիւն են:

Ուրեմն՝ սեր – genre, սերական – génital, սերականք, ծննդականք, organes génitaux, genitals: Այդպէս ալ՝ սեռ – sexe, սեռային – sexuel, սեռականք - organes sexuels, սեռածգութիւն - sex appeal, սեռածիգ, սեռագրաւ - (ած.) որ օժտուած է սեռածգութեամբ, սեռագրաւչութեամբ: Նաեւ՝

Առականք[10] - ամօթ, ծածկելու անդամներ՝ ամօթոյք (*Առձեռն*)

Արականք - արական սեռային գործարաններ [առնի անդամք (*Առձեռն*)][11]

Իգականք - իգական սեռային գործարաններ

Փակելու համար աւելցնենք հետեւեալը եւս. ճիշդ է, որ մենք հաւասարութեան նշան դրինք հայկական **սեռ**-ին ու արեւմտեան լեզուներու sex(e)-ին միջեւ, բայց ասի ամբողջ ճշմարտութիւնը չէ, այլ մասամբ ճիշդ է: Որովհետեւ Ֆրէօյտով սկսած եւ յատկապէս 20-րդ դարու երկրորդ կէսին արեւմտեան sex(e) եզրը ստացաւ իմաստային այնպիսի լիցք ու բովանդակութիւն մը՝ հաւասարելով ընդհուպ «մերձեցում» ու «հեշտանք» հասկացութեանց հետ, որուն զուգահեռ ու համապատասխան վերիմաստաւորում կամ իմաստային լիցքաւորում չէ ունեցած հայերէն աւանդական **սեռ** հասկացութիւնը. այս պատճառով ալ մասնաւորաբար Հայաստանի մէջ իշխող դարձած է արեւմտեան sex եզրը. պարագան շատ ալ տարբեր չէ արեւմտահայերէնի մէջ:

Պէտք է ըսել, որ շփոթ կայ նաեւ ֆրանսերէնի մէջ, որմէ ազդուած է արեւմտահայերէնը. օրինակ՝ **genre humain** բառակապակցութեամբ ֆրանսացին կը հասկնայ մարդկային սերը, տեսակը առհասարակ,– այլ խօսքով՝ ամբողջ մարդկութիւնը՝ արու եւ էգ հաւասարապէս առնուած,– որով **ան** կը զանազանուի արարչագործութեան միւս տեսակներէն: Ուրեմն այս եզրը իր այս կիրարկութեամբ սեռային ոչ մէկ զանազանութիւն կ'ենթադրէ: Բայց ահա նոյն ֆրանսերէնը կ'ըսէ genre du nom կամ genre du verbe, ուր այս անգամ կ'ակնարկուի գոյականի ու բայի **սեռին**:

* **Սուզուիլ-ընկղմիլ**.- Երկուքն ալ չէզոք բայեր են եւ կը նշանակեն (ջուրին) յատակը երթալ, հետեւեալ տարբերութեամբ.

Մինչ **սուզուիլ**-ը կամաւոր արարք մըն է, օրինակ՝ լողորդը կը սուզուի ջուրին մէջ, սուզանաւը կը սուզուի ծովուն յատակը եւ այլն, ապա **ընկղմիլ**-ը աղէտ մըն է այն նաւուն համար, որ զանազան պատճառներով չի կրնար այլեւս ջուրին վրայ ծփալ ու անոր յատակը կ'երթայ: Ուրեմն այս վերջինը ունի էապէս բացասական նշանակութիւն:

Այս բայերու փոխաբերական իմաստները կը շարունակեն պահել իմաստային նշեալ հակադրութիւնը. սուզուիլ ընթերցանութեան մէջ, սիրեցեալին աչքերուն կամ սրտին խորը, սուզուիլ գիշերային խաւարին ծոցը. «Աստ-

ուա՛ծ, խոկն հսկայ փշրէ՛ հիւլէիս, // Որ ժպրհի ձգտիլ՝ **սուզիլ** խորն երկնի...» (ՊԴ «Տրտունջք»): Միւս կողմէ՝ ընկղմիլ մեղքի տիղմերուն մէջ, պարտքերու կամ մոլութեանց մէջ եւ այլն:

* **Վաղ-վաղը.- Վաղ** կը նշանակէ կանուխ. **վաղ առաւօտուն**՝ առաւօտ կանուխ, **վաղ աշնան**՝ հազիւ աշունը հասած, աշնան սկիզբը եւ այլն, **վաղ թէ ուշ**՝ ուշ կամ կանուխ: Այս իմաստին հիմամբ յառաջացած են՝ **վաղահաս, վաղամեռիկ, վաղաժամ**: Այս նոյն իմաստի զարգացմամբ՝ կը նշանակէ անցեալի պատկանող, անցեալի մէջ պատահած, երբեմնի. Սայաթ-Նովա կ'ըսէ. «Չունիմ **վաղուան** քաղցր փառքս»,– այսինքն՝ **անցեալի, երբեմնի փառքս**: Այս իմաստի հիմամբ յառաջացած են՝ **վաղեմի** ածականը եւ **վաղուց** մակբայը: Բառս կու տայ **վաղուան** եւ **վաղուընէ** (կամ՝ վաղուց) հոլովները:

Վաղը, որ աշխարհաբարի մէջ յառաջացած բառ է, կը նշանակէ այս՝ ներկայ օրուան յաջորդող առաջին օրը. օրինակ՝ «Այսօր՝ երկուշաբթի, անյարմար է, սակայն **վաղը**՝ երեքշաբթի, անպայման կը մեկնինք»: Հոլովները՝ **վաղուան** եւ **վաղուընէ**: Կը նշանակէ նաեւ մօտիկ ապագային. օրինակ՝ «Վաղը նետած հատիկներդ այս պիտ' թափին // Օրհնութեան պէս թոռնիկներուդ գլխուն վրայ» (ԴՎ «Օրհնութիւն»):

Նկատենք, որ **վաղուան** սեռական-տրականն ու **վաղուընէ** բացառականը հասարակաց են **վաղ** եւ **վաղը** բառերուն, որոնք ուրեմն երկիմաստ են, որոշ առումով՝ հականիշներ: Ըստ այսմ ալ պէտք է աչալուրջ ըլլալ՝ չշփոթելու համար այս երկուքը:

* **Վաղորդայն-վաղորդեան.- Վաղորդայն**-ը գոյական է եւ կը նշանակէ վաղ առաւօտ, արշալոյս, այգաբաց. անվաղորդայն՝ վաղորդայն, արշալոյս չունեցող, փոխաբերաբար՝ իր առջեւ որեւէ ուրիշ օր, որեւէ տեւողութիւն եւ հեռանկար չունեցող: Դարձեալ փոխաբերաբար՝ կը նշանակէ սկիզբը. օրինակ՝ «Հինաւորները հաղորդուեցան պատերազմի **վաղորդայնին»:**

Վաղորդեան ածական է եւ կը նշանակէ վաղ առաւօտեան յատուկ. Օրինակ՝ «**Վաղորդեան** զեփիւռը կը շոյէր ճամբորդներուն դէմքերը», «**Վաղորդեան** ցօղը պատած էր ամբողջ մարգագետինը»:

* **Վայրի-վայրենի-վայրագ.- Վայրի** է ամեն անասուն, որ բնակելի տարածքներէ դուրս կամ հեռու կ'ապրի, ուրեմն ընտանի չէ, տուն չի մտներ, տան մէջ բաղձալի չէ անոր ներկայութիւնը. այսպէս է, օրինակի համար, գայլը, աղուէսը, բորենին, առիւծը, վագրը եւ այլն: Կրնայ պատահիլ, որ այս վայրի նկատուած անասունները ընտելացուին եւ մուտք գործեն կրկէսներէ կամ մարդոց տուներէն ներս. օրինակ՝ արջը, վագրը, առիւծը եւ այլն: Նոյն անասունը վայրի է, եթէ դուրսը կ'ապրի, ընտանի է, եթէ ընտելացուած է եւ տան մէջ կ'ապրի. օրինակ՝ շունը, կատուն եւ այլն: Վայրի կը կոչենք նաեւ ամեն բուսական տեսակ, որ ինքնաբոյս է, կը ծլի ու կ'աճի բնութեան մէջ՝

առանց մարդկային խնամքի: Այստեղ եւս բացառուած չէ, որ նոյն բոյսը թէ՛ վայրի, թէ՛ ընտանի տեսակ ունենայ. օրինակ՝ վայրի եւ ընտանի տանձ, խնձոր, զանազան համեմային բոյսեր եւ այլն:

Վայրենի է այն էակը, որ իր ըմբռնումներուն մէջ նախնական է, կը գտնուի քաղաքակրթութեան ցած մակարդակի վրայ, յետամնաց է ու բարբարոս: Իր վարմունքին մէջ անկիրթ է, բիրտ, անտաշ, կոպիտ, ի պահանջել հարկին նաեւ՝ վայրագ, անզուսպ, կատաղի: Վայրենի՝ բառացի կը նշանակէ վայրի տեղերու բնակիչ, այսինքն՝ մարդկային ընկերութեան, հաւաքականութեան անհաղորդ մնացած եւ այս հեռաւորութեան պատճառով ալ՝ քաղաքակրթութեան բարիքներուն ու մանաւանդ վարք ու բարքին անտեղեակ: Այս պայմաններուն մէջ բնակողը անշուշտ բնականաբար պիտի իւրացնէ նաեւ վայրի գազաններու բնազդական յատկութիւնները, յատկապէս բրտութիւնը, անխղճութիւնը, **վայրագ**ութիւնը եւ այլն:

Վայրագ-ը կը յատկանշուի իր անգթութեամբ, մարդկային քնքուշ զգացումներու բացակայութեամբ, բրտութեամբ, անզսպուածութեամբ ու կատաղութեամբ ու կոպտութեամբ:

* **Վատնել-մսխել.-** Ասոնք հոմանիշներ են, ցոյց կու տան նիւթական ու բարոյական միջոցներու գործածութեան, սպառումի զանազան աստիճաններ:

Վատնել կը նշանակէ միջոցներու յաւելեալ սպառում ունենալ, այսինքն՝ աւելի քան անհրաժեշտ է. օրինակ՝ երբ ածու մը ոռոգելու համար անհրաժեշտ 50 լիթր ջուրին փոխարէն 100 լիթր ջուր կու տանք, ապա վատնած կ'ըլլանք 50 լիթրը: Վատնումը հետեւանք է առհասարակ սխալ հաշիւի, համբակութեան, անձեռնհաս տնտեսումի, երբեմն ալ անբախտութեան եւ այլն:

Մսխել-ը կը տարբերի **վատնել**-էն ի սպաս դրուած միջոցներու ապարդիւն ու աննպատակ սպառումով, փճացումով: Այլ խօսքով՝ վատնումը՝ միջոցներու յաւելեալ սպառում է, մսխումը՝ ապարդիւն կամ աննպատակ:

Առօրեայ խօսակցական լեզուի մէջ այս զանազանութիւնը դժուար կը դրուի, եւ վերոբերեալները անուշադրութեամբ կը կիրարկուին իբրեւ ամբողջական հոմանիշներ. հօրը ձգած հարստութիւնը զեխութեան մէջ սպառողին, որ ոչինչ աւելցուցած է ստացածին վրայ, հաւասարապէս կ'ըսուի **վատնեց** եւ **մսխեց,** մինչդեռ աւելի ճիշտը՝ երկրորդն է:

* **Վարկ-վարք.- Վարկ**-ը այն յարգանքն է, հեղինակութիւնը, պատիւը, որ մէկը կը վայելէ յաչս իր շրջապատին: Այս բոլորէն բնականօրէն բխող հաւատքն ու վստահութիւնը, որ մարդիկ կը տածեն, կը զգան նման անձի մը հանդէպ: Վարկ կը կոչենք նաեւ այն գումարը, որ դրամատունը կամ որեւէ փոխատու անձ կամ հաստատութիւն կը յօժարի տրամադրել մէկուն՝ որոշ երաշխիքի փոխարէն եւ նայած անոր վայելած վստահութեան եւ համբաւին, որպէսզի ան օգտագործէ այդ գումարը եւ գործի մը ձեռնարկէ:

Վարք-ը պարզապէս վարուելակերպն է, կենցաղավարութիւնը, նիստուկացը, կեանքը ապրելու անհատական ոճը, լայն իմաստով՝ նաեւ մարդ անհատի ամբողջ գործունէութիւնը: Այս վերջին իմաստին վրայ ալ հիմնուած՝ վարք կը կոչենք նաեւ այն գիրքը, որ կը պատմէ անուանի հոգեւորականի մը, սուրբի մը, նահատակի մը, թագաւորի մը գործունէութիւնը. *Վարք Մաշտոցի* կը կոչուի, օրինակ, Կորիւնի այն գիրքը, ուր ան պատմած է Մեսրոպ Մաշտոցի կեանքն ու գործունէութիւնը, յատկապէս՝ գիրերու գիւտի մանրամասնութիւնները:

* **Վերաբերեալ-վերոբերեալ.- Վերաբերեալ**-ը յետադրութիւն մըն է եւ իբրեւ աշխարհաբար տարբերակ ունի **վերաբերող** դերբայը. իբրեւ հոմանիշ ունի **մասին** եւ **առնչուող** բառերը. օրինակ՝ «Այս ոճիրին **վերաբերեալ** մանրամասնութիւններուն ծանօթ չեմ»: Այսինքն՝ այս ոճիրին մասին, այս ոճիրին առնչուող:

Վերոբերեալ-ը ածական է եւ կը նշանակէ գրութեանս վերը բերուած, նախապէս յիշուած, քիչ առաջ տեսնուած եւ այլն. «**Վերոբերեալ** հիմնաւորումը ի զօրու է այս պարագային եւս», – այսինքն՝ քիչ առաջ բերուած հիմնաւորումը...: Կ'ըսենք նաեւ **վերոնշեալ** կամ **վերոյիշեալ**, եւ այս վերջիններըս հաւանաբար աւելի յաճախական են:

* **Վերահաս-վերահասու.- Վերահաս** կը նշանակէ անսպասելիօրէն վրայ հասնող կամ հասած, սպառնացող, մօտալուտ (իրողութիւն, երեւոյթ). Օրինակ՝ «**Վերահաս** պատերազմը ընդմիջեց համալսարանական ուսումս»: «**Վերահաս** խռովութիւնները պատճառ դարձան մեծաթիւ ձերբակալութիւններու»:

Վերահասու կը կոչենք այն անձը, որ բան մը լաւ գիտէ, բանի մը տեղեակ է, իրազեկ է: Վերահասու է, խորքին մէջ, այն անձը, որ **վերահաս** եղած է,– այսինքն՝ բանի մը վրայ հասած է, ականատես եղած է, նկատած է մանրամասնութիւնները,– դէպքի մը, անցքի, կացութեան մը եւ այլնի:

* **Վերատեսնել-վերատեսել.- Վերատեսնել**-ը կը նշանակէ որեւէ բան վերստին տեսնելու բնախօսական արարքը կատարել. օրինակ՝ «Ան կուրցած էր, իսկ բուժումէն ետք սկսաւ **վերատեսնել**». ասոր կը համապատասխանէ **վերատեսողութիւն** բայանունը, որ կ'ակնարկէ տեսնելու բնախօսական կարողութեան: Կը նշանակէ նաեւ մոռցուած կամ մթագնած բան մը վերստին աչքէ անցընել՝ պարզապէս վերյիշելու համար անոր իսկութիւնը. «Կ'ուզեմ **վերատեսնել** այդ հին վաւերաթուղթը». «Մեծ գոհունակութեամբ վերատեսաւ մանկութեան ընկերները»: Այս բայը կը խոնարհուի **տեսնել**-ի կաղապարով՝ **կը վերատեսնեմ-վերատեսայ-վերատե՛ս-վերատեսնող-վերատեսներ** (չեմ վերատեսներ):

Վերատեսել կը նշանակէ որեւէ հարց, որեւէ որոշում կամ վճիռ յետ քննութեան սրբագրել, փոփոխել, վերանայիլ. օրինակ՝ «Պէտք է **վերատե-**

սել Կարսի դաշնագիրը», «Դիմենք վերադատ ատեան, որպէսզի **վերատեսեն** վճիռը». ասոր կը համապատասխանէ **վերատեսութիւն** բայանունը, որ հոմանիշ է վերաքննութեան: **Ել** լծորդութեան պարզ բայ է՝ **կը վերատեսեմ-վերատեսեցի-վերատեսէ՛-վերատեսող-վերատեսեր**:

* **Տարագիր-տարեգիր.- Տարագիր** կը նշանակէ օտարութեան մէջ ապրող, տունէ-տեղէ ու հարազատներէ, այլեւ հայրենիքէ հեռացած կամ արտաքսուած:

Տարեգիր կը նշանակէ պատմական անցուդարձերը, դէպքերն ու դէմքերը ժամանակագրական կարգով նկարագրող ու գրի առնող: Այսպէս ստացուած աշխատութիւնն ալ կը կոչուի **տարեգրութիւն**:

* **Տնօրէնութիւն-տնօրինութիւն.- Տնօրէնութիւն**-ը որեւէ հաստատութեան տնօրէնի պաշտօնն է, բայց նաեւ յայն առումով՝ այդ պաշտօնը վարող անձը կամ անձերը հաւասարապէս, որոնք այս վերջին պարագային կը կոչուին «տնօրէն խորհուրդ». «Կրնաս **տնօրէնութեան** բողոքել» կը նշանակէ՝ անձամբ տնօրէնին բողոքել կամ տնօրէն խորհուրդին բողոքել: Իբրեւ հոմանիշ կը բանին **տեսուչ** եւ **տեսչութիւն** եզրերը:

Տնօրինութիւն կամ **տնօրինում** բայանունն է **տնօրինել**-ին, որ կը նշանակէ վարել, մատակարարել, կազմակերպել, կառավարել հաստատութիւն մը. ուրեմն **տնօրինում** հոմանիշ է **կառավարում**-ին:

* **Տուգանք-տուրք-հարկ-հատուցում.- Տուգանք**-ը քաղաքացիական պարտաւորութիւններուդ մէջ թերացումի մը փոխարէն՝ քաղաքային իշխանութեան կամ պետութեան վճարուած գումարն է. օրինակ՝ ինքնաշարժը իրաւունքէդ աւելի արագ կը քշես, կամ կալուածիդ վրայ ապօրէն կառոյց մը կ'աւելցնես, կամ չթոյլատրուած վայրի մը մէջ կը ծխես եւ այլն, ասոնք բոլորը կը հատուցուին արդարօրէն որոշուած գումարով մը, որ **տուգանք** կը կոչուի. այս բառին արմատն է տուգ, որ ունի տուժ-ի իբրեւ տարբերակ (յիշել նաեւ՝ արգ եւ արժ արմատական տարբերակները):

Տուրք-ը այն արդար գումարն է, որ քաղաքային իշխանութիւնը կամ պետութիւնը կը գանձէ իր քաղաքացիներէն՝ ա) փոխարէնը այն զանազան ծառայութեանց, որ քաղաքացին կը ստանայ, օրինակ՝ քաղաքապետական տուրք, ջուրի ու ելեկտրականութեան տուրք, ծովային կամ ծովափային տարածքներու օգտագործման փոխարէն վճարուած տուրք, մաքսային եւ երկաթուղային տուրք եւ այլն, բ) փոխարէնը այն բոլոր եկամուտներուն, որ քաղաքացին կը ստանայ իր աշխատանքէն, կալուածի կամ կալուածներու շահագործումէն, խանութէն, միջնորդութիւններէ եւ այլ ձեռնարկներէ, գ) փոխարէնը որեւէ նիւթական բարիքի, որմէ կ'օգտուի քաղաքացին, օրինակ՝ այն կալուածին, ուր ան կ'ապրի կամ կը շահագործէ, վարձու կու տայ (կալուածատուրք), կամ որեւէ սարքի, որ կ'օգտագործէ քաղաքացին, օրինակ՝ ինքնաշարժ, բեռնակառք եւ այլն:

Հարկ-ը քիչ մը հինցած եզր է, քանի մասնաւորաբար կ'ոգեկոչէ պատմութեան այն փուլը, ուր կային յաղթող ու պարտուող, իշխող եւ իշխուող պետութիւններ, բռնակալներ ու ստրուկներ, եւ ասոնց առաջիններուն կողմէ երկրորդներուն պարտադրուած վճարն էր ան. **հարկ**-ը կը բնորոշուի իր էապէս անարդար ու կամայական բնոյթով: Համաշխարհային Ա. պատերազմի աւարտին պարտուած Գերմանիան պատերազմական առասպելական հարկեր վճարեց դաշնակիցներուն: Թուրքերը գլխահարկ կը գանձէին իրենց իշխած բոլոր ժողովուրդներէն. այսպէս կը կոչուէր այն գումարը, որ ամէն հպատակ կը վճարէր իր գոյութիւնը պահպանելու համար: Աւատապետական կարգերու օրով հարկեր դրուած էին նոյն ինքն սեփական ժողովուրդի զաւակներուն վրայ, որոնք պէտք է վճարէին քիչ մը ամէն քայլի համար: Իսկ երբ կը խորանանք պատմութեան վաղնջական փուլերուն մէջ, այստեղ հարկերը կը ստանան շատ աւելի սուր ու ճնշիչ բնոյթ, քանի հարկերը կը դրուէին պետական մակարդակով. յիշել Հայաստանի վճարած հարկերը Ասորեստանին, Պարսկաստանին, աւելի ուշ՝ արաբներուն եւ այլն: Հայաստանի Հանրապետութեան օրով հարկ եզրը վերարժեւորում ունեցաւ. ասով կը բնորոշուի ներկայիս շահատուրքը:

Հատուցում-ը ակամայ կամ դիտումնաւոր հասցուած վնասի մը փոխարէն կատարուած վճարն է, որ կը միտի դարմանել այդ վնասը. օրինակ՝ ինքնաշարժի վթարի հետեւանքով վիրաւորուած անհատի մը բժշկական ծախսերու հոգացումը, ինչու չէ նաեւ անոր անաշխատ օրերուն համապատասխանող եկամուտին վճարումը: **Հատուցում** է նաեւ որեւէ նիւթական փոխառութեան դիմաց կատարուած վճարը՝ առհասարակ տոկոսով հանդերձ: **Հատուցում** է, վերջապէս, որեւէ բարիքի փոխարէն ցուցաբերուած համապատասխան վերաբերումը կամ նիւթական վճարը:

* **Փոխանակել-փոխարինել.- Փոխանակել** կը նշանակէ ա) բան մը տալ եւ փոխարէնը ստանալ ուրիշ՝ ընդհանրապէս համարժէք բան մը. օրինակ՝ կու տամ ոչխար մը եւ փոխարէնը կը ստանամ երկու ուլ: Վաղնջական ժամանակներու մէջ փոխանակումը տնտեսական ուրոյն դրութիւն մըն էր, ուր մարդ իր արտադրութիւնը կու տար՝ փոխարէնը ստանալու համար իրեն պակսողը. սա փոխանակումն է: Բ) ժամանակաւորապէս առարկայ մը տալ ուրիշին՝ ստանալով անոր մէկ առարկան: Կը փոխանակենք նաեւ մեր միտքերը. ես իմ միտքերս կը յայտնեմ զրուցակիցիս, ան իրենները կը յայտնէ ինծի. այս ալ միտքերու փոխանակումն է:

Փոխարինում-ը որեւէ բանի փոխարէն ուրիշ մը դնելն է. օրինակ՝ մաշած ծորակի փոխարէն դրուած նոր ծորակ մը, որով հինը փոխարինեցինք նորով՝ այդ հինէն ձերբազատելու պայմանով: Կը փոխարինուի նաեւ վարչակարգ մը՝ ուրիշ մէկ վարչակարգով, օրինակ՝ թագաւորութիւնը կամ միապետութիւնը նախագահական դրութեամբ: Կրնան ժամանակաւորապէս փոխարինուիլ նաեւ անձերը. օրինակ՝ պաշտօնեայի մը բացակայութեան՝

տնօրէնութիւնը փոխարէնը կը նշանակէ ուրիշ մը եւ կամ հաստատութեան մը տնօրէնին փոխարէն հանդիսութեան մը կը ներկայանայ փոխտնօրէնը. ուրեմն այս վերջինը ժամանակաւորապէս կը փոխարինէ բուն տնօրէնը:

Այս յստակ զանազանութիւնը պատմականօրէն չեն ունեցած յիշեալ երկու բայերը, որոնք հոմանիշներ ալ եղած են. օրինակ՝ «Զոյս տուընջեան գիշեր **փոխանակէ**». «Զսա պայազատեալ փոխանակէ Պտղոմէոս որդի իւր» (*Նոր հայկազեան*): Նոյնին մէկ արտայայտութիւնն է հետեւեալը. «Ս. Կարապետ...այստեղ էլ **փոխանակած է** հին Վահագնին» (ՄԱ, ՀՀԳՊ, էջ 447),– ուր «փոխանակած է» կը նշանակէ «փոխարինած է»:

* **Փողոցի-փողոցային.**-Առաջինը ցոյց կու տայ ամէն ինչ որ կը պատկանի փողոցին կամ կը գտնուի փողոցին մէջ. օրինակ՝ փողոցի մայթերը, շուները, լոյսերը եւ այլն. ան զերծ է ամէն վերացականութենէ կամ բարոյական դրսեւորումէ:

Փողոցային կը նշանակէ ա) փողոցի մէջ տեղի ունեցող եւ գտնուող, օրինակ՝ փողոցային երթեւեկութիւն, փողոցային մարտեր, ցոյցեր եւ այլն: Բ) Փոխաբերաբար կը նշանակէ փողոցային բարքեր ունեցող, անկիրթ, անպարկեշտ, լպիրշ, անբարոյ: Իր փոխաբերական իմաստով հոմանիշ է **գռեհիկ** ածականին, որուն արմատն է **գռիհ**[12], որ իր կարգին կը նշանակէ փողոց, բայց միայն թէ նեղ ու մութ փողոց, որ շատ նպաստաւոր է ամէն տեսակ մթին արարքներու ու անբարոյ:

* **Փորել-բրել.**- Այս երկուքը շատ կը շփոթուին. ընդհանրապէս երկրորդը կը շփոթուի առաջինին հետ, մանաւանդ որ իրենց իմաստով եւ գործածութեամբ ալ բաւական մօտ են իրարու:

Փորել կը նշաակէ յառաջացնել փոս մը, որ կրնայ ըլլալ այլազան խորութեան՝ թիզ մը, կանգուն մը, քանի մը մեթր կամ աւելի՝ նայած թէ ցի՞ց մը պիտի տնկենք, սիւ՞ն մը հաստատենք, թէ՞ կառոյցի մը հիմերը պիտի դնենք:

Բրել-ը հողագործական եզր մըն է, որ կը նշանակէ կարծրացած հողը ցանքէ մը դարձնել՝ առաջ անոր մէջ խրելով **բրիչ** կոչուած գործիքը, որուն շեղբը շատ նման է բոլորիս ծանօթ թիի մը շեղբին, միայն թէ քիչ մը աւելի նեղ է, բոլորովին տափարակ եւ կոթին հետ անկիւն չի կազմեր, մինչ թիին շեղբը յարաբերաբար աւելի խոշոր է, ունի թեթեւ գոգաւորութիւն մը եւ կոթին հետ կը կազմէ մօտաւորապէս 15° անկիւն մը: Գիւղացին բրիչին շեղբը ոտքովը կը մխրճէ հողին մէջ, ապա կը թեքէ բրիչը, որպէսզի հողը խաղայ իր տեղէն ու երես փոխէ: Ընդհանրապէս կը բրեն ծառի մը բունին շուրջի հողը, մինչեւ իսկ թաղարի մը տունկին շուրջը, իսկ երբեմն ալ աւելի տարածուն հողաշերտեր: Արօրով կամ գութանով հերկելը նոյնանման գործողութիւն մըն է, որ սակայն կը տարածուի շատ աւելի ընդարձակ տարածութիւններու վրայ:

* **Քաղաքական-քաղաքային-քաղաքացիական.- Քաղաքական** կը նշանակէ պետութեան եւ միջպետական մարզին յատուկ. օրինակ՝ քաղաքական կարգեր, նպատակ, գործունէութիւն, կուսակցութիւններ, վիճակ (որ կրնայ վերաբերիլ նոյն երկրի պետական իրադրութեան, ինչպէս նաեւ պետութեան մը՝ այլ պետութիւններու հետ ունեցած յարաբերական կացութեան), քաղաքական բանակցութիւններ (որոնք կ'ընդգրկեն մէկէ աւելի պետութիւններ), քաղաքական ոճիր, որ կը գործուի սեփական երկրի կամ օտար երկրի մէկ քաղաքական անձի կամ անձերու դէմ: **Քաղաքական** կը նշանակէ նաեւ ոչ-կրօնական, օրինակ՝ քաղաքական ատեան (ի հակադրութիւն կրօնական ատեանի), քաղաքական ամուսնութիւն (որ եկեղեցական պսակով չէ հաստատուած՝ mariage civil)[13]:

Քաղաքային կը նշանակէ քաղաքին յատուկ. օրինակ՝ քաղաքային այգի, հրապարակ, տարազ (որ կը հակադրուի զինուորական կամ որեւէ կազմակերպութեան յատուկ համազգեստի), քաղաքային կեանք ու զբաղումներ, քաղաքային վարչութիւն (որ փաստօրէն արդի քաղաքապետարաններն են): Քաղաքային լայն իմաստով կը նշանակէ նաեւ պետական, օրինակ՝ քաղաքային ծառայող, որ պետական պաշտօնեան է:

Քաղաքացիական կը նշանակէ առաջին հերթին քաղաքացիի (ոչ քաղաքաբնակին, այլ տուեալ երկրի լիիրաւ զաւակին կամ անդամին) յատուկ. օրինակ՝ քաղաքացիական մտածողութիւն, իրաւունքներ ու պարտաւորութիւններ, գիտակցութիւն եւ այլն: **Քաղաքացիական** կը կոչուի նաեւ այն պատերազմը, որ կը մղուի նոյն երկրի քաղաքացիներու կամ քաղաքական տարբեր կազմակերպութիւններու միջեւ. օրինակ՝ Միացեալ նահանգներու քաղաքացիական պատերազմը (guerre civile, civil war): **Քաղաքացիական** կը կոչուի այն յատուկ ուսմունքը կամ դասընթացքը, որ կ'ուսուցէ պետական-վարչական կարգերու բնոյթն ու տարբերութիւնները, քաղաքացիին իրաւունքները, պարտաւորութիւններն ու պարտականութիւնները, վարչակարգերու գործունէութեան կերպը եւ այլն:

* **Քառատող-քառեակ.- Քառատող** կը նշանակէ չորս տողանի, չորս տող ունեցող. սա շատ տարածուած չափ մըն է բանաստեղծութեան մէջ, ուր տունը ընդհանրապէս կ'ունենայ չորս տող:

Քառեակ-ը նախ եւ առաջ գրական ուրոյն սեռ մըն է, որ իր կարգին բաղկացած է չորս տողէ, որոնք կը կազմեն ներքին ամբողջութիւն մը. ան սովորաբար ունի փիլիսոփայական, սիրային, իսկ երբեմն աստուածաբանական խորք կամ կը բովանդակէ ժողովրդական իմաստութիւն մը, պատգամ մը եւ այլն: Քառեակի մեծ վարպետ էր պարսիկ բանաստեղծ-փիլիսոփայ Օմար Խայեամը: Քառեակ գրած են հայ բանաստեղծներ եւս, ինչպէս Յովհաննէս Երզնկացին, Նահապետ Քուչակը, Յովհաննէս Թումանեանը, Եղիշէ Չարենցը եւ ուրիշներ: Կը կոչուի նաեւ «ռուպայյա»: Ստորեւ նմուշ մը Օմար Խայեաէն.

Ես որ մեռնիմ ինձ գինիով օծեցէ՛ք, Օրն յարութեան թէ որ ուզէք զիս գտնել,
Սաղմոսի տեղ կուժ ու գինի երգեցէ՛ք, Գինետան դռան տակը փնտռեցէ՛ք

Նմուշ մըն ալ Թումանեանէն.

Ամեն անգամ Քո տուածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ , երբ նայում եմ, թէ ինչքա՞ն է դեռ մնում,–
Զարմանում եմ, թէ՝ ո՛վ Շռայլ, ինչքա՞ն շատ ես տուել ինձ,
Ինչքա՞ն շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից:

«Քառեակ (մը)» կը նշանակէ նաեւ չորս. քառեակ մը՝ չորս հատ: Կը նշանակէ նաեւ չորս հոգիէ բաղկացած խումբ. կ'ըսուի ընդհանրապէս արուեստագէտներու համար (լարային քառեակ եւ այլն):

* **Օրինական-օրինաւոր-իրաւական-կանոնական.- Օրինական** կը նշանակէ վաւերացուած, հաստատուած ու կիրարկուող օրէնքի մը հետ հաշտ ու համաձայն (légal, legal). նման օրէնքը արձանագրուած կ'ըլլայ օրինագիրքի կամ սահմանադրութեան մէջ: **Օրինական** է ամեն ինչ, որ տեղի կ'ունենայ ըստ նման օրէնքի մը թելադրութեան՝ անկախ անկէ, թէ որքա՞ն արդար է այդ օրէնքը եւ որքա՞ն արդար է զայն հաստատող կողմը:

Օրինաւոր է ինչ որ ընդունելի ու համապատասխան է օրէնքին (loyal, faithful). օրինաւոր ամուսնութիւն, կին, վարմունք, առք ու վաճառք, կեցութիւն եւ այլն: Օրինաւորը օրինականին առօրեայ-կենցաղային այլազան կիրարկութիւններն է: Օրինաւորութեան սահմաններուն մէջ գործող անձը կը կոչուի **օրինապահ**:

Իրաւական-ը (légitime, legitimate) կը վերաբերի բնութեան կողմէ մարդուս արդարօրէն շնորհուած կամ շնորհելի իրաւունքներուն, հաշտ է այդ իրաւունքներուն հետ, կը համապատասխանէ մարդկային իրաւանց հանրօրէն ընդունուած չափանիշերուն. այդ չափանիշերը յարգող, անոնց վրայ հսկող ու անոնց հիմամբ գործող անձը կը կոչուի **իրաւապահ**: **Օրինականը** (légal) այնքանով **իրաւական** է (légitime), որքանով կը յարգէ մարդկային իրաւունքները, որոնց սահմանումը, սակայն, բոլորովին ենթակայական է, քանի որ իրաւունքը (droit, right) հանրօրէն ընդունուած կայուն ու բացարձակ արժէք մը չէ, այլ յարաբերական է:

Կանոնական եզրը մինչեւ մօտիկ անցեալը ունէր եկեղեցական բնոյթ եւ կը նշանակէր եկեղեցւոյ հաստատած, ընդունած, վաւերական նկատած սկզբունքներուն կամ կանոններուն հետ հաշտ. օրինակ՝ **կանոնական** գիրքեր եւ **պարականոն** գիրքեր, այս վերջինները եկեղեցւոյ կողմէ մերժուած աստուածաշնչական պատումներ են: Ներկայիս կանոնական կը նկատուի նաեւ այն ամէնը, որ կը համապատասխանէ որեւէ միութեան, կուսակցութեան կամ այլ կարգի հաւաքականութեան մը կողմէ հաստատուած ու ներքին կարգով վաւերացուած դրոյթներուն:

Յաւելուած

Հետեւանք. հասարակ գոյական է եւ բունն է **հետեւանքով** կապական բառին: Կը նշանակէ արդիւնք, արգասիք, ելք կամ վախճան՝ բացասական իմաստով. օրինակ՝ «Իր յամառութեան **հետեւանքն** (արդիւնքը) էր եղօրը գործէ արձակումը»: «Մտածեցէ՛ք պահ մը ձեր այս ընթացքի **հետեւանքին** (վախճանին) մասին»:

Հետեւութիւն. կը նշանակէ իրերու, երեւոյթներու, անցքերու ընթացքին ու աւարտին վրայ հիմնուած եզրակացութիւն, դատողութիւն, բանաձեւում. օրինակ՝ «Ի՞նչ հետեւութիւն կը հանէք դրացի ցեղախումբերու հետ ձեր ունեցած շփումէն»:

Հետեւողութիւն. բանի մը կամ մէկու մը հետեւելու իրողութիւնը կամ սկզբնօրինակի մը հիմամբ ընթանալու կամ ստեղծագործելու արարքը. օրինակ՝ «Նահապետ Ռուսինեան "Կիլիկիա" երգը գրած է ֆրանսացի բանաստեղծ Bérat-ի "Ma Normandie" երգի հետեւողութեամբ»,– ուրեմն տեղի ունեցածը բառացի թարգմանութիւն չէ, այլ բնօրինակի հիմնական գաղափարներու յարգումով ու պահպանումով կատարուած ազատ յօրինում մը: «Քանի՛ սերունդներ կրթուեցան Ռ. Պերպերեանի մանկավարժական ուսմունքին հետեւողութեամբ»,– այսինքն յարգելով այդ ուսմունքի հիմնական դրոյթները:

Հետեւողականութիւն. սեփական դատողութեան, սկզբունքներու, համոզումներու եւ գործունէութեան հանդէպ ցուցաբերուած անշեղ հաւատարմութիւն ժամանակի ու տարածութեան մէջ: Հետեւողականութենէ զուրկ է այն անձը, որ ըստ տեղի ու ժամանակի հակասականօրէն կը փոխէ նաեւ իր համոզումն ու գործելաձեւը:

Հետեւողական. այսպէս կը կոչուի իր ընթացքին մէջ հետեւողականութիւն ցուցաբերող անձը:

❋❋❋

Վերը սերտուած իրարանման, սակայն ոչ-նոյնանիշ բառերու շարքին արդի հայերէնի մէջ կը գտնենք բառային նոյնարմատ տարբերակներ, որոնք իմաստով բոլորովին նոյնանիշ են: Ասոնք ածանցաւոր բառեր են, որոնց նոյնանշութիւնը յառաջացած է ածանցներու նոյնանշութենէն:

Ա. խումբ, ուր գրեթէ համարժէք են **ան-դժ-ապ-չ** ժխտական նախածանցները:

* անբախտ-դժբախտ-ապաբախտ
* անգոյն-դժգոյն
* անկամ-դժկամ-չկամ
* անշնորհ-ապաշնորհ
* անարդիւնք-ապարդիւն
* անօրէն-ապօրինի
* աներասան-ապերասան

Բ. խումբ, ուր համարժէք են **եայ** եւ **է** վերջածանցները:
* արծաթեայ-արծաթէ
* երկաթեայ-երկաթէ
* մարմարեայ-մարմարէ
* ոսկեայ-ոսկիէ
* մագաղաթեայ-մագաղաթէ

Կը գոհանանք այս քանի մը օրինակներով, որովհետեւ շարքը շատ երկար է, կը հասնի հարիւրներու, ընդհուպ՝ հազարներու: Պէտք է միայն գիտնալ, որ երկրորդ տարբերակներու **է** մասնիկը կամ ածանցը արեւմտահայերէնի բացառական հոլովի **է**-ն չէ, այլ ամփոփումն է հնչիւնաբանական բարդ գործընթացի մը, ուր **եայ** եռաբարբառը կը դառնայ **է (եայ>եյ>է).** օրինակ՝ **բազեայ-բազեյ>բազէ, աշտեայ-աշտեյ>աշտէ, ափսեայ-ափսեյ> ափսէ** եւ այլն:

Գ. խումբ, ուր համարժէք են **աբար-օրէն** ածանցները:
* ագահաբար-ագահօրէն
* դաժանաբար-դաժանօրէն
* խիզախաբար-խիզախօրէն
* հայրաբար-հայրօրէն
* մայրաբար-մայրօրէն
* մեծամտաբար-մեծամտօրէն
* միամտաբար-միամտօրէն

Դ. խումբ, ուր համարժէք են **աբար-վարի-օրէն** ածանցները:
* ագահաբար-ագահավարի-ագահօրէն
* գազանաբար-գազանավարի-գազանօրէն
* դաժանաբար-դաժանավարի-դաժանօրէն
* երեխայաբար-երախայավարի-երեխայօրէն

Ե. խումբ, ուր համարժէք են **բար-պէս** ածանցները:
* առաւելաբար-առաւելապէս
* բացառաբար-բացառապէս
* մասնաւորաբար-մասնաւորապէս

Զ. խումբ, ուր համարժէք են **բար-պէս-օրէն**:
* բացարձակաբար-բացարձակապէս-բացարձակօրէն
* ուժգնաբար-ուժգնապէս-ուժգնօրէն
* հաստատաբար-հաստատապէս-հաստատօրէն
* ակներեւաբար-ակներեւապէս-ակներեւօրէն

Նոյնանշութիւն կը ցուցաբերեն կարգ մը այլ ածանցներ. օրինակ՝ **բերկրանք-բերկրութիւն, խրախճանք-խրախճանութիւն, սխրանք-սխրագործութիւն, ձեռային-ձեռական** եւ այլն:

Նոյնանշութեան օրինակները յարաբերաբար սահմանափակ են, որովհետեւ ամեն լեզու կը խուսափի նոյնանիշ բառերէ, այդպէս է նաեւ հայերէնը: Նոյնանիշները լեզուական բեռ են պարզապէս, որոնք անտեղի կը խճողեն մարդկային միտքը եւ լեզուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ուսումնասիրութեան Ա. մասը տե՛ս՝ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԹ. Հատորին* մէջ, էջ 509-52: Բացառաբար, պահպանած ենք հեղինակին ուղղագրական այլեւայլ մօտեցումները:

[2] Ուշադրութիւն դարձնել բութին՝ նախադաս կիրարկութեան պարագային:

[3] Մալխասեանց այս նոյն սահմանումը կու տայ **սեղմուիլ** (իմա՝ սեղմուել) բային:

[4] Խնդրոյ առարկայ չէ այստեղ **սեր** «կաթի երես» նոյնանունութիւնը, որ ոչ մէկ առնչութիւն ունի այս երկուքին հետ:

[5] Այստեղ զանց կ'ընենք այդ բոլորին մանրամասն անդրադարձը՝ ապաւինելով ընթերցողի ներողամտութեան, այլապէս շատ պիտի ծանծաղէր մեր շարադրանքը:

[6] **Բազմասեր**-ին դիմաց Աղայեան կը գրէ «բազմածին», որ է բազում սերունդ՝ զաւակ ունեցող: Ունինք նաեւ **բազմասեռ**-ը, որ կը նշանակէ մէկէ աւելի սեռային հակում ունեցող, սեռային խայտաբղէտութեամբ օժտուած՝ այր կամ կին:

[7] Յատկանշական է, որ արեւելահայ բոլոր բառարաններուն մէջ կը գտնենք այս արմատակից բառերը, սակայն անոնցմէ ոչ մէկը կ'ակնարկէ արմատին. իսկ հոն ուր նշուած կը գտնենք **սեր** արմատը, ապա ան հոմանիշ կը նկատուի **սեռ**-ին. օրինակ՝ «**սեր-սերունդ, ցեղ, սեռ**» (Գէորգ Ջահուկեան):

[8] **Այլասերիլ**, օրինակի համար, ստուգաբանօրէն «սեռը փոխել» չի նշանակեր, այլ որակական տեսակարար յատկանիշերը փոխել կամ կորսնցնել. օրինակ՝ երբ կ'ակնարկուի սփիւռքի այլասերիչ յատկութեան, մեր սեռը փոխելուն չ'ակնարկուիր. «սեռը փոխել»-ուն համար ունինք **սեռափոխութիւն** եզրը:

[9] Հնդեւրոպական մայր լեզուին մէջ **արական** կը կոչուէին տուեալ տեսակին կամ սերին արուն բնորոշող բառերը, օրինակ՝ **այր, տղայ, մարտիկ, խոյ, եզ, վարուժան** եւ այլն, իսկ իգական կը կոչուէին անոր էգը բնորոշող բառերը, օրինակ՝ **կին, մայր, աղջիկ, կոյս, աղախին, սպասուհի, կով, մաքի** եւ այլն: Մնացեալ բոլորը չէզոք էին: Երեք սեռը պահած են ներկայիս գերմաներէնը, ռուսերէնը, յունարէնը եւ այլն: Բայց ահա ժամանակի հետ կարգ մը լեզուներէ անհետացաւ չէզոք սեռը, եւ այս սեռով բնորոշուող բառերը այլազան նկատառումներով բաշխուեցան միւս երկուքին վրայ: Այսպիսին է ներկայիս ֆրանսերէնը, մինչ այլ լեզուներ՝ հայերէնը, անգլերէնը ընդմիշտ կորսնցուցած են սեռի հասկացութիւնը: Անդին կը գտնենք սեռական հոլով հասկացութիւնը, որ լատինական génitif-ն է եւ որ է յատկացուցիչի հոլովը: Իսկ բային **սեռը**՝ ներգործական, չէզոք ու կրաւորական, կը հիմնուի անոր ցոյց տուած գործողութեան՝ առարկաներու հետ ունեցած առնչութեան կամ ընդգրկումի բնոյթին վրայ: **Սեռ** եզրով կը բնորոշուին նաեւ գրական-գեղարուեստական երկերու մշակման այլազան կերպերն ու եղանակները՝ վիպապաշտ, իրապաշտ, ապագայապաշտ եւ այլն: Ասոնք բոլորը քիչ թէ շատ փոխաբերական իմաստով գործածուած եզրեր են, որոնց գիտականութիւնը այնքան ալ վաւերական չէ, ուստի պէտք է զանոնք ընդունիլ ինչպէս որ են՝ յարգելով աւանդոյթը:

[10] Մեր բառարաններուն մէջ **առականք**-ը կը բացատրուի իբրեւ «ամօթոյք», որ կը նշանակէ ամօթ պատճառող եւ կը բնորոշէ սեռային գործարաններու տեսանելի մասը՝ առանց այրի ու էգի զանազանութեան: Բառիս արմատն է **առակ**, որ կը գտնենք **խայտառակ** բարդ բառին մէջ եւս եւ կը նշանակէ ծաղր, ամօթ, նշաւակ: Ուրեմն ոչ մէկ կապ ունի **այր** բառին հետ, որու ածանցումներուն ու բարդումներուն մէջ **ր>ռ** հնչիւնափոխութիւն տեղի չ'ունենար. միայն գրաբարի սեռականին մէջ ունինք **այր-առն** (**Առն** միոջ էին երկու որդիք...) յիշեալ հնչիւնափոխութիւնը:

[11] Փաստօրէն **առականք**-ը (**առակ**-անք) եւ **արականք**-ը (**այր**-ականք) հաւասարապէս, սակայն տարբեր տեսանկիւններէ, կը բնորոշեն նո՛յն առարկան, որ է սեռային անդամներու երեւելի մասը, որ ենթակայ է ամօթի (ամօթոյք՝ ամօթ թելադրող, ներշնչող) եւ հակամէտ ենք ծածկելու:

[12] Կը գրուի նաեւ «գռեհ» եւ բոլոր ածանցումներն ու բարդութիւնները հիմնուած են այս վերջինին վրայ՝ **գռեհիկ, գռեհկաբան, գռեհկաբարոյ, գռեհկարար, գռեհկանալ** եւ այլն:

[13] Այս եզրը արդարօրէն կը քննադատուի, սակայն զայն փոխարինող եւ հանրօրէն ընդունուած եզր մըն ալ չունինք. կ'արժէ ընդհանրացնել «քաղաքացիական» եզրը, քանի նման ամուսնութիւնները կը կնքուին քաղաքապետարանի իրաւասութեան ծիրէն ներս:

SEMASIOLOGY II.
(DJ-O)
(Summary)

ARMENAG YEGHIAYAN
armenag@gmail.com

The author examines a number of words in Western Armenian and analyses their misuse, particularly in Western Armenian. In certain cases the author refers to their usage in contemporary Eastern Armenian, and, basing his comments on various Western and Eastern Armenian dictionaries, underlines the nuances in their meanings and makes suggestions about the way these words should be used.

This is the second part of a study on commonly used words which have similar or very close pronunciation but different spellings and meanings in contemporary Western Armenian. It covers the words which start with any letter of the Armenian alphabet between Ճ(DJ) and Օ(O). The first part was published in the previous (39th) volume of the *Haigazian Armenological Review*.

ՓԱՈԼՕ ԱՆԱՆԵԱՆ. ՍԿԱԽԱՌԱԿԻ ՎՐԱՅ ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐԷՆ ՄԻՆ

ՀԱՅԿ ԱԽԱԳԵԱՆ
haigavakian@yahoo.com

Arrêtons-nous ici'ի (1907) եւ *Լա Թրաւիաթա* օփերայի ձայնագրութիւնները (1935)

Հայկական երաժշտական ձայնագրութիւնը ունի վաղ պատմութիւն:

1900ի Փարիզի Համաշխարհային Ցուցահանդէսի ծիրին մէջ, Փարիզի Մարդաբանական Ընկերութեան (Société d'Anthropologie de Paris) կողմէ Լէոն Ազուլայ, ոչ-առեւտրական նկատառումով, ֆոնոկրամի վրայ կը ձայնագրէ բազմաթիւ երկիրներու երաժշտութիւններ: Թիֆլիսէն թենոր Ամիրեան միածայն (առանց նուագակցութեան) կը ձայնագրէ *Ձմեռն Անցաւը* եւ *Ծիծեռնակը*՝ մեզի աւանդ ձգելով հին երգեցողութեան ազատ եւ ոլորուն ոճի գեղեցիկ ճաշակի վաղագոյն նմոյշ մը[1]:

Ըստ Տոքթ. Եքթան Թիւրքիլմազի, հայկական առաջին առեւտրային ձայնագրութիւնը կատարուած է 1901ին, Սենթ Փեթերսպուրկ, Կոմիտաս վարդապետի *Կռունկով*[2]:

1902ին Կրամոֆոն Ընկերութիւնը (Gramophone Company) մուտք կը գործէ Թիֆլիս՝ ձայնագրելու համար տեղական երաժշտութիւնը: Հայկական երաժշտութենէն կը ձայնագրէ Եկմալեանի *Տէր Ողորմեան*՝ երգչախումբ, *Յորժամ* եւ *Էս Գիշեր*՝ Նէրսիսեան հոգեւոր դպրոցի երգչախումբ, *Լեզգինկա*՝ թառ եւ քամանչա, *Լորիկ*՝ Արշակ Կոստանեան, *Մայր Արաքսի Ափերով* Կրասնիկեանց եւն.:

1905ին, բոլորովին այլ միջավայրի մէջ՝ Փարիզ, նշանակալի թափով Փաոլօ (Փօլ) Անանեան կը սկսէր իր ձայնագրութիւններուն շարքը, հանդիսանալով առաջին հայ կատարողը՝ որ յաջողած է ձայնագրել հետեւողականօրէն, թէեւ միշտ մնալով յատկապէս ֆրանսական, այլեւ իտալական եւ գերմանական օփերաներու ոլորտին մէջ:

Անանեան ունեցած է երգային բամբ ձայն մը՝ ճկուն ու գալարուն հնչերանգով: Ծնած է Պոլիս, 1879 Մարտ 8ին[3]: Յայտնի չէ՝ երբ գաղթած է Ֆրանսա: 1905-08՝ եղած է Ֆրանսայի Մոնթէ Քարլօ Օփերայի Թատրոնի մեներգիչ, ուր, ի միջի այլոց, ելոյթ ունեցած է Մասընէի *Թերէզ* եւ Քսաւիէ Լըրոյի *Թէոփորա* օփերաներու առաջնեկ բեմադրութիւններուն մէջ: Այս շրջանին է որ կատարած է իր միակ սթիւտիօ ձայնագրութիւնները Փարիզի մէջ:



2270
217102
No.

U. S. DEPARTMENT OF LABOR
NATURALIZATION SERVICE

TRIPLICATE

2 229422

UNITED STATES OF AMERICA

DECLARATION OF INTENTION

Invalid for all purposes seven years after the date hereof

State of New York, Southern District of New York, } ss: In the District Court of the United States

I, PAOLO ANANIAN, aged 47 years, occupation opera singer, do declare on oath that my personal description is: Color white, complexion dark, height 5 feet 5 inches, weight 176 pounds, color of hair brown, color of eyes brown, other visible distinctive marks none

I was born in Constantinople, Turkey on the 8th day of March, anno Domini 1879; I now reside at 44 W. 59th St., New York City, N. Y.

I emigrated to the United States of America from Havre, France on the vessel La Lorraine; my last foreign residence was Paris, France; I am not married; the name of my { wife / husband } is ; { she / he } was born at and now resides at

It is my bona fide intention to renounce forever all allegiance and fidelity to any foreign prince, potentate, state, or sovereignty, and particularly to The Present Government of Turkey and (or) The Republic of Armenia, of whom I am now a subject; I arrived at the port of New York in the State of N.Y., on or about the day of October, anno Domini 1908; I am not an anarchist; I am not a polygamist nor a believer in the practice of polygamy; and it is my intention in good faith to become a citizen of the United States of America and to permanently reside therein. SO HELP ME GOD.

Paolo Ananian
(Original signature of declarant)

Subscribed and sworn to before me in the office of the Clerk of said Court at New York City, N. Y., this 24th day of Sept., anno Domini 1926

[SEAL]

Deputy Clerk of the District Court of the United States.

Ամերիկեան հպատակութիւն ստանալու դիմումնագիրը, 1926

Ի. դարասկիզբին, Միացեալ Նահանգներ մեծ թափով կը ջանար ունենալ իր սեփական մշակութային արտադրութիւնը: Օփերայի ոլորտին համար, Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոնը ամէն տարի Եւրոպայի մէջ ունկնդրութիւններ կը կազմակերպէր եւ կ'ընտրէր կարող մեներգիչներ որպէսզի դառնային իր մնայուն արուեստագէտները: Այս ծիրին մէջ է որ Անանեան 1908ին կ'ընտրուի Մեթրոփոլիթընի մեներգիչ եւ Հոկտեմբերի վերջ կը հասնի Նիւ Եորք:

ԱՄՆի մէջ, քանի մը տարի ետք իր ֆրանսերէն Փոլ անունը կը դառնայ իտալերէն Փաոլօ: 1926ին ամերիկեան կառավարութեան կը ներկայացնէ հպատակութեան դիմում, զոր կը ստանայ 1933ին:

1908 Նոյեմբեր 14ին կ'ունենայ առաջնեկ ելոյթը Մեթրոփոլիթընի հետ, Brooklyn Academy of Musich մէջ, նշանաւորելու համար վերջինիս վերաբացումը: Կը կատարէ Շարլ Կունոյի *Ֆաուստ* օփերայի Վակնէրի դերերգը՝ Էնրիքօ Քարուզոյի եւ Ճերալտին Ֆարրարի հետ: Բուն Մեթրոփոլիթըն Թատրոնի բեմին վրայ առաջին ելոյթը կը կայանայ Նոյեմբեր 20ին, *Լա Թրաւիաթայի* Մարքիզ Օպինյիի դերով, դարձեալ Քարուզոյի գլխաւոր դերակատարութեամբ:

Այսպէս, ան առաջին հայն էր՝ որ ելոյթ կ'ունենար Մեթրոփոլիթընի հետ, արձանագրելով 1641 ելոյթ՝ բեմադրութիւններու թէ երգահանդէսներու մէջ: Վերջին ելոյթը կ'ըլլայ 1935 Ապրիլ 12ին, նուագավար Ուալթըր Տամրոշի ոսկեայ յոբելեանին նուիրուած երգահանդէսին[4]:

1920-31՝ Անանեան գրեթէ ամէն տարի կը հրաւիրուի մասնակցելու Ռաւինիա Օփերայի ամառնային բեմադրութիւններուն[5]: Երկու թատերաշրջան՝ 1923-25, ելոյթ կ'ունենայ Սան Ֆրանսիսքօ Օփերայի ներկայացումներուն[6]: ԱՄՆի մէջ երբեմն մասնակցած է հայկական ձեռնարկներու:

1931ին, Մեթրոփոլիթըն կը սկսի շաբաթօրեայ ցերեկային ձայնասփռումները (Saturday Matinee Broadcasts), որոնք կ'արձանագրեն բացառիկ յաջողութիւն եւ կը շարունակուին մինչեւ այսօր:

Կենդանի ձայնագրութեան սիրահար մը՝ Էտուարտ Ճ. Սմիթ (Edward J. Smith), իր անձնական հաւաքածոյին համար սկսած էր 78 շրջանով (rpm) մոմային գլաններու վրայ ձայնագրել զանազան կենդանի կատարումներ: Մեթրոփոլիթընի ձայնասփռումները առիթ մը կը ներկայանան այս ձայնագրութիւններուն համար: Յետագային, Սմիթ զանոնք կը վերածէ 33$^{1}/_{3}$ սկաւառակներու եւ կ'առեւտրականացնէ երեք յաջորդական պիտակներով՝ The Golden Age of Opera (1956-1971), Unique Opera Record Corporation (1972-1977) եւ A.N.N.A. Record Company (1978-1981), արտադրելով աւելի քան վեց հազար սկաւառակ եւ հանդիսանալով երաժշտութեան պատմութեան ամենամեծ առեւանգային (pirate) ձայնագրութիւններու հեղինակը[7]: Այստեղ, երեք անուն սկաւառակներու վրայ կը գտնուի Անանեան, ձայնագրուած Մեթրոփոլիթընի ցերեկային ձայնասփռումներէն: Այս սկզբնաղբիւրին հիման վրայ, յետագային կատարուեցան այլ արտադրութիւններ՝ այլ ընկերութիւններու կողմէ, թէ՛ սկաւառակներու եւ թէ՛ խտասալիկներու վրայ:

Անանեան կը մահանայ 1942ին[8]:

Ստորեւ կու տանք ցանկը Փաոլօ Անանեանի ամբողջական ձայնագրութիւններուն, որոնց տեղեկութիւններուն մեծ մասը քաղած ենք բուն սկաւառակներէն.-

Ցանկ Փաոլօ Անանեանի ամբողջական ձայնագրութիւններուն			
1	Eugène Diaz: *Benvenuto*, 'De l'art splendeur immortelle' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Ապրիլ 1905 Աքուսթիք 78 rpm Odeon 6270, մաթրիքս՝ P 1196	2	Richard Wagner: *Tannhäuser*, 'O douce étoile' [O du mein holder Abendstern] (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1905 Աքուսթիք 78 rpm Odeon 6274
3	Émile Paladilhe: *Patrie!*, 'Pauvre martyr obscur' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1905 Աքուսթիք 78 rpm Odeon 6284, մաթրիքս՝ P 1193	4	Hector Berlioz: *La damnation de Faust*, 'Voici des roses' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Ապրիլ 1905 Աքուսթիք 78 rpm Odeon 6285

5	Charles Gounod: *Faust*, 'Prenez mon bras un moment' (Quatuor) (1) (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Lise Landouzy Մեծծօ սոփրանօ՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 56090, մաթրիքս՝ xP 3527	6	Charles Gounod: *Faust*, 'Eh quoi! toujours seule?' (Quatuor) (2) (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Lise Landouzy Մեծծօ սոփրանօ՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 56091, մաթրիքս՝ xP 3528
7	Giacomo Puccini: *La bohème*, Quatuor (սկիզբ) (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Lise Landouzy Մեծծօ սոփրանօ՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 56092, մաթրիքս՝ xP 3530	8	Giacomo Puccini: *La bohème*, Quatuor (վերջ) (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Lise Landouzy Մեծծօ սոփրանօ՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 56093, մաթրիքս՝ xP 3531
9	Charles Gounod: *Faust*, 'Anges purs, anges radieux' (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Lise Landouzy Մեծծօ սոփրանօ՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 56094, մաթրիքս՝ xP 3532	10	Ambroise Thomas: *Mignon*, 'De son cœur j'ai calmé la fièvre' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60181, մաթրիքս՝ xP 3170
11	Jules Massenet: *Le jongleur de Notre-Dame*, 'Fleurissait une rose' (Légende de la sauge) (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ	12	Jules Massenet: *Thaïs*, 'Voilà donc la terrible cité!' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907

	Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60182, մաթրիքս՝ xP 3171		Աքուսթիք 78 rpm Odeon X 60183, մաթրիքս՝ xP 3172
13	Émile Paladilhe: *Patrie!*, 'Pauvre martyr obscur' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60184, մաթրիքս՝ xP 3173	14	Giacomo Puccini: *La bohème*, 'O défroque si chère' [Vecchia zimarra] (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1906-07 Աքուսթիք 78 rpm Odeon X 60194, մաթրիքս՝ xP 3206
15	Hector Berlioz: *La damnation de Faust*, 'Devant la maison' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60229, մաթրիքս՝ xP 3209	16	Adolphe Adam: *Le chalet*, 'Arrêtons-nous ici' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60230, մաթրիքս՝ xP 3210
17	Adolphe Adam: *Le chalet*, 'Chants de nos montagnes' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60231, մաթրիքս՝ xP 3211	18	Jules Massenet: *Manon*, 'Ne bronchez pas' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60236, մաթրիքս՝ xP 3229
19	Jules Massenet: *Thaïs*, 'Duo de l'oasis' (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Mercier-Duprez Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60257, մաթրիքս՝ xP 3228	20	Giacomo Puccini: *La bohème*, 'O défroque si chère' [Vecchia zimarra] (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1908 Աքուսթիք 78 rpm Odeon A 73003, մաթրիքս՝ P09
21	Émile Paladilhe: *Patrie!*, 'Pauvre martyr obscur' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1908 Աքուսթիք 78 rpm	22	Victor Massé: *Les noces de Jeannette*, Duo (ֆրանսերէն) Սոփրանօ՝ Mercier-Duprez Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1908

	Odeon A 73005		Աքուսթիք 78 rpm Odeon A 75002
23	Giuseppe Verdi: *La traviata* (իտալերէն) Վայր՝ Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոն Կատարումի թուական՝ 5 Յունուար 1935 (ցերեկային ձայնասփռում) Նուագախումբ եւ երգչախումբ՝ Մեթրոփոլիթըն Օփերա Նուագավար՝ Ettore Panizza Սոփրանօ՝ Rosa Ponselle (Violetta Valéry) Թենոր՝ Frederick Jagel (Alfredo Germont) Պարիթոն՝ Lawrence Tibbett) Giorgio Germont) Սոփրանօ՝ Elda Vettori (Flora Bervoix) Թենոր՝ Angelo Badà (Gastone) Պարիթոն՝ Alfredo Gandolfi (Barone Douphol) Պարիթոն՝ Millo Picco (Marchese d'Obigny) Պաս՝ Paolo Ananian (Dottore Grenvil) Մեծծօ-սոփրանօ՝ Henriette Wakefield (Annina) **33⅓ սկաւառակ** E.J. Smith The Golden Age of Opera EJS 106 (3 սկ.), հրապարակում՝ 1956[9] Metropolitan Opera Performances MOP 2 (2 սկ.) Pearl GEMM 235/236 (2 սկ.), հրապարակում՝ 1982 **Խտասալիկ** Pearl GEMM 9317 (+*Norma*, հատուածներ) (2 խտ.), հրապարակում՝ 1988 The Fourties FT 1513-14 Naxos Historical 8.110032-33 (2 խտ.), հրապարակում՝ 1998 Bensar OL 1535 (BRO 125868) (2 խտ.), հրապարակում՝ 2005 House of Opera CDNY5083, հրապարակում՝ 2008 House of Opera CD13142, հրապարակում՝ 2009	24	Charles Gounod: *Roméo et Juliette* (ֆրանսերէն) Վայր՝ Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոն Կատարումի թուական՝ 26 Յունուար 1935 (ցերեկային ձայնասփռում) Նուագախումբ եւ երգչախումբ՝ Մեթրոփոլիթըն Օփերա Նուագավար՝ Louis Hasselmans Թենոր՝ Charles Hackett (Roméo) Սոփրանօ՝ Eidé Norena (Juliette) Պաս՝ Léon Rothier (Frère Laurent) Մեծծօ-սոփրանօ՝ Gladys Swarthout (Stéphano) Պարիթոն՝ Giuseppe De Luca (Mercutio) Թենոր՝ Max Altglass (Benvolio) Մեծծօ-սոփրանօ՝ Henriette Wakefield (Gertrude) Պարիթոն՝ Louis D'Angelo (Le Comte Capulet) Թենոր՝ Angelo Badà (Tybalt) Պարիթոն՝ Millo Picco (Le Comte Pâris) Պաս՝ Paolo Ananian (Grégorio) Պաս՝ Arthur Anderson (Le Duc de Vérone) **33⅓ սկաւառակ** Unique Opera Recordings Corporation UORC 175 (2 սկ.), հրապարակում՝ 1973[10] **Խտասալիկ** Encore Grand Tier ENGT 4/93 (2 խտ.) Naxos Historical 8.110140-41 (2 խտ.), հրապարակում՝ 2003 Bensar OL 12635 (BRO 125833) (2 խտ.), հրապարակում՝ 2005 House of Opera CDNY5125, հրապարակում՝ 2008

25	Giacomo Puccini: *La bohème* (Ա. եւ Գ. արարներ) (իտալերէն) Վայր՝ Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոն Կատարումի թուական՝ 23 Մարտ 1935 (ցերեկային ձայնասփոռում) Նուագախումբ եւ երգչախումբ՝ Մեթրոփոլիթըն Օփերա Նուագավար՝ Vincenzo Bellezza Սոփրանօ՝ Elisabeth Rethberg (Mimì) Թենոր՝ Frederick Jagel (Rodolfo) Սոփրանօ՝ Nina Morgana (Musetta) Պարիթոն՝ Giuseppe De Luca (Marcello) Պարիթոն՝ Millo Picco (Schaunard) Պաս՝ Ezio Pinza (Colline) Պաս՝ Paolo Ananian (Benoît) Պաս՝ Pompilio Malatesta (Alcindoro) Պաս՝ Max Altglass (Parpignol) Պաս՝ Carlo Coscia (Sergente dei doganieri) **33⅓ սկաւառակ** E.J. Smith The Golden Age of Opera EJS 114 (1 սկ.), հրապարակում՝ 1957[11] **Խտասալիկ** Walhall WHL 13 (+*La bohème*, հատուածներ) (2 խտ.), հրապարակում՝ 1995

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] ա. L. Azoulay, "Liste des Phonogrammes Composant le Musée Phonographique de la Société d'anthropologie," *Bulletins de la Société d'anthropologie de Paris*, V Série. Tome 3, 1902, էջ 654:

բ. Centre de recherche en Ethnomusicologie, https://archives.crem-cnrs.fr/archives/collections/CNRSMH_I_1900_001/
Ամիրեանի երկու ձայնանգրութիւնները ունկնդրութեան համար ներկայիս մատչելի են Ազգագրա-երաժշտագիտական Հետազօտական Կեդրոնի (Centre de recherche en Ethnomusicologie) կայքէջին վրայ. https://archives.crem-cnrs.fr/archives/items/CNRSMH_I_1900_001_042/ եւ https://archives.crem-cnrs.fr/archives/items/CNRSMH_I_1900_001_043/:

[2] Taleen Babayan, "Musical Records: The Beat of Armenian Hearts around the World," *The Armenian Mirror-Spectator*, 5 Ապրիլ 2018:

[3] Տե՛ս՝ հպատակութեան դիմումնագիրին լուսապատճէնը:

[4] Մեթրոփոլիթըն Օփերայի բոլոր բեմադրութիւններուն մանրամասնութիւնները կարելի է գտնել անոր կայքէջին վրայ՝ http://archives.metoperafamily.org/archives/frame.htm :

[5] Ռաւինիայի ամբողջական ելոյթներուն համար տե՛ս՝ Robert C. Marsh, "The Annals of the Ravinia Opera, Part 2: 1917-1921," *Opera Quarterly*, 1997:13(4), էջ 123-39. նաեւ նոյն՝ "The Annals of the Ravinia Opera, Part 3: 1922-1926," *Opera Quarterly*, 1997:14(1), էջ 79-101:

[6] Սան Ֆրանսիսքօ Օփերայի բոլոր բեմադրութիւններուն մանրամասնութիւնները կարելի է գտնել անոր կայքէջին վրայ՝

http://archive.sfopera.com/qry3WebCastlist.asp?psearchall=on&psearch=Ananian&psearchtype= :

[7] William Shaman, William J. Collins and Calvin M. Goodwin, *EJS: Discography of the Edward J. Smith Recordings. The Golden Age of Opera 1956-1971*, Westport, London, Greenwood Press, 1994, էջ ix:

[8] Արծուի Բախչինեան, *Հայազգի Գործիչներ Հնագոյն ժամանակներից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, Զանգակ 97 Հրատ., 2002, էջ 24:

[9] Shaman, Collins and Goodwin, էջ 14-16:

[10] William Shaman, William J. Collins and Calvin M. Goodwin, *EJS: Discography of the Edward J. Smith Recordings: Unique Opera Records Corporation (1972-1977), A.N.N.A. Record Company (1878-1982), Special-Label Issues (circa 1954-1981), and Addendum to The Golden Age of Opera Series*, Westport, London, Greenwood Press, 1999, էջ 87-88:

[11] Shaman, Collins, Goodwin, *The Golden Age of Opera 1956-1971*, էջ 24:

PAOLO ANANIAN, ONE OF THE FIRST ARMENIAN CLASSICAL SINGERS REGISTERED ON DISC

(Summary)

HAIG AVAKIAN
haigavakian@yahoo.com

Paolo Ananian (Istanbul, 1879–New York, 1942) started his bass soloist career in the opera of Monte Carlo, France. Later on he performed at the Metropolitan Opera, became a permanent soloist of the Ravenna Opera summer performances, performed in the San Francisco opera and performed in other places too.

As a soloist singer at the opera between 1905 and 1908 Ananian registered his performances on Odeon acoustic 78 rpm discs (all in all, 22 sides). Shortly after, he was recruited by the Metropolitan Opera, where between 1908 and 1935 he became a permanent soloist, and was the first Armenian who performed at the Metropolitan.

The Saturday Matinee Broadcasts of the opera were pirated and later on were traded and made public. Ananian had participated in three live opera recordings of the Metropolitan, namely *La Traviata*, *Roméo et Juliette* and *La Bohème*.

ANTOINE SEVRUGUIN'S (1851--1933) BIOGRAPHY: SOME CLARIFYING FACTS AND DETAILS

YVETTE TAJARIAN
yvettetaj@yahoo.com

INTRODUCTION

This short paper elucidates certain facts concerning some aspects of the life and work of the famous Iranian-Armenian photographer Antoine Sevruguin, including his origin, birth and death dates, studies, and photographic career. The study is based on several interviews conducted by the author with the photographer's descendants, as well as evidence found through field work and research in the archives of the family Sevruguin.

A SHORT OVERVIEW OF PHOTOGRAPHY IN IRAN IN THE 19TH AND EARLY 20TH CENTURIES

Between 1785 and 1925, a policy for the unification of Iran was undertaken by the ruling Qajar dynasty. Alongside unifying the country, all kings of the Qajar dynasty aspired to bringing the country out of its isolation by improving its economic and cultural relations with the west.

One of the tools for communicating with the west, promoting Iranian culture, and attracting western travelers and researchers was photography, which was much appreciated and popular in Iran during the reign of Naser ed-Din Shah (1848-96). One hundred seventy-seven years have passed since the first daguerreotype was taken in Iran in mid-December 1842. Indeed, a veritable passion for photography gripped the Qajar palace and thereafter spread throughout the Persian country. Soon photography was popularized in Iran thanks to its long-established tradition of visual culture.

We can categorize Iran's photographers of 1842-1925 into three main groups: a) a group of photographers whose duty was investigating, promoting and marketing the various cultural and ecological diversities of the country. These mostly came from different nations of Europe and were assigned the task by European geographic and scientific institutions, b) local photographers who took up new technical discoveries just for fun, and were dedicated to the art of photography as a hobby, c) professionals who had made photography their

career.[1] Some of these photographers were independent, like Joseph Papazian,[2] who started his photographic studio in Tehran around 1875.

Mirza Melkom Khan and his family, Tehran, 1860s
Armenian woman, glass plate negative, Myron Bement Smith collection (FSA A.4 2.12.GN.46.15

According to the Iranian historian Yahya Zoka, the photographer who initiated photography in Iran was Jules Richard (1816-1891), a Frenchman who, according to his diaries, arrived in Tehran in 1844. Richard was appointed as a language instructor at the newly founded Polytechnic College, the Dar ol-Fonun[3] in 1851. He knew the daguerreotype technique, the first commercially successful photographic process in the history of photography (in the 1830s). Named after the inventor, the French Louis Jacques Mandé Daguerre, each daguerreotype is a unique image on a silvered copper plate. It was Richard who carried out the process and introduced it to Iranian photographers. Richard was the first foreign photographer who served at the Persian Palace. During the period of the Qajar dynasty, the number of foreigners increased in Iran. Of these some were invited by the shah while others came as diplomats.
Richard was followed by a number of photographers, who, a decade later, became active in Tehran and introduced new techniques in photography. In the 1850s, August Krziz (1814-1886), an Austrian military officer who used to teach at the Dar ol-Fonun, experimented with calotypes.[4] Likewise, the Italian Focchetti taught at the Dar ol-Fonun. He initiated the collodion process in Iran.[5] In the 1860s, two Italian photographers, Luigi Montabone (died 1877)

and Luigi Pesce (1818–1891) arrived in Iran. The latter was the first who took photos of a number of ancient monuments and ruins, like Persepolis and Taq-I Bostan. The most prolific among these early European photographers was Ernst Hoeltzer (1835-1911), a German engineer who was tasked by the British in Isfahan to run the telegraph center in the city.[6]

Naser ed-Din Shah assigned Agha Reza Eghbal ol-Saltane, one of his favorite palace attendants, to study the techniques of photography. Soon the art was institutionalized, and in the 1860s an official position was created for a palace photographer. Eventually, a darkroom and a photographic studio in the Golestan Palace were in full function. Soon, the Dar ol-Fonun established its own photographic studio too.[7]

The impact of photography on painting during this period should not be underestimated. Photography gave a realistic dimensional quality to painting. Many photos served as models or prototypes for paintings. Portraitists, especially, produced several paintings 'copied' from photos after making certain changes.[8]

Naser ed-Din Shah himself became an enthusiastic photographer and in the mid-1860s began to take photos.[9] His eldest son, Mass'oud Mirza Zell al-Sultan (1848-1917), a powerful prince of the Qajar dynasty and the ruler of Isfahan, followed his father's keen interest in photography and employed photographers in his palace.[10]

Persepolis (Iran), Shiraz, 1890s, glass plate negative, Myron Bement Smith collection

ANTOINE SVRUGUIN

Antoine Sevruguin belongs to the generation of those rare and distinct photographers who introduced artistic photography to the palace of Naser ed-Din in the second half of the 19th century.[11]

In appreciation of his dedication to photography, and contribution to Iran's national heritage, Naser ed-Din Shah awarded Antoine Sevruguin the title of "Khan" and decorated him with the order of the Lion and Sun "Shir o

Khorshid", (1848-96).[12] He was highly respected and honored in the palace, while on the streets of Tehran he was called Antoine Khan. Not least, his recognition went far beyond the palace and the streets of Tehran and the country. Antoine Sevruguin's artistic devotion was honored with medals and awards in international photo exhibitions in Brussels in 1897 and in Paris in 1900. Notwithstanding his fame, several details of Antoine's life have been ambiguous. Even his dates of birth and death were uncertain.

In 1996, when I first started research on the Sevruguin family, I was surprised by the abundance of contradictory details in his biography. Information about his dates of birth and death was different in various sources, and there was little concurrence, which made it more difficult to find the truth. Even Antoine's grandson, Emmanuel, did not have a clear idea about these dates.[13] One source mentioned that Antoine was buried in the Russian Cemetery in Tehran. After extensive research I was able to discover the Sevruguin family grave. The tombstone included Antoine's name. It was inscribed that Antoine Sevruguin was born in 1851 and died in 1933.

There are some contradictions regarding his origin, too. Indeed, due to his name, which is often misspelled, this Armenian photographer is considered to be of Russian origin.

The research conducted by this author revealed several details of his life. The Sevrugian family had a place in the Persian-Armenian upper class and was also a part of the Persian aristocratic elite.[14] The family was diligent about the upbringing of their children and took measures to make sure that the offspring received a comprehensive education and learned several languages. Vasily Sevruguin, Antoine's father, was an educated intellectual who graduated from the Faculty of Oriental Languages of the Lazarev School in Moscow.

After graduation Vasily held a civil service position at the Russian Embassy in Tehran.[15] Like many Russian-Armenian state officials and politicians, Vasily also changed his Armenian surname to Sevruguin.[16] This change of name to Sevruguin explains the uncertainty in sources concerning the origins of Antoine. Later, André, Antoine's son, Armenianized the family name Sevruguin adding the suffix "ian,"[17] which is typical for Armenian family names and identifies the bearer as of Armenian origin.

Emmanuel Sevrugian, Antoine's grandson, is convinced that his ancestors had an Armenian family name. His extended research of the family's original name, however, did not produce any clarifications.

One may assume that probably the name Sevruguin has a geographic connotation. Vasily had studied in Russia, which is a country north of Iran. In Russian north is referred to as "Sever (север)," and Sevruguin meant the man

from the north, from Russia, or an area which is north of Iran.

Vasily's sudden and unexpected death shocked the family, which had to adapt to the tragic new conditions it faced.[18] His widow, Achon, who was the only caretaker of the family, left Tehran and returned to her birthplace, Tbilisi, and later moved to Agulis, Nakhichevan region.

Antoine, on the contrary, opted for a career as an artist and went to Tbilisi, where he studied painting. Soon he discovered the miracles of photography, which had recently been introduced to the country, and learned the art of photography under the famous Russian photographer Dmitri Ivanovich Yermakov (1845-1916), who lived in Tbilisi.[19] The wrong assumption that the Sevruguins were Georgians or originated from Georgia may be related to Antoine's connection with Tbilisi.

The Antoine Sevruguin Family, 1900s. From left to right, sitting: Antoine, second daughter Olga II, wife Louise, daughter Marie. Standing: son André, son Sasha, brother Emmanuel,

Antoine, a nostalgic individual, encouraged by his teacher Yermakov, eventually decided to return to his birthplace, Persia, where he had left the unfinished tale of his childhood dreams, and where he was to create a series of photographs devoted to Persian culture.[20] In the 1870s, Antoine and his brothers decided to devote themselves to photography and founded a family business in Iran. In 1883, Antoine managed to found his own studio in the city of Tabriz, which brought him great popularity in a short time, also ensuring his access to the Palace.[21] Later on he relocated to Tehran to launch a photo studio on the second floor of a house in Ala ed-Dowla Street (later renamed Ferdowsi Avenue).[22] Thanks to his exceptional skills, soon Antoine became such a well-known photographer in Tehran that members of the upper class visited his studio to have their photos taken. In no time his reputation made him the official palace photographer of Naser ed-Din Shah.

Antoine had a charismatic personality. He had a large circle of friends and associated himself with members of the royal palace, tribal chieftains, intellectuals, diplomats and Sufis. He traveled a great deal with his camera, took photos and created thousands of printed photos.[23] These photos are

mainly dedicated to archeological and historical sites, beautiful and mysterious oriental episodes, wandering dervishes, Sufis and a whole range of characters carrying the burden of the world on their shoulders. As an Armenian and a member of the intellectual elite, he combined both cultural and social identities.

Antoine's studio was a significant meeting place for European travelers, artists, and archeologists who were interested in his photos and wanted to buy them. They often bought whole albums from him.[24] Indeed, Antoine's albums with pictures of life in Persia were sold as souvenirs to European travelers.

Antoine developed his photographic talent in four categories or genres: a) He was a great portraitist. Most of his portrait photos were created in the studio or in nature. b) He dedicated a part of his photographic talent to taking photos of everyday life and work. These are works created mainly in nature or simply on the streets. c) The third group of photos are multi-figure, multi-dimensional compositions created in the studio, and sometimes in the yards of houses. d) The fourth group of his photos is completely different. These are pictures of historical monuments and places of interest in Persia in which the very rarely observed human figures look like part of nature.[25]

Comparing Antoine Khan Sevruguin's photographs to the works of other prominent 19th century photographers of Iran,[26] one may observe that the majority of his pictures have both documentary as well as artistic value. These photos reflect his individual style, although the artist often also worked experimentally. He was a master of the technical possibilities of his time, which he applied repeatedly as would a painter. Probably his early education of painting enabled him to develop a flexible mind, which triggered his experimentation in photography.

Antoine has his place in the history of world photography, due to the fact that his photographs, though taken in the late 19th-early 20th century still look contemporary and actual. Indeed, interest in his photographic art has not declined, but has increased.

Antoine was seen as an Iranian-Armenian and an "Oriental" photographer, yet equally he was regarded as a "European" photographer, especially when his professional endeavors with the latest developments of photographic technology were taken into consideration.

This Armenian photographer's life and activities are an inseparable part of the history and culture of Persia and add to the contribution of Armenians to Iranian culture. Antoine Sevruguin not only became famous as a photographer of the everyday life of Iran and its society, but his art also had an important impact on the academic world, as stated by the Orientalist, archaeologist and art historian Professor Friedrich Sarre, an author of the book *Iranische Felsrelief*,[27] in which Antoine's photographs are printed.

POST SCRIPTUM

For years, I have been trying to convince Emmanuel to tranfer his father's and grandfather's heritage to the Republic of Armenia. It seemed, however, he would prefer to preserve the heritage in Germany, where he had been living for years. In 2002, while working in the Golestan Palace-Museum of Tehran, I organzied an exhibition of the paintings of André, Emmanuel's father.[28] The exhibition attracted a lot of interest due to the fact that André 's previous solo exhibition had taken place in the 1960s and had become popular then, too. The director of the Golestan Palace-Museum suggested organizing the displacement of Emmanuel's collection to the palace-museum. However, in 2014 Emmanuel prefered to donate more than a hundred valuable works of the two artists to the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran), considering that his heritage should be resettled and preserved in the homeland.[29]

Armenian women, National Museum of Ethnology, Leiden. the Netherlands

The photographs of Antoine Khan Sevruguin and the paintings of his son, André (Darvish) Sevrugian, were exhibited in a solemn exhibition in 2015 at the Matenadaran. In his welcoming words, the late Director of Matenadaran, Hrachya Tamrazian, reflected on the work of André Sevrugian and stated, "We're talking about the millennial contacts of Armenian and Persian arts, which reach to the mythological substrata and have the same genealogical roots. These interactions are also noticeable in the Middle Ages, especially in miniature painting. One can see them in André Sevrugian's paintings, where mythological-epic substrata are in endless movement." Tamrazian referred to Antoine Khan Sevruguin's works as of "high art .... on the border of art and reality, they perpetuate the instants of existence, which are a vital condensation of the moment and image."

The fact that most of the works of father and son are devoted to the Armenian nation is an undeniable proof that the Sevruguins have Armenian origin.

ENDNOTES

[1] Iraj Afshar, *A Treasury of Early Iranian Photographs, Together with a Concise Account of How Photography Was First Introduced in Iran*, Tehran, published by Nashr-e Farhang-e Iran, 1992.

[2] Papazian's birth and death dates are unknown. For further information on him, see Yvette Tajarian, *History of Photography, Course of Lectures*, Yerevan, YSU press, 2019, p. 64, and the Nelson collection of Qajar Photographs (Thenelsoncollection.co.uk).

[3] In 1851, the Dar ol-Fonun, a university based on the European model, was inaugurated in Tehran.

[4] Calotype process, an early negative-positive photographic process, patented by William Henry Talbot in 1841.

[5] Wet-collodion process, also called collodion process, an early photographic technique, was invented by the Englishman Frederick Scott Archer in 1851.

[6] In 1870 Hoeltzer married Maryam Haghnazar (1850–October 12, 1920), an Iranian-Armenian woman from Tehran.

[7] Bahman Jalāli, Mohammad 'Ali Meshkāt ol-Molk, and Rezā Tahāmi, *Visible Treasure. A Collection of Photographs from Album Khaneh, Golestan Palace Museum*, Tehran: Daftar-e Pazhuheshhā-ye Farhangi, 1998.

[8] The famous French artist Edgar Degas (1834-1917), for instance, always painted indoors, preferring to work in his studio, from memory, photographs, or live models. In the late 1880s, Degas also developed a passion for photography. Later, other artists, depicting dancers and nudes, were used for reference in some of Degas's drawings and photos.

[9] Mohammad Reza Tahmasbpour, *Nāser-Od-Din, The Photographer King*, Tehran, Nashr-e Tārikh-e, 2001.

[10] Jennifer Scarce, *Isfahan in Camera. 19th Century Persia through the Photographs of Ernst Hoeltzer*, London, Art and Archaeology Research Papers, 1976.

[11] Barjasteh van Waalwijk van Doorn, L. A. Ferydoun, and Gillian M. Vogelsgang-Eastwood (eds.), "Sevruguin's Iran," *Late Nineteenth Century Photographs of Iran from the National Museum of Ethnology in Leiden, the Netherlands*, Tehran, Zaman and Rotterdam, Barjasteh van Waalwijk van Doorn, 1999.

[12] *Sevruguin And The Persian Images, Photographs of Iran, 1870-1930*, Smithsonian Institution, 1999.

[13] Interview with Emanuel Sevrugian conducted by the author on several days and months during 2015.

[14] Interview with Emanuel Sevrugian conducted by the author on several days and months of 2011.

[15] Ивет Таджарян, Емануель Севрюгян, "Творчество Антуан-Хана Севрюгина" (Yvette Tajarian, "Emanuel Sevrugian, Works of Antoine khan Sevruguin," *ANIV*, 2013:6(45).

[16] Yvette Tajarian, *Armenian-Iranian Photographer Antoine Sevruguin's Art*, Ph.D. thesis, Yerevan, 2006.

[17] Yvette Tajarian, *Andre Sevrugian (1894-1996)*, Yerevan, Matenadaran, 2015.

[18] *Sevrugian Bilder Des Orients In Fotografie Und Malerei 1880-1980, Zurrezeption des Fotogafischen Werks von Antoine-khan Sevruguin*, Museum of World Cultures, Frankfort on the Main, Frankfurt, Societäts-Verlag, 2008.

[19] Tajarian, *Antoine Sevruguin (1851-1933)*.

[20] *Sevrugian Bilder*.

[21] Smithsonian Institution.

[22] Donna Stein, "Three Photographic Traditions in 19th Century Iran," *Muqarnas: An Annual on Islamic Art and Architecture*, edited by Oleg Grabar, Leiden, E.J. Brill, 1989.

[23] Interview with Kolia Jagharbegian on Antoine's Ancestors, conducted by the author in, Iran-Tehran, in December 1998.

[24] Zokā Yahyā, and Hasan Semsār, *History of Photography and Pioneer Photographers in Iran*, Tehran, Elmi va Farhangi, 1997.

[25] Tajarian, "Armenian-Iranian Photographer Antoine Sevruguin's Art."

[26] The best-known photographer of the era was Abdullah Qajar (1849-1908).

[27] Interview with Emmanuel Sevrugian.

[28] Yvette Tajarian, "Exhibition of Original Art of Derwish," Tehran, *Alik*, February 5, 2002.

[29] http://www.magaghat.am/archives/31348 .

ՄԻ ՇԱՐՔ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՓԱՍՏԵՐ ԱՆԹՈՒԱՆ ՍԵՒՐՈՒԿԻՆԻ (1851–1933) ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

(Ամփոփում)

ԻՒԷԹ ԹԱՋԱՐԵԱՆ
yvettetaj@yahoo.com

Սեւրուկեանների ընտանիքը պատկանում էր թեհրանահայ բարձր դասին՝ մաս կազմելով նաեւ պարսկական ազնուական վերնախաւի: Անթուան Սեւրուկինը ծնուել է 1851ին, Թեհրանում: Նա պատկանում է այն եզակի լուսանկարիչների շարքին, ովքեր ԺԹ. դարի երկրորդ կէսին Իրանի տիրակալ Նասէր էդ-Դին շահի (1848-1896) պալատ ներմուծեցին գեղարուեստական լուսանկարչութիւնը: Յետագայում Իրանին մատուցած ծառայութիւնների համար Սեւրուկինը շահի կողմից արժանացաւ «Խան» տիտղոսի եւ պարգեւատրուեց «Շիր օ խուրշիդ» (առիւծի եւ արեւի) ադամանդակուռ շքանշանով:

Անթուան Սեւրուկինին թիւրիմացաբար համարել են ռուս, վրացի, պարսիկ կամ՝ ֆրանսիացի: Մեր ուսումնասիրութիւնների, լուսանկարչի թոռան՝ Էմանուէլ Սեւրուկեանի, հետ հարցազրոյցների եւ այլ անհատական զրոյցների շնորհիւ սոյն յօդուածում բերում են յստակ ապացոյցներ Անթուան Սեւրուկինի հայկական ծագման առնչութեամբ, ճշտում այլ սխալներ եւս:

Յետագայում Անթուանի որդին՝ Անտրէն, «եան» մասնիկի օգնութեամբ հայկականացրեց Սեւրուկին ազգանունը: Անուանի արուեստագէտ լուսանկարչի հայ լինելն անվիճելի փաստ է արդէն, եւ պատահական չէ որ նրա ժառանգութեան զգալի մասը 2014ին Էմանուէլ Սեւրուկեանի կողմից նուիրաբերուեց Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին:

Անթուան Սեւրուկինի արուեստի շուրջ հետաքրքրութիւնը ոչ միայն չի մարում, այլեւ աւելի ու աւելի է նորանում: Հայ լուսանկարչի կեանքն ու գործունէութիւնը Իրանի պատմութեան ու մշակոյթի անքակտելի մասն են կազմում, ինչը վկայութիւնն է այն կարեւոր դերի, որ խաղացել են հայերը Իրանում:

ՁԵՌԱՐՈՒԵՍՏԻ ԴԱՍԱԽԱՆԴՈՒՄԸ ԺԹ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒՄ (Ակնարկ)

Վանեցի աղջիկները ցուցադրում են մանելու, հիւսելու գործընթացը (*Life and Light for Woman*, 1905:35, էջ 50)

ԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ
amkhitaryan89@gmail.com

ՄՈՒՏՔ

ԺԹ.-Ի. դարերում արեւմտահայ իրականութեան տարբեր վայրերում ձեռարուեստի որոշ ճիւղերի զարգացումը պայմանաւորուեց կրթամշակութային կեանքի ծաղկմամբ: Դպրոցների ու *Աղջկանց* վարժարանների ստեղծումը հիմք դրեց նաեւ արհեստների յետագայ զարգացմանը: Կարեւորելով դրանց գոյութիւնը՝ ուսուցանուող առարկաների կողքին տեղ գտան արհեստագործական մի շարք դասանիւթեր՝ ասեղնագործութիւն, գորգագործութիւն, մանածագործութիւն, դերձակութիւն, կօշկակարութիւն եւն.:

Արհեստների եւ արուեստի զարգացումը նպաստեց տուեալ շրջանի բնակչութեան տնտեսութեան զարգացմանը, հասարակութեան առաջադիմութեանը[1]: Արհեստների ու ձեռագործ աշխատանքների դասանիւթերը դասաւանդւում էին հայ վանքերին կից աղջկանց վարժարաններում, յետագայում նաեւ Ամերիկայից, Եւրոպայից ժամանած ու Վասպուրականում հաստատուած միսիոնարների հիմնած կրթական հաստատութիւններում: Գլխաւոր նպատակն էր իգական սեռի դաստիարակչական գործը: Աղջկանց վարժարաններում ասեղնագործութեան յատուկ դասաժամեր են գործել եւ մասնակցութեան համար տրւում էին վկայականներ[2]:

Յօդուածի նպատակն է անդրադառնալ Վան-Վասպուրականի այն կրթական հաստատութիւններին ու որբանոցներին, որտեղ դասանիւթերի շարքին տեղ յատկացուեց նաեւ ձեռարուեստի ուսուցմանը: Կրթական համակարգում նրանց որդեգրումը նպաստեց արուեստի մի շարք ճիւղերի զարգացմանը, ստեղծուեցին ձեռագործ արուեստի բազմաթիւ նմուշներ: Այս երեւոյթը կարեւորւում է նաեւ նրանով, որ համայնքային, խմբակային հաւաքական գործունէութիւնը ստիպեց պահպանել, զարգացնել ու շարունակաբար փոխանցել դարերի ընթացքում զարգացման ուղի անցած, հին հայկական ստեղծագործական արուեստի կուտակած հարուստ փորձը, աւանդական ոճը, ձեւերը, տարածաշրջանում տարածուած ասեղնագործութեան կարատեսակները:

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՐԵՒԱՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Նախքան կրթամշակութային գործունէութեան ձեւաորումը ձեռագործ աշխատանքները կատարուել են տան պայմաններում: Կարեւոր տեղեկութիւն է պահպանուել Այնթապի ձեռագործութեան մասին, այստեղ՝ 1840ականներից, մինչ կանոնաւոր դպրոցների գոյառումը, սեփական նախաձեռնութեամբ, մի շարք կանայք տնային պայմաններում սովորեցրել են ասեղնագործութիւն, փոխանցել գիտելիքները նոր սերնդին[3]:

Վանի Վարժարանի ուսուցչուհիներ (Life and Light for Woman, 1892:22, էջ 112)

Կրթական հաստատութիւնները ԺԹ. դարի երկրորդ կէսից ցանցի պէս տարածուեցին Օսմանեան Կայսրութեան հայաբնակ գրեթէ բոլոր քաղաքներում: 1875ին Պոլսի մի խումբ ուսեալ կանայք հիմնեցին Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը (ԱՀԸ), որը արեւմտահայ իրականութեան մէջ կանանց կրթասիրական-բարեգործական ընկերութիւնների շարքում առաջին կառոյցն էր: Նրա նպատակն էր Օսմանեան Կայսրութեան հայաբնակ գաւառներում եւ յատկապէս Կիլիկիայում բացել դպրոցներ, նպաստել հայ աղջիկների դաստիարակութեան եւ կրթութեան գործին՝ գաւառական կրթական հաստատութիւններ հիմնելու եւ դրանց շարունակական գործունէութիւնն ապահովելու միջոցով[4]: Ընկերութիւնը վարժարաններ բացեց Մանազկերտում, Մուշում, Սասունի Հազգոյում, Զէյթունում եւն.: Այնտեղ դասաւանդւում էին նաեւ ձեռագործ, կարուձեւի առարկաներ, գորգագործութիւն, կարպետագործութիւն, ձեռային այլեւայլ արհեստներ:

Յետագայում ԱՀԸ գործադիր ժողովների նիստերից մէկում, ատենապետ Զապէլ Ասատուր(եան)ի կողմից հրաւիրուած էր Վանի Երամեան Վարժարանի ուսուցչապետ Համբարձում Երամեանը, որտեղ որոշում է ընկերութեան գործունէութիւնը ընդլայնել նաեւ Վանի աղջկանց վարժարաններից մէկում: Ուսուցչապետի խորհրդով այդ վարժարանը պէտք է լինէր Սանդխտեան Վարժարանը, որտեղ ընկերութեան հովանաւորութեամբ աւելի բարձր վարժուհիներ պատրաստուէին եւ զարկ տրուէր *«մատղաց գեղարուեստին»*[5]: Ծրագիրը, սակայն, անկատար մնաց:

1873ին Պիթլիս ժամանած ամերիկացի քոյրեր Շարլոթ եւ Մերի Էլիները բացեցին Մաունթ Հոլիոքի աղջկանց վարժարանը[6]: Գեղարուեստական բարձր ճաշակով օժտուած Միս. Շարլոթը աղջիկներին սովորեցնում էր կարուձեւ, նրբահիւս ասեղնագործութիւն, ինչպէս նաեւ գծագրութիւն[7]:

1880ականներից աղջկանց յատուկ ձեռարուեստի յարկաբաժին է գործում Խարբերդի Եփրատ Քոլէճում: Թէ՛ այստեղ եւ թէ՛ "վարի թաղ"ի աղջկանց վարժարանում սովորում էին ձեռագործ, կար ու ձեւագիտութիւն[8]:

ԱՀԸի գործունէութեան շնորհիւ Մուշում 1882ին բացուեց աղջկանց վարժարան, որտեղ դասաւանդել են ե՛ւ Պոլսից ժամանած վարժուհիներ ե՛ւ տեղացիներ: ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբին Մուշ քաղաքում գործում էր եօթ հայկական դպրոց, որոնցից հինգը՝ թաղային եկեղեցիներին կից: Միւս երկուսից մէկը օրիորդաց դպրոցն էր, որ հիմնադրուել էր Յովսէփ Իզմիրեանցի կտակով 1884ին, իսկ միւսը՝ Միացեալ Ընկերութեան վարժարանը, թաղային դպրոցների համեմատութեամբ՝ աւելի բարձրորակ էր[9]:

Ասեղնագործութիւն ու ձեռագործ աշխատանքներ դասաւանդւում էին Մեզրէի հայ կաթոլիկ աղջկանց վարժարանում, որը հիմնուել էր 1895ին: Մեզրէի՝ 1905ի գերման աղջիկների թիւ 1 որբանոց-դպրոցում գործում էր կարի ու կարկատանի բաժին[10]:

Մարտինի մէջ գործող միսիոնարուհի Ժանէթ Էմերիքը 1907ին մեկնարկում է «ասեղնագործի արտադրութիւն»ը՝ օգնելու համար կանանց ու աղջիկների, որպէսզի ապրուստ վաստակեն կայսրութեան մէջ տիրող զրկանքի ու դժուար կացութեան պայմաններում: Ձեռագործները ԱՄՆ էին ուղարկւում ու վաճառւում[11]: Նոյն պատկերը տիրում է նաեւ Ուրֆայում, որտեղ 1895ի դէպքերից յետոյ ամերիկեան որբանոցի մէջ հաստատւում է ասեղնագործութեան արհեստանոց՝ նախաձեռնութեամբ Քորինա Շաթըքի, որ փրկարար մեծ դեր կատարեց Ուրֆայի տնտեսական կեանքում: Արհեստանոցը յայտնի դարձաւ «նշխին տուն» անունով: Ասեղնագործ նմուշներն ուղարկւում էին Բրիտանիա եւ ԱՄՆ, ինչը հարիւրաւոր կանանց ու աղջիկների համար ապրուստի միջոց դարձաւ[12]:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ *ՕՐԻՈՐԴԱՑ* ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Վասպուրականում մինչեւ 1830ականները չեն եղել կանոնաւոր դպրոցներ: 1820ականներից սկսւում է եկեղեցական կառոյցներին կից դպրոցներ բացելու փորձը. այնտեղ աշխատելու են հրաւիրւում Վանում ծնուած եւ Պոլսում, Երուսաղէմում կրթութիւն ստացած հայորդիները: 1840ականներին Վանում կար արդէն վեց դպրոց, որոնք կոչւում էին ծխական[13]:

Վասպուրականում կրթական կեանքը ներկայացուած է շրջաններով, որոնցից էր՝ «*Ջուխակ վարժոց»ի* շրջանը՝ ԺԷ. դարից մինչեւ ԺԹ. դարի առաջին կէսը: Այն իրականացւում էր կտաւագործի գործարաններում, որոնք նոյն այս ժամանակաշրջանում գոյութիւն ունէին Վանում: Այս *վարժոց*ներում պատանիները արհեստների հետ ուսանում էին, ընթերցում գիր, թուանշան սովորում[14]: Քաղաքի մէջ գրել-կարդալ սովորում էին միայն տղաները ոստայնանկութեան գործատներում: Խրիմեան Հայրիկը նոյնպէս գրել-կարդալ սովորել է իր հօրեղբօր կտաւի հորերի աշխատանոցում՝ ոստայնանկութիւն սովորելիս: Ամէն թաղ ունէր հիւսուածեղէնի մեծ եւ փոքր

արհեստանոց, որտեղ 7-15 տարեկան տղաներից ոմանք այս արհեստանոցների մէջ էին սովորում գիր, տարրական ընթերցանութիւն[15]:

Վանի իգական սեռի կրթութեան հարցում նշանակալից դեր ունեցաւ Խրիմեան Հայրիկը: Ապագայ մայրերին կրթելու գործը գտնւում էր նրա եւ նրա շրջապատող մարդկանց ծրագրերում: Դեռ 1852ին Վանում փորձ է կատարւում աղջիկների դպրոց բացել, սակայն չի յաջողւում: Հայրիկը հաստատապէս մնում էր այն կարծիքին, որ մայրը «լուսոյ տաճար է», ամէնից առաջ պէտք է կրթել մայրերին[16]:

Վանի ողբանոցը (*The Missionary herald/ American Board of Commissioners for Foreign Missions*, 1910:cvi, էջ 223)

1857ին Խրիմեանի ջանքերով Վանի Վարագայ վանքում բացուեց «Ժառանգաւորաց» երկրագործական վարժարանը: Մասնագիտական այս վարժարանի նպատակն էր՝ նախ կրթել ու դաստիարակել հայ մանուկներին, նրանց տալ գիւղատնտեսական գիտելիքներ[17]: 1870ին վերջապէս, Խրիմեանի երազանքը կատարուեց, նա հիմնեց աղջկանց առաջին վարժարանը Հայաստանի մէջ, եւ առաջին անգամ արծարծեց իգական սեռի կրթութեան հարցը[18]: Այգեստանում նրա հաստատած անդրանիկ վարժարանի՝ *Սանդխտեան Վարժարանի* բացման հանդէսը կատարուեց 25 Յուլիսի 1870ին, Ս. Սանդուխտի տօնի օրը: Վարժարանն ունեցաւ 150 աշակերտուհիներ[19]: Այն հիմնուեց Պոլսում գործող «Սանդխտեան Ընկերութեան» աջակցութեամբ: Ուսուցչական կազմի մէջ էին Աճէմեան քոյրերը, Եղիսաբէթ եւ Մարինէ, Աննիկ եւն., ովքեր յատուկ նուիրուածութեամբ կատարեցին իրենց գործը[20]: Սանդխտեանի սաները՝ նպատակադրուած նուիրուելու ազգային կրթութեան տարածմանը, յետագայում դասաւանդում էին այլ դպրոցներում, ինչպէս օրինակ «Ս. Թարգմանչաց» երկսեռ ուսումնարանում:

Մինչեւ 1884 Սանդխտեան Վարժարանը սեփական շէնք չունէր: Այդ տարում, Մկրտիչ Սանասարեանի միջոցներով նորաշէն եկեղեցուց ոչ-հեռու շէնք կառուցուեց եւ նրա մօր անունով կոչուեց «Մայրամեան»[21]: Բազում դասանիւթերի կողքին այնտեղ դասաւանդւում էին ձեռագործ, կարուձեւ: Օրիորդաց դպրոցները տեղական, հաւաքական ուժերով էին կառավարւում: «Սանդխտեան»ի նախկին սանուհիները գիտակցելով Վանի իգական սեռի եւ ապագայ դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, ցանկանալով բարենպաստ գործ ստեղծել՝ 1890-91ին Այգեստանում կազմեցին «Վանուհեաց Ընկերութիւն»ը[22], ղեկավարութեամբ Իսկուհի Խրիմեանի: Ընկերութիւնը գործեց մինչեւ 1915, երբ գաղթը սկսեց դէպի Կովկաս, նա Թիֆլիսում

եւ Երեւանում եւս ձեռագործի արհեստանոցներ բացեց, որոնք գործեցին մինչը 1921 եւ լուծարուեցին Հայաստանի խորհրդայնացման օրերին[23]:

Վարժարաններ բացուեցին նաեւ Ալիւր, Կուսենց, Խառակոնիս, Կէմ, Գործօթ եւ այլ գիւղերում: Ալիւրի դպրոցը բացուեց 1876ին, Մկրտիչ Փորթուգալեանի ջանքերով[24]:

Ալիւրցի հայ կանայք ասեղնագործ աշխատանքներով (Հայոց Ազգագրութեան Թանգարան, լուսանկար Հ՞ 5595/106)

1880ին Վանում բացւում է Երամեան միջնակարգ դպրոցը[25]: Այնտեղ աշակերտները սովորում են կահագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն եւ այլ արհեստներ, որոնք ամուր հիմք են դառնում տեղական արհեստների պահպանման համար[26]:

1881ին բացուեց Շուշանեան Օրիորդաց Վարժարանը, իսկ երկու տարի անց՝ 1883ին նաեւ Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանը, որը գտնւում էր Խրիմեան Հայրիկի տան մի հատուածում, որտեղ սովորում էին թաղի աղջիկները[27]: Այս ուսումնարանների առաջին շրջանաւարտներից տաս օրիորդներ շարունակեցին դասաւանդել նոյն վարժարաններում[28]: Հայրիկի մասնաւոր բնակարանում է հաստատուած եղել նաեւ Յայնկոյսների աղջկանց վարժարանը, որը նոյնպէս հիմնադրուել է նրա կողմից[29]:

Վանի Ս. Պօղոս-Պետրոս եւ Ս. Առաքեալ յարակից եկեղեցիները բերդաքաղաքի կենտրոնում են, որի բակում էլ կառուցուել է երկսեռ դպրոց եւ այստեղ փոխադրուել նաեւ Շուշանեան Օրիորդաց Ուսումնարանը[30]: Բերդաքաղաքից դէպի արեւելք՝ Արարուց Ս. Աստուածածին եկեղեցու արեւմտեան կողմում 1885-86ին կառուցուեց «Ս. Թարգմանչաց» երկսեռ ուսումնարանը, որի ստորին յարկում գորգագործութեան սրահ էր: Վան քաղաքի երկու մասում՝ Այգեստանում եւ բերդաքաղաքում կար հինգ օրիորդաց ուսումնարան[31], որտեղ ուսանում էին միայն ձեռագործութիւն. գիտութեան դասեր չէին դասաւանդւում[32]: ԺԹ. դարի վերջին դասանիւթերի կողքին տեղ գտաւ նաեւ գորգագործութիւնը. *«1894ին ձեռագործի եւ այլ առարկաների հետ մրցուեց աղջկանց պարապմունքի մէջ նաեւ գորգագործութեան արհեստը: Այս արհեստի համար նիւթը մատակարարում էր պ. Ս. Տարբինեան: Այս գորգագործութեան պարապմունքը տակաւին բացառիկ առարկայ լինելով, պատրաստուեցաւ 3-5 արշունի երկարութեամբ, ճաշակաւոր, որոնցից մինը գնեց Վանայ կուսակալ Բահրի փաշան ուղարկելով Կ.Պոլիս որպէս նմուշ Վանայ գործուածների, միւսները մնաց Տարբինեանի մօտ»*[33]:

Երկսեռ որբանոցներ հիմնւում են նաեւ Վան քաղաքի մերձակայ վանքերի կողմից: Վանի մերձակայ Ս. Գրիգոր վանքի հոգաբարձութեան կող-

մից հիմնուած աղջկանց որբանոց-վարժարանում հոգացուող՝ 50-80 որբուհիներին տարրական ուսման կողքին դասաւանդւում էին ձեռագործ, կարուձեւ, գորգաշինութեան արհեստներ եւն.[34]: Որբանոցը Այգեստան փոխադրուելով յանձնւում է Աղաւնի Մկրեանի հովանաւորութեանը[35]:

Վանում ձեռագործի դասաւանդման զգալի աւանդ են ունեցել հայ կանայք ու աղջիկներ՝ Սեւօն (Իսկուհի Համբարձումեան), Սողոմէ Ջրբաշեանը, Զարուհի Շալճեանը, Հռիփսիմէ Նալպանտեանը, Արաքսի Սաֆրաստեանը, ովքեր տարիներ շարունակ կարուձեւ են ուսուցանել հայ օրիորդներին:

Վանի հերոսամարտի հերոսուհիների՝ Շալճեանի, Նալպանտեանի, Ջրբաշեանի շնորհիւ Վանում կազմւում է «Վասպուրականի Կանանց Միութիւն»ը, որը խթանում է Վանի կանանց զարգացմանը եւ առաջադիմութեանը, աջակցում ինքնապաշտպանութեան պայքարին: Միութիւնը ապրիլեան եղեռնից յետոյ հազարաւոր որբերի իր խնամքի տակ վերցրեց, Երեւանում հիմնեց Վասպուրականի կարուձեւի ու ձեռագործի արհեստանոց[36]:

ՁԵՌԱՐՈՒԵՍՏԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Կրթական գործում կարեւոր դեր ունեցան Ամերիկայից ու Եւրոպայից ժամանած միսիոնարները: Ակնյայտ է, որ կրօնաքաղաքական ու բարեգործական գործունէութիւնը միայն շահ չէր կարող հետապնդել, ոմանք անձնուրաց նուիրուեցին այս գործին: Բնականաբար նրանց գործունէութիւնը կ'ունենար հետեւորդներ ի դէմս հայ աւետարանականների, ինչը դէմ էր հայ լուսաւորչական համայնքին եւ յարուցելու էր վերջինիս ընդդիմութիւնը, քանի որ ենթադրում էր տոհմիկ դաստիարակութեան ձեւերի ու հաւատքի խարխլում: Միսիոնարների կիրառած արդի մեթոդները դրական ազդակներ ունեցան հայ կրթութեան որակի վրայ:

1870ականներից Արեւմտեան Հայաստանի բազմաթիւ քաղաքներում կառուցուեցին ընդարձակ քաղաքամաս՝ տարբեր հաստատութիւններով, նրանց թւում՝ նաեւ ոստայնագործարան, կտաւ գործելու համար[37]: Միսիոնարներն ի սկզբանէ հանդիպելու էին խոչընդոտների թէ՛ տեղի լուսաւորչական համայնքի կողմից եւ թէ՛ գաւառների բնակչութեան՝ իգական սեռի կրթութեան հարցի խնդրով. աղջիկն ընկալւում էր որպէս տունը կառավարող ու տնային գործերով զբաղուող էակ[38]: Յատկանշական է, որ այս մասին յիշատակում են նաեւ միսիոնարները, ովքեր նշում են, որ Արեւմտեան Հայաստանի ոչ մի քաղաքում այնպէս պայքար չմղուեց կանանց կրթութեան դէմ ինչպէս Վանում: Պայքարին նպաստում էր նաեւ բողոքականութեան դէմ առկայ կանխատրամադրուածութիւնը. յիրաւի, Վանը գտնուելով Հայաստանի սրտում, լուսաւորչական ուժեղ կենտրոն էր[39]:

Այդուհանդերձ, միսիոնարների հաստատութիւնները յետագայում առանցքային դեր ու նշանակութիւն ունեցան հայերի կեանքում: Այստեղ հիմնականում գործող ձեռարուեստի՝ ասեղնագործութեան առարկաները

հնարաւորութիւն տուեցին 1895ի Համիտեան Ջարդերից յետոյ միսիոնարների նախաձեռնութեամբ հայ կանանց ապահովել աշխատանքով, ինչն ապրուստի միջոցի վերածուեց: Վերջիններս կազմակերպում էին դրանց արտահանումը, վաճառքը: Ձեռագործ իրերի վաճառքը օգնեց միութիւնների համար դրամ հաւաքելուն[40]:

Ամերիկեան միսիոնարութիւնն իր կրօնաբարոյական գործունէութեամբ, իր հաստատած արական ու իգական վարժարաններով Վանում հաստատուեց 1872ից[41]: 1896ի կոտորածներից յետոյ աւելացան օտարերկրեայ դպրոցների աշակերտների թիւը, քանի որ Վանի բնակիչները հնարաւորութիւն չունէին վճարելու հայկական դպրոցների վարձը, ստիպուած իրենց երեխաներին ուղարկում էին միսիոնարների կողմից բացուած դպրոցները: Վանում գործող ամերիկեան դպրոցները յատկապէս օգտակար եղան հասարակ ժողովրդի համար: Ի տարբերութիւն հայկական դպրոցների՝ այստեղ սովորում էին բացառապէս աղքատ խաւի երեխաները կամ որբերը[42]: Այնտեղ սովորող որբերը մեծամասամբ ոչ թէ քաղաքից էին, այլ շրջակայ գիւղերից[43]:

Աշակերտների ուսման վճարը տարբեր կերպ էր իրականացւում: Ոմանք ուսման դիմաց վճարում էին գիւղատնտեսական ապրանք: Գործում էր մէկ այլ կարեւոր տարբերակ եւս՝ աշակերտուհիները իրենք էին աշխատում ուսման վճարը տալու համար՝ կար անելով, հիւսելով, ձեռագործ անելով, գորգ գործելով: Շրջանաւարտներից շատերը դարձան դասաւանդողներ[44]: Վանում ձեռագործութիւնը հայուհու առօրեայի անբաժան մասն էր, նրանց ամէնուր կարելի էր տեսնել աշխատանքը ձեռքներին՝ կա՛մ մանում էին, հիւսում, գուլպայ գործում, *կանվայի* (ցանցալաթ) վրայ ասեղնագործում[45]: Այս մասին յիշատակում է նաեւ Երամեանը. Վանի պարտէզների մասին խօսելիս նա նկարագրում է դրանցից մէկի՝ վագըֆի մասին, որը գտնւում էր Թուփրակ-Կալէի ստորոտում: Այս ձորի անտառում Այգեստանի ժողովուրդը Կիրակի օրերին զբօսնելու է իջնում, իսկ բազմաթիւ կանայք լուր օրերին իրենց ձեռագործը այս ծառաստանների մէջ են կատարում[46]:

Ամերիկացի միսիոնարների առաջին առաքելական գործունէութեան անձնուէր գործիչներն էին դոկտոր Ճորճ Ռէյնոլծը եւ միստր Պարնըմը: 1875ականներին հաստատուելով Վանում, նրանք ընդլայնեցին յարաբերութիւնների շրջանակը, սկսեցին հիմնել դպրոցներ[47], արհեստանոցներ, որբանոցներ աղջիկների ու տղաների համար[48]: 1871-1912՝ Ռէյնոլծները Վանի ու շրջակայ գիւղերի մէջ հիմնեցին նախակրթարանների ընդարձակ ցանց, տիկին Ռէյնոլծը՝ աղջկանց վարժարան 1879ին Վանի մէջ, ապա՝ հաստատեց որբանոց-դպրոց-արհեստանոցներ[49]: Նա ղեկավարում էր նաեւ գորգագործների աշխատանքը. վերցնելով հարուստ հարեւաններից գորգեր որպէս օրինակ՝ զբաղեցնում էր կանանց գզելու, մանելու եւ բուրդ ներկելու համար: Ժանեկագործութիւնը սկսուեց վեց աղքատ աղջկայ օգնութեամբ միքանի թէլակոճից՝ յիսուն համարի թէլի, միքանի ասեղից: Այն

վերաճեց տաս սենեակով տան, որը տրամադրել էր անգլիացի մի վաճառական, իսկ աշխատողների թիւը՝ եօթանասունհինգ աղջիկի[50]:

Ռէյնոլծն այստեղ ծաւալած շուրջ 40 տարիների գործունէութեան շառաւիղը հասցնում է Մուշ եւ Սասուն: Նա 1894-97 կոտորածներից յետոյ Այգեստանում բացում է երկսեռ որբանոց: Բացի տղաների դպրոցից կար նաեւ աղջիկների դպրոց, որը *«բոլոր գիտութիւններ չունէր, բայց ապրոր փոխարէն ձեռագործ եւ կար ու ձեւ կը սորվեցնէր»*[51]: Ռէյնոլծի նպատակը միայն որբերին կրթութիւն տալը չէր: Նա օգնում էր որբերին զբաղուել իրենց նախասիրած արհեստներով, որի նպատակով էլ հիմնում է մի շարք արհեստանոցներ՝ դերձակնոց, ջուլհակնոց, կօշկակարնոց, դարբնոց եւն.[52]: Որբախնամ գործունէութիւն էր վարում իր կինը՝ Մարին, ով գուրգուրանքով էր խնամում հայ դժբախտներին, որի համար էլ ժառանգել էր որբերի մայրիկ տիտղոսը՝ Խանըմ[53]: Ռէյնոլծի երազանքն էր Վանի մէջ մետաքսի մանարան բացելը[54], որը անկատար մնաց կայսրութիւնում տիրող իրավիճակի պատճառով:

Ռէյնոլծի օգնականներից էր միսիոնար բժշկուհի Միս Քեմփըլը, ով աշխատում էր որպէս տեսչուհի աղջկանց վարժարանում: 1895ից սկսած թուրքերի ու քրդերի թալանի ու ջարդերի կարեւոր ականատես միսիոնարները խնամատար մարմին կազմեցին Քեմփըլի գլխաւորութեամբ՝ օժանդակելու հազարաւոր փախստականներին: Իր մնայուն օգնականների օժանդակութեամբ, նպաստներ էր բաժանում, բժշկական խնամքի բաժին վարում Միս Քեմփըլը: Այստեղ կարեւոր է նշել, որ նա մեծ քանակութեամբ բուրդ, բամբակ, դերձան եւ այլ պիտոյքներ գնելով, ամբարելով, գործ հայթայթեց աշխատելու կարող դեռահաս կանանց ու աղջիկների եւ անգործ արհեստաւորների[55]:

Ամերիկացի բողոքական միսիոնարները հայ գաղթականներին ու աղքատներին օգնելու համար զգեստեղէնի, անկողնու եւ այլ պէտքերի համար մեծ քանակութեամբ հում նիւթ են գնում եւ գործել տալիս աղքատներին: Այսպէս՝ *«բամբակէ թէլ մանելու համար կը գործեն 1000 ճախարակ, կտաւ եւ շալ գործելու համար կը բանին 200 հոր, հագուստ կարելու համար կ'աշխատին 100 ընտանիք, 15 վարպետ հագուստ կը ձեւեն, 20 ընտանիք գուլպայ կը հիւսեն, 60 անձ բամբակ ու բուրդ կը գզեն, 70 անձ հինայ կ'ընեն կամ մասրայ կը լեցնեն եւ այլն»*: Հայանպաստ այս գործողութիւնների համար միսիոնարները վարձել էին 5 մեծ տուն[56]:

Նոյն անձնուէր առաքելութեամբ աշխատեցին ամերիկացի միսիոնար ամուսիններ դոկտոր Քլերընս եւ Էլիզապէթ Աշըրները: 1900ականներին Էլիզապէթը մեկնարկում է «ժանեակի արտադրութիւնը», օգնելով որբերին ու այրիներին ձեռագործ աշխատանքներով գումար վաստակել: Հումքը ստացւում էր Եւրոպայից կամ Ամերիկայից, որտեղ եւ վաճառւում էին ձեռագործ իրերը[57]: Իր նամակներից մէկում նա յիշատակում է, որ ժանեակի գործարանում աշխատում են հարիւրաւոր աղջիկներ եւ յատկապէս

ընտրում են նրանք, ովքեր կարիքաւոր են: Ժանեակի արտադրութիւնը մեծ յաջողութիւն ունեցաւ: Նրանց պատրաստած արտադրանքը վաճառքի էր դուրս բերւում արեւմտեան երկրներ[58]:

Ամերիկացի միսիոնարները գաղթից յետոյ, 1917ին իրենց գործունէութիւնը շարունակեցին Արեւելեան Հայաստանում, որտեղ հաւաքուեց գաղթականութեան մի մասը: Երեւանում եւ Ալեքսանդրապոլում նրանք հիմնեցին մի շարք արհեստանոցներ՝ բրդի, բամբակի գործարաններ (Երեւան), շալագործարան (Երեւան եւ Էջմիածին), դերձականոց, հիւանոց եւն.[59]: Ամերիկացի միսիոնարներն իրենց գործունէութիւնը ծաւալեցին նաեւ Թիֆլիսում, որտեղ Նպաստամատոյց Ընկերութեան փախստականների որբանոցում գնահատանքի արժանի աշխատանք է կատարում տիկին Մ. Միքայէլեանը, ով աղջիկներին սովորեցնում է ձեռագործ աշխատանքներ, որոնք հիացմունք էին առաջացնում[60]: Աղջկանց որբանոցներ հիմնւում են նաեւ Տոմինիկեան եւ գերմանացի միսիոնարների կողմից[61]:

Միսիոնարների բարեգործական կազմակերպութիւնների տարած զանգուածային աշխատանքներով ոչ միայն նուազեցին բնակչութեան ընկերային դժուարութիւնները (մանաւանդ որ հիմնականում աղքատ խաւն էր դիմում գործ ստանալու համար[62]), այլեւ ապահովուեց արհեստների, ձեռագործ աշխատանքների զարգացման շարունակականութիւնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով՝ ժողովրդական արհեստների, ձեռագործ աշխատանքների ներմուծումը կրթական համակարգ, այսինքն, վերջիններիս վերածումը կրթական դաստիարակութեան բաղադրիչի, մի կողմից ապահովում է մշակոյթի զարգացումն ու փոխակերպումները արտաքին, առաջադէմ ազդեցութիւնների արդիւնքում, միւս կողմից, նպաստում է, որ նոր համակարգ ներառնուեն ժողովրդական մշակոյթի, լայն առումով՝ մշակութային ժառանգութեան կարեւորագոյն բաղադրիչ հանդիսացող արհեստները: Եւ վերջապէս, այս իրողութիւնը ցոյց է տալիս, որ չնայած պահպանողականութեանը, հայ իրականութիւնը աստիճանաբար փոխում է նաեւ իր վերաբերմունքը աղջիկների կրթութեան ու հնարաւորութիւնների նկատմամբ: Արհեստների դասաւանդումը կարեւոր դերակատարութիւն ունեցաւ, քանի որ այն, ըստ էութեան, խմբակային, համայնքային գործունէութիւն էր, ինչը թոյլ էր տալիս, որ հաւաքական աշխատանքների կատարողական ձեւերը, տուեալ շրջանի ձեռագործութեան դպրոցի աւանդական ոճը պահպանէին ու փոխանցէին սերնդէսերունդ: Ստեղծագործական նուրբ արուեստը իւրաքանչիւր ազգագաւառում ներկայանում էր առանձնայատուկ դիմագծով, այն է՝ յատուկ ոճի, կարատեսակի, յղկուած, բարդեցուած ձեւերով, ուստի՝ վերջինիս զարգացումն ու պահպանումը հիմքն են կազմում այսօր գոյութիւն ունեցող հայկական մշակոյթի հարուստ գանձարանի:

[1] Արհեստագործական գործունէութեան կարեւորութեան մասին Մ. Նալբանդեանը նշում է. *«Հայոց արհեստագիտութիւնը շատ ողբալի վիճակում է այսօր... Տնտեսական գիտութիւնքը առանց արհեստի օգնութեան չեն կարող գործադրութիւն ունենալ ազգի մէջ: Եւ, եթէ ամէնքն էլ փիլիսոփայ դառնան, այնուամենայնիւ, ազգի աւերակը չի շինուիլ: Փիլիսոփայի ձեռքից չէ գալիս այս կամ այն գործիքը շինել, որին մեծապէս կարօտ է ազգի երկրագործութիւնը եւ վաստակատրութիւնը, փիլիսոփան չի կարող հոգալ եւ շինել եւ ոչ մինը այն բաներից, որոնց չլինելը պատճառ է այսօր ազգի կեանքի տարապայման խեղճութեան»* (Շ. Ոսկանեան, *Ուրուագծեր Արեւմտահայ Դպրոցի եւ Մանկավարժական Մտքի Պատմութեան 1850-1920, Ա. Հտր.*, Երեւան, 2009, էջ 250):

[2] Հ. Ստեփանեան, *Հայերի Ներդրումը Օսմանեան Կայսրութիւնում*, Երեւան, ԳասՊրինտ, 2012, էջ, 578:

[3] Հ. Թոքմաճեան, *Այնթապի Ասեղնագործութիւն, Ա. Հատոր*, Հալէպ-Երեւան, Տիգրան Մեծ, 2015, էջ 93: 1882ին Այնթապ ժամանած Բժ. Ֆ. Շեփըրտը եւ կինը՝ Ֆենին, շրջագայելով գիւղական բնակավայրերում, տեսնում էին կանանց, ովքեր կրում էին հաստ կտաւից պատրաստուած կարմիր ու կապոյտ գոգնոցներ, որն իրենց ձեռքով էին ներկում ու ասեղնագործում ճերմակ հաստ դերձանով: Տեսնելով որ դրա վրայ ժամանակ էր ծախսում նրանք ձեռնարկում են նոյն աշխատանքը գործուածքների վրայ (Թոքմաճեան, էջ 98):

[4] Ոսկանեան, էջ 388:

[5] Համբարձում Երամեան, *ՅուշարձանՎան-Վասպուրականի, Հատոր Բ.*, Աղեքսանդրիա, տպագր. Արամ Ստեփանեանի, 1929, էջ 278:

[6] https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/bitlis/bitlisreligion/missionaries.html

[7] "Mid Toil and Tribulation," *The Missionary Herald, American Board of Commissioners for Foreign Missions*, Պոստոն, Մեսեչուսէց, 1915, Vol. CXI, էջ 457:

[8] Վահէ Հայկ, *Խարբերդ եւ Անոր Ոսկեղէն Դաշտը, Ա. Հտր.*, Նիւ Եորք, 1959, էջ 333, 504:

[9] Թ. Խ. Յակոբեան, *Պատմական Հայաստանի Քաղաքները*, Երեւան, Հայաստան Հրատ., 1987, էջ 202:

[10] Վ. Հայկ, էջ 457:

[11] http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/bitlis/bitlisreligion/missionaries.html (պահպանուել է լուսանկար-բացիկ՝ մարտինցի երեք ասեղնագործ աղջնակների, որի դարձերեսին Շարլոթ Էլիի գրառումն է. պահւում է Մաունթ Հոլիոք Քոլէճի արխիւում):

[12] Ա. Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան եւ Իր Հայորդիները*, Պէյրութ, Հրատ. Ուրֆայի Յուշապատումի Յանձնախումբի, 1955, էջ 458-459:

[13] Հ. Մ. Պօղոսեան, *Վասպուրականի Պատմութիւնից 1850-1900*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1988, էջ 293-5:

[14] Խ. Լեւոնեան, *Վան-Վասպուրական Աշխարհը*, խմբ.՝ Ե. Քասունի, Պէյրութ, տպարան՝ Design Kesdenian, 2013, էջ 164:

[15] Համբարձում Երամեան, *Յուշարձան Վան-Վասպուրականի, Հատոր Ա.*, Աղեքսանդրիա, տպ. Արամ Գասապեան, 1929, էջ 28:

[16] Պօղոսեան, էջ 303:

[17] Հ.Ֆ.Պ Լինչ, *Հայաստան Ուղեւորութիւններ եւ Ուսումնասիրութիւններ, Բ. Հտր.*, Կ. Պոլիս, տպագիր Յ. Ասատուրեան եւ որդիք, 1914, էջ 106:

[18] Ե. Տէր-Մկրտչեան, *Գանձեր Վասպուրականի, Ա. Հատոր*, Պոստոն, տպարան Պայքար օրաթերթի, 1966, էջ 216:

[19] Լեւոնեան, էջ 170:

[20] Լ. Գազանճեան, *Վերածնունդ Վան-Վասպուարկանի, Մշակութային Ոսկեդար (1850-1950)*, Պոստոն, Տպ. Թումայեան եղբարք, 1950, էջ 136:

[21] Պօղոսեան, էջ 304:

[22] Գ. Շէրենց, *Սրբավայրեր, Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ Նահանգի Գլխաւոր Եկեղեցեաց Վանօրէից եւ Ուսումնարանաց*, Թիֆլիս, տպարան ընկ. «Վերիչեւ եւ Կամենմախէր», 1902, էջ 8-10:

[23] Գազանճեան, էջ 146:

[24] «Տաճկական Հայաստան, Միացեալ Ընկերութիւնք Հայոց, Վիճակագիր Վարժարանաց», *Արձագանք*, Թիֆլիս, Հ[փ] 14, 1882 էջ 214:

[25] Ոսկանեան, էջ 269:

[26] Նոյն, էջ 329:

[27] Շէրենց, էջ 12:

[28] Պօղոսեան, էջ 304:

[29] Լինչ, էջ 106:

[30] Շէրենց, 19:

[31] Նոյն, էջ 34, 42: Վանի ծխական ու մասնաւոր վարժարանների ցանկը տե՛ս նաեւ՝ «Նամակ Թիւրքիայից», *Մշակ*, 1895, թ. 146, էջ 3. նաեւ՝ Մասիս, «Արտաքին Տեսութիւն. Դպրոցական Գործը Վանում», *Մշակ*, 1898, թ. 76, էջ 3:

[32] «Նամակ Թիւրքիայից», *Մշակ*, 1895, Հ[փ] 146, էջ 3:

[33] Շէրենց, էջ 13-14:

[34] Երամեան, *Հատոր Ա.*, էջ 455:

[35] Գազանճեան, էջ 139:

[36] Ս. Զէյթլեան, *Հայ Կնոջ Դերը Հայ Յեղափոխական Շարժման Մէջ, Ա. Հտր.*, Լոս Անճըլըս, Քալիֆորնիա, 1992, էջ 94:

[37] Վ. Տերոյեան, *Միսիոներաբարեգործական Կազմակերպութիւնների Աշխատանքը Մերձաւոր Արեւելքում եւ Անդրկովկասում*, խմբ. ՝ Ռ. Սահակեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2008, էջ 35:

[38] Վ. Հայկ, էջ 384:

[39] Mrs. R.L. Ellen, "Has American Education for Girls Been of any Benefit to Van?," *Life and Light for Woman*, published by the Women's Boards of Missions, 1900:30, էջ 252, Պոստոն:

[40] http://www.houshamadyan.org/en/mapottomanempire/vilayet-of-bitlispaghesh/bitlis/religion/missionaries.html :

[41] Լեւոնեան, էջ 173:

[42] Պ.Ս.Մխիկեան, «Վանի Տօքթ. Ըէյնոլտսը», *Հայրենիք*, Պոստոն, 8 Օգոստոս 1955, էջ 79:

[43] Mrs. Ellen, էջ 253:

[44] https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/bitlis/bitlisreligion/missionaries.html

[45] Miss Grisell M. Mclaren, "Glimpses of Our School for Girls at Van, Turkey," *Life and Light for Woman*, 1905:35, էջ 62:

[46] Երամեան, *Հայոց Ա.*, էջ 65:

[47] Երամեան, *Հայոց Ա.*, էջ 92:

[48] Oksen Teghtsoonian, *From Van to Toronto: A Life in Two Worlds*, New York, Lincoln Shanghai, iUniverse, Inc., 2003, էջ 8:

[49] Լեւոնեան, էջ 294:

[50] "The Forty-first Annual Meeting of the Woman's Board of Missions," *Life and Light for Woman*, 1908:38, էջ 557:

[51] Մխիկեան, էջ 80:

[52] Նոյն, էջ 82:

[53] Երամեան, *Հայոց Ա.*, էջ 439:

[54] Գազանճեան, էջ 294:

[55] Երամեան, *Հայոց Ա.*, էջ 413:

[56] «Նամակ Թիւրքիայից, Վան, Փետրուարի 1ին», *Մշակ*, 26 Մարտ 1896:

[57] J. O. Barrows, *In the Land of Ararat, A Sketch of the Life of Mrs. Elizabeth Freeman Barrows Usher, Missionary to Turkey and a Martyr of the Great War*, New York, Chicago, Fleming H.Revell, 1916, էջ 85:

[58] Barrows, էջ 168:

[59] Փ. Արմենակ, «Ամերիկացիները Մեր Մէջ», *Աշխատանք*, 1917, Հ՛թ 40, էջ 2:

[60] Ա.Մ., «Թիֆլիսի Փախստական Որբանոցները. Նպաստամատոյց Ընկերութեան Որբանոցը», *Վան-Տոսպ*, 1916, Հ՛թ 31:

[61] Երամեան, *Հայոց Ա.*, էջ 448, 453:

[62] Տերոյեան, էջ 36:

HANDCRAFT IN THE CURRICULUM OF VAN-VASPURAKAN'S SCHOOLS IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY

(Summary)

ANI MKHITARYAN
amkhitaryan89@gmail.com

The article gives a brief overview of the inclusion of handcraft in the curriculum of girls' schools in the Van Vaspurakan region as of the 1850s. The author assesses the benefits of teaching handcraft in those schools and notes that it promoted the preservation and development of local traditional and popular art and served as a source of income to the families, thus improving their social conditions.

The author notes that teaching handcraft in schools was initiated mostly by American and European missionaries who opened schools in the region from the mid-19th century, taught this art and encouraged its spread through exporting/selling the items abroad. The paper argues that the proceeds of these handcrafts improved the economic conditions of local Armenian families.

ՍԿԻՀԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ԾԱԾԿՈՑՆԵՐ (ԺԷ.-Ի. ԴԱՐԵՐ)

ԱՆՆԱ ՕՆԱՆԵԱՆ
annaonanyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Յօդուածի նպատակն է ներկայացնել Հայ Եկեղեցուն նուիրաբերուած սկիհի ծածկոցների արձանագրութիւնները: Սակայն մինչեւ այն, հակիրճ կը նկարագրենք ծածկոցների գործառոյթները, դրանց տեղը եկեղեցում եւ նուիրաբերման նպատակները:

Ինչպէս Կաթոլիկ եւ Ուղղափառ, նոյնպէս եւ Հայ Առաքելաքան Եկեղեցում Պատարագի ժամանակ սկիհը ծածկւում է յատուկ ծածկոցով, որի վրայ ներքեւում դրւում է նշխարը: Եկեղեցու ծիսակարգերի ձեւաւորման փուլում սկիհները ծածկող «դաստառակը» ունեցել է գինին փոշուց պաշտպանելու գործառոյթ[1]: Միայն դարեր անց սկիհը ծածկող գործուածքը օրինուել է, քանի որ այն անմիջապէս առնչւում էր գինու եւ նշխարի հետ: Սկիհի ծածկոցը պէտք է լինի անթափանց, որպէսզի սկիհը չերեւայ: Բացի այդ, ծածկոցը լուանալուց յետոյ անհրաժեշտ է ջուրը ծաղիկների արմատներին լցնել[2]:

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՂԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Վաղագոյն սկիհի ծածկոցներն առնչւում են Բիւզանդիայի հետ: Բիւզանդական Եկեղեցում ասեղնագործ ծածկոցները նախատեսուած էին սրբազան անօթները, որմնախորշերը, զոհասեղանը ծածկելու կամ եկեղեցական երթերին ու թափօրներին օգտագործուելու համար: Քանի որ սկզբնական շրջանում դրանց գործառոյթները յստակեցուած չէին, հնարաւոր է, որ միեւնոյն ծածկոցը ծառայէր միքանի նպատակի: Ծածկոցներից նրանք, որոնք օգտագործւում էին հաղորդութեան ծէսին, դարձան սկիհի ծածկոցների նախատիպերը: Բիւզանդական վաղագոյն օրինակները Գերմանիայի Հալբերշտադ տաճարի զոյգ ծածկոցներ են՝ յունարէն արձանագրութեամբ եւ հաղորդութեան տեսարանով[3]: Դրանք Հալբերշտադտ են բերուել 4րդ խաչակրաց արշաւանքից եւ նուիրաբերուել տաճարին 1208ին: Մինչեւ հիմա յստակ չէ, թէ ո՛ր կաթողիկոսն է այն նուիրաբերել տաճարին, բայց հաւանաբար Կրոսիոն (1201-1208) է եղել: Ծածկոցները սեւ մետաքսի կտորից են, երկուսի դէպքում էլ Քրիստոսին ձախ կողմից մօտենում են վեցական առաքեալներ: Արձանագրութիւնների վերջում խորհրդանշական բառերն են՝ «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը» եւ «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի իմ արիւնը...»:

Ռուսական եկեղեցու պահպանուած ամենահին օրինակը թուագրւում է ԺԴ. դարով՝ 1389ով: Այն պահւում է Ռուսաստանի Պետական Պատմական Թանգարանում: Չափերով բաւականին մեծ է՝ 123x221 սմ: Ոսկեգոյն կտորի վրայ, կենտրոնում Քրիստոսն է ասեղնագործուած, կողքին աղօթքի

դիրքով՝ ձախից Տիրամայրը, Միքայէլ հրեշտակապետը, միտրոպոլիտներ Պետրոսն[4] ու Ալեքսէյը[5], իսկ աջից՝ Յովհաննէս Մկրտիչը, Գաբրիէլ հրեշտակապետը, միտրոպոլիտներ Մաքսիմն[6] ու Ֆէոգնոստը[7]: Ներքեւում ասեղնագործուած են իշխաններ, վերեւում չորս սերովբէներ, եզրագօտում՝ հրեշտակներ ու հրեշտակապետեր, անկիւններում՝ աւետարանիչները: Օգտագործուած են ոսկեթել եւ արծաթաթել, գունաւոր մետաքսէ թելեր: Ունի արձանագրութիւն այն մասին, որ իրը ասեղնագործուել է իշխանուհի Մարիա Սեմիոնովնայի պատուէրով 1389ին[8]:

ԿԱԹՈԼԻԿ, ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բիւզանդիայում ծածկոցները կոչւում էին «աէռ»[9]: Յունարէն՝ ἀήρ, ռուսերէն՝ Воздýх, անգլերէն՝ Aër[10], ֆրանսերէն՝ l'Aër, հայերէն համարժէք բառ գոյութիւն չունի: Եթէ յունական եկեղեցում աէռը մէկն էր եւ ծածկում էր միանգամից սկիհն ու մաղզման[11], ապա ուղղափառ եկեղեցում այլ էր: Ուղղափառ եկեղեցում մաղզման տեսքով նման էր սկիհին՝ բաժակի ձեւ ունէր, ուստի սկիհը ծածկւում էր առանձին, մաղզման՝ առանձին, ապա միայն մէկ, չափերով աւելի մեծ ընդհանուր ծածկոցով: Ընդ որում, ուղղափառ եկեղեցում սկիհի ծածկոցն այնքան մեծ էր լինում, որ կարող էր մարմնակալի փոխարէն օգտագործուել[12] կամ ինչպէս հայերն են անուանում՝ գորփուրա[13]: Եթէ հաշուի առնենք այս տարբերութիւնները, ապա հայկական սկիհի ծածկոցը, որը հիմնականում միջին չափի է, աւելի շատ նման է յունական կամ բիւզանդական աէռին, եւ ոչ թէ ուղղափառ նմուշներին: Կարելի է ասել, որ հայկական ծածկոցները կաթոլիկ եկեղեցու ծածկոցներին են նման:

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ա) Հաւաքածոներ, ալպոմներ, գրականութիւն

Պահպանուած հայկական վաղնջագոյն օրինակը թուագրւում է 1688ով, պահւում է Մայր Աթոռ Սուրբ Էջիածնի Ալեք եւ Մարի Մանուկեան Գանձարանում (Գանձարան) եւ արձանագիր է: Աշխարհի տարբեր թանգարաններից եւ մասնաւոր հաւաքածուներից մենք գտել եւ խմբաւորել ենք ԺԷ.-Ի. դարերով թուագրուող 100ից աւել սկիհի հայկական ծածկոցներ, որոնց մեծամասնութիւնը արձանագիր է: Դրանք պահւում են Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանում (ՀՊՊԹ)[14], Էջմիածնի Գանձարանում[15], Էջմիածնի Թանգարանում, Սարդարապատի Յուշահամալիրի Հայոց Ազգագրութեան Թանգարանում[16], Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւններում, Պոլսի Պատրիարքարանում[17] եւ եկեղեցիներում[18], Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքում[19], Անթիլիասի Կաթողիկոսարանում[20], Վիկտորիա եւ Ալպերթ Թանգարանում[21], Հարվըրտի Համալսարանի Թանգարանում[22], Լեհաստանի Եագելոնեան Թանգարանում[23], Գալֆայեան[24], Գրիգոր Մարգարեան[25], Զարեհ Պտուկեան[26], Աշճեան[27], Քուէյթի[28] եւ այլ մասնաւոր հաւաքածուներում:

Մինչ այս սկիհի արձանագիր ծածկոցներ հրատարակել է Արգամ Այվազեանը՝ Գալֆայեան հաւաքածուի օրինակները[29], Եւգինէ Մուշեղեանը՝ ՀՊՊԹի նմուշները[30], սոյն յօդուածի հեղինակը՝ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան օրինակները[31]:

բ) Նկարագրութիւն

Ձեւով՝ ծածկոցները շրջանաձեւ են, քառակուսի, հազուադէպօրէն՝ ուղղանկիւն: Բոլոր ծածկոցները ասեղնագործուած են, ընդ որում եկեղեցական ասեղնագործութեան մէջ կիրառուող կարատեսակները տարբեւում էին կենցաղային կամ տարազային ասեղնագործութիւնից: Թէլերից օգտագործում էին ոսկեթէլը, արծաթաթէլը, մետաքսէ եւ բամբակէ թէլերը, հազուադէպօրէն՝ բրդեայ թէլեր: Ասեղնագործութեան տեսակներից էին լիցքը, հարթակարը, շղթայակարը, սուզանին, թէլքաշը, «Այնթապի», «Պոլսի»[32] ասեղնակարերը: Ծածկոցները ասեղնագործուելուց զատ յարդարւում էին նաեւ փուլերով, մարգարիտներով, ժապաւէններով, եզրային մասում՝ նաեւ ծոպերով: Ամենահետաքրքրական մասն էլ արձանագրութիւններն էին: Մարդկութիւնը վաղնջական ժամանակներից թողել է իր հետքը տարբեր վայրերում, դրոշմել եւ քանդակել է գրեր՝ սեպագրեր, պատկերագրեր, ժայռապատկերներ եւն.: Մաշտոցեան գրերի գիւտից իվեր հայը թողել է տաճարների պատկերներն ամէնուր՝ խաչքարերի, եկեղեցիների, դրամների, տարաբնոյթ այլ յուշարձանների վրայ: Արձանագրութիւնները, որպէս կանոն, իրենց բնոյթով կարող են լինել յիշատակագրային, շինարարական, նուիրատուական, իրաւա-կանոնական, կրօնա-բարոյախօսական[33]:

Հիմնականում արձանագրութիւնների համար օգտագործում էին երկաթագիր, հազուադէպ՝ նոտրգիր: Տեղի սակաւութեան պատճառով օգտագործում էին միքանի հնարքներ՝ համառօտագրութիւն, կցագրութիւն: Կիրառուել են փակագրեր, բարբառային բառեր, փոխառութիւններ օտար լեզուներից, յատկապէս՝ թուրքերէնից:

Քանի որ սկիհի ծածկոցները նուիրաբերւում էին եկեղեցուն, ապա տեղեկութիւններ էին պարունակում նուիրողի եւ ստացողի մասին: Հայ միջնադարեան՝ Թ.-ԺԴ. դարերի վիմագիր արձանագրութիւնների ուսումնասիրմամբ զբաղուել է Լեւոն Սարգսեանը: Նա մանրամասն ներկայացրել է արձանագրութիւնների բովանդակութիւնը: Դրանց շնորհիւ պարզ է դառնում, որ հայերը տարբեր առիթներով եկեղեցուն նուիրել են գրքեր, ձեռագիր մատեաններ, սրբազան մասունքներ, խաչեր, քշոցներ, սկիհներ, կանթեղներ, անգամ գինի եւ կանխիկ դրամ որպէս «հոգոյ բաժին», «հոգոյ թոշակ»: Սարգսեանը նաեւ նշում է, որ եկեղեցիների մատեաններում եւ «արխիւում» նուիրաբերուած իրի կամ գումարի դիմաց գրւում էր նուիրաբերման նպատակը՝ «հարիւր դահեկան ի շինութիւն ժամատանս» եւն.[34]:

Մեր ուսումնասիրման առարկայ սկիհի ծածկոցները անմասն չեն մնացել արձանագրութիւններից: Դրանք հիմնականում ասեղնագործուած են, իսկ տպագիր կամ դաջազարդ արձանագրութիւններ չեն գտնուել:

գ) Արձանագրութիւնների բովանդակութիւնը

Իրենց բովանդակութեամբ սկիհի ծածկոցների արձանագրութիւնները կարող ենք համարել յիշատակագրային, որոշ առումներով նաեւ՝ նուիրատուական: Յիշատակագրային են կոչւում այն արձանագրութիւնները, որոնցում յիշատակւում են հանգուցեալի հակիրճ տուեալները՝ ազգանունանունը, տոհմային պատկանելութիւնը, մասնագիտութիւնը կամ զբաղուածութիւնը, հասարակութեան մէջ ունեցած դիրքը, պաշտօնը[35]: Նուիրատուական արձանագրութիւններում սովորաբար թուարկւում էին եկեղեցուն նուիրաբերուող գոյքը՝ դրա դիմաց ստանալով պատարագի ժամեր[36]:

Աստուածաբանական մեկնութիւնների Ժ. դարի հեղինակ Խոսրով Անձեւացին, իր *Սուրբ Պատարագի Մեկնութիւն* աշխատութիւնում, մէջբերելով «*Յիշի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր եւ օրհնի՛ր Քո սուրբ Եկեղեցու ընծայաբերներին, նաեւ նրանց, ովքեր ողորմածութեամբ յիշում են աղքատներին, եւ Քո ընդաբոյս առատաձեռնութեամբ պարգեւիր նրանց խնդրանքները՝ հարիւրապատիկն այստեղ եւ հանդերձեալում*» խօսքերը, մեկնաբանում է. «*Ոմանք սրբազան սպասքներ են ընծայում Եկեղեցուն, ոմանք՝ Աստուածաշունչ գրքեր, ոմանք էլ նուիրաբերում են կալի ու հնձանի բերքից եւ անասուններից, ըստ իրենց կարողութեան ընծայաբերում են նաեւ փրկչական տօներին ու սրբերի յիշատակութեան օրերին: Ուստի մենք խնդրում ենք նրանց, ինչպէս նաեւ ողորմածների համար, ովքեր իրենց ունեցուածքից բաժին են հանում աղքատներին...*»[37]: Այլ կերպ ասած, մարդիկ եկեղեցուն զանազան իրեր եւ ընծաներ էին նուիրաբերում, այդ թւում սկիհի ծածկոցներ, որպէսզի արժանանան Աստծոյ ներման եւ մեղքերի թողութեան: Եւ իսկապէս, դարեր շարունակ հենց այս նիւթական նուիրաբերութիւնների հաշուին էլ գոյատեւել է հայոց եկեղեցին:

Ինչպէս վիմագիր արձանագրութիւները, սկիհի ծածկոցների արձանագրութիւնները եւս ունէին *կաղապարներ*: Հիմնական օրինակներ են.-

1. ՅԻՇԱՏԱԿ Է	2. ՅԻՇԱՏԱԿ Է ԾԱԾԿՈՑՍ
3. ՅԻՇԱՏԱԿ Է ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՍ	4. ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ
5. Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ	6. ԸՆԾԱ[Յ]ԵՑ

Որպէս կանոն, արձանագրութիւնները սկսւում են այս կաղապարներով, ապա նշւում է կա՛մ եկեղեցու անունը, որին նուիրաբերւում է ծածկոցը, կա՛մ նուիրաբերողի անունը, իսկ երրորդ տարբերակը՝ յիշատակւում են այն անձանց անունները, ում հոգու փրկութեան համար է պատրաստուել տուեալ ծածկոցը: Ընդ որում, յիշատակւում են ե՛ւ ողջերի անուններ, ե՛ւ մահացածների անուններ՝ օգտագործելով տարբեր ածականներ՝ «կենդանեաց» «հանգուցեալ», «ննջեցելոց», «մահտեսի»[38] եւն.: Արձանագրութիւնների այս բովանդակութիւնը ունի իր բացատրութիւնը: Յիշենք, որ սկիհի ծածկոցն օգտագործւում է պատարագի ժամանակ, իսկ պատարագը մատուցւում էր, որ հաւատացեալը հաղորդուի Քրիստոսի հետ եւ հոգու փրկութիւն

ստանայ: Այս ամբողջ խորհրդաբանութիւնը բաւականին մանրամասն բացատրել է Անձեւացին իր վերոյիշեալ աշխատութեան մէջ:

«*Ի Քրիստոս հաւատով ննջած տղամարդկանց եւ կանանց յիշատակը թող լինի*» տողերը Անձեւացին մեկնաբանում է, որ.-

Աստծոյ բազում եւ զանազան երախտիքների դիմաց Աստծուց շնորհ ստացանք փոխհատուցելու Նրան սուրբ Պատարագի՝ Քրիստոսի ընծայմամբ, ինչի միջոցով յիշելով Աստծոյ կատարած բոլոր բարերարութիւնները՝ ամէն ինչի համար գոհութիւն ենք մատուցում... Ապա երկնաւոր Հօր առջեւ բարեխօս ունենալով Քրիստոսի՝ մեզ համար եղած մահը եւ սրբերի ճգնութիւնը՝ գոհանում ենք սուրբ Խորհրդով՝ բոլոր հաւատացեալների՝ թէ՛ ողջերի եւ թէ՛ ննջեցեալների համար: Քանզի ինչպէս որ մենք, սրբերի հետ ցնծալով, Աստծուն ընծայ եւ գոհութիւն ենք մատուցում՝ նրանց պսակումը մերը համարելով, այդպէս եւ նրանք, իբրեւ իրենց անդամների, խնամակալ են լինում մեզ՝ բարեխօսելով Տիրոջը, մանաւանդ ահաւոր Պատարագի ժամանակ...[39]:

Յիշի՛ր, Տէ՛ր, նաեւ նրանց, ովքեր յանձնարարեցին աղօթել իրենց համար...:

Յիշի՛ր, Տէ՛ր, Քեզ վրայ իրենց յոյսը դրած ննջեցեալների հոգիները»:

Քանի որ հրաման ունենք խնդրել հաւատով ու յոյսով ննջածների համար, ուստի սարկաւագը խնդրում է յիշել Նրա վրայ իրենց յոյսը դրած ննջեցեալների հոգիները[40]:

Արձանագրութիւնների դասաւորուածութիւնը

Ըստ արձանագրութեան դասաւորուածութեան՝ ծածկոցները կարող ենք միքանի խմբի բաժանել: Արձանագրութիւնները ծածկոցների վրայ դասաւորւում էին ամենակարեւոր հատուածում՝ կենտրոնում, որը սովորաբար առանձնացուած էր լինում: Ասեղնագործւում էր շրջանակ, որի մէջ Աստծոյ գառան, Խաչի, Խաչելութեան, Սկիհի, Սկիհի մէջ Քրիստոսի, որոշ դէպքերում նաեւ արեւի եւ հրեշտակի պատկերներ են ասեղնագործուած: Կենտրոնական ընդգծուած այս հատուածը առանձնացուած էր սկիհի չափերին համապատասխան: Այսինքն, կարելի է ասել, որ արձանագրութիւնը երեւացող տեղում էր արւում: Բերենք միքանի օրինակներ.-

❀ ՀՊՊԹի համար 1712 ծածկոցը, որը սեւ թանզիֆէ կտորից է, ունի հետեւեալ արձանագրութիւնը.- Յ(Ի)Շ(Ա)ՏԱԿ Է ՍԷԹԵՆՃԻ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Ք ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ Ի ԻԶՄՈՒՐԷ ԱՌ ՔԻ ԹՎ(ԻՆ) ՌՄԼ[41]:

❀ՀՊՊԹի համար 1764 ծածկոցը, որի կենտրոնում՝ ճաճանչների շուրջը, շրջանակի մէջ վերցուած է հետեւեալ արձանագրութիւնը.-

Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԻԶՄԻՐՑԻ ՔԻԼՃԱՆՃԻ ՕՂԼՈՒ ԳՐԻԳՈՐԻ ՈՐ(Դ)Ի ԱԴԱՄԻՆ, Ս(ՈՒՐ)Բ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ Թ(ՎԻ)Ն ՌՄԽԲ[42]:

❀ Երկու շրջանակով արձանագրութիւն ունի Էջմիածնի Թանգարանի 1961 համարի ծածկոցը: Այն երկնագոյն մետաքսից է, շրջանաձեւ է, կենտրոնում գառն է.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԾԱԿՈՑՍ ՄԵԼՔՈՆԻՆ ԴՍՏԵՐՆ ԵՂԻՆԷԻՆ ՀՈԳՈՒՆ Ի Դ(ՈՒՌ)Ն Ս(ՈՒՐ)Բ ՆԻԿՈՂԱՈՍ(Ի):

❀ ՀՊՊԹի համար 1711 ծածկոցի վրայ Աստծոյ գառան շուրջը՝ մինչեւ ասեղնագործ ճաճանչները, երկշարք արձանագրութիւն կայ.- Յ(Ի)Շ(Ա)Տ(ԱԿ) Է ՍԿՀՒՈՅ ԾԱԾԿՈՑՍ Ի ԴԻԼԻՊԷ ԲՆԱԿԵԱԼ ԴԱՒԻԹ ԱՂԱՅԻ ԿԵՆԴԱՆՈ ԶԱՒԱԿԱՑ՝ ՍԱՐԳՍԻՆ, ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ԵՒ ԵՓՐՈՍԻՆԷԻՆ, ՈՐՔ ԵՏՈՒՆ Ի Ս(Ր)Բ(Ո)Յ ԷՋՄԻԱԾԻՆ ՁԵ(ՌԱՄԲ) Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏ(Ո)ՒՐ ԵՊ(Ի)Ս(ԿՈՊՈՍ)ԻՆ[43]:

❀ Միւս օրինակը Գալֆայեան Հաւաքածուից մետաքսէ մի ծածկոց է.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԾԱԾԿՈՑՍ ՊԵՆԷԿԵԱՆ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ԸՍՏԵՓԱՆԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆԳՆ Թ(ՎԻ)Ն ՌՄԾ(1801) ԻՆ[44]:

Յաջորդ խմբի ծածկոցների արձանագրութիւնները կենտրոնում, սակայն քառակուսի դասաւորուած են.-

❀ՀՊՊԹ, համար 1759, թանզիֆից ծածկոց է: Արձանագրութիւնը ճաճանչներից բաւականին հեռու է տեղադրուած.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՀՈՎ(Ա)ԿԻՄԻՆ, ԱՆՆ(Ա)ՅԻՆ, ՎԱՐԴԵՆԻԻՆ Ի Դ(ՈՒ)ՌԸՆ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԻՆ, ՈՐ Ի ՏԸՐԱՊԻԶՕՆ: ՌՄԽԹ[45]

❀ՀՊՊԹ, համար 1790, արձանագրութիւնը.- ՅԻՇԱՏԱԿ Է ԾԱԾԿՈՑՍ ՀԵՂԻՆԱՅ Թ(ՎԻ)Ն ՌՄԾ ԱՄԷՆ[46]:

Արձանագրութիւնը կարող է ունենալ շրջանաձեւ դասաւորութիւն եզրերով, օրինակ Սանահինից վարդագոյն մետաքսից մի ծածկոց.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԾԱԾԿՈ(Ց)Ս Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ԱԿՍԷՆՏԻՆ ԴՍՏԵՐՆ ԱԼՄԱՍ(Տ)ԻՆ ՀՈԳՈՒՆ, Ի Դ(ՈՒ)ՌՆ Ս(ՈՒ)ՐԲ ՍԱՐԳՍԻՆ: Թ(ՎԻՆ) ՌՄԺ

Կան նաեւ արձանագրութիւններ, որոնք կենտրոնում շրջանաձեւ են եւ ապա շարունակւում են եզրերով.-

❋ Նմուշ Գալֆայեան Հաւաքածուից, ԺԹ. դար, կենտրոնական կլոր ծաղկի շուրջը շրջանաձեւ տեղաւորուած է հետեւեալ արձանագրութիւնը.- Յ(Ի)Շ(ԱՏԱԿ) Է ՄԻԼՔԷՃԻ ՋԱՏԷ ՄԱՀ(ՏԵՍ)Ի ՏԱՏՈՒՐԻՆ ՈՐԴՈՑՆ ՅԱԿՈԲԻՆ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՅԱՐՈՒԹԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Ք ԹՈՐՈՍ ապա զամբիւղաձեւ ծաղկազարդերի միջեւ ձախից աջ գրուած է ԼՈՒՍԱԻՆ ՀԱՆԱՄԻՆ ԹԱԳՈՒՀԻ Ի ԳՈՒՂՆ Թ. ԱՒՆՍՈՒՆ ԵՂԻՍԱՔԷԹ[47]:

Ծաղկոցների միւս խմբի դէպքում արձանագրութիւնը միայն եզրային մասում է, երբեմն միայն մէկ կողմում, երբեմն էլ չորս կողմով:

❋ Միայն մէկ կողմում եւ մէկ տողով արձանագրութիւն ունի 1688ի էջմիածնում պահուող ծաղկոցը, որի կենտրոնում արեւի պատկեր կայ.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԾԱԾԿՈՑՍ ԱՂԱՄԱԼԻՆ Կ(Ո)Ղ(Ա)ԿՑԻՆ ՋԻՓԻԹԷ ՈՐԴՈՑՆ ՄԻՐՋԷ ԹՎ (ԻՆ) ՌԾԿԷ[48]:

❋ Միայն մէկ տողով արձանագրութիւն ունի Պոլսի Գումգափու թաղամասի Ս. Աստուածածնի եկեղեցում պահուող ԺԸ. դարի ծաղկոցը.- Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՍԿԻՀԻ Ծ(ԱԾ)Կ(ՈՑ)Ն Ի ԿՐԻՏԻ Ս(ՈՒՐ)Ք ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՈՐ Ս(ՈՒՐ)Ք ԿԱՐԱՊԵՏ ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՊԱՐՕՆ ՍՏԵՓԱՆ[49]:

❋ Միայն մէկ կողմում արձանագրութիւն ունի էջմիածնի Գանձարանում պահուող 1862ի ծաղկոցը: Ասեղնագործուած է Տիրամայրը մանկան հետ Օդիգիտրիա պատկերագրութեամբ[50], իսկ արձանագրութիւնը պատկերից ներքեւ է՝ չորս տողով.- ՅԻՇԱՏԱԿԷ ՊԱՏԿԷՐՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼՒՒ ԲՆԱԿԻՉ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՅԱՐՈՒԹԻՆ, ԵՂՊԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՐԱ(ՊԵՏ)ԻՆ ՍԱՌԱՃԻԱՆՑ Ի ՄՇՈՒ Ս(ՈՒ)ՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ:

❋ Եզրային մասում, չորս կողմով արձանագրութիւն ունի Վիկտորիա եւ Ալպերթ Թանգարանի համար 1014-1898ը՝ 1800ի.- ՅԻՇԱՏԱԿԷ ՍԿԻՀԻ ԾԱԾԿՕՑՍ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՍԱՀԱԿԻՆ, ՄԱՐԳԱՐԻՏԻՆ, ԹԱԳՈՒՀԻ եւ ՍՐԲՈՒՀԻԻՆ եւ ԿԵՆԴԱՆԻՔ ՆԻԳՈԴԵՄՕՍԻՆ, ՍԱՌԱԻՆ, ՄԱՐԳԱՐՏԻՆ, ՍԱՀԱԿԻՆ, Ի ԳԻՒՂՆ ՏԻՎՐԻԿ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Ք ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ, Ի ԹՈՒԻՆ ՄԵՐՈՅ ՌՄԽԹ[51]:

Արձանագրութիւնները բոլորգիր են, ասեղնագործուած, օգտագործուած են մետաքսէ, բամբակէ թելեր, ոսկեթել, արծաթաթել: Հիմնականում հարթակար են կամ շղթայակար:

Ամենաշատ օգտագործուող համառօտագրութիւններն են.- Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի, Ս(ՈՒՐ)Ք, ՍԿԻ(ՀԻ), Թ(ՎԻ)Ն, ՀԱՆԳ(ՈՒՑԵԱ)Լ, ԵԿ(Ե)Ղ(Ե)ՑԻ(Ո)ՅՆ: Համառօտագրութիւնների կիրառումը նպատակայարմար էր՝ տեղի տնտեսման համար: Երբեմն արձանագրութիւններում նկատելի է, որ ասեղնագործողը ճիշտ չի հաշուարկել տարածքը, եւ ընդամէնը մէկ բառ չի տեղաւորուել եւ գրուել է նոր տողից: Շատ դէպքերում էլ տողն աւարտուել է, բայց բառը կիսատ է մնացել (սա նաեւ ընդունուած երեւոյթ է հայ միջնադարեան վիմագրութեան մէջ):

Լայնօրէն կիրառուել են նաեւ կցագրութիւններ.-



Սկիհի ծածկոցների դէպքում յիշատակւում են նաեւ այն վանքերի անունները, որոնց նուիրաբերւում են, ստացող հոգեւորականների անունները, գիւղերի, քաղաքների անուններ: Այսպիսով յաճախ յիշատակուած են այնպիսի եկեղեցիների անուններ, որոնք քանդուած են: Այս առումով արձանագրութիւնները հարուստ ազգագրական, պատմական, լեզուաբանական նիւթ են պարունակում:

Անձնանուններից հանդիպում են՝ Աբրահամ, Աղամալ, Այվազ, Աննա, Առաջպար, Ասլիկ, Բարսղ, Բրափիեօն, Գաբրոշ, Գասպար, Գրիգոր, Դափթ, Երեմ, Եփրաքսի, Եփրոսինէ, Զանազան, Զարմազան, Թագուհի, Թակոր, Թորոս, Թուրվան, Լիանա, Լութֆի, Կիւրեղ, Համասփիւր, Ղազար, Մալխաս, Մամիկոն, Մարգարիտ, Մարտիրոս, Մերեմ, Մեյրեմ, Մինաս, Միրզէ, Յերիքնազ, Նոէմզար, Նիկոդեմոս, Շահզեւէ, Ոհանէս, Ովսաննա, Պօղոս, Սահակ, Սամուէլ, Սառա, Սարգիս, Սիմաւոն, Սինոր, Ստեփանոս, Սրբուհի, Տիրուհի, Փանի եւն.:

Աւելի հետաքրքիր էին ազգանուան դեր կատարող մակդիրները՝ երբեմն տոհմանուններ, երբեմն բնակավայրերի անուններ.- Ագուլեցի, Թէքէեան, Իզմիրցի, Կամախեցի, Միջաղեղցի[52], Պաղտատցի, Պեկօղլուցի, Պենէկեան, Սէթենճի, Տագեսեան, Ֆիլիպէցի:

Հանդիպում են որոշ մասնագիտութիւնների անուանումներ կամ դիմելաձեւեր՝ Աղա, Թիւթիւնճի, Հայրապետ, Հացագործ, Ոսկերիչ, Քիլճանճի Օղլու եւն.:

Արձանագրութիւններում յիշատակուած են Արաբկիրի Ս. Աստուածածին (կոց. 1249), Արմաշի Չարխափան Աստուածածին (կոց. 1416), Զմիւռնիայի Ս. Թադէոս, Կեսարիայի Թոմարզա Ս. Աստուածածին (կոց. 1516), Մշոյ Ս. Կարապետ եկեղեցիները (ըստ աւանդութեան կառուցել է Գրիգոր Լուսաւորիչը), Էջմիածնի մայր տաճարը (ըստ աւանդութեան կառուցել է Գրիգոր Լուսաւորիչը), Տիւրիկի Ս. Գրիգոր Լուսաւորիչը, Տրապիզոնի Ս. Աստուածածինը, ինչպէս նաեւ Ս. Մինաս, Ս. Սարգիս, Ս. Ստեփանոս Նախավկայ, Ս. Յակոբ անուանումներով մեզ համար անյայտ եկեղեցիները[53]:

Թուակիր օրինակներում հանդիպում ենք յաճախ տառային, հազուադէպ թուային արձանագրութիւններ: Միայն ԺԹ. դարից սկսած սկիհի ծածկոցների արձանագրութիւններում թուականը գրուած է թուով:

Ներկայումս սկիհի ծածկոցների նուիրաբերումը եկեղեցիներին տարածուած է հաւատացեալների շրջանում: Հիմնականում ծածկոցը նուիրւում է հանգուցեալի կամ ողջի հոգու հանգստութեան համար: Այժմ կարող ենք տեսնել ասեղնագործ, տպագիր, մեքենական ծածկոցներ: Աւելացել են նաեւ ասեղնագործութեան տեսակները՝ Մարաշի հիւսուած կար, հելունագոր-

ծութեան եւ կտորի համադրում, շարունակւում են օգտագործուել փուլերը եւ մնացած քարերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ԺԷ.-Ի. դարերի սկիհի ծածկոցների արձանագրութիւնները ասեղնագործուած էին մետաքսէ, բամբակէ թէլերով, ոսկեթէլով եւ արծաթաթէլով: Դրանք կարող էին լինել ծածկոցի վրայ տարբեր դասաւորութեամբ՝ շրջանաձեւ՝ ե՛ւ կենտրոնում, ե՛ւ եզրերում, ուղղանկիւնաձեւ՝ ե՛ւ կենտրոնում, ե՛ւ եզրային մասում, միայն որպէս եզրագօտի: Երբեմն վերցուած էին ձեւաւոր շրջանակների կամ օղագօտիների մէջ, կարող էին լինել մի կամ երկու տողով, որոշ դէպքերում նաեւ չորս տողով: Բովանդակութեամբ յիշատակագրային էին. յիշատակւում էին մահացածների եւ ողջերի անուններ, նրանց տոհմանունները, մասնագիտութիւնները: Հանդիպում են նաեւ աշխարհագրական տեղանունների, եկեղեցիների, վանքերի, պատարագիչ քահանաների անուններ: Գիրը բոլորգիրն էր, յաճախ կիրառւում էին կցագրութիւններ եւ համառօտագրութիւններ, մեծ մասը նաեւ թուակիր էր: Արձանագրութիւնները ազգագրական, աշխարհագրական, պատմական մեծ կարեւորութիւն ունէին:

Սկիհի ծածկոցներ.- ԺԸ. դար՝ Պոլսի Գումգափուի Ս. Աստուածածնի եկեղեցի եւ՝ 1862 (Էջմիածին)

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ըստ Մաղաքիա Արք. Օրմանեանի «բարեպաշտուհիները», յատկապէս նոր ասեղնագործել սովորող օրիորդները, ասեղնագործում էին դաստառակներ եւ նուիրում եկեղեցուն (Մ. Օրմանեան, *Ծիսական Բառարան*, Անթիլիաս, ՏՄՏԿԿ, 1979, էջ 111):

[2] Սուրէն Արք. Գաթարոյեան, *Ծիսական Գիտելիքներ*, Թեհրան, Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք, 2017, էջ 121-22:

[3] P. Johnstone, *The Byzantine Tradition in Church Embroidery*, London, Alec Tiranti, 1967, էջ 114-15:

[4] Պետական, եկեղեցական գործիչ, ապրել է ԺԳ.-ԺԴ. դարերում: Մետրոպոլիտը եպիսկոպոսի կամ թեմական առաջնորդի տիտղոս էր:

[5] Կիեւեան Ռուսաստանի եպիսկոպոս, պետական գործիչ եւ դիւանագէտ, ապրել է ԺԴ. դարում, մահուանից 50 տարի անց սրբադասուել է:

[6] ԺԳ. դարի եպիսկոպոս:

[7] ԺԴ. դարի կէսերի եպիսկոպոս:

[8] Н. Маясова, *Древнерусское Шитье/La Broderie Russe Ancienne*, Մոսկուա, Իսկուստվո Հրատ., 1971, էջ 10-11. նոյնի՝ *Древнерусское Лицевое Шитье. Каталог /La Broderie Faciale Russe Ancienne*, Մոսկուա, Կրասնայա Պլոշադ, 2004, էջ 22:

[9] Johnstone, էջ 21:

[10] Թարգմանաբար նշանակում է «օդ»:

[11] Եկեղեցական սպասք, որը ծածկում է սկիհը, եւ որի ներքեւում դրւում է նշխարը:

[12] «*Մարմնակալ - Սկիհին փակը պատարագի աւրեն յատկապէս դրուած մաքուր կտաւը կամ զարդարուն փոքրիկ դասպառակը*» (Օրմանեան, էջ 157):

[13] «*Գորփուրայ բառը լատիներէն գորփորալիս = corporalis, կը նշանակէ «մարմնական», այլ աւելի մերձաւորութեամբ թարգմանուած է մարմնակալ: Քառակուսի ճերմակ կտաւ զոր լատինածէս ժամարարը սեղանին վրայ կը փռէ իր առջեւ եւ ոչ միայն սկիհին անոր վրայ կը դնէ, այլ եւ սրբագործեալ նշխարն առանց մաղզմայի ուղղակի այդ կտաւին վրայ կը հանգչեցնէ: Ասկէ նոյն կտաւին աւելի պատիւ մը՝ ուղղակի խորհրդական մարմնոյն հետ շփմանը համար, եւ սրբազնագործեալ նշխարին փշուրները նոյն կտաւին կպուած կրնալ ըլլալուն կասկածով...*» (Օրմանեան, էջ 106):

[14] Ի. Մկրտչեան, Լ. Խաչատրեան, *Ճանապհր Քո երկիրը*, Երեւան, Հայաստանի Պատմութեան Թանգարան, 2019, էջ 78, 83. նաեւ՝ *Ors et Trésors d'Arménie, Catalogue de l'Exposition*, Լիոն, 2007, էջ 118-19. նաեւ՝ M. Ferenc, *Örményország Kincsei: Titkok az Ararátról: [Fotoalbum], A Katalógust Szerkesztették*, Magyar Köztársaság elnöke, Պուտափեշթ, 2002:

[15] *Էջմիածնի Գանձեր, Ալբոմ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, կազմ.՝ Մանիա Ղազարեան, 1984, էջ 284-93. նաեւ՝ *Սուրբ Էջմիածնի Գանձերն Աշխարհի Թանգարաններում*, կազմ.՝ Տ. Ասողիկ Քհնյ. Կարապետեան, Էջմիածին, «Տիգրան Մեծ» Հրատ., 2008. նաեւ՝ *A Legacy of Armenian Treasures: Testimony to a People: The Alex and Marie Manoogian Museum*, by Edmond Y. Azadian, Alex and Marie Manoogian foundation, Michigan, 2013:

[16] *Յակոբ Ճէլալեանի Նուիրատուութիւնների Կատալոգ*, կազմ.՝ Ս. Պօղոսեան եւ ուրիշն., Երեւան, «Տիգրան Մեծ», 2008, էջ 162:

[17] Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի Անուան Թանգարան, կազմ.՝ Վ. Սերոբեան, Ստամբուլ, 2011, էջ 2. նաեւ՝ Ronald T. Marchese, Marlene R. Breu, *Splendor & Pageantry: Textile Treasures from the Armenian Orthodox Churches of Istanbul*, Armenian Patriarchate of Istanbul, Իսթանպուլ, Citlembik Film Video Yapim Ceviri, 2010:

[18] Ronald T. Marchese, Marlene R. Breu եւ ուրիշն., *Treasures of Faith: Sacred Relics and Artifacts from the Armenian Orthodox Churches of Istanbul*, Իսթանպուլ, 2015, էջ 276-77:

[19] *Album of the Armenian Monastery of Jerusalem*, կազմ. S.W.M. Նիւ Եորք, The Delphic Press, 1950, էջ 39. նաեւ՝ Գ. Յովսէփեան, «Հայ Արուեստի Օրինակներ Երուսաղէմի Վանքից», *Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի Պատմութեան, Հտր. Բ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտ, 1983, էջ 252-260:

[20] H. Goltz, *Der Gerettete Schatz der Armenier aus Kilikien, Sakrale Kunst aus dem Kilikia-Museum Antelias*, Լիբանան, 2000:

[21] http://collections.vam.ac.uk/item/O172544/chalice-veil-unknown/ :

[22] https://www.harvardartmuseums.org/art/215237 :

[23] J. Sławińska, J. Osiecki, *Velum Ormiańskie ze Zbiorów Muzeum Uniwersytetu Jagiellońskiego*, "Lehahayer. Czasopismo Poświęcone Dziejom Ormian polskich", 2018, N5, էջ 195-243:

[24] Արգամ Այվազեան, *Մշակութային Արժէքների Գալֆայեան Հաւաքածոյի Արձանագիր Իրերը*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2013, էջ 160-70. նոյնի՝ *Գալֆայեան Հաւաքածոյի Մշակութային Արժէքներ, Պրակ IV, Հայկական Կիրառական Արուեստի XVI-XIX դդ. Մետաղեայ Իրեր եւ Գործուածքներ*, Երեւան, Հեղինակ. Հրատ., 2016, էջ 46-53, 60-65. նոյնի՝ *Եղեռնից Փրկուած Նորայայր Մասունքներ. Մեզ Պէտք են Մրբի Զօրավարներ, Հկր. Բ.*, Երեւան, Հեղինակ. Հրատ., էջ 116-9:

[25] http://armenianartworks.com/armenianartworks.com/ :

[26] *Հայ Հիւսուածեղէնի Արուեստ, Յուցահանդէսի Կատալոգ*, կազմ.՝ Փ.Զ. Պտուկեան, Նիւ Եորք, 1980, էջ 10-11:

[27] R. H. Kévorkian et Berdj Achdjian, *Tapis et Textiles Arméniens*, Maison Armenienne, Մարսէյ, 1991, էջ 147-155. նաեւ՝ https://textilum.wordpress.com/2014/09/18/armenian-rugs-and-textiles/ :

[28] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=2896889507020151&id=139336529442143 :

[29] Այվազեան, *Մշակութային Արժէքների*, էջ 160-70:

[30] Ե. Մուշեղեան, *Յատկանշական Յուցակ Թանգարանային Ժողովածուների, Պրակ 1, Հայերէն Արձանագրութեամբ Առարկաներ*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1964, էջ 175:

[31] Ա. Օնանեան, «Մխիթարեան Միաբանութեան Սկիհի Ծածկոցները», *Էջմիածին Ամսագիր*, 2019:Ա, էջ 132-40:

[32] Ընդունուած էր նաեւ ասեղնագործութեան տեսակները անուանել այն տեղանքի կամ քաղաքի անունով, որտեղից ծագել էր: Բնականաբար այս տեսակը տարածւում էր Հայաստանով մէկ, սակայն անուանւում էր ըստ ծագման տեղի:

[33] Գ. Գրիգորեան, *Հայկական Վիմագրութիւն, Համառօտ Ձեռնարկ Բուհերի Պատմութեան եւ Բանասիրութեան Ֆակուլտէտների Համար*, Երեւան, Զանգակ-97, 2000, էջ 67-82:

[34] Լ. Սարգսեան, *Հայաստանի Նուիրատուական Արձանագրութիւնները (9-14րդ Դարեր)*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2007, էջ 79-82:

[35] Գրիգորեան, էջ 67:

[36] Լ. Սարգսեան, էջ 93-4. նաեւ՝ Գրիգորեան, էջ 74:

[37] Խոսրով Անձեւացի, *Սուրբ Պատարագի Մեկնութիւն*, գրաբարից թարգմ.՝ Գէորգ Աբղ. Սարոյեան եւ Մկրտիչ Աբղ. Պռոշեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Երեւան, 2001, էջ 78:

[38] Մահտեսի (մղդեսի, մղդսի, մուխսի, հաճի), արաբ. Mugdisi - նշանակում է Երուսաղէմ ուխտի գնացած. օգտագործւում է որպէս մակդիր՝ յատուկ անունից առաջ (Ս. Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հկր. 3*, Երեւան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատ., 1944, էջ 244):

[39] Անձեւացի, էջ 74-75:

[40] Անձեւացի, 82 էջ:
[41] Մուշեղեան, էջ 106:
[42] Մուշեղեան, էջ 110:
[43] Մուշեղեան, էջ 125:
[44] Այվազեան, *Մշակութային Արժէքների*, էջ 169:
[45] Մուշեղեան, էջ 113:
[46] Նոյն:
[47] Այվազեան, *Գալֆայեան Հաւաքածոյի Մշակութային Արժէքներ, Պրակ IV*, էջ 52-3. նաեւ՝ Այվազեան, *Մշակութային Արժէքների*, էջ 165:
[48] 1137+551՝ 1688: Ցանկացած թիւ ստանալու համար նախ գտնում ենք տառերին համարժէք թուագրումը, ապա գումարում 551՝ հայոց մեծ թուականը:
[49] Marchese, Marlene, *Splendor & Pageantry*, էջ 245:
[50] Ք. Աւետիսեան, *Աստուածածնի Պատկերագրութիւնը Հայ Միջնադարեան Արուեստում*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2015, էջ 256:
[51] http://collections.vam.ac.uk/item/O172544/chalice-veil-unknown/ , տե՛ս նաեւ՝ Sławińska, Osiecki, էջ 195-243:
[52] «Միջաղեղցի» ասելով հաւանաբար նկատի ունի Կ. Պոլսի Միջագիւղ թաղամասը՝ թուրք.՝ Ortaköy, անգլ.՝ Middle Village, բառացի թարգմանութեամբ՝ Միջին գիւղ: Այն Վոսփորի նեղուցի եւրոպական ափին է: Հայերն այստեղ մեծ թիւ էին կազմում, 1785ին հիմնել էին Թարգմանչաց Վարժարանը, որը բազմաթիւ հայ մտաւորականների է տուել պատմութեանը (http://bit.ly/331dP7k , Թուրքիայի Հայոց պատրիարքարանի պաշտօնական կայքէջ):
[53] Եկեղեցիներից շատերի միայն անուանումը բաւական չէ հասկանալու համար, թէ որ գիւղում են գտնուել, քանի որ նոյն անուանումով տարբեր եկեղեցիներ են եղել:

ARMENIAN INSCRIBED CHALICE VEILS (17TH-20TH CENTURIES)
(Summary)

ANNA ONANYAN
annaonanyan@mail.ru

The earliest known Armenian chalice veils date to the 17th century, unlike the Byzantine veils, which date back to 1208. The oldest Armenian veil with a dated inscription comes from 1688 and is preserved in the Treasury House of Etchmiadzin. Others, which were woven later between the 17th and 20th centuries, are preserved and displayed in various museums and private collections of the world.

The article is a study of the Armenian inscribed chalice veils embroidered with silk, cotton, gold and silver thread between the 17th and the 20th centuries.

The article focuses on the location and shape of the inscription, the colors and kinds of thread used. It describes the content of the inscriptions, which include the names of donors and their kin who had passed away, their surnames and profession, geographic locations, names of churches, monasteries and priests, reasons for the donation, etc. Furthermore, the author analyses the texts' linguistic features, the style and mode of the script, abbreviations used and dates, which provide important ethnographic, geographical and historical details.

ՄՈՎՍԷՍ ԵՐԷՑ ԳՈՐԻՍԵՑԻ ԳՐՉԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ (ԺԷ. Դար)

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ
sasun-07@mail.ru

Սիւնեաց լեռնաշխարհի հնաւանդ ու հարուստ կենսագրութիւն ունեցող բնակավայրերից է Հաբանդ գաւառի Ձագեձորի կամ Վարարակնի լեռնահովտի բարձրադիր գոգաւորութեան վրայ, Վարարակն գետակի վերին հոսանք՝ Քրմագետ կամ Վերիշէն[1] վտակի ձախափնեայ կանաչապատ ձորամիջում եւ բլրալանջին ընկած Հին Գորիս (տեղացիների կողմից Երի Շէն, Վերին Շէն անուանուած)[2] գիւղը՝ հնահիմք Գորայք-Գորէս-Գորիս (Կյորէս)ը, որի տարեգրութիւնը անխզելիօրէն կապուած է Սիւնեաց պատմութեան հետ եւ կազմում է նրա մի մասը[3]:

Սիւնիքը, Հայաստանի միւս նահանգների նման, եղել է ռազմական բախումների թատերաբեմ՝ մեծապէս տուժելով նուաճողների ասպատակութիւններից եւ աւերիչ արշաւանքներից[4]: Այս ամէնով հանդերձ, Գորայք-Գորիս գիւղը հնարաւորինս կարողացել է պահպանել իր գոյութիւնը եւ շարունակել ծաւալել ազգային մշակութակերտ գործունէութիւն՝ հնուց անտի հանդիսանալով Հաբանդ գաւառի քաղաքակրթութեան բնօրրաններից: Հոգեւոր կեանքն ուղեկցուել է նիւթական մշակոյթի զարթօնքով, որին մեծապէս նպաստել է Հարանց կամ Սիւնեաց Մեծ Անապատի[5] եւ տեղի կրթական գործի հիմնադիր, խորահմուտ հոգեւորական Մովսէս Վրդ. Տաթեւացու[6] 1613ին հիմնած դպրոցի ազգաշահ եւ աստուածահաճոյ գործունէութիւնը[7]: Սիւնեաց Մեծ Անապատի շնորհիւ սկզբնաւորուած հոգեւոր-մշակութային շարժումը, քոյր մենաստաններում եւ գրչակենտրոններում շարունակել են Տաթեւացու ականաւոր աշակերտներն ու գրիչները[8], որոնք ծաւալել են բազմաբեղուն մշակութային գործունէութիւն:

Կրթամշակութային կեանքի այս վերելքի պայմաններում Գորայք-Գորիս գիւղի Ս. Գրիգորիս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներին կից հիմնուած ձեռագրատուն-դպրատներն[9] իրենց րաբունապետերով ու գիտնական վարդապետերով աստիճանաբար դառնում են Սիւնիքի ԺԷ. դարի աչքի ընկնող հոգեւոր-մշակութային կենտրոններ, որտեղ ուսուցանուել է նաեւ գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստ: Այստեղ էին գործում ժամանակի նշանաւոր եւ անխոնջ գրիչներ, Հարանց Անապատի ճգնակեաց Բարսեղ Երէցը, որին Դաւրիժեցին բնութագրում է որպէս «*ընտիր եւ առաքինագործ աբեղա*»[10], Պետրոս քահանայի որդիներ՝ Յակոբ եւ Սարգիս քահանաները, Յովհաննէս Երէցը, շնորհազարդ գրիչ-ծաղկողներ Յովհաննէս Աբեղան եւ Մովսէս երէց Գորիսեցին, ովքեր քրիստոնէական կրօնի վարդապետութիւնն ուսուցանելուն զուգահեռ իրենց մեծ ու փոքր գործերով եռանդուն կերպով ծառայել են նաեւ ժողովրդի գրաւոր մշակոյթի ստեղծմանը[11]:

Գորայք-Գորիս գիւղի գրիչների ձեռագրական ժառանգութիւնը հնարաւորինս ամբողջական դարձնելու նպատակով սոյն յօդուածում պիտի անդրադառնանք նաեւ հայրենի եզերքից դուրս գրչագրուած մատեաններին, որոնք թէեւ ոչ-անմիջականօրէն, բայց իրենց ստեղծման պատմութեամբ կապուած են Գորայք-Գորիսի հետ: Այս առումով յատկապէս ակնառու է ժամանակի հռչակաւոր եւ արդիւնաշատ ծաղկող-գրիչներից Մովսէս երէց Գորիսեցու գործունէութիւնը:

ԿԵԱՆՔԸ

Երբ է ծնուել է Մովսէս Երէցը՝ չգիտենք, սակայն յայտնի է նրա ծննդեան վայրը՝ Գորիսը: Հաւանական է, որ սերել է քահանայ գրիչների տոհմից: Մաշտոցեան Մատենադարանում (ՄՄ) պահուող Հ[մր] 8135 «Աւետարան»ում նրա թողած յիշատակարանում կարդում ենք. «*Որ եմ բնական ի յերկըրի, Ձագածորոյն ի Գորիսի*»[12]:

Յաջորդ կենսագրական տուեալը հաղորդում է հենց ինքը՝ Մովսէսը, Ապահէն[13] գիւղի դպրատանը 1652ին գրչագրած եւ ծաղկած «Շարակնոց»ի յիշատակարանում, նշելով որ Դադիվանքի եւ Հայրավանքի (Մարդաղոնեաց) առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսի օրօք ընդունել է հոգեւոր կոչում՝ ձեռնադրուելով երէց[14]:

Մովսէսը այն բազմաշնորհ արուեստագէտներից է, ովքեր հմտօրէն տիրապետել են թէ՛ գրչութեան, թէ՛ ծաղկելու եւ թէ՛ կազմելու արուեստին: Նրա մանրանկարչական եւ զարդանկարչական արուեստն արժանի է առանձին ուշադրութեան, քանզի նրա վրձնած նկարազարդումներից (աւետարանիչների պատկերներ, կիսախորաններ, անուանաթերթեր, զարդագրեր, լուսանցազարդեր եւն.) շատերը թեմատիկ առումով ունեն ինքնատիպ մօտեցում, գունային իւրօրինակ լուծում, իւրաքանչիւր մանրանկարին ցուցաբերուած է ինչպէս ոճական, այնպէս եւ պատկերագրական անհատական մօտեցում: Հաստատապէս կարող ենք ասել, որ Մովսէսն իր շօշափելի ներդրումն ունի Հաբանդ գաւառի գրչութեան եւ մանրանկարչութեան ձեւաւորման ու զարգացման գործում, յատկապէս իր գործով օրինակ ծառայելով իր աշակերտներին:

Ուշագրաւ է, որ իր գրչագրած եւ ծաղկած ձեռագրերի յիշատակարաններում նա ամէնից քիչ իր մասին է յիշում, այն էլ միայն նուաստացնող մակդիրով, նոյնիսկ, երբ գեղեցկօրէն է գրչագրել ու ծաղկել մատեանը: Օրինակ, Մարտիրոս Խնձորեսկցի գրչի 1653/54ին ընդօրինակած «Աւետարան»ը ծաղկած եւ կազմած Մովսէսի ինքնագիր յիշատակարանում ասում է. «*Ձսակաւ ծրօղ բանիս զՄովսէս զանպիտան էրէցս...*»[15]:

Մովսէս Երէցը չի ունեցել գործունէութեան հիմնական վայր: Ըստ իր ընդօրինակած, ծաղկած, վերանորոգած եւ կազմած ձեռագրերի յիշատակարանների՝ նա հիմնականում գործել է Տաթեւ, Ապահէն, Մոս, Տանձատափ եւ այլ գիւղերի գրչութեան դպրոցներում: Դժբախտաբար, անխոնջ

գրչի՝ ծննդավայրում ընդօրինակած, ծաղկած եւ կազմած ձեռագրերից մեզ ոչինչ չի հասել: Բացառուած չէ, սակայն, որ միքանի բեկորներ պատառիկների կամ պատառիկ-պահպանակների տեսքով պահպանուած լինեն:

Ընդհանրապէս, յայտնի իրողութիւն է, որ հայ միջնադարեան հոգեւոր-մշակութային կենտրոնների գործունէութիւնը յաճախ դադարում էր ասպատակութիւնների ու պատերազմների հետեւանքով: Դրանք իրենց հետ բերում էին նաեւ նիւթական ու հոգեւոր արժէքների ոչնչացում, ձեռագրական ժառանգութեան հսկայական կորուստներ եւն.: Այս առումով բացառութիւն չէր նաեւ Գորայք-Գորիս գրչութեան կենտրոնը:

Թէեւ Հայաստանի համար մեծ աղէտներ պատճառած թուրք-իրանական տեւական պատերազմներն աւարտուեցին 1639ի Մայիսի 17ին Կասր է Շիրինի պայմանագրով, սակայն հալածանքները չդադարեցին ու շարունակուեցին նաեւ Շահ-Աբբաս Բ.ի (1642-66) շրջանում: Այս դէպքերն իրենց արտացոլումն են գտել հայերէն ձեռագրերի յիշատակարաններում: Գորայք-Գորիս գիւղի բազմերախտ գրիչներն իրենց ընդօրինակած մատեանների յիշատակարաններում լրացնելով մէկը միւսին, պարտք են համարել արժէքաւոր եւ հաւաստի տեղեկութիւններ հաղորդել ծննդավայրում 1640ականների սկզբներին պարսից իշխանութիւնների գործած վայրագութիւնների՝ գիւղի աւերման, կողոպուտի եւ տեղահանուած բնակչութեան՝ Արցախի Ծար գաւառի տարբեր վայրեր հարկադրական գաղթի մասին: Եւ իրօք, հարեւան Արցախ հայաշխարհին այն գլխաւոր վայրն էր, ուր պատսպարուելու եւ պաշտպանուելու յոյսով դիմում էին Գորայք-Գորիսի տարագրեալ գիւղացիները: Այդուհանդերձ, մաքառումներով լի այդ ժամանակաշրջանում եւս, գորիսեցի գրիչներն անգամ բնօրրանից հեռու, բազմաթիւ զրկանքներ կրելով, շարունակել են ձեռագրերի ընդօրինակման գործը՝ յիշատակարաններում հայրենասիրական բուռն տենչով մատնանշելով իրենց ծննդավայրը՝ «*ի գեղջէն Գորիսոյ*»[16]:

Յաւօք, 1650ականների կէսերին յաջորդող ժամանակները Մովսէս երէց Գորիսեցու կենսագրութեան առաւել մութ շրջանն են, քանի որ յիշատակարաններն այդ մասին լռում են: Պահպանուած սկզբնաղբիւրային տեղեկութիւններն արձանագրում են, որ փոքրիշատէ խաղաղութիւն հաստատուելուց յետոյ, տարբեր վայրերում հանգրուանած գորիսեցիները վերադարձել են հայրենի եզերք՝ Ձագեձորի հովիտ եւ շէնացրել աւերուած եւ թալանուած հնամենի բնօրրանը: Գիւղն աստիճանաբար ամրապնդում եւ հզօրանում էր՝ դառնալով «Զանկազուրու գաւառ»ի՝ Տաթեւի վանքին հարկատու շէն ու գլխաւոր բնակավայրերից մէկը[17]: Հարազատ գիւղ են վերադառնում նաեւ գրիչները. վերստին կեանք են ստանում ամայացած գրչատները: Վերընձիւղւում է ձեռագրերի ընդօրինակման եւ նկարազարդման աստուածահաճոյ արուեստը:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի հարցի, որը կարեւոր նշանակութիւն ունի ինչպէս տեղահանուածների հարազատ գիւղ վերա-

դառնալու ժամանակը ճշտելու, այնպէս էլ Մովսէսի յետագայ գործունէութիւնը բացայայտելու տեսանկիւնից: Մովսէսը, հաւանաբար Տաթեւի վանքում, 1658ին զարդանախշել եւ կազմել է գրիչ Մինաս Աբեղայ Խոտանանցու Տաթեւի վանքում 1657ին ընդօրինակած «Աւետարան»ը[18]: Մատեանի բուն յիշատակարանում Մովսէսը չի թողել որեւէ յիշատակութիւն, փոխարէնը իր պատկերած Մատթէոս աւետարանչի մանրանկարի տակ թողել է հետեւեալ փոքրիկ գրութիւնը. *«Ձնկարող սակաւ ծաղկանցս զՄովսէս յեղեռնագործս փարիսեցի, յիշել աղաչեմ ի Տէր. զյիշողդ՝ յիշեալ լիջիք զՏեառնէ Աստուծոյ. թվ. ՌՃԷ (1658)»*[19]: Պատմական այս իրողութիւնը հաստատապէս յուշում է, որ տեղահանուածների տակաւ վերադարձը Գորիս տեղի է ունեցել 1650ականների կէսերից:

Հ. Ղեւոնդ Ալիշանի *Սիսական* աշխատութեան մէջ տեղ գտած մի տեղեկութեան համաձայն՝ Մովսէս Երէցը Տանձատափ գիւղում 1682ին սեղմ յիշատակարան է թողել նաեւ մէկ այլ «Աւետարան»ում. «*Յետ սակաւ ամաց (1682) Մօսէս երէց Գորիսեցի գրէ յայլում Աւետարանի սակաւագրող յիշատակարան ինչ ի Տանձատափ գեղջ, որ է Տանձատափին*»[20]: Սա բազմաշխատ գրիչ-ծաղկող Մովսէս Երէցի՝ առայժմ մեզ յայտնի վերջին կենսագրական տուեալն է:

ԳՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մովսէս Երէցից մեզ յայտնի ձեռագրական առաջին աշխատանքը թուագրում է 1647ով: Ծար գաւառի Սոթք (Սոդք)[21] իշխանանիստ նշանաւոր բնակավայրի Ս. Աստուածածին եկեղեցում (կոց. 1276)[22] Մովսէսը «*սրբամիտ, հեզահոգի եւ բարելի*» մահտեսի Երեմիա[23] միայնակեացի խնդրանքով ի յիշատակ վերջինիս ծնողներ Ապաւինի եւ Սալվինազի, 1647ին նորոգում է ոմն Խոնտքարի պատուէրով 1490ին Ալեքսիանոս Աբեղայի՝ Գարդմանքի Խորոտիք վանքում գրչագրած «Աւետարան»ը *(թերթ՝ 324, գրութիւնը՝ երկսիւն, բոլորգիր, փող՝ 20, մանրանկարչութիւնը՝ աւետարանիչ 4: Պահպանակ՝ մագաղաթ 4, կազմը՝ կաշեպատ փախտակ դրոշմազարդ՝ խաչով, կոստղապատ, աստառը՝ դրոշմազարդ կտաւ)*[24]:

Բնագրի վերջում ազդարարելով ձեռագրի նորոգման աւարտի մասին, Մովսէսը յիշատակարանում թողել է բանաստեղծական ջերմ շնչով գրուած 44 տողից բաղկացած մի չափածոյ, որում իր ծննդավայրը մատնանշում է ներկայիս՝ Գորիս գրելաձեւով: Ահա չափածոյի այդ հատուածը.

Նորոգեցաւ յայսըմ փառի,
Եւ ի գանձի աստուածային,
Որ յորջորջեալ եւրս կոչի,
Աւետարան փեառն Յիսուի:
Ձեռամբ փծուն մեղսամածի,
Եւ ի չընչին քարտօղարի,
Եւ լոկ անուամբըն յիրիցուի,
Մովսէս *գրոպ զանարժանի:*
Որ եմ բնական ի յերկըրի,
Ձագաձորոյն *ի* Գորիսի,
Եւ եմ բնակեալ յօտարեկելի[25],
Եւ ի յերկիրըն Ծարայի:
Մայրաքաղաքըն[26] Սոթէի,
Չի եմ ծառայ Սբ. Մաշտոցի,
Է կապարող խընդըրուածի,
Եւ հովանի ամէն տեղի[27]:

Վերը նշեցինք, որ Գորայք-Գորիսի տեղահանուած բնակչութիւնը բռնել էր նաեւ մօտակայ Արցախ տանող ճանապարհը: Լեռնաշխարհի Ապաւէն գիւղում ապաստանելը հանգամանօրէն, յուզական գրաւիչ շեշտերով ու խոր կսկիծով է նկարագրում Մովսէսը, այս անգամ արդէն 1652ին Ապահէն գիւղի դպրատանը համաչափ ու մանր բոլորգրով ընդօրինակած, ծաղկած եւ միաժամանակ կազմած «Շարակնոց»ի (*թերթ՝ 406, նիւթը՝ թուղթ, մեծութիւնը՝ 12,2x9, գրութիւնը՝ միասիւն, տողերի քանակը՝ 19-20, կազմը՝ կաշեպատ փախրակ դրոշմազարդ, ասրառը՝ դրոշմազարդ կրկաւ, մանրանկարչութիւնը՝ կիսախորան, կազմը՝ կաշեպատ սրուարաթուղթ՝ մեփաղեայ խաչով*)[28] գլխաւոր եւ ընդարձակ յիշատակարանում, որում փաստացի տեղեկութիւններ են հաղորդուում ժամանակի իրադարձութիւնների, մասնաւորապէս՝ Գորայք-Գորիսին պարսից իշխանութիւնների կողմից պատուհասած աղէտի մասին:



Ծար գաւառի Սոթք մայրաքաղաքում 1647ին Մովսէս Երէցի նորոգած «Աւետարան»ի (1490) կազմի Ա. փեղկ
Մովսէս Երէցի ինքնագիր ձեռագիր յիշատակարանը (321բ-322ա), ՄՄ, ձեռ. Հ^փ 8135

Թախծով լեցուն եւ խորունկ վշտով է գրուած հեղինակի հայրենի գիւղի աւերման ու գաղթի նկարագրութիւնը: Ստորեւ կը մէջբերենք այդ յիշատակարանի պատմական մասից ընդարձակ եւ պերճախօս հատուած, որն իր բնոյթով միակ սկզբնաղբիւրն է այս իրադարձութեան մասին: Դառնալով գրչութեան հանգամանքներին՝ Մովսէսը մանրամասնում է.

> Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղապարտ Մովսէս սուտանուն իրիցոյ, որ եմք բնական ի յերկրէն Ղափանայ, ի միւս երկրէն Ծագաձորոյ, ի գեղջէն Գորիսոյ, զոր հասեալ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ մեր մեղացս. խօճայ մի եկեալ ի մեր գեօղն վասն զապրիշում [մետաքս - Գ. Ս.] առնելոյ, եւ սատանայ բնակեալ ի սիրտ խօճային ոչ կամեցաւ մնալն ի Գօրեսն, այլ ելեալ գնաց դէպի երկիրն Դիզակայ. եւ առաջնորդ եղեալ նմա մարդ մի այլ Դիզակայ: Եւ ի ճանապարհին ըմբռնեալ եղեն յաւազակաց, եւ առեալ ի նո[ց]անէ բազում ոսկի եւ արծաթ, զոր ունէին յինքեան /// մակին եւ զիւրեանքն սպաննեալ եղեն յաւազակացն եւ թաքուցեալ: Եւ շատ շրջեալ ընդանեացն իւրեանց եւ այլոց, ոչ կարացին յիմանալ զտեղին: Եւ ի նոցին պատճառէ եկեալ դիմեցին ի վերայ մեր եւ ասացին. հայք եւ // տաճիկք, եթէ ի յայսմ գեղջէ է գնացեալ խօճայն: Եւ ի յահէ նոցին փախըստեայ եղեալ՝ գնացաք յայլ յերկիր. եւ զյետամնացսն գեղին զոմն ի գեօղն թալանեցին եւ զոմն՝ ի ճանապարհին: Եւ ես՝ թաբօրս ի բարեաց գործոց, եկեալ հասա իյերկիրն Ծարայ, ի գեօղն որ կոչի Ապահէն[29]:

Ծար գաւառի Ապահէն գիւղում Մովսէս Երէցի ընդօրինակած եւ ծաղկած «Շարակնոց»ը (1652), կազմ՝ Ա փեղկ Կիսախորանանուանաթերթ (3ա): ՄՄ, ձեռ. Հ՝՛ 1626

Յիշատակարանը հետաքրքիր եւ ստոյգ բացատրութիւն է տալիս Գորայք-Գորիսում տեղի ունեցած **մի** աղէտալի իրադարձութեան լուսաբանման համար: Ձեռագրի բովանդակութիւնից հետեւում է, որ Դիզակ տանող ճանապարհին թուրք աւազակների կողմից ոմն վաճառական կամ էլ մահմետական պալատական պաշտօնեայ մի խոջայի սպանութեան առիթով, պարսից իշխանութիւնները, պատճառ բերելով այն անհեթեթ փաստարկը, որ եթէ խոջան Գորիսից է գնացել, ուրեմն մեղաւորը գորիսեցիներն են, ձեռնարկում են պատժիչ տմարդի գործողութիւններ՝ աւազակային յարձակման համար անհարկի կերպով վրէժ լուծելով Գորիսի խաղաղ ու անպաշտպան բնակչութիւնից: Ոչնչացման սպառնալիքի տակ բնակչութեան գրեթէ զգալի մասն՝ «ի յահէ նոցին» հարկադրաբար հեռանում է իր բնօրրանից եւ հետապնդումներից խուսափելու համար ժամանակաւորապէս հանգրուանում մօտակայ կամ հեռակայ գաւառների բնակավայրերում, իսկ գիւղը ենթարկւում է թալանի ու աւերման:

«Շարակնոց»ի յիշատակարանում գրիչը երախտիքի խօսքեր է նուիրել Դադիվանքի (Խութավանք) եւ Հայրավանքի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին, որը մեծ աւանդ է ունեցել Մովսէս Երէցի հոգեւոր-կրթական դաստիարակութեան հարցում: Ինչպէս ասւում է յիշատակարանում. *«Աստուած զիւրանն արքայութիւն տացէ եւ [ը]նդ սբ. հայրապետացն դասեսցէ, որ սա ձեռնադրեաց [անա]յրժանս, եւս առաւել շատ աշխատանք ունի ի վերայ իմ հոգեւոր, այլ եւ մարմնաւոր Աստուած զինքն անփորձ եւ անսասան պահեսցէ մինչ ի խորին ծերութիւն»*[30]: Այս յիշատակարանը Մովսէսը գրել է *«ի ժամանակս Պարսից նորընձայ* Փոքր ՇահԱպասին, *եւ ի հայրապետութեանն* Էջմիածնեա[յ] *հեզահոգի տէր* Փիլիպպոսի *բազմահանճար եւ սրբազան կաթողիկոսի, եւ ի յԱղուանից հայրապետութիւն* Գրիգորի *քաջ եւ արի կաթուղիկոսի, եւ յառաջնորդութեանն ի յայսմ ուխտի ի տէր* Ստեփաննոս *արհեպիսկոպոսի, որ է սպասաւոր եւ ժրաճան հովիւ ի սբ. Դադի վանիցն եւ Մարդաղաւնեաց Ս. Նշանին... Ի թուականութեանս Հայոց ՌՃԱ (1652) գրեցաւ, ծաղկեցաւ եւ կազմեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ...»*[31] (շարունակութիւնը բացակայում է):

ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մեծ արուեստագէտի յատկութիւն է նկարի, գոյնի, գրութեան ու գրանիւթի ներդաշնակ միասնութիւն ստեղծելը: Այդպիսին է Մովսէս Երէցը: Այդ ցոյց է տալիս վերոնշեալ «Շարակնոց»ը, որը նրա ծաղկազարդած արժէքաւոր եւ բարձրարուեստ գործերից եւ մանրանկարչական յարդարանքի հարստութեամբ հայ գրքարուեստի բացառիկ նմուշներից է: Նրանում ծաղկողը թեմատիկ մանրանկարներին՝ Յովակիմ եւ Աննա (1բ), Յարութիւն (161բ), կիսախորան (2ա, 162ա), գլխազարդ (13ա, 68բ, 130ա, 213ա, 266բ, 349ա), լուսանցազարդ (բուսական, յուշկապարիկ, տաճար, սափոր, խաչ), զարդագրութիւն (թռչնագիր եւ հանգուցագիր) տուել է պատկերագրական մի շարք ինքնատիպ լուծումներ[32]:

Մատեանի մանրանկարները Մովսէս Երէցի արուեստին, ոճին ու պատկերագրութեանը բնորոշ նմուշներ են: Ինչպէս, օրինակ, «Աւետման» տեսարանում թեւատարած հրեշտակը ծառի կոճղի մօտ գտնուող երկու հաւատացեալներին յայտնւում է երկնքից՝ Աստծոյ խօսքը հասցնելով վերջիններիս: Կոճղի վրայ պատկերուած են կաքաւի երեք ձագեր, որոնք համարւում են առաքինութեան խորհրդանիշներ: Մի քիչ վերեւում երեւում է դէպի երքեւ թռչող մոխրագոյն կաքաւ՝ բերանին ձագերի համար սնունդ: Մանրանկարը ներառուած է կարմիր գոյնով ներկուած շրջանակի մէջ:

Յայտնի է, որ մանրանկարչութեան հմայքը նրա գոյների մէջ է: Մովսէս Երէցի ստեղծագործութիւնում գերակշռում են վառ կանաչ եւ կարմիր, կապոյտ, մանուշակագոյն, դեղին, շականակագոյն, սեւ, սպիտակ գոյները: Գունային այս համադրութիւնն առանձնայատուկ հմայք է հաղորդում նաեւ սոյն մատեանին: Գունային գեղեցիկ համադրումներով են առանձնանում «անուանաթերթ», «ճակատազարդ» եւ «Համբարձում» մանրանկարները: Ձեռագիրն ունի բազմաթիւ լուսանցազարդեր: Ուշագրաւ են զարդանկարչութեան պատկերները՝ սիրամարգ, տաճար, ծաղիկ, խաչ՝ զարդանախշի վրայ, կենդանի եւն.[33]: Այս ձեռագիրը, որը վկայում է Մովսէսի բազմաշնորհ արուեստագէտ լինելու մասին, իրաւամբ կարող է համարուել նրա գլուխգործոցը:

Մովսէսը գեղեցիկ ու ճաշակով է պատկերազարդել, կազմել, փեղկին մետաղեայ ակնակուռ խաչ դրել նաեւ Մոս գիւղում Արցախի Ջրաբերդ գաւառի Մաղաւուզ գիւղից այդտեղ հաստատուած նորընծայ Թադեւոս Քհնյ. Բաղիշեցու պատուէրով՝ որպէս բարի յիշատակ իրեն ու ծնողների, 1653/54ին Հաբանդ գաւառի Խնձորեսկ գիւղից գրիչ Մարտիրոս դպիրի վայելուչ ու մանր բոլորգրով ընդօրինակուած «Աւետարան»ը *(թերթ՝ 353, նիւթը՝ թուղթ, մեծութիւնը՝ 16x11,5, գրութիւնը՝ երկսիւն, բոլորգիր, տողերի քանակը՝ 19, մանրանկարչութիւնը՝ աւետարանիչ 4, կիսախորան լուսանցազարդ, կազմը՝ կաշեպատ սրտաւարաթուղթ դրոշմազարդ, արծաթեայ խաչով, աստառը՝ դրոշմազարդ կտաւ)*[34]:

Մատեանի թեմատիկ նկարներն են Մատթէոս (8բ), Մարկոս (106բ), Ղուկաս (169բ), Յովհաննէս (270բ) աւետարանիչները, ունի անուանաթերթ-կիսախորան (9ա, 107ա, 170ա, 271ա)[35], լուսանցազարդ (բուսական, թռչուն, տաճար, խաչ), զարդագրութիւն (մարդագիր, կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր). գոյները՝ դեղին, կանաչ, կապոյտ, մանուշակագոյն, սպիտակ[36]: Ձեռագրի յիշատակարանում Մովսէսը նշում է.

> Յայսմ աստուածաշուչ տառիս ցանկացող եղեալ ի հոգւոյն սրբոյ եռացեալ սիրասնունդ եւ սրբամիտ ողջախոհ եւ սրբասնեալ տէր Թադէոս նորընծայ քահանայն, որ եւ երեր ետ զիս զանարժանս զհեքգս եւ զթշուառս զնուաստ անուն Մովսէս տրուպ եւեթ իրիցուկս եւ ես թաբուրս ի բարեաց գործոց մեղսամած մատամբս եւ կազմեցի զսուրբ Աւետարանս եւ զսակաւ յիշատակարանս ծրագրեցի[37]:

Մովսէս Երէցի պատկերազարդած յաջորդ ձեռագիրը մատենագիր Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրած եւ գրիչ Շմաւոն երէցի ընդօրինակած Յայսմաւուրքն է (1660)[38]: Ստացող՝ Պաղտասար Թութաք (*թերթ՝ 577, մեծութիւնը՝ 38x24,5, գրութիւնը՝ երկսիւն, բոլորգիր, տողերի քանակը՝ 34, կազմը՝ լաթապատ սպուարաթուղթ, մանրանկարչութիւնը՝ կիսախորան, լուսանցազարդ*)[39]: Թեմատիկ նկարներ՝ իւղաբեր կանայք եւ Գրիգոր Լուսաւորիչի դիմանկարը, կայ անուանաթերթ-կիսախորան, գլխազարդ, լուսանցազարդ (բուսական, թռչուն), զարդագրութիւն (թռչնագիր, հանգուցագիր). գոյները՝ ոսկի, կարմիր, կանաչ, նարնջագոյն, մանուշակագոյն, կապոյտ, շագանակագոյն, սեւ, սպիտակ[40]:

Ձեռագրի բուն յիշատակարանում Մովսէս Երէցը, ինչպէս նախորդ դէպքում, չի թողել որեւէ յիշատակութիւն, փոխարէնը իր պատկերած «իւղաբեր կանայք» մանրանկարի տակ թողել է մի փոքրիկ գրութիւն. «*Ձնկարող սակաւ ծաղկանցս եւ պատկերացս* զՄովսէս *յեղեռնագործ իրիցուկս աղաչեմ յիշել ի փէր միով ողորմիս. զյիշողքդ յիշեալ լիջիք զփէր Աստուծոյ, թուին ՌՃԹ (1660)*»[41]:

Մովսէս Երէցից պահպանուել է նաեւ մի գրչագրուած Յայսմաւուրք (ԺԷ. դ.)[42]: Այն, որ ձեռագիրը Մովսէսի ձեռքի աշխատանքն է՝ հաստատւում է գրչի եւ նկարների ոճական նմանութեամբ: Մատեանը ունի գլխազարդ, լուսանցազարդ (բուսական, տաճար, թռչուն), զարդագրութիւն (հանգուցագիր, թռչնագիր). գոյները՝ մանուշակագոյն, կապոյտ[43]: Ձեռագրի յիշատակարանում կարդում ենք. «*Ողորմի Քրիստոս սպացողի գրոցս* Ինքնատ *քահանային մահդասուն եւ կողակցին իւրոյ* Մինային *եւ եղկելի* Մովսէս *գծողի, ամէն: ...եւ* Մովսէս *մեղսամակարդ գրչի ամէն*»[44]:

Հ. Ղեւոնդ Ալիշանի *Սիսական* աշխատութեան մէջ Մովսէս Երէցին վերագրուող «Աւետարան»ի յիշատակարանի բովանդակութիւնը քանի որ անյայտ է մեզ, ուստի Ալիշանի տեղեկութիւնից միանշանակ չի կարելի հետեւցնել, որ մատեանի հեղինակը Մովսէս Երէցն է: Սիւնիքում գրչագրուած եւ մեզ հասած ձեռագիր յիշատակարանների ընթերցումը եւս որեւէ

վկայութիւն եւ հաստատուն հիմք չտուեց մատեանն ամբողջութեամբ Մովսէս Երէցին վերագրելու, թէեւ *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարանի* հեղինակները անվերապահօրէն նրան են համարում ձեռագրի հեղինակ[45]: Ամենեւին չժխտելով գրչի՝ գուցէեւ Մովսէսին լինելու փաստը, արձանագրենք, որ որպէս արուեստաւոր գրիչ-մանրանկարիչ վերջինիս մասնակցութիւնն այս ձեռագրում անկասկած արտայայտուել է նկարազարդմամբ, թերեւս նաեւ նորոգմամբ եւ կազմմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, Մովսէս Երէցի ձեռագրական ժառանգութեան մեզ յայտնի առաջին մատեանը թուագրւում է 1647ով, իսկ վերջինը՝ 1682ով: Յիշատակարանների ժլատ տեղեկութիւնների պատճառով չենք կարող ասել, թէ ինչպէս է ընթացել բազմաշնորհ գրիչ-ծաղկողի յետագայ ճակատագիրը եւ երբ է կնքել իր մահկանացուն:

Յիրաւի, Մովսէս Երէց Գորիսեցին դաստւում է իր ժամանակի Սիւնիքի մեծագոյն գրիչ-ծաղկողների շարքին. նա շարունակեց իր նախորդների՝ Տաթեւի վանքի ԺԷ. դարասկզբի նշանաւոր գրիչ-ծաղկողներ՝ Մազման մականուամբ Տէր Սարգսի եւ վարպետաց վարպետ Տէր Մարտիրոս Հիւզանցու գրչագրական եւ մանրանկարչական աւանդոյթները[46]: Իր ընդօրինակութիւններով եւ բարձրարուեստ զարդանկարչութեամբ, նա մեծ աւանդ ունի հայ մշակութային ժառանգութեան մէջ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Քրմագետ կամ Վերիշէն վտակը Վարարակնի ձախ օժանդակն է: Սկիզբ է առնում Աղօթաքարի լեռնանցքի Քոռ աղբիւրից եւ Վերիշէն գիւղի մօտ միախառնւում մայր գետին: Երկարութիւնը 5 կմ. է (*Հայաստանի Հանրապետութեան Ֆիզիկաաշխարհագրական Օբեկտների Համառօտ Տեղեկատու-Բառարան*, Երեւան, Գէոդէզիայի եւ Քարտէզագրութեան Կենտրոն ՊՈԱԿ, 2007, էջ 135):

[2] Համապատասխանում է ներկայիս Վերիշէն գիւղին, որը գրեթէ միացել է Գորիս քաղաքին: 2016 Սեպտեմբերից մտնում է Գորիս համայնքի մէջ:

[3] Մատենագրական աղբիւրներում մինչեւ Ժ. դարը ըստ էութեան չարտացոլուած Գորայք բնակավայրը 10 դրամ-դահեկան հարկաչափով առաջին անգամ յիշատակւում է Ստեփաննոս Օրբէլեանի *Պատմութիւն Տանն Սիսական* երկի վերջում՝ «Սիւնեաց Երկոտասան Գաւառաց Հարկք Եկեղեցւոյ Ըստ Հին Սահմանին» (գլ. ՀԹ) Տաթեւի արքեպիսկոպոսարանին հարկատու գիւղերի ցանկում (Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ-Մատենադարան (ՄՄ), ձեռ. Հ[մր] 6271, 335բ: Հմմտ.՝ Մկրտիչ Էմին, *Սրբեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական*, Մոսկուա, Տպ. Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց, 1861, էջ 375: Տեղին է նշենք, որ պատմագիտութեան մէջ վաղուց հաստատուած է, որ Օրբէլեանի հարկացուցակը կազմուել է Ժ. դարից ոչ ուշ, քանի որ նրանում Սիւնիքի բոլոր գիւղերը եւ նրանց սահմանները ներկայացուած են այդ ժամանակների դրութեամբ՝ «ըստ հին սահմանին» (Ս. Յակոբեան, *Հայ Գիւ-*

դացիութեան Պատմութիւն (Վաղ Ֆէոդալիզմի Դարաշրջան), Գիրք Ա, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1957, էջ 323. նաեւ՝ Յ. Ութմազեան, *Սիւնիքը IX-X Դարերում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1958, էջ 233-4): Հարկացուցակի մանրամասն քննութիւնը տե՛ս՝ Գ. Գրիգորեան, «Դրամական Յարաբերութիւնների Զարգացումը Սիւնիքում եւ Օրբէլեանի Հարկացուցակի Խնդիրը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1966:2, էջ 45-58:

[4] Մանրամասն տե՛ս՝ Հ. Նաջարեան, *Թուրք-Իրանական Յարաբերութիւնները XVI դ.ու XVII դ. Առաջին Կէսին եւ Հայաստանը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1961. նաեւ՝ Մ. Մալխասեան, «1606-1609 թթ. Մեծ Սովը Հայաստանում», *Բանբեր Երեւանի Համալսարանի. Հայագիտութիւն*, 2017:2, էջ 48-59:

[5] Գտնւում է կրօնամշակութային կենտրոն՝ Տաթեւի վանքին մերձակայ, հին Հալիձոր գիւղի դիմաց, Որոտան գետի աջ ափին: Կառուցուել է 1608-13ին:

[6] 1629-32 կաթողիկոս Մովսէս Գ. Տաթեւացի:

[7] Մանրամասն տե՛ս՝ Ներսէս Ակինեան, *Մովսէս Գ. Տաթեւացի. Հայոց Կաթողիկոսն եւ Իր Ժամանակը*, Վիեննա, 1936, էջ 187-223:

[8] Գրիգոր Վարդապետ, Եսայի Վրդ. Մեղրեցի, Զաքարիա Վաղարշապատցի, Իսրայէլ Վրդ. Մեղրեցի, Խաչատուր Գրիչ, Խաչատուր Վրդ. Երնջակեցի, Ղուկաս Գրիչ, Ղուկաս Վրդ. Գառնեցի, Մելիքսէթ Երէց, Մինաս Երէց, Յակոբ Վրդ. Աստապատեցի, Յովհաննէս Աբեղայ, Յովհաննէս Արք. Տաթեւացի, Ռուտակէս կամ Արիստակէս Վրդ. Շամբեցի, Փիլիպոս Աղբակեցի եւն. (Ակինեան, էջ 192-7, 213-23):

[9] Վիմագրական տուեալներով ձեռագրատները զանազան անուններ են ունեցել՝ գրատուն, նշխարատուն, նշխարախուց (Յ. Խալփախչեան, «Դպրոցներն Ու Գրատները Միջնադարեան Հայաստանում», *Էջմիածին*, 1964:Ա, էջ 25):

[10] Դաւրիժեցի, էջ 225:

[11] Տեղին է նշենք, որ Հաբանդ գաւառում գրիչների կողքին ձեռագիր մատեանների ընդօրինակմամբ աչքի են ընկել նաեւ գրչուհիները: Նրանցից էր ԺԷ. երկրորդ դարակէսին ստեղծագործած քոյր Էրինէն, որը Շինուհայրի Կուսանաց Անապատում 1673ին արտագրել է «Ատենի ժամգիրք»ը (Վ. Պետրոսեանց, «Հայրենական Մշակոյթի Պաշտպան Հայ Կանայք», *Էջմիածին*, 1981:Ժ, էջ 49):

[12] ՄՄ, ձեռ. Հ՝ 8135, 321բ:

[13] Ապահէն (այժմ՝ լքեալ) գիւղը գտնւում է Արցախի Հանրապետութեան Շահումեանի շրջանի հարաւային մասում, Եզնարածանց գիւղից 4 կմ հիւսիս-արեւմուտք՝ Դուտխու գետի ստորին հոսանքի ձախ ձորալանջին: Բնակավայրն առաջին անգամ յիշատակւում է 1214ին՝ Դադիվանքի շինարարական արձանագրութեան մէջ: Եղել է Դադիվանք-Խութաւանքի վանքապատկան գիւղ (Սիմէոն Ջուղայեցի Կաթողիկոս, *Ջամբռ. Գիրք Որ Կոչի Յիշատակարան Արձանացուցիչ, Հայելի եւ Պարունակող Բնաւից Որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, եւ Իւրոյ Շրջակայից Վանօրէից*, Վաղարշապատ, 1873, էջ 283): Գիւղը յիշատակւում է նաեւ կալուածագիր-*սիկէլներում* (*Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V, Արցախ*, կազմ.՝ Ս. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 216): ԺԳ. դ. վերջերին գիւղը հայաթափուել է: ԺԹ. դարից քրդաբնակների յորջորջումով գիւղանունը դարձել էր *Բենա*, Ի. դարասկզբից դառնալով թաթարաբնակ, յորջորջուել է՝ *Քիլիսալու* (Е. Кондратенко, *Карта Елисаветпольской Губернии с Показанием Сельских Обществ и Распледеления Населения по Вероисповедению* [Ե. Կոնդրատենկօ, Ելիզաւետպոլի նահանգի քարտէզ. գիւղական համայնքները եւ բնակչութեան տեղաբաշխումը ըստ դաւանութեան, Թիֆլիս, 1888). նաեւ՝ Մ. Բարխուտարեանց,

Արցախ, Բագու, 1895, էջ 404. նաեւ՝ Մ. Տէր-Մովսէսեան, «Հայկական Արձանագրութիւններ», *Ազգագրական Հանդէս, Գիրք XXV*:2, Թիֆլիս, 1913, էջ 79. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V*, էջ 226. նաեւ՝ Ա. Յակոբեան, «Սիսականի Կոտակ Եւ Արցախի Հարաւային Միւս Գաւառների Տեղորոշումն Ըստ «Աշխարհացոյց»ի», *Հանդէս Ամսօրեայ*, ՃԻԲ:11-12, Վիեննա-Երեւան, 2008, էջ 109-110. նաեւ՝ Ս. Կարապետեան, *Հայ Մշակոյթի Յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին Բռնակցուած Շրջաններում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999, էջ 72), որն իմաստային թարգմանութեամբ նշանակում է Եղցատեղ (Ս. Սարգսեան, *Արցախ. Պատմա-Աշխարհագրական Ճշգրտումներ*, Երեւան, «Հայ Էդիք», 1996, էջ 76): 1911ի ամռանը գիւղ այցելած Մեսրոպ Արք. Տէր-Մովսիսեանը վկայում է, որ անտաշ քարերով կառուցուած թաղածածկ եկեղեցին գտնւում էր կանգուն վիճակում (Մ. Տէր-Մովսէսեան, «Հայկական Արձանագրութիւններ», էջ 79. նոյնի՝ *Հայկական Երեք Մեծ Վանքերի Տաթեւի, Հաղարծնի Եւ Դադի Եկեղեցիները Եւ Վանական Շինութիւնները*, Երուսաղէմ, 1938, Տպ. Սրբոց Յակոբեանց, էջ 99): Եկեղեցին կանգուն է եղել նաեւ 1960 Օգոստոսին արձանագրութիւններ հաւաքելու նպատակով վիմագրագէտ Բարխուդարեանի ղեկավարութեամբ գիւղ այցելած գիտարշաւի ժամանակ (*Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V*, էջ 226): Քարվաճառի շրջանի ամենամեծ եւ գեղատեսիլ այս գիւղը 1993ի գարնանը ազատագրելուց յետոյ վերանուանուել է Ապահէն («ԼՂՀ Վարչատարածքային Բաժանման Մասին» ԼՂՀ օրէնքում փոփոխութիւններ կատարելու մասին: http://nkrcadastre.am/?p=189) . 1993ի ամռանը հնավայր այցելած յուշարձանագէտ-պատմաբան Կարապետեանը գրում է. «*Հակառակ գիւղի պատմական հարուստ անցեալին՝ այստեղ հայկական հետքեր գրեթէ չեն պահպանուել*» (Կարապետեան, էջ 72):

[14] ՄՄ, ձեռ. Հ^{մր} 1626, 406բ. նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի ժէ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., կազմ.՝ Վ. Յակոբեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 489:

[15] *Հայերէն Ձեռագրերի ժէ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 601:

[16] ՄՄ, ձեռ. Հ^{մր} 1626, 406ա-406բ. ՄՄ, Տիրայր վարդապետի արխիւ, թղթ. 120, վաւ. 1ժ, էջ 917-918:

[17] Համաձայն Մատենադարանում պահուող մի ցուցակի, ժէ. դարի երկրորդ կէսին Տաթեւի վանքի իշխանութեան մէջ մտնում էր 14 գաւառ. «*Գեղուածոր, Բաղաբերդ, Կաքաւաբերդ, Մաց, Աճանան, Դիլաբերդ, Մաղաջուղ, Բարկուշատ, Զանկազոր, Քաշաթաղ, Չաւնպուր, Ղարադաղ, Վերի Ձոր եւ Սիսիան*» (*Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, Պրակ II (1601-1650 թթ.)*, կազմ.՝ Յ. Փափազեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1959, էջ 46-7): Այդ 14 գաւառների մէջ ընդգրկուած էր 264 գիւղ (նոյն):

[18] Մինաս Աբեղայ Խոտանանցին մագաղաթեայ թղթի վրայ բոլորգրով «Աւետարան»ը ընդօրինակել է Ծղուկ գաւառի Շաղատ գիւղից ոմն Սիմէոնի պատուէրով: Մատեանը բաղկացած է 352 էջից: Գրիչը ձեռագիրն աւարտին է հասցրել 1657 Դեկտեմբերի 15ին (Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան գրադարան, ձեռ. № 893, 335բ): Ձեռագիրն ինչ-ինչ ճանապարհով յետագայում հասել է Կարին (Էրզրում): Այն այժմ գտնւում է Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյի մէջ եւ պահւում է 893 համարի ներքոյ: Մատեանը Վիեննայի Մխիթարեան Միաբանութեանն է նուիրել Հայր Օ. Ամրիկ-

եանը՝ 1911ին, Կարինից՝ Գերապատիւ Գրիգոր Վրդ. Գովրիկեան Աբբահօր քահանայութեան յիսնամեայ եւ Վիեննայում Մխիթարեան Միաբանութեան հաստատման հարիւրամեայ յոբելեանների առթիւ (Մխիթարեան Միաբանութեան Գրադարան, ձեռ, № 893, 3ա): «Աւետարան»ի նկարագրութեան մէջ Մովսէս երէցի մանրանկարչութեան արուեստի մասին Հայր Համազասպ Ոսկեանը գրում է. «*Զարդագիրք՝ սիրուն: Խորանք՝ գոյնզգոյն, լաւ: Լուսանցազարդք՝ շատ, գոյնզգոյն եւ բաւական յաջող: Նկարք՝ Մատթէոս, Յովհաննէս, բաւական յաջող, բայց գունաթափ*» (*Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին Ի Վիեննա, Հտր. Բ.*, կազմ.՝ Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1963, էջ 475): Մատեանի աւետարանիչների եւ յիշատակարանի էջերի պատճէնները սիրով մեզ է ուղարկել Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր Հայր Պօղոս Ծ. Վրդ. Գուճանեանը, որին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը:

[19] Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Գրադարան, ձեռ. Հփ 893, 4ա. նաեւ՝ *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին Ի Վիեննա, Հտր. Բ.*, էջ 477. նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի ժէ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր. Գ.*, էջ 755:

[20] Հայր Ղեւոնդ Ալիշան, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 262:

[21] Սոթքը (Սաւդք) եղել է Սիւնեաց նահանգի գաւառներից. գտնւում էր Սեւանայ լճի արեւելեան մասում եւ Տրտուի վերնահովտում (Ս. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»ի, (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ)*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 109, 117): Գաւառակենտրոնն էր Սեւանայ լճի հարաւարեւելեան ուղղութեամբ, Արցախի եւ լճի աւազան ջրբաժան բարձունքներում, Դուին-Պարտաւ ճանապարհի գլխաւոր հանգրուանում գտնուող Սոթք գիւղաքաղաքը (այժմ՝ գ. Սոթք): Խաչէնի տէր Սահլ Սմբատեանի իշխանութեան վերջին տարիներին (820-30ականների սկզբներ), Սոթքի տարածքը միացուել է վերջինիս իշխանութեան մէջ գտնուող Սիսականի Ոստան կամ Սիսականի Կոտակ, յետագայում Ծար անունը ստացած գաւառին եւ ընկալուել է իբրեւ մէկ ամբողջութիւն: Ըստ Վարդան Արեւելցու՝ «Սոթից գաւառն Ծարայ երկիրն է» (*Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի*, քննական հրատ.՝ Հ. Պէրպէրեան, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Փարիզ 1960, էջ 12): Դրանից յետոյ Տրտուի վերնահովիտը սկսում է կոչուել ոչ միայն *Ծար* եւ *Վերին Խաչէն*, այլ նաեւ *Փոքր Սիւնիք* (Մ. Սմբատեանց, *Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ Գաւառի, Որ Այժմ Նոր-Բայազիւր Գաւառ*, Վաղարշապատ, Տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1895, էջ 593. նաեւ՝ Ս. Բարխուդարեան, «Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի Իշխանութիւնները IX-X դդ.», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1971:1, էջ 72. նաեւ՝ Սարգսեան, էջ 30-41. նաեւ՝ Յակոբեան, «Սիսականի Կոտակ եւ Արցախի Հարաւային», էջ 116. նաեւ նոյնի՝ «Պատմա-Աշխարհագրական եւ Վիմագրագիտական», էջ 266-74): Ծար գաւառի Թադէի վանքի միաբան Յովհանիսիկ Ծարեցին իր ուսուցչի՝ Յովհաննէս Ծարեցու մահուան առիթով գրում է. «*Ի սոյն (1583) թուականի եղեւ վախճանք մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերոյ Յոհաննիսի: Եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ, Փոքր Սիւնիս կոչեցեալոյ, ի վանից Թադէի Սուրբ յԱռաքելոյն...*» (*Մանր Ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., Հտր. Բ.*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1956, էջ 244):

Այնուհետեւ մինչեւ ԺԳ. դարը Սոթքը պատկանել է Ծարում իշխող Սահլ Սմբատեանի տոհմաճիւղին, ԺԳ.-ԺՋ. դարերին՝ Դուփեաններին, ԺՋ.-ԺԸ. դարֆերին՝ Մելիք-Շահնազարեաններին: Խորհրդային իշխանութեան տարիներին, երբ պատմական Ծար կամ Վերին Խաչէն գաւառը բռնակցուեց Ադրբեջանի Հանրապետութեանը, 1930 Օգոստոսի 8ին կազմաւորւում է *Քեալբաջար* (Քարվաճառ հայաթափ գիւղի անունով) վարչական շրջանը: Ադրբեջանական տիրապետութիւնից շրջանն ազատագրուել է 1993ի գարնանը: Ապրիլի 3ին ազատագրուել է վարչական կենտրոն Քարվաճառը (Սարգսեան, էջ 73. նաեւ՝ Կարապետեան, էջ 13):

[22] Սմբատեանց, էջ 625:

[23] Երեմիայի աւազանի անունը եղել է Եդկար, ուխտագնացութիւնից յետոյ կնքուել էր հինկտակարանեան չորս մեծ մարգարէներից մէկի անունով (*Հայերէն Ձեռագրերի ԺԷ Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ, էջ 262):

[24] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Բ, կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ձէյթունեան, Փ. Անթաբեան, խմբ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մնացականեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 680:

[25] Նշենք, որ յիշատակարանն առաջին անգամ հրատարակող Յակոբեանի մօտ թիւրիմացաբար բաց է թողնուած սոյն տողը, իսկ դրա փոխարէն կրկնուած է «*Եւ ի յերկիրըն Ծարայի*» տողը (*Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 261):

[26] Հայկական աղբիւրներում իշխանանիստ Սոթքը յիշատակւում է որպէս քաղաքագիւղ, գիւղաքաղաք, աւան, նոյնիսկ մայրաքաղաք (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 2*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 313):

[27] ՄՄ, ձեռ. Հ՟ր 8135, 321բ: Համմտ.՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 261:

[28] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Ա., կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ձէյթունեան, Փ. Անթաբեան, խմբ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մնացականեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1965, էջ 595:

[29] ՄՄ, ձեռ. Հ՟ր 1626, 406ա-406բ: Համմտ.՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 488-9. նաեւ՝ *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Ե., կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, «Նայիրի» Հրատ., ԵՊՀ Հրատ., 2009, էջ 682:

[30] ՄՄ, ձեռ. Հ՟ր 1626, 406բ., նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 489:

[31] Նոյն:

[32] Նոյն:

[33] Նոյն, 2բ. նաեւ՝ Ա. Գէորգեան, *Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն. IX-XIX դդ.*, Գահիրէ, 1998, էջ 450. նաեւ՝ Մ. Յարութիւնեան, *Մշակութային Կեանքն Արցախում 1639-1736 թթ.*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2018, էջ 115-6:

[34] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Ա., էջ 1056:

[35] ՄՄ, ձեռ. Հ՟ր 3647:

[36] Նոյն. նաեւ՝ Գէորգեան, էջ 450:

[37] ՄՄ, ձեռ. Հ՟ր 3647, 342բ. նաեւ՝ Գէորգեան, էջ 450:

[38] Ձեռագրի գրչութեան վայրը նշուած չէ: Հաւանաբար այն գրուել է Տաթեւի վանքում:

[39] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր. Բ.*, էջ 272:

[40] ՄՄ, ձեռ. Հ՟ր 6220, 1ա, 1բ, 2ա, 202ա, 264ա. նաեւ՝ Գէորգեան, էջ 451:

[41] ՄՄ, ձեռ. Հ՟ր 6220, 1բ. նաեւ՝ Գէորգեան, էջ 451:

[42] Ձեռագրի գրչութեան վայրը նշուած չէ:

[43] Մատենադարան, ձեռ. Հ՟ր 7495, 9ա, 126բ, 194ա, 205բ, 263բ, 265բ, 273բ. նաեւ Գեւորգեան, էջ 617:

[44] Մատենադարան, ձեռ. Հ՟ր 7495, 17ա, 130ա, տե՛ս նաեւ Գեւորգեան, էջ 617:

[45] Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 5*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 32:

[46] *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1601-1620 թթ.), Հտր. Ա.*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, էջ 654:

THE MANUSCRIPT/SCRIPTURAL LEGACY OF MOVSES YERETS KORISETSI IN THE 17TH CENTURY

(Summary)

GEVORG STEPANYAN
sasun-07@mail.ru

The educational and cultural revival initiated by Movses Datevatsi in the monastery of Harants or Suniats Medz Anabad spilled over into the region as of the early 17th century, particularly in the art of manuscripts. One of the areas influenced by this wave was Korayk-Koris, which was located in the valley of Tsaketsor. Indeed, the art of manuscripts developed to such an extent from the 1720s to 1770 that Koris-Korayk became a unique center renowned for its illuminators and scribes.

The article focuses on one of the most talented illuminators and scribes of Korayk-Koris, Movses Yerets Korisetsi. The author examines the books Movses Yerets copied and illuminated, describes and evaluates them and constructs his biography and life, putting together the very scant information that Movses Yerets had noted on the margins of his copied books and their colophons.

ՋԱՆՖԻԴԱՅԻ 924 ԹՈՒԱԿԻՐ ԽԱՉՔԱՐԸ
(ՀՀ ԱՐՄԱՒԻՐԻ ՄԱՐԶ)

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ars.vimagraget@gmail.com

ՄՈՒՏՔ

Միջնադարեան Հայաստանի պատմութեան ուսումնասիրման համար հաւաստի սկզբնաղբիւրներ համարուող վիմական արձանագրութիւնները մեծաթիւ են ինչպէս բուն Հայաստանում, այնպէս էլ գաղթօճախներում: Վիմագրերի ընդօրինակման եւ գիտական ուսումնասիրման աշխատանքներն սկզբնաւորուել են դեռեւս նախորդ դարասկզբից՝ ակադեմիկոսներ Նիկողայոս Մառի (1865-1934) եւ Յովսէփ Օրբելու (1887-1961) նախաձեռնութեամբ, որոնց մշակած սկզբունքների հիմամբ վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանը (1898-1970) կեանքի կոչեց «Դիւան Հայ Վիմագրութեան» մատենաշարը: Բարխուդարեանի եւ նրա սաների կողմից մինչ օրս կազմուել եւ հայագէտների սեղանին է դրուել մատենաշարի տասը պրակ[1], սակայն, փաստ է, որ հրատարակուած նիւթը գործի միայն մէկ մասն է. դեռեւս բազմաթիւ վիմագրեր սպասում են իրենց հետազօտողներին:

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի վիմագրութեան բաժինն այսօր եւս շարունակում է Բարխուդարեանի «դիւանակազմութեան» սկզբունքներով արձանագրութիւնների ընդօրինակման եւ հրատարակման առաքելութիւնը: Դեռեւս անտիպ են Արագածոտնի, Կոտայքի, Արմաւիրի, Արարատի մարզերի վիմագրերն ամբողջացնող հատորները: Պէտք է համալրուեն եւ լրացուցիչ պրակներով հրատարակուեն նաեւ Սիւնիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տաւուշի մարզերի, ինչպէս նաեւ Արցախի մի շարք բնակավայրերի ցարդ չուսումնասիրուած հարիւրաւոր արձանագրութիւններ:

Վերջերս մեր հեղինակութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրատարակուեց Վաղարշապատի վանքերի վիմագրերն ամբողջացնող ուսումնասիրութիւնը, որտեղ քննութեան է առնուած աւելի քան 700 արձանագրութիւն (500ից աւելին առաջին անգամ դրուեց գիտական շրջանառութեան մէջ)[2]: Վաղարշապատի վիմագրական հարուստ նիւթը հող նախապատրաստեց նաեւ Արմաւիրի մարզի վիմագրերն ընդգրկող *Դիւանի* կազմութեան համար, ինչին էլ միտուած էր 2016 մեր առաջին գիտարշաւը՝ մարզի գիւղական համայնքներում:

Մեր այդ արշաւի ժամանակ էլ յայտնաբերեցինք Ժ. դարի արձանագրութեամբ մի խաչքար, որ այստեղ դնում ենք գիտական շրջանառութեան:

ԽԱՉՔԱՐԸ

Արմաւիրը (նախկին՝ Հոկտեմբերեան) եւ նրա շրջակայ գիւղերը գրեթէ զուրկ են միջնադարեան յուշարձաններից: Շրջանի եկեղեցիներն ու սրբավայրերը հիմնականում թուագրւում են ԺԹ. դարով կամ նախորդ դարասկզբով, հետեւաբար՝ վաղ թուագրմամբ արձանագրութիւն, գոնէ այս տարածաշրջանից, չէինք ակնկալում: Սակայն, Ջանֆիդա գիւղից 2 կմ արեւելք գտնուող «Խաչքարի Դաշտ» կոչուող հանդամասի՝ 1970ականներին կառուցուած մատռանման շինութեան ներսում յաջողուեց վաւերացնել 924 թուակիր մի վայելուչ ու արձանագիր խաչքար:

Խաչքարի քանդակազարդ նիստը եւ գրչանկարը

ՅՀԳ. (924) ԹՎԱ/
ԿԱՆԻՆ ԿԱՂՆՒԿ/
ՆԵՑԻ ՋԽԱՉՍ:

ԵՍ՝ ԳՈՐԳ ⌈ՔԱ⌋/
ՀԱՆԱ, Ի ԲԱՐ⌈ԵՆ⌋/
ԽԱԽՍՅՈՒԹԻՒՆ/
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ:

Խաչքարի եւ նրա գտնուելու վայրի մասին առաջին յիշատակութեան հանդիպել ենք ՀՀ Պատմութեան եւ Մշակոյթի Անշարժ Յուշարձանների պետական ցուցակում, որտեղ կոթողը թուագրուած է Թ.-ԺԱ. դդ.[3], իսկ վերջերս հրատարակուած *Հայաստանի Հանրապետութիւն* ստուարածաւալ պատմական հանրագիտարանի Ջանֆիդա գիւղի նկարագրութեան համապատասխան բաժնում գտանք նաեւ նոյն ժամանակաշրջանով թուագրուած այս խաչքարի լուսանկարը[4]: Մեր պրպտումները պարզեցին, որ խաչքարին ծանօթ է եղել նաեւ վիմագրագէտ Աբրահամ Շահինեանը, որն իր միջնադարեան կոթողային յուշարձաններին նուիրուած

պատկերագրքում ներկայացնում է դեռեւս բացօթեայ կանգնած խաչքարի լուսանկարն ու արձանագրութեան վերծանութիւնը՝ որոշ տարընթերցումներով[5]: Շահինեանը եւս հաստատում է, որ «*Արարատեան դաշտում, առհասարակ, քիչ են պահպանուել հայկական հնագոյն կոթողներ ու խաչքարեր*»[6]: Քննութեան ենթակայ խաչքարի գիւտը կարեւորւում է յատկապէս այս տեսանկիւնից, յետոյ միայն՝ քանդակային-յօրինուածքային ու հնագրական յատկանիշներով:

Խաչքարն այժմ գտնւում է մի նորակառոյց փոքրաչափ շինութեան ներսում՝ պատին կից: Արեւելեան կողմում կառուցուած է եռակամար յօրինուածքով փոքր խորան, ուր հաւատացեալներ եւ ուխտաւորներ սուրբ գրքեր եւ սրբապատկերներ են դրել: Տեղացիների վկայութեամբ՝ խաչքարը պատահականօրէն գտնուել է շրջակայ հանդամասից՝ հողագործական աշխատանքների ընթացքում. այն կանգնեցուել եւ 1970ականներին տեղում աղօթատուն է կառուցուել:

Առաջին խաչքարերի աստիճանական զարգացումը. խաչքարային մանրամասներ (Գառնի՝ 879, Դաշտադէմ՝ 882, Ջանֆիդա՝ 924)

Կոթողի չափերն են.- բարձրութիւնը՝ 0,97 մ, լայնութիւնը՝ 0,68 մ, հաստութիւնը՝ 0,35-0,40 մ: Բազալտէ քարի մակերեսը բոլորում է ելնդաւոր անզարդ եզրագօտին, իսկ բուն յօրինուածքը, որի կենտրոնում երկբլթակ կամ գնդիկաւոր թեւերով աւարտուող ու ակօսաւոր կրկնագծերով հիմնախաչն է, ստացուել է լայնակօս փորագրման կամ ետնախորքը լայն շերտերով հեռացնելու միջոցով: Ստորին ուղղահայեաց խաչաթեւից սկիզբ առնում եւ մինչեւ հորիզոնական թեւերն է ձգւում լայնատերեւ արմաւազարդը՝ դարձեալ ակօսաւոր եզրագծերով: Ակներեւ է, որ թուարկուած բոլոր բաղադրիչները բնորոշ են խաչքարերի առաջին՝ Թ.-Ժ. դարերի խմբին[7]:

Վիմագրութեան նմուշներ.
Ջանֆիդա՝ 924, Երերոյք՝ 951, Դաշտադէմ՝ 975

Թէ ո՛ր ուղիով շառխին մտած է Նոր Նախիջեւան՝ ստուգելի է, մանաւանդ նկատել պէտք է, որ այս շրջանին բնակչութեան մեծ մասը գաղթած է ժամանակին Ղրիմէն եւ մինչեւ մեր օրերը կը խօսի արեւմտահայերէնի՝ Նոր Նախիջեւանի, իմա՝ Ղրիմի բարբառով:

Շառխի նուագարանի անունով «**շառխըճի**» կը կոչէին աշուղները, որ կը նշանակէր «շարխի»ի վրայ նուագող-երգող: Անոնք կ'երգէին խմբովին եւ առանձինն՝ խնճոյքներու ժամանակ, ուխտի ժամանակ՝ եկեղեցիներու բակը, «կոխ» ըմբշամարտի հաւաքոյթներու ժամանակ, նաեւ կը շրջէին տուները, կ'այցելէին հայոց գիւղերը եւ բոլոր հայաբնակ վայրերը ուր կը բնակէին նորնախիջեւանցիք[83]:

Ամենուրեք ժողովուրդը սիրով կ'ընդունէր զանոնք, որովհետեւ սիրուած անձնաւորութիւններ էին: Քաղաքացիները դրամով կը վարձատրէին զանոնք, խոշոր «շապաշ»ներով, իսկ գիւղացիները ցորեն կու տային[84]:

Շառխըճիներուն մէջ մեծ հռչակ ունեցած է Աղապալին: Ան ապրած ու գործած է անցեալ դարու կէսերէն մինչեւ 1880: Յօրինած է երգեր, որոնցմէ «Սամաւարի Երգը» մինչեւ օրս թէ՛ Նոր Նախիջեւանի եւ թէ՛ շրջակայ հայկական գիւղերուն մէջ կ'երգեն մեծ ուրախութեամբ: Աղապալիի մասին գովասանքով կը վերաբերին զինք անձամբ ճանչցած Ռափայէլ Պատկանեանը եւ Յարութիւն Խատանեանը իրենց երկերուն մէջ[85]:

Շառխըճիներու արուեստը աստիճանաբար դադրելով պատճառ դարձած է որ շառխին ալ անհետանայ:

Ներկայիս, պահպանուած է շառխիի շարխիի միայն մէկ օրինակ, այն ալ՝ ԺԹ. դարու: Այս գործիքը այժմ կը գտնուի Ջելաուխեան ընտանիքի քով, որ շրջանիս զուռնայի եւ պորոզայի պատրաստման, պահպանման ու կատարելագործման լաւագոյն վարպետներն են[86]:

ԱՂԵՂՆԱՅԻՆ ԲԱՄԲԻՌԸ

Նախախորհրդային շրջանին, հայկական աւանդական երաժշտական խումբերը այսպէս-կոչուած սազանդարական նուագախումբերն էին: Սազանդարական նուագախումբերու կազմը եղած է փոքր՝ մէկ թառ, մէկ քամանչա, մէկ դափ եւ մէկ նաղարայ, ուր դափահարը միաժամանակ խումբի երգիչն էր: Փողայիններու պարագային կազմը եղած է կա՛մ երկու զուռնա եւ մէկ դհոլ՝ երբ բացօթեայ կը ներկայանային, կամ երկու դուդուկ եւ մէկ դհոլ կամ դափ՝ երբ փակ տեղ կը նուագէին: Իւրաքանչիւր խումբ կը կոչուէր իր վարպետին անունով, ելոյթներու մշտական վայր ունէր՝ սրճարան կամ ճաշարան, եւ հարկաւ՝ իր լսարանն եւ ունկնդիրները: Այս երաժիշտները

միշտ կը հրաւիրուէին խնճոյքներու, տօնահանդէսներու եւ հարսանիքներու, ծննդեան ու մահուան հանդիսութիւններու եւն.:

Խորհրդային կարգերու հաստատումով, մեծ թափ ստացան արուեստները, ի միջի այլոց՝ ժողովրդական երաժշտութիւնը:

Սկիզբը բուռն վէճ եղաւ, ոմանք դէմ էին աւանդական նուագարաններու օգտագործման, զորս կ'անուանէին «պրիմիտիւ» (примитив, primitive), ո՛չպիտանի նոր կառուցուող հասարակարգին: Այս ուղղութիւնը բարեբախտաբար յաջողութիւն չունեցաւ եւ ժողովրդական գործիքները մնացին իրենց տեղը: Աւելի՛ն, կազմուեցան նոր խումբեր, որոնք նախ ելոյթ ունեցան գիւղական վայրերը եւ աստիճանաբար քաղաքներու մէջ՝ գործարաններ, դպրոցներ, ուսումնական հաստատութիւններ եւն.: Այս շարժումը ժողովրդական նուագախումբերը մղեց դէպի համերգային բեմահարթակ, աւելի լայն զանգուածներու «սպասարկման» համար:

Բայց թատերական բեմերուն արժանանալու համար պատշաճեցումներ անհրաժեշտ էին: Հնչողութեան պահանջները առաջնահերթ դարձան՝ մեծ բազմութիւններու առջեւ ելոյթ ունենալու համար: Խնդիրը լուծուեցաւ խումբերու կազմի քանակի ընդարձակումով: Միաձեւութենէ խուսափելու միջոց մը դարձաւ գունային երանգաւորումը, որուն համար սկսան քով-քովի հանդէս գալ նուագարաններ, որոնք երբեք միասին չէին հնչած (թառի եւ քամանչայի քով՝ դուդուկները, աշուղներու մենաշնորհ սազերը, գիւղական շրջապատի յատուկ շուին, բլուլը, պարկապզուկը): Դհոլը դարձաւ տիրող իր հզօրութեան պատճառով, դափը՝ երկրորդական:

Այսպէս կազմաւորուեցան այնպիսի մեծ խումբեր, ինչպէս Թաթուլ Ալթունեանի Անուան Հայկական Երգի-Պարի Պետական, եւ Հայաստանի Հեռուստատեսութեան եւ Ռադիոյի Ժողովրդական Գործիքների համոյթները (ներկայիս Արամ Մերանգուլեանի Անուան) եւն.:

Երաժշտական գործիքներն ալ, իրենց կարգին, փոփոխութիւններու ենթարկուեցան, մանաւանդ համաչափ հաւասարեցուած լարուածքի[87] կիրառմամբ, որ հայկական երաժշտութիւնը դասական ձեւով ներդաշնակելու հնարաւորութիւնը կու տար: Այստեղ է, որ 1950ականներուն, հայկական ժողովրդական գործիքներու մեծածաւալ նուագախումբերը, դասական օրէնքներով ներդաշնակելու համար, թաւ հնչիւններու կարիքը զգացուեցաւ: Ամենայարմար նուագարանը այս պակասը լրացնելու համար դասական թաւջութակն էր, բայց որեւէ մէկը պատշաճ չէր գտներ թաւջութակը տեղադրել թառի, քամանչայի կամ սազերու ու քանոններու քով: Թէ՛ երաժիշտները եւ թէ՛ նուագարանագործները, ինչպէս նաեւ երաժշտական ասպարէզի զանազան գործիչները շատ լաւ գիտէին, որ թաւ հնչիւններ ունեցող հայկական որեւէ գործիք գոյութիւն չունէր, բայց միաժամանակ բոլորը տեղեակ էին 1920ականներու Վարդան Բունիի աշխատանքներուն՝ այդ ուղղութեամբ:

Բունի նպատակ ունէր ստեղծել «ժողովրդական սիմֆոնիկ» նուագախումբ: Ան ստեղծած էր հայկական աւանդական երաժշտական գործիքներու «ընտանիքներ»՝ սիմֆոնիկ նուագախումբի զանազան ձայնածաւալ ունեցող նուագարաներու անհրաժեշտութիւնը բաւարարելու համար: Ի միջի այլոց, Բունի ստեղծած էր թաւ քամանի եւ թաւ քամանչա:

Թաւ հնչիւններով գործիքի փնտռտուքը սկսաւ պատասխանատու մարմինի մը հրահանգով: Ըստ հանրածանօթ քամանչահար եւ նուագարանագործ Մարտին Խաչատրեանի բանաւոր տեղեկութիւններուն, գործին լծուեցան ինք եւ հայկական ժողովրդական երաժշտութեան խումբ մը կարկառուն դէմքեր՝ Մանուէլ Բեգլարեան, Խաչատուր Աւետիսեան, Արամ Մերանգուլեան, Ծովակ Համբարձումեան, Ստեփան Ջրբաշեան, Արմէն Մանդակունեան եւ ուրիշներ:

Յարմար նուագարան գտնելու ընթացքը յանգեցաւ թաւջութակի կիրառման, բայց գործիքին արտաքինը ենթարկուեցաւ խիստ «դիմայարդարման», որպէսզի չզգացուէր որ թաւջութակը ծառայած էր իբրեւ ելակէտ[88]: Թէեւ բոլորն ալ գիտէին Բունիի թաւ քամանիին մասին, նուագարանագործները այս գործիքը փրկելու տեղ սկսան երեւակայական ձեւերով նուագարաններ ստեղծելու մրցավազք մը: Վերոյիշեալ Մարտին Խաչատրեանը, Մարտին Երիցեանը, Հրանդ Շտիկեանը, Օննիկ Գալստեանը եւ ուրիշներ իւրայատուկ գործիքներ ստեղծեցին: Նոր նուագարանը մկրտեցին «բամբիռ» անունով, հետեւելով այն կարծիքին, որ այս բառը կը ծագի գրաբարի «բամբ» արմատէն եւ այն կարծեցեալ իրողութեան, որ այսօր ոչ ոք գիտէ այդ նուագարանին ինչպիսին ըլլալը: Միայն Ծովակ Համբարձումեանը ընդդիմացաւ, պնդելով որ պէտք էր Բունիի «թաւ քամանի» անունը պահպանել: Այսուամենայնիւ, «բամբիռ» յորջորջումը մնաց ի զօրու:

Մարտին Խաչատրեան կը խոստովանէր, թէ ինք հետեւած է Բունիի գործերուն[89] բայց մինչեւ օրս բոլոր ստեղծուած «բամբիռ»ները, ներառեալ իրը, այնքան տարբեր են աւանդական քամանիէն եւ Բունիի վերափոխուած քամանիներէն, որ այս անունը կիրարկելը նոյնպէս բռնազբօսիկ կը թուի:

Բամբիռը շուտով մտաւ երաժշտական ուսումնարանները, Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի ժողովրդական գործիքներու բաժինը: Կարճ ժամանակ ետք, արդէն վարպետ կատարողներ կային ամենուրեք: Պարզ է որ որեւէ թաւջութակահար նաեւ լաւ բամբռահար է, որովհետեւ գործիքին չափերը, լարուածքը, ձայնածաւալը, գործիքը նուագելու համար մարմնի պահուածքը եւ վերջապէս աղեղը գործածելու ձեւը չեն տարբերիր:

Բամբիռը նուագելու համար կատարողը, նստած՝ աթոռի մը ծայրը, նախ գործիքի յենածողը յենելով գետնին, ծունկերով կը գրկէ նուագարանի կողամասերը: Յետոյ քիչ մը թեքելով զայն դէպի ետեւ կը կրթնցնէ իր կուրծքին, որով գործիքը կ'անշարժանայ:

Բամբիռի աղեղն իր կազմութեամբ չի տարբերիր դասական թաւջութակի աղեղէն: Աղեղը բռնելու ձեւն ալ կը համապատասխանէ նախորդին, կատարողի ձեռքը կը դրուի աղեղնափայտի վրայ՝ վերէն: Նկատի ունենալով գործիքին անշարժ վիճակը, աղեղի անցումը մէկ լարէն միւսը կ'իրականանայ շարժման միջոցաւ, որ տեղափոխուելով փափաքած լարի վրայ, նոյնիսկ ցատկոտելով մէկէն միւսը կը կատարէ այսպէս կոչուած «աղեղի խաղը»:

Աստիճանաբար այս գործիքին համար տարածուեցաւ «Մեծ Բամբիռ» անունը, որովհետեւ մասնագէտները ստեղծեցին երկրորդ նուագարան մը, որ կը կատարէ ալթի դերը եւ կոչուեցաւ «Փոքր Բամբիռ»: Թէեւ արտաքինով երկու գործիքները շատ նման են, փոքր բամբիռի վիճակը բոլորովին այլ է: Նուագարանին երկար յենաձողը յենելով գետինը, գործիքը կը ստանայ ուղղահայեաց դիրք, կատարողի մարմինէն հեռու, ազատ վիճակի մէջ: Այս դիրքը կարելիութիւն կու տայ գործիքի շարժումը իր առանցքին շուրջ, այսպէսով՝ լարէ լար աղեղի անցումը կը կատարուի նուագարանի շարժմամբ, «պտտման» շնորհիւ, եւ ոչ թէ «աղեղի խաղերու», ճիշտ ինչպէս քամանչայի պարագային: Աղեղը բռնելու եղանակը բնորոշ է Արեւելքի ոտնադիրք աղեղնայիններուն, այսինքն՝ ձեռքը տեղադրուած է աղեղնափայտի տակ եւ մատներու օգնութեամբ կը կատարէ մազերու պրկման կարգաւորում: Աղեղի կառուցուածքը չի տարբերիր ժամանակակից քամանչայի աղեղէն: Այս առանձնայատկութիւնները փոքր բամբիռը կը դասեն արեւելեան տիպի գործիքներու շարքին եւ կտրուկ կը հեռացնեն զայն իր անուանակից մեծ բամբիռէն:

Օննիկ Գալստեան իր սարքած փոքր բամբիռով



Վարդան Բունիին ստեղծած թաւ քամանին «Бас-челло кямани» այսինքն "Bas-cello kyamani" վերնագիրով (չափագրութիւն, լարուածք, ձայնածաւալ եւն.): Իր կողմէ պատրաստուած նախագիծի բնօրինակը

Այսօր, աղեղնային բամբիռը բաւական գործածական դարձած է, ունենալով հիմնական դեր: Նորայր Դաւթեան[90] այսպէս կ'ամփոփէ երեւոյթը.

... այս պահին նուագախմբերում եւ անսաբլներում կարծես [բամբիռը] մերանի դեր է կատարում, ծուլում է ամբողջ ինչողութիւնը՝ թառերի, քամանչաների, քա-

նոնների եւ մնացած նուագարանների: Նուագախմբերի, ուրեմն ինչողութեան մէջ, ծոլող համախմբող դերակատարում ունի[91]:

Պատշաճ չէ նորաստեղծ օրինակները մկրտել հազարամեակներու հնութեամբ նուագարաններու պատմական անունով եւ անորոշութեան աղբիւր դառնալ: Խնդիրի կիզակէտը նոր նուագարաններու յառաջացումը չէ այլեւս:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սուրէն Շտիկեան, *Դեւոնդ Ալիշանի Հայրենասիրական Պոեզիան*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1959 (http://kalantarian.org/shtikyan/work/Girq%201%20(1959).pdf):

[2] ինքնահունչ = (ֆր. եւ անգլ.) idiophone.
լարահունչ = (ֆր. եւ անգլ.) cordophone.
օդահունչ = (ֆր.) aérophone, (անգլ.) aerophone.

[3] Մխիթար աբբայ, *Բառգիրք Հայկազեան Լեզուի*, Վենետիկ, 1749:

[4] Նոյն, Բամբիռն էջ 133:

[5] Նոյն, Փանդիռն էջ 1168:

[6] Գաբրիէլ Աւետիքեան, Խաչատուր Սիւրմէլեան եւ Մկրտիչ Աւգերեան, *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. Ա*, Վենետիկ, 1836, էջ 932:

[7] Մկրտիչ Էմին, *Վէպք Հնոյն Հայաստանի*, Մոսկուա, 1850, էջ 971. նաեւ՝ Գարեգին Լեւոնեան, «Հայ Աշուղներ», *Ազգագրական Հանդէս, Հտր. ԺԹ., 1*, Թիֆլիս, 1906, էջ 91:

[8] *Եւրոպա*, 1851, 19 (Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան, Հտր. 4*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1979, էջ 479):

[9] Մկրտիչ Էմին, *Հնախօսութիւն Ի Վերայ Հայկական Հեթանոսութեանց*, թարգմանեաց ի գաղղիական բնագրէ Յովհաննէս Պր. Տ. Կրտ. Տէրոենց, Արմաշ, Ի Տպարան Ջ. Ս. Աստուածածնի, 1875, էջ 53:

[10] Մանուէլ Քաջունի, *Բառգիրք Արուեստից եւ Գիտութեանց եւ Գեղեցիկ Դպրութեան (Գաղղ.-Հայ. եւ Հայ-Գաղղ.)»*, (3 հտ.), Վենետիկ, 1891-93, Cymbale բառ-յօդուածը՝ Հատոր Ա, էջ 618:

[11] Լեւոնեան, էջ 94-95:

[12] Նոյն, էջ 94-95:

[13] Մանուկ Աբեղեան, *Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, Հտր. 1*, Պէյրութ, Տպարան Սեւան, 1955, էջ 45:

[14] Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան, Հտր. 4*, էջ 479:

[15] Ձեռ. Երուսաղէմի, թիւ 1288, էջ 75 բ (Եղիշէ Պատրիարք Դուրեան, *Հայոց Հին Կրօնը Կամ Հայկական Դիցաբանութիւն*, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1933, էջ 154:

[16] Աճառեան նոյն:

[17] Գ. Բ. Ջահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն – Նախագրային Ժամանակաշրջան*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, էջ 310-11:

[18] Φώτιος, "Λέξεων συναγωγή"՝ Peter P. Dobree, *Photii Lexicon e Codice Galeano Descripsit Richardus Porsonus II*, London, 1822, էջ 427 ("**πανδούριον, ήτοι Λύδιον όργανον χωρίς πλήκτρου ψαλλόμενον**"):

[19] Martin L. West, *Ancient Greek Music*, New York, Oxford University Press, 1992, էջ 80:

[20] Julius Pollux, յունարէն՝ Ἰούλιος Πολυδεύκης.

[21] Iulii Pollucis "Onomasticon" (աշխատասիրեց՝ Wilhelm Dindorf), Leipzig, 1824, էջ 198:

[22] Curt Sachs, *The History of Musical Instruments*, Mineola, NY, Dover Publications, 2006, էջ 137:

[23] Jeffrey P. Charest, *The Long Necked Lute's Eternal Return: Mythology, Morphology, Iconography of the Tanbūr Lute Family from Ancient Mesopotamia to Ottoman Albania*, Cardiff, Cardiff University-School of Music, 2019, էջ 93 (https://orca.cf.ac.uk/126268/12/PhD%20charest-1.pdf):

[24] *Պատմութիւն Յովհաննու Կաթողիկոսի Ամենայն Հայոց*, Երուսաղէմ, Ի տպարանի առաքելական աթոռոյ Ս. Յակովբեանց, 1843, էջ 14:

[25] *Մովսէսի Խորենացւոյն Մատենագրութիւն*, Բ. տիպ, Վենետիկ, 1865, էջ 50:

[26] Նոյն, էջ 17:

[27] Նոյն, էջ 59:

[28] Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, աշխատ.՝ Ստ. Մալխասեանցի, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1968, էջ 268:

[29] «Բան Ողբերգական Վասն Առման Երուսաղէմի»՝ Édouard Dulaurier, *Recueil des Historiens des Croisades...Documents Armeniens, T. I*, Paris, 1869, էջ 296:

[30] Էմմա Խանզադեան, «Հայկական Հին Երաժշտական Գործիքները», *Աշխատութիւններ ՀՍՍՀ ԳԱ Պետական Պատմական Թանգարանի*, Երեւան, 1959:5, էջ 84:

[31] Այս նկարագրութեան բնագիրը շատ հետաքրքրական նիւթ կը պարունակէ ընդհանրապէս հայոց լեզուի բառապաշարի պատմութեան եւ մասնաւորապէս երաժշտագիտական եզերու յառաջացման եւ զարգացման պատմութեան համար: Ուշագրաւ է գրութեան մէջ օգտագործուած «**աղեպատ**» կամ «**աղէպատ**» եզրը, որ ժամանակակից «մատնադաշտ»ն է: Այս անուանումը շատ ճիշտ է, որովհետեւ շարք մը նուագարաններու պարանոցի (կոթի) մատնադաշտի հնչիւնատեղերը սահմանազատուած են մշակուած աղիքէ կապաններու միջոցաւ, ինչպէս թառը, սազը, չունգուրը եւն.: Հետաքրքրական է, որ սազի թրքերէն անուններէն մին **bağlama** է, որ կը նշանակէ «կապուած-հանգուցուած»: Բոլոր հայ ստուգաբանողները եւ բառարանագիրները հետեւած են *Առձեռն Բառարան Հայկազեան Լեզուի*ի մէջ եղած բացատրութեան, որ բաւական անորոշ կը թուի, որովհետեւ շարադրուած է Մխիթարեաններու յատուկ ոճով՝ «քնարին բարակ ծայրը՝ որուն վրայ կը հանգչին լարերը», որ ժամանակակից լեզուով պիտի ըլլար՝ «Պարանոցաւոր երաժշտական գործիք, որու կոթին վրայ կ'երկարին լարերը»: Աճառեան նոյնութեամբ կրկնած է ("Աղի" բառ-յօդուածը՝ Աճառեան, *Հպր. I*, 1979, էջ 128): Մալխասեանց ճշգրիտ իմաստը չհասկնալով իւրովի, սխալ մշակած է, զայն դարձնելով «քնարին բարակ ծայրը՝ որուն վրայ փաթաթում են աղիքները՝ լարերը» («աղեպատ»՝ Ստեփան Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հպր. 1*, Երեւան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատ. 1944, էջ 43): Իդէպ, ուշագրաւ է որ *Առձեռն*ի հեղինակները «քնար» բառը գործածած ըլլան

«պարանոցատր լարային նուագարան»ի իմաստով եւ իրենց սահմանափակ միջոցներով կրցած են եզրակացնել որ քնարը հայկական միջնադարուն այլեւս lyra չէր նշանակեր: Այսուամենայնիւ, «քնար» բառ-յօդուածի մէջ ո՛չ-վճռական, այլ զգուշութեամբ արձանագրած են. «... *նուագարան բախողական՝ աղեօք կամ լարիւք եւ թելիւք կազմեալ* ***յայլեւայլ*** *ձեւս...*» (Հայր Մկրտիչ Աւգերեան եւ Հայր Գրիգոր Ճելալեան, *Առձեռն Բառարան Հայկազնեան Լեզուի*, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865, էջ 39 (աղէպատ) եւ էջ 1008 (քնար):

[32] Թէեւ Խանզադեան չի նշեր ձեռագրին մանրամասնութիւնները, այս հատուածը կը գտնենք նոյնութեամբ Ամիրդովլաթ Ամասիացիի քով (Ամիրդովլաթ Ամասիացի, *Օգուտ Բժշկութեան*, Երեւան, ԽՍՀՄ ԳԱ – Հայկական ֆիլիալ Պատմութեան եւ Հնագիտութեան Ինստիտուտ (ԱրմՖԱՆ), 1940, էջ 50:

[33] **Մատնադաշտ** = (ֆր.) touche, (անգ.) fingerboard:

[34] **Մատնաշեմեր** = (ֆր.) des frettes, (անգ.) the frets:

[35] Հին ժամանակ կապաններուն **փարտայ (փարդայ, ֆարդայ)** կը կոչէին որ պարսկերէն է, թրքերէն perde:

[36] **Լարահունչներ** = (ֆր. եւ անգլ.) Cordophones

[37] **Կսմիթային լարահունչներ** = (ֆր.) Instrument à cordes pincées, (անգլ.) Plucked string instruments:

[38] **Կտնտոցահար կսմիթային լարահունչներ** = (ֆր.) Instrument à cordes pincées avec un plectre. (անգլ.) Plucked string instruments with a plectrum:

[39] **Պարանոցաւոր** = ֆր.՝ Luth, անգլ.՝ Lute:

Երկարակոթ պարանոցաւոր = ֆր.՝ Luth à manche long, անգլ.՝ Long-necked lute:

Կարճակոթ պարանոցաւոր = ֆր.՝ Luth à manche court, անգլ.՝ Short-necked lute:

[40] Հնչերես = անգլ.՝ soundboard, ֆր.՝ table d'harmonie:

[41] Այս երեւոյթը առկայ է վերոյիշեալ ափրիկեան նուագարաններուն պարագային, ուր կը գտնենք միաժամանակ քանի մը տարբերակներ որոնք կը համապատասխանեն մեր դասակարգած նուագարաններուն տարբեր փուլերուն:

[42] Alexander Buchner, *Encyclopédie des Instruments de Musique*", Prague, 1982, էջ 47:

[43] Ժ. Դ. Խաչատրեան, «Արտաշատ II (Անտիկ Դամբարանադաշտեր, 1971-1977 թթ. Պեղումները)», *Հնագիտական Պեղումները Հայաստանում № 17*, Երեւան, 1981, էջ 178-80 եւ տախտ. XXIV 3-4, XXV 1-5:

[44] Մանուկ Աբեղեան, *Հին Գուսանական Ժողովրդական Երգեր*, Երեւան, 1931, էջ 19, մէջբերում 45 ստորեւ էջ 18:

[45] Արամ Քոչարեան, *Հայ Գուսանական Երգեր*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտ, 1976, էջ 18-19:

[46] Նիկողայոս Թահմիզեան, «Ներդաշնակութեան հէնքի ուսմունքը միջնադարեան Հայաստանում (V-VI դդ.)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1966:1, էջ 83:

[47] Х. С. Кушнарев, *Вопросы Истории Армянской Монодическои Музыки* (Հայ մենաձայնային երաժշտութեան պատմութեան հարցեր), Լենինկրատ, 1958, էջ 72:

[48] Աստղիկ Գէորգեան, *Արհեստներն Ու Կենցաղը Հայկական Մանրանկարներում*, Երեւան, «Հայաստան» Հրատ.1978:

[49] Աճառեան, *Հտր. 4*, էջ 479-480:

[50] Մանուկ Աբեղեան, *Երկեր, Հտր. 2*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 202:

[51] Նոյն :

[52] «Նորին տէր Առաքելի հոգենորոգ հայրապետի վասն սահմանաց Դաւթի քաղաքաւծու բան», Մատենադարան, թիւ 1764 ձեռագիր, էջ 293 (Նիկողոս Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին եւ Հայ երաժշտութիւնը ե.-ժե. դդ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 36. նաեւ՝ Արամ Քոչարեան, *Երաժշտական Գործիք-ները Հայաստանում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտ, 2008, էջ 142:

[53] Şemsi Yastiman (Sazevi), *Sazdan Bilgiler,* Istanbul, 1961, էջ 7:

[54] Ներկայիս կը գտնուի Բրիտանական Թանգարան՝ Registration number: 1928, 0323, 0.46.116:

[55] Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. թ. 17485, էջ 297 ա («Սահմանք ասացեալ ի Դաւթէ»): Նոյնը նաեւ՝ ձեռ. թ. 1931, էջ 96ա եւ թ. 55, էջ 402բ (Ն. Թահմիզեան, «Նիւթեր Հայկական Միջնադարեան Երաժշտական Գործիքագիտութեան», *Բազմավէպ*, Վենետիկ, 1991:*1-2*, էջ 196:

[56] Մատենադարան, Ձեռագիր 9599 ախտարական, 1671, Կարս - Գուշակութիւն:

[57] Նոյն:

[58] Աճառեան, *Հյր. 4*, էջ 376-77:

[59] «Շատ Սիրուն Իս, Շախաթայի Ասողին Խար Չիս Անի» խաղին բնագիրը տե՛ս՝ Սայեաթ Նովա, *Հայերէն Խաղեր*, աշխատ.՝ Հ. Բախչինեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1984, էջ 47:

[60] Լեւոնեան, էջ 100:

[61] Նաղաշ Յովնաթան, *Բանաստեղծութիւններ*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1951, էջ 175:

[62] K. Vertkov, G. Blagodatov, E. Yazovitskaya, *Atlas of Musical Instruments of the Peoples Inhabiting the USSR*, Moscow, 1975, էջ 148:

[63] Սեդրակ Տէր Սարգսենց, *Շահէնն Ի Սիպիր Կամ Գաղթական Հայը*, պատմական վէպ, Կ. Պոլիս, 1911, էջ 61:

[64] Davut Kiliç, "Evliya Celebi Seyhatnamesinde Ermeniler ve Kutsal Mekânlari", *Journal of Turkish World Studies*, 2011:XI/2, էջ 108 (https://www.academia.edu/35691158/Evliya_Celebi_Seyhatnamesinde_Ermeniler_ve_Kutsal_Mekanlari):

[65] *Սասնայ Ծռեր, Ա. Հյր.*, Երեւան, ՀՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, 1936, էջ 1068, ասացող՝ հայոցձորցի Թառոն Կազարեան:

[66] Լեւոնեան, էջ 100:

[67] Գեղամ Տէր Կարապետեան (Մշոյ Գեղամ), *Տարօնի Վանքերը - Ուղեւորի Յիշատակներ*, Երեւան, «Մուղնի» Հրատ., 2003, 116 էջ:

[68] Richard A. Chahine, *"L'Arménie et l'Art de l'estampe"*, Beyrouth, 1982, pg. 139.

[69] Նոյն, էջ 136:

[70] **πανδούρα > tambūr** յառաջացման ի նպաստ ենթադրութիւններ կան, որոնք վիճելի են (Charest, էջ 442):

[71] *Զէյթունի Պատմագիրք*, Պուենոս Այրէս, Հրատ.՝ Ուրուկուայի Զէյթունի Հայրենակցական Միութեան, 1960, էջ 395-410:

[72] Սօզ էնիլ = սազ ընել = նուագել:

[73] Նոյն:

[74] Նոյն, էջ 443:

[75] Նոյն, էջ 858: Պէտք է նկատի ունենալ, որ քէմիչօ-քէմէնչօ<քէմէնչէ նուագարանը կապ չունի սայեաթնօվեան քամանչայի հետ, այլ շաւառն է, որ ներկայիս տարածուած է համշէնահայերու մէջ:

[76] Բանաւոր ազգագրական նիւթերը հաւաքեց եղբայրս՝ Ռուբէն Կնեազեան 1988-89ին Հայաստանի մէջ (հեղինակի արխիւ):

[77] Գուսան Շահէնի (Շահէն Սարգիսեան, 1909-1990) կողմէ բանաւոր տեղեկութիւն (1988) (հեղինակի արխիւ, IDIA N° 3):

[78] Պաղտասար Թովմասեան, հեղինակի արխիւ IDIA N° 20, ծնած Վան նահանգի Հայոց Ձորի շրջանի Հնդստան գիւղը: Գաղթած է 1915ին, հաստատուած՝ Արեւելեան Հայաստան:

[79] Արշակ Չօպանեան, *Հայրէններու Բուրաստանը*, Փարիզ, Հրատարակութիւն Հ.Բ.Ը. Միութեան, Մելգոնեան մատենաշար, 1940, էջ 439:

[80] Մանուկ Աբեղեան, *Երկեր, Հտր. 2*, էջ 200:

[81] Նոյն, էջ 202:

[82] Յովհաննէս Ղուկասեան, հեղինակի արխիւ IDIA N° 26, IDIA N° 26, ծնած է 1919ին Թաւրիզ, բայց Սալմաստ մեծցած: Հաստատուած է Երեւան:

[83] Խաչերես Ա. Փորքշէեան, «Նոր Նախիջեւանի Հայ Ժողովրդական Բանահիւսութիւնը», *Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն, Հտր. 2*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1971, էջ 43-44:

[84] Նոյն:

[85] Նոյն:

[86] Գրիգոր Խուրդայեան, «Դոնի Հայերի Ժողովրդական Նուագարանային Արուեստը», *Կուլտուր-Լուսաւորական Աշխատանք*, 1988:8, Երեւան, էջ 24:

[87] Համաչափ հաւասարեցուած լարուածք = անգլ.՝ equal temperament, ֆրանս.՝ tempérament egal:

[88] Նոր ձեւերով բամբիռներ ստեղծելու շարժումը դադրած չէ, այլ կը շարունակուի այսօր մեծ թափով:

[89] Ըստ Մարտին Խաչատրեանի (նաեւ այլ նուագարանագործ վարպետներու եւ հին սերունդի երաժիշտ-կատարողներու), Բունիի ստեղծած մեծ քամանչաները մէկ խոչընդոտ ունէին՝ կաշիէ մեծ մակերես ունենալով շուտով կ'ազդուէին խոնաւութենէն, խաթարելով լարուածքը, ինչպէս կ'ըսեն նուագողները՝ «**գործիքը նստում էր**», ինչ որ կը ստիպէր նուագածուն միշտ ուշադիր ըլլալ գործիքի լարուածքի պահպանման: Թաւ քամանիի մասին խօսք չկայ, պարզապէս որովհետեւ այս թերութիւնը չունէր: Թաւ քամանիին հնչերեսը քամանչային պէս կենդանական թաղանթէ կամ կաշիէ չէր, այլ փայտէ, այսուամենայնիւ՝ անտեսուեցաւ:

[90] Նորայր Զաւէնի Դաւթեան - Հայաստանի Ազգային Նուագարաններու Պետական Նուագախումբի այժմու գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր խմբավար:

[91] Ռիտա Շառոյեան, *Հնագոյն Նուագարաններ. Բամբիռ* (վաւերագրական ֆիլմ), 2013:

WHAT IS THE "PANDIRN - BAMBIRN" MUSICAL INSTRUMENT IN CLASSICAL ARMENIAN
(Summary)

ZAVEN KNIAZIAN
zavenkniasian@yahoo.com.ar

In old Armenian literature, the terms *pandirn* (փանդիռն) and *bambirn* (բամբիռն) are used to refer to musical instruments. For over one and a half centuries, there were heated discussions about what type/s of musical instrument/s these two terms referred to.

This paper aims to show that these two words do not refer to different instruments but are variations of the same term; *pandirn*, which is mentioned in the 5th century, is the most ancient form. The term and its variants were used until approximately the 14th century, when both were replaced by several names such as *chashta*, *darabula*, *tambura*, *chogur*, *sharkhi* and finally by *saz*, which is the term currently used.

Based on linguistic data, archaeological discoveries and medieval miniature paintings, the conclusion of the author is that this musical instrument was a long-necked lute, with a semi-spheroid or piriform shaped soundbox and with a soundboard initially made of leather and later on of wood.

The author notes that the bowed instrument devised in Soviet Armenia in the 1950s and 1960s, called "bambir", and has nothing in common with the historical instrument except its name.

ՄՆԱ՞Լ ԹԷ՞ ԳՆԱԼ. ՀՀ ԳՏՆՈՒՈՂ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

ԳԱՅԻԱՆԷ ՅԱԿՈԲԵԱՆ
gayik20@gmail.com

ՆԱԽԱԲԱՆ

Ցեղասպանութիւնից յետոյ ձեւաւորուած Սփիւռքը եւ աշխարհի տարբեր երկրներում հայ համայնքների գոյութիւնը հզօր ներուժ են համարւում Հայաստանի Հանրապետութեան ժողովրդագրական, ընկերատնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման առումով: ՀՀ անկախացումից յետոյ սփիւռքահայերի մօտ աշխուժացաւ թէ՛ կամաւոր, թէ՛ բնակած երկրների տնտեսական ու պատերազմական իրավիճակի հետեւանքով դէպի հայրենիք վերադարձը: Դրանից անմասն չմնաց նաեւ սուրիահայ համայնքը, որի կարեւոր մէկ մասը ՀՀ տեղափոխուեց Սուրիայում ընթացող պատերազմի պատճառով:

Ազգային պատկանելիութեան գիտակցումն ու հայրենիքի յիշողութիւնը միասնականացնում են հայերին՝ որպէս ազգ, բայց անմիջական ու առօրէական շփման ու փոխազդեցութեան ժամանակ երեւան հանում միմեանց ճանաչելու եւ յարմարուելու դժուարութիւնները: Սուրիահայերը, որոնք ապրում էին այլ քաղաքական ու ընկերատնտեսական յարաբերութիւնների համակարգում, այլ կրօնական ու մշակութային միջավայրում, տեղափոխուել են բոլորովին նոր, իրենց կենցաղից տարբեր ընկերամշակութային միջավայր՝ կանգնելով վերջինիս յարմարուելու խնդրի եւ անհրաժեշտութեան առջեւ: Նոր հասարակութիւնում նրանց պատշաճեցումի գործընթացը դժուարացնող գործօնները բազմաթիւ են, որոնցից իւրաքանչիւրն իր ուրոյն ազդեցութիւնն ունի ՀՀում համարկուելու եւ յետագայ կենսագործունէութիւնը շարունակելու որոշման կայացման վրայ: Սոյն յօդուածում փորձել ենք վերլուծել 2011ից յետոյ ՀՀ տեղափոխուած սուրիահայերի ներգաղթային վարքագիծը, բացայայտել դրա փոփոխման միտումները, պատճառներն ու գործօնները:

Ուսումնասիրութեան մեթոդաբանական հիմքը ազգագրութիւնում եւ էթնօընկերաբանութիւնում ընդունուած միջուսմունքային համալիր մօտեցումներն են, իսկ գործնական նիւթը հաւաքուել է 2014-17ին հեղինակի կողմից Երեւանում եւ ՀՀ մարզերում անցկացրած հետազօտութիւնների ընթացքում, որոնք իրականացուել են որակական եւ քանակական միքանի մեթոդների համադրութեամբ.

1ա. Քանակական հետազօտութիւն (2014ին)՝ 184 կիսաճշտուած հարցազրոյցներ սուրիահայերի հետ Երեւանում եւ մարզերում, մասնաւորապէս՝ Արագածոտնի, Արարատի, Արմաւիրի, Կոտայքի, Շիրակի: Ելնելով հետազօտուող խմբի իւրայատկութիւնից (սուրիահայերի ոչ-յստակ թուաքանակ, շարժունութիւն, բնակութեան վայրի վերաբերեալ սուղ տեղեկա-

տուութիւն, ՀՀ տեղափոխուելուց յետոյ տարածական ցրուած ձեւով ապրել եւ այլ հանգամանքներ) սուրիահայ ընտանիքների հետ կապ հաստատելու համար օգտագործուել է «ձնակոյտ»ի մեթոդը, իսկ հարցուողի ընտրութիւնը կատարուել է պատահականութեան սկզբունքով՝ կիրառելով վերջին ծնունդի մեթոդը[1]:

1բ. Քանակական հետազօտութիւն 2016-17ին տեղացի եւ սուրիահայ ընտանիքների շրջանում՝ Երեւան քաղաքում եւ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սիւնիքի, Արմաւիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային եւ քսան գիւղական բնակավայրերում: Ընտրանքային համախմբութեան ծաւալը կազմել է 384, որից 7%ը՝ սուրիահայ ընտանիքներ: Քանակական հետազօտութեան արդիւնքները հարուստ նիւթ են ապահովել ժամանակային որոշակի կտրուածքով սուրիահայերի պատշաճեցման հիմնախնդիրներն ուսումնասիրելու, ինչպէս նաեւ ներգաղթային վարքագիծը բացայայտելու համար:

2. Որակական հետազօտութիւն (2014ին)՝ խորքային հարցազրոյցներ սուրիահայերի հետ՝ նրանց խնդիրներն կարելի համապարփակութեամբ հասկանալու, մեկնաբանելու համար: Ընտրանքի չափանիշներ են հանդիսացել սեռը, տարիքը եւ զբաղուածութիւնը (խորքային հարցազրոյցների ընդհանուր թիւը կազմել է 36):

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սուրիահայ համայնքը եղել է Մերձաւոր Արեւելքի ամենահին ու աւանդական համայնքներից մէկը, արեւմտահայերէնի եւ արեւմտահայ մշակոյթի պահպանման ու զարգացման կարեւոր եւ բացառիկ օճախ: Սակայն 2011ին ծայր առած պատերազմը ճակատագրական եղաւ այդ համայնքի եւ հազարաւոր սուրիահայերի համար. նրանք ցրուեցին աշխարհով մէկ, հեռանալով աւելի ապահով վայրեր՝ Լիբանան՝ մօտ 15,000, եւրոպական երկրներ, Քանատա՝ մօտ 8000, Յորդանան՝ 2000, իսկ մօտ 15,000 մնացել են Սուրիայում[2]: Նշենք նաեւ, որ ՀՀ Սփիւռքի նախարարութեան (ՍՆ) տնօրինութեան տակ եղած տեղեկութիւնների համաձայն՝ 22-25,000 հայ դեռեւս շարունակում է բնակուել Սուրիայում, որոնք երկրում տիրող իրավիճակի բարդութիւնից կախուած՝ մաս-մաս տեղափոխւում են ՀՀ եւ այլուր, իսկ ոմանք որոշել են մնալ տեղում[3]:

Սուրիահայերի տարերային ներհոսք սկսուեց նաեւ դէպի ՀՀ: Պաշտօնական տեղեկատուութեան համաձայն՝ միայն 2013ին ՀՀ է եկել 6-7000 մարդ: Այս միջակայքային տատանումը վկայում է այն մասին, որ ստոյգ հաշուառում չի եղել: Առհասարակ, սուրիահայերի ներգաղթի հոսքի փաստագրման կամ տուեալների հաւաքման որեւէ մեքենայ ու համակարգ չի գործել՝ բացի ՀՀ պետական սահմանը հատելու ու վիզա ստանալու օրինապատշաճ ընթացակարգերից: Ըստ ՍՆ տրամադրած տուեալների[4]՝ 2014 Փետրուարի դրութեամբ ՀՀում բնակւում են շուրջ 11,000 սուրիահա-

յեր՝ մօտ 2800 ընտանիք: 2017ին արդէն շրջանառւում է այն տեղեկատուութիւնը, որ պատերազմի բռնկուելուց իվեր մօտ 22,000 մարդ է եկել ՀՀ[5], որոնք անընդհատ գտնւում են շարժման մէջ: Համաձայն ոչ-պաշտօնական տեղեկատուութեան՝ ՀՀում ներկայումս բնակւում են 5-8000 սուրիահայեր[6]:

2014ին անցկացրած հետազօտութեան տուեալներով՝ սուրիահայերի 53%ը ՀՀ է եկել 2012ին, 23%ը՝ 2013ին, իսկ 24%ը՝ 2014ին: Հիմնական մեծ զանգուածը կազմում են հալէպահայերը՝ 82.6%, այնուհետեւ դամասկահայերը՝ 5.4%: ՀՀում են ապրում նաեւ Սուրիայի հայաշատ այլ բնակավայրերից (Քեսապ, Քամիշլի, Րաքքա, Տէր Զօր) եկած հայերը (ընդամէնը 5.5%): Հարցմանը մասնակցած սուրիահայերի 6.5%ն էլ ՀՀ է տեղափոխուել երրորդ երկրից՝ Քուէյթ, Լիբանան, Շուէտ եւն., որոնք, լինելով Հալէպ քաղաքի հիմնական բնակիչներ, թողել են Սուրիան պատերազմի պատճառով եւ մինչեւ ՀՀ տեղափոխուելը՝ եղել այլ երկրներում: Ինչպէս տեսանք, սուրիահայերի մեծ մասը քաղաքաբնակ է՝ ի տարբերութիւն Ի. դարում Սուրիայից ներգաղթածների, որոնք առաւելապէս գիւղաբնակ էին եւ աւելի հեշտ էին բնակութիւն հաստատում Երեւանից դուրս այլ վայրերում[7]:

Ստեղծուած իրավիճակում Սուրիայից հեռանալու պատճառը մէկն էր, իսկ ՀՀն ընտրելու դրդապատճառները՝ բազմաթիւ եւ տարբեր: Հետազօտութեան արդիւնքները վկայում են, որ ՀՀ տեղափոխուելու որոշում կայացնելու գործում սուրիահայերի համար հայրենիքի գաղափարը առաջնային է միւս պատճառների նկատմամբ (38.3%, աղիւսակ 1):

Աղիւսակ 1. Սուրիահայերի՝ Հայաստան գալու պատճառները, %	
Պատճառներ	**%**
Հայրենիքի գաղափար, հայ լինելու հանգամանք	38.3
Այլ ելք չկար, միւս երկրները վիզա չէին տալիս	18.5
Ընկերային ցանցի առկայութիւն (բարեկամներ/ծանօթներ ունեն)	7.8
Ընտանիքի անդամները նախօրօք են տեղափոխուել/վաղուց ապրում են ՀՀում	7.8
ՀՀում ապահով, անվտանգ է	7.0
Լեզուի իմացութիւն	6.4
ՀՀ շրջագայութիւնից յետոյ չեն կարողացել վերադառնալ Սուրիա	6.0
Աշխատանքի հեռանկար ՀՀում	2.0
Այլ (մեկնել երրորդ երկիր, ՀՀն մօտ է, ՀՀում էժան է կեանքը եւն.)	6.2
Ընդամէնը	100

Դրդապատճառների մէջ յաջորդ մեծ պատասխանն ունի հարկադրական երանգ (ուրիշ տարբերակ չկար՝ 18.5%), երբ այլ ելքերի բացակայութեան պայմաններում սուրիահայը ստիպուած լքում է պատերազմի մէջ գտնուող երկիրը եւ գալիս ՀՀ:

...Վերջին գալս վեց ամիս առաջ էղաւ՝ որպէս գաղթական: Մենք բաւական երկար սպասել ենք Հալէպ՝ յոյսով, որ անպայման կը բարելաւուի, բայց յոյսերս կտրեցինք ու էկանք: Անցած տարի ամառը Հալէպ քաղաքը իւր արուարձաններով շրջափակուեցաւ, չորս ամիս շատ խայտառակ վիճակ մը ունեցաւ, շատ խղճալի էր վիճակը: Բանակը միայն մինակ մը միջոց ապահովեց մեզի՝ մենք մութ գիշերով զնտանով փախանք, յետոյ զինուորական օդանաւով եկանք Լաթաքիա, Լաթաքիայէն՝ Լիբանան, Լիբանանէն՝ Հայաստան (56 տ. տղամարդ, ք. Երեւան)[8]:

Մի կողմից՝ պատահական, միւս կողմից՝ հարկադրական հարթութեան մէջ պէտք է դիտարկել այն փաստը, որ 2012ի ամռանը շրջագայութեան նպատակով ՀՀում գտնուող սուրիահայերը (6%) չկարողացան վերադառնալ Սուրիա: Սակայն, ինչպէս տեսնում ենք, պատասխանների մեծ մասը վկայում է ստեղծուած իրավիճակը նրանց կողմից բանականօրէն գնահատելու մասին՝ ընկերային ցանցի առկայութիւն (7.8%), ընտանիքի անդամների ՀՀում գտնուելու փաստ (7.8%), հայերէնի իմացութիւն (6.4%), աշխատանքի հեռանկար (2%), ՀՀի՝ ապահով, անվտանգ լինելու փաստ (7%), ՀՀն՝ որպէս տարանցիկ երկիր (1.4%) եւն.: Նշենք, որ ՀՀ քաղաքացիութիւն ստանալը սուրիահայերին թոյլ է տալիս մեկնել այլ երկիր՝ նրանց համար ապահովելով ինչպէս տեղաշարժի ազատութիւն, այնպէս էլ որոշակի իրաւաքաղաքական պաշտպանուածութիւն:

ՀՀ գտնուող սուրիահայերի ճնշող մեծամասնութիւնն այժմ բնակւում է Երեւանում, մի որոշ զանգուած նաեւ՝ ՀՀ տարբեր մարզերում: Երեւանում բնակուող սուրիահայերն ունեն իրենց նախընտրութիւնը վարչական շրջանների առումով. նրանք հիմնականում կենտրոնացած են Կենտրոն եւ Արաբկիր համայնքներում: Այնուհետեւ, համեմատաբար մեծ խումբ են կազմում Էրեբունի, Շէնգաւիթ, Աջափնեակ համայնքներում ապրողները: Մեր ուսումնասիրութիւնը հետաքրքիր օրինաչափութիւն է բացայայտել մարզերի պարագայում՝ նրանք կա՛մ նախընտրում են մարզկենտրոնները (օրինակ, Գիւմրի), կա՛մ Երեւանին մօտ գտնուող քաղաքային եւ գիւղական համայնքները (Վաղարշապատ, Աբովեան, Աշտարակ, Առինջ, Ջրվէժ եւն.):

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ, ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Սուրիահայ համայնքի զարգացման յաջորդ փուլի մասին պատկերացում ունենալու համար շատ կարեւոր է նրանց՝ ՀՀից հեռանալու մտադրութիւնների ու ցանկութիւնների եւ սրա հիմքում ընկած գործօնների համալիր վերուծութիւնը, որը կը ներկայացնենք համեմատական հետազօտական տուեալների միջոցով: Սոյն վերլուծութեան հիմքում ընկած են ամերիկացի ընկերաբան Էւերէթ Ս. Լիի մօտեցումները: Ըստ Լիի առաջ քաշած մոդէլի՝ գործում են ներգաղթային գործօնների տարբեր խմբեր՝

վանող, ձգող, միջանկեալ եւ անձնական: Նա գաղթի վանող երեւոյթների շարքին դասում է տնտեսական (գործազրկութիւն, եկամուտների ցածր մակարդակ, բարձր հարկեր), ընկերային եւ քաղաքական (աղքատութիւն, խտրականութիւն, խղճի եւ հաւատի ազատութեան սահմանափակում, պատերազմներ) բնոյթի գործօնները, անբարենպաստ բնակլիմայական պայմանները եւն.: Ձգող գործօններից են համարւում տնտեսական զարգացման եւ եկամուտների բարձր մակարդակը, անվտանգութիւնը, աշխատաշուկայում մուտք գործելու հնարաւորութիւնը եւն.: Գաղթի գործընթացում կարեւոր են նաեւ միջանկեալ գործօնները, որոնք մեծանում են հեռաւորութեան աճին զուգահեռ եւ կարող են հանդէս գալ որպէս գաղթի հոսքերը սահմանափակող միջոցներ: Դրանց թուին են պատկանում փոխադրութեան ծախսերը, տեղաշարժերի կարգաւորման օրէնքները, տեղեկացուածութիւնը եւն.: Ըստ նրա՝ գաղթն ընտրովի գործընթաց է, եւ նոյն գործօնները տարբեր մարդկանց վրայ կարող են տարբեր կերպ ազդել[9]: Ինչպէս տեսանք, այս մօտեցման մէջ հեղինակը կենտրոնանում է տնտեսական գործօնների վրայ: Սուրիահայերի դէպքում եւս ականատես կը լինենք նրանց գաղթի վարքագծի հիմքում ընկած տնտեսական գործօնների գերակայութեանը:

Ըստ համեմատական հետազօտութեան արդիւնքների՝ երեք տարիների ընթացքում սուրիահայերի՝ ՀՀից հեռանալու մտադրութիւնների հարցում որոշակի փոփոխութիւններ են տեղի ունեցել (աղիւսակ 2):

Աղիւսակ 2.- Սուրիահայերի՝ ՀՀից մեկնելու մտադրութիւնը		
	2017	2014
Ոչ	25	40
Հաւանաբար ոչ	22.8	16
Հաւանաբար այո	20.7	4
Այո	31.5	40

Առաջին բանը, որ կարող ենք արձանագրել, հետեւեալն է.- նրանք համեմատաբար աւելի հաստատակամ են իրենց մտադրութիւններում եւ որոշումներում՝ յստակ արտայայտելով սեփական դիրքորոշումը եւ նուազ տեղ թողնելով հաւանականութեանը: Այս հարցի հետ կապուած երկրորդ փոփոխութիւնը վերաբերում է զանգուածների փոփոխութեանը՝ ՀՀից հեռանալու մտադրութիւն ունեցողները նուազել են 8.2%ով (այստեղ ի նկատի ունենք հաւանաբար այո եւ այո պատասխանողներին), բայց վերջիններս գրեթէ լիովին կողմնորոշուած են այս հարցում: Ընդհանուր առմամբ, ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին սուրիահայերի կէսից աւելին՝ 52.2%ը (հաւանաբար կը մեկնեն՝ 20.7, այո, կը մեկնեն՝ 31.5), մտադրութիւն ունէր հնարաւորութեան դէպքում տեղափոխուել ՀՀից, եւ միայն մէկ չորրորդն էր վստահաբար մտածում, որ կը մնայ: Այստեղ որոշակի մաս է կազմում նաեւ հաւանաբար չմեկնողների խումբը (22.8%), ինչը եւս հաւա-

նականութեան որոշակի աստիճանով մեծացնում էր մեկնելու տրամադրուածութիւն ունեցողների զանգուածը: Տարիներ անց արդէն սուրիահայերի կէսից քիչն է մտադրութիւն յայտնում մեկնել (44%), եւ տասից չորսն արդէն վստահաբար մտածում է ՀՀում կեանքը շարունակելու մասին: Այս ցուցանիշի փոփոխութիւնը պայմանաւորուած է նաեւ այն հանգամանքով, որ նրանք, որոնք 2014ին մտածում կամ ցանկութիւն էին յայտնում այլ երկիր տեղափոխուելու, արդէն կատարել են իրենց քայլը՝ կեանքի այդ փուլի համար ՀՀն համարելով ժամանակաւոր ապաստան:

Հետազօտութեան արդիւնքները հնարաւորութիւն են տալիս բացայայտելու ՀՀից մեկնելու մտադրութիւն ունեցողների զանգուածը միքանի ցուցիչներով եւ համեմատական վերլուծութեամբ (աղիւսակ 3):

Աղիւսակ 3.- ՀՀից մեկնելու մտադրութիւն ունեցողներն ըստ ցուցիչների («այո» եւ «հաւանաբար այո» տարբերակներ)

Ցուցիչներ		2017	2014
Սեռ	Արական	41.7	55.6
	Իգական	46.2	48.9
Տարիք	18-35	60.0	66.7
	36-55	58.3	50.0
	56 եւ բարձր	12.5	39.1
Ամուսնական կարգավիճակ	Ամուրի	57.1	53.8
	Ամուսնացած	43.8	55.1
	Ամուսնալուծուած	-	0.0
	Այրի	-	25.0
Բնակութեան վայր	Երեւան	44.0	52.4
	Այլ քաղաք	-	66.7
	Գիւղ	-	42.9
Աշխատանքի առկայութիւն	Այո	42.9	41.7
	Ոչ	45.5	55.9
Բնակարանի տեսակ	Սեփական բնակարան	-	36.4
	Վարձակալած բնակարան	38.9	52.9
	Առանց վարձավճարի բնակարան	-	66.7
	Հանրակացարան	80.0	57.1
ՀՀ տեղափոխուելու տարի	2012	57.1	42.9
	2013	75.0	71.4
	2014	25.0	54.5
	2014ից յետոյ	50.0	-
Որ երկիրն է ընկալւում՝ որպէս հայրենիք	Սուրիա	-	85.7
	Հայաստան	-	43.1

Եթէ ՀՀ այցելելու առաջին տարիներին աւելի շատ տղամարդիկ էին մտածում երկրից հեռանալու մասին, ապա ներկայումս՝ կանայք, ինչը պայմանաւորուած է տղամարդկանց զբաղուածութեան փաստով. ՀՀում

նրանց աշխատանքի/գործի առկայութիւնը երկրից չհեռանալու կարեւոր գործօններից մէկն է համարւում, իսկ երկրից դուրս աշխատանքը՝ յատկապէս վերջին տարիներին սկիզբ առած սուրիահայ տղամարդկանց աշխատանքային գաղթը, կանանց անհանդուրժողութեան եւ, հետեւաբար, ՀՀից մեկնելու մտադրութիւնների ձեւաւորման պատճառ է դառնում:

Տարիքային առումով նկատում ենք, որ մեկնելու տրամադրութիւն ունեցողների զանգուածը նուազում է երիտասարդներից դէպի աւագ սերունդ, ընդ որում, վերջին շրջանում աւագ սերնդի ներկայացուցիչներն եռակի նուազ են հակուած ՀՀից հեռանալու մտքին: Միջին սերնդի ներկայացուցիչների շրջանում, ընդհակառակը, փոխուել են տրամադրութիւնները, եւ մօտ 8%ով աւելացել է ՀՀից հեռանալու մտադրութիւն ունեցողների կշիռը:

Ամուսնացած սուրիահայերը, տարիների ընթացքում աւելի շատ յարմարուելով հայաստանեան իրականութեանը, աւելի քիչ են ՀՀից մեկնելու մտադրութիւն յայտնում: Իսկ չամուսնացածները, ընդհակառակը, մեծամասամբ ցանկանում են հեռանալ երկրից, ընդ որում, վերջին տարիներին՝ աւելի շատ:

ՀՀից մեկնելու մտադրութիւն ունեցողները մեծամասամբ մարզային քաղաքներում, այնուհետեւ՝ Երեւանում ապրող սուրիահայերն են, իսկ գիւղերում բնակուողների կէսից շատը չի մտածում այլ երկիր գնալու մասին:

Սուրիահայերի համար աշխատանքի բացակայութիւնը հիմնական գործօններից մէկն է, որը վճռում է ՀՀում մնալ-չմնալու հարցը: Այս հարցին աւելի մանրամասն կ'անդրադառնանք ստորեւ, սակայն աղիւսակ 3ի տուեալները թոյլ են տալիս ասելու, որ արտագաղթելու մտքին աւելի շատ հակուած են աշխատանք չունեցողները, քան՝ ունեցողները, ընդ որում, նոր տեղափոխուած տարիներին նման տրամադրուածութիւնն աւելի ակնառու է եղել:

Բնակարանի առկայութիւնը յաջորդ կարեւոր գործօնն է, քանզի ՀՀից մեկնելու մտքին աւելի քիչ հակուած են բնակարան ունեցող, իսկ աւելի շատ՝ առանց վարձավճարի բնակարաններում ապրող սուրիահայերը: Վերջինս բխում է «մինչեւ ե՞րբ ենք այս կարգավիճակում ապրելու» հարցից, իսկ նման անորոշութիւնն ու որեւէ հեռանկարի բացակայութիւնը չեն կարող չտանել արտագաղթի տրամադրութիւնների ձեւաւորմանը: Այստեղ պէտք է հաստատել, որ հանրակացարաններում ապրող սուրիահայերի գերակշիռ մասը, յատկապէս վերջին տարիներին, անհեռանկարային է համարում ՀՀում մնալը:

ՀՀ ժամանելու տարեթուով եւս կարելի է բացատրել սուրիահայերի մտադրութիւնները: Պարզւում է որ երկրից մեկնելու մտադրութիւն աւելի շատ յայտնել են 2013ին տեղափոխուածները: Սա այն ժամանակն էր, երբ սուրիական հակամարտութիւնն աւելի սուր ու տարածական էր դարձել, եւ հայերը Սուրիայում մնալու կամ հեռանալու մասին մտածելու ժամանակ ու

հնարաւորութիւն չունէին: Իսկ նման հարկադրուած ներգաղթը, բնականաբար, մի օր յանգեցնելու էր նաեւ արտագաղթի հաստատակամ մտադրութիւնների ձեւաւորմանը:

ՀՀից մեկնելու տրամադրուածութեան չափման հարցում ոչ-պակաս կարեւոր ցուցիչ է համարւում նաեւ հայրենիքի ընկալման գաղափարը: Գիտակցական եւ ենթագիտակցական մակարդակներում Սուրիան հայրենիք համարող հայերի գերակշիռ մեծամասնութիւնը (85.7%) ՀՀում ապագայ չտեսնելով, մտադիր է մեկնել երկրից: Այս ցուցանիշն ակնյայտ է նաեւ համեմատութեան մէջ, երբ նկատում ենք, որ ՀՀն՝ որպէս հայրենիք ընդունողները երկու անգամ քիչ են մեկնելու մտադրութիւն ունեցողների զանգուածում (43.1%):

Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցած սուրիահայերի մեծ մասը (70.7%) ՀՀն է համարում իր հայրենիքը, 22.8%ը՝ Սուրիան, իսկ 6.5%ը դժուարացել է ընտրութիւն կատարել երկու երկրների միջեւ: Խորքային հարցազրոյցներում նրանք զգացմունքային եւ իմացական խորը մտքեր են հաղորդում «հայրենիք» եզրոյթի մասին. ոմանք տրամաբանական համեմատութիւնների միջոցով, ոմանք վերացական արտայայտութիւններով, ոմանք էլ իրականութիւնը իրատես գնահատելով տալիս են հասկացութեան էութիւնը (աղիւսակ 4)[10]:

Աղիւսակ 4.- Սուրիահայերի պատկերացումները հայրենիքի մասին

էստէղ է հայրենիքը: Ուրիշ տեղ ո՞նց կը համարես հայրենիք: Ինչքան էլ էնտեղ մեզի համար ապրեր ենք, բայց շատ մանրամասնութիւններ կան, եթէ կը նայես, կը տեսնես, որ այնտեղ մեզի օտար եղեր են: Օրինակ, մեզի՝ խանութ ունեցողներուս, կամ, թէկուզ, աշխատող բանուորներուն արաբները միշտ էլ խփում էին, քիչ մըն ալ կռիւ լինում էր: Արաբները առաջին խօսքն ըսեր են՝ դուք գացէ՛ք ձեր երկիրը: Տենց բաներ շատ ա լինում: Բայց որովհետեւ մենք ապրել ենք դիկտատուրայի երկրում, էնտեղ չէիր կարայ ո՛չ նախագահին հայհոյէիր, ո՛չ վատ բան ըսէիր: Դրա համար, որ տենց սխալներ էին լինում, մենք վախում էինք, ասում էինք՝ չէ՛, արաբները լաւն են: Ո՞վ ըսաւ... (49 տ. տղամարդ, ք. Երեւան):

Հայրենիքը իմ համար զգացումն ա: Հայրենիքը, եթէ հողը պիտի համարենք, ես հայրենիք ուրեմն կը համարեմ էդ հողը, որտեղ ես իմ սիրած մարդկանց հետ եմ: Էդ հանգստութիւնը, որ ես էս հողի վրայ հանգիստ եմ, ինծի համար կարեւոր է: Եթէ ապրելու պիտի գաս, էդ զգացումը պիտի զգաս՝ իբր հայրենիքի: Էդ մարդիկ են, որ քեզ էդ զգացումը տալիս են, եւ ոչ թէ հողն ա: Հիմա ուզում եմ ծնողներուս էստեղ բերեմ, որ հարիւր տոկոս զգամ՝ թէ՛ հողով, թէ՛ զգացական, իմ հայրենիքը Հայաստանը եղաւ արդէն: Իրանք որ հոս են, ես որտեղ ալ գնամ, Հայաստանն ա իմ հայրենիքը (32 տ. տղամարդ, ք. Երեւան):

Ասի ամենէն դժուար եւ բարդ հարցն է: Եթէ ես հայրենիք պիտի համարեմ, պիտի հասնեմ Եդեսիա, Ուրֆա. հայրերուս երկիրը ատիկա էր: Բայց այս վայրկեանին, երբ որ Սուրիան ինծի գրկեր, գուրգուրեր, մշակեր է, ես Սուրիան իմ հայրենիքս կը համարեմ: Պիտի վրադ խնդամ, եթէ ըսեմ, որ Երեւանն իմ

հայրենիքս է: Բայց հպարտ եմ, որ ես հայ եմ, եւ այս մէկ պատառ հողը ունիմ, որ այսօր եկեր եւ այստեղ նստեր եմ (55 տ. կին, ք. Երեւան):

Դժուար հարց է: Իմ կարծիքով, սփիւռքահայի հայրենիքը սփիւռքն է: Երբ մենք գաղթականութեան ժամանակ եկանք Սուրիա, ասինքն՝ աս է մեր հայրենիքը: Փաստօրէն դա չեղաւ: Մենք թողեցինք այն վտանգի մէջ ու եկանք: Եկանք Հայաստան ու հասկցանք, որ Հայաստանն ալ մեր հայրենիքը չէ: Մեր հայրենիքը սփիւռքն է: Հիմա շատ սուրիահայեր կան, որ մոլի կերպով կը համարեն, որ իրենց հայրենիքը Սուրիան է, բայց չեմ կրնայ ըսեմ՝ մնացե՞լ են հոն, թէ՞ չէ: Իսկ նրանք, ովքեր եկան ու նորէն դուրս եկան Հայաստանէն, փաստօրէն, իրենք ալ Հայաստանը հայրենիք չհամարեցին: Միգուցէ մեր հայրենիքը մի օր դառնայ Ֆրանսիան, Գերմանիան, Շուէդիան, կամ, չեմ գիտեր, ուրիշ մի երկիր:
Շատերը կ'ըսեն՝ մեր հայրենիքը Արեւմտահայաստանն է. եթէ այն անկախանայ, կը լինի քո հայրենիքը, եթէ չէ՝ դու չունիս հայրենիք, փաստօրէն: Սփիւռքահայի հայրենիքը սփիւռքն է. ես սա կ'ըսեմ դժբախտաբար (56 տ. տղամարդ, ք. Երեւան):

Ծննդավայր-հայրենիք հասկացութիւնների փոխկապուածութեան վերլուծութիւնը եւս որոշակի օրինաչափութիւններ է բացայայտում այս առումով: Ըստ ուսումնասիրութեան արդիւնքների՝ ակնյայտ ընդհանրութիւն է նկատւում Սուրիայի փոքր բնակավայրերում (Քամիշլի, Քեսապ, Տէր Զօր, Րաքքա, Լաթաքիա, Հոմս, Արաբ Փունար) եւ Հայաստանում ծնուած հայերի մօտ, քանզի նրանց մտքերում եւ զգացմունքներում հայրենիքը միանշանակ ագուցւում է ՀՀի հետ: Արաբական երկրների մեծ քաղաքներում ծնուած սուրիահայերը (Դամասկոս, Պէյրութ, Քուէյթ), կանգնելով երկընտրանքի առաջ, հարցը լուծում են՝ հաւասարապէս կարեւորութիւն տալով երկու երկրներին: Բոլորից տարբեր է տրամադրութիւնը հալէպահայերի շրջանում. թէպէտ մեծ մասը կողմնորոշուած է դէպի ՀՀ, սակայն նրանց մէջ տասից երկուսը բոլոր առումներով՝ ընդհուպ մինչեւ հայրենիքի ընկալման մակարդակ, ամուր կապուած է սուրիական հողին:

Այնուամենայնիւ, սուրիահայերն ունեն ՀՀից հեռանալու իրենց պատճառները, որոնց մեծ մասը ընկերատնտեսական բնոյթ է կրում: Ինչպէս ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին, այնպէս էլ 5-6 տարի անց սուրիահայերին անհանգստացնում են ՀՀի վատ ընկերային պայմաններն ու տնտեսութեան անբարենպաստ վիճակը, աշխատանքի եւ սեփական բնակարանի բացակայութիւնը, ցածր աշխատավարձն ու աշխատանքային ծանր պայմանները, սեփական գործի ստեղծման դժուարութիւններն ու դրանից ստացուած ցածր եկամուտը, որոնք, ընդհանուր վերցրած, կարեւոր ազդեցութիւն են ունենում նաեւ նրանց գաղթի վարքագծի ձեւաւորման վրայ: Եթէ առաջին տարիներին այն ամենակարեւոր գործօնն էր (72%, աղիւսակ 5), ապա վերջին տարիներին, աւելի խորանալով, դառնում է գերակայ պատճառ բոլոր պատճառների մէջ (84.6%):

Աղիւսակ 5.- ՀՀից հեռանալու պատճառները	Տարի եւ %	
Պատճառներ	2017	2014
Ընկերա-տնտեսական պատճառներ	84.6	72.0
Մշակութային-հոգեբանական պատճառներ	7.7	14.0
Ընտանիքի միաւորում	7.7	10.5
Իրաւական խնդիրներ	0.0	3.5
Ընդամէնը	100.0	100.0

ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին սուրիահայերը նաեւ մշակութային եւ հոգեբանական մեծ ցնցում են ապրել, ինչը ոչ միայն որոշակի հետք է թողել, այլեւ ոմանց համար՝ ՀՀից հեռանալու պատճառ հանդիսացել: Վերջինս, սակայն, տարիների ընթացքում պակաս կարեւոր է դառնում եւ զիջում իր տեղը ՀՀն լքելու պատճառների մէջ:

Սուրիահայերից ոմանք ՀՀ էին եկել ոչ թէ ամբողջական, այլ կիսուած ընտանիքներով: Հետեւաբար, ընտանիքի վերամիաւորումը եւս ապագայի հարցում որոշում կայացնելու գործընթացում որոշակի տեղ է զբաղեցնում, եւ, ինչպէս տեսնում ենք հետազօտութեան արդիւնքներից, այն սուրիահայերի մի որոշ զանգուածի համար (10.5%) կատարուել/կատարուելու է ոչ թէ ՀՀի ներսում, այլ նրա սահմաններից դուրս: Տարիների ընթացքում այս հարցը եւս գնալով լուծում է ստանում՝ աւելի քիչ յաճախականութեամբ (7.7%) հանդիպելով երկրից հեռանալու պատճառների մէջ:

Եթէ ՀՀից հեռանալու պատճառներն աւելի շատ բանական են եւ ընկերատնտեսական հիմքեր ունեն, ապա ՀՀում մնալու խթանները մեծամասամբ զգացական են եւ հոգեբանական երանգներ ունեն: Այսպէս, ՀՀում մնալու դրդապատճառների մէջ մեծ կշիռ է ստացել ՀՀն՝ որպէս հայրենիք ընկալելու եւ նրա նկատմամբ սիրոյ խոստովանութեան երեւոյթը: Եթէ 2014ի հետազօտութեան արդիւնքներով այն կազմում էր 43.1%, ապա 2017ին այն աւելի մեծ յաճախականութիւն է գրանցել (54.2%, աղիւսակ 6)՝ ցոյց տալով սուրիահայերի՝ հայրենիքի նկատմամբ սիրոյ եւ դրական տրամադրուածութեան աճը:

Աղիւսակ 6.- ՀՀում մնալու դրդապատճառները	Տարի եւ %	
Պատճառներ	2017	2014
Հայաստանում անվտանգ է	16.7	22.2
Սա է մեր հայրենիքը, սիրում եմ այն	54.2	43.1
Ունեմ աշխատանք/սեփական գործ	8.3	2.8
Յարմարուել եմ Հայաստանի կեանքին, լեզուն գիտեմ	20.8	22.2
Այլ երկիր գնալու հնարաւորութիւն չունեմ	-	6.9
Ուզում եմ ՀՀին օգտակար լինել	-	2.8
Ընդամէնը	100.0	100.0

Յաջորդ՝ մեծ յաճախականութիւն գրանցած երկու պատասխանները վկայում են սուրիահայերի կողմից ստեղծուած իրավիճակը համարժէք գնահատելու մասին՝ ՀՀից չհեռանալու դրդապատճառները բացատրելով երկրի անվտանգ լինելու եւ արդէն յարմարուելու փաստով: Սուրիահայերի մի որոշ զանգուած էլ խոստովանում է այլ երկիր գնալու հնարաւորութեան բացակայութեան մասին:

Ինչպէս նշուեց վերեւում, սուրիահայերի համար աշխատանքի եւ սեփական գործի առկայութիւնը ՀՀում մնալու կարեւոր խթան է հանդիսանում: Եւ եթէ առաջին տարիներին այն քիչ յաճախականութեամբ է հանդիպել, ապա ներկայումս երեք անգամ աւելի ծանրակշիռ հանգամանք է համարւում նրանց՝ այլ երկիր չմեկնելու որոշման կայացման հարցում (2014՝ 2.8%, 2017՝ 8.3%, աղիւսակ 6):

ՀՀից հեռանալու ցանկութիւն յայտնած եւ որոշում կայացրած սուրիահայերի մի մասն աւելի վճռական է դարձել վերջին տարիներին՝ երկրից հեռանալու ուղղութեամբ արդէն որոշակի քայլեր ձեռնարկելով: Եթէ առաջին տարիներին նրանց մէջ մօտաւորապէս տասից մէկն էր գտնւում գործողութեան փուլում, ապա 2017ի հետազօտութեան արդիւնքներով պարզ է դառնում, որ ոչ միայն մօտ երեք անգամ շատացել է նրանց թիւը, այլեւ այդ քայլերն են դարձել բազմաբնոյթ՝ ձեռք բերուած ՀՀ քաղաքացիութիւնից հրաժարուել, տարբեր երկրների դեսպանութիւններ դիմել, այլ երկրներում գործ հիմնել եւն.:

Եթէ ՀՀ տեղափոխուելու առաջին տարիներին շատ սուրիահայեր, որոնք դեռ յոյս ունէին, որ իրավիճակը կը կարգաւորուի եւ Սուրիան կը վերագտնի իր նախկին հզօրութիւնը, ցանկանում եւ մտածում էին վերադառնալ այնտեղ, ապա վերջին տարիներին նրանք աւելի իրատես են մտածում՝ մօտ չորս անգամ կրճատելով Սուրիա վերադառնալու հաւանականութիւնը (աղիւսակ 7):

Աղիւսակ 7.- Ո՞ր երկիր են նախընտրում մեկնել	Տարի եւ %	
Երկրներ	2017	2014
Սուրիա	9.1	37.3
Քանատա	18.2	5.1
ԱՄՆ	9.1	11.9
Արաբական երկրներ	9.1	1.7
Եւրոպական երկրներ	-	30.4
Դժուարանում է պատասխանել	54.5	13.6
Ընդամէնը	100.0	100.0

Այդ տարիներին նրանց համար, Սուրիայից բացի, նախընտրելի եւ իրատեսական էր մեկնել նաեւ եւրոպական երկրներ (Շուէտ, Ֆրանսիա, Գերմանիա, Պելճիքա, Աւստրալիա, Հոլանտա), ԱՄՆ եւ Քանատա, որտեղ, իրենց կարծիքով, ապաստան եւ տնտեսական ու ընկերային աջակ-

ցութիւն կը գտնեն: Վերջին շրջանում սուրիահայերի համար ընդունող երկրներից ամենահաւանականը մնում է Քանատան: Անորոշութիւնը շարունակւում է նաեւ այս իմաստով. նրանք թէպէտ ցանկանում են գնալ ՀՀից, սակայն կէսից շատը դժուարանում է ասել, թէ՝ ուր: Իսկ, ընդհանուր առմամբ, թուարկուած հաւանական երկրների ցուցակը թոյլ է տալիս ասելու, որ սուրիահայերն ընդունող երկրի հետ էթնոմշակութային ընդհանրութիւնները նկատւում են երկրորդական՝ առաջնայնութիւն տալով ընկերատնտեսական բաղադրիչին: Եւ պատահական չեն նաեւ այն ցուցանիշները, որոնք ստացուել են «ի՞նչ պայմանների փոփոխութեան դէպքում չէք մեկնի Հայաստանից» հարցադրման արդիւնքում: Գործօնների մէջ ամենամեծ զանգուած (46.1%) կազմել են այն պատասխանները, որոնցում աշխատանք/լաւ աշխատանք ունենալն է համարուել պարտադիր պայման՝ ՀՀում մնալու համար: Միւս գործօնները դասակարգուել են հետեւեալ կարեւորութեամբ՝ աշխատանքի դիմաց բարձր վարձատրութիւն, սեփական բնակարանի առկայութիւն, սեփական գործ ստեղծելու հնարաւորութիւն/ցածր հարկեր, քաղաքական համակարգի փոփոխութիւն, հարազատների /ընտանիքի անդամների հետ վերամիաւորում, իրաւական խնդիրների լուծում, մարդկանց բարեհամբոյր վերաբերմունք (համապատասխանաբար՝ 17.1%, 13.2%, 5.3%, 5.3%, 5.3%, 2.6%, 2.6%): Այս ամենի հետ մէկտեղ պատասխանների 2.5%ը պնդում է որ անկախ որեւէ իրավիճակի փոփոխութիւնից, սուրիահայերը վճռական են տրամադրուած ՀՀից հեռանալու հարցում:

Ըստ փորձագիտական գնահատականների՝ տարիների ընթացքում էական փոփոխութիւններ են տեղի ունեցել այս հարցում. սուրիահայերի այն խումբը, որը մտածում էր ՀՀից հեռանալ, արդէն տեղափոխուել է այլ երկիր, իսկ ՀՀում ներկայումս բնակուող սուրիահայերը, որոնք, իդէպ, ըստ իրենց գնահատականների, կազմում են ընդհանրապէս ՀՀ եկած սուրիահայերի մօտ մէկ երրորդը, այստեղ մշտական բնակութեան մտադրութիւն ունեցող խումբն է:

Մեր ուսումնասիրութիւնների շրջանակում հայաստանաբնակ հայերը եւս յայտնել են իրենց տեսակէտը՝ գտնելով որ սուրիահայ ընտանիքների վերադարձը ՀՀ ներգաղթ չէ, եւ երկրի մի փոքր վերականգնումից յետոյ նրանց գերակշիռ մասը կը վերադառնայ Սուրիա: Չնայած մշակութային եւ տնտեսական կեանքում սուրիահայերի դերակատարութիւնը կարեւորելուն՝ տեղացիների մօտաւորապէս 70%ը կիսում է նման տեսակէտ (աղիւսակ 8), որոնց մէջ մեծ խումբ են կազմում կանայք՝ տղամարդկանց համեմատութեամբ (համապատասխանաբար 71.6% եւ 67.5%), գրեթէ հաւասարաչափ աւագ եւ միջին սերունդը, ապա՝ երիտասարդները (համապատասխանաբար 70.8% եւ 70.4%, 67.5%ի համեմատ), մարզային քաղաքների բնակիչները, երեւանցիները, ապա՝ գիւղաբնակները (համապատասխանաբար 76.1%, 68.0%, 66.7%):

Աղիւսակ 8.- Գաղթի վարքի վերլուծութիւն, փոխադարձ պատկերացումներ, %			
Դատողութիւններ	Համա-միտ եմ	Համա-միտ չեմ	Դժ. Պատ.
Սուրիահայերն առաջին հնարաւորութեան դէպքում կը վերադառնան Սուրիա	69.9	17.8	12.3
ՀՀ հայերն առաջին հնարաւորութեան դէպքում կը հեռանան ՀՀից	88.0	8.0	4.0
Սուրիահայերը կը հաստատուեն ՀՀում	40.9	46.2	12.8
ՀՀ հայերն ամէն ջանք գործադրում են ՀՀում մնալու համար	16.0	68.0	16.0

Հայաստանից արտագաղթելու հարցը քննարկման առարկայ է դառնում ոչ միայն սուրիահայերի դէպքում, այլ նաեւ՝ սուրիահայերի համար, քանզի նրանք եւս նկատել ու ձեւաւորել են սեփական պատկերացումները հայաստանցիների գաղթի վարքագծի վերաբերեալ: Այս պարագայում սուրիահայերը աւելի մեծ զանգուած են կազմում (88%)՝ կարծելով, որ տեղացի հայերն առաջին հնարաւորութեան դէպքում կը հեռանան ՀՀից: Սուրիահայերի կարծիքով՝ տեղացիների արտագաղթելը, անշուշտ, մեծ կապ ունի երկրի ոչ-արդիւնաւէտ կառավարման եւ ընկերատնտեսական խնդիրների հետ: Կարեւոր պատճառների թուին նրանք դասում են նաեւ հեշտ, բայց օտար ճանապարհ ընտրելու հայաստանցիների որդեգրած «ռազմավարութիւնը», հայրենիքին ծառայելու նրանց ցանկութեան բացակայութիւնը: Սուրիահայերի մէջ տաս հոգուց եօթը մտածում է, որ տեղացին ոչ մի ջանք չի գործադրում ՀՀում մնալու եւ արտագաղթի ճամփան չբռնելու համար (աղիւսակ 8): Ինչպէս քանակական, այնպէս էլ որակական գնահատականներով նրանք արտայայտում են հարցի վերաբերեալ իրենց դիրքորոշումը.

> ...Այստեղի երիտասարդները չեն ուզեր մնալ Հայաստանում, այստեղի համար մի բան անել: Չէ՛, իրենք ուզում են գնալ Ռուսաստան: Հոն ի՞նչ կայ, չեմ հասկանում: Այստեղ է քո հայրենիքը, պէտք է մնաս եւ պայքարիս անոր համար: Ռուսաստանն արդէն հասել ա իրա հասնելիք տեղը (կին, 22 տարեկան, ք. Երեւան)[11]:
>
> Գործը անհնար է հոս: Անոր համար մենք ամէն օր կ'ըսենք՝ ի՞նչ պիտի ըլլայ: Միայն մեզի համար չէ՝ իբրեւ սուրիացի կամ սփիւռքահայ: Արդէն տեղացին կը փախնի, կ'երթայ երկրէն: Ես անոր համար ցաւ կը զգամ՝ ինչո՞ւ, ինչո՞ւ մենք պիտի էրթանք՝ իբր հայ, ուրիշին ստրուկ ըլլանք, որ քիչ մը փող շահինք: Ես ինչո՞ւ չկարողանամ իմ երկրիս մէջ ապրիմ, երկիրս զարգացնեմ (կին, 58 տարեկան, ք. Երեւան)[12]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1896ին, Զէյթունի հնչակեան գործիչներու անձնատուութենէն ետք, օսմանեան իշխանութիւնները մէկիկ-մէկիկ սկսան հալածել հնչակեաններ նաեւ Անտիոքի շրջանին մէջ: Նախ գրեթէ բոլոր հնչակեան գիւղերու մօտ տեղակայեցին ոստիկանատուներ, որոնք խիստ հսկողութեան տակ առին գիւղերու ելեւմուտը[5]: Հալէպի բերդը լեցուեցաւ պէյլանցի, սուետիացի եւ քեսապցի հնչակեաններով: Շատեր կրցան ճամբայ գտնել ու փախչիլ Ամերիկա: Հնչակեանները կը հալածուէին ամեն տեղ եւ ամեն ժամանակ, ընդհուպ մինչեւ սահմանադրութեան նախօրեակին[6]: 1907ին Եագուպիէի Ազգային վարժարանի դուրսէն հրաւիրուած ուսուցիչը՝ Սահակ Ճանըգեան, կը բանտարկուի: Եագուպիէի Գրիգոր Քհնյ. Գասսիսը (Երէցեան) կը յայտնէ, որ ուսուցիչը «*Քսան օր մնաց բանտ առանց քննուելու, առանց իր քովէն թուղթ մը կամ ոեւէ բան մը գտնուելու. բոլոր այս եղելութիւնը զրպարտութիւն է եւ թշնամական գործ*»[7]: Ճանըգեան ամբաստանուած էր յեղափոխական գործունէութեամբ եւ արգիլեալ գրականութիւն ունենալուն համար:

1908ի օսմանեան սահմանադրութիւնը լայն առիթ ընձեռեց հայ քաղաքական կուսակցութիւններուն հրապարակային գործունէութիւն ծաւալելու: Այսուհանդերձ չափազանց զգուշաւորութիւն մը կը տիրէ ժողովրդային մակարդակի վրայ, որովհետեւ գիւղական շրջաններու մէջ աւատապետու-

թիւնը, այսինքն՝ կալուածատէր պարոնները, յայտնապէս կառավարութեան հետ գործած էր հնչակեաններու ձերբակալութեան շրջանին[8]: Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք Օրտուի թուրքերը Քեսապ կու գան ու Խոդ կոչուող հրապարակին մէջ տեղւոյն հայոց հետ փող ու թմբուկով շուրջպար կը բռնեն ու կը տօնեն սահմանադրութիւնը: Գիւղի աւագներէն մէկը՝ Այսա Մանճիկ աղան չի թաքցներ իր թերահաւատութիւնը ըսելով. «*Տեսնենք, թէ այս թմբուկին կոթը յետոյ որու՞ն գլուխին պիտի կոտրի*»[9]:

Հակառակ այն փաստին, որ Ժողովուրդին մեծամասնութիւնը տակաւին ինքզինք հնչակեան կը կոչէր, բայց չէր կրնար կազմակերպուիլ, որովհետեւ կուսակցութեան կեդրոնական վարչութիւններուն մէջ վերակազմաւորուելու պատճառով նախ երկպառակութիւններ կային ու շրջաններու վարչութիւններով զբաղող չկար, երկրորդ՝ ապտուլհամիտեան բռնակալութեան տարիներուն նախկին կազմակերպիչները, դրսեցի եւ տեղացի, հեռացած էին, շատերը՝ գաղթած արտասահման: Կար նաեւ պահպանողական շրջանակ մը, որ առհասարակ արկածախնդրութիւն կը նկատէր կուսակցական գործունէութիւնը: Ուսանողական ու երիտասարդ մտաւորականութեան շրջանակներու մէջ կը կազմաւորուէր նոր ուժ մը՝ Դաշնակցութիւնը: Ան կը գործէր նախ գաղտնի, սեղմ խմբակներով ու խստօրէն կարգապահ սկզբունքով: 1905ին ան ներկայութիւն էր արդէն Քեսապի մէջ: Հալէպի մէջ առաջնորդանիստ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ կից Ազգային Ներսէսեան Վարժարանի 1908ի շրջանաւարտներ Անանիա Եարալեան-Վիրաւորեանը եւ Յովհաննէս Տեւէճեանը, 16-17 տարեկան, դաշնակցական էին: Եարալեան-Վիրաւորեանը (1890-1912) նոյն տարին Սուետիոյ «Փոթորիկ» մարտական խմբակի հիմնադիրներէն մէկն է, իսկ Յովհաննէս Տեւէճեանը (Տեվեճեան, Դեվեջեան, գրական անունը՝ Արմէն Սեւան, 1892-1976) յայտնի դաշնակցական գործիչ եղաւ, Գարեգին Նժդեհի զինակիցն ու բանտի ընկերը: Նոյն դպրոցէն է նաեւ Անանիայի հայրենակից եւ յայտնի դաշնակցական Մովսէս Տէր Գալուստեանը (Ա. Էյլանի,1895-1984): Սա ալ կը նշանակէ, որ Ներսէսեան վարժարանը կուսակցական շարժումներու յարմար միջավայր մը դարձած էր, մանաւանդ դաշնակցական նորագիրներ պատրաստելու գործին մէջ: 1909-11՝ երկու տարեշրջաններուն տնօրէն է Կարապետ Ապահունի, որ խաղաղ պաշտօնավարութիւն մը չ'ունենար: Կ'ըսուի, թէ ուսուցիչներ եւ աշակերտներ դպրոցը կը վերածեն (հնչակեան-դաշնակցական) կուսակցական հակամարտութիւններու կրկէսի մը: Առաջնորդ հայրը դիտողութիւն կ'ընէ հոգաբարձութեան, որ 13 Յունուար 1910ի նիստին կ'արձանագրէ.

> Առաջնորդ հօր կողմէ հոգաբարձութեանս դիտողութիւն եղած էր, որպէս թէ դպրոցի մէջ ուսուցչաց եւ աշակերտաց կողմէ կուսակցական խնդիրներ կը յուզուին եւ կազմակերպութիւններ կ'ըլլան:

Ժողովս՝ տնօրէն Ապահունի էֆ(ենտի)է բացատրութիւններ ուզեց այս խնդրոյ մասին, որն ալ ապահովեց թէ կուսակցական կազմակերպութիւն կամ խնդիր վարժարանիս մէջ գոյութիւն չառնելու մասին ալ հարկ եղած կարեւոր ազդարարութիւնները ըրած է: Ժողովս գոհ մնաց տրուած տեղեկութիւններէն, սակայն եւ այնպէս որոշեց կրկին՝ նամակաւ տնօրէնութեան ներկայացնել խնդիրը, որ այս վերջինը ծայր աչալուրջ գտնուի եւ պաշտօնէից հարկ եղած զեկոյցը ընէ[10]:

4 Յուլիս 1911ին, հոգաբարձութիւնը եւ ուսումնական խորհուրդը խառն ժողովով մը՝ նախագահութեամբ Շահէ Վրդ. Գասպարեան առաջնորդին, ժողովականներու բացարձակ հաւանութեամբ Կարապետ Ապահունին կրկին տնօրէնութեան կը կանչեն: Բայց հանրութեան մէջ զանգուած մը կը շարունակէ ամբաստանել Ապահունին, իբրեւ կուսակցական գործիչ ու նեղի դնել հոգաբարձութիւնը: Հոգաբարձութիւնը 20 Օգոստոս 1911ին՝ քաղաքական ժողովին յղուած իր նամակին (127 թուակիր, ստորագրուած ատենադպիր Տոքթ. Ն. Գ. Իփէքեանի եւ ատենապետ Ա. Միրաքեանի կողմէ)[11] մէջ կը գրէ.

> Նկատելով որ, տեղւոյս ազգ(ային) գործեր, մասնաւորաբար կրթական գործը խել մը պաշիպօզուգներու ապօրինի եւ վատ արարքներով՝ բարոյապէս եւ նիւթապէս վատթարանալու շաւղին մէջ կը մտնեն, եւ առ հասարակ ազգ(ային) բոլոր գործեր ամլութեան եւ մասա՛մբ անիշխանութեան կ'ենթարկուին, հոգաբարձութիւնս իւր ներկայիս կու գայ զեկուցանել պատ(ուական) ժողովիդ թէ, յօգուտ կրթական գործին՝ կ'ուզէ ազգային ոեւէ շրջանակի ազդեցութենէ բոլորովին անջատ եւ լիազօր իրաւասութեամբ վարել իւր վարժարաններ: Արդ, եթէ պատ(ուական) ժողովդ մինչեւ 24 ժամ սոյն իրաւասութիւնը չհաճի տալ, ժողովս ինքզինք հրաժարած պիտի նկատէ՝ ապագային բոլոր պատասխանատուութիւնը պատ(ուական) ժողովիդ վրայ թողլով:

«*Խել մը պաշիպօզուքները*» արտայայտութիւնը կ'երթայ տնօրէնը ամբաստանող ճակատին, որ օր մը առաջ, 19 Օգոստոսին, «ի դիմաց 300 ստորագրողաց» թռուցիկ մը բաժներ էր քաղաքին մէջ: Մեզի յայտնի չէ, թէ ի՛նչ կուսակցութեան ծառայելու ամբաստանութեամբ կը մեղադրուի տնօրէնը եւ ի՛նչ կուսակցութեան շրջանակի մարդիկ են կրթական գործին միջամտող այդ «Խել մը պաշիպօզուքները»: Բայց յստակ է, որ հոս կը գործէ ինչակեան-դաշնակցական հակամարտութիւն մը՝ դպրոցական կեանքին վրայ մենիշխանութիւն հաստատելու նպատակով: Հոգաբարձութիւնը քաղաքական ժողովին վերջնագիր կը ներկայացնէ յայտնելով որ «*կ'ուզէ ազգային ոեւէ շրջանակի ազդեցութենէ բոլորովին անջատ եւ լիազօր իրաւասութեամբ վարել իւր վարժարանները*»: Քաղաքական ժողովը նոյն օրն իսկ հոգաբարձութեան կու տայ անոր խնդրած լիազորութիւնը: 21 Օգոստոս 1911 թուակիր նամակով հոգաբարձութիւնը լուսաբանութեան կը կանչէ «ի դիմաց 300 ստորագրողաց» Յակոբ Ստեփանեանն ու ընկերները, կանխաւ անգամ մը եւս ընդգծելով տնօրէնին «օգտակար եւ արդիւնաւոր ծառայութիւնը»: Կը գրէ.

Հոգաբարձութիւնս՝ նախորդ հոգաբարձութեան երկսեռ վարժարանաց տնօրէնի մասին իւր հրապարակային գոհունակութիւնը լսելէ եւ յետոյ մասնաւորաբար իր մասին կրկին գոհացուցիչ տեղեկութիւնները ստանալէ վերջ, անցեալ Յուլիս 4 թուականաւ պատ(ուարժան) Ուսումնական խորհրդէ եւ արդի հոգաբարձութենէ կազմեալ խառն ժողովով մը, նախագահութեամբ Շահէ վրդպետ. Գասպարեանի, ժողովականաց բացարձակ հաւանութեամբը զինքը կրկին տնօրէնութեան հրաւիրած է: Արդ՝ հոգաբարձութիւնս վստահ յիշեալին օգտակար եւ արդիւնաւոր ծառայութեանը՝ ամեն պատասխանատուութիւն իր վրայ առնելով՝ կը զեկուցանէ Ձեզ թէ իրեն համար տնօրէնի խնդիրը վերջնականապէս փակուած է:

Սակայն եթէ պատ(ուարժան) բողոքարկուներ բաւարար չեն համարեր սոյն գոհացում, կը զեկուցանէ, թէ չէզոք անձնաւորութիւններէ բաղկացեալ մասնախումբ մը կազմած է եւ պիտի հրաւիրէ յիշեալ 300 կրթասիրացը մի առ մի, որք պարտին ներկայանալ եւ նախ արձանագրել տալ իրենց անուններ եւ մականուններ մասնաւոր տետրակի մը մէջ, ապա իւրաքանչիւր ոք իր կարգին խօսելով իր բանաւոր դիտողութիւնները՝ պիտի ստանայ իր օրինաւոր պատասխանը եւ ապա յիշեալ մասնախումբը իր վերջին քննութեանց արդիւնքը պիտի տեղեկագրէ հոգաբարձութեանս, որ նա ալ իր կարգին եզրակացութեան յանգելով՝ պիտի յղէ նորա արդիւնքը պատկ(առելի) Քաղաքական ժողովոյ առ ի կարգադրութիւն պարտ ու պատշաճին»:

Նամակը ի դիմաց հոգաբարձութեան Ազգ(ային) Ներս(էսեան) Երկ(սեռ) վ(ա)րժ(արա)ն(ա)ց՝ ստորագրած են ատենադպիր Տոքթ. Իփէքեան եւ ատենապետ Միրաքեան[12]:

Ատենագրութիւնները սոսկ կ'արձանագրեն փաստը՝ առանց անուանելու դպրոցէն ներս գոյութիւն ունեցող ճակատները՝ դաշնակցակա՞ն, թէ՞ հնչակեան: Սակայն յստակ է, որ դպրոցին շուրջ ու մէջ ձեւաւորուած են կուսակցական հակամարտ կողմեր, որոնցմէ, գոնէ առերեւոյթ, հոգաբարձութիւնը կ'ուզէ անկախ գործել:

Ընդդիմադիրները լռեցնել կարելի չ'ըլլար: Գայթակղութեան վերջ տալու համար Ապահունին կը պահուի իբրեւ ուսուցիչ, իսկ այդ կրթաշրջանի (1911-12) տեսչութիւնը կը վարէ հոգաբարձութիւնը:

Ազգային քաղաքական ժողովի, հոգաբարձութեան եւ դպրոցական ատենագրութիւնները թէեւ բան մը չեն արձանագրած, բայց կարելի է ենթադրել, որ կուսակցական նորագիրներ ապահովելու համար դպրոցը ատկէ ետք եւս ամենէն խոցելի միջավայրը կը հանդիսանար:

1914-9՝ Ներսէսեան վարժարանը կը փակուի պատերազմի բերմամբ:

Պատերազմէն ետք, 1919ին վերաբացուած Հալէպի Ազգային Երկսեռ Վարժարաններուն (Հայկազեան Վարժարաններ, նախկին Ներսէսեան) մէջ կրկին կ'երեւին կուսակցական նկրտումներ: Այս անգամ՝ աւելի բուռն, ինչպէս կ'երեւի Ազգային Քաղաքական Ժողովին կողմէ 1920-1921ին դպրոցի մասին կատարած ատենագրութիւններէն եւ հոգաբարձութեան ուղղուած ու վարը բերուած նամակներէն: Ազգային իշխանութիւնները

հետամուտ են, որ կուսակցական-գաղափարական շարժումներ չթափանցեն դպրոց: Համար 558, 16 Յուլիս 1920 թուակիր նամակով քաղաքական ժողովը հետեւեալը կը հրահանգէ Ազգային Երկսեռ Վարժարանաց հոգաբարձութեան. «*Կուսակցականութեան դպրոցի մափաղ պատանեկութեան հոգիին վրայ ըրած աւերը շատ լաւ ըմբռնելով ժողովս անհրաժեշտ կը նկատէ բացարձակապէս հեռացնել դպրոցի ուսանողութենէն ներս որեւէ կուսակցական մտայնութիւն, իսկ ասոր յարմարագոյն միջոցը կը նկատէ դպրոցէն ներս չընդունիլ այն բոլոր աշակերտ եւ աշակերտուհիները, որոնք 18 տարեկանէն վար ըլլալով հանդերձ՝ կը պատկանին կուսակցութեան մը*»[13]:

Դպրոցէն ներս կուսակցական որեւէ շարժում կասեցնելու նպատակով խստագոյն քննութենէ կ'անցնին ուսուցչական պաշտօնի դիմող թեկնածուները: Ազգային Երկսեռ վարժարանաց հոգաբարձութեան՝ պաշտօնէից հետ 1920ականներուն կնքած պայմանագրութեան տպագիր յայտը իր հինգերորդ յօդուածին մէջ կ'ըսէ հետեւեալը.

> ... Բացարձակապէս արգիլեալ է դպրոցէն ներս կուսակցական փրոփականտ մղել, երկսեռ աշակերտութեան ուշադրութիւնը ուղղակի եւ կամ անուղղակի միջոցներով կուսակցական հրատարակութեանց հրաւիրել, կուսակցական ոեւէ խմբակցութեան անդամակցիլ գործօն անդամի հանգամանքով, կուսակցական գլուխներու մէջ եւ կամ դուրսը կուսակցական պայքար մղել, կամ յարակից նիւթերու շուրջ բանախօսութիւններ ընել, Ազգային վարչութեան մարմիններու դէմ հրապարակային մաքառումներու մասնակցիլ, ըլլայ ժողովներու, ըլլայ մամուլի մէջ, նոյնպէս դպրոցին վարչական ներդաշնակութիւնը խանգարող ոեւէ քայլ առնել:

Արդէն յստակ է, որ կուսակցութիւնները ազգային իշխանութիւնները ձեռք բերելու համար քարոզչական գործունէութիւն կը ծաւալէին գրեթէ ամէն տեղ, բայց մանաւանդ կրթական հաստատութիւններէ ներս: Կը թուի, նոյնիսկ, որ ազգային վարչութեան որոշ մարմիններ պարբերաբար կ'ենթարկուէին այդ տրամադրութիւններուն: Այսպէս, հոգաբարձութիւնը պաշտօնապէս կը մասնակցի 28 Մայիս 1921ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի տօնակատարութիւններուն, այն ժամանակ երբ գաղութին ու գաղթականութեան մէջ կուսակցական հակամարտութեան ալիք մը կ'ահագնանար: Բերիոյ թեմի քաղաքական ժողովի նախագահ եւ առաջնորդական փոխանորդ Յարութիւն Քինյ. Եսայեան նոյն օրն իսկ հոգաբարձութեան ուղղուած նամակով մը կը դատապարտէ անոր մասնակցութիւնը գրելով. «*Ժամանակին եւ պարագայից ծայր ապրիճան փափկութեան համապատասխան չափ մը գծելով մենք որքան զգուշաւոր ընթանալ կրնայինք՝ հոգաբարձութիւնդ նոյն համեմատութեամբ չափազանցութեան փանելու ձգտում մը ցոյց տուաւ: Դրօշակով եւ ժապաւէնով, նուագով, նուագախումբով, ցոյցերով միայն Ազգին փունը քանդելու պարզմտութեամբ չմեղադրուելու համար ոգի ի բռին աշխատե-*

լու (ենք) ճիշդ այս ժամանակին: Մի քանի պարզամիտ եռանդոտներու թելադրութեամբ Ազգին ապագան զոհելու, վարժարանը վտանգելու ո՛վ իրաւունք ունի»[14]:

Յստակ է արդէն, որ հոս «մի քանի պարզամիտ եռանդոտներ»ը դաշնակցական երիտասարդներ են:

Բերիոյ թեմի ազգային վարչութեան քաղաքական ժողովը ստիպուած էր ծայրայեղ «Ժամանակին եւ պարագայից ծայր աստիճան փափկութեան համապատասխան» զգուշութիւն ցոյց տալ, հետեւեալ պատճառներով.-

1.- Հայ գաղթականութիւնը լրիւ անպաշտպան վիճակի մէջ էր ոչ միայն Հալէպի, այլեւ ամեն տեղ Սուրիոյ մէջ՝ Տէր Զօր, Դամասկոս, Քեսապ:

Անգլիական զօրքը Տէր Զօր կը մտնէ Յունուար 1919ին եւ օգտակար կ'ըլլայ վերապրող հայերը Հալէպ ուղարկելուն: Որբահաւաքի եւ հայահաւաքի գործը մեծ թափ կը ստանայ: Արաբները հաշտ աչքով չեն նայիր հայոց նկատմամբ անգլիացիներու ցուցաբերած հոգատարութեան: Անգլիացիներու հեռանալէն ետք արաբները քաղաք կը խուժեն. կը քանդեն նաեւ հայ կաթողիկէ եկեղեցին: Ֆրանսական բանակը քաղաք կը մտնէ 1920ի գարնան[15]:

Հալէպի մէջ 18 Փետրուար 1919ի առաւօտուն կատարուած հայոց ջարդին մասին Ատանայի *Կիլիկիա* թերթի մասնաւոր թղթակիցը Հալէպէն կը գրէ. «*Յաւալի կորուստներ ունեցանք դարձեալ: Պաշտօնական 46 սպանուած եւ 85 վիրաւոր կայ, բոլորն ալ հայ: Ջարդը կը սկսի Ճումա Բազարէն, ուր ոստիկաններ եւ զինուորներ կը ղեկավարեն ջարդարար խուժանը: Ժամը 10-ին միայն անգլիական եւ ֆրանսական շրջանակները շարժեցան եւ թոյլ չտուին, որ ջարդն աւելի ծաւալի*»[16]: Մէկ-երկու ժամու ընթացքին յարձակումներ տեղի կ'ունենան հին քաղաքի տարբեր մասերուն վրայ՝ Պապ էլ-Ճնէյնէի, Քասթալ Հարամիի, Պապ էլ-Նասրի, նախկին զօրանոցի եւ Աքապէ թաղի հայկական որբանոցին վրայ: Երկու օր ետք նոյն թերթը կը յայտնէ, որ եղան 51 սպանեալ, շուրջ 100 վիրաւոր եւ անհետ կորածներ[17]: Կը կազմուի նախաքննիչ ատեան մը, որուն մաս կը կազմեն նաեւ երկու հայեր: Երեք հոգի կախաղան կը բարձրացուին, շուրջ 100 ուրիշներ կը բանտարկուին, որոնք բանտէն փախչելու առթիւ կը սպանուին, իսկ ողջերը կ'աքսորուին Սուտան: Այդպէս ալ հնարաւոր չ'ըլլար բուն հրահրողները երեւան հանել. «*Մի խօսքով, անգլիացիները զանազան միջոցներով ոչնչացրին այն բոլոր վկաներին, որոնք իրազեկ էին Հալէպի հայկական կոտորածի ներքին ծալքերին*»[18]: Ասիկա անվստահութիւն կը ստեղծէ հայոց մէջ, որոնք կը լքեն ամեն ինչ ու Կիլիկիա կ'ուզեն ներգաղթել, նոյնիսկ Հալէպի որբանոցէն փախչողներ կ'ըլլան: Հալէպի մէջ կը դադրին *Տարագիր* եւ *Հայ Ձայն* թերթերը եւ մշակութային ամեն ձեռնարկ: Միւս կողմէ՝ կը ձեւաւորուի զինեալ պաշտպանութեան գաղափարը. *Կիլիկիա* անդրադառնալով Հալէպի ջարդին կը գրէ. «*Ասիկա **դաս** մըն է հայ ժողովուրդին համար, թէ Համաձայնական ուժերու ներկայու-*

թիւնն անգամ բաւական չէ պահպանելու անոր ապահովութիւնը, առօրեայ խաղաղ կեանքը»[19]:

Քեսապ հասած վերապրողներ, շուրջ 2000 հոգի, անգամ մը եւս ծանրօրէն վտանգուած էին, որովհետեւ ֆրանսական իշխանութիւնները տակաւին չէին կրցած թափանցել շրջան: Ֆրանսական ուժերը Լաթաքիոյ եւ Ճսըր Շուղուրի ու Իտլիպի միջեւ եւ անկէ մինչեւ Անտիոք, տիրութիւն ընել չկրցան շրջանի մը համար, որովհետեւ հոն սկսան բռնկիլ արաբ հայրենասէրներու ապստամբութիւնները, որոնք կը ղեկավարուէին շէյխ Սալէհ էլ-Ալիի (Լաթաքիոյ շրջան) եւ Իպրահիմ Հանանոյի (Անտիոքի եւ Հալէպի շրջան) կողմէ: 1919 Յունուարին անկախ պետութեան համար պայքարի ելած Համասուրիական Խորհրդարանական Ժողովի ներկայացուցիչ Սուպհի Պարաքաթ, Ռուճի Զամպաքիէ գիւղին մէջ, հիւսիս-արեւմտեան Սուրիոյ բոլոր ղեկավարներու համաժողովի մը ընթացքին, ապստամբութիւն յայտարարեց Սուրիոյ մէջ: Միւս կողմէ, տիրող խառն կացութենէն օգտուելով, Անտիոքի շրջանի թուրքերը հրաժարած էին շրջանի միւս ազգերուն նկատմամբ Զինադադարէն անմիջապէս ետք իրենց ունեցած սիրալիր ու հաշտ վերաբերմունքէն եւ կրկին ոտքի ելած: Անոնք, առերես զինակցելով արաբ հայրենասէրներու պայքարին, փաստօրէն, կ'ուզէին իրենց գերիշխանութիւնը հաստատել Լաթաքիայէն հիւսիս տարածքին վրայ: Հաքքի եւ Ասիմ պէյերու ղեկավարութեամբ չեթէական խումբեր կազմած էին եւ ահուսարսափ կը տարածէին շրջակայ ալեւի եւ յոյն բնակչութեան վրայ: Ասոնցմէ հետզհետէ կը քաջալերուէին յատկապէս Պայիրի եւ Պուճաքի (Քեսապի շրջանի արեւելեան եւ հարաւային շրջանները) թուրքերը: Թուրք հրոսակախումբերը, փաստօրէն, տէրն էին Անտիոքէն մինչեւ Լաթաքիա երկարող տարածութեան ու իրենց որջը դարձուցած էին Քեսապի մօտիկ Օրտու աւանը: Քեմալական վերջին յաղթանակներէն յղփացած նախկին բանակայիններ եւ սպաներ անցած էին ասոնց գլուխը եւ Օրտուի մէջ կազմած «Ճեպէլ Աքրա Ֆեւքիւլ Ատէ Քոմանտանը» (Ճեպէլ Աքրայի արտակարգ հրամանատարութիւն) անունով զինուորական մարմին մը[20]: Հարաւի ալեւիները նոյնպէս ծանր պայմաններու տակ էին: Թուրք աղաներու հրոսակախումբերը մտած էին ալեւի բնակավայրերը, սպանած շատերը, կողոպտած ու կրակի տուած անոնց տուները: Ալեւիներէն շատեր, հանդերձ ընտանեօք, ապաստանած էին Քեսապի հայոց մօտ: Նոյն օրերուն՝ Օրտուի արաբախօս յոյներու փոքրիկ գաղութն ալ ամենօրեայ սարսափի մէջ կ'ապրէր: Յոյները Քեսապ ապաստանիլ կ'ուզէին: Քեսապցի 70-80 հոգինոց զինեալ խումբ մը գնաց Օրտու եւ բոլոր յոյները՝ շուրջ 60 հոգի կազմող 20 ընտանիք տեղափոխեց Քեսապ: Ասոնցմէ ոմանք յետագային մնայուն կայք հաստատեցին շրջանին մէջ: Այդ ամիսներուն Քեսապ ապաստանեցան նաեւ Արֆալի հայ գիւղին վերապրողները: Քեսապի Ազգային Միութիւնը պետական իշխանութեան մը բացակայութեան պարագային կազմակերպեց Քեսապի ապահովական, տնտեսական,

կրթական եւ վերապրողներու տեղաւորման հարցերը: Կիլիկիայէն Քեսապ հասած քեսապցի լեգէոնականները՝ Մովսէս Շահպազեանի ղեկավարութեամբ հաստատեցին զինուորական իշխանութիւն: Քեսապցիք քանիցս ետ մղեցին Օրտուի կողմէն եկող վտանգները, եւ, Օգոստոս 1920ին, Ս. Աստուածածնայ տօնին օրը, Քեսապը պատժելու ելած մեծ ամբոխ մը Վարի Պաղճաղազ գիւղի մատոյցներուն առջեւ պարտութեան մատնեցին ու քշեցին հեռուները[21]:

Շուտով վրայ պիտի հասնէին Դամասկոսի հայ գաղթականներուն վրայ յարձակումներն ու քանդումը...: 1924-1925 տարիներուն ֆրանսական իշխանութիւններուն դէմ Դամասկոսի խլրտումները մեծապէս կ'ազդեն հայ գաղութին վրայ: 18 Հոկտեմբեր 1925ին ֆրանսական զօրքերը կը քաշուին կայազօրները: Ապստամբութեան մասնակիցները կը մտնեն Քատէմի քեմփը, ուր կը սպանուին 50 հայեր: Կը թալանուին Քատէմի, Պապ Շարքիի եւ Սուֆանիէ հիւղաւանները, Պապ Մուսալլայի եւ Մէյտանի բոլոր հայ խանութները[22]: Քատէմի հիւղաւանը գետնի հաւասար կ'ըլլայ: Ս. Սարգիս եկեղեցւոյ կից Պապ Շարքիի հիւղաւանին վրայ վտանգը աւելի կ'երկարի[23]: Աղէտեալ շրջաններէ շատ հայեր կ'ապաստանին Պէյրութ, ուրիշներ՝ կը տեղաւորուին Պապ Թումայի իրենց յատկացեալ նոր վայրին մէջ եւ այլ վայրեր: Զոհերն ու կորուստները անգամ մը եւս կը ցնցեն հայերը. Սահակ Բ. կաթողիկոս կը գրէ. «*Դժբախտաբար հոգեսարսուռ Կարմիրի շրջանը ամբողջացած չէ եղեր: Դամասկոսի արիւնոտ պատահարը նոր զոհերու հետ նոր կորուստներու եւ որբերու շարաններ սփեղծեց, մեծաւ մասամբ Պէյրութ ապաստանած*»[24]: Պէյրութի մէջ կը կազմուի **Համազգային Կարօտելոց Յանձնաժողով**ը, որուն անմիջապէս կը մասնակցին կաթողիկոսը, ՀԲԸՄը, Երուսաղէմի պատրիարքարանը, կաթողիկէ եւ աւետարանական մարմիններ[25]: Այս դէպքերուն հետեւանքով կը ստեղծուի քաղաքական եւ տնտեսական ճգնաժամ. հայոց մօտաւորապէս կէսը կը ձգէ կը հեռանայ քաղաքէն:

Դէպքերուն հակահայ տրամադրութիւններ կ'երեւին: Արաբ ազգայնականներու աչքին հայերը կը նկատուին ֆրանսական իշխանութեան հովանաւորեալները: Դամասկոսի հայոց դէմ կատարուած այս արարքները բնաւ կապ չունէին տիւրզիներու ապստամբութեան հետ: Ընդհակառակը՝ շատ հայեր Դամասկոսէն փախչելով ապաստան գտած էին հարաւի տիւրզի բնակավայրերուն մէջ, ուր արդէն հայկական համայնքներ ձեւաւորուած էին: Կ'արձանագրուի, որ «*Տիւրզիները ոչ մէկ ժամանակ չեն նեղած գաղթականները հայ ըլլալուն*»[26]: Կը տեղեկացուի, որ Ճեպէլ Տրիւզի Րիւմէ գիւղին մէջ կան 22 հայեր, եւ թէ ուրիշներ ալ եկած են հոն ապաստան գտնելու[27]: Լրիւ անկախութեան ձգտող սուրիացիները հայոց դէմ գրգռելը շատ դիւրին պիտի ըլլար եւ համոզել, որ հայերը գաղութարար զօրքերուն դրածոներն են Սուրիոյ մէջ: Իսլամ խուժանը հայոց հիւղաւաններուն վրայ

մղելը բացայայտօրէն օսմանեան նախկին ուժերու սադրանքն էր այդ պատեհ առիթին:

Հալէպէն, Սուրիոյ տարբեր գաղթակայաններէն ու տարագրութեան ճամփաներէն Կիլիկիա ներգաղթը կը սկսէր 1918ի վերջաւորութեան, Զինադադարէն անմիջապէս ետք: Տունդարձը սկզբնապէս ունէր զուտ տարերային եւ անհատական երեւոյթ: Շուտով՝ Սուրիոյ մեծ քաղաքներուն մէջ վերապրողներ հայրենակցական հիմունքով մէկտեղուեցան: Ասիկա յատկապէս երեւցաւ Հալէպի ու Դամասկոսի մէջ: Ասոնք ֆրանսական զօրքերու առաջնորդութեամբ կը վերադառնային հայրենիք: Ֆրանսան կը քաջալերէր ներգաղթը: Նշանակուած էր ներգաղթի տնօրէն, յանձին քոլոնէլ Քլունքոսի: Միջգաւառական Միութիւնը այս գործին մէջ երեւցող չարաշահումներ ու բողոքներ նկատելով՝ կ'առաջարկէ իր գործակցութիւնը, եւ գործը առաջ կը տարուի առանց զեղծումներու[28]:

Մինչեւ 1919ի վերջաւորութեան, մօտ 150.000 հայեր վերադարձած էին Կիլիկիա, որոնց 60.000ը՝ Ատանա, 12.000ը՝ Չորք-Մարզպան, 8000ը՝ Հաճընն, 3-4000ը՝ Տարսոն, 2-3000ը՝ Մերսին եւ այլուր: 50.000 հայեր հաստատուած էին Մարաշ, Այնթապ, Զէյթուն: Կիլիկիա ղրկուած էին 10.000 հայ որբեր[29]:

Տունդարձը կը կատարուէր ցամաքի ու ծովու ճամբաներով: Ատանայի մէջ կազմուած Ազգային միութեան մասնաճիւղեր սկսան գործել գրեթէ բոլոր ազատագրուած շրջաններուն մէջ: Ասոնք կը կազմակերպէին վերադարձողներուն տեղաւորման, ապրուստի ու ապահովութեան խնդիրները: Այսուհանդերձ, բազմահազար վերապրողներ ցրուած կը մնային Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ. անոնք կա՛մ փրկութեան կը սպասէին, կա՛մ ալ համակերպած էին իսլամանալու գաղափարին: Բայց իրադրութիւնը Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ յղի էր վտանգներով, Կիլիկիոյ ճակատագիրը անյայտ կը մնար: Երկրորդ գաղթականութեան մը վտանգը դուռին առջեւ էր...:

Հայ կեանքին մէջ, յատկապէս Քեսապ եւ Մուսա Լեռ, դեռ 1919էն ծայր առած էին եղբայրասպան կռիւներ ու ամբողջ տասնամեակի մը ընթացքին զոհեր խլած հակամարտ կողմերէն: Ասոնք սկզբնապէս ունենալով դասակարգային (աւատատիրոջ եւ շուկայի խաւին միջեւ) ու յարանուանական (բողոքական-լուսաւորչական) բնոյթ՝ հետզհետէ ահագնանալով ստացած էին կուսակցական հակամարտութեան կերպարանք՝ խլելով շուրջ հինգ տասնեակի չափ երիտասարդ կեանքեր, ու վտանգ կար *տերոր*-ահաբեկչութիւնը տարածելու ամբողջ գաղթաշխարհին մէջ: Այդ բախումները Քեսապէն կը խլեն 27, իսկ Սուետիայէն՝ 32 զոհ[30]:

Քեսապի եւ Սուետիոյ այս եղբայրասպանութիւնը կ'ալեկոծէ ամբողջ հայութիւնը: 10 Սեպտեմբեր 1921 թուակիր իր տեղեկագիրին մէջ Արշակ Չօպանեան հետեւեալ հաստատումը կը կատարէ. «*Կիլիկեան հայութեան մեծագոյն խոցերէն մին է կուսակցական պայքարը, այլանդակ ու անմիտ*

ծայրայեղութեան մը հասած..., որ ֆրանսացւոց եւ թուրքերուն մօտ կը խայտառակէ եւ կը վարկաբեկէ հայութիւնը: Այդ չարիքին առաջքը առնելու համար Ազգ. Պատուիրակութիւնը ջանալու է ընել ամեն ինչ որ կարելի է»[31]:

Սահակ Բ. կաթողիկոս Խապայեան Փարիզի Ազգային Պատուիրակութեան նախագահ Գաբրիէլ Նորատունկեանին յղած 5 Մայիս 1922 թուակիր նամակին մէջ կը գրէ.

> Սուէտիոյ մէջ ալ շփոթութիւնք անպակաս են, թշնամիէն ազատուող եւ հերոսի անուն վաստակող ժողովուրդը հիմա զիրար սպանելու քաջագործութեան մէջ են, Հաճի Հապիպլի եւ Պիթիաս իրարու դէմ զինուած, երկու երիտասարդներ Հաճի Հապիպլիէն սպանուած, փոխվրէժի համար անխուսափելի է նոր բախումը, պատուիրակութիւն մը ղրկեցի, որ աշխատի հաշտեցնել եւ զէնքերը վար դնել: Ինչ կը մնայ ըսել օտար թշնամիին, երբ մենք ալ [զիրար] բնաջնջելու կ'աշխատինք: Քեսապ ալ վարդագոյն, արիւնագոյն է ըսել պիտի ուզեմ, հոն միջցեղային կռիւն ու ոճիրը անպակաս են: Պատուիրակութեան հրահանգեցինք, որ Քեսապ հանդիպի եւ հաշտարարական դերը շարունակէ հոն: Իշխանութեանց անտարբերութիւնը կասկած կու տայ, թէ կ'ախորժի ներքին պառակտումներէն[32]:

Այս պարագային՝ իշխանութեան մասին ակնարկը կ'երթայ ֆրանսական իշխանութիւններուն:

- Քեսապի մէջ, զինուորական իշխանութեան հրամանատար Մովսէս Շահպազեանը (Շահպազ), որ կը նկատուի յետտունդարճի՝ Քեսապի տարբեր համայնքներու ներկայացուցիչներէն կազմուած Հայ Ազգային Միութեան[33] շրջանակին մէջ ամենէն հաւասարակշռուած ու գիտակից անձնաւորութիւնը, կը գրէ. «*Եղբայրասպան այս բախումներն ու կռիւները դադրեցնելու եւ անոնց վերջ տալու ամեն միջոց ապարդիւն մնաց: Պէտք է խոստովանիլ թէ յիշեալ անիմաստ վէճերէն ու պայքարներէն շատ փուժեցին Քեսապի ժողովուրդը կամ երկու կողմերը միանգամայն*»[34]:
- Հայաստանի Հանրապետութեան անկումին եւ Խորհրդային Հայաստանի հաստատման փաստերուն հանդէպ հակադիր կեցուածքներ խմորուած էին հայ գաղթականներուն մէջ: Ոմանք Հայաստանի անկախութեան անկումին մէջ դաշնակցական տիքթաթուրան կը նկատէին մեղաւոր, իսկ Հայաստանի գոյատեւումը՝ խորհրդային ուժի ներկայութիւնը: Հետեւաբար Մայիս 28ի տօնակատարութիւնները այդ պայմաններուն մէջ կուսակցական բովանդակութիւն ունէին, կը դիտուէին իբրեւ անկախութեան գաղափարը շահարկումի ենթարկող «գլուպ»ային (իմա՝ ակումբային-կուսակցական) գործունէութիւն, ու կրնային աւելի պառակտիչ ըլլալ:
- Ազգային իշխանութիւնները ոգի ի բռին կ'աշխատէին, որ ազգային վարժարանները չկուսակցականացուին. հայեցի կրթութիւնն ու ազգային դաստիարակութիւնը կուսակցականութեան վտանգէն ու մենաշնորհէն հեռու պահելը համազգային շահերէ կը բխէր: Այդպէս կը մտածէին հայ

թեմական իշխանութիւնները, այդպէս կը տեսնէին անոնք իրադարձութիւնները այդ «քրիթիկական ժամանակ»ներուն:

Եթէ առժամապէս կարելի եղաւ կասեցնել կուսակցութիւններու մենիշխանութիւնը դպրոցական կեանքէն ներս, միւս կողմէ սակայն կարելի չեղաւ խափանել ազգային եւ միութենական վարժարաններէ ներս կուսակցական նկրտումներով կատարուած դպրոցական եւ աշակերտական բաժանումները:

1921ին Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ (առաջնորդանիստ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ կից) կը հիմնուի Կիլիկեան Գաղթային Միութեան (ԿԳՄ) վարժարանը, որ փաստօրէն ոչ թէ եկեղեցւոյ թաղական խորհուրդին, այլ միութեան վարչութեան հսկողութեան տակ էր: Այնուհետեւ կը բացուին միութենական, հայրենակցական ու գաղթային այլ վարժարաններ եւս: Դպրոցներու թիւը տասնեակներով կը բազմապատկուի Սուրիոյ բոլոր գաղթային վայրերուն մէջ: Բերիոյ թեմի ազգային իշխանութիւնները կը հրաւիրեն բոլորը մտնելու ազգային վարժարաններու ցանցին մէջ եւ մտնելու ազգային վարչութեան Ուսումնական Խորհուրդի հսկողութեան տակ: Բերիոյ թեմի 1928ի գաւառական ժողովի ընտրութիւններէն ետք Ազգային վարժարաններու կազմին մէջ կը մտնեն 20 վարժարան՝ 4775 աշակերտով[35]: Հայրենակցական վարժարանները կամաց-կամաց կը փակուին՝ միանալով տեղւոյն վրայ գործող ազգային վարժարաններուն, ինչպէս Հալէպի մէջ Չարսանճաքի Հայրենակցական Միութեան (1922-1928), Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան (1923-1927), Եդեսեցւոց Համիտիէի (1923-1933) եւ Սուլէյմանիէի հիւղաւաններուն (1923-1933) վարժարանները: Նոյնը կ'ընեն 1929ին Կիլիկեան Կաթողիկոսութեան իրաւասութեան անցած Դամասկոսի ու 1932ին առանձին թեմի վերածուած Անտիոքի առաջնորդարաններու սահմաններէն ներս գործող ծխական ու գաղթային վարժարանները[36]:

1919-24՝ տեղական Ազգային Միութիւններու (Քեսապ, Սուետիա) հսկողութեամբ գործող աւետարանական եւ առաքելական համայնքներու միացեալ վարժարանները երկար չեն գործեր: 1923ին Քեսապ այցելող Սահակ կաթողիկոս Խապայեան կը յորդորէ «*չխզել Միութիւնը եւ հոգ տանիլ իրենց զաւակաց բարւոք զարգացման*»[37]: Միացեալ դպրոցները, ինչպէս կ'երեւի, երկար կեանք չեն ունենար: Բաժանումին մէջ դեր ունէին գլխաւորաբար յարանուանական շահերը: Այսուանդերձ՝ առաքելական-աւետարանական միացեալ վարժարաններու տեսլականը կը փայփայուի շատերու կողմէ՝ «*շեշտելով կարեւորութիւնը լուսաւորչական եւ բողոքական մանուկներուն տալու միօրինակ սկզբունքներու վրայ հիմնուած կրթութեան մը, որպէսզի կարենան անոնք ապագային համերաշխութեամբ գործակցիլ իրարու հետ՝ յօգուտ իրենց ազգային շահերուն*»[38]: Նոյնիսկ կ'առաջարկուի Հալէպի մէջ բանալ «նմոյշ դպրոց մը», ուր յարանուանական հաւասար հողի վրայ ուսում աւանդուի աշակերտներուն: Կրօնքի ուսումը ըլ-

լայ զուտ քրիստոնէական-բարոյագիտական, իսկ երկու յարանուանութիւններու սովորութիւնները համադրուին: Կը ծրագրուի պատրաստել յատուկ դասագիրք: 6000 տոլարի պիւտճէ կը նախատեսուի[39]:

1924ին կազմուեցաւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւնը, կեդրոնը՝ Պէյրութ: Սուրիոյ մէջ գործող բոլոր աւետարանական վերաբացուած նախկին ու նոր վարժարանները կը մտնեն աւետարանական վարժարաններու ցանցին մէջ: Սուրիոյ մէջ առաջին եկեղեցին նկատուեցաւ Հալէպի Էմմանուէլ եկեղեցին, ուր կը նստէր Սուրիոյ հայ աւետարանականներու համայնքապետը[40]:

1920ականներուն կը վերակազմուին հայ կաթողիկէ համայնքներուն Հալէպի եւ Դամասկոսի թեմերը: Հայ կաթողիկէ համայնքի Ճեզիրէի եւ Եփրատի թեմը կը հիմնուի ուշ՝ 1938ին: Հայ կաթողիկէ վարժարանները օրէնքով կ'իյնան հայ կաթողիկէ ժողովրդապետութիւններու հսկողութեան տակ եւ կ'անուանուին հայ կաթողիկէ ժողովրդապետութեան վարժարաններ: Սակայն շատ վայրերու մէջ կաթողիկէ համայնքի վարժարանները դրուած են տարաբնոյթ գերատեսչութիւններու հսկողութեան տակ. այսպէս՝ աղջկանց վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են Անարատ Յղութեան Հայ Քերց Միաբանութեան (ԱՅՔՄ): Մանչերու վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են օտար առաքելութիւններու հսկողութեան՝ ֆրանսացի յիսուսեան, ֆրանչիսկեան, լազարիստ, քափուչինեան վարդապետերու: Արաբախօս իր զանգուածներուն հայեցի դաստիարակութեան ու հայերէնի ուսուցման հարցով միշտ աւելին ակնկալուած է կաթողիկէ դպրոցներէն[41]: Այդ հարցով բողոքներ ու ընդվզումներ եղած են համայնքին մէջ: 1946էն ետք օտար առաքելութիւններէն հայ կաթողիկէ վարժարանները անցան թեմական իշանութիւններու ամբողջական հսկողութեան տակ՝ պահելով միայն ԱՅՀՔՄ եւ Մխիթարեան Միաբանութեան կրթական գործունէութեան գերատեսչութիւնները:

Կը թուէր, թէ կրթական գործը երեք յարանուանութիւններու իրաւասութեան մէջ մտնելով իր բնական հունին մէջ կը մտնէր, բայց այդպէս չեղաւ, որովհետեւ սկիզբէն եւեթ կրթական գործին մէջ իր վերահսկողութիւնը հաստատել ուզեց կուսակցական գործօնը: 1921ին հաստատուած Կիլիկեան Գաղթային Միութեան (ԿԳՄ) Կիլիկեան Վարժարանի շրջանակին մէջ ազգային վարժարաններու հետ միացման խնդիրը երկփեղկում կ'առաջացնէ: Կիլիկեան Նպաստից Միութեան մէջ ծայր կ'առնէ ներքին սուր վէճ մը դպրոցի պատկանելիութեան շուրջ: Ոմանք կողմնակից էին դպրոցը կապելու ազգային առաջնորդարանին ու կոչելու Ազգային, իսկ ոմանք կը յամառէին զայն պահել առաջնորդարանէն անկախ հաստատութիւն: Կիլիկեան Նպաստից Միութեան մէջ գերակշիռ էին հնչակեանները, թէեւ ոչ-բոլոր

հնչականներն էին այդ բաժանումին կողմնակից: Առաջնորդարանը կը պահանջէ դպրոցը կոչել Ազգային Կիլիկեան Վարժարան, այլապէս կը սպառնայ առաջնորդարանի շէնքերէն դուրս դնել դպրոցը: Դպրոցը վարձու շէնքեր անցնելով կը պահէ իր միութենական վարժարան ըլլալու հանգամանքը ու նոր մասնաճիւղեր կը բանայ հիւղաւանին, Նոր Գիւղի եւ Էշրեֆիէի մէջ[42]: Ան փաստօրէն կը վերածուի հնչակեան դպրոցի մը:

Միւս կողմէ թէ՛ Ազգային եւ թէ՛ Կիլիկեան վարժարաններէն դժգոհ տարրեր եւս կային Կիլիկեան Գաղթային Միութեան մէջ: Ասոնք «*Խառն դասրիարակութիւնը կը գտնէին անժամանակ, գերխճողուն կարգերը կը գտնէին հակամանկավարժական, կուսակցական ուսուցիչներու կողմնակալ հայեացքները կը նկատէին ազգավնաս*»[43]: Անոնք հեռանալով Կիլիկեան Միութենէն 1924ին կը հիմնեն Կրթասիրաց Միութիւնը, որն ալ իրականութիւն կը դարձնէ Կրթասիրաց Վարժարանը: Դամասկոսի մէջ Պահսա Սալիհէ թաղամասի Ազգային Թարգմանչաց Վարժարանի մանկապարտէզը նախակրթարանի վերածելու աշխատանքը երկփեղկումի կը տանի, կը ստեղծուի Ազգային Սահակեան Վարժարանը. ասկէ դժգոհ դաշնակցականներ 1929ին կը բանան ուրիշ վարժարան մը, իբրեւ բոլոր թաղեցիներու Միացեալ Վարժարանը «առանց յարանուանական խտրութեան», ապա 1930ին՝ Պապ Թումայի մասնաճիւղը, որ 1951էն ետք կը կոչուի Զաւարեան Վարժարան[44]: Այսպէս՝ մինչեւ 1920ականներու վերջը կարգ մը միութենական վարժարաններ յստակ կերպով կը կուսակցականացուին, ինչպէս Հալէպի Կիլիկեան եւ անհատական Արմէնեան վարժարանները՝ հնչակեան, Քեսապի Ուսումնասիրաց միութեան Ուսումնասիրաց եւ Դամասկոսի Միացեալ ու Զաւարեան վարժարանները՝ Հալէպի Զաւարեան միութեան Զաւարեան վարժարանը՝ դաշնակցական:

Միւս կողմէ՝ կարգ մը միութենական վարժարաններ կը յաջողին անկախ մնալ, կուսակցական ազդեցութենէ հեռու. առաջինը Հալէպի Կրթասիրաց Միութեան Կրթասիրաց Վարժարանն է, որ կը ծրագրէ ոչ-հայրենակցական, ոչ-կուսակցական եւ ոչ-յարանուանական հիմունքներով տանիլ ազգային, մշակութային եւ կրթական գործունէութիւն: Կը հետեւի ազգային վարժարաններու Ուսումնական խորհուրդի ծրագիրներուն[45]: երկրորդը Լեւոն Յ. Լեւոնեանի Ուսումնասիրաց Վարժարաններու ցանցն է: Ուսումնասիրաց միութիւնը Հալէպի մէջ սկզբնապէս այնթապցի աւետարանականներու միութիւն է, որուն տէրն ու տիրականը կը դառնայ Լեւոն Յ. Լեւոնեան, 1925-ին: Միութիւնը կրթական, մշակութային ու մարդասիրական աշխատանքներ կը ծաւալէ ոչ-յարանուանական, ոչ-հայրենակցական եւ ոչ-կուսակցական սկզբունքներով[46]:

Ազգային վարժարաններուն մեծագոյն խնդիրը դպրոցի տարեկան պիւտճէի հայթայթումն էր: Հոգաբարձական կազմերը տեղւոյն թաղական խորհուրդներուն հետ պէտք է լուծէին դրամական հարցերը: Զրիավարժ

աշակերտութեան թիւը չափազանց շատ էր, հոգաբարձութիւնը ներքին ձեռնարկներով՝ Ամանորին, Զատկուան ու դպրոցական տարեվերջին տրուած հանդէսներով, թատերական ներկայացումներով, ՀԲԸՄի նպաստներով, ու եթէ ենթահող ըլլար՝ հայրենակցական միութիւններու, այլ կազմակերպութիւններու, անհատ բարերարներու եւ պետական նպաստով կը ջանար պիւտճէն հաւասարակշռել:

1932-34՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոսի հովուապետական այցելութիւնները առաքելական համայնքի կրթական գործը աւելի ամրապնդելու նպատակներ ալ կը հետապնդէին: Կաթողիկոսի միջնորդութեամբ պիւտճէական մեծ խնդիրներ ունեցող ազգային դպրոցները կը հրաւիրուին դրուելու ՀԲԸՄի տեղական մասնաճիւղերու խնամատարութեան տակ ու կը կոչուին ՀԲԸՄի Նպաստընկալ Ազգային Վարժարաններ: 1932ին մեծ թափ կ'առնէր շրջաններու մէջ Միութեան մասնաճիւղերու բացումը: Նիւթական ուրիշ աղբիւր չունեցող ազգային վարժարանները կը դրուին ՀԲԸՄ տեղական մասնաճիւղերու ամբողջական խնամակալութեան տակ: Անոնք իրենց վրայ կ'առնեն դպրոցի ելեւմուտքին պատասխանատուութիւնը: Պէտք է նշել սակայն, որ ՀԲԸՄը նպաստ կը յատկացնէ ոչ միայն տեղական մասնաճիւղերուն հոգատարութեան յանձնուած, այլ ընդհանրապէս՝ աւետարանական, ազգային, միութենական եւ կաթողիկէ ժողովրդապետութիւններու պատկանող դպրոցներուն: Աւետարանական եւ կաթողիկէ վարժարանները նպաստատու արտաքին աղբիւրներ ալ ունէին: Շատ ու շատ ազգային դպրոցներ, յատկապէս գիւղական շրջանակներու մէջ, միշտ նիւթական բաց կ'ունենային: Վիճակագրութիւն մը կը յայտնէ, որ 1936-37 կրթաշրջանին ՀԲԸՄը Սուրիոյ մէջ 68 դպրոց կը հովանաւորէր. «*Ասոնցմէ զատ կան նաեւ Բարեգործականէ նպաստ չստացող կարգ մը վարժարաններ*»[47]:

Կարգ մը դպրոցներ ՀԲԸՄէն նպաստ ընդունելով հանդերձ չեն մտներ Նպաստընկալ Վարժարաններու ցանցին մէջ, այսինքն չեն ղեկավարուիր Միութեան տեղական մասնաճիւղերու կողմէ, այլ կապուած կը մնան եկեղեցիներու թաղականութեան եւ անկէ բխած հոգաբարձական կազմերու, որովհետեւ այնտեղ ընտրողներու մեծամասնութիւնը մէկ կողմի մարդիկ էին: Այսինքն՝ այդ ազգային վարժարանները միով բանիւ կա՛մ հնչակեան, կա՛մ դաշնակցական օղակի մէջ էին, որքան ալ ազգային իշխանութիւնները զգուշացնէին դպրոցները կուսակցականացնելու միտումներէ:

1936-1937 կրթաշրջանին ՀԲԸՄը Սուրիոյ մէջ 68 եւ Լիբանանի մէջ՝ 26, համագումար՝ 94 վարժարան կը հովանաւորէր[48]:

ՀԲԸՄի տեղական մասնաճիւղերու նպաստընկալ ազգային վարժարաններու կարգավիճակը ընդվզում կ'առաջացնէ դաշնակցական շրջանակներու մէջ՝ զայն նկատելով հակասահմանադրական եւ

Միութեան ուղղակի միջամտութիւնը ազգային վարժարաններու գործին: Սակայն Նպաստընկալ Վարժարաններու կարգադրութիւնը աւելի սուր կերպարանք կու տայ գաղափարական-կուսակցական հակամարտութիւններուն, որով կռուախնձոր կը դառնան եկեղեցին եւ դպրոցը, որովհետեւ սփիւռքեան պայմաններուն մէջ միայն ասոնցմով կարելի է զանգուածը կուսակցական հովանիին տակ առնել, ուղղորդել ու շահագործել, անոնցմով մեծնալ: Միջկուսակցական պայքարը ազգային եւ միութենական շրջանակներու մէջ կ'արտայայտուէր տեղական իշխանութիւնները (թաղական խորհուրդ ու հոգաբարձական կազմ) ձեռք ձգելու աշխատանքով, իսկ աւետարանական եւ կաթողիկէ համայնքներուն մէջ՝ ազգայնական քարոզչութեամբ, կրթութիւնն ու դպրոցը յարանուանական հովանիէն դուրս բերելու, ազգային դաստիարակութեան աւելի տեղ տալու պահանջքներով, որովհետեւ դեռ նախաեղեռնեան տարիներուն գաւառներու մէջ աւետարանական եւ լատին-կաթողիկէ դպրոցներուն հանդէպ սուր ընդդիմութիւն մը կը ստեղծուի ի նպաստ ազգային վարժարաններուն: Այդ ընդդիմութեան գլխաւոր պատճառներէն մէկը անշուշտ օտար առաքելութիւններու գերատեսչական ծանր ներկայութիւնն էր աւետարանական եւ կաթողիկէ դպրոցներուն վրայ, երկրորդ, իրենց ընկալմամբ, ազգային դաստիարակութեան եւ հայերէնի ստորադասումը օտար լեզուներու եւ ընդհանուր գիտութիւններու դիմաց: Ահա թէ ի՛նչ կ'ըսէ Քեսապի Ազգային Սահակեան Վարժարանի տնօրէն Մանուկ Գույումճեան 1912ի շրջանաւարտութեան հանդէսին.

> Կիլիկիոյ զանազան վայրերուն մէջ գտնուող օտար կրթական հաստատութիւններ, որոնք այնքան ջերմ ասպնջականութիւն ցոյց կու տան մեր զաւակներուն, որոշ չափով մը պատճառ չե՞ն եղած մեր ազգային նկարագրին խորթացումին: ... Հաստատութիւնները օտար, հաստատութեան վարիչները օտար, պաշտօնական լեզուն օտար. միթէ հնա՞ր է հոն դաստիարակուող տղան չօտարանայ իր զգացումներով: Եւ միթէ կ'արժէ՞ քանի մը գիտութիւններու եւ լեզուներու սիրուն համար մոռնալ կամ նոյնիսկ ուրանալ մեր ազգային թանկագին աւանդները, որոնց է՛ն վերի կողմը կը մնայ լեզուն: Կարծես տան ու դպրոցին մէջ դաւադիր դաշնակցութիւն մը կայ, որով մայրը օրօրոցի մօտ, ուսուցիչը գրասեղանին քով՝ մասնաւոր ջանք մը ունին տղուն ներշնչելու օտար զգացումներ, օտար բարբառներ եւ օտար սովորութիւններ[49]:

Նոր գաղութին մէջ նոյն վերաբերմունքը կը շարունակուի հայ աւետարանական եւ կաթողիկէ վարժարաններուն նկատմամբ, ուր գլխաւորաբար կրթաթոշակի վճարման դիւրութիւններ գտնելով՝ մեծամասնաբար կը յաճախէին առաքելական ընտանիքներու դպրոցականներ: Այդ դպրոցները օտար կը նկատուէին, որովհետեւ անոնց վրայ կը շարունակէր զգալի մնալ օտար առաքելութիւններու գերատեսչութիւնը, թէեւ փաստ է, որ մանաւանդ աւետարանական բոլոր եւ կաթողիկէ կարգ մը վարժարաններուն մէջ հետզհետէ աւելի հիմնաւոր

կը դառնար հայերէնի եւ հայերէնագիտական նիւթերու ուսուցումը: Հալէպի Նոր Գիւղի Ազգային Սահակեան Վարժարանի հոգաբարձութիւնը թաղեցի 50 ազգայիններու հետ 19 Մայիս 1934ին կատարուած հանդիպումի մասին այսպէս կ'արձանագրէ. «*Թաղաբնակ ժողովուրդին մեծամասնութիւնը արհեստաւոր ու չքաւոր դասակարգերէ բաղկացած ըլլալուն՝ աշակերտութիւնը իր թոշակները լրիւ վճարելու հնարաւորութիւն չի ներկայացներ, այս պատճառով շատեր կը փարուին օտար վարժարաններ, որոնք մեր ապագայ սերունդը խաթարելէ զատ ոչինչ ունին շինիչ: Այս մասին պէտք է լուրջ միջոցներ ձեռք առնել*»[50]:

Դաշնակցութեան կողմէ «Ոչ-յարանուանական» պիտակումով անկախ դպրոց հիմնելու քայլերը 1932էն ետք կը դառնան ընդհանուր երեւոյթ կարգ մը վայրերու մէջ՝ մասնաւորաբար աւետարանական եւ ազգային վարժարաններու շրջանակին մէջ:

ՀԲԸՄի նպաստընկալ ազգային վարժարաններու՝ միութեան տեղական մասնաճիւղերու հովանաւորութեան տակ դրուած ըլլալու կարգավիճակը ընդվզում կ'առաջացնէ դաշնակցական շրջանակներու մէջ՝ զայն նկատելով հակասահմանադրական եւ Միութեան ուղղակի միջամտութիւնը ազգային վարժարաններու գործին, որովհետեւ դպրոցի պիտճէն եւ ուսուցիչներու ընտրութիւնը ամբողջապէս կը դրուէր միութեան տնօրինութեան տակ,[51] բայց կար նաեւ այլ պարագայ մը, միութեան տեղական մասնաճիւղերուն մէջ տիրապետող էին հնչակեան եւ կամ ռամկավար կուսակցութեան տարրերը: Միւս կողմէ՝ ընդհանրապէս դաշնակցական արեւելումով ազգայնական շարժում մը ծայր կ'առնէ նաեւ աւետարանական համայնքէն ներս՝ կրթութիւնը եկեղեցւոյ հովանիէն դուրս դնելու եւ ազգային դաստիարակութիւն ապահովելու պատճառաբանութեամբ[52]: Այս շարժումը կը տանի բաժանումի: Կը ստեղծուի դաշնակցութեան հովանաւորութիւնը վայելող ոչ-յարանուանական դպրոցներու նոր ցանց մը՝ մեծ մասով Միացեալ վարժարան անունով: այս դպրոցներուն նիւթական նեցուկ հայթայթելու համար գրեթէ բոլոր բնակավայրերուն մէջ կը կազմուին Սուրիահայ Օգնութեան Խաչի մասնաճիւղեր[53]: Միւս կողմէ հոս ու հոն՝ դաշնակցական կողմնակիցներու ձեռքը անցած ազգային վարժարաններէն բաժնուողներ կը կազմէին ՀԲԸՄի նոր մասնաճիւղեր, որոնք նոր նպաստընկալ ազգ. վարժարաններ կամ նպաստընկալ ազգ. վարժարաններու մասնաճիւղեր կը բանային: Այնպէս կը պատահի, որ փոքրիկ բնակավայրեր քանի մը տասնեակ աշակերտութիւն ունեցող յարանուանական մինչեւ երեք վարժարաններու կողքին կ'ունենան չորրորդ մըն ալ. այսպէս՝ 1931ին Լաթաքիոյ Ազգ. Վարժարանէն կ'անջատուի Հայկազեան Վարժարանը, 1933-1934ին Քեսապի եւ Քէօրքիւնէի աւետարանական վարժարաններէն կ'անջատուին մէկական Միացեալ վարժարան, Գարատուրանի Ազգային Մեսրոպեան

Վարժարանէն՝ այլ Միացեալ մը, Տուզաղաճի ազգային վարժարանէն՝ ՀԲԸՄի նպաստընկալ վարժարանը, 1936ին Այն Արուսի Ազգ. Նպաստընկալ Նուպարեան վարժարանէն՝ Խորէնեան վարժարանը, Տէր Զօրի Ազգ. Հոիփսիմեանց վարժարանէն՝ Վարդանեան վարժարանը, աւելի ուշ՝ Արաբ Փունարի ազգային վարժարանէն՝ ՀԲԸՄի նպաստընկալ վարժարանը, Տրպեսիէի Ազգ. Կիլիկեան վարժարանէն՝ նպաստընկալ Կիլիկեան վարժարանը... եւ այսպէս շարունակ:

Ասիկա 1920-40ականներու պատկերն է սուրիահայ դպրոցին:

Ատիկա կը նկատեն նաեւ ֆրանսական իշխանութիւնները ու առարկութիւններ կ'ընեն նոր դպրոց հիմնելու ատեն. «*Հայք քաղաքականութեամբ կը զբաղին, նոյնիսկ դպրոցներէն կը սկսին զբաղիլ» կ'առարկէ շրջանի ֆրանսացի իշխանաւորը Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ արք. Տոհմունիին՝ Սուէտայի մէջ հայկական դպրոց բանալու առնչութեամբ*[54]*: Դամասկոս այցելող Սահակ Բ. կաթողիկոս հարկ կը զգայ պաշտօնապէս հերքելու այս ամբաստանութիւնը՝ ֆրանսացի պատուիրակ Լաւասթրին, հաստատելով որ «Մեր ժողովուրդին փոքրիկները իրաւունք ունին սորվելու իրենց մայրենի լեզուն, իրենց մայրենի եկեղեցւոյ կրօնքը՝ ո՛ւր որ ալ գտնուին»*[55]:

Կաթողիկոսին յայտնի էին հայ ներքին կեանքին բոլոր պառակտումները, արդէն հասկցած պէտք է ըլլար, որ Սփիւռքի մէջ կուսակցութիւններու գոյութեան հիմքը դպրոցն է, ոչ միայն նորագիրներու բանակ ձեռք բերելու, այլեւ իրենց կամքն ու համոզումները պարտադրելու համար ազգային իշխանութիւններուն եւ ժողովուրդին: Դպրոցները, ազգային թէ միութենական, տակաւ կը մտնէին Դաշնակցութեան, Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւններու ազդեցութիւններու գօտիէն ներս: Նոյնը կը պատահէր նաեւ մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններուն, բան մը որմէ խուսափում չկար այլեւս:

Ամեն պարագայի՝ ազգային վարժարաններու հսկայ ցանցը կուսակցականացումէ չի յաջողիր զերծ մնալ: Այդ տարիներուն Սուրիոյ եւ Լիբանանի հայ կրթական կեանքը ուսումնասիրողներէն մէկը նկատի ունենալով Դաշնակցութիւն, Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւններու միջամտութիւնը կրթական գործին մէջ՝ կը գրէ. «*Առնուազն պէտք է յիշատակել, որ իւրաքանչիւր կուսակցութիւն լուրջ ջանքեր կը թափէ մրցակցելով միւս կուսակցութիւններուն եւ Հայ եկեղեցւոյ հետ, կառավարելու համար հայ կեանքն ու կրթութիւնը իր ղեկավարներուն եւ ուսուցիչներուն միջոցով եւ հետեւաբար նոր սերունդները դաստիարակելու իր քաղաքական, ընկերային եւ բարոյական սկզբունքներով*»[56]:

ՅԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Հնչակեան Կուսակցութեան շրջանին մէջ տարածման մասին մեր հիմնական աղբիւրն է Աղասի, *Մոռցուած Հերոսներ, Ա. Հատոր*, Տպ. Արարատ, 1952. նաեւ՝

Պօղոս Մատուռեան, «Ազատութեան Ճանապարհին Վրայ», Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, *Յուշամատեան Մուսա Լերան*, Պէյրութ, 1970, տպարան Ատլաս, էջ 277. նաեւ՝ Թովմաս Հապէշեան, *Մուսա-Տաղի Պապենական Արձագանգներ*, Պէյրութ, Հրատ. Էրեբունի, 1986, էջ 163. նաեւ՝ Vahram L. Shemmassian, "Armenian Musa Dagh in the Nineteenth and Early Twentieth Century," in *Armenian Communities of the Norteastern Mediterranean, Musa Gagh – Dort Yol, Kessab*, editor՝ Richard G. Hovhannisian, California, 2016, էջ 104-112. նաեւ՝ Ալպէր Ս. Թէմիրեան, *Քեսապ (1909-1946)*, Պէյրութ, Տպարան Սօնիկեան, 1956, էջ 135-66. նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հատոր*, Հրատ.՝ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, Հալէպ, տպարան Արեւելք, 1995, էջ 80-89. նաեւ՝ Տոքթ. Եղիկ Ճերէճեան, «Նիւթեր Ս. Դ. Հ. Կ. Հալէպի Շրջանի Պատմութեան Համար (1889-1925) http://www.araraddaily.com/DailyNews-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80-Lebanese-Political-News/7787/article/30/Lebanese-Armenian-News/:

[2] Օրինակ՝ 1908ին Գարատուրան գիւղի Հայ Աւետ. Եկեղեցւոյ հիմնարկէքին Տ. Պետրոս Քհնյ. Փափուճեանի հետ աշխատանքով, նոխազով ու ներկայութեամբ կը մասնակցին առաքելականները եւս: Վեր. Տիգրան Գունտաքճեան եկեղեցին կը կոչէ Քրիստոսի եկեղեցի եւ կ'ըսէ . «*Ան բոլոր համայնքներուն համար պաշտամունքի վայր պիտի դառնայ*» (Մարիամ Սարամազեան-Չիւրիքեան, «Ինքնակենսագրութիւն»՝ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Գ. Հատոր*, Հրատ.՝ Ամերիկաբնակ Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան, Հալէպ, Տպարան Արեւելք, 2004, էջ 209):

[3] Աղասի իրրեւ հնչակեան հաւատաւոր եկեղեցականներ կը յիշատակէ շարք մը անուններ Անտիոքի եւ Ալեքսանտրէթի շրջաններէն: Օրինակ՝ մեծ գովեստով կը խօսի Գարատուրան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Տ. Պետրոս Քհնյ. Փափուճեանի, Քեսապի կաթողիկէ համայնքի հովիւ Նիկողայոս Վրդ. Պէօճէքեանի մասին (Աղասի, *Մոռցուած Հերոսներ, Ա. Հատոր*, էջ 209-210):

[4] Գէորգ Ա. Սարաֆեան, *Պատմութիւն Այնթէպի Հայոց, Ա. Հատոր*, Սենթրըլ Թայփսեթինկ, Լոս Անճելըս, 1953, էջ 937:

[5] Shemmassian, էջ 104-112. նաեւ՝ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հատոր*, էջ 86:

[6] Միայն Քեսապէն Հալէպ կը տարուին տասը երեւելիներ եւ «շատ ուրիշներ» (Թէմիրեան, էջ 89):

[7] Բերիոյ Թեմի Ազգ. Առաջնորդարան (ԲԹԱԱ), Ստացուած Նամակներու ծրար, նամակ՝ Եագուպիէ, 7 Մայիս 1907 թուակիր:

[8] Թէմիրեան, էջ 89. նաեւ՝ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հտր.*, էջ 86:

[9] Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հտր.*, էջ 89:

[10] ԲԹԱԱ, Հոգաբարձութեան Ատենագրութեան Տոմար, նիստ 13 Յունուար 1910:

[11] ԲԹԱԱ, *Ներսէսեան Ուսումնարանի Հոգաբարձութեան Առաքած Նամակներու Պատճեններու Թիւ 12 Տոմար*, նամակ 127, 20 Օգոստոս 1911 թուակիր:

[12] Նոյն, 21 Օգոստոս 1911 թուակիր նամակ:

[13] ԲԹԱԱ, Ստացուած Նամակներու Ծրար, նամակ՝ համար 558, 16 Յուլիս 1920 թուակիր:

[14] Նոյն, Նամակ՝ համար 271, Հալէպ, 28 Մայիս 1921 թուակիր:

[15] *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, տես վաւերագիր թիւ 39, էջ 550:

[16] «Հալէպի Դէպքը (Մեր Մասնաւոր Թղթակիցէն)», *Կիլիկիա*, Ատանա, Ա տարի, թիւ 5, 12 Մարտ 1919, էջ 2. նաեւ՝ Եղիա Նաջարեան, «Հայ-Արաբական Փոխյարաբերութիւնները Սիրիայում (1918 Հոկտեմբեր – 1919 Յունիս)», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ, Հտր. 6*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, էջ 154. նաեւ՝ Յակոբ Սերոբեան, Եղեռնի Յուշերս, Հրատ.՝ Անդրանիկ Տագէսեան, Պէյրութ, Ֆոթօկրաւիւր Բագլայեան, 2005, էջ 193-99:

[17] Օ. Հոգեկս, «Հալէպի Կոտորածը (Սեփական Թղթակցութիւն)», *Կիլիկիա*, թիւ 6, 14 Մարտ 1919:

[18] Յովհաննէս Խ. Թոփուզեան, *Սիրիայի եւ Լիբանանի Հայկական Գաղթօճախների Պատմութիւն (1841-1946)*, Երեւան, էջ 215:

[19] «Մենք Ինչ Կը Խորհինք – Դարձեալ Կոտորած», *Կիլիկիա*, 14 Մարտ 1919:

[20] Այս մասին տե՛ս՝ Մովսէս Շահպազեան, *Հայ Կամաւորական Շարժումը Առաջին Աշխարհամարտին (1917-1920)*, Սուրիա-Քեսապ, 1965, էջ 32:

[21] Չոլաքեան, *Քեսապ*, Ա. հատոր, էջ 112-118:

[22] Խմբագրական, «Դամասկոսի Վերջին Դէպքը», *Նոր Փիւնիկ*, Պէյրութ, 21 Հոկտեմբեր 1925: Նիւթեր ունին *Սուրհահայ Մամուլ*, 25 Հոկտեմբեր 1925, թիւ 482. նաեւ՝ «Երկու Կարեւոր Փաստաթուղթեր», *Սուրհահայ Մամուլ*, 20 Յունուար 1926, թիւ 516:

[23] Մ. Մ. Մարտունի, «Դամասկոսի Ներկայ Կեանքէն», *Սուրհահայ Մամուլ*, 25 Նոյեմբեր 1925, էջ 3:

[24] Սահակ Բ. կաթողիկոս Կիլիկիոյ, «Կարմիր Կիւրակէ», *Սուրհահայ Մամուլ*, 22 Նոյեմբեր, 1925, էջ 1ա:

[25] Մ. Մ. Մարտունի, «Դամասկոսի Ներկայ Կեանքէն», *Սուրհահայ Մամուլ*, 1 Յունուար 1926, էջ 1:

[26] Մ. Մ. Մարտունի, «Դամասկոսի Ներկայ Կեանքէն», *Սուրհահայ Մամուլ*, 25 Նոյեմբեր 1925, էջ 3:

[27] Նոյն:

[28] Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարան, «Տեղեկագիր Միջգաւառական Հ. Միութեան, 1 Փետրուար1919-էն մինչեւ 30 Յունուար 1923»:

[29] Թոփուզեան, էջ 162:

[30] Քեսապի եւ Սուետիոյ «հակա-դաշնակ» եւ «դաշնակ» զոհերու անուանացանկը տե՛ս՝ Թէմիրեան, էջ 133 եւ 134. նաեւ՝ Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939*, Beirut 2015, էջ 77-79:

[31] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք Դ., Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս Կիլիկիոյ (1891-1940թթ.)*, կազմեց Սանտրօ Բեհրուդեան, Երեւան, Ոսկան Երեւանցի Հրատ. 1997, էջ 335:

[32] Նոյնը, էջ 379-380:

[33] Քեսապի Ազգային Միութեան եւ Զինուորական Իշխանութեան կազմերուն ու գործունէութեան մասին տե՛ս՝ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հատոր*, էջ 115-122:

[34] Շահպազեան, էջ 35:

[35] «Կրթական Վիճակագոյց Հալէպի Առաջնորդական Թեմին, 1927-1928 Շրջան», *Տաթեւ Կրօնական Տարեցոյց, Ե. գիրք*, 1929, Հալէպ, էջ 388:

[36] Սուրիոյ հայ առաքելական եկեղեցւոյ թեմական կարգավիճակին համար տե՛ս՝ Վարդան Եպս. Տէմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեան, Ա. Հատոր*, Անթիլիաս-Լիբանան, 1980:

[37] «Տեղեկութիւններ Սուրիոյ Հայ Գաղթականութեան Մասին», *Հայաստանի Կոչնակ*, 17 Նոյեմբեր 1923, էջ 1459ա:

[38] Գէորգ Սարաֆեան, *Պատմութիւն Անթէպի Հայոց*, Բ. հատոր, Լոս Անճելոս, Սենթրըլ Թայփսեթինկ, 1953, էջ 523:

[39] Նոյն, էջ 526:

[40] Սուրիոյ հայ աւետարանական համայնքներու պատմութեան անդրադարձած են հայ աւետարանական շարժման բոլոր գլխաւոր պատմիչները ու լայնօրէն քննած կրթական գործը՝ Տիգրան Ճ. Խրլոբեան, *Ոսկեմատեան Հայ Աւետարանական Միութեան, Ա. հատոր*, Պէյրութ, տպարան Շնորհօքեան եւ Ա. Տէր Սահակեան, 1950. նաեւ՝ Վեր. Եղիա Քասունի, *Լուսաշաւիղ Պատմութեան Հայ Աւետարանական Շարժման*, Պէյրութ, Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Ընկ., 1947. նաեւ՝ Վեր. Կարապետ Ատանալեան, *Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական Եկեղեցւոյ*, Ֆրեզնօ, Crown printing company, 1952:

[41] Դոկտ. Յակոբ Թօփճեան, «Հայութիւնը Սիւրիոյ Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 14 Յուլիս 1928, էջ 874բ:

[42] Տե՛ս՝ Խնամակալութիւն Կիլիկեան Ճեմարանի, «Կիլիկեան Ճեմարանը Երէկ Եւ Այսօր, 1921-1975, Հալէպ», 10 մեքենագիր մեծադիր էջ:

[43] Գրիգոր Պօղարեան, «Ինչո՞ւ Եւ Ինչպէ՞ս Հիմնուեցաւ Այնթապցիներու «Կրթասիրաց Վարժարան»ը Հալէպի Մէջ», *Հայ Անթէպ*, 1970, թիւ 41, էջ 16:

[44] *Դամասկոսի Միացեալ վարժարանի Քսանհինգամեայ Յոբելեան (1929-1954)*, Հալէպ, տպարան Արեւելք, 1956:

[45] Պօղարեան, «Ինչո՞ւ Եւ Ինչպէ՞ս», էջ 16:

[46] Միութեան ու անոր դպրոցական ցանցին մասին տե՛ս՝ *Սիրել Եւ Ծառայել (Լեւոն Յ. Լեւոնեան, Մշակը Եւ Իր Հունձքը)*, խմբ.՝ Լեւոն Վարդան, Պէյրութ, տպարան Սեւան, 1960, 112 էջ:

[47] Գր. Հ. Գալուստեան, «Կրթական Գործը Սփիւռքի Մէջ Եւ Մեր Կրթական Բարձրագոյն Հաստատութիւնները», *Հայաստանի Կոչնակ*, 11 Մարտ 1939, էջ 231:

[48] Նոյն:

[49] Մանուկ Գոյումճեան, *Ազատ Բեմի Խօսքեր*, Կ. Պոլիս, 1912, էջ 32-36:

[50] Յակոբ Չոլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանի*, 1927-2007, Հալէպ, 2007, էջ 80:

[51] Անի Ֆիշենկճեան, Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970), Երեւան, 2018, էջ 271:

[52] 1930ականներուն այս շարժումը մեծ իրարանցում կը ստեղծէ Քեսապի շրջանի հայ աւետարանական համայնքներուն մէջ: Պառակտումներ տեղի կ'ունենան՝ կրթական գործի բաժանում եւ մայր համայնքին վերադառնալու ալիք («Ազգայնական Շարժումը Քեսապի Հայ Աւետարանական Համայնքին Մէջ»՝ Չոլաքեան, *Քեսապ*, Գ. *Հատոր*, էջ, 411-461 ուր մէկտեղուած են Քեսապի հոգեւոր հովիւնե-

րու՝ Ասատուր Սատաքեանի, Եղիա Քասունիի, Յակոբ Շնորհոքեանի, Տիգրան Անդրէասեանի, Ս. Ս. Մանուկեանի, Հալէպի Շրջանային Վարչութեան, Քեսապի եւ Քէօրքիւնէի եկեղեցիներու հոգաբարձութիւններու եւ խնամակալութիւններու, ամերիկացի միսիոնարներու եւ այլոց նամակները այդ խնդիրներու մասին):

[53] 1929-1935՝ Օգնութեան Խաչ Միութեան Սուրիոյ մասնաճիւղերուն թիւը կը հասնի 22ի, որոնք կը նպաստեն 1929էն իվեր անկախաբար գործող Միացեալ, դաշնակցական արեւելումով միութենական եւ ազգային որոշ վարժարաններու:

[54] «Դամասկոսի Թեմի Գործերը», *Հասկ Ամսագիր*, Հոկտեմբեր 1934, էջ 82բ:

[55] Նոյն, էջ 82բ:

[56] J. A. Babikian, *Civilization and Education in Syria and Lebanon, Historical, Comparative and Critical Survey of the Civilizatin and Various Educational Systems in Several Syrian and Lebaneese Territoies*, Beirut, Lebanon, Syria, 1936, p. 169: Թարգմանութիւնը մերն է:

THE PARTY POLITICISATION OF THE SYRIAN-ARMENIAN EDUCATIONAL EFFORT FROM ITS BEGINNINGS TILL 1946

(Summary)

HAGOP CHOLAKIAN
hagopcholakian@hotmail.com

The article focuses on the Syrian-Armenian school network as a case study, and describes the attempts to infiltrate partisan propaganda into Syrian-Armenian schools. The author notes that such attempts had become obvious as of the 1890s. Armenian parties' presence in the schools increased particularly after the restoration of the Ottoman constitution, when Henchag and Tashnag party propaganda efforts opposed each other in the school milieu. The school boards reacted strongly against this infiltration and tried to keep education separate from party influences. Interparty conflicts grew further after the armistice, during the formation of the post-Genocide Syrian-Armenian community, when Armenian schools start forming Orthodox, Catholic and Evangelical as well as societal networks. First, both parties controlled the union-owned schools and established an influential presence in certain community schools. The Tashnag camp succeeded in dividing certain Evangelical and Orthodox schools, under the call of "no to denominational discrimination" and established a network of united schools.

The conflict further intensified when a number of Orthodox-run schools joined the network of schools sponsored by the AGBU and were supervised by local AGBU chapters. These chapters gradually came under the influence of the Hencahag and, to a larger extent, the Ramgavar parties. Foreign missionary schools, however, maintained a distance from party interference in their school network. The French authorities expressed distress concerning party infiltration and interparty conflict in education. As a result of these developments Armenian educational space was gradually divided into three spheres of party influence and very few maintained their independence. This situation persisted until the 1946 repatriation.

ՍԵՖԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԸ ԿԱՐԳԱՒՈՐՈՂ ՇԱՐԻԱԹԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ ԺԷ.-ԺԸ. ԴԴ.

(Ըստ Մատենադարանի Ձեռագրերի)

ՔՐԻՍՏԻՆԷ ԿՈՍՏԻԿԵԱՆ
kkostikyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Շիա իսլամը պետական կրօն հռչակած Սեֆեան Պետութեան տարածքում ապրող հայութեան իրաւունքներն ու պարտաւորութիւնները ձեւակերպուել ու արտացոլուել են այդ պետութիւնը կառավարող շահերի հրովարտակներում, որոնք յաճախ ներառում են իրաւական զանազան հարցերի շուրջ բարձրաստիճան հոգեւորականների վճիռները: Երեւանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանի (ՄՄ) կաթողիկոսական դիւանում են պահւում այդ հարցերի շուրջ հրապարակուած հրովարտակներից ու նաեւ շարիաթական նոտարական դատարանների փաստաթղթերից շատերը: Սոյն յօդուածի շրջանակներում փորձել ենք ՄՄ վերոյիշեալ պարսկերէն վաւերագրերի ու այլ աղբիւրների տուեալների համադրութեամբ հնարաւորինս հանգամանալից ներկայացնել Սեֆեան Պետութեանը հպատակ հայութեան իրաւունքներն ու պարտականութիւնները եւ դրանք սահմանող շարիաթական օրէնքները:

Ըստ շիա իսլամի սկզբունքների՝ օրէնքներ հաստատելու իրաւունքն Աստծունն է, որը դա կատարել է Մուհամմադ մարգարէի ու նաեւ իմամների միջոցով: Աստծոյ խօսքը մարդկանց է փոխանցուել Ղուրանի եւ Մուհամմատ մարգարէի ու շիա իմամների ասոյթներն ու նրանց մասին աւանդապատումները բովանդակող *հադիս*ների միջոցով, որոնք համարւում են շիա իրաւագիտութեան օրէնքների աղբիւրները:

Այդ աղբիւրներից են մահմեդական իրաւագէտները բխեցնում (تفريع و تشريع) իրենց որոշումները իրաւական զանազան հարցերի ու խնդիրների մասին[1]: Հետեւաբար, պատահական չէ, որ շիա երկրի հայութեան իրաւունքների հիմնական մասը յենւում է դեռեւս Մուհամմատ մարգարէի ու շիա իմամների հետ կապուող պատմական իրողութիւնների ու նրանց տեսակէտների վրայ:

Շիա իսլամը պետական կրօն հռչակած Սեֆեան Պետութեան տարածքում ապրող այլակրօնները ունէին *զիմմի*ի կարգավիճակ: Այդ կարգավիճակը ձեւաւորուել է Մուհամմատ մարգարէի օրօք՝ նուաճուող այլադաւանների հետ կնքուած պայմանագրերի հիման վրայ, որոնք հենց այդպէս էլ կոչւում են. պարսկերէն «*աղդ-է զեմմէ* – عقد نمه» եւ արաբերէն՝ «*ակդ ալ-զիմմա* - عقد الذمه»: «*ակդ* - عقد» բառը նշանակում է պայմանագիր, իսկ «*ահլ-է զեմմէ*- اهل نمه» կամ «*զիմմի* - نمی» կոչւում էին այն այլակրօնները (հրեա-

ները, քրիստոնեաները եւ այլ հաւատի հետեւորդները), որոնք ընդունելով *զիմմի*ութեան պայմանները, ապրում էին իսլամական երկրում: *Ջիզիա*յի վճարմամբ պայմանաւորուած *զիմմի* կարգավիճակը ամրագրուած է Ղուրանի Թուբէ սուրայի 29րդ *այաթ ալ-ջիզիա*յում նշուող *զիմմի*ական պայմանագրերով: Մահմեդական *ֆաքիհ*ները *աղդ-է զեմմէն* մեկնաբանելիս նշում են, որ այլակրօններից ոմանք *ջիզիա* վճարելու եւ իսլամի օրէնքներին ենթարկուելու պայմանով կարող են մահմեդական երկրում բնակուել ու հետեւաբար նրանք մշտապէս գտնւում են իսլամական պետութեան պաշտպանութեան տակ[2]: *Աղդ-է զեմմէն* գործածութեան մէջ է դրուել հիջրայի 9 թուականին (630/1) Մեքքայի գրաւումից յետոյ: Նրա կնքման նպատակը, ըստ իսլամական իրաւագէտների, նիւթական օգուտը չէր, որ ստացուելու էր *ջիզիա*յի գանձումից, այլ՝ *զիմմի*ներին մահմեդականների դէմ պատերազմից ետ պահելը, նրանց բնակութիւնը մահմեդական երկրում ապահովելը, իսլամի օրէնքներին ծանօթացնելն ու իսլամին հակելը[3]:

Իրանում Սեֆեան ժամանակաշրջանում *զիմմի*ական պայմանագրերի նոր օրինակներ են ստեղծւում՝ յարմարեցուելով այդ պետութեան ու շիա իսլամի պայմաններին: Այդ պայմանագրերի գերակշիռ մասը կա՛մ տրուած են Իմամ Ալիի անունից[4], կա՛մ հաստատուած նրա, կա՛մ մէկ այլ շիա իմամի կողմից[5]: Օրինակ, 1694ին ընդօրինակուած մի վաւերագրի լուսանցքում, նրան է՛լ աւելի մեծ ուժ հաղորդելու նպատակով նշւում է, որ պատճէնի համապատասխանութիւնը բնօրինակին՝ հաստատուած է շէյխ Սեֆիի (1252-1334)[6]՝ Սեֆեան Հարստութեան անուանադիր նախնիի կողմից[7]:

Սեֆեան Պետութեան թէ՛ կենտրոնական նահանգները տեղափոխուած, թէ՛ նրա սահմանային շրջաններում բնակուող հայութեան համար կենսական նշանակութիւն ունէր իր՝ որպէս *զիմմի* կարգավիճակին համապատասխանող իրաւունքների յստակեցումն ու պաշտպանութիւնը, որը կատարւում էր դրանց առանձին խնդիրների կապակցութեամբ հրապարակուած հրամանագրերի ու կրօնական բարձրաստիճան հոգեւորականութեան եւ նրանց գլխաւորած բարձրագոյն ատեանների կայացրած վճիռների (*ֆաթուա* ու *միսալ*) հիման վրայ:

ԺԷ. դարում Սեֆեան Պետութիւնում հրապարակւում են մեծ թուով նման փաստաթղթեր (ի տարբերութիւն այլ ժամանակաշրջանների): ՄՄ պարսկերէն վաւերագրերի հաւաքածուի մէջ կան շուրջ 50 *ֆաթուա*ներ՝ տրուած ինչպէս հոգեւորական գերագոյն ատեանի՝ *դիւան ալ-սադաթ*ի[8], այնպէս էլ տեղական (Թաւրիզի, Նախիջեւանի ու Երեւանի) *շար'ի*[9] ատեաններում հայ քրիստոնեաների, որպէս *զիմմի*ների, իրաւական զանազան հարցերի կապակցութեամբ, որոնք շահի կամ տեղի կառավարչի կողմից հրամանագրով հաստատուելուց եւ համապատասխան ատեաններում գրանցուելուց յետոյ օրէնքի ուժ էին ստացել:

Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը մահմեդական հոգեւորականների բարձրագոյն ատեանից ձեռք է բերել մեծ թուով *ֆաթուա*ներ, որոնց մի

մասի համար 1668ի գարնանը նա կաթողիկոսական *փիշքէշով*[10] ու առատ նուէրներով Սպահան է գնում[11]: Այս կարգի փաստաթղթերի առատութիւնը տուեալ ժամանակաշրջանում կապուած էր նաեւ Իրանի պատմութեան այդ ժամանակահատուածի որոշ իրողութիւնների հետ:

Սուլէյման (1666-94) եւ Սուլթան Հուսէյն (1694–1722) շահերի իշխանութեան տարիներին, Սեֆեան Պետութեան քաղաքական թուլացմանը զուգընթաց ուժեղանում է մահմեդական հոգեւորականութեան դերն ու ազդեցութիւնը երկրի կեանքում: Այդ ժամանակ Իրանում կրօնական գործերը տնօրինում էր Մոհամմադ Բաղէր Մաջլէսին (1627-99)[12], որը շահ Սուլէյմանի օրօք *շէյխ-ուլ-իսլամն*[13] էր, իսկ շահ Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին հասնելով իր փառքի գագաթնակէտին՝ ստանում է նոր ու ամենաբարձր հոգեւորականի՝ *մոլլաբաշիի*[14] պաշտօնը[15]: Իր մահից յետոյ *մոլլաբաշիի* պաշտօնն անցնում է նրա թոռանը՝ Մոհամմադ Հուսէյնին[16]: Մաջլէսին մեծ ազդեցութիւն ունէր վերոյիշեալ շահերի վրայ եւ նրանց հրապարակած հրովարտակները յաճախ յիշեալ հոգեւորականի կամքի դրսեւորումներն էին[17]: Այս պատճառով Սեֆեան վերջին շահերի իշխանութեան տարիներին ուժեղանում են հալածանքները այլադաւան փոքրամասնութիւնների, այդ թւում՝ քրիստոնեայ հայերի դէմ[18]: Սուլթան Հուսէյնի ժամանակաշրջանը բնութագրելիս նորջուղայեցի պատմագիր Ստեփանոս Երէցը (1746-1813) նշում է, որ հայութեան հանդէպ անհանդուրժողութեան արտայայտութիւններից էր այն, որ անձրեւ օրերին քրիստոնեաներին թոյլ չէր տրւում գնալ քաղաք, շուկայ, փողոց[19]: Հայութեան մի շարք հոգեւոր առաջնորդներ ձերբակալւում են, Նոր Ջուղայի հայոց եկեղեցին սկսում է տարեկան որոշ գումար վճարել պետութեանը[20], ծանր (30 թումանի) հարկ է դրւում Հազարջրիբի Ս. Աստուածածին վանքի վրայ, որի հետեւանքով վանքի հոգեւորականներն հեռանում են[21], մահմեդական կրօնական առաջնորդների հրահրմամբ Սուլթան Հուսէյնը անարդար հրովարտակներ է հրապարակում կրօնական փոքրամասնութիւնների մասին[22], յաճախակի են դառնում բռնի մահմեդականացման դէպքերը: Սա արիւնահեղութիւնների ու անհանգստութիւնների պատճառ է դառնում[23]:

ՋԻՋԻԱՆ ՍԵՖԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Իրանահպատակ հայերի տարբեր խնդիրների կապակցութեամբ մահմեդական աստուածաբանների ու իրաւագէտների (*ուլամա*ներ ու *ֆաքիհ*ներ) եւ *դիւան ալ-սադարաթի* կայացրած *ֆաթուա*ներում եւ *միսալ*ներում մշտապէս առկայ է այն դրոյթը, որ խնդրարկուները «*զիմմի են եւ կատարում են իրենց զիմմիական պարտականութիւնները՝ ըստ ամենալուսաւոր շարի՛ օրէնքների ջիզիա*[24] *վճարելով*»: Այսպիսով, «ջիզիա վճարող զիմմի» լինելը պարտադիր պայման էր մահմեդական դատական ատեանների որոշումներից ու *զիմմի*ների տրուած իրաւունքներից օգտուելու համար, որը ամրագրուած էր Ղուրանի վերոնշեալ սուրայում:

Սեֆեան ժամանակաշրջանում իւրաքանչիւր գիւղից գանձուող *ջիզիան* հաշւուած էր եւ ընդհանուր գումարով հարկային մատեաններում գրանցուած տուեալ գիւղական համայնքի անունով[25]: Շահ Աբբաս Ա.ի օրօք (1588-1629) հայերի հարկային բեռը բաւական թեթեւ էր, սակայն ԺԷ. դարի ընթացքում նրանցից գանձուող *ջիզիան* աճում է[26]: 1637ին Իրան այցելած գերմանացի ուղեգիր Ադամ Օլիարիուսի վկայութեամբ՝ Իրանում բնակուող շուրջ 100,000 հայեր վճարում էին 2 ռայխսթալէրին համարժէք գլխահարկ: Նշանաւոր արեւելագէտ Վ. Մինորսկին համարում է, որ կշռով մէկ ռայխսթալէրը համարժէք էր 4 աբբասիի կամ 4/50 թումանի[27]: Եթէ հաշուի առնենք, որ մէկ աբբասին ԺԷ. դարում հաւասար էր 200 դինարի, ապա *ջիզիայի* գումարը կազմում էր 1600 դինար: Ըստ Զաքարիա Ագուլեցու՝ Ագուլիսի գլխահարկը 1666ին նշանակւում է 2500 դինար[28]: ԺԷ. դարի երկրորդ կէսում ըստ որոշ տուեալների[29] իւրաքանչիւր չափահաս հայ տղամարդուց գանձուող *ջիզիան* կազմում էր մէկ *միսղալ* (4,69 գրամ) ոսկի[30], նոյնքան էր նաեւ զրադաշտականներից[31] եւ հրեաներից[32] գանձուող *ջիզիայի* չափը:

ԺԷ. դարի երկրորդ կէսին հրապարակուած *ֆաթուա*ներից միքանիսում քննւում ու լուծում էին ստանում *ջիզիայի* վճարմանը վերաբերող միքանի հարցեր, ինչպէս օրինակ այն, որ *զիմմին* պարտաւոր էր *ջիզիա* վճարել նաեւ իր *զիմմի* ծառայի համար եւ պարտաւոր չէր այն վճարել իր այլակրօն ծառայի համար, որը *զիմմի* չէր[33]. նաեւ՝ որ *ջիզիա* չպէտք է պահանջեն Իրանի տարբեր շրջաններում շրջող հայ վաճառականներից[34]: 1668ին եւ 1669ին հրապարակուած այս *ֆաթուա*ներից երեւում է, որ տարածուած երեւոյթ է եղել այն, որ երբ հայերը առեւտրական կամ այլ նպատակներով մի տեղից մի այլ տեղ էին գնում, այնտեղ նրանցից պահանջում էին կրկին *ջիզիա* վճարել, հակառակ դէպքում ստիպում էին հաւատափոխ լինել: Ուստի Յակոբ կաթողիկոսը հարկադրուած է եղել շեշտել տալ, որ «*համաձայն գոյութիւն ունեցող օրէնքների, հայ ոայաթները ջիզիան վճարում են միայն իրենց հիմնական բնակութեան վայրում, մէկ անգամ, եւ արգելւում է այլ վայրերում ճամփորդելիս նրանցից ջիզիա պահանջելը*»[35]: Սակայն չնայած դրան, նոյն *ֆաթուա*ների բովանդակութիւնից պարզւում է, որ հեռաւոր վայրերում շատ հայ վաճառականներ ստիպուած են եղել առերես հաւատափոխ լինել եւ վերադառնալով իրենց բնակավայրը վերստին մկրտուել, որն իր հերթին տեղի մահմեդական հոգեւորականութեանը առիթ է տուել նոր հետապնդումների[36]:

Սկսած ԺԵ. դարից *ջիզիա* եզրոյթին զուգահեռ փաստաթղթերում հանդիպում է նաեւ *թաֆաւութ-է ջիզիա* (تفاوت جزیه) հարկատեսակը, որի չափը միքանի տարին մէկ թարմացւում էր ընդհանուր մարդահամարից յետոյ[37]: *Թաֆաւութ-է ջիզիան*, որ բառացի՝ «ջիզիայի տարբերութիւն» էր նշանակում, հայերից գանձուող գլխահարկի կամ *ջիզիայի* վրայ ժամանակի ընթացքում բարդուած գումարն էր, որ հարկային մատեաններում գրանցում

եւ հաշւում էր առանձին՝ դիտուելով որպէս առանձին պարտաւորութիւն[38]: Ընդ որում *թաֆաւութ-է ջիզիայի* գումարը ուղղակի կապ ունէր դրամի արժեզրկման հետ: *Ջիզիան* ու *թաֆաւութ-է ջիզիան* կարեւոր տեղ էին զբաղեցնում Սեֆեան Պետութեան ամավարկում. նրանց գումարը երբեմն կազմում էր որոշ գիւղերից հաւաքուող հարկագումարի կէսից աւելին[39]:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Շահ Աբբաս Ա.ի ժամանակաշրջանը բնութագրելով՝ Առաքել Դաւրիժեցին նշում է. «*[Շահ Աբբաս Ա.ը] յօժար կամօք հրամայեաց եկեղեցիս շինել յամենայն տեղիս, եւ Ջուղայ եւ ի գեղօրայս մեծանիստ ու բարձրաշէն..*»[40]:

Իրօք, շահ Աբբաս Ա.ի իշխանութեան տարիներին Իրանի տարածքում կառուցւում են մեծ թուով հայ առաքելական ու կաթոլիկ եկեղեցիներ: Սա աննախադէպ երեւոյթ էր մահմեդական պետութեան համար, որովհետեւ *զիմմի*ական պայմանագրերի վրայ յենուող մահմեդական իրաւունքի տեսանկիւնից ընդունելի էր համարւում միայն նախքան արաբական նուաճումները կառուցուած եկեղեցիների նորոգումը: Այս իրողութիւնը կապւում է Իրան տեղափոխուած հայութեանը՝ նոր բնակավայրերին կապելու եւ շահ Աբբաս Ա.ի արտաքին քաղաքականութեան ուղղուածութեան հետ, որը նպատակ ունէր ամրացնել Իրանի կապերը եւրոպական երկրների հետ եւ արտօնում էր նաեւ կաթոլիկ առաքելութիւնների հաստատումն ու քարոզչութիւնը իր երկրի տարածքում: Հայկական վանքեր ու եկեղեցիներ են կառուցուել Իրանում նաեւ յետագայում: Մասնաւորապէս շահ Սեֆի Ա.ի 1042ի (1632/3) հրամանագրով հաստատւում էր հայերի իրենց բնակութեան վայրում եկեղեցիներ կառուցելու ու նորոգելու իրաւունքը[41]: Շահ Աբբաս Բ.ի օրօք եւս Ստեփանոս Երէցի հաւաստմամբ շահը «*թղթով ու արքունական կնիքով հրաման տուեց աներկիւղ ու ապահով կառուցելու վանքը*»[42]:

Այդուամենայնիւ, նոր հայկական վանքեր կառուցելու իրաւունքի մասին որեւէ նշում չկայ ՄՄ Սեֆեան շրջանի պարսկերէն հրովարտակներում եւ *ֆաթուա*ներում: Մահմեդական հոգեւորականութեան բարձրագոյն աւտեանի կողմից ԺԷ. դարի երկրորդ կէսին հրապարակուած *ֆաթուա*ներում, մշտապէս շեշտւում է, որ թոյլատրւում է նորոգել այն հայկական վանքերը, որոնք կառուցուած են եղել նախքան արաբական նուաճումը: Ընդ որում այդ *ֆաթուա*ները հրապարակուել են ինչպէս որոշակի մի վանքի[43], այնպէս էլ ընդհանրապէս հայաբնակ մի քանի շրջանների՝ Սիւնիքի, Չուխուր Սա'ադի, Ղարաբաղի ու Ատրպատականի վանքերի վերանորոգումը թոյլատրելու խնդրով[44]:

Հայոց եկեղեցիների նորոգումը թոյլատրող Սեֆեան շահերի հրովարտակներում գրեթէ միշտ նշւում էր այդ առթիւ հրապարակուած *ֆաթուա*յի մասին[45], իսկ շահի փոփոխութեան դէպքում յաճախ անհրաժեշտ էր լինում այդ մասին հրովարտակ ձեռք բերել նաեւ նոր շահից: Օրինակ Առա-

քել Բոբիկ Շոռոթցին Նախիջեւանի՝ Ագուլիսի, Շոռոթի ու Բիստի վանքերը նորոգելու համար հրովարտակներ է ձեռք բերել շահ Աբբաս Բ.ից (1664) եւ շահ Սուլէյմանից (1667), որոնցում նշւում է այդ առթիւ հրապարակուած *ֆաթուայի*, իսկ վերջինում՝ նաեւ նախորդ շահի հրովարտակի մասին[46]:

Յակոբ կաթողիկոսի ջանքերով ձեռքբերուած հրամանագրերում արտացոլուել է ԺԷ. դարի երկրորդ կէսում հայաբնակ շրջաններում շարունակուող լայնածաւալ եկեղեցական շինարարութիւնը, որ սկսուել էր դարասկզբին: Զաքարիա Քանաքեռցու վկայութեամբ շահ Աբբաս Բ.ը դէմ գնալով տեղի մահմեդական հոգեւորականութեան կամքին՝ յատուկ հրամանագրով հովանաւորում է Արդեբիլում հայկական հին եկեղեցու վերակառուցումը եւ կարգադրում տեղական կառավարիչներին՝ գործնական օժանդակութիւն ցուցաբերել այդ հարցում[47]: 1661ին հրապարակուած մէկ այլ հրովարտակով հրահանգւում է հայաբնակ շրջանների տեղական իշխանութիւններին ու մահմեդական հոգեւորականութեանը որեւէ կերպ չնեղել հայերին՝ նրանց եկեղեցիների աւելի բարձր կառուցուած լինելու ու վերանորոգման համար[48]: 1664-65ին, շահ Աբբաս Բ.ի թոյլտուութեամբ[49] ու տեղի կառավարիչ Միրզա Իպրահիմի յանձնարարութեամբ վերանորոգւում է Ագուլիսի Ս. Յովհաննէս եկեղեցին[50], 1669ին սկսում են կառուցել Խորվիրապի եկեղեցին, Մուղնու Ս. Գէորգ եկեղեցին[51]: 1679-85՝ վերանորոգւում է Ս. Թադէոս Առաքեալի վանքը[52], 1698ին՝ Ս. Գեղարդինը[53] եւն.: Մահմեդական իշխանութեան տակ ապրող հայութեան համար նման հրովարտակները անհրաժեշտ էին հայոց եկեղեցիների յետագայ ապահովութեան համար, որովհետեւ եթէ եկեղեցու վերանորոգումը ամրագրուած չէր հրովարտակով, ապա դա կարող էր հիմք դառնալ յետագայում մահմեդական պաշտօնեաների ու կառավարիչների չարաշահումների, անգամ՝ նրանց հնարաւոր աւերման համար: Խնդիրներ կարող էին ծագել նաեւ եկեղեցիների ընդարձակման ու կառուցուածքի փոփոխութեան դէպքում, ինչպէս վկայում է, մասնաւորապէս 1671ի մի փաստաթուղթ, ըստ որի Վերին Ագուլիսի մահմեդականները բողոք են ներկայացնում՝ պնդելով, թէ Ագուլիսի վանահայրը վանքի շուրջն ապօրինաբար բարձր պարիսպ ու այլ շինութիւններ է կառուցել: Տեղի հայերն իրենց հերթին նշում են, որ այդ պարիսպը վանքի վակֆային տարածքում է եւ վանքի հիւրերի եւ ուխտաւորների պաշտպանութեան համար է: Անցկացուած քննութեան արդիւնքում որոշւում է, որ քանի որ այդ շինութիւնները պաշտպանութեան համար են, եկեղեցու մաս չեն կազմում եւ դրանք ոչ ոքի չեն խանգարում, ուստի նրանց կառուցումը օրէնքին հակառակ չէ[54]:

ՀԱՅ *ՋԻՄՄԻ*ՆԵՐԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Պաշտօնապէս, Իրանում ԺԷ.-ԺԸ. դարերում հայ *զիմմի*ներին կրօնական ծէսերի ու արարողութիւնների կատարման հարցում տրուած էր լիա-

կատար ազատութիւն, որի մասին հաւաստում է Դաւրիժեցին. «*զամենայն կարգ եւ զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել, զժամ կանչել. եւ զջրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել... Եւ զմեռեալսն խաչալամով եւ ձայնիւ շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ եւ տանէին ի թաղել*»[55]: Եւրոպացի ուղեգիրները ականատես լինելով իրանահայութեան կրօնական արարողութիւնների ազատ կատարմանը՝ հաւաստում են դրանց նկատմամբ իրանցի իշխանաւորների հետաքրքրութեան ու շահի ներկայ գտնուելու մասին[56]:

Կրօնական ծէսերի ու արարողութիւնների ազատ կատարման իրաւունքը Յակոբ կաթողիկոսի ջանքերով ամրագրուել էր *դիւան ալ-սադարաթի* կողմից 1669ին հրապարակուած *միսալով* ու *ֆաթուայով* եւ հաստատուել շահ Սուլէյմանի հրամանագրերով[57]:

Քրիստոնէական օրէնքներով ապրելու իրաւունքը պաշտպանելու համար 1669ին շահ Սուլէյմանից հրամանագիր է ստանում նաեւ Աղուանից Պետրոս կաթողիկոսը[58]: Իրանի հոգեւորականութեան բարձրագոյն աստեանի կայացրած վճիռները արգելում էին նաեւ տարբեր շրջաններում բնակուող հայ *զիմմի*ներից իրենց իրաւունքներին համապատասխան վարուելու համար յաւելեալ գումարներ պահանջելն ու խոչընդոտելը[59], նրանց նկատմամբ բռնի ու անօրինական գործողութիւնները[60]:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Պարսկերէն փաստաթղթերում գանձագին եւ ժառանգական հողատիրութիւնը արտայայտւում է *մուլք, մալիք, մալլաք* բառերով, որ նշանակում է սեփականութիւն, սեփականատէր: Այդ կարգի սեփականատիրութիւնը կոչւում էր *թամլիք*, որը աւելի շեշտուած անուանում էին *թասարրուֆ-է մալիքանէ* (تصرف مالكانه), որ նշանակում է «սեփականատիրական տիրակալում»[61]:

Սեֆեան ժամանակաշրջանում սեփականատիրական իրաւունքի հաստատման եւ նրա շուրջ ծագած վէճերի առթիւ տրուած շահական հրովարտակները հիմնականում հրապարակուել են ի հաստատումն *դիւան ալ-սադարաթի միսալի* եւ կամ շէյխ-ուլ-իսլամի կամ մուֆթիի *ֆաթուայի*:

Մահմեդական հոգեւորականութեան կողմից ԺԷ. դարի երկրորդ կէսին հրապարակած *ֆաթուա*ներից մի քանիսը հաստատում են հայ *զիմմի*ների սեփականատիրական իրաւունքներն իրենց կողմից գնուած կալուածքների եկամուտների ու հարկերի նկատմամբ:

Մասնաւորապէս, ըստ 1658ին հրապարակուած մի *ֆաթուայի*, հայ *զիմմի*ն իրաւունք ուներ տնօրինելու իր գնած *մուլքի* եկամուտները, իսկ նախկին սեփականատիրոջ ժառանգները դրա նկատմամբ իրաւունքներ չունեն[62], նոյն թուականին հրապարակուած մէկ այլ *ֆաթուայի* համաձայն

զիմմին իրաւունք ունի գանձելու իրեն պատկանող *մազրաէի մալիքանէ* հարկը[63]:

Անձնական ժառանգական կամ գանձագին *մուլք*երը անառարկելի սեփականութիւն էին համարւում, որոնց *մալիք*ները «*կարող էին տիրել ինչպէս սեփականատէրերը տիրում են իրենց սեփականութեանը կամ իրաւատէրերը իրենց իրաւունքներին եւ վարուել նրանց հետ, ինչպէս ցանկանան*»[64]: Որովհետեւ դա սեփականատիրութիւն էր, որը շար'իաթի[65] օրէնքներով կարելի էր տնօրինել, վաճառել, փոխանցել մէկ ուրիշի, նուիրել կամ *վակֆ* անել:

*Մուլք*ային սեփականութիւնը շար'իաթի օրէնքներով պաշտպանուած էր ամէն տեսակի բռնազաւթումներից ու ոտնձգութիւններից եւ այդ իրաւունքը *շար'ի* օրէնքներով ապացուցելով՝ հնարաւոր էր խուսափել անօրինական իւրացումներից: Իսկ իւրաքանչիւր կալուածքի նկատմամբ իրաւունքները հնարաւոր էր ապացուցել *շար'իաթ*ական-նոտարական այլեւայլ փաստաթղթերով, որպիսիք էին առքուվաճառքի, կտակի, նուիրատուութեան եւ այլ կալուածագրերը (*ղաբալէ, վասիյյաթնամէ, մուսալեհենամէ* եւն.), նաեւ՝ դիւանական հարկային մատեաններից տրուած տեղեկանքները[66]:

Նշուած *ֆաթուա*ները ձեռքբերուած լինելով Յակոբ Ջուղայեցու հայրապետութեան տարիներին, բնականաբար նախատեսուած էին կալուածքների նկատմամբ նախ եւ առաջ Մայր Աթոռի ու Ամենայն Հայոց կաթողիկոսի իրաւունքները ապահովելու համար:

Այս *ֆաթուա*ները բովանդակում էին ընդհանուր ձեւակերպումներ իրաւունքների մասին, որոնցով հնարաւոր էր դառնում պաշտպանել *զիմմի*ի մասնաւոր սեփականութիւնը միայն այդպիսին լինելը ապացուցելուց յետոյ:

Չնայած *մուլք*ային սեփականութեան շար'իաթական իրաւունքի առումով բաւական պաշտպանուած լինելուն, այնուամենայնիւ իրաւական տեսանկիւնից իր ամրութեամբ զիջում էր *վակֆ*ային ու *սուլհ* (*մուսալեհէ*) գործարքով որպէս նուիրատուութիւն յանձնուած սեփականութեանը, քանի որ միայն այս տիպի գործարքով փոխանցուած սեփականութիւնն էր, որ պաշտպանուած էր նոր մահմեդականացած (*ջադիդ ալ-իսլամ*) ժառանգների յաւակնութիւններից:

Երբեմն տեղի ազդեցիկ պաշտօնեաների ոտնձգութիւններից պաշտպանուելու համար կաթողիկոսը հարկադրուած էր դիմել *դիւան ալ-սադարաթի*ն, իր ու Մայր Աթոռի իրաւունքները հաստատելու եւ շահի հրամանով դրանք պաշտպանելու համար, ինչպէս դա պատահում է Վաղարշապատ գիւղի նկատմամբ Երեւանի նախկին բէկլարբէկ Աբբաս Ղուլի խանի (1663–66) յաւակնութիւնների դէպքում: Պահպանուել է շահ Սուլէյմանի 1672ի հրամանագիրը՝ հրապարակուած ի հաստատումն *դիւան ալ-սադարաթի*ի Վաղարշապատ գիւղի էջմիածնին պատկանելու վերաբեր-

եալ կայացրած *միսալի*[67]: Այդ ծաւալուն *միսալի* բովանդակութիւնից յայտնի է դառնում, որ Վաղարշապատ գիւղի նկատմամբ Էջմիածնի իրաւունքները ապացուցելու համար Յակոբ կաթողիկոսը *դիւան ալ-սադարաթի* քննութեանն է ներկայացրել մի շարք փաստաթղթեր, որոնց մէջ էին այդ գիւղի 1450ի *վակֆնամէն*, 1620ի Մովսէս կաթողիկոսի եւ 1662ին ու 1668ին իր կողմից ձեռքբերուած *միսալները*[68]: Էջմիածնի համար այդ կալուածքի պահպանութեան նպատակով ձեռքբերուած յիշեալ փաստաթուղթը նոյն շրջանում պատճէնուել է մի քանի օրինակով, նաեւ 1675ին վերահաստատուել նոր հրովարտակով[69]:

Յետագայում վերը նշուած իրաւական դրոյթներից շատերը անհրաժեշտութեան դէպքում վերահաստատւում էին շահական հրովարտակներով: Մասնաւորապէս, շահ Սուլթան Հուսէյնի 1712ի մէկ հրամանագրով վերահաստատւում են վեց *ֆաթուա*ներ բովանդակող հրովարտակներ[70]: Հրամանագրում հակիրճ նշւում է *ֆաթուա*ների բովանդակութիւնն ու նրանց հրապարակման ժամանակը:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ ՕՐԷՆՔԸ

Թէ՛ Սեֆեան եւ թէ՛ յետագայ շրջանի իրանական իշխանութիւնները որքան էլ ընդհանուր առմամբ հանդուրժողական էին իրենց հպատակ այլակրօնների նկատմամբ, այնուամենայնիւ նրանց մահմեդականացումը Իրանում մշտապէս խրախուսուել է բռնի ու ոչ-բռնի, այլեւայլ մեթոդներով[71]:

Մուհամմադ մարգարէի անունից կնքուած պայմանագրերի ոգուն համահունչ շահ Սուլէյմանի 1669ի հրովարտակով հաստատուած *ֆաթուայով* արգելւում էր բռնի հաւատափոխութիւնը, մի երեւոյթ, որը ժամանակ առ ժամանակ կիրառւում էր մահմեդական իշխանութիւնների կողմից ինչպէս Իրան բռնագաղթուած հայութեան, այնպէս էլ Արեւելեան Հայաստանի հայ բնակչութեան հանդէպ:

Բացի այն, որ *զիմմի* համարուելն ինքնին ենթադրում էր որոշակի իրաւական անհաւասար կարգավիճակ այլակրօնի համար, ինչպէս նաեւ *ջիզիայի* կամ գլխահարկի եւ *թաֆաւութ-է ջիզիայի* կանոնաւոր վճարում[72], ժամանակ առ ժամանակ այլակրօնները ենթարկւում էին կրօնական հալածանքների եւ դառնում մահմեդականների մոլեռանդութեան ու անհանդուրժողութեան զոհը: Երբեմն էլ հաւատափոխութիւնը իրականացնելու համար գործի էին դրւում խոստումները, ինչպէս օրինակ շահ Սուլթան Հուսէյնի օրօք, երբ իւրաքանչիւր ամսուայ սկզբին շահի մունետիկն ազդարարում էր, թէ «*Նա, ով կ'ընդունի մեր՝ Մահմեդի կրօնը, ինչ խնդրանք, որ ունի, կը կատարուի անթերի*»[73]:

Ստեփաննոս Երէցի հաւաստմամբ, մահմեդականացած հայերը իրաւապէս աւելի պաշտպանուած էին, քանի որ նրանք կարող էին զրպարտել, թէ «*Այս այրը պարտք է ինձ այսքան դահեկան, ես չկարողացայ առնել, դրա համար էլ եկայ դէպի Ձեր կրօնը*», կամ «*Ձքաւորութեան պատճառով*

իմ որդին բազմաթիւ փարիներ ծառայեց այս մեծափունի մօտ, բայց նա չտուեց իմ որդու վարձը, դրա համար եկայ դէպի ձեր կրօնը» եւ այդ կերպ դրամ կորզել քրիստոնեաներից[74]:

Գործում էին նաեւ օրէնքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի նպաստում էին *զիմմի*ների մահմեդականացմանը[75]:

Բոլոր մահմեդական իրաւագիտական դպրոցների եւ ուղղութիւնների (*համբալի, շիա իմամական, շաֆի'ի, մալիքի ու զէյդիէ*) իրաւագէտներն ընդունում են *հադիս*ներում առկայ այն տեսակէտը, որ այլակրօնը չի կարող ժառանգել մահմեդականի ունեցուածքը[76]: Մինչդեռ այլակրօնից մահմեդականի ժառանգութիւն ստանալու իրաւունքը ժխտում են մահմեդական իրաւագիտական դպրոցներից ոչ-բոլորը[77]: Ժառանգութեան մասին շիա իմամական մահմեդականների շրջանում գործող օրէնքների համաձայն մահմեդականը կարող էր ժառանգել իր այլակրօն - անգամ հեռու - ազգականի ունեցուածքը՝ զրկելով այդ իրաւունքից աւելի մօտ ազգականներին[78]: Սեֆեան ժամանակաշրջանում, Իրանում շրջանառութեան մէջ է դրւում շիա իմամական իսլամի այս օրէնքը: Նոր մահմեդականացածների իրաւունքների մասին յիշատակութիւն կայ շահ Թահմասպ Ա.ի հիջրայի 952ի (1545) հրովարտակում, որտեղ սակայն նշւում է, որ հայերի մահմեդականացած ազգականները իրաւունքներ չեն կարող ունենալ *վակֆ*ային կալուածքների նկատմամբ[79]:

Մատենադարանի պարսկերէն վաւերագրերից առաջինները, որ բովանդակում են այս օրէնքի գործադրութեան մասին փաստեր, գրւել են 1620ականների սկզբին[80] եւ կապւում են շահ Աբբաս Ա.ի անուան հետ: Վերջինս, չնայած քրիստոնեայ եւ հրեայ բնակչութեան հանդէպ վարած բաւական հանդուրժողական քաղաքականութեանը, ունէր բարեպաշտ մահմեդականի նկարագիր[81]: Շահ Աբբասի կողմից իրականացուած բռնագաղթերով մայրաքաղաք Սպահանում եւ յարակից բնակավայրերում քրիստոնեաների թիւը զգալիօրէն աճում է, որը չէր կարող չանհանգստացնել մահմեդական հոգեւորականութեանը եւ իշխանական օղակներին: Կարծում ենք հենց այս պատճառով ԺԷ. դարի սկզբից Իրանում նոր խթան է ստանում շիա իսլամում այս օրէնքի գործադրութիւնը, որն աւելի արդիւնաւէտ էր իսլամացման տեսանկիւնից, քան բռնի հաւատափոխութիւնը, քանի որ վերջինս, ինչպէս վերը նշուեց, իսլամի օրէնքներով ու Մուհամմադ մարգարէի անունից կնքուած պայմանագրերով արգելուած էր:

Այդ օրէնքի սկզբունքները, մասնաւորապէս, առկայ են շէյխ Բահա ալ-Դին Ամելիի (յայտնի է նաեւ շէյխ Բահայի անուամբ, մահ.՝ 1621ին) կողմից գրուած իսլամական իրաւագիտութեանը վերաբերող *Ջամէ'է Աբբասի* (Աբբասի ժողովածու) աշխատութեան մէջ, որտեղ նշւում է, որ «*մահմեդականը ժառանգում է անհաւատի ունեցուածքը եւ [նրա այդ իրաւունքը] անհաւատ [ժառանգի իրաւունքից] առաջնային է, հեռու լինի [նա], թէ*

մօտիկ»[82]: Վերոյիշեալ իրաւագէտը շահ Աբբասի օրօք Սպահանում բնակուելով դարձել էր շէյխ-ուլ-իսլամ եւ իր ժամանակաշրջանի առաւել ազդեցիկ շիա հոգեւորականն էր[83]: Չի բացառւում նաեւ, որ նա լինի այս օրէնքի շրջանառութեան մէջ դրուելու նախաձեռնողներից, որովհետեւ նրան է վերագրւում նաեւ շահ Աբբաս Ա.ի օրօք Սպահանի մօտակայ գիւղերի հայերի բռնի մահմեդականացման հրահրումը[84]:

Եւ քանի որ, ինչպէս վերն արդէն նշել ենք, մահմեդական իրաւագիտութեան մէջ ցանկացած օրէնքի հեղինակութիւնը վերագրւում էր Աստծուն, որն այն մարդկանց է փոխանցել Մուհամմադ մարգարէի եւ իմամների միջոցով, ուստի պատահական չէ, որ այն կապուել է նրանց անուան հետ: Հայ ուսումնասիրողներից Յ. Տէր Յովհաննեանցն այդ օրէնքը համարում է «սահմանադրեալ 'ի Մահմեդէ»[85], սակայն աւելի յաճախ այն կապւում է Իմամ Ջա'ֆարի անուան[86]: ԺԷ. դարի Բ. կէսին Իրան այցելած ճանապարհորդ Ժան դը Թեւընոյի հաւաստմամբ «*նա ով հաստատել է այս օրէնքը, հաւատացրել է, որ այն թոյլատրուած է եղել տասներկու իմամներից մէկի Ջա'ֆարի կողմից եւ Ջա'ֆարն էլ վստահեցրել է, որ իրեն այդ մասին յայտնել է Աստուած*»[87]: Շիաների վեցերորդ իմամ Ջա'ֆար Սադէղը իմամներից ամենահեղինակաւորն էր եւ մեծ դեր ունէր շիական ուսմունքի ու իրաւագիտութեան ձեւաւորման գործում: Նրան էին վերագրւում շիա ուսմունքին վերաբերող բազում արտայայտութիւններ ու գաղափարներ, նաեւ աղօթքներ ու քարոզներ[88]:

Շահ Աբբաս Ա.ի կողմից իր մահից (1629) քիչ առաջ հրապարակւում է մի հրամանագիր, ըստ որի «*իւրաքանչիւր քրիստոնեայ, որ մահմեդականութիւն էր ընդունում, իրաւունք էր սպանում ժառանգելու իր բոլոր ազգականների ունեցուածքը մինչեւ եօթ պորտ*»[89]: Այս հրամանագիրը փաստօրէն նոր ուժ էր հաղորդում այլակրօնների ժառանգական խնդիրներին վերաբերող այդ օրէնքին եւ փաստացի խրախուսում քրիստոնեաների մահմեդականացումը: Այս օրէնքի գործադրման եւ նրա ծանր հետեւանքների մասին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Դաւրիժեցին: Ըստ նրա, Իրան բռնագաղթուած հայերից ոմանք մահմեդականութիւն էին ընդունում, «*զի տան կաշառս Մահմեդականաց՝ եւ կացուցանեն սուտ վկայս, եւ քարշեն զքրիստոնեայս առ դատաւորս Մահմեդականս ի դատաստան, եւ պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ եւ հնարել կարեն*», պնդում, թէ՝ «*ազգական քո եմ, ամենայն ինչք եւ սպացուածք քո ինձ հասանի, փուր ինձ: Եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողաց, թէ որովհետեւ նա եկեալ է յօրէնս Մահմեդի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց: Եւ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս եւ տան ուրացողացն*»[90]:

Այդ օրէնքը յետագայում եւս վերահաստատւում է շահ Աբբաս Բ.ի իշխանութեան (1642-66) շրջանում[91] աւելի սաստկացնելով նրա ազդեցութիւնը քրիստոնեաների ժառանգութեան խնդիրներում:

Մեծ թուով պարսկերէն վաւերագրեր հաստատում են *դիւան ալ-սադարաթի* եւ Երեւանի, Նախիջեւանի ու այլ վայրերի *շար'ի* ատեանների *ֆաթուաներ*՝ հրապարակուած հայերի ժառանգական խնդիրներում այս օրէնքի գործադրման կապակցութեամբ[92]: Վաւերագրերի տուեալները հնարաւորութիւն են տալիս նաեւ պարզելու, որ եթէ *զիմմի* ժառանգորդները եւս մահմեդականութիւն էին ընդունում նախքան ժառանգութեան բաժանումը, կարող էին վերականգնել իրենց ժառանգական իրաւունքը[93], այնուամենայնիւ «*եղբայրներից աւագը լինելով հանդերձ, աւելի ուշ մուսուլման դարձածը չէր կարող աւելի վաղ մուսուլման դարձած եղբօրից խլել ժառանգութեան իրաւունքը*»[94]:

Այս օրէնքի կիրառութիւնը բացայայտօրէն խրախուսում էր այլակրօնների մահմեդականացումը, որը լայն թափ է ստանում Իրան տեղափոխուած հայութեան շրջանում: Որոշ տուեալների համաձայն այդ հրամանագրի հրապարակումից 15 տարի անց աւելի քան 50,000 քրիստոնեայ էր մահմեդականացել՝ խուսափելու համար աղքատացումից եւ ունեզրկումից[95]: Մահմեդականացած հայերի կողմից բարձրացուած ժառանգութեան վէճերի մասին դէպքեր են նկարագրել հայ պատմիչները, մասնաւորապէս Ագուլեցին, որի վկայութեամբ նման վէճի պատճառով Ղարենց օյմաղին հասցուած վնասը գնահատում է 100 թուման[96]: Մահմեդականացած հայերի կողմից յաճախակի էին զրպարտութիւններն ու մատնութիւններն իրենց քրիստոնեայ ազգականների հանդէպ[97]:

Տնտեսական լծակների ազդեցութեամբ մահմեդականութիւն ընդունած հայերի թիւը փոքր չէր նաեւ Երեւանում[98]: Հայերի մահմեդականացումը ծանր դրութիւն էր ստեղծել նաեւ Արցախում ու Աղուանքում[99]: Մեծ թուով հայեր, «կամաւոր» մահմեդականութիւն են ընդունում ագահութիւնից դրդուած կամ էլ մահմեդական դարձած ազգականներից իրենց ժառանգութիւնը պաշտպանելու նպատակով: Ժառանգութեան պատճառով տեղի ունեցող հաւատափոխութեան դէպքերը յատկապէս շատ էին քաղաքաբնակ ունեւոր դասի ներկայացուցիչների՝ առեւտրականների ու արհեստաւորների շրջանում[100]: Տէր Յովհաննեանի դիտարկմամբ այդ օրէնքի ծանր հետեւանքները Իրանում սաստկանում են յատկապէս Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին եւ այն շարունակում էր գործել մինչեւ հեղինակի ժամանակները[101]:

Հայ ունեւոր դասի ներկայացուցիչներից շատերն էլ չցանկանալով մահմեդականանալ, հեռանում էին Իրանից: Այդ մասին խօսուն վկայ է Աստուածատուր Համադանցի կաթողիկոսի կոնդակներից մէկը[102]:

Վաւերագրական նիւթերում ու այլ աղբիւրներում քիչ չեն նաեւ տեղեկութիւններն այն մասին, որ մահմեդականացած հայերը կամ պարզապէս մահմեդականներից ոմանք ջանացել են տէր դառնալ իրենց հետ որեւէ ազգակցական կապ չունեցող անձանց ժառանգութեանը[103]:

Իմամ Ջա'ֆարի օրէնքը հաւասարապէս կիրառւում էր ինչպէս հայ առաքելականների, այնպէս էլ կաթոլիկ հայերի ժառանգութեան հարցերում: Կաթոլիկ հայրերի զեկուցումներում յստակ ուրուագծւում են այս օրէնքի ծանր հետեւանքները Նախիջեւանի հայ կաթոլիկ գիւղերում տեղի ունեցող էթնօդաւանական գործընթացներում[104]: Պատահական չէ, որ այդ առթիւ իր բողոքն է ժամանակին արտայայտել Հռոմի Պապ Ալեքսանդր Է.ն շահ Աբբաս Բ.ին ուղղուած իր ուղերձում[105]:

Իրանահայերը ժառանգութեանը վերաբերող այս օրէնքը շրջանցելու համար ուղիներ որոնելիս կանգ չէին առնում սուտ երդում տալու առաջ: Ինչպէս հաւաստում է ֆրանսիացի միսիոներ Գաբրիէլ դը Շինոնը «*Առաջինը չհաստատել տուեալ ծնողների ժառանգները լինելու փաստը, ինչն ապացուցելու համար դիւրութեամբ երդւում են... վարդապետները նրանց վրայից հանում են բարոյական բոլոր պարտականութիւնները*»[106]: Միւս միջոցն էլ որոշակի երաշխիքի դիմաց իրենց ողջ ունեցուածքի «*փոխանցումն էր որեւէ վստահելի պարսիկի իրենց ընկերներից... որից որեւէ դաւանափոխ չի կարող ժառանգութեան ակնկալիք ունենալ*»[107]: Թերեւս նոյն միջոցի մասին է խօսում Ռաֆայէլ դիւ Մանը, նշելով, որ երբեմն հայերը գործարքի մէջ էին մտնում մահմեդական դատաւորների (*ղազի*) հետ՝ վաճառելով իրենց ունեցուածքը մէկ այլ անձի, որից յետոյ, վերջինս այն վերավաճառում էր հայի իսկական ժառանգին. մի եղանակ, որ թէեւ հիմնականում ազատում էր նոր մահմեդականացածի յաւակնութիւններից, սակայն ուղի էր հարթում դատաւորների կաշառակերութեան համար[108]:

1680ականներին Իրանում հաստատուած կաթոլիկ միսիոներ Սանսոնի վկայութեամբ հարուստ հայը տեսնելով, որ իր ազգականներից մէկը մահմեդականութիւն է ընդունել եւ կարող է յաւակնել իր հարստութեանը՝ իր զաւակներից մէկին թլպատել է տալիս, այսինքն՝ մահմեդականացնում է, եւ նրան կտակում իր ողջ հարստութիւնը: Վերջինս ժառանգելով իր հօր ողջ ունեցուածքը, կարող էր իր կամքով բաժին տալ նաեւ իր եղբայրներին ու քոյրերին, ինչպէս, որ սովորաբար կատարւում էր, որից յետոյ նա հնարաւորութիւն ունէր վերադառնալու իր նախկին հաւատին՝ կաշառքով եւ պատճառաբանելով, որ չի կարողացել յարմարուել Մուհամմէդի օրէնքի պահանջներին ու կարգին, յարմարուել բոլոր մաքրութիւններին, կատարել աղօթքները, դիմանալ Ռամազանի ու Պահքի խստութիւններին[109]:

Առանձին դէպքերում իրենց ունեցուածքը մահմեդականացած հայերի յաւակնութիւններից պաշտպանելու համար հայ մեծահարուստները նաեւ այլ ուղիներ էին գտնում: Նման մի դէպք է նկարագրում պարսկահայ առեւտրական, հասարակական գործիչ Եղիա Կարնեցին (1689-1750/1): Ջուղայեցի Շիրիմանեանների Թաւրիզում գտնուող բաղնիքը նրանց մահմեդականացած ազգական Մեհրալիի ձեռքից կարելի է դառնում ազատել մի քանի մեծահարուստ ջուղայեցիների հետ կեղծ վկայագիր

կազմելով այն մասին, թէ իբր այդ բաղնիքը նրա վեքիլ Անդրէասի կողմից պարտքի դիմաց գրաւ է դրուած եղել պատրի Պիղատոսի մօտ[110]:

Բնականաբար, այդ օրէնքի գործադրումը չէր կարող չմտահոգել Հայ Եկեղեցու առաջնորդներին: Պատահական չէ, որ նրանք ջանում էին ձեռքբերել այդ օրէնքի դէմ, կամ նրա ուժը թուլացնող շահական հրամանագրեր: Սեֆեան Պետութեան անկման շրջանում Աստուածատուր Ա. Համադանցի եւ Աբրահամ Բ. Խոշաբեցի կաթողիկոսներին յաջողւում է շահ Թահմասպ Բ.ից (որի իշխանութիւնն աւելի շատ ձեւական բնոյթ էր կրում), այս հարցի վերաբերեալ ձեռքբերել հայ քրիստոնեաների շահերը պաշտպանող հրովարտակներ: Մասնաւորապէս, շահ Թահմասպ Բ.ի 1724ի հրամանագրով մի շարք դատական ու վարչական ատեաններում իրենց իրաւունքները հաստատելուց յետոյ միայն նոր մահմեդականացած հայերին իրաւունք էր տրւում յաւակնել իրենց ազգականների ունեցուածքին[111]: Այս հրամանագրի առնչութեամբ, Աստուածատուր Համադանցին հետեւեալն է նշում Նոր Ջուղայի Մովսէս վարդապետին ուղղած իր նամակում. «*ջարիւր իսլամի բանն գլուխ բռնեց. Ամսփուծոյվ մօտացս ըռաղամն գալոյ է. Յառաջ քան զոռաղամի գալն տեղուս իշղողն հուքմ եւրուր որ այլ ջարիւր իսլամն դաւի չէ կարում անել, ով ոք որ անունն տալիս է զինքն բռնում է. Տեղոյս եւ Նախչուանայ քրիսփոնեայքն մեծ ուրախութեան միջի կան, Ամսփուծոյվ որ գլուխ գնայ, մեծ բարութիւն է հայոց ազգիս*»[112]:

Խոշաբեցուն յաջողւում է շահից 1731ին, նրա երեւանեան անյաջող արշաւանքի ընթացքում, ստանալ այդ օրէնքի կիրառութիւնը հայերի ժառանգութեան խնդիրներում արգելող հրովարտակ[113]: Թէեւ հրովարտակը զուրկ էր փաստացի ուժից, այնուամենայնիւ այն հիմք է դառնում յետագայում նման հրովարտակներ ձեռքբերելու: Այդ օրէնքի գործադրութիւնը արգելող հրամանագրեր են հրապարակուել 1735 եւ 1740ին Նադիր[114], 1748ին Իբրահիմ շահերի[115], 1825ին ղաջար թագաժառանգ Աբբաս Միրզայի, եւ 1848ին ղաջար Նասրէդդին շահի կողմից[116]:

Հայոց կաթողիկոսների ջանքերը իմամ Ջա'ֆարի օրէնքի ազդեցութիւնը չէզոքացնելու ուղղութեամբ որոշ չափով մեղմում են նրա ծանր հետեւանքները մահմեդական տիրապետութեան տակ գտնուող հայերի համար: Թէեւ փաստեր կան այդ օրէնքի կիրառման մասին նաեւ Երեւանի խանութեան շրջանում (ԺԸ. դարի երկրորդ-ԺԹ. դարի սկիզբ), բայց ինչպէս երեւում է պարսկերէն վաւերագրերի տուեալներից, դրանք հազուադէպ էին եւ երբեմն (ինչպէս օրինակ Երեւանի շար'ի դատարանի 1761ի որոշումի փաստաթղթում[117]) վէճը թեթեւ տուգանքներով լուծւում էր յօգուտ քրիստոնեայ ժառանգի:

Յիշեալ օրէնքը Իրանում գործեց նաեւ ղաջարական ժամանակաշրջանում՝ շարունակելով նպաստել քրիստոնեաների մահմեդականացմանը եւ ձուլմանը: Այդ մասին հաւաստում է, մասնաւորապէս ԺԹ. դարի կէսին Նոր Ջուղա այցելած անգլիացի պաշտօնատար Բինինգը՝ վկայելով քա-

ղաքի հայութեան խեղճութեան ու փոքրաթիւ լինելու մասին[118]: Չնայած վերոյիշեալ հրամանագրերի հրապարակմանը, Իրանի բարձրաստիճան հոգեւորականութիւնը, որի ձեռքում էր քաղաքացիական շատ խնդիրների, այդ թւում նաեւ ժառանգական հարցերի քննութիւնը, շարունակում էր նշուած օրէնքի գործադրումը հայերի ժառանգութեան խնդիրներում[119]:

Ինչպէս երեւում է Տէր Յովհաննեանի վկայութիւնից, Իմամ Ջա'ֆարի օրէնքն աւելի ազդեցիկ էր, քան Մուհամմադ մարգարէին վերագրուող հրովարտակ-պայմանագիրը, որով հայ հոգեւորականները փորձում են հակազդել ժառանգութեան այդ օրէնքին Նոր Ջուղայում[120]: Եւ քանի որ դատական իշխանութիւնն Իրանում գտնւում էր հոգեւորականների ձեռքում, հարցի կապակցութեամբ հրապարակուած հայերի համար նպաստաւոր շահական հրամանագրերը եւս, փաստօրէն, այդ խնդրին լուծում չէին տալիս:

Պարսկերէն վաւերագրական նիւթերը հաստատում են, որ մահմեդականացած ազգականների ոտնձգութիւններից պաշտպանուելու ուղիներից առաւել արդիւնաւէտ էր իսլամական օրէնքներին համապատասխան տարբերակներով դրանց որպէս նուիրատուութիւն ձեւակերպումը:

Շահ Աբբաս Բ.ի 1658ի հրամանագիրը հաստատում է, որ Էջմիածնին որպէս նուիրատուութիւն (*հոբբէ* هبه) յանձնուած գոյքը նրա տնօրինութեան տակ է գտնւում, եւ դրանք նուիրաբերած անձանց ժառանգները անկախ նրանից մահմեդականացած են թէ ոչ՝ չեն կարող ետ պահանջել[121]:

Նոր մահմեդականացած ժառանգների ոտնձգութիւններից մեծապէս պաշտպանուած էին եկեղեցական *վակֆ*ային կալուածքները, քանի որ դրանք համարւում էին անձեռնմխելի ու որեւէ կերպ օտարման ենթակայ չէին[122]: Մասնաւորապէս, Սեֆեան Պետութեան մահմեդական հոգեւորականութեան բարձրագոյն դատական ատեանի 1658 եւ 1684ի որոշումներում մերժւում են ժառանգների հայցերը՝ Էջմիածնին փոխանցուած *վակֆ*ային կալուածքների նկատմամբ[123]: Դեռեւս 1658ին Յակոբ կաթողիկոսի ջանքերով հրապարակւում է մահմեդական աստուածաբանների ու իրաւագէտների կայացրած վճիռը հաստատող շահ Աբբաս Բ.ի հրամանագիրը, ըստ որի՝ Էջմիածնին յանձնուած *վակֆ*երի հասոյթը նրա տնօրինութեան տակ է գտնւում, եւ նրա նկատմամբ նուիրատուների ժառանգները - քրիստոնեայ կամ նոր մահմեդականած - իրաւունքներ չունեն[124]: Էջմիածնի կողմից ԺԷ. դարում գնուած կալուածքներից շատերը ելնելով այս հանգամանքից՝ ձեւակերպւում են նաեւ որպէս նրա *վակֆը* այդ առթիւ գրուած *վակֆնամէ*ով[125]:

Ժառանգութեան մասին վերոյիշեալ օրէնքի վնասներից եւ ունեզրկումից իրենց ժառանգներին պաշտպանելու ուղիներից մէկն էլ, ըստ Նոր Ջուղայի ԺԹ. դարի պատմագիր-հետազօտող Տէր Յովհաննեանցի, դրանք պարգեւագրով (*սոլհնամէ* - صلح نامه, կամ *մուսալեհէ* - مصالحه) իր զաւակներին փոխանցելն էր, որից յետոյ «*ուրացեալ ընտրանին զկնի մահուանն նորա ոչ կարէ առնել զպահանջ ինչ*»[126]: Նման *սոլհնամէի* կնքման մասին

նշում կայ ջուղահայ վաճառական Յովհաննէս Թոփչիի 1669ին գրած կտակում[127], որով թերեւս նա փորձել է ապահովել իր ունեցուածքը մահմեդականացած ազգականների ոտնձգութիւններից՝ այդ կերպ փոխանցելով այն իր կնոջը՝ Դադքամին: Այս իրաւական ձեւակերպմամբ են ամրացուել նաեւ որոշ վանական կալուածքներ[128]:

Փաստօրէն, այս օրէնքից իրաւական կարգով պաշտպանուելու միակ ճանապարհը նուիրատուութիւնն էր, որը ձեւակերպւում էր *սոլհնամէի*, *հոբբէնամէի* կամ *վակֆնամէի* միջոցով:

ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԷՆՔԸ

Բացի *զիմմի*ների կարգավիճակին համապատասխանող իրաւունքներն ու պարտականութիւնները, իրանահպատակ հայութեան կեանքը կարգաւորում էին նաեւ Իրանի բոլոր *ռայաթ*ների համար ԺԷ.-ԺԹ. դարերում գործող որոշ օրէնքներ, որոնք իրենց արտացոլումն են գտել ՄՄ պարսկերէն վաւերագրերում:

Այդ օրէնքներից էր *ռայա*ների տեղաշարժման հարցերին վերաբերող օրէնքը: Թէեւ շահը կարող էր առանց որեւէ մէկի հետ հաշուի նստելու տեղափոխել իր հպատակներին երկրի մի շրջանից միւսը, կազմակերպել առանձին շրջանների բնակչութեան զանգուածային տարհանումներ ու բռնագաղթեր, այնուամենայնիւ որպէս կանոն, նստակեաց գիւղացիութիւնը ամրացուած էր իր բնակութեան վայրին ու նրա սեփականատէրերին: Նրանք ազատ տեղաշարժման իրաւունք չունէին եւ պարտաւոր էին տուեալ վայրում վարուցանք անել ու ապրել[129]:

Այնուամենայնիւ, ինչ-ինչ պատճառներով - մասնաւորապէս պատերազմների ժամանակ - գիւղացիները փախչում էին իրենց բնակավայրերից, եւ յաճախ որոշ ժամանակ անց վերադառնում, կամ հաստատւում նոր վայրում: Այս երեւոյթի մասին տեղեկութիւնները ցրուած են տարբեր աղբիւրներում, այդ թւում նաեւ պարսկերէն վաւերագրերում[130]: Նստակեաց հողագործների տեղափոխութեանը վերաբերող հարցերը եւս կարգաւորւում էին շահական հրովարտակներով:

Սուլթան Հուսէյնի հրովարտակներում[131] արձանագրուած կարգի համաձայն *ռայա*ները, որոնք 12 տարուանից աւելի էին բնակուել որեւէ վայրում, չպէտք է հեռացուէին այնտեղից եւ ընդհակառակը, եթէ 12 տարին դեռ չէր լրացել, ապա նրանց կարող էին վերադարձնել նախկին բնակավայրը: Հրովարտակներից մէկը հրապարակուել է 1698/9ին Սաւարի (Սվարանց) գիւղի բնակիչ քրիստոնեայ Աղամի խնդրանքով, որը նշում է, որ նախկինում բնակուել է Դարաբազ (Աղվերձ) գիւղում, իսկ այժմ բաւական ժամանակ է, ինչ Սաւարի գիւղում է՝ վճարելով այնտեղի *մալ* եւ *թաֆաւութ-է ջիզիա* հարկերը: Հրամանագրում նշւում է, որ եթէ 12 տարուց աւելի է, ինչ տեղափոխուել ու բնակւում է այլ վայրում՝ վճարելով այնտեղի հարկերը, ապա չպէտք է նրան նեղութիւն պատճառեն, եթէ՝ ոչ, ապա

պէտք է վերադառնայ իր նախկին բնակավայրը եւ այդ կապակցութեամբ հրահանգում է Ատրպատականի վեզիրին պարզել իրողութիւնը[132]: Միւս հրովարտակը, որ հրապարակուել է 1710ին, հրահանգում է Չուխուր Սա'-ադի կառավարչին Դարաշամբից Աստապատ գիւղը տեղափոխուած 15 հայ ընտանիքներին վերադարձնել իրենց նախկին բնակավայրը, որովհետեւ նրանց արտագաղթից յետոյ 12 տարի դեռեւս չէր անցել, եւ համաձայն իսլամի օրէնքների, միայն այդքան ժամանակ անցնելուց յետոյ արտագաղթողները իրաւունք ունեն մնալու իրենց նոր բնակութեան վայրում[133]:

Այսպիսով, պարսկերէն վաւերագրերի տուեալները հնարաւորութիւն են տալիս հանգամանալից քննել եւ լուսաբանել իրանական տիրապետութեան տակ ապրող հայութեան իրաւունքներն ու պարտաւորութիւնները, այդ իրաւունքների պաշտպանութեան ճանապարհները եւ միջոցները: Քննուող վաւերագրերի տուեալներն օգնում են պարզաբանումներ կատարել հայ *զիմմի*ների ունեցուածքի, կրօնական ազատութիւնների ու պաշտպանուածութեան, հայոց եկեղեցիների կառուցմանն ու վերանորոգման, *զիմմի*ների ժառանգական իրաւունքին վերաբերող շիա իսլամի օրէնքի մանրամասներում. որոշել նրա շրջանառութեան դրուելու ժամանակը, պատճառները, հայութեան համար կործանարար հետեւանքները եւ նրա դէմ Հայ Եկեղեցու առաջնորդների ձեռնարկած քայլերը: Հետազօտման արդիւնքում ակնյայտ է դառնում այն իրողութիւնը, որ չնայած իրանահպատակ հայութեանը տրուած զիմմիի կարգավիճակին ու նրանց իրաւունքների որոշակի պաշտպանուածութեանը, Սեֆեան տիրապետութեան շրջանում հայերի դրութիւնը մեծապէս կախուած էր նաեւ շահի անձնական վերաբերմունքից ու դիրքորոշումից, նաեւ երկրում մահմեդական հոգեւորականների դիրքից ու ազդեցութիւնից: Սեֆեան շահերի ձուլող եւ իսլամացնող քաղաքականութեան առաւել վառ դրսեւորումն էր շահ Աբբասի օրօք շրջանառութեան դրուած Իմամ Ջա'ֆարի օրէնքը, որի նպատակն էր Իրանի կենտրոնական նահանգները բռնագաղթի ենթարկուած հայութեանը ժամանակի ընթացքում իսլամացնելը, որին շատ արագ հետեւում էր հայկական ազգային դիմագծի կորուստը եւ ձուլումը այնտեղի մահմեդական բնակչութեան հետ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] محمد جعفری هرندی، *فقها و حکومت*، تهران، 1379، էջ 15:

[2] Anver M. Emon, *Religious Pluralism and Islamic law: Dhimmīs and Others in the Empire of Law*, London, Oxford University Press, 2012, էջ 3-4:

[3] اسعد شیخ الاسلامی، *احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی*، دانشکدهٔ الهیات نشریهٔ گروه تحقیقاتی، էջ 137:

[4] Որոշ տեղեկութիւնների համաձայն Իմամ Ալիի անունից տրուած պայմանագրերի հնագոյն օրինակը պահւում էր Սպահանի Չեհելսոթուն պալատում, որը կառուցուել է սեֆեան շահ Աբբաս Բ.ի կողմից (Լ. Գ. Մինասեան, *Երկու*

Հրովարտակ Մահամմադ Մարգարէից Եւ Ալի Ամիրապետից, Սպահան, Ս. Ամենափրկիչ Վանքի տպարան, 1363 (1985), էջ 1-2: Այդ հրովարտակի բնագիրն ու պարսկերէն հրատարակութիւնը տե՛ս՝ 3-2 էջ ،1327 (عبدالحمد محمد پیغمبر ، اصفهان)

[5] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Քրիստինէ Կոստիկեան, Գ. Մկրտումեան, «Մուհամմատ Մարգարէի Ու Ալի Իբն Աբու Թալիբ Խալիֆայի Անունից Հայերի Հետ Կնքուած Դաշնագրերը Որպէս Պատմական Փաստաթղթեր», *Բանբեր Հայագիտութեան*, 2015:3(9), էջ 121-2, 127:

[6] Rudi Matthee, "Safavid Dynasty," *Encyclopaedia Iranica*, online edition, 2008, http://www.iranicaonline.org/articles/safavids :

[7] ՄՄ, արաբատառ ձեռ. ֆոնդ, Հ. 357:

[8] *Դիւան ալ-սադարաթ* (ديوان الصدارة) - Սեֆեան շրջանում կրօնական բարձրագոյն առաջնորդի՝ սադրի ատեանը:

[9] *Շար'* (شرع)- Մուսուլմանական գլխաւոր, կրօնական, հոգեւոր օրէնսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տուեալ վայրի բարձրաստիճան հոգեւորականները (Յակոբ Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, I, Հրովարտակներ, Պրակ Ա.*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1956, էջ 117):

[10] *Փիշքէշ* (پیشکش) - Զանազան առիթներով բնակչութեան կողմից աւատատէրին կամ պետական պաշտօնեաներին նուէրների անուան տակ հատուցուող տուրք, ինչպէս նաեւ ստորադաս պաշտօնեաների կողմից իրենց վերադասին, կամ խոշոր աւատատէրերի կողմից՝ շահին մատուցուող նուէր (Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 122):

[11] Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում, Հտր. Բ.*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2001, էջ 2990:

[12] Նրա հայրը՝ Մոհամմատ Թաղի Մաջլէսին (Մոլլա Մոհամմատ Թաղի Իբն Մաղսուտ Ալի Իսֆահանի) եւս եղել է մահմեդական ազդեցիկ շիա *ուլամա*ներից (մահ. 1070 [1659/60]):

[13] *Շէյխ-ուլ-իսլամ* (شیخ الاسلام)- Այսպէս էր կոչւում տուեալ վայրի մուսուլմանների կրօնապետը: Իւրաքանչիւր խոշոր նահանգական-վարչական կենտրոն ունէր իր «շէյխ-ուլ-իսլամը», որը գլխաւորում էր «շար'ի» հոգեւոր դատական խորհուրդը: Խորհրդում քննուող զանազան հարցերի մասին շէյխ-ուլ-իսլամները տալիս էին վճիռներ՝ *ֆաթուա*ներ, որոնք օրէնքի ուժ ունէին եւ ենթակայ էին գործադրման՝ տուեալ նահանգի կամ շրջանի սահմաններում (Փափազեան, *Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, I, Հրովարտակներ, Պրակ Բ.*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1959, էջ 227):

[14] *Մոլլաբաշի* (ملاباشی) - Մահմեդական հոգեւորականութեան աստիճանասանդղակում բարձրագոյն պաշտօնն էր՝ ստեղծուած շահ Սուլթան Հուսէյնի իշխանութեան տարիներին: Վերջինս գիտնական աստուածաբանների ու աղքատների համար *վազիֆէ* խնդրելուց ու խեղճերին բռնութիւնից ազատելու համար միջնորդելուց, նաեւ աղօթքներ ուսուցանելուց բացի այլ գործի չէր միջամտում (2 էջ ،1332 (بکوشش محمد دبیر سیاقی، تذکره الملوک، تهران، کتابفروشی زوار):

[15] میر احمدی مریم، دین و دولت در عصر صفوی، تهران، نشریت امیر کبیر، 1369 ، 74: էջ

[16] Նոյն, էջ 61:

[17] H. Roemer, "The Safavid Period", edited by P. Jackson, *The Cambridge History of Iran*, vol. 6, Cambridge, Cambridge University Press, 2006, էջ 313:

[18] Նոյն:

[19] Ստեփանոս Երէց, *Պատմագիրք*, Թեհրան, Փերիոյ Կրթասիրաց Միութեան «Ալիք» տպ., 2017, էջ 152:

[20] میراحمدی مریم, էջ 60:

[21] Ստեփանոս Երէց, էջ 155:

[22] سیوری راجر، *ایران عصر صفوی*، ترجمهٔ کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1372، 250: էջ

[23] Roemer, էջ 313:

[24] Ջիզիան ոչ-մահմեդական ռայաներից գանձուող գլխահարկն էր: Ի սկզբանէ *ջիզիան* կարեւոր տեղ էր զբաղեցնում այլակրօնների իսլամացման ոչ-բռնի միջոցների մէջ եւ ամենայն հաւանականութեամբ ծագում էր պահլաւերէն «*gazītak*» բառից, որը Սասանեան Պարսկաստանում ցածր խաւից գանձուող հարկի անուանումն էր: Տեսականօրէն *ջիզիա* պէտք է վճարէին ազատ, չափահաս տղամարդիկ (այդ հարկից ազատուած էին կանայք, ծերերը, երեխաները, ստրուկները, մուրացկաններն ու հաշմանդամները):

[25] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 118:

[26] Vera B. Moreen, "Jizya," *Encyclopaedia Iranica, vol. XIV*, Fasc. 6, էջ 643-645, http://www.iranicaonline.org/articles/jezya :

[27] *Tadhkirat Al-Mulūk: A Manual of Safavid Administration*, V. Minorsky, Cambridge, Pub. by Luzac & Co., 1943, էջ 179:

[28] *Ջաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, Երեւան, Արմֆանի Հրատ., 1938, էջ 68:

[29] Այս մասին վկայում է Ռաֆայէլ դիւ Մանը (Raphael Du Mans, *L'estat de la Perse en 1660*, E. Leroux, Փարիզ, 1890, էջ 46):

[30] V. Ghougassian, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17th Century*, Facsimile of Doctoral Dissertation, Columbia University, A Bell and Howell Company, 1995, էջ 78. նաեւ՝ Du Mans, էջ 46:

[31] تاجبخش ا.، *تاریخ صفویه، شیراز*، انتشارات نوید، 1373، 315: էջ

[32] Այդ մասին տե՛ս՝ И. В. Зайцев, К. П. Костикян, "Указ Сефевидского Шаха Сулеймана Еврейской Общине Гиляна из Собрания Государственной Публичной Исторической Библиотеки в Москве" (Մոսկուայի Հանրային Պատմական Գրադարանի հաւաքածուի սեֆեան շահ Սուլէյմանի հրովարտակը՝ տրուած հրէական համայնքին) *Ирано-славика*, 2010:2(22), էջ 48-49:

[33] Քրիստինէ Կոստիկեան, *Մատենադարանի Պարսկերէն Հրովարտակները, Պրակ Գ.*, Երեւան, «Զանգակ-97», 2005, վաւ. 6:

[34] Նոյն, վաւ. 21, 35:

[35] Նոյն, վաւ. 35:

[36] Նոյն, վաւ. 21:

[37] Այս մասին տե՛ս՝ А. Д. Папазян, *Аграрные Отношения в Восточной Армении в XVI- XVII Веках*, (Հողային յարաբերութիւնները Արեւելեան Հայաստանում *ԺԶ.-ԺԷ. դարերում*) Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1972, էջ 234:

[38] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Ա.*, էջ 109:

[39] Папазян, էջ 234-5:

[40] Առաքել Դաւրիժեցի, *Գիրք Պատմութեանց*, աշխ.՝ Լ. Ա. Խանլարեան, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1990, էջ 94:

[41] هاشمی ، *شکوه السادات اعرابی، ارامنهٔ جلفای نو در عصر صفوی*، تهران، 1394، 284-85: էջ

[42] Ստեփանոս Երէց, էջ 150:

[43] Ինչպէս, օրինակ, Մուղնիի Ս. Գէորգ վանքի, Ներքին Ագուլիսի Ս. Թովմա Առաքեալի, Շատիկի Հարանց Անապատի վանքի վերանորոգման համար ձեռք բերուած *ֆաթուաները* (Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 19, 20, 29):

[44] Նոյն, վաւ. 32, 35:

[45] Նոյն, վաւ. 15:

[46] ՄՄ, կաթող. դիւան, թղթ. 1բ, վաւ. 129:

[47] Զաքարիա Քանաքեռցի, *Պատմութիւն, Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհաննու Վանից*, աշխ.՝ Ա. Վիրաբեան, Երեւան, Հեղինակային Հրատ., 2015, էջ 109-111:

[48] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 11:

[49] Նոյն, վաւ. 15:

[50] *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, էջ 65:

[51] Նոյն, էջ 83, տե՛ս նաեւ՝ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 19:

[52] Վազգէն Յակոբեան, *Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., Հտր. Ա.*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1951, էջ 310:

[53] Նոյն, էջ 395:

[54] Ք. Կոստիկեան, Մ. Խեչօ, *Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, III, Շարիաթական-Նոտարական Փաստաթղթեր (ԺԷ-ԺԹ դարեր)*, Երեւան, ՀՍՍՀ «Գիտութիւն» Հրատ., 2018, վաւ. 16:

[55] Դաւրիժեցի, էջ 94:

[56] Էլիզաբէթ Թաջիրեան, *Նոր Ջուղան Եւրոպական Աղբիւրներում 17-18 Դարերում, Մաս Բ.*, Երեւան, Պատմ. Ինստ. Հրատ., 2017, էջ 20-3, 54, 135-6, 143-4, 156:

[57] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 31, 34:

[58] Նոյն, վաւ. 37:

[59] Նոյն, վաւ. 28:

[60] Նոյն, վաւ. 31, 37:

[61] Յակոբ Փափազեան, «Շարիաթական Իրաւական Նորմերը Եւ Հողի Ֆէոդալական Սեփականութեան Հարցը Արեւելքում», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1966:12(283), էջ 23:

[62] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 4:

[63] Նոյն, վաւ. 7:

[64] Փափազեան, «Շարիաթական», էջ 31-32:

[65] *Շարի'աթ* (شريعت) - Մուսուլմանական կրօնական օրէնքներ, հաստատուած նորմեր, որոնցով առաջնորդւում էր հոգեւորականների բարձրագոյն կրօնական-դատական ատեանը: Այս հաստատութիւնը յաճախ անուանւում էր հենց այդ օրէնքների անունով, սակայն սովորաբար կոչւում էր «շար'»: Շարի'աթի կամ շար'ի հոգեւոր ատեաններում էին քննւում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջը քաղաքացիների միջեւ առաջացած վէճերը (Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Բ.*, էջ 227):

[66] Փափազեան, «Շարիաթական», էջ 30:

[67] ՄՄ, Կաթող. Դիւան, թղթ. 1բ, 156ա: Այդ վաւերագիրը տե՛ս՝ Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 38:

[68] Նոյն, վաւ. 38, էջ 93-95:

[69] ՄՄ, Կաթող. Դիւան, թղթ. 1բ, վաւերագիր 163:

[70] Կոստիկեան, *Հրովարտակներ, Պրակ Գ.*, վաւ. 79:

[71] Յակոբ Փափազեան, «Սեֆեան Իրանի Ասիմիլեատորական Քաղաքականութեան Հարցի Շուրջը», *Բանբեր Մատենադարանի*, 1956:3, էջ 85-6:

[72] Նոյն, էջ 87:

[73] Ստեփանոս Երէց, էջ 152:

[74] Նոյն:

[75] Օսմանեան Կայսրութիւնում գործող այդ կարգի օրէնքներից մէկը վերաբերում էր հայ արհեստաւորների անդամակցութեանը թուրքական արհեստաւորական միաւորումներին, որի համար «*ենթարկւում էին իսլամական սահմանուած ծիսակատարութիւններին եւ այդ միջոցով*» մահմեդականութիւն ընդունելու հարկադրանքին (Յակոբ Անասեան, «Թուրքական Ֆութուուաթը եւ Հայերը», *Մանր Երկեր*, Լոս Անճելըս, Հրատ.՝ Ամերիկահայ Միջազգային Քոլէճի, 1988, էջ 583):

[76] اسعد شیخ الاسلامی، *احکام وصیت و ارث نمی از نظر فقهای اسلامی*، էջ 164:

[77] Նոյն, էջ 166:

[78] Նոյն, էջ 167-68:

[79] Այս հրովարտակը պահւում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում, նրա բնագիրը տե՛ս՝ هاشمی، էջ 167-68:

[80] Փափազեան, *Հրովարտակներ, Պրակ Բ.*, վաւ. 16:

[81] Յատկանշական են նրա հետիոտն ուխտագնացութիւնը Մեշհէդ, ուզբէկների յարձակումների հետեւանքով աւերուած 8րդ իմամ Ռեզայի դամբարանի վերանորոգումը եւ նրա յաճախակի այցելութիւնները շիական ուխտավայրերը Արդեբիլում, Մեշհէդում, Քարբալայում եւ Նաջաֆում: Բացի այդ, նա իրեն շարունակում էր համարել սեֆեան միաբանութեան առաջնորդ, որը սերում էր Ալիի տոհմից, նաեւ սերտ կապ էր պահպանում մահմեդական յայտնի աստուածաբանների հետ (*The Cambridge History of Iran, vol. 6*, էջ 272-3):

[82] بها الدین محمد بن حسین عاملی، *جامع عباسی*، سنه 1331، էջ 264:

[83] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Roemer, էջ 667:

[84] R. Matthee, *Persia in Crisis, Safavid Decline and the Fall of Isfahan*, I.B. Tauris, London, New York, 2011 էջ 180-1:

[85] Յ. Տէր Յովհաննեանց, *Պատմութիւն Նոր Ջուղայու Որ յԱսպահան, Հկր. Ա.*, Նոր Ջուղա, Տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1880, էջ 205:

[86] Du Mans, էջ 46-7. նաեւ՝ Փափազեան, «Սեֆեան», էջ 87-8:

[87] Թաջիրեան, *Մաս Բ*, էջ 114:

[88] M.G.S. Hodgson, "Djafar al-Sadiq," *The Encyclopædia of Islam*, second ed., vol. 2, Leiden, E.J. Brill, 1968, էջ 375: Մեզ յայտնի չէ այդ իմամի հեղինակած կամ նրան վերագրուող որեւէ աշխատութիւն, որտեղ այդ օրէնքը կամ նրա մասին նշուած է:

[89] Այս հրամանագրի մասին տե՛ս՝ *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17th and 18th Centuries, vol. I, II*, London, Eyre & Spottiswoode, 1939, էջ 288:

Տէմիրճիպաշեանի դրական իմաստասիրութիւնը ինքնին կը պաշտպանէ բնազանցութեան վտարումը փիլիսոփայութենէն եւ վերջինիս մատչումը գիտութեան: Դրապաշտները ընդհանրապէս գիտութեան համակիրներ եղած են: Օսմանեան Կայսրութեան պարագային ասիկա կարեւոր էր, քանի որ կայսրութիւնը գիտութեան մէջ շատ յետամնաց էր եւ կրօնքը կը գերակշռէր գրեթէ բոլոր մարզերու մէջ: Անոր գրութիւնները այս առումով արժէքաւոր են: Ան այն մտաւորականներէն է, որ փոքրաթիւ օսմանեան մտաւորականներու հետ աշխատանք տարած է ժողովուրդը լուսաւորելու:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Տէմիրճիպաշեանի ուսումնասիրութիւնները, թէեւ ոչ-ուրոյն, սակայն յատուկ պատմական արժէք ունին, եթէ նկատի ունենանք իր շրջապատի մտաւորական ամլութիւնը: Ան, իր դրապաշտ աշխարհայեացքով, բարեշրջական եւ նիւթապաշտ տեսակէտերը պաշտպանած եւ արեւմտեան փիլիսոփայութիւնը ծանօթացնելու համար աշխատած: Կոստանդեանի հետ ան ջահակիրներէն է դրական փիլիսոփայութեան՝ Օսմանեան Կայսրութենէն ներս: Իբրեւ օսմանեան քաղաքացի, անոր փիլիսոփայական գործունէութիւնը ամբողջութեամբ - պատկանած ժամանակաշրջանէն մինչեւ օրս, իր ունեցած հակասութիւններով եւ դրական երեսակներով - կարիքը ունի համապարփակ վերաքննարկումի եւ վերարժեւորումի:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Hilmi Ziya Ülken, *Türkiye'de Çağdaş Düşünce Tarihi*, Türkiye İş Bankasi Kültür Yayinlari, İstanbul, Յունուար 2019, էջ 147:

[2] 1851ին կը հիմնուի Encümen-i Danişը (ակադեմիա) եւ 1861ին՝ Cemiyet-i İlmiye-i Osmaniyeն (Օսմանեան Գիտութեան Միութիւն): Առաջինը կարեւոր է այն առումով, որ որպէս պաշտօնական հաստատութիւն ըմբռնած է թարգմանութեան դերը գիտական մտքի զարգացման մէջ: Իսկ երկրորդը հրատարակած է *Mecmua-i Fünun* թերթը, որուն նպատակն էր ժողովուրդը լուսաւորել՝ եւրոպական գիտութիւնը եւ մշակոյթը ծանօթացնելով (Abdülbaki Güçlü, Erkan Uzun, Serkan Uzun, Ümit Hüsrev Yolsal, *Felsefe Sözlüğü*, Türkiye'de Felsefe (Türkler ve felsefe) (Փիլիսոփայական բառարան, փիլիսոփայութիւնը՝ Թուրքիոյ մէջ (թուրքեր եւ Փիլիսոփայութիւն), Bilim ve Sanat Yayinlari, Ankara, 2003, էջ 1451):

[3] Միւնիֆ փաշա - օսմանեան քաղաքական գործիչ եւ մտաւորական: Եղած է լուսաւորական մը:

[4] Remzi Demir, *Philosophia Ottomanica-Osmanli Felsefesi*, Lotus Yayinlari, İstanbul, 2018, էջ 452-53:

[5] Demir, էջ 426-27:

[6] Ահմէտ Վեֆիք փաշա - քաղաքական գործիչ եւ մտաւորական:

[7] Ահմէտ Միտհաթ - գրագէտ, լրագրող եւ հրատարակիչ:

[8] Ülken, էջ 147:

[9] Նոյն, էջ, 152:

[10] Ալի Սուաւի - քաղաքական գործիչ եւ գրող:

[11] Ülken, էջ 32:

[12] Նոյն, էջ 331: Հրատարակուած է Պահա Թեւֆիքի կողմէ, տպուած է Արաբս տպարանին մէջ:

[13] Նոյն, էջ 368:

[14] Լոյս տեսած 1885-87ին, Պոլսոյ մէջ, Նազարէթ Տաղաւարեանի խմբագրութեամբ:

[15] Հրատարակուած է 1880-81ի միջեւ Զմիւռնիոյ մէջ Գրիգոր Մսերեանի կողմէ:

[16] Տ. Յարութիւնեան, «Պոզիտիվիզմի Մուտքը Հայ Իրականութիւն եւ Պայքարը Նրա Գնահատման Շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*», 1987:3(63), էջ 183-4:

[17] *La Philosophie Positive*, 1879, Յունուար-Յունիս, էջ 313-17:

[18] Յարութիւնեան, էջ 188:

[19] M. Orhan Okay, *Beşir Fuad- İlk Türk Pozitivist ve Naturalisti*, Dergah Yayinlari, İstanbul, 2012, էջ 241:

[20] Նոյն, էջ 169:

[21] Demir, էջ 452-53:

[22] Եղիա Տէմիրճիպաշեան, «Ազդեցութիւն Գիտութեան», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1886, էջ 29:

[23] Տէմիրճիպաշեան, «Գերեզմանք Ի՞նչ Կը Պատմեն Գ.», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1885, էջ 78:

[24] Տեմիր հոս կը վկայակոչէ Աւետ Աւրլարը իբրեւ աղբիւր (Demir, էջ 470):

[25] Atilla Doğan, *Sosyal Darwinizm ve Osmanli Aydinlari Üzerindeki Etkileri*, դոկտորական ատենախօսութիւն, Marmara Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, İstanbul, 2003, էջ 171:

[26] Demir, էջ 487:

[27] Նոյն, էջ 471:

[28] Տէմիրճիպաշեան, *Փիլիսոփայական Բառարան*, Պոլիս, 1879, էջ 48:

[29] Տէմիրճիպաշեան, «Դրական Իմաստասիրութիւն, Դասախօսութիւն Հայկական Կրթարանին մէջ Սեպ. 1882 շար.)», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1883, էջ 35:

[30] Նոյն, էջ 35:

[31] Նոյն էջ 35-36

[32] Նոյն, էջ 36:

[33] Տէմիրճիպաշեան, «Նոր Տարին եւ Նոր Գաղափարն», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1884, էջ 7:

[34] Տէմիրճիպաշեան, «Մահ Մանկավարժին Բ.», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1884, էջ 31:

[35] «*Այսինչն հիմնեց Սահմանադրութիւնն, այնինչն հռչակեց այսինչ սկզբունքն, այնինչն յարոյց այնինչ խնդիրն.- այսպէս կը մտածենք եւ կ'ըսենք, ընկերութեան զօրութիւնն անտեսելով եւ ամէն բան անհատական զօրութեան միայն վերագրելով*» (Եղիա Տէմիրճիպաշեան, *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1884, էջ 30):

[36] Տէմիրճիպաշեան, «Մահ Մանկավարժին Բ.», էջ 30:

[37] Տէմիրճիպաշեան, *Տարերք Պատմութեան Իմաստասիրութեան*, Պոլիս, Տպ. Պաղտատլեան, 1891, էջ 15-18:

[38] Տէմիրճիպաշեանի գրածներուն «պատմական» որակումը պէտք է հասկնալ անով, որ ինք յառաջատարներէն էր այս մարզին մէջ, անշուշտ առանց մոռնալու զմիւռնիահայ Կոստանդեանը:

[39] Տէմիրճիպաշեան, «Միջոց, ժամանակ, Նիւթ (Հրահանգիչ Խօսակցութիւնք)», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1886, էջ 119:

[40] Տէմիրճիպաշեան, «Հնութիւն Հիւլէականութեան (Հրահանգիչ Խօսակցութիւնք), *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1887, էջ 32:

[41] Տէմիրճիպաշեան, «Միջոց, ժամանակ, Նիւթ ...», էջ 120-21:

[42] Տէմիրճիպաշեան, «Միջոց, ժամանակ, Նիւթ...», էջ 123:

[43] Տէմիրճիպաշեան, «Հիւլէ, Տարերք», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1887, էջ 61:

[44] Նոյն, էջ 63:

[45] Նոյն:

[46] Տէմիրճիպաշեան, «Մարմնոց Յատկութիւնք (Հրահանգիչ Խօսակցութիւնք)», *Գրական եւ Իմաստասիրական Շարժում*, 1887, էջ 85:

ASSESSING THE POSITIVIST PHILOSOPHY OF YEGHIA DEMIRDJIBASHIAN IN THE CONTEXT OF THE HISTORY OF OTTOMAN PHILOSOPHY (1840S ONWARDS)

(Summary)

CAN ERZURUMLUOGLU
canerzurumluoglu@hotmail.com

During the post-Tanzimat period Western philosophical trends were introduced to the Ottoman Empire. This was for political reasons. In their search for ways to salvage the failing Ottoman Empire, Turkish Ottoman intellectuals thought that the spread of political philosophy and a scientific mindset would be helpful to the empire.

As of the 1870s positivist philosophy, which was considered to promote a scientific mindset, was spread by Armenian intellectuals like Yeghia Demirdjibashian and Gosdantian in Armenian literary circles through two scientific magazines, *Medeora* (1880-81) and *Kidagan Sharjum* (1885-1887). On the other hand, Demirdjibashian promoted positivist philosophy through his magazine *Kragan yev Imasdasiragan Sharjum* (Literary and Philosophical Movement) (1883-1888), introduced the materialist and evolutionist schools of philosophy, published articles on these subjects and taught philosophy in Armenian schools.

Until 1908, he and Gosdantian were among the first champions of positivist philosophy in the Ottoman Empire, at a time when very few philosophical materials were published.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՂ ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԻՈՍԱԿԱՆ ՀԱԿԱԵՐՐՈՐԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Գ. ՔԱԼԱՇԵԱՆ
av_kalashyan@mail.ru

Քրիստոնէութեան պատմութեանը յայտնի բազմազան հերետիկոսութիւնների վարդապետական առանձնայատկութիւնների ուսումնասիրութիւնը գիտութեան համար հետազօտութեան հսկայական դաշտ է հանդիսանում նաեւ մեր օրերում: Այդ ոլորտում մասնագիտական գրականութեան մէջ ուրոյն տեղ է գրաւում Դ. դարասկզբի հակաերրորդաբանական դաւանական շարժումների, այդ թւում՝ արիոսական վարդապետութեան քննական արժեւորման հիմնահարցը[1]:

Ծագելով դեռեւս քրիստոնէութեան արշալոյսին, երրորդաբանական հարցերը միշտ էլ հաւատքային-աշխարհայեացքային կարեւորագոյն տեղ են գրաւել քրիստոնէութեան համակարգում: Դրանով է պայմանաւորուած եղել նաեւ այն, որ վաղ եկեղեցում Ս. Երրորդութեան համակարգում Յիսուս Քրիստոսի Անձի վերաբերեալ լուծման ուղիները որոշուել են ոչ միայն դարաշրջանին բնորոշ աստուածաբանութեան զարգացման մակարդակով, այլեւ մասնակիցների կրօնական-աշխարհայեացքային դիրքորոշմամբ: Դարեր շարունակ երրորդաբանական հիմնահարցերը շարունակել են մնալ նաեւ փիլիսոփայական-մտահայեցողական լուծումների առարկայ եւ միայն Դ.-Ե. դարերում է, որ արմատական փորձ կատարուեց այդ հարցերը դիտարկել ներքին՝ դաւանական խնդիրների ենթահողում: Եւ ինչպէս Գրիգոր Լուսաւորիչն է հաւաստում, այդ գործընթացների հիմքում ընկած է եղել Քրիստոսի անձնաւորման հարցը, քանի որ «*Ով որ հաւատաց Նրան այդ մարմնում, նրանց յայտնի դարձրեց Իր Աստուածութիւնը, իսկ ով որ սայթաքեց մարմնի պատճառով, նրանք մերժեցին նրա (Աստուածային) բնութիւնը*»[2], այլ կերպ ասած դա հետեւանքն էր այն բանի, որ «... *ոմանք հեսպեցին սուրբ եւ ճշմարիտ ուղիղ խոստովանութեանն, աւանդեալ ի սրբոց առաքելոցն եւ զարգացեալ յերից սրբոց ժողովոցն*»[3]:

Ինքնին հասկանալի է, որ ներքին եւ արտաքին գործօններով պայմանաւորուած այդ գործընթացները տեւական զարգացում են ապրել: Եւ ինչպէս վաւերագրերն են վկայում, արիոսական վէճերը պայմանաւորուած են եղել ինչպէս առարկայական (հաւատքային հիմնարար սկզբունքների եւ դրանց կիրառման սահմանների նկատմամբ տարբեր մօտեցումներ), այնպէս էլ ենթակայական (դարաշրջանի

աստուածաբանական դպրոցների եւ դաւանական հոսանքների մրցակցող երրորդաբանական լուծումներ, հասարակական-քաղաքական պայմանների, յատկապէս՝ պետական իշխանութեան կրօնական քաղաքականութիւն եւն.) գործօններով: Ակնյայտ է նաեւ, որ այդ պայմաններում երկընտրանքի առջեւ կանգնած եկեղեցին հայեացքը պէտք է ուղղէր դէպի աւանդութիւն եւ ծայրաստիճան զգուշաւոր վերաբերմունք որդեգրէր նորի եւ փոփոխականի նկատմամբ, որոնք ընդունելի կամ մերժելի համարուեցին բացառապէս *եկեղեցական աւանդութեան նկատմամբ ունեցած յարաբերութեան մէջ*: Կարծում ենք հենց այդ գործօնների ենթահողում էլ պէտք է քննարկել Դ. դարի երրորդաբանական վէճերի, ինչպէս նաեւ դրանց նկատմամբ Հայ Եկեղեցու որդեգրած քաղաքականութեան ընթացքը:

Այս ամէնին զուգընթաց արիոսական հակաերրորդաբանութեան նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքորոշումը պէտք է քննարկել այլ տեսանկիւններից եւս: Բանն այն է, որ հայ աստուածաբանական եւ եկեղեցական-պատմական գրականութեան մէջ մինչ օրս քննարկուող հիմնահարցի վերաբերեալ բացակայում են ամփոփ վերլուծական մօտեցումները: Աւելին, այս հարցում վերլուծաբանները որպէս կանոն սահմանափակուել են ընդհանուր դատողութիւններով, հիմնահարցը լուսաբանել հատուածաբար, շատ անգամ միմեանց հետ կապ չունեցող հատակտորների տեսքով: Քննարկուող հիմնահարցի նկատմամբ համակարգուած մօտեցման անհրաժեշտութիւնը թելադրուած է նաեւ նրանով, որ օտարալեզու մասնագիտական գրականութիւնը ձգտել եւ այսօր էլ ձգտում է այս հարցի վերաբերեալ Հայ Եկեղեցու դիրքորոշումը ներկայացնել որպէս ինքնուրոյնութիւնից զուրկ երեւոյթ, որ Հայ Եկեղեցին, իբր, սահմանափակուել է միայն բիւզանդական եկեղեցու աստուածաբանական մօտեցումների սոսկական կրկնութեամբ եւն.: Այնինչ մեզ հասած եկեղեցական վաւերագրերի անկողմնակալ վերլուծութիւնը միանգամայն ակնյայտ այլ պատկեր է ներկայացնում, ինչը թոյլ է տալիս առանձնացնել արիոսականութեան նկատմամբ Հայ Եկեղեցու վերաբերմունքի մի շարք առանցքային գծեր:

Նախ, ինչպէս բնագրային վերլուծութիւնն է ցոյց տալիս, *Հայ Եկեղեցու ընդգծուած հակաարիոսական դիրքորոշումը պայմանաւորուած է եղել ինչպէս Նիկէայի 325ի տիեզերական ժողովին Հայ Եկեղեցու մասնակցութեամբ, այնպէս էլ նիկէական «արժանահաւատ բան» հաւատամքի նկատմամբ անվերապահ հաւատարմութեամբ*: Անառարկելի այդ իրողութիւնը կարելի է փաստել ինչպէս հայոց հայրապետերի, այնպէս էլ վաղ շրջանի հայ հայրաբանական, աստուածաբանական եւ դաւանաբանական գրականութեան բազում վկայութիւններով: Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսն, օրինակ, անդրադառնալով նիկէական ուղղադաւան երրորդաբանութեան նկատմամբ Հայ Եկեղեցու

անվերապահ դրական դիրքորոշմանը, վերջինիս հիմք է համարել այն իրողութիւնը, որ «... *երանելի հարքն, որ ի Նիկիա ժողովեցան՝ ... ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեան* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[4]: Այդ փաստը նկատի ունի նաեւ Բաբգեն Ութմսեցի հայրապետը, որը հաւաստում է. «Արդ, հարկաւոր է մեզ զբխումն սրբոյ հաւատոցն, զոր երանելի հարքն մեր, որ ի Նիկիայ ժողովեցանն՝ ՅԺԸ. եպիսկոպոսացն ընկալեալ՝ *բարեպաշտութեամբ եւ առանք գայթակղութեան զսոյն* եւ աւետարանել (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[5]: Հայոց հայրապետերը միաժամանակ մատնանշել են նաեւ Նիկէայի 325ի տիեզերական ժողովի գործնական-պատմական նշանակութիւնը: Եւ ինչպէս Յովհան Մանդակունին է հաւաստում՝ նախ հետեւեալ առնչութեամբ. «*Քանզի ՅԺԸ ի Նիկիայ գումարեալք ի քակտումն արիանոսացն* ո՛չ կալան փոյթ երկու բնութեանց առնել ընտրութիւն զանազանութեան, այլ ըստ վիրաց վիրաւորեցելոց բարբառեալ՝ վաղվաղակի կտրելով զարմատ ժահահոտ փտութեանն (ընդգծումը մերն է - Ա. Ք.)»[6]:

Հայ դաւանաբանական գրականութիւնը մատնանշում է Հայ Եկեղեցու անփոփոխ նիկէական դիրքորոշման ներքին պատճառներ եւս: Այս շարքում ամենից առաջ յիշատակւում է հետեւեալը. «Եւ յետ այսորիկ յաստուածարեալ մեծի ժողովին Նիկիայ, որ ի քակումն Արիոսի ՅԺԸիցն գտեալ խոստովանակիցն մեր սուրբն Առիստակէս, շառաւիղն ըստ մարմնոյ եւ հոգւոյ սրբոյն Գրիգորի, *առեալ յԱստուծոյ զլուրն կենաց եւ մեզ զնոյն սահմանաւոր գրով, զոր ունիմքս առանց յաւելման եւ պակասութեան* (ընդգծումը մերն է - Ա. Ք.)»[7]: Նոյնն է հաւաստում նաեւ հայոց Խաչիկ Արշարունեցի կաթողիկոսը, որը մատնանշելով Հայ Եկեղեցու երրորդաբանական անփոփոխ դիրքորոշման հիմքերը, գրում է. «Զոր եւ սուրբ Սիւնհոդոսն Նիկիոյ, որ ի ձեռն Կոստանդիանոսի՝ ՅԺԸ հարանցն սակս Արիոսի չարափառութեանն ժողովեալք, ընդ որս եւ մերն Ռստակէս, որդի սրբոյն Գրիգորի, զնոյն ասացեալ եւ քարոզեալ ծագաց տիեզերաց, նոցին դաւանութեանն ձայնակցեալ»[8]: *Այդ ամէնից դժուար չէ հետեւեցնել, որ Նիկիոյ ժողովի մասնակից եւ նիկէական երրորդաբանութիւնն իր սրտորագրութեամբ վաւերացրած Հայ Եկեղեցին չէր կարող անվերապահ մերժողական վերաբերմունք չունենալ արիոսականութեան նկատմամբ*: Բոլոր հիմքերն ունենք պնդելու նաեւ, որ Հայ Եկեղեցու «նիկէականութեան նկատմամբ հաւատարմութիւնն» անփոփոխ դրսեւորուել է ոչ միայն երրորդաբանական, այլեւ քրիստոսաբանական հարցերում, յատկապէս՝ Յիսուս Քրիստոսի անձնաւորման եւ փրկագործական առաքելութեան հակաարիոսական, ինչպէս նաեւ բնութիւնների վերաբերեալ հականեստորական եւ հակաքաղկեդոնական վարդապետութիւն մշակելու գործում: Այս հարցում Հայ Եկեղեցու աստուածաբանական եւ դաւանական դիրքորոշումն ընդհանրացուած արժեւորելու գործում չափազանց կարեւոր փաստերից է

այն, որ Ներսէս Բագրեւանդացի հայրապետը առաջին երեք տիեզերական ժողովների դաւանաբանական որոշումների նկատմամբ Հայ Եկեղեցու անփոփոխ դիրքորոշումը չի սահմանափակում միայն հերձուածները նզովելու ենթահողում: Նրա համոզմամբ այդ տիեզերական ժողովների պատմական կարեւորագոյն նշանակութիւնը բովանդակւում է յատկապէս այն բանում, «... որ ի Նիկիա ՅԺԸ, եւ ՃՕ, որ ի Կոստանդնուպօլիս, եւ Մ, որ յԵփեսոս. զոր հնազանդեալ ունին եկեղեցիք Քրիստոսի կարգաւորեալ»[9]:

Երկրորդ.- Մակերեսային ծանօթութիւնն անգամ վկայում է այն փաստը, որ Հայ Եկեղեցում անձնաւորման վարդապետութեան հակաարիոսական աստուածաբանական լուծումները եկեղեցու վարդապետերի կողմից շաղկապուել են քրիստոսաբանական հիմնահարցերի հետ: Արդիւնքում Ե. դարի քրիստոսաբանական վիճաբանութիւնների ընթացքում Հայ Եկեղեցին հանդէս եկաւ եկեղեցական աւանդութեան ամենահաւատարիմ եւ գործուն պաշտպաններից մէկի որակով: Բնագրային վերլուծութիւնը թոյլ է տալիս նաեւ վեր հանել ու համակողմանի արժեւորել վերոնշեալ գործընթացների տրամաբանական ընդհանուր ուղղուածութիւնը: Իսկ այս վերջինս ունեցել է աստիճանական դրսեւորում: Եւ փաստն այն է, որ եթէ վաղ փուլի հայ հայրաբանական գրականութեան մէջ երրորդաբանական եւ, ի մասնաւորի, Քրիստոսի անձնաւորման եւ փրկագործութեան հարցերը լուծուել են աստուածաբանական ընդհանուր մօտեցումների տեսքով, ապա յետագայում դրանք լրացուել են դաւանաբանական ուսուցումներով եւ դաւանական տեսք են ստացել: Մի անուրանալի իրողութիւն, որն արժանի ճանաչում է ստացել ոչ միայն հայագիտական, այլեւ՝ պատմաեկեղեցական գրականութեան մէջ[10]:

Հարկ է աւելացնել, որ նշուած ենթահողում Հայ Եկեղեցու երրորդաբանական վարդապետութեան ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս հիմնաւորել նաեւ կրօնագիտական հիմնարար այն սկզբունքը, որ դաւանական բնոյթի ցանկացած վիճաբանական իրավիճակ (կամ ճգնաժամ) հրապարակ է իջեցնում համապատասխան «պաշտպանական փաստարկների» ամբողջական համախմբութիւն: Միաժամանակ, կողմերի հայեացքն ակամայ շրջւում է դէպի աւանդութիւն եւ այդ հիման վրայ առաջ են գալիս ջատագովութեան տարբեր ձեւեր: Ընդ որում, քանի որ ցանկացած աստուածաբանական լուծում արտացոլում է միեւնոյն հաւատքային երեւոյթները, այդ լուծումները տարանջատւում են արտացոլուող երեւոյթների ընկալման աստիճանով, ինչպէս նաեւ դրանց համապատասխանող մեկնաբանական ուղղուածութեամբ եւ «սահմաններով»: Այդ շրջանակներում է, որ առաջնային նշանակութիւն է ձեռք բերում «աւանդութեան նկատմամբ հաւատարմութիւնը», աւելի ճիշտ կը լինի ասել՝ «պահպանողականութիւնը»: Իսկ եկեղեցու

պահպանողականութիւնը ամէնեւին էլ չի կարելի բացատրել միայն հոգեւոր դասի (աստուածաբանների) ենթակայական ընկալումներով (թէեւ անուրանալի է, որ շատ դէպքերում հենց ենթակայականութիւնն է ընկած հերձուածող լուծումների հիմքում), այլ՝ *հոգեւոր դասի հաւատքային գործունէութեան հիմքում ընկած դաւանական դիրքորոշմամբ*: Դրանում է արտայայտւում նաեւ դաւանական ըմբռնումների պատմական զարգացման ընթացքը, քանի որ ցանկացած դաւանական շարժում կամ հոսանք ձեւաւորւում է եկեղեցում՝ դաւանաբանական եւ գործնական-հաւատքային գործունէութեան արդիւնքում:

Այդ ենթահողում անդրադառնալով հայ դաւանաբանական գրականութեան երրորդաբանական լուծումներին, առաջին հերթին անհրաժեշտ է վկայել նրանցում արտացոլուած աստուածաբանական մօտեցումների հաւասարակշռուած եւ համակարգուած բնոյթը: Ընդ որում, անհնար է չնկատել նաեւ, որ դրանցում գերիշխողը դրական (հաստատողական) աստուածաբանութիւնն է, այսինքն՝ *քննարկուող աստուածաբանական լուծումները ծառայեցւում են մէկ նպատակի՝ ուղղադաւան երրորդաբանութեան հիմնաւորմանը*: Փաստերն ներկայ վկայում են նաեւ, որ լիովին համերաշխելով արիոսականութեան նկատմամբ ուղղադաւան եկեղեցու աստուածաբանական եւ դաւանական ելակէտերին՝ հայ դաւանաբանական գրականութիւնը խնդրոյ առարկայ հարցը քննարկել է ինչպէս ընդհանուր աստուածաբանական (երրորդաբանական), այնպէս էլ՝ դաւանաբանական եւ դաւանական տեսանկիւններից:

Բնագրային վերլուծութիւնը թոյլ է տալիս պնդել, որ Հայ Եկեղեցու վարդապետերի համար *արիոսականութիւնն ամէնից առաջ անվերապահ մերժելի է եղել իբրեւ հակաերրորդաբանական շարժում*, իբրեւ խոտելի աստուածաբանական մօտեցումների ամբողջութիւն: Հայ դաւանաբանական գրականութիւնը այդ մօտեցումը պատճառաբանում է նրանով, որ արիոսականութիւնը «երկուց կամ յոլով եւս բընութեանց առնել ընդրութիւն զանազանութեամբ» ոչ միայն զանազանեցին Ս. Երրորդութեան Անձերը, այլեւ «ըստ վիրաց վիրաւորելոյն բարբառեալ վաղվաղակի եւ աւտարացեղութիւն» քարոզելով «... ուրացան զՈրդի յէութենէ Հաւր՝ յաղքատութիւն եւ յապականութիւն իջուցին տաժանեալք»[11]:

Արիոսականութեան արժեւորման այս մօտեցումը միանգամայն անկողմնակալ է, առարկայական եւ արդարացուած ինչպէս աստուածաբանական, այնպէս էլ պատմական եւ հաւատքային առումներով: Գնահատելի է յատկապէս այն, որ այս պարագայում արիոսական հերձուածի պատմական եւ քննական վերլուծութիւնը հայ վարդապետերը մտահայեցողական ոլորտից տեղափոխել են դաւանաբանական դաշտ:

Քաջ գիտակցելով, որ այդ մօտեցումը փաստական հիմնաւորման կարիք ունի, հայ վարդապետերը յաջորդական քայլերով անդրադառնալով արիոսականութեան աստուածաբանական եւ դաւանական ըմբռնումների քննական վերլուծութեանը յանգել են այն հետեւութեանը, որ հերձուածող այս համակարգն իր լուծումներով նոյնանում է «հեթանոսութեան եւ հրէական մոլորութեան» հետ: Այս հարցում հայ վարդապետերի համար ուղենիշային է արիոսականութեան վերաբերեալ Աթանաս Մեծի տեսակէտը, որի հետեւութեամբ նրանք եւս պնդում են, թէ Ս. Երրորդութեան Անձերի օտարումը, քրիստոսադաւանութիւնը եւ նրա հետ սերտօրէն կապուած Խաչի պաշտամունքն ակամայ նոյնացնում է հեթանոսութեանը բնորոշ մարդադաւանութեան կամ կռապաշտութեան հետ: Այդ նկատառումից ելնելով Յովհան Մայրագոմեցին ուղղադաւան հաւատացեալներին յորդորում է զերծ մնալ «... ի բաժանմանցն եւ յաւտարացեղութեանցն Արիոսի՝ ողջ պահելով զմիութիւնն յերրորդութեան»[12]: Հայ դաւանաբանական գրականութիւնը զգուշացնում է նաեւ, որ հակառակ պարագային հեթանոսութեան գիրկն ընկնելն անխուսափելի է այն կապակցութեամբ, որ Քրիստոսին օտարելով աստուածային էութիւնից կամ պնդելով, թէ իբր Քրիստոսի «մարմինն յերկրէ ունի զբնութիւնս իւր [արիոսականները] ... ասեն զՈրդին Աստուծոյ արարած. քանզի եւ սոքա աւասիկ ասեն զՀօր եւ զարարածոց մի բնութիւն»[13], ինչը նոյնպէս անխուսափելի յանգեցնում է մարդադաւանութեան: Ահա թէ ինչու արիոսականութեան մերժման գործում յենուելով աթանասեան երրորդաբանական լուծումների վրայ, հայ դաւանաբանական գրականութիւնը ալեքսանդրիական աստուածաբանի հետեւողութեամբ զգուշացնում է նաեւ այն, որ «Զի թէ ոք յարիանոսաց իցէ՝ չեն ինչ զարմանք, վասն զի զիւրեանցն քակեալ լուծանեն եւ որպէս հեթանոսք լսեն ի մենջ»[14]:

Համանման դիրքերից է կառուցուած նաեւ արիոսականութեան «հրէական մոլորութիւն» լինելու հայ դաւանաբանական գրականութեան համեմատականը: Հիմք ընդունելով այն փաստը, որ արիոսականներն «... ասեն զՈրդին Աստուծոյ արարած»[15], հայ վարդապետերը միանգամայն հիմնաւոր ցոյց են տալիս, որ դրանում էլ դրսեւորւում է արիոսական հակաերրորդաբանական հերձուածի հոգեւոր հիմքը, այն է՝ մինչնիկէական շրջանում եկեղեցում բաւականին տարածում գտած «Աստծու մէկութեան» հրէաքրիստոնէական, էբիոնական-միապետական ըմբռնումը: Բնագրային վերլուծութիւնը թոյլ է տալիս փաստել նաեւ, որ ամէնեւին էլ կանգ չառնելով արիոսական հերձուածի *հոգեւոր* հիմքերի սոսկական փաստագրման վրայ, հայ վարդապետերը Ս. Երրորդութեան ուղղադաւան ուսմունքի դիրքերից համակարգուած քննական անդրադարձ են կատարել արիոսականութեան դաւանական էութեան

հարցին: Այդ տեսանկիւնից բաւականին արժէքաւոր է հայ աստուածաբանների այն պնդումը, որ *դաւանական տեսակէտից արիոսական աստուածաբանութիւնը ծայրայեղ միակողմանի հակաերրորդաբանութիւն է*, քանի որ Արիոսը պնդում է, թէ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի Աստուած էութեամբ տարբեր լինելով, բաժանելի են նաեւ բնութեամբ, տարանջատ են, օտար եւ մէկը միւսին անհաղորդ: Եւ քանի որ Հայ Եկեղեցու անփոփոխ դաւանական համոզումն այն է, թէ «Սրբոյ զուգական եւ միասնական» Ս. Երրորդութիւնը է «... մի Աստուածութիւն, մի էականութիւն, մի իսկական էութիւն, մի ինքնական էութիւն, մի ինքնակալ էութիւն»[16], իսկ Արիոսը «... բաժանեաց զՈրդի ի Հօրէ բնութենէ եւ օտարացեղութիւն խառնեաց յանխառն էութիւնն»[17], ապա համեմատական մօտեցումը հայ վարդապետերին բերել է այն ակնյայտ հետեւութեանը, որ վարդապետական այդ պնդմամբ Արիոսը հաւաստել է, որ բոլոր արարածներից վեր եւ բոլոր արարածներին անհասանելի Աստուած իր «փառքի մէջ բացարձակ Մէկ է»: Միանգամայն օրինաչափ պէտք է համարել նաեւ այն, որ հայ դաւանաբանական գրականութիւնը «Աստծու մէկութեան» արիոսական պնդումը նոյնացրել է «հրէադաւանութեան պարզ վերարտադրութեան հետ», այն որակել է որպէս «նիկէականութիւնից շեղում», «Աստուածային մէկութեան» խոտելի վարդապետութիւն՝ «միանգամայն զիրէութիւն», իսկ այդ «հաւատը կրողներին» համարել է «կեղծաւորութեամբ փախուցեալ ի հեթանոսութենէ, եւ ի հրէական մոլորութենէ»: Երրորդաբանական այդ հիմքերից ելնելով հայ դաւանաբանական գրականութիւնը արիոսականութեանը դասելով «ի հրէական մոլորութենէ կեղծաւորութեամբ փախուցեալ» հերձուածների շարքում պնդում է, որ այն «... պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց՝ որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրս»[18]:

Արիոսականութեան դաւանական էութեան վերլուծութիւնը հայ վարդապետերին յանգեցրել է նաեւ այն հետեւութեան, որ հակաերրորդաբանական այս վարդապետութեան առանցքային գաղափարը *Քրիստոսի արարուած լինելու պնդումն է*: Ըստ նրա լինելով բացարձակ եւ անտրոհելի մէկութիւն, Աստուած իրեն բացայայտել է զանազան «ուժերի» միջոցով: Եւ երբ բարեգութ Աստուած ցանկացել է արարել աշխարհն ու մարդկանց, պնդել է Արիոսը, առաջին հերթին ոչնչից արարել է Քրիստոսին, որպէսզի նրա միջոցով իրագործի արարչութիւնը: Փաստելով, որ Արիոսը «... որ զՈրդի արարած կոչէ, եւ ոչ զԲանն մարմնացեալ ի Սրբոյ Կուսէն, այլ, ասէ՝ *Նա է անդրանիկ ամենայն արարածոց եւ նովաւ արար զամենայն* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[19], հայ դաւանաբանական գրականութիւնը հետեւողական մօտեցումներով հիմնաւորում է նաեւ, որ այդ մօտեցմամբ Արիոսը Քրիստոսին պարզապէս համարել է «արարչութեան գործիք» եւ նաեւ պնդել, թէ բոլոր

արարածների նման Քրիստոսը եւս *փոփոխական* բնութիւն ունի, պատմական է, որ նա գործել է միայն «վերին շնորհով», հետեւաբար բոլոր արարուածների նման «սահմանափակ է» ու «անցողիկ»: Հերձուածողի այդ խոտելի ըմբռնումները նկատի ունի նաեւ հայ դաւանաբանական գրականութիւնը, որը հաւաստում է թէ Արիոսը «... արարած ասէր զՈրդի եւ ոչ ի բնութենէ Հաւր, այլ *սրացական եւ ի ներքըս ածական* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[20]: Եւ քանի որ արիոսական այդ մօտեցումը Ս. Երրորդութեան անսահման եւ անվերջ աստուածային էութիւնը տրոհում է վերջաւոր ու սահմանափակ մասերի, իսկ Երրորդութեան Անձերի փոխյարաբերութիւնը ներկայացնում է պատճառա-հետեւանքային կապի տեսքով, վերջինիս նկատմամբ համարժէք է նաեւ «ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն երիւք ժողովրդեաց զարդարուած» Հայ Եկեղեցու «անփոփոխ ու աներկբայելի հաւատքի» մերժողական մօտեցումը:

Հիմնովին անընդունելի համարելով արիոսական դաւանական այդ ըմբռնումը եւս հայ դաւանաբանական մատենագրութեան մէջ փաստւում է հակառակ մօտեցումն այն հիման վրայ, որ Քրիստոս «Եւ թեպէտ զգեցաւ հողեղէն բնութիւն, հողեղէն երբեք ո՛չ ասի, եւ ո՛չ երկրեղէն, այլ Տէր եւ ստացօղ հողոյ եւ հողեղինացս, ըստ յառաջագրացն բաղազանեալ ի նորումս եթէ՝ Առաջին մարդն յերկրէ հողեղէն, երկրորդ մարդն յերկնից, որպէս եւ Տէր»[21]: Դաւանական այդ ըմբռնման հիման վրայ է նաեւ, որ անվերապահ մերժելով արիոսական այդ խեղաթիւր պնդումը, Մայրագոմեցին Քրիստոսի մարդկային բնութեան մասին հաւաստում է. «... զգոյացութիւն մարմնոյն ընդ աստուածային բնութեանն փակեալ, եւ ո՛չ երկրաւորին ի Քրիստոսի, եւ ո՛չ է հնար ասել զմի Քրիստոսն Աստուած եւ հատուած, արարիչ եւ արարած, Տէր եւ ծառայ, անապական եւ ապականացու, անգէտ եւ ամենագէտ, անեղ եւ եղական, երկնաւոր եւ երկրաւոր, հոգեւոր եւ շնչաւոր, անմեղ եւ մեղաւոր. *զի ամենեւին Աստուած է, ամենեւին արարիչ է, ամենեւին Տէր է, ամենեւին անեղ է, ամենեւին անապական է, ամենագէտ եւ հոգեղէն եւ անմեղ է* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[22]: Այդ ամէնի ընդհանրացմամբ հայ վարդապետերը արիոսականութիւնն անվերապահ մերժում են նաեւ այն կապակցութեամբ, որ Քրիստոս ոչ «եղեւ կատարեալ աստուածութիւն հաւասար Հօր» եւ իրենց մօտեցումը պարզաբանելով գրում են. «Զի ի վերայ Աստուծոյ Բանին եղեալ ասելն՝ Արիոսին է: *Զի աստրուածութիւն Որդւոյ ոչ է եղելութեամբ* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[23]:

Արիոսական երրորդաբանական այդ խոտելի պնդումները հայ վարդապետերը հիմնովին մերժում են նաեւ օգտագործելով «Երրորդութեան հայրերի», մասնաւորապէս Մեծն Աթանասի լուծումները: Համամիտ կերպով նրանք եւս հաւաստում են, որ ճշմարիտ աստուածապաշտները յանձին Քրիստոսի պաշտում են ոչ թէ «... *մի՛*

զհաւասարական զոմն մարդ, այլ զԱստուծոյն բնութեամբ եւ ճշմարտապէս Որդին՝ զսա եղեալ մարդ, ոչինչ նուազ զնա Տէր եւ Աստուած եւ Փրկիչ եւ ճշմարիտ Որդի (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[24]: Այդ ենթահողում պէտք է դիտարկել նաեւ Աղբաթանեցու դաւանական *խոստովանութիւնը*, որն ուղղադաւանութեան հիմք է համարում միայն առաջին երեք տիեզերական ժողովների հաւատքը եւ պնդում, որ հենց այդ հաւատքային դիրքերից «հալածեցին զմոլորեցուցիչսն, որք են նման գայլոց ապականչաց ի հօտէն Քրիստոսի» եւ նզովում է նաեւ «... զԱրիոս, վասնզի հայհոյեաց եւ ասաց՝ եթէ որդի չէ ի բնութենէ Հօր»[25]:

Փաստական նիւթի վերլուծութիւնը թոյլ է տալիս պնդել, որ հայ վարդապետերը ամէնեւին չեն բաւարարուել միայն արիոսականութեան հերձուածող ըմբռնումների քննադատութեամբ եւ բանադրելով: Բոլոր հիմքերն ունենք փաստելու նաեւ այն, որ դա համարուել է անհրաժեշտ, բայց ամէնեւին էլ ոչ բաւարար պայման: *Ըստ էութեան քննադատական այդ մօտեցումները ծառայեցուել են մէկ այլ՝ ուղղադաւան երրորդաբանութեան սկզբունքների համակարգուած շարադրման գործին*: Եւ պէտք է փաստել, որ այդ մօտեցումը նրանց թոյլ է տուել առաջադրել եւ զարգացնել հակաարիոսական դաւանական լուծումների մի ամբողջական շարք: Համակողմանի հիմնաւորուած մօտեցմամբ նրանք առաջին հերթին պնդել են, որ ուղղադաւան երրորդաբանութեան հիմքում ընկած այն վարդապետութիւնը, որ «... մի է Աստուածութիւնն. Մի էութիւն, մի գոյութիւն, մի բնութիւն, մի լոյս, մի փառք, մի զաւրութիւն, մի իշխանութիւն, մի պատիւ Սուրբ Երրորդութեանն ճանաչի, եւ ... զգուշանամք եւ ի բաժանմանցն եւ յաւտարացեղութեանցն Արիոսի՝ ողջ պահելով զմիութիւնն յԵրրորդութեանն»[26]: Եւ քանի որ հայ վարդապետերի երրորդաբանական ըմբռնումների անփոփոխ ելակէտն այն է, որ «... չէ ոք ի սուրբ Երրորդութեանն յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ»[27], այդ ամէնի ընդհանրացմամբ հաւաստւում է արիոսամերժ ուղղադաւան երրորդաբանական այն պնդումը, թէ «... Բանն Աստուծոյ եղեւ մարդ կատարեալ, անյեղապէս մարմնացեալ ի սուրբ Կուսէն՝ անճառաբար, ո՛չ հեռացեալ ի բնութենէն, ո՛չ քայքայեալ ի մարմնաւորութիւնն, այլ եկաց մնաց նոյնպէս՝ անփոփոխելի, անայլայլելի, Աստուած մարդացեալ՝ ո՛չ մասամբ, ո՛չ երկուութեամբ, այլ անբաժին միութեամբ. ո՛չ Հայր էառ մարմին, այլ Որդի»[28]:

Համանման մօտեցմամբ հայ դաւանաբանական գրականութեան մէջ հիմնաւորւում է նաեւ ընդգծուած հակաարիոսական այն տեսակէտը, որ Քրիստոսն «Է նոյն բնութիւն Հօր, որով ամենայն եղեւ, եւ այս առաւել իմն դիպողագոյն, *զի բնութիւն Բանին աստուածութիւնն է, եւ զի մի է բնութիւն Բանին՝ դաւանելի է: Քանզի չէ ոք ի Սուրբ Երրորդութեանն յայլմէ էութենէ կամ ի գոյութիւնէ* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[29]: Եւ յետագայ հնարաւոր թիւրիմացութիւններից զերծ մնալու միտումով ընդհանրական

հայրաբանական լուծումների հետեւութեամբ պարզաբանել են նաեւ, որ *«մի է բնութիւն Բանին՝ դաւանելի է» ըմբռնումը պէտք է հասկանալ ուղղակի՝ Հայր եւ Որդի Աստծու բնութենական միութեան իմաստով*: Այդ հարցում եւս հիմք ընդունելով Մեծն Աթանասի երրորդաբանութիւնը, հայ դաւանաբանական գրականութիւնն զգուշացնում է այն սխալից, որ *չի կարելի «Քրիստոսի մէկ բնութիւն» դաւանել աստուածային եւ մարդկային անխառն միութիւնից դուրս*, քանի որ *«... մի բնութիւն ասել Բանին եւ մարմնոյ՝ որպէս ընկեր առ ընկեր նշանակի, որ լինի երկու, եւ ո՛չ մի: Իսկ յասելն, եթէ ի մարմին շրջեցաւ Բանն, նորին իսկ Բանին զփոփոխումնն եւ զապականութիւն ցուցանեն* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[30]: Եւ քանի որ Հայ Եկեղեցու երրորդաբանական անփոփոխ հաւատամքն այն է, որ անձնաւորմամբ «Աստուած եղանի մարդ ճշմարտապէս», հայ դաւանաբանական գրականութիւնը հիմք ընդունելով Գրիգոր Լուսաւորչի վարդապետութիւնը փաստում է նաեւ. «Քանզի եւ է իսկ Որդի, վասն զի զաւրութիւն Աստուծոյ է, եւ խորհրդակից եւ Աստուած հզաւր, որով եւ յաւիտեանքն հաստատեցան»[31]: Դաւանական այդ դիրքերից է հոչակւում նաեւ ուղղադաւան այն ըմբռնումը, որ անսկիզբ եւ յաւիտենական *Քրիստոս Աստուած անձնաւորուելով մնում է անփոփոխ*, քանզի «Նորուն աստուածայինքն վասն զի Աստուած էր բնութեամբ, նորուն եւ մարդկայինքն, վասն զի մարդ եղեւ ճշմարտապէս. *ո՛չ անձնաւորութեամբ բաժանի եւ ո՛չ ընդ բնութեանցն թուով, եւ ո՛չ մասամբ որոշի* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[32]:

Այդ ամէնը թոյլ են տալիս վստահաբար պնդել, որ հայ դաւանաբանական գրականութիւնը Հայր եւ Որդի Աստծու էութենական տարանջատման արիոսական վարդապետութիւնը հիմնովին մերժում է համագոյութեան աստուածաբանութեան դիրքերից: Աւելին, Յովհաննու Աւետարանի «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւն» (Յովհ., Ա: 1-4) աստուածաբանութեան եւ նիկէական ուղղադաւանութեան ներդաշնակ զուգորդութեամբ հայ վարդապետերը մէկ քայլ աւելին կատարելով անվարան պաշտպանում են նաեւ *Հայր Աստծու եւ Քրիստոս-Բանի նոյնագոյութեան վարդապետութիւնը*: Այլ կերպ ասած, եթէ Հայր եւ Որդի Աստծուն *էութեամբ համարում են համագոյ*, համամիտ կերպով Ս. Երրորդութեան անձերը համարում են *բնութեամբ նոյնագոյ*: Այս հարցում գնահատելի է նաեւ այն, որ հայ դաւանաբանական գրականութեան մէջ Ս. Երրորդութեան անձերի նոյնագոյութիւնը ամրագրուել է նաեւ Կիւրեղ Ալեքսանդրացու դաւանական հետեւեալ պնդմամբ. «Իսկ յորժամ լսիցեն ունայնաբանքն, եթէ այս Բան մարմին եղեւ եւ շրջեցաւ ընդ մեզ, եւ զսա իւրով մարմնովն՝ առիցելովն ի մենջ, մի Միածին կնքի Աստուած ի մարմնի՝ նոյնագոյական Հօր Ծնօղի, կարկեսցեն ընդվայրաբանութիւնք

այլանդակութեանց նոցա, որք երկաբունք եւ ի մարմնի թուեցին զմարմնառեալ Բանն Աստուած»[33]: Նոյնը պէտք է ասել նաեւ ալեքսանդրիական աստուածաբանի երրորդաբանական մէկ այլ պնդման մասին, ըստ որի «Աստուած իսկ ելով բնութեամբ եւ ճշմարիտ յԱստուծոյ ի Հօրէ Բանն՝ նոյնագոյական եւ մշտնջենական Հօրն»[34]:

Արիոսի վարդապետական խոտելի պնդումներից մէկն էլ այն է, թէ արարածներին անհասանելի Աստուած իր «փառքի մէջ բացարձակ Մէկ» լինելով «տարագոյ» եւ անհաս է Քրիստոսին, այլ կերպ ասած՝ արարուած Քրիստոս «չի կարող կատարեալ եւ ճշգրիտ կերպով ճանաչել Արարիչ Հօրը»: Իսկ այն ամէնը, ինչ իր էութեան սահմաններում ճանաչում է Որդին, բնորոշ է միայն արարածների հնարաւորութիւններին: Հայ Եկեղեցու երրորդաբանական մօտեցումն արմատապէս հակադիր է արիոսական այդ ըմբռնմանը եւս:

Հայ դաւանաբանական գրականութեան վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այս հարցում եւս հայ վարդապետերի մօտեցումներն աչքի են ընկնում համակարգուած բնոյթով, որոնք դրսեւորւում են աստուածաբանական համարժէք մօտեցումների ուղղադաւան լուծումների տեսքով: Այս հարցում հայ աստուածաբանական միտքն ամէնից առաջ ցոյց է տալիս, որ անվերջի (Հայր Աստծու) եւ վերջաւորի (Քրիստոս Որդու) փոխյարաբերութեան արիոսական ըմբռնումն արմատապէս հակադիր է Աստուածաշնչի ոգուն: Այդ իսկ պատճառով արիոսական ծայրայեղութիւնը յաղթահարելու միտումով հայ վարդապետերը ելակէտային սկզբունքներից են համարում ընդհանրական հայրաբանութեան կողմից մշակած «միիշխանութեան հաւատամքը», որը հռչակում է. «Աստուած երեքեանն՝ ընդ իրեարս միացեալ, այս է յաղագս միիշխանութիւնն»[35]: Միաժամանակ, շեշտադրելով Հայր-Որդի էական ու բնութեանական միութիւնը, հայ վարդապետերը հիմնահարցի լուծումը սերտօրէն շաղկապում են երրորդաբանական այն հիմնադրոյթին, որ Միածին Քրիստոսն է «... զծնունդն Աստուածութեան, զ'իսկզբանէ Բանն, զառաքեալն ի Հօրէ, զմարմնացեալ եւ զմարդացեալն յԱստուածածնէն Մարիամայ, կատարեալն յաստուածութեանն եւ ի մարդկութեանն՝ զլոյս երեսաց Հօր, զնկարագիր էութեանն, զպատկեր երեւելոյն Աստուծոյ»[36]: Եւ այդ ամէնի ընդհանրացմամբ հաւաստում են այն փաստը, որ Արիոսը եւ այլ հերձուածողներ, «որք ուրանան ամենեւին զմարմնանալն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ ի սրբոյ կուսէն Մարիամայ», ոչ միայն «հաւատքի դաւաճաններ» եւ «որոմ սերմանողներ» են, այլեւ «... թշնամեաց խաչին Քրիստոսի»[37]:

Այնուհետեւ, քաջ գիտակցելով, որ վերջաւորի եւ անվերջի արիոսական ըմբռնումների հիմքում ընկած է մտահայեցողական մօտեցումը, հայ դաւանաբանական գրականութիւնը դրան հակադրում է յայտնութենական, վերբանական մօտեցումը եւ պնդում, որ «անբաւ է

Աստուածութիւնն եւ դժուարաւ տեսանելի, եւ նոյն ամենայն ուստեք անհասանելի», որը Գրիգոր Լուսաւորիչը ձեւակերպում է հետեւեալ կերպ. «Չի մեծութիւնքն անքնինք անսկիզբն էութեանն արտաքս է քան զարարածս՝ յանսահմանութեան, յանբաւութեան»[38]: Այլ կերպ ասած արիոսական մտահայեցողականութեանը հակադրելով Ս. Երրորդութեան աստուածային էութեան յայտնութենական ըմբռնումը, հաւաստում է նաեւ Ս. Երրորդութեան տնօրինական խորհուրդ լինելու հաւատամքը, մասնաւորապէս այն, որ *Ս. Երրորդութեան աստուածային էութիւնն անհաս է մտքի համար*, կատարելապէս «անբաւ է, անճառ եւ անքնին», ինչը Գրիգոր Լուսաւորիչը ձեւակերպում է հետեւեալ կերպ. «... զի ո՛չ կարեն ծածկել միտք եւ ո՛չ քննել խորհուրդք, որում ո՛չ բաւէ իմաստութեան հոգի, եւ զչզաւրաց, եւ ո՛չ գիտութիւն որդոց մարդկան՝ զմեծութիւն Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն»: Եւ ի հակադրութիւն Արիոսի հերձուածող պնդման միաժամանակ հաւաստում է, որ եթէ Ս. Երրորդութեան խորհուրդն իբրեւ յայտնութիւն է տրուած մարդուն, ապա այլ է աստուածային անձերի պարագային: Եւ քանի որ «Հայր անծին իսկութեամբ, անսկիզբն էութեամբ, Հայր վասն միշտ Որդւոյ, որ ընդ նմա, եւ իսկ Հոգոյն, որ ի նմանէ», այդ հիման վրայ Հայոց Առաքելական Հայրը հաւաստում է. «Չի որ կատարեալք են՝ *երախտեացն ամենայն կարեն հասու լինել* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[39]: Այն, որ Քրիստոս կարող է կատարեալ եւ ճշգրիտ կերպով ճանաչել Հայր Աստծուն, աստուածաշնչական մօտեցմամբ փաստում է նաեւ Մամբրէ Վերծանողը, որը գրում է. «*Եւ ոչ ոք գիտէ զՀայր, բայց Որդի, եւ ոչ ոք զՈրդի ճանաչէ, բայց Հայր*: Այս բան զմիակամութիւն եւ զմի բնութիւն ցուցանեն, եւ ոչ երիցութիւն եւ կրտսերութիւն»[40]: Նոյնն է նաեւ Մայրագոմեցու դիրքորոշումը, որը հաւատքային այս տեսակէտը հիմնաւորում է նրանով, որ «ԶԱստուած ոչ ո՛ք ետես երբեք, բայց Միածին Որդին, որ ի ծոց Հօր՝ *նա պատմեաց* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[41] - պարզաբանում է նաեւ, որ յանձին Ս. Երրորդութեան Անձերի պէտք է «... հաւասարապէս կատարեալ միութիւն ճանաչի՝ անբաժանելի եւ անորոշելի. եւ որպէս անորոշելի եւ անբաժանելի ճանաչի, նոյնպէս անշփոթելի եւ անփոփոխելի իմանի: *Այս է անհասական պայման անբաւ Էութեանն* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[42]:

Հայ դաւանաբանական գրականութիւնը անդրադարձել եւ հիմնովին մերժել է նաեւ հերձուածողի էբիոնական-միապետական մէկ այլ հետեւութիւն եւս: Հայ վարդապետերի համար աներկբայ է եղել, որ պնդելով Հայր եւ Որդի Աստծու էական տարբերութիւնը, դրանով Արիոսը ոչ միայն մերժել է Քրիստոսի աստուածային էութիւնը, այլեւ՝ նրա փրկագործական առաքելութեան վարդապետութիւնը: Այս պարագայում եւս հայ վարդապետերը արիոսական այդ թիւր պնդումն անվերապահ մերժում են անձնաւորման, քաւութեան եւ փրկագործութեան անխզելի միասնութեան ուղղադաւան ջատագովութեան դիրքերից: Հայ

դաւանաբանական գրականութեան մէջ երրորդաբանական այդ մօտեցումը առաջին հերթին փաստւում է հիմք ընդունելով Գրիգոր Լուսաւորչի «Ծննդեան Կարգի Վարդապետութիւնը», որտեղ Քրիստոսի մարդեղացումը պարզաբանւում է փրկագործութեան հետ ունեցած սերտ կապի մէջ, ըստ որի Քրիստոս «... վասն մեր էջ եւ մարմնով ծնաւ ի Կուսէն. այն, որ ծնունդ Հօր, որ զնայն ծնաւ՝ նա միայն գիտէ: Իսկ երկրորդն *շնորհօք իւրովք ի մէջ մարդկան, վասն զի կեցուսցէ զմարդիկ եւ աւրհնեսցէ յառաջին անիծից անդ զերկիր, իւրով աւրհնութիւնաբեր գարշապարօքն նորոգեսցէ* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[43]: Քննարկուող հիմնահարցի արժեւորման գործում այդ տրամաբանութեամբ է ընթացել նաեւ Մայրագոմեցին, որը հռչակելով Հայ Եկեղեցու «կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ իմանամք զՔրիստոս» դաւանական պնդումը պարզաբանում է նաեւ, որ «Ինքն Բանն, առաքեալն ի Հօրէ, ինքն էակից Որդին, ինքն Միածին Որդին Հօր՝ *լրութեամբ աստուածութեամբն էջ եւ յանճառաբար եւ անպարիմացապէս անքննելի միութեամբ եղեւ մարմին ի Կուսէն, եթէ՝ Ինքն եկեսցէ եւ փրկեսցէ* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[44]:

Ահա թէ ինչու ընդհանրացնելով այս հարցում Հայ Եկեղեցու դաւանական դիրքորոշումը եւ Քրիստոսի մարդեղացումն անքակտելի համարելով Նրա փրկագործութիւնից, հայ դաւանաբանական գրականութիւնը Գրիգոր Լուսաւորչի հետեւութեամբ պնդում է. «Հաւատք ճշմարիտ այս են. խոնարհեցաւ եւ խառնեաց զաստուածութիւնն ընդ մարդկութիւնն եւ զանմեռն ընդ մեռոտն, *զի զամենայն մարդկութիւնն անքակ արասցէ յանմահութենէ աստուածութեանն իւրոյ* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[45]: Եւ մէկ անգամ եւս հաւաստելով, որ անձնաւորեալ Որդուն օտարել աստուածային էութիւնից այլ բան չի նշանակում, քան «բաժանել զտնօրինականս եւ զաստուածային ճահագործութիւնս եւ զսքանչելիսն», հայ դաւանաբանական գրականութիւնը յորդորում է. «Մի՛ պատառեր զտնօրէնութեանն պատմուճան զի՛ վերուստ անկեալն, մի՛ աշակերտիր Արիոսի, վասն զի նա ամբարշտելովն զբնութիւնսն հատանէ»[46]:

Ուղղադաւան երրորդաբանութեան դիրքերից մատնանշելով անձնաւորման եւ փրկագործութեան անքակտելի միութիւնը, հայ դաւանաբանական մատենագրութիւնը նաեւ պնդում է, որ Քրիստոս «... վասն մեր մարդկան, որ եւ վասն մերոյ փրկութեան՝ իջեալ, մարմնացաւ եւ մարդացաւ ի սուրբ Կուսէն Մարիամու, չարչարեցաւ վասն մերոյ փրկութեան»[47]: Այդ հիման վրայ հայ վարդապետերը ընդդէմ արիոսական բաժանման անձնաւորեալ Քրիստոսի մասին պնդում են դաւանական նշանակութիւն ունեցող մէկ այլ հիմնարար վարդապետական հիմնադրոյթ, որը հռչակում է. «Եւ նովին հաւատով եւ յուսով փառաւորեմք զաստուածութիւնն հանդերձ մարմնաւորութեամբն, եւ զմարմնաւորութիւնն հանդերձ աստուածութեամբն, եւ երից

սրբասացութեամբ զերրորդութիւնն խոստովանիմք»[48] - յաւելում են. «*Այսպէս հաւատամք եւ երկրպագեմք եւ փառաբանելով ասեմք. Սո՛ւրբ Աստուած, Սո՛ւրբ եւ հզօր, Սո՛ւրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[49]:

Հայ դաւանաբանական գրականութեան մէջ փաստւում է նաեւ այն իրողութիւնը, որ Արիոսի վերոնշեալ ըմբռնումը գործնականում եղծելի մօտեցում է դրսեւորել ուղղադաւան հաւատքի առանցքային այլ ըմբռնումների նկատմամբ եւս: Այդ ենթահողում հայ վարդապետերը մասնաւոր կենտրոնացել եւ անվերապահ մերժել են հերձուածողի այն պնդումը, թէ «Աստծու ստեղծագործ գործիք» որդեգրեալ Յիսուս-մարդու տառապանքը եւ մահը քաւութեան եւ փրկութեան գործում միայն ուսուցողական նշանակութիւն է ունեցել: Քաջ գիտակցելով, որ «բաժանման» այս մօտեցումը եւս կառուցուած է Որդի Աստծու բնութեան երկատման դիրքերից, հայ դաւանաբանական գրականութիւնը մէկ անգամ եւս հաւաստելով, որ Որդի Աստուած «ի հայրական էութենէ անժամանակ ծագաւ», այդ հիման վրայ Յովհան Ոսկեբերանի հետեւութեամբ խոստովանում է. «... զՔրիստոս՝ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ միով բնութեամբ եւ փառաւք եւ զաւրութեամբ, եւ քարոզեմ զբարձրագոյն Աստուածութիւն նորա եւ ոչ ամաւթ համարիմ զխոնարհագոյն մարդեղութիւն նորա» եւ ընդհանրացնելով պնդում. «... Քրիստոսդ անուն՝ ոչ Բանին է յատուկ եւ ոչ մարմնոյն, այլ երկուցն միացելոց եւ աստուածախառն գործելոյ զտնաւրինականքն»[50]: Դաւանական այս մօտեցումը հայ վարդապետերին եւ աստուածաբաններին թոյլ է տուել մէկ անգամ եւս փաստել այն իրողութիւնը, որ աստուածային մէկութեան դիրքերից հանդէս եկող Արիոսի պնդումից տրամաբանօրէն հետեւում է, որ Քրիստոսի մէջ «Աստուած բնակեաց ի մարմնի»: Նրանք միաժամանակ միանգամայն հիմնաւոր ցոյց են տալիս, որ հերձուածող այդ պնդումից անխուսափելի է նաեւ այն հետեւութիւնը որ «... ոչ յղացաւ անճառաբար յարգանդի Աստուածն Բան, եւ ոչ մնաց Աստուածածինն կոյս: Քանզի ո՛չ Բանն բնութեամբ ծնաւ, այլ զտաղաւար բանին, եւ ըստ այսմ (զ)իմանի Քրիստոս ինքն իւր տէր, եւ իւր ծառայ. բագին եւ բնակարան, տուն եւ որ շինէ զտունն, տաղաւար եւ որ բնակէ ի տաղաւարին»[51]:

Այդ ենթահողում միանգամայն տրամաբանական եւ օրինաչափ պէտք է համարել նաեւ արիոսականութիւնը անվերապահ մերժող հայ վարդապետերի այն պնդումը, որ Քրիստոս է «... Աստուած ճշմարտապէս յերկնից. գիտեմ զնա որդի Դաւթի ըստ մարմնոյ, մարդ յերկրէ չարչարելի. եւ ոչ խնդրեմ, եթէ զիա՛րդ անչարչարելի եւ զիա՛րդ չարչարելի, եւ զիա՛րդ Աստուած եւ զիա՛րդ մարդ. մի՛ գուցէ զզիարդն խուզելով եւ զեղանակն խնդրելով՝ անկայց ի բարութեանցն, որ առաջի կայ մեզ: *Քանզի միայն հաւատալն պարտ է եւ ի վերուստ հայցել եւ ո՛չ ի մարմնոյ եւ յարենէ*

(ընդգծումը մերն է - Ա.Ք.)»[52]: Արիոսական հակաերրորդաբանութիւնը մերժող հաւատքային այդ սկզբունքների առաջնութեան դիրքերից հայ վարդապետերը պնդում են նաեւ «պարտ եւ պատշաճ է մեզ յուսալ ի Քրիստոս Աստուած մեր» սկզբունքը հետեւեալ հիմնաւորմամբ. «... քանզի Նա միայն է քաջ եւ յաղթող հովիւ եւ սիրող պատուիրանապահաց իւրոց, խոնարհ եւ այցելու, որ երբեմն զԱրիանոսացն քակեաց կարճեալ ճոխութիւն»[53]:

Նոյն շարժառիթներով արիոսական հակաերրորդաբանական պնդումները մերժւում են նաեւ դաւանական այն ըմբռնումների հիման վրայ, որը Գրիգոր Լուսաւորիչը հետեւեալ կերպ է ձեւակերպում. «Սա է Աստուած, Աստուած մեր յաւիտեանս ... եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց. եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք, զի նա ինքն է ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենականք: Որ առ մարմին՝ անըմբռնելի, եւ շօշափեցաւ եւ ըմբռնեցաւ մարմնովն, եւ զամենայն անցս մարմնոյն յանձն էառ իւրովք կամօքն»[54]: Արիոսի դէմ է ուղղուած նաեւ հայ դաւանաբանական գրականութեան մէջ ամրագրուած երրորդաբանական անանց նշանակութիւն ունեցող այն պնդումը, որ անձնաւորեալ Քրիստոս «Նոյն ինքն զմեծասքանչ զաւրութիւնն առնէր եւ նոյն ինքն ընդ չարչարանաւքն անկանէր, զի միութիւն ոչ լինի ի միութիւն երկուս զի թէ այսպէս բաժանեսցի, ոչ լինի միութիւն, այլ երկուութիւն»[55]: Իր հերթին Մայրագոմեցին դա բացատրում է նրանով, որ «Ինքն Բանն է պատճառ եղելութեան, առանց պատճառին զեղելութիւնն անհնար է ասել: Ինքենէ եղեալն ինքն եղեալն է Աստուած եւ մարդ միանգամայն. եւ զի ամենեւին եղեալն է Աստուած եւ բնութիւն Հօր»[56]: Եւ հաւաստելով անփոփոխ հաւատարմութիւնը առաջին երեք տիեզերական ժողովների կողմից սրբագործած Ս. Երրորդութեան դաւանանքի նկատմամբ, հռչակելով «զտնաւրէնութիւն Միածնին» խոստովանութիւնը, հաւաստում են. «Յաղագս այսպիսի շնորհաց փառաւորեմք զՀայրն՝ զնոյն ինքն տուողն զՈրդին Միածին վասն կենաց աշխարհի: Փառաւորեմք զՈրդին, որ զինքն եդ վասն մերոյ փրկութեան» եւ հռչակում. «Եւ մեք որդիք եւ ժառանգորդք հաւատոց նոցա, քանզի նախանձաւորք նոցին եմք, զօրանամք հաւատովք եւ նզովիմք զԱրիոս, որ հայհոյեաց եւ ասաց, եթէ Որդի չէր ի բնութենէ Հօր ծնեալ, այլ՝ արարեալ»[57]:

Ընդհանրացնելով այդ ամէնը կարելի է պնդել, որ հետեւողականօրէն մերժելով Որդի Աստծու վերաբերեալ արիոսական հայեցողական բոլոր մտակառոյցները, վաղ շրջանի հայ հայրաբանական, ինչպէս նաեւ հայ դաւանաբանական գրականութիւնը հետեւողականօրէն շարադրում եւ յաջորդաբար ներկայացնում է Ս. Երրորդութեան եւ անձնաւորման ուղղադաւան լուծումների մի ամբողջական շարք: Այդ դիրքերից Քրիստոսի աստուածային որակների հիմնաւորմամբ հայ դաւանաբանական գրականութեան մէջ արմատապէս մերժւում են Որդի

Աստծու արարուած, այլագոյ, սահմանափակ եւ ժամանակային լինելու արիոսական հակաերրորդաբանական բոլոր լուծումները: Եւ այդ գործընթացում հայոց վարդապետերը հաւատարիմ մնալով եկեղեցական աւանդական երրորդաբանական հաւատքային սկզբունքներին, ելակէտային են համարել դաւանաբանական այն հիմնարար ըմբռնումը, թէ աստուածային էութիւնը Եռանձնեայ է միութեամբ եւ Մէկ՝ բնութեամբ եւ էութեամբ: Եւ քանի որ աստուածային անձերն անբաժան են առանձնութեան եւ անխառն՝ միասնութեան մէջ, հայոց վարդապետերն այդ հիման վրայ անփոփոխ հռչակել են նաեւ Յիսուս Քրիստոսի աստուածային էութեան վարդապետութիւնը:

Այդ ենթահողում միանգամայն բնական պէտք է համարել նաեւ, որ Հայաստան աշխարհի, եպիսկոպոսների, քահանաների, իշխանների եւ աշխարհականների անունից Արիոսն ու արիոսական հերձուածը բազմիցս «յամենասուրբ Երրորդութեան» անունից նզովուել են ինչպէս հայոց հայրապետերի եւ վարդապետերի դաւանաբանական թղթերում[58], այնպէս էլ՝ Հայ Եկեղեցու տեղական ժողովներում[59]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ճիշտ է, արիոսականութիւնը մէկընդմիշտ դուրս է մղուել եկեղեցու կեանքից, այդուհանդերձ, հերձուածի հակաերրորդաբանական գաղափարներն այս կամ այն դրսեւորմամբ շարունակում են հանդէս գալ արդի հակաերրորդաբանական աղանդներում, ինչը հիմնահարցի ուսումնասիրութեանը նաեւ գործնական երանգ է հաղորդում:

[2] *Սուրբ Գրիգորի Վարդապետութիւնը*, Ս. Էջմիածին, 2007, էջ 77:

[3] *Գիրք Թղթոց*, Գ. տիպ., Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1994, էջ 525:

[4] *Կնիք Հաւատոյ*, Անթիլիաս, Տպ. ԿՀՄՏԿ, 1998, էջ 141:

[5] Նոյն, էջ 133:

[6] Նոյն, էջ 130:

[7] *Գիրք Թղթոց*, էջ 437: Կարելի է հաւաստել նաեւ, որ այս մօտեցումը ընդհանրական է եղել Հայաստանում: Վկայութիւնը բիւզանդական Ռոմանոս կայսրին Վասպուրականի հայոց Գագիկ թագաւորի յղած «Վասն Հաւատոյ» թուղթն է, ուր Հայ Եկեղեցու ուղղադաւան աստուածաբանութեան վաւերագրման հիմք համարելով առաջին երեք տիեզերական ժողովները, միաժամանակ հաւաստում է նաեւ, որ երրորդաբանական հարցերում նիկէականութեան հեղինակութիւնը անառարկելի է նաեւ այն պատճառով, որ «... մեծն Առիստակէս, որդի մեծի սրբոյն Գրիգորի, ի սուրբ ժողովին ՅԺԸ սուրբ հայրապետացն, որ ի Նիկիա Բիւթանացւոց ժողովեալք առ ի կործանումն Արիոսի մոլորութեանն» (նոյն, էջ 541):

[8] Նոյն, էջ 582:

[9] *Կնիք Հաւատոյ*, էջ 136:

[10] Ականաւոր հայագէտ Նիկողայոս Ադոնցը, օրինակ, պնդում է, որ Ե. դարի 30ականներին «Մաշթոց եւ նրա աշակերտներ երեւան գալով ընդհանուր

եկեղեցական ասպարէզում անմիջական մասնակցութիւն են ունեցել ճշմարտութեան որոնումներին եւ հիմնարկել են հայ դաւանաբանական շէնքը»: Նա յաւելում է նաեւ, որ այդ ամէնով «մի նոր եւ թանկագին էջ է բացւում Հայ Եկեղեցու պատմութեան մէջ նրա դաւանաբանական աւանդի ծագման տեսակէտից» (Ն. Գ. Ադոնց, «Մաշթոց Եւ Նրա Աշակերտները Ըստ Օտար Աղբիւրների», *Երկեր, Հտր. Բ*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2006, էջ 30): Այդ տեսանկիւնից բնութագրական պէտք է համարել նաեւ Մանուկ Աբեղեանի այն պնդումը, որ դարաշրջանի հայ դաւանաբանական գրականութիւնը «մաքառման ու պայքարի գրականութիւն» է, «մաքառման ազգային գործօն» (Մանուկ Աբեղեան, *Հայ Հին Գրականութեան Պատմութիւն, Հտր. Ա.*, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատ., 1944, էջ 80): Քաղկեդոնականութեանը բնորոշ որոշ ծայրայեղութիւններ առարկայօրէն ընկալելու պարագայում նոյնը կարելի է ասել նաեւ այլ աղբիւրների մասին, տե՛ս՝ J.-P. Migne, *Liberati Diaconi, Breviarium Cause Nestorianorum et Eutychianorum*, Patrologiae cursus completes, Series Latina, T. LXVIII, col. 963; հմմտ.՝ *Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio, Vol. IX (anii 536-590)*, ed. by J.-D. Mansi, Graz, 1960, էջ 87. նաեւ՝ K.-J. Hefele, *Conciliengeschichte. Bd. II*, Freiburg, 1875, էջ 28:

[11] *Գիրք Թղթոց*, էջ 134: Հմմտ.՝ *Կնիք Հաւատոյ*, էջ 130-131:

[12] *Կնիք Հաւատոյ*, էջ 55:

[13] Նոյն, էջ 61:

[14] Նոյն, էջ 58:

[15] Նոյն, էջ 61:

[16] Նոյն, էջ 52:

[17] Նոյն, էջ 53:

[18] *Գիրք Թղթոց*, էջ 158:

[19] Նոյն, էջ 407:

[20] Նոյն, էջ 504:

[21] *Կնիք Հաւատոյ*, էջ 144:

[22] Նոյն, էջ 145-146:

[23] *Գիրք Թղթոց*, էջ 660:

[24] *Կնիք Հաւատոյ*, էջ 347-348:

[25] *Գիրք Թղթոց*, էջ 397:

[26] *Կնիք Հաւատոյ*, էջ 55, 136: Հմմտ.՝ *Գիրք Թղթոց*, էջ 160, 211-2. նաեւ՝ Վարդան Այգեկցի, *Գիրք Հաստատութեան եւ Արմատ Հաւատոյ*, Երեւան, 1998, էջ 75-6:

[27] *Գիրք Թղթոց*, էջ 134:

[28] *Կնիք Հաւատոյ*, էջ 137: Այս հարցում եւս հայ վարդապետերի համար ելակէտային է նաեւ ընդհանրական ուղղադաւան այն վարդապետութիւնը, որ «ո՛չ է ասել զմի Քրիստոս երկութիւն», ուստի՝ ոչ է նաեւ «կրկնապատիկ, ո՛չ երկակերտ, ո՛չ երկատութիւն բնութեանց», ոչ է «երկուս զօրութիւնս. եւ ոչ երկուս ազդմունս», ոչ է «այլ եւ այլ զանպարիմանալի միաւորութիւն», «եւ ոչ «այլածին եւ այլազնեայ Աստուծոյ մարդ սրբացեալ Քրիստոս Աստուած», «Եւ ո՛չ հասարակական մարդոյ զմարմինն տէրունւոյն, եւ ո՛չ աստուածազգեստ մարդ զմարմնացեալ Բանն Աստուած, եւ ո՛չ ունական արժանաւորութեամբ, եւ ո՛չ յարակցութեամբ, ո՛չ յարելութեամբ կամ մերձաւորութեամբ մարդոյ

հասարականի առ Աստուածն Բան, եւ ո՛չ ըստ արժանաւորութեան որդւութեան, եւ ո՛չ մարդ բացակատարեալ յարգանդի Կուսին եւ յետ այսօրիկ յարակցեալ Աստուածումն Բանի, եւ ո՛չ սոսկ մարդ զխաչեցեալն զՏէրն փառաց, եւ ո՛չ այլ ոմն զչարչարեալն» (նոյն, էջ 123-5):

[29] Նոյն, էջ 131:

[30] Նոյն, էջ 61: Հայ դաւանաբանական գրականութիւնն արձանագրել է նաեւ «յերրորդութեան Մեծահանճար Հայրապետի»՝ Աթանաս Ալեքսանդրացու պարզաբանող մէկ այլ մօտեցում, համաձայն որի «Զի եթէ մի բնութիւն իցէ Բանին եւ մարմնոյն, աւելորդ էր յիշել զՄարիամ. զի եթէ բնութիւն մարմնոյն յառաջագոյն էր քան զՄարիամայնովն, եւ էր աներեւոյթ եւ անտես մարմինն, ապա եթէ այդպէս է, եւ նախ իսկ է Բանն: Ապա թէ ... մի բնութիւն է Բանին եւ մարմնոյն, զի՞նչ պէտք էին գալուստ Բանին, վասն որո՞յ եկեսցէ եւ զիւր բնութիւնն զգեցցի, եւ կամ յիւրմէ բնութենէն փոխեալ մարմին լինիցի» (նոյն):

[31] Նոյն, էջ 152:

[32] Այգեկցի, էջ 153: Հայ դաւանաբանական գրականութիւնը վկայակոչելով Գրիգոր Աստուածաբանին նաեւ հաւաստում է, որ «... Արիանոսի բաժանումն, յոյժ հեռաւորութեան չարութիւնն եւ զուգապատիւ ամպարշտութիւն» է (*Կնիք Հաւատոյ*, էջ 33):

[33] *Կնիք Հաւատոյ*, էջ 183:

[34] Նոյն, էջ 207: Հմմտ.՝ նոյն, էջ 209:

[35] Նոյն, էջ 35: Հայ դաւանաբանական գրականութիւնը «ոչ սասանելի ճշմարիտ հաւատքի ամրութիւն» **Ս. Երրորդութեան միիշխանութեան էութիւնը** բացատրում է նաեւ որպէս «... յառաքելոցն եւ ի մարգարէիցն աւանդեալ. հաւատալն ի Հայրն ամենակալ, եւ յանսկզբնական Բան Նորա եւ ի Հոգին Սուրբ» (*Գիրք Թղթոց*, էջ 129): Միաժամանակ հաւաստում է նաեւ, որ Ս. Երրորդութեան Անձերի բաժանուելը «... ոչ հատանէ զբնութիւնն, այլ զանձնաւորութիւնն ամբողջ պահէ, զոր պարտ է յառաջ քան զմիաւորելն բաժանել եւ նախ քան զբաժանելն միաւորել, եւ արագապէս ասել՝ երեք եւ մի, մի եւ երեք» (Այգեկցի, էջ 77):

[36] *Կնիք Հաւատոյ*, էջ 55: Հայ դաւանաբանական գրականութիւնը յաւելում է նաեւ, որ Հայր Աստծու էութիւնից եւ բնութիւնից ծնուած համագոյ Որդին է «... յամենայնի անպատումն առանց հատուածի եւ միջոցի, յամենայնի հաւասար եւ նման Հաւր, անորոշելի եւ անախտ ծնունդ» (Այգեկցի, էջ 76):

[37] *Գիրք Թղթոց*, էջ 177-8:

[38] *Կնիք Հաւատոյ*, էջ 21:

[39] Մանրամասները տե՛ս՝ նոյն, էջ 21: Հմմտ.՝ նոյն, էջ 147:

[40] «Մամբրէի Վերծանողի Ճառք», *Մատենագիրք Հայոց, Ե. Դար, Հտր. Ա*, Անթիլիաս, Լիբանան, Տպ. ԿՀՄՏԿ, 2003, էջ 1112: Մատենագրքում թիւրիմացաբար Աստուածաշնչական տեղի է համարւում Մարկ., ԺԳ: 32-ը, այնինչ պէտք է լինի Մատթ., ԺԱ: 27 եւ Ղուկ., Ժ: 22:

[41] *Կնիք Հաւատոյ*, էջ 53:

[42] Նոյն, էջ 54:

[43] Նոյն, էջ 151:

[44] Նոյն, էջ 143:

[45] Նոյն, էջ 149:

[46] *Գիրք Թղթոց*, էջ 590. նաեւ՝ Այգեկցի, էջ 142:

[47] *Կնիք Հաւատոյ*, էջ 134:

[48] Նոյն, էջ 136:

[49] Նոյն, էջ 138:

[50] Այգեկցի, էջ 140: Փաստելով Հայր եւ Որդի Աստծու էական եւ բնութենական անբաժանութիւնը, հայ դաւանաբանական գրականութիւնը պնդում է նաեւ դաւանական այն տեսակէտը, որ «Բանն մարմին եղեւ եւ ի միասին եկին բնութիւնքն, եւ առանց խառնակութեան մնաց միաւորութիւնն» եւ դա բացատրում է նրանով, որ «Ինքն ի ծոց Հաւր եւ յորովայնի Կուսին, ի խաչին բեւեռեալ եղեւ, եւ յաթոռ փառաց ոչ մերկանայր» (նոյն, էջ 142):

[51] *Գիրք Թղթոց*, էջ 565:

[52] Նոյն, էջ 604:

[53] Նոյն, էջ 241:

[54] *Կնիք Հաւատոյ*, էջ 148: *Արմատ Հաւատոյ* դաւանաբանական ժողովածուն Հայ Եկեղեցու դաւանական ըմբռնումների շարքում զետեղել է նաեւ ընդհանրական հայրաբանական այն ըմբռնումը, թէ «Ոչ ի նահատակութենէ եղեւ Աստուած՝ Քրիստոս, քաւ լիցի, այլ գթովն եղեւ մարդ՝ Աստուած ելով, որպէս հաւատամք *զի ոչ մարդ աստուածացեալ քարոզեմ, այլ Աստուած մարդացեալ խոստովանիմք* (ընդգծումը մերն է - Ա.Ք.)», Այգեկցի, էջ 143):

[55] Այգեկցի, էջ 143:

[56] *Կնիք Հաւատոյ*, էջ 143:

[57] Նոյն, էջ 369:

[58] *Գիրք Թղթոց*, էջ 158, 160, 174, 177, 178, 213, 299, 397, 407, 437. նաեւ՝ *Կնիք Հաւատոյ*, էջ 53, 55, 136, 138 եւն.:

[59] *Գիրք Թղթոց*, էջ 292, 297:

PATERNALISTIC AND CONFESSIONAL LITERATURE OF THE EARLY ARMENIAN CHURCH CONCERNING THE BASICS OF ARIOS' ANTITRINITY THEOLOGY
(Summary)

A. K. KALASHYAN
av_kalashyan@mail.ru

The study of the charactersitics of antitrinity schismatic doctrines in Christian historiography bears importance because these concepts are reiterated in one way or the other in current sects. As such the study bears a practical function too.

In this regard the anti-Arios doctrine of the Armenian Church is special. The Armenian Church stance has been argued for by several Armenian varatbeds and has been proven through a multilayered approach, where both objective and subjective approaches of the sects have been taken into consideration.

The actual Armenian documents show that the unchanged bases of the Armenian Church's anti-Arios doctrine have been the Nicean Creed, as well as the universal paternalistic literature and the doctrine of Grigor Loosavoritch. The analysis of the theological, confessional and paternalistic literature of the early Armenian catholicoi and vartabeds proves that the Armenian Church refuted the Arios doctrine with no reservation at all. In fact, the Armenian Church has systematically analysed and rejected the theology of Arios not only from the trinity approach but in the context of Christology and redeeming literature.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ
tatoulm@gmail.com

ՄՈՒՏՔ

Մեր նպատակն է յստակեցնել տնտեսական դիւանագիտութեան դերն այն սպառնալիքների կրճատման եւ վնասազերծման գործում, որոնք ոչ միայն վտանգում են առաջընթացն ու մարդկանց բարեկեցութիւնը, այլեւ կարող են տանել դէպի նոր հակամարտութիւնների հրահրումի, մեկուսացումի, ինչպէս նաեւ խաղաղութեան ու անվտանգութեան խաթարումների, զինուած ընդհարումների եւն.:

Որպէս կանոն, մեր կողմից ուսումնասիրուող սպառնալիքները կրում են ընդհանրական բնոյթ: Իհարկէ, կան նաեւ իւրաքանչիւր ժողովրդի եւ պետութեան առանձնայատկութիւններից բխող սպառնալիքներ կամ դրանց իւրայատուկ դրսեւորումներ: Այնուամենայնիւ, մեր նպատակն է առաջնորդուել ընդհանուրից՝ մասնաւոր սկզբունքով (համաշխարհային մտահոգութիւնից ու մտածողութիւնից դէպի տեղական լուծումներ եւ քայլեր), ինչի արդիւնաւէտ, յաջողակ օրինակները կարող են օգտակար լինել եւ կիրառուել տարբեր երկրներում: Հետեւաբար, մենք կը դիտարկենք համաշխարհային մարտահրաւէրները, շրջանային բնոյթի սպառնալիքներն ու ազգային առաջնահերթութիւնները, որոնք կը ներկայացուեն փոխկապակցուած: Նման ձեւով համընդհանուր սպառնալիքների ներկայացումը թոյլ կը տայ նաեւ ուրուագծել տնտեսական դիւանագիտութեան խնդիրներն ինչպէս տեղական մակարդակով՝ ի շահ տուեալ երկրի եւ ժողովրդի, այլեւ նախանշել գործակցութեան եզրերը տարբեր պետութիւնների եւ միջազգային կառոյցների ջանքերով:

Մինչեւ ԻԱ. դարը, միջազգային գործակցութիւնը կրել է դրուագային բնոյթ, բացառութեամբ Բ. Աշխարհամարտից յետոյ գործադրուած քայլերին՝ միաւորելու տարբեր պետութիւնների ջանքերը եւ ծաւալելու այսպէս կոչուած խորհրդաժողովային տնտեսական եւ քաղաքական դիւանագիտութիւն: Չնայած գործադրուող ջանքերին, քիչ չեն եղել նաեւ ձախո-

ղումները: Այսպէս օրինակ, Մարշալի յայտնի Ծրագրի իրագործումից շատ չանցած պարզ դարձաւ, որ դրա բացասական հետեւանքները որոշ չափով հակակշռում են օգուտները[1]: Սկսուեց «սառը պատերազմի» դարաշրջանը: Նման օրինակները եզակի չեն: Սպառնալիքների եւ վտանգների ընդհանուր բնոյթի գիտակցումը ժամանակ առ ժամանակ ստիպել է նոյն սեղանի շուրջ նստել եւ բանակցել երբեմն նոյն խնդրի լուծման վերաբերեալ տրամագծօրէն հակառակ մօտեցումներ ունեցող կողմերի: Արդիւնքում, արիւնալի պատերազմների պատմութիւն ունեցող երկրների ստուար հատուածի յաջողուել է, գոնէ տարածաշրջանային գործակցութեան եւ տնտեսական համարկման խմբաւորումների մակարդակով, ձեռք բերել երկարատեւ խաղաղութիւն, անվտանգութիւն եւ տնտեսական գործակցութիւն՝ ի շահ ժողովուրդների բարեկեցութեան: Ասուածի վառ օրինակներից է Հռոմի Դաշնագրի ստորագրումը 1957ին, որը հիմք դարձաւ ներկայիս Եւրամիութեան ստեղծման համար: Այսուամենայնիւ, նման օրինակները սահմանափակւում են տարածաշրջանային շահերով:

Ինչ վերաբերւում է համաշխարհային խնդիրներին, ապա դրանք շարունակաբար բարձրաձայնուել են ՄԱԿի եւ դրա հովանու ներքոյ գործող տարբեր կառոյցների ամբիոններից, համաժողովների ժամանակ, սակայն մեծ մասամբ դատապարտուել են ձախողման: Տնտեսական դիւանագիտութեան համաշխարհային ձախողման վառ օրինակներից է 1996ին Հռոմում հրաւիրուած գագաթաժողովը[2], որը նուիրուած էր աշխարհում աղքատութեան եւ սովի կրճատման խնդիրներին: Մասնակից բոլոր զարգացած եւ զարգացող երկրների ղեկավարների կողմից ձեռք բերուեց համատեղ պարտաւորութիւն՝ մինչեւ 2015 աղքատութիւնն աշխարհում կրճատել կիսով չափ: 2015ին պարզ դարձաւ, որ ոչ միայն չի յաջողուել կեանքի կոչել նման բարձր մակարդակում ձեռք բերուած համաձայնութիւնը, այլեւ աւելին՝ աղքատութիւնն աշխարհում կտրուկ աճ է արձանագրել, ինչը յանգեցրել է այլ սպառնալիքների աւելացման: Մենք այն համոզման ենք, որ աղքատութեան կրճատման համար աշխարհում առկայ աղբիւրներն աւելի քան բաւարար են նման խնդիր լուծելու համար: Խնդիրն աւելի շատ գործընթացները ճիշտ կազմակերպելու մէջ պէտք է փնտռել: Այլ խօսքով՝ բաւարար կերպով չի օգտագործուել նաեւ տնտեսական դիւանագիտութեան բազմադարեայ եւ ժամանակակից զինանոցը:

Բարեբախտաբար, նոր հազարամեակի մեկնարկին 191 երկրների յաջողուեց համաձայնութեան գալ Հազարամեակի Նպատակների ձեւա-

կերպման առումով, ինչը թոյլ տուեց ստորագրել եւ, ընդհանուր առմամբ, յաջողութեամբ կեանքի կոչել Հազարամեակի Հռչակագիրը[3]: Ի թիւս այլ երկրների, Հայաստանի Հանրապետութիւնը խոստացաւ մինչեւ 2015 իրագործել տեղայնացուած նպատակները.-

1. Ծայրայեղ աղքատութեան եւ սովի վերացում. 2. Տարրական ընդհանուր կրթութեան ապահովում. 3. Սեռոյթի (գենդերային) հաւասարութեան խթանում եւ կանանց լիազօրութիւնների ընդլայնում. 4. Երեխաների մահացութեան նուազեցում: 5. Մայրական առողջութեան բարելաւում. 6. Պայքար ՄԻԱՎ/ՁԻԱՀի, մալարիայի եւ այլ հիւանդութիւնների դէմ. 7. Շրջակայ միջավայրի պահպանման ապահովում. 8. Զարգացման նպատակով համաշխարհային գործակցութեան ձեւաւորում[4]:

Նատենք, որ 2015ին, հաշուի առնելով առաջ եկած համաշխարհային նոր մարտահրաւէրները, ՄԱԿն ընդունեց կայուն զարգացման աւելի մեծ թուով նպատակներ.

1. Ամէնուրեք վերացնել աղքատութիւնը. 2. Սովը, պարենային ապահովութեան ու գիւղատնտեսութիւն. 3. Առողջ կեանք. 4. Որակեալ կրթութիւն բոլորի համար, 5. Սեռոյթի հաւասարութեան. 6. Ջրի ու մաքրութեան պայմաններ. 7. Ուժանիւթի հասանելիութիւն. 8. Համապարփակ ու կայուն տնտեսական աճ, զբաղուածութիւն. 9. Դիմակայուն ենթակառուցուածքներ, արդիւնաբերութիւն, նորարարութիւն. 10. Կրճատել անհաւասարութիւնը երկրների ներսում եւ դրանց միջեւ. 11. Քաղաքները դարձնել անվտանգ եւ կայուն. 12. Ապահովել սպառման եւ արտադրութեան կայուն մոդէլներ. 13. Ձեռնարկել անյապաղ գործողութիւններ՝ կլիմայի փոփոխութեան եւ դրա ազդեցութիւնների դէմ. 14. Ապահովել ովկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանութիւնը եւ կայուն օգտագործումը՝ յանուն կայուն զարգացման. 15. Պահպանել, վերականգնել եւ խթանել ցամաքային կենսոլորտահամակարգի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կառավարումը, պայքարել անապատացման դէմ, դադարեցնել եւ շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանութեան կորուստը. 16. Խթանել խաղաղ եւ ներառական հասարակութիւնների կառուցումը՝ յանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարութիւնը, բոլոր մակարդակներում ստեղծել արդիւնաւէտ, հաշուետու եւ ներառական հաստատութիւններ. 17. Աշխուժացնել համաշխարհային գործընկերութիւնը՝ յանուն կայուն զարգացման[5]:

Դժուար չէ նկատել, որ Հազարամեակի Նպատակներն ամբողջովին կրկնւում են Կայուն Զարգացման Նպատակներում (ԿԶՆ), ինչը վկայում է որ, նախ, դրանք մնում են առաջնահերթութիւնների շարքում, միաժամանակ՝ չեն իրագործուել պետութիւնների կողմից եւ դրանց ուղղութեամբ աշխատանքներն անբաւարար են: Հետեւաբար՝ անարդիւնաւէտ են գործում կիրառուող կառուցակարգերը: Տնտեսական դիւանագիտութեան հա-

մար խիստ կարեւոր են յստակ ձեւակերպուած մարտահրաւէրները, որոնք ընդհանրական բնոյթ են կրում աշխարհով մէկ, ինչը դիւանագէտներին օգնում է ունենալ միմեանցից չտարբերուող օրակարգ, որն, իր հերթին, հնարաւորութիւն է ընձեռում համագործակցել ուսանելի փորձը փոխանակելու եւ համատեղ ուժերով պայքարելու բազմաթիւ աղէտների եւ խնդիրների դէմ: Այն նաեւ հնարաւորութիւն է տալիս աւելի արդիւնաւէտ օգտագործել առկայ մարդկային, բնական, արտադրական եւ ֆինանսական աղբիւրները՝ համաշխարհային անվտանգութեան ապահովման նպատակով:

Ստեղծուած պայմաններում տնտեսական դիւանագիտութիւնը կարեւոր գործիք է, որը կարելի է օգտագործել պետութիւնների կողմից արտաքին քաղաքականութեան իրականացման համար. այդ քաղաքականութիւնը ձեւաւորւում է հենց դրա կողմից, այդ իսկ պատճառով: Մարտահրաւէրների յաղթահարման գործում տնտեսական դիւանագիտութիւնը կարող է եւ լինել համեմատաբար աւելի «ցածր» քաղաքականութեան մակարդակում՝ երկու կամ միքանի երկրների միջեւ մերձեցման առաջին փուլը, հիմք դնելով յետագայ գործակցութեան եւ իւրաքանչիւր կողմի համար անհատապէս զարգացնելով տնտեսական մրցունակութիւնը: Մասնաւորապէս, պետութիւնը կարող է իր ազդեցութիւնը գործադրել սեփական շահերն առաջ տանելու՝ սկզբում տարածաշրջանում, ապա՝ միջազգային համակարգում, քանի որ տնտեսական դիւանագիտութիւնը զարգացող կամ զարգացած պետութիւնների հետ յարաբերութիւններում սեփական ներուժի դրսեւորման, խոցելի կողմերի յաղթահարման ամենայարմար միջոցներից մէկն է:

Ներկայումս արտաքին առեւտուրը, մրցակցային առաւելութիւնների իրացումը տարբեր տնտեսական դաշինքների միջոցով կարեւոր են տնտեսական դիւանագիտութեան իրականացման համար, բայց բաւարար չեն պատերազմներ կանխելու, ճգնաժամեր կամ հակամարտութիւններ սանձելու համար: Փոխարէնը՝ պետութիւնները շարունակում են հանդէս գալ որպէս խիստ բանական եւ ինքնիշխան դերակատարներ՝ նոյնիսկ իրենց քաղաքական, տնտեսական կամ ռազմական դաշինքների ներսում, որի արդիւնքում ժամանակ առ ժամանակ շահերի բախումներ են առաջանում, երբ խմբաւորումների ներսում առաջ են գալիս ինքնիշխանութեան աւելի բարձր պահանջներ: Ասուածի վառ օրինակներից է Եւրամիութեան հիմնադիր անդամներից Միացեալ Թագաւորութեան պահանջներն ու շահերի շարունակական բախումները միւս 27 երկրների հետ, ինչն ի վերջոյ, յանգեցրեց յայտնի Brexit անուանումը ստացած քաղաքատնտեսական

հանգուցալուծման[6]: Մէկ այլ օրինակ է բրիտանա-իսպանական հակամարտութիւնը, երբ առկայ դաշինքներն այդպէս էլ չնպաստեցին իրենց յարաբերութիւնների ամրապնդմանը ԵՄում երկկողմ արտաքին առեւտրի, բազմակողմ առեւտրային համաձայնագրերի միջոցով:

Ի վերջոյ, տնտեսական դիւանագիտութիւնն ինքնին չի կանխորոշում պետութեան անվտանգութիւնը: Ընդհակառակը, տնտեսական դիւանագիտութիւնը անվտանգութեան զգացողութեան օրինակ է եւ այն ծառայում է պետութեան անվտանգութեան ապահովման գործին: Աւելին՝ հակամարտութեան իրավիճակներում տնտեսական դիւանագիտութիւնն աւելի մեծ դեր ունի տնտեսական շահերով միջնորդուած «ճնշում» բանեցնելու մէջ՝ որպէս սպառնալիք ակնկալող կողմի գործիք եւ ինքնուրոյն չի գործում, որպէսզի կարողանայ փոխել աւելի բարձր մակարդակում իրականացուող քաղաքական յարաբերութիւնները: Նման գործիքների օրինակ է գազային դիւանագիտութիւնը:

ՀՀն ԵՒ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կարեւոր է, որ պետութիւններն այս ամենը հաշուի առնեն ԿԶՆի իրագործման տեսանկիւնից: Հայաստանի պարագայում հարկ է նկատել, որ դեռեւս անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում ժամանակակից մարտահրաւէրներին եւ դրանց յաղթահարման գործում պետութեան ներքին դիւանագիտութեան դերին: Այդ մարտահրաւէրներից ամենաէական՝ ծայրայեղ աղքատութեան եւ սովի վերացման ուղղութեամբ ՀՀն հիմնականում կատարել է սահմանուած ցուցանիշերի միայն կէսը, իսկ մնացածը դեռ պէտք է կատարուի: 2000ականներին ծայրայեղ աղքատութիւնն ու սովն էապէս նուազել են, սակայն աղքատութեան մակարդակը դեռ բարձր է: Ըստ Ազգային Ժեկոյցի, 2004ից սկսած, թերսնուած (ծայրայեղ աղքատ) անձանց թիւը կրճատուել է 1.6 անգամ՝ կազմելով է 2.7% 2013ին[7]: Ներկայումս բնակչութեան գրեթէ մէկ երրորդը շարունակում է մնալ աղքատ: Աղքատներ են համարուում օրական 3.2 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցողները, իսկ ծայրայեղ աղքատներ՝ օրը 1.9 ԱՄՆ դոլարից պակաս ունեցողները: Միաժամանակ, 2000ին սկսած թերսնուած եւ թերաճ մինչեւ հինգ տարեկան երեխաների թիւն աճել է, իսկ 2010ից նրանց 5%ը թերքաշութիւն ունի, 19%ը՝ թերաճ է: Մտահոգիչ է այն փաստը, որ երեխաների աղքատութեան մակարդակը գերազանցում է ազգային միջին ցուցանիշը 5.3 տոկոսով (2008ի համեմատ՝ 25%): Արդիւնաւէտ

զբաղուածութեան եւ պատշաճ աշխատանքի ապահովման տուեալները եւս բարուօք չեն. թէեւ 2005-14՝ երկրում գործազրկութեան մակարդակը 31.2%ից իջել է 17.6%ի, աշխատանքային աղբիւրների մօտ 40%ը տնտեսապէս ոչ-գործուն է, իսկ 25-29 տարեկանների 40.4%ը եւ 15-24 տարեկանների 37.2%ը դպրոցում կամ այլ ուսումնական հաստատութիւններում չեն սովորում եւ աշխատանք չունեն[8]: 2020ին երկրի զբաղուածների մօտ մէկ երրորդը աղքատ է, միջին խաւի օրը 4 ԱՄՆ դոլարից աւելի սպառողների տեսակարար կշիռը բնակչութեան մէկ երրորդից աւելին է, որն արդիւնք է տնտեսութեան անբաւարար մրցունակութեան, ինչն, իր հերթին, կարիք ունի արհեստավար տնտեսական դիւանագիտութեան գործիքակազմի կիրառման: Դրա մասին է վկայում նաեւ աղքատութեան կրճատմանը միտուած համադրելի վիճակում գտնուող երկրների, օրինակ՝ Ղազախստանի, Բելառուսի եւ Վրաստանի փորձը:

2020ի դրութեամբ ՀՀում աղքատ է 700,000 մարդ: Նրանք ամսական ծախսում են ամենաշատը 42 հազար դրամ: Ծայրայեղ աղքատները 30 հազար են, նրանց ամսական ծախսը 24 հազար դրամ է: 2019ի վերջին աղքատութեան մակարդակը կազմել է 23.5%՝ նախորդ տարուայ համեմատ արձանագրելով աղքատութեան մակարդակի 2.2% նուազում: ՀՀում աղքատ է ամէն չորրորդը: Միջին հանրապետական ցուցանիշից աւելի բարձր աղքատութեան պատկեր է մարզերից 5ում, 42% աղքատութեամբ Շիրակը տարիներ շարունակ առաջին տեղում է: Տարիքային խմբերից երեխաներն ամենաաղքատն են, բազմազաւակ ընտանիքները նոյնպէս: Եթէ ծայրայեղ աղքատները նպաստ չստանան, ծայրայեղ աղքատութիւնը 1%ից կը դառնայ 19%: «*Աղքատութեան յաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63,2 միլիարդ դրամ*»: Իսկ ծայրայեղ աղքատութիւնը հնարաւոր է վերացնել մէկ միլիարդ դրամով: Հարցուածների կէսից աւելին չի կարող տունը տաքացնել կամ օրումէջ մսով կերակուր ուտել[9]:

Աղքատութեան յաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացումն իրականում ձախողուել է ոչ միայն ներքին, այնպէս էլ արտաքին տնտեսական ցնցումներից: Միաժամանակ, ըստ Ազգային Ձեկոյցի, կառավարութեան թիրախաւորած նպատակները թերի են իրականացուել ոչ միայն արտաքին ցնցումներով՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամ, Ռուսաստանում տնտեսական անկում, տնտեսական եւ ընկերային հետեւանքներ, այլեւ ցածր արդիւնաւէտութեամբ կառավարման համակարգի առկայութեամբ:

Կարելի է արձանագրել, որ 2000ականներին գրանցուած տնտեսական աճն իր բնոյթով չի եղել ներառական, հետեւաբար, որեւէ կերպ չի ծառայել աղքատների շահերին, ինչի մասին են վկայում փաստերն առ այն, որ երկրի բնակչութեան աւելի քան մէկ երրորդը դեռեւս աղքատ է, չնայած բնակչութեան ընդհանուր սպառումն աճել է 0.9%ով, աղքատների սպառումը նուազել է 0.5%ով, զբաղուածութեան մակարդակն աւելի ցածր է աղքատների շրջանում, իսկ պաշտօնական վիճակագրութեան համաձայն, մինչեւ 2015 զգալիօրէն նուազել է նաեւ բնակչութեան ամենաաղքատ խմբի մասնաբաժինն ազգային սպառման մէջ, ինչը վկայում է բնակչութեան խմբերի միջեւ տնտեսական աճի անհաւասար բաշխման մասին: Վերջապէս, տնտեսական դժուարութիւնների պատճառով կրթական համակարգում աղքատների ընդգրկուածութեան մակարդակն աւելի ցածր է: Չնայած այն հանգամանքին, որ ընկերային ծրագրերը որոշակիօրէն միտուած են եղել աղքատութեան եւ յատկապէս ծայրայեղ աղքատութեան դէմ ուղղուած պայքարին, սակայն դրանք բաւարար չեն եղել աղքատութեան կրճատման կայուն ընթացքն ապահովելու համար: Ներկայիս կարեւոր խնդիրներից է գրանցել ներառական տնտեսական աճ, ինչը կը բարելաւի բնակչութեան ընկերային պայմանները եւ կը կրճատի աղքատութեան բարձր մակարդակը[10]:

Անհանգստացնող եւ ահազանգող նշան է դարձել այն իրողութիւնը, որ 2000ից իվեր արձանագրուել է թերսնուած եւ թերաճ մինչեւ հինգ տարեկան երեխաների մասնաբաժնի աճ: Մինչեւ հինգ տարեկան երեխաները կազմում են հասարակութեան առաւել անապահով եւ խոցելի խմբերից մէկը, իսկ նրանց հետ կապուած խնդիրները պէտք է առաջնահերթութիւն ստանան աղքատութեան կրճատմանն ուղղուած պայքարում: Բացի այդ, կարեւոր է, որ ՀՀում առաջնահերթութիւնը տրուի պարենային ապահովութեանը եւ ապահովուի բոլորի համար սննդի հասանելիութիւնը[11]: Միւս կողմից, աղքատութեան կրճատման, կրթութեան, առողջապահութեան, ինչպէս նաեւ սեռոյթի եւ ընկերային հաւասարութեան ոլորտներում իրագործուող բոլոր ծրագրերի ֆինանսաւորման ապահովումը ուղղակիօրէն պայմանաւորուած է երկրի տնտեսական առաջընթացից: Վերջին տարիներին օտարերկրեայ ուղղակի ներդրումների, արտադրութեան ծաւալների, արտահանման եւ այլ տնտեսական ցուցանիշերի վատթարացումը հանգեցրել է պետական եկամուտների նուազեցմանը, հետեւաբար՝ ընկերային ծրագրերի համար նախատեսուած նիւթական միջոցների նուազման:

Ազգային Ժեկոյցի համաձայն, համընդհանուր տարրական կրթութեան ապահովման գծով ՀՀն կատարել է սահմանուած հինգ ցուցանիշերից մէկը: Ընդհանուր առմամբ, ՀՀում կրթական համակարգում ընդգրկուածութեան մասնաբաժինը բարձր է, ընդ որում՝ գրեթէ ամբողջ բնակչութիւնը գրագէտ է եւ ստացել է որոշակի մակարդակի կրթութիւն: Կրթութիւնը հասանելի է ինչպէս տղաների, այնպէս էլ աղջիկների համար, թէեւ աւագ դպրոցում եւ բուհերում սովորող աղջիկների տոկոսն աւելի բարձր է: Կրճատուել է բուհերում համախառն ընդգրկուածութեան ցուցանիշի տարբերութիւնն աղքատների եւ ոչ-աղքատների միջեւ: 2005-13՝ աղքատների ընդգրկուածութիւնը՝ իբրեւ որպէս ոչ-աղքատ բնակչութեան տոկոս, 26%ից հասել է 51%, սակայն չեն կատարուել տարրական եւ աւագ դպրոցներում ընդգրկուածութեան մասնաբաժնի եւ պետական ամավարկից համապատասխան յատկացումների ցուցանիշերը: 2014ին պետական ֆինանսաւորման մակարդակը կազմել է 2.4%, որն աւելի ցածր է քան 2000ին գրանցուած մակարդակը[12]: Դպրոցներում, մասնաւորապէս աւագ դպրոցներում ընդգրկուածութիւնը կրճատուել է, իսկ դուրս մնացած աշակերտների տոկոսն աճել է: Բացի այդ, 2010-13՝ աւագ դպրոցներում ընդգրկուածութեան մակարդակը 84.4%ից նուազել է 72.4%ի[13]:

Վերջին տարիների զարգացումները վկայում են, որ տասներկուամեայ կրթական համակարգը ոչ միայն չի կայացել դասագրքերի, ծրագրերի որակի եւ գիտելիք հաղորդողների որոշ հատուածի պատրաստուածութեան տեսանկիւնից, այլեւ ընկերային արդարութեան սկզբունքի եւ հասարակութեան բեւեռացուածութեան հետեւանքով անապահով ընտանիքների երեխաների համար որակեալ կրթութեան մատչելիութեան տեսանկիւններից: Եթէ միջին եւ միջինից բարձր խաւի ընտանիքները կարող են իրենց թոյլ տալ արտաժամեայ մասնաւոր պարապմունքների միջոցով լրացուցիչ գիտելիքների տրամադրումը երեխաներին, ապա բնակչութեան մէկ երրորդից աւելին կազմող աղքատ ընտանիքների երեխաները գործնականում զրկուած են այդ հնարաւորութիւնից: Սա, իր հերթին, բացասաբար է անդրադառնում այդ երեխաների բուհ ընդունուելու իրական հնարաւորութիւնների վրայ թէ՛ գիտելիքների որակի՝ թէ՛ ուսման վարձի վճարման անհնարինութեան տեսանկիւններից: Արդիւնքում՝ բնակչութեան առաւել հարուստ խմբերի ընդգրկուածութեան ցուցանիշը բուհերում եռապատիկ աւելին է ամենաաղքատ խմբերի համեմատ: Զարմանալի չէ, այս իմաստով, որ դպրոցներից դուրս մնացածների մէջ գերակշռում են

աղքատ ընտանիքների երեխաները: Ի տարբերութիւն Ռուսաստանի, Բելառուսի եւ մի շարք այլ երկրների, ՀՀում չի կիրառւում աղքատ ընտանիքների երեխաների ուսման պետական նպաստաւորումը կամ պարտադիր 12ամեայ հանրակրթութիւնը բոլորի համար:

Տնտեսական դիւանագիտութեան խողովակներով եւ միջոցներով միջազգային առաջաւոր փորձի տեղայնացման անարդիւնաւէտութեան հետեւանք է նաեւ այն, որ մինչ օրս չեն իրագործուել նաեւ սեռոյթի հաւասարութեան եւ կանանց լիազօրութիւնների ընդլայնման նպատակները: Աշխատանքի վարձատրութեան հարցում սեռոյթի խտրականութիւնը պահպանւում է, որի փաստն այն է որ կանանց զբաղուածութեան մակարդակը կազմում է մօտ 40%, տղամարդկանց զբաղուածութիւնը 60%ից աւելին է[14]: Բացի այդ, չնայած սեռոյթի հաւասարութիւնն ամրագրուած է ՀՀ սահմանադրութեամբ եւ գործող օրէնքներով, կանայք հազուադէպ են ընդգրկւում որոշումների կայացման գործընթացներում՝ հանրային կեանքի բոլոր ոլորտներում: Բացառութիւն է, թերեւս, ՀՀ Ազգային Ժողովում կանանց ներգրաւուածութիւնը, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում այն տատանւում է 2%ի սահմաններում: Փորձագէտների վկայութեամբ, նման իրավիճակի հիմքում քիչ չեն պատմական կամ մշակութային գործօններ, որոնց յաղթահարումը ենթադրում է պետութեան, գործարար շրջանակների եւ քաղաքացիական հանրութեան համաձայնեցուած քայլեր եւ միջոցառումներ: Ներքին տնտեսական դիւանագիտութեան դերն այս հարցում կարող է դրսեւորուել, մասնաւորապէս, ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերի նախարարութեան, գործարար շրջանակների հետ բանակցութիւններ՝ աշխատանքի տեղաւորման հարցում այլ հաւասար պայմանների դէպքում կանանց եւ աղջիկներին որոշակի նախապատուութիւն տալու ծրագրեր մշակելու, գործատուներին՝ աշխատանքի եւ վարձատրութեան աւելի բարենպաստ պայմաններ ձեւաւորելու եւ այլ հարցերի առնչութեամբ: Աւելին, աշխուժ ներքին տնտեսական դիւանագիտութեան, միջազգային կառոյցների հետ համագործակցութեան արդիւնքում ՀՀ ազգային ժողովին կարելի ներկայացնել օրէնսդրական նախաձեռնութիւններ՝ յիշեալ հարցերի օրէնսդրական կարգաւորման ուղղութեամբ:

ՀՀում մտահոգիչ է եւ նորածինների սեռերի անհամամասնութիւնը. Հայաստանում նորածինների սեռերի անհաւասարութեան աճ է գրանցուել անկախութեան ձեռքբերումից իվեր եւ, ըստ առկայ գնահատումների, 2011

թուականին կազմում էր 114 տղայ նորածին՝ իւրաքանչիւր 100 աղջիկ նորածնի հաշուով: Հայաստանում ակներեւ է նախածննդեան փուլում սեռի ընտրութեան հետեւեալ երեք նախապայմանների առկայութիւնը՝ հայաստանեան հասարակութեան հայրիշխանական կառուցուածքը, որը միտուած է տղաներին գերադասելու աղջիկներից, նախածննդեան տեխնոլոգիաների հասանելիութիւնը, որը յղիութեան արհեստական ընդհատման հնարաւորութեան հետ միասին ապագայ ծնողներին թոյլ է տալիս խուսափել ոչ-ցանկալի աղջիկ ունենալուց եւ ծնելիութեան ցածր մակարդակով պայմանաւորուած՝ զոյգերի վերարտադրողական նպատակների փոփոխումը[15]:

Բացի այդ, սեռոյթի հիմքով բռնութիւնը նաեւ պայամանաւորուած է հասարակութիւնում կանանց զբաղեցրած ցածր դիրքով, ինչպէս նաեւ նրանց տնտեսական կախուածութեամբ: ՀՀում ֆիզիկական եւ հոգեբանական բռնութեան, վերահսկողական վարքի եւ հաւանաբար նաեւ սեռական բռնութեան ամենամեծ մասը բաժին է ընկնում մտերիմ զուգընկերոջը[16]: Ինչ վերաբերւում է մանկամահացութեանն, ապա այս ցուցանիշով ՀՀն հիմնականում իրագործել է սահմանուած թիրախը: Վերջին տասը տարիներին երեխաների ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ եւ խոզուկ)[17] պատուաստումները կազմել են ընդհանուր թուի 97%ից աւելին: ՀՀ առողջապահութեան նախարարութեան տուեալների համաձայն, մանկամահացութեան մակարդակը դեռ զիջում է ԵՄ երկրներին:

Միւս թիրախը՝ մայրական առողջութեան բարելաւումն ամբողջովին յաջողուել է ապահովել բարձրորակ բուժանձնակազմով ծնունդների եւ նախածննդեան բուժօգնութեան տրամադրման առումներով: Մասնաւորապէս, 2004-14ին 100,000 նորածնի մայրերի մահացութեան ցուցանիշը կրճատուել է 26.7ից՝ 18.6ի եւ կարիք ունի յետագայ նուազման: Տնտեսական դիւանագիտութեան դերն այս առումով ենթադրում է այլ պետութիւնների հետ արդիւնաւէտ գործակցութիւն, արտերկրում ՀՀից համապատասխան մասնագէտների վերապատրաստման կազմակերպում, միջազգային գործընկերութեան միջոցով առողջապահական ծառայութիւնների մատուցման բարձր որակի ապահովման աջակցութիւն, ինչպէս նաեւ բուժծառայութիւն մատուցողների եւ ծնողների միջեւ հաղորդակցման մեծացմանն ուղղուած միջոցառումներ, ծնողներին անհրաժեշտ գիտելիքների փոխանցում-իրազեկում, յատկապէս՝ հեռաւոր գիւղական շրջաններում[18]:

Միւս մարտահրաւէրը ՄԻԱՎ/ՁԻԱՀի, մալարիայի եւ այլ հիւանդութիւնների դէմ պայքարն է, որը եւս կարելի է արդիւնաւէտ գնահատել. կա-

տարուել են սահմանուած վեց ցուցանիշից երեքը, իսկ միւսների մասով գրանցուել է առաջընթաց, որը պայմանաւորուած է նրանով, որ բոլոր ՄԻԱՎ վարակակիրներին հնարաւորութիւն է ընձեռնուել օգտագործել *հակառետրովիրուսային* դեղեր, թոքախտով վարարակիրները բուժուել են անմիջական հսկողութեամբ իրականացուող բուժմամբ, մալարիայի գծով Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը ՀՀն ճանաչել է յիշեալ հիւանդութիւնից զերծ տարածք[9]: Միւս կողմից, թոքախտով դէպքեր դեռ գրանցւում են, իսկ ՄԻԱՎ վարակակիրների թիւը 15-24 եւ բարձր տարիքի անձանց շրջանում բարձր է նաեւ այդ հիւանդութեան մասին գիտելիքների անբաւարար մակարդակի պատճառով (բնակչութեան իրազեկուածութեան մակարդակը 22.4% է, ՄԻԱՎի դէպքերի 67.3%ը գրանցուել է բնակչութեան առաւել վտանգուած խմբերի շրջանակից դուրս):

ՁԻԱՀի եւ թոքախտի հակազդման ուղղութեամբ ծախսերը նուազել են կիսով, իսկ այդ հիւանդութիւնների առողջապահական կենտրոններն աւելի հզօրացնելու փոխարէն, միաւորել են: Վերջին տասնամեակում յիշեալ հիւանդութիւնների գծով վարարակիրների թիւը մեծացել է, ինչը պայմանաւորուած է նաեւ արտագնայ աշխատանքով զբաղուողների բարձր շարժունակութեամբ եւ էժան աշխատուժ գնահատուող այլ երկրի քաղաքացիների՝ ՀՀ ժամանելու համեմատաբար բարձր հոսքերով, որոնք հիւանդութեան հիմնական ներբերողներն են (շուրջ 75%): Պետութեան, մասնաւորապէս, տնտեսական դիւանագիտութեան դերն է ուսումնասիրել աշխատանքային գաղթի նոր միտումները եւ իրազեկել, որ դրա մակարդակն ապագայում չի նուազելու: Ուրեմն, ՄԻԱՎ եւ այլ վարակների կրճատման նպատակով պէտք է ձեռնարկել վաղաժամ ախտորոշում, կանխարգելիչ գործողութիւններ՝ իրազեկուածութեան եւ գիտելիքների բարձրացում բնակչութեան առաւել վտանգուած եւ այլ խմբերի համար, ՄԻԱՎի յայտնաբերման դէպքում կատարել հետազօտութիւններ եւ պահանջուող մասնագիտական խորհրդատուութիւն: Տնտեսական դիւանագիտութեան աջակցութիւնը կարող է դրսեւորուել փոխանցուող վարակի, ներառեալ 2020ին գլուխ բարձրացրած COVID-19ի գծով արտերկրի առողջապահական կենտրոնների հետ գործակցութեան հարթակների ապահովումը, դրանց յաղթահարման համար բուժծառայութիւնների մակարդակի բարձրացումը, բնակչութեան բոլոր, յատկապէս՝ խոցելի խմբերի իրազեկուածութեան բարձրացումը, հաղորդակցութեան ձեւերի բարելաւումը, միջազգային արդիւնաւէտ փորձի տեղայնացմանն աջակցութիւնը եւն.: Սա

պէտք է ձեւակերպուի որպէս խնդիր արտերկրում գործող ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւնների համար՝ համագործակցելու միջազգային կազմակերպութիւնների, արտերկրի առողջապահական հաստատութիւնների, Սփիւռքում բնակուող բժիշկների եւ բժիշկների տարբեր միաւորումների հետ եւ աջակցելու համավարակի յաղթահարմանը:

Տնտեսական դիւանագիտութեան գործիքակազմի օգտագործման անհրաժեշտութիւնն առկայ է շրջակայ միջավայրի անվտանգութեան ասպարէզում, քանի որ իրականում այս ոլորտի մարտահրաւէրները չեն սահմանափակւում մէկ երկրի տարածքում տարուող աշխատանքներով եւ հարեւանների հետ ջանքերի համադրման կարիք է զգացւում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ բազմաթիւ խնդիրներ մնում են չլուծուած, թէեւ ՀՀն 16 թիրախներից 9ի գծով շօշափելի առաջընթաց է արձանագրել.- 1) յատուկ պահպանուող տարածքների մակերեսի աճ (մինչեւ ընդհանուր տարածքի 13%ը), 2) Սեւանայ լճի մակարդակի բարձրացում աւելի քան չորս մետրով եւ լճի ջրային աղբիւրների մաքրութեան բարելաւում, 3) կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում. 2012-15՝ կառուցուել է վեց կայան, 4) քաղաքային եւ գիւղական շրջանների բնակչութեան ջրամատակարարման բարելաւում. 17ժամեայ ջրամատակարարում Երեւանից դուրս գտնուող քաղաքային եւ գիւղական շրջանների տնային տնտեսութիւնների համար (2005ին այդ ցուցանիշը կազմել է 7.4 ժամ):

Վերջին տասնհինգ տարիներին ՀՀ անտառների տարածքը կրճատուել է 11.2%ից 9%ի, ինչը շարունակուելու միտում ունի, եթէ չձեռնարկուեն համարժէք բնապահպանական միջոցառումներ: Ներկայումս երկրի բնակչութեան մօտ մէկ երրորդը զրկուած է բարեկարգ կոյուղուց օգտուելու հնարաւորութիւնից[20]: Մեր մասնակցութեամբ մշակուած ՀՀ 2014-25ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրուած է, որ «*փնտրեսական աճի բարձր տեմպերին միտուած ՀՀ կառավարութեան ջանքերի հետ միասին հնարաւորինս նուազեցուեն բնապահպանական տեսանկիւնից առաջացող ռիսկերը*»[21], նշուած են զգուշացումներ բնապահպանական հետեւեալ վտանգների վերաբերեալ. Հանքարդիւնաբերութեան ոլորտի ընդլայնում, ապօրինի անտառահատումներ, ջրային աղբիւրների գերշահագործումը՝ պայմանաւորուած ստորերկրեայ ջրային աղբիւրներ օգտագործող ենթաճիւղերի արագ զարգացմամբ եւ կլիմայի փոփոխութեամբ եւ անապատացման վտանգի աճ: Բնապահպանական սպառնալիքները նշուածով չեն սահմանափակւում եւ պահանջում են

յատուկ ուշադրութիւն. Սեւանայ լճի վիճակի կառավարում (այդ թւում՝ դրա բուսական ու կենդանական աշխարհը եւ ջրի որակը՝ լուծուած թթուածնի պարունակութիւնից զատ), անտառների արդիւնաւէտ մշտադիտարկում ու կառավարում, կենսաբանական բազմազանութեան մշտադիտարկում ու կառավարում, յատուկ պահպանուող տարածքների մշտադիտարկում ու կառավարում, բնապահպանական կանոնների մշտադիտարկում ու կենսագործում, ջրերի եւ հողերի մշտադիտարկում ու մաքրում, յատկապէս՝ հանքարդիւնաբերական ոլորտի ձեռնարկութիւններ ունեցող համայնքներում, ինչպէս նաեւ սխալ գիւղատնտեսական մեթոդների պատճառով վատթարացած հողակտորներում, արդիւնաբերական աղտոտուածութիւնը ու կոշտ թափօնների կառավարումը եւ միջավայրի վերաբերեալ կրթութեան ու իրազեկութեան բարձրացման յատուկ շեշտադրումը: Կառավարութեան կողմից ընդունուած, բայց չիրագործուած Հեռանկարային Զարգացման Ծրագրում ներառուած են նաեւ օրէնսդրական բարեփոխումներ, տնօրինման եւ կառավարման կարողութիւնների բարձրացում (այդ թւում՝ յատուկ պահպանուող տարածքների, անտառների եւ ջրային աւազանների պարագայում), բնապահպանական վճարների դրոյքաչափերի բարձրացում, Սեւանայ լճում աշխատանքների շարունակութիւն, «կանաչ» նորարարական մօտեցումների խթանման իրաւական կառուցակարգերի ստեղծում եւ կրթութեան եւ իրազեկութեան բարձրացում: Տնտեսական դիւանագիտութեան խնդիրն այս պարագայում պետութեան, գործարար շրջանակների եւ այլ շահառուների, շահագրգիռ կողմերի հետ հետեւողական աշխատանքն է, այս հարցերում միջազգային կազմակերպութիւնների ներգրաւուածութեան ապահովումը, նպատակների իրագործման համար անհրաժեշտ ներդրումների խթանումը:

Վերջապէս, տնտեսական դիւանագիտութեան ներգրաւուածութեան առումով առաւել կարեւորւում է այնպիսի էական մարտահրաւէր եւ նպատակ, ինչպիսին է արդէն քննարկուած նախորդ նպատակների իրագործման շուրջ միջազգային գործակցութեան ծաւալումը: Մասնաւորապէս, կարեւոր է տեղեկատուութեան եւ հաղորդակցման արհեստամիջոցների հասանելիութեան ապահովումը համակարգիչների օգտագործման, բջջային հեռախօսների ծառայութիւններին բաժանորդագրութեան եւ համացանցի օգտագործման մասով, ինչը մեծ մասամբ արդիւնաւէտ է իրականացուել ՀՀում: Միւս կողմից, թէեւ, մեր դիտարկմամբ, վերջին տարիներին ՀՀն որոշ չափով բարելաւել էր կառավարման որակը, ժողո-

վրդավարական հաստատութիւնները եւ խօսքի ազատութիւնը, մտահոգիչ է անարդիւնաւէտ աշխատանքը՝ մամուլի ազատութեան, կառավարութեան արդիւնաւէտութեան, դրա հաշուետուութեան, կարգաւորման որակի եւ օրէնքի գերակայութեան, փտախտի վերահսկողութեան ու ընկալման առումներով:

Ակնյայտ է, որ յիշեալ ցուցանիշերը ոչ միայն ՀՀ տնտեսութեան, ժողովրդավարութեան եւ ներքին խնդիրներին են առնչւում, այլեւ արտաքին յարաբերութիւններին, եւ, ընդհանուր առմամբ, երկրի միջազգային հեղինակութեանն ու վարկանիշին: Հետեւաբար, տնտեսական դիւանագիտութեան թիրախներում կարեւոր է ներառել քաղաքացիական հասարակութեան զարգացման, ազգային տնտեսութեան մրցունակութեան եւ տնտեսական անվտանգութեան հարցերը:

Տնտեսական մարտահրաւէրների վնասազերծման տեսանկիւնից կարեւոր է ուսումնասիրել, թէ ինչպէս կարելի է օգտագործել տնտեսական աղբիւրներն ու դրանց շուրջ ձեւաւորուող յարաբերութիւնները՝ ուսումնասիրելու հնարաւոր հակամարտութեան եւ առեւտրի խաթարմանն առնչուող ծախսերն, ինչպէս նաեւ համագործակցային առաւելութիւններն իրացնելու, մասնաւորապէս, քաղաքական կայուն յարաբերութիւններ ձեւաւորելու եւ տնտեսական անվտանգութեան մակարդակը բարձրացնելու նպատակով: Պատմութիւնը վկայում է, որ արդիւնաւէտ են յատկապէս ժողովրդավարութեան միջոցով Եւրոպայի նախկին մենատիրական կառավարման համակարգ ունեցող երկրներում համատեղ ջանքերով անվտանգութեան միասնական համակարգի ձեւաւորման օրինակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ժամանակակից պայմաններում տնտեսական մարտահրաւէրները տակաւ աճում են եւ դրանց դէմ պայքարում կիրառուող գործիքակազմը կարիք ունի որոշակի տարբերակայնացման: Ընդհանուր առմամբ, միջազգային անվտանգութեան պարագայում պարզ է դառնում, որ տնտեսական դիւանագիտութիւնը կենսունակ դեր ունի եւ կարող է ապահովել վտանգների կառավարման համակարգ՝ կարեւորագոյն միջազգային իրավիճակներում: Ասուածը վկայում է այն մասին, որ տնտեսական դիւանագիտութեան բոլոր գործիքները նպաստում եւ բարձրացնում են տնտեսական անվտանգութիւնը՝ տարբեր տնտեսական խնդիրների լուծման բաղադրատոմսերի հիման վրայ, որը հաշուի է առնում առկայ եւ

նոր յայտնաբերուած գործօններն ու դերակատարներին: Յաջող եւ արդիւնաւէտ տնտեսական դիւանագիտութիւնը կառուցում է տնտեսական անվտանգութիւնն աւելի ամուր եւ ընդարձակ երկկողմ տնտեսական յարաբերութիւններով, հանրային եւ մասնաւոր հատուածի հետ գործակցութեամբ, ինչպէս նաեւ հանդէս գալով որպէս յուսալի խարիսխ փոխադարձ հետաքրքրութիւնների եւ օգուտների իրացման համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Maria Bolocan, *Marshall Plan from Conception to Reality*, Ovidius University Press, 2016 (https://www.ceeol.com/search/article-detail?id=510265):

[2] Report of the World Food Summit, FAO, http://www.fao.org/3/w3548e/w3548e00.htm :

[3] «ՀԶՆ Առաջընթացի Ազգային Զեկոյց», http://www.un.am/hy/p/mdgs-and-armenia :

[4] «ՄԱԿի Հազարամեակի Նպատակները» www.un.org :

[5] "Sustainable Development Goals," https://www.millennium-institute.org :

[6] "Post-Brexit Guide: Where Are We Now – and How Did We Get Here?" https://www.euronews.com/2020/02/11/brexit-draft-deal-first-of-many-hurdles-to-a-smooth-exit :

[7] *Աղքատութեան Պատկերը Հայաստանում 2008-2016թթ., Վիճակագրական ժողովածու* (https://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf):

[8] Նոյն:

[9] «Հայաստանում Աղքատ է 700.000 Մարդ», https://www.azatutyun.am/a/30315718.html :

[10] «Աղքատութեան Պատկերը»:

[11] «ՀԶՆ Առաջընթացի Ազգային Զեկոյց»:

[12] «Աղքատութեան Պատկերը»:

[13] Նոյն:

[14] www.armstat.am :

[15] «Նորածինների Սեռերի Անհամամասնութիւնը Հայաստանում. Ժողովրդագրական Տուեալներ Եւ Վերլուծութիւն», http://unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Eng_final-with%20cover-final.pdf :

[16] «Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչութեան Հիմնադրամի «Ընդդէմ Գենդերային Բռնութեան», http://unfpa.am/sites/default/files/DV_survey_eng.pdf:

[17] https://www.unicef.org/armenia/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%8

2%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7%D5%9D-%D5%B9%D5%B6%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%80-%D5%AE%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7

[18] «ՀՀՆ Առաջընթացի»:

[19] Նոյն:

[20] Նոյն:

[21] *Հայաստանի Հանրապետութեան 2014-2025 Թուականների Հեռանկարային Զարգացման Ռազմավարական Ծրագիր* (www.gov.am , էջ 167):

THE REPUBLIC OF ARMENIA: DEFUSING ECONOMIC CHALLENGES BY MEANS OF ECONOMIC DIPLOMACY

(Summary)

TATUL MANASERYAN
tatoulm@gmail.com

The paper focuses on the role economic diplomacy can play in defusing tension and threats, which hinder and endanger the well-being and development of humankind and may lead to new armed conflicts and isolation and menace peace and security.

Against the backdrop of the economic concerns and challenges of the Republic of Armenia and how the country has resolved them, the author argues that efforts should be based on international principles which can be applied to local cases. In this regard the author sees world challenges, regional threats and national priorities as interconnected issues. Such an approach enables one to delineate an agenda of economic diplomacy on both the local and international levels and establish interstate cooperation within the framework of international agencies.

The author stresses that diverse current challenges should be differentiated and addressed through different world structures, means and modes. He concludes that these realities would invest economic diplomacy with dynamism and provide it with the vital role of producing risk-managing governance in tense international conditions. This would prove that economic diplomacy promotes economic security according to different recipes for different economic challenges bearing in mind new factors and actors.

The author concludes that in order to be perceived as a solid anchor and reference for mutual interests and benefits, successful and effective economic diplomacy should construct economic security on the basis of stronger and broader interstate economic relations in collaboration with both the public and private sector.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ. ԵՐԿՍԱՅՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

(Ակնարկ)

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
aramart@rambler.ru

ՄՈՒՏՔ

Պետական պարտքը ամավարկի պակասուրդը լրացնելու միջոց է: Սակայն՝ ոչ միայն: Պետութիւնները պարտք են վերցնում խոշոր տնտեսական ծրագրեր իրականացնելու համար, որոնց իրականացման համար պետական միջոցները տուեալ պահին չեն բաւարարում կամ դրանք շահաւէտ չեն մասնաւոր ներդրողների համար, բայց կարեւոր նշանակութիւն ունեն պետութեան համար:

Պետական պարտքը կազմուած է երկու մասից՝ ներքին եւ արտաքին պարտք: Ներքին պարտքն այն է, երբ պետութիւնը գումար է վերցնում իր բնակչութիւնից՝ ֆիզիկական եւ իրաւաբանական անձանցից: Դա արւում է պետական պարտատոմսերի թողարկման, պետութեան կողմից տրամադրուող փոխառութիւնների եւ վարկերի, ինչպէս նաեւ ներքին պետական երաշխիքների տրամադրման միջոցով:

Ինչ վերաբերւում է արտաքին պարտքին, ապա այն պետութեան պարտաւորութիւնն է միջազգային ֆինանսական կազմակերպութիւններին՝ Համաշխարհային Բանկ (ՀԲ), Արժոյթի Միջազգային Հիմնադրամ (ԱՄՀ), Ասիական Զարգացման Բանկ (ԱԶԲ), Վերակառուցման եւ Զարգացման Եւրոպական Բանկ (ՎԶԵԲ) եւն.: Այլ պետութեան պետական եւ մասնաւոր ֆինանսական հաստատութիւններից վերցուած միջոցները եւս ընդգրկւում են արտաքին պարտքի մէջ: Արտաքին պարտքն իր հերթին բաղկացած է կառավարութեան պարտքից եւ Կենտրոնական Բանկի պարտքից:

Այս ուսումնասիրութեամբ կը ներկայացնենք ՀՀ արտաքին պարտքի ծագման, տարիների ընթացքում փոփոխութիւնների, ներկայ կացութեան եւ հնարաւոր զարգացումների մասին:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀՀ պետական պարտքի հիմնական մասը եղել է արտաքին պարտքը: 1991ին երբ փլուզուեց ԽՍՀՄը եւ Հայաստանը դարձաւ անկախ պետութիւն, հարց առաջացաւ ԽՍՀՄի արտաքին պարտքի եւ *ակտիւ*ների (անշարժ ու շարժական գոյք, նիւթական այլ արժէքներ) յետագայ տնօրինման եւ բաժանման շուրջ: Նախապէս ենթադրուող պարտքի եւ *ակտիւ*ների համամասնական բաժանման փոխարէն ՀՀն ու Ռուսաստանի Դաշնութիւնը (ՌԴ) պայմանաւորուեցին թէ՛ նախկին միութենական պարտքը, թէ՛ *ակտիւ*ները փոխանցել ՌԴին: Այդպիսով, ՀՀն, ինչպէս խորհրդային միւս հանրապետութիւնները ստեղծուեցին՝ չունենալով պետական պարտք:

Սակայն անկախութեան առաջին տարիներին ՀՀն կանգնած էր լրջագոյն խնդիրների առջեւ, որոնք պահանջում էին ֆինանսական մեծ ներդրումներ: Նման ֆինանսական հնարաւորութիւններ ՀՀն չունէր՝ առարկայական եւ ենթակայական պատճառներով:

Խորհրդային երկրի փլուզումը խզել էր նախկին հանրապետութիւնների միջեւ տնտեսական կապերը: ՀՀի դէպքում դրան գումարուել էին հարեւան Ադրբեջանի կողմից շրջափակումը եւ Վրաստանից անցնող ոչ-յուսալի ճանապարհները, դրանց հետեւանքով՝ երկաթուղային կապի բացակայութիւնը: Այդ պայմաններին աւելացան գազամատակարարման ընդհատումները, ապա եւ ամբողջական դադարեցումը, ատոմակայանի գործունէութեան դադարեցումը եւ դրան յաջորդած ուժանիւթի ճգնաժամը, արդիւնաբերական հզօրութիւնների փոշիացումը, ձեռնարկութիւնների ոչ-արդիւնաւէտ սեփականաշնորհումը եւ դրանց սարքաւորումների զանգուածային վաճառքը հարեւան Իրանում մետաղի ջարդօնի գնով, գիւղատնտեսութեան քայքայումը, այդ տարիների իշխանութեան անատակ կառավարումը եւ պետական միջոցների անթաքոյց իւրացումները, աղէտի գօտին եւ բնակարանից զրկուած հարիւր-հազարաւոր մարդկանց գոյութիւնը, մօտ 600,000 աշխատատեղերի փաստացի փակուելն ու զանգուածային գործազրկութիւնը, բնակչութեան սրընթաց աղքատացումը, պատերազմը Արցախում եւ ՀՀ սահմանամերձ շրջաններում:

Այս պայմաններում անկախ ՀՀն պէտք է ստեղծէր հարկային ուրոյն համակարգ եւ համալրէր պետական ամավարկը: Ուստի, նկատի ունենալով այս ամենը, անհրաժեշտ էին յաւելեալ ֆինանսական միջոցներ:

ՀՀ արտաքին պարտքի առաջացման պատմութիւնը հարկ է բաժանել երեք փուլերի.-

Ա. փուլ՝ 1991-96, առաջին պարտք վերցնելուց մինչեւ արտաքին պարտքի հաշուառումը.

Բ. փուլ՝ 1997-2008, ՀՀ բարձր տնտեսական աճի տարիները մինչեւ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը.

Գ. փուլ՝ 2009-18՝ համաշխարհային ճգնաժամի տարին եւ դրան յաջորդող տարիները:

Ա. ՓՈՒԼ

Այսպիսով, առաջին պարտքը ՀՀն վերցրեց ՌԴից, քանի որ միջազգային ֆինանսական կազմակերպութիւնները դեռեւս պատրաստ չէին վարկեր տրամադրել ՀՀին եւ պահանջում էին որոշակի փոփոխութիւններ իրականացնել տնտեսութեան կառուցուածքում: 1991ին ՌԴն տրամադրեց 400 մլն. սովետական ռուբլի, որի մարումը նախատեսուած էր սկսել 1996ին եւ աւարտել 2001ին[1]: Սակայն այդ վարկը յետագայում վերածեւակերպուեց եւ մարուեց գոյքով: Խօսքը «Գոյք Պարտքի Դիմաց» անուանումը ստացած գործարքի մասին է, որը կնքուեց 2002ի Նոյեմբերի 5ին:

Այս գործարքի մասին փոքր-ինչ հանգամանօրէն խօսենք, քանի որ այն յետագայում դարձաւ քաղաքական շահարկումների առարկայ:

2002ին ՀՀն մարեց ՌԴին ունեցած պետական պարտքը, որն առաջացել էր 1990ականներին: Շուրջ 98 մլն. դոլար դարձած պարտքի դիմաց հինգ ձեռնարկութիւններ՝ Հրազդանի ջերմաէլեկտրականը, «Մարս» գործարանը, Երեւանի նիւթաբանութեան, Երեւանի մաթեմատիկական մեքենաների եւ Երեւանի կառավարման աւտոմատացուած համակարգերի գիտահետազօտական ինստիտուտները դարձան ՌԴի սեփականութիւն: Այս գործարքը մի կողմից նպատակ ունէր ձերբազատել ՀՀն՝ կուտակուած պարտքային բեռից, միւս կողմից՝ հնարաւորութիւններ էր ստեղծում ՀՀում ներդրումներ ներգրաւել: Առաջ անցնելով նշենք, որ թէեւ այդ ձեռնարկութիւնների համար նախատեսուած ներդրումային ծրագրերը ակնկալուող ծաւալներով չիրականացան, բայց դրանք, այդուհանդերձ, գործունէութիւն ծաւալեցին, խուսափելով ՀՀ արդիւնաբերական հսկաներին բաժին հասած քայքայման ճակատագրին արժանանալուց:

Ռուբլով վերցուած վերոնշեալ արհեստագիտական վարկի վերածեւակերպուած պարտքը կազմել է 22 մլրդ. ռուսական ռուբլի: Համաձայն Ռուսաստանի Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժէքի, այն կազմել է 45,1 մլն. դոլար: Յետագայում, 1993-94ին ՀՀ ատենի կառավարութիւնը ՌԴից վերցրել է եւս 100 մլրդ. ռուբլի պարտք, որից 39,9 մլրդ. ռուբլին կամ 27,1 մլն. տոլարը տրամադրուել է 1993ին, իսկ 60,5 մլրդ. ռուբլին կամ 14,3 մլն. տոլարը՝ 1994ին: Արդիւնքում, 1992-94ին ՀՀի պարտքը ՌԴին կազմել է 122 մլրդ. ռուբլի կամ 86,5 մլն. տոլար: Այսինքն, վերոնշեալ 98 մլն. տոլարի պարտքը հիմնականում կուտակուել է 1990ականներին, իսկ 2000ականներին արդէն նախագահ Ռոբերտ Քոչարեանի գլխաւորած նոր իշխանութիւնը կանգնել էր այդ պարտքը մարելու պարտաւորութեան առջեւ:

Վերադառնալով 90ականներին, նշենք, որ 1992ին ՀԲին եւ 1994ին ԱՄՀին ՀՀի անդամակցութիւնից յետոյ, ՀՀն սկսեց վարկեր ստանալ նաեւ այդ կառոյցներից: Դրանք արտօնեալ վարկեր էին, հիմնականում տրւում էին 20 տարի ժամկէտով, որից 10 տարին արտօնեալ ժամանակահատուածն էր, եւ 0.75% տարեկան դրոյքաչափով: Այս վարկերի գերակշռող մասն ուղղւում էր պետական ամավարկի պակասուրդի ֆինանսաւորմանը եւ կարեւոր նշանակութիւն ունեցաւ ՀՀ ամավարկի համալրման եւ ընդհանրապէս ֆինանսական կայունութեան ապահովման համար: Այդ տարիներին պարենային ապահովման համար վարկեր վերցուեցին նաեւ Եւրամիութիւնից եւ ԱՄՆից: Թուրքմէնական գազի դիմաց առաջացած պարտքի մի մասը մարուեց ապրանքներով, միւս մասը՝ վերածեւակերպուեց:

Այսպիսով, 1991ին Ռուսաստանից վերցուած 400 մլն. սովետական ռուբլուց, որը յետագայում տոլարային փոխարժէքով դարձաւ մօտ 45,1

մլն. տոլար, 1996ին ՀՀ արտաքին պարտքը հասել էր 536 մլն. տոլարի[2]: Այսինքն, արտաքին պարտքն այդ 6 տարիների ընթացքում աճել էր մօտ 12 անգամ:

Բ. ՓՈԽ

1990ականների վերջերին եւ 2000ականներին ՀՀ արտաքին պարտքը շարունակում էր աճել, բայց աւելի արագ թափով աճում էր երկրի տնտեսութիւնը: Մասնաւորապէս, 2001-17ին ՀՀ միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 12.5%[3], որի արդիւնքում տոլարային արտայայտութեամբ 1997ին մօտ 1,6 մլրդ. տոլար կազմող Հայաստանի Համախառն Ներքին Արտադրանքը (ՀՆԱ) 2008ին հասել էր մօտ 11,6 մլրդ. տոլարի՝ աճելով մօտ 7,3 անգամ:

Արտաքին պարտքը, ինչպէս արդէն նշուեց, 1996ին 553 մլն. տոլար էր: 1997ին այն 682 մլն. տոլար էր, իսկ 2008ին՝ մօտ 1577 մլն. տոլար՝ աճելով մօտ 2,3 անգամ: Բնականաբար, տնտեսական աճ-արտաքին պարտքի աճ այս յարաբերակցութեան արդիւնքում էապէս նուազել էր ՀՆԱի նկատմամբ արտաքին պարտքի յարաբերակցութեան ցուցանիշը: Արդիւնքում, 2008ին արտաքին պարտքը կազմել էր ՀՆԱի 7.3%ը: Սա ՀՆԱի նկատմամբ ՀՀի արտաքին պարտքի ամենացածր ցուցանիշն է եղել: Համեմատութեան համար նշենք, որ 1997ին 682 մլն. տոլար կազմող արտաքին պարտքը այդ տարուայ մօտ 1,3 մլրդ. տոլար կազմող ՀՆԱի մօտ 42,5%ն էր:

Ընդհանրապէս, 1997-2008ին ՀՀն կնքել է 78 վարկային համաձայնագրեր՝ պարտքեր վերցնելով հիմնականում ՀԲից եւ ԱՄՀից, ինչպէս նաեւ ՎԶԵԲից, ԱԶԲից, մի շարք պետութիւններից՝ Գերմանիա, ՌԴ, Ֆրանսիա, ԱՄՆ եւն.: Այդ տարիներին վերցուած վարկերի զգալի մասն ուղղուել է ուժանիւթի հզօրութիւնների աւելացմանն ու վերակառուցմանը, ենթակառուցուածքների՝ ճանապարհների, ջրագծերի կառուցմանն ու հիմնանորոգմանը, աղէտի գօտում շինարարութեանը, պետական համակարգում կառուցուածքային բարեփոխումներին, աղքատութեան նուազեցման ծրագրերին, ինչպէս նաեւ դրամավարկային համակարգի աջակցութեանը:

Գ. ՓՈԽ

2009ից սկսած ՀՀ արտաքին պարտքը սկսեց սրընթաց աճել: Դա պայմանաւորուած էր համաշխարհային տնտեսական ճգնաժամով, որը հարուածեց ՀՀ տնտեսութեան արագ զարգացող երկու խոշոր ճիւղերին՝ հանքարդիւնաբերութեանը եւ շինարարութեանը՝ ներառեալ շինանիւթերի արտադրութեանը: Դրա հետեւանքով, 2009ին, ՀՀ տնտեսական անկումը կազմեց 14.1%: Դա պետական ամավարկի ծախսերի (աշխատավարձեր, թոշակներ եւն.) կատարման հետ կապուած լուրջ վտանգներ էր առա-

ջացրել: ՀՀ կառավարութիւնը կա՛մ պէտք է կրճատէր ծախսերը, կա՛մ կատարէր ամավարկով նախատեսուած իր պարտաւորութիւնները: Առաջին դէպքում, դա ոչ միայն աւելի կը վատթարացնէր բնակչութեան ընկերային կացութիւնը, այլեւ կը խորացնէր տնտեսական անկումը, քանի որ նուազեցնելով տնտեսութեան մէջ շրջանառուող գումարները՝ տնտեսական աշխուժութիւնը նուազում է: Ամավարկի եկամուտների նուազման պարագայում ամավարկով նախատեսուած ծախսերի կատարման միակ ելքը պարտք վեցնելն էր եւ վերցուած գումարը վերստին տնտեսութեան մէջ շրջանառելը: Դրանով, բացի անհրաժեշտ ընկերային ծախսերը կատարելուց, խթանւում էր նաեւ տնտեսական աշխուժութիւնը եւ կասեցւում՝ դրա յետագայ նուազումը: Այս ամենի արդիւնքում, 2009ի վերջում, ՀՀ արտաքին պարտքը մէկ տարուայ ընթացքում աճելով, 1,577 մլն. տոլարից դարձաւ 2,966 մլն. տոլար: Այն շարունակեց աճել նաեւ միւս տարիներին:

2013-15 տարիները եւս ծանր տարիներ էին, քանի որ համաշխարհային տնտեսութիւնը գտնւում էր լճացման մէջ եւ դա իր ազդեցութիւնն էր թողնում նաեւ ՀՀ տնտեսական աճի վրայ: Այդ տարիներին տնտեսական աճի միջին թափը մօտ 3.3% էր, իսկ 2016ին՝ 0.2%[4]: Արտաքին պարտքը այդ տարիներին զուգահեռաբար աճելով, 2018ին հասաւ 5,536 մլն. դոլարի[5]: Այսինքն, վերոնշեալ 10 տարուայ ընթացքում արտաքին պարտքի միջին տարեկան աճը կազմում էր 400 մլն. տոլար: ՀՆԱի համեմատ արտաքին պարտքը 2018ի արդիւնքներով 50% է[6]:

Ինչ վերաբերւում է 2019ին, ապա Նոյեմբերի 30ի դրութեամբ ՀՀ արտաքին պարտքը շարունակել է աճել, կազմելով 5,626 մլն. տոլար[7]: Վարչապետ Նիկոլ Փաշինեանը, չնայած պարբերաբար յայտարարում է պետական ամավարկի եկամուտների աննախադէպ աճի մասին, բայց զուգահեռաբար շարունակում աւելանում է արտաքին պարտքի բեռը: Ֆինանսների նախարար Աւտոմ Ջանջուղազեանի հաւաստմամբ, 2019ին արտաքին պարտքը կը կազմի ՀՆԱի մօտ 50%ը[8]: Թէեւ նախարարը խօսում է ՀՆԱ-արտաքին պարտք յարաբերակցութեան նուազման հնարաւորութեան մասին, բայց անցած տարուայ 11 ամիսների ցուցանիշերը վկայում են, որ տարեկան արդիւնքներով այն չի նուազի 50%ից:

2020ին, ըստ ՀՀ պետական ամավարկի, արտաքին պարտքը կը կազմի 5,857 մլն. տոլար[9]: Թէ դա ի՞նչ համամասնութիւն կ՚ունենայ ՀՆԱի հետ՝ յայտնի կը դառնայ միայն տարեկան արդիւնքների ամփոփումից յետոյ:

ՀՀ արտաքին պարտքը						
1991-96	1996	1997	2008	2009	2018	30 Նոյ. 2019
536 մլն.	553 մլն.	682 մլն.	1557 մլն.	2,966 մլն.	5,536 մլն.	5,626 մլն.

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ-ՀՆԱ ՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Վտանգաւո՞ր է արտաքին պարտքի չափը, թէ՛ ոչ՝ կարելի է իմանալ միքանի բնութագրիչներով, որից հիմնականը արտաքին պարտք-ՀՆԱ յարաբերակցութիւնն է: ՀՀի դէպքում «Պետական Պարտքի Մասին» ՀՀ օրէնքը, 5րդ յօդուածի 6րդ ենթակէտով սահմանում է, որ «*Պետական պարտքը տուեալ տարուայ Դեկտեմբերի 31ի դրութեամբ չպէտք է գերազանցի Հայաստանի Հանրապետութեան նախորդ տարուայ համախառն ներքին արդիւնքի 60 տոկոսը*»: Դատելով ներկայ կացութիւնից ՀՀ արտաքին պարտքը մօտեցել է վտանգաւոր սահմանագծին՝ ՀՆԱի 50%ին: Ինչո՞վ է այն վտանգաւոր:

Առաջին, որ բացասական ազդեցութիւն է ունենում տնտեսական աճի վրայ: Մասնաւորապէս, 93 երկրների օրինակի վրայ ԱՄՀ հետազօտութիւնները[10] փաստում են, որ արտաքին պարտքը սկսում է տնտեսական աճի վրայ բացասական ազդեցութիւն ունենալ, եթէ այդ պարտքի զուտ ներկայ արժէքը գերազանցում է ՀՆԱի 35-40%ը: ՀՀի դէպքում այն, ինչպէս արդէն նշուեց, 50% է:

Մէկ այլ հետազօտութեամբ[11], արտաքին պարտք-ՀՆԱ ցուցանիշը 50%ը գերազանցելու եւ արտաքին պարտքի զուտ ներկայ արժէք-ՀՆԱ ցուցանիշը 20-25%ը գերազանցելու պարագայում է տնտեսական աճի վրայ ազդեցութիւնը դառնում բացասական:

Յաջորդը արտաքին պարտք-արտահանում յարաբերակցութիւնն է: ԱՄՀ նոյն հետազօտութեան համաձայն[12] եթէ արտաքին պարտքը կազմում է արտահանման 160-170%ը, ապա այն նոյնպէս սկսում է բացասական ազդել տնտեսական աճի վրայ: Արտահանումը ՀՀից 2018ին կազմել է 2,412 մլն. տոլար[13], արտաքին պարտքը նոյն թուականին՝ 5,536 մլն. տոլար: Ինչպէս տեսնում ենք, այստեղ նոյնպէս վտանգաւոր գօտում ենք:

Մէկ այլ ցուցանիշ է արտաքին պարտքի սպասարկում-պետական ամավարկի եկամուտներ յարաբերակցութիւնը, այսինքն՝ արտաքին պարտքի գծով վճարումները պետական ամավարկից: Այս առումով ամենաբարձր ցուցանիշը՝ ամավարկի եկամուտների նկատմամբ մօտ 33% արտաքին պարտքի սպասարկում ունեցել ենք 2013ին[14]: 2018ին, ըստ նոյն աղբիւրի, արտաքին պարտքի սպասարկում-պետական ամավարկի եկամուտներ յարաբերակցութիւնը կազմել է մօտ 14%: Այդուհանդերձ, այս ցուցանիշի առումով վերջին 10 տարիների միջին ցուցանիշը ցածր է եղել:

Ելնելով վերոնշեալ ցուցանիշերից, կարող ենք հաստատել, որ ՀՀ արտաքին պարտքը դեռեւս չի հատել վտանգաւոր սահմանը, բայց ընդհուպ մօտեցել եւ շարունակում է մօտենալ այդ սահմանին:

Հետաքրքրական են արտաքին պարտք-ՀՆԱ ցուցանիշերը այլ երկրների պարագայում[15]: Ըստ այդմ, 2016ի տուեալներով, ՀՆԱն գերազանցող արտաքին պարտքի ցուցանիշով առաջին տասնեակում գտնուող երկրների թւում են այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են Ճապոնիան՝

239%, Յունաստանը՝ 181%, Իտալիան՝ 132%, Պորտուգալիան՝ 130%: Երկրի տնտեսութեան ծաւալը գերազանցող արտաքին պարտք ունեն նաեւ Սինգապուրը՝ 112%, ԱՄՆը 107%, Բելգիան՝ 105 %: Այս երկրներին վերջին երկու-երեք տարիներին մօտեցել են նաեւ Իսպանիան, Ֆրանսիան:

ՀՆԱՐԱՒՈ՞Ր Է ՀՐԱԺԱՐՈՒԵԼ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻՑ

Հնարաւո՞ր է ապրել առանց պետական պարտքի եւ մասնաւորապէս՝ առանց արտաքին պարտքի: Այս հարցը միանշանակ պատասխան չունի: Ընդ որում, ինչպէս տեսանք՝ արտաքին պարտքի մեծ բեռ ունեցող երկրների թւում են նաեւ զարգացած երկրներ: Այսինքն, պարտք վերցնելու համար պարտադիր չէ, որ երկիրն անպայման գտնուի զարգացման ցածր մակարդակի վրայ եւ յաւելեալ գումարի կարիք ունենայ ամավարկի մատակարարման կամ այլ խոշորածաւալ ծրագրերի իրականացման համար:

Ամավարկի պակասուրդը լրացնելու համար արտաքին պարտքը վերցնե՞լ, թէ՞ չվերցնել: Մինչ որոշում կայացնելը, պէտք է նախ որոշուած լինի, թէ ինչպիսի՞ պետական ամավարկ է ցանկանում ունենալ պետութիւնը՝ պակասուրդո՞վ, թէ՞ առանց պակասուրդի: Դրա համար պէտք է հաշուարկել, թէ հնարաւո՞ր է իրականացնել ամավարկի նախատեսուած ծախսերը միայն սեփական՝ հարկային եկամուտներով: Միւս հարցը՝ պէտք է բաւարարուել միայն համե՞ստ ծախսերով՝ սեփական եկամուտներին համապատասխան, թէ՞ օգտուել արտաքին ֆինանսաւորումից եւ աւելի մեծ ծախսեր կատարել: Առաջին հայեացքից թւում է, որ նախընտրելին բացառապէս սեփական եկամուտների վրայ յոյս դնելն է: Սակայն, տնտեսական աշխուժութեան խթանման համար լրացուցիչ միջոցների ներդրումը կարեւոր դեր է խաղում: Առաւել եւս, եթէ մասնաւոր ներդրումների համար, առարկայական կամ ենթակայական պատճառներով, պայմաններն այդքան էլ հրապուրիչ չեն:

ՀՀի ներկայ կացութեան պարագայում պետական ամավարկի պակասուրդի լրացման համար արտաքին պարտքի աւելացումը կարող է վտանգալից լինել: Բանն այն է, որ ՀՀ ներկայ կառավարութիւնը չունի տնտեսական զարգացման յստակ եւ մշակուած կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ ծրագրեր՝ համապատասխան ֆինանսաւորման անհրաժեշտութեամբ: Այս պայմաններում արտաքին պարտք վերցնելը յանգեցնում է երկրի համար արտաքին պարտքի բեռի աւելացմանը՝ առանց տնտեսական էական արդիւնք ունենալու: Օգտուելով միջազգային ֆինանսական շուկաներում էժան փողի առաջարկից, առաւել նպատակայարմար է նոր՝ աւելի էժան վարկեր վերցնել նախորդ՝ աւելի բարձր տոկոսադրոյքներով վարկերը վերաձեւակերպելու եւ մարելու համար: ՀՀի կողմից նոր եւրոբոնդերի թողարկումը 2019ին, այդ առումով թերեւս արդարացուած էր: Սակայն ներկայ կառավարութեան կողմից առ այսօր չեն կնքուել վարկային համաձայնագրեր նոր ճանապարհների կամ այլ ենթակառուցուածք-

ների կառուցման նպատակով: Ներկայումս իրականացուող ճանապարհաշինական աշխատանքները իրականացւում են նախորդ կառավարութեան կողմից կնքուած վարկային համաձայնագրերի շրջանակում, իսկ օրինակ՝ ՀՀի համար կենսական նշանակութիւն ունեցող Հիւսիս-Հարաւ Ճանապարհի շինարարութիւնը ներկայ պահին կասեցուած է՝ դրա շինարարութեան ժամանակ կաշառքի առկայութեան մեղադրանքով եւ անյայտ է, թէ երբ կը վերսկսուի:

Այդուհանդերձ, յստակ մշակուած ռազմավարութիւն եւ ծրագրեր ունեցող կառավարութիւն ունենալու պարագայում արտաքին պարտքի բեռի նուազեցումը կարող է իրատեսական լինել: Խօսքը սկզբնական փուլում ՀՆԱի նկատմամբ արտաքին պարտքի նուազեցման մասին է: Նմանատիպ գործընթաց տեղի ունեցաւ 2000ականներին, որի մասին նշեցինք վերեւում: Բարձր՝ երկնիշ տնտեսական աճի տարիներից յետոյ արտաքին պարտքը ՀՆԱի նկատմամբ էապէս նուազեց:

About 200.000 Armenians found refuge in the hospitable lands of Syria and Lebanon. Most of the Cilician Protestants fled in 1921-23 to Syria and Lebanon where they organized in 1924 the Armenian Evangelical Union of Syria and Lebanon. The name in 1938 was changed to "the Armenian Evangelical Union in the Near East."

Refugee Armenians could bring very little with them. Each family came with a carload or an animal load of property. There were no homes for them. They settled in tents and huts. Huts were made of small pieces of tin or wood. On a square mile more than 5000 families had their huts of three or five square meters each. The rain and heat of summer used freely to enter these huts. Privacy of any kind was difficult. Sanitary conditions were deplorable, and it was the same with moral conditions. Poverty was the master of the situation. For many years they had to live under such conditions. Quite a few still are in these same circumstances. Out of this religious, moral and economic chaos new churches and schools had to be built and religious education be made available to te new generation. It was a painful road to walk, but every difficulty had to be faced without discouragement.

Out of these situations grew some churches and schools. During the past 25 years immense progress was made, some twenty church and school buildings were erected. People began to improve their economic situation and settle in the land as loyal citizens. They began to builds their own houses and run their own businesses. But still some 8000 Armenians live in these deplorable huts. The Protestant community in comparison with other communities is well off. On a percentage basis they are better educated and self-supporting. Nearly 90% are literate in a country where illiteracy is more than 70%. Nearly 10% of the community can be labeled as intellectuals, i.e. teachers, doctors, publishers, and the like; 25% artisans; nearly 20% traders and merchants, and about 40% workers of every category. Only about 5% can be called dependent persons.

The Union has 22 churches, with a communicant membership of about 2500 and a constituency of about 10.000. Approximate numbers are given because after the last statistics, migrations took place and the numbers were reduced. Four churches are self-supporting. All the churches have their pastors and schools, Sunday Schools and Christian Endeavor Societies. There are five High schools, 24 Elementary schools and 21 Kindergartens, with a total of 2400 students. There are 27 Sunday Schools with a

total of 2500 children, and 21 Christian Endeavor Societies with 1000 adherents. Church going people constitute nearly 30% of the community.[4]

WEEK DAY SCHOOL STATISTICS[5]

This is part of the statistical report taken in 1946 from a questionnaire sent to weekday schools. Due to migrations, changes in numbers have occurred since – as it is evident in comparison to Appendix I.

Schools in Syria and Lebanon

5 high schools, one of 5 grades, one of 4 grades, one of 3 grades, and one of 1 grade.

24 Elementary schools, 13 of six grades, three of 5 grades, seven of 4 grades, and one of 3 grades.

Pupils: Total constituency: 2810.

Sexes: 49 per cent boys, 51 per cent girls.

Denominations: 50.5% Evangelicals, 46% boys, 54% girls.

Schools: Kindergarten children 30.5% (boys 50.5%, girls 49.5%). Elementary school children 62 % (52% boys, 48% girls). High school students 7.5% (50% boys, 50% girls). Usually at the age of 7 children enter the Elementary school which is of six grades, then the high school of five grades.

Teachers: Total: 152 teachers, 36 men, 116 women. Evangelicals 116, 45 communicant members. Gregorians 17, others 19.

Weekly class instruction per teacher: maximum 60 periods, minimum 25.

Educational standing: Elementary school graduates 55, High school graduates 65, College graduates 20, University graduates 12.

Payment (yearly): Minimum 140 ll (Q. 2ll. One dollar). Maximum 2800LL. Average 700LL.

Budget: Grand total: 133, 481 TL.; Tuition: 85.095; other sources: 48.386; Expense per student 47.5/year; Income per student 30/year.

Table 1: Armenian Evangelical Churches, Schools, Sunday Schools and Christian Education Societies[6]

Churches	Constituency	Schools & Students	Sunday Schools & children	Christian Education Members
Lebanon				
Beirut, 1st Church	1300	High school 100	Int. 90	Young people 50
		Elem. 250	2 Jrs. 225	3 Int. 70
Beirut, Eshrefieh	1600	High school 80	Int. 80	Young people 80
		3 Elem. 400	3 Jrs. 375	Int. 50
Beirut, Nor Marash	800	Elem. 150	Jrs. 150	Young Men 40
				Int. 50
Beirut, Trad	50	Elem. 120	Jrs. 120	Int. 60
Tripoli	150	---	Jrs. 50	Int. 30

Ainjar	500	Elem. 120	3 Int. 120	Int. 50
Zahle	200	High school 20	Jrs. 60	Int. 40
		Elem. 40		
Chtaura	200	Elem. 30	9 Jrs. 30	Int. 30
Subtotal	4800	3 High schools 200	5 Int. 290	2 Young people 130
				1 Young Men 40
		9 Elem. schools	Jrs.	10 Int. 380
Syria				
Homs	70	---	Jrs. 30	Int. 15
Damascus	150	---	Jrs. 20	----
Emanuel	1800	Elem. 250	Int. 300	Young Men 80
Bethel	1500	High School 120	2 Jrs. 100	Int. 70
		2 Elem. 400		Int. 80
Nahadagats	500	-----	Jrs. 125	Int. 60
Assyrian	100	Elem. 30	Jrs. 50	--
Daoudie	80	Elem. 50	Jrs. 60	Int. 40
Azez	50	Elem. 40	Jrs. 45	Int. 20
Djarablus	40	---	----	----
Kessab	400	High School 20	Jrs. 100	Int. 40
		Elem. 60		
Ekizoluk	200	Elem. 40	Jrs. 40	----
Keurkune	150	Elem. 25	Jrs. 25	Jes. 20
Kaladouran	60	Elem. 25	Jrs. 40	Jrs. 20
Baghjaghaz	40	Elem. 20	Jrs. 20	---
Subtotal	5140	11 Elem.	13 Jrs.	
		2 High schools	1 Int.	7 Int. Young Men 80 2 Jrs. 40
Total	9940	5 High Schools		
		20 Elem Schools		

THE SUNDAY SCHOOL STATISTICS[7]

This is part of the statistical report obtained as an answer of a questionnaire sent to the Sunday schools in 1946.

Sunday Schools: In Syria and Lebanon there are 29 Sunday Schools. 15 in Lebanon and 14 in Syria. There are 2800 Sunday school children with 170 teachers. Distribution of children: a) Sexes: 45% boys, 55% girls; b) School children: 95%, non-school children 5%; c) Age groups: beginners 16%, primaries 23%, juniors 32%, Intermediates 25% , seniors 4%. D) Denominations: Protestants 54%, Gregorians 41%, others 5%. E) Teachers: of the 170 teachers men are 25%, women constitute 75%. Communicant members: 35%, C. E. members 60%.

Table 2.- Religious Education Agencies and the Age Groups they serve[8]				
Ages served	Week day school grades	Sunday school grades	Christian Endeavor societies	Daily vacation Bible schools
0-3	--	--	---	---
4-5	Kindergarten	Beginners	---	---
6-8	I, II, III	Primaries	---	Mixed groups
9-11	IV, V, VI	Juniors	Intermediate	
10-14	VII, VIII, IX	Junior High		
15-17	X, XI	Seniors	Young People	---
18-25	---	---		---
25-	---	---		---

Table 3.- Percentage distribution of 2500 children in weekday and Sunday schools[9]		
		Percentage
Pupils	Boys	47
	Girls	53
Religious professions	Evangelicals	52
	Armenian Apostolic	45
	Catholic and non-Christians	3
Age groups	4-5	16
	6-8	23
	9-11	32
	12-14	25
	15-17	3
	18	1

ENDNOTES

[1] A bound copy of this important thesis was donated by Dr. Hrair Aharonian in November 2019 and is preserved in the Haigazian University Derian Armenological Library.

[2] Leon Arpee, *A History of Armenian Christianity*, New York, the Armenian Missionary Association, 1946, p. 269.

[3] Arpee, p. 277.

[4] MA thesis, pp. 12-20.

[5] MA thesis, pp. 144-46.

[6] In Elementary schools Kindergarten is included. Jrs. denotes up to that department, including smaller departments.

[7] MA thesis, pp. 147-48. It should be noted that after the taking of these statistics migrations took place and numbers were reduced as it is obvious in comparison to Appendix I.

[8] MA thesis, page 24.

[9] MA thesis, page 26.

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՍՈՒՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ, 1946ԻՆ

(Ամփոփում)

ՎԵՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Հայ Աւետարանական Եկեղեցիին համայնքային, հոգեւոր եւ կրթական գործունէութեան 1940ականներու փաստագրումը կը ներկայացուի այստեղ: Մանաւանդ լուսարձակի տակ կ'առնուի անոր կրթական գործունէութիւնը՝ ամենօրեայ եւ կիրակնօրեայ դպրոցներու առումով: Փաստագրական շահեկան այս նիւթը քաղուած է Վեր. Յովհաննէս Ահարոնեանի մագիստրական թեզէն զոր ան պաշտպանած է 1946ին, Շիքակոյի Presbyterian College of Christian Educationի մէջ:





ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԼԻԲԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ. Լիբանանի Հայօճախը 1945ին

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Բ. Համաշխարհայինի աւարտէն կարճ ժամանակ ետք, ՀԲԸ Միութեան Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը, որուն իրաւասութեան ծիրին մէջ էր Սուրիա-Լիբանանի շրջանակը, պատուիրակութիւն մը ղրկելով շրջան, անմիջական՝ դաշտային քննութեան մը լոյսին տակ, կը ձգտի վերաձեռնարկել Սուրիա-Լիբանանի շրջանի իր գործունէութեան, վերաշխուժացնել իր յարաբերութիւնները հայօճախին եւ ՀԲԸՄ շրջանակին հետ, վերաձեւել աջակցութիւնը զոյգ հայօճախներուն ընկերային-առողջապահական-կրթական կարիքներուն բաւարարման, մանաւանդ որ սուրիա-լիբանահայութիւնը սկսեր էր տեսանելի դառնալ Միջին Արեւելքի սփիւռքահայ քարտէսին վրայ[1]: Այս առաքելութեամբ, վարչականներ Ճանիկ Չագըր եւ Պետրոս Կիրակոսեան[2] Յունուար-Փետրուար 1945ին կ'ուղղուին շրջան: Կիրակոսեան, սակայն, ճամփուն սկիզբին կը ստիպուի վերադառնալ Եգիպտոս՝ ընտանեկան պարտականութիւններով: Չագըր առանձինն շարունակելով առաքելութիւնը, կու գայ Պէյրութ, կը շփուի կրօնական թէ ազգային առաջնորդներու հետ, հուսկ, կը տեղեկագրէ Գահիրէ, մատնանշելով մանաւանդ Ալեքսանտրէթի սանճաքի 1939ի գաղթականութեան աջակցութեան համար յառաջացած Նպաստից Յանձնաժողովին[3], ՀԲԸՄ Սուրիոյ եւ Լիբանանի մասնաժողովներուն, կրթական տեսչութեան, շրջանի գործիչի, համազգային հանգանակութեան հարցերը եւ ըստ այդմ կը կատարէ յանձնարարութիւններ:

Օգոստոս 1945ին, նոյն նպատակով եւ նման առաքելութեամբ Պէյրութ կը ժամանէ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան փոխնախագահ Հայկ Գաւուքճեան[4], Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովի անդամ՝ Առաքել Եազըճեանի հետ (այցելութիւնը կ'ընդգրկէ Սուրիա-Լիբանանը): Գաւուքճեան իր կարգին կը պատրաստէ ընդգծուած առաջնահերթութիւններով տեղեկագիր մը, զոր կը ներկայացնէ ՀԲԸՄ Նիւ Եորքի Կեդրոնական Վարչութեան եւ Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին, 11 Սեպտեմբեր 1945 թուակիր ստորագրութեամբ: Գաւուքճեան կը յանձնէ նաեւ «օրինակը Ամերիկայի Կեդր[ոնական] Յանձնաժողովի ատենապետ տ[իար] Ճ[իմ] Չանգալեանի նօթերուն, Սուրիա եւ Լիբանան իր այցելութեան առթիւ»: Գաւուքճեան-Եազըճեան-Չանգալեանի այցելութիւններուն մանրամասնութիւններ կ'արծարծուին ՀԲԸՄ Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի 5 Հոկտեմբեր 1945ի ժողովին ընթացքին[5]:

Վերոյիշեալէն պարզ կը դառնայ, որ 1945ին երեք տարբեր տեղեկագրեր պատրաստուած են Սուրիա-Լիբանանի հայօճախներուն մասին՝ ՀԲԸՄի նախաձեռնութեամբ: Մեր հրապարակումին ծիրէն դուրս է քննարկումը այդ տեղեկագրերուն տուն տուող պատճառներուն եւ անոնց առթած հետեւանքներուն:

Ստորեւ կը հրատարակենք Գաւուքճեանի տեղեկագիրը՝ մեքենագրեալ հինգ էջ, որուն կը յաջորդէ նոյն տարուան վերաբերող «Նոթեր» ընդհանուր խորագրով եւ այլեւայլ ենթախորագրերով շարադրուած մեքենագրեալ չորս էջանի նիւթը, որ - ըստ վերոյիշեալ մէջբերումին - կը պատկանի Ճիմ Չանգալեանի: Առայժմ չկրցանք գտնել Ճանիկ Չագըրի տեղեկագիրը:

Հրատարակուող զոյգ փաստաթուղթերը լիբանահայ կենսադաշտը կը քննարկեն ՀԲԸՄի ելակէտէն, կ'արծարծեն ՀԲԸՄիութեան Լիբանանի կառոյցին մէջ յառաջացած երկուութիւնը՝ Նպաստից Յանձնաժողովին եւ տեղական մասնաժողովին առկայութեամբ: Փաստաթուղթերը իւրայատուկ են Ալեքսանտրէթի սանճաքի գաղթականութեան՝ Այնճարի, Սուրի, Ռաս Ուլ Այնի (Ռաշիտիէ) եւ Պէյրութի գաղթակայաններու նկարագրութեամբ, կը պատկերեն գաղթականներուն վիճակը, կ'արծարծեն հայօճախին վարման վերաբերող խնդիրներ, կը նշեն թիւեր, կ'անդրադառնան նաեւ Պէյրութի մեծ քեմփին, որ մնացուկն էր 1920ականներու սկիզբին Կիլիկիոյ պարպումով յառաջացած գաղթակայանին: Շահեկան են ներկայացուած տուեալները, նաեւ այն՝ որ Բ. Համաշխարհային Պատերազմէն ետք Լիբանանի մէջ ձեւաւորուած է բարեկեցիկ հայ խաւ մը, որ ի վիճակի է հոգալու հայօճախին կարիքները, սակայն կը շարունակէ վստահիլ արտաքին նպաստի...: Հետաքրքրական է նաեւ տեղեկագրողին մտահոգութիւնը ՀԲԸՄ նպաստից գործունէութեան արդիւնքներէն: Ուշագրաւ են նաեւ միջմիութենական, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան հետ յարաբերութիւններու բնութագրումները, որոնք կը դրսեւորեն ատենի մտայնութիւնը, առկայ եւ խմորուող հակասութիւնները:

Փաստաթուղթերը յայտնաբերած ենք ՀԲԸՄիութեան Գահիրէի արխիւէն: Կատարած ենք լեզուական եւ ուղղագրական նուազագոյն հպումներ:

ԼԻԲԱՆԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՍ ԱՌԹԻՒ ՆՈԹԵՐ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՈՅՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՈՒ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋ

1. **Անդրնահարի Քեմփեր**.- Պէյրութ հասնելուս երկրորդ օրը, առաջին այցելութիւնս ըրի յիշեալ երկու քեմփերուն - Ամանոս եւ սանճաքցիներու[6]: Առաջինը Պէյրութի ամենեն հին քեմփն է հաստատուած 20-22 տարիներէ իվեր: Իսկ երկրորդը հաստատուած է 1939ին, սանճաքցիներու ժամանումով: Այս քեմփերը կը բաղկանան թիթեղաշէն տնակներէ, ծովին մօտիկը: Այդ տնակներուն մէջ կը բնակին մէկ-մէկ ընտանիք, իւրաքանչիւրը երբեմն 7-8 հոգիէ բաղկացեալ, մեծամասնութեամբ փոքրիկներէ: Աւելորդ է յայտնել որ առողջապահական տարրական պէտքերէ զուրկ են այս քեմփերը: Ամառը, անձրեւներու չգոյութեան պատճառաւ փոշիի մէջ են, իսկ ձմեռը, ինչպէս հաստատեցին, մինչեւ կէս մեթր ցեխի մէջ կը մնան նոյն եղանակին: Ահա, այս պայմաններուն հանդուրժելով է որ Ամանոս քեմփի բնակիչները կը մնան այդ վայրին մէջ, 20-22 տարիներէ իվեր, մինչ կ'ըսուի որ հոն բնակող շուրջ 300-350 ընտանիքներուն մեծամասնութիւնը ի վիճակի է քաղաքին մէջ տուն վարձելու: Կ'ըսուի որ անոնցմէ այլուր տուն շինողներ կան զորս վարձու տուած են եւ իրենք կը նախընտրեն այդ աղքատութեան մէջ բնակիլ: Ասիկա որոշ այլասերում մը ցոյց կու տայ մեր ժողովուրդին մէջ: Սանճաքցիներու քեմփը, որ նոյնքան բնակչութիւն մը ունի, համեմատաբար աւելի կարօտեալներէ կը բաղկանայ եւ զարմանալի է որ աւելի մաքուր կը ներկայանայ: Ընդհանուր կերպով ծուլութիւն կը տեսնուի այս քեմփի բնակիչներու այրերուն մօտ, մինչ կիները աւելի աշխատասէր են: Անոնք կը սպասեն որ կառավարութիւնը կամ մարդասիրական կազմակերպութիւնները իրենց համար տուներ շինեն եւ հոն ձրիաբար տեղաւորուին, ինչ որ ներկայ պայմաններուն մէջ, ու իրենց այդ բնակած վայրին մէջ կարելի չէ: Լաւագոյն պիտի ըլլար որ երբ քիչ մը քաղաքին մէջ խճողումը վերջ գտնէ ու զինուորներու գրաւած շէնքերը պարպուին, կառավարութիւնը փլցնէ այդ քեմփերը, որպէսզի անոնցմէ ունեւորները ու ի վիճակի եղողները իրենց գլխուն ճարը նային, ու եթէ կարօտեալներ մնան՝ անոնք այլ միջոցներով տեղաւորուին: Այս երկու քեմփերուն մէջ միքանի հանրային ճեմիշներ շինուած են Նպաստից Յանձնաժողովին կողմէն եւ մալարիայի դէմ պայքար կը տարուի Տոքթ. Տ. Պէրպէրեանի կողմէ, սակայն, ոչ աչքի զարնող կերպով եւ ոչ՝ պահանջուած աստիճանի վրայ: Տոքթ. Պէրպէրեան մնայուն երեք հոգի կը պահէ այս քեմփերուն մէջ մալարիայի համար, զորս չտեսայ այցելած օրս: Քեմփերու տնակներու մէջ շատ մը այրեր պառկած կը քնանային իբրեւ թէ գործ չունենալնուն պատճառաւ, մինչ, կառավարութեան կողմէ բացուած քանալի[7] մը մէջ աղտոտութիւն հաւաքուած էր եւ այդ աղտոտութեան հոտէն կը գանգատէին: Այդ պառկող եւ քնացող մարդիկը փոխանակ այդ քանալը մաքրելու եւ պարապ չանցընելու իրենց ժամանակը՝ իրենց իսկ առողջութեան համար, կը սպասեն որ ուրիշներ գործաւորներ ղրկեն եւ քանալը մաքրել տան: Ասիկա փոքր ապացոյց մըն է որ քեմփերու ժողովուրդին մէջ նախաձեռնութեան ոգին մեռած է բոլորովին եւ ամէն բան դուրսէն կը սպասէ, իր կարելին չընելով: Տարիներէ իվեր տրուած նպաստները մեծ մասամբ այդ ոգիին ծնունդն են:
2. **Այնճար**.- Երկրորդ օրը այցելեցի Այնճար, որ ինչպէս յայտնի է, իր վրայ շատ խօսեցնել տուած է ցարդ եւ տակաւին ալ պիտի խօսեցնել տայ: 1060 տուներէ կը

բաղկանայ, որոնց իւրաքանչիւրը մէկական սենեակ է յարակից ճեմիշով մը: Գաղթականներէն շատեր այդ մէկական սենեակով տուներուն քով յարակից մասեր շինած են իրենց ծախքով՝ որոնք կը գործածուին իբր բնակարանի մաս եւ կենդանիներու ախոռ: Իւրաքանչիւր ընտանիք ունի բաւականաչափ հողամաս մը մշակութեան համար: Այնճարի ջուրը շատ առատ եւ մաքուր է եւ այժմ թիւրպինը (ջրմուղ գործիքը – Ա.S.) շինուած ըլլալով ամէն կողմ կը հոսեցուի թէ՛ խմելու եւ թէ՛ ոռոգման համար: Թրաքթէօր մը ունին նուիրուած Տ. Թիւֆենկճեանի կողմէ: Ասիկա Սուրի[8] պէտք էր տրուած ըլլար, ըստ Տ. Թիւֆենկճեանի կամքին, բայց Այնճարի տրուած է: Իսկ Բարեգործականի կողմէ գնուելիքը պիտի տրուի Սուրի, սակայն, թրաքթէօր մնացած չըլլալով՝ տակաւին ատիկա գնուած չէ: Այնճարի մէջ կը գործէ նաեւ Գարակէօզեան Մանկանոցը[9], ուր մեր այցելած օրը բժիշկ մը կար մնայուն հիւանդապահուհիէն զատ: Մանուկներու հարկ եղած խնամքը կը տրուի, ինչպէս նաեւ տկարակազմներուն՝ կաթ: Ասկէ զատ կիսաւարտ կը մնայ - 7000 տոլարի նախատեսուած գումարը ծախսուելէ յետոյ - մայրանոցը որուն լրացումին համար 4000 տոլար գումարի մը պէտք ցոյց կը տրուի: Ինչպէս յայտնի է, 7000 տոլարին 4000ը [ՀԲԸ] Միութիւնը տուած է, իսկ 3000 տոլարը՝ Օգնութեան Խաչը եւ կ'ուզուի նոյն համեմատութեամբ երկուքին օժանդակութեամբ լրացնել այդ շէնքը: Այդ մայրանոցին շինութեան [համար] Յանձնախումբ մը կազմուած է Օգնութեան Խաչին եւ Նպաստից Յանձնաժողովին ներկայացուցիչներէն: Անմիջապէս յայտնեմ որ բացարձակ սխալ մը եղած է այդ գործակցութիւնը: Կա՛մ Բարեգործականը պէտք է շինէ մայրանոցը, իր անունը տալով անոր եւ կա՛մ ատիկա փափաքելի չըլլալու պարագային՝ Օգնութեան Խաչը: Այդ գործակցութեան շուտով պէտք է վերջ տրուի քանի որ Հայաստանի կառավարութեան մեր ունեցած բարուոք յարաբերութեանց վրայ կրնան ազդել նման գործակցութիւնները: Կը կարծեմ թէ արտասահմանի մէջ դաշնակցականներուն կողմէ Բարեգործականի հետ գործակցելու այժմու միտումները նպատակ ունին Միութեան յարաբերութիւններուն վրայ - Հայաստանի կառավարութեան հետ - ստուեր ձգելու եւ Միութիւնն ալ գէշ մարդ ընելու կառավարութեան հետ: Հոս ալ հակամալարիական գործը շատ խեղճ վիճակի մը մէջ յառաջ կը տարուի: Եթէ ցարդ տարուէ տարի գործածուած կարեւոր գումարները յատկացուած ըլլային ջուրի ճամփաներուն սիմենթով շինութեան, միանգամընդմիշտ հարցը լուծուած կ'ըլլար: Մինչդեռ, այդպէս չէ եղած. հողին մէջ ճամփաներ փորուած են՝ եզերքները քարեր շարուելով, ուր միշտ խոտեր կը բուսնին եւ մարդոց ամսական ու օրականներ կը վճարուին ատոնք կրկին ու կրկին բանալու եւ խոտերը ատեն-ատեն կտրելու համար: Այնճարի մէջ տարեկան 7000-8000 տոլար կը ծախսուի հակամալարիական պայքարի համար, բայց, բան մը չի տեսնուիր:

Այս համառօտ գիծերէն յետոյ զոր ներկայացուցի, ցաւալի է հաստատել որ Այնճարի մէջ, ուր Միութիւնը մեծ գումարներ ծախսած է, մարդիկ կ'անգիտանան – բացարձակապէս - Միութեան ըրածները եւ Միութեան անունը բերանը առնող չկայ: Ամէն բանի համար «Օգնութեան Խաչը ըրաւ» կ'ըսեն եւ կամ կու տան Տոքթ. Ենիգոմշուեանի[10] եւ Տոքթ. Պէրպէրեանի[11] անունները, կարծես թէ Բարեգործականի ծախսած դրամները անոնք տուած են: Այդ գաղթականութեան ուղղակի դաշնակցականներու տիրապետութեան ներքեւ է, որոնց ատեն մը ուժ տուած են ֆրանսացիները եւ հոն Միութեան դրամները ծախսուած են անհաշիւ ու անքննելի[12]: Հակառակ ասոր, Նպաստից Յանձնաժողովը միշտ ամէնէն աւելի հոգածութիւն[ը] ցոյց տուած է եւ այժմ կ'ուզէ տալ այս գաղթականութեան չեմ գիտեր ի՞նչ նկատումներով: Այս ժողովուրդը այլեւս պէտք չունի նպաստի, հող ու տուն ունի եւ պարտի իր աշխա-

տանքով իր ապրուստը ճարել: Եթէ շարունակուի օգնել անոնց՝ ալ աւելի ծուլութեան պիտի վարժուին, ինչպէս արդէն այրերը եղած են եւ ինքզինքնին օղիի տուած են: Այնճարի մէջ 20-22 նպարավաճառի խանութներ կան, ուր նպարեղէնէ աւելի օղիի շիշեր շարուած են, ինչ որ կը նշանակէ թէ անոր սպառումը ամէնէն շատն է եւ մարդիկ դրամ ունին օղի գնելու: Ֆրանսացիները 100,000 սուեթըր տուած են շինելու, իւրաքանչիւրի շինողէն վճարելով 4 լիբանանեան ոսկի, ինչ որ կը նշանակէ թէ Այնճար մտած է 400,000 լիբանանեան ոսկիի պատկառելի գումար մը: Կարելի չէ եղած ցայժմ Միութեան մասնաճիւղ մը կազմել Այնճարի մէջ:

3. **Սուրի Եւ Ռաս Ուլ Այնի Գաղթակայաններ**.- Երկուքը իրարմէ շուրջ հինգ քիլոմեթր հեռաւորութեան վրայ կը գտնուին: Ջուրին ակերը առատ ջուր կու տան ու լիուլի բաւական են ոռոգելու երկու գաղթակայաններու հողերը, որոնք բաւականաչափ են: Այս գաղթակայանները կը կարօտին թրաքթէօրի մը, ինչպէս վերը ըսի: Միութեան կողմէ գնուելիքը պէտք է անոնց տրամադրուի: Երկու գաղթակայանները գրեթէ Այնճարի չափ տուներ ունին եւ ընտանիքներէ կը բաղկանան: Ժողովուրդը հոս առաջին վայրկեանէն կը տեսնէք որ Բարեգործականին համակիր է եւ երկու գաղթակայաններուն մէջ մասնաճիւղեր կազմուած են գրեթէ 150-160 անդամներով: Հոս ալ [, Այնճարի նման,] իւրաքանչիւր տուն կը բաղկանայ մէկ սենեակէ ու կից ունի 400 քառակուսի մեթր պարտէզ մը բանջարեղէնի մշակութեան համար: Շատեր տունին յարակից մասեր շինած են իրենց ծախքով, որոնք կը ծառայեն իբր բնակարանի մաս, գոմ եւն.: Ատկէ զատ, իւրաքանչիւր ընտանիք ունի գիւղին մօտիկը իր մշակութեան հողը: Հոս կը գտնուին ընտանիքներ, որոնք փոխանակ իրենք մշակելու իրենց հողը, դրացի արաբներու կը յանձնեն այդ հողը եւ կը ստանան բերքին 40 առ հարիւրը, մնացեալ 60 առ հարիւրը թողլով վարձակալ արաբին: Ասիկա ճիշտ չէ, ամէն ոք իր ստացածը պէտք է ինք մշակէ եւ ամբողջութեամբ օգտուի անկէ: Ընդհանրապէս իրենց մշակութիւնները շատ յաջող են ըլլայ հողին բարեբերութեան, ըլլայ ջուրի առատութեան պատճառով: Սուր այցելութեան օրս տարօրինակ պարագայի մը ականատես եղայ: Ամերիկայէն ղրկուած հագուստեղէններէն մաս մըն ալ այս գաղթակայանը ղրկուած էր բաշխուելու համար, անշուշտ կարօտեալներուն: Վարժարան-եկեղեցիի սրահին մէջ հաւաքուած էին ուսուցիչ եւ թաղական խորհուրդի անդամներ եւ այդ գործով կը զբաղէին: Հագուստեղէնները քանի մը կտորներով բազմաթիւ կապոցներու վերածուած էին եւ անոնցմէ մաս մը չքաւորներու տրուելէն յետոյ, մնացեալը պիտի բաժնուէր մնացեալ բոլոր ժողովուրդին եւ որպէսզի խնդիր չըլլար վիճակահանութեամբ պիտի կատարուէր այդ բաշխումը: Ահաւասիկ բաշխումի եղանակ մը որ զարմանք կը պատճառէր. փոխանակ այդ հագուստեղէնները միայն չքաւորներու բաշխուելու, ինչպէս անոնց առաքման նպատակն է, ամէնքին ալ կը բաշխուի թէ՛ խնդիր չունենալու եւ թէ՛ այն պատճառաբանութեամբ թէ չքաւորներ չեղողներն ալ հագուստ չեն կրնար գնել, շատ սուղ ըլլալուն: Բնականաբար, տեղւոյն վրայ, անոր անտեղիութեան մասին խօսեցայ: Սակայն այժմէն հարկ կը համարեմ յայտնել որ բոլորովին աւելորդ է հագուստեղէն ղրկել Սուրիա եւ Լիբանան, ուր պէտք չկայ ատոր: Ոչ մէկ գաղթականի վրայ կը տեսնուին ասկէ առաջ ղրկուած հագուստեղէնները:

Այս երկու գաղթակայանները մէկ քահանայ ունին որմէ դժգոհ է ժողովուրդը, սակայն, Պէյրութի առաջնորդարանը այդ մասին բան մը ըրած չէ: Ժողովուրդը մեր հոն եղած ատեն Վեհ. կաթողիկոսին բողոքագիր մը ներկայացուց եւ խնդրեց որ յիշեալ քահանան հեռացուի անկէ եւ ես ալ այդ մասին խօսեցայ վեհափառին որ շուտով պատշաճը տնօրինելու խոստում տուաւ: Քահանային մասին զեղծումներ կը

պատմուին: Այսպէս, Ռաս Ուլ Այնի վարժարանական շէնքին լրացման համար Գահիրէի հանգանակութենէն տրուած գումարով գնուած սիմենթ, երկաթ եւն. ծախած է կ'ըսուի: Արդարեւ, յիշեալ շէնքը չորս պատերով կիսաւարտ կը մնայ ինչ որ պէտք է շուտով լրացուի: Այս առնչութեամբ պէտք է աւելցնեմ որ Սուրիոյ եւ Լիբանանի մեր եկեղեցական եւ ազգային իշխանութիւնները շատ անտարբեր են ժողովուրդին հանդէպ եւ գրեթէ բնաւ անոր կրօնական եւ այլ պէտքերով չեն զբաղիր: Մաղթենք որ նորընտիր վեհափառը շուտով դարման մը տանի այս ցաւալի կացութեան իր կատարելիք նոր կազմակերպութեամբ:

4. **Միութեան Նահրի Դարմանատուն**.- Այցելեցի նաեւ Միութեան Նահրի Դարմանատունը[13]: Նահրը Պէյրութի այն թաղամասն է ուր կը բնակի հայ գաղթականութեան մեծագոյն մասը: Դարմանատունը մինչեւ կէսօր բաց է, ուր կայ բժիշկ մը եւ մնայուն հիւանդապահուհի մը: Քեմփերու չքաւոր հիւանդները հոս կը դիմեն եւ կը ստանան բժշկական խնամք ամէն օր առաւօտուն: Այս դարմանատունը լաւ գործ մը կը կատարէ եւ անհրաժեշտ է որ ան շարունակուի առ այժմ: Բժիշկը՝ Տոքթ. Տիգրան Վարժապետեան[14], համակրելի երիտասարդ մըն է որ ամենայն հոգածութեամբ կը դարմանէ հիւանդները ու կանոնաւոր արձանագրութիւն կը պահէ: Հիւանդներէն հիւանդանոցի պէտք ունեցողները կը ղրկուին հիւանդանոց: Ասոր նման դարմանատուներ կան նաեւ Հալէպի եւ Զահլէի մէջ, այս վերջինը աւելի փոքր աստիճանի մը վրայ: Ասիկա Միութեան լաւ ձեռնարկներէն մին է որ պէտք է շարունակուի եւ որ շօշափելի արդիւնք մը կու տայ:

5. **Մալարիայի Գործ**.- Արդէն վերը ակնարկեցի Մալարիայի գործին մասին: Տոքթ. Պէրպէրեանի կողմէ արդէն չորս տարիէ իվեր առաջ տարուած այս գործը շատ նախնական վիճակի մը մէջ կը գտնուի, թէեւ ինք կը հաւաստէ թէ այս կերպով հիւանդութիւնը ու մահերու թիւը նուազած են: Մնայուն երեք հոգի Պէյրութի քեմփերուն մէջ կը պահէ, մէկ հոգի Այնճարի մէջ, մէկ հոգի Սուրի մէջ: Իսկ եղանակին համեմատ 10-20 գործաւորներ կ'աշխատցնէ, խոտերը մաքրել տալու եւ մալարիոլ դնելու համար լճացած ջուրերու մէջ: Ինչպէս ըսի, ասոր միանգամընդմիշտ դարմանն է մէկ անգամէն եւ հետզհետէ սիմենթէ ջուրի ճամփաներ շինել, քանի որ վազող ջուրին մէջ մալարիա չի կրնար ըլլալ, եւ մէկ անգամէն վերջացնել այս գործը: Այժմու Տոքթ. Պէրպէրեանի գործելակերպն է տրամադրուած գումարներով - որ տարեկան 15,000 տոլար է - մարդոց ամսականներ եւ օրականներ տալ ջուրերը մաքրելու եւ վազեցնելու համար: Այդ կերպով գործը տարիներով չի վերջանար, մինչ եթէ սիմենթով ջուրի ճամփաներ շինուին միանգամընդմիշտ գործը կը վերջանայ եւ տարիներով մարդիկ պահելու պէտք չի մնար: Աւելցնեմ նաեւ որ Լիբանանի մէջ, բացի լեռնային մասէն չկայ շրջան մը ուր մալարիա չկենայ, հետեւաբար կառավարութիւնն է որ պէտք է ստանձնէ այդ գործը, քանի որ անիկա մեր Միութեան նիւթական կարողութեանց սահմանին մէջ գործ մը չէ, այլ կառավարութեան մը:

6. **Վարժարաններ**.- Դժբախտաբար ամռան շրջանին հանդիպելուն մեր այցելութիւնը Սուրիա եւ Լիբանան, վարժարանները գոց էին ամռան արձակուրդին պատճառաւ: Քեմփերու վարժարանական շէնքերը շատ խեղճ վիճակի մէջ են եւ ոմանք չունին նստարան եւն.: Մեր Միութիւնը պէտք է իր ուշադրութիւնը ու ամբողջ ուժը կեդրոնացնէ վարժարանական գործին վրայ, տարուէ տարի բարուօքելու համար անոնց վիճակը: Այցելեցի նաեւ Միութեան սեփական վարժարանը՝ Դարուհի Յակոբեան, Պէյրութի մէջ, որ լաւ շէնքի մը մէջ կը գտնուի: Միքանի փոքր նորոգութիւններու կը կարօտէր որոնց մասին խօսեցայ որ ըլլան: Արդէն, ինչպէս որոշուած է,

կրթական տեսուչին[15] երիտասարդ օգնական մը պիտի տրուի, գործը փափաքելի ձեւով վարելու համար:

7. **Ազունիէի Թոքախտաւորներու Բուժարան**[16].- Այցելեցի նաեւ այս բուժարանը, որ տեղի եւ կլիմայի տեսակէտով լաւագոյն վայրի մը մէջ կառուցուած է: Մաքրութիւնը եւ ներքին կազմակերպութիւնը լաւ է: Ունի վճարովի առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի հիւանդներ որոնց մէջ 20ը օտար: Հայ չքաւորները չորրորդ կարգի են եւ ձրի: 120 հիւանդներ կային, որոնցմէ ըսուածին համեմատ 60-70ը ձրի եւ հայ էին: Լիբանանցի մնայուն բժիշկ մը ունի, իսկ բժշկապետն է Տոքթ. Բաբկէն Մկրտիչեան, որ շաբաթը երեք օր կ'այցելէ եւ գործողութիւնները կ'ընէ: Խճողուած է շէնքը եւ կը փափաքին յարկ մը եւս աւելցնել կամ առանձին շէնք մը շինել հոն փոխադրելու համար հիւանդապահներու, գործողութեանց եւն.ի յարկաբաժինները որոնք այժմ միեւնոյն շէնքին մէջ կը գտնուին: Ինչպէս յայտնի է, խնամակալութիւն մըն է որ կը մատակարարէ այս հաստատութիւնը, որ սակայն որեւէ ազգային իշխանութեան քոնթրոլի ենթակայ չէ: Հարկ է որ այս հաստատութեան վրայ դրական հակակշիռ մը ի գործ դրուի ազգային իշխանութեանց կողմէ: Բարդ հաստատութիւն մըն է որ կը կարօտի ատոր համապատասխան ազդու հակակշռի մը որ այժմ չկայ: Հաստատութիւնը ինքնին օգտակար է Սուրիոյ եւ Լիբանանի ու դրացի հայ գաղութներու չքաւոր թոքախտաւորներուն համար:

8. **Ճիպէյլի Թռչնոց Բոյն Որբանոց**[17].- Այցելեցի այս հաստատութիւնը, որ լեռ-ամառանոց փոխադրուած էր եւ որուն Միութիւնը տարեկան 3000 տոլարով կ'օգնէ պատերազմի շրջանին, Տանիմարքայէն դրամ չկարենալ ստանալուն համար: Տեսնուեցայ տնօրէնուհի Միս Մարիա Ճէյքըպսընի[18] հետ՝ գրեթէ ամբողջ օրը որբանոցին մէջ անցընելով: Այժմ ունի 112 փոքրիկներ՝ 4-16 տարեկան, մեծամասնութեամբ աղջիկներ: Տղաք կան փոքրիկներուն մէջ: Բացառիկ շրջանի մը միջոցին օգնութիւն ընծայուեցաւ այս հաստատութեան: Նորմալ պայմաններու մէջ նման հաստատութեանց օգնելու է Միութիւնը եթէ անիկա իր քոնթրոլին ենթակայ ըլլայ:

Եզրակացութիւններ

Ա.- Ինչ որ Գահիրէէն Տիար Ճանիկ Չագըրի տեղեկութիւններուն վրայ Կեդրոնական Վարչութեան առաջարկուած է, Սուրիա եւ Լիբանան այցելելէ եւ անձամբ ամէն բան տեսնելէ յետոյ իմ ալ եզրակացութիւնս է, որ պէտք չէ ուղղակի կապուած ըլլայ Նիւ Եորքին Նպաստից Յանձնաժողովը, այլ ուղղակի ենթակայ՝ Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին: Արդէն Գահիրէի առաջարկած նոր կազմակերպչական ծրագիրը, որ անպայման պէտք է կիրարկուի, այդ աննորմալ կացութեան վերջ պիտի դնէ բոլորովին: Աւելցնեմ որ այդ պատճառաւ, պատերազմի տարիներու ընթացքին մեր Միութիւնը տուժած է Սուրիոյ եւ Լիբանանի մէջ:

Բ.- Պատերազմի շրջանին Նպաստից Յանձնաժողովին միջոցաւ մեր Միութեան ծախսած հարիւր հազարաւոր տոլարի գումարները ոչ մէկ շօշափելի հետք ձգած են եւ ոչ մէկ ձեռնարկ գոյութիւն ունի որ ատոնց ապացոյց ըլլայ: Կերպով մը պարապի ծախսուած են ատոնք: Անցողակի ալ, ինչպէս ակնարկեցի վերը, Բարեգործականի հանդէպ ոչ մէկ երախտագիտական զգացում գոյութիւն ունի ժողովուրդին մէջ որուն ստուար մեծամասնութիւնը չի գիտեր թէ այդ գումարները Բարեգործականի կողմէ (իմա՝ յատկացուած են - Ա.S.) ծախսուած են:

Գ.- Տարբեր է բոլորովին պատերազմի այս տարիներէն վերջ, Լիբանանի եւ Սուրիոյ հայութեան նիւթական վիճակը: Այսօր հոն ստուարաթիւ բարեկեցիկ դասակարգ մը գոյութիւն առած է որ բոլորովին անտարբեր է իր մօտ գտնուող կարօտեալ-

ներուն հանդէպ: Այս երկու գաղութները ներկայիս ի վիճակի են իրենց կարօտեալները հոգալու եւ պարտին հոգալ: Պէտք է այդ ուղղութեամբ աշխատանք տանիլ հոն:

Դ.- Բացարձակ աւելորդ է այլեւս հագուստեղէն ղրկել, դրամական նպաստներ տալ: Պէտք է Միութիւնը իր ուժը կեդրոնացնէ վարժարաններուն, դարմանատուներուն գործին եւ փոքր աստիճանի վրայ մալարիայի դէմ պայքարին: Ասկէ անդին այլեւս այդ գաղութին մէջ բան մը ընելու պէտք չունի: Գաղութը ինք պէտք է հոգայ իր պէտքերը: Արտասահմանի շարունակական նպաստներու հետեւանքով՝ Սուրիոյ եւ Լիբանանի հայ գաղութին բարեկեցիկ դասակարգը ինքզինք անտարբերութեան տուած է, իսկ չքաւոր դասակարգին մէջ ալ նախաձեռնութեան ոգին մեռած է եւ ծուլութեան վարժուած է:

Ե.- Անհրաժեշտ է, ինչպէս որոշուած է, Նոյեմբերէն սկսեալ, Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին կողմէ առաջարկուած եւ ծրագրուած նոր կազմակերպչական ծրագիրը կիրարկել, վերջ տալով Նպաստից Յանձնաժողովին անջատ եւ Նիւ Եորքի կապուած գործունէութեան: Գահիրէն պէտք է ունենայ իր ամբողջ շրջանակին քոնթրոլը եւ ինքն ալ պատասխանատու ըլլայ Կեդրոնին:

Գահիրէ, 11 Սեպտ[եմբեր] 1945 Ստոր[ագրութիւն՝] Հայկ Գավուգճեան

❋❋❋

Նոթեր

Այնճար.- Պէյրութ գտնուելուս, բնականաբար հետաքրքրուեցայ տեսնել ճեպէլմուսացիներէ բաղկացած եւ ֆրանսացիներու կողմէ շինուած տուներու մէջ զետեղուած մօտ 1000 ընտանիքէ (5000 անձ) բնակուած գաղթակայանը Պեքաայի դաշտին մէջ, մօտ 1000 մեթր բարձրութեան վրայ:

Այնճարի մասին յաճախ լսած էի, բայց որպէսզի կարող ըլլայի աննախապաշար կերպով գաղափար մը կազմել, անակնկալօրէն եւ առանց ինքնութիւնս հասկցնելու հոն գացի: Հոն ինծի հանդիպողը, տեղւոյն ազգային վարժարանի շրջանակէն Պոյաճեան կոչուած անձը եղաւ:

Զարմանքս շատ եղաւ երբ այս գաղթակայանին զանազան ձեռնարկներուն, շինութեանց եւ այլ գործերու շուրջ հարցումներ ուղղեցի չգիտցողի մը ձեւով: Զիս չճանչցող այդ պարոնը միօրինակ պատասխան մը տուաւ. «Ատոնք բոլոր ընողն է դաշնակցական Օգնութեան Խաչը»: Գիտէի, սակայն, որ տեղւոյն ըմպելի եւ գործածութեան ջուրը հայթայթող փոմփին, մեքենային եւ խողովակներուն զետեղումը, աղբիւրներուն բաժանումը, տեղւոյն առողջապահական ձեռնարկները՝ դարմանատուն, մայրանոց, երկրագործական աջակցութիւնները՝ սերմնցու, լծկան եզներ, թրաքթէօր եւ այլ բաներ, ամենամեծ մասով շինուած եւ հայթայթուած էին մանաւանդ ՀԲԸ Միութեան ձեռամբ:

Ուստի հարցուցի թէ Միութիւնը բան մը ըրած չունի՞:

- Շատ քիչ բան...- եղաւ պատասխանը:

Այցելեցի ջրաղացը, ջուրի փոմփը, ջուրին ակը: Ամէն ինչ լաւ վիճակի մէջ [է]: Միութեան աջակցութեան գլխաւոր բաժինը միշտ հոս ղրկուած է: Ամէն ընտանիք ունի իր տունը եւ մշակման հողը: Ասով հանդերձ, հոն կարելի չէ եղած ունենալ ոչ իսկ փոքր մասնաճիւղ մը շէֆերուն ընդդիմութեան եւ գումարներ տեղացնող Նպաստիցին անտարբերութեան պատճառով:

Տեղւոյն բողոքական եւ հայ կաթոլիկ վարժարանները Միութենէն նպաստընկալ են: Ազգային վարժարանը նպաստընկալներու շարքին չէ, որովհետեւ տեղւոյն

շէֆերը հակառակ Միութեան բարեկամ մեծամասնութեան, մերժած են Միութեան կրթական հակակշիռը: Եւ այդպէս ըլլալով հանդերձ, Նպաստիցը առանց նկատի առնելու այս պարագան ինքնագլուխ ամէն տարի մեծագումար դրամներ տուած է Միութիւնը չճանչցող այդ վարժարանին եւ նոյնիսկ 600 սուրիական ոսկի նուէր մը ամուսնացող ուսուցչի մը... առանց ժողովի գիտակցութեան:

Զահլէ.- Այնճարէն, Լիբանանի կարեւոր հայակեդրոններէն եղող Զահլէ գացի, ուր կրցայ տեսնուիլ Միութեան մասնաժողովի ատենապետ եւ Բարեգործականին հաւատարիմ աշխատաւորներէն Յարութիւն Յովակիմեանին[19] հետ: Հոս Այնճարի հակապատկերը ըլլալով, իմացայ որ 20 տարիէ աւելի է որ գոյութիւն ունի ՀԲԸ Միութեան մասնաճիւղը 60-70 վճարող անդամներով: Տեղ մը ահա, ուր Միութեան բարիքը մոռցուած չէ, եւ երբ օգնութեան տեսակէտով միայն Այնճարի անունը կը լսուի միշտ, իմացանք որ Զահլէ եւ շրջակայք՝ Շթորա, Ռայաք, Պաալպէք, կան բազմաթիւ գաղթականներ, որոնց շատ աննշան աջակցութիւններ կը տրուին:

Սուր, Ռաս Ուլ Այն.- Այցելեցի, միշտ առանձինս, նաեւ Սուրի եւ անոր մօտիկ Ռաս Ուլ Այնի (Ռաշիտիէ) մօտ [գտնուող] 250 տնուոր գաղթականայանները այն միեւնոյն տեսակ բնակարաններով, որպիսիք տեսայ Այնճարի մէջ, շինուած ֆրանսացիներու միջոցով: Ատոնցմէ մօտ 75ը շինուած են ՀԲԸՄիութեան կողմէ, Նուպարեան անունով: Հոս տրամադրութիւնները բոլորովին հակոտնեայ գտայ Այնճարէն: Ժողովուրդը աւելի բարեկիրթ, տուները եւ պարտէզները աւելի ճաշակաւոր: Երկու մասերու մէջն ալ զատ-զատ Միութեան մասնաժողովներ [կան]: Վարժարաններն եւս – ազգային, հայ աւետարանական կամ հայ կաթոլիկ, ամէնքն ալ նպաստընկալ Բարեգործականէն:

Եթէ նկատի չունենանք վերաբերումովը եւ զեղծումներովը ծանօթ իր պաշտօնին անարժան քահանան, որուն դէմ ծանր գանգատներ կան, այս գաղութը, բաղդատաբար, հանդարտ է եւ ժողովուրդը իր երկրագործական աշխատութեանց նուիրուած կը մնայ, չունենալով հանդերձ Այնճարին շռայլուած աջակցութիւնները: Տեղ մը ահա, ուր Միութեան բարի սերմը ապառաժի վրայ ցանուած չէ:

Պէյրութի Գաղթակա[յա]նները.- Պատեհութիւն ունեցայ նաեւ այցելելու Պէյրութի եւ արուարձաններու թիթեղաշէն, տախտակաշէն խարխլած տնակները, բազմահարիւր եւ խճողուած, ուր գաղթականները կ'ապրին վերեւ յիշուած գաղթականայաններէն անհամեմատ կերպով աւելի գէշ եւ հակաառողջապահական պայմաններու տակ. Ամառը՝ կիզիչ արեւուն եւ ձմեռը՝ անարեւ եւ ցուրտին տակ:

Միեւնոյն խեղճուկ վիճակը ունին նաեւ բազմահարիւր փոքրիկներ ունեցող փայտաշէն թիթեղածածկ դպրոց-եկեղեցիները: Դպրոցները նպաստընկալ են:

Այս քեմփերը ամէնքն ալ ունին Պէյրութի մասնաժողովին առընթեր իրենց ՀԲԸ Միութեան օժանդակ ճիւղերն, ամէնքն ալ գնահատող՝ Միութեան աջակցութիւններ-ը, որոնք ինչպէս ըսինք, անհամեմատօրէն վար կը մնան Այնճարի ժողովուրդէն:

Այցելեցինք այդ շրջանի - Նահր-Պուրճ Համուտ - մալարիա[յով վարակուած] վայրեր, ուր այդ հիւանդութեանց դէմ պայքարելու համար Միութիւնը, ամէն տարի, մեծագումար դրամ կը վատնէ յումպէտս: Ջոյգ ջրաղացքները տեսայ, աղտոտութիւններով լեցուն. ատոնց արմատական դարմանը բժշկական անցողակի դեղերով կարելի չէ ընել: Ջուր ծախքեր, աւելի ոեքլամի համար: Անհրաժեշտ եղածը այդ ջրակոյտերը պեղումներով եւ մաքրումով գոցել է՝ զայնս առաջնորդելով դէպի ծովը: Բայց ատիկա ալ՝ Միութեան ուժերէն դուրս կառավարութեան միջոցով [կամ] հայ հարուստներուն ձեռամբ [պէտք է ըլլայ]:

Այցելեցի նաեւ, Հալէպի մէջ, Մէյտանի գաղթակայանները եւ միւսները, ամէնքն ալ միեւնոյն պայմանաց մէջ:

Մասնաժողովներ.- ծրագրուած է Պէյրութի եւ Հալէպի մայր մասնաժողովները վերածել Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովի ճեռքին տակ ենթայանձնաժողովներու:

Պէյրութի մէջ տեսնուեցայ մասնաժողովի ատենապետ տ[իար] Հմայեակ Գրանեանի[20] հետ, որ միանգամայն անդամ է նաեւ (վերջէն անուանուած) Նպաստիցին:

Որքան կրցայ հասկնալ այս կարեւոր մասնաժողովը անգործութեան դատապարտուած է Նպաստից Առժամեայ Յանձնաժողովին արհարմարհական եւ ինքնագլուխ գործունէութեան հետեւանքով, զզուեցնելով եւ հեռացնելով Միութեան բազմամեայ համակիրները, եւ շուքի մէջ ձգելով մնայուն մասնաժողովները:

Նպաստիցը, նոյնիսկ անտեսելով Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը, իր յարաբերութիւնները կը կատարէր Կեդրոնի հետ: Այդ մարմինը, ինչպէս ժամանակին Գրանեանի կողմէ գրուած է Կեդրոնական Վարչութեան - բաղկացած է մեծամասնութեամբ հակաբարեգործական տարրերէ, որոնք միշտ դէմ եւ հեռու մնացած են Բարեգործականէն, եւ միայն վերջին տարիներս, Նպաստիցին դրամներով անուն շինելու եւ այդ նպաստները իրենց ուզած կերպով գործածելու համար 2-3 տարի առաջ անդամագրուած են... վճարելով ամսական մէկ լիբանանեան ոսկի, մօտ 40 սեներ: Այս պարագան բաւական է ցոյց տալու իրենց իսկական նկարագիրը եւ տրամադրութիւնը Միութեան նկատմամբ, որուն հարիւրհազարաւոր տոլարները կը բաժնեն:

Հալէպի մասնաժողովը, որուն, գրեթէ մնայուն ատենապետն է տիար Արմէն Մազլումեան[21], քանի մը խելքը գլուխը գործակիցներով, թէեւ քիչ մը աղայական, սակայն սրտովին Բարեգործականի կապուած է, մօտ 35 տարիներէ իվեր անոր անդամ ըլլալով, ինչպէս նաեւ՝ պատուոյ անդամ:

Այս մասնաժողովն է որ բացէն ցցուեցաւ Նպաստից Առժամեայ Յանձնաժողովին ինքնագլուխ եւ քմահաճ գործելակերպին դէմ, երբ մանաւանդ Նպաստիցը որոշեց Միութեան նպաստները բաշխել իրմէն որոշուած յանձնախումբերու ձեռամբ: Հալէպի մասնաժողովին, Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին եւ Նիւ Եորքի Կեդրոնին քով ըրած ազդու բողոքներուն վրայ է որ Կեդրոնի հրահանգով Նպաստիցը ստիպուեցաւ իր բաշխումները կատարել, արդէն գոյութիւն ունեցող մասնաժողովներուն ձեռամբ:

Ամէն քիչ [թէ] շատ, մեծ թէ փոքր տեղերու մէջ կան մասնաճիւղեր, մանաւանդ հոն, ուր վարժարանները նպաստընկալ են: Ասոնք շատ աւելի առաջ կրնան տարուիլ, նախ, վերցնելով Նպաստից Յանձնաժողովին խոչընդոտը եւ յետոյ զայնս վերակազմելով կանոնատր գործիչի մը եւ պրոպագանտի միջոցով:

Ինչպէս ամէնուրեք - եւ Միութեան հիմնարկութենէն իվեր - այս կողմերն ալ, հայ կազմակերպութիւններէն միայն ոմկավար ազատականներն են որ անդամ եւ զօրավիգ կանգնած են Միութեան եւ անոր ձեռնարկներուն: Միւսները դէմ եղած են միշտ ինչպէս դաշնակցականները, եւ սառն կամ անտարբեր, ինչպէս համայնավարները եւ հնչակեանները:

Ազգային իշխանութիւններն ալ, այնքան նպաստաւորուող Միութենէն, դաշնակցականներուն եւ հակաբարեգործականներուն ազդեցութեան տակ գտնուելնուն, դէմ եղած են Միութեան, հակառակ Կիլիկիոյ կաթողիկոսարանին, որ իր հանգուցեալ Սահակ, Բաբկէն եւ Պետրոս կաթողիկոսներով ամենաջերմ բարեկամ եւ զօրավիգ եղած է միշտ ՀԲԸՄիութեան:

Այս տեսակէտով մեծ անակնկալներ[22] կան նորընտիր Գարեգին վեհափառ կաթողիկոսէն[23]:

Քանի որ այս առթիւ Նպաստից Կեդրոնական Առժամեայ Յանձնաժողովին մասին եւս խօսեցանք, անցողակի, սա եւս ըսենք որ ան - եթէ մանաւանդ պատերազմի շրջանին - փոխանակ իրեն տրամադրուած բազմահազար տոլարները յումպէտս որպէս ողորմութիւն բաժնելու - Միութիւնը իջեցնելով աղքատախնամներու աստիճանին - եթէ այդ գումարները ձեռնարկներու յատկացուէր, զինուորական պահանջաց համար - զգեստ կարել, գուլպայ, վրան, կօշիկ եւն., եւն. արհեստներով – ոչ միայն դրամները անօգուտ մսխուած չէին ըլլար, այլեւ դրամագլուխին եւ գործին յաւելումովը, շարունակումովը կարելի պիտի ըլլար բազմահարիւր աղքատ ընտանիքներու պատուաւոր աշխատութեամբ գործ եւ ապրուստ հայթայթել...:

Կրթական Ձեռնարկները.- Միութիւնը կը նպաստէ իրեն հակակշիռը ընդունող եւ Միութեան համակիր տեղերու վարժարանաց, եւ աղքատ եւ փոքր շրջաններուն, ուր առանց Միութեան աջակցութեան հայ մանուկները ազգային կրթութենէ զուրկ պիտի մնային: Մեծ կեդրոններու մեծագումար դրամներ, պիւտճէներ ունեցող վարժարանաց տրուածները աւելի խորհրդանշական են եւ կ'ըլլան՝ պահելու համակրական կապերը:

Ոչ մէկ յարանուանական խտրութիւն: Ազգային վարժարանները զուրկ արտաքին աջակցութիւններէ, որպիսիք ունին հայ կաթոլիկ եւ հայ աւետարանական վարժարանները, ամենէն կարօտեալներն են: Ազգային վարժարանաց միակ կանոնաւորապէս նպաստողն է ՀԲԸՄիութիւնը: Վերջացող տարեշրջանին Սիւրիոյ եւ Լիբանանի նպաստընկալ վարժարանաց թիւը եղած է 93, որնցմէ 39ը Լիբանանի, 11ը Դամասկոսի, 12ը Քեսապի եւ 31ը՝ Հալէպի շրջաններուն մէջ: Ասոնցմէ 53ը ազգային, 21ը հայ աւետարանական եւ 19ը՝ հայ կաթոլիկ:

Ատոնցմէ տարբեր է Պէյրութի մէջ Միութեան սեփական Դարուհի Յակոբեան Աղջկանց Բարձրագոյն Նախակրթարանը, չորս տարեշրջանով: Այցելեցինք շէնքը, բոլորովին արդիական կազմածներով: Արձակուրդ ըլլալով չկրցինք տեսնել սանուհիները, որոնք կը մեծնան ազգային դաստիարակութեամբ, ըլլալու վարժուհիներ եւ ընտանիքի մայրեր:

Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն.- ՀԲԸՄիութեան Սիւրիոյ եւ Լիբանանի կարեւոր ձեռնարկներէն մէկն եւս, ատենին Նիր Իսթ Րիլիֆի կողմէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անկէ ետք Բաբկէն Կաթողիկոսին օրով Միութեան փոխանցուած Հայ Երիտ. Ընկերակցութիւնն է, ենթակայ Միութեան նիւթական եւ բարոյական հակակշռին:

Ընկերակցութիւնը ունի իր գլխաւոր ճիւղերը Պէյրութի, Հալէպի եւ Դամասկոսի մէջ, եւ երկրորդական ճիւղերը, շատ մը այլ կեդրոնները - մօտ 15 մասնաճիւղ - աւելի քան հազար երկսեռ անդամներով:

Պէյրութի գլխաւոր ակումբն է Զարեհ Նուպար ակումբը, գեղեցիկ եւ ընդարձակ շէնքի մը մէջ, մեծ սրահներով: Իր օժանդակ ճիւղերն են Մելգոնեան Ընթացաւարտից, Գրասէր Երիտասարդներու Միութիւնը (ԳԵՄը, *Ծիածան*[24] պարբերաթերթով), համալսարանական երիտասարդաց եւ մարզական միութիւններ: Այս ձեռնարկները կ'արժէ մասնաւոր ուշադրութեան առնել, զի անոնցմէ է որ կը պատրաստուին ՀԲԸ Միութեան վաղուան ուժերը եւ ատոր համար ալ տարբեր հակաբարեգործական միութիւնները կ'աշխատին զայնս կազմալուծել եւ կամ իրենց մէջ տեսնել:

Երիտասարդաց Միութեան վերին Վարիչ Մարմինն է Պէյրութի մէջ նստող Կեդրոնական Վարչութիւնը: Ամէն ակումբ ունի նաեւ Բարեգործականի վստահելի անդամներէ բաղկացած Գործադիր եւ անդամներէն ընտրուած տեղական վարչութիւն:

Այս ընկերակցութիւնը վաւերացուած է սիւրիական եւ լիբանանեան կառավարութիւններէն: Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը ամէն տարի կարեւոր գումարով մը կ'օգնէ ձեռնարկին:

Կազմակերպչական

Վերը արդէն անդրադարձայ Նպաստից Յանձնաժողովին տարականոն գործունէութեան Եգիպտոսի շրջանակին մէջ ուղղակի կապուած Նիւ Եորքին: Ասիկա տեսակ մը կազմալուծում առաջ բերած է Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ուր Միութիւնը գործունէութեան ընդարձակ դաշտ մը ունի որ կարելի չէ եղած մշակել պէտք եղածին պէս:

Անհրաժեշտ է այդ տարականոն գործունէութեան շուտով վերջ տալ եւ Միութեան ամբողջ գործերն ու ձեռնարկները Եգիպտոսի շրջանակին մէջ՝ դնել Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին հակակշռին ներքեւ, որուն համար արդէն այդ մարմինը Նիւ Եորք կազմակերպչական նոր ծրագիր մը ներկայացուցած է, որ շուտով եւ ամբողջութեամբ կիրակութեան դրուելու է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] ՀԲԸՄի կեդրոնը 1921ին փոխադրուած էր Փարիզ՝ Գահիրէէն, ուր մնացած էր Գործադիր Ժողով մը: Յետագային, Բ. Աշխարհամարտի ընթացքին, Կեդրոնը փոխադրուած էր Ֆրանսայէն Նիւ Եորք: Պատերազմական այդ տարիներուն կազմակերպական, վարչական-իրաւասական զանազան հարցեր յառաջացած էին եւ մնացած անլոյծ: Հիմա որ Աշխարհամարտը հասած էր աւարտին, Գահիրէի այս քայլը նպատակ ունէր նաեւ քարտէսագրել գլխաւոր մարմիններու իրաւասութեանց աշխարհագրական ծիրը:

[2] Ճանիկ Չագըր (1879-1955), եգիպտահայ ծանօթ ազգային-հասարակական գործիչ, 1924-54՝ Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ, առաջնորդող դեր ունեցած է ՀԲԸՄի Եգիպտոսի շրջանակի 1930-50ականներու գործունէութեանց (Ա. Ալպոյաճեան, «Ճանիկ Հայկ Չագըր», *Միտն*, Օգոստոս 1955, էջ 239-40): Տուեալը տրամադրեց Հայկ Աւագեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

[3] Նպաստից Կեդրոնական Յանձնաժողովը կը կազմուի 9 Յունիս 1939ին, ձեռամբ Սարաճեան սրբազանի, ՀԲԸՄ Փարիզի կեդրոնէն ստացուած հրահանգի մը հիմամբ: Յանձնաժողովին նպատակն էր նպաստել 16-22 Յուլիս 1939ին Ալեքսանտրէթի սանճաքէն տեղահանուած հայութեան Լիբանան հաստատման (Տոքթ. Տ.Ա. Պէրպէրեան, «Ամփոփ Տեղեկագիր ՀԲԸՄի Նպաստից Կեդրոնական Յանձնաժողովի Վեցամեայ Գործունէութեան»՝ *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ալպում Յուշամատեան*, Հրատ.՝ ՀԲԸՄիութեան Լիբանանի Վեթերաններու եւ Բարերարներու Համախմբումին [խմբ.՝ Ներսէս Շիրինեան, Յակոբ Ղազարեան, Ասատուր Մակարեան, Զաւէն Մսըրլեան], Պէյրութ, Տպ. Ատլաս, 1969, էջ 46-49):

[4] Հայկ Գաւուքճեան (1876–1977), ձեռնարկատէր, բարերար անդամ ՀԲԸՄիութեան, ատենապետն էր Նիւ Եորքի Ս. Վարդան Կաթողիկէի կառուցման

յանձնախումբին: 1920ականներուն հիմնած էր իր ընկերութիւնը՝ The Bingham Photoengraving Company: Տուեալը տրամադրեց Դոկտ. Վաչէ Ղազարեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

[5] «425րդ Նիստ ՀԲԸՄիութեան Եգիպտոսի Կեդր. Յանձնաժողովին, գումարուած 5 Հոկտեմբեր 1945ին, Երեկոյեան ժամը 7ին, Իր Գրասենեակին Մէջ», ՀԲԸՄ Գահիրէի արխիւատուն, համապատասխան տոմար: Ատենագրութիւնը տրամադրեցին Մարուշ Երամեանն ու Պերճ Թերզեանը, որոնց կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

[6] Երկու գաղթակայանները կը գտնուէին իրարմէ շուրջ 3 քիլոմեթր հեռու: Առաջինը՝ Պէյրութի նաւահանգիստին կից եւ գոյատեւեց մինչեւ 1976 (թէեւ 1960ականներէն սկսեալ հայերու մեծամասնութիւնը տեղափոխուած էր Պէյրութի արուարձանային այլեւայլ շրջաններ, մինչ գաղթակայանը բնակեցուած էր պաղեստինցիներով, քիւրտերով, Սուրիայէն թէ տարբեր շրջաններէ եկած ոչ-քրիստոնեայ պանդուխտներով): Սանճաքցիներու քեմփը կը գտնուէր Պուրճ Համուտի արեւելեան մուտքին կից: Անոր շինութեան ՀԲԸՄը մասնակցած էր կառուցելով 250 տնակ: Գաղթավայրը գոյատեւեց մինչեւ 1970ականներու վերջերը: Այնուհետեւ ան ենթարկուեցաւ մասնակի քանդումներու: Հոն շինուեցան Հարպոյեան շէնքերը եւ առեւտրական կեդրոնը, իսկ 2000ականներու կէսերուն, Պուրճ Համուտի քաղաքապետարանը ձեռնարկեց նոր, բնակելի շէնքերու եւ կառատան կառուցման: Ներկայիս այդ գաղթակայանէն մնացած է հազիւ թաղ մը:

[7] Այս պարագային՝ կոյուղի:

[8] Ֆրանսայի Հոգատար Իշխանութեանց կողմէ Ալեքսանտրէթի սանճաքին Թուրքիոյ յանձնումով շրջանի հայութիւնը (բացի Վաքըֆ գիւղի բնակչութեան մէկ մասէն) լքեց իր բնակավայրերը եւ մեծ մասով հաստատուեցաւ Լիբանան: Մուսա Լեռան գիւղերու բնակչութիւնը արմատաւորուեցաւ Այնճարի ճահճոտ դաշտավայրը, մինչ սանճաքի քաղաքաբնակ բնակչութիւնը տեղաւորուեցաւ մասնաւորաբար Սայտայի եւ Սուրի զոյգ գաղթակայաններուն մէջ:

[9] Հաուըրտ Գարակէօզեան Յիշատակի Հաստատութիւնը (Howard Karagheusian Commemorative Corporation) բժշկա-ընկերային ցանց մըն է, հիմնուած 1919ին: Հաստատութիւնը կը գործէ Լիբանանի մէջ 1941էն սկսեալ:

[10] Տոքթ. Յովսէփ Ենիգոմշեան վկայուած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բժշկական բաժնէն, 1918ին: Եղած է ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային Ա. Յանձնաժողովի պատուակալ ատենապետ: Հիմնադիրներէն է Հայ Ազգային Բուժարանի, որուն խնամակալ վարչութեան ատենապետութիւնը վարած է 1931էն 1960:

[11] Ան փոխատենադպիրն էր Նպաստից Յանձնաժողովին:

[12] Չվերահսկուած:

[13] Պէյրութի դարմանատունը հիմնուած է Յունուար 1941ին: Ան կը շարունակէ գործել մինչեւ այսօր:

[14] Տոքթ. Տիգրան Վարժապետեան (1913–1977), գրող, լիբանահայ գործիչ:

[15] Խօսքը Միքայէլ Նաթանեանի (1867–1954) մասին է, որ նախապէս եղած էր ՀԲԸՄ Կիլիկիոյ եւ Սուրիոյ քննիչ-պատուիրակ, ապա՝ ՀԲԸՄ Սուրիոյ եւ Լիբանանի նպաստընկալ վարժարաններու կրթական տեսուչ:

[16] Ազունիէի Ազգային Բուժարանը հիմնուած է 1922-23ին, Պէյրութէն հիւսիս, Ճիւնիի մօտակայ Մաամըլթէյնի մէջ. 1938ին փոխադրուած է Ազունիէ գիւղը, աւելի մեծ հնարաւորութիւններով՝ 110,000 քառ. մեթրի վրայ:

[17] 1919-26՝ Նիր Իսթ Րիլիֆի հովանաւորութեամբ գործած որբանոց, Ճիպէյլի մէջ: 1926ին փակուելէ ետք, 1928ին ան կը վերաբացուի՝ դանիացի միսիոնարներու ջանքերով. 1970էն՝ կը գործէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ:

[18] Մարիա Ճէյքըպսըն (1887–1960): Ամբողջ կեանքը հայ որբերուն նուիրաբերած դանիացի միսիոնար: 1907-19՝ Խարբերդի մէջ հայ որբերու հոգածութենէն ետք, կ'անցնի Լիբանան, ուր Սայտայի, ապա՝ Ճիպէյլի մէջ կը շարունակէ իր առաքելութիւնը՝ 1928-60՝ ձեռնհասօրէն վարելով Ճիպէյլի որբանոցը:

[19] Յարութիւն Յովակիմեան/Տագէսեան (1882–1954), 1920ականներու սկիզբէն հաստատուած է Զահլէ, ուր ծաւալած է ազգային-հասարակական գործունէութիւն:

[20] Հմայեակ Գրանեան (1891-1969), ազգային-կրթական գործիչ:

[21] Արմէն Մազլումեան (1876–1962), իր եղբօր՝ Օննիկի հետ աւարտած է կառուցումը Հալէպի հռչակաւոր «Օթէլ Պարոն»ի: Շնորհիւ թուրք զինուորականներու հետ իրենց կապերուն, Մազլումեան եղբայրները Մեծ Եղեռնի օրերուն յաջողած են փրկել կեանքը բազմաթիւ հայ գաղթականներու (Թորոս Թորանեան, *Պատմութիւն Հալէպի «Օթէլ Պարոն»ի եւ Արմէն Մազլումեանի (Պարոն) Նամականին*, Հրատ. ՀԲԸՄ Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամի, Պէյրութ, Տպ. Թեքնոփրէս, 1987. նաեւ՝ «Արմէն Մազլումեան (Պարոն, Անջրդի, Հալէպ)», *Գեղարդ, Ա. Տարի*, Հալէպ, 1975): Տուեալը տրամադրեց Միհրան Մինասեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

[22] Հաւանաբար սխալ մեքենագրուած. պէտք է կարդալ՝ ակնկալիքներ:

[23] Հոգշ. Գարեգին Յովսէփեանց (1867–1952), Մեծի Տանն Կիլիկիոյ հայոց կաթողիկոս ընտրուած 10 Մայիս 1943ին, եւ Անթիլիաս ժամանած 23 Մարտ 1945ին:

[24] Լիբանահայ գրական պարբերաթերթ, լոյս տեսած է 1939-47 շրջանին:

TWO DOCUMENTS ON THE LIFE OF THE LEBANESE ARMENIAN COMMUNITY IN 1945

(Summary)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

By the end of WWII, when world security was restored, the AGBU Cairo Central Committee sent two fact finding missions to Beirut in January and August 1945. The delegates were tasked to write reports on the condition of the Armenians in Lebanon, describe the life and challenges of the Armenian refugees in the camps and come up with recommendations on the types of work/assistance needed from the AGBU Cairo office by these refugees.

The author offers two unpublished documents which shed light on life in the Armenian refugee camps in Beirut, Bourj Hammoud, Sour and Ras Ul Ain (Saida, Rashidiye) and in the newly founded village of Anjar. They describe the poor governance of the community and the relationship between it and the church authorities, assess the lifestyle of these refugees and indirectly reflect the prevailing atmosphere and mood between the different Armenian organizations and parties.

Both documents provide certain data and information on the conditions of the Armenians in Beirut in 1945 and their needs. Both documents are full of direct and indirect suggestions and recommendations concerning the support needed and recommend that the main effort of the AGBU should be focused on and directed towards the local Armenian schools and their improvement.

SITUATION OF ARMENIANS IN TURKEY IN 1920

Zaven Messerlian

After the Treaty of Sevres was signed (August 10, 1920) the Turkish nationalist forces (*milli*) led by Mustafa Kemal Ataturk planned the invasion of the two year old Republic of Armenia. On September 23, 1920 the Turkish nationalist forces led by Gen. Kiazim Karabekir started the aggression, and by their superior forces imposed upon the government of Armenia, the humiliating treaty of Alexandropole, on December 2, 1920 after midnight, while the government of Armenia had transferred its authority to the Soviets at noon the same day.[1]

The Western allies did not help Armenia on the battlefield. President Wilson submitted the arbitration, entrusted to him by the conference of San Remo, concerning the boundaries of Armenia in the Eastern Vilayets of Van, Bitlis, Erzeroum, and Trebizond, dated November 22, 1920 and published on January 2, 1921. While the second London conference of Great Britain, France and Italy took place between November 26, 1920 and December 4, 1920 discussing amongst others issues concerning Armenia and Cilicia, and refused to admit Armenia in the League of Nations. However, as all the problems put on their agenda were not resolved they decided to hold a third conference in London. This was to be held between February 21, 1921 and March 14, 1921.[2]

Meanwhile, due to a rebellion, the Soviet Armenian authorities were toppled on February 18, 1921 and the last Prime Minister of independent Armenia, Simon Vratsian, led the new government. The latter held its authority until April 2, 1921, when the Red Army drove them out of the country.

Despite the above developments, Armenia and Cilicia were discussed by the London Conference. The Republic of Armenia was represented by Avedis Aharonian and the representative of Western Armenians the Armenian Delegation, was present in the person of its president Boghos Noubar Pasha. They were invited to participate when Armenia and Cilicia were on the agenda.

The Armenians had been subjected to premeditated genocide planned by the *Ittiahad Ve Terakki* (Union and Progress) Turkish party which led the Ottoman government. In 1914 the Armenians totaled 4 million 470.000 and 45.4 percent of which lived in the Ottoman Empire, a total of 2.026.000 persons.[3] 1.5 million people were exterminated by most atrocious means during the genocide particularly in the years 1915 to 1920.

3- «Շուշան Ծուփաց», կիսամսեայ գրական, գիտական եւ բարոյական հանդէս, Խարբերդ-Եփրատ գոլէճ. խմբագիր՝ Արտաշէս Խանզէտեան: Հրատարակուիլ սկսած է 1912ին եւ շարունակուած է մինչեւ Բ. տարի, թիւ 14, 1 Յունիս 1913, ընդամէնը 16 թիւ, 602 էջ:

Լոյս ընծայած է բանաստեղծութիւններ, պատմուածքներ, պատկերներ, թատրերգութիւններ, օտար գրական գործերու թարգմանութիւններ, գրական ուսումնասիրութիւններ, զաւեշտական գործեր, գրաքննադատութիւններ, դպրոցական տեղեկատու եւ այլն:

Հրատարակուող բնագիրերը տուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան: Սրբագրած ենք միայն ուղղագրական վրէպները:

* * *

Ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ.

Ժողովրդական

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԵՐ[1]

Չայիրին[2] վրայ նստած քովինըդ վի՞նչ է,
Աստուծմէ չե՞ս վախնար ներքեւըդ հող է,
Չիֆթէ[3] պէնկեր ունիս աչերուդ քով է,
Սիրական սեւ աչուի դու որո՞ւ եարն ես...

Չայիրէն ելլես նէ պողչադ[4] վերցնեմ,
Անունըդ չի գիտեմ տունըդ հարցընեմ,
Նուշ ու շաքար պերեմ քեզի կերցնեմ,
Սիրական սեւ աչուի դու որու՞ եարն ես:

Առաւօտուն էլայ էքուն դուռը գացի,
Չունէի հայրիկ, մայրիկ, ա՜խ ըրի լացի,
Չիս ալ թողուցիր հարուստին գացիր,
Սիրական սեւ աչուի դու որու՞ եարն ես:

Ես ըլլայի թեւերուդ իբէկ[5] ու մէրճան[6],
Թոփախըդ[7] կլորիկ, աչերըդ ֆինճան[8]
Քեզ առնող կըյիճը[9] չի մնար անճար
Սիրական սեւ աչուի դու որո՞ւ եարն ես:

Բ. ԸՍԵԼԱՁԵՒԵՐ-ԹԵՒԱՒՈՐ ԽՕՍՔԵՐ

ԳԱՒԱՌԻ ԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ[10]

1 Ականջիդ օղ ըրէ: Միշտ յիշէ:
2 Ականջդ կտրէ ետեւդ դիր: Ուշադրութիւն տուր ետեւդ խօսուած բամբասանքներուն:
3 Ականջները կախեց: Մտածել-տրտմիլ սկսաւ:
4 Ականջները երկայն են: Լրտես է- էշ է:

5	Անոնք մատով թող ցուցնեն մեզ ալ փատով:	Անոնք թող գովեն՝ մեզ ալ պախարակեն:
6	Անկէ (անձէն...) հաւկիթ առնողը մէջը դեղնուց չի գտներ:	Խարդախ է:
7	Անծուխ անկրակ է՛րիլ:	Ինքն իր մէջ տառապիլ:
8	Ագուն պոչուն տալ:	Ճարտրուրիլ, քննիլ:
9	Ականջիդ ետին տեսնաս նէ...	Անկարելի է, որ ատանկ բան ըլլայ:
10	Ականջն է մազոտեր:	Էշ է եղեր:
11	Անօթի, քուրջ կը փոխէ:	Յետին ծայր աղքատ է:
12	Ակռան սեղմելէն տակը արին կոլեցաւ:	Այնքան համբերեց որ վնասուեցաւ:
13	Ակռատ սեղմէ:	Համբերէ:
14	Ակռայ, կիժ հասցնել:	Ոտնձգութիւն ընել, անպատուել:
15	Ակռայ կճրցնել:	Բարկանալ:
16	Աղբարը աղբօրը սա գինը չի տար:	Շատ աժան է:
17	Աղ բերել է գացեր:	Մեռեր է:
18	Արընի գին է:	Շատ սուղ է:
19	Աղը չոր է:	Բարեկեցիկ է, գործը դիւրին:
20	Անուշ տեղը կապել:	Համաձայնութեան գալ:
21	Ամպերէն հոտ կ'առնէ:	Հեռատես է:
22	Աշխարհքին վրայ հեծեր է:	Հոգ չունի, միշտ զուարթ է:
23	Աշխարհք մը:	Շատ քանակութեամբ:
24	Ամպ չէ գոռացեր վրան:	Բարեմասնութիւն մը չունի վրան:
25	Աչքերէն արին կը կաթի:	Կտրիճ է, վախցնող կերպարանք ունի:
26	Աչքերը լուստան:	Ուզածը տեսաւ:
27	Աչքին լուսուն չի տար:	Շատ կը սիրէ:
28	Աչքին լօսը հետը գնաց:	Շատ զղջաց, ձեռքէ հանելուն համար:
29	Աչքը մէջը մնաց:	Չի կշտացաւ, ցանկաց:
30	Աղուին բաց մնաց:	Զարմացաւ:
31	Աչքերուն փուշն է:	Նախանձի առարկայ է:
32	Աչքերնին չի վերցներ:	Կը նախանձին:
33	Աղ բերել է գացեր:	Մեռեր է[11]:
34	Աշխարհքը փլի մէջը մարդուկ մը չունի:	Անհոգ է, տգէտ է:
35	Աչքին որդը կոտրել:	Վախցնել:
36	Աչքը չի վերցներ:	Կը նախանձի:
37	Աստուած մոմ վառողին մոմ կու տայ, ձէթ վառողին ձէթ կու տայ:	Ըրածնուն համաձայն կ'ընդունի:
38	Աչք խփել:	Անտես ընել, դիտմամբ չի տեսնել:
39	Աչքը ճամբուն մնաց:	Շատ սպասեց:
40	Աչքի չի առնել:	Բանի տեղ չի դնել, չի հաւնիլ:
41	Աչքը մտնալ:	Հաւնիլ:
42	Աչքը կը պաղի:	Կ'սպասէ մարդու կամ որեւէ բանի:
43	Անկո՞ւշտ է պահեր:	Աս որչափ կ'ուտէ:
44	Աչքիդ վրայ ունք կայ ըսող չի կայ:	Որեւէ մարդ գէշ բան մը չի կրնար ըսել:
45	Աչքերը երեսն ի վար կու գան:	Աչքով տկար է:

46	Անօթի հաւը երազին մէջ կորեկ կը տեսնայ:	Մարդ իր չունեցածը կ'երեւակայէ:
47	Իր ծունկին վրայ աղօթք կայ:	Բարի է:
48	Փորը կոնակն է կպեր:	Շատ անօթի է:
49	Մօրուք խնդալ:	Համոզել:
50	Փէշ կարել:	Մտերմանալ:
51	Ակօն տեներն է ելեր:	Գինովցեր է:
52	Վերի արտին ցորենն է:	Լաւ կը սեպուի:
53	Ծակը նետել:	Բանտարկել:
54	Կրակն է ինկեր:	Տաք է:
55	Բերան բերել:	Յիշել:
56	Անկաճը կտրել:	Ամուսնացնել:
57	Երգած ատենը օձերն իսկ կ'ունկնդրեն:	Ձայնը շատ գեղեցիկ է:

Գ. ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ

Քառասունք կոխ[12]

Եթէ նորածինի մը - որուն քառասունքը չէ լմնցած - հայրը ուրիշ քառասունքով երեխայ գտնուած տունէ մը ներս մտնէ, տանը մէջ գտնուած նորածինը քառասունք կոխ[13] կ'ըլլայ[14]:

Երբ մանուկ մը վերոյիշեալ կերպով քառասունք կոխ եղած է, պէտք է հոն մտնող քառասունք կոխ հօրը զգեստէն կտոր մը կտրել գաղտնի կերպով եւ կամ ստակ փոխել:

Եթէ քառասունքով հայր մը կնոջը կամ զաւակին պառկած սենեակին տանիքը ելլէ, կինը եւ նորածինը քառասունք կոխ կ'ըլլան:

Քառասուն օրը չի լրացուցած (քառասունքով) նորածին մը երբ մկրտութեան տանելէ զատ փողոց հանուի, քառասունքկոխ կ'ըլլայ:

Եթէ նորածին մը քառասունք կոխ ըլլայ, պէտք է անոր դարմանը գտնել, հակառակ պարագային սոսկալի ցաւերու մէջ պիտի մեռնի:

Եթէ քառասունքով նորածին մը գտնուի տան մը մէջ եւ մահ պատահի, հոն մեռելկոխ կամ քառասուն կոխ կ'ըլլայ:

Եթէ քառասունքով թռչուն մը (հայր կամ մայր) անցնի քառասունքով երախայի մը գտնուած տանիքի մը վրայէն, մայր ու զաւակ քառասունքկոխ կ'ըլլան:

Եթէ քառասունքը չի լմնցած երախայ մը գտնուած տունէ մը ալիւր մտցնեն, պէտք է մայրը երախան գրկած ալիւրը գալէն առաջ դուրս ելլէ, եթէ ոչ նորածինը քառասունք կոխ կ'ըլլայ:

Արու՞ թէ՞ էգ[15]

Հաց շինելու համար պատրաստուած խմորէն երբ հաց բացուած ատենը մէջէն լման ցորենահատ մը ելլէ, զայն յղի կնոջ գլխուն վրայ կը դնեն, ու երբ այդ կնոջ անգիտակից մէկ շարժումը վար ձգէ ցորենահատը եւ ճեղքուած կողմը վրան գայ, ենթական աղջիկ մը պիտի ծնի, իսկ եթէ ճեղքուածքը գետնին գալով կլոր ու ցցուած կողմը երեւի, մանչ մը պիտի ըլլայ անոր ծնածը:

Երբ նոր զգեստ մը կարելու ատեննին օձիքը բանան, անկէ ելած կտորը իրենցմէ ոեւէ մէկուն գլխուն վրայ կը դնեն ու կը սպասեն, եթէ այդ գործողութենէն վերջ առաջին անգամ իգական սեռէ (աղջիկ եւ կամ կին) մէկը մտնէ սեմէն ներս, յղի կինը - որը արդէն որոշած պէտք է ըլլան օձիքը բանալէն առաջ - աղջիկ մը պիտի ծնի, իսկ եթէ արական սեռէ - ըլլայ այր կամ տղայ - մանչ մը պիտի ծնի ան:

Պնակի մը մէջ երկու տեսակ միրգ կը դնեն, օրինակ՝ խնձոր եւ տանձ, եւ անոնցմէ մէկուն անունը մանչ կը մկրտեն, իսկ միւսինը՝ աղջիկ. (սակայն այս գործողութիւնը միշտ յղի կնոջմէն գաղտնի պիտի ըլլայ, հակառակ պարագային իր ուզածը կը քաշէ). պնակը կը մօտեցնեն անոր, որպէսզի այն երկու սեռ միրգէն ոեւէ մէկը ընտրէ, եթէ մանչ անուանակոչուած միրգը քաշեց, նորածինը մանչ պիտի ըլլայ, իսկ թէ աղջիկ՝ աղջիկ:

Յղի կին մը եթէ պատահմամբ գետնէն ասեղ մը գտնէ, նորածինը՝ աղջիկ մը պիտի ըլլայ, իսկ եթէ գամ (մըխ) մը գտնէ՝ նորածինը պիտի ըլլայ մանչ:

Թապղա[16]

Եթէ մանուկ մը ծնած ատեն թապղա[17] ունեցող անձ մը ներս մտնէ դրան սեմէն, այդ ցաւը (թապղան) նորածինին մօրը եւ անոր յաջորդներուն կ'անցնի:

1- Այս ցաւին առաջքը առնելու համար պէտք է եօթը Մարիամէ եւ եօթը Մուհամմէտէ արծաթ, դրամ կամ ոեւէ մետաղ հաւաքելով (իսկ եթէ դրամ ըլլայ տրուածը պէտք [է] անոր գինովը մետաղ գնել) նորածինին եւ մօրը մէկ-մէկ հատ զարդ շինել Աւագ Ուրբաթի գիշերը, եւ այս զարդը ամէն օր պէտք [է] վրանին կրեն ենթակաները:

2- Եօթը փայտէ կամուրջէ մէկ-մէկ գամ հանելով՝ օղակ մը շինել, որը պէտք է կա՛մ զաւկին եւ կամ մօրը թելը դնել միշտ:

3- Օձին բերնէն ոեւէ կենդանի մը առնելով, պէտք է արծաթի կամ թիթեղի մէջ առնել ու երախային վրայ կախել[18]:

4- Սեւ շան մը (այնպէս որ մէկ մազ մը իսկ ճերմակ չի գտնուի) վրայէն փունջ մը մազ կտրելով, պէտք է հիւսել եւ երախային ականջները ծակելով՝ անկէ անցընել:

5- Երախան նոր ծնած ատենը - երբ դեռ ձայն անգամ հանած չէ - ականջէն կտոր մը կտրելով, խոռովելու եւ անոր մօրը կերցնելու է:

Դ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Ժողովրդական բժշկութիւն
տնական դեղարան[19]

- Ականջի ցաւ.- Խնձոր մը կրակին վրայ խոռովելով անոր ջուրը քամել ցաւած ականջին մէջ: Դարմանումը անվրէպ է: Այս դեղը կրնայ նաեւ փորի խիթի համար ալ գործածուիլ, բայց յայտնի է թէ ասոր համար գործածուած հեղուկը համեմատաբար աւելի շատ պէտք է ըլլայ:
- Ստինքի պատռուածք.- Շատ սոսկալի է մօր մը համար պատռուած ստինք մը երախային բերանը տալ, այո՛, շատ սոսկալի է անոր ցաւը: Ասոր առաջքը առնելու համար պէտք [է] ստինքին «պտուկ» կոչուած մասը մաքուր պահել: Իսկ եթէ բոլոր զգուշութիւններու հակառակելով նորէն պատահի, դեղարանէն կլիսերին կոչուած իւղէն գնելով պատռուած տեղերը օծելու է: Դարմանումը անվրիպելի է:

• Ուրիշ միջոց.- Հակառակ պարագային, երբ յիշեալ իւղը չի գտնուի թանին կտրուքը (չէօքէլիկ) դնել քուրչի կտորի մը վրայ եւ պատռուածքին վրայ պահել ատեն մը: Սակայն զգուշութիւն ընելու է, որ այս դեղերէն ոեւէ մէկը երախային բերանը չերթայ, որովհետեւ կրնայ երախային փափուկ ստամոքսին վնասել եւ անոր առողջութիւնը խանգարել: Այս դեղերը կրնան կենդանիներու համար ալ գործածուիլ:

• Հարբուխ.- Գաւաթ մը օղիի մէջ (օղիի գաւաթ) անուշի դգալ մը պղպեղ լեցնելով գանկին առջեւի մասը անով լուալ:

• Արիւնի հոսում.- Առաջ կու գայ չափազանց տաքէ կամ քթին տրուած հարուածէ մը: Ասոր հոսումը արգիլելու համար, պէտք է ենթակային պաղ ջուրի մէջ լուծուած աղ շնչել տալ եւ քուրչի կտորներով գոցել քթին ծակը, ներսը օդի անցնիլը արգիլելու համար:

• Արեւազարկ եղողներուն՝ լաւագոյն դարմանն է մածունը եւ թանը (արեան):

Առողջապահական[20]

• Ականջացաւ.- Եթէ ցուրտէ ծագած է ան պէտք է բամպակով լաւ մը գոցել, օդին անցքը արգիլելու համար: Տաք ջուրով լուալն ալ օգտակար կրնայ ըլլալ: Իսկ երբ ցաւը ականջաղտէ առաջ եկած է, այն ատեն օրը երկու երեք անգամ տաք օճառով ողողելու է գրեխով: Կրնայ նաեւ նախապէս քիչ մը ձէթ (զէյթուն եաղի) կաթեցնել ցաւած ականջին մէջ: Եթէ բորբոքում եւ տենդ կենայ, տզրուկ կրնայ փակցուիլ հիւանդոտ մասին մօտ: Հետեւեալ բաղադրութիւնը բժշկական դարման մէ.

Fr. Hamamelidis, one drachm. Fr. Beldadmnal one drachm, Fr. opu, one drachm

Ասոնք լաւ մը իրար խառնելէ վերջ ականջը ցաւած միջոցին քիչ մը կաթեցնել պէտք [է]:

• Ակռայի ցաւ.- Մազի գնդասեղին ծայրը մաքուր բամպակ անցընելով պէտք [է] սրբել խոռոչը եւ խցել զայն ուրիշ գնդասեղի մը ծայրը անցուած բամպակի կտորով որ օծուած ըլլայ հետեւեալ բաղադրութիւններէն մէկով.

Carbolic acid (pure), oil of cloves, creosote and chloroform, opium and chloroform, chlorul and caphor (հաւասար չափով իրար խառնելով) եւ քացախի մէջ լուծուած կարմիր պղպեղով:

• Քթէն արիւն հոսիլ.- Քթէն հոսած արիւնը դադրեցնելու համար պէտք է սառ խոթել եւ սառջուր ներարկել, երբեմն հարկ կ'ըլլայ նաեւ քթին ծակը գոցել:

• Գլխու ցաւ.- Պէտք է արիւնը գլխէն քաշել, գլուխը պաղ եւ ոտքերը տաք պահելով: Բժշկական դարմաններ են նաեւ Antipyrinը եւ Migraninը: Լուծողականն ալ քիչ անգամ անյաջող կ'ելլէ:

• Գլխու պտոյտ.- Ամէն գործ, աշխատութիւն կարելի եղածին չափ մեղմացնել, զգուշանալ ծռելէ եւ բոլոր այն գործողութիւններէ, որոնք արիւնը դէպի գլուխը կը մղեն:

Հիւանդութիւններու դարմաններ[21]

• Եռք.- Մորթի հիւանդութիւն մը, որուն պատճառն է միջատ մը, որ վերնամաշկին ներքեւ կը պահուըտի: Գլխաւորապէս կը յարձակի ձեռքերու վրայ

մատներուն ծալքերուն մէջ: Քիչ մը ծծումբ եւ կամ սնդիկաւոր օծանելիք մէկ երկու անգամ քսելով կը բուժուի սովորաբար:

• Լեզուի ախտեր.- Լեզուն կրնայ կապուիլ անոր ներքեւի կապին բերնին յատակին չափազանց փակած ըլլալուն համար. այս պարագային տակ պէտք է սուր մկրատով մը կտրել իրար միացնող մաշկը: Լեզուի բորբոքում կրնայ առաջ գալ խածուածքի կամ խայթուածքի, չափազանց սնդիկ առնելու, կամ առանց յայտնի պատճառի: Ջրաւոր լուծողական մը կամ ծնօտին տակ երկու տզրուկ կրնան դադրեցնել բորբոքումը: Լեզուի վէրքերը խիստ շատ կ'արիւնին եւ կը պահանջեն սառ կամ սառ ջուր:

• Լինտերու խոց.- Ընդհանրապէս ակռաներու արմատի ախտէն առաջ եկած պալար: Ցաւը շատ սոսկալի է. վրան պէտք է դնել տաք բաներ, խիւս եւայլն, եւ երբ աղէկ մը կ'ուռի, ցաւած ակռային քովէն ծակ մը բանալով թողելու է որ թարախը աղէկ մը վազէ: Քիչ մը լուծողական առնելը օգտակար է:

• Կեղիկ բերնի մէջ.- Ճերմակ մակարդի նման կէտեր մանուկներու բերաններուն մէջ: Երբեք չափահասներու չի պատահիր, միայն ինչ-ինչ տենտերու յոռեգոյն աստիճաններուն մէջ, երբ մարմնային կարողութիւնները յետին աստիճանի տկարացած են: Մանուկներուն բերաններուն մէջ կամ այտերուն ներսի կողմերը: Այս ախտին առաջքը առնելու համար պէտք է քիչ մը Պորաքս եւ մեղր դնել ենթակային բերնին մէջ, պէտք է հոգ տանիլ կերակուր դրուած ամաններուն եւ դգալներու մաքրութեանը եւ պարզ լուծողական դեղ մը տալ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Շուշան Ծուխաց*, Խարբերդ, Բ. տարի, թիւ 2, 1912, էջ 12:

[2] Չայիր թրքերէն՝ այգի, արօտ:

[3] Չիֆթէ թրքերէն՝ զոյգ:

[4] Պողչա արաբերէն՝ կապոց, ծրար:

[5] Իբէկ թրքերէն՝ մետաքս:

[6] Մէրճան արաբերէն՝ բուատ, թանկագին քար իմաստով:

[7] Թոփախ թրքերէն՝ գունդ, հոս՝ աղջիկներու գլխուն ետեւ հաւաքած մազի գունդը:

[8] Ֆինճան արաբերէն սկահ՝ խոշոր գաւաթ, թաս, հոս՝ գաւաթի մեծութեամբ մեծ աչքեր:

[9] Կըյիճ՝ կտրիճ:

[10] *Հասկեր Կիսամսեայ Հանդէս*, Խարբերդ, Ա. տարի, թիւ 1-5, յաջորդական հինգ թիւերով, մաս առ մաս:

[11] Կրկնութիւն է: Տե՛ս՝ վերեւ, թիւ 17:

[12] *Դպրոցականներուն Տարեցոյցը*, Ա. տարի, Խարբերդ, 1909, էջ 79-80:

[13] Քառասունք կոխը ժամանակակից բացատրութեամբ «Սոսկալի հիւանդութիւն մըն է... որ տարիներով կը չարչրկէ խեղճ ենթական՝ օրըստօրէ հալեցնելով ու մաշեցնելով զայն: Երբեմն խիստ մեծ աւերումներ իսկ գործելով անոր անդամներուն վրայ ու այլակերպելով զայն բոլորովին...»: Անոր մասին ընդհանրապէս եւ Մալաթիոյ մէջ անոր բուժման ժողովրդական նմանօրինակ ձեւերուն մասին տե՛ս՝ Յարութիւն Ճըլճըլեան, «Քառասունք-Քառասունք կոխ...» (*Բիւրակն Լրագիր*, Կ. Պոլիս, Նոր շրջան, ԺՋ. տարի, թիւ 47-48, 10 Դեկտ. 1898, էջ 840-42), իսկ Կեսարիոյ մէջ բուժման ժողովրդական այլ ձեւ մը՝ նոյն, թիւ 36, 15 Հոկտ. 1898, էջ 648, Տ[րդատ] Վ. Պալեանի յօդուածը:

[14] Քառասունք կոխ եղած մանուկ մը օրըստօրէ պիտի հիւծի ու պիտի մեռնի վերջապէս [ծանօթութիւնը՝ բնագիրին]:

[15] *Դպրոցականներուն Տարեցոյցը*, Ա. տարի, Խարբերդ, 1909, էջ 123-24:

[16] Նոյն, էջ 195-96:

[17] Տեսակ մը ցաւ է, որուն ճանկէն բռնուողները օրըստօրէ պիտի հիւծին ու մեռնին: Աս հիւանդութենէն բռնուող նորածինները ամէնէն շատ եօթը տարի կրնան ապրիլ (ըստ նախապաշարումի) ու յետոյ բոլոր մարմնով կապուտնալէ ետք կը մեռնին: Իսկ եթէ մայրն է այս ցաւէն վարակուողը իրմէ ծնածներուն կ'անցնի ան, որովհետեւ ինք այլեւս եօթը տարեկանէն աւելի տարիք ունի [ծանօթութիւնը՝ բնագիրին]:

[18] Երբ օձին բերանը կենդանի մը գտնուի, ըլլայ ան թռչուն կամ գորտ, զայն բերնէն առնելու համար պէտք է ըսել «Թապղայի դեղ՝ ձգէ՛, այդ տեղ», ու օձը իսկոյն առարկան կը ձգէ իր բերնէն [ծանօթութիւնը՝ բնագիրին]:

[19] *Դպրոցականներուն Տարեցոյցը*, Ա. տարի, Խարբերդ, 1909, էջ 65-66:

[20] Նոյն, էջ 91-92:

[21] Նոյն, էջ 129-30:

UNPUBLISHED MATERIAL FROM KHARPERT FOLKLORE AND ETHNOGRAPHY
(Summary)

MIHRAN MINASSIAN
mihran.min@gmail.com

The Kharpert Central School published two student handwritten newspapers and the Euphrates College one between 1909 and 1913. These newspapers, namely *Hasger, Shushan Dzopats* and *Tebrotsaganneru Daretsuytse*, included alongside other material excerpts from Kharpert folklore and ethnography. In this article the author has garnered these folkloric jewels and grouped them into four sets: a) provincial songs, b) provincial sayings, c) superstitions, and d) popular therapy/medicine.

ԴՈՄԵՆԻԿՕ ՍԵՍՏԻՆԻԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԺԸ. Դարավերջ-ԺԹ. Դարասկիզբ)

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Իտալացի հնագէտ, դրամագէտ, Պիզայի Համալսարանի ուսուցչապետ, Սանկտ-Պետերբուրգի Գիտութիւնների Կաճառի պատուաւոր անդամ Դոմենիկօ Սեստինին (Domenico Sestini, 1750--1832) շրջել է Եւրոպայի ու Փոքր Ասիայի մեծ մասում, հաւաքել դրամներ, միաժամանակ ուսումնասիրել իր այցելած երկրների տեղագրութիւնը, արդիւնաբերութիւնը եւ բնութագիրը: Դոմենիկօն հեղինակել է դրամագիտական եւ ուղեգրական տասնեակ գրքեր, որոնք իրենց ճշգրտութեամբ եւ ամբողջականութեամբ մեծ արժէք են ներկայացնում:

Սեստինիի թէ՛ դրամագիտական, թէ՛ ուղեգրական բնոյթի գրքերից միքանիսն ուրոյն հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ հայագիտութեան համար: Մասնաւորապէս հայ դրամագիտութեան մասին առաջին ուսումնասիրութիւններից են նրա՝ հռոմէական Հայաստանի եւ Կիլիկիայի Ռուբինեան Հարստութեան դրամներին վերաբերող իտալերէն աշխատութիւնները[1]:

Սոյն հաղորդման մէջ կ'անդրադառնանք Սեստինիի՝ 1785ին հրատարակած Օսմանեան Կայսրութիւն կատարած երկու ուղեգրութիւններում հայերի վերաբերեալ յիշատակումներին: Դրանք որոշակի մանրամասներ են հաղորդում կայսրութեան հայերի առօրեայ կեանքի եւ կենցաղի, մասնաւորապէս՝ սնուելու մշակոյթի վերաբերեալ: Էջաթուերը կը յղուեն շարադրանքի մէջ՝ փակագծում:

ՊԱՐՈՆ ԱԲԲԱ ԴՈՄԵՆԻԿՕ ՍԵՍՏԻՆԻԻ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ[2]

Չորս մասից բաղկացած իր այս ուղեգրական գրքում նկարագրելով Կոստանդնուպոլսի շրջակայքի գիւղերը՝ Սեստինին յիշատակել է, որ հայեր բնակւում են հետեւեալ գիւղերում.- Պեպէք (8), Զենի Քէօյ (իրականում՝ Ենի Քէօյ, 9), Սարեարի (12), Ենի Մահալէ (մեծ մասը՝ հայաբնակ, 12-13), Իստաւրոս եւ Քուզքունջուկ (20):

Սեստինին մասնաւորապէս անդրադարձել է կայսրութեան ժողովուրդների մէջ տարածուած ուտելի բոյսերի գործածութեանը՝ տալով

դրանց անուանումները նաեւ թուրքերէնով: Նա նշել է, որ Թուրքիայում խաղողի այգիներ ունեն հայերը, հրեաները եւ ֆրանսիացիները (48-9): Խօսելով եգիպտացորենի գործածութեան մասին՝ Սեստինին նշել է. «*Ազգերը, յատկապէս հայերը, վերցնում են եգիպտացորենի ամբողջ կողրերը եւ դնում են կրակի վրայ, խորովում եւ այդ կերպ ուտում*» (66), որ հայերը թարխուն շատ չեն գործածում իրենց աղցանների մէջ (72), մինչդեռ սոխ պրասը «*հայերի կողմից շատ սիրուած բոյս է*» (74): Իսկ սխտորը «*փնտրեսական գործածութիւնից բացի, նաեւ ծառայում է չար աչքի դէմ (սնահաւատ նախապաշարում) եւ յոյները, ինչպէս նաեւ հայերը ...եկեղեցական տօների ժամանակ... Մայիսի առաջին օրը նետում են այն համապատասխան տների դռների վրայ եւ այլ տեղեր՝ նման մի բան երաշխաւորելու համար: Այսպիսի մի աւանդո՛յթ*» (74):

Սեստինին տողատակին յիշել է նաեւ ծիրանի գիտական անուանումը՝ prunus armeniaca (93): Նա վկայել է նաեւ, որ ամերիկեան լորենու (Tilia americana) ծաղիկներից հայերը «*յատուկ քաղցրեղէն կամ պահածոյ են պատրաստում՝ օղլամուր-թաթլը, որը մեզ հիւրասիրեցին մեր այցի ժամանակ*» (158): Հայ խոհանոցային գրքերում յիշուած չէ լորենու ծաղիկներից պատրաստուած այս քաղցրաւենիքը, թերեւս այն ունեցել է խիստ տեղական գործածութիւն:

Սեստինին հայերին յիշել է նաեւ Օսմանեան Կայսրութեան ծաղիկների ու կենդանական աշխարհի մասին գրելիս: Այսպէս, խօսելով արքայապսակ (շահապսակ) ծաղկի մասին՝ նա նշել է, որ այդ ծաղկատեսակը նա տեսել է Գատըգիւղում ապրող մի հայ լումայափոխի պարտէզում (146). նոյն հայի պարտէզում տեսել է նաեւ ficus indica կոզին (կակտուս, 156): Իսկ յիշատակելով ոզնիներին՝ նա հարկ է համարել նշել, որ «*հայերն ագահ չեն եւ վճարում են չորս փարա մէկ [ոզնու] համար*» (204), իսկ «*Նապաստակը Թուրքիայում համարւում է անմաքուր կենդանի, բացառութեամբ հայերի*» (նոյն)»:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԱՍԻԱԿԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ, ԿԻԶԻԿԻ ԹԵՐԱԿՂԶԻ, ՊՐՈՒՍԱ ԵՒ ՆԻԿԷԱ

Նամակների ձեւով գրուած սոյն ուղեգրութիւնը դարձեալ լոյս է տեսել 1785ին, երկու հատորով[3]: Մենք ձեռքի տակ ունեցել ենք ֆրանսերէն թարգմանութիւնը, հրատարակուած 1789ին[4]:

Հայերը յիշուած են արդէն գրքի առաջաբանում, որտեղ բնութագրում են Օսմանեան Կայսրութեան ժողովուրդները. «*...ամէն կողմ տեսնում էք թուրքերին՝ փխմար եւ հարստահարիչ, յոյները վայրենաբարոյ են, այդուհանդերձ՝ փակաւին բարեհամբոյր.... Հայերը բոլորն էլ առեւտրական են, այնպէս որ ագահ են, ուստիեւ՝ հարուստ: Հրեաներն այնպիսին են, ինչպիսին որ եղել են միշտ՝ կեղտոտ եւ զզուելի*»:

Օսմանեան Կայսրութեան արեւմտեան տարածքներում շրջած Սեստինին յիշում է, որ հայեր են բնակւում Պանտրմայում (Հտր. 1, 69), Մակալիկէ բաւական մեծ գիւղում՝ չորս հազար տուն, թուրք, հայ եւ յոյն բնակչութեամբ, որտեղ նրանք օթեւանել են մի հայի տանը (Հտր. 1, 75):

Սեստինին հայերի մասին մասնաւորապէս գրել է Պրուսայի վերաբերեալ նամակներում: Ըստ նրա, հայերի թիւը Պրուսայում 2000 հոգի է, «*Պրուսայում կայ առնուազն հազար տեսակի գործ, որոնցով զբաղւում են թուրքերը, հայերը, յոյները եւ հրեաները*» (Հտր. 1, 44):

Ուրոյն հետաքրքրութիւն են ներկայացնում յատկապէս 1779ի Մայիսի 23ին եւ 30ին գրուած նամակները[5]:

Առաջինում Սեստինին մասնաւորապէս նշել է. «*Մի նամակ ունէինք յանձնելի մի հայի, որի անունն էր Խոջա Եղիա[6] եւ ազգանունը՝ Փիլճօղլու (վառեակի ձագ), արհեստով ոսկերիչ եւ շատ հարուստ*» (Հտր. 1, 133): Նամակը նրան յանձնել է Գալաթայում հաստատուած հայ կաթոլիկ վաճառական Սերբոսը: Խոջա Եղիան հրաւիրել էր ճաշի իր ամառանոցում, սակայն անձրեւի պատճառով հիւրընկալել է իր տանը: Առաւօտ շուտ եկել է տանելու իր տունը, որպէսզի ժամանակ անցկացնեն եւ քէֆ[7] անեն: Սակայն Սեստինին մերժել է, քանի որ այլ գործ ունէր: «*Խեղճ մարդն այնքան էր ցանկանում մեզ հիւրասիրել, որ մեզնից խոստում վերցրեց, որ իր տուն գնանք ժամը 11ից առաջ*» (Հտր. 1, 133-4): Խոջա Եղիայի տունը նկարագրել է որպէս «*գեղեցիկ, բայց արեւելեան ճաշակով կահաւորուած*» (Հտր. 1, 134): Հիւրերի պատուին թուրքական երաժշտութիւն են հնչեցրել, մի դերվիշ, նարգիլէ ծխելով, նուագել է սաղմոսարան (psalterion, հաւանաբար՝ քանոն), մէկ ուրիշը՝ սրինգ (հաւանաբար՝ դուդուկ), երրորդը՝ *ռեհապ* անունով ջութակ յիշեցնող պարսկական գործիք[8]: Սեստինին նշել է, որ նուագածուներից մէկը երգել է *մասճէ* (mascè)՝ թուրքական գովասանքներ, որը «*կարծես քերթում էր կաշիս, այնքան սկսեց ձանձրացնել ինձ, որ մտածեցի այդտեղ թողնել երաժշտութիւնն էլ, նուագածուներին էլ ու փախչել կողքի սենեակը, բայց բարեբախտաբար ճաշը բերեցին, եւ նուագը դադարեց*» (Հտր. 1, 134):

Սեստինին նշել է, որ ի տարբերութիւն եւրոպական ճաշի, որը սկսւում է ապուրով, հայկական ճաշի ժամանակ սովորութիւն է սկսել մի սափոր ջրով. այն առաջինը խմում է տանտէրը, որպէսզի հիւրերը որեւէ կասկած չունենան, յետոյ տալիս է կողքինին, եւ այսպէս սափորը մէկը միւսին է անցնում, ամբողջ ճաշասեղանի շուրջը: Սեստինին յոյս է ունեցել տեսնել հայկական կերակուրներ, սակայն ամէն ինչ պատրաստուած է եղել ֆրանսիական ձեւով, քանի որ ֆրանսիացի պարոն Օզէն (Auzet) իր խոհարարին էր ուղարկել՝ պատրաստելու հիւրերի ճաշը: Վերջում հիւրասիրել են սուրճ եւ ծխամորճ, եւ վերադարձել են ուշ երեկոյեան (Հտր. 1, 135-6):

Մայիսի 29ին Պրուսայից գրուած նամակում Սեստինին յայտնում է, որ յաջորդ օրը հրաւիրուած է ճաշելու մի հայ կաթոլիկ վաճառականի տանը, խմելու «*ձեր առողջութեան համար, ինչը, գիտէք, յաճախակի են անում հայերի սեղանների շուրջը*» (Հտր. 2, 3)։ Մայիսի 30ին նամակում նա նշել է.

> Ժամը 11ի մօտ գնացինք մի հայ վաճառականի տունը ճաշի, այս հայի անունն էր Եար-օղլու (բարեկամի զաւակ[9])։ Ինքն էր, որ եկաւ մեզ առաջնորդելու իր տունը, ըստ սովորութեան, ընտանիքի մեծը պարտաւոր է անձամբ առաջնորդելու հիւրերին։ Հայ վաճառականները քաղաքում 200 են, մեզ հիւրասիրողը բեհեզագործ էր եւ շատ հարուստ։ Այս ժողովուրդն ապրում է շատ հանգիստ եւ երջանիկ, եթէ ֆրանսիացի միսիոներներն իրենց շահերի համար խռովութիւն չստեղծեն նրանց ընտանիքներում։
>
> Մեզ հիւրընկալող հայը բնակւում է մի տանը, որը գեղեցիկ է եւ սիրուն, թէեւ ըստ իրենց ազգային ճաշակի՝ հայերն ընդհանրապէս չեն սիրում որեւէ պերճանք դնել իրենց կահաւորումի մէջ։ Նրանց ողջ կահոյքը բաղկացած է մի բազմոցից, որի վրայ ճաշում են, խմում են, քնում են ու ժամանակ են անցկացնում, վերջապէս այն գործածում են իրենց բոլոր տնային գործերի համար։ Պարզութիւն իրենց կահաւորման ու հագուստի մէջ՝ ահա՛ աղբիւրն իրենց հարստութեան։ Սակայն որքան էլ հարուստ լինեն, այնքան ագահ են, որ մի փարայի համար ընդունակ են վատ լինել միմեանց հետ։
>
> Ճաշը մեզ տրուեց եւրոպական ձեւով, բայց առատ, իսկ աղանդերը՝ երկրի սովորութեան համաձայն։ Մեծ շուքով սեղան բերեցին մի անագէ սկուտեղ, որի վրայ՝ բազմաթիւ փոքր պնակներ մուրաբայով[10], շաքարեղէնով ու մեղրով, որ հայը պահում էր, կարծում եմ, իր պապի հարսանիքից իվեր։ Մենք հիացանք այս սպասքների հնարժէք գեղեցկութեամբ՝ առանց ուզելու դիպչել, որպէսզի կարելի լինի հասցնել մինչեւ նրա թոռան թոռին։ Սակայն ճաշակեցի համեղ չամիչ, որի կորիզը երկար է ու բարակ, թուրքերէն ասում են փարմաքիւզիմ[11], որովհետեւ կորիզը մատի երկարութիւն ունի։
>
> Տարօրինակ է տեսնել, որ այդ բազմանդամ ընտանիքից միայն երեք հոգի սեղան նստեցին մեզ հետ, եւ դեռ այդ երեք հոգուց մէկն ընտանիքի բարեկամն էր։ Մենք չտեսանք ո՛չ սպասաւորներին, ո՛չ երեխաներին, ո՛չ էլ կանանց։ Այս ժողովրդի մէջ սովորութիւն է, որ տղան չպէտք է սեղան նստի հօր հետ, ոչ էլ կրտսեր եղբայրն՝ աւագի հետ, եթէ նա ամուսնացած է։
>
> Հայերը չափազանց նեղւում էին՝ ուզելով դանակ-պատառաքաղ գործածել։ Մասնաւորապէս նեղւում էին՝ դատապարտուած լինելով նստել մեզ պէս։ Քաղաքավարութեան համար մտածելով, որ պարտաւոր են մեզ պէս ուտել, մի ձեռքով պատառաքաղն էին բռնել, միւսով ճաշում էին։
>
> Այսպէս նեղուելով՝ նրանք չկարողացան լաւ կշտանալ, սակայն կշտանալու ձեւը գտան։ Երբ հերթը հասաւ թարմ կանաչիով՝ գարիով[12] ու թարխունով լցուած ափսէներին, վրայ տուեցին՝ կարծես իրենց ողջ սնունդը կազմուած էր այդ բոյսերից, ու թողնելով պատառաքաղները՝ կերան մատներով։ Երբ խմում են, իրենց խմելու ձեւը նուազ-գեղջկական է։ Ամէն բաժակ բարձրացնելիս պէտք է կենաց ասել, որոնց պէտք է պատասխանել՝ չվիրաւորելու համար նրանց։ Այսպիսով, նրանք դրսեւորում են սրտազեղ քաղաքավարութիւն, եւ այդ արարողութեան մէջ է իրենց ողջ հաճոյքը։

Մենք խմեցինք միայն սպիտակ գինի, որ իրենք պատրաստել էին իրենց տանը: Այն քաղաք տանելն արգելուած է: Հայերը, ինչպէս հրեաները եւ յոյները, գինի ունենալու համար ստիպուած են իրենք պատրաստել՝ գնելով որոշ քանակութեամբ խաղող: Թուրքերն արգելել են գինի պատրաստել, որից կարող էին օգտուել, թէեւ չեն հրաժարւում կոնծելուց, ու յաճախ իմամներն են, որ գալիս, գինի են ուզում:
Ճաշից յետոյ մեզ առաջնորդեցին պարտէզ, որտեղ սուրճ խմեցինք: Երեկոյեան մեզ կեռաս հիւրասիրեցին (Հտր. 2, 4-8):

Սեստինին իր հանդիպած մի հայի մասին ակնարկել է Յունիսի 10ին Նիկէայում գրած նամակում: Այդտեղ նրանք հանդիպել են մի «*փնթի հայ բժշկի, որ Կոստանդնուպոլսից նոր էր եկել՝ բժշկութիւն անելու Նիկէայում: Նա ասաց, որ ճանաչում է բոյսերը եւ կարող է խօսել վենետիկերէն: Անշուշտ, նա երկուսն էլ մոռացել էր, քանի որ նա ինձ չկարողացաւ ասել ոչինչ ո՛չ բուսաբանութիւնից, ո՛չ մեր լեզուով*» (Հտր. 2, 61): Սեստինին աւելի բարեացակամ է գրել Մարմարա Ծովի կղզիներից մէկում իր հանդիպած կաթոլիկ հայ քահանայի մասին: Վերջինս կաթոլիկների դէմ հալածանքներից խուսափելով՝ կամաւոր աքսորական է դարձել կղզում: Սեստինին նրա անունը յիշել է Ջորջօ դէ Մուրատ (թերեւս՝ Գէորգ Մուրատեան) ձեւով ու նշել, որ վերջինս ութ տարի բնակուել է Ֆլորենցիայում եւ Իտալիայի այլ մասերում (Հտր. 2, 88):

Վերոբերեալ հատուածներից կարող ենք եզրակացնել, որ Սեստինին որոշակի գաղափար կազմել է հայերի մասին, սակայն առանձնապէս հիացած չի եղել նրանցով, ինչպէս իր նախորդ եւ ժամանակակից ուղեգիրներից ոմանք: Երբեմն նրա խօսքը հասնում է հեգնանքի: Սակայն նրա՝ յաճախակի չհանդիպող վկայութիւնները նաեւ ցոյց են տալիս, որ շատ սովորոյթներ հայերը պահպանել են մինչ օրս (ինչպէս, բաժակաճառի աւանդոյթը): Դրանք կարեւոր են նաեւ արեւմտահայերի առօրեայ կենցաղի պատմութեան ուսումնասիրութեան համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Domenico Sestini, *Dissertazione Sopra Alcune Monete Armene dei Principi Rupinensi della Collezione Ainslieana...* Livorno, Masi, 1790: Նոյնի՝ *Descrizione delle Medaglie Antiche Greche del Museo Hedervariano, Parte II, Dal Bosforo Cimmerio Fino All'Armenia Romana, Con Altre Di Pi Musei*, Firenze, Pr. G. Piatti, 1828: Այս աշխատութիւնները յիշուած են Սալմասլեանի մատենագիտութեան մէջ (Արմենակ Սալմասլեան, *Հայկական Մատենագիտութիւն*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1969, էջ 365), յիշուած են նաեւ ֆրանսերէն թարգմանութիւնները՝ 1798ի եւ 1789ի գրքերի հրատարակութիւնները (էջ 270): Սեստինիի *Viaggio de Constantinopoli a Bassora* գիրքը յիշուած է Մանուէլ Ջուլալեանի *Հայ Ժողովրդի XIII-XVIII Դարերի Պատմութեան Հարցերը Ըստ Եւրոպայի Հեղինակների*

աշխատութեան աղբիւրների մէջ (Երեւան, ՀԳԱ Հրատ., 1990, էջ 345), բայց շարադրանքում այդ գրքին որեւէ յղում չկայ:

[2] Domenico Sestini, *Opuscoli del Signor Abate Domenico Sestini. 1. Descrizione del Littorale del Canale di Costantinopoli, e Della Coltura delle Vigne Lungo le Coste del Medesimo. 2. Della Coltura di Varie Cose Geoponiche Lungo le Coste Medesime. 3. Idea dei Giardini Turco-Bisantini, e Coltura dei Varj Fiori Che si fa nei Medesimi. 4. Della Caccia Turca, con una Descrizione degli Animali, e degli Uccelli, che si Osservano Annualmente Lungo il Canale di Costantinopoli*, Firenze, 1785:

[3] *Lettere Odeporiche o sia Viaggio per la Penisola di Cizico per Brussa e Nicea fatto dall'abate Domenico Sestini Accademico Fiorentino l'anno 1779*, 2 vols., Livorno, 1785:

[4] *Voyage dans la Grece Asiatique, a la Peninsule de Cyzique, a Brusse et a Nicee...* Trad. de l'italien de M. l'Abbe Dominique Sestini, Leroy, 1789, էջ vii: Սոյն առաջաբանը բացակայում է 1785ի իտալերէն հրատարակութեան մէջ:

[5] Այս երկու հատուածներն արեւմտահայերէն թարգմանութեամբ տե՛ս՝ «Հայկական Ճաշ», *Յառաջ*, Փարիզ, 30 Յունիս 1935:

[6] Բնագրում՝ Chogià-Elia:

[7] Բառը բնագրում այդպէս էլ գրված է՝ kief:

[8] Այն յայտնի է նաեւ *ռեպաս* անունով, յիշեցնում է քամանչան եւ ունի արաբական ծագում:

[9] Բնագրում՝ Jar-oglu: Իրականում՝ սիրահարի զաւակ:

[10] Բնագրում՝ confitures:

[11] Խաղողի այդ տեսակը հայերէն կոչւում է իծապտուկ:

[12] Գարու նման գործածութիւնը բնորոշ չէ հայերին. հաւանաբար նկատի ունի բլղուրը: Գրուածից կարելի է ենթադրել, որ մատուցուել է կրկուտակ՝ թաբուլէի հայկական տարբերակը:

THE TESTIMONIES OF DOMENICO SESTINI (1750 - 1832) ABOUT THE ARMENIANS
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN
artsvi@yahoo.com

Domenico Sestini (1750–1832), an Italian archaeologist and numismatist, was a renowned traveler in the Near and Middle East. In two of his numismatic studies he studied Armenian coins of the Roman and Cilician (Rubenid) era.

The current article is a collection of excerpts on Armenians from his two travel books, published in 1785. Indeed, Sestini came across Armenians during his travels in the Ottoman Empire, described and often described their homes, lifestyle, food and eating habits as well as the decorations of wealthy Armenians' homes as he was hosted by them in several places (Bursa, etc.). Sestini stated that "All the Armenians are merchants, so they are greedy, and therefore rich."

Sestini's testimonies show that the Armenians have maintained a number of customs up to this day. Furthermore his testimonies are an important source for studying the everyday life of western Armenians.

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻՆ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՒ ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹԻ ՄԱՍԻՆ

ՅԱԿՈԲ ՔԷՕՍԷԵԱՆ
tumanyan.lusi@gmail.com

Ներկայ հրապարակումը պատրաստել էի բարեյիշատակ Պետրոս Յովհաննիսեանի յորդորով: Ցաւօք, նրան այնպէս էլ չվիճակուեց գրել այս հրապարակման ներածութիւնը:

Ներկայացուող բնագիրը մի հատուածն է ԺԷ.-ԺԸ. դարերի բանաստեղծ, հրապարակախօս, միաբարական շարժման եռանդուն մասնակիցներից մէկի՝ Ստեփանոս Դաշտեցու (ծն. 1653) *Կոչնակ Ճշմարտութեան* ընդարձակ աշխատութեան, որ գրուած է 1714 Ապրիլից 1715 Յունուարին, Հնդկաստանի Բանդարի Սուրաթ քաղաքում: Երկում քաղկեդոնական դաւանութեան դիրքերից խստագոյնս քննադատուած է հայ եկեղեցական մտքի երեւելի դէմքերից մէկի՝ «տիեզերալոյս փիլիսոփայ», «թագաւորաց աստուածաբան» Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցու[1] *Կրթութիւն Հաւատոյ (Գիրք Համառօտ Վասն Իսկապէս եւ Ճշմարիտ Հաւատոյ եւ Դաւանութեան Ուղղափառ Կաթողիկէ Ընդհանուր Հայաստան Եկեղեցւոյ)* աշխատութիւնը[2]: Իրեն բնորոշ գաղափարական անհանդուրժողութեամբ, ձայնակցելով Կղեմէս Գալանոսին ու նրա նմաններին՝ Դաշտեցին դատափետում է Հայ Եկեղեցու որդեգրած դաւանական սկզբունքները, սրբազան աւանդութիւնն ու նուիրական արժէքները[3]: Նա մեղադրում է «անընտրող եւ պարզամիտ վարդապետացն մերոց», որոնց անհոգութեան պատճառով «*սկսան բազմանալ սպրութիւնք եւ ի պարապարտուց գրպարտանք, անկարգութիւնք, յանդգնութիւնք, մոլորութիւնք...*»: Այս հիմամբ նա անվաեր է համարում մասնաւորաբար դաւանական բովանդակութիւն ունեցող հակաքաղկեդոնական գրութիւնները, որոնք կենցաղավարել են հայ իրականութեան մէջ: Դաշտեցին Մովսէս Խորենացու, Դաւիթ Անյաղթի իմաստասիրական, աստուածաբանական հանճարին անպատշաճ է համարում միջնադարում նրանց անունով շրջանառուած գրութիւնները, մասնաւորաբար *Էակաց* գրքում տեղ գտած քրիստոսաբանական հարցուպատասխանին, որը նա «առասպելաբանութիւնք» եւ «պատրողաբանութիւնք» է որակում: Տրամաբանական հաշուարկով, իրենց մէջ պատասխան պարունակող հռետորական հարցումներով հեղինակը ճգնում է ապացուցել, որ Աթէնքում գտնուող հայ վարդապետերը՝ Խորենացին, Անյաղթը, Մամբրէ Վերծանողը, Պօղոսը եւ Աբրահամը չէին կարող չլսել Քաղկեդոնի ժողովի մասին եւ անմիջապէս չարձագանգել այդ ժողովի որոշումներին՝ յստակօրէն չսահմանելով Հայ Եկեղեցու դաւանական դիրքորոշումը: Հեղինակը զարմանք է յայտնում, թէ Քաղկեդոնի ժողովի ժամանակ Աթէնքում գտնուող Խորենացին ու Անյաղթը, ժամանակի Գիւտ Արահեզացի հայրապետին (461-478) ոչինչ չեն պատմել այդ ժողովի ու նրա որոշումների մասին, «կամ գոնեայ գրել ինչ զբան մի ընդդէմ այնր

ժողովոյն», մանաւանդ որ Քաղկեդոնը այնքան էլ հեռու չէր Աթէնքից: Նոյնիսկ ստուգապատում ժամանակագրութեանը նախանձախնդիր Խորենացին, խօսելով առաջին երեք տիեզերաժողովների մասին, իր *Պատմութեան* մէջ լռում է Քաղկեդոնի ժողովի մասին: Այս ամէնը Դաշտեցին ջանում է արդարացնել նրանով, թէ Քաղկեդոնի ժողովն այն ժամանակ այնքան հանրայայտ էր եւ իր դաւանական դիրքորոշմամբ միանգամայն հասկանալի, որ դրան անդրադառնալու անհրաժեշտութիւն իսկ չկար:

Ընդդիմանալով Քաղկեդոնի հակառակորդներին՝ Դաշտեցին նկատում է, որ եթէ այդ ժողովը մերժէր առաջին երեք տիեզերաժողովների որոշումները՝ ինչպէ՞ս կարող էին այդ մասին չիմանալ Խորենացին եւ Անյաղթը: Նոյնիսկ տեսական խնդիրներին քաջատեղեակ Անյաղթը «ընդէ՞ր ոչ աճապարեաց զաղաղակ բառնալ» եւ կամ գոնէ մի բան գրել այդ ժողովի դէմ: Իսկ Մովսէս Քերթողը, որ հեղինակ է բազում աշխատութիւնների, իր ընդգրկուն պատմութեան մէջ նոյնիսկ ակնարկ չի արել Քաղկեդոնի Ժողովի մասին: Այդուամենայնիւ, Դաշտեցին վստահ է, որ Խորենացին իր *Պատմութեան* մէջ առաջին երեք տիեզերաժողովներից շատ աւելի մանրամասն լուսաբանել է Քաղկեդոնի ժողովի պարագաները: Այդ ժողովի մասին Խորենացու լռութիւնը նա առաւել հաւանական է համարում բացատրելով, որ Քաղկեդոնի Ժողովի հակառակորդները *Պատմութիւն*ից հանել են այդ հատուածը: Ի հաստատումն իր այս կարծիքի նա վկայակոչում է Յովհաննու Աւետարանում (Ը 1-11) «Իրք կնոջն շնացելոյ» դրուագի՝ շատ ձեռագրերում բացակայելը. այս հիմամբ նա եզրակացնում է, որ եթէ Աստուածաշունչ մատեանն իսկ այսպէս աղաւաղում են «յանմիտ եւ ատելասէր վարդապետաց ոմանց»՝ էլ ուր մնաց, որ այդպէս չվարուեն պատմագրական մի երկի հանդէպ:

Դաշտեցու այս եւ միւս երկերը ցոյց են տալիս այն ոգին եւ գաղափարական զինանոցը, որով Կաթոլիկ Եկեղեցու վարդապետական սկզբունքներին ծառայագրուած հայ միաբարները ջանում էին արժեզրկել Հայ Եկեղեցու ազգային աւանդները, նենգափոխելով դէմքերն ու դէպքերը՝ այդ ամէնը ներկայացնել իրենց գաղափարական նկրտումներին պատշաճող մեկնաբանութեամբ:

Դաշտեցու *Կոչնակ Ճշմարտութեան* աշխատութիւնը յայտնի է երկու ինքնագիր գրչագրերով՝ ՄՄ, ձեռ. 8111, 9049. երկրորդ ձեռագրի 3րդ էջի վերեւի լուսանցքում արձանագրուած է. «Սրբագրեալ է այս»: Ներկայացուող հատուածը քաղուած է բ. սրբագրուած բնագրից, թ. 175ա-180ա:

> ...Նմանապէս եւ Մելիտես ասէ եւ Մովսէս ասէ սուտ եւ դատարկ առասպելաբանութիւնքն իւր՝ ի բերանոյ երկոցունցն հասուցանէ մինչեւ ցհարիւրերեսուն եւ չորս համար յիմարական զրուցատրութիւնս, որք ո՛չ ինքեանք անամօթ ստաբան միաբնակք շարադրողքն իման, թէ զինչ ասեն, եւ ոչ՛ ընթերցօղք այսպիսեաց առասպելաբանութեանցս[4]: Եւ ի յայսքան ժամանակս ոչ ոք գտաւ ի միջոյ հայոց ոմն, եւ ոչ ոք որ յանդիմանեսցէ զխայտառակ եւ դէմյանդիման աչաց զստութիւնս այսպիսեաց խափեփայ եւ անամօթ պատրողացս, եւ կամ ցաւակից գոլով տայցէ աւերել, քերել եւ ջնջել, եւ ի միջոյ բառնալ զայսպիսի զպատրանօք

եւ առասպելեօք լի զսնոտիապատիր զգրեանս սուտակասպասիցս, որ յանուն այնպիսի գերապայծառ վարդապետացն դնէ ի վեր՝ տալով բանադրել եւ այրել զմարմինս եւ զոսկերս այնպիսեաց ստասաց հերձուածողացն, զի մի՛ այնուհետեւ իշխեսցի ոք՝ առնուլ զանուանս մեծամեծաց եւ գերահռչակ վարդապետացն սրբոց ի վերայ դիւաշունչ եւ պէսպիսիւք հերձուածողութեամբ լիք, եւ յիմարական մրրաց արբեցութենէ ժայթքեալ թունալից գրոցն իւրեանց առ ի յամօթ եւ ի կորուստ անուանց նախնեացն մերոց սրբոց եւ ի ծիծաղումն այլոց ազգաց:

Արդ, կամիմ հարցանել, թէ զի՞նչ կարծէք դուք, ով՛ գերահռչակ եւ բանիբուն վարդապետք եւ ուսումնասէր մանկունք եկեղեցւոյս Հայոց. մի՞թէ այսպիսիք ունայնախոհք եւ ընդվայրաղանդաջմունքս, զորս անուամբ սրբոյն Մօվսիսի Քերթողահօրն եւ Դաւթի Անյաղթ փիլիսոփային եւ այլոց գերահռչակ վարդապետացն յունաց ետուն արձանացուցանել վարդապետքն յիմարեալք եւ հակառակասէրք, արդարեւ Դաւթի Անյաղթ փիլիսոփային եւ կամ Մօվսիսի Խորենացոյն են փիլիսոփայութիւնք եւ շարադրութիւնք:Եթէ գիտութիւն եւ իմաստութիւն սոցա այս է, զորոց եւ ի յիրաքանչիւրոցն բերաք զսակաւ ի բանից սոցին /տես զբանս տասն/, ուրեմն ի զուր պարծի եկեղեցիս Հայոց՝ ի յունիլն այսպիսեաց վարդապետութեանց եւ դատարկաբան վարդապետացն, զորոց եւ կարծեցինն: Ո՛հ անխոհեմ եւ անընդրօղ բարուց դիտաց եւ վարդապետացն մերոց, որ միշտ անփոյթ եւ անհոգ գոլով այնքան հեշտացեալք բարձիթողի արարին զեկեղեցիս եւ զանդաստանս իւրեանց ընդ հաւատարմութեամբ որումնացանիցն, եւ թողին զհօտս իւրեանց ի սահմանս վիճակի գայլոցն, եւ սկսան խորդալով նիրհել ի բարձի, մինչ ելին բազումք որոմնացանք եւ մշակք անօրէնութեանց, եւ շատացան ստասացք, զրաբանք, հակառակասէրք, խափեփայք եւ պատրիչք անհամարք: Եւ իւրաքանչիւրքն սկսան գրել զխելագարութեամբ լրացեալ զգիր եւ զթուղթ ինչ, լի անհամար հերձուածողութեամբ, մանաւանդ, թէ յիմարութեամբ եւ ի նանիր վայրախօսութեամբ՝ տալով իւրաքանչիւրոցն շինեալ զթուղթ յանուանս սրբոց եւ անհամեմատ գիտնոց եւ արփիաւորչաց վարդապետացն մերոց: Ոմն ի նոցանէ անուանէն, թէ՝ Այս է Հարցումն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր էհարցն ի սպասաւոր հրեշտակէն իւրմէ, յորժամ էր ի մէջ վիրապին, եւ ընկալաւ զպատասխանին ի հրեշտակէն Աստուծոյ՝ լի մեծամեծ առասպելաբանութեամբ եւ ազգի ազգի դատարկաբանութեամբ, յորոց գլուխ բանիցն է. Ասէ Գրիգոր եւ ասէ հրեշտակն[5]: Եւ ոմն ի նոցանէ այր դիւաբախեալ ելից եւ սոյն կերպիւ զպատմութիւն մի անհամար ստութեամբ եւ բազում զարհուրելի յանդգնութեամբ ընդդէմ քրիստոսասէր կայսերն եւ սրբազան վարդապետացն Յունաց, եւ առնու զանուն մեծի եւ քրիստոսասիրի իշխանին Հայոց Գագկայ շահնշահի, առ ի լնուլ զչարախտ հերձուածողութեան իւրոյ[6]: Ոմանք սկսան եւ պատմիչ լինիլ դիւական երեւմանց եւ սնոտիապատիր դանդաչմանց, զորոց ասացելոցս ոմն է գերահռչակ եւ երկրորդ լուսավորիչ կոչեցեալն ի միաբնակաց Գրիգոր Տաթեւացի, զոր իբրեւ կամի հաստատել զԽաչեցարն ի սրբերգութեան՝ շարժեալ ի ստութեան վարդապետէն իւրմէ, գրէ՝ ասելով, թէ՝ եւ իբրեւ Յովսէփ Արեմաթացին խնդրեաց ի Պիղատոսէ զպատուական մարմինն Յիսուսի առ ի իջուցանել ի խաչէն, եւ իբրեւ շնորհեցաւ Յովսէփու, եւ կամեցաւ իջուցանել. Այնքան փայլատակմունք ցոլէին ի տեղի բեւեռաց եւ ձեռաց եւ ոտից մինչ ի անհնար եղեւ մերձենալ եւ կամ տալ կորզել զբեւեռունսն, վասն որոյ եւ ի յան-

հնարս լինելոյն, չոգաւ ի ծունկս Յովսէփ, եւ ասաց զայս երգս երեք անգամ այսպէս. "Սուրբ Աստուած.Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեայ մեզ": Եւ այսպէս, ի յիւրաքանչիւր ասելն, ի բաց ոստեաւ բեւեռ մի ի ձեռացն եւ յոտիցն, եւ ապա էջ մարմինն ի գիրկս Յովսէփայ Արեմաթացոյն[7]: Եւ ոչ ամաչի լուսաւորիչ միաբնակացս գոնեայ ի Գաւազանագրքէ եկեղեցւոյն իւրոյ, զոր պատմեն ասելով, թէ յաւուրս տէր Ներսէսի Աշտարակեցոյն[8], յորում եղեւ ժողովն Դվնայ, ի ժողովի անդ ասէ. Յաւել ի յերեքսրբեանն զխաչեցարն: Զոր խցէ նոյն ժողովն զբերան սորին Տաթեւացոյս, վասն զի եթէ ի ժողովն Դվնայ յաւելին զխաչեցարն, ուրեմն ոչ գոյր յառաջ զայս մոլորալիր բանս՝ ո՛չ ի Յովսէփայ Արեմաթացոյն, ո՛չ սրբոց առաքելոցն եւ ո՛չ ի սրբոյն Սեղբեստրոսէ եւ կամ ի սրբոյ Լուսաւորչէն[9]: Հետեւապէս, թէ՛ Յովսէփ Արեմաթացին եւ թէ՛ առաքեալք եւ վարդապետք եկեղեցւոյն Քրիստոսի ոչ էին ըստ խելագարութեան Տաթեւացւոյն[10] մինչ զի ոչ տարբերել կարիցէին, թէ զինչ է Աստուած ասելն, զինչ՝ Հայր, կամ Սուրբ Հոգին, կամ զինչ Քրիստոսն: Վասն որոյ եւ ոչ ոք կերպիւ կարէր ասել Յովսէփն ի դէմս Քրիստոսի, թէ՝ "Սուրբ Աստուած, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ": Վասն զի "Աստուած" անունդ ստորոգի ի յերից ամենասուրբ անձանցն՝ զՀօրէ, զՈրդւոյ եւ զՀոգւոյն Սրբոյ, վասն զի Հայր է Աստուած, Որդի է Աստուած եւ Հոգի է Աստուած: Վասն որոյ ոչ ոք անհմաստ կարէ արտաբերել, թէ՝ ով Աստուած, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ, վասն զի միայն մի անձն Որդւոյ խաչեցաւ եւ ոչ եւս անձինք Հօր եւ Հոգւոյն: Եւ այսպէս թերեւս կարեմք ասել ի դէմս Որդւոյն, թէ՝ Որդին Աստուծոյ խաչեցաւ մարդկութեամբս, վասն զի յայնժամն Որդի ասելովն նշանակէ զանձն Որդւոյ եւ ոչ երից անձանցն: Մանաւանդ, որ Քրիստոս խաչեցաւ, որ է յԱստուածութենէ եւ ի մարդկութենէ միաւորեալ Քրիստոս անունդ եւ ոչ սոսկ Աստուած, կամ սոսկ մարդ: Նմանապէս ել եւ ոմն աշակերտ ստութեան եւ ջնարահար պարուցն Բելիարայ Միխայէլ Ասորի, եւ ելից ազգի ազգի դիւական երեւմամբք ի ստաբանական պատմութիւնս իւր հանդերձ ՀԲ (72) գլխովք ընդդէմ զինելով Քաղկեդոնի ժողովոյն[11]: Եւ ոչ ոք է ի վարդապետացն մերոց եւ կամ ի քրիստոսասիրաց անձանց առ ի յառաջ մատիլ եւ հարցանել ի յահագնագոչ փողոյս զօրագլխին Բէէզեբուղայ, թէ դու, որ մէն միայն կալար զբնակութիւն ձեր ի ներքին վայրս Ասորեստանի, մանաւանդ ,թէ դատապարտեալ հերքեալ ի Կաթողիկէ եկեղեցւոյն Քրիստոսի, զի՞արդ կարացեր առաջի ձեր ածել զպատմող, եւ կամ զտեսանելոցն դիւականաց երեւմանց այնքան ազինքն առ ի պատմել մեզ մի ըստ միոջէ, զոր եւ ոչ ոք ազգի քրիստոնէից կարաց լսել եւ ի դիւաշունչ պատմութեանցդ գոնեայ զպատմութիւնս տասն եւ կամ Ե (5): Մանաւանդ թէ վարդապետք այսքան ազեանցս հայոց զի՞արդ ոչ լուան երբէք եւ ոչ գրեցին զայդցանէ ստութեանց թերեւս զբան ինչ եւ կամ ետուն գրել ի կողմն ինչ գրոց կամ թղթոցն իւրեանց: Ո՛հ ահագին ստութեանց եւ անամօթ խաբեութեանց առնս նախանձողի, ատելասիրի եւ հերձուածողի եւ անընտրող եւ պարզամիտ վարդապետացն մերոց հեշտասիրաց եւ սիրողաց զդատարկակեցութեանց: Այլ արդ, սակս այսպիսեաց անհոգութեանց հովուաց եւ հովուապետացն մերոց սկսան բազմանալ ստութիւնք, եւ ի տարապարտուց զրպարտանք, անկարգութիւնք, յանդգնութիւնք, մոլորութիւնք եւ ազգի ազգի պատրողական թուղթք եւ գրեանք ի մէջ ազգիս, եւ ոչ ոք է, որ սրբագրեսցէ եւ մաքրեսցէ զստութիւնս, եւ ի ճշմարտա-

պատում գրքացն, եւ կամ տացէ որոնել եւ տեսանել, թէ այս առաջաբանութեան, զոր գրէն, թէ այս է գիր կամ թուղթ սրբոյն Գրիգորի, կամ մեծին Ներսէսի, եւ կամ սրբազանին Պօղոսի, կամ Պետրոսի տացուք ընթեռնուլ եւ տեսանել, թէ արդեօ՞ք այս պտուղք են այնպիսեաց բարեբեր ծառոցն, թէ՛ արտաքուստ ցուցանեն զձուկն եւ ի ծածուկ ջամբեցուցանեն զօձս[12]: Վասն այսորիկ տեսին աշակերտքն Նեռինն, թէ ոչ գոյ ամենեւին զհարցանող ումն եւ կամ զհոգաբարձու խորհրդական, որով եւ լինի յարդարումն եւ շինումն պիտանացու անօթոցն ի ջնջումն եւ ի խորտակումն անպիտանացն, վասն որոյ եւ յանդգնեալ ձգեցին զձեռս եւ լցին զերսս քարտենից անհամար առասպելաբանութեամբ եւ յիմարական ստութեամբ, եւ արձանացուցին ի մէջ ազգիս այնքան մինչ զի եւ փափագօղ են քեզ միաբանք Ամենափրկչի վանացն Նորոյն Ջուղայոյ[13], եւ ետուն տպել եւ բազմացուցանել ի մէջ հայոց՝ կարծելով, թէ վարդապետքս աստուածաբանք իբր այսպիսիք հերձուածողականք, մանաւանդ թէ դատարկաբանութիւնք եւ հողմարածք հարցմունք եւ պատասխանատրութիւնք արդարեւ Մօսիսի Քերթողահօրն եւ Դաւթի Անյաղթ փիլիսոփային են պատասխանատրութիւնք, եւ ոչ իմանան երբէք ո՛չ բանիցն զօրութիւնք, եւ ոչ կերպս վիճաբանութեան ճեմականաց եւ փիլիսոփայիցն: Վասն զի սոցայ այնպէս թուեցաւ, թէ ձեռնարկութիւնք եւ հաւաքաբանութեամբ եզրակացութիւնք յաթենականացն, զորոց ասենն, թէ սոքա Լ(30) ամ մնացին ի յԱթենս, այս էր նոցա ուսեալ գիտութիւն եւ զկերպ վիճաբանութեան որպէս եւ վայրենամիտ գռեհիկ եւ իմաստակք ոմանք կամեցան անուամբն Մօվսիսի եւ Դաւթի հռչակել զանմտութիւնս իւրեանց: Եւ զարմանամ, եւ միշտ ի հիացման մնամ, թէ զի՞նչ կարացին իմանալ վարդապետքս մեր ի յայնքան հարցմանց եւ ի պատասխանատրութեանցն, զորս լցին զերեսս այնքան դաշտացեալ թղթոց, զոր եթէ առպատրաստ լինէիննն աստանօր, արդարեւ կարի խոնարհութեամբ մաղթէի եւ ի ծունկս իջեալ աղաչէի մեկնել ինձ գոնեայ զհարցումն, կամ զպատասխանի մի ի յայնքան բազմաց առասպելաբանութեանցն, եւ ոչ երկու, առ ի իմանալ, թէ զինչ կամէին մեկնել մեզ, թէ զի՞նչ կամին ասել: Թերեւս հարցանէին, թէ յասելն Մամբրէի յառաջին համարն,թէ զի՞նչ եւ զի՞նչ մակացութիւն: Եւ պատասխանելն Դաւթի թէ՝ անուն յոլովեալ, եւ ի մասանց բանի մարմին կարմիր յայտ բերելով[14]: Ո՛հ մեծի անգէտ փիլիսոփայութեանս, եւ ընդունողացն զսոցանէ զայսպիսեաց առասպելաբանութեանց եւ զպատմաբանութեանց զհաւատարմութիւն: Աւա՛ղ բարձրայօնութեան եւ անխոնարհելի պարանոցաց եւ չարախնդաց բարուց հայկազին ազգացս, որք ոչ երբէք կամին նայիլ ի վայր, եւ կորացուցանել զպարանոցս՝ առ ի հայիլ ի յիմաստասիրութիւն եւ որոնումն իրաւանց, եւ կամ սիրել զբանս սիրէ յորդորս, հաշտարարս, խաղաղականս եւ յիսուսաւանդս եւ ոչ տարբերել երբէք զբանս եւ զքարոզութիւնս ուղղափառացն եւ չարափառ մոլորեցուցչացն ամենեւին ի միմեանց թէ՛ զգայլն եւ թէ՛ զոչխարն, որպէս եւ տեսանել կամիմ տալ աստանօր ակներեւ եւ դեմյանդիման աչաց: Քանզի որպէս եւ ասացաւ, մինչդեռ մեծն Մօվսէս եւ Դաւիթն հանդերձ այլ երեք ընկերակցովքն իւրեանց ի խնդրոյ մեծին Իսահակայ[15] եւ հրամանաւ քրիստոսապսակ կայսերն Թէոդոսի[16] եւ արժանաժառանգ պատրիարքին Ատտիկոսի[17] առաքեցան ի յԱթենս, որ է ի ծովու թերեւս երկոտասան աւուրբք ճանապարհ, վասն զի երկիցս գնացաք մեք ի Կոստանդնուպոլսոյ մինչեւ ցԶմիւռին յաւուրս Գ(3) եւ Դ (4), եւ ի յիԶմիւռնոյ ի Նեգրփունթ, որ

է հուպ Նապօլի Ռումանիոյ, յաւուրս Զ (6), որ է քաղաք յաթենացոցն՝ յանդէպ Նեգրփունթ կղզւոջն, եւ յափն Նապօլի Ռումանիոյ, որ այժմ է աւերակ, եւ թերեւս քանի մի օթանոց գոեհկաց, զոր կամիմ ասել, թէ ի Քաղկեդոն անուանեալ տեղւոջէն, որ է յանդէպ Կոստանդնուպոլսի եւ ներքոյ Սկիւտարայ, այսինքն՝ ի յափն ծովուն, որ այժմ Ղատիքեօի ասեն օսմանցիքն, մինչեւ յԱթենս են թերեւս Ժ(10), կամ տասներկու աւուրց ճանապարհ: Զհա՞րդ ի յայսպիսի մերձակայ լինիլս սոցա ոչ կարացին լսել ինչ զհամբաւ չար կամ հերձուածողութեան ի սրբոյ ժողովոյն Քաղկեդոնէ, իսկ եթէ լուանն, ընդէ՞ր ուրեմն ոչ ընթացան ժամանեցուցանել եւ զինքեանս, եւ կամ ո՞վ ոք էր արգելիչ նոցունց, եւ կամ զի՞նչ պատճառս լինէր արգելումն նոցա: Տացուք ասել թերեւս, թէ ոչ կամեցան թերակատար թողուլ զուսումնս իւրեաց՝ առ ի ցաւակից լինել ողջամիտ վարդապետութեան, եւ կամ երբ եկինն ի Կոստանդնուպոլիս, ապա թէ ծանեան զթիւրութիւն ժողովոյն (զոր եւս է կարծիք տղայոց) եւ յետոյ սկսան մեղադիր լինիլ կայսերն Մարկիանոսի[18] եւ կայսերուհոյն Պուլքերի, որպէս եւ առասպելէ (ի յասացեալ գրքւոջն, զորս տպագրեցին վարդապետքն Ջուղայոյ) նոյն անամօթ ստութեանց աշակերտն ի վայրախօսութեանն իւրում: Բայց արդ, որովհետեւ եթէ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն եւ Մօվսէս Քերթօղ աշխարհապատում, նաեւ Պօղոսն, Մամբրէն եւ Աբրահամն. սոքա հնգեքեանս եկին ի Կոստանդնուպօլիս եւ յանդիման եղեն կայսերն, եւ այնքան մեղադրեցին զկայսրն եւ զպատրիարգն Կոստանդնուպօլսի եւ զբոլոր եւ զանհամար վարդապետս Յունաց առ ի կրկին քննութիւն, վիճաբանութիւն եւ խուզ եւ խնդիր առնլոյ թիւրութեանցն, զորս ԶՃԼԶ/ 636/ հարքն հաստատեալ էին[19]: Արդարեւ, այնքան շփոթմունք եւ աղաղակ պարտ էին լինիլ ի Կոստանդնուպօլիս, մինչ զի աղաղակ նոցա հասանիցէր մինչեւ ցծագս տիեզերաց: Եւ այսպէս, եթէ հարքն ժողովոյն Քաղկեդոնի սխալեալք իցէինն, ուրեմն պարտ իսկ էր, զի վեր ուղղիցէինն ձեռամբ Դաւթի եւ Մօվսիսի, եւ յայնժամ պարտ էր աւերել զսահմանս Քաղկեդոնին եւ հաստատել զսահմանս Դաւթի եւ Մօվսիսի: Արդ, ո՞րն է այն սահման՝ ցուցանել բաղձամ ի վարդապետաց իմոց:Իսկ եթէ այն է սահման Մօվսիսի եւ Դաւթի, զոր Ստեփաննոս Աստուածաբանն Ջուղայոյ վանացն տպագրեաց ի ստաբան եւ վայրայաջ շարադրողէն[20], ուրեմն մեկնութիւն նոցին ի մէնջ ուսանիլ մաղթեմ, թէ զինչ կամին ասել:

Ուրեմն դոքայ առասպելաբանութիւնք ոչինչ են եւ ոչինչ արժեն, եւ ոչ ունին զճշմարտութիւն ինչ եւ ոչ զզօրութիւն բանից ամենեւին, եւ են անամօթ պատրողաբանութիւնք եւ ունայնաձայն բարբանջմունք: Եւ դարձեալ զբովանդակ առասպելաբանութիւնս հերձուածող շարադրողացն նոյն ասացեալ եօթամբ գլխով բովանդակեցեալ գրքւոջն, զորս տպագրեցինն ի վանս Ջուղայոյ, եւ զստութենէ եօթն գլուխ բանից նոյն գրքւոյն եւ զճշմարտութենէ եւ ուղղափառութենէ Քաղկեդոնի սուրբ ժողովոյն, ցուցանի ի ձեռն բանականութեան եւ ակներեւ ճշմարիտ ապացուցութեան: Վասն զի, եթէ սրբազան ժողովն լեալ էր ընդդէմ նախկնոյ երից սուրբ ժողովոց, որպէս եւ միաբնակ հերետիկոսքն միշտ բարուրեն, եւ ըստ բարեատեաց վարդապետին իւրեանց վատահամբաւ լինին, ուրեմն այս առբերեալ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայս մինչ ժամանակակիցն էր եւ մերձակա ժողովոյն Քաղկեդոնի, որպէս եւ ասացաքն, եւ հետեւապէս եկինն ի Կոստանդնուպօլիս եւ անդի ի Հայաստանն[21], զի՞արդ ոչ ընթացաւ սա ծանուցա-

նել վարդապետացն հայոց եւ կամ կաթողիկոսին իւրեանց, որ էր սրբազան եւ երանելի սուրբ հայրապետն տէր Գիւտ ի Վանանդայ[22] եւ ի յաշակերտութենէ սրբոյն Սահակայ, որ եւ զկնի սորին նստաւ յաթոռ կաթողիկոսութեան այրն Աստուծոյ: Եւ կամ, եթէ նոյն ժողովն ունեցեալ էր զբան ինչ ընդդէմ նախկին երից սուրբ ժողովոցն, պարտ էր եւ հասանիլ եւ ի յականջս երանելի կաթողիկոսիս, մանաւանդ, թէ Դաւիթն միշտ էրն ընդ կաթողիկոսին, թէպէտ եւ Մովսէսն ծածկէր զինքն, որպէս եւ առասպելէ նոյն գիրքն, թէ Մովսէսն անծանօթ ի մարդկանէ շրջէր գծուծ մինչ ի յաւուրսն յայնոսիկ, յորում սրբազան կաթողիկոսն Գիւտ հանդերձ այլովք վարդապետօք ժամանեաց ի գեօղ մի: Եւ ի լինիլ յաւուր միում ի գիներբուսն հրամայեաց կաթողիկոսն, զի իւրաքանչիւրքն ասացեն զերգ մի, յորում եւ մէջ ժողովելոցն էր եւ սուրբն Մովսէս Քերթողահայրն անծանօթ ի բազմելոցն, յորմէ եւ հրամայեցաւ նմա եւս, զի ասասցէ եւ զերգ մի, եւ ի յասելն Մովսիսի զերգս ըստ պատշաճի հայրապետին զտուն երեք: Եւ ի զարմանալն ամենեցունց զգեղեցիկ շարադրութենէ նորին, ապա չոքաւ աշակերտ Մովսիսի Քերթողահօրն առ հայրապետն եւ ծանոյց, թէ սա ինքն է Մովսէսն Քերթողաբան, յորմէ գրկեալ համբուրեացն, եւ արարին մեծ խնդութիւն: Եւ գլուխ գեղեցիկ եւ քաղցրաբան երգոյն դնէ ստաբան անամօթն, թէ՝ "Ո՛վ արքայակերպ տէր քահանայապետ սուրբ եւ հովուապետ բարի, եւ երկնայնոցն նմանեալ"[23]: Տեսէք, թէ որպէս նման է բան երգոյս իմաստութեան Մովսիսի Քերթողին եւ ոճից նորին կամիմ ասէ թէ: Ուրեմն ընդէ՞ր Դաւիթն ամենեւին ոչ արտաբերեաց զբան ինչ ի չարախօսութենէ միաբնակացն որոմնացանից առաջի սուրբ հայրապետին, եւ կամ ընդէ՞ր ոչ աճապարեաց զաղաղակ բառնալ, եւ կամ գոնեայ գրել ինչ զբան մի ընդդէմ այնր ժողովոյն: Եւ կամ Մովսէս Քերթողահայրն, որ արար այնքան արդիւնս յաղագս ազգիս հայոց՝ գրելով զբազում գրեանս, թէ զԱշխարհացոյցս բոլոր գնդի աշխարհիս[24], եւ թէ զգիրս աստեղաբաշխականս[25] եւ զբժշկականացն արհեստից, մանաւանդ, թէ զայնքան զտաժանելի զՊատմագիրսն՝ սկսեալ ի ծայրէն մարդոյ եւ զլինելութենէն Ադամայ մինչեւ զժամանակս իւր՝ այնպիսի զպատմութիւնս, զոր ոչ ոք գտաւ ի բոլոր ազգս ոմն այնպիսի աշխատասէր եւ հոգներախտ վարդապետ եւ ճշմարտապատում այր եւ մանրամասնաբար պատմող յիւրաքանչիւր իրաց, զորս պատահեցան նախ քան զինքն եւ ի ժամանակի իւրում: Մանաւանդ, երբ կարաց գրել երջանիկ վարդապետս Մովսէս ի մէջ Պատմագրութեանն իւրոյ թէ՛ զժողովոյն Նիկիոյ եւ զպատճառս նոյն ժողովոյն, եւ թէ՛ զանուանս մանաւանդագոյն գլխաւորացն նոյն ժողովոյն: Նմանապէս գրէ եւ զժողովոյն Կոստանդնուպօլսի եւ զնորին պատճառացն եւ սրբոց հարցն, որք էինն նախ քան զՄովսէսն: Գրէ եւ նմանապէս զժողովոյն Եփեսոսի եւ զպատճառէ նորին, հետեւապէս զսահմանադրութեանց նորին եւ երանելեաց սրբոց հարցն[26]: Զարմանամ, թէ զիարդ թուլացաւ, եւ կամ մոռացաւ պատմել, կամ ճառել զժողովոյն Քաղկեդոնի, եւ զՋՃԼՋ/636/ հարցն, եւ զպատճառէ նորին ժողովոյն, եւ զճշմարտութենէ, եւ կամ զերծուածողութենէ անդր ժողովելոց հարցն, որք էինն ժամանակակիցք Մովսէսի Քերթողին, եւ յաւուրս Մովսիսի եւ մերձ ի յականջս Մովսիսի, որ էրն յայն ժամանակն յԱթենս եւ ի Կոստանդնուպօլսի ընդասացեալ Դաւթին, ընդ Պօղոսի, Մամբրէի եւ Աբրահամու: Եւ արդ, յայտ եւ յանդիման աչաց տեսանի եւ բնական բանականութիւնն եւս ենթադատէ զերկու ինչ. նախ երեւի, թէ սրբազան ժողովն եւ ուղղափառութիւն նո-

րին այնքան էր հրատարակեալ, մինչ զի ոչ ոք ունէր զկարծիք ինչ եւ կամ զտարակուսութիւն սակս ուղղափառութեան նորին ամենեւին, մինչ զի հարկաւոր լինիցիւր պատմել ազգի եւ հայրապետաց եւ կամ վարդապետացն հայոց: Վասն զի մինչեւ ցգալուստ Դաւթի եւ Մովսիսի ի Կոստանդնուպոլսէ ի Հայաստան, վաղ ուրեմն հասեալ եւ հրատարակեալ էր զուղղափառութենէ մեծի ժողովոյն առաջի բոլոր վարդապետաց եւ իշխանացն հայոց. մանաւանդ, թէ առաջի արժանաժառանգ սրբոյ կաթողիկոսին տէր տէր Գիւտայ քաջ հովուին, եւ կամ մերձ ժամանակացն տէր Բարգենայ հայրապետին[27] եւ նորին համաձայնութիւն, որ առ մեծ եկեղեցին Յունաց, որպէս եւ գերապայծառ ջահն եւ մեծ վարդապետն Ներսես Լամբրոնացին ի յԱտենախօսութեան իւրում յիշումն առնէ՝ ասելով թէ՝ "Ապա թէ ոչ ո՞ր դիցուք զբանս Ոհաննու Իմաստասիրին եւ հայրապետին, որ զայս առ մեզ վկայութեամբ սրբոց հարցն ստուգեաց որպէս ի վեր անդր ճառեցեալ եղեւ"[28]: Եւ այսպէս գոլով ի բոլոր ազգէս լինիլ հաճելի, վասն որոյ եւ ոչ էր հարկաւոր ծանուցանել հայոց, վասն որոյ եւ ոչ գրեաց զպատմութենէ ժողովոյն, թէպէտ այս կարծիք ոչ է այնքան հաւանելի: Երկրորդ՝ երեւի առաւել հաստատնապէս եւ հաւանելի, թէ մինչ Մովսէս Քերթողն կամեցաւ գրել զայնքան զծածկեալ եւ ի թաքստեան թաղեալ զբանսն գտանել եւ ի յայտ ածել, հետեւապէս եւ գրել զպարագայից երից նախկնագոյն ժողովոցն, այսինքն՝ թէ՛ զՆիկիոյ, թէ՛ զԿոստանդնուպօլսին, եւ թէ՛ զԵփեսոսին: Ուրեմն թարց տարակուսանաց եւ առանց երկբայութեանց գրեաց եւ զպարագայից ժողովոյն Քաղկեդոնի եւ զճշմարիտ դաւանութենէ նորին լի եւ անթերի պատմութեամբ յաճախ քան զպատմութիւնս երեք նախկին ժողովոցն: Սակայն ատելիք Աստուծոյ եւ ատեցօղք ճշմարտութեան, թշնամիք նոյն սրբազան ժողովոյն, հանին եւ ի բաց խլեցին ի նոյն Պատմագրքէն, որ էրն ի վերջն նորին Պատմագրութեանն, որպէս եւ կարգ բանից պատմութեանց նորին ցուցանէ զտեղին[29]: Եւ այսպիսի գողութիւն ի յանմիտ եւ ի յատելասէր վարդապետաց ոմանց, եւ անամօթ աղաւաղութիւնք բանից Աստուածաշունչ գրոց մի՛ զարմասցի ոք եւ մի՛ ստասաց զմեզ վարկանիցէ: Քանզի ոք որ յանդգնիցի այնքան եւ ամբարշտեսցի այնչափ մինչ զի ձգիցէ զձեռս իւր ի յԱւետարանն, եւ ի բաց հանիցէ ի նմանէ զբոլոր պատմութիւն շնացեալ կնոջն, որ ի Յոհաննու Ը (8)-երորդ գլուխն ի յառաջին համարոյն մինչեւ ցերկոտասան համարն, յուրում եւ ասաց նմա Յիսուս, թէ՝ "Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ, երթ, յասմ հետէ մի՛ մեղանչէր" բանք, որպէս եւ զբազում Աւետարանս տեսաք ի մէջ հայոց[30], զորոց մինն է, զոր աստանօր գոյ ի յԱսպահան ի յեկեղեցւոջ, "Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին", որ է եկեղեցի ժողովրդեանն մերոյս դաշտեցոց, եւ է մագաղաթեայ ոսկէգիր եւ ոսկետուփ Աւետարան, եւ է նուիրեալ ի խօջայ Մանուկէ՝ հօր խօջայ Աղազարի Դաշտեցւոյ, զոր կարէք առնուլ եւ տեսանել զանամօթ գլրբութիւն ամբարիշտ առնն, որ ձգեաց զձեռն իւր՝ գողանալ եւ ասպատակել զբանս աւետարանականս ի յաստուածաշունչ եւ ի փրկագործ Աւետարանէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Եւ այսցիկ եղեն եւ լինին ի թողութենէ եւ ի յեղգութենէ, նաեւ ի յանփութութենէ եւ ի ծուլութենէ հովուաց եւ հովուապետաց, դիտաց եւ վարդապետացն ազգիս: Վասն որոյ եւ խառնեցան, շփոթեցան եւ խմորեցան բովանդակ գրեանք եկեղեցւոյս Հայոց, գողացան եւ ամբարձան ի միջոյ զբազում բանս եւ զուղղափառական զդաւանութիւնս սրբոց հարցն, եւ փոփոխեցան, այլայլեցան եւ աղաւաղեցան

զճշմարտասիրական զճառս համաձայնականս ընդ տիեզերածաւալ եկեղեցւոյն Քրիստոսի, եւ ի տեղի նոցունց կացուցան, արձանացան զբանս հերետիկոսականս հերձուածողաց չարափառաց եւ հակառակասէր սուտ եւ ձեւացեալ վարդապետաց ոմանց, զոր բազում գրեանք եկեղեցականք ազգիս Հայոց ընկալան զվէրս եւ զսպիս բազումս, թէ՛ Յայսմաւուրն, թէ՛ Շարականն, թէ՛ զՎարս հարանցն, թէ՛ զճառս, թէ՛ զՊատմութիւնս, եւ թէ՛ զԹղթոյնս ոմանս, զորս երթեւեկութեամբ ընկալաւ եկեղեցիս մեր ի Յունաց եւ ի յաթոռոյ Հռոմայ, եւ թէ՛ սրբազան հայրապետքն մեր ըստ իւրաքանչիւր ժամանակս գրեցինն առ եկեղեցին Յունաց եւ առ մեծ աթոռն Հռոմայ: Եւ աղաւաղեցան տօնք եւ տօնացոյցք, եւ այլայլեցան կարգք եւ սովորութիւնք ձեռամբ սուտ վարդապետացն ազգիս առհասարակ: Ուրեմն, զի՞արդ ոչ կարացին նոյն ամբարիշտք եւ ատելիք ճշմարտութեան գողանալ զպատմութիւնս սրբազան ժողովոյն Քաղկեդոնի, եւ զուղղափառութենէ դաւանութեան նոյն սուրբ ժողովոյն, եւ հանել, եւ ի խորս լռութեան թաղել ի նոյն Պատմագրէն[3], որովհետեւ էր քակտիչ եւ կործանիչ կարծեաց միաբնակացն, եւ կարկիչ բերանոց ատելասէր եւ չարախօս ազգին Ասորոց, հերքիչ եւ յանդիմանիչ բոլոր հերձուածողաց եւ աստուածաչարչարաց, առաչօք ասողաց եւ երկու բնութիւնս բաժանեալս եւ անջատեալս ասողացն, որպէս եւ աւանիկ զբոլոր զսահմանադրութիւն եւ զդաւանութիւն սրբոյ ժողովոյն ի վեր անդր եդաք դէմյանդիման աչաց, եւ կարէք տեսանել զողջամիտ վարդապետութենէ ՋՃԼՋ (636) սրբոց երանելեաց հարցն...:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հ. Ղ. Միրզոյեան, *Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի*, Երեւան, 2001:

[2] Հակառակ Ջուղայեցու նկատմամբ տածած բացայայտ թշնամանքին, Դաշտեցին, խօսքն ուղղելով գաղափարական հակառակորդին, այսուամենայնիւ խոստովանում է, թէ «*պաշտեն եւ պատուեն, եւ գեր քան զչափն առաւել փառաւորեն, եւ ի վեր քան զտեղի եպիսկոպոսացն դնեն Ձեր գաթոռ*»: Նրա վայելած անառարկելի հեղինակութեան մասին է վկայում այն, որ Դաշտեցին, թող որ անթաքոյց հեգնանքով, ասում է, որ «*մեծամեծքն հայոց ի մերձենալն ի դրօշակս ձեր, սկսանին ի վեր առնուլ զփակեղս ի գլխոց իւրեանց մինչ դեռ հեռագոյնքն են, եւ այսպիսի բացաւ գլխով եւ բոկ ոտիւք, արծաթալիր բոմբ, խոնարհեալ պարանոցաւ եւ ի ծունկս իջանելով կամին համբուրել թերեւս զներբանս եւ զգարշապարս ոտից Ձերոց*» (ՄՄ, ձեռ. 9049, թ. 124ա. նաեւ՝ Հ.Ղ. Միրզոյեան, *XVII Դարի Հայ Փիլիսոփայական Մտքի Քննական Վերլուծութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1983, էջ 156):

[3] Դաշտեցու աստուածաբանական, իմաստասիրական հայեացքների մասին տե՛ս՝ Միրզոյեան, էջ 170-6, 202, 237-8, 242, 244-6, 253-4:

[4] Նկատի ունի *Էակաց Գրքի* (=«Մեծահանդէս հակաճառութիւն փառաւոր եւ յոգնազէղ իմաստիւք լցեալ, երանելեացն սրբոց մեծին Մովսիսի Քերթողի եւ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, որ եղեւ ի մայրաքաղաքն կայսերական ի Կոստանդնուպօլիս առաջի ամբարիշտ թագաւորին Մարկիանոսի, որ արար ժողովն Քաղկեդոնի...») համապատասխան դրուագը (*Գիրք Ժողովածոյ Ընդդէմ Երկաբնակաց, Մանաւանդ Աշխարհաւեր Ժողովոյն Քաղկեդոնի՝ Արարեալ Սրբազանից Վարդապետաց*, Նոր Ջուղա, Տպ. Ամենափրկիչ Վանքի, 1688, էջ 148-209:

[5] *Յայսմաւուրք*, խմբ.՝ Գրիգոր Խլաթեցի, Կ. Պոլիս, 1723, էջ 256-8. նաեւ՝ *Տեսիլքներ եւ Մարգարէութիւններ Հայոց Մասին*, կազմ. եւ խմբ.՝ Ա. Յունանեան, Երեւան, 2009, էջ 102-9:

[6] Նկատի ունի Գագիկ Բ. Բագրատունու «Հաւատոյ Գիրը», ուր շօշափուած են հայոց դաւանական դիրքորոշումը հաստատող երրորդաբանական, քրիստոսաբանական, ծիսական խնդիրներ, որոնց շարքում մասնաւոր անդրադարձ է արուած «Խաչեցարիւ»ին (Յ. Քէօսէեան, «Գագիկ Բագրատունու Հաւատոյ Գիրը», *Մատենագիրք Հայոց, ԺԱ. Դար, Հյդր. Ժ2.*, Հայկ. Մատենաշար Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան. Գիրերու Գիւտի 1600Ամեակի Մատենաշար, Երեւան, Տպարան «Նայիրի Հրատ.», 2012, էջ 663-72:

[7] Ս. Գրիգոր Տաթեւացի, *Գիրք Հարցմանց*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1993, էջ 631:

[8] Ներսէս Բ (Բագրեւանդացի) Աշտարակեցի, հայոց կաթողիկոս (548–557):

[9] Ինչպէս երեւում է, «Խաչեցարիւ»ը օրինակարգուել է Դուինի Բ. ժողովում (557): Այս մասին է վկայում «Ի Հաւատոյ Բանէն Դըւնայ Ժողովոյն» խորագրով քաղուածքը, որ բերուած է Վարդան Այգեկցու *Գիրք Հաստատութեան եւ Արմատ Հաւատոյ* աշխատութեան մէջ, Երեւան, 1998, էջ 271: Իդէպ, Տաթեւացին ի շարս «Երեքսրբեան»ը հաստատագրող վկայութիւնների բերում է նաեւ հետեւեալը. «*Ի Հայք ի ժողովն Դվնայ հաստատեցին ի Սուրբ Աստուածն "խաչեցար" ասել սպուգապէս*» (*Գիրք Հարցմանց*, էջ 631): Ինչպէս յայտնի է, «Որ խաչեցար վասն մեր» յաւելումը «*կատարել է Անտիոքի Պետրոս Թափիչ պատրիարքը Ե. դարի վերջին, իսկ Սեւերոս Անտիոքացին Զ. դարի սկզբին այն մուծել է Կ.Պոլիս, ուր եւ առաջին անգամ երգուել է Անաստաս կայսեր հրամանով, 512ին*» (Եզնիկ Ծ. Վրդ. Պետրոսեան, *Հայ Եկեղեցու Պատմութիւն, Մասն Ա.*, Ս. Էջմիածին, 1995, էջ 86):

[10] Տաթեւացուց շատ առաջ «Խաչեցարիւ»ի վարդապետութիւնը հանգամանօրէն հիմնաւորուած է Ստեփանոս Սիւնեցու (+735) ժամակարգութեան մեկնութեան մէջ (*Մատենագիրք Հայոց, Ը. Դար, Հյդր. Զ.*, Անթիլիաս, Տպ. ԿՀՄՏԿ, 2007, էջ 465):

[11] Նկատի ունի Միքայէլ Ասորու *Ժամանակագրութեան* մաս կազմող հետեւեալ միաւորը. «Յովհաննու Միայնակեցի Տեսանողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վիրիացւոյ, եթէ անօրէն եւ ամբարտաւան ժողովն Քաղկեդոնի ի բարկութենէն Աստուծոյ եւ ի թողլոյ ի ձեռաց եղեւ եւ ոչ ի Հոգւոյ Սրբոյ, որպէս Նիկիայն, Կոստանդնուպօլսին եւ Եփեսոսին. եւ վկայեն այսմ նախատեսութիւնք սրբոյն, որ եղեն յառաջագոյն եւ զննի ժողովոյն», որը բաղկացած է ՀԲ (72) պարբերութիւնից (*Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի (Համառօտ Տարբերակ)*, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1871, էջ 176-206, նոյնի ընդարձակ տարբերակը՝ Երուսաղէմ, 1870, էջ 203-22), ուր սակայն պարբերութիւնների թիւը Հ (70) է: Միքայէլ Ասորու անունով հայերէն ձեռագրերում հանդիպում են նաեւ հետեւեալ միաւորները. «Վկայութիւնք պատմողաբար եւ յանդիմանութիւնք վասն չարաժողովոյն Քաղկեդոնի», «Սրբոյն Միխայէլի պատրիարգի Ասորոց, զոր առ հասարակ Քաղկեդոնականսն գրեաց» (Յ. Ս. Անասեան, *Հայկական Մատենագիտութիւն, Հյդր. Բ.*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1976, էջ 292):

[12] Հմմտ. Մտթ. Է 10:

[13] Նկատի ունի հետեւեալ հրատարակութիւնը. *Գիրք Ժողովածոյ Ընդդէմ Երկաբնակաց*, էջ 3-272: Հրապարակի վրայ է նաեւ քննական բնագիրը Գ. Մուրադեանի

աշխատասիրութեամբ (*Մատենագիրք Հայոց, ԺԲ. Դար, Հտր. Ի. Յաւելուած*, Երեւան, Տպարան «Նայիրի Հրատ.», 2014, էջ 660-707):

[14] Քաղուած է *Եակաց Գրքից* (*Գիրք Ժողովածոյ Ընդդէմ Երկաբնակաց*, էջ 130-1. նաեւ՝ քննական բնագիր՝ *Մատենագիրք Հայոց, Հտր. Ի.*, էջ 687-88):

[15] Հայոց Սահակ Պարթեւ հայրապետ (աթոռակալել է 386-439):

[16] Նկատի ունի Բիւզանդիայի Թէոդոս Բ. Փոքր կայսրին (գահակալել է՝ 408-450):

[17] Ատտիկոս, Կ.Պոլսի պատրիարք (աթոռակալել է 406-425): Ըստ Սոկրատ Սքոլաստիկոսի վկայութեան, էր «ազգաւ ի Սեբաստիոյ Հայոց իջեալ» (*Եկեղեցական Պատմութիւն*, աշխտ.՝ Մեսրոպ Վրդ. Տէր Մովսիսեան, Վաղարշապատ, 1897, էջ 558): Հաւատարիմ աշակերտն ու հետեւորդն էր Յովհան Ոսկեբերանի: Խորենացու *Պատմութեան* մէջ (Բ, 57) գտնւում են Սահակ Պարթեւի եւ Ատտիկոսի միջեւ փոխանակուած թղթերի պատճէնները: Ատտիկոս Կոստանդնուպոլսեցու երկերի հայերէն թարգմանութիւնների մատենագիտութիւնը տե՛ս՝ Անասեան, 717-20:

[18] Մարկիանոս, Բիւզանդիայի կայսր (450-57):

[19] Նկատի ունի Քաղկեդոնի ժողովն (451) ու նրա մասնակիցների քանակը:

[20] Նկատի ունի *Եակաց Գրքի* հրապարակումը, որ իրականացուել է «Ստեփաննոս արքեպիսկոպոսի եւ աստուածաբան վարդապետի» ջանքերով (անդ, էջ 760-1):

[21] Ձեռագրում միշտ՝ Հայաստունն:

[22] Գիւտ Վանանդեցի (Արահեզացի) Հայոց կաթողիկոս (461-478):

[23] *Գիրք Եակաց*, տե՛ս՝ *Գիրք Ժողովածոյ Ընդդէմ Երկաբնակաց*, էջ 268-9: Շարականն իրապէս էլ պատկանում է Խորենացու գրչին (*Գանձարան Հայ Հին Բանաստեղծութեան*, աշխ.՝ Պօղոս Խաչատրեան, Երեւան, 2000, էջ 45-6:

[24] «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ Յաւելուածովք Նախնեաց», «Աշխարհացոյց է դարու», «Յաղագս Աշխարհագրութեան Ստոյգ», *Մատենագիրք Հայոց, Հտր. Բ.*, Անթիլիաս, Տպ. ԿՀՄՏԿ, 2003, էջ 2137-92. նաեւ՝ Բաբկէն Յարութիւնեան, «Աշխարհացոյց», անդ, էջ 2123-36, ուր ապացուցուած է *Աշխարհացոյցի*՝ Խորենացուն պատկանելը:

[25] Իրապէս աստղաբաշխական երկերի հեղինակ է Անանիա Շիրակացին (*Մատենագիրք Հայոց, Հտր. Դ.*, Անթիլիաս, Տպ. ԿՀՄՏԿ, 2005, էջ 633, 778-87):

[26] Մոխսէս Խորենացի, *Պատմութիւն*, Գ.կա, Երեւան, ԳԱ Հրատ., 1991, էջ 342-3:

[27] Բաբկէն Որմսեցի, հայոց կաթողիկոս (490-516): Դուինի 506ի ժողովի անունից «ի Բաբգէնայ ի Հայոց եպիսկոպոսապետէ եւ ի նորին աթոռակցաց» ասորիներին հասցէագրուած նամակում ասւում է, թէ հայերը վրացիների եւ աղուանների հետ համերաշխ են յոյներին: 507-8ին գրուած երկրորդ նամակում ասւում է. «Փախչիմք ուրացեալ զի Քաղկեդոնի ստութիւն Նեստորի եւ այլոցն նմանից» (*Մատենագիրք Հայոց, Ջ. Դար, Հտր. Գ.*, Անթիլիաս, Տպ. ԿՀՄՏԿ, 2004, էջ 117-24):

[28] *Աւրենաբանութիւն Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ՝ Թարգմանեալ Ըստ Ընտիր Օրինակաց Յիտալական Բարբառ Ի Հ. Յարութիւն Վարդապետէ Աւգերեան Անկիւրացւոյ՝ Ի Միխիթարեան Միաբանութենէ, Եւ Տպագրեալ Ի Կրկին Բարբառ՝ Հանդերձ Իտալական Ծանօթութեամբք*, Վենետիկ, Ս. Ղազար, 1812, էջ 94:

[29] Դաշտեցու այս պնդումները պէտք է իրենց պատմաբանասիրական «արծագանգն» ու «արդարացումը» գտնէին Ստեփանոս Մալխասեանցի *Խորենացու Առեղծուածի Շուրջը* աշխատութեան մաս կազմող «Մովսէս Խորենացին Եղել է Քաղկեդոնական (Երկաբնակ)» գլխում (տե՛ս՝ նրա *Բանասիրական Հետազօտու-*

թիւններ, կազմ. եւ ծանօթ.՝ Ա.Գ. Մադոյեան, Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1982, էջ 263-77, Խորենացու *Պատմութեան* նրա իսկ աշխարհաբար թարգմանութեան «Ներածութեան» մէջ, Երեւան, Հայպետհրատ, 1940, էջ 13-23. նաեւ՝ «Մ. Խորենացին Քաղկեդոնական էր» յօդուածում, *Տեղեկագիր*, 1944, թիւ 3-4, էջ 27-54): Սրանցում տեղ գտած գաղափարները լրջօրէն առարկուեցին Ե. Տէր Մինասեանի (*Պատմաբանասիրական Հետազօտութիւններ*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1971, էջ 209-42, 243-78), Մ. Աբեղեանի (*Երկեր, Հտր.* Գ, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1968, էջ 653-73) աշխատութիւններում: Մասնաւորաբար Տէր Մինասեանը «*հայկաբանի, կրօնագէտի, բանասէրի եւ պատմաբանի քառեակ հմտութեամբ հերքում է Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելը*» (Հր. Աճառեան, *Անձնանունների Բառարան, Հտր.* Գ., Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1946, էջ 433) տե՛ս՝ Մալխասեանց, *Բանասիրական Հետազօտութիւններ*, էջ 316, ծնթ. 16:

[30] Այս մասին հետեւեալն է ծանուցւում. «*Այս մեւրասան համարք պակասեն ի բազումս ի Յունարէն օրինակաց, որպէս եւ ի բազումս ի հայերէն ձեռագրաց*» (*Նոր Կտակարան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի, Համեմատեալ Ընդ Յոյն Բնագրին*, Կ.Պոլիս, 1914, էջ 273): Իդէպ, ըստ Ֆրեդերիք Կոնիբէրի այս դրուագը հայերը պէտք է քաղած լինեն Պապիասից կամ «Աւետարան, որ ըստ Հրէից» պարականոնից («Թղթակցութիւն», Կ. Կոնիբէր, *Հանդէս Ամսօրեայ*, Թ. տարի, 1895, թիւ 1, Յունուար, էջ 17-8):

[31] Նկատի ունի Խորենացու *Պատմութիւնը*:

STEPANOS DASHTETSI ON MOVSES KHORENATSI AND DAVID ANHAGHT
(Summary)

HAKOB KEOSEYAN
tumanyan.lusi@gmail.com

Against the backdrop of mutual refutations on doctrinal issues between the Catholic and the Armenian Orthodox Churches in the 17th-18th centuries, this article focuses on the views of a renowned supporter of the Catholic Church, Stepanos Dashtetsi (born in 1653).

This article uses extensive excerpts from Dashtetsi's *Kochnak Tjeshmartutian* treatise, written in the Indian city of Bandari Surat between April 1714 and January 1715 and criticized the Orthodox Armenian Church from Chalcedonic standpoints.

In this section Dashtetsi questions why fifth century Armenian scholars Movses Khorenatsi and David Anhaght, who were contemporaneous with the pan-Christian Chalcedonic assembly, had not mentioned anything about it. His conclusion is that it was impossible for such enlighted figures to bypass or disregard the assembly and that the Orthodox Armenian Church had removed their positive allusions from their writings and instead circulated documents against the Chalcedonic decisions, claiming that these belonged to Khorenatsi and Anhaght.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Մարի Յովհաննիսեան, *Ուրացման Քաղաքականութեան Արմատները, Նորօրեայ Դրսեւորումները եւ Դրանց Հետեւանքները*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2017, 168 էջ:

Հայոց Ցեղասպանութեան ժխտման Թուրքիայի Հանրապետութեան պետական շարունակական քաղաքականութեան ծիրին մէջ կարեւորում է քաղաքագէտ, ցեղասպանագէտ Մարի Յովհաննիսեանի «Ուրացման Քաղաքականութեան Արմատները, Նորօրեայ Դրսեւորումները Եւ Դրանց Հետեւանքները» խորագրով մենագրութիւնը, որը հեղինակի հերթական, արժանի ներդրումն է ցեղասպանագիտութեան:

Սկզբնաղբիւրային գիտական գրականութեան քննական վերլուծութեան լոյսի ներքոյ շարադրուած ուսումնասիրութիւնն առանձնանում է աշխարհաքաղաքական բարդ իրողութիւններում տարածաշրջանում խաղաղութեան հաստատման եւ պահպանման տեսանկիւնից:

Հեղինակի խորին համոզմամբ պատմութեան եւ իրականութեան հետ առերեսումն ու դրանից բխող հետեւանքների վերացումը կարող են օգնել վերանայելու անցեալը, ազգային անվտանգութեանն ու ապագայի կայունութեանը սպառնացող որոշումները: Հետազօտութեան «Նախաբան»ում Յովհաննիսեանը հիմնաւորում է անցեալում տեղի ունեցած բռնութիւնների, զանգուածային սպանութիւնների, ցեղասպանութիւնների ժխտման քաղաքականութեան ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը: Նա համոզմունք է յայտնում, որ ճշմարտութեան բացայայտումից, արդարութեան վերականգնումից եւ անպատժելիութեան վերացմանն ուղղուած ջանքերից բացի, հարկ է կանխարգելել նմանօրինակ ոճիրների կրկնութիւնը՝ փաստելով, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտումն իր ձեւով ու կիրառելիութեամբ յաճախ է օրինակ ծառայել այլ ցեղասպանութիւնների ժխտողական քաղաքականութեան մշակման եւ իրականացման (էջ 6): Հեղինակը համարում է, որ մենագրութիւնը ոչ թէ անցեալի, այլ ապագայի մասին է, որ միայն անցեալը ճանաչելով է հնարաւոր ըմբռնել արդի խնդիրները եւ ուղիներ գտնել արդիւնաւէտ լուծման եւ ապագայում դրանց բացառման համար (էջ 6):

Առաջին գլխում՝ «Ժխտում (Մոռացում, Սահմանումներ, Շարժառիթներ եւ Հետեւանքներ», քննելով մարդկութեան պատմութեան անցեալը՝ Յովհաննիսեանը հաւաստում է, որ ինչպիսին էլ լինի այն՝ լաւ, թէ վատ, փառապանծ, թէ տխրահռչակ, մեծահամբաւ, թէ թշուառ, այն վերածելել հնարաւոր չէ, բայց հնարաւոր է եւ անհրաժեշտ՝ ճանաչել անցեալը եւ

կառուցել ապագան, անցեալը որպէս դաս մտքում պահելով (էջ 9)։ Նա յորդորում է մոռացութեան չտալ անցեալը, քանի որ այն կը նշանակի ժխտել ժամանակի շարունակականութեան փաստը՝ որակելով անհեթեթ եւ վտանգաւոր քայլ պատմական ժամանակի շարունակականութեան տեսանկիւնից. «*Եթէ մոռացութիւնը կամ ամնեզիան յիշողութեան խանգարման տեսակ է, որը կարող է ունենալ առաջացման տարատեսակ եւ որոշ դէպքերում գուցէ եւ օբեկտիւ պատճառներ, ապա ժխտումն ընտրութիւն է, որն ունի առաջացման մէկ պատճառ՝ կամքը*» (էջ 11-12)։ Հեղինակի գնահատմամբ՝ ժխտել անցեալում իրագործուած ոճրագործութիւնները՝ նշանակում է ժխտել սեփական եւ այլոց պատմութիւնները, որը յղի է նոր հակամարտութիւնների առաջացման լուրջ սպառնալիքով (էջ 14-5)։

Յովհաննիսեանն առաջ է քաշում նոր թեզ, համաձայն որի ցեղասպանութեան ժխտումն սկսւում է շատ աւելի վաղ, քան բուն յանցագործութիւնը։ Հետաքրքիր է յատկապէս այս առնչութեամբ հեղինակի հետեւեալ մեկնաբանութիւնը. «*... Պնդումը, որ ցեղասպանութեան ժխտումն սկսւում է աւելի վաղ, քան բուն յանցագործութիւնը, առաջին հայեացքից կարող է պարադոքսալ եւ անտրամաբանական թուալ, քանի որ, համաձայն ընդունուած կարծիքի, կարող է ժխտուել միայն այն, ինչ արդէն իսկ գոյութիւն ունի։ Բայց դէպքերի եւ իրադարձութիւնների աւելի խոր եւ մանրազնին վերլուծմամբ պարզ է դառնում, որ յանցագործութիւն կատարող անձինք կամ մի ողջ պետական ապարատ նախ եւ առաջ պարարտ հող են նախապատրաստում կատարուելիք գործողութիւնները ժխտելու համար. յօրինում եւ տարածում են այն միֆը, թէ այն, ինչ կատարուելու է, այն չէ, ինչ յետագայում կարող է տարատեսակ մեկնաբանութիւնների տեղիք տալ...*» (էջ 20)։

Հետազօտողը, քննելով եւ համեմատելով ապամարդկայնացման եւ նախացեղասպանական ժխտման վտանգաւորութիւնները, նշում է, որ եթէ ապամարդկայնացման նպատակը զոհերին վատաբանելն է, տուեալ հասարակութեան այլ անդամներին ցեղասպանական գործողութիւնների ներքաշելը, մասնակից եւ յանցակից դարձնելը, ապա՝ նախացեղասպանական ժխտումն ուղղուած է թիրախաւորուած զոհերին ու միջազգային հանրութեանը եւ հետապնդում է գործողութիւններն անարգել աւարտին հասցնելու նպատակ (էջ 20)։

Անդրադառնալով ժխտման շարժառիթներին՝ հեղինակն ընդգծում է, որ ինչպէս ցեղասպանութեան իրականացման, այնպէս էլ դրա ժխտման համար ահռելի մարդկային եւ դրամական միջոցներ են անհրաժեշտ եւ որ ժխտողական քաղաքականութիւն որդեգրած պետութիւններն ու դրանցում եռանդուն մասնակցութիւն ունեցող անձինք (պետական պաշտօնեաներ, հասարակական-քաղաքական գործիչներ, գիտնականներ, գործիչներ) լաւ

փաստագրուած ոճրագործութիւնները եւ բռնութիւնները ժխտելու համար ունեն իրենց շարժառիթները (էջ 22):

Հեղինակը, մտահոգուելով տարածաշրջանային խաղաղութեան պահպանման հարցով, մեկնաբանում է. «*Արդէն մէկ դար շարունակուող պայքարը՝ հայկական կողմի՝ Ցեղասպանութեան ճանաչմանն ուղղուած եռանդուն ջանքերը, այն արտաքին քաղաքականութեան բաղկացուցիչ դարձնելու անդրդուելի որոշումը, ներազգային խնդիրների քննարկման մէջ մշտապէս Ցեղասպանութեան յիշողութեան եւ նորանկախ Հայաստանի պայմաններում նաեւ պահանջատիրութեան հարցի բարձրաձայնումը, այս ամէնին զուգընթաց՝ թուրքական կողմի մոլեռանդ պայքարը՝ անցեալում տեղի ունեցած յանցագործութիւնների անխոտոր ժխտումը, թւում է, թէ անյաղթահարելի են դարձրել երկու ժողովուրդների միջեւ անջրպետի վերածուած թշնամանքի, հակակրանքի, կասկածանքի, անվստահելիութեան, որոշ չափով նաեւ վախի մթնոլորտը, որն անպարակոյս ձեւաւորել է քաղաքական եւ հասարակական մի միջավայր, որում ապագան անվրանգութեան առումով մշուշուր է եւ անկանխատեսելի*» (էջ 19-23):

Հաշուի առնելով այն փաստը, որ Թուրքիայի եւ Հայաստանի հանրապետութիւնների միջեւ սահմանը փակ է 1994ից եւ այն բացելու, յարաբերութիւններ հաստատելու նախապայմաններից մէկը եղել եւ մնում է Հայոց Ցեղասպանութեան հարցը, հեղինակը համոզմունքն է յայտնում, որ փակ սահմանը խոչընդոտում է Հայաստանի, Թուրքիայի արեւելեան շրջանների եւ ամբողջ տարածաշրջանի տնտեսական եւ ընկերային զարգացմանը, որն առաջ է բերում քաղաքական անկայունութիւն (էջ 23-4):

Հետազօտողը, իր ձեռք բերած հնարաւորինս ամբողջական տեղեկութեան ու կատարած վերլուծութեան հիման վրայ, ժխտողականութեան դէմ պայքարի եւ վերացման հարցում յանգում է հետեւեալ եզրակացութեանը. «*Եթէ հայոց համար Ցեղասպանութեան յիշողութեան պահպանման, միջազգային ճանաչման, դատապարտման, փոխհատուցման հարցերը պարզ են եւ ընկալելի, ապա թուրքական իշխանութիւնների եւ թուրք հասարակութեան կողմից իրականացուող ժխտողական քաղաքականութիւնն ունի բազմաշերտ, տարաբնոյթ, ակներեւ ու թաքնուած շարժառիթներ: Թուրքական ժխտողական քաղաքականութեան դրդապատճառներից մէկն այն է, որ բռնութիւնը թուրքական իրականութեան մէջ դարերի ընթացքում դարձել է գոյութեան երաշխիք, իսկ դրա ժխտումը, ներթափանցելով մշակոյթի մէջ, վերածուել է ինքնութեան մի մասի եւ գոյութեան պահպանման առհաւատչեայի: Այլոց նկատմամբ բռնութեան կիրառմամբ կայսրութիւն ստեղծելը, այդ բռնութիւններին մասնակցած անձանց հերոսացնելը ստեղծել են ինքնախաբէութեամբ սնուած... կեղծիքով համակուած մի մթնոլորտ, որի քօղազերծումը ... կը քանդի այն գաղափարական հիմքերը, որի վրայ*

կառուցուել են ազգային ինքնութիւն, ազգային անվտանգութիւն, ապագայի վերաբերեալ ազգային տեսլական հասկացութիւնները... կը փլուզեն երկիրը թէ՛ ներսից, թէ՛ դրսից» (էջ 27):

Արժեւորելով ժխտման հետեւանքների ուսումնասիրումն ու վերհանումը՝ հետազօտողը փաստում է, որ անկախ ցեղասպանութեան ժխտման շարժառիթներից, այն առաջացնում է որոշ ընդարմածութիւն՝ իրականութեան ըրջութեան ընկալման խանգարում, իսկ քաղաքական եւ հանրային մակարդակում՝ անցեալն անտեսելու եւ մոռացութեան մատնելու պատեհապաշտական յարմարաւէտութեամբ պայմանաւորուած, առաջ է գալիս իրողութեան ամբողջական ըմբռնման մթագնում, որի գիտակցումը թերեւս տեղի է ունենում կատարուած փաստին առերեսուելուց յետոյ միայն (էջ 32):

Ամփոփելով ուսումնասիրութեան առաջին գլխի արդիւնքները եւ կարեւորելով վերապրողների ու նրանց ժառանգների վրայ հոգեբանական ազդեցութիւնը՝ հեղինակը յանգում է այն եզրակացութեանը, որ Ցեղասպանութիւնը վերապրած ժողովուրդը երբեմն գիտակցուած, իսկ աւելի յաճախ անգիտակցաբար կրում է անցեալի արհաւիրքների՝ ծինականօրէն փոխանցուած յիշողութիւնը (էջ 41): Յովհաննիսեանը հեռատեսօրէն նկատում է, որ եթէ չկայ կատարուած յանցանքի զղջում, ցաւն աւելի է սաստկանում՝ յաճախ վերածուելով անբացատրելի վախի կամ թշնամանքի՝ ցեղասպանութիւն գործած եւ մեղքը ուրացող մարդասպանների եւ նրանց յետնորդների նկատմամբ (էջ 41):

Հետազօտութեան Բ. գլխում՝ «Թուրքական Ժխտողական Քաղաքականութեան Ակունքները», անդրադառնալով թուրքական իշխանութիւնների առջեւ ծառացած «մարտահրաւէրներին», որոնք փոխուելու են՝ ըստ երկրի ներսում տեղի ունեցող իրադարձութիւնների, աշխարհաքաղաքական իրողութիւնների եւ կառավարութիւնների որդեգրած քաղաքականութիւնների, հեղինակը նկատում է, որ ներկայում կամ անցեալում տեղի ունեցած իրադարձութիւնների ժխտումը մշտապէս եղել եւ մնում է թուրքական քաղաքականութեան յենասիւներից մէկը (էջ 41):

Յովհաննիսեանն այն կարծիքն է յայտնում, որ թէեւ ժամանակին զուգընթաց փոխուել են ժխտողական քաղաքականութեան կիրառման մեթոդներն ու մեքենայութիւնները, սակայն հիմնական թեզերը, որպէս այդպիսիք, կտրուկ փոփոխութիւնների չեն ենթարկուել, աւելացել են նորերը, հները վերասահմանուել կամ երանգաւորուել են, բայց դրանց բուն էութիւնը պահպանուել է (էջ 45):

Հեղինակի համոզմամբ ժխտողական քաղաքականութիւնը սկիզբ է առել դեռեւս Աբդուլ Համիդի Բ.ի կառավարման շրջանից (1876-1909) եւ որ բռնութեան մեթոդները, ոճրագործութիւնների համակարգուած ու բծախնդրօրէն մշակուած բնոյթը եւ առանձնակի դաժանութիւնները չեն

տարբերուել աւելի ուշ իրագործուած եւ իրաւական եզրոյթով Ցեղասպանութիւն որակուած դէպքերից (էջ 47):

Ուսումնասիրողը փաստում է, որ թուրքական ժխտողականութեան այն թեզը, թէ հայերը բռնութեան չեն ենթարկուել, այլ տեղի ունեցած զանգուածային սպանութիւնները եղել են ոչ թէ քաղաքական վերնախաւի կողմից նախապէս մշակուած եւ իրագործուած յանցագործութիւններ, այլ ազգամիջեան, էթնիկ բախումներ, որոնց պատասխանատուութիւնն ընկնում է դրանցում ներգրաւուած էթնիկ խմբերի վրայ, աւելին՝ նրանց անհանդուրժողութիւնը վտանգել է նաեւ պետութեան անվտանգութիւնն ու ներքին կայունութիւնը, սկզբնաւորուել է հենց վերը յիշատակուած ժամանակահատուածում:

Յովհաննիսեանն առանձնացրել է նաեւ Օսմանեան Կայսրութեան ներսում տեղի ունեցող բռնութիւնների մասին օտարների՝ իրականութիւնը խեղաթիւրուած ներկայացնելու փաստեր, որոնք վերաբերում են տեղի ունեցածը ժխտելուն, յանցանքն ուրանալուն: Աւելին, հեղինակը ժխտման մի օրինակ է բացայայտել 2011ի Իտալիայի արտաքին գործերի նախարարութիւնից Հայաստանի Ազգային Արխիւին (ՀԱԱ) փոխանցուած օտարալեզու փաստաթղթերի փաթեթն ընթերցելիս:

ՀԱԱում պահուող գրութիւնների այդ փաթեթում Մեծն Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին ուղղուած թիւ 114 նամակի բովանդակութիւնից պարզ է դառնում, որ չնայած հայերի կոտորածների մասին հսկայածաւալ տեղեկութեանը՝ Բարձր Դուռը ժխտում է թէ հայկական բնակավայրերում տեղի են ունեցել հայերի զանգուածային կոտորածներ: Աւելին՝ համաձայն որդեգրած քաղաքականութեանը, զոհերին ներկայացրել են որպէս յանցագործներ եւ մեղադրել յարձակումներ նախապատրաստելու եւ իրականացնելու մէջ (էջ 51-2):

Հեղինակը, որպէս ժխտողական քաղաքականութեան «խորամանկ ձեւ» առանձնացնում է հաղորդուած բռնութիւնների վերաբերեալ հետաքննութիւն իրականացնելն ու մեղաւորներին փնտռելը, իսկ իր բնորոշմամբ առաջին հայեացքից անմեղ ու արդար թուացող այդ նախաձեռնութիւնը որակել է որպէս խորքային եւ ապակողմնորոշող քայլ: Հեղինակի ներկայացրած փաստաթուղթն այդպիսի մի նախաձեռնութեան բացայայտում է, որտեղ նշւում է, որ տէրութիւններին առաջարկուող յանձնաժողովը պէտք է յետաքննի ոչ թէ հայերի դէմ իրագործուած բռնութիւնները, այլ հայերից կազմուած աւազակախմբերի գործողութիւնները (էջ 52-3):

Ուսումնասիրութեան վերջին Գ. գլխում՝ «Ձեւափոխութիւններ Ժխտողական Քաղաքականութեան Մէջ», Յովհաննիսեանն անդրադառնում է ցեղասպանութեան ժխտման քաղաքականութեան դրսեւորումներին: Այսպէս, թուրքական ժխտման յայտնի թեզերից մէկի համաձայն մարդկային կորուստները պայմանաւորուած են պատերազմական իրավիճակով եւ դրա հետեւանքով ստեղծուած

պայմաններով, որոնց համար իշխանութիւնները չեն կարող պատասխանատուութիւն կրել, քանզի նպատակը եղել է բարի, մարդիկ տեղահանուել են իրենց իսկ անվտանգութեան նկատառումներով (էջ 87):

Հեղինակը փաստում է, որ Հայոց Ցեղասպանութեան ընթացքում հայերի դէմ իրականացուող ոճրագործութիւնները ժխտում էին ոչ միայն թուրքերն ու նրանց՝ այլ երկրներում հաւատարմագրուած դեսպաններն ու հիւպատոսները, այլեւ իրենց դաշնակից գերմանացիները (էջ 92):

Թուրքիայի վարած արտաքին քաղաքականութեան մէջ - համաձայն Յովհաննիսեանի - մշտապէս առկայ են դիւանագիտական յարաբերութիւնների խզման, իրենց դեսպաններին ետ կանչելով, տնտեսական պայմանաւորուածութիւնների չեղարկման միջոցով Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումը կանխելու, վերջին շրջանում՝ նաեւ դրա ժխտումը քրէականացնելու փորձերը: Ուսումնասիրողի համար կասկածից վեր է տասնամեակների ընթացքում Թուրքիայի քաղաքական ուղեգծի անփոփոխ մնալու փաստը: Նա համոզուած նշում է, որ ամէն ինչ գրեթէ նոյնն է, փոխուել են միայն դերակատարներն ու մատուցման ձեւերը (էջ 97-8):

Հեղինակը փաստում է, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտումն այնքան արմատական եւ մոլեռանդ դրսեւորումներ է ունեցել, որ նախքան մեծաթիւ գիտական հետազօտութիւնների լոյս ընծայումը (եւ հանրայնացումը) շատ քչերին էր յայտնի, որ Թուրքիան իրականում եղել է առաջին պետութիւնը, որը ճանաչել է հայերի դէմ իրագործուած յանցագործութիւնը եւ վկայակոչում 1919-21ի եւ 1926ի դատավարութիւնները: Յովհաննիսեանը ցաւով է նկատում, որ ինչպէս ցանկացած փաստ եւ ապացոյց, այս դատավարութիւնների օրինականութիւնը եւս կասկածի տակ է դրուել (էջ 102-3):

Որպէս Հայոց Ցեղասպանութեան ժխտման ցաւալի եւ խիստ վտանգաւոր նոր մեթոդ՝ հետազօտողն առանձնացնում է 1965ից ի յայտ եկած թուրքական ժխտողական քաղաքականութիւն ներթափանցած եւ խոր արմատներ թողած Հայոց Ցեղասպանութեան ժխտումը գիտական շրջանակներում: Ցեղասպանութիւնների ժխտման թեզերը, մեթոդները եւ շարժառիթներն ուսումնասիրելիս Յովհաննիսեանը խիստ անհրաժեշտ է համարում պատմութեան եւ իրականութեան խեղաթիւրման ու կեղծումին մէջ ներգրաւուած գիտնականներին եւ նրանց գործունէութեանն անդրադառնալը: 1970ականներից ցեղասպանութիւնների ժխտման ներթափանցումը նաեւ գիտական շրջանակներից ներս հեղինակը մեծապէս պայմանաւորում է հենց այդ շրջանում սկզբնաւորուած առանձին գիտական ճիւղով՝ ցեղասպանագիտութեամբ (էջ 107):

Հետաքրքիր է Յովհաննիսեանի հետեւեալ արձագանգը. «*Իրականում ցեղասպանութիւնների ուսումնասիրութեանը նուիրուած առաջին գիտաժողովի կազմակերպումը խոչընդոտելու, Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ զեկուցումների չեղարկելունն ուղղուած լայնածաւալ*

աշխատանքները, Թուրքիայի բուռն արձագանգն ու հնչեցրած սպառնալիքները, Իսրայէլի ներգրաւուածութիւնը թուրքական ժխտողական քաղաքականութեան մէջ վկայում են... գիտական կեղծարարութեան մասին, որ պիտի սպուերէր գիտութեան՝ անաչառ ու արդար լինելու, իրականութիւնը ներկայացնելու առաքինութիւնը» (էջ 111):

Հեղինակը նշում է, որ Թուրքիայի կառավարութիւնը Հայոց Ցեղասպանութեան ուրացման քաղաքականութեան տարածման մէկ այլ՝ աւելի վտանգաւոր ու քօղարկուած մեթոդ մշակեց եւ կեանքի կոչեց, համաձայն որի *«Թուրքիայի պատմութեան ուսումնասիրման եւ թուրքագիտութեան զարգացման»* անուան ներքոյ սկսեցին ֆինանսաւորել արտասահմանեան, մասնաւորապէս ամերիկեան բուհերում գիտական, հետազօտական աշխատանքներ իրականացնող ուսանողներին եւ գիտնականներին (էջ 124):

«Ընդհանուր ցաւ», «արդար յիշողութիւն», «երկկողմանի կորուստներ» արտայայտութիւնները Յովհաննիսեանի հաւաստմամբ ոչ միայն շատ հեռու են հաշտեցման հնարաւոր գործընթացի համար առաջին քայլ դառնալու հաւանականութիւնից, այլեւ լրջօրէն սպառնում են խորացնել երկու ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող անվստահութիւնն ու թշնամական վերաբերմունքը: Հաւասարութեան նշան դնելով զոհի եւ յանցագործի միջեւ՝ պատմութիւնը կարելի է վերածել քաոսի, գլխիվայր շրջել արդարութիւնը, սին ու անիրական դարձնել իրաւական ու քաղաքակիրթ, բռնութիւններից ու ահաբեկչութիւններից զերծ միջավայր ստեղծելու բոլոր բարձրագոչ յայտարարութիւնները, որոնք դուրս են գալիս ազգային կամ տարածաշրջանային խնդիրներ լինելու նեղ շրջանակից (էջ 142): Հետազօտողը կարեւորում է նաեւ այն, որ թուրքական պատմագրութիւնը եռանդուն կերպով ժխտում է Առաջին Աշխարհամարտի ժամանակ զոհուած հայերի իրական թիւը, որն ըստ թուրքական պատմագիտական մտքի «հայ ազգայնամոլները» միտումնաւոր կերպով ուռճացրել են (էջ 146):

Անդրադառնալով ցեղասպանութեան ժխտմանը՝ ֆիլմարուեստում, հեղինակը նկատում է, որ Թուրքիայի Հանրապետութեան ժխտողական քաղաքականութիւնն ազդել է ոչ միայն գիտական համաժողովների, քաղաքական որոշումների կայացման, այլ նաեւ մշակութային ոլորտի վրայ, որը սկիզբ է առել դեռեւս 1920ականներից (էջ 160): Գիտակցելով արուեստի ուժն ու հոգեբանական ազդեցութիւնը հասարակութեան վրայ՝ թուրքական քաղաքական վերնախաւը դադարեցրել է Հայոց Ցեղասպանութեան մասին պատմող առաջին գեղարուեստական՝ *Հոգիների Ամուրդը* ֆիլմի ցուցադրութիւնը (էջ 160-1): Այսօրինակ նախածեռնութեան «յաջող փորձից» յետոյ փոխւում է ժխտողական քաղաքականութեան ծաւալման ռազմավարութիւնը, իսկ 2000ականներից թուրքական ժխտողական քարոզչամեքենան սկսում է արտադրել

պատմական դէպքերի վերաբերեալ իր պաշտօնական տեսակէտն արտացոլող ֆիլմեր (էջ 161):

Յովհաննիսեանն այս առնչութեամբ մտահոգութիւն է յայտնում, թէ պատմութիւնից անտեղեակ օտարազգի քաղաքացին կարող է նոյնիսկ չկասկածել, որ արտադրութեան համար ֆինանսական լուրջ միջոցներ պահանջող ֆիլմում օտարազգի պատմաբանի շուրթերից հնչող յայտարարութիւնները կարող են լինել պատմութեան խեղաթիւրման մշակութային դրսեւորումներ եւ առաջարկում այսօրինակ քաղաքականութեան դէմ ժխտողական քարոզչութիւն, պատմական ապատեղեկատուութիւն պարունակող ֆիլմերի նկարահանման եւ ցուցադրման միջազգային գրաքննութիւն (էջ 163-4):

Այսպիսով, Մարի Յովհաննիսեանի մենագրութիւնը Հայոց Ցեղասպանութեան թուրքական ժխտողականութեան պատճառների եւ դրանց հետեւանքների լուսաբանման, քաղաքական, ընկերային, հոգեբանական, մշակութային դրսեւորումների վերաբերեալ համակարգուած ուսումնասիրութիւն է:

Տեսական հիմնախնդիրների համակողմանի վերլուծութիւնը, հեղինակի առաջադրած «արդիւնաւէտ գործիքների» ու կառուցողական մօտեցումների ամբողջականութիւնը կարող են մեծապէս նպաստել թուրքական ժխտողականութեան քաղաքականութիւնն ըմբռնելուն եւ «ժխտողականութեան վերընթաց շարժումը» կանխարգելելուն:

Թեհմինէ Ռ. Մարտոյեան
tehminemartoyan@gmail.com

Avedis Hadjian, *Secret Nation. The Hidden Armenians of Turkey*, I.B. Tauris, London – New York – Oxford – New Delhi – Sydney, 2018, 570 pages.

There was a time when the issue of religious and ethnic identity was not so complicated. A Turk was a Muslim; an Armenian was a Christian. Due to the dramatic events in Turkey, however, and above all the Genocide, things are no longer so easy. There are those who are both Muslims and Armenians, those who struggle to reconcile these two identities, and those who are just confused.

After the Genocide and the Kemalist ethnic cleansing, Eastern Anatolia was considered empty of Armenians, but the fact is that small remnants have survived. Some have preserved their Armenian identity, whereas most have been Islamicized and speak Turkish or Kurdish. However, they have continued to be seen as infidels or converts for generations, and they tend to marry other Islamicized Armenians. Today many of them struggle to come to terms with who they really are.

Many young Armenian women survived the Genocide by being abducted by Muslim men who then married them or gave them as wives to their sons. Nobody knows exactly, but there are estimates that up to two million Turks might have an Armenian grandmother. Often they do not know about it themselves.

The Turkish lawyer Fethiye Çetin published a book in 2004 – in English translation its title is *My Grandmother* – in which she told the story of her grandmother, who revealed to her family at the end of her life that she was an Armenian girl abducted during the Genocide. The book created huge interest in their roots among Muslims who felt that there was something hidden and suppressed in their family history. This was during a time when Turkey – only temporarily, it would turn out – had moved towards greater openness and tolerance, and therefore the discussion was intense.

The journalist Avedis Hadjian has thoroughly studied this phenomenon. After having talked over a period of many years to Armenians living incognito in various parts of Turkey, he has published a book about them, *Secret Nation*. It is a fascinating story about people struggling to come to terms with their identity, of Muslims who have considered themselves Turks or Kurds learning about their Armenian origins. Some do not care, considering all that to belong to the past; they are merely happy to be Muslims. However, there are many who want to connect in one way or another to their Armenian roots. Some go the whole way, reconverting and joining the Armenian Apostolic Church, but not all. Many continue as Muslims but want, at the same time, to be Armenians. That is something new, but it has to be possible, or what is the alternative?

To be a Muslim Armenian has traditionally been impossible. If you are Armenian, you are a Christian, not a Muslim; if you are Muslim, you are not Armenian. Yet for centuries there have been Muslims with Armenian origins. They have normally tried to conceal their roots but have not been seen as real Muslims by those in their environment. People have looked down on them from both sides: Christian Armenians have despised them for having betrayed the faith of their fathers, whereas Muslims have despised them for their infidel background.

Sometimes it gets very complicated. Hadjian tells the story of a man in the little town of Gergen whose family members were "Armenian, by ethnicity and self-identification; Assyrian Orthodox Christians or Sunni Muslims, by religious denomination; Zazaki speakers, by their mother tongue; and Turkish, by citizenship." Many are *ges-ges*, half-half, and practice Islam in their home town, but go to an Armenian church when they are in Istanbul. A man in Diyarbakir talks about chameleons: people who are Armenian with Armenians, Assyrian with Assyrians, Turkish with Turks, and Kurdish with Kurds. History has taught them to do everything to blend in with those who surround them.

Religiously, the hidden Armenians show the whole scale of belief and practice. Some are convinced Muslims. "Christianity is true, but Islam is truer", as one man in Bitlis put it. Some are Crypto-Christians. Officially and outwardly they are Muslims, but in their hearts they are Christians. Some are non-religious, even atheists, while still feeling close to religion, as this man from Diyarbakir observes, "I am a leftist, and I don't like religions, but I like the Church. It gives me peace."

It is a fascinating picture of these remnants of the Anatolian Armenians which Hadjian gives us in his well-written book. Some of the hidden Armenians still want to keep their Armenian origins secret in a Turkey where Armenian identity can be the cause of discrimination and harassment. Others defy the prejudices and claim their Armenian identity with pride. Some are just confused. Do I have to become Christian to be a real Armenian? Can I be Armenian and Muslim at the same time? And who am I really if I speak Kurdish, my ID papers tell me that I am a Turk, but I feel Armenian?

A modern, progressive approach to this is to allow every single person to be whatever she or he likes to be. Without demanding a certain religious belonging or any defined level of language skills, those who want to be Armenian should have the right to be such. However, not all "real" Armenians are that generous, and the confusion comes not only from other people's categorization difficulties, but also from a genuine, internal insecurity. A man from Diyarbakir put it like this, "I am of Armenian origin, but what am I now? I am neither a Kurd, nor a Turk, nor an Armenian."

SVANTE LUNDGREN, Svante.Lundgren@ctr.lu.se

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԷԴՈՒԱՐԴ ԳԱԼՈՒՍՏԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ
(1952--2016)

Էդուարդ Դանիէլեանը ծնուել է 1952ին ՀԽՍՀ Եղվարդ քաղաքում: 1996ին պաշտպանել է թեկնածուական՝ «Անդրկովկասում Ապաստանած Արեւմտահայ Գաղթականութիւնը 1914-1922 ԹԹ.» նիւթով: 1979ին աշխատանքի է անցել ԵՊՀում իբրեւ աւագ տեսուչ: Նրա կենսագործունէութիւնն ամբողջութեամբ, 1981ից կապուած է եղել ԵՊՀ Հայոց Պատմութեան Ամբիոնի հետ: 2005ին ստացել դոցենտի գիտական կոչում: 1997-98՝ դասաւանդել է նաեւ Համազգայինի Պէյրութի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկում:

Դանիէլեանը զբաղուել է նաեւ գիտահետազօտական աշխատանքներով՝ պատմաբան Լենդրուշ Խուրշուդեանի ղեկավարութեամբ: Նրա գիտական հետաքրքրութիւնները բեւեռուած էին Հայկական Հարցի, Հայոց Ցեղասպանութեան, Հայաստանի Առաջին Հանրապետութեան, հայ գաղթականութեան պատմութեան հիմնախնդիրների վրայ:

Հայոց Ցեղասպանութեան 90ամեակի առթիւ նա լոյս ընծայեց *The Armenian Genocide 1894-1922* (2005) գրքոյկը, որտեղ սատարեց հայեցակարգային այն մօտեցման, թէ՝ Հայոց Ցեղասպանութիւնը իրականացուել է օսմանեան տարբեր վարչակարգերի կողմից եւ շարունակուել շուրջ երեք տասնամեակ: Այս մօտեցման վրայ է խարսխուած նաեւ նրա *Եղեռնից Փրկուած Հայ Փախստականները Անդրկովկասում 1914-1922 ԹԹ. (Շարժը, Կացութիւնը, Թուակազմը)* (Լետմահու, 2017) մենագրութիւնը: Գիրքը վերանայում է 1917ի փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ արեւմտահայ գաղթականութեան հանդէպ Ռուսաստանի վարած քաղաքականութեան առնչութեամբ տեսակէտերը, մանրակրկիտ ուսումնասիրում ոչ միայն արեւմտահայերի, այլեւ արեւելահայերի գաղթին, ինչպէս նաեւ գաղթականների նկատմամբ Հայաստանի Առաջին Հանրապետութեան եւ Խորհրդային Հայաստանի քաղաքականութեան առանձնայատկութիւնները:

Նրա գրչին են պատկանում շուրջ երեսուն գիտական յօդուածներ: Համահեղինակներից է բուհական՝ *Հայոց Պատմութեան Հիմնահարցեր (Հնագոյն Ժամանականերից Մինչեւ Մեր Օրերը)* (2000), *Հայոց Պատմութիւն* (2012) դասագրքերի: Գիտամանկավարժական բեղմնաւոր գործունէութեան համար նա 2014ին պարգեւատրուել է ՀՀ Նախագահի շնորհակալագրով:

1988ից Էդուարդ Դանիէլեանը մասնակցութիւն է ունեցել նաեւ Արցախեան Շարժմանը, եղել գաղտնի կոմիտէի անդամ: Իր էութեամբ նա ոչ միայն ազգանուէր, այլեւ ազնիւ, բարեացակամ եւ ուղղամիտ անձնաւորութիւն էր:

Էդուարդ Դանիէլեանը երկարատեւ ու ծանր հիւանդութիւնից յետոյ մահացաւ 15 Յուլիս 2016ին Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ, varuzhan.poghosyan@mail.ru

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՏԻՍԵԱՆ
(1941--2016)

Լեզուաբան Տիգրան Ալետիսեանը ծնած է 1941ի Ապրիլին, Թիֆլիս: 1988ին պաշտպանած է դոկտորականը, 1989ին ստացած փրոֆեսորի կոչում: 1970-80՝ գիտաշխատող է ՀՀ ԳԱ Հ.Աճառեանի անուան Լեզուի Հիմնարկին: 1975էն դասաւանդած է Վանաձորի Պետական Մանկավարժական Հիմնարկին մէջ, ուր 1978-2011՝ եղած է հայոց լեզուի ամբիոնի վարիչը: Հեղինակ է շուրջ եօթանասուն գիտական յօդուածներու եւ երեք մենագրութեան՝ *Ժամանակակից Հայոց Լեզուի Բառի Կառուցուածքը* (1975), *Հայկական Ազգանուն* (1987), *Հայոց Ազգանունների Բառարան* (2000), *Արդի Հայերէնի Նորաբանութիւնների Բառակազմական Կաղապարները* (համահեղինակ, 2007):

2001ին արժանացած է ՀՀ նախագահի մրցանակին:

Մահացած է 2016ի Դեկտեմբեր 15ին, Վանաձոր:

ՀՀՀ

ԼԱՐԻՍԱ ՀՐԱՆՏԻ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ
(1937--2018)

Ծնուել է 5 Սեպտեմբերի 1937ին, Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): 1991ին պաշտպանել է դոկտորականը՝ «20րդ Դարասկզբի Արեւմտահայ Գրական Քննադատութիւնը» նիւթով: 1970ից անցել է դասախօսական աշխատանքի, 1996ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում: Նրա ամբողջ կեանքը, բացառութեամբ 1961-63՝ ՀՀ ԳԱԱ Գրականութեան Հիմնարկում տարիներին, անքակտելիօրէն կապուած է ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքի հետ:

Մնացականեանը մշտապէս իրեն դրսեւորել է որպէս բանիմաց, խոր գիտելիքների տիրապետող, իր գործի նկատմամբ՝ պատասխանատուութեան բարձր զգացողութիւն ունեցող, ուսանողների նկատմամբ՝ անաչառ դասախօս: Նա լրջամիտ ներդրում է ունեցել նաեւ մերօրեայ գրականագիտութեան: Նրա *XIX Դարավերջի Հայ Ռէալիստական Գրաքննադատութեան Պատմութիւնից* (1974), *Արեւմտահայ Քննադատական Մտքի Պատմութիւնից* (1982), *Քսաներորդ Դարասկզբի Արեւմտահայ Գրաքննադատութիւնը* (1990) մենագրութիւնները *Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ* ժողովածուն (2007) վկայում են, որ նրա գիտական հետաքրքրութիւնների շրջանակը առնչուել է առաւելապէս ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբի արեւմտահայ գրական քննադատութեանը: Նա այն ուսումնասիրել է խորապէս՝ յստակօրէն դիտարկելով զարգացման ամբողջ ընթացքը, առանձնայատկութիւնները, կատարել ուշագրաւ ընդհանրացումներ: Միաժամանակ Մնացականեանը մերթընդմերթ անդրադարձել է նաեւ արեւմտահայ եւ արեւելահայ նորագոյն ու

արդի գրողների ստեղծագործութիւններին, ինչպէս նաեւ իր գործընկերների (Էդուարդ Ջրբաշեան, Հրանտ Թամրազեան, Արծրուն Աագեան) գրքերին:

Հայ գրականութեան տարբեր ժամանակաշրջանների նկատմամբ Մնացականեանի հետաքրքրութիւնների եւ իմացութեան վկայութիւնն են նաեւ նրա՝ *Հայ Գրական Քննադատութեան Պատմութիւն*, *Հայ Նորագոյն Գրականութիւն* դասընթացները, արեւմտահայ եւ արեւելահայ գրողների մասին ուսանողների մագիստրականների եւ թեկնածուականների ղեկավարութիւնը:

Նրա 6րդ, 8րդ, 9րդ դասարանների համար տարբեր տարիների եւ աւագ դպրոցի բնագիտական հոսքի 10րդ դասարանի համար ցարդ գործող հայ գրականութեան նրա հեղինակած (Վ. Ներսիսեանի հետ) դասագրքերը սիրուած ու գնահատուած են աշակերտների եւ ուսուցիչների կողմից: Նա պարգեւատրուել է ԵՊՀ պատուոգրով եւ ոսկէ մեդալով:

Լարիսա Մնացականեանը մահացաւ 8 Յունուար 2018ին, Երեւանում:

ԵՊՀ Հայ Բանասիրութեան Ֆակուլտէտ,
Հայ Նորագոյն Գրականութեան Ամբիոն

ՓԱՍՔՈՒԱԼ ՔԱՐԼՈՍ ՕՀԱՆԵԱՆ
(1932--2018)

Իրաւաբան, պատմաբան Փասքուալ Օհանեան ծնած է Պուենոս Այրէս, 1932ին: 1959ին աւարտած է Պուենոս Այրէսի Պետական Համալսարանի իրաւաբանական ճիւղը: Իր մասնագիտութեան զուգահեռ, դասաւանդած է երկրորդական վարժարաններու մէջ: 1975-82՝ նշած է ՀԲԸՄ «Մարի Մանուկեան» Կրթական Հաստատութեան երկրորդական բաժնի առաջին տնօրէնը: Աշխուժ մասնակցութիւն բերած է արժանթինահայ համայնքի հասարակական ու մտաւորական կեանքին, աշխատակցելով տեղական մամուլին, յատկապէս *Արմենիա* օրաթերթի (այժմ՝ շաբաթաթերթ) եւ *Սարփարատպար* շաբաթաթերթի սպաներէն բաժիններուն, ուր ստորագրած է հայոց պատմութեան ու մշակոյթին վերաբերեալ յօդուածներ: Մամուլին մէջ ցրուած կը մնան նաեւ հայ բանաստեղծներէ կատարած իր բազմաթիւ թարգմանութիւնները:

1964ին Օհանեան սկսած է գբաղիլ Հայկական Հարցի ուսումնասիրութեամբ: Աւելի քան յիսնամեայ իր աշխատանքին արգասիքը եղած է շուրջ 5000 տպագիր էջ հաշուող վեցհատորեայ ուսումնասիրութիւնը՝ *La Cuestión Armenia y las Relaciones Internacionales* (Հայկական Հարցը եւ միջազգային յարաբերութիւնները), որ իր լայնածիր ընդգրկումով ու մանրամասնութեամբ անզուգական կը մնայ օտարալեզու մատենագիտութեան մէջ: Բազմահատորեակը լոյս տեսած է Պուենոս Այրէսի մէջ, յաջորդաբար 1975ին (1839-1896), 1982ին (1897-1914), 1989ին (1915-1918), 1994ին (1918), 2005ին (1919 թուականը) եւ 2010ին (1920 թուականը), վերջին երկուքը՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի կնիքով: Ան կը ներկայացնէ հայ ժողովուրդի քաղաքական, ընկերային ու իրաւական վիճակը օսմանեան եւ ռուսական կայսրութիւններուն մէջ, հայ քաղաքական կուսակցութիւններուն գործունէութիւնը, համիտեան ջարդերէն մինչեւ Մեծ Եղեռն ու Կիլիկիոյ պարպում երկարաձգուող թրքական բռնաճնշումներու տարբեր երեսակները, Հայաստանի Ա. Հանրապետութիւնը եւ

բազմաթիւ հարցեր: Օհանեան իր ուշադրութիւնը մնայուն սեւեռած է միջազգային քաղաքականութեան ու իրաւական հարցերուն: Բազմալեզու գրականութեան ու, վերջին չորս հատորներուն մէջ, Մատրիտի, Վատիկանի ու Երեւանի արխիւներէն քաղուած փաստաթուղթերու հիմամբ կառուցուած սոյն վեցհատորեակը ուղենշային բնոյթ ունի յատկապէս սպաներէն մատենագիտութեան մէջ, որ մինչ այդ յատկանշուած էր այս նիւթերուն առնչուած կարգ մը սկզբնաղբիւրներու թարգմանութեամբ եւ հազուադէպ ինքնուրոյն ուսումնասիրութիւններով: Հեղինակը առաջինն է որ լայնօրէն օգտագործած է Սպանիոյ արտաքին գործոց նախարարութեան դիւանին մէջ պահպանուած փաստաթուղթերը: Մենագրութիւնը անշրջանցելի յղումի երկ կը նկատուի ժամանակաշրջանի սպաներէն ուսումնասիրողի համար:

1986ին Օհանեան լոյս ընծայած է *Turquía, Estado Genocida* (Թուրքիա՝ ցեղասպան պետութիւն) փաստաթուղթերու հաւաքածոյին Ա. հատորը (շարքը չէ շարունակուած), որ 524 տպագիր նիւթերու ընդգրկումով՝ հայկական, անգլիական, ֆրանսական, իտալական եւ այլ աղբիւրներէ, Մեծ Եղեռնի իրողութեան ցեղասպանական բնոյթը կը ցոլացնէ, դառնալով սպաներէն ամենէն համապարփակ նմանօրինակ հաւաքածոն:

2004ին Երեւանի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի հրատարակութեամբ լոյս տեսած է Օհանեանի անգլերէն գրքոյկը՝ *The Protection of Human Rights and the Genocide by the Turkish State against the Armenian Nation*: Այս գործը թանգարանին կողմէ հրատարակուած էր 2003ին՝ ռուսերէն, իսկ 2007ին՝ արաբերէն՝ Պէյրութի մէջ:

Օհանեան նաեւ հեղինակած է անտիպ մնացած *El Estado Depredador* (Գիշատիչ պետութիւնը) ուսումնասիրութիւնը, որ կ'անդրադառնայ 1921ի Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերուն, ձեւով մը հանդիսանալով իր վեցհատորեակին շարունակութիւնը: Ըստ լուրերու, այս գործը հրատարակութեան ընթացքի մէջ է: Ան նաեւ գրած է *Prehistoria de los Armenios* (Հայոց նախապատմութիւնը) համադրական գործը՝ հնագոյն ժամանակներէն մինչեւ Ք.ա. Թ. դարը, որ նոյնպէս մնացած է անտիպ (ամբողջական բնագիրը տրամադրելի է Google Booksէն):

Իր գիտական անխոնջ գործունէութեան ու վաստակին ի վարձատրութիւն, 1997ին ՀՀ ԳԱԱի նախագահութեան որոշումով, ան արժանացած է պատուոյ դոկտորայի տիտղոսին:

Օհանեան մահացած է Պուենոս Այրէսի մէջ, 7 Փետրուար 2018ին:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, varny1@yahoo.com

ԺԵՆԻԱ ԿԱՄՍԱՐԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ
(1930–2018)

Ժենիա Խաչատրեանը ծնուել է 1930 Յուլիսի 6ին, Նոր Բայազէտում (այժմ՝ Գաւառ):

1971ին պաշտպանել է թեկնածուական՝ «Ջաւախքի Հայ Ժողովրդական Պարերը» նիւթով:

1960ից մինչեւ կեանքի վերջը աշխատել է Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկում: Նա մեծ ներդրում ունի հայ ազգագրութեան տարբեր բնագաւառներում, հիմնականում՝ էթնօպարագիտութեան: Ականաւոր ազգագրագէտ

Սրբուհի Լիսիցեանի սանն էր եւ անմիջական հետեւորդը: 1958–70՝ մասնակցել է Լիսիցեանի՝ *Հայ Ժողովրդի Հինաւուրց Պարերը եւ Թատերական Ներկայացումները* գրքի Ա. եւ Բ. հատորների ստեղծման աշխատանքներին:

Հայաստանի տարբեր շրջաններից հաւաքել եւ գրանցել է ազգագրական եւ պարային մեծաթիւ նիւթ՝ ազգային սովորոյթների, հարսանիքի, տարազի, տօների, ծիսական եւ թատերական տիկնիկների մասին: Ազգագրական նիւթեր է գրանցել Վրաստանի, Աբխազիայի հայաբնակ շրջաններից, ուսումնասիրել Ռուսաստանի հիւսիսային ժողովուրդների (նենէցներ, չուկչաներ, էսկիմոսներ) բանահիւսութիւնը:

1970-90՝ տարբեր պարային խմբերի ուժերով ցուցադրութիւններ է կազմակերպել Հայաստանում, ԽՍՀՄում եւ արտասահմանում: Վերականգնել է Մուշ, Վասպուրական, Սասուն, Կարին, Համշէն, Բարձր Հայք եւ այլ գաւառների ժողովրդական պարերը, խաղերն ու տարազը: Գրանցել ու վերականգնել է ստուերների «Ղարագէօզ» տիկնիկային թատրոնը, կազմակերպել ազգագրական պարի համոյթներ, ունեցել հաղորդումներ հեռուստատեսութեամբ, ռադիոյով եւ մամուլով:

1976-92՝ դասաւանդել է Երեւանի Գեղարուեստական Հիմնարկում եւ ԵՊՀում, 2004-08՝ Երեւանի Ռուս-Հայկական (Սլաւոնական) Համալսարանում, 2000-17՝ Երեւանի Խ. Աբովեանի անուան Մանկավարժական Համալսարանում:

Հայկական ժողովրդական պարարուեստին նուիրուած բազմաթիւ յօդուածների, մի շարք մենագրութիւնների հեղինակ է: Առանձին հատորներով լոյս են տեսել նրա «Ջաւախքի Հայ Ժողովրդական Պարերը» (Ազգագրական Ուսումնասիրութիւն)», «Ղարագէօզ (Ստուերների Թատրոն)»՝ *Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն, Հտր. 7*, 1973, *Армянский Народный Танец* (Հայ ժողովրդական պարը, համահեղինակ՝ Էմմա Պետրոսեան, 1980), *Հայկական Աւանդութիւններ* (2001), *Պարը Հայոց Մէջ. Յօդուածների Ժողովածու* (2013), *Ծիսական Պարը Հայոց Հաւատալիքների Համատեքստում* (2014), *Կարնոյ Հայերի Պարային Մշակոյթը Ջաւախքում (XX-XXI Դար)* (2014) աշխատութիւնները: Նրա խմբագրութեամբ լոյս են տեսել *Կարոս Խաչ. Ուսումնասիրութիւն եւ Բնագրեր* (2000, համախմբագիր՝ Սարգիս Յարութիւնեան) եւ *Պար Երաժշտութիւն. Սրբուհի Լիսիցեանի Ծննդեան 110Ամեակին Նուիրուած Գիտաժողովի Նիւթեր* (2004) ժողովածուները, *Սրբուհի Ստեփանի Լիսիցեան. Կենսամատենագիտութիւնը* (Էմմա Պետրոսեանի հետ, 2009):

Ժենիա Խաչատրեանը մահացաւ 25 Մարտ 2018ին, Երեւանում:

ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ, nazeniks@gmail.com

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԷՈՐԳԻ ՋԱՏԻԿԵԱՆ
(1945--2018)

Պատմաբան, արձակագիր Յովհաննէս Ջատիկեանը ծնած է 20 Հոկտեմբեր 1945ին, Վարդաքար գիւղը (այժմ՝ Շիրակի Մարզ): 1995ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայաստանի Հանրապետութեան Ներքին Դրութիւնը 1918-1920 թթ. (Պետական, Սոցիալ-Տնտեսական եւ Մշակութային Կեանքի Հիմնահարցերը)» նիւթով: Ունի աւելի քան 50 գիտական յօդուածներ, առանձին գիրքերով՝ կարգ մը գեղարուեստական գործեր՝ *Անծուխ Կրակներ* (1989), *Ապրող Կարօտներ* (1996, 2006), *Յովհաննէս Հայ*

Թագաւորը (2004), *Արքայից Արքայ Հայոց* պատմավէպը (2011), *Կնճռոտուած Գարնան Ծիլեր* (2011): 2003ին նշանակուած է Խաչատուր Աբովեանի Տուն-Թանգարանի տնօրէն: 2008էն դասախօսած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Համալսարանը: Կազմած եւ խմբագրած է *Խաչատուր Աբովեանի Անյայտ Բացակայութիւնը* ժողովածուն (2009), *Խաչատուր Աբովեանի Տուն-Թանգարան* ուղեցոյցը (2010), *Աբովեանագիտական 1. Յօդուածների ժողովածու* (2011), *Աբովեանագիտական 2. Մատենագիտութիւն* (2011) ժողովածուները: Հեղինակ է նաեւ *Կարին (Էրզրում) Նահանգի Պատմական, Քաղաքական, Մշակութային Ուսումնասիրութիւն* (1992), *Կարինի Նահանգը XIX Դարի Երկրորդ Կէսին* (2013), *Հայկական Հարց. Աբովեանագիտական, Հայագիտական, Հասարակական-Քաղաքական Հանդէս* (2014) ուսումնասիրութեանց:

Զատիկեան մահացաւ 27 Մարտ 2018ին, Երեւան:

<<<

ՊԵՏԷՐ ՀԱԼՖԹԷՐ
(1944--2018)

Գերմանացի միջնադարագէտ Պետէր Հալֆթէրը ծնուել է 1944ին Չեխիայի Հանրապետութեան Բոհեմիա երկրամասի Բրոումով (նախկինում՝ Բրանուաու) քաղաքում: 1966ին Բազէլի եւ Թիւբինգէնի համալսարաններում խորացրել է գիտելիքները պատմութեան եւ գերմանագիտութեան բնագաւառներում: Նրա կենսագրութեան մէջ շրջադարձային է եղել ճանապարհորդութիւնը դէպի Թուրքիա, երբ մասնաւորապէս այցելել է Արեւմտեան Հայաստան եւ Կիլիկիա: 1986ին մանկավարժական գործունէութեան հետ միասին վերսկսել է գիտական հետազօտութիւնները, որի արդիւնքները՝ *Das Papsttum und die Armenier im Frühen und Hohen Mittelalter* (Պապականութիւնն ու հայերը վաղ եւ զարգացած միջնադարում) նիւթը 1993ին ներկայացրել է պաշտպանութեան Թիւբինգէնի Համալսարանում ստացել դոկտորի կոչում: Այն 1995ին գերմաներէն հրատարակուել է:

Հալֆթէրը գրեթէ երեսուն տարի եղել է Պետերս Միջազգային Ընկերութեան գիտաշխատող, իր գիտելիքները ներդրել Միջնադարեան Եւրոպայի, Մերձաւոր Արեւելքի Խաչակրաց արշաւանքների եւ Կովկասի քրիստոնեայ ժողովուրդների պատմութեան հետազօտութեանը: Իր յօդուածները լոյս են տեսել *Annuarium Historiae Conciliorum, Oriens Christianus, Le Muséon* հանդէսներում, յօդուածների մասնագիտական ժողովածուներում:

Իբրեւ միջնադարագէտ նա տիրապետում էր լատին աղբիւրագիտութեանը, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի միջնադարեան պատմութեանն ու մշակոյթին: Հիմնուելով այդ գիտելիքի վրայ, կարողանում էր ստեղծել Մերձաւոր Արեւելքի խաչակրաց աշխարհի եւ Կովկասի ամբողջական պատկերը: Նա կարողանում էր թափանցել հայկական սկզբնաղբիւրների հաղորդած դժուարընկալելի տեղեկութիւնների ելեւէջների: Հայկական ճարտարապետութեան իմացութիւնը նրան օգնեց թափանցել Բուրգոսի ֆրանսիական կաթողիկէի, 1204ին Քէօլնում պահպանուած Սիմէոն Նախանձայոյզին վերաբերող մասունքների եւ վկայութիւնների հետազօտութեան բնագաւառ եւ բազմաթիւ լատին սկզբնաղբիւրներ եւ հնագիտական նիւ-

թեր ծառայեցնել զարգացած աւատատիրութեան դարաշրջանի Հայաստանի եւ Վրաստանի պատմութեան ուսումնասիրութեան բազմաթիւ հիմնախնդիրների բարձրաձայնմանը: Նրա ուսումնասիրութիւնների շրջանակում էին Ֆրիդրիխ Բ.ի եւ Շտաուֆէրների, կայսր Օտտօ Դ.ի եւ Հռոմի պապերի (Ղուկաս Գ., Իննոկենտիոս Գ. եւն.) փոխյարաբերութիւնները հայոց կաթողիկոսների (Ներսէս Շնորհալի, Գրիգոր Տղայ, Կոստանդին Բարձրաբերդցի եւն.) եւ Կիլիկիայի Հայոց Թագաւորութեան ներկայացուցիչների (Լեւոն Ա., Հեթում Ա. եւն.) հետ: Նրա հետաքրքրութիւնների շրջանակում էր նաեւ մոնղոլական տիրապետութեան ներքոյ հայ եւ վրաց զինուորական գործիչների ծառայութեան խնդիրները, նրանց մասնակցութիւնը Մերձաւոր Արեւելքում մոնղոլ բանակների արշաւներին, Միջնադարեան Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի քրիստոնեայ ժողովուրդների եկեղեցաքաղաքական փոխյարաբերութիւններին, ինչպէս նաեւ Հայաստանում եւ Եւրոպայում թափառող միջնադարեան զրոյցների պատմամշակութային հետազօտութիւնը:

Սկսած 1998ից նա բազմիցս այցելել է Հայաստան, մասնակցել Հայաստանում եւ Վրաստանում կազմակերպուած գիտաժողովների: Աշխուժ գործունէութիւն է ծաւալել Հայ-Գերմանական Ընկերակցութեան շրջանակներում, մասնակցել *Deutsch-Armenische Korrespondenz* (Հայ-գերմանական թղթակցութիւն) պարբերականի խմբագրման եւ հրապարակման աշխատանքներին:

Նրա աշխատանքները այս բնագաւառում նոր որակ բերեցին հայագիտութեանը, հարստացրեցին այն նոր գոյներով եւ լուծումներով:

Պետէր Հալֆթէրը մահացաւ 2018ի Ապրիլի 20ին, Մարբախում:

ԱՂԱՏ ԲՈՂՈՅԵԱՆ, bznazt@ymail.com



ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1930--2018)

Ծնուել է 1930 Մարտի 2ին Հիւսիսային Օսիայի Հանրապետութեան Վլադիկաւկազ քաղաքում, եղեռնից փրկուած բիթլիսցի հօր եւ սարիղամիշցի մօր, հոգեւորականի ընտանիքում: 1937ին ընտանիքը տեղափոխուել է Երեւան: 1947-49՝ ուսանել է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանում:

Գրիգորեանի գիտական գործունէութիւնը սկսուել է 1962ին, երբ ընդունուել է ԳԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի Հայ Վիմագրութեան Բաժինը, որտեղ շփուելով ժամանակի ականաւոր հնագէտ-վիմագրագէտներ Բաբկէն Առաքելեանի, Կարօ Ղաֆադարեանի ու Սեդրակ Բարխուդարեանի հետ, դառնում է նրանց աշակերտն ու գործի արժանի շարունակողը:

1985ին պաշտպանում է դոկտորականը՝ «Սիւնիքի Հասարակական-Քաղաքական, Սոցիալ-Տնտեսական Պատմութիւնը XIII-XV ԴԴ.» նիւթով: 1973ին լոյս են տեսնում նրա *Սիւնիքի Վանական Կալուածատիրութիւնը IX-XIII Դարերում*, 1981ին՝ *Սիւնիքը Օրբէլեանների Օրօք (XIII-XV Դարեր)*, 1990ին՝ *Очерки Истории Сюника (IX-XIII вв.)* (Ակնարկներ Սիւնիքի պատմութեան, Թ.-ԺԳ. դդ.,), 2004ին՝ *Род Орбелянов и История Сюника (IX-XV вв.)* (Օրբէլեանների տոհմը եւ Սիւնիքի պատմութիւնը, Թ.-ԺԵ. դդ.,) աշխատութիւնները: Այս ուսումնասիրութիւններում հեղինակը մատենագրական ու վիմագրական սկզբնաղբիւրների հիմամբ ներկայացնում է

վանքերի ու վանական միաբանութիւնների առաջացման պատճառները, ապահարկութեան խնդիրները, տնտեսական ճիւղերը, Սիւնիքում Օրբէլեանների հաստատման իրական նկարագիրը:

1986-2011՝ ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի վիմագրութեան բաժինը, զուգահեռ դասախօսել ԵՊՀում, Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական եւ Հրաչեայ Աճառեանի անուան համալսարաններում: 1988ին ՀՀ ԳԱԱ նախագահութիւնը նրան պարգեւատրել է գովեստագրով, 1989ին արժանացել է պրոֆեսորի գիտական կոչման, 2010ին ՀՀ նախագահի հրամանագրով նրան շնորհուել է գիտութեան վաստակաւոր գործչի կոչում:

Դեռեւս 1960ականներից Գրիգորեանը վիմագրութեան բաժնի արշաւախմբերի կազմում գործօն մասնակցութիւն է ունեցել վիմական արձանագրութիւնների հաւաքմանը՝ Հայաստանի եւ Արցախի շրջաններում, Ռուսաստանի, Ուկրայնայի եւ Մոլդովայի նախկինում հայաբնակ վայրերում: Նա ընդօրինակել եւ վերծանել է հարիւրաւոր քարեղէն վկայագրեր, որոնցից շատերն այսօր չեն պահպանուել: Նա հաւաքել է ոչ միայն յուշարձանների որմերին փորագրուած վիմագրերը, այլեւ տարբեր թանգարանների հայկական եկեղեցական սպասքի, այլ առարկաների յիշատակագրերը: Նրա համբերատար եւ մանրակրկիտ պրպտումների շնորհիւ գիտահանրութեան սեփականութիւնը դարձան Մոսկուայի Կրեմլի Զինապալատի եւ Պատմութեան Պետական Թանգարանի պահոցների տասնեակ եկեղեցական առարկաների ու սրբազան մասունքների վրայ դրոշմուած հայկական յիշատակագրերը, որոնք լոյս տեսան *Դիւան Հայ Վիմագրութեան* մատենաշարի VII եւ VIII հատորներում (1996, 1999): Այստեղ հրատարակուած աւելի քան 1500 արձանագրութիւնները (մեծ մասն առաջին անգամ) կարեւորագոյն նշանակութիւն ունեն հայ գաղթավայրերի պատմութեան եւ մշակութային կեանքի ուսումնասիրութեան. դրանք հասու դարձան տեղի մասնագէտներին, հասարակութեանը, թանգարանային ցուցադրութիւններ կազմակերպուեցին եւ վերահմաստաւորուեցին:

Միաժամանակ, 1966ից՝ Գրիգորեանը ղեկավարել է Վահանավանքի հնագիտական պեղումները: Արդիւնքների մասին հաղորդող յօդուածներից զատ պեղումների ողջ ընթացքն ամփոփուեց *Վահանավանք. Պատմահնագիտական Ուսումնասիրութիւն* գրքում (2007): Աւելի ուշ հրատարակւում է իր՝ *Վահանավանքի Վերածնունդը. Հնագէտի Օրագրից*՝ յուշագրութիւնը (2009):

Գրիգորեանի՝ վիմագրագիտութեան բնագաւառում ունեցած ներուժի արդիւնքում լոյս տեսան նաեւ *Հայկական Վիմագրութիւն* (2000) եւ *Սիւնիքի Պատմութիւն* (2001) (հեղինակակից՝ Սերգէյ Հախվերդեան) ուսումնական ձեռնարկները: Նրա մէկ տասնեակից աւելի գրքերի եւ բազմաթիւ գիտական յօդուածների ու հրապարակումների շտեմարանում առանձնանում է դարձեալ յուշագրութեան սեռին յատուկ *Ղարաբաղեան Օրագիր (1988-1992)* գիրքը (2005): Այստեղ առաջին անգամ ռուսերէնից հայերէն են թարգմանուել հեղինակի՝ արցախեան հերոսամարտին առնչուող նամակներն ու հեռագրերը (նաեւ՝ պատասխան գրութիւնները)՝ հասցէագրուած Խորհրդային Միութեան ղեկավարներին, նախարարներին, բարձրաստիճան պաշտօնեաներին:

Գիտութեան վաստակաւոր գործիչ, Կապանի պատուաւոր քաղաքացու կեանքի վերջին աշխատանքը՝ *Դիւան Հայ Վիմագրութեան* մատենաշարի պատմական Սիւնիքի վիմագրերն ընդգրկող լրացուցիչ պրակի ամբողջացումը, մնաց անաւարտ:

Գրիգոր Գրիգորեանը մահացաւ 14 Հոկտեմբեր 2018ին, Երեւանում:

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ars.vimagraget@gmail.com

ՌՈՊԵՐԹ ՀԻՒԱՆ
(1934--2018)

Ամերիկահայ հայագէտ Ռոպըրթ Հիւան (բուն անունով Ռոպըրթ Հիւսնեան) ծնած է 20 Մայիս 1934ին, Նիւ Եորք: Դոկտորականը ստացած է Հարվըրթաուն Համալսարանէն 1967ին, ուր աշակերտած է Կիրիլ Թոմանովին: Միեւնոյն տարին դասաւանդութեան անցած է Նիւ Ճըրզիի Կլասթորս Սահանգային Քոլէճի (այժմ՝ Ռաուան Համալսարան), պատմութեան բաժանմունքին մէջ, ուր բիւզանդական եւ ռուսական պատմութեան փրոֆեսոր եղած է մինչեւ 1999: Հիւան հայոց պատմութիւն դասաւանդած է Միշիկընի (1979), Փենսիլվանիայի (1980-83), Թիւպինկէնի (Գերմանիա, 1984, 1987), Շիքակոյի (1991, 1998, 2008), Քոլումպիա (1993, 1999), Քալիֆորնիոյ (Լոս Անճելըս, 2002), Քալիֆորնիոյ Նահանգային (Ֆրեզնօ, 2001) եւ Եբրայական (Երուսաղէմ, 2004) համալսարաններ եւ Ս. Ներսէս Ճեմարանը (2001):

Ան Society for the Study of Caucasian համահիմնադիրն ու նախագահը եղած է, ինչպէս եւ Society for Armenian Studies-ի նախագահ (1988-89): 1960ականներէն բազմաթիւ հայագիտական յօդուածներ եւ գրախօսականներ հրատարակած է տարբեր պարբերականներու մէջ: Հրատարակած է Անանիա Շիրակացիի *Աշխարհացոյց*ին անգլերէն թարգմանութիւնը (1992) եւ հսկած է երկու խմբագրութիւններուն հայերէն բնագրի հրատարակութեան (1994): Իր հետաքրքրութիւններուն մաս կը կազմէր պատմական աշխարհագրութիւնը: Այդ ուղղութեամբ Թիւպինկէնի *Atlas of the Middle East*-ին աշխատակցած է Կովկասի ութ մեծադիր քարտէսներով, մանաւանդ հրատարակած է *Historical Atlas of Armenia* արժէքաւոր երկը (2001):

Հիւան 1961էն իվեր ինն անգամ այցելած էր Հայաստան եւ երկու անգամ՝ Արցախ:

Ան իր մահկանացուն կնքած է 17 Նոյեմբեր 2018ին, Ֆրեզնոյի մէջ, ուր կ'ապրէր վերջին տարիներուն:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, varnyl@yahoo.com

ԳԱՌՆԻԿ ՍՄԲԱՏԻ ՇԱԽԿԵԱՆ
(1937--2018)

Հարտարապետ, ճարտարապետութեան դոկտոր (1993), պրոֆեսոր (1994), ՀՀ գիտութեան վաստակաւոր գործիչ (2012) Գառնիկ Շախկեան ծնած է 22 Ապրիլ 1937ին, Շնող գիւղը (այժմ՝ Լոռիի Մարզ): 1961-67՝ եղած է Ալավերդի քաղաքի գլխաւոր ճարտարապետ, 1967-78՝ Հայկոմուննախագիծ Հիմնարկի գլխաւոր մասնագէտ, ճարտարաշինական բաժնի վարիչ: 1973ին պաշտպանած է ճարտարապետութեան թեկնածուական՝ «Օձունի Գմբէթատուր Բազիլիկը» նիւթով: 1987ին վերապատրաստման դասընթացքներ անցած է Մոսկուայի Ճարտարապետութեան Հիմնարկը: 1992ին ուսանած է ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկին մէջ:

1978էն դասախօսած է Երեւանի Պոլիտեխնիկական Հիմնարկի Ճարտարապետութեան տեսութեան, պատմութեան եւ յուշարձանների վերականգնման ամբիոնին մէջ:

Հեղինակ է Նեղուցի մատուռին (2006): Գիտական ուսումնասիրութիւնները կը վերաբերին հայ ճարտարապետութեան պատմութեան եւ տեսութեան, Լօռիի ճարտարապետական դպրոցին: Մասնաւորապէս հիմնաւորած է Ը.-Թ. դդ. Հայաստանի շինարարական գործունէութեան ընթացքը, շրջանառութեան դրած անյայտ ու սակաւ յայտնի յուշարձաններ եւ շինարարական իրողութիւններ:

Հրատարակած է *Ակնարկներ Հին եւ Միջնադարեան Հայաստանի Ճարտարապետութեան Պատմութեան* (համահեղինակներ՝ Ս. Մնացականեան, Կ. Յովհաննիսեան, Ա. Սահինեան, 1979), *Օձունի Եկեղեցին* (1983), *Աշտարակ* (1984), *Կիրանց Վանք* (1984), *Քոբայր* (1984), *Ախթալա* (1984, նաեւ ռուսերէն), *Լօռի. Պատմութեան Քարակերտ Էջերը* (1986), *Աշտարակ (Ճարտարապետական Յուշարձանները)* (1987), *Սովետական Հայաստանի Ճարտարապետական Յուշարձանները* (1989, հայերէն, անգլերէն, ռուսերէն), *Կայծոն-Շնող Հայրենագիտարան* (1999), *Հայ Ճարտարապետութեան Եօթ Հրաշալիքներ* (2001), *Երեւանի Ճարտարապետութեան եւ Շինարարութեան Պետական Համալսարան. Պատմութիւն եւ Արդիականութիւն* (համահեղինակ՝ Ա. Բեգլարեան, 2003, հայերէն/անգլերէն/ռուսերէն), *Պատկերազարդ Կենսագրական Հայրենագիտարան (ՀՀ Լօռու Մարզի Շնող Գիւղի Պատմութեան)* (2004), *Հայ Ժողովրդի Ճարտարապետական-Շինարարական Գործունէութիւնը VIII-IX Դարերում* (2004, հայերէն/անգլերէն/ռուսերէն), *Monastery of Haghbat* (2009, նաեւ ռուսերէն), *Ոգի, Գոյն, Կերպար (Հայ Ճարտարապետութեան եւ Մշակոյթի Հարցեր)* (2009), *Հայրապետական Աթոռին Փառքը* (2017) հատորները:

Նախկեան հետազօտած է նաեւ Յովհաննէս Թումանեանի կեանքը, հրատարակած *Յովհաննէս Թումանեան. Հայրենագիտական Համանուագներ* (2005), *Թումանեանի Ընտանեկան Աշխարհը* (2011) եւ *Ժպտադէմ, Զուարճախօս ու Զարմանահրաշ Մեր Թումանեանը* (2015) հատորները: 2017ին լոյս ընծայած է *Գնահատանք Նուիրումի եւ Արարման (Ինքնակենսագրութիւն)* հատորը:

Գառնիկ Նախկեան մահացաւ 29 Նոյեմբեր 2018ին, Երեւան:

ՀՀՀ

ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊԵԱՆ-ԷՔՄԷՔՃԵԱՆ
(1929--2018)

Պատմաբան Ագապի Նասիպեան-Էքմէքճեան ծնած է 1929ին, Լիմասոլ: Աւարտած է Մելոգնեան Կրթական Հաստատութեան Վարժապետանոցի բաժինը է 1947ին:

1982ին, Օքսֆորտի Համալսարանին մէջ պաշտպանած է դոկտորականը "Britain and the Armenian Question 1915-1923" նիւթով, որ ունեցած է երեք հրատարակութիւն (անգլերէն՝ 1984, 1985, հայերէն՝ 1994՝ Հրատ. ՀԲԸՄ Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամ):

1951-75 (ընդմիջումներով)՝ պաշտօնավարած է ՄԿՀի մէջ, ուր 1985-88՝ վարած է տնօրէնուհիի պաշտօնը: 1984-2006՝ պատմագիտական, կրթական եւ ընկերային

նիւթերով զանազան դասախօսութիւններ տուած Լոնտոնի, Նիկոսիոյ, Երեւանի, Աթէնքի, Հալէպի, Գահիրէի, Դամասկոսի, Ֆինլանտայի, Ժընեւի, Ֆրանսայի, Լոս Անճելըսի, Պէյրութի եւ Երեւանի ու Էջմիածնի մէջ: Պատմագիտական նիւթերով աշխատակցած է սփիւռքահայ մամուլին, ինչպէս նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*՝ "Zabel, Queen of Cilicia and Her Time" (ԺԹ. Հտր., 1993):

Ան ընդառաջելով իր ուսուցիչ Վահէ Վահեանին փափաք-թելադրանքին լծուեցաւ իր թեզին հայերէն թարգմանութեան, հակառակ որ - լի հետազօտական թափով - կ'ուզէր ծաւալել իր ուսումնասիրութիւնները, աշխատասիրել Զօրավար Անդրանիկի կենսագործունէութիւնը...: Դժբախտաբար, այդ եւ նման այլ հետազօտութիւններ մնացին անաւարտ: Գիրքին հայերէն թարգմանութեան շրջանին (1992) ան աւելի քան անգամ մը ոգեւորութեամբ պատմեց ինծի իր պատմագիտական «յայտնագործութիւնը», թէ իր ուշադրութիւնը գրաւած էր հայոց ջարդերուն վերաբերող լրատուութեան մը տակ դրուած Բրիտանիոյ Ֆորէյն Օֆիսի մակագրութիւն մը, թէ՝ ասիկա կրնայ ծառայել Ամերիկայի մէջ պատերազմական ճիգին: Ան կրցած էր լուծել այդ հանելուկը թէ՝ հայկական ջարդերու լրատուութեան զանգուածայնացումը կրնար յառաջացնել ընկերաբարոյական այն ճնշումը, որով Մ. Նահանգներու կառավարութիւնը "կը ստիպուէր" մասնակցիլ պատերազմին եւ օգնութեան հասնիլ դաշնակից ուժերուն:

Ընդհանրապէս պատմագիտական իր կարծիքներուն մէջ զուսպ, բայց խորատես ու խորաթափանց Էքմէքճեան իր տեսակէտերը կը կառուցէր արխիւային բազմատեսակ եւ անբեկանելի փաստերու վրայ ու հետեւութիւնները կը թողուր ընթերցողին՝ իր կողմէ գրեթէ աննշան մղումով մը: Ան հայ պատմագիտական մտքի այն հազուագիւտ հետազօտողներէն է, որոնց աշխատասիրութիւնը կը յատկանշուի փաստագրական, քաղաքական եւ մարդասիրական նիւթերու բացարձակապէս գիտական համադրութեամբ, որոնք տարազուած են համապատասխան համաշխարհային եւ շրջանային համապատկերով:

Կրթական եւ մշակութային գործունէութեան համար 1997ին Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին կողմէ շքադրուած է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, իսկ 2003ին, Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսին կողմէ՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Ագապի Նասիպեան-Էքմէքճեան մահացաւ 21 Դեկտեմբեր 2018ին, Կիպրոս:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ, adakessian@haigazian.edu.lb

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԻԼԻԿԵԱՆ
(1942–2018)

Ծնած է Մուսուլ, Իրաք 1942ին: Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն վկայուած է անգլիական գրականութեան մէջ, ապա՝ Լոնտոնի Open Universityէն՝ հոգեբանութեան, Լոնտոնի School of Oriental and African Studiesէն մագիստրականով՝ ընկերային մարդաբանութեան մէջ: Հետեւած է Միւնիխի Համալսարանի, Լոնտոնի Թատերական Արուեստի Արքայական Ակադեմիայի եւ Փրինսթըն Համալսարանի MacArthur Theaterի յատուկ դասերուն:

Ինքնատիպ ու նորարական ոճի Բրիտանիոյ ականաւոր բեմադրիչ է ան որ կը սեպուէր Անգլիոյ թատրոնի լաւագոյն մասնագէտներէն:

1980ին լոյս կը տեսնէ իր *1915 - An Armenian Symphony and Other Poems* բանաստեղծութիւններու հատորը որուն ծանօթագրութիւնները կը կազմեն հատորին կէսը եւ կ'ընդգրկեն պատմագիտական, արուեստաբանական, հայագիտական եւ ընկերաբանական վերլուծութիւններ. ապա յաջորդաբար՝ *Armenian Cinema (A Source Book)* (1981), եւ *Classical Japenese Theater* երկերը. հայերէնի թարգմանած է նոպէլեան մրցանակակիր Սեմուըլ Պեքէթի *Come and Go* թատերախաղը (1982): Իր գլուխ գործոցն է *The Study of the Origins of the HAI, the First People* (հայերէն/անգլերէն, 2011) հատորը: Հանդէս եկած է բազմաթիւ հայագիտական, գրականագիտական, թատերագիտական եւ ընկերաբանական դասախօսութիւններով թէ՛ բեմերէ եւ թէ՛ առցանց, որոնցմէ շատերը կը մնան անտիպ:

1981ին՝ Լոնտոնի, 1983ին՝ Վենետիկի եւ 1986ին՝ Փարիզի մէջ կազմակերպած է հայկական ֆիլմարուեստի փառատօներ եւ տասնօրեակներ, պարգեւատրուած Սովետական Հայաստանի մշակոյթի նախարարութեան «Պետրոս Ադամեան» շքանշանով՝ 1985ին:

Յովհաննէս Փիլիկեան կրտսեր եղբայրն է Խաչիկ Փիլիկեանի եւ հայրը՝ լեզուաբան եւ արուեստագէտ Վահան (Vaughan) Փիլիկեանի: Մահացաւ 22 Դեկտեմբեր 2018ին, Լոնտոն, Անգլիա:

ՎԻԳԷՆ Ա. ԱՌԱՐԵԱՆ,viken.attarian@videotron.ca

ՏԻԳՐԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ
(1936--2019)

Բանասէր եւ մատենագէտ Տիգրան Գէորգեան կը պատկանի եգիպտահայ մտաւորականներու անհետացող սերունդին:

Զաւակը Գէորգ եւ Նուարդ Գէորգեաններու՝ ծնած է 1936 Յունուար 6ին, Գահիրէ: 1951-55՝ կ'ուսանի Վենետիկի վերաբացուած Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը, ուսուցիչներ ունենալով՝ Հ. Մեսրոպ Ճանաշեան, Հ. Եղիա Փեչիկեան եւ ուրիշներ: Վերադառնալով Գահիրէ, իր նպատակը կ'ըլլայ ուսումը կատարելագործել Եւրոպա, սակայն նիւթական պայմանները թոյլ չեն տար իրականացնել երազը:

1957 59՝ կը վարէ *Արեւի* օգնական խմբագիրի պաշտօնը, Նուպար Պէրպէրեանի խմբագրապետութեան շրջանին: 1960ին կը պաշտօնակոչուի Գալուստեան Ազգային Վարժարան, իբրեւ հայերէն լեզուի եւ գրականութեան ուսուցիչ:

1969ին կ'ամուսնանայ եգիպտահայ ասմունքողուհի Սեդա Ճիզմէճեանի հետ, կ'ունենայ երկու որդի՝ Արա եւ Արմէն:

1971-72՝ իր խմբագրութեամբ լոյս կ'ընծայուին Գալուստեան Ազգային Վարժարանի աշակերտութեան *Ուղի* կիսամեայ հանդէսին երկու համարները: 1972 Սեպտեմբեր-1973 Յունիս՝ իբրեւ ԵՊՀ Արսէն Տէրտէրեանի անուան Հայ Գրականութեան Ամբիոնի սթաժէօր առիթ կ'ունենայ հետազօտութիւններ կատարելու Մատենադարանի, Ակադեմիայի, Միասնիկեանի անուան Հանրային եւ Համալսարանի Գիտական գրադարաններուն մէջ եւ նոր ատաղձով վերադառնալու Գահիրէ:

Վերստանձնելով դասաւանդութիւնը Գալուստեանի մէջ: Լոյս կ'ընծայէ *Ուղի*ի 1973-74 կրթաշրջանի համարը, որ կ'ըլլայ վերջինը: 1978ին ուսուցչութեան կ'անցնի Նուպարեան Ազգային Վարժարան, ուր կը մնայ մինչեւ հանգստեան կոչուիլը՝ 1996: Նուպարեանի շրջանին լոյս ընծայած է աշակերտական *Արեգ* պարբերական տեղեկատուի 1978-80 կրթաշրջաններու երկու համարները:

1981ին կը հրատարակէ իր առաջին գիրքը՝ *Հ.Բ.Ը.Մ. Պատմական Ակնարկ Իր Ադամանդեայ Յոբելեանին Առիթով* (հրատ.՝ ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակին, 32 էջ): Նոյն տարին կը ստանձնէ Գահիրէի ՀԲԸՄի Եգիպտոսի շրջանի պաշտօնաթերթ՝ *Տեղեկատու* եռամսեայի խմբագիրի պաշտօնը եւ լոյս կ'ընծայէ մէկ թիւ (Մայիս-Դեկտեմբեր 1981, ԻԴ. տարի), քանի որ պետական ձեւակերպումները պիտի խոչընդոտէին անոր հրապարակումը:

1982ին կը հրապարակէ իր վերջին յօդուածը *Արեւ*ի մէջ, ուր շուրջ 15 տարի՝ 1967-82, սիրայօժար հրատարակած էր աւելի քան 40 ուսումնասիրութիւններ, մատենագիտական ցանկեր, գրախօսականներ եւ քննախօսականներ: Վարչական խզումի մը պատճառով, 1982էն ետք վերջնականապէս կը դադրին Գէորգեանի գրութիւնները *Արեւ*ի մէջ: Այնուհետեւ, աւելի քան 15 տարի (1983-98) իր ստորագրութեամբ յօդուած լոյս չի տեսներ եգիպտահայ մամուլին մէջ: Փոխարէնը, սակայն, այս շրջանը կը պսակուի երկու հիմնարար հատորներու հրատարակութեամբ:

1985ին, Արմենական Կուսակցութեան 100ամեակին առիթով, տպագրութեան պատրաստած էր կուսակցութեան նուիրուած Միքայէլ Նաթանեանի անտիպ աշխատութիւնը, զոր կարելի կ'ըլլայ տպագրել հինգ տարի ետք՝ 1990ին (Միքայէլ Նաթանեան, *Արմենական Կուսակցութիւնը. Ծագումէն Սկսեալ Մինչեւ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Կազմութիւնը*, խմբ. եւ ներած.՝ Տիգրան Գէորգեանի, Գահիրէ, Հայ Ազգային Հիմնադրամ, 106 էջ): 1995ին հրապարակ կու գայ Գէորգեանի երրորդ գիրքը՝ 300 էջանի մատենագիտութիւն մը, *«Հայկական Հարց»ը եւ Հայկական Կոտորածները. Համապարփակ Մատենագիտութեան Փորձ* (համահեղինակ՝ Յակոբ Անասեան):

1998ին կը վերսկսի Գէորգեանի գործակցութիւնը եգիպտահայ մամուլին հետ. *Ջահակիր*ի մէջ կը տպագրուի իր առաջին յօդուածը, որուն կը յաջորդեն (մինչեւ 2002) 9 ուրիշներ, մեծ մասամբ գրախօսականներ: Յօդուածներէն մէկը՝ *«1915-1920 թթ. Երկու Վաւերագրեր՝ Մարտինի Պատահարներուն Մասին եւ Սէֆէր Պիրլիքը Հալէպի Մէջ»*, 1998ին *Ջահակիր* կը հրատարակէ առանձին գիրքով:

1996 Հոկտեմբերին կը վերականգնուի *Տեղեկատու*ի հրատարակութիւնը (նոր շրջան, թիւ 1): 1999 Յունուարին (նոր շրջան, թիւ 10) Գէորգեան կը ստանձնէ խմբագրութիւնը, զոր կը վարէ մինչեւ 2002 Ապրիլ (նոր շրջան, թիւ 23): Իր ուսումնասիրութիւններով եւ գրախօսականներով *Տեղեկատու*ն դուրս կ'ելլէ տեղեկատուական պաշտօնաթերթի շրջագիծէն եւ կը հարստանայ մտաւորական-բանասիրական նիւթերով: Այնտեղ, բացի անստորագիր գրութիւններէ, Գէորգեան կը հրատարակէ 17 ծանրակշիռ յօդուածներ՝ գրախօսականներ-քննախօսականներ, հրապարակումներ, ինչպէս նաեւ եգիպտահայ կաթողիկէ համայնքի համապարփակ պատմականը (լոյս կը տեսնէ նաեւ առանձին գիրքով՝ *Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքը. Անցեալը եւ Ներկան Իր Բոլոր Կառոյցներով եւ Կարկառուն Դէմքերով* Գահիրէ, ՀԲԸՄ Գահիրէ Սաթենիկ Ճ. Չագըր Հիմնադրամի Հրատարակութիւն, 2001):

Գէորգեան աշխատակցած է նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին, եւ ստորագրած երկու նիւթ՝ Ի. (2000) եւ ԻԳ. (2003) հատորներուն մէջ: *Տեղեկատու*ի խմբագրապետութենէն հեռանալէն ետք, ան կը շարունակէ աշխատակցիլ պաշ-

տօնաթերթին: 2007 Հոկտեմբերին, այնտեղ ստորագրած վերջին գրախօսականէ մը ետք, այլեւս իր գրութիւններուն չենք հանդիպիր մամուլին մէջ:

2020ին, Հայկ Աւագեանի խմբագրութեամբ եւ *Ջահակիր*ի հրատարակութեամբ լոյս կը տեսնէ Գէորգեանի աշխատութիւններուն եռահատորը, որ կը բովանդակէ նաեւ իր անտիպ գործերը:

Ուղեղի արիւնահոսութեան հետեւանքով, 2012 Սեպտեմբեր 18ին Գէորգեան կը փոխադրուի Հելիոպոլիս Հիւանդանոց: Միառժամանակ ետք, երկարատեւ բուժումի համար կը տեղափոխուի Իտալական Հիւանդանոց, ուր աւելի քան վեց տարի կիսագիտակից կեանք մը անցընելէ ետք կը մահանայ 2019 Յունուար 19ին:

ՀԱՅԿ ԱԻԱԳԵԱՆ, haigavakian@yahoo.com

ՀԱՅԿ ՊԻՈՆԻ ՅԱԿՈԲԵԱՆ
(1956--2019)

Հնագէտ Հայկ Յակոբեանը ծնուել է 5 Նոյեմբերի 1956ին, Երեւանում: ԵՊՀ Պատմութեան Հիմնարկն աւարտելուց յետոյ, 1978ին աշխատանքի է անցել Հայաստանի Ազգագրութեան Թանգարանում, որտեղ իր մօտ ձեւաւորուել է թանգարանացուող նիւթի նկատմամբ հոգատար վերաբերմունք, յուշարձանի ընկալումը՝ ցուցադրման տեսանկիւնից:

1986ին պաշտպանում է ԽՍՀՄ ԳԱ Հնագիտութեան Հիմնարկի թեկնածուականը՝ «Հայաստանի եւ Հռոմի Տնտեսական եւ Մշակութային Կապերը» նիւթով: Ուսումնառութեան տարիներին նա մասնակցում է մի շարք հանգուցային յուշարձանների, մասնաւորապէս Հին Նիսայի պեղումներին, որի ընթացքում իր մօտ ձեւաւորուել են հետազօտողի վիճակագրական մեթոդների արժեւորումը, նորագոյն մեթոդների օգտագործման կարեւորութեան գիտակցումը: 2017ին ընտրւում է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի հին դարերի բաժնի վարիչ:

Յակոբեանը եռանդուն մասնակցել է Հին Հայաստանի մայրաքաղաք Արմաւիրի պեղումներին, պեղել է Կարմրաքար գիւղի մօտակայքի անտիկ դամբարանադաշտը, ապա՝ Հողմիկի հելլենիստական յուշարձանը, Ծիծեռնակաբերդի անտիկ բնակավայրը, Շիրակի սարահարթի միջնադարեան «Խարաբէք» գիւղատեղը, Սեւանի աւազանի յուշարձանները: Նա մեծագոյն ներդրում ունի անտիկ Շիրակի պատմութեան եւ նիւթական մշակոյթի ուսումնասիրութեան գործում:

Յատկանշական են Յակոբեանի տեսական՝ մասնաւորապէս Հին Հայաստանի մեհեաններին նուիրուած աշխատութիւնները: Նրան յաջողուեց վեր հանել հեթանոսական պաշտամունքին առնչուող բազմաթիւ եւ բազմաբնոյթ խնդիրներ. կառոյցների ճարտարապետութիւնը, ծէսի կազմակերպումը, մերձարեւելեան եւ հռոմէական հաւատալիքների ազդեցութիւնը Հայաստանի հոգեւոր կեանքում, մասնաւորապէս Հայաստանի առնչութիւնը Միթրային նուիրուած հռոմէական տաճարներին:

Յակոբեանի գիտական հետաքրքրութիւններում առանձնայատուկ տեղ է զբաղեցնում Տիգրան Մեծի կեանքի եւ գործունէութեան ուսումնասիրութիւնը: Նրա *Տիգրան Մեծ* մենագրութիւնը (2005), որտեղ ի մի են բերուած մեծ գահակալի մասին հայ եւ օտար սկզբնաղբիւրների տեղեկութիւնները, յիրաւի նոր խօսք է հայագիտութեան մէջ: Այստեղ առաջ քաշուած տեսակէտերն աչքի են ընկնում իրենց թար-

մութեամբ եւ չկաղապարուածութեամբ: Հին յունական սկզբնաղբիւրների մանրակրկիտ քննական վերլուծութեամբ նա նորովի լուսաբանեց եւ մեկնաբանեց հոն մէական զօրավարներ Լուկուլլոսի եւ Պոմպէոսի հետ Տիգրան Մեծի ունեցած բախումների պատմութիւնը, ինչպէս նաեւ այդ դարաշրջանի դիւանագիտութիւնը:

Կարեւոր նշանակութիւն ունեցան հայ բանակին եւ ռազմարուեստին վարպետացման նուիրուած Յակոբեանի աշխատութիւնները: Մեսրոպ Մաշտոցի յուշարձաններու հնտազօտութիւնները թոյլ տուին նրան լրջագոյն հետեւութիւնների յանգել՝ Հայաստանում խեցեգործական աւանդոյթների զարգացման վերաբերեալ:

Նրա գիտական հետաքրքրութիւնները չսահմանափակուեցին անտիկ ժամանակաշրջանի ուսումնասիրութեամբ: Իր գիտական աշխատանքներում նա լուսարձակի տակ առաւ Հայաստանի հեթանոսութիւնից քրիստոնէութեան անցման փուլը:

Յակոբեանը մեծ ներդրում ունի նաեւ միջնադարեան հնագիտութեան քննագատում: Անուրանալի է նրա ներդրումը Ջնդիի միջնադարեան ամրոցի պեղումներում: Ուսանողական տարիներից մասնակցելով միջնադարեան Հայաստանի այդ նշանաւոր քաղաքի հետազօտութիւններին, Յակոբեանը տարիներ շարունակ եղել է արշաւախմբի ղեկավարի տեղակալ: Նրա ջանքերով են պեղուել ամրոցի գաղտնուղու հատուածը, ատորին բերդի կոթողային շինութիւնը, մատուռ տապանատունը գիւղի տարածքում:

Յակոբեան հնագէտը դաշտային ուսումնասիրութիւններում նորագոյն մեթոդների արմատաւորման մեծագոյն ջատագովն էր: Նա առաջիններից էր, ով հնագէտ Ռ. Պալմերի հետ իրականացրեց Արագածոտնի, Կոտայքի եւ Շիրակի մի շարք յուշարձանների օդալուսանկարումը:

2001ից իբրեւ ՀՊՀ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ամբիոնի դոցենտ՝ Յակոբեանը դասաւանդում էր շուրջ մէկ տասնեակ առարկաներ: Նրա նախաձեռնութեամբ մեծապէս բարելաւուեցին ամրիոնի ուսումնական ծրագրերը: Ուսանողներն կը յիշեն նրան որպէս փայլուն դասախօսի, անբասիր եւ սկզբունքային մանկավարժի, հոգատար եւ պահանջկոտ գիտական ղեկավարի:

Անժամանակ մահը անկատար թողեց բազմաթիւ մտայղացումներ, անաւարտ՝ տասնեակ նախագծեր: Սակայն Յակոբեանի հարուստ եւ բազմաբովանդակ գիտական ժառանգութիւնը արդէն իսկ զգալի աւանդ է ժամանակակից հայագիտութեան մէջ:

Հալկ Յակոբեանը մահացաւ 10 Փետրուարի 2019ին, Երեւանում:

ԵՊՀ Պատմութեան Հիմնարկ.
Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ամբիոն

ԱՆԱՀԻՏ ԼԵՒՈՆԻ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ
(1929 -2019)

Ննաձ է Փարիզ, 26 Օգոստոս 1929ին: Հայ ազատագրական պայքարի երեւելի դեմքերէն, օս մանեան խորհրդարանի անդամ Գեղամ Տէր Կարապետեանի թոռնուհին էր, եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան նախարար, ազատագրական պայքարի երեւելի գործիչ Ռուբէն Տէր Մինասեանի հարսը:

Սորպոնի Համալսարանին մէջ ուսանած է պատմութիւն եւ աշխարհագրութիւն, ապա 1969էն՝ անցած դասաւանդութեան. աւելի քան քսան տարի դասաւանդած է École des Hautes Etudes en Sciences Socialesի մէջ:

2015ին, քառասնամեայ իր մանկավարժական տարեդարձին առթիւ, ան արժանացաւ Ֆրանսական Պատուոյ Լեգէոնի Ասպետի տիտղոսին:

Ֆրանսայի մէջ առաջիններէն էր որ Հայաստանն ու ժամանակակից հայոց պատմութիւնը բերաւ համալսարանական բարձրագոյն հարթակ եւ ընդհանրական օսմանեան պատմութեան համարկեց փոքրամասնութեանց եւ հայկական պատմութեան անշքացուած երեսակը: Օժտուած էր առարկայական եւ քննական հեռաւորութիւն պահելու իր քննարկած նիւթերէն, միաժամանակ ունէր խորաթափանց միտք, տեսողութիւն եւ կարողութիւն՝ բաղդատականներու:

Մասնաւորապէս հետաքրքրուած էր հայոց քաղաքական, ընկերային եւ մշակութային պատմութեամբ եւ անոնց յեղափոխական եւ շարժումներով, գաղափարախօսութիւններով, ինչպէս նաեւ ռուսական, օսմանեան եւ պարսկական կայսրութեանց յարաբերութիւններով եւ թէ ինչպէս այս կայսրութիւնները ազդեցին մէկ կողմէն հայ ազատագրական գործընթացին եւ անկախացման ու միւս կողմէն՝ սփիւռքացումին: Տէր Մինասեան խորացած է նաեւ սփիւռքացուած հայութեան՝ Խորհրդային Հայաստանի հետ փոխյարաբերութեան ուսումնասիրութեան:

Աշխատակցած է բազմաթիւ գիտական հատորներու՝ *Histoire des Arméniens* (1982, 1986, 2006), *Le Paris des Étrangers* (1989), *Smyrne, la Ville Oubliée*, (2006), *Arméniens et Grecs en Diaspora, Approches Comparatives* (2007), *Arménie, une Passion Française. Le Mouvement Arménophile en France* (2007), *Le Dictionnaire Universel des Créatrices* (2013): Համահեղինակ է *Nos Terres d'Enfance. L'Arménie des Souvenirs* երկին (2010), հրատարակութեան պատրաստած է *Les Noces Noires de Gulizar*՝ Օսմանեան Կայսրութեան մայրամուտին վերաբերող Արմէնուհի Գեւոնեանի ընտանեկան պատմութիւնը (1993), *Le Kemp, une Enfance Intra-muros*՝ Վիեննա աքսորեալ հայերու գաղթակայաններուն նուիրուած Ժան Այանեանի երկը (2001), *Il Venait de la Ville Noire. Souvenirs d'un Arménien du Caucase*՝ 1905ի եւ 1917ի ռուսական յեղափոխութեանց, երկու աշխարհամարտերու առնչուած, Ռումանիա եւ Կուլակ աքսորուած Նիքիթա Տասթաքեանի ինքնակենսագրական երկը (1998): Աշխատակցած է *Հայկազեան Հայագիտական Հանդէսին* (Հտր. ԺԵ. եւ ԻԹ, 1995, 2009):

Իր բազմաթիւ երկասիրութիւններէն առաւել շահեկան են *Nation et Religion* (1981), *La Question Arménienne* (1983), *Nationalism and Socialism in the Armenian Revolutionary Movement* (1887-1912) (1984); *La République d'Arménie (1918-1920)* (1989, 2006), *Histoires Croisées: Diaspora, Arménie, Transcaucasie* (1997) եւ *L'échiquier Arménien entre Guerres et Révolutions 1878-1920* (2015):

Տէր Մինասեան փնտռուած գիտնական-զեկուցող մըն էր հանրային հաղորդամիջոցներու կողմէ՝ Միջին Արեւելքի քրիստոնէութեան, փոքրամասնութեանց, անոնց մշակոյթին եւ միջազգային մրցակցութեանց նիւթերով: Մասնակցած Սփիւռքի մշակութային եւ մտաւորական կեանքի քննարկումներու: Ան նաեւ մնայուն ծառայութեան մէջ էր իր հայկական համայնքին: Ֆրանսահայ այն քիչ անհատականութիւններէն էր, որոնք հայկական պատմագիտական վկայութիւն մը կը ներկայացնէին Ֆրանսայի մէջ: Իր մեկնումով մեզմէ կը բաժնուի Սփիւռքի վերջին եօթ տասնամեակներու ականատես գիտնական վկան:

Մահացաւ 10 Փետրուար 2019ին, Փարիզ:

<<<

ԿԻՄ ՆԱՈՒՄԻ ԲԱԿՇԻ
(1931–2019)

Ռուս գրող, կինօբեմագրող, հայագէտ Կիմ Բակշին ծնուել է 1931ի Մարտի 1ին, Մոսկուայում, ազգութեամբ կարաիմ (թիւրքալեզու փոքր ազգութիւն) ընտանիքում: Հայագիտութեամբ է զբաղւում 1964ից: Հայաստանի, նրա միջնադարեան մշակոյթի մասին վեց գրքի հեղինակ է.- *Орел и Меч* (Արծիւ եւ սուր, 1970), *Судьба и Камень* (Ճակատագիր եւ քար, 1983), *Воскрешение Святого Лазаря* (Սուրբ Ղազարի յարութիւնը, 1960), *Из Монастыря - О Любви* (Մենաստանից՝ սիրոյ մասին, 2000), *Наш Мир Подобен Колесу* (Մեր աշխարհը նման է անիւի, 2003), *Замороженное Время* (Սառած ժամանակը, 2006) եւ *Под Синевой Небес* (Կապոյտ երկնքի տակ, 2007):

Նրա բեմագրով նկարահանուած է Յովիկ Հախվերդեանի «Մատենադարան» հեռուստատեսային բազմամաս վաւերագրական շարժանկարը (համահեղինակ՝ Յովիկ Հախվերդեան):

Մահացել է 2019ի Մարտի 5ին, Մոսկուայում:

ՀՀՀ

ՍՊԻՐՈՍ ՎՐԷՈՆԻՍ ԿՐՏՍԵՐ
(1928–2019)

Լոս Անջելըսի Կալիֆորնիա Համալսարանի ականաւոր բիւզանդագէտ, Սպիրոս Վրէոնիս Կրտսերը ծնուել է Մեմֆիսում (Թենըսի) 1928ին եւ չնայած յոյները քիչ էին այդ քաղաքում, նա մեծ հետաքրքրութիւն է ցուցաբերել հին յունական պատմութեան նկատմամբ եւ 1956ին Հարվըրդ Համալսարանում դոկտորական է պաշտպանել եւ ապա անցել դասախօսական աշխատանքի: Այնտեղ ծանօթացել է Դոկտ. Աւետիս Սանճեանի (1921–1995) եւ Դոկտ. Ստենֆըրդ Շոուի (1930–2006) հետ: Յետագայում եռեակը սկսել է դասաւանդել Լոս Անջելըսի Կալիֆորնիա Համալսարանում, որտեղ աշխուժ գործունէութիւն է ծաւալել հայագիտական ուսումնասիրութիւնների ամբիոն հիմնելու աշխատանքներում եւ մասնակցել հայոց պատմութեան լուսաբանմանն ուղղուած բազում միջոցառումների: 1972-75՝ եղել է Գանբաումի անուան Մերձաւոր Արեւելքի Ուսումնասիրութիւնների Կենտրոնի տնօրէնը, 1979-82՝ Աթէնքի Համալսարանի միջնադարեան եւ արդի պատմութեան ամբիոնի վարիչը, 1988-93՝ Նիւ Եորքի Համալսարանի Ալեքսանդր Օնասիսի անուան Հելլենիստական Ուսումնասիրութիւնների Կենտրոնի առաջին տնօրէնը:

Ուշագրաւ է իր *The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century* (1971) հատորը:

Վրէժնիսը յամառօրէն պայքարել է Հայոց Ցեղասպանութեան հարցում պատմութեան կեղծարարների եւ յատկապէս թուրք ժխտողականութեան դէմ: Հրատարակել է *The Turkish State and History: Clio Meets the Grey Wolf* (1993), *The Mechanism of Catastrophe: The Turkish Pogrom of September 6–7, 1955, and the Destruction of the Greek Community of Istanbul* (2005) հատորները, որոնցում անդրադարձ կայ նաեւ հայերի եւ հրեաների կոտորածներին:

Մահացել է 2019ի Մարտի 11ին, Սակրամենտոյում (Քալիֆորնիա):

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ, artsvi1971@mail.ru



ՎԱՐԴԱՆ ՌՈՒԲԷՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1929--2019)

Պատմաբան, Սիրիայի Աշխարհագրական Ընկերութեան թղթակից անդամ (1989), Հալէպի Համալսարանի ԳԱ պատուոյ անդամ Վարդան (Վլադիմիր) Գրիգորեանը ծնուել է 1929ի Յունուարի 26ին, Դիլիջանում: 1956-68՝ աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Պատմութեան Հիմնարկում, 1959ից՝ Մատենադարանում, որտեղ 1960-68՝ եղել է գիտքարտուղար, 1979-97՝ ձեռագրերի գիտական պահպանման բաժնի վարիչ, 1997ից՝ փոխտնօրէն: 1977ին պաշտպանել է դոկտորական՝ «Պոդոլիէի Հայ Գաղթավայրերի Պատմութիւնը» նիւթով: Աշխատութիւնները վերաբերում են Երեւանի խանութեան, Ռուսաստանի, Ուկրայնայի, Լեհաստանի հայ գաղթավայրերի պատմութեանը, ինչպէս նաեւ ազգային-ազատագրական շարժմանն ու Ադրբեջանում բնակուող հայերի հիմնահարցերին: Կազմակերպել է տարբեր վայրերից հայկական ձեռագրերի, հնատիպ գրքերի ու փաստաթղթերի հաւաքման եւ Մատենադարան փոխադրման գործը: Մեծ աշխատանք է կատարել արխիւային փաստաթղթերի, մասնաւորապէս, կաթողիկոսական դիւանի վաւերագրերի գիտական մշակման, ուսումնասիրման ու հրապարակման գործում, լոյս ընծայել *Ղուկաս Կարնեցի. Նամակներ, Կոնդակներ Համառօտագրութիւններ, Բնագրեր* (*Հտր. Ա. (1780-1785)*, 1984, *Բ. (1786-1792)*՝ 2003) երկերը: Լոյս են տեսել Գրիգորեանի նաեւ *Կամենէց-Պոդոլսկ Քաղաքի Հայկական Դատարանի Արձանագրութիւնները* (XVI դ.) (1963), *Հայութեանը Նուիրուած Կեանք. Էսփոնուհի Հեդուիգ Բիւլի Հայանպաստ Գործունէութիւնը Կիլիկիայում եւ Սիրիայում (1911-1951 թթ.)* (1996), *Արցախի Պաշտպանութեան Դիրքերում* (1997), *История Армянских Колоний Украины и Польши (Армяне в Подолии)* (Ուկրայնայի եւ Լեհաստանի հայերի պատմութիւնը, հայերը Պոդոլիէում, 2005), *Աւետիս Սհարոնեան. Հայոց Ազատասիրութեան եւ Տառապանքի Տարեգիրը* (2014) աշխատութիւնները: Նրա խմբագրութեամբ են լոյս տեսել նաեւ Արշակ Ալպոյաճեանի *Իրաքի Հայերը*, Արշալոյս Աստուածատրեանի *Սարդարապատի Պատմաշինութիւնը*, եւ *Շաւարշ Բասենցեան (Խմբապետ Շաւարշ). Արկածալի Կեանք (Յուշեր, Օրագրեր, Յօդուածներ, Վաւերագրեր)* աշխատութիւնները:

2007ին Ուկրայնայի նախագահի հրամանագրով, Վարդան Գրիգորեանին շնորհուել է «Վաստակի Համար» Գ. կարգի շքանշան:

Մահացել է 2019ի Մարտի 28ին, Երեւանում:

<<<

ԼԵՒՈՆ ՃԵՐՄԱԿԵԱՆ
(1937--2019)

Լեւոն Ճերմակեան (Աքօլլանեան) ծնած է Պէյրութ, 4 Նոյեմբեր 1937ին:

1965ին, Սէն Ժոզէֆ Համալսարանէն կը վկայուի քաղաքական գիտութիւններու մասնագիտութեամբ: Միաժամանակ, նոյն համալսարանին մէջ երեք տարի, կը հետեւի Հայր Յովհաննէս Մսըրլեանի հայագիտական դասընթացքներուն: Լոնտոնի մէջ կը յաճախէ Trinity College, եւ 1970ին կը ստանայ անգլերէն լեզուի վկայական: 1988ին, Քասլիքի Ս. Հոգի Համալսարանէն կը տիրանայ իմաստասիրական ուսումներու խորացուած հետազօտութիւններու վկայականին, պաշտպանելով «Հայ Համայնքի Ազգային Գիտակցութիւնը Լիբանանի Մէջ» նիւթը:

Եղած է ուսուցիչ, ծաւալած է ընկերային-հասարակական գործունէութիւն, 1967-95՝ պաշտօնավարած է Գարակէօզեան Հաստատութեան մէջ, իբրեւ փոխտնօրէն, 1982-2000՝ Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի անդամ: 1980ին Պուրճ Համուտի մէջ հիմնած է «Ոսկեդար» գրախանութը եւ իբրեւ հրատարակչատուն լոյսին բերած է դասական հայ հեղինակներու ընտրանիներ: Աշխատակցած է *Ազդակ*ին, կազմած եւ հրատարակած է *Ազգային Յեղափոխական եւ Ժողովրդային Երգարան*ը, Սիլվա Պեզիրճեան-Ճերմակեանի *Արդի Խոհանոց. Անուշեղէններ* (1986) ու *Արդի Խոհանոց-Ճաշեր* (1990) հատորները: Հեղինակ է եկու հատորներու՝ «*Ֆրանսերէն-Հայերէն Հնչիւններով Բառարան* (2009), *Հոգեվերլուծական Երազահան* (1990): Կազմած եւ խմբագրած է *Կեսարիա, Նոր Կեսարիա եւ Ժառանգորդներ. Արծագանգ 2* (2015) հատորը:

Կիսաւարտ ձգելով "The Saga of My Family" եւ «Էր, Հայոց Արքան» երկերը, կ'աւանդէ հոգին 18 Ապրիլ 2019ին:

ԱՐՄԻՆԷ ՃԵՐՄԱԿԵԱՆ, armine.sarraf@haigazian.edu.lb

ԱՐԱ ՀՐԱՉԵԱՅԻ ԴԵՄԻՐԽԱՆԵԱՆ
(1945--2019)

ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկի կերպարուեստի բաժնի աւագ աշխատակից, պատմական գիտութիւնների թեկնածու Արա Դեմիրխանեանը ծնուել է 1945 Յուլիսի 16ին Երեւանում: 1972ին աւարտել է Աբխազիայի Պետական Համալսարանի (Սուխում) օտար լեզուների ֆակուլտէտը (գերմաներէն լեզու): 1976ին տեղափոխուել է Հայաստան եւ աշխատանքի անցել Հայաստանի Ազգագրութեան Պետական Թանգարանում (Սարդարապատ)՝ որպէս աւագ գիտաշխատող: 1978-81՝ աշխատել է Հայաստանի Պատմութեան Թանգարանում: 1980ին աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Արուեստի Հիմնարկի կերպարուեստի բաժնում:

Նրա գիտական հետաքրքրութիւնների ու մշակումների կենտրոնում էին նախնադարեան արուեստի տեսական հարցերը: Առանձինն եւ համահեղինակութեամբ հրատարակել է միքանի տասնեակ յօդուածներ, կազմակերպել միջազգա-

յին գիտաժողով: 1981ին Երեւանի հիւսիս-արեւելքում՝ Աւան գիւղի տարածքում, պեղել է արժէքաւոր հնագիտական յուշարձան: Նրա նախաձեռնութեամբ Երեւանի քաղաքապետարանին կից հիմնադրուեց Պատմահնագիտական Թանգարանը, որի անփոփոխ տնօրէնն էր: 2010ին լոյս տեսաւ նրա *Северо-Восток Еревана в Эпоху Арташесидов. Фрагменты Материальной и Духовной Культуры по Данным Античного Поселения в Аван-Аринджe* (Երեւան քաղաքի հիւսիս-արեւելքը Արտաշէսեանների դարաշրջանում. նիւթական եւ հոգեւոր մշակոյթը ըստ Աւան-Առինջի անտիկ բնակավայրի տուեալների (Ք.ա. Բ. դ.–Ք.ե. Ա. դ. սկիզբ)) պատկերազարդ ծաւալուն աշխատութիւնը, որում ամփոփուած են երկար տարիների ընթացքում Աւան-Առինջում հեղինակի կատարած պեղումների արդիւնքները:

Դեմիրխանեանը զբաղուել է նաեւ հասարակական գործունէութեամբ, եղել «Հայաստան-Ռումինիա» ընկերակցութեան անդամ: Հայ-ռումինական մշակութային կապերի ամրապնդման գործում ներդրումի համար 2007ին պարգեւատրուել է Ռումինիայի Հանրապետութեան «Մշակոյթի Ասպարէզում Վաստակի Համար» շքանշանով: ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկի հիմնադրման 50ամեակի առթիւ 2008ին պարգեւատրուել է ՀՀ մշակոյթի նախարարութեան պատուոգրով:

Արա Դեմիրխանեանը մահացաւ 2019 Մայիսի 10ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկ

ՎԱՉԷ ՍԱՖԱՐԵԱՆ
(1930--2019)

Բանասէր, գրականագէտ Վաչէ Սաֆարեանը ծնուել է 1930 Փետրուարի 7ին, Վերին Արտաշատ գիւղում: 1968ին ստացել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի գիտաստիճան: 1958-89՝ գիտաշխատող ՀՀ ԳԱ Մ. Աբեղեանի անուան Գրականութեան Հիմնարկում, 1993-97՝ աւագ գիտաշխատող ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկում: 1979ից Հայաստանի Գրողների Միութեան անդամ է: Հեղինակել է *Մկրտիչ Պեշիկթաշլեան. Կեանքը եւ Ստեղծագործութիւնը* (1972), *Նայիրի Զարեան. Կեանքը եւ Ստեղծագործութիւնը* (1980), *Հայ Սովետական Պոէզիայի Պատմութիւն. 1920-70 թթ.* (1987), *Ազատն Մինասը* (1999, զրոյցներ, յուշեր նկարիչ Մինաս Աւետիսեանի մասին) եւ այլ գրքեր:

Մահացել է 2019ի Մայիսին, Երեւանում:

ՀՀՀ

ՌՈՄԱ ԴԱԼԼԱՔԵԱՆ
(1929--2019)

Լեզուաբան, մանկավարժ, ուսուցիչ, կրթական գործի կազմակերպիչ Ռոմա Դալլաքեանը ծնուել է 1929 Նոյեմբերի 26ին Արցախի Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղում: Աւարտել է Ստեփանակերտի Ուսուցչական Հիմնարկը: Մանկավարժական գործունէութիւն է ծաւալել Արցախի Թալիշ, Հասանղայա, Ղահրիլար գիւղերում, Երեւանի Սպանդարեանի անուան միջնակարգ դպրոցում:



1958-60՝ *Սովետական Դպրոց* թերթի, 1961-63՝ *Սովետական Մանկավարժ* ամսագրի պատասխանատու քարտուղար, 1963-70՝ գլխաւոր խմբագիր: Իր անմիջական ջանքերով 1966ին ստեղծուում եւ հրատարակւում են երկու յաւելուած՝ *Հայոց Լեզուն եւ Գրականութիւնը Դպրոցում, Մաթեմատիկան եւ Ֆիզիկան Դպրոցում*: 1970-75՝ Երեւանի քաղխորհրդի գործկոմի ժողկրթութեան բաժնի վարիչ, 1975-78՝ Մանկավարժական Գիտութիւնների Գիտահետազօտական Հիմնարկի տնօրէնի գիտական տեղակալ, ապա նաեւ տնօրէնի պաշտօնակատար, 1978-88՝ հանրապետութեան բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատութիւնների վարչութեան պետ, 1988-92՝ ժողկրթութեան նախարարութեան հայոց եւ ռուսաց լեզուների բաժնի վարիչ: 1991ից՝ դասախօս Երեւանի Պետական, «Հրաչեայ Աճառեան», Գաւառի համալսարաններում, Երեւանի Դատական Փորձագիտութեան եւ Հոգեբանութեան Հիմնարկում, Ռուսաստանի Դաշնութեան Ձեռներէցութեան Ակադեմիայի Երեւանի մասնաճիւղում:

Հեղինակ է բազում յօդուածների եւ գրքերի, որոնցից են.- *Գրական Երկի Լեզուի ու Ոճի Ուսուցումը* (1971), 6րդ (յետագայում նաեւ 7րդ) դասարանի *Գրականութիւն* դպրոցական դասագիրքը (համահեղինակներ՝ Ա. Շարուրեան, Պ. Խաչատրեան), որ 1971-92՝ շրջանառութեան մէջ էր հայկական դպրոցներում եւ ամեն տարի վերահրատարակւում էր բարեփոխումներով, *Թելադրութեան Նիւթերի Ժողովածու* (1991, երկու գրքով, համահեղինակութեամբ), *Հայոց Լեզուի Ուսուցման Հիմնահարցեր* (2001), *Խօսքի Մշակոյթ, Նրա Ուսուցումը* (2001), *Բնագրի Լեզուաբանական Վերլուծութիւն* (2002), *Նախադասութեան եւ Խօսքի Վերլուծութիւն* (2003), *«Աբու-Լալա-Մահարի» Պոէմի Լեզուաբանական Վերլուծութիւն*: Հեղինակ է նաեւ *Միջերկրականի Ափերով* ճամփորդական նոթերի (1987) եւ *Մրասեւեռումներ* (1997) խտացուած մտքերի եւ ասոյթների ժողովածուի:

1966ին Հայաստանի գերագոյն խորհրդի նախագահութիւնը նրան շնորհել է հանրապետութեան վաստակաւոր ուսուցչի կոչում: 1971ին պարգեւատրուել է Աշխատանքային Կարմիր Դրօշ շքանշանով, մեդալներով, պատուոգրերով:

2009ին լոյս տեսաւ *Դալլաքեան Ռ.Հ. Կենսամատենագրութիւն* գրքոյկը:

Մահացել է 2019ի Մայիսի 31ին:

ՀՀՀ

ԿԱՐԻՆԷ ԱՇՈՒՂԵԱՆ
(1962–2019)

Հրապարակախօս, բանաստեղծուհի, թարգմանչուհի Կարինէ Աշուղեանը ծնուել է 1962 Մարտի 20ին, Արարատի մարզի Տափերական գիւղում: Աւարտել է ԵՊՀ փիլիսոփայութեան եւ ընկերաբանութեան ֆակուլտէտը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայութեան եւ իրաւունքի թեկնածուականը, աշխատել նոյն հիմ-

նարկում որպէս հայ փիլիսոփայութեան պատմութեան բաժնի կրտսեր գիտաշխատող: Խմբագրել է *Արարատ* մարզային թերթը (1998-2008), աշխատել է ՀՀ ՊՆ *Զինուոր* պաշտօնաթերթում եւ որպէս լրագրող՝ տարբեր լրատուամիջոցներում: Գիտական եւ հրապարակախօսական բազմաթիւ յօդուածների հեղինակ է: Խմբագրել է «Գրական Տապան» միջազգային գրական փառատօնի ամենամեայ միքանի ժողովածուներ, տարբեր հեղինակների գրքերի գեղարուեստական խմբագիրն է:

Երեւանում առանձին հատորով լոյս են տեսել Աշուղեանի *Բանաստեղծութիւններ* (1995), *Առաքելութիւն (Հրապարակախօսութիւն, «Աւետաբերները» Ժողովածու* (1997), *Համայիլներ (Բանաստեղծութիւններ)* (2006), *Փորձեր* (2007), *Մի Ճամպրուկ Ճակատագիր* (արձակ, 2014), *Երկրի Կանաչ Ժամից Եօթ Օր Առաջ* (գիտաֆանտաստիկ վիպակ, «Եօթ Գոյն» ժողովածու) (2015), գեղարուեստական գրքերը: Ռուսերէնից թարգմանել եւ առանձին հատորներով հրատարակել է Մարինա Յեւտաեւայի, Աննա Ախմատովայի (2003), Նաթելլա Լալաբէկեանի (2011) բանաստեղծական ժողովածուները եւ Վահան Յովհաննիսեանի *Մանդելիոն* վէպը (2014):

2015ին լոյս է տեսել Կարինէ Աշուղեանի *Փիլիսոփայական եւ Գեղարուեստական Միտքը 13-14-րդ Դարերի Քերականութեան Հայ Մեկնութիւններում* մենագրութիւնը (2015):

Մահացել է 2019ի Յունիսի 22ին, Երեւանում:

ՀՀՀ

ԱՐՄԱՆ ՋՈՆԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
(1956--2019)

Յայտնի դիւանագէտ, պատմաբան, պրոֆեսոր Արման Կիրակոսեանը ծնուել է 1956ին Երեւանում: 1980ին պաշտպանել է թեկնածուական Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Հիմնարկի Պատմա-Աշխարհագրական Ֆակուլտէտում, մասնագիտանալով Հայկական Հարցի պատմութեան ասպարէզում:

Իր աշխատանքային գործունէութիւնը նա ծաւալել է տարբեր ոլորտներում: 1980-86ին՝ ՀԽՍՀ ԳԱԱ Հասարակական Գիտութիւնների Գիտական Ինֆորմացիայի Կենտրոն, 1986-90՝ ՀԽՍՀ Կենտրոնական Կոմիտէում, 1990-91՝ ՀԽՍՀ ԳԱԱ Սփիւռքահայ Համայնքների Պատմութեան եւ Մշակոյթի Բաժին, իբրեւ գիտական խմբի ղեկավար:

Հայաստանի Հանրապետութեան հռչակումից յետոյ, նա պատմագիտական գործունէութեան հետ մէկտեղ լայնածաւալ աշխատանք է իրականացրել դիւանագիտական քառուղիներում: 1991ին աշխատանքի է տեղափոխուել ՀՀ արտաքին գործերի նախարարութիւն, ուր 1991-94 եւ 2005-11՝ զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտօնը, 1992-93՝ լինելով նաեւ արտաքին գործերի նախարարի պաշտօնակատար: 1994-99՝ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Յունաստանում, համատեղութեան կարգով նաեւ Կիպրոսում, Սլովենիայում, Խորվաթիայում, Ալբանիայում եւ Հարաւսլավիայի Դաշնային Հանրապետութիւնում, 1999-2005՝ ԱՄՆում, 2011-18՝ Աւստրիայում (միաժամանակ՝ Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւնում ՀՀ առաքելութեան ղեկավար,

Վիեննայում՝ ՄԱԿի գրասենեակում եւ այլ միջազգային կազմակերպութիւններում ՀՀ մշտական ներկայացուցիչ), 2016-19՝ համատեղութեան կարգով Խորվաթիայում, 2018ից մինչեւ մահը՝ Միացեալ Թագաւորութիւնում:

Կիրակոսեանը խոր հետք է թողել Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում: Հեղինակ է հայերէն, ռուսերէն եւ անգլերէն լոյս տեսած գիտական մենագրութիւնների, փաստաթղթերի ժողովածուների, որոնք գիտական շրջանառութեան մէջ են դրել նոր փաստեր, նպաստել պատմական իրականութեան ճշմարտացի լուսաբանմանը:

Միջազգային դիւանագիտութեան պատմութեան ուսումնասիրութեան ոլորտում լուրջ ներդրում են նրա *Великобритания и Армянский Вопрос (90-е годы XIX века* (Մեծ Բրիտանիան եւ Հայկական Հարցը (ԺԹ. դարի 90ականներ), 1990), *Բրիտանական Դիւանագիտութիւնը եւ Արեւմտահայութեան Խնդիրը (ԺԹ. Դարի 30-ական ԹԹ.-1914 Թ.)*, 1999, անգլերէն՝ 2003) եւ *ԱՄՆի Արտաքին Քաղաքականութիւնը եւ Արեւմտահայութիւնը (ԺԹ. դար - 1914 թ.)*, 2014) մենագրութիւնները: Նա մանրամասն լուսաբանում է Հայկական Հարցի նկատմամբ բրիտանական եւ ամերիկեան կառավարութիւնների քաղաքականութիւնն ու հասարակական կազմակերպութիւնների դիրքորոշումը եւ ելնելով Օսմանեան Կայսրութեան հետ Բրիտանիայի ու ԱՄՆի յարաբերութիւնների ենթահողից՝ նոր լոյս է սփռում արեւմտահայութեան կարգավիճակի վրայ: Անհերքելի վաւերագրերի ուսումնասիրութիւնից բխող ընդհանրացումների եւ եզրակացութիւնների հիման վրայ բացայայտում է նաեւ բրիտանական ու ամերիկեան վարչակարգերի մեծապետական եւ ծաւալապաշտ քաղաքականութիւնը թէ՛ արեւմտահայութեան եւ թէ՛ Օսմանեան Կայսրութեան հանդէպ:

Կիրակոսեանի *Ակնարկներ Հայկական Հարցի եւ Եղեռնի Միջազգային Ճանաչման Պատմութեան* (2006), *Հայկական Հարցը եւ Հայերի Ցեղասպանութիւնը, Պատմահրաւական Եռալեզու Տեղեկանք* (2007), *Очерки Дипломатической Истории и Историографии Армянского Вопроса* (Ուրուագծեր Հայկական Հարցի դիւանագիտական պատմութեան եւ պատմագրութեան, 2016) յօդուածների ժողովածուներում ընդգրկուած են Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան նրա հետազօտութիւնների արդիւնքները:

Կիրակոսեանը գնահատելի ներդրում ունի նաեւ համիդեան կոտորածների ուսումնասիրութեան ասպարէզում: ԱՄՆում նա տպագրել է փաստաթղթերի երկու ծաւալուն եւ հետաքրքիր ժողովածուներ՝ *The Armenian Massacres, 1894-1896: U.S. Media Testimony* (2004) եւ *The Armenian Massacres, 1894-1896: British Media Testimony* (2008), որոնք ամփոփում են 1894-96ին ամերիկեան եւ անգլիական մամուլում տպագրուած յօդուածները՝ այդ տարիներին Օսմանեան Կայսրութիւնում տեղի ունեցած հայկական կոտորածների մասին: Սոյն հրատարակութիւնները մեծապէս նպաստել են այդ իրադարձութիւնների պատմութեան բազմակողմանի ուսումնասիրութեանը, առաւել եւս եթէ նկատի ունենանք, որ ամերիկեան ու անգլիական մամուլում այդ կոտորածների մասին տպագրուած նիւթերը Հայոց Ցեղասպանութեան մասնագէտ պատմաբանները սակաւ էին օգտագործել: Բաւականին արժէքաւոր է նաեւ նրա *The Armenian Genocide in Contemporary American Encyclopedias* (2015) ժողովածուն, որը Հայոց Ցեղասպանութեան՝ իբրեւ անհերքելի իրադարձութեան հաւաստման եւ ընդունման մասին չափազանց անհրաժեշտ հետազօտական աշխատանք է:

Կիրակոսեանը չի սահմանափակուել միայն Հայոց Ցեղասպանութեան տարիներին տեղի ունեցած դժնդակ անցքերը ամփոփող փաստաթղթերի ժողովածունե-

րի լոյս ընծայմամբ: Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ նրա հրատարակած փաստաթղթերի մէկ այլ՝ *Հայաստանը եւ Խորհրդա-Թուրքական Յարաբերութիւնները 1945-1946 ԹԹ. Դիւանագիտական Փաստաթղթերում* (2010) ժողովածուն, որին նա կցել է ընդարձակ գիտական առաջաբան: Նոյն ժողովածուն նա հրատարակել է նաեւ ռուսերէն՝ *Армения и Советско-Турецкие Отношения в Дипломатических Документах 1945-1946 гг.* (2010):

Իր հօր՝ յայտնի պատմաբան, դիւանագէտ Ջոն Կիրակոսեանի մահից յետոյ տպագրել է հօր յօդուածները, գրախօսութիւնները, նամակները, հարցազրոյցները, նաեւ՝ անտիպ գործեր ամփոփող երկու ժողովածու՝ *Անկախ Պետականութեան եւ Քաղաքական Հայագիտութեան Ակունքներում* (2009) եւ *Ընտրանի* (2014):

Գիտական եւ դիւանագիտական գործունէութիւնից բացի Կիրակոսեանը նաեւ դասաւանդել է ԵՊՀի Միջազգային Յարաբերութիւնների Ֆակուլտէտում:

Դիւանագիտական, պատմագիտական եւ մանկավարժական ասպարէզներում ծաւալած բեղմնաւոր գործունէութեան համար նա պարգեւատրուել է ՀՀ ԱԳՆ (2001), ՀՀ պաշտպանութեան նախարարութեան «Գարեգին Նժդեհ» (2008) եւ «Ռազմական Համագործակցութեան Համար» (2016), ինչպէս նաեւ «Ջոն Կիրակոսեան» (2009), «Մխիթար Գօշ» (2011), «Հայրենիքին Մատուցած Ծառայութիւնների Համար» Ա. աստիճանի (2017) մեդալներով, Աթէնք քաղաքի (1999) եւ Երեւանի Պետական Համալսարանի (2006) ոսկէ մեդալներով, իսկ յետմահու նրան շնորհուել է «Պատուոյ Նշան» շքանշանը (2019):

Նա համեստ, բարեացակամ, բարեկամների եւ հարազատների նկատմամբ ջերմ ու հոգատար, գործընկերների հանդէպ բարեհաճ վերաբերմունք դրսեւորող նրանց օգնութեան ձեռք մեկնող անձնաւորութիւն էր:

Արման Կիրակոսեանը մահացաւ 6 Յուլիս 2019ին, Լոնդոնում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ, varuzhan.poghosyan@mail.ru
ԱՐՄԷՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐԵԱՆ, vanarmin@mail.ru

ՄԱՐԹԻՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
(1953--2019)

Հնէաբան, էթնօգէտ, բանասէր եւ ընկերաբան, Մարթին Յովհաննէսեան ծնած է 2 Մայիս 1953ին, Ֆրանսա:

1990ին պաշտպանած է դոկտորականը՝ l'Ecole des Hautes Etudes en Sciences Sociales (EHESS)ի մէջ՝ «L'élaboration d'un sens Communautaire» նիւթով, ապա լծուած գիտական, վարչական եւ մանկավարժական աշխատանքի՝ զանազան համալսարաններու, գիտական ընկերակցութիւններու եւ կեդրոններու մէջ: 1998էն կը դասաւանդէր INALCOի (Institut National des Langues et des Civilisations Orientales) մէջ, անդամ էր Société des Études Arméniennesի, անոր հիմնումէն՝ 1992էն իվեր:

Ան իր գիտական կեանքը նուիրեց հայ գաղթականութեան ընկերահոգեբանական երեսակներու նոր եւ նորագոյն խնդիրներու բացայայտման եւ արդիւնքը համարկեց համաշխարհային փորձին: Անդուլ աշխատանքով ան դարձած էր միջազ-

գային գիտական լայն շրջանակներու մէջ ուշագրաւ հեղինակութիւն մը՝ հաւաքական ինքնութեան (ազգային, մշակութային, կրօնական, աշխարհագրական եւն.), թրոմայի յիշողութեան, վկայութեան եւ անոնց սերնդափոխանցման, փոքրամասնութեանց/երեւակայուող համայնքներու եւ ի մասնաւորի Ֆրանսայի հայօճախին առնչութեամբ: Ան առաջիններէն էր որ յետ-ցեղասպանական գիտական բնութագրում տուաւ Ֆրանսայի հայօճախին: Մանկավարժական իր գործունէութեան ընթացքին իր ուսանողները մղելով արձանագրելու իրենց անձնական թէ ընտանեկան փորձառութիւնը՝ ան այդ նիւթերը օգտագործեց իր ուսումնասիրութիւններուն, մանաւանդ՝ *Les Récits de Nos Vies Atteintes* (2013) հատորին մէջ:

Հեղինակ է աւելի քան 60 գիտական ուսումնասիրութիւն-յօդուածներու, որոնք լոյս տեսած են գիտական ժողովածուներու եւ մասնագիտական պարբերաթերթերու մէջ, ինչպէս՝ "Notion de Diaspora: Les Figures du Territoire Perdu" (*Les Défis Migratoires*, 2000), "Logiques Internes, Pratiques Sociales et Communautaires: Une Lecture du Génocide des Arméniens et de son Déni" (*La Mort Dissoute*, 2002), "Fonctions Anthropologiques du Témoignage et de l'Histoire Orale: Traversée des Lieux de l'Exil et Sésappartenance" (*l'Histoire Trouée*, 2004), "Les Constructions de la Mémoire Nationale: Un Texte Hétérogène" (*Appréhender la Nation, Vivre la Diaspora: Regards Arméniens*, 2006), "Identités Narratives: Exil et Sentiment d'Appartenance. Les Retours" (*Arménie: De l'Abîme aux Constructions d'Identité*, 2008), ՝ "Exil et Catastrophe Arménienne: Le Difficile Travail de Deuil" (*Les Diasporas dans le Monde Contemporain*, 2006), "Une Anthropologie des Temporalités" (*Journal des Anthropologues*, 2005:102-103), "Enjeux et Paradoxes de la Patrimonialisation de la Mémoire Collective. Le Centre du Patrimoine Arménien de Valence" (*Revue Drômoise*, 2005:515), "Le Religieux et la Reconnaissance. Formes Symboliques et Politiques au Sein de la Diaspora Arménienne" (*Les Annales de la Recherche Urbaine*, 2004:96), "Récits de Vie et Mémoire(s) de l'Exil: Les Enjeux à l'Œuvre dans l'Histoire Orale" (*Revue du Monde Arménien Moderne et Contemporain*, 2001:6), "Parcours de l'Ethnologie dans le Monde Post-Soviétique" (*Journal des Anthropologues*, 2001:87), "La Diaspora Arménienne et l'Idée Nationale. De l'Exil Commémoré aux Formes Actives de l'Appartenance" (*Cahiers d'Etudes sur la Méditerranée Orientale et le Monde Turco-Iranien*, 2000:30), "La Notion de Diaspora: Usages et Champ Sémantique" (*Journal des Anthropologues*, 1998:72-73): Համախմբագիրն է *Arméniens et Grecs en Diaspora: Approches Comparatives* (2007) հատորին, հեղինակը՝ *Les Arméniens et Leur Territoires* (2004), *Le Lien Communitaire: Trois Générations d'Arménien* (1992, 2007), *Appréhender la Nation. Vivre en Diaspora: Regards Arméniens* (2006) հատորներուն:

Իր գիտական բերքը խոշոր նպաստ մըն է սփիւռքագիտութեան: Իր յօդուածներուն մէկտեղումն ու հրատարակումը (ինչու չէ եւ թարգմանումը հայերէնի)՝ անկասկած պիտի հարստացնէ հայ սփիւռքագիտութեան գրականութիւնը:

Մարթին Յովհաննէսեանը մահացաւ 21 Յուլիս 2019ին, յուղարկաւորուեցաւ Յուլիս 26ին, Փարիզի հայոց Ս. Յովհաննու Մկրտիչ կաթողիկէէն:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ, adakessian@haigazian.edu.lb

ԽԱՉԻԿ (ԽԱՉԱՏՈՒՐ) ՓԻԼԻԿԵԱՆ
(1937--2019)

Երաժիշտ, նկարիչ, բանաստեղծ, հետազօտող մտաւորական եւ համալսարանի դասախօս: Ծնած է Մուսուլ, Իրաք 1937ին: Նկարչական ուսումը ստացած է Հռոմի Համալսարանի, Հռոմի Կերպարուեստի եւ Ֆրանսական ակադեմիաներու մէջ: Իսկ թենորի երաժշտական ուսումը ստացած է Հռոմի St Cecilia եւ Սիէնայի Chigiana ակադեմիաներու մէջ:

1973ին կ'անցնի ԱՄՆ որպէս առաջին լիբանանցի արուեստի Fulbright Scholarը եւ 1975ին կ'աւարտէ դոկտորականը Ինտիանայի Համալսարանէն աւարտածառի նիւթ ունենալով Լէոնարտօ Տա Վինչիի ձայնային եւ երաժշտական աշխատանքները: Ապա կը դառնայ երաժշտագիտութեան եւ ձայնամարզութեան դասախօս Սիջիկընի Wayne State Universityի մէջ, որուն WDET-FM պաշտօնական ռատիոկայանին համար կը հիմնէ մշակութային ծրագրերու շարք մը՝ HARC The Heritage of Armenian Culture:

1984ին՝ Լոնտոնի մէջ կը հրատարակէ (հայերէն/անգլերէն) *Ողբերգուիկ Մարեան Նոթ Աիաբեկոց* պատմաքաղաքական պոէման, իր պատկերազարդումներով: 1985ին Պէյրութի մէջ արաբերէն լոյս կը տեսնէ իր **كورس الموسيقى العشية والموسيقى العربية** ուսումնասիրութիւնը՝ Կոմիտասի եւ արաբական երաժշտութեան վերածնունդին մասին:

1985ին նոյնպէս կ'ամբողջացնէ եւ կը ձայնագրէ իր կոթողային աշխատանքը *15 Դարերու Հայ Երգը* (ուսումնասիրութիւնը՝ անտիպ) որ պատմութիւնն է հայկական երգի զարգացման, Մեսրոպ Մաշտոցէն մինչեւ մեր օրերը: Նոյն տարին՝ Համազգայինի Ճեմարանի 50ամեակին առիթով, Պէյրութի մէջ կու տայ այդ աշխատանքը ընդգրկող երեք յաջորդական համերգներ: 1990ին, Յովհաննէս Այվազովսքիի Ա. Միջազգային Սիմփոզիումին, Թէոտոսիա (Ղրիմ)՝ կը ներկայացնէ, աննախընթաց ուսումնասիրութիւն մը հայ ծովանկարիչին եւ անգլիացի հռչակաւոր Turnerի կապերու մասին

2005ին, Bertrand Russell Peace Foundationը, կը հրատարակէ իր *The Spectre of Genocide as Collateral Damage is Haunting the World* աշխատասիրութիւնը: 2006ին, Հալէպի մէջ լոյս կը տեսնէ իր *Բանաստեղծ Կոմիտասը* հատորիկը: Նոյն տարին, Լոնտոնի մէջ կը հրատարակուի իր կենսագրական ուսումնասիրութիւններու հատորը *UNESCO Laureates: Nazim Hikmet & Aram Khatchaturian*:

Խաչիկ Փիլիկեան տուած է բազմաթիւ դասախօսութիւններ ինչպէս նաեւ անձնական եւ խմբային ցուցահանդէսներ Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի եւ Միջին Արեւելքի մէջ: Ունի կարեւոր աշխատասիրութիւն մը աշխարհահռչակ արուեստագիտուհի եւ բանասէր Զապէլ Պոյաճեանի մասին (անտիպ): Հրատարակած է տասնեակներով յօդուածներ, արուեստի, երաժշտութեան, պատմութեան, գրականութեան եւ ընկերաքաղաքական նիւթերու մասին: Անոնցմէ մէկ մասը նաեւ հրատարակուած են առանձին: Հայրն է լոնտոնաբնակ ջութակահար եւ impresario Վազգէն Փիլիկեանի եւ երէց եղբայրը՝ Յովհաննէս Փիլիկեանի, որուն հրատարակութիւններուն մեծ մասին նկարազարդումները ինք կատարած է:

Մահացաւ Անգլիա, 28 Յուլիս 2019ին:

ՎԻԳԷՆ Ա. ԱՏԴԱՐԵԱՆ,viken.attarian@videotron.ca

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ
(1926--2019)

ՀՀ ԳԱԱ պատուաւոր դոկտոր (1995), ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ (1998) փրոֆեսոր Վահագն Տատրեան ծնած է 26 Մայիս 1926ին, Ստամպուլ:

Ան կը նկատուի գիտական հիմնադիրը Հայոց Ցեղասպանագիտութեան եւ համահիմնադիրը բաղդատական ցեղասպանագիտութեան:

Պերլինի Համալսարանին մէջ ուսողութիւն, Վիեննայի Համալսարանին մէջ փիլիսոփայութիւն եւ Ցիւրիխի Համալսարանին մէջ միջազգային օրէնք ուսանելէ ետք, 1954ին պաշտպանած է դոկտորականը՝ Շիքակոյի Համալսարանին մէջ: 1970-91՝ ընկերաբանութեան դասախօս է Նիւ Եորքի Նահանգային Համալսարանի Ճենըսէօ Քոլէճին մէջ, միաժամանակ գիտաշխատող՝ Հարվըրտի Համալսարանի Միջին Արեւելքի Ուսումնասիրութիւններու եւ Մեսեչուսէցի Արհեստագիտական Հիմնարկին, 1990ականներուն՝ Կակընհայմի Ցեղասպանութեան Ուսումնասիրութիւններու Ծրագրի տնօրէն: 1999ին կը միանայ Զօրեան Հիմնարկի գիտական խորհուրդին, ուր կը պաշտօնավարէ իբրեւ ցեղասպանութեան հետազօտութեան բաժնի տնօրէն եւ կը վերահսկէ հիմնարկին համապատասխան ծրագրերը:

Իր բեղուն գործունէութեան համար արժանացած է բազմաթիւ մրցանակներու՝ ՀՀ Մովսէս Խորենացի (1998), Ռուսաստանի Հայերու Միութեան ոսկէ մեդալ (2002), ՀՀ ԳԱԱ ոսկէ յուշամետալ (2003), Իտալիայի «Ճշմարիտները Հայերու Համար» կոմիտէի Ֆրիտիոֆ Նանսէնի ոսկէ յուշամետալ (2003), Ցեղասպանագէտ Գիտնականներու Միջազգային Ընկերակցութիւն (2005), Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբ Սահակ Սուրբ Մաշտոց (2005), ՀՀ նախագահի կողմէ ոսկէ մետալ (2009), ինչպէս նաեւ Կակընհայմ Հիմնարկութենէն ու Հարվըրտի Համալսարանէն:

Հեղինակ է աւելի քան 100 յօդուածներու եւ 10 գիրքերու, որոնց կարեւորագոյնը կը նկատուի *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (7րդ տպ.՝ 2019): Նշանաւոր են նաեւ իր *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict* (3րդ տպ.՝ 2003), *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification* (1999), *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity* (1996), *Հայկական Ցեղասպանութիւնը Խորհրդարանային եւ Պաւրմագիտական Քննարկումներով* (1995) հատորները: Ունի նաեւ թրքերէնի թարգմանուած երկեր՝ *Ermeni Soykiriminda Kurumsal Roller. Toplu Makaleler 1* (2004), *Türk Kaynaklarinda Ermeni Soykirimi. Toplu Makaleler 2* (2005), *Ulusal ve Ulusarasi Hukuk Sorunu Olarak Jenosid: 1915 Ermeni Olay ve Hukuki Sonuçlar* (1995): Իր ուսումնասիրութիւնները թարգմանուած են աւելի քան տաս լեզուներու (արաբերէն, գերմաներէն, իտալերէն, յունարէն, պուլկարերէն, ռուսերէն, սպաներէն եւն.):

Տատրեանի սկզբնական ուսումնասիրութիւնները կ'առնչուին գրական կերպարներու ընկերաբանական երեսակներու սերտողութեան: Շուտով, սակայն, 1970ականներէն սկսեալ, ան կ'անցնի ցեղասպանութեան ընկերաբանական, իրաւաբա-

նական, բժշկագիտական, հոգեբանական, բաղդատական, տեսաբանական, քաղաքական, ազգայնական, դերակատարներու, զոհերու, բանաւոր վկայութիւններու, փաստաթուղթերու խնդիրներու խորազնին ուսումնասիրութեան: 1980ական ներուն արդէն Տատրեան համաշխարհային հեղինակութիւն էր թէ՛ հայոց եւ թէ՛ բաղդատական ցեղասպանութեան բնագաւառին մէջ, ստորագրելով բազմաթիւ հանրագիտարանային յօդուածներ այս առնչութեամբ:

Փրոֆեսոր Վահագն Տատրեան մահացաւ 2 Օգոստոս 2019ին, Ճենըսէօ:

ՀՀՀ

ՅԱՍՄԻԿ ՍՈՒՐԷՆԻ ԱԲԵՂԵԱՆ
(1937--2019)

Մեծանուն հայագէտ Մանուկ Աբեղեանի թոռ, գրականագէտ Յասմիկ Աբեղեանը ծնուել է 1937ի Սեպտեմբերի 7ին, Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): 1959ից աշխատանքի է անցնում ԳԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Հիմնարկի բնագրագիտութեան բաժնում՝ իր մասնակցութիւնը բերելով Ռափայէլ Պատկանեանի, Դերենիկ Դեմիրճեանի եւ Մանուկ Աբեղեանի երկերի լիակատար ժողովածուների գիտական հրատարակութեանը: 1973ին պաշտպանել է թեկնածուական՝ «Աւետիք Իսահակեանը եւ ժողովրդական էպոսը» նիւթով, որը որպէս մենագրութիւն լոյս է տեսել 1975ին: 1980ականներից նա ամբողջապէս նուիրում է Յովհաննէս Թումանեանի 10 հատորով երկերի լիակատար ժողովածուի կազմման աշխատանքին, որի աւարտից յետոյ մասնակցում է Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան քառահատոր տարեգրութեան կազմմանը:

Բնութիւնը նրան օժտել էր նաեւ դերասանական ձիրքով: 1960ից լինելով Թատերական Գործիչների Միութեան անդամ՝ մօտ երեք տասնամեակ հայկական հեռուստատեսութեան մանկապատանեկան հաղորդումների բաժնում եւ «Հայֆիլմ» ստուդիայում մասնակցել է տարբեր դերերի ձայնագրմանը եւ ֆիլմերի ու մուլտֆիլմերի հայերէն կրկնօրինակմանը, որոնցից յայտնի են յատկապէս «Պինգուին Վինը» (1972) եւ «Ինչպէս Արջուկները Կերակրեցին Կէտին» (1974) բազմանկարները:

2015ին լոյս տեսաւ նրա ստեղծագործական անցած ուղու հանրագումարը եղող *Օրերս Ինձ Հետ Են* յուշագրութիւնը, իսկ 2017ին՝ *Համբուրգեան Մտորումներ*՝ Գերմանիայից ստացուած տպաւորութիւնների գրքոյկը:

Յասմիկ Աբեղեանը մահացել է 2019ի Օգոստոսի 4ին, Երեւանում:

ՀՀՀ

ԳԱԳԻԿ ՍՈՒՐԷՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(1959--2019)

Դոցենտ Գագիկ Յարութիւնեանը ծնուել է 1959 Օգոստոսի 22ին, ՀԽՍՀ Մարտունի քաղաքում: 1991ին պաշտպանել է թեկնածուական՝ «Պապականութիւնը եւ Կիլիկեան Հայաստանը 13րդ Դարի Երկրորդ Կէս-14րդ Դար» նիւթով: 1989ից

աշխատում է Համաշխարհային պատմութեան ամբիոնում, նախ՝ որպէս օգնական, ապա՝ դոցենտ: 2010ից՝ հ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի համաշխարհային պատմութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն էր: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակներն ընդգրկում են պապականութեան, Խաչակրաց Արեւելքի եւ Կիլիկեան Հայաստանի փոխյարաբերութիւնները: Երկու տասնեակից աւելի գիտական յօդուածների հեղինակ է. *Հայոց Պատմութիւն* ակադեմիական բազմահատորեակի նոր հրատարակութեան հեղինակային խմբի անդամ:

Համահեղինակ է Հայ եկեղեցիի, հայոց, միջին դարերու պատմութեան դպրոցական դասագրքերու:

Մահացել է 2019ի Օգոստոսի 14ին, Երեւանում:

ՀՀՀ

ԱԼԼԱ ԵՐՈՒԱՆԴԻ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ
(1937 2019)

Հայկական ծագմամբ ռուս պատմաբան, ազգագրագէտ, հայագէտ, Ռուսաստանի Ընական Գիտութիւններու Ակադեմիայի ակադեմիկոս (2004) Ալլա Տէր Սարգիսեանցը ծնած է 25 Ապրիլի 1937ին, Մոսկուա, շուրեցի հօր եւ պաքունցի մօր ընտանիքի մէջ: 1959էն մինչեւ կեանքի վերջն աշխատած է ԽՍՀՄ ԳԱ Ազգագրութեան Հիմնարկը: 1965էն դաշտային հետազօտութիւններ կատարած է Հայկական ԽՍՀ, Լ՛ԱՀՄ եւ Ռուսաստանի հարաւի հայաբնակ շրջաններ: 1998ին պաշտպանած է դոկտորականը՝ «Հայեր. Պատմութիւն եւ Ազգամշակութային Աւանդոյթներ» նիւթով: Եղած է Ռուսաստանի Հայերի Միութեան եւ Պատմա-տոհմագրական Ընկերութեան անդամ: Գիտական հետաքրքրութիւնները ընդգրկած են ազգագրական հայագիտութիւնը, ծագումը եւ էթնիկ պատմութիւնը, աւանդական եւ ժամանակակից ընտանիքը, կենսակերպի սովորոյթներ եւ ծէսեր, ժամանակակից ազգամշակութային գործընթացներ, Սփիւռքը: Առանձին հատորներով հրատարակած է նաեւ «Ռուսաստանի Հարաւի Հայ Սփիւռքը. Իրավիճակը եւ Հեռանկարները» (1993, համահեղինակ՝ Վ. Յ. Ստուդավերդեան), «Հայերը. Պատմութիւնը եւ էթնոմշակութային Աւանդոյթները» (1998), «Հայ Ժողովուրդի Պատմութիւնը եւ Մշակոյթը Հին Ժամանակներէն Մինչեւ ԺԹ. Դարու Սկիզբը» (2005, 2008), «Լեռնային Ղարաբաղի Հայերը. Պատմութիւնը, Մշակոյթը, Աւանդոյթները» (2015) «Ռուսաստանի եւ Յարակից Երկիրներու Հայերը» (2019) ռուսերէն աշխատութիւններ, նաեւ յօդուածներ՝ գիտական մամուլին եւ ժողովածուներու մէջ:

Ալլա Տէր Սարգիսեանց մահացաւ 2019ի Օգոստոս 16ին, Մոսկուայում:

ՀՀՀ

ՀՐԱՉԻԿ ՂԱՋԱՐԻ ՄԻՐԶՈՅԵԱՆ
(1940--2019)

Փիլիսոփայական գիտութիւնների պրոֆեսոր, ՀՀ Գրողների Միութեան անդամ Հրաչիկ Միրզոյեանը ծնուել է 1940ի Մարտի 13ին, ՀԽՍՀ Նոյեմբերեանի Շրջանի Դաստլու (այժմ՝ Տաւուշի Մարզի Բարեկամաւան) գիւղում:

1984ին պաշտպանել է դոկտորականը, 1987ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում: 1989-2000՝ եղել է ԵՊՀ փիլիսոփայութեան պատմութեան ամբիոնի վարիչ, 2000-09՝ ԵՊՀ Փիլիսոփայութեան, Սոցիոլոգիայի ու Հոգեբանութեան Ֆակուլտէտի դեկան, 1992-2019՝ *Բանբեր Երեւանի Համալսարանի* գիտական հանդէսի գլխաւոր խմբագիր:

Բազմաբեղուն գիտնականի հետաքրքրութիւնների շրջանակը ընդգրկում էր հայ փիլիսոփայութեան ու մշակոյթի պատմութեան, աղբիւրագիտութեան, բնագրագիտութեան եւ գրականութեան պատմութեան ոլորտները: Նրա գիտական աշխատութիւնների շնորհիւ այսօր աւելի ամբողջական եւ խորը պատկերացում ունենք ԺԷ. դարի հայ մշակոյթի, յատկապէս, հայ փիլիսոփայութեան մասին. հրատարակել է *Սիմէոն Ջուղայեցի* (1971), *XVII Դարի Հայ Փիլիսոփայական Մտքի Քննական Վերլուծութիւն* (1983), *Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի* (2001) մենագրութիւնները: Նա առաջին անգամ հանգամանօրէն վերլուծել է ԺԷ. դարի հայ նշանաւոր հասարակական-կրօնական գործչի, տրամաբանի, քերականի եւ մանկավարժի փիլիսոփայական հայեացքներն ու գիտամշակութային գործունէութիւնը եւ շրջել հայագիտութեան ասպարէզում վաղուց հաստատուած այն թիւր տեսակէտը, թէ իբր ԺԵ. դարի երկրորդ կէսից ընդհանրապէս հայ մշակոյթի, ի մասնաւորի՝ հայ փիլիսոփայական մտքի պատմութեան մէջ սկսուած անկումը տեւել է մինչեւ ԺԸ. դարի Բ. կէսը: Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցուն նուիրուած մենագրութիւնում առաջին անգամ շրջանառութեան դնելով նոր նիւթեր, նա հանգամանօրէն լուսաբանել է ԺԷ.-ԺԸ. դարերի այս նշանաւոր մտածողի կենսագործունէութիւնը, հայեացքները:

Նա անդրադարձել է նաեւ միջնադարեան հայ աստուածաբան-իմաստասէրների եւ մշակութային գործիչների տեսական ժառանգութեանն առնչուող հարցերի վերլուծութեանը: Վերծանելով Գրիգոր Նարեկացու *Մատեան Ողբերգութեան* մի շարք ծածկագրութիւններ, ի յայտ է բերել նրա կեանքին ու գործունէութեանը վերաբերող նոր փաստեր եւ տեղեկութիւններ, որոնք հնարաւորութիւն են ընձեռում նորովի գնահատելու նրա ստեղծագործական ուղին եւ *Մատեանի* ստեղծման շարժառիթներն ու նպատակները: Առանձին գրքով լոյս է ընծայել նաեւ *Գրիգոր Նարեկացու Բառաստեղծական Արուեստը* (2006) երկը, որը 2008ին արժանացել է ՀՀ Թէքէեան Մշակութային Միութեան Հայկաշէն Ուզունեան երկամեայ մրցանակին: Իսկ *Նարեկացիագիտական Հետազօտութիւններ* (2010) հանրագումարային աշխատութեան մէջ նրան յաջողուել է ուրոյն տեսակէտեր առաջադրել Նարեկացու գրական ժառանգութեան առանձին վիճայարոյց հարցերի վերաբերեալ:

Միրզոյեանի գիտական գործունէութեան առանձին էջ են կազմում աղբիւրագիտական հետազօտութիւնները եւ բնագրերի հրատարակումը: Նա հրատարակութեան է պատրաստել ոչ միայն շրջանառութեան մէջ չգտնուող բնագրեր, օրինակ՝

Ստեփանոս Դաշտեցու *Ջրոյց Բանավէճերը*, այլեւ մասնագիտական գրականութեան մէջ անանուն կամ հեղինակային պատկանելութիւնը վիճայարոյց բնագրեր, ինչը նրան ստիպել է կատարել լրացուցիչ հետազօտութիւններ եւ յայտնաբերել բնագրերի բուն հեղինակներին: Դրանցից մէկը *Լուծմունք «Սահմանաց Գրոց»* երկն է, որի հեղինակը իր համոզմամբ Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրն է (*Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր, Լուծմունք «Սահմանաց Գրոց»*, աշխատ.՝ Միրզոյեան եւ Ա. Մադոյեան, 2004), միւսը բարոյափիլիսոփայական մեծարժէք՝ *Համառօտիւք Բան Խրատու* աշխատութիւնն է, որն ըստ նրա ապացոյցների՝ պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին (*Մատենագիրք Հայոց, ԺԲ. Հատոր*, Անթիլիաս, 2008):

Միրզոյեանն անաչառ գիտնական էր եւ հայրենասէր հայագէտ: Խորհրդային տարիներին եւ դրանից յետոյ, նա հրապարակաւ քննադատեց ազգայնամոլ հետազօտողներին, յատկապէս Հայոց Ցեղասպանութեան փաստը ժխտողների տեսակէտերը. *Почему Суд по Факту Геноцида Армян Турция Призывает Доверить Историкам* (Ինչո՞ւ է Թուրքիան Հայոց Ցեղասպանութեան փաստին առնչուող դատը կոչ անում վստահել պատմաբաններին) (2012, Հ. Գոնչարի հեղինակակցութեամբ) գրքում:

Լինելով նաեւ հրապարակախօս, Միրզոյեանը անտարբեր չէր հասարակական-քաղաքական կեանքում տեղի ունեցող իրադարձութիւններին եւ փորձում էր օրախնդիր հարցերի վերաբերեալ հրապարակաւ ներկայացնել իր տեսակէտերը: Ղարաբաղեան Շարժման տարիներին նա Սուրէն Զոլեանի հետ կազմել եւ հրատարակել է օտարազգի հեղինակների յօդուածների՝ *Нагорный Карабах и Вокруг Него. Глазами независимых наблюдателей* (Անկախ դիտորդների աչքերով. Լեռնային Ղարաբաղ եւ նրա շուրջ, 1991) ժողովածուն:

Միրզոյեանը թարգմանել է նաեւ մասնագիտական գրքեր, որոնցից առանձնապէս յիշատակելի է *Փիլիսոփայութեան Պատմութեան Համառօտ Ակնարկ* (Թ. Դիլանեանի հետ, 1979) մեծածաւալ ուսումնական ձեռնարկը: Իբրեւ *Բանբեր Երեւանի Համալսարանի* խմբագիր, նա մեծ աշխատանք է կատարել հանդէսի կանոնաւոր հրատարակութեան եւ գիտական մակարդակի բարձրացման համար:

Զուգահեռ՝ Միրզոյեանը դասաւանդում էր ԵՊՀում, 1994-97ին նա դասաւանդեց Երուսաղէմի Ալեք եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանում ու ընծայարանում, 1997-2003՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանում, մեծ աւանդ ունենալով երիտասարդ գիտնականների կայացման գործում:

Միրզոյեանը համալսարանական էր. 1960ականներից մինչեւ իր մահը նա ապրում էր համալսարանով եւ համալսարանի համար: Իբրեւ դասախօս եւ գիտնական նա սկզբունքային էր, խստապահանջ, իբրեւ խմբագիր՝ անզիջող ու բծախնդիր, իբրեւ մտածող՝ ինքնամփոփ էր, առանձնասէր, իբրեւ մարդ՝ ազնիւ էր, սրտացաւ, ընտանիքապաշտ, նուրբ երգիծանքի տէր, իսկ իբրեւ քաղաքացի՝ օրինախախտութեան դէմ պայքարող: Գիտական, մանկավարժական, հասարակական-քաղաքական արդիւնաւէտ գործունէութեան համար նա պարգեւատրուել է ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի պատուոգրով եւ ԵՊՀ ոսկէ մեդալով:

Հրաչիկ Միրզոյեանը ծանր հիւանդութիւններից յետոյ մահկանացուն կնքեց 2019ի Օգոստոսի 26ին, Երեւանում:

ՍԷՅՐԱՆ ՁԱՔԱՐԵԱՆ, szakaryan@ysu.am

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼԵԱՆ
(1942–2019)

Բանասէր, լրագրող, բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտութիւնների թեկնածու Վլադիմիր (Վահան) Մաղալեանը ծնուել է 1942 Մարտի 20ին Վրաստանի Թեթրի-Ծղարոյի շրջանի Դաղէթ-Խաչէն գիւղում: 1968ին աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի մամուլի բաժինը: 1988ին, Թբիլիսիում պաշտպանել է թեկնածուական՝ «Խորհրդահայ Մամուլի Սկզբնաւորումն ու Զարգացումը Վրաստանում (1921-1941 թթ.)» նիւթով:

1968-71՝ ԵՊՀ մամուլի ամբիոնի աւագ աշխատակից, միաժամանակ խմբագրել է Երեւանի Անասնաբուծական-Անասնաբուժական Հիմնարկի *Կադրերի Համար* թերթը (1969-70), 1971-2006՝ խմբագրել է *Երեւանի Համալսարան* թերթը, իսկ 1992-2001 համատեղութեան կարգով եղել է նաեւ *Հանդէս Երեւանի Համալսարանի* լրատուի գլխաւոր խմբագիրը, 2006ից՝ ԵՊՀ հայագիտական հետազօտութիւնների հիմնարկի առաջատար գիտաշխատող, միաժամանակ դասախօսել է ԵՊՀում եւ հանրապետութեան այլ բուհերում:

Հեղինակ է *Խարոյկ* (1992), *Խրամի Ձմրուխտ Աւիերին* (2010) բանաստեղծութիւնների ու թարգմանութիւնների ժողովածուների, ինչպէս նաեւ *Դաղէթ-Խաչէն* (1999) հայրենագիտական գրքի եւ *Գրական-Մշակութային Կեանքը Երեւանի Համալսարանում (1919–2009 թթ.)* (2010), *Երեւանի Համալսարանի Յոբելեանները (1919–2009 թթ.)* (2011), *Հայ Տեղական Մամուլը եւ Գրատպութիւնը Վրաստանում (1885–1990 թթ.)* (2012) մենագրութիւնների եւ *Իմ Նուէրը Մայր Համալսարանին* յօդուածների ժողովածուի (2019): Կազմել, խմբագրել եւ հրատարակութեան է պատրաստել *Երախտաւոր Մանկավարժը* (2007), *Քնար Համալսարանի* (2008), *Սրտի Խօսք* (2009), *Երեւանի Պետական Համալսարանը Վաւերագրերում (1919–2009 թթ.)* (2009) ժողովածուները եւ այլ գրքեր:

ԵՊՀում 1981ին հիմնադրել է *Գրական Համալսարան* գրական-գեղարուեստական տարեգիրքը, որը կազմել, խմբագրել եւ պատրաստել է հրատարակութեան:

Մաղալեանի աշխատութիւնները հիմնականում վերաբերում են Վրաստանի հայ մամուլի եւ գրատպութեան պատմութեանը, վիրահայ ժամանակակից գրողների ու մշակութային գործիչների կեանքին ու ստեղծագործութիւններին, հայ-վրացական գրական-մշակութային փոխառնչութիւններին: Նրա գրչին են պատկանում աւելի քան 200 գիտական հետազօտութիւն, լրագրային շուրջ 1000 յօդուած, որոնք լոյս են տեսել Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ արտասահմանեան տարբեր երկրների պարբերականներում, սփիւռքահայ մամուլի էջերում: Նա եղել է ԽՍՀՄ եւ ՀՀ Ժուռնալիստների ու Գրողների միութիւնների (1969) եւ Ժուռնալիստների միջազգային համադաշնութեան (1982) անդամ, ԵՊՀ ոսկէ մեդալի կրկնակի դափնեկիր (1999, 2009 թթ.), արժանացել է նաեւ այլ մեդալների ու պատուոգրերի:

Մահացել է 2019 Սեպտեմբերի 21ին, Երեւանում:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼԵԱՆ, artak_77@mail.ru

ՎԱՐՍԻԿ ԳԷՈՐԳԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1926--2019)

Թատերագէտ, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ Վարսիկ Գրիգորեանը ծնուել է 1926ի Ապրիլի 17ին, Թազագիւղում (Արարատի մարզ, այժմ՝ Նոր Այնթապ): 1949ին աւարտել է Երեւանի Թատերական Հիմնարկի թատերագիտութեան բաժինը: Աշխատել է Թատերական Հիմնարկում, Յովհաննէս Թումանեանի տուն-թանգարանում, 1953-63՝ եղել է ժողովրդական Ստեղծագործութեան Հանրապետական Տան թատերական բաժնի վարիչ, 1965-81՝ հեռուստատեսութիւնում՝ թատերական հաղորդումների բաժնում: 1957ից պեղել, հաւաքել է եթերուած ու կորած ներկայացումները, ժամանակագրել եւ վերականգնել երկացանկը (800ից աւելի), որի հիմամբ հրատարակել *Հեռուստթատրոնի 40-ամեայ Ուղին* երկհատոր հիմնարար աշխատութիւնը (2004, 2007, համահեղինակը դուստրն է՝ դերասանուհի Յասմիկ Տէր Կարապետեան-Չաթըրը):

Մարուսիա Թամրազեան (1976), *Թաթուլ Դիլաքեան* (1978), *Չաւէն Տատինցեան* (1981), *Հեռուստատեսային Թատրոնի Գործիչները* (1986), *Առաջին Հայ Դերասանուհիները* (1994 համահեղինակ՝ Տէր Կարապետեան-Չաթըր), *Ֆարիդը* (համահեղինակ՝ Յակոբ Սրապեան, 1997), *Փափազը, Մեր Շեքսպիրը, Մեր Կռիւը* (2002), *Մեփաքսիա* (2002), *Մամիկոն Մանուկեան* (2007), *Վիլիամ Սարոյեանը Հայ Թատրոնում* (հայերէն/անգլերէն/ռուսերէն, 2010), *Թատրոնի Սիրուց ու Տագնապներից* (յօդուածների եւ ակնարկների ժողովածու (Գիրք 1, 2016) երկերը: Հեղինակ է հայ եւ ռուս մամուլում հրատարակուած 1600ից աւելի յօդուածների, որոնցում արծարծում է հայ բեմարուեստի ու թատերգութեան պատմութեան եւ տեսութեան հարցերը:

Պարգեւատրուել է «Արտաւազդ» մրցանակով (2005), ՀՀ մշակոյթի նախարարութեան ոսկէ մեդալով, Թատերական Գործիչների Միութեան ոսկէ մեդալով (2011):

Մահացել է 2019ի Հոկտեմբերի 1ին, Երեւանում:

ՀՀՀ

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
(1931--2019)

Պատմաբան Հրանտ Աբրահամեանը ծնուել է 1931 Օգոստոսի 12ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գիւղում: 1954ին աւարտել է Բաքուի Մանկավարժական Հիմնարկի Պատմութեան Ֆակուլտէտը: 1958-70՝ եղել է հայրենի գիւղի ութամեայ դպրոցի տնօրէնը, իսկ 1975ից աշխատել է Երեւանի Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական Պետական Հիմնարկում: 1997ին պաշտպանել է դոկտորական՝ «Արցախահայութեան Ազատագրական Պայքարը 1917-1923 թթ.» նիւթով: 2004ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում: 2006ից ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի առաջատար գիտաշխատողներից էր:

Լեռնային Ղարաբաղի հայութեան նկատմամբ Ադրբեջանի իշխանութիւնների հակահայ քաղաքականութեան նկատմամբ Աբրահամեանը անհաշտ էր: 1975ին *Սովետական Մանկավարժ* հանդէսի եօթերորդ համարում տպագրած «Երկրագիտական Նիւթերի Օգտագործումը Պատմութեան Դասերին» յօդուածում նա մերկացնում է Արցախի դպրոցների նկատմամբ կիրառուող հակահայ քաղաքականութիւնը եւ հարց բարձրացնում Արցախի պատմութիւնը դիտելու որպէս հայ ժողովրդի պատմութեան բաղկացուցիչ մաս, ինչպէս նաեւ այն պարտադիր դասաւանդելու Լեռնային Ղարաբաղի դպրոցներում: Ձերբակալութիւնից խուսափելու համար 1989ին նա ստիպուած հեռացել է հայրենի Արցախից: Արցախ Հայրենակցականի եւ նրա բաժանմունքների հերոսական գործունէութեան մասին նա պատմել է իր *Երբ Հայրենիքը Վտանգի Մէջ Է* (1997) եւ *Մարտ Կրակագծի Մատոյցներում* (2008) գրքերում:

Արցախեան ինքնորոշման պատերազմի տարիներին Աբրահամեանը մաս է կազմել Արցախ Հայրենակցական Միութեան ղեկավար մարմնին: Նրա գլխաւորութեամբ կազմակերպուած եւ նախագահութեամբ գործած «Վարանդա» Հայրենակցական Կազմակերպութիւնը ձեռք էր բերում եւ Մարտունի առաքում վառելիք, սննդամթերք, պաշտապանութեան միջոցներ:

Աբրահամեանը անաչառ ու նուիրուած գիտնական էր: Նրա գրչին են պատկանում 31 գիրք եւ մեծաթիւ գիտական յօդուածներ: Նրա ուսումնասիրութիւնների հիմնական նիւթն Արցախն է՝ իր անցեալով եւ ներկայով: Յիշատակութեան արժանի են նրա *Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Սոցիալ-Տնտեսական, Հասարակական-Քաղաքական եւ Մշակութային Կեանքը (2000-2008)* (2013), *Արցախը 18-19րդ Դարերում* (2015) մենագրութիւնները, *Ամպը Լեռան Գլխին* (2017) վաւերագրական վէպը, որը նուիրուած է 1917-21՝ Արցախում տեղի ունեցած իրադարձութիւններին եւն.: *Արցախահայութեան Հասարակական-Քաղաքական Կեանքը եւ Արցախի Հեմը (1901-1933)* (2009) մենագրութիւնում Աբրահամեանն արխիւային նորայայտ փաստաթղթերի հիմամբ ոչ միայն վերլուծում է Արցախ-Ղարաբաղի ընկերատնտեսական ու հասարակական կեանքը, այլեւ բացայայտում Արցախի նկատմամբ Ադրբեջանի իշխանութիւնների իրագործած բռնարարքները: *Մարտնչող Արցախը* եռահատոր մենագրութեան մէջ (2003-07) հեղինակը քննարկել է 1917-2000՝ Լեռնային Ղարաբաղի նորագոյն պատմութեան բազմաթիւ հարցեր ու խնդիրներ, խորաքնին ուսումնասիրել եւ հասարակայնութեանը ներկայացրել 1918-23՝ տեղի իրադարձութիւնների պատմութիւնը:

Բացայայտելով Արցախի պատմութեան ալիեւեան կեղծարարներին՝ Աբրահամեանը վերստին ապացուցել է, որ հազարամեակների պատմութիւն ունեցող արցախցիների բնօրրանը հենց Արցախ-Ղարաբաղն է, եւ արցախցին երբեք այստեղ «եկուոր» չի եղել: ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւնը լոյս ընծայեց նրա *Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն (1991 Թ. Օգոստոս-1992 Թ. Յունուար)* (2011) փաստաթղթերի ժողովածուն՝ նուիրուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կազմաւորման քսանամեակին: Կարէն Խաչատրեանի հետ նա տպագրութեան պատրաստեց *Հայութեան Կոչերն ու Դիմումները ԼՂԻՄը Խորհրդային Հայաստանի Հետ Միաւորելու Համար (1988-1989 թթ.)* փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուն (2014):

Աբրահամեանը գրել է նաեւ *Հայ Ժողովրդի Պատմութիւն (Սկզբից Մինչեւ Մեր Օրերը)* (2004) դասագիրքը բուհերի ուսանողների համար, հրատարակել հայրենի Քերթ գիւղի պատմութեանը նուիրուած *Քերթ. (Հնագոյն Ժամանակներից Մինչեւ*

Մեր Օրերը) (2010) գիրքը, որն ամբողջութեամբ նորութիւն է: *Արցախի Հերոսամարտը* (1918) (1998), *Թեւան* (1998), *Ճակատագրին Ընդառաջ. Փաստավաւերագրական Ակնարկ* (2001) գրքերի համար Աբրահամեանն արժանացել է ԼՂՀ կառավարութեան Եղիշէի անուան ամենամեայ մրցանակին: Նա *Հայոց Պատմութեան* ակադեմիական բազմահատորեակի վերահրատարակութեան հեղինակներից է, խմբագրել է մի շարք գրքեր, եղել բազմաթիւ թեկնածուական եւ դոկտորական ատենախօսութիւնների ընդդիմախօս:

Հրանտ Աբրահամեանը մահացաւ 5 Նոյեմբեր 2019ին, Երեւանում:

ԿԼԻՄԵՆՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ
(1933–2019)

Էդուարդ Բաղդասարեանը ծնուել է 1933 Մայիսի 25ին Երեւանում: 1970ին պաշտպանել է թենածուական՝ ԺԳ. դարի ականաւոր մատենագիր Յովհաննէս Երզնկացու եւ նրա խրատական արձակի մասին:

1959ից աշխատել է Մաշտոցեան Մատենադարանում, երկար տարիներ ղեկավարել է Մատենադարանի միջնադարեան սկզբնաղբիւրների ուսումնասիրման բաժինը:

Նշանակալի է նրա վաստակը Երզնկացու մատենագրական ժառանգութեան համակողմանի քննութեան ու գիտական հրատարակութեան գործում, որի առհաւատչեան նրա հեղինակած կոթողային աշխատութիւններն են՝ *Դանիշմանեան Իշխանութեան Պատմութեան Շուրջ* (1987), *Յովհաննէս Երզնկացին եւ Նրա Խրատական Արձակը* (1977), *Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւն* (Հտր. Ա., Երեւան, 2013, համահեղինակ՝ Արմէնուհի Սրապեան): Երզնկացու եւ նրա ստեղծագործութեան նկատմամբ Բաղդասարեանի հետաքրքրութիւնը մեծապէս ազդուած էր իր տոհմի՝ Երզնկայից սերած լինելու հանգամանքով: Հայ միջնադարեան սկզբնաղբիւրների ուսումնասիրման բնագաւառում մեծապէս կարեւոր են Ներսէս Շնորհալու *Թուղթ Ընդհանրականի* (1995) եւ Գէորգ Սկեւռացու *Վարքի*՝ իր աշխատասիրութեամբ հրատարակուած բնագրերը:

Մահացել է 2019ի Նոյեմբերի 30ին, Երեւանում:

ՀՀՀ

ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ
(1931–2019)

Պատմաբան, թուրքագէտ, աղբիւրագէտ Աւետիս Փափազեանը ծնուել է 1931ին, Սիրիայի Լաթաքիա քաղաքում: 1946ին ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան: 1960ին աւարտել է ԵՊՀ ռոմանօ-գերմանական բաժինը: 1961ին ընդունուել է Հայաստանի ԳԱ Արեւելագիտութեան Հիմնարկի Թուրքիայի բաժին, իսկ 1964ին Մոսկուայի ԽՍՀՄ ԳԱ Արեւելագիտութեան Հիմնարկում պաշտպանել է թեկնածու-

ական՝ «Քեաթիբ Չելեբիի 'Ջիհան-Նիւմա'ն եւ 'Ֆեզլեքէ'ն Որպէս Աղբիւր Հայաստանի Պատմութեան (17րդ Դար)» նիւթով: Փափազեանը 32 տարի շարունակ աշխատել է Հայաստանի ԳԱ Արեւելագիտութեան Հիմնարկում: 1988-92՝ ղեկավարել է Հիմնարկի աղբիւրագիտութեան բաժինը: Միաժամանակ 1968-75՝ ԵՊՀ Արեւելագիտութեան Ֆակուլտէտում դասաւանդել է օսմաներէն եւ Թուրքիայի պատմութիւն: 1992ին բնակութիւն է հաստատել ԱՄՆում, որտեղ շարունակել է իր բեղուն գիտական գործունէութիւնը:

Վաստակաշատ գիտնականը 13 գրքի եւ բազում յօդուածների հեղինակ է, որոնք լոյս են տեսել Հայաստանի ակադեմիական պարբերականներում եւ Լոս Անջելըսի հայկական մամուլում: Նրա գիտական հետազօտութիւնների մեծ մասը նուիրուած է Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին միջնադարեան թուրք պատմագիրների աշխատութիւնների ուսումնասիրութեանը, իսկ 1983ից նա սկսել է զբաղուել նաեւ Հայոց Ցեղասպանութեան հարցերով՝ շրջանառութեան մէջ դնելով Մեծ Եղեռնին առնչուող մեծաքանակ արժէքաւոր թուրքական աղբիւրներ եւ արխիւային նիւթեր:

Առանձնայատուկ նշանակութիւն ունի 1989ին հրատարակուած *Հայոց Ցեղասպանութիւնը Ըստ Երիտթուրքերի Դատավարութեան Փաստաթղթերի* գիրքը (վերահրատարակուել է 2005ին Լոս Անջելըսում, 2015ին Երեւանում), որում առաջին անգամ հայերէն թարգմանութեամբ հանրութեանն են ներկայացուում 1919-20ի Կոստանդնուպոլսում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցութեան ղեկավար գործիչների դատավարութեան այն նիւթերը, որոնք առնչւում են Հայոց Ցեղասպանութեան: Նիւթերը վերցուած են 1919-20 Պոլսում հրատարակուող *Թաքվիմ-ի Վեքայի* թուրքական պաշտօնաթերթի համարներից: Հրատարակուած նիւթերի այս ամբողջութիւնը անհերքելի վկան է երիտթուրքական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի ու կառավարութեան ծրագրաւորած՝ հայերի ցեղասպանութեան:

Արժէքաւոր է նաեւ 1999ին Երեւանում հրատարակուած նրա *Թուրքական Վաւերագրերը Հայաստանի եւ Հայերի Մասին (16-19-րդ Դարեր)* աշխատութիւնը: Հեղինակը ուշագրաւ այս աշխատութեամբ գիտական լայն շրջանառութեան մէջ է դնում Հայաստանի եւ հայերի մասին նկարագրող թուրքական վաւերագրեր, որոնք գիտական հմտութեամբ ու բանիմացութեամբ են թարգմանուել ու վերլուծուել:

Դեռեւս 2000ին, պրոֆեսոր Փափազեանը սկսում է Մեծ Եղեռնին նուիրուած հրապարակումների մի շարք. նախ՝ 2000ին հանրութեանն է ներկայացուում երկու աշխատութիւն՝ *Հայկական Հարցը եւ Մեծ Եղեռնը 1876-2000 թթ. Ժամանակագրութիւնը* եւ *Ցեղասպանութիւն եւ Գոյատեւման Պայքար* գիրքը: 2001ին լոյս է տեսնում նրա *Հայերի Ցեղասպանութիւնը Թուրք Քաղաքական Գործիչների Յուշագրութիւններում* ուսումնասիրութիւնը, որտեղ հեղինակը հերքող պարզաբանումներով ներկայացնում է թուրք քաղաքական գործիչների եւ կեղծարար պատմաբանների՝ Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ տեսակէտերը եւ մեկնաբանութիւնները:

Փափազեանի գրչին են պատկանում նաեւ *Քեաթիբ Չելեբիի «Ջիհան-Նիւմա»ն եւ «Ֆեզլեքէ»ն Որպէս Աղբիւր Հայաստանի Պատմութեան (17-րդ դար)* (1973, ռուսերէն), *Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում* (1996), *Թուրքական Վաւերագրական Նիւթեր Օսմանեան Կայսրութեան Ոչ-Մահմեդական Ժողովուրդների Մասին* (1835-1915թթ.) (2002), *Պայքար Յանուն Արդարութեան* (Հտր. Ա. եւ Բ., 2003-04), *Հաւաստի Վկայութիւններ Հայոց Ցեղասպանութեան* (2007) եւ *Օսմաներէնի Ձեռնարկ* (2012) աշխատութիւնները:

Մահացել է 2019ի Դեկտեմբերին, ԱՄՆում: ՀՀՀ



ՎԱՀՐԱՄ ԹԱԹԻԿԵԱՆ
(1949–2019)

Բանաստեղծ, արձակագիր, գրգագէտ, երգահան Վահրամ Թաթիկեան ծնած է 1949 Նոյեմբերի 14ին, Երեւան. արձակագիրներ Շահէն Թաթիկեանի եւ Շաքէ Վարսեանի որդին է: Աւարտած է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի Հնագիտութեան բաժինը՝ մասնագիտանալով հայ արուեստի պատմութեան մէջ: 1974էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկը: Գործագիտութեան նուիրուած բազմաթիւ գիտական յօդուածներու եւ հրապարակումներու հեղինակ է, ինչպէս նաեւ՝ աւելի քան քսան գրքերու էքլիզների, որոնք գործուած են եւ կը պահուին տարբեր հաւաքածոներու մէջ: Հեղինակած է նաեւ բազմաթիւ երգեր ու լուսանկարներ: 1977էն անդամ է Հայաստանի Գրողներու Միութեան: Հեղինակ է բանաստեղծական ժողովածուների:

Ան կարեւոր ներդրում ունեցած է հայ գործագիտութեան մէջ: Լոյս ընծայած է *Հայկական Գործարուեստ (Հարցադրումներ եւ Ուսումնասիրական Սկզբունքներ)* (Պէյրութ, Տպ. Ալթափրէս, 1981) գիրքը (նախապէս լոյս տեսած *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* մէջ, հ. 4 տարի) եւ *Արցախի Տոհմագործերը* նկարագիրք մենագրութիւնը (2004):

Մահացած է 2019ի Դեկտեմբերի 16ին, Ծաղկաձոր:

ՀՀՀ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Վեր. Յովհաննէս Փ. Ահարոնեան (1909–1986)
Ծնած է Զէյթուն: 1948ին մագիստրականով կը վկայուի Շիքակոյի Մըք Քորմիք Աստուածաբանական Դպրոցէն՝ քրիստոնէական դաստիարակութեան գծով: Հոն եւս, ան կը ձեռնադրուի: 1949-77՝ կը վարէ ՄԱՀԱԵՄի կեդրոնական մարմնին ատենապետութիւնը, օրինական ընդմիջումներով: Ահարոնեան մեծ դեր ունի 1955ին Հայկազեան Գոլէճի հիմնադրման աշխատանքներուն մէջ: 1955-80՝ մաս կազմած է Գոլէճի խնամակալ մարմնին, վարելով անոր ատենապետութիւնը 17 տարի: 1940ականներէն մասնակցած է United Missionary Councilի, Near East Christian Councilի, Near East Council of Churchesի եւ Middle East Council of Churchesի խորհուրդներուն: Հեղինակ է *Հայ Աւետարանական Եկեղեցին Ճանապարհներու Խաչածեւումին* հատորին (խմբ. Երուանդ Հ. Քասունի, Պէյրութ, 1988):

Մելինէ Անումեան **melanumyan@gmail.com**
Ծնած է 1977ին, Երեւան: 2012ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայոց Ցեղասպանութեան Խնդիրը Երիտթուրքերի Դատավարութիւններում (1919-1921 թթ.)» նիւթով: 2009էն աւագ գիտաշխատող է եւ ղեկավար՝ Արեւմտահայոց Հարցերի Ուսումնասիրութեան Կենտրոն գիտահետազօտական հիմնադրամի թրքերէն բաժնին: Անդամ է *Ցեղասպանագիտական Հանդէսի* խմբագրակազմին: Ունի թրքերէնէ եւ թրքերէնի թարգմանութիւններ, 2013ին լոյս տեսած է իր *Ճանաչում եւ Դատապարտում. Երիտթուրքերի Դատավարութիւնները 1919-1921թթ.* (անգլ.՝ 2017, թրք.՝ 2018) հատորը: 2018ին իր թարգմանութեամբ լոյս տեսաւ Քեմալ Եալչընի *Վերջին Ցանկութիւնս. Պոլսահայ Բրենդա Ժամկոչեան-Բաշարի Յիշատակին* գիրքը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայոց Ցեղասպանութիւնը, երիտթուրքերու դատավարութիւնները, Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան պատմութիւնը, Թուրքիոյ հայ բոշաները, իսլամացուած հայերը: 2019էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Կարինէ Ասատրեան **asatryan.karine.m@gmail.com**
Ծնած է 1978ին, ՀՀ Արմաւիրի Լուկաշին գիւղը: 2012ին պաշտպանած է թեկնածուական՝ «Ազատ Ոտանաւորը 20րդ Դարի Առաջին Կէսի Հայ Բանաստեղծութեան Մէջ» նիւթով: 2005-07՝ Աւրորա ռատիօկայանի խմբագիր, 2011-13՝ Հայաստանի Ազգային Գրապալատի մատենագէտ, 2013էն հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ է՝ «Քվանտ» վարժարանին մէջ: Հրատարակած է ուսումնասիրութիւններ հայ բանաստեղծութեան եւ հայ-օտար բանաստեղծական յարաբերութիւններու մասին:

Տ. Ներսէս Քհնյ. Ասրեան **monk-deacon@mail.ru**
Ծնած է 1980ին, Շուշի: 2006ին աւարտած է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանը: 2009-16՝ Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան Բանակի գնդերէց, 2009էն՝ տնօրէնն է Հայ Առաքելական Եկեղեցիի Արցախի Թեմի տեղեկատուական համակարգին: 2016էն հոգեւոր հովիւն է Ստեփանակերտի Աստուա-

ծամօր Ս. Յովհան մայր եկեղեցիին եւ ծիսակատար քահանան՝ Ասկերանի Ս. Աստուածածին եկեղեցիին: Ունի ուսումնասիրական յօդուածներ եւ հրապարակումներ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Ի.–ԻԱ. դարերու Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, տօները եւ ծէսերը, արցախեան հիմնախնդիրը, աստուածաբանութիւն, աղանդներ: 2016էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Հայկ Աւագեան **haigavakian@yahoo.com**

Ծնած է 1964ին, Գահիրէ: 1991ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան Երաժշտանոցի դաշնակի եւ երաժշտագիտութեան բաժինները: 1991-94՝ մաս կազմած է Գահիրէի Երաժշտանոցի ուսուցչական կազմին, 1992-2009՝ Գահիրէի Օփերայի Երգչախումբի խմբավար, 2007-10՝ Աղեքսանդրիոյ Մատենադարանի Քառաձայն եւ Մանկական Երգչախումբերուն գեղարուեստական ղեկավար: Տուած է բազմաթիւ դաշնակի մենանուագներ:

Հեղինակ է հայերէն, արաբերէն եւ անգլերէն աւելի քան 50 երաժշտագիտական, բանասիրական ու պատմափիլիսոփայական հատորներու: 2001-08՝ խմբագրած է *Ծիծեռնակ* երաժշտական եռամսեան, պատրաստած է հայկական առաջին օփերայի՝ Տիգրան Չուհաճեանի *Արշակ Բ.*ի (1868) բնագիր տարբերակի քննական խմբագրութիւնը: Խմբագրած եւ հրատարակած է անտիպ երկասիրութիւններ: 2013էն կ'աշխատակցի *Ջահակիր*ին, որուն խմբագրական խորհրդատուն է 2016էն:

Հեղինակային իր վերջին գիրքերն են՝ *Կոմիտաս Վարդապետի Բաց Սրեղծագործութիւն Հասկացողութիւնը* (2019) եւ *Մշոյ Ս. Կարապետ Վանքի Մշակութային Ժառանգութիւնը եւ Կոմիտաս Վարդապետի Մշոյ Շորորը* (2019): Մասնակցած է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած եւ այլ գիտաժողովներու: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Արծուի Բախչինեան **artsvi@yahoo.com**

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածուական «Վահան Տէրեանի Ստեղծագործական Աշխատանոցը» նիւթով: Գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Հայ Գաղթավայրերի եւ Սփիւռքի Բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *Հայ Կինօ – 100* (2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ շարժանկարի, պարարուեստի պատմութիւնը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայազգիներ, հայ լուսանկարչական արուեստը...: 1998էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին: 2001էն *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի ներկայացուցիչն է Երեւանի մէջ:

Միհրան Գալստեան **akoonk@yahoo.com**

Ծնած է 1958ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գաւառ գաղաքը: 2016ին պաշտպանած է դոկտորականը՝ «Աշխատանքային Միգրացիայի Սոցիալ-Մշակութային Հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 1989էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ, միաժամանակ 2007էն դասախօս է ԵՊՀԻ մէջ: Համահեղինակ է *Արդի Հայ Ընտանիքը Փոխակերպուող Հասարակութիւնում* գիրքին (2017): Հեղինակած վերջին գիրքն է *Հայաս-*

փանի Հանարապետութեան Ազգային Փոքրամասնութիւնների Միգրացիան (Էթնոսոցիոլոգիական Հետազօտութիւն) (2015) հատորը:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կը կազմեն բնակչութեան գաղթերը, եւ մշակութային փոխակերպումները, գաղթը եւ ընտանիք, գաղթը եւ սեռոյթը:

Վաչագան Գրիգորեան **vachik_grigoryan@mail.ru**
Ծնած է 1959ին, ՀՀ Կոտայքի Քաղսի գիւղը: 2003ին պաշտպանած է դոկտորականը՝ «Լեւոն Շանթի Դրամատուրգիան» նիւթով: 2010ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1989էն դասախօս է, իսկ 2003էն վարիչը՝ Գաւառի Պետական Համալսարանի հայոց լեզու եւ գրականութիւն ամբիոնի, 1991-95՝ Հրազդանի շրջանային ժողկրթբաժնի վարիչ, 1996-99՝ Կոտայքի մարզի կրթութեան վարչութեան պետի տեղակալ: 2013ին արժանացած է «Հրանտ Մաթեւոսեան» մրցանակին: Հեղինակ է շարք մը հատորներու, վերջինը՝ *Լեւոն Խեչոյեանի Սկիզբնագրութիւնը* (2019): Գիտաական հետաքրքրութիւններու ծիրը դասական եւ արդի գրականութիւնն է:
2001էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Արմենակ Եղիայեան **armenag@gmail.com**
Ծնած է 1939ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն Ժոզէֆ Համալսարանի Ֆրանսական Գրականութեան եւ Լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ Ատամնաբուժութեան Բաժանմունքները: Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մեսրոպեան Տառերու Ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95): Անտիպ է իր «Արեւմտահայերէնի Ուղղագրական, Ուղղախօսական, Ոճաբանական Ուղեցոյց» աշխատութիւնը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց լեզուի կառոյցն ու շարահիւսութիւնը: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Մաքսիմ Եւատեան **myevadian@univ-catholyon.fr**
Ծնած է 1979ին, Ֆրանսա: 2017ին պաշտպանած է դոկտորական՝ «Pilgrims, Preachers and Other Travellers of Armenia in the Latin World (11th century)» նիւթով: 2011էն վարիչն է l'Université Catholique de Lyonի հայագիտական ամբիոնին, իսկ 2017էն՝ նոյն համալսարանի Եւրասիական Ուսումնասիրութեանց Կեդրոնին: Հեղինակ է գիրքերու, վերջինը՝ *Les Métamorphoses de Tigrane avec Alexandre Siranossian* (2014): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի քրիստոնէացումը, հին եւ միջնադարեան Հայաստանի պատմութիւնը, Մեսրոպ Ճամփան, Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը եւ միջքրիստոնէական յարաբերութիւնները, հայ մշակոյթը՝ դրամագիտութիւն, վիմագրութիւն, ճարտարապետութիւն, միջնադարեան հայ բժշկագիտութիւն, սելճուք-հայ ճարտարապետական փոխյարաբերութիւնները, առեւտուրը, ֆրանսահայ պատմութիւնը:
2011էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Ճան Էրզուրումլուօղլու **canerzurumluoglu@hotmail.com**
Ծնած է 1980ին, Պոլիս: 2017ին պաշտպանած է մագիստրականը՝ «Une Comparaison Critique de la Conception de L'espace Chez Leibniz et Chez Kant» նիւթով:

2001-10՝ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է պոլսահայ վարժարաններու մէջ, իսկ 2015էն՝ ուսողութեան դասախօս է Նիշանթաշը Համալսարանին մէջ:

Իւէթ Թաջարեան **yvettetaj@yahoo.com**

Ծնած է 1975ին, Թեհրան: 2006ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Անթուան Սեւրուգինի Լուսանկարչական Արուեստը» նիւթով: 2013էն՝ աւագ գիտաշխատող է Մաշտոցի Անուան Մատենադարանի Արեւելագիտութեան բաժինը: 2006-09՝ Երեւանի Թորոս Ռոսլինի Անուան Տիզայնի Հիմնարկի դասախօս, 2006էն՝ օգնական դասախօս՝ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի Հայ Արուեստի Պատմութեան եւ Տեսութեան ամբիոնի: 2018էն անդամ է պարսկերէն *Պայման* մշակութային եռամսեայ հանդէսի գիտական խմբագրակազմին: Հեղինակ է *Լուսանկարչութեան Պատմութիւն* (2019) հատորին:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ իսլամական արուեստ, իրանական արուեստ, պարսկական մանրանկարչութիւն, իրանահայ արուեստ, ժամանակակից իրանական արուեստ, լուսանկարչութեան պատմութիւն:

Պետրոս Թորոսեան **Bedros_torosian@outlook.com**

Ծնած է Պէյրութ, 1994ին: 2019ին պաշտպանած է մագիստրականը՝ «In Search of Haven and Seeking Fortune: The Economic Role of Ottoman Armenian Migrants in British-Occupied Egypt (1882-1914)» նիւթով: Ներկայիս դոկտորական ուսման կը հետեւի պատմութեան մէջ՝ Մ. Նահանգներու Ըրվայն Համալսարանը: Մասնակցած է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած գիտաժողովներու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ԺԹ. դարու Օսմանեան Կայսրութեան պատմութիւնը, կրթական համակարգը, որբախնամ գործունէութիւնը, ուսանողական-երիտասարդական շարժումները: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վեր. Ռընէ Լեւոնեան **rene.leonian@gmail.com**

Ծնած է 1952ին, Մարսէյ: 1999ին պաշտպանած է դոկտորականը՝ «Création du Mouvement Evangélique Arménien en Arménie et dans le Caucase»: 1976-82՝ խմբագիր Ֆրանսայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու *Ճրագ* երկամսեայի, 1997-2011՝ խմբագիր *Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի* եռամսեայի: 1993-94՝ ՀՀ Ֆրանսայի դեսպանատան աշխատակազմի ղեկավար: 1998-2001՝ Խորհրդատու ՀՀ նախագահի աշխատակազմի: 1997-2007՝ նախագահ Հայաստանի Աւետարանական Աստուածաբանական Ճեմարանի: 1994-2011՝ ՀՀ ներկայացուցիչ՝ Հայ Աւետ. Համաշխարհային Խորհուրդի եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան: 2012էն՝ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան ներկայացուցիչ՝ Եւրասիայի: 1974-93՝ Լիոնի եւ Փարիզի, 2014ին՝ Ալֆորվիլի, իսկ 2015ին՝ Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ:

Հեղինակ է *Les Arméniens de France Sont-ils Assimilés* գիրքին (1986):

Սվանթէ Լիւնտկրէն **svante.lundgren@ctr.lu.se**

Ծնած է 1960ին, Ֆինլանտա: Աստուածաբանութեան դոկտոր վկայուած է Ֆինլանտայի Åbo Akademi համալսարանէն 1992ին: Ներկայիս հետազօտող է Շուէտի Լուն-

տի Համալսարանի Աստուածաբանութեան եւ Կրօնագիտութեան Կեդրոնին մէջ: Հետազօտութիւններ կատարած է հրեայ մտածողութեան, հրէութիւն-քրիստոնէութիւն փոխյարաբերութեանց, Հայոց Ցեղասպանութեան եւ Միջին Արեւելքի քրիստոնեայ համայնքներուն մասին: Վերջին հրատարակութիւնը՝ *The Assyrians - Fifty Years in Sweden* (2019): Ասացողն էր Map of Salvation (2015)՝ հայկական վաւերագրական ֆիլմին: 2019էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Զաւէն Կնեազեան **zavenkniasian@yahoo.com.ar**

Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Հետեւած է Պուենոս Այրէսի Պետական Համալսարանի ճարտարագիտութեան դասընթացքներուն:

1992էն հայ մշակոյթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութեան մէջ: Անդամ է Արժանթինի Երաժշտագիտութեան Ընկերակցութեան: Հրատարակած է բազմաթիւ գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն: Վերջին հրատարակութիւնն է *La Historia Armenia a Través de un Traje* (Հայոց պատմութիւնը տարազի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական նուագարանները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Քրիստինէ Կոստիկեան **kkostikyan@yahoo.com**

Ծնած է 1971ին, Երեւան: 2018ին պաշտպանած է դոկտորականը՝ «Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը Հայոց Պատմութեան Սկզբնաղբիւր (XVII դարի II կէս–XIX դարի I կէս)» նիւթով: Գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Հիմնարկի եւ Մաշտոցի Անուան Մատենադարանին մէջ ու դասախօս՝ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի: Համահեղինակ է գիրքերու, որոնց վերջինը՝ *Ժ. Մեշքանբարեանի հետ՝ Միրզա Սամի'ա, Թազքիրաթ Ալ-Մուլուք* (Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին մատենաշար, Պարսկական Աղբիւրներ, Ա., 2019) երկը, հեղինակ է գիրքերու, որոնց վերջինը՝ *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran* (2017):

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը հայոց պատմութիւնն է, Իրանի պատմութիւնը, հայ-իրանական փոխյարաբերութիւնները՝ ԺԲ.-ԺԹ. դարերուն, պարսկական աղբիւրագիտութիւնը (պատմագրական երկեր, ձեռագրեր եւ վաւերագրեր): 2013կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վահէ Ղազարեան
vatcheg@gmail.com

Ծնած է 1954ին, Հալէպ: 1983ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վահան Թէքէեանի Կեանքը եւ Ստեղծագործութիւնը» նիւթով: 2002էն կը պաշտօնավարէ իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, օտար լեզուներու հիմնարկի մէջ: Խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յուշեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջինն է *Ազգային Պատուիրակութեան Գործունէութիւնը 1915–1916* (2017) հատորը: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ազգային պատմութիւնը եւ գրականութիւնը, ի մասնաւորի Յակոբ Օշականը, Վահան Թէքէեանը, Արմենական

Կուսակցութիւնը, հայ կուսակցութեանց ծրագիր-կանոնագրերը, Պօղոս Նուպարի գործունէութիւնը, արեւմտահայութիւնը Օսմանեան Կայսրութեան մէջ, Բաբկէն Կիւլէսէրեան ազգապետ կաթողիկոսի կենսագործունէութիւնը:
1981էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Թաթուլ Մանասէրեան **tatoulm@gmail.com**
Ծնած է 1960ին, Երեւան: 2001ին պաշտպանած է դոկտորականը՝ «Միջազգային Նոր Տնտեսակարգի Հիմնախնդիրները» նիւթով:
ԵՊՀ դասախօս-փրոֆեսոր է 1998էն: 1991էն կը ղեկավարէ Այլընտրանք Հետազօտական Կեդրոնը, գլխաւոր խմբագիրն է *Այլընտրանք* գիտական հանդէսին: Գիտական խորհրդատուութիւն կատարած է Շանհայի, Փեքինի, Էնթուլրփի, Քենզըսի, Սան Ֆրանսիսքոյի, Սալենթոյի, Լոնտոնի, Պանքոքի, Սթենֆորտի, Քալիֆորնիոյ համալսարաններուն մէջ: 2009-11՝ ՀՀ ազգային ժողովի նախագահի խորհրդական, 2003–7՝ ազգային ժողովի պատգամաւոր, 2001–2՝ Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւնների Կեդրոնի գիտական ղեկավար, 2000–1՝ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան նախարարի խորհրդական, 1998–9՝ ՀՀ նախագահին կից Քաղաքական Խորհուրդի Տնտեսական Ենթայանձնախումբի նախագահ, 1997–8՝ ՀՀ արդիւնաբերութեան եւ առեւտուրի փոխնախարարի պաշտօնատար:
Հեղինակ է մեծաթիւ յօդուածներու եւ գիրքերու՝ տնտեսական անվտանգութեան, միջազգային նոր տնտեսակարգի, ֆինանսական շուկաներու, պատերազմի տնտեսագիտութեան եւ ռազմարդիւնաբերական համալիրի եւ տնտեսական բնոյթի հիմնախնդիրներու մասին: 2019էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վարդան Մատթէոսեան **varny1@yahoo.com**
Ծնած է 1964ին, Մոնթէվիտէօ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ Սկիզբէն Մինչեւ 1950» նիւթով: 2019էն կը վարէ Նիւ Եորքի Արեւելեան թեմի դիւանապետի պաշտօնը: Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին հրատարակուած հատորն է *Armenian Language Matters*, 2019ին:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Թեհմինէ Մարտոյեան **tehminemartoyan@gmail.com**
Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին պաշտպանած է թեկնածուականը «Կարմէլեաններուն Տարեգրութիւնը՝ Որպէս Իրանի 17-18րդ Դարերու Պատմագիտական Աղբիւր» նիւթով, զոր գիրք իբրեւ հրատարակած է 2011ին: 2020ին պաշտպանած է երկրորդ մագիստրականը՝ «Ձմիւռնիայի Հայերի եւ Յոյների Բնաջնջումն ու Քաղաքի Հրկիզումը՝ Որպէս Ցեղասպան Քաղաքականութեան Շարունակութիւն» նիւթով: 2012էն դասախօս է Աւետիք Մկրտչեանի անուան Տնտեսահրաւագիտական Համալսարանը: 2015 Յունուարէն նախագահն է Լազարեան Ինստիտուտ Գիտակրթական Հասարակական Կազմակերպութեան: 2019էն աւագ գիտաշխատող է Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի թանգարանային ցուցադրու-

թիւններու կազմակերպման բաժնին մէջ: Ունի նաեւ թարգմանութիւններ: 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Արեւիկ Մելիքեան **arevikmeliqyan@gmail.com**

Ծնած է 1965ին, Շիրակի մարզի Մեծ Սեպասար գիւղը: 1990ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտը: 1990էն կը պաշտօնավարէ Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանը, 2007էն՝ Բաժնի վարիչ: Հեղինակ է շարք մը տեղեկատուական յօդուածներու, համահեղինակ՝ գիրքերու: Գիտական հետաքրքրութիւններու ոլորտը կ'ընդգրկէ 1918ի Մայիսեան հերոսամարտերը1

Միհրան Մինասեան **mihran.min@gmail.com**

Ծնած է Հալէպ: Նախակրթութիւնը ստացած է Հալէպի Ազգային Հայկազեան Վարժարանէն, իսկ երկրորդականը՝ Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանէն:

Կատարած է հայերէնէ արաբերէն եւ արաբերէնէ հայերէն թարգմանութիւններ, հրատարակելով չորս հատորներ: Արհ. Պետրոս Արք. Միրիաթեանի համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու Ապստամբութիւնը Կուսակալ Խորշիտ Փաշայի Դէմ (1819-1820) - Աբրահամ Արք. Քիւփէլեանի Օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի *Հասկ Հայագիտական Տարեգիրք*ին, *Բագին*ին, իսկ 1981էն իվեր՝ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով, նուիրուած՝ հայ հնատիպ գիրքին, հայ պարբերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագրերուն, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան, հայ լուսանկարչութեան, յուշամատեաններու եւն.: Զբաղած է նաեւ բանահաւաքչութեամբ եւ Հայոց Ցեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած անոնց վկայութիւններն ու ազգագրական-բանահիւսական հսկայական նիւթ:

Անդամ է Սուրիոյ Արաբ Գրողներու եւ Հայաստանի Գրողներու միութեանց: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մաշտոցի Անուան Մատենադարանի եւ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Հիմնարկին մէջ:

Նիկիտ Միրզայեան **n.mirzayans@gmail.com**

Ծնած է Նոր Ջուղայ, 1953ին: 1978ին աւարտած է Թեհրանի Շարիֆ Արհեստագիտական Համասարանի մետաղագիտութեան ճարտարագիտութեան բաժինը:

Ծաւալած է ազգային-մշակութային եւ հասարակական գործունէութիւն, հիմնադիրներէն է Նոր Ջուղայի Իրանահայ Ազգային Միշակութային Միութեան, հիմնած է «Արմէն» ճատրակի ակումբը 2001ին, որ առաջին ոչ-միութենական ակումբն է Իրանի մէջ:

Ունի պատմաբանասիրական, ազգագրական, հրապարակագրական երկեր: Պարսկերէնի թարգմանած է հայրենի հեղինակներու երկեր, աշխատասիրած եւ 2017ին հրատարակած է *Տաղեր Նոր Ջուղայի Աշուղներից* երկը:

Անի Մխիթարեան **amkhitaryan89@gmail.com**

Ծնած է 1989ին, Թալինի Աշնակ գիւղը: 2013ին պաշտպանած է մագիստրականը՝ «Հայկական Տարազը Գեղանկարիչների Գործերում» նիւթով: Ներկայիս կը պատրաստէ իր թեկնածուականը:

2014-17՝ աշխատած է Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանը, աշխատակցած է *Էջմիածին* Ամսագիրին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ միջնադարեան հայ արուեստը, հայկական ազգային տարազը, հայկական գորգագործութիւնը, հայկական զարդարուեստը, գործուածքը:

Արա Մարտիրոսեան **aramart@rambler.ru**

Ծնած է 1970ին, Երեւան: 1993ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտը: Պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ, ՀՀ դահլիճի լրատուական կեդրոնի խմբագիր, *Հայաստանի Հանրապետութիւն, Ժամանակ, Ազգ* օրաթերթերու լրագրող, *Արարատ-Մեծըզին* ամսագրի գլխաւոր խմբագիր, 2011-19՝ Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Մշակոյթի Ֆակուլտէտի լրագրութեան դասախօս: Իր տնտեսական այլազան յօդուած-ուսումնասիրութիւններուն համար արժանացած է զանազան մամուլի մրցանակներու:

Արմէն Միքայէլեան **armen_michaelian@yahoo.com**

Ծնած է Երեւան, 1960ին: 1982ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան բաժանմունքը, 1982-92՝ աշխատած է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան հիմնարկին մէջ, 1993ին աւարտած է Ֆրանսայի Գործարարների Եւրոպական Ուսումնավայրի դասընթացքը: Հրատարակած է շարք մը գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ, հեղինակ է ապագայագիտական, գիտափիլիսոփայական եւ լեզուաբանական աշխատութիւններու:

Կարէն Մկրտչեան **K86Mkrtchyan@gmail.com**

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-Իրանական Յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով:

Ներկայիս ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի հայ գաղթօճախներու եւ Սփիւռքի պատմութեան գիտաշխատող է: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, ՀՀ–Իրանի ԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, ղարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Ցեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Հեղինէ Մկրտչեան **heghmk@yahoo.com**

Ծնած է 1959ին, Երեւան: 1994ին հետեւած է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան Լրագրութեան Միջազգային Հիմնարկի դասընթացքներուն: 1997էն իվեր կը պաշտօնավարէ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նախ իբրեւ Մամլոյ Դիւանի պատասխանատու, տեղեկատուական համակարգի մամուլի պատասխանատու, ապա՝ տեղեկատուական համակարգի խմբագիր: 1996էն հիմնադիր խորհուրդի անդամ է Երեւանի Մամուլի Ազգային Ակումբին: Աշխատակցած է հայկական եւ ոչ-հայալեզու մամուլին: Խմբագրած է զանազան գիրքեր: Հրատարակած վերջին երկն է *Կանանց Կուսութեան Ուխտի Նորայայտ Կարգ Երուսաղէմի Ժէ. Դարի Մաշտոցում* (2015): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը:

Սիւզաննա Մուրադեան **syuzmuradyan@gmail.com**

Ծնած է 1983ին, Արմաւիր: 2011ին պաշտպանած է մագիստրականը «Աքեմենեան Խեցեղէնը» նիւթով: 2017էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկը, հեղինակ է շարք մը գիտական ուսումնասիրութիւններու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը դասական հնագիտութիւնն է, հնագիտական պեղումները:

Զաւէն Մսըրլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱ Ակադեմիան իրեն շնորհած է Պատուոյ Դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ Արտասահմանեան Անդամ:

Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի Հայ Աւետ. Գոլէճի տնօրէնը: 2004էն ատենապետն է Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Ռիչըրտ եւ Թինա Քարոլան Հրատարակչական Հիմնադրամին:

Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009* (2014): 1971էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Գայիանէ Յակոբեան **gayik20@gmail.com**

Ծնած է 1981ին, Արթիկ, Շիրակի մարզ: 2020ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Սիրիահայերի Սոցիալ-Մշակութային Ադապտացիայի Հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 2014էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ:

Հրատարակած է հայաստանաբնակ սուրիահայերու մասին ուսումնասիրութիւններ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը էթնիկ խումբերու ընկերամշակութային հիմնախնդիրներն են:

Արսէն Յարութիւնեան **ars.vimagraget@gmail.com**

Ծնած է 1985ին, Երեւան: 2013ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Վաղարշապատի Վանքերը (Պատմավիմագրագիտական Ուսումնասիրութիւն)» նիւթով:

2009էն աւագ գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան հիմնարկի, վիմագրութեան բաժնին, 2012էն նաեւ աւագ գիտաշխատող՝ Մաշտոցի Անուան Մատենադարանի ձեռագրագիտութեան բաժին: 2019էն վիմագրութիւն կը դասաւանդէ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի, Հնագիտութեան եւ Ազգագրութեան ամբիոնին մէջ:

Համահեղինակ է շարք մը գիրքերու, հրատարակած է նաեւ ուսումնասիրութիւններ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը հայ վիմագրութիւնն է, ձեռագրագիտութիւնը, միջնադարեան հնագիտութիւնը: 2017էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Լիլիթ Յովհաննիսեան **lilithovannisian@yahoo.com**

Ծնած է 1972ին, Երեւան: 1998ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայկական Հարցը եւ Մեծ Տէրութիւնները 1914-1917 թթ.» նիւթով: 2003ին շնորհուած է դոցենտի տիտղոս: 1996էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի, եւ դասախօս է ԳԱԱ Գիտակրթական Միջազգային Կենտրոնի եւ ԵՊՀ Հայագիտական

Հետազօտութիւններու Հիմնարկի, 2000էն դասախօս, իսկ 2007էն վարիչ՝ Գլաձոր Համալսարանի միջազգային յարաբերութիւններու բաժնին: 2017էն անդամ է Հայաստանի Պատմագէտներու Միութեան: Արժանացած է բազմաթիւ պատուոգրերու եւ գնահատագրերու:
Հեղինակ է բազմաթիւ յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայկական Հարցը եւ Մեծ Տէրութիւնները 1914–1917 Թուականներին* (2002): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ու պատմագրութեան հարցերը:

Քրիստինէ Նաջարեան **kristnajaryan@gmail.com**
Ծնած է 1986ին, Արմաւիր, ՀՀ: 2014ին պաշտպանած է մագիստրականը՝ «ՀՀ Բարձրագոյն Կրթութեան Բարեփոխումները Բոլոնիայի Գործընթացի Համատեքստում» նիւթով: Ներկայիս կ'ամբողջացնէ իր թեկնածուականը, միաժամանակ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտին մէջ կը վարէ կրթական ծրագրերու բաժինը: Խմբագրած է *Հայոց Ցեղասպանութեան Թեմայի Ուսուցման Հարցի Շուրջ, Ինչպէս Դասաւանդել Հայոց Ցեղասպանութեան Թեման, Ձեռնարկ Ուսուցիչների Համար* (2014) հատորը:
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայոց Ցեղասպանութեան նիւթի ուսումնասիրութիւնը ՀՀ կրթական համակարգին մէջ, եւ Հայոց Ցեղասպանութեան իրազեկման մեթոդաբանական ու կիրառական ուղղութիւնները:

Արսէն Շահինեան **a.shaginyan@spbu.ru**
Ծնած է 1975ին, Էջմիածին: 2010ին, Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Պատմութեան Հիմնարկին մէջ պաշտպանած է դոկտորականը՝ «Հայաստանը եւ Հարաւկովկասեան Երկրները է.-Թ. Դարերում. Հայոց Ինքնակառավարումը Բիւզանդական եւ Արաբական Գերիշխանութեան պայմաններում) նիւթով:
2011էն կը պաշտօնավարէ Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Պատմութեան Հիմնարկին մէջ: Հրատարակած վերջին մենագրութիւնն է *Арабо-Мусульманская Историография IX в. о Странах и Народах Кавказа, Армянского Нагорья и Смежных Областей* (Թ. դարի արաբ-մահմեդական պատմագրութիւնը՝ Կովկասի, Հայկական Բարձրաւանդակի եւ յարակից շրջանների երկրների եւ ժողովրդների մասին, 2018), իսկ վերջին բուհական դասագիրքը՝ История Стран Ближнего и Среднего Востока от Поздней Античности до Современности (Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիրներու պատմութիւնը՝ ուշ Անտիկ շրջանէն մինչեւ մեր օրերը, Մոսկուա, 2020): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Կովկասի երկիրներու վաղ միջնադարեան պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, հայագիտութեան եւ կովկասագիտութեան պատմութիւնը Ս. Պետերբուրգի եւ Ռուսաստանի մէջ: 2010էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վահրամ Շեմմասեան **vahram.shemmassian@csun.edu**
Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ "The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915" նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին:

Ունի բազմաթիւ յօդուածներ եւ Մուսա Լեռան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, որոնց երկրորդը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (the Press of California State University, 2020): Պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիըմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման իր բերած նպաստին համար (2010): Արժանացած է Տիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 2004էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Յակոբ Չոլաքեան **hagopcholakian@hotmail.com**

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան «Քեսապ (Պատմա-Ազգագրական Ուսումնասիրութիւն)» նիւթով: 2014էն ՀՀ ԳԱԱ Ազգագրութեան եւ Հնագիտութեան եւ՝ Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի հիմնարկներու աւագ գիտաշխատող է, դասախօս՝ ԵՊՀի:

Հեղինակ է գիտական յօդուածներու եւ հատորներու, որոնց վերջինը՝ *Արեւմտահայերէնի Քերականութիւն, Կանոնակարգ եւ Խնդիրներ* (2017): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Քեսապը, բանահիւսութիւնը, չափածոն, սուրիահայ վարժարաններն ու մամուլը, դասագիրքերը, եղեռնը, արեւմտահայերէնի մշակման հարցերը: 1982էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Յասմիկ Պարան **hasmig.baran@csun.edu**

Ծնած է Հալէպ: 2012ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Role of Ethnic Culture in Work-Family Balance Among Armenian Women in Leadership Positions in Higher Education» նիւթով: 2013էն հայագիտութեան դասախօս է California State University, Northridgeի մէջ: Անդամ է Հայկազեան Համալսարանի, Լոս Անճելըսի առաջնորդարանի հայկական դպրոցներու, Analysis Research and Planning for Armenia(ARPA)ի հոգաբարձութեանց, եւ աւետարանական ներկայացուցիչը՝ Լոս Անճելըսի Հայկական Միացեալ Խորհուրդին:

Հրատարակած է "The Syrian Armenian Rural Community of Ayn-El-Arous" ուսումնասիրութիւնը՝ *Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)* հատորին մէջ: Ակադեմական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ կրթութիւն-դաստիարակութիւնը եւ կնոջական հարցերը:

Տիգրան Պետրոսեանց **tigranhayazn@mail.ru**

Ծնած է 26 Մարտ 1951ին, ՀՀ Ապարանի Վարդենիս գիւղը: 2015ին պաշտպանած է դոկտորականը՝ Մոսկուայի Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրներու Միջազգային Ակադեմիայի (ԱԱՀՄԱ) մէջ՝ «Հայազգի Զօրավարները Աշխարհի Բանակներում» նիւթով: Արցախեան ազատամարտի մասնակից է, մշակութաբան, խմբագիր, ՀՀ բանակի փոխգնդապետ (2000), Տոնի կազակական միաւորման հրամանատար (2013), ԱԱՀՄԱի Զօրավար-գնդապետ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ԺԲ.-ԺԴ. դարերու Զաքարեան Հայաստանը, հայ զինուորականութեան պատմութիւնը, հայկական իշխանական զինանշաններ, հայ մշակոյթի կին դէմքերը, Ապարանի պատմութիւնը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Կարինէ Ռաֆայէլեան **karine.rafaelyan@mail.ru**

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Հիմնարկի (այժմ Համալսարան), Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: 1994էն Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գրականագիտութիւն, թանգարանագիտութիւն, մշակութաբանութիւն: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վերա Սահակեան **verasahakyan@gmail.com**

Ծնած է 1982ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշէն գիւղը:

2017ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Յատուկ Կազմակերպութեան՝ Թեշքիլաթը Մախսուսայի Գործունէութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» նիւթով: Ներկայիս կրտսեր գիտաշխատող է Մաշտոցի Անուան Մատենադարանի արաբագիտութեան բաժնին մէջ:

Արմէն Շ. Սարգսեան **armensargg@gmail.com**

Ծնած է 1949ին, Լօռուայ Շամուտ գիւղը: 2018ին պաշտպանած է դոկտորականը՝ «Հայ Ժողովրդական Երգիծական Մանրապատումներ եւ Զուարճախօսութիւններ (Անեկդոտներ)» նիւթով: 2005էն գիտաշխատող է ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ, խմբագրած է շարք մը գիրքեր, հրատարակած բանահիւսական եւ լեզուաբանական ուսումնասիրութիւններ, հեղինակ է շարք մը մենագրութիւններու, վերջինը՝ *Մանկական Ծիծաղադարան* (2019):

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ գրականութեան եւ բանահիւսութեան փոխառնչութեան հարցերը, հայ մանկական բանահիւսութիւն/զուարճախօսութիւնը, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ/զուարճախօսութիւնները, ստապատումները, հայ ժողովրդական երկխօսական-հարցապատասխանական ասոյթաբանութիւնը, բանահաւաքութեան եւ բանահիւսութեան մեթոտաբանութիւնը, մանկագրութիւնը, առակագրութիւնը: 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Գէորգ Ստեփանեան **sasun-07@mail.ru**

Ծնած է 1966ին, Սիսիան: 2009ին պաշտպանած է դոկտորականը՝ «Բաքուի Նահանգի Հայութիւնը ԺԹ. Դարի Երկրորդ Կէսին եւ Ի. Դարի Սկզբներին» նիւթով: 2013ին ստացած է փրոֆեսորի կոչում: 2008էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Հայ Գաղթօճախների եւ Սփիւռքի Պատմութեան բաժնին մէջ, զոր կը գլխաւորէ 2016 Դեկտեմբերէն: Հեղինակ է շարք մը գիրքերու, վերջինը՝ *Համազասպ Սրուանձտեանց* (2016): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Պաքուի եւ Գանձակ-Ելիզաւետպոլի նահանգներու հայութիւնը: 2000էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Անդրանիկ Տագէսեան **adakessian@haigazian.edu.lb**

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ «Democracy and Integration in Multicommunal Polities: The Armenians and the Kurds in Lebanon» նիւթով: 1993-2016՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2016էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*: Անդամ՝ *Հայագիտական Հարցեր* (2014էն), *Ցեղասպանագիտական Հանդէս* (2018), *Բազմավէպ* (2019) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Յորդանանի Հայերը Գիւրաժողովի Նիւթերը* (2019), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի Որբանոցը* (1919-1920) (2020), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի Հայօճախը, Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Աւետիս Գ. Քալաշեան **av_kalashyan@mail.ru**

Ծնած է 1953ին, Մարալիկ: 1988ին պաշտպանած է թեկնածուական՝ «Նազարէթ Տաղաւարեանի Աթէիստական (Ազատախոհական) Հայեացքները» նիւթով: 1990էն դասախօս է ԵՊՀի մէջ, 2013-17՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին մէջ, Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող է: Հեղինակ է շարք մը հատորներու, որնցմէ վերջինը՝ *Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Մարգարէութեանն Երեմիայ* (2015):

2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Նիքոլաս Քուրէաս **ncoureas@hotmail.com**

Ծնած է 1959ին, Նիկոսիա: 1994ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Latin Church in Cyprus 1195-1312» նիւթով: Աւագ գիտաշխատող է Կիպրոսի կրթական նախարարութեան Cyprus Research Centreի մէջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Կիպրոսի եւ Միջերկրականի պատմութիւնը՝ 1200-1500 շրջանին: Հեղինակ է բազմաթիւ թարգմանական գիրքերու, վերջինը՝ *At the Origins of the Venetian Sea State Coron and Modon 1204-1209 Critical Edition, Translation and Commentary of the Treaty of Sapienza* (2018), հեղինակ է ուսումնասիրական հատորներու, վերջինը՝ *Cypriot Medieval Ceramics: Reconsiderations and New Perspectives* (2014): 2019էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Աննա Օնանեան **annaonanyan@mail.ru**

Ծնած է Երեւան, 1988ին: 2016ին պաշտպանած է թեկնածուական՝ «Եկեղեցական Սկիհների Ծածկոցների Պատկերագրական եւ Զարդային Առանձնայատկութիւնները» նիւթով: 2017էն կը պաշտօնավարէ Հայաստանի Ազգային Գրադարանի Հայ Արուեստի Գրականութեան եւ ոչ-գրքային հրատարակութիւններու բաժնին մէջ:

Ունի գիտական ուսումնասիրութիւններ՝ Հայ Եկեղեցւոյ ասեղնագործ ծիսական ծածկոցներու եւ սկիհի ծածկոցներու մասին:

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի ԼԹ. (39րդ) Հատորի Շնորհանդէսը Երեւանի Մէջ

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի ԼԹ. հատորի Պէյրութի շնորհանդէսը նախատեսուած էր կատարել Չորեքշաբթի, 23 Հոկտեմբեր 2019ի երեկոյեան ժամը 7ին, Հայկազեան Համալսարանի Հանդիսասրահին մէջ եւ յայտարարուած էր մամուլով: Դժբախտաբար, սակայն, երկրին կացութիւնն ու պայմանները անկարելի դարձուցին կայացումը շնորհանդէսին:

Իսկ հատորին շնորհանդէսը Երեւանի մէջ, տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 13 Նոյեմբեր 2019ին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գրադարանի Դահլիճին մէջ, ներկայութեամբ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանի, Ազգային Գրադարանի տնօրէն Դոկտ. Հրաչեայ Սարիբէկեանի, *Հանդէս*ի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տագէսեանի, Ազգային Գրադարանի պաշտօնատարներու, Պէյրութէն ժամանած հիւրերու, բարեկամներու, եւ աւելի քան յիսուն հետազօտող հայագէտներու, *Հանդէս*ի հին եւ նոր աշխատակիցներու:

Շնորհանդէսին բացումը կատարեց Դոկտ. Սարիբէկեան, որ իր բարիգալուստի խօսքին մէջ կարեւորեց Հայկազեան Համալսարանի հետ գործակցութեան խորացումը, յարատեւումը եւ մաղթեց գործակցութեան նոր ծրագիրներու մշակումը:

Իր խօսքի աւարտին, Դոկտ. Սարիբէկեան եւ Վեր. Դոկտ. Հայտօսթեան ստորագրեցին գործակցութեան յուշագիր՝ Հայկազեան Համալսարանի եւ Ազգային Գրադարանին միջեւ:

Ապա խօսք առաւ Դոկտ. Տագէսեան, որ ընդգծելով *Հանդէս*ի խմբագրակազմին յանձնառութիւնը՝ հայագիտութեան սահմանումին ընդարձակումին ու այժմէականացումին առնչութեամբ, իմիջիայլոց յայտնեց թէ «*Հանդէս*ի 50ամեակին եւ 40րդ հատորին նախաշէմին, ... *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ը յատուկ ճիգ պիտի ընէ ընդգրկելու նաեւ Հայաստանի Հանրապետութեան վերջին երեսուն տարիներու կենսագործունէութեան վերաբերող ուսումնասիրութիւններ»:

Իր խօսքին մէջ, Վեր. Դոկտ. Հայտօսթեան հարցադրեց թէ «ինչպիսի միտք, գիտութիւն, լեզու, գրառում, տեղեկութիւն պիտի ուզէինք որ ապագայի ուսումնասիրողները ստացած ըլլային մեզմէ, կամ մեզմէ փոխանցուած ըլլար իրենց: Կայքէջերը եւ *պլոգ*ները այսօր կը կատարեն որոշ դերեր եւ կան դրական արդիւնքներ: Սակայն հոն որակի վերահսկումի խնդիրներ կան: Իսկ հայագիտական աւանդական հանդէսները, ակադեմական հիմք ունեցող պարբերականները տակաւին վստահութիւն կը ներշնչեն»: Ան կոչ ուղղեց առաւել աչալրջութեան:

Հանդէսի Երեւանի ներկայացուցիչ Դոկտ. Արծուի Բախչինեան ներկայացնելով հատորը համառօտակի անդրադարձաւ *Հանդէսի* 920 էջերուն մէջ տեղ գտած շուրջ 50 յօդուածներու բովանդակութեան:

Նշուեցաւ նաեւ որ հատորին աշխատակցած են հայ եւ այլազգի շուրջ 50 հայագէտներ Հիւսիսային եւ Հարաւային ամերիկաներէն, Եւրոպայէն, Միջին Արեւելքէն, Հայաստանի Հանրապետութենէն: Աշխատակիցներուն կրտսերագոյնը (համահեղինակ) ծնած է 1999ին, իսկ երիցագոյնը՝ 1939ին:

Շնորհանդէսի աւարտին աշխատակիցները ստացան իրենց առանձնատիպերն ու *Հանդէսէն* օրինակներ:

Աշխատակիցներու Ուշադրութեան

Հայկազեան Հայագիտական Հանդէս (ՀՀՀ) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն իվեր, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան պատմական, հնագիտական, աշխարհագրական, բանասիրական, կրօնական, լեզուագիտական, գրական, ազգագրական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), տնտեսագիտական, իմաստասիրական, իրաւագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

ՀՀՀն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու ՀՀՀի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւս:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 10,000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 5000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 5000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով մասնատուած) եւ եզրակացութիւն կառոյցը:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները եւ թուականը:

Կայքէջի պարագային՝ լրիւ հասցէն եւ թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները - թուական-հրատարակչատուն, վայր - ներկայ պաշտօնը եւ նկար մը) եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լաւորակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակին տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երկու ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀի խմբագրութեան յղել այդ գիրքէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ եւ իր աշխատակցութենէն 5 առանձնատիպ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքին վրայ.- http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx

Notes to Contributors

Haigazian Armenological Review has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with history, archaeology geography, philology, religion, linguistics, literature, ethnography, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, philosophy, politics, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *Haigazian Armenological Review* should preferably be not more than 10,000 words (including the endnotes), for investigative articles and briefings not more than 5000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Endnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a 150 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and publisher

- current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the review's style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *Haigazian Armenological Review* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *Haigazian Armenological Review*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to 5 offprints and one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the website:

http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական	Հայագիտութիւն. Նորոգուող Հարցադրումներ եւ Միջոցներ	3

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարդան Մատթէոսեան	Գերմանական Պատկերացումները Հայոց Մասին եւ Հայ-Նացիական Յարաբերութիւնները	7

Պատմութիւն

Մելինէ Անումեան	Հայոց Ցեղասպանութեան Հարցի Ուղղութեամբ Ռ. Թ. Էրդողանի Քաղաքականութինը (2014-2019)	51
Լիլիթ Յովհաննիսեան	1918-20ի Հայկական Պետականութեան եւ Ազգային Միասնութեան Հիմնահարցերի Լուսաբանումը ՀՀ Պատմագրութեան Մէջ (1991–2019)	63
Հեղինէ Մկրտչեան	Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Մայրապետերը եւ Նրանց Ծառայութիւնը (ԺԴ.-Ի. դարեր)	83
Վահրամ Լ. Շեմմասեան	Հայոց Ցեղասպանութենէն Վերապրողներ Դամասկոսի Մէջ Համաշխարհային Ա. Պատերազմի Աւարտին	95
Արեւիկ Մելիքեան	1918ի Մայիսեան Հերոսամարտերը Հայաստանի Ազգագրութեան Թանգարանի Հաւաքածուներում	135
Վաչէ Ղազարեան	Վանի Երկրորդ Հայկական Ժամանակաւոր Կառավարութեան Գործունէութիւնն ու Վերջին Գաղթը Ներկայացնող Տեղեկագիր Մը	149
Վերա Սահակեան	Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսի Արխիւը Որպէս Հայկական Տեղանունների Ուսումնասիրման Սկզբնաղբիւր	189
Նիքոլաս Քուրէաս	Կիպրոսի Փիթըր Ա. Արքան եւ Հայերը	201

Տիգրան Պետրոսեանց — Ամուսնութիւնը՝ Զաքարեանների Պետականաշինութեան Գործառոյթ — 211

Արսէն Շահինեան — Իրո՞ք Առանը Վաղ Միջնադարի Արաբա-Մահմեդական Մատենագիրների Նշած Āḏarbayǧān al-ʿulyā/Վերին Ադրբեջանն է — 245

Սուսաննա Մուրադեան — Ակնարկներ Երուանդաշատի Յուշարձանահամալիրի Ժամանակագրութեան, Տեղագրութեան եւ Մշակութային Պատկերի Մասին — 253

Գրականութիւն

Արմէն Սարգսեան — Պանդխտութիւնը՝ Արտագնայ Աշխատանքը, Հայ Ժողովրդական Երգիծական Մանրապատումներում եւ Զուարճախօսութիւններում (Անեկդոտներում) — 267

Վաչագան Գրիգորեան — Լեւոն Խեչոյեան. Դիմանկարի Փորձ — 285

Կարինէ Ասատրեան — Դերենիկ Դեմիրճեանի *Գիրք Ծաղկանց* Պատմուածքը Որպէս *Էքֆրաստիկ* Տեքստ — 311

Կարինէ Ռաֆայէլեան — Դերենիկ Դեմիրճեանի *Յովնան Մեծապուն* Նորայայտ եւ Նորատիպ Դրաման — 323

Լեզու

Արմէն Միքայէլեան — Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Ա. – Մերձաւորարեւելեան Լեզուներ) — 341

Սուսաննա Գրիգորեան — Կոստան Զարեանի *Օրերի Պսակը* Ժողովածուի Լեզուաոճական Առանձնայատկութիւնները — 365

Արմենակ Եղիայեան — Իմաստաբանութիւն (Ճ-Օ) — 377

Արուեստ

Հայկ Աւագեան — Փաոլօ Անանեան. Սկաւառակի Վրայ Ձայնագրուած Առաջին Հայ Երգիչներէն Մին — 409

Իւէթ Թաջարեան	Մի Շարք Լուսաբանող Փաստեր Անթուան Սեւրուկինի (1851–1933) Կենսագործունէութիւնից	417
Անի Մխիթարեան	Ձեռարուեստի Դասաւանդումը ԺԹ. Երկրորդ կէսի Վան-Վասպուրականի Կրթարաններում (Ակնարկ)	427
Աննա Օնանեան	Սկիհի Արձանագրուած Ծածկոցներ (ԺԷ.-Ի. Դարեր)	439
Գէորգ Ստեփանեան	Մովսէս Երէց Գորիսեցի Գրչի Ձեռագրական Ժառանգութիւնը (ԺԷ. Դար)	451
Արսէն Յարութիւնեան	Ջանֆիդայի 924 Թուակիր Խաչքարը (ՀՀ Արմաւիրի Մարզ)	465
Մաքսիմ Եւատեան	Որոնումներ Էքս լա Շափէլի Կաթողիկէի Ճարտարապետին Վիմագրեալ Ձօնին Շուրջ (795-805)	473
Զաւէն Կնեազեան	Ի՞նչ Է Հայ Հին Մատենագրութեան «Փանդիռն/Բամբիռն» Նուագարանը	491

Ընկերաբանութիւն

Գայիանէ Յակոբեան	Հայաստանի Հանրապետութիւն Ներգաղթած Սուրիահայերի Միգրացիոն Վարքագիծը	523
Յասմիկ Քելլիկեան-Պարան	Մ. Նահանագներու մէջ Բարձրագոյն Կրթասպարէզի Ղեկավար Դիրքի Հայ Կինը եւ Աշխատանք-Ընտանիք Հաւասարակշռումին մէջ Էթնիք Մշակոյթին Դերը	539
Միհրան Գալստեան	Պանդխտութիւնը Հայաստանում (Աւանդոյթ եւ Արդիականութիւն)	563
Քրիստինէ Նաջարեան	ՀՀ Բարձրագոյն Կրթութեան Բարեփոխումները Բոլոնիայի Գործընթացի Ծիրում	585
Յակոբ Չոլաքեան	Սուրիահայ Կրթական Գործին Կուսակցականացումը Սկիզբէն Մինչեւ 1946	597

Քրիստինէ Կոստիկեան	Սեֆեան Պետութեան Մէջ Հայութեան Կեանքը Կարգաւորող Շարիաթական Օրէնքները ԺԷ.-ԺԸ. Դարերում	619

Եկեղեցի, Կրօնք, Փիլիսոփայութիւն

Տէր Ներսէս Քհնյ. Ասրեան	1920ի Շուշիի Կոտորածների Ողբերգական Հետեւանքներն Արցախի Թեմի Համար	643
Ճան Էրզուրումօղլու	Եղիա Տէմիրճիպաշեանի Դրական Փիլիսոփայութեան Արժեւորումը Օսմանեան Փիլիսոփայութեան Պատմութեան Մէջ (1840ականներէն Սկսեալ)	655
Ա. Գ. Քալաշեան	Հայ Եկեղեցու Վաղ Հայրաբանական եւ Դաւանաբանական Գրականութիւնը Արիոսական Հակաերրորդաբանութեան Աստուածաբանական Հիմքերի Մասին	665

Տնտեսութիւն

Թաթուլ Մանասէրեան	Հայաստանի Հանրապետութեան Տնտեսական Դիւանագիտութեան Արդի Խնդիրները Տնտեսական Մարտահրաւէրների Վնասազերծման Համապատկերում	685
Արա Մարտիրոսեան	Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Պարտքը. Երկսայրի Խնդիրներ (Ակնարկ)	701
Կարէն Մկրտչեան	Հայաստանի Հանրապետութիւն-Իրանի Իսլամական Հանրապետութիւն Տնտեսական Բազմակողմ Գործակցութիւնը	711
Պետրոս Բիւզանդ Թորոսեան	Դրախտի Որոնումը եւ Հարստութեան Փնտռտուքը. Օսմանցի Հայ Պանդուխտներու Տնտեսական Դերը Բրիտանական Եգիպտոսի Մէջ (1882-1914) (Ա. ՄԱՍ)	739

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Վեր. Ռընէ Լեւոնեան	Հայերի Համարկումը եւ/կամ ձուլումը Ֆրանսիայում (1920-2000ականներ) (Ակնարկ)	773

Նիկիտ Միրզայեանց «Հոռովել» Բառի Տարբեր Ստուգաբանութիւն 781

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Վեր. Յովհաննէս Ահարոնեան Հայ Աւետարանական Համայնքի Եկեղեցիները, Վարժարաններն ու Կիրակնօրեայ Դպրոցները Սուրիա-Լիբանանի Մէջ, 1946ին 783

Անդրանիկ Տագէսեան Երկու Փաստաթուղթ Լիբանահայ Կեանքէն Լիբանանի Հայօճախը 1945ին 791

Զաւէն Մսըրլեան Հայերու Վիճակը Թուրքիոյ Մէջ 1920ին 805

Միհրան Մինասեան Անտիպ Էջեր Խարբերդի Ժողովրդական Բանահիւսութենէն եւ Ազգագրութենէն 825

Արծուի Բախչինեան Դոմենիկօ Սեստինիի Վկայութիւնները Հայերի Մասին (ԺԸ. Դարավերջ-ԺԹ. Դարասկիզբ) 833

Յակոբ Քէօսէեան Ստեփանոս Դաշտեցին Մովսէս Խորենացու եւ Դաւիթ Անյաղթի Մասին 839

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Թեհմինէ Մարտոյեան Մարի Յովհաննիսեան, *Ուրացման Քաղաքականութեան Արմատները, Նորօրեայ Դրսեւորումները եւ Դրանց Հետեւանքները* 851

Սուանթէ Լիւնտկրէն Աւետիս Հաճեան, *Պարտկուած Ազգը. Ծպտեալ Հայերը Թուրքիոյ Մէջ* 859

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Էդուարդ Դանիէլեան (1952–2016), Տիգրան Աւետիսեան (1941–2016), Լարիսա Մնացականեան (1937–2018), Փասքուալ Օհանեան (1932–2018), Ժենիա Խաչատրեան (1930–2018), Յովհաննէս Զատիկեան (1945–2018), Պետէր Հալֆթէր (1944–2018), Գրիգոր Գրիգորեան (1930–2018), Ռոպըրթ Հիւսն (1934–2018), Գառնիկ Շախկեան (1937–2018), Ագապի Նասիպեան-Էքմէքճեան (1929–2018), Յովհաննէս Փիլիկեան (1942–2018), Տիգրան Գէորգեան (1936–2019), Հայկ Յակոբեան (1956–2019), Անահիտ Տէր Մինասեան (1929–2019), Կիմ Բակշի (1931–2019), Սպիրոս Վրէոնիս (1928–2019), Վարդան Գրիգորեան (1929–2019), Լեւոն Ճերմակեան (1937–2019), Արա Դեմիրխանեան (1945–2019), Վաչէ Սաֆարեան (1930–2019), Ռոմա Դալլաքեան (1929–2019), Կարինէ Աշուղեան (1962–2019), Արման Կիրակոսեան (1956–2019), Մարթին Յովհաննէսեան (1953–2019), Խաչիկ Փիլիկեան (1937–2019), Վահագն Տատրեան (1926–2019), Յասմիկ Աբեղեան (1937–2019), Գագիկ Յարութիւնեան (1959–2019), Ալլա Տէր Սարգիսեանց (1937–2019), Հրաչիկ Միրզոյեան (1940–2019), Վլադիմիր Մաղալեան (1942–2019), Վարսիկ Գրիգորեան (1926–2019), Հրանտ Աբրահամեան (1931–2019), Էդուարդ Բաղդասարեան (1933–2019), Աւետիս Փափազեան (1931–2019), Վահրամ Թաթիկեան (1949–2019) 861

Համառօտ Կենսագրական Հատորին Աշխատակիցներուն 898

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 911
ԼԹ. Հատորին Շնորհանդէսը Երեւանի Մէջ

Աշխատակիցներու Ուշադրութեան 913

Բովանդակութիւն 917

Յիշատակարան 928

TABLE OF CONTENTS

Editorial	Armenian Studies Renewed Questions and Fresh Means	5
	ARTICLES	
Vartan Matiossian	German Perceptions of the Armenians and Armenian-Nazi Relations	7
	History	
Melany Anumyan	Mr. Recep Tayip Erdogan's Policies Regarding the Armenian Genocide (2014-2019)	51
Lilit Hovhannisyan	Assessment of the Main Issues of Armenia's 1918-1920 Statehood and National Unity by the Historians of the Republic of Armenia between 1991 and 2019	63
Heghine Mkrtchyan	Nuns of the Armenian Congregation of St. James and their Service (14th-20th Centuries)	83
Vahram L. Shemmassian	Armenian Genocide Survivors in Damascus at the End of World War I	95
Arevik Meliqyan	The Items of the May 1918 Heroic Battles in the Preserves of the Museum of Armenian Ethnography	135
Vatche Ghazarian	A Contemporary Report Presenting the Activities of Van's Second Temporary Government and the Last Exodus	149
Vera Sahakyan	The Archive of the Catholicos of All Armenians Mkrtich Khrimian as a Primary Source for Research on Armenian Toponyms	189
Nicholas Coureas	King Peter I of Cyprus and the Armenians (1358-1369)	201
Tigran Petrosyants	Matrimony as a Means and Tool for State Building for the Zakarians	211
Arsen K. Shahinyan	Is it True that Arrān was Designated as the Toponym of "Āḏarbayğān al-'ulyā" (Upper Azerbaijan) by Early Middle Ages Arabic-Islamic Authors?	245

Susanna Mouratyan	Some Thoughts on the Topography, Chronology and Cultural Aspect of Yervantashad	253
	Literature	
Armen Sargsyan	The Issue of Economic Migrants in Armenian Popular Humouristic Anecdotes and Jokes	267
Vachagan Grigoryan	Levon Khechoyan's Literary Profile	285
Karine Asatryan	Derenik Demirchyan's *Girk Tsaghkants* (The Book of Flowers) as an Ekphrastic Text	311
Karine Rafaelyan	*Hovnan Medzadun*. The Restored Script of Derenik Demirchyan's Drama	323
	Linguistics	
Armen Michaelian	The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian: Part I – Middle Eastern Languages	341
Susanna Grigoryan	The Language and Stylistic Features of Kostan Zaryan's *Oreri Bsage* (The Crown of Days) Poetry Book	365
Armenag Yeghiayan	Semasiology II. (DJ-O)	377
	Arts	
Haig Avakian	Paolo Ananian, One of the First Armenian Classical Singers on Disc	409
Yvette Tajarian	Antoine Sevruguin's (1851-1933) Biography: Some Clarifying Facts and Details	417
Ani Mkhitaryan	Handcraft in the Curriculum of Van-Vaspurakan's Schools in the Second Half of the 19th Century	427
Anna Onanyan	Armenian Inscribed Chalice Veils (17th-20th Centuries)	439
Gevorg Stepanyan	The Manuscript/Scriptural Legacy of Movses Yerets Korisetsi in the 17th Century	451
Arsen Hautyunyan	A Stone Cross Dated 924: The *Khachkar of Janfida Village* (Povince of Armavir, Republic of Armenia)	465

Maxime K. Yevadian	Enquête sur l'Inscription Dédicatoire de l'Architecte Eudes, dans la Cathédrale d'Aix la Chapelle	473
Zaven Kniazian	What is the "Pandirn - Bambirn" Musical Instrument in Classical Armenian	491
	Sociology	
Gayane Hakobyan	To Stay or To Leave: The Attitude of the Syrian-Armenian Immigrants in Armenia	523
Hasmig Kelligian Baran	The Role of Ethnic Culture in Work-Family Balance among Armenian Women in Leadership Positions in Higher Education in the United States	539
Mihran Galstyan	Migration Issues in Armenia (Past and Present)	563
Kristine Nadjaryan	The Higher Education Reforms Applied in the Republic of ArmenialN the Framework of the Bolonia Process (1991--2018)	585
Hagop Cholakian	The Party Politicisation of the Syrian-Armenian Educational Effort from its Beginnings till 1946	597
Kristine Kostikyan	The Shar'iyyah Laws Regulating the Life of Armenian Subjects in the Safavid State in the 17th-18th Centuries	619
	Church, Religion, Philosophy	
Father Nerses Asryan	The Tragic Consequences of the 1920 Shushi Massacres on the Diocese of Artsakh	643
Can Erzurumluoglu	Assessing the Positivist Philosophy of Yeghia Demirdjibashian in the Context of the History of Ottoman Philosophy (1840s Onwards)	655
A. K. Kalashyan	Paternalistic and Confessional Literature of the Early Armenian Church Concerning the Basics of Arios' Antitrinity Theology	665

Economy

Tatul Manaseryan	The Republic of Armenia: Defusing Economic Challenges by Means of Economic Diplomacy	685
Ara Martirosyan	Equivocal Challenges: The Foreign Debt of the Republic of Armenia	701
Karen Mkrtchyan	The Multilateral Economic Cooperation Between the Islamic Republic of Iran and the Republic of Armenia	711
Bedros Puzant Torosian	In Search of Haven and Seeking Fortune: The Economic Role of Ottoman Armenian Migrants in British-Occupied Egypt (1882-1914) (Part I.)	739

INVESTIGATIVE ARTICLES

Rev. René Léonian	The Integration/Assimilation of Armenians in France	773
Nikit Mirzayants	A Different Explanation of the Word "Horovel"	781

UNPUBLISHED DOCUMENTS

Rev. Hovhannes Aharonian	Study on the Number of Armenian Evangelical Churches, Schools and Sunday Schools in Syria and Lebanon in 1946	783
Antranik Dakessian	Two Documents on the Life of the Lebanese Armenian Community in 1945	791
Zaven Messerlian	Situation of Armenians in Turkey in 1920	805
Mihran Minassian	Unpublished Material from Kharpert Folklore and Ethnography	825
Artsvi Bakhchinyan	The Testimonies of Domenico Sestini (1750-1832) about the Armenians	833
Hakob Keoseyan	Stepanos Dashtetsi on Movses Khorenatsi and David Anhaght	839

BOOK REVIEWS

Tehmine Mardoyan	Mari Hovhannissian, *The Roots of Denial Policy and its Current Expressions and Consequences*	851

Svante Lundgren Avedis Hadjian, *Secret Nation: The Hidden Armenians of Turkey* 859

OBITUARIES

Edward Danielyan (1952–2016), Tigran Avetisyan (1941–2016), Larisa Mnatasakanyan (1937–2018), Pascual Ohanian (1932–2018), Jecnya Khachatryan (1930–2018), Hovhannes Zatikyan (1945–2018), Peter Halfter (1944–2018), Grigor Grigoryan (1930–2018), Robert Hewsen (1934–2018), Garnik Shakhkyan (1937–2018), Akabi Nasibian-Ekmekdjian (1929–2018), Hovhannes Pilikian (1942–2018), Dikran Kevorkian (1936–2019), Hayk Hakobyan (1956–2019), Anahite Ter Minassian (1929–2019), Kim Bakshi (1931–2019), Spiros Vreonis (1928–2019), Vardan Grigoryan (1929–2019), Levon Djermagian (1937–2019), Ara Demirkhanyan (1945–2019), Vache Safaryan (1930–2019), Roma Dallakyan (1929–2019), Karine Ashughyan (1962–2019), Arman Kirakosian (1956–2019), Martine Hovhanessian (1953–2019), Khachig Piligian (1937–2019), Vahakn Dadrian (1926–2019), Hasmik Abeghyan (1937–2019), Gagik Harutyunyan (1959–2019), Alla Ter Sargisyants (1937–2019), Hrachik Mirzoyan (1940–2019), Vladimir Maghalyan (1942–2019), Varsik Grigoryan (1926–2019), Hrant Abrahamyan (1931–2019), Edward Baghtasaryan (1933–2019), Avetis Papazyan (1931–2019), Vahram Tatikyan (1949–2019) 861

Brief Biographical Notes on the Contributors of this Volume 898

The Launching of the 39th Volume of the *Haigazian Armenological Review* in Yerevan 911

Note to Contributors 915

Table of Contents 923

Colophone 928

Յիշատակարան

Հայկազեան Հայագիտական Հանդէսի տոյն Հատորի Խմբագրման ընթացքին Հրատարակութեան յանձնաժողովի նախագահութեան Հասած էին իրենց ա–տրութիւնը, երբ տակաւին յանձնելու օրերուն՝ 4 Օգոստոս 2020ին, պատահեցաւ Պէյրութի նաւահանգիստի ահեղ պայթումը:

Ուխտագրականութեան անդամները հեռաւոյնսկին, համացանցային, տիճասիրութեան, իբրեւ այլասեռ հաղորդակցամիջոցներով հարցուրսոց նամակներ ստացան Հայկազեան աշխատակիցներէն, ընկերներոջներէն, բարեկամներէն՝ խմբագրակազմի, Հայկազեան Համալսարանի, լիբանանահայոց ողջոյն–հետ մաղթեն: Անոնք ցաւ կը յայտնէին մարդկային կորուսներուն եւ ապրուստագրաւ վնասներուն համար ու կ՚ընդգծէին իրենց պօտակցութիւնն ու պատրաստակամութիւնը օգտակար ըլլալու աղէտին հետեւանքներուն շտապ վերացման մէջ եւ ամրելու Լիբանանն ու լիբանանահայութիւնը:

Ուխտագրականութիւնը երախտագէտ է իր գործընկերներուն, բարեկամներուն, լրատուներուն համար ու կը շեշտէ, որ անոնց պօտակցութիւնը բալասան է մեր վէրքերուն եւ կը պոգոյէ մեզ առաւել ջերմեռանդութեամբ շարունակելու Հայկազեան Հայագիտական Հանդէսի յանձնառութիւնը:

Հայկազեան Հայագիտական Հանդէս

Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հրր. Խ.
Տպաքանակ՝ 150
Գին՝ Լիբանան 30,000L. Ոսկի
Արտասահման 30 Տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
Haigazian Armenological Review, Vol. 40
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb